

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐԷՐԻ  
ՀԱՂ ՍԵՎՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Library  
of Armenian Commentaries  
on the Books of the Holy Bible

Commentaries on the Books of the New Testament

**9**

SARGIS KUND

(XII cent.)

COMMENTARY  
ON THE GOSPEL OF LUKE

By  
BISHOP YEZNIK PETROSSIAN  
Doctor of Theology

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN  
2005

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՍԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 9

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ  
(ԺԲ դ.)

ՍԵԿՆՈՒԹԻՒՆ  
ԱԲԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

Աշխատասիրությամբ՝  
ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Դոկտոր Աստվածաբանությամբ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
2005

Հրամանաւ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՅԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

By order

of His Holiness **KAREKIN II**

Supreme Patriarch and  
Catholicos of All Armenians

---

*Տպագրվում է մեկենասությամբ*  
**ԼԵՎՈՆ-ԿԱՌ-ԼՈՍ ԱՍԼԱՆՅԱՆԻ**  
*(Բուենոս Այրես, Արգենտինա)*

*Printed by donations of*  
**Levon - Carlos Aslanian**  
*(Buenos Aires, Argentina)*

Մատենաշարի գլխավոր խմբագիր՝  
ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Chief editor of the serial publication  
BISHOP YEZNIK PETROSSIAN

*Գրքի պատրաստման, խմբագրման և  
հրատարակչական աշխատանքները իրականացվել են  
ԱՄՆ Արևելյան թեմի («Զգօն եպս. Տէր-Յակոբեան  
Վիմնադրամ») միջոցներով*

ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37  
Ս 258

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**  
**Ս 258** ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ: Աշխատասիրութ-  
յամբ՝ ԵՋՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ: -Ս. Էջմիածին:  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005, 650 էջ:

ԳՄԴ 86.37

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ մեկնողական գրականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Սարգիս Կունդի «Մեկնութիւն Դուկասու» աշխատությունը: Այն մեզ հասած առաջին քաղվածո-շարք Ս. Գրական մեկնողական գործն է հայ մատենագրության մեջ:

Հատկապես մեծ է այս աշխատության աղբյուրագիտական նշանակությունը: Այս երկի շնորհիվ լույս աշխարհ են գալիս մի շարք հին հայրերի կորած երկերի հատվածներ:

Ա. Սարգիս Կունդը ապրել և ստեղծագործել է ԺԲ դարում: Եղել է Արևելյան Հայաստանի նշանավոր վարդապետներից մեկը: Իր ուսումը ստացել է ժամանակի նշանավոր կենտրոն Հաղբատի վանքում՝ աշակերտելով Հովհաննես Սարկավագ Վարդապետին († 1129): Դուկասի Ավետարանի մեկնությունից բացի նույն ձևով պատրաստել է նաև Հովհաննու Ավետարանի<sup>1</sup> և Եսայու մարգարեության<sup>2</sup> մեկնությունները:

Բ. Սարգիս վրդ. Կունդի Դուկասի Ավետարանի մեկնությունը ծաղկաքաղ է հիմնականում հինգ նշանավոր հայրերի՝ Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Ստեփանոս Սյունեցու և Իգնատիոս Սկեռնցու գործերից<sup>3</sup>:

Բացի վերոհիշյալ հեղինակներից, Սարգիս վրդ. Կունդը ծաղկաքաղ է արել նաև «սուղ ինչ յԱստուածաբանէն Գրիգորէ առեալ ի վկայութիւն և յԵպիփանէ Կիպրացոյ, և ի Նարեկացոյ Գրիգոր վարդապետէ, և յի-

<sup>1</sup> Տես «Ավետարանների միջնադարյան հայկական մեկնությունները» հոդվածը, «Էջմիածին», 1982, Ա, էջ 10, ինչպես նաև՝ Ս. Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, պատրաստեցին Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը և Արմեն Տեր-Ստեփանյանը, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 2002 թ., էջ 93:

<sup>2</sup> Տպված՝ Անանունի Մեկնութիւն Մարգարեութեանն Եսայեայ և Սարգիս Կունդի Ի Մեկնութենէ Մարգարեութեանն Եսայեայ, աշխատասիրությամբ Արմեն Մալխասյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2003 թ., էջ 353-382:

<sup>3</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես մեր «Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Դուկասու» աշխատության մասին» հոդվածը, «Էջմիածին», 1982, Ը-Թ. էջ 45-48:

մաստնոյն Սարկաւագ վարդապետէ ուրեք ուրեք մտառեալ: Է ինչ որ ի Մովսիսէ Քերթողէ և ի Մամբրէէ Վերծանողէ և ի Թէոփիլոսէ Ոսկեբերանի աշակերտէ<sup>1</sup>»:

Գ. Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատությունը իր ամբողջական կառուցվածքով այսօր մեզ հայտնի է հինգ ձեռագրերով:

**ա. ՄՄ 2609, ք. 2ա–317բ**

Այս ձեռագիրը Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մեզ հասած լավագույն օրինակն է: Այն ընդօրինակվել է 1184 թ. Բջնիում՝ Թադեոս վարդապետի պատվերով և Մարտիրոս երեցի ձեռքով: Ձեռագրում աշխատությունը անվերնագիր է: Այն սկսվում է մի շատ արժեքավոր «Պատճառով», ուր խոսվում է Ղուկաս Ավետարանչի և Ղուկասի Ավետարանի գրության հետ կապված հարցերի մասին:

Ավետարանի բուն մեկնությունը սկսվում է թ. 3բ-ից և ավարտվում թ. 317բ-ում:

Ըստ գրչի հիշատակարաններից մեկի (թ. 242բ–243ա) ձեռագիրը գրվել է *«ի վեց հարիւրերորդի երեսներորդի յերրորդի (1184)»* Թադեոս վարդապետի պատվերով *«ի ձեռն Մարտիրոսի անարհեստ և փցուն գրչի և յետին ամենայն երիցանց, ի դղեկ քաղաքէ Բրջնոյ, որ է մերթ ի Դ-վին քաղաք Հայոց յարևելայս կոյս»:*

Նույն հիշատակարանում երկի աշխատասիրողի մասին ասված է. *«ողորմեա ի քում մեծի գալստեանդ սուրբ վարդապ[ետ]ին Ստեփ[անոսի], որ կոչի Կունդ, և որք ընդ նմա աշխատեալք են ի գործս բարիոք գրոցս այսմիկ»:* Այստեղ տարօրինակ է **Ստեփ** անվանաձևը փոխանակ Սարգսի: Այս աշխատությամբ զբաղվողները հիմնականում այն համարում են վրիպակ: Արդյո՞ք գրիչը նկատի չի ունեցել Ստեփանոս Սյունեցուն, քանի որ երկը սկսվում է նրա երկից քաղվածքով և նրա անվան հղումով:

**բ. ՄՄ 5591, ք. 23ա–239բ:**

Ձեռագիրը ընդօրինակվել է 1427 թ. Մեծոփա վանքում Թովմա վարդապետ Մեծոփեցու և նրա երկու աշակերտներ Թովմայի և Հովհաննեսի կողմից: Բավական հետաքրքիր է այս ձեռագրի գրության պատմությանը:

Թովմա վրդ. Մեծոփեցին, իր եղբայրակիցների խնդրանքով, սկսում է դասավանդել Ղուկասի Ավետարանի Մեկնությունը՝ Իգնատիոս վրդ. Սևեռնցու համանուն գործի հիման վրա: Իր ձեռքի տակ ե-

<sup>1</sup> Մ.Ս. Մատ. ձեռ. 5591, էջ 240ա:



ղած օրինակը սակայն ուներ որոշ տեխնիկական թերություններ. Ավետարանի տեքստը դուրս էր հանված աշխատությունից, որը և զգալիորեն դժվարացնում էր դասավանդությունը: Այդ օրերին, Քրիստոսի Ծննդյան տոնակատարությունների առիթով, Մեծփեցին գնում է մի գյուղ՝ Ասպիսակ կամ Ասպընսակ և, եկեղեցի մտնելով, մոխրակույտի միջից գտնում է այս աշխատության մի հնագույն օրինակ՝ ընդօրինակված 1197 թ. Սարգիս Կունդի ձեռագիր առաջին օրինակից «ի դուռն» Եղիվարդի Ս. Թադեոս եկեղեցու՝ Սարգիս Կունդի աշակերտներ Դավթի և Ներսեսի ձեռքով:

Ինչպես վկայում է Թովմա Մեծփեցին ձեռագրի հիշատակարանում, այդ գտնված ձեռագիրը պակասավոր էր սկզբից մինչև *«յամսեանն վեցերորդի»* հատվածի մեկնությունը, իսկ պահպանված մասը որոշ տեղերում ջնջված էր և շատ տեղերում էլ *«յոյժ սխալ»*: Հետևաբար Թովմա վրդ. Մեծփեցին արտագրության ժամանակ կատարում է զգալի սրբագրական աշխատանք: Մեծփեցին պակասավոր մասը լրացրել է Իգնատիոս Սկլեռնցու Մեկնության համապատասխան հատվածով (թ. 23ա–33բ): Սարգիս Կունդի աշխատությունը սկսվում է թ. 33բ–ով և ավարտվում թ. 239բ–ով՝ հետևյալ գրությամբ. *«Կատարեցաւ մեկնութիւն աւետարանին Դուկասու, որ էր հեթանոս, յազգէ ասորոց, զոր ոմանք յեկեղեցւոյ վարդապետաց ի յունաց ասեն, քաղաքաւ անտիոքացի, աշակերտ գորով Գալիանոս բժշկապետի, հաւատացեալ մերձ խաչելութեան Քրիստոսի և յետոյ աշակերտեալ առաքելոյն Պողոսի, Հաւաքեալ ձեռամբ Սարգիս վարժապետի, որ էր յազգէս հայոց, ի գաւառէ Արարադեան, յոյժ աշխատութեամբ և երկասէր վաստակօք ի լուսատրութիւն մտաց մանկանց Եկեղեցւոյ և ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաիտեանս. ամէն»*:

Այնուհետև դրված է Սարգիս Կունդի հիշատակարանը, ուր հեղինակը, ի միջի այլոց, ասում է. *«Ես, տրուպս և անպիտանս ի ժառանգատրս Եկեղեցւոյ Սարգիս վարդապետ՝ մականունն Կունտ կոչեցեալ, ի գաւառէ Արայրատեան, բազում ջանիւ աշխատեցայ ...և բազում աշխատութեամբ ի մին տեղիք հաւաքեցի, ի ՌԽԶ թուականութեանս հայկազեանս սեռի, ի դառն և ի չար ժամանակիս, որ շփոթ էր կաթողիկոսութեան իշխանութիւն սրբոյն Գրիգորի, զի անկեալ մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոսն ի դղեկէն Կոպիտառու, և այժմ ոչ ոք է յաջորդեալ զաթոռնորին»<sup>1</sup>*:

<sup>1</sup> Գարեգին Ա Կաթողիկոս, Հիշատակարանք ... հտ. Ա, էջ 605-608:

Վերջում կա Թովմա Մեծոփեցու արժեքավոր հիշատակարանը<sup>1</sup> (թ. 240ա–241ա):

Համեմատելով Թովմա Մեծոփեցու ձեռագիրը 1184 թ. ձեռագրի հետ՝ նկատում ենք, որ Մեծոփեցու ձեռագրում կան մի շարք հատվածներ «Այլ» հղումով, որոնք բացակայում են 1184 թ. ձեռագրում: Շատ հավանական է, որ դրանք Մեծոփեցու ձեռքով են ներմուծված: Այդ մասին է խոսում նաև այն, որ դրանք նման են Տաթևյան մեկնության ոճին, օր. թ. 32բ, 46-47 և այլն:

**գ. Երուսաղեմի 149 ձեռագիրը<sup>2</sup>, էջ 1-320:**

Ընդօրինակված է 1821 թ. Ջնյունիայում, Տեր Հովհաննես քահանայի ձեռքով՝ Թովմա Մեծոփեցու վերոհիշյալ ձեռագրից: Այս ձեռագրում զանց են առնված լուսանցքներում նշված անունների հղումները:

**դ. Վենետիկի Մխիթարյան Միաբանության հին թիվ 740 ձեռագիրը, թ. 2բ–178բ (ըստ Բ. Սարգսյանի ցուցակի 219, ճառընտիր Ի)**

Ընդօրինակված է 1835 թ. Հ. Եփրեմ Մեթյանի և Հ. Եսայի Մզրաքյանի ձեռքով, ՄՄ 2609 ձեռագրից:

**ե. Վենետիկի Մխիթարյան Միաբանության թիվ 687 ձեռագիրը, թ. 1–178բ**

Ընդօրինակված է 1848/9 թթ. Հ. Ներսէս Սարգսյանի ձեռքով, Լիմ անապատում, 1184 թ. Կեչառիսի վանքում Աստվածատուր քահանայի պատվերով և Ադրե (կամ Անդե) «ձեռնասուն մանուկի» ձեռքով արտագրված ձեռագրից: Եվ քանի որ այն հնացած և պակասավոր է եղել, պակասները լրացվել է Թովմա Մեծոփեցու օրինակից (= ՄՄ 5591):

Հետևաբար կարելի է ասել, որ Սարգիս Կունդի «Մեկնութիւն Գուկասու» աշխատությունը մեզ է հասել հիմնականում երեք օրինակով.

ա. ՄՄ 2609 ձեռագրով՝ գրված 1184 թ.

բ. ՄՄ 5591 ձեռագրով՝ գրված 1427 թ.՝ 1197 թ. ընդօրինակությունից:

գ. Ընդօրինակված է 1848/9 թթ. Հ. Ներսէս Սարգսյանի ձեռքով, Լիմ անապատում, 1184 թ. Կեչառիսի վանքում արտագրված ձեռագրից, պակասները լրացված Թովմա Մեծոփեցու օրինակից (= ՄՄ 5591):

<sup>1</sup> Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 359-360:

<sup>2</sup> Մ.Յ.Չ.Ա.Յ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 421-424:

Պահպանվել են նաև հատվածներ զանազան ձեռագրերում, ինչպես օրինակ՝ ՄՄ Մատենադարանի 6615, ք. 103ա-110բ, Երուսաղեմի 1250 (ք. 269ա-275, Դուկ. ԻԳ 41-55 համարների մեկնությունը, ք. 204ա-210բ, Դուկ. Բ 21-41 համարների մեկնությունը):

Գ. Ըստ Վենետիկի 687 ձեռագրի հիմք հանդիսացած՝ Կեչառիսում 1184 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանի<sup>1</sup> «Մարգիս մակամուն և ոչ իր յիմաստս իմաստնոց և տգէտս ի գիտնականաց»-ը «ի թուականիս նորոյ ԿԳ (63)» ստանում է այս աշխատությունը «ի խրատ և ի վարժումն»: Այստեղ հիշված նոր թվականը Սարկավագադիր թվականն է՝ հաստատված 1083/84 թ.: Հետևաբար նոր թվականի ԿԳ-ն համապատասխանում է Փրկչի 1146/47 թվականին<sup>2</sup>:

## ԲՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

### Ա. Օգտագործված ձեռագրերը

- ա1. Հիմք է ընդունվել ՄՄ 2609 (=A) ձեռագիրը:
- ա2. ՄՄ 5591 ձեռագրի տարրնթերցվածքները տրված են տողատակում՝ B-ով:
- ա3. ՄՄ 5591 ձեռագրի հավելադրությունները տրված են տողատակում:
- ա4. ՄՄ 2609 ձեռագրի վնասված բառերն ու կապակցությունները վերականգնվել են ուղղանկյուն փակագծերի մեջ, հիմնականում ըստ B-ի:

### Բ. Ուղղագրությունը

- բ1. Ուղղվել է **ս-զ-ի, շ-ս-ի, խ-ղ-ի, տ-թ-ի** ուղղագրությունը, (սիկսբ-սկիզբ, աշտիճան-աստիճան, թուխտ-թուղթ, և այլն):
- բ2. Վերականգնվել է չգրված **ը** տառը (մպել-ըմպել, զնկեր-զընկեր, նդիր-ընդիր, նտանի-ընտանի, և այլն):
- բ3. Վերականգնվել է բայական վերջավորության չգրված **ա** տառը (արտաքսել-արտաքսեալ, անկել-անկեալ և այլն):

<sup>1</sup> Վենետիկ 687, էջ 175 (?176):

<sup>2</sup> Երկի գրության թվականի մասին ավելի հանգամանորեն տես մեր «Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Դուկասու» աշխատության մասին» հոդվածը, «Էջմիածին», 1982, Ը-Թ. էջ 50-52:

բ4. Միօրինակության են բերվել Յովհաննէս և այլ անունների բոլոր տարբերակները (Յովաննէս, Յովանէս, Յոհաննէս, Յոհանէս, Ոհանէս և այլն):

բ5. Բնագրում օգտագործված միօրինակ, բայց ոչ ճիշտ ձևերը փոխվել են առանց որևէ նշման (Մաթէոս-Մատթէոս, հրշտակ-հրեշտակ, դասական թվականների վերջավորություն երըրդ-երորդ, և այլն):

#### **Գ. Լուսանցքում հեղինակային անունների հղումները**

գ1. Միօրինակության են բերվել լուսանցային անունների հղումները, օր.՝ Եփր=Եփ, Մովս-Մուս-Մս=Մովս., Ոսկ-Ոսկ., Իգ-Իգն=Իգ., Յհ-Յովհ=Յհ և այլն:

գ2. Եթե լուսանցային անունների հղումները երկու ձեռագրերում էլ նույնն են և գտնվում են նույն տեղում, ապա նշված են մեծատառերով, օր. «ԵՓ»:

գ3. Այն հղումները, որոնք առկա են միայն A-ում, այսինքն՝ ՄՄ 2609 ձեռագրում, դրանք դրված են. առաջին տառը մեծատառ, մնացյալը՝ փոքրատառ, վերջում՝ միջակետ, օր. «Իգ.»:

գ4. Այն հղումները, որոնք առկա են միայն B-ում, դրված են փոքրատառերով, վերջում՝ միջակետ, օր. «ստ.»:

գ5. Այն դեպքում, երբ երկու ձեռագրերում տարբեր անուններ են, B-ի հղումները դրված են փակագծերի մեջ:

1ա

## ՊԱՏՃԱՌ ԱԷԵՏԱՐԱՆԻ ԳՈՒԿԱՍՈՒԷ

Ղուկասու Աւետարանս երրորդ է ըստ կարգի աւետարան-  
չացն եւ հաւասար է գետոցն, որ ի չորս բաժանի, որոյ անուն կո-  
չի Տիգրիս, որ գնայ ընդդէմ Ասորեստանի: Քանզի անդ առ  
սկիզբն քարոզութիւնն Պաւղոսի<sup>1</sup>, որպէս ինքն Գաղատացւոցն  
գրէր, որ զկնի յայտնութեանն Քրիստոսի ի ճանապարհին Դա-  
մասկեայ եղեւ: Հաւատացեալ մկրտեցաւ յԱնանիայէ, ասէ. «Չո-  
գայ յԱրաբիայ եւ դարձայ ի Դամասկոս» (Գաղ. Ա 17): Այսոքիկ  
գաւառք եւ Ասորոց, զոր քարոզութեամբ Աւետարանին Պաւ-  
ղոս ելից ի սակաւ ժամանակս:

Բայց ասեն իմաստունք՝ թէ արտաք եղող եւ վնասակար է  
գետոս: Ասի եւ Դգղադ, որ է արիութեան եւ բարկութեան նշա-  
նակ: Քանզի զվայրենացեալ ախտն, որ ի մեզ բորբոքէ, որ եւ  
այս Պաւղոսի պատշաճի, զի մինչ ի հրէութեան էր, խախտէր  
եւ աւերէր զեկեղեցիսն Աստուծոյ եւ հալածականս առնէր<sup>2</sup>  
զհաւատացեալսն ի Քրիստոս մինչեւ ի հեռաւոր քաղաքս, եւ  
1ք անպտուղ // էր յաւետարանական շ[.]իցն<sup>3</sup> եւ վնասակար էր  
ամենայն ուրեք եկեղեցեացն Քրիստոսի:

Զայս ասելով՝ ո՛չ զՊաւղոս բամբասեմ եւ ո՛չ զվերջին բա-  
րիսն ապախտ առնեմ, այլ զհամեմատութիւն գետոյն ընթացից  
առ նորա բանսն ցուցանեմ: Զոր աւրինակ գետոս այս որքան  
զԱսորոց կողմամբ[ը]քն յորձանաւք եւ եռանդնաշարժ հոսա-  
նաւք յանաւգուտս վճարէ զ[ը]նթացսն, իսկ յորժամ յԱսորոց  
ելանէ եւ ի Բաբելոն եւ ի Բոսոր մտանէ, առուաւք ի բազում  
աշխարհս բաժանի եւ սնուցանէ զերկիրն՝ բազմացուցանելով  
զարմտիս նոցա: Այսպէս եւ երանելիս այս, մինչդեռ յԱսորոց  
խաղտալուր լեզուն խաւսէր եւ առ աւրինաւքն դեգերէր, այն-  
պէս էր, որպէս կանխաւ նշանակեցաք: Իսկ յորժամ ընդ Ասո-  
րիս արտաքսե[ա]լ<sup>4</sup> եւ Քրիստոսի Աւետարանաւն ընդ ամե-

<sup>1</sup> բնագրում՝ Պողոսի, այսուհետեւ չենք նշում:

<sup>2</sup> բնագրում՝ առներ, այսուհետեւ չենք նշում:

<sup>3</sup> ձեռագրի թուղթն այստեղ ծակված է:

<sup>4</sup> բնագրում՝ արտաքսել, այսուհետեւ չենք նշում:

նայն աշխարհս ընթացաւ, յայնժամ կենդանի ջրովն զբազում ազգս հեթանոսաց պարարտացոյց, որք եկեալ ի կատարումն՝ լցան պտղաւք արդարութեան ի պարծանս նմա յաւուրն Քրիստոսի: Քանզի երանելին Պաւղոս յորդառատ վարդապետութեամբն, ըստ տուելոյ նմա ի շնորհաց Սուրբ Հոգոյն, չորեք տասն սան թղթ//աւք<sup>1</sup> զամենայն քաղաքս ելից, եւ շինեաց զեկեղեցիս, եւ լուսաւորեաց զբազում ազգս հեթանոսաց:

Իսկ Ղուկաս ի հեթանոսաց, աշակերտ գոլով յառաջագոյն Գաղիանոսի բժշկապետի, որ եւ ինքն արուեստիւ բժիշկ, յետոյ աշակերտի երջանկին Պաւղոսի, եւ յամենայն ճանապարհս առաքելական ընթացիցն ընդ նմա էր եւ զպատմութիւն Աւետարանին ի նմանէ ուսեալ էր, եւ յոլով հաւատարմութիւն ցուցեալ յանձին, վասն որոյ եւ զԱւետարանն նմա յանձն արար Պաւղոս, որ ընդարձակ եւ առատ բանիւք, սկսեալ ի սաղմնառութենէն Յովհաննու եւ յաւետեաց Կուսին, գայ կարգաւ ի Ծնունդն եւ ի Մկրտութիւն Կենարարին: Եւ յետ այսորիկ գեղեցկայարմար<sup>2</sup> պատմութեամբ զնշան եւ զվարդապետութիւն հիւսէ ընդ միմեանս առակաւոր բանիւք հանդերձ, եւ այսպէս ի կարգ անկեալ ի Խաչն եւ ի Թաղումն եւ Յարութիւնն եւ յաստուածապէս Համբարձումնն աւարտէ, դրոշմեալ ի գիրս սուրբս, զոր եւ Աւետարան իսկ ասի:

Յորս տեսեալ մեծին Պաւղոսի եւ հաճեալ հաւանի եւ գովէ զնա ի Թղթին Կորնթացւոց՝ ասելով. «Որոյ գովութիւն յաւետարանի անդ, ընդ ամ(//)ենայն եկեղեցիս» (Բ Կորնթ. Ը 18) պատմի: [Որ]<sup>3</sup> եւ հրամանաւ նորա գրեաց զկնի ութ եւ տասն ամի վերանալոյ Տեառն առ Հայր յասորի լեզու, յԱնտիոք քաղաքի, եւ քարոզէ ի Բիւզանդիայ եւ յամենայն կողմանս Մակեդոնացւոց, եւ թարգմանի յասորի լեզուէ ի յոյն, որպէս Եկեղեցւոյ Պատմութիւնն ասէ՝ բովանդակեալ ի տունս երեք հարիւր եւ քառասուն եւ երկու:

Բայց Ղուկաս յարութիւն թարգմանի, որ ի բազում դէմս նշանակի՝ ի քնոյ յարութիւն, եւ ի գլորմանէ կանգնումն, է եւ ի մեղաց յառնել, դարձեալ եւ ի ներելոյ ի վրէժխնդրութիւն

<sup>1</sup> բնագրում՝ թխտաւք, այսուհետեւ չենք նշում:

<sup>2</sup> բնագրում՝ գեղեցկայարմար, այսուհետեւ չենք նշում:

<sup>3</sup> ձեռագրի թուղթն այստեղ ծակված է:

յառնել, որպէս զայս ասեն. «Արի՛ Աստուած եւ դատեա՛ զդատաստան քո» (հմմտ. Սաղմ. 2Ա 8), զորոց զամենեցուն բովանդակեալ ունի զխորհուրդս աւետարանիչս, քանզի խաւարաւ կռապաշտութեան իբր ի խաւարի անյուսութեան ննջեաք, իսկ աւետարանիւն այնիւ իբրեւ խթանաւ ընդոստուցեալ զարթեայք եւ Արեգականն արդար ճառագայթիւ լուսաւորեցաք: Սմին ճայնակից լինի եւ Պաւղոս. «Արի՛, որ ննջեսդ եւ լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս» (հմմտ. Եփես. Ե 14), զի անգեալ էաք ի զաւրութենէ եւ թաւազլոր յատակս դժոխոց սողոսկեալ ընթանայաք:

- 3ա Եղեւ մեզ աւետարանական վարդապետութիւնս նեցուկ // եւ գաւազան հ[աս]տատութեան<sup>1</sup>, եւ յարութեամբ յերկինս առաջնորդեաց, եւ զի անկաք ի ձեռս աւագակաց, որք մեղացն սուսերաւ վիրաւորեցին զմեզ չարաչար եւ կիսամեռ՝ ի կիցս ճանապարհաց նախատել զմեզ ամենեցուն թողին եւ գնացին, զի եւ քահանայն եւ դեւտացին եկեալ ո՛չ կարացին բժշկել<sup>2</sup> զյերկիր անկեալն, մինչեւ եկն սամարացին (տե՛ս Ժ 30-37): Եւ մեծ այցելութեամբ անկեալ վիրաւորին, եւ մեղաւքն հիւանդութեամբ իբրեւ անդամալոյծս ի մահիճս անյուսութեանն անկեալ կայաք: Եկն բնութեանս մերոյ ստեղծիչն եւ մեղաց թողութիւն արար, եւ յարոյց զմեզ առողջացեալ: Եւ պատուիրեաց այլ մի՛ եւս մեղանչել, զի մի՛ գտողոսիս յանցանացն վճարեսցես, զոր եւ բնիոնն անուանեաց (տե՛ս ԺԲ 59): Զի կռապաշտութեան շղթայեալք զամենեսին կապեաց սատանայ, եւ ընդ ներելն Աստուծոյ կարծեաց, թէ յաւիտենից է իշխան: Վասն այսորիկ եւ ի լերինն ընդ Փրկչին մերոյ եւ ընդ Տեառն մարտուցեալ զերկրպագութիւն պահանջէր եւ խոստանայր տալ նմա զթագաւորութիւնս աշխարհի ո՛չ իբրեւ զիւր, այլ իբրեւ յայլմէ առեալ: Արդ՝ եկն ի դէպ ժամանակի դատաւորն արդար,
- 3բ // հզաւրն եւ վրէժխնդիրն, [ը]ատեցաւ<sup>3</sup> զնա ըստ արժանոյն, որով եւ ինքեանք զպարտութիւն խոստովանեալ ասէին. «Ընդէ՞ր յառաջ քան զվախճան յաւիտենիս տանջես զմեզ» (հմմտ. Մատթ. Ը 29), «գիտեմք զքեզ ո՛վ ես, Սուրբդ Աստուծոյ» (Մարկ. Ա 24):

<sup>1</sup> ձեռագրի թուղթն այստեղ ծակված է

<sup>2</sup> բնագրում՝ բժշկեալ, այսուհետեւ չենք նշում:

<sup>3</sup> ձեռագրի թուղթն այստեղ ծակված է

Այսոքիկ ամենեքին յարութեանն են խորհուրդք: Վասն այնորիկ զազգահամարն<sup>1</sup> ի ներքուստ ի վեր թուելով աւետարանիչս՝ յԱդամ երթեալ աւարտէ: Ձի ուսանիցիս, եթէ զոր աւրինակ ի ձեռն պատուիրանին յանցմանց ի նմանէ ի վայր աստիճանեալ<sup>2</sup> անկանք ի վերջին աղքատութիւն, եւ ըստ նմանութեան անառակին խոզիցն կերակրոյ կարաւտացաք (տե՛ս ԺԵ 16):

Այսպէս ի ձեռն հաւատալոյն ի Քրիստոս առ երկնաւոր Հայրն դարձաք եւ առաքինական ընթացիւք ի վեր ընթանամք՝ գնալով ի գաւրութենէ ի գաւրութիւն (հմմտ. Սաղմ. 29 8), ըստ սաղմոսական երգոյն, մինչեւ զգեհուցումք զփառսն, զոր մերկացաւ Ադամ, եւ լինիցիմք ճշմարտապէս ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի:

Յաջողեա՛<sup>3</sup> Քրիստոս զգործս իմ:

<sup>1</sup> Բնագրում՝ զազգահամարն, այսուհետեւ չենք նշում:

<sup>2</sup> Բնագրում՝ աստիճանել, այսուհետեւ չենք նշում:

<sup>3</sup> Բնագրում՝ յաջողեաց, այսուհետեւ չենք նշում:



**ՄԵԿՆՈՒԹԻՒԻՆ՝<sup>1</sup>**  
**ՍՈՒՐԲ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒԿԱՍՈՒ,**  
**ՀԱԲԱՔԵԱԼ**  
**ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԵՒ**  
**ԱՆՅԱԳԹ ՀՌԵՏՈՐԻ,**  
**Ի ՍՐԲՈՑ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԱՅՆ**  
**ՄԵՐՈՑ**  
**ԵՓՐԵՄԻ, ՈՍԿԵԲԵՐԱՆԻ<sup>2</sup>, ԿԻՒՐԳԻ,**  
**ՍՏԵՓԱՆՈՍԻ, ԻԳՆԱՏԻՈՍԻ**  
**ԵՒ ԱՅԼՈՑ ՎԱՐԳԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՑ, ԶՈՐ**  
**ՏԵՍԱՆԵՍ ՅԱՌԱՋԻԿԱՅԳ**

**Աւգնեա՛ Հոգի Սուրբ Աստուած ճշմարիտ**

**Գլուխ Ա**

Քանզի բազումք յուժարեցին վերստին գրել (Ա 1):

Ստ. *Որպէս ի հնումն զմարգարէութիւնքն յուժարէին գրել ոմանք ճշմարտապէս, որպէս Եսայիաս եւ Երեմիաս, եւ ոմանք 4ա ստուժեամբ, որպէս Անանիաս՝ որդի Ազարիայ, // նոյնպէս եւ ի նորումս բազումք գրեցին աւետարանս՝ ոմանք ստուգութեամբ եւ ոմանք ստուժեամբ:*

Կղ. *Ղուկաս զպատճառս իւրոյ մատենագրութեանն յայտ առնէ:*

Որպէս աւանդեցին մեզ (Ա 2) ականատեսքն:

*Քանզի ո՛չ միայն Մատթէոս եւ Մարկոս, այլեւ այլք յուժարեցան գրել աւետարան, բայց թեթեւութեամբ եւ ո՛չ հիմամբք հաստատեալ, որպէս պատշաճ էր: Վասն այնորիկ.*

Կամ եղեւ ինձ (Ա 3):

*Համառաւտ բանիւ անցանէ աւետարանիչս ընդ կարգս պատմութեան աւետարանիս:*

<sup>1</sup> Վերնագիրը առկա է միայն B-ում:

<sup>2</sup> B Ոսկէբերանին

Իգ. Ղուկաս ցուցանէ ի Գործս Առաքելոցն, զի իբրեւ մտին ի Կեսարիա, վանս կալան ի տանն Փիլիպպոսի (տե՛ս Գործք ԻԱ 8): Աստի ուսանիմք, եթէ այլք իբրեւ զսա կամեցան աւետարանիչս լինել: Արդ՝ յայտ է, եթէ յուժարեցան գրել, սակայն մարդկեղէն մտաւք եւ ո՛չ ի Հոգոյն շնորհաց շարժեալ: Վասն այնորիկ ո՛չ ընկալան եկեղեցիք, քանզի սոքա չորեքին միայն Հոգովն գրեցին, նորին աղագաւ զուգեալ՝ հաւասարեցան միմեանց: Իսկ ի նոցանէ զիա՞րդ արգելաւ: Ո՛չ սակա անարէնութեան<sup>1</sup>, այլ տնաւրէնութեամբ Հոգոյն, որ գիտէ որոշել եւ 4ք բաժանել զշնորհսն որպէս կամի, որպէս<sup>2</sup> առաքեալքն // լցեալ Հոգովն Սրբով ամ[են]եքին<sup>3</sup>: Բայց Պաւղոս շարժեալ լինի միայն չորեքտասան գրել թուղթս<sup>4</sup>: Եւ այլքն<sup>5</sup> նախանձու եւ հակառակութեան գրեցին աւետարան<sup>6</sup> ի Հոգոյն մոլորութենէ բերեալք, զի այնպէս ապականիչք ճշմարտութեանն լիցին ստայաւդ<sup>7</sup> եւ անիմաստ բանիւք:

Զպատմութիւն իրացն հաստատելոյ ի մեզ (Ա 1):

Ոսկ. Եւ զի այդ պատմութիւն միայն է եւ բանք, եւ անմասն ի Հոգոյն, ո՛չ այլ լի Հոգով<sup>8</sup>:

Որպէս<sup>9</sup> աւանդեցին մեզ, որք ի սկզբանէ<sup>10</sup> ականատեսք<sup>11</sup> եղեն բանին (Ա 2):

Կզ.<sup>12</sup> Որք զբանն Քրիստոսի գրեցին:

Կզ. Ո՛չ հանգոյն Մատթէոսի եւ Յովհաննու զինքենէ ճառէ գոյ ահանատես եւ ահանջալուր, այլ ցուցանէ, թէ յառաքելոցն զայն ընկալեալ, ո՛չ միայն ի Մատթէոսէ եւ Յովհաննու, այլեւ ի բոլորից աշակերտացն:

<sup>1</sup> Եւ անարէնութեան եւ անարժանութեան, Իգ., անարժանութեան էջ 8

<sup>2</sup> Եւ ըստ որում բազում փիւ որպէս

<sup>3</sup> ձեռագրի թուղթն այստեղ վնասուած է

<sup>4</sup> բնագրում՝ թուղթս Ե թուղթ

<sup>5</sup> Ե Դարձեալ. առ այս աւետարանեմք զոմանս առ փիւ եւ այլքն

<sup>6</sup> Ե գրել աւետարանս

<sup>7</sup> Ե ստայաւդ կեղծաւորեալք իւրեանց

<sup>8</sup> Ե Եւ արդ՝ իբրեւ սոքա այսպէս եկին գրեալ շնորհք Հոգւոյն զաւերացաւ մաքուր պահել զմերս փիւ Զպատմութիւն իրացն (Ա 1)... Հոգով

<sup>9</sup> Ե զոր

<sup>10</sup> բնագրում՝ սկսբանէ (այսուհետեւ չենք նշում)

<sup>11</sup> Ե ականատեսք եւ սպասաւորք

<sup>12</sup> բնագրում լս. նշված է՝ կղը

Ստ. *Դարձեալ. ո՛չ իւրոյ վկայութեամբն միայն շատանայ, այլ բերէ զառաքեալսն ի մէջ եւ հաւատալոյ արժանի առնէ զբանն: Եւ ընդէ՞ր ո՛չ ասէ, թէ՛ «Որք ականդեցին մեզ Հոգոյն Սրբոյ արժանաւորքն, քանզի այն ինչ ամբարհաւածութիւն<sup>1</sup> թուէր անհաւատիցն: Վասն որոյ եւ Յովհաննէս ասէր, եթէ՛ «Ես տեսի 5ա եւ վկայեցի, եթէ սա՛ է Որդին Աստուծոյ» (Յովհ. Ա 34): // Եւ Քրիստոս ընդ Նեկողեմոսի թանձրամտի ասէր. «Զոր գիտեմքն՝ խաւսիմք, եւ զոր տեսաքն՝ վկայեմք» (Յովհ. Գ 11): Եւ ցառաքեալսն ասէ, եթէ՛ «Դուք վկայէք, զի ի սկզբանէ ընդ իս էք» (Յովհ. ԺԵ 27): Եւ առաքեալքն բազում անգամ այսպէս ասէին. «Վկայ եմք մեք եւ Հոգին Սուրբ, զոր ետ Աստուած Հնազանդելոց իւրոց» (Գործք Ե 32, հմմտ. Եբր. Ժ 15): Եւ Պետրոս առ ի հաւատարմացուցանել զյարութիւնն ասէ. «Որք կերաք եւ արբաք ընդ նմա զկնի յարութեանն» (Գործք Ժ 41): Վասնզի Հոգոյն վկայութիւնն լռելեայն կայր յայնմ ժամանակին, վասն որոյ եւ աւետարանիչն ասէր յայնժամ, եթէ՛ «Որ ետես եւ վկայեաց յաղագս արեանն եւ ջրոյն» (հմմտ. Յովհ. ԺԹ 34-35): Եւ զտեսութիւնն մեծ վկայութիւն եղ նոցա, թէպէտեւ քան զտեսութիւնն ստուգաբոյն են Հոգոյն իրք, այլ ո՛չ անհաւատիցն, քանզի Հոգոյն Սրբոյ հաղորդեալ էր այրն: Ի բազում իրաց յայտնի է, ի նշանացն, որ յայնժամ լինէին իսկ: Եւ ի հանդիպելոյն յայնժամ Հոգոյն եւ ի Պաւղոսի վկայութեանէն, որ ասէր. «Որոյ գովութիւնն յաւետարանի անդ է եւ ի ձեռնադրութեանէն, որ յեկեղեցեաց անտի նժղեհից, զի ճանապարհորդակից մեր եղեւ ի շնորհս յայսոսիկ, որ պաշտի ի մէնջ» (Բ Կորնթ. Ը 18-19)<sup>2</sup>:*

5բ // Եւ սպասաւոր եղեն (Ա 2):

Ստ. *Սպասաւորք, որ զգործս նորա գործէին, որք սպասաւորեցին Բանին կենաց, վասն որոյ եւ ի բոլորիցն ընկալաւ զճշմարտութիւն ականդութեանս:*

Կամ եղեւ ինձ (Ա 3):

Կղ. *Նոյն փոյթ եղեւ եւ տենչանք կարգել զպատմութիւն մարմնացելոյ Բանին:*

Իգ. *Արդ՝ Ղուկաս Հոգովն Սրբով գրեաց զայս ի փշմանէ անտի Հոգոյն եւ ո՛չ ուսանելոյ զաւրութեամբ, թէպէտեւ «կամ եղեւ»*

<sup>1</sup> բնագրում՝ ամպարհաւածութիւն

<sup>2</sup> ստորին լս. գրչի ձեռքով գրված է. «Զոմանս աւետարանիչս, զոմանս աւետարանս քարոզս արար Քրիստոս»:

նմա ասել, եթէ յառաքելոց անտի ուսայ առ խոնարհութեան իւրոյ, այլ ընկալաւ ի Հոգոյն Սրբոյ գրել: Ըստ Տեառն խոստման[ն]. «Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցցէ եւ յիշեցուցցէ ձեզ զամենայն» (Յովհ. ԺԴ 26): Եւ զի՞նչ զարմանք են, զի որք մկրտեցան՝ «ի լեզուս խաւսեցան եւ մարգարէացան» (հմմտ. Գործք ԺԹ 6):

Ի սկզբանէ զհետ երթեալ էի ամենայն<sup>1</sup> ճշմարտութեամբ (Ա 3):

Իգ. Այսինքն՝ ո՛չ զի ի վերջնոց ո՛ք էի հաւատացելոց, այլ որ ի սկզբանէ քարոզութեան հաւատացին: Եւ ոչինչ նուազ գտայ, այլ ամենայն ճշմարտութեան հասու եղէ:

Կարգաւ գրել (Ա 3):

Իգ. Վասնզի սկիզբն եղ որպէս պարտ էր, եւ ի կատարումն էած որպէս աւրէն էր ըստ պատշաճի գրոց: Զի սկսաւ յիջանելոյ նո՞ճա րա եւ գայ ի մարդկապէս ծնունդ նորա, // եւ ապա՝ կարգս զգաւրութիւնս նորա, եւ գայ ի չարչարանս նորա եւ [ի] յարութիւն եւ ի համբառնալն: Ասելն Յովհաննու. «Զաշխարհս չլինել բաւական տանել զգիրսն, որ թէ գրեալ էին» (Յովհ. ԻԱ 25), վասնզի զամենայն սքանչելագործութիւնս եւ զբան վարդապետութեան, զոր խաւսեցաւ ընդ նոսա եւ խրատեաց, եւ զհակառակութիւնն, զոր կրեաց ի փարիսացւոց անտի զսոսա ասէ, թէ գրեալ էին, չէին կարող միտք մարդկան տանել զամենայն: Եւ աւետարանիչքն փոքր ինչ բան գրեցին:

Զմի եւ գերկու ի նշանացն գրեցին եւ զբազումս ի նոյն յարեցին:

Իգ. Ո՛չ մի ըստ միոջէ զամենայն գրեաց, այլ մասն ինչ յամենայնէ ի նշանացն, զի բորոտք սրբեցան եւ ամենայն ախտաժէտք բժշկեցան: Սակաւ գրեցան, եւ զամենայն բովանդակեալ ունին, եւ սուղ ինչ ի վարդապետութենէն:

Գրել քեզ (Ա 3):

Ոսկ. Եւ դու տե՛ս զնորա առաքելական կամսն: Վասն առն միոյ յայսչափ արար ստուգութիւն, զի ամբողջ աւետարան գրեաց, զի ի Տեառնէ լուաւ. «Ո՛չ են կամք Հաւր իմոյ, զի կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ» (Մատթ. ԺԸ 14):

<sup>1</sup> B ամենայնի

Քաջդե Թէոփիլէ (Ա 3):

Արդ՝ զի որք կամին քաջալերս տալ եւ զաւրացուցանել զնոսա, որ անհմուտք են քաջ նաւարկութեան, անցանել ընդ 6ք խորս ծովու // յամբառնալ ալեացն ընդդեմ, կամ զաւրավար առաքինի, զնահատակն քաջ լինել, մղել զճակատն: Ըստ այսմ աւրինակի եւ աւետարանիչս յորդորէ քաջամուխ լինել ի խորս անքնինս աստուածային տնաւրէնութեանն, ի միտ առնուլ զխորհուրդս նուաստանալոյ Աստուծոյ մերոյ մերով բնութեամբս: Անարատ մտածութեամբ եւ ուղիղ տեսութեամբ հաւատոց հայել ի ճշմարիտ դաւանութիւն, որ էջն ի խոնարհս, եւ զմերս ելոյծ արդարութեամբ զպարտիս եւ յառաջինն ածել պատիւ, ընդ իւր տարաւ ի վեր կամ զաւրաւոր եւ աստուածասէր էր այրն:

Իգ. Նա հանդերձ գովութեամբ դնէ զանունն պարզաբար: Նաեւ ի Գործս Առաքելոցն դնէ զանունն հիացմամբ. «Վասն զՈ՛ր Թիոփիլէն» (Գործք Ա 1), ասել ըստ առաքելոյ. «Ո՛ր խորք մեծութեան եւ իմաստութեանն Աստուծոյ» (Յռոմ. ԺԱ 33) սքանչմանէն<sup>1</sup>, զի նայեցեալ ճշմարտութեամբ ի խորհուրդ մարդեղութեան: Բոլորից Տէրն ի կերպարանս եղեալ եւ ճոխն մեծութեամբ, երկնի եւ երկրի Արարիչ գոլով՝ աղքատացաւ վասն մեր եւ համբէր անարգանաց եւ մահու, եւ նստաւ ընդ աջմէ մեծութեանն Աստուծոյ ի բարձունս:

Ոսկ. Արդ՝ ո՞վ ոք Թէոփիլոսն իցէ: Ոմանք կարծեցին, թէ առ առ 7ա մենայն հաւատացեալս ասէ<sup>2</sup>: // Բայց նա մի ոք յերեւելի եւ ի նշանաւոր արանց էր եւ այն ինչ նորընծայ ի հաւատսն:

Ձի ուսանիցիս ի Բանիցն, որոց աշակերտեցար, զճշմարտութիւնն (Ա 4):

Ընդէ՞ր Բան կոչէ եւ ո՛չ աւետարան: Եւ Պաւղոս զնա աւետարան կոչէ՝ ասելով. «Որոյ գովութիւնն աւետարանի ընդ մենայն եկեղեցիս» (Բ Կորնթ. Ը 18): Մեծագոյն քան զանձն իւր դնէ զանունն աւետարանին եւ բացայայտէ զքարոզութիւն մարդեղութեանն Քրիստոսի:

Եղեւ յաւուրս Հերովդիայ արքայի Հրէաստանի (Ա 5):

Իգ. Կարեւոր համարեցաւ Մատթէոս առ ծննդեանն կարգել զՀերովդէս արքայ: Ըստ նմին՝ եւ Ղուկաս ի սկիզբն իւրոյ Ա-

<sup>1</sup> բնագրում՝ զքանչմանէն (այսուհետեւ չենք նշում)  
<sup>2</sup> Ե է բանն փիւ ասէ

ւետարանին: Արդ՝ զայս առնեն ո՛չ վասն ժամանակին ստուգելոյ, որպէս աւրէն է ժամանակագրաց,

**Մովս.** այլ զի մարգարէութիւնն լցաւ<sup>1</sup> Յակոբու մեծի նահապետին յաւրհանութիւն անդ. «Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ մինչեւ ի գալն, որոյ իւրն է թագաւորութիւն» (հմտ. ԾՆՆդ. ԽԹ 10): Եւ նա՛ է ակնկալութիւն հեթանոսաց: Ո՛չ վասն Դաւթի զայս մարգարէացաւ, այլ որ ի գաւակէ Դաւթի ճշմարիտ էառ զմարմնաւորութիւն ի Բեղղազէմ, որ Դաւթի կոչեցաւ քաղաք, ծնաւ ի սրբոյ Կուսէն: Ի սմա բանայր դուռն տիեզերաց տեսութեան արարչական բանին մարմնանալ ճշմարտապէս, որ է առաջին եւ 7ք ո՛չ կրսեր // քաղաք գաւառին Յուդայ (հմտ. Սատթ. Բ 6):

«Ի քէն ելցէ ինձ իշխան» (Միք. Ե 2): Ո՛չ ըստ Դաւթի կամ ըստ այլ մաքուր թագաւորաց, որք ի միում ցեղին Իսրայելի թագաւորեցին, այլ ի Բեթղեէմ ի Կուսէն ծնիցելոյ: Եւ տիրել տիեզերաց աստուածաբար, զի մի՛ հրէայքն ճոխասցին միայն յինքեանց զմարմնաւորութիւնն հաւատալ: Զի եւ ի հեթանոսաց անմաքուր կանայքն ի դստերացն Իսրայելի հաջորդեցին զմաքրութիւն՝ Ռահաբ, Հուլթ եւ Թամար, զի եւ հեթանոսաց պարծեսցի ժողովարանն նախամայր գոլով սրբոյ Կուսին, զի որպէս հրէայքն պարծին թագաւորաւքն եւ նահապետաւքն, սրբոյ Կուսին նախահարքն, նմանապէս եւ սուրբ Եկեղեցի:

**Իգ.** Եւ ահա փոխեցաւ թագաւորութիւնն ի Հերովդէս, որ ի հեթանոսաց անտի, վասնզի ի ժամանակի[ն] իբրեւ նեղեցաւ Երուսաղէմ ի մարաց եւ ի պարսից, եւ ի գերութիւն վարել զՀիւրկանոս քահանայապետ, եւ սպանել զՓասալիոս, եւ առաջնորդ կացուցին Երուսաղէմի զԱնտիգոնոս, եւ Հերովդէս փախուցեալ հասանէր ի Հռովմ, եւ անտի աւգնականութիւն գտեալ՝ հասանէ յԵրուսաղէմ զաւրաւարաւն Պոմպէիլ: Սա<sup>2</sup> առաջին յԵրուսաղէմ՝ ի հռոմայեցոց անտի թագաւոր, որ էր ազգաւ Ասկ[ա]ղոնացի, որդի Անթիպատ[ր]եայ, որ է ի գերելոց

**Տա** մանկանցն<sup>3</sup> հեթանոսաց: // Եւ յայտ է, թէ լցեալ է գիրն, եւ պակասեցան իշխանք Յուդայ, վասնզի եկն, որ իւրն է իշխանութիւն:

**Ստ.** Արդ՝ վասնզի ետես նահապետն Հոգևով զ[ը]նտրութիւն որդւոցն Յեսսեայ եւ անտի սկիզբն լինել թագաւորութեանն Յուդայ, եւ մի՛ պակասեսցեն մինչեւ եկեսցէ, որոյ իւրն է ա-

<sup>1</sup> բառը սրբագրված է տողի վերեւում այլ մեկնումով եւ ձեռքով B չիք լցաւ

<sup>2</sup> B եւ որպէս յայտ է սա

<sup>3</sup> բնագրում՝ մանգանցն

ուաջնորդութիւն: Զի եւ ո՛չ ի գերութեանն բաբելացոց պակասեաց իշխան ցեղին Յուդայ, քանզի Յեքոնիայ կայր ի պետութեան իբրեւ զթագաւոր ոք, եւ Սեղեկիայ թագաւորեաց յերուսաղէմ, եւ յետ սորա թագաւորեաց Զաւրաբաբէլ որդի Սաղաթիելի: Իսկ առ ծննդեամբ Փրկչին մերոյ ի սպառ բարձեալ էր իշխանութիւնն Յուդայ: Եւ Հերովդէս ի հեթանոսաց թագաւորեաց:

Քահանայ ոմն՝ անուն Զաքարիա (Ա 5):

Ստ. Յիշումն Աստուծոյ:

Ի դասակարգէ Աբիայ (Ա 5):

Իգ. Զդասս քահանայութեան նշանակեաց մեզ աւետարանիչս: Զի ո՛չ էր սա յայնպիսեացն, որ բռնութեամբ եւ ո՛չ ըստ աւրինացն առին զքահանայապետութիւն եւ ամի ամի տիրեցին: Այլ «ի դասակարգէն Աբիայ», որ աւրինաւք ըստ կարգին Ահարոնի ընկալան զպատիւն: Այն, զոր այլք յանդգնեցան մերժել ի քահանայապետութենէ անտի:

Եւ կին նորա ի դստերաց Ահարոնի<sup>1</sup> (Ա 5):

Աստ ցուցանէ, թէ ըստ աւրինացն Մովսիսի վարեցաւ նա:

Տք // Քանզի հրաման էր քահանային մեծի առնուլ կին յազգէ քահանայութեանն, թէպէտ եւ երկու կին առնուլ հրաման էր, այլ ո՛չ քահանայապետին: Սորին աղագաւ ասաց «ի դստերացն Ահարոնի» գոլ զնա:

Եւ անուն նորա Եղիսաբեթ (Ա 5):

Ստ. Աստուծոյ իմոյ եաւթներեակ:

Իգ. Զանունն կարգել պիտանացու էր, զի առանց անուան ամենայն ինչ անգոյ է: Եւ անունն զամենայն անձն յայտնի առաջի աչաց կացուցանէ:

Եւ էին երկոքեան արդարք (Ա 6):

Աստի ուսանիմք, եթէ ո՛չ բնութեամբ, այլ աւրինաւքն Աստուծոյ ընկալաւ զպատիւս: Զի արդար է, որ ո՛չ իւրիք սխալեաց, այլ բովանդակ զամենայն առաքինութիւնս ստացեալ ունէր:

<sup>1</sup> Բնագրում՝ Ահարոնէ

**Ստ.** *Իսկ «երկուքն արդարք»՝ այս վերին խնամակալութեամբն եղեւ: Ըստ Սողոմոնի. «Ի Տեառնէ յարդարի՝ կին առն» (Առակ. ԺԹ 14): Այնպիսի պարտ էր լինել ծնաւղաց այնպիսում առն, որ գարմանալի էր առ ամենեսին:*

**Առաջի Աստուծոյ (Ա 6):**

*Այս է ստոյգ արդարութիւն, որ ամենատեսակն հայի, զի առաջի մարդկան ձեւանալ դիւրին է, այլ առաջի Աստուծոյ ո՛չ է հնար: Ըստ այնմ, թէ՛ «Արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած ճանաչէ զխորհուրդս ձեր» (ԺՁ 15): Այլ սոքա արդարք են, որպէս տեսանէ Աստուած, որ հայի ի սիրտս:*

**Գնային յամենայն պատուիրանս եւ յիրաւունս Աստուծոյ**

(Ա 6):

**9ա** // *Ընթացք են բարեաց, որպէս չարեաց որդիքն Հեղեայ. «Երթալով երթային, եւ չար էր ճանապարհ նոցա» (Ա Թագ. 9 21): Իսկ սոքա ի կամս Տեառն գնային անարատութեամբ:*

**Եփ.** *Զի մի՛ սսիցեն, թէ՛ վասն յանցանաց ո՛չ ծնան, այլ սքանչելեաց՝ մնային՝ ոչինչ բժաւորեալք յախտից:*

**Եւ ո՛չ գոյր նոցա որդեակ, քանզի Եղիսաբեթ ամուլ էր, եւ երկուքին անցեալ զաւուրբք իւրեանց (Ա 7):**

**Կղ.** *Վասնզի յաճախ ի մէջ բերէր զամլութիւն եւ զանորդիութիւն: Յարէ եւ ի նոյն զառաքինութիւն երկուցունցն եւ ի բաց վճարէ զմեղաց եւ զնզովից ամլութիւն:*

**Իգ.** *Եւ արդ՝ այս ամլութիւն ո՛չ պատահումն ինչ էր, այլ Աստուծոյ մատակարարութեան գործ, զի հիացմամբ լիցի ծնունդ Կարապետին եւ ո՛չ աւրինաւք: Որպէս զԱննային գրեալ է. «Տէր փակեաց զարգանդ նորա» (Ա Թագ. Ա 5), զի աղաւթիւք եւ սքանչելեալք ծնցի մանուկն Սամուիէլ, ըստ Աբրահամու աւետեացն, եւ Սառուայի եւ Ռեբեկեայ:*

**Կղ.** *Զի նախքան զծնանելն Քրիստոսի ի միշտ Կուսէն եւ ծնունդն եւս Կարապետին երեւեսցի ըստ հրեշտակին ձայնին առ Կոյսն սուրբ, թէ՛ «Ահա Եղիսաբեթ ազգական քո, եւ նա յղի է» (Ա 36) ծերութեամբ եւ ամլութեամբ: Զի աւտար է ամլութեամբ ծնունդը ընդունել յանցեալ ժամանակի, վասնզի կարգ է*

<sup>1</sup> Առակաց՝ պատշաճի, Իգ.՝ յարմարի

<sup>2</sup> բնագրում՝ զքանչելեաց (այսուհետեւ չենք նշում)



9բ նախ զծնունդ Կարապետին ի ծերացեալ արդանդէն, // զի հաւատարիմ լիցի կուսական ծնունդն Բանին մարմնացելոյ: Նաեւ ծնունդն Յովհաննու քարոզն ապաշխարութեան ժողովրդեանն Իսրայելի գուշակէր զճշմարիտ մկրտութիւն Քրիստոսի, որ հրաւիրելոց էր զորդիս մարդկան յորդեգրութիւն<sup>1</sup> Աստուծոյ:

**Եղեւ ի քահանայանալն նորա առաջի Աստուծոյ (Ա 8):**

Իգ. Քահանայագործել ըստ այլոց քահանայիցն:

**Ըստ աւուրցն հասանելոյ (Ա 8):**

Կդ. Կամ զայն ասէ, որ ըստ ամացն շրջագայութեան հասանեն աւուրք տաւնիցն, կամ այլք յանդգնեցան լինել քահանայապետք: Բայց զՋաքարիաս ո՛չ մերժեցին, այլ ետուն նմա տեղի ի տաւնի անդ, զի զքահանայութեանն սպասաւորութիւն լցուցէ ի տաւնի անդ ըստ աւրինացն:

**Եհաս նմա խունկ արկանել՝ մտեալ ի<sup>2</sup> տաճարն Տեառն (Ա 9):**

Կդ. Վասնզի ամի ամի ի տարոջն մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբութեանցն: Զոր եւ սա ըստ այնմ աւրինակի մտանել կարգաւորէր յեալթներորդ ամսեանն, որ կոչէր Թշրին, ի սկսանել ամսոյն, յորում սկիզբն առնէր ժողովուրդն մտանել ի պահս ի տասներորդ լուսնին: Եւ անուանէին զաւրն զայն քաւութեան:

Իգ. Յորում պարտ էր վասն ամենայն ժողովրդեանն փրկութեան զոհս մատուցանել, եւ յամենայն զոհից տանել ի ներքս ի սրբութիւն: Եւ այնպէս խունկ արկանել // եւ խոստովանել զմեղս ժողովրդեանն եւ խնդրուածս առնել վասն քաւութեան առաջի Աստուծոյ:

**Ամենայն բազմութիւն ժողովրդոցն կային արտաքոյ յաղաթս ի ժամ խնկոցն (Ա 10):**

Իգ. Քանզի ո՛չ էր նոցա համարձակել մտանել ի ներքս, այլ արտաքոյ կալ: Թուի, թէ յայնժամ ո՛չ էին արհամարհեալ զտաճարն, քանզի Ջաքարիայ արդար քահանայ [եւ] աւրինաւք խրատէր զնոսա: Եւ ի վախճանելն Ջաքարիայի արարին տուն վաճառի: Վասն այնորիկ Յիսուսի նախանձ[ն] ցուցեալ եհան արտաքս զամենեսին եւ՝ «Ո՛չ տայր անաւթ անցուցանել ընդ տաճարն» (Մարկ. ԺԱ 16):

<sup>1</sup> բնագրում՝ յորդեգրութիւն

<sup>2</sup> բնագրում՝ կրկ ի ի

Եփ. *Զի ի տաճարն եկն հրեշտակն, որպէսզի մի՛ գտցեն հրէայքն պատճառ, որք աւտարացուցանելն կամէին զառաքող հրեշտակին եւ զՏէր տանն ի տաճարէն:*

**Եւ երեւեցաւ նմա հրեշտակն Տեառն (Ա 11):**

Եփ. *Զաքարիա եկն առ հրեշտակն, զի յայտ արասցէ, թէ կրսեր է ծնունդ նորա քան զհրեշտակն: Իսկ առ Մարիամ ինքն հրեշտակն եկն, զի յայտ լիցի, թէ ծնունդ նորա Տէր է հրեշտակաց: Ո՛չ եկն հրեշտակն առ Եղիսաբեթ, զի Զաքարիայ էր ծնաւդ<sup>1</sup> Յովհաննու, եւ ո՛չ առ Յովսէփ եկն Գաբրիէլ, զի Մարիամ միայն էր ծնաւդ անդրանկանն: Ո՛չ եկն հրեշտակն առ Եղիսա-  
10ք բեթ, զի այր գոյր նորա, այլ եկն առ Մարիամ, զի // լցցէ անուամբ իւրով զտեղի խորհրդոց առն:*

**Զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն (Ա 11):**

Եփ. *Ընդ աջմէ սեղանոյն աւետարանեցաւ, զի յայտ արասցէ, թէ սահման է նա սպասու առաջին պաշտամանն:*

Իգ. *Ասաց Աստուած Մովսիսի. «Դիցես զսեղանն քաւութեան ի վերայ արկեղ կտակարանացն եւ զերկուս քրովբէսն, զի հովանի ունիցին ի վերայ քաւութեանն: Եւ անդուստ խաւսեցայց ընդ քեզ ի միջոյ երկուց քրովբէիցն» (հմմտ. Ելից ԻԵ 20-22): Իսկ յաւերել քաղզեացոցն զտաճարն Երեմիաս առ ամփոփեաց զտապանակն եւ որ ինչ ի նմա կայր եւ ի դարձին անդրէն: Թէպէտեւ զայլ կարգսն նորոգեցին, սակայն սեղան քաւութեան ո՛չ էր աւրէն առնել, զի ո՛չ գոյր տապանակն ի միջի: Եւ Աստուած ո՛չ յայտնեաց նոցա, թէպէտ գոյին մարգարէք ի դարձի անդ:*

Ստ. *Արդ՝ ո՛չ էր սեղան քաւութեան, ընտրեաց հրեշտակն առ սեղան խնկոցն:*

**Եւ խռովեցաւ Զաքարիաս իբրեւ ետես զհրեշտակն, եւ անկաւ ահ ի վերայ նորա (Ա 12):**

Կդ. *Վասնզի ահեղակերպ իմն եւ հիացուցանող տեսլեամբ երեւեցաւ եւ տեղոջն եւս, ուր ո՛չ ոք մտանէր, բայց միայն քահանայապետն, եւ զայն մի անգամ ի տարոջն:*

Իգ. *Այսպիսիք բնութիւնք անմարմնոցն ահիւ մեծաւ տազնապեն, յորժամ ձեւացեալ երեւին ումեք, զի Դանիէլ ի վերայ երեսացն անկեալ՝ ի հաստատութեան ո՛չ զաւրէր կալ (հմմտ. Դան.*

<sup>1</sup> Ընագրում՝ ծնող

**11ա** Ժ 9): // Դարձեալ. զի յաւուրսն յայնոսիկ սպառեալ էր աստուածախաւսութիւնքն եւ հրեշտակացն երեւմունքն:

**Ասէ ցնա հրեշտակն. Մի' երկնչիր<sup>1</sup>, Զաքարիա'ս** (Ա 13):

**Ստ.** Նախքան զերկի[ւ]ղն լուծանէ հանդարտ բանիւք, որպէս առ Դանիելի. «Մի' երկնչիր, ա'յր ցանկալի» (Դան. Ժ 12, 11): Ընդ նմին եւ առ սովաւ փարատէ զերկի[ւ]ղն, զի զաւրասցին միտքն տանել զաւետիսն:

**Լսելի եղեն աղաւթք քո, եւ Եղիսաբեթ կին քո ծնցի քեզ որդի** (Ա 13):

**Իգ.** Արդ՝ եթէ ի տաւնի անդ քաւութեան վասն ժողովրդեանն փրկութիւն ինչ խնդրեաց, այս ի՞նչ է, թէ՛ «Եղիսաբեթ կին քո ծնցի քեզ որդի», թերեւս բազում անգամ աղաչեաց վասն որդւոյ: Իսկ Տէր, որ զամենայն ուղղէ եւ յաւրինէ անբաւ իմաստութեամբն, պահեաց զայս յիւրում ժամանակին: Բայց թուի ինձ կարի միաբան աղաւթից նորա էին բանք հրեշտակի: Արդ՝ մատեալ նա խնդրել քաւութիւն եւ թողութիւն ժողովրդեանն: Եւ ասէ հրեշտակն. «Լսելի եղեն աղաւթք քո, եւ ծնցի քեզ որդի»:

**Կդ.** Զի նա հանդերձեալ էր ցուցանել «զԳառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովի. Ա 29), որպէս ասաց Յովսեփայ. «Կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց» (Մատթ. Ա 21):

**Եփ.<sup>2</sup>** Արդ՝ եթէ աղաւթք զայս խնդրեցին եւ Աստուած ետ բարիոք, ուրեմն ո՛չ զրկեցաւ յաղաւթից իւրոց: // Արդ՝ յայտնի լիցի յայսմ վայրի, թէ աղաւթք զամենայն խնդրուածս կարող են առնուլ, եւ միտքն կարող է գոմն առնուլ եւ գոմն արգելուլ:

**Կոչեսցես զանուն նորա Յովհաննէս** (Ա 13):

Յովհաննէս թարգմանի յԱստուծոյ շնորհ, յԱստուծոյ ողորմութենէն, զի ծնաւ Յովհաննէս ի վախճանի եաւթներբեկի Հին Կտակարանացն:

**Կդ.** Զայն Աստուծոյ եւ բարբառ Յովհաննէս յորժորժեցաւ, այսինքն՝ որպէս ի ձեռն ձայնին Բանն յայտնի, սոյնպէս եւ բարբառ գոյով սա Բանին մարմնացելոյ քարոզէր զգալուստ Բա-

<sup>1</sup> բնագրում՝ երկչիր

<sup>2</sup> Այս հատվածը Իգնատիոսից է, այլ եփրեմից, էջ 15-16:

նին եւ զազատութիւն աշխարհի, որ ի ձեռն մարմնացելոյ Բանին լինելոց էր:

**Սա եղիցի ուրախութիւն եւ ցնծութիւն քեզ (Ա 14):**

Եփ. Ո՛չ զի ծնար, այլ զի զորպիսի ոք ծնար:

Իգ. Եւ ո՛չ են ըստ այլ մանկանց, որք տրտմեցուցանեն զծնողսն, այլ նախ՝ քեզ լիցի բերկրումն եւ ապա՝ բազմաց: Կրկին ասելովն՝ զմեծութիւն պարզեւին յայտնէ:

**Եւ բազումք ի ծննդեան[ն] նորա խնդա[ս]ցեն (Ա 14):**

Բազմաց խնդութիւն եղեւ վասն սքանչեաւք ծննդեան նորա, որչափ եւ Զաքարիայ: Յուցանէ զպատիւ մանկանն, եւ ո՛չ ըստ մարմնոյ, այլ հոգեւոր զաւրութեամբ մեծանայ ի պատիւ հրեշտակաց:

**Եղիցի մեծ առաջի Աստուծոյ (Ա 15):**

Կղ. Ըստ որում եւ Տէրն վկայեաց, եթէ՛ «Մեծ ի ծնունդս կանանց չիք, քան զՅովհաննէս» (Է 28):

12ա Իգ. Այս է կատարեալ ճոխութիւն, // որ յԱստուծոյ իցէ: Զի անլոյծ եւ անանցական է պատիւն, քանզի երկրաւորքս կորստականք են եւ երեւմամբ միայն խաբեն:

**Գինի եւ աւղի<sup>1</sup> մի՛ արբցէ (Ա 15):**

Եփ. Իբրեւ զուխտաւոր մանկունս աւետեաց, զի յայտ արասցէ, թէ ընտանի է անմարմնոցն:

Կղ. Աստ բովանդակ զարբեցութեան ճաշակս յայտ առնէ, այլ ո՛չ գունակ Սամսոնի եւ Սամուէլի եւ այլոց առաջնոցն զնա հրաժարեցուցանէ, զի անդ պատուիրանաւ հրամանին արգելան: Իսկ սա մարգարէանայ անձնիշխան կամաւ՝ ի բաց կալ արբեցութենէ:

Իգ. Նա զի եւ այս ուխտաւորացն էր, որ Նազաւրացի կոչէին: Իսկ նա ըստ աւրինացն եւ աւետարանական քարոզութեամբն կատարեալ էր:

**Եւ Հոգով Սրբով լցցի անդատին յորովայնէ մաւր իւրոյ (Ա 15):**

Կղ. Տեսե՞ր զանզուգական շնորհն տուեալ Յովհաննու, վասնզի ո՛չ ոք ի մարգարէիցն Հոգովն Սրբով լցաւ յորովայնէ: Վասն

<sup>1</sup> բնագրում՝ իւղի, Եփր. և Իգ.՝ օղի

որոյ եւ ի շնորհաց Սուրբ Հոգոյն ծանուցեալ զայն, որ յորովայնի Կուսին խայտացեալ երկրպագեաց, որ աւտար է ի տղայական հասակէ:

Իգ. Այս է ընտրութիւն մեծ:

**Եւ զբազումս յորդոցն Իսրայելի դարձուցէ ի Տէր Աստուած** (Ա 16):

12բ Բազում շահ եղեւ Մկրտչին յառաջ զայն եւ քարոզել[ն] վասն Քրիստոսի, զի զբազումս դարձոյց առ նա, թէպէտեւ ո՛չ գրեցան, որպէս Տէրն ասաց, թէ՛ «Մաքսաւորք եւ մեղաւորք արդարացուցին զԱստուած, // զի մկրտեցան ի մկրտութեանն Յովհաննու» (Է 29): «Զբազումս դարձուցէ առ Տէր Աստուած»: Ահաւասիկ զծնեալն ի Մարիամայ Տէր եւ Աստուած քարոզեաց: Ըստ Մաղաքիա[յի] մարգարէութեանն, թէ՛ «Նախանձուն իւրոյ զարթիցէ, սրբել եւ ուղղել զաւրէնսն» (տե՛ս Մաղաք. Գ 1-4):

Կդ. Յովհաննէս, որ առանց պատարագաց տայր զքաւութիւնն, սրբեսցէ զորդիսն Ղեւեայ: Եթէ նոքա են սրբիչ ժողովրդեանն, զիա՞րդ կարաւտին նոքա այլոց սրբութեան: Այլ քանզի լուծանելոց էր քահանայութիւն նոցա ի գալստեանն Յովհաննու, վասն այնորիկ տիրեաց նա ի վերայ նոցա իբրեւ զծոմբ, զի սպիտակացուցանէ: Այս վասն դրոշմի աւագանի մկրտութեանն Քրիստոսի ասացաւ, զի Յովհաննէս կանխեաց յառաջագոյն աւետարանեաց Իսրայելի, զի յետ մկրտութեան ջրոյն ե//<sup>1</sup> մեծ պարգեւ մկրտութեան հրոյն եւ ջրոյն:

**Ինքն եկեացէ առաջի նորա** (Ա 17):

Որպէս վկայեաց Մաղաքիայ. «Ահաւասիկ առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո»՝ Յովհաննէս առաջի Քրիստոսի, «հորդեսցէ զճանապարհս իմ առաջի քո» (Մաղ. Գ 1): Զայն, զոր կամակորեցին որդիքն Ղեւեայ, որ յաւուրսն Յովհաննու նորոգեցան ամենայն աւրէնքն:

**Հոգով զաւրութեամբ Եղիայի** (Ա 17):

13ա Կդ. Որպէս Եղիա յանապատի բնակէր, նոյնպէս եւ՝ Յովհաննէս: Եղիա զԱքայաբ յանդիմանէր, եւ սա՛ զՀերովդէս, // Եղիա՛ վասն կնոջն Յեզաբելայ (տե՛ս Գ Թագ. ԺԷ-ԻԱ, Դ Թագ. Ա-Բ), եւ սա՛

<sup>1</sup> տառերը վնասված են, անընթեռնելի է (եղեւ<sup>2</sup>):

վասն կնոջն Հերովդիադայ, Եղիա Կարապետ գոլով երկրորդ  
գալստեանն Քրիստոսի, եւ սա՝ առաջին:

Ստ. Եղիա վերացաւ, Յովհաննէս յառաջընթաց Քրիստոսի,  
շնորհիւ եւ զաւրութեամբ Եղիայի, այսինքն՝ նոյնպէս Հոգևով  
Սրբով: Ո՛չ Հոգևովն Եղիայի, զի մի՛ կարծիցես, եթէ փոփո-  
խումն է Հոգևոց մարդկան ի միմեանց մարմին, որպէս ոմանք  
ցնորեցան ասել:

Իգ. Արդ՝ զսպասաւորութիւնն, զոր Եղիայի երկրորդ գալս-  
տեանն կատարեսցէ զՔրիստոս քարոզելով, զնոյն եւ Յովհան-  
նէս ելից յառաջին գալստեանս: Վասն այնորիկ Եղիա ասացաւ  
ո՛չ մարմնով, այլ Հոգևոյն Սրբոյ շնորհաւք: Ըստ այնմ, եթէ՝  
«Հանգեաւ ոգին Եղիայի ի վերայ Եղիսէի» (Դ Թագ. Բ 15): Ըստ  
բանին Տեառն՝ «Եղիա եկն եւ ո՛չ ծանեան զնա» (Մատթ. ԺԷ 12):

**Դարձուցանել զսիրտս Հարց յորդիս (Ա 17):**

Ըստ Մաղաքիայ (տե՛ս Մաղ. Դ 6), քանզի փոխեցան նոքա ի  
հրէութենէ ի հեթանոսութիւն եւ երկմտեցին ուխտին Աստու-  
ծոյ: Դարձեալ. ծառայելոց էին Աստուծոյ Հարցն իւրեանց  
ստուութեամբ եւ երեւեալ ճշմարիտ որդիք Աբրահամու վարդա-  
պետութեամբ նորա:

**Պատրաստել Տեառն ժողովուրդ կատարեալ (Ա 17):**

Ըստ նմանութեանն Եղիայի, զի նախանձովն իւրով դար-  
ձոյց նա զբազումս յաստուածպաշտութիւն Տեառն: Եւ եթէ  
ասիցեն, յապա լինելոց է: Ահաւասիկ ո՛չ են բաժանեալ Հարք  
13բ յորդոց եւ որդիք ի Հարց (հմտ. ԺԲ 53), // որ ո՛չ զկուռս պաշ-  
տեն:

Ստ. Ձի Հայր էր Աբրահամ, եւ դեռ ո՛չ էր սիրտ նորա դարձեալ  
ի մեզ: Իսկ յորժամ արասցուք զգործ նորա հաւատոցն, յայն-  
ժամ դառնայ ի մեզ եւ որդիս իւր առնէ:

Կղ. Վասնզի հեթանոսաց ազգն, որ ո՛չ հաւատացին Մովսիսի  
աւրինացն, զի եւ նոքա զգաստացեալ<sup>1</sup> առաւել ծանիցեն  
զՔրիստոս զիւրեանց արարիչն: Ըստ Տեառն բանին. «Եկեսցեն  
յարեւելից եւ յարեւմտից եւ բազմեսցեն ընդ Աբրահամու եւ  
ընդ Սահակայ յարքայութեանն երկնից» (Մատթ. Ը 11):

Իգ.<sup>2</sup> Վասն գործոց երկուց պատճառացն: Վասնզի որպէս նա  
ե[կ]եալ<sup>1</sup> «դարձուցանէ զսիրտս Հարց յորդիս», զհրէայսն ի

<sup>1</sup> բնագրում՝ սգաստացեալ (այսուհետեւ չենք նշում):

<sup>2</sup> Այս հատվածը Իգնատիոսից չէ:

բանս առաքելոցն նախքան զՔրիստոսի գալն եւ հարկանել զերկիր, նոյնպէս եւ Յովհաննէս դարձոյց զսիրտս հարցն ի բան մարգարէիցն, որք կանխաւ գուշակեցին զՏէր մեր ի վարս ուղիղս եւ մաքուրս: Որպէս խրատեցին զնոսս մարգարէքն, նոյնպէս սպասաւորէ Եղիա յերկրորդում գալստեանն: Ըստ առաքելոյն, որ եթէ՝ «Յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ապա մենայն Իսրայէլ կեցցէ» (Յոնմ. ԺԱ 25-26):

**Ձանիմաստս յիմաստութիւն (Ա 17):**

Եփ. Հաճոյ լինի Տեառն պատարագ նոցա, յորժամ իմաստացուցանէ զնոսս Յուդայ, որ է Քրիստոս, մինչչեւ եկեալ իցէ ակր Տեառն մեծ եւ երեւելի, այն, որ ի նմա յայտնելոց է Քրիստոս  
 14ա Իսրայելի, զի մի՛ հար(11)ից զերկիրն Իսրայելի վերջին ակերն եւ սատակումն նոցա ի հռոմայեցւոցն<sup>2</sup>, որպէս ասաց Դանիէլ (տե՛ս Դամ. ԺԳ 51-60): Եւ որ ասացաւ նոցա. «Թողեալ լիցի ձեզ տունդ ձեր ակերակ» (Մատթ. ԻԳ 38), եւ «Եկեսցեն ակուրք, զի ասիցէք լերանց, թէ ծածկեցէք զմեզ, եւ ցբլուրս, թէ անկերուք ի վերայ մեր» (ԻԳ 30, Յայտ. Զ 16): Զի մի՛ հարից սատակեցից զերկիր, յորժամ լրումն հեթանոսաց մտցէ:

**Ասէ Զաքարիա ցհրեշտակն. Եւ ի՞նչ գիտացից, զի ես ծեր եմ եւ կի՛ն իմ անցեալ զակուրք (Ա 18):**

Զի մինչ հեռին էր՝ խնդրէր, եւ իբրեւ մերձեցաւ ակետիսն՝ ո՛չ հաւատայր: Վասն այնորիկ մինչ հաւատայր՝ խաւսէր, եւ իբրեւ թերեցաւ՝ պապանձեցաւ բերանն, որ ասէր. «Բա՛, զի ա՞րդ լինիցի այդ»: Պարտ էր նմա պապանձիլ, զի ուսցի, թէ մարթ էր այսմ լինել: Եւ լեզուն արձակեալ կապեցաւ, զի ուսցի, եթէ մարթ էր կապեալ արգանդին արձակել: Գիտաց, եթէ որչա՞փ անիրաւ խաւսեցաւ, զի ճաշակեսցէ հատուցմամբն զգարձ փոխարինին իւրոց բանիցն, որ անարգեաց զբանս հրեշտակին, ընկալաւ պատիժս, տանջեցաւ լեզուն, զի խրատեցին միտքն: Գտաւ նա տգէտ այնմիկ, զոր բազում ժամանակս ուսուցանէր, զի ո՛չ լուան ականջք նորա, զոր շրթունքն աղաչեցին: Յամաքեցաւ ի բերան նորա աղբիւր բանիցն, զի զըմպել(11)ին ականջաց իւրոց ո՛չ առաքեաց: Զի Զաքարիա՛ զա[յ]րս, որ անսերմ էին, Աբրահամաւ քաջալերէր, իսկ զկանայսն Սառայիւ մխիթարէր, որպեսզի եւ ի[ն]քն եւ կինն իւր

<sup>1</sup> Կ տառի մեկանը թափված է. երեւում են ճնշման հետքերը:

<sup>2</sup> Ընագրում՝ հռոմայեցիոցն

նման նոցա ունէր: Զի Աբրահամ եւ Սառնա իբրեւ զհայելի առաջի ամենեցուն եղեալ էր, զի ամուլքն մխիթարեսցին նոքաւք, որպէս Իսահակաւն, որ յետ իննսուն ամի նկարեցաւ ի մէջ նոցա:

Իգ. Թուի, թէ Հոգւոյն խնամակալութեամբ մատակարարեալ լինի, զի պարտ էր ամենեցուն յայտնի լինել այնպիսի տեսիլ եւ սքանչելի ծնունդ: Եւ իւրն խաւսել այսոցիկ անտեղի էր եւ դարձելի իբրեւ զվառանցեալ<sup>1</sup> ոք կամ զփառասէր: Արդ՝ անխայեաց զսա յայսցանէ:

**Ասէ ցնա հրեշտակն. Ես եմ Գարրիէլ (Ա 19):**

Իգ. Իսկ որ հաւաստի տեսութեամբ այսոցիկ քննիչք եղեն, ասեն զնա դասապետ հրեշտակաց ներքին դասուցն, որ հուպ առ մարդիկ են եւ խորհրդազգած տնաւրէնութեանն Տեառն: Զի ի միոյ դասէ են սոքա, որ առ Զաքարիայ եւ որք հովուացն երեւեցան, եւ որ առ Յովսէփ՝ ի գերեզմանի անդ: Եւ ի վերանալն յերկինս յուղարկաւոր լինէին եւ ուսուցանէին զվերին դասքն, որ ինչ ի նոցանէ ծածկեցաւ եւ սոցա ցուցաւ:

**Որ կամ առաջի Աստուծոյ եւ առաքեցայ խաւսել ընդ քեզ (Ա 19):**

Կդ. Եւ զահաւոր տեղի սպասաւորութեանն իւրոյ յայտ առնէ:  
15ա // Բայց չիք տեղի բնաւ ուրեք, որ ո՛չ իցէ առաջի Աստուծոյ, միայն եթէ նա կամեսցի յայտնել զինքն: Եւ արդ՝ այսպէս կայ առաջի Աստուծոյ՝ առնել զկամս նորա

**Եւ աւետարանել քեզ զայդ (Ա 19):**

Մեծ է սպասաւորութիւն ստուգապէս եւ մեծի Աւետեաց եղեւ եւ միջնորդ:

**Ահա եղիցիս համր եւ մի՛ կարասցես խաւսել մինչեւ յաւրն, յորում այդ լինիցի (Ա 20):**

Աւետարանեաց հրեշտակն Զաքարիայի: Պարտ էր նմա ելանել նմա քարոզիչ: Արդ՝ փոխանակ զի ո՛չ հաւատաց լինել նմա քարոզ խաւսաւք իւրովք, եղեւ քարոզիչ պապանձանաւքն:

Եփ. Ծեփեցաւ դուռն շրթանց բերանոյ նորա, զի սուրբն սրբոց խաւսեցաւ ընդ նմա Բանն, որ ել ի հրեշտակէն: Զբերանն փա-

<sup>1</sup> Իգ.՝ զառանցեալ



կեաց եւ եբաց զարգանդն: Արժան էր փակել բերանոյն այնորիկ, որ ո՛չն հաւատաց բանալ ամուլ արգանդին: Արժան էր փակել արգանդին, որ ծնաւ զՅովհաննէս, զի այլ մի՛ ծնցի, որպէսզի եղիցի քարոզ Միածնին միածինն:

- Իգ. Ասէ ոք. «Արդեւք ո՞չ ապաքէն հրաման ընկալաւ աւետիս<sup>1</sup> բերել եւ ո՛չ պատժել զարդարն, եւ զիա՞րդ պատժեաց անձնիչխան կամաւք»: Եւ ո՛չ երբեք: Քանզի անսան նոքա հրամանին Աստուծոյ եւ ո՛չ ժպրհին առանց կամաց Արարչին գործել ինչ, զի ամենայն ուրեք մերձ է Աստուած առ սպասաւորս իւր եւ տայ հրաման: Ըստ որում // եւ ընդ Սամուէլի<sup>2</sup> անմիջաբար խաւսէր վասն ընտրութեան որդոցն Յեսսեայ (տե՛ս Ա Թագ. ԺՁ-ԺԷ), որչա՞փ եւս ընդ մարմին բնութիւնն, զի նորին հրամանաւ ասաց հրեշտակն.

Մի՛ կարացես խաւսել, որք լցին ի ժամանակս իւրեանց (Ա 20):

- Եփ. Քանզի երկեալ ի բարի շքոյ անտի հրեշտակի փառաց: Խռովեցաւ նա լեզուաւ իրով եւ ո՛չ սրտիւ իբրու զայն, զի ասէ. «Դառնացուցին զոգի նորա» (Սաղմ. ԾԵ 33): Խռովեցաւ շրթամբք իւրաւք: Զի թէ սրտիւ իւրով երկմտեալ էր նա, սրտիւ իւրով տանջեալ լինէր: Քանզի այն, որ ո՛չ հաւատաց, նշան պիտոյ էր նմա: Ետ նշան ի բերան նորա վասն երկմտութեան սրտի նորա, զի գիտասցէ, թէ որ կարողն եղեւ զբնութեան խաւսքն կապել, նա զբնութիւն արգանդին մեռեալ կարող է նորոգել, զի ո՛չ կարէ շրթունք նորա ծնանել բան: Հաւատաց նա, թէ եւ ծերութեամբ կեցուցանէ զծնունդն:

- Իգ. Իբրեւ սաստեաց, ապա եւ զյոյսն հաստատուն առնէ. «Որք լցին, ասէ, զժամանակս իւրեանց»: Վասնզի ամենայն ինչ յԱստուծոյ սահմանեալ մնայ [ի] ժամանակի իւրեանց եւ անվրէպ ի կատարումն գայ:

Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ եւ զարմանային ընդ յամել[ն] նորա ի տաճարին (Ա 21):

- Զի ժողովուրդն գիտէին<sup>3</sup> զչափ սովորական սպասաւորութեանն: Վասն այնորիկ զարմանային, զի առաւել քան զ(//)սովորական ժամն ի գործ արկանէր զյամելն:

<sup>1</sup> բնագրում՝ ավետիս

<sup>2</sup> բնագրում՝ Սամուէլի B առ Սամուէլի

<sup>3</sup> է-ի եւ ին-ի միջեւ երեք տառաչափ ազատ տարածութիւնն է թողնված արդեօ՞ք գիտ[եալ] էին:

3 · Ս. Կունդ, Մեկն. Ղուկասու

Եւ իբրեւ ել, ո՛չ կարէր խաւսել ընդ նոսա: Եւ իմացան, եթէ տեսիլ ետես ի տաճարին (Ա 22):

Զի ո՛չ միայն համր եղեւ, այլեւ խոլ եւս, եւ ո՛չ ինչ լսէր, զոր ժողովուրդն խաւսէր: Որ եւ այս ո՛չ փոքր նպաստ լինել ժողովրդեանն առ ի դիւրընկալ գործել զնոսա ի քարոզութիւնն Յովհաննու: Զի, յորժամ զմտաւ ածցեն զծերութիւնն Զաքարիայի եւ զամլութիւն կնոջն եւ զպապանձումն քահանայապետին, հաւատարմասցին, որք ի Յովհաննէ ասացեալքն լինէին ի վերայ Քրիստոսի՝ զնա գոլ բարձող մեղաց աշխարհի:

Եփ. Աւետիք բարեաց առաքեցաւ մարդկութեանս, եւ որ լուսաւ՝ երկմտեաց: Եդ ի վերայ նշան, զի այլ ոք մի՛ նմանեսցի նմա: Աղաղակ հրեշտակին ո՛չ եղեւ հաւատարիմ, լուսութեամբն եւ ակնարկութեամբն ստուգեսցի ամենեցուն: Գիտացին ժողովուրդքն, թէ աւետիք բարեաց տուան նմա: Տեսին, զի ո՛չ կարէր խաւսել: Գիտացին, թէ չարաչար ետ պատասխանի: Երեւեցաւ տեսիլն լուսութեամբ: Գիտացին, եթէ պարզեւք երեւեցան նմա, զի ո՛չ գտաւ բան ի շրթունս նորա: Գիտացին, զի ո՛չ ընկալաւ պապանձելով նորա: Ամենայն մարդ հաւատաց աւետեացն: Պապանձումն Զաքարիայի՝ մարգարէ եւ դատաւոր եղեւ: // Հրեշտակն իբրեւ մարգարէ պատմեաց նմա զծածկեալն եւ իբրեւ զդատաւոր եդ ի վերայ նորա զպատիժ պատուհասին, զի մի՛ այլ ոք եղիցի իբրեւ զնա:

Իգ. Ահաւասիկ հաւաստի վկայ տեսեանն: Եւ չէր ոք, որ ընդդէմ այսոցիկ համարձակէր ասել ինչ, այլ մանաւանդ վկայ եւ պատմիչք տեսեանս ամենեքին փութային լինել: Բարիոք ասացաք, եթէ ո՛չ էր թերահաւատել նորա, այլ ի վերին խնամոցն, որ այսպիսեաւքս կամեցաւ յարդարել զայս:

Եւ եղեւ իբրև լցան աւուրք պաշտաման նոցա, զնաց ի տուն իւր (Ա 23)<sup>1</sup>:

<sup>1</sup> B շարունակվում է (էջ 30ա-32ա). «Այլ Արդ՝ Թշրին ամսոյ ի Ժ (10) և Սեպտեմբերի ԻԷ (25), էր սկիզբն տաւնիցն, յորում ամենայն Իսրայէլ ժողովէր: Եւ մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբոցն: Ե (5) աւր որթաքաւութեան և է (7) աւր Տաղաւարահարացն տաւնէին, այսինքն՝ ԺԲ (12) աւր: Եւ ամենայն Իսրայէլ ժողովէր յերուսաղէմ, և չէր ումեք հնար երթալ ի տուն իւր մինչ ի կատարումն տաւնիցն: Եւ յաւէտ առաւել քահանայապետին, որպէս վկայէ Ղուկաս, թէ՛ «Յետ աւուրցն այնոցիկ իբրև լցան աւուրք պաշտամանն, ապա զնաց Զաքարիա ի տուն իւր» (Ա 23-24): Եւ ո՛չ ասէ եզական աւր պաշտաման, այլ թէ՛ «աւուրք պաշտամանց»: Զոր ցուցանի անսխալ Թշրինի Ժ (10) սկիզբն տաւնին. կրկնակն Ե (5), և եւթներեկն է (7) լինի ԻԲ (22), երթ է (7) է (7) մնաց Ա (1) աւրն կիրակի: Նոյնպէս և Սեպտեմբեր ԻԷ (27) կրկնակն Ե (5) եւթներեկն Դ (4)՝ լինի ԼԶ (36), զնա է (7) է (7), մնաց Ա (1) աւրն կիրակի: Եւ Թշրին ԺԵ (15): Եւ Հոկտեմբեր Բ (2) էր սկիզբն տաւնին Տաղաւարահարացն, և աւրն ուր-

բաթ: Եւ կատարուամն տաւնի ՏաղաւարաՏարացն լինի Թշրին ԻԱ (21): Եւ Հոկտեմբեր Ը (8) աւրն Հինգշաբթի: Եւ ի սմին աւուր ո՛չ գնաց Ջաքարիա ի տուն իւր, վասնզի յետին աւր էր: Եւ յորովագոյն լինէր մատուցմունք զոհիցն և պատարագացն: Եւ ո՛չ կարէր պարապել մինչ յերեկոյ, որ երթայր ի տուն իւր: Այլ Թշրին ԻԲ (22): Եւ Հոկտեմբեր Թ (9) գնաց Ջաքարիա ի տուն իւր և աւրն ուրբաթ: Եւ եղև յըղութիւն Եղիսաբեթի Թշրին ԻԳ (23) և Հոկտեմբեր Ժ (10) և աւրն շաբաթ: Բայց ոմանք Թշրին ԻԲ (22) ասեն, և յաւուր ուրբաթու: Եւ սխալ է, զի զպատկեր Աւետեաց կուսին Մարիամու Աստուածածնին սխալ է: Եւ բերէ յերեքշաբթի: Վասն որոյ Թշրին ԻԳ (23) և Հոկտեմբեր Ժ (10) էր յղութիւն Եղիսաբեթի յաւուր շաբաթու: Եւ այս վասն չորից: Նախ՝ զի շաբաթն կարապետ է կիրակէին, որ է տերունի: Եւ Յովհաննէս Կարապետ Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի առաջնոյ գալստեանն: Զի ասէր. «Ապաշխարեցէք մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ» (Մատթ. Գ 2, Դ 17): Այլ և Հոգոցն բանտելոց և Երկրորդ գալստեանն, զի Հոգով Եղիայի եկն: Երկրորդ՝ շաբաթն Հանգիստ լսի: Եւ Յովհաննէս Հանգիստ կամացն Աստուծոյ երբեակ միութեանն, որ ի Յորդանան: Երրորդ՝ շաբաթն. լրումն է անցեալ աւուրը շաբաթուն և սկիզբն Հանդերձելոյն: Իսկ Յովհաննէս լրումն հնոյն և մարգարէից և սկիզբն նորոյս և առաքելոցն: Չորրորդ՝ շաբաթն մերձ գոյով կիրակէին: Եւ Յովհաննէս փասաւէր փեսային: Զայն բանին և մկրտիչ նմին, նաև ազգակից նորին: Վասն որոյ Հոկտեմբեր ի Ժ (10) յաւուր շաբաթու առնեմք զյղութիւնն Եղիսաբեթի, որ յղացաւ զՄկրտիչն Յովաննէս ի մաքուր արգանդի: Իսկ այլք յազգաց առնեն զյղութիւնն Եղիսաբեթի Սեպտեմբեր ԻԷ (25): Եւ այս կրկին էր և ի սխալ: Մին՝ զի Հակոբակ գտանին յԱւետարանին Ղուկաս, որ ի լրման տաւնիցն ասէ զյղութիւնն, երկրորդ՝ զի զպատկեր աւր Աւետեաց Կուսին ոչ կարեն բերել ի չորեքշաբթի, այլ ի Հինգշաբթի: Եւ գծունդն ոչ կարեն բերել ի Հինգշաբթի, այլ ի կիրակէի: Զոր պարտ էր ըստ նոցայն սնտոի կարծեացն և մոլար մտացն լինել յուրբաթի գծունդն: Զի այսպէս է կարգն: Զի յորժամ յղութիւնն լինի ի չորեքշաբթի, լինի ծնունդն ի Հինգշաբթի: Եւ յորժամ առնեն զյղութիւնն ի Հինգշաբթի, պարտ է լինել ծնունդն ի յուրբաթի: Այլ նոքա մոլորեալ սխալեցան ի ճշմարտութեանէն: Իսկ մեք դասք ուղղափառաց գնամք ըստ վերոյ գրելոցը: Թշրինի ԻԳ (23) և Հոկտեմբեր Ժ (10) յղութիւն Եղիսաբեթի, և աւրն շաբաթ: Եւ աստի մինչև ի Նիսանի ԺԷ (17) և յԱպրիլի Է (7) լինի Զ (6) ամիս, յորում առաքեցաւ Գաբրիէլ առ Կոյսն սուրբ: Եւ ետ գաւետիսն յաւուր չորեքշաբթի: Եւ անտի մինչ ի Տրեթի ԻԱ (21) և Յունուարի Զ (6) լինի Թ (9) ամիս և Ե (5) աւր: Աստ ծնեալ լինի Բանն Աստուած յաւուր Հինգշաբաթու: Եւ յոյնք, թէպէտ և ջանան շատ, ո՛չ կարեն գաւետիսն ի չորեքշաբթի ածել, և ի նոյն ամն գծնունդն ի Հինգշաբթի: Եւ թէ զի՛նչ է նոցայն տեսութիւնն, ասասցուք, որ ի Դեկտեմբեր ԻԵ (25) ծնունդ առնեն: Քանզի ըստ եբրայեցոցն Թշրինի Ժ (10) և ըստ Հռոմայեցւոցն Սեպտեմբեր ԻԷ (27)՝ պապանձումն Զաքարիայի և ի նոյն աւրն յղութիւն Եղիսաբեթի ասեն: Եւ անտի մինչ ի Մարտի ԻԵ (25) Համբեն Զ (6) ամիս: Եւ անդ ասեն գաւետիսն Գաբրիէլի առ Կոյսն սուրբ: Եւ անտի մինչ ի Դեկտեմբերի ԻԵ (25) Թ (9) ամիս և Ե (5) աւր ասեն, և ծնունդ առնեն: Զոր կամիմք սուտ ցուցանել բազում վկայութեամբ:

Նախ՝ զի ասէ Աւետարանն Ղուկաս. «Իբրև լցան աւուրք պաշտամանն, գնաց Ջաքարիայ» (Ա 23): Եւ աւուրք պաշտամանն երկոտասան աւր էր, Ե (5) քաւութեան վասն որթոյն յանապատին: Եւ է (7) ՏաղաւարաՏարացն ի յիշատակի խորանաւ բնակելոյն ի յանապատին ամս Խ (40): Եւ այլ սքանչելեացն, զոր գործեցաւ անդ, յազգա որոյ յետ ԲԺ (12)-ն աւուր կատարեմք գծնունդն: Երկրորդ՝ զի ո՛չ ասաց Հրեշտակապետն Զաքարիայի, թէ՛ «Ահա Եղիսաբեթ յղացի և ծնցի քեզ որդի՝ զներկայն ցուցանելով, որպէս ասաց, թէ՛ «Ահա Եղիսիս Համբ» (Ա 20): Եւ առ Կոյսն, թէ՛ «Ահա յղասջիր» (Ա 31): Այլ յապառնին ընկէց, թէ՛ «Ահա Եղիսաբեթ ծնցի որդի, և կոչեսցես զանունն նորա Յովաննէս» (Ա 13): Երրորդ՝ զի և նոյն Ղուկաս կրկին վասն Հաստատութեան և ասէ. «Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ» (Ա 24), որպէս և ասացաւ: Չորրորդ՝ ասէ Աւետարանն, թէ՛. «Յիսուս էր ամաց իբրև Լ (30)-ից» (Գ 23) եկեալ ի մկրտութիւն, որ ստուգագոյն ծննդեան աւրն իմանի: Ապա թէ՛ ո՛չ, պարտ էր ասել. «Յիսուս էր ամաց իբրև Լ (30)-ից և միոյ սկսեալ ի ծննդենէն՝ եկն ի մկրտութիւն»: Զի ԲԺ (12) աւրն, թէպէտ պակաս է թիւս տարոյն, բայց սկիզբն է տարւոյն, զի տա-

րին ի յառաջին սկսեալ աւրն առնու զնոր տարւոյ անունն, զի թէ յերեկորէ անց հին տարին և թիւն էր ձ (100): Այսաւր, որ նորս եմուտ, ասեմք զթիւն ձԱ (101), թէպէտ ՅԿ (360) աւրն դեռ է գալոց: Զոր աւրինակ՝ անցեալ լինի մին ժամ աւուրն՝ կիւրակէ կոչի, թէպէտ ԻԳ (23) ժամն պակասէ: Եւ այս ամենայն ազգաց յայտ է, որ Յունուարի Զ (6) տաւնեն մկրտութեանն, ապա և նոյն աւրն է ծնունդն: Հինգերորդ զի թէ հաւատան Աւետարանին և ո՛չ ստեն Լ (30) ամաց գալ Քրիստոսի ի մկրտութիւն, ի հարկէ պարտին կատարել և զմկրտութիւնն ի նոյն տաւնի Ծննդեան իւրեանց, ի Դեկտեմբեր ԻԵ (25), որ իցեն ամենեւիմք սուտ: Վեցերորդ զի և նոքա իսկ, որ զայս ասեն, առնեն Յունուարի Զ (6) ճրագալոյց ընդ մեզ: Եւ ճրագալոյցն ո՛չ է Մկրտութեանն, այլ Ծննդեանն ի մէջ գիշերի: Եւթներորդ յայտ է յանուանէ ամսոյն, որ կոչի Յունուարի, և Յունուար ի Հռոմ լեզուն թարգմանի Ծննդեան ամիս: Ութերորդ՝ ակնատես տնաւրէնութեանն, և եղբայր Տեառն Յակոբոս, որ կարգէ զընթացն, Յունուարի Զ (6) աւանդէ գտաւն Ծննդեանն: Եւ ի նոյն աւրն դարձեալ զՄկրտութեանն: Այսպէս և Կիւրեղ Երուսաղէմի՝ համախոհ նմին: Այսպէս ընկալեալք ի նոցանէ և ի Նիկիական ժողովք հաստատեցին առ մեզ, զոր ունի զայս աւանդ այժմ սուրբ և ուղիւ(ղ) աւանդապահ Եկեղեցիս Հայաստանեայց, ըստ վկայութեանս, որ եղաւ: Իննեւերորդ ըստ մեծին Գրիգորի Աստուածաբանի և ըստ սրբոյն Բարսղի Կեսարացւոյն, զի Աստուածաբանն ի Քրիստոս ծնեալ ճառին ասէ. «Անուն դիցուք տաւնիս Աստուածայայտութիւն, և այն է յայտնութիւն, որ Հայր ի վերուստ վկայեաց ի վերայ Որդոյն և Հոգին Սուրբ աղանակերպ իջմամբ»: Եւ յայսմանէ յայտ է, զի սուրբքն զԾնունդն և զՅայտնութիւնն ի միասին տաւնէին: Տասներորդ զի Մակար Երուսաղէմի հայրապետն վասն տաւնից գրեաց ի Հայք, թէ Յակոբայ մինչ ի Յրեւաղ, որ ի յետ Կիւրղի ԽԲ (42) եպիսկոպոսք, այսոքիկ ամենեքեան ի Յունուար Զ (6) տաւնեցին զԾնունդ Փրկչին: Եւ յետոյ փոխեցին ոմանք վասն Երուսաղէմի, թէ ո՛չ կարեմք ի մի աւր ի Բեթղահէմ և ի Յորդանան գնալ: Եւ այլք, թէ ի Հռոմ ի Դեկտեմբերի ԻԵ (25) Երկնքի (Նշված է պատկերագրութեամբ) տաւն կատարէին, և Պետրոս խափանեաց զայն և կարգեաց գտաւն Ծննդեանն: Եւ այլք պատճառ ունին զԱրտիմոն, և մոլորեալք ասեն, թէ Յոհաննու աւետարանչին աշակերտէ: Եւ յոյժ ստեն, քանզի ի ծննդենէն Քրիստոսի մինչ ի Ժ (10) ամն Կուսկեայ կայսերն ձԶ (106) ամ է, յորում կաւոյ կաթն Հռոմայ սուրբն Բեկտոր, որ ԺԳ (13) եպիսկոպոս էր յետ Պետրոսի առաքելոյ: Եւ նա մերժեաց զԹէոդորոս, որ առաջին աղանդովն էր Արտեմոնի: Արդ Արտիմոն Բձ (200) ամաւ յետոյ էր քան զառաքեալսն, սուղ ինչ պակաս, որ չիջեալ կործանեցաւ ի քաջ հովուացն ի Պետրոսէ Հռոմայ հայրապետէ, և ի Զիփիանոսի Կոստանդնուպալսի: Զոր յետ սոցա ուղղափառութեան ձՁ (180) ամի ի Պաւղոսէ Սամոսացւոյ դարձեալ վերստին նորոգեցաւ չարաց առաջնորդ ընթերցուածն Արտեմոնի: Իսկ ճշմարտութիւնն ի շնորհացն Աստուծոյ մնաց ի Հայք, թէպէտ յետոյ մոլորեցան ի սուղ ժամանակս, յաւուրս Եզրի, որ հաւանեցաւ Հերակլի: Եւ Զ (6) եպիսկոպոսք ԶԳ (84) ամ կացին աղանդովն Քաղկեդոնի, մինչ ի Մեծն Յոհան կաթողիկոսն, որ դարձաւ յուղղափառութիւն և արար ժողով ի Մանազկերտ: Եւ տաւնեցին զմարգարէին և զառաքելոյ տաւնն զՋական երգով: Մեղաք յամենայնի և զպատուիրանս: Եւ ի վերայ այսր ամենայնի յայտնի վկայ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, զի որ ինչ էր ի ժամանակին յայն, կանոնք և տաւնք ուղղափառաց կարգեաց յազգս մեր: Եւ մեք զայն ամենայն անփոփոխ պահեցաք, և ունիմք հաւատս: Արդ՝ յորժամ եղբայրաբար սիրով տաւնեմք, պարտ է կատարել գտաւն Ծննդեանն Քրիստոսի թէ՛ աստ և թէ՛ անդ: Զի զմի և զնոյն աւր Ծննդեանն կատարեմք թէ՛ մեք և թէ՛ նոքա: Այլ թէ ասիցեն, թէ մերս ճշմարիտ է քան զնոցա, և հակառակին: Սուտ են բնաւ ամենեւին, և արտաքոյ վկայութեան Աստուածաշունչ Գրոց, և հրամանաց սրբոց: Եւ յետոյ եկամուտ եղեալ ի պղծոյն Արտեմոնեայ»: (30բ-31ա էջերի ներքևի լուսանցքներում գրված է. «Քանզի յայնմ ամի, թվական Շ (500)-եկին, էր ԲՆԺԸ (5418) և Հռոմոցն ՄՀԸ (278), աւրն կիւրակի, եւթներեակն Գ (4): Իսկ վերադիր եբրայեցոցն ԻԳ (24), լրումն Նիսան: // Իսկ հայոյն ՇԶ (506), վերադիր հռոմոցն Գ (3): Աւագլորումն յԱպրիլ ԺԲ (12), ԺԲ (12), եւթներեակն է (7): Լա՛ւ գիտացիր սիրող ճշմարտութեան»: Իսկ 32ա էջի ներքևի լուսանցքում գրված է. «Մինչև ցայս վայր Իգնատիոսին է նախերգանիլն ի հետ, և աստի ի դոտս Սարգիս վարդապետին է»):

*Թէպէտ եւ յառաջնում աւուրն պապանձեցաւ, սակայն ո՛չ համարձակէր լուծանել զաւրէնսն եւ քակտել զտաւնն: Եթէ ա- սիցէ ոք համրացեալ էր քահանայն, զիա՞րդ ունէր կալ ի պաշ- տամանն: Ասեմք, եթէ էին այլ քահանայք, որք կատարէին զպաշտաւնն, եւ նմա առանց կատարման տաւնին մեկնել ի տաճարէն անտեղի էր: Եւ աւետարանիչն ստուգէ:*

**Իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, դարձաւ ի տուն իւր: Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ կին նորա (Ա 23-24):**

*Ջաւրացաւ հրամանն եւ յաղթեաց բնութեան ամլութեան եւ ծերութեանն, եւ ընդունէր սերմ որդեծնութեան արտաքոյ բնութեանն՝ ըստ նմանութեան Սառուայի (տե՛ս Ծննդ. ԺԸ 1-19) եւ այլոցն:*

**17ա // Եւ թաքուցանէր զանձն ամիսս հինգ (Ա 24):**

**Կդ.** *Ընդէ՞ր թաքուցանէր զանձն Եղիսաբեթ ամիսս հինգ վասն յղութեանն, նաեւ ո՛չ Ջաքարիայ յայտնէր զասացեալսն ի հրեշտակէն: Թէպէտեւ խուլ եւ համր եղեւ, սակայն ի ձեռն գրոյ կարող էր բացայայտել, որպէս զանունն Յովհաննու: Այլ ո՛չինչ զայսմանէ փոյթ լինէր, որպէսզի ծննդեամբն Յովհան- նու յայտնեսցին զաւրութիւնք սքանչելեացն:*

**Կդ.** *Կամ վասն տրտմութեանն Ջաքարիայի, զի պատկառէր նա, որպէսզի ի ծեր աւուրսն դարձաւ նա յամուսնութիւն, բայց ո՛չ վասն ծերութեանն: Զի ահա Սառուայի գրի, եթէ ո՛չ թաքոյց զանձն, զի իննսնամեայ էր, մինչ կրէր զԻսահակ (տե՛ս Ծննդ. ԺԷ 17-18), եւ ո՛չ վասն Ռեբեկեայ, որ զերկու որդեակսն կրէր (տե՛ս Ծննդ. ԻԵ 23-25):*

**Իգ.** *Այլ Եղիսաբեթ հինգ ամիս թաքուցանէր զանձն: Քանզի այսչափ աւուրս կարէ կալ անյայտ [յ]արտաքին տեսողաց[ն], իսկ յետ այնորիկ ընդ երանցն այտմամբ թաքչել ո՛չ կարէր:*

**Եփ.** *Մինչեւ կատարեսցի մանուկն անդամաւք[ն] իւրովք խա- զալ՝ ցնծալով ընդդէմ Տեառն իւրոյ, վասնզի հանդերձեալ էր Մարիամայ տալ աւետիս:*

**Զի՞նչ գործեաց ընդ իս Տէր (Ա 25):**

**Իգ.** *Ծանեաւ Եղիսաբէթ, եթէ յԱստուծոյ է գործն եւ ո՛չ բնու- թեանն սովորութիւն:*

**Յաւուրս յայսոսիկ յորս հայեցաւ բառնալ զնախատինս իմ (Ա 25):**

17բ Կդ. Նախատինք մեծ էր առ հրէիւքն // այրութիւնն եւ ամուլ-  
թիւնն եւ յոյժ արհամարհեալ ի մէջ Իսրայելի: Եւ ի նշանակ  
իմն զայն վարկանէին աստուածային ցասմանն:

Իգ. Եւ յաւրհանութիւնսն, որ գրեցաւ նոցա մի՛ լինել նոցա ան-  
սերմ եւ անծնունդ: Դարձեալ. ի նզովս այլոց տո՛ւր նոցա Տէր  
արգանդս անպտուղ[ս] եւ ստինս ցամաքեալս:

**Ի մարդկանէ** (Ա 25):

Եցոյց, եթէ առ յԱստուծոյ ո՛չ է նախատելի, թէ ըստ կամացն  
Աստուծոյ կայցեն<sup>1</sup>, այլ միայն առ մարդկան այսպիսիքս ասա-  
ցեալ լինին:

**Յամսեանն վեցերորդի, առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ Աստու-  
ծոյ ի քաղաք մի գալիլեացոց, որում անուն էր Նազարէթ** (Ա 26):

Կդ. Վեցերորդ ամիս յաւետեացն, որ առ Զաքարիայ ասէ, եւ ի  
սաղմնառութենէ[ն] Յովհաննու՝ զյղութիւն Եղիսաբեթի թուէ:

Իգ. Քանզի ի Թշրին ամսեան տաւնին քաւութիւն ետ աւետիս  
Զաքարիայի, եւ ապա՝ յետ վեց ամսոյ առաքի հրեշտակն աւե-  
տարանել Կուսին: Վասն որոյ եւ Ղուկաս զամենայնն ստու-  
գութեամբ կարգէ: Նախ՝ զաշխարհն եւ ապա՝ զանուն գեղջն,  
յորում բնակէր Կոյսն, զի այնպէս վերջին քննողացն յայտնի  
լինիցի: Այսպէս եւ զանուն Կուսին մերձ դնէ եւ զառն, որում  
խաւսեցեալ էր<sup>2</sup>:

**Առ կոյս մի խաւսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ, եւ  
անուն կուսին Մարիամ** (Ա 27):

18ա Մովս. Ամեն կեանք նորա վաթսուն ամ: // Եւ ի հնգետասան ամին  
ծնաւ զՓրկիչն աշխարհի, եւ երեսուն եւ երեք ամ մինչեւ ի  
խաչելութիւնն Քրիստոսի, եւ յետ համբարձմանն Քրիստոսի  
երկոտասան ամ: Իսկ Յովսէփ քառասուն եւ մի ամաց էր, մինչ  
կոյսն ի տաճարէն յանձնեցաւ նմա, ամիսս երեք կեցեալ ի  
տան նորա մինչեւ ընկալաւ զաւետիս յղութեանն:

<sup>1</sup> բնագրում՝ կայցեն

<sup>2</sup> B շարունակվում է (էջ 32բ). «Այլ Բեր տեսցուք և զայն ևս, թէ վասնէ՞ր Գաբրիէլ հրեշ-  
տակապետն առաքեցաւ առ Կոյսն սուրբ և ոչ մարդ ոք: Վասն չորս պատճառի:  
Նախ՝ վասն ազգականութեան Կուսին. զկոյսն բնութեամբ՝ առաքեաց առ Կոյսն:  
Երկրորդ՝ զի նորոգութիւնն, որ լինելոց էր ի ձեռն ծննդեան Կուսին. ո՛չ միայն նորո-  
գութիւն մարդկան էր, այլ և՝ հրեշտակաց: Վասն որոյ պարտ էր կոյս հրեշտակին  
սպասաւորել Կուսին: Երրորդ՝ զի կամէր անկասկած և ամենեին անկարծ ի չարեաց  
զատուցանել զկոյսն ի ձեռն հրեշտակական բնութեանն՝ աւետարանել զաւետիք  
յղութեան Կուսին, և ո՛չ ի ձեռն մարդոյ: Չորրորդ՝ զի դեղն պատասխան է հիւան-  
դութեանն: Զի որպէս սատանայ աւձիւն առ կոյսն եւայ խաւսեցաւ, այսպէս Տէր մեր  
հրեշտակիւն առ կոյսն Մարիամ խաւսեցաւ՝ հուրիւն առ հուրիւն, ծառայ առ ծա-  
ռայ, Բան առ Բան»:

**Ի տանէ Դաւթի (Ա 27):**

Կդ. Յուցանէ ի տանէ Դաւթի լինել զԿոյսն: Ուստի Յովսէփ, որում խաւսեցեալ էր զԿոյսն, վասն աւրինացն ո՛չ արտաքոյ ազգին լինէր խաւսեցեալ վասն աւետեաց լրմանն, որ յառաջագոյն մարգարէիւք, զի՝

Իգ. «Կոյսն զէմանուէլն ծնցի» (հմմտ. Ես. Է 14) եւ «յարմատոյն Յեսեայ» (Ես. ԺԱ 1) ի կատարումն եկն: Եւ չէր ինչ նպաստ Յովսէփ ի տերունական ծնունդն, ընդէ՞ր խաւսեցեալ եղեւ Մարիամ: Այս ամենայն յաստուածային խնամոցն ուղղեալ լինէր, զի ո՛չ էր աւրէն կուսին անպատուարան լինել: Հաստատեաց զնա առն արգարոյ, զի վերակացու լիցի կուսին եւ յամենայն չար կարծեաց ազատիչ:

**Եկեալ առ նա ասէ. Ուրա՛խ լեր բերկրեալ (Ա 28):**

Իգ. Վասնզի առաջին անէծք Դատապարտութեանն նովաւ պարտ է լուծանել, քանզի անդ ասացաւ. «Յաւաւք եւ տրտմութեամբ ծնցիս որդիս» (հմմտ. Ծմնդ. Գ 16), իսկ ուրախութիւնդ 18բ // եւ ցնծութիւնդ ո՛չ միայն Մարիամու, այլ՝ ամենայն մարդկան:

Կդ. Այսինքն՝ քոյին ծննդեամբդ փրկեցան ծնունդք Ադամայ, եւ բառնալոց է տրտմութիւնն, որ ի ձեռն Եւայի սահմանեցաւ ի վերայ ծննդոց նորա, եւ ուրախութիւն ի ներքս փոխանակ անիծիցն ազբիւրանալոց է:

**Տէր ընդ քեզ (Ա 28):**

Ողջոյն տալովն՝ բառնայ ի մտացն զգարհուրումնն, զի մի՛ խոռովեսցի Կոյսն յանկարծակի երեւմամբն, եւ «Տէր ընդ քեզ» ասելն բառնայ զմարդկային ախտաւոր<sup>1</sup> ողջունի կարծիսն:

Եւ նա ընդ բանսն խոռովեցաւ եւ խորհէր ի մտի իւրում, որպիսի՞ իցէ ողջոյնս այս (Ա 29):

Իգ. Վարանէր տարակուսեալ, զի ո՛չ էր նա ըստ աւրինակի այլոց կանանց, յորժամ հեշտալի ինչ բանս լսեն՝ վաղվաղակի տարածանել յանձինս ընդունելով զբանն: Այլ նա խոռովէր, զարհուրէր, մտախորհ լինէր գուցէ խաբէութիւն ինչ իցէ: Զգուշութեամբ յինքն ամփոփէր զանձն, զի մի՛ պատիր ինչ նենգութեան գողասցի յորսողէ ըմբռնեալ:

<sup>1</sup> B եւ զախտաւոր

**Ասէ ցնա հրեշտակն. Մի՛ երկնչիր Մարիամ** (Ա 30):

Ստ. Այսպիսի հեզ բանիւք լուծանէ զերկիւղն, դադարեցուցանէ զամբոխումն մտացն, զի բաւական լիցի ի միտ առնուլ զպատ-  
 19ա գամս Տեառն: Ո՛չ կարթիս որպէս Եւայն: // Ի նմանէ պտուղ մեռելութեան, իսկ ի քէն՝ Աստուած կենդանարար, ի նմանէ՝ մահ, իսկ ի քէն՝ աղբիւր կենաց:

**Զի գիտ շնորհս յԱստուծոյ** (Ա 30):

Զի ո՛չ ըստ գործոց էր պարգեւն եւ ո՛չ ըստ չափոյ մարդ-  
 կան արժանաւորութիւն տուաւ, այլ անչափ եւ առաւել մեծաս-  
 քանչ, նորահրաշ, գերապայծառ: «ՅԱստուծոյ» ասելովն՝ ի բաց բառնայ զմարդկան կարծիս եւ ցուցանէ յԱստուծոյ զշնորհն, ուստի ողջոյնս է: Ասէ.

**Յղասջիր եւ ծնցիս որդի** (Ա 31):

Ո՛չ ըստ այլ կանանց բնութեան աւերինակի յղասջիր, այլ ըստ զաւրութեան Աստուծոյ, յորոյ երեսաց զողջոյնս աւետա-  
 րանեցի:

Եփ. Աստ կարկէ զլեզուս հերձուածողաց, եթէ ո՛չ առ նա ինչ ի Կուսէն, այլ իբրեւ ընդ ցնցուղեանց ջրոյ ընդ խողուակ: Զի որ ասաց «յղասջիր», եցոյց թէ յԱստուծոյ եւ ի բնութենէ Կուսին ունի զյղութիւն: Զի անցանել [ն]ա յղութիւն ո՛չ ասի, նաեւ՝ ո՛չ իսկապէս ծնունդ:

**Կոչեսցես զանունն նորա Յիսուս** (Ա 31):

Մեկնէ հրեշտակն զզաւրութիւն Որդոյն, որ ծնանելոց էր, զի յանուանէն գուշակել գործքն, այսինքն՝ փրկութիւն ազգի մարդկան:

Իգ. Զի՞նչ արդե[ա]ւք իցէ այս: Զի Եսայի ասաց. «Եմ[մ]ա-  
 նուիէլ կոչեսցի» (Ես. Է 14), եւ ամենայն մարգարէքն զնա Քրիս-  
 տոս անուանեն, եւ աստ հրեշտակն Յիսուս ասաց: Զգուշացաւ,  
 19բ զի մի՛ յատելեաց[ն] ամբաստանեալ լիցի // իբր եթէ անձամբ անձին շուք եղ զանունն, որ ո՛չ է նմա անկ: Վասն որոյ ծածկէ զմարգարէութիւնն առժամանակ մի, մինչեւ ինքեանք տեսցին յիրացն: Նաեւ Յիսուս գուշակեցաւ յառաջին մարգարէէն Մով-  
 սէսէ, յորժամ իւր փոխան կացոց զՈվսէ, զոր կոչեաց Յեսու (տե՛ս Ելք Ժ 9-16): Այսու անուամբ զճշմարիտ Փրկիչն նշանա-  
 կեաց, բայց նոքա զայս ո՛չ իմացան: Ծածկեաց զիրսն ի պար-  
 սաւողացն, ամբողջ պահեաց զբանս մարգարէիցն՝<sup>1</sup>:

<sup>1</sup> Մինչև այստեղ B-ն արտագրել էր Իգնատիոսից:



**Եւ<sup>1</sup> նա եղիցի մեծ** (Ա 32):

Կդ. *Ըստ Հանդուրժելոյ Կուսին խաւսի հրեշտակն: Նա ի<sup>2</sup> ողջու- նիւն զերկի[ւ]ղն ի մտացն բառնայ և ապա՝ զչնորհն աւետարա- նէ, եթէ՝ «Գտեր շնորհս յԱստուծոյ» (Ա 30) և ծննդեան<sup>3</sup> աւրինակն և զՓրկիչն<sup>4</sup>:*

**Եւ<sup>5</sup> եղիցի մեծ** (Ա 32):

*Որ զկնի ժամանակաց զմեծութիւն նորա ճանաչիցեն մարդիկ, որպէս և զհայրութիւնն իմացան:*

Իգ. *Ջանչափելի մեծութիւնն, որ ընդ մեր փոքրկութեանս<sup>6</sup> խառ- նեցաւ և հաւասարեաց աստուածային բնութեանն մեծութեան և միացոյց խառնմամբ, և նորին աղագաւ աստուածութիւնն նուա- տացաւ և մարդկութիւնս<sup>7</sup> բարձրացաւ՝ էութեամբ ընդ Հաւր և<sup>8</sup> իսկութեամբ յերկրի: Ջանկչիռ մեծութիւնն յայտնեալ ո՛չ ոք կարէ լռութեամբ պատուեսցի: Այս մարգարէիցն սովորութիւն էր ասել. «Մեծ է Տէր մեր և մեծ է զաւրութիւն նորա» (Սաղմ. ԾԽԶ 5)*

20ա // և «Մեծ քան զամենայն կուռս» (Սաղմ. ԾԼԴ 5):

**Որդի Բարձրելոյ<sup>9</sup> կոչե[ա]ցի** (Ա 32):

*Հանէ<sup>10</sup> յանդուգական պատիւն, որ ո՛չ ի [մարդկան]է<sup>11</sup> էութիւն Հաւր լինել ծնունդ, որ // <sup>12</sup> զփառս Միածնին<sup>13</sup>:*

**Տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի Հաւր նորա** (Ա 32):

*Խոնարհեցուցանէ<sup>14</sup> զԲանն և ծանաւթ իրաւքն խելամուտ առ- նէ զխոստումն<sup>15</sup> Դաւթի, որ ի ձեռն կուսական ծննդեանն կատա-*

<sup>1</sup> B կոչեսցես զանուն նորա Յիսուս և

<sup>2</sup> B նախ *փխ* նա ի

<sup>3</sup> B զծննդեանն

<sup>4</sup> B զփրկչին

<sup>5</sup> B *չիք* եւ

<sup>6</sup> B փոքր բնութեանս

<sup>7</sup> B մարդկութիւնն

<sup>8</sup> B *չիք* և

<sup>9</sup> B Բարձրելոյն

<sup>10</sup> A հասէ

<sup>11</sup> A տեքստում բառի վրա թուղթ է կպցրած, վրան այլ մելանով գրված է՝ որ մանգա- նակ

<sup>12</sup> A մեկ բառ ջնջված է

<sup>13</sup> B այլում անկից է Որդի Բարձրելոյն կոչեալ: Այսու յայտ առնէ զնա վերին փառացն Տէր և ծնունդ առաջին բնութեանն, զի որ Որդին ասաց, զնոյն բնութիւն զեկոյց: Ապա իբրև կարի տարաւ զմիտս նորին ի վերինսն կացոյց *փխ* ծնունդ որ... Միածնին

<sup>14</sup> B զարձեալ խոնարհեցուցանէ

<sup>15</sup> B Տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի Հաւր նորա, զոր ասաց Որդի, զնոյն և Որդի Բարձրելոյն (*սրբ.*՝ Դաւթի) կոչեաց: Զխոստումն

րեաց, որ<sup>1</sup> ասէր. «Ի պտղոյ որովայնի<sup>2</sup> քո նստուցից յաթոռ քո»  
(*հմմտ.* Գործք Բ 30): Եւ Կոյսն ի տանէ Դաւթի էր:

Իգ. Յայտ արար, եթէ ո՛չ Աստուած մերկ և ո՛չ մարդ սոսկ, ի բաց եբարձ զկարծիս ամբարշտացն<sup>3</sup>: Վասն այնորիկ և բանքն խառնեալ են ի միմեանս աստուածավայելուչքն և մարդկավայելչուչքն: Խոստումն Հաւր<sup>4</sup>, որ գուշակեաց մարգարէիւն. «Տա՛ց<sup>5</sup> զԴաւիթ թագաւոր» (*տե՛ս* Ես. ԻԲ 22-23), որ է Քրիստոս, որ զանկեալ և զկործանեալ թագաւորութիւն[ն] Դաւթի կանգնեաց, զանձինս և զմարմինս արդարացոյց<sup>6</sup> մարդեղութիւն նորա: Ըստ այնմ, թէ՛ «Մարմին քո և ոսկերք քո են» (*հմմտ.* Բ Թագ. Ե 1, Ա Սնաց. ԺԱ 1) ամենայն նոր Իսրայէլ<sup>7</sup>:

**Թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ** (Ա 32):

Կդ. Ո՛չ ի վերայ Իսրայելի յատուկ, այլ [ի] Յակոբայ, որ նշանակէր զամենայն հաւատացեալս:

**Յաւիտեան** (Ա 32):

Աստ և ի հանդերձելումն ասի, զի մի՛ կարծիցի<sup>8</sup> ըստ բնութեանն որդի<sup>9</sup> Դաւթի: Դնէ զյաւիտեանն, զի մարդ սոսկ ո՛չ ունի մինչ ի վա(//)խճան աշխարհի զթագաւորութիւն անլուծանելի: Բայց միայն Բանն Աստուծոյ, որ եղև որդի Դաւթի ըստ մարմնոյ, որ է Տէր նորին: Ըստ ասելոյ նորա Սրբով<sup>10</sup>. «Ասաց Տէր ցՏէր Իմ. Նիստ ընդ [աջմէ իմմէ]<sup>11</sup>» (Ի 42, Սաղմ. ԾԹ 1, Սատթ. ԻԲ 44, Սարկ. ԺԲ 36, Գործք Բ 34):

**Զիա՞րդ լինիցի ինձ այդ, զի զայր ո՛չ գիտեմ** (Ա 34):

Վասնզի հիացեալ սքանչացաւ Կոյսն, թէ զիա՞րդ կուսութեամբ որդի<sup>12</sup> ստացայց:

Իգ. Գիտէր զաւրէնս բնութեան կանանց, զի առանց առն ո՛չ ոք ծնաւ: Եւ որ առ նա ասացաւ<sup>13</sup> բանք, կարի մեծասքանչ էր բարձ-

<sup>1</sup> B որ և

<sup>2</sup> B յորովայնէ

<sup>3</sup> A ամպարշտացն

<sup>4</sup> B Հաւր լցաւ

<sup>5</sup> B տաց ձեզ

<sup>6</sup> B արդարոց

<sup>7</sup> B **չիք** ամենայն նոր Իսրայէլ

<sup>8</sup> B կարծեսցեն

<sup>9</sup> B գոլ որդի

<sup>10</sup> B Հոգևով Սրբով

<sup>11</sup> A ուղղանկյուն փակագծերում առնված բառերը ջնջված են

<sup>12</sup> B որդիս

<sup>13</sup> B ասացան

բուլթեամբ<sup>1</sup> քան զբնութիւն մարդկան: Կամէր ստուգել զաւրինակ ծննդեանն:

**Ասէ ցնա հրեշտակն. Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ (Ա 35):**

Հրեշտակն բարձրագոյն ձայնիւ զկոյսն<sup>2</sup> առ խնդիրն հաստատէ<sup>3</sup> Հոգւոյն Սրբոյ եկաւորութեամբն՝ ի քեզ ասացեալքդ կատարին: Ըստ որում ո՛չ տկարանայ կուսութիւնդ՝ ըստ ո՛չ<sup>4</sup> բնութեան կրել զծնունդն: Յայտ արար, եթէ առանց սերման<sup>5</sup> և ցանկութեան է յղութիւն<sup>6</sup> առաւելեալ ամենայն մաքրութեամբ, վասն որոյ առագաստէ զԿոյսն և սրբէ<sup>7</sup> յամենայն մարմնական ցանկութեանց: Թէպէտև մաքուր էր, մարդ էր ախտի ծնունդ: Գոյր ի նմա խլրտումն ցանկութեան<sup>8</sup>: Վասն որոյ<sup>9</sup> Հոգին Սուրբ յառաջ գայ և<sup>10</sup> մաքրէ զԿոյսն և ապա առնու զմարմին յանարատէն և արկանէ զորդով՝ ո՛չ յառաջ ստեղծեալ մարդ և ապա //աստուածութիւնն մտեալ բնակէ: Այլ սկիզբն աստուածութիւնն եղեալ յինքն ձգեալ յարենէ Կուսին զնիւթ մարմնոյ<sup>11</sup> թանձրանայ ի մարմինն:

**Ստ.** Որպէս ի սկիզբն<sup>12</sup> լինելիութեան արարածոց երեք աւուրբք<sup>13</sup> յառաջ աննիւթաւոր<sup>14</sup> լոյսն և<sup>15</sup> ի չորս<sup>16</sup> աւուր ստեղծեալ նիւթ արեգականն միացոյց: Եւ ո՛չ ոք կարէ ասել այլ զլոյսն և այլ զնիւթ արեգականն, այլ<sup>17</sup> միաւորեալ կայ և մնայ յաւիտեան:

Իսկ Աստուած<sup>18</sup> ի վեր մնայ<sup>19</sup> քան զամենայն աւրինակս: Կենդանի<sup>20</sup> հուրն աստուածային իջեալ<sup>21</sup> յորովայն Կուսին՝ ձգեալ

<sup>1</sup> B բարձրութեամբք

<sup>2</sup> B խաւսեցաւ առ կոյսն

<sup>3</sup> B ի զխնդիրն հաստատեալ

<sup>4</sup> B **չէք** ոչ

<sup>5</sup> B սերման առն

<sup>6</sup> B յղութեան

<sup>7</sup> B սրբէ զնա

<sup>8</sup> B ցանկութեանց

<sup>9</sup> B վասնզի

<sup>10</sup> B յառավագոյն **փի** յառաջ գայ և

<sup>11</sup> B մարմնոյն

<sup>12</sup> B սկզբանէ

<sup>13</sup> B աւուր

<sup>14</sup> A գրված «սկսբ» բառից հետո, էջի վերին ձախ կողմում թուղթ է կպցված, և այլ մելանով գրված են հետևյալ բառերը՝ «...իզբն լինելութեան» և «...առ աննիւթ» B անձնաւոր **փի** աննիւթաւոր

<sup>15</sup> A սրբ. է տողի վերևում B **չէք** և

<sup>16</sup> B չորրորդ

<sup>17</sup> B սրբ.՝ այլ այսպէս

<sup>18</sup> B յաւիտեան մի Աստուած

<sup>19</sup> B **չէք** մնայ

<sup>20</sup> B վասնզի կենդանի

<sup>21</sup> B բնութեամբ իջեալ

յինքն զնիւթ մարմնոյն և միացաւ անշփոթելի<sup>1</sup> ի մի<sup>2</sup>. «Տէր<sup>3</sup> Յիսուս Բրիստոս երէկ և այսաւր, նոյն և յաւիտեանս» (Եբր. ԺԳ 8): Քանզի մարմինն խառնեալ ընդ Բանին եղև, որ ինչ էր Բանն, և մնաց բնութեանն<sup>4</sup> թանձրութեան մարմնոյն: Էր աստուածութիւն<sup>5</sup> միացեալ ի մարմնի, եղև<sup>6</sup> մարդ առանց ապականացու կրից և պահեաց զիւր իմանալի բնութիւնն անպարագրելի և անփոփոխ: Եւ այս ամենայն եղև գործակցութեամբ Սուրբ Հոգւոյն:

**Զաւրութիւն Բարձրելոյն Հովանի լիցի ի վերայ քո** (Ս 35):

Իգ. **Զաւրութիւն Հաւր Քրիստոս<sup>7</sup>: Ըստ Պաւղոսի բանին՝ «Քրիստոս<sup>8</sup> Աստուծոյ զաւրութիւն»** (Ա Կորնթ. Ա 24): *Եւ ոմանք զՀոգին Սուրբ ասացին, քանզի Հոգին էր, որ առագաստեաց զկուսական որովայնն՝ սպասաւորելով սքանչելի խորհրդոյն:*

**Որ ծնանելոցն է ի քէն, սուրբ է** (Ս 35):

21ք // *Վասնզի մարմնական ախտաւոր կրից ո՛չինչ կցորդութիւն եղև, այլ ամենայն յԱստուծոյ, և անապական ծնունդ*

**Եւ Որդի Աստուծոյ** (Ս 35) *ծնեալն:*

*Զի մի՛ այլ ոք<sup>9</sup> զԲարձրեալ[ն] իմացի<sup>10</sup>: Նորին աղագաւ աստ ասէ. «Որդի Աստուծոյ կոչեսցի»* (Ս 35): *Այն, որ զստոյգ բարձրութիւն ունի և կրէ զամենայն բանիւ զաւրութեամբ իւրով<sup>11</sup> զերկնայինս և զերկրաւորք<sup>12</sup>:*

**Ահա Եղիսաբեթ ազգական<sup>13</sup> քո, և նա յղի է ի ծերութեանն<sup>14</sup> իւրում** (Ս 36):

*Վասնզի<sup>15</sup> հրաշալի և արտաքոյ բնութեան էր, զոր<sup>16</sup> Կուսին աւետարանեաց հրեշտակն՝ կուսութեամբ յղութիւն և ծնունդ ա-*

<sup>1</sup> A անշփոթելի

<sup>2</sup> B ըստ այնմ *փխ* ի մի

<sup>3</sup> B Տէր մեր

<sup>4</sup> B ըստ բնութեանն

<sup>5</sup> B աստուածութեանն

<sup>6</sup> B և եղև

<sup>7</sup> B Քրիստոս է

<sup>8</sup> B Քրիստոս է

<sup>9</sup> B *չիք* ոք

<sup>10</sup> B իմացին և այլ զորդին

<sup>11</sup> B զաւրութեան իւրոյ

<sup>12</sup> B զերկրայինսն զերկրաւորաւքս

<sup>13</sup> A ասգական

<sup>14</sup> B ծերութեան

<sup>15</sup> B քանզի

<sup>16</sup> B *չիք* էր զոր

սելով: Յարէ ի նոյն և զԵղիսաբեթի յղութիւնն, որում տեղեակ էր Կոյսն ըստ ամլութեան և ծերութեան<sup>1</sup>: Եւ Բանին զաւրութեամբն զմիտս Կուսին ձգէր<sup>2</sup> ի հաւատս, որպէս ո՛չ տկարացաւ ամլութիւն ծերութեան<sup>3</sup> առ ի<sup>4</sup> բանին իմոյ աւետարանութիւն<sup>5</sup>: Այսպէս և ո՛չ կուսութիւն քո տկարասցի անարատապէս կրել զաստուածային ծնունդն:

Մովս. Առ Ահարոն որդոյ իւրոյ Եղազարու զԵղիսաբեթ<sup>6</sup> դուստր Ամինադաբայ և քոյր Նասոնի<sup>7</sup> յազգէ Յուդայ, որ ծնաւն զՓենեհեզ<sup>8</sup> (տե՛ս Ելք 23-25), որ ցածոյց զբարկութիւն Աստուծոյ նախանձախնդիր եղեալ<sup>9</sup>: ՅԱմինադաբայ դստերն<sup>10</sup> բ[ղ]խեաց աւրհնութիւն քահանայութեան և ի Նասոնայ՝ թագաւորութիւն<sup>11</sup>: Ուստի քահանայութեան և թագաւորութեան ցեղքն խառնեցաւ<sup>12</sup> ընդ միմեանս<sup>13</sup> խնամութեամբ, զի որ ի Կուսէն // ծնանելոց էր՝ թագաւոր էր և քահանայ:

Եպ. Մարիամ դուստր<sup>14</sup> Յովակիմայ յազգէ Դաւթի ըստ հաւր, և ըստ մաւր՝ ի քահանայական ազգէն, մաւտակայ ազգակից Եղիսաբեթի: Մարիամ սեփական<sup>15</sup> ունէր զքահանայականն և զթագաւորականն<sup>16</sup>, որ<sup>17</sup> և ի նմանէ ծնեալ[ն]՝ քահանայ<sup>18</sup> և թագաւոր: Եւ ինքն՝ սուրբ Կոյսն, սքանչելի վարիւք, սրբութեամբ<sup>19</sup> առաւելեալ քան զամենայն սուրբս: Ըստ բանին Սողոմոնի<sup>20</sup>. «Բազում դստերք ստացան մեծութիւն, բայց դու առաւել եղեր» (Առակ. Ա 29):

**Այս վեցերորդ ամիս է նորա, որ ամուլն կոչեցաւ<sup>21</sup> (Ա 36):**

<sup>1</sup> Բ ամլութեանն և ծերութեանն

<sup>2</sup> Բ ձգէ

<sup>3</sup> Բ ծերութեանն

<sup>4</sup> Բ **չիք** ի

<sup>5</sup> Բ աւետարան

<sup>6</sup> Բ իւր ի կնութիւն զԵղիսաբեթ **փխ** որդոյ զԵղիսաբեթ

<sup>7</sup> Բ Նայասովնի

<sup>8</sup> Բ ծնաւ զՆաբաթ և զԱբիութ, զԵղիազար և զԻթամար **փխ** զՓենեհեզ

<sup>9</sup> Բ **չիք** որ ցածոյց... եղեալ

<sup>10</sup> Բ դստերէն

<sup>11</sup> Բ Նայասոնի քուերէն աւրհնութիւն թագաւորութեանն

<sup>12</sup> Բ խառնեցան

<sup>13</sup> Բ **չիք** ընդ միմեանս

<sup>14</sup> Բ վասնզի Մարիամ դուստր էր

<sup>15</sup> Բ սեպհական (այսուհետ **չենք** նշում)

<sup>16</sup> Բ զթագաւորականն պատիւ

<sup>17</sup> Բ **չիք** որ

<sup>18</sup> Բ իսկապէս քահանայ

<sup>19</sup> Բ և սրբութեամբ

<sup>20</sup> Բ Սաւղամոնի

<sup>21</sup> Բ կոչեցեալ էր

Եփ. Աւրէնքն հրամայեն, թէ որ աւր տասն<sup>1</sup> է Արեգ ամսոյ, արգելցեն զգառն<sup>2</sup>: Ըստ նմին թուոյ արգելաւ Գառնն ճշմարիտ յորովայն<sup>3</sup> Կուսին ի ժամանակին, յորում լոյսն թագաւորէ<sup>4</sup>: Եւ<sup>5</sup> այսու յայտ արար, եթէ զմերկութիւն Ադամայ եկն [ի] ծածկել: Եւ ծնաւ Քրիստոս, որ աւր Ժ (10) էր Հոռի<sup>6</sup> ամսոյ ըստ ժամանակին, յորում սկիզբն առնու լոյսն յաղթել<sup>7</sup>, զի յայտ արասցէ, եթէ պարտաւորեցաւ սատանայ և<sup>8</sup> յաղթեաց Ադամ<sup>9</sup> քրիստոսական մարմնովն:

Վասնզի<sup>10</sup> ո՛չ տկարանայ<sup>11</sup> առ յԱստուծոյ<sup>12</sup> ամենայն բան (Ա 37): Դնէ<sup>13</sup> զաւրութիւնն, զի մեք մի՛ տկարասցուք ի հաւատայն: Զի չիք ինչ, որ ընդդէմ կայ կամաց նորա, զի Արարիչ է բնութեանց և ո՛չ ընդ կարգաւ բնութեան, և ամենայն բնութիւնք զկնի նորա ընթանան:

Ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի՛ ինձ ըստ բանի քում<sup>14</sup> (Ա 38):

22բ Կդ. // Հնազանդութիւն և հաւատոյ<sup>15</sup> և յուսոյ զանձն պատրաստեաց և աղաւթէ, զի հաստատեսցի անվրէպ:

Գնաց<sup>16</sup> ի նմանէ հրեշտակն (Ա 38):

Իգ. Ո՛չ ըստ մարդոյ<sup>17</sup> կարգաւորեաց զգնալն, այլ անտեսանելի ի նմանէ առժամայն լինէր յանկարծակի: Զի իմասցի Կոյսն, եթէ հրեշտակ խաւսեցաւ ընդ նմա և ո՛չ մարդ, որով առաւել ևս հաստատէր առ խոստումն զխորհուրդ սրտին<sup>18</sup>:

<sup>1</sup> B Լ (30)

<sup>2</sup> B ի տան զգառն

<sup>3</sup> B յորովայնի

<sup>4</sup> B թագաւորեացէ

<sup>5</sup> B և

<sup>6</sup> B Իթ էր Քաղոց *փխ* Ժ էր Հոռի

<sup>7</sup> B յաղթել խաւարին

<sup>8</sup> B վասնզի *փխ* և

<sup>9</sup> B Ադամ նմա

<sup>10</sup> B *չիք* վասնզի

<sup>11</sup> B տկարացի

<sup>12</sup> AB՝ ի յԱստուծոյ

<sup>13</sup> B Յղացաւ Եղիսաբեթ ի Սահմի ամսոյ Ա (1), ի ժամանակի իբրև կատարեաց Ջաքարիա գաւուրս պաշտաման իւրոյ: Աւետարանեցաւ Մարիամու, որ աւր Լ (30) էր Արեգ ամսոյ (*կրկ.* ամսոյ). դնէ առաջի զԱստուծոյ

<sup>14</sup> A աջ լս. գրչի ձեռքով գրված է 15 տող գծուար ընթեռնելի նախադասութիւն. «յղ// իսա// տարոջ //արի Աստուծոյ Լ (30?) [աւ]ուրս //աման իւրոյ աւետարանեցաւ Մարիամու?? // էր Արեգ ամեան և ծնաւ, որ աւր ԺԵ (15?) Հոռի ամեան»:

<sup>15</sup> B Հնազանդութեան հաւատոյ

<sup>16</sup> B և գնաց

<sup>17</sup> B մարմնոյ

<sup>18</sup> B առաքեցաւ յԱստուծոյ: Եւ եկեալ հրեշտակն կատարեաց զհրամանն Աստուծոյ, և

**Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ գնաց առ Եղիսաբեթ**  
(Ա 39):

Կդ. Եւ է՞ր վասն փութանակի Կոյսն չոգաւ առ Եղիսաբեթ: Առ ի հաստատութիւն բանիցն, զոր լուաւ ի հրեշտակէն վասն Եղիսաբեթի, զի վասն անձինն<sup>1</sup> հաւատասցէ, զոր<sup>2</sup> ի հրեշտակէն, և մի՛ երկմտեսցէ:

Եփ. Զի յարեաւ գնաց Մարիամ առ Եղիսաբեթ, որ փոքր է[ր] քան զնա, որպէս Տէրն առ Յովհաննէս:

**Ի լեռնաքաղաքն<sup>3</sup> Յուդայ** (Ա 39):

Իգ. Աւետարանիչն ստուգէ զտեղին, վասնզի Գալիլեացոց աշխարհն դաշտական է, իսկ Հրէաստան՝ լեռնային<sup>4</sup>: Թէ<sup>5</sup> քահանայապետ էր<sup>6</sup>, ընդէ՞ր ո՛չ բնակէր յԵրուսաղէմ: Զի այլ քահանայապետքն բռնութեամբ տիրեցին: Իսկ արդարն հակառակութեամբ կալ ո՛չ կամեցաւ, այլ տեղի ետ և խնդրեաց խաղաղութեամբ կեալ<sup>7</sup>: Եւ յայտ է ի գալ մոգուցն Հերովդէս խռովեցաւ, և ժողովեաց զամենայն քահանայապետսն<sup>8</sup>, հարցանէր<sup>9</sup>, թէ՛ «Ո՞ւր ծնանիցի Քրիստոսն» (Մատթ. Բ 4):

23ա Եմուտ ի տուն Զաքարիայ<sup>10</sup> // և ետ ողջոյն Եղիսաբեթի: Եւ եղև իբրև լուաւ զողջոյն Մարիամու Եղիսաբեթ<sup>11</sup>, խաղաց<sup>12</sup> մանուկն յորովայնի նորա (Ա 40-41):

Իգ. Զի ի նմա էր, որ զողջոյն[ն] երկնային տալոց էր առաքելոցն և նոքա՝ ամենայն տիեզերաց:

**Խաղաց մանուկն** (Ա 41):

Այլ ո՛չ ըստ պատահման ինչ, այլ ի Հոգւոյն Սրբոյ շնորհաց միաւորելոյ ընդ մանկանն: Ըստ ասելոյ հրեշտակապետին, թէ Հոգւով Սրբով լցցի անդստին յորովայնէ: Վասն որոյ ո՛չ միայն<sup>13</sup> խաղաց առ ի զեկուցանել մաւրն զյղութիւնն, այլ ծանեաւ ի

Հաստատեցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն եղեալ *փի* առաւել ևս... սրտին

<sup>1</sup> B անձին իւրոյ զի

<sup>2</sup> B զոր լուաւ

<sup>3</sup> B լեռնաքաղաքն

<sup>4</sup> B լեռնային

<sup>5</sup> B արդ եթէ

<sup>6</sup> B էր Զաքարիայ

<sup>7</sup> B զխաղաղութեամբ կեալն

<sup>8</sup> A քահանայապետսն B զքահանայապետսն

<sup>9</sup> B և հարցանէր

<sup>10</sup> B Զաքարիայի

<sup>11</sup> B *զրփի* Եղիսաբեթ զողջոյնն Մարիամու

<sup>12</sup> A խաղաց

<sup>13</sup> B *չիք* ոչ միայն

Հոգևոյն Սրբոյ զայն, որում կարապետ լինէր, և Քրիստոսի երկրպագեաց յորովայնին: Յայտ է, եթէ Հոգին Սուրբ<sup>1</sup> շարժեաց զնա խայտալ ընդառաջ Տեառն իւրոյ:

Եփ. Ծածկեցաւ<sup>2</sup> յղուծիւնն Եղիսաբեթի ի Մարիամայ ամիսս վեց, մինչև նկարեցաւ մանուկն անդամաւք իւրովք ցնծալ ընդդէմ Տեառն իւրոյ, զի վկայեցէ Մարիամայ խայտալովն իւրով: Յնծաց<sup>3</sup> նա յորովայնի մաւրն, զի յայտնեցէ զպարզեան ի մէջ ամուլ որովայնին: Զի<sup>4</sup> գիտացէ զմեծ պարզեան որովայն Կուսին, և հաւատասցեն երկոքեան[ն] սերմանցն, զոր ընկալան ի ձայնէ<sup>5</sup> Գաբրիելի բառբառոյ, որ մշակեաց երկոցունցն<sup>6</sup>:

Լցաւ<sup>7</sup> Եղիսաբեթ Հոգևովն<sup>8</sup> Սրբով (Ա 41):

ԵՓ Ի լսել[ն] Եղիսաբեթի զողջոյնն Մարիամու, ի նոյն շնորհաց և նա լցեալ եղև: Եղիսաբեթ պառաւ, որ ծնաւ զվերջին[ն] մարգարէիցն, // և Մարիամ աղջիկ՝ զՏէրն հրեշտակաց: Դուստրն Ահարոնի<sup>9</sup> ծնաւ «զձայն բարբառոյ յանապատի» (Յովհ. Ա 23, տե՛ս Ես. Խ 3) և դուստրն Դաւթի<sup>10</sup> արքայի՝ զԲանն<sup>11</sup> երկնաւոր արքային: Կին քահանային ծնաւ զհրեշտակ[ն] երեսաց նորա, և դուստրն Դաւթի<sup>12</sup>՝ զԱստուած հզաւր, իշխան, Հայր<sup>13</sup> հանդերձելոյ աշխարհին: Ամուլն ծնաւ զթողիչն մեղաց, և Կոյսն ծնաւ<sup>14</sup> զբարձողն<sup>15</sup> մեղաց: Երէցն աւուրբք ծնաւ զլոյսն ճրագի՝ տանն Յակոբայ հաւր իւրոյ, որ է Յովհաննէս, և տղայն աւուրբք՝ զԱրեգական արդարութեան ամենայն հեթանոսաց: Եւ որ մկրտէր ջուրբ<sup>16</sup>, վկայեաց ի վերայ այնորիկ, որ մկրտէր<sup>17</sup> ի հուր և ի

<sup>1</sup> Ե չիք Սուրբ

<sup>2</sup> Ե Մաղիկն Արեգ ամսոյ, որ լուծեամբ քարոզեաց ի վերայ ողկուզին, որ մզեցաւ ի մէջ Երուսաղէմի: Զոր աւրինակ՝ կանուխ է ծաղիկն Ե (5) ամսով, քան զսկիզբն (ձախ լս. սրբ.՝ զողկ) արարեալ որթոյ, նոյնպէս կանխեաց Յովաննէս յղուծեամբ, զի եղիցի քարոզ յղուծեան Քրիստոսի երկրպագելովն: Ծածկեցաւ

<sup>3</sup> Ե ցնծայ

<sup>4</sup> Ե և զի

<sup>5</sup> Ե չիք ձայնէ

<sup>6</sup> Ե երկուցունցն

<sup>7</sup> Ե Եւ լցաւ

<sup>8</sup> Ե Հոգով

<sup>9</sup> Ե Ահարովնի

<sup>10</sup> Ե Դաւթայ

<sup>11</sup> Ե ծնաւ զԲանն

<sup>12</sup> Ե Դաւթայ

<sup>13</sup> Ե և Հայր

<sup>14</sup> Ե չիք ծնաւ

<sup>15</sup> Ե զբարձաւրն

<sup>16</sup> Ե ջուրբք

<sup>17</sup> Ե մկրտեաց



Հոգի<sup>1</sup> լի հաւատովն ի վերայ այնորիկ, որ գալոցն է ի ձայն փողոյ յաւուրն յետնում[ն]: Որ ետես զաղաւնին ի վերայ այնորիկ, յորոյ վերայ հանգեաւ աղաւնին:

**Ի<sup>2</sup> ձայն բարձր աղաղակեաց** (Ա 42):

Արդ՝ զի ո՛չ կարէր Յովհաննէս աղաղակել լեզուաւն<sup>3</sup>, և վկայեալ Տեառն իւրոյ, սփռեցաւ, զեղաւ ոգի<sup>4</sup> նորա ի վերայ մաւր իւրոյ<sup>5</sup>: Խնդրեաց զլեզու մաւրն, և ասաց ի վերայ նորա մարգարէութեամբ.

**Աւրհնեալ ես դու ի կանայս** (Ա 42):

Կդ. Վասնզի անէծքն Եւայի քե լուծան:

Իգ. Եւ նովաւ ազատեցան արարածք<sup>6</sup> ի դատապարտութենէ յանցանացն: Եւ անէծք[ն], որ անհնազանդութեամբն Աղամայ եղան, բարձաւ:

**Եւ ավրհնեալ է պտուղ [որ]ովայնի քո** (Ա 42):

24ա Կդ. // Զի ա՞րդ, զի առանց հեշտութեան յղացար<sup>7</sup> և առանց ապականութեան ծնանելոց ես:

Եփ. Զի ի մեռեալ արգանդէն պատրաստեաց Տէր<sup>8</sup> զքարոզիչն իւր, զի յայտ արասցէ, եթէ զկնի Աղամայ մեռանելոյ եկն Քրիստոս: Կենդանացոյց նախ՝ զարգանդն Եղիսաբեթի մեռեալ<sup>9</sup> և ապա՝ կենդանացոյց զԱղամ հողացեալ մարմնով իւրով:

Իգ. Նովաւ սրբեցան ամենայն ծնունդք, վասնզի ի<sup>10</sup> խառնեալ Աստուծոյ ընդ բնութիւնս<sup>11</sup> մերոյ կարգաւ անցանէ ընդ ամենայն: Ուստի ապականութիւն<sup>12</sup> հոսեալ ժանդացոյց զբնութիւնս մեր, և այնպէս յառաջինն փոխադրեցաւ<sup>13</sup> յանմեղն և յանապականն:

**Եւ ուստի է ինձ այս** (Ա 43):

<sup>1</sup> B Հոգին

<sup>2</sup> B և ի

<sup>3</sup> B լեզուովն

<sup>4</sup> B Հոգի

<sup>5</sup> B նորա *փխ* մաւր իւրոյ

<sup>6</sup> B արարածք ամենայն

<sup>7</sup> B յղացաւ

<sup>8</sup> B Տէր մեր

<sup>9</sup> B մեռելոյ

<sup>10</sup> B *չիք* ի

<sup>11</sup> B բնութեան

<sup>12</sup> B ապականութեան

<sup>13</sup> B փոխադրեաց

4 · Ս. Կունդ, Մեկն. Դուկասու

Այսպիսիք էին ամենայն սուրբքն: Յորժամ մեծ ինչ<sup>1</sup> շնորհաց արժանացեալ<sup>2</sup> լինէին, ո՛չ հպարտանային, այլ իբրև զանարժանս զանձինս ի չափո<sup>3</sup> ունէին:

**Ջի եկեացէ մայր Տեառն իմոյ<sup>4</sup> առ իս** (Ա 43):

ԿՂ. Ի շնորհաց Սուրբ<sup>5</sup> Հոգւոյն լցեալ Եղիսաբեթ Տէր՝ զկրեալն յորովայնի քարոզեաց: Ո՞ւր<sup>6</sup> արդևք<sup>7</sup> իցեն հերձուածողքն, որք սոսկ մարդ գծնեալն խոստովանին և ապա յետոյ ընկալեալ՝ գորդ[ի]ութեան\* շնորհս: Ջի Եղիսաբեթ, որ լցաւ Հոգւովն Սրբով, անդատին Տէր զնա քարոզեաց:

Իգ. Ո՛չ ըստ բարեգործութեան մերոյ հատոյց, այլ ողորմութեամբ արժանացոյց: Իմանայր Հոգովն զԱստուած անհաս և անպարագիր տարեալ եղև յորովայնի: // Եւ ամենեցուն հաստիչն<sup>8</sup> յանձն առ ծնանիլ: Ո՞՞ զտիրո[ւ]հին առ աղախինս<sup>10</sup> առաքեաց: Վասն<sup>11</sup> քո Գաբրիէլ յերկնից գայ, վասն քո մոգք<sup>12</sup> ի Բեթղե[հէ]մ ընթանան:

**Ջի ահաւասիկ, իբրև եղև ձայն ողջունի քո<sup>13</sup> յականջս իմ, խաղաց<sup>14</sup> մանուկս յորովայնի իմում** (Ա 44):

Վասնզի նախ՝ ի մանուկն ազդեաց շնորհք<sup>15</sup> Սուրբ Հոգւոյն և ապա՝ զմայրն լցոյց, վասնզի ետես զոմանց աւտարանալն ի հաւատոց<sup>16</sup>:

**Երանի որ հաւատասցէ, եթէ եղիցի<sup>17</sup> կատարումն ասացելոց<sup>18</sup> նմա ի Տեառնէ** (Ա 45):

<sup>1</sup> Ե մեծի *փխ* մեծ ինչ

<sup>2</sup> Ե արժանացեալք

<sup>3</sup> Ե չափ

<sup>4</sup> Ե *չիք* իմոյ

<sup>5</sup> Ե *չիք* Սուրբ

<sup>6</sup> Ե յամալթ լիցին ուր

<sup>7</sup> Ե արդեալք (*այսուհետև չենք նշում*)

\* *գորդեգրութեան ?*

<sup>8</sup> Ե հաստատիչն

<sup>9</sup> Ե վասն այնորիկ *փխ* ո

<sup>10</sup> Ե աղախինն

<sup>11</sup> Ե և նա ասէ վասն

<sup>12</sup> Ե մոգքն

<sup>13</sup> Ե *չիք* քո

<sup>14</sup> Ե խաղաց ցնծալով

<sup>15</sup> Ե զշնորհք

<sup>16</sup> Ե հաւատոց յաղագս որոց ասէ

<sup>17</sup> Ե լինիցի

<sup>18</sup> Ե ասացելոցս

Կդ. Առ Կոյսն զբանն դարձուցանէ, զխոստումն հրեշտակին յիշեցուցանէ, զի յոյժ բարձրագոյն էր խոստումնն և ի վեր քան զհաւատն<sup>1</sup>:

Եփ. Յայտնեաց Կուսին զայն ինչ, զոր հրեշտակն ի ծածուկ խաւսեցաւ: Եւ երանեաց<sup>2</sup>, եթէ հաւատաս, եղիցի կատարումն այնմիկ, զոր լուարն, մարգարէացան աշակերտքն<sup>3</sup>: Արդ՝ վասնզի անճառ էր խորհուրդն և գերիվերոյ քան զմիտս: Վասնզի աստուածայինք<sup>4</sup> հաւատով իմանին և ո՛չ ընդ քննութեամբ անկանին: Ըստ այնմ, եթէ<sup>5</sup>՝ «Արդարն ի հաւատոց կեցցէ» (Յոն. Ա 17, Պաղ. Գ 11, Եբր. Ժ 38):

**Ասէ Մարիամ. Մեծացու[ս]ցէ անձն իմ զՏէր** (Ա 46):

Յայնժամ ի Սուրբ Հոգւոյն շարայարէ՞ Մարիամ զպտուղն զայն, որ<sup>7</sup> լուաւ ի հրեշտակէն: Եւ յեղիսաբեթէ քաղցրութեամբ

Կդ. կարգէ զգոհացողական բանս՝ սկիզբն դնելով զմեծութիւն 25ա այնմ<sup>8</sup>, որ զայնքան գերահրաշ պարգևս //ի ձեռն հրեշտակին խաւսեցաւ: Մեծացուցանելն ասի<sup>9</sup> աւրհնաբանել, փառաւորել<sup>10</sup>, բարձր առնել<sup>11</sup>: Երախտեացն<sup>12</sup> ո՛չ այլ ինչ ի ներքս բերել<sup>13</sup>, միայն<sup>14</sup> աւրհնել<sup>15</sup>: Ըստ Դաւթայ. «Աւրհնեայ անձն իմ զՏէր, աւրհնեցից զՏէր ի կեանս իմ» (Սաղմ. ԾԽԵ 2): Եւ առաքեալ. «Մեծացի Քրիստոս ի մարմնի իմում» (Փիլիպ. Ա 20), և<sup>16</sup> «Փառաւոր լիցի անուն Տեառն մերոյ<sup>17</sup> ի ձեզ» (Բ ԹԵՍ. Ա 12): Այսպէս գոհանայ Կոյսն վասն անսահման բարեացն, որ ցուցաւ<sup>18</sup>:

**Յնծացաւ հոգի իմ յԱստուած**<sup>19</sup> (Ա 47):

<sup>1</sup> Բ զհաւատս

<sup>2</sup> Բ երանեաց նմա

<sup>3</sup> Բ ի հրեշտակէն *փիւ* մարգարէացան աշակերտքն

<sup>4</sup> Բ աստուածայինքն

<sup>5</sup> Բ *չիք* եթէ

<sup>6</sup> Բ շարժեալ ասէ

<sup>7</sup> Բ զոր

<sup>8</sup> Բ մեծացուցանել զՏէրն *փիւ* զմեծութիւն այնմ

<sup>9</sup> Բ *չիք* ասի

<sup>10</sup> Ա աւրհնաբանեալ, փառաւորեալ

<sup>11</sup> Բ առնելն է

<sup>12</sup> Բ և երախտեացն Աստուծոյ

<sup>13</sup> Բ բերէ մարդ

<sup>14</sup> Բ բայց միայն

<sup>15</sup> Ա աւրհնեալ Բ աւրհնել զԱստուած

<sup>16</sup> Բ և դարձեալ

<sup>17</sup> Բ մերոյ Յիսուսի Քրիստոսի

<sup>18</sup> Բ ցուցաւ առ նա

<sup>19</sup> Բ յԱստուած փրկիչ իմ

*Ո՛չ մարմնական կրից է ցնծութիւնս, այլ ըստ Հոգւոյն<sup>1</sup>: Զի՛*  
*«Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, և զաւրութիւն Բարձրելոյն Հովանի*  
*լիցի ի վերայ քո՛» (Ա 35):*

Կղ. *Իրաւապէս առ Հոգին յարէ զբերկրումն:*

Իգ. *Այս է ստոյգ ցնծութիւն, որ յԱստուծոյ իցէ, զի մարդկան ու-*  
*րախութիւնս հակառակ են աստուածայնոցն, իսկ<sup>3</sup> Աստուծոյ*  
*ցնծութիւնն կատարեալ բարձրութիւն է և ի վայելչութիւն փա-*  
*ռաց ածէ:*

**ՅԱստուած փրկիչ իմ** (Ա 47):

*Յայտ արար, թէ՛ և նա կարաւտ էր ամենեցուն փրկողին, զի*  
*զանգուած էր տանն<sup>4</sup> Ադամայ և առաջին մաւրն պարտեացն ներ-*  
*քոյ: Վասն<sup>5</sup> որոյ նախ՛ նա լինի փրկութեան ընդունակ և ի նմա-*  
*նէ ամենեցուն տարածեալ բաշխեցաւ:*

**Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ** (Ա 48):

ԵՓ *Խոնարհութիւն միայն մարդկան է անկ, զի անկաք ի սեփա-*  
*կան բարձրութենէն յայս թշուառութիւնս: Այլ զանճինն յատուկ*  
*26բ<sup>6</sup> ասէ, // քանզի աղքատ էր իսկ Տէրն, որ երանեաց զաղքատս<sup>7</sup> խո-*  
*նարհութեամբ (տե՛ս Մատթ. Ե 3): Ըստ մարգարէին, եթէ՛ «Ես յո՞*  
*բնակեցայց<sup>8</sup>, թէ ո՛չ ի հեզս և ի խոնարհս» (Ես. 42 2): Թէպէտև ար-*  
*ժանաւորեաց մայր իւր առնել, զնա<sup>9</sup> Տէր և Արարիչ<sup>10</sup> խոստովա-*  
*նի, ոչ ինչ արժանաւոր գոլ այսպիսի գերապայծառ և անճառ*  
*չնորհի, խոնարհեցաւ<sup>11</sup> յաղքատութիւն աղախնոյ իւրոյ:*

**Յայսմ հետէ երանիցեն ինձ ամենայն ազգ[ք]**<sup>12</sup> (Ա 48):

*Հոգին Սուրբ ծանոյց նմա, զի որ ի նմանէ ծնանելոց էր, Տէր*  
*էր ամենայն ազգաց, և առ նա ժողովելոց էին ցրուեալքըն, որ*  
*յԱդամայ:*

<sup>1</sup> Բ Հոգոյ

<sup>2</sup> Բ քո ասաց հրեշտակն

<sup>3</sup> Բ իսկ ըստ

<sup>4</sup> Բ տանս

<sup>5</sup> Բ յաղազս

<sup>6</sup> *Ա մեկնութիւնը 25ա էջից հետո շարունակվում է 26բ էջում. 25բ-26ա էջերում գրչափորձեր են*

<sup>7</sup> Բ զաղքատս Հոգւով

<sup>8</sup> Բ Հանգեայց

<sup>9</sup> Բ այլ զնա

<sup>10</sup> Բ արարիչ իւր

<sup>11</sup> Բ այլ նա խոնարհեցաւ

<sup>12</sup> *Ա Ք տառը ջնջված է*

Կդ. Սկսաւ Մարիամ քարոզել զարքայութիւնն նորա: Վասն այնորիկ և զիւր երանութիւնն կանխաւ<sup>1</sup> գուշակեաց, որպէս<sup>2</sup> այժմ ընդհանուր<sup>3</sup> Աստուածածին դաւանեալ<sup>4</sup> ասի բոլոր ազգաց: Ետես Մարիամ, զի և այլքն պարծէին պարգեաւք նորա: Խոստովան եղև և նա, և ասէ. «Յայսմ հետէ երանիցեն<sup>5</sup>»:

**Զի արար ընդ իս մեծամեծս (Ա 49):**

Իգ. Արդարև մեծ և հրաշափառագոյն կուսութեան<sup>6</sup> յղութիւն կրել:

**Սուրբ է անունն նորա (Ա 49):**

Իգ. Հոգւոյն Սրբոյ վերակացութեամբ, որպէս և սուրբ<sup>7</sup> անունն նորա:

ստ. Ըստ հրեշտակին ձայնին, եթէ՝ «Սուրբ է, որ ծնանելոցն է ի քէն» (Ա 35):

Ստ. Եւ ի վեր քան զբնաւն<sup>8</sup> և ո՛չ բովանդակէ<sup>9</sup> բան ցուցանել զմեծութիւնն շնորհին, որ առ նա եղև: Զի յարարածոց<sup>10</sup> մայր եղև 27ա բնութեան<sup>11</sup> հզաւրին, // այնմ, որում տկարանայ և ոչինչ, այլ որպէս կամի բաւական<sup>12</sup> է կազմել:

**Ողորմութիւնն նորա ազգաց յազգս երկի[ւ]ղածաց իւրոց (Ա 50):**

Ո՛չ յատուկ միոյ ազգի է ողորմութիւնն նորա: Ո՛չ զի Իսրայէլ<sup>13</sup> և եթ եկն փրկել, այլ զամենայն ազգս, որք հաւատան յանունն նորա: Եւ ո՛չ միայն, որք ի ժամանակի խաչին հաւատան, այլև որք<sup>14</sup> վերանալոյն ընդունին զաւետարանական քարոզս մինչ ի կատարած աշխարհի: Որպէս և գրեալ է. «Ես եմ Աստուած, որ առնեմ զողորմութիւն սիրելեաց իմոց ի հազար ամս, և հակառակորդացն հատուցանեմ զմեղս հարցն յորդիս<sup>15</sup>, որ նոյն գոր-

<sup>1</sup> B կանխեալ

<sup>2</sup> B որպէս և

<sup>3</sup> A ընթանուր

<sup>4</sup> A դավանեալ

<sup>5</sup> B երանիցեն ինձ ամենայն ազգք

<sup>6</sup> B է կուսութեամբ

<sup>7</sup> B սուրբ է

<sup>8</sup> B զբնաւս

<sup>9</sup> A բաւանդակէ

<sup>10</sup> B յարարածոցս

<sup>11</sup> B անեղ բնութեան

<sup>12</sup> B բովանդակ

<sup>13</sup> A համառոտագրված է -եղ- ձևով

<sup>14</sup> B զկնի *փի* որք

<sup>15</sup> B յորդիսն

ծովքն լինին յերեք և [ի] չորս ազգս: Եւ հատոյց վերկուծիւն որ-  
դոցն<sup>1</sup>, որ երկեղիւ հարցն նմանողք եղեն» (*հմմտ.* Ելք Ի 5, Բ Օր. Ե 9):

**Արար զաւրուծիւն բազկաւ իւրով** (Ա 51):

Կղ. **Ձոր<sup>2</sup> ի վերայ խաչին արար, զի խափանեաց զթագաւորու-**  
**ծիւն<sup>3</sup> «իչխանի աշխարհի[ս]»** (Յովհ. ԺԲ 31, ԺՁ 11): **Եւ աստուածային**  
**յարուծեամբն վերածեաց զսրբոց<sup>4</sup> հոգիան, որք յուսով մնային:**

Ստ. **Բազուկ աստ զաւրուծեան<sup>5</sup>՝ զՔրիստոսի աստուածուծիւնն**  
**նշանակեաց:**

**Ձի ո՛չ կարաւտանայ յումեքէ զաւրանալ, այլ կատարէ զոր և**  
**կամի:**

**Յրուեաց զամբարտաւանսն<sup>6</sup> մտաւք սրտից** (Ա 51):

Կղ. **Նոյն իշխան զբանսարկուն ասէ, որ գոռոզացեալ<sup>7</sup> տիրէր**  
**մարդկային բնութեանս, և ազգի ազգի աւրինաւք ծառայեցոյց**  
**զհոգիսն<sup>8</sup> զազրալի մեղաւք դառնութեամբ, զոր խորտակեաց**  
**27բ իւրով գալստեամբն // և ցրուեալ հալածական արար: Եւ մի՛ դի-**  
**մադարձ իցէ ոք, զի ահա տեսանեմք զպատրանս նորա յաճախ և**  
**մահ տիրապէս: Եւ<sup>9</sup> ասեմք<sup>10</sup>, զի որ յայնժամ երկրպագուս արար**  
**զմարդիկ, զի զոհեցին զուստերս և զդատերս իւրեանց դիւաց,**  
**այժմ ո՛չ զաւրէ ցուցանել զիւր իշխանութիւնն, զոր յառաջ<sup>11</sup> պա-**  
**հանջէր ի մարդկանէ: Ձի թէպէտե խաբէութեամբ<sup>12</sup> կամ երազոց<sup>13</sup>**  
**երեւմամբ յուխտ աղբերաց<sup>14</sup> և սրբոց անուամբ պատուել տայ**  
**զտեղիս, կամ զոմանս առ հարցուկս և դարձնկեցս, զի նոքաւք**  
**պարծանս ստանայ: Այլ յառաքինի և ի սրբոց արանց ոսկերաց ի<sup>15</sup>**  
**մարտիրոսացն փախստական լինի՝ երկի[ւ]ղիւ զարհուրեալ: Տե-**  
**սեր<sup>16</sup>, զի բարձաւ սատանայի թագաւորութիւնն Բանի[ւ]ն Աս-**

<sup>1</sup> Բ որդւոցն

<sup>2</sup> Բ որ

<sup>3</sup> Բ զիշխանութիւն

<sup>4</sup> Բ գսուրբ

<sup>5</sup> Բ զաւրուծեամբ

<sup>6</sup> Բ զամբարտաւանս

<sup>7</sup> Բ գոռոզաբար

<sup>8</sup> Բ և զհոգիան

<sup>9</sup> Բ **չեք** եւ

<sup>10</sup> Բ ասեմք առ այս

<sup>11</sup> Բ յառաջն

<sup>12</sup> Բ խաբէութեամբ ոմամբ

<sup>13</sup> Բ երազոյ

<sup>14</sup> Բ յուխտաբերաց

<sup>15</sup> Բ **չեք** ի

<sup>16</sup> Բ տեսանե՞ս

տուժոյ գալստեամբն: Եւ մեղքն, որ ի պարծանս, այժմն<sup>1</sup> տաղտկալի է և ծածկապէս երկիր[ւ]ղ<sup>2</sup>: Եւ<sup>3</sup> յետ գործելոյն խղճեն<sup>4</sup> և մտանեն ընդ լծով ապաշխարութեան: Եւ մահն անյոյս այժմն յարութեամբն յուսով<sup>5</sup> լուծաւ: Եւ Տէրն ասաց. «Որ հաւատայ յիս, թէպէտև մեռանի՝ կենդանի<sup>6</sup> է» (Յովհ. ԺԱ 25): **Ձի որպէս ոմն յըմբշամարտաց զժանիս առիւծուցն փշրէ և զճիրանիս<sup>7</sup>, և միայն կենդանի թողու ծաղր տեսաւդաց<sup>8</sup>, այսպէս և սատանայ խաչիւն և թաղմամբն կործանեցաւ, միայն զձեն ունի մինչև ի դատաստանին հատուցումն:**

**Քակեաց զհաւարս<sup>9</sup> յաթոռոց (Ա 52):**

28ա. **Որ երբեմն աթ(11)ոռացեալ հանգչէր ի մարդկային բնութիւնս, քակեաց և իւր արար աթոռ զստեղծուածս ձեռաց իւրոց:**

Իգ. **Ձայն որ ասէր. «Եղից զաթոռ իմ յամպս, և եղէց նման Բարձրելոյն» (հմմտ. Ես. ԺԳ 13-14), որ վարեաց զարշելի խաբէութեամբ և ո՛չ բռնութեամբ, քանզի տկար է և զաւրացեալ է<sup>10</sup> յորդիսն ապստամբութեամբ<sup>11</sup>: Աստուծոյ անտես առնելովն զաւրացաւ, իսկ յորժամ այց արար, կապեաց զվիշապն ապստամբ և էած զսուր[ն] սուրբ ի վերայ աւձին կամակորի, զոր ընկէց Քրիստոս յիշխանութենէ և զմեզ կեցոյց:**

**Ջխոնարհս բարձրացոյց (Ա 52):**

Կդ. **Խոնարհ զմարդիկ ասաց և քաղցեալ, զոր խոնարհեցոյց բանսարկուն ի բարձրութենէ և ի փառաց, ի<sup>12</sup> դրախտին վայելչութենէ, զոր բարձրացոյց Կուսածինն ի փառս իւրոյ աստուածութեանն:**

Իզ. **Քանզի այս էր խորհուրդ իջանելոյ նորա, զի առեալ զմեզ ի վեր տարցէ: Որպէս ասաց, թէ՛ «Ո՛ւր եսն<sup>13</sup> եմ, անդ և պաշտաւնեայն իմ եղիցի» (Յովհ. ԺԲ 26):**

<sup>1</sup> Բ այժմ

<sup>2</sup> Բ երկիրեղիւ

<sup>3</sup> Բ **չեք** Եւ

<sup>4</sup> Բ խղճիւ մտաց հարեալ լինին

<sup>5</sup> Բ այժմ յարութեան յուսովն

<sup>6</sup> Բ կեցցէ և թէ կենդանի

<sup>7</sup> Բ զճիրանս

<sup>8</sup> Բ տեսանողաց

<sup>9</sup> Բ զհաւարն

<sup>10</sup> Բ **չեք** է

<sup>11</sup> Բ ապստամբութեան

<sup>12</sup> Բ **չեք** ի

<sup>13</sup> Բ ես

**Զկարաւտս ելից բարութեամբ** (*հմմտ.* Ա 53):

*Յագեցոյց<sup>1</sup> ճաշակմամբ իւրոյ մարմնոյ և արեանն փոխանակ դառն ճաշակման դրախտին: Եւ երկնաւոր շնորհաւքն մշտնջենաւոր բարութեամբն պարարտացոյց անուշակ արքայութեամբ:*

**Զմեծատունս արձակեաց ունայնս** (Ա 53):

*Զբանսարկուն ի զոհից պաշտամանութենէ<sup>2</sup>, որովք երբեմն փառաւորէր:*

28բ Եփ. *Դարձեալ. այն, որ ի լերինն, // անդ ցուցանէր<sup>3</sup> զամենայն թագաւորութիւնս աշխարհի<sup>4</sup>: Եւ յանդուգն այն ասէր, եթէ<sup>5</sup>՝ «Իմ է այս ամենայն» (*հմմտ.* Դ 6-8)՝ կարծեաւք<sup>6</sup> մեծութիւնս: Տէր<sup>7</sup> մեր առ զաւարն, բաշխեաց պարգևս մարդկան, և զնա «արձակեաց ունայնս»: Ըստ առաքելոյն<sup>8</sup>. «Մերկեաց<sup>9</sup> զիշխանութիւն[ս] և զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց<sup>10</sup> զնա» (Կողոս. Բ 15): *Նաև Տէրն իսկ ասէր. «Տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն: Ահա ետու ձեզ իշխանութիւն<sup>11</sup> կոխել զզաւրութիւն թշնամոյն<sup>12</sup>»* (Ժ 18-19):*

**Պաշտպանեաց Իսրայելի ծառայի իւրոյ** (Ա 54):

Իգ. *Բազում ինչ մարգարէաւք<sup>13</sup> խնամարկեաց, որպէս ասաց Դաւիթ. «Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր»* (Սաղմ. ԳԽԵ 20): *Եւ ինքն առ նոսա եկն և առ մարմին, որպէս ասաց. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ո՛չ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի»* (Մատթ. ԺԵ 24): *Եւ առաքելոցն հրամայեաց առ նոսա զնալ, իսկ նոքա զանձինս անարժանս արարին փրկութեան անձանց մեղ[ք]է և ո՛չ փրկողին: Ըստ այնմ՝ «Զինչ առնելոյ էր այգւոյ իմոյ, և ես ո՛չ արարի»* (*հմմտ.* Երզ. Ա 5):

Ստ. *Իսրայէղ աստ զբոլոր հաւատացեալս ասէ, զորոց<sup>14</sup> պաշտպանեաց ի բարութիւն: Աստ ո՛չ ըստ հնոյն ձևանայ, զի անդ մա-*

<sup>1</sup> A հայգեցոյց

<sup>2</sup> B պաշտամանութենէ

<sup>3</sup> B ցուցանէ

<sup>4</sup> B աշխարհիս

<sup>5</sup> B չէք եթէ

<sup>6</sup> B կարծիւք

<sup>7</sup> B Եւ Տէր

<sup>8</sup> B առաքելոյ յայտնի ասէ

<sup>9</sup> B մերկաց

<sup>10</sup> A նշովակեաց

<sup>11</sup> B իշխանութիւնս

<sup>12</sup> B զզաւրութիւնս թշնամոյն

<sup>13</sup> B մարգարէիւքն

<sup>14</sup> B յորոց



սամբք և աւրինակաւք<sup>1</sup> տեսանիւր Իսրայէղ, իսկ աստ ի մարմնի միաւորեալ շրջեցաւ ընդ մարդկան:

**Յիշելով գողորմութիւն իւր** (Ա 54):

29ա Վասնզի ետես զմեզ անկեալ<sup>2</sup> ընդ մեղաւք, // և չէր ոք բաւական յարուցանել: Ապա ինքն ողորմութեամբ փութացաւ կեցուցանել: Եւ այս ողորմութիւն ո՛չ նոր սկսաւ, այլ ՝ ի սկզբանէ հաստատեալ առ Աստուծոյ: Վասն որոյ յիշեաց զկատարումն անել:

**Որպէս խաւսեցաւ առ հարսն մեր՝ Աբրահամու<sup>3</sup> և զաւակի նոր[ա] յաւիտեանս** (Ա 55):

Կդ. Կատարելով զխոստումն, որ առ հարսն: Զոր և Տէրն վկայեաց. «Աբրահամ ցանկացաւ<sup>4</sup> տեսանել զաւր իմ, ետես և ուրախ եղև» (Յովհ. Ը 56): Այսինքն՝ զխաչին ժամանակն, զոր ետես յաւրինակի[ն]՝ զխոյն կախեալ զծառոյն<sup>5</sup> փոխանակ Իսահակայ (տե՛ս ԾԱՆՊ. ԻԲ 13), որ զուշակեաց նախահաւրն զկախումն Որդոյն<sup>6</sup> Աստուծոյ զփայտէն<sup>7</sup> փոխանակ մարդկային բնութեանս: [Եւ] Իսահակայ փրկութեամբն՝ զբոլոր ազգաց փրկութիւն:

Իգ. Ըստ այնմ՝ «Ի զաւակէ քումմէ աւրհնեսցին ամենայն ազգք երկրի» (ԾԱՆՊ. ԻԲ 18): Այլև ամենայն նախահարքն և մարգարէքն զայս աւետիս առ Իսրայէղ<sup>8</sup> յԱստուծոյ ետուն ազգի մարդկան՝ իջանել Որդոյն<sup>9</sup> Աստուծոյ յերկնից և զփրկութիւն յաւիտեանական<sup>10</sup> տալ:

**Եկաց<sup>11</sup> Մարիամ առ նմա իբրև ամիսս երիս** (Ա 56):

Յետ երից ամսոց<sup>12</sup> ցուցանէ զգարձումն: Վասն է՞ր, զի ի հասանել ժամանակի ծննդեանն Եղիսաբեթի ո՛չ կամէր Կուսին մնալ անդէն՝ պատկառելով իմն, և ո՛չ արժանի զանձն համարելով առընթեր իւրոյ ծննդեանն լինել Տեառն[ա]մաւրն:

Եփ. Զի մի՛ կաց[ց]է ի սպասու Տէրն ծառային իւրոյ:

29բ // **Եւ դարձաւ ի տուն իւր** (Ա 56):

<sup>1</sup> Բ աւրինաւք

<sup>2</sup> Բ անկեալս

<sup>3</sup> Բ ընդ Աբրահամու

<sup>4</sup> Կ ցանկացալ

<sup>5</sup> Բ ի ծառոյն

<sup>6</sup> Բ Որդւոյն

<sup>7</sup> Բ ի փայտէ

<sup>8</sup> Բ առեալ *փիս* առ Իսրայէղ

<sup>9</sup> Բ Որդւոյն

<sup>10</sup> Բ յաւիտեանց

<sup>11</sup> Բ և եկաց

<sup>12</sup> Բ ամսոյ

Ձի առ այրն իւր եկն: Ձի յայտ լիցի, զի թէ մարդկեղէն յղու-  
թեամբ<sup>1</sup> բարձեալ կրէր նա, փախչել արժան էր նմա յառնէ անտի<sup>2</sup>  
իւրմէ:

Իգ. Ո՛չ կամեցան, եթէ բնաւ մեկնեսցի ի նոցանէ, այլ բռնադատե-  
ցան այնքան աւուրս առ իւրեանս ունել: Գնաց առ Յովսէփ, առ  
որ խաւսեցեալն էր: Է՞ր<sup>3</sup> նա ծանեալ, եթէ յղի է, և կամեցաւ ար-  
ձակել: Եւ ապա երևեալ հրեշտակ[ի]ն հաստատէ զարդարն՝ բառ-  
նալով զվատթար կարծիսն:

Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, և ծնաւ որդի (Ա 57):

Կդ. Տեսե՛ր, որպէ՞ս առընթեր բանիցս զնէ զծնունդն ըստ կանխաւ  
պատմութեանն:

Լուան, որ շուրջ գնովաւ ամենայն ազգատոհմն նորա, զի մեծ  
արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա, և խնդացին յոյժ (Ա 58):

Ո՛չ միայն ընդ ծնունդն խնդային, այլ<sup>4</sup> ընդ [ս]քանչեղեալք  
ծնունդն ըստ ծերութեան[ն] և ամլութեանն և վասն նշանին, որ  
եղև ի վերայ Զաքարիայի:

Իգ Զի ծանեան, եթէ խնամք տեսչութեանն Աստուծոյ է, զի մե-  
ծացոյց զողորմութիւն իւր առ նա որպէս առ այլսն, որ պատմին  
ի գիրս<sup>5</sup>: Նաև մանկանն հոգով[ն]<sup>6</sup> ընուլ յորովայնի անդ, և  
մաւրն նոյնպէս վկայեն մեծութեան<sup>7</sup> պարզեացն Աստուծոյ:

Յաւուրն<sup>8</sup> ութերորդի եկին թլփատել զմանուկն (Ա 59):

Կր 30ա Յուցանէ զթլփատութիւն ըստ սովորութեանն հրէից ութ<sup>9</sup>  
աւուր, զոր ընկալան հարք<sup>10</sup> նոցա, կն(//)իք արդարութեան հաւա-  
տոցն: Եւ պարտ էր առ ամենեսին հաստատուն կալ մինչև հասա-  
նել ճշմարտութեանն յիւրում ժամանակի[ն]:

Եւ կոչեցին<sup>11</sup> զնա յանուն հաւր իւրոյ Զաքարիայ (Ա 59):

Զանուն հաւրն կոչէին<sup>12</sup> ի վերայ նորա, խորհրդածէին նորո-  
գումն իմն առնել անունն քահանայապետին վասն հնութեան

<sup>1</sup> B յղութիւն

<sup>2</sup> B անդի

<sup>3</sup> B և փխ էր

<sup>4</sup> B այլև

<sup>5</sup> B զրփիս որպէս պատմի ի գիրս առ այլսն

<sup>6</sup> B հոգւովն

<sup>7</sup> B մեծութիւն

<sup>8</sup> B և յաւուրն

<sup>9</sup> B հրէիցն յութ

<sup>10</sup> B հարքն

<sup>11</sup> B կոչէին

<sup>12</sup> B կոչել

ծերութեանն: Այլև վասն համրանալոյն իբրև<sup>1</sup> գմեռեալ ոք համարէին զնա: Վասն որոյ ի ձեռն որդոյն<sup>2</sup> կամեցան նորոգել զյիշատակ անուան նորա:

Պատասխանի ետ մայր<sup>3</sup> նորա և ասէ. Ո՛չ, այլ կոչեսցի Յովհաննէս անուն նորա (Ա 60):

Ստ. Ո՛չ յանձնէ, այլ յազդման[է]<sup>4</sup> Հոգւոյն Սրբոյ զանուն մանկանն վերակոչեաց:

Իգ.(ստ.) Ուստի<sup>5</sup> գիտէր Եղիսաբեթ զանուն մանկանն:

Կղ. Ո՛չ առ միմեանս խորհրդածեալք Ձաքարիա և Եղիսաբեթ վասն անուանակոչութեան մանկանն, այլ ի Հոգւոյն ազդմանէ: Արդ՝ զոր ասաց հրեշտակն առ Ձաքարիայ, զնոյն<sup>6</sup> Հոգին յայտնեաց<sup>6</sup> Եղիսաբեթի: Եւ իւրաքանչիւրքն վարդապետեցին:

Ասեն. Զի ո՛չ ոք էր յազգի քո, որ կոչի<sup>7</sup> Յովհաննէս (Ա 61):

ԻԳ Արդ՝ վասնզի նոր էր անունս այս, զարմացան նոքա: Դարձեալ. զի սովոր էին զանուն ազգին անմոռանալի պահել: Չայս ասացին, զի անգիտանան զայն, թէ՛ որ<sup>8</sup> զորդին շնորհեաց արտաքոյ բնութեանն և զանունն նա եղ<sup>9</sup> արտաքոյ ազգին:

Ակնարկէին հաւրն (Ա 62):

30ք // Ո՛չ հաւանեցան<sup>10</sup> բանից մաւրն, վասն այնր ակնարկէին<sup>11</sup> հաւրն: Եւ<sup>12</sup> Եղիսաբեթ ո՛չ յամառեալ պնդեաց և ո՛չ ասաց<sup>13</sup> նոցա, եթէ Հոգին յայտնեաց նմա:

Խնդրեաց տախտակ, գրեաց և ասէ. Յովհաննես է անուն զորա (Ա 63):

Վասնզի և նշանացի զանունն ցուցանել ո՛չ է<sup>14</sup> հնար: Արդ՝ իբրև գրեաց զանունն, առժամայն արձակեցան կապանք լեզուի նորա<sup>15</sup>:

1 B իբր  
2 B որդւոյն  
3 B մայրն  
4 A յազդման (այտուհետեւ չենք ծանոթագրում)  
5 B զնոյն և  
6 B ազդեաց  
7 B կոչէր  
8 B չէք որ  
9 B նորա *փի* նա եղ  
10 B հաւատացին  
11 B ակնարկեն  
12 B այլ  
13 B յայտնեաց  
14 B էր  
15 B լեզուին *փի* լեզուի նորա

ԵՓ Վասնէ՞ր խնդրեաց տախտակ: Զի տախտակն խաւսեացի ընդ նորա: Եւ իբրև ետես զՅովհաննէս, զի ել յարգանդէն, խաւսեցաւ: Զի յԱստուծոյ յաղաւթսն<sup>1</sup> մի ոք երկմտեսցէ: Գրեցին մատունքն<sup>2</sup> փոխանակ շրթա[ն]ցն, խնդրեցին զգթութիւն ստուգութեամբ:

Բացաւ վաղվաղակի բերան նորա և լեզուն խաւսէր (Ա 64):

ԿՂ Ո՛չ միայն վասն հրեշտակին<sup>3</sup> բանին յետ ծննդեանն բացաւ բերան նորա, այլ զի երևեսցի դարձեալ անուանակոչութիւն մանկանն: Ո՛չ այլ ուստեք<sup>4</sup>, քան թէ զոր հրեշտակն ասաց, եթէ՛ «Կոչեսցի անուն նորա Յովհաննէս» (Ա 13): Վասն այնորիկ ո՛չ կարաց խաւսել, այլ գրել ի տախտակի զհրամայեալսն: Եւ ապա յետ այնորիկ բացաւ բերանն, և սկսաւ աւրհնել<sup>5</sup> զԱստուած: Իսկ նա սկսաւ գոհանալ զԱստուծոյ և աւրհնել զնա յաղագս մեծամեծ<sup>6</sup> և անբաւ խնամոցն, որ առ նա ցուցաւ:

Ամենեքին<sup>7</sup> զարմացան: Եւ անկաւ ահ ի վերայ նոցա (Ա 63, 65):

31ա ՍՏ Քանզի ի նոր նշան(//)ացն և ի չքնաղ<sup>8</sup> իրացն բնաւորեալ էր զաւրութիւն, զի ըմբռնմամբ յինքն ձգէ զամենայն միտս յիմաստութիւն: Վասն որոյ ո՛չ միայն երկեան, որ լուան, այլև զհամբաւն ամենայն ուրեք լսելի առնէին:

Եդին ամենեքին<sup>9</sup>, որք լսէին ի սիրտս իւրեանց, և ասեն. Զի՞նչ լինիցի մանուկս այս<sup>10</sup> (Ա 66):

Այսինքն՝ մտախորհ եղեն, սկսան քննել: Վասնզի ո՛չ լուան երբեք և ո՛չ տեսին այնպիսի<sup>11</sup> աւրինակաւ մանուկ ծնեալ, զի զհաւրն լեզուն կապեաց յղանալովն և արձակեաց ծննդեամբն:

Զեռն<sup>12</sup> Տեառն էր ընդ մանկանն (Ա 66):

ԻՊ Այսինքն՝ խնամք տեսչութեան<sup>13</sup>: Կամ վասն Հոգւոյն<sup>1</sup> ասէ ձեռն, քանզի Տէրն մատն Աստուծոյ կոչեաց զՀոգին (տե՛ս Ելք Ը 19):

<sup>1</sup> Բ աղաւթսն

<sup>2</sup> Բ մատունք

<sup>3</sup> Բ հրեշտակի

<sup>4</sup> Բ ուստեք լինել

<sup>5</sup> Բ աւրհնեալ

<sup>6</sup> Բ մեծամեծաց

<sup>7</sup> Բ ամենեքեան

<sup>8</sup> Բ չքնաղ, և-ի վրա ունի դուրս գրման նշան

<sup>9</sup> Բ ամենեքեան

<sup>10</sup> Բ մանուկն այն

<sup>11</sup> Բ այսպիսի

<sup>12</sup> Բ և ձեռն

<sup>13</sup> Բ տեսչութեանն

**Զաքարիայ<sup>2</sup> հայր նորա լցաւ Հոգւովն<sup>3</sup> Սրբով, մարգարէացաւ**  
(Ա 67):

*Զի<sup>4</sup> ո՛չ միայն կապեալ լեզուն արձակի, այլև Հոգովն<sup>5</sup> լցեալ լինի: Սկսան<sup>6</sup> մարգարէանալ և թարգմանել զխորհուրդս<sup>7</sup> մարգարէիցն, քանզի եկն լրումն ժամանակի, յորում պարտ էր աւարտել<sup>8</sup> բանից մարգարէիցն:*

**Աւրհնեալ Տէր Աստուած Իսրայելի** (Ա 68):

**ԿՂ.** *Ի բանալ բերանոյն յաւրհնութեանց անտի առնէ սկիզբն ըստ Յովհաննու անուանակոչութեանն, զի Յովհաննէս աւրհնութիւն թարգմանի<sup>9</sup>: Վայելչաբար ուրեմն սա, որ կարապետ լինելոց էր*  
**ՅԻՔ.** *Բանին Աստուծոյ, որով աւրհնեցան ամենայն ազգք երկրի, // և վերստին կարգեցան աւրհնաբանիչք Տեառն: «Աստուած Իսրայելի», զի Իսրայէլ միայն զճշմարիտ Աստուածն ճանաչէր, իսկ այլ լազգ[ե]ացն կուռք միայն էին<sup>10</sup>, քանզի յայնժամ Աստուած ո՛չ էր ծանուցեալ հեթանոսաց:*

**Զի յայց ել և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ** (Ա 68):

*Իւր ժողովուրդ անուանէ զհաւատացեալս, որք ի հրէից և ի հեթանոսաց ընտրեցան:*

**ԻԳ.** *Իսկ որք յաստուածային խնամակալութենէն ո՛չ շահեցան, նոքա անձամբ զանձինս աւտարացուցին՝ չլինել ժողովուրդ նորա և անբարժանելի<sup>11</sup> շնորհաց Հոգւոյն<sup>12</sup>:*

**Յարոյց մեզ եղջիւր<sup>13</sup> փրկութեան** (Ա 69):

*Քրիստոսիւ փրկեցան ամենեքին, որք պարտապան էին առաջին դատապարտութեանն: Քանզի եղջիւր զուարակի ամրութիւն<sup>14</sup> է անկուռելի և զէն փրկութեան, որով<sup>15</sup> մարտնչի ընդ գա-*

<sup>1</sup> B Հոգոյն

<sup>2</sup> B և Զաքարիա

<sup>3</sup> B Հոգով

<sup>4</sup> B Առ սակաւ սակաւ յառաջ մատուցեալ մեծանայ զաւրութեամբ, զի

<sup>5</sup> B Հոգւով

<sup>6</sup> B սկսանի

<sup>7</sup> B զխորհուրդ

<sup>8</sup> B հաւատալ *փիս* աւարտել

<sup>9</sup> A թարգմանի B թարգմանի և կամ կայացեալ ի շնորհքն

<sup>10</sup> B են

<sup>11</sup> B անբա՛ժ մնալ ի

<sup>12</sup> B Հոգոյն

<sup>13</sup> B եղջիւր

<sup>14</sup> B *չիք* ամրութիւն

<sup>15</sup> B որում

զանս: Այսպէս և Քրիստոս՝ եղջիւր<sup>1</sup> ի գաւակէ Դաւթի: Ըստ այնմ, թէ՛ «Ծագեցից եղջիւր<sup>2</sup> ի Դաւիթ» (Սաղմ. 6ԼԱ 17): Ծագումն՝ Բանն Աստուած է, և<sup>3</sup> եղջիւրն՝ մարմինն միացեալ ընդ Բանին, որ տայ զաւրութիւն անկելոցս մեզ և զէն, որով վառեցաքս ընդ[դ]էմ սատանայի<sup>4</sup> և հերքեցաք<sup>5</sup> զչարութիւն նորա: Արդ՝ զայս պատերազմն<sup>6</sup> նախ՝ ինքն վանեաց և ետ մեզ ձրի փրկութիւն և ապա՝ զաւրացոյց զմեզ՝ ինքեամբ կալ ի հաստատութեան<sup>7</sup> և ունել անկողոպտելի փրկութիւն, զոր ընկալաք:

32ա Ի տանէ Դաւթի // ծառայի իւրոյ (Ա 69):

ԵՓ Արդ՝ ո՛չ եթէ այլ ուստեք երևեցաւ Քրիստոս մարմնով<sup>8</sup>: Ըստ Եսայեայ մարգարէին. «Բղխեսցէ գաւազան՝ քահանայութեան, թագաւորութեան, յարմատոյ անտի Յեսսեայ և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (Ես. ԺԱ 1): Աստուածավայելուչ մարմինն միացեալ ընդ Աստուծոյ բնութեանն<sup>9</sup>: Եւ առաքեալ ասէ. «Տէր մեր Յիսուս Քրիստոս ի Մարիամայ եղև, ի գաւակէ Դաւթի» (հմմտ. 3ռոմ. Ա 3): Գրէ առ Տիմոթէոս. «Յիշեա՛ զՅիսուս Քրիստոս<sup>10</sup>, որ ի մեռելոց յարուցեալ, այն, որ եղև ի գաւակէ տանն Դաւթի» (հմմտ. Բ Տիմոթ. Բ 8): Այլ զի գտանեմք մեք, զի խառնեալ էին ազգն Ղևեայ ընդ Նայասոնի նահապետին Յուդայ<sup>11</sup>, ազգին Յուդայ: Դուստրն Ամինազաբայ եղև կին<sup>12</sup>, և Յովիդայ քահանայ առ իւր կին զգոուստր Յովրամայ արքային Յուդայ ի տանէ Դաւթի<sup>13</sup>: Թէպէտև<sup>14</sup> բան հրեշտակին<sup>15</sup> վասն մերձաւոր հարազատութեանն Եղիսաբեթի և Մարիամու ասացաւ, այլ<sup>16</sup> առեալ էին և այլքն ի միմեանց:

<sup>1</sup> B եղջիւր

<sup>2</sup> B եղջիւր

<sup>3</sup> B **չիք** և

<sup>4</sup> B հնարից սատանայի

<sup>5</sup> B հերքել

<sup>6</sup> B պատերազմ

<sup>7</sup> B հաստատութիւն

<sup>8</sup> B մարմնով այլ ի Դաւթայ

<sup>9</sup> B բնութիւն

<sup>10</sup> A Յիսուս զՔրիստոս

<sup>11</sup> B **չիք** Նայասոնի... Յուդայ

<sup>12</sup> B կին Ահարովնի քահանայապետին

<sup>13</sup> B **դրփիս** Դաւթայ տանէն

<sup>14</sup> B **չիք** և

<sup>15</sup> B հրեշտակապետին

<sup>16</sup> B **չիք** այլ

Որ<sup>1</sup> խաւսեցաւ բերանովք սրբոցն, որք յաւիտենից մարգարէք նորա էին (Ա 70):

ԻԳ **Զի խորհուրդն, որ ծածկեալն էր առ յԱստուծոյ<sup>2</sup>, և վասն նորին զմարգարէսն<sup>3</sup> հրաշացոյց խաւսել վասն տնաւրէնութեան նորա: Եւ Քրիստոս ելից զաւրէնսն և զմարգարէսն զալստեամբն իւրով և արդարացոյց զբանս ծառայից իւրոց: Ահա<sup>4</sup> տարածեալ են ի գիրս բանք նոցա, որք կամին ժողովել:**

**Փրկուածիւն ի թշնամեաց մերոց (Ա 71):**

32բ // **Ամենայն մարգարէքն<sup>5</sup> հանդիսացան վասն այս նոր փրկութեանս, և զմեծ շնորհն յայտ արար ինքեան<sup>6</sup>, զի ո՛չ ի հրեշտակաց եղև միջնորդ այսպիսի փրկութեանս: Ըստ այնմ, եթէ՝ «Ո՛չ պատգամաւորք և ո՛չ հրեշտակ[ք], այլ ինքն Տէրն<sup>7</sup> եկեսցէ և փրկեսցէ զմեզ» (հմմտ. Ես. 49 9): Եւ զի ո՛չ ի մարմնական վշտաց ազատեաց, այլ ի հոգւոյ ծառայութենէ և ի սատանայի գերութեանցն: Եւ չէր ոք որ ազատէր, մինչև ինքն յանձն էառ մարդ լինել, և «Ո՛չ ոսկեղինաւք և արծաթեղինաւք փրկեցաք, այլ պատուական արեամբն Քրիստոսի» (Ա Պետրոս Ա 18-19)՝ **ասէ առաքեալ:****

**Եւ ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց (Ա 71):**

**Քանզի ո՛չ ոք<sup>8</sup> այլ ատելի մեր<sup>9</sup>, քան զդեւս և ցանկացողք<sup>10</sup> կորստեան մերոյ:**

**Առնել ողորմութիւն առ հարս մեր (Ա 72):**

**Ո՛չ ոք այլ ինչ կարէ ցուցանել, քան<sup>11</sup> զԱստուծոյ խնամս, բայց միայն զգութ սիրոյն անպարսաւելի առ մեզ, զի հարքն սուրբ<sup>12</sup> կարաւտ էին այսպիսի խնամոց: Թէպէտև արդարք էին, սակայն կնիք դատապարտութեանն<sup>13</sup> Ադամայ ի վերայ ամենեցուն անվրէպ կայր: Զի ո՛չ միայն կենդանեաց հաւատացելոց եղև**

<sup>1</sup> B որպէս

<sup>2</sup> A B՝ ի յԱստուծոյ

<sup>3</sup> B զմարգարէն

<sup>4</sup> B և ահա

<sup>5</sup> B մարգարէք

<sup>6</sup> B արարին զբանն **փի** արար ինքեան

<sup>7</sup> B Տէր

<sup>8</sup> B չիք **փի** ոչ ոք

<sup>9</sup> B **չիք** մեր

<sup>10</sup> B ցանկացաւ

<sup>11</sup> B **չիք** քան

<sup>12</sup> B մեր **փի** սուրբ

<sup>13</sup> B դատակնիք պարտեացն

նորոգումն՝ մարդանալովն<sup>1</sup> Աստուծոյ, այլև այնոցիկ, որոց յայտնեաց Հոգին: Եւ լուան ի մարգարէիցն ի դժոխս և հաւատացին գալստեան նորա: Հեղում[ն]<sup>2</sup> արեան նորա ազատեաց ևս զնոսա:

**Յիշեաց զուխտն<sup>3</sup> սուրբ** (Ա 72):

**33ա** *Ջայս կատարեալ // փրկութիւնս յառաջ ժամանակաւ առ հարքն մեր ուխտադրեաց, որպէս և Տէրն ասէ. «Այս բաժակ ուխտի իմոյ արեանս» (հմմտ. Մատթ. ԻՁ 27-28): Յիշեաց այն, որ ո՛չ երբեք մոռացմամբ ծածկի ինչ ի նմանէ:*

**Զերդումն<sup>4</sup> զոր երդուաւ Աբրահամու հաւր մերու[մ]<sup>5</sup>** (Ա 73):

*Զմեծ տեսչութիւնն Աստուծոյ յայտ առնէ աստ, և<sup>6</sup>՝ յոյժ զարմանալի, թէ Աստուած երդնու: Վասնզի զթերամտութիւն մարդոյ հաստատեսցէ, ասէ զայս: Այլ<sup>7</sup> դարձեալ. Աբրահամ մատոյց զիսահակ պատարագ յաւժար կամաւք, վասն որոյ և Տէր ասէր ցնոսա. «Ո՞՞ յանձն իմ երդնում: Զի<sup>9</sup> ի գաւակէ քումմէ աւրհնեսցին ամենայն ծագք երկրի» (Ծննդ. ԻԲ 16, 18): Ահաւասիկ երդումն<sup>10</sup> այս լցաւ, զի յայտնեցաւ այն, որ գալոցն էր և ո՛չ անագանեցաւ (հմմտ. Ես. ԺԴ 1), և բնակեցաւ<sup>11</sup> Աստուած ընդ մարդկան (հմմտ. Յովհ. Ա 14) ըստ մարգարէութեանն:*

**Տալ մեզ առանց երկի[ւ]ղի** (Ա 73-74) *զփրկութիւն<sup>12</sup>:*

*Քրիստոս<sup>13</sup> իւրով պատարագաւն արար փրկութիւն աշխարհի և եբարձ գերկի[ւ]ղ մահու և դժոխոց[ն]: Ըստ մարգարէին՝ «Ո՞ւր է, մա՛հ, յաղթութիւն քո, ո՞ւր<sup>14</sup>, դժո՛խք, խայթոց քո» (Ովստ ԺԳ 14, Ա Կորնթ. ԺԵ 55): Խաչիւն մեռար<sup>15</sup>, կենարարին մահուամբն կործանեցար<sup>16</sup>, անշունչ և անմռունչ ես: Վկայէ մարգարէն. «Նորոգեցարուք առ իս կղզիք, զի նոր Իսրայէլ փրկեցաւ զփրկութիւն յաւի-*

<sup>1</sup> B մարդանալն

<sup>2</sup> B և հեղումն

<sup>3</sup> B զուխտ իւր

<sup>4</sup> B **Ե** երդումն (այսպէս է)

<sup>5</sup> B մերոյ

<sup>6</sup> B նաև

<sup>7</sup> B **չեք** այլ

<sup>8</sup> B այո **փխ** ո

<sup>9</sup> B **չեք** Զի

<sup>10</sup> B երդումն

<sup>11</sup> B բնակեաց

<sup>12</sup> B **չեք** զփրկութիւն

<sup>13</sup> B արդ վասնզի Քրիստոս

<sup>14</sup> B ուր է

<sup>15</sup> B մեռաւ

<sup>16</sup> B կործանեցաւ



տենից» (Ես. ԽԵ 16-17): Յայսմ հետէ, որք զանձինս<sup>1</sup> արժանի արարին փրկութեան, նոքա ո՛չ երկնչին ի դիւաց, այլ ի նոցանէ զարհուրին դեւք:

33ք // Պաշտել զՏէր սրբութեամբ և արդարութեամբ (Ա 74-75):

Կղ. Ո՛չ ասէ ըստ Հնոյն ինչ ի ձեռն շնչաւոր և անշունչ պատարագաց, այլ զմարմնոյ և զհոգոյ մաքրութիւն:

Իգ. Մերձ դնէ զմերն, զոր պարտ է ի ներքս բերել ի ձեռն հաւատոյ և զգործս բարիս, զի նա ուսոյց զհաւատս ուղիղս և արդարացոյց ի մեղաց: Իսկ մեր է պաշտել զնա անարատ մտածութեամբ պահել զսրբութիւն: Ըստ առաքելոյ՝ «Զի մի՛ արատեսցի պաշտաւնն մեր» (Բ Կորնթ. Զ 3): Զի որ<sup>2</sup> զայսպիսի շնորհս ընկալան և ապականեցին մեղաւք<sup>3</sup>, վայրապար է նոցա մահն Քրիստոսի: Ըստ այնմ՝ «Որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ» (Եբր. Ժ 29):

Առաջի նորա (Ա 75):

Արդ՝ զի մի՛ այս լիցի: Պարտ է մեզ զգուշութեամբ ծառայել նմա, որպէս Տէր տեսանէ: Որ ստեղծ զսիրտս նոցա և ի միտ առնու<sup>4</sup> զամենայն գործս նոցա:

Զամենայն աւուրս կենաց մերոց (Ա 75):

Ո՛չ մասնաւոր<sup>5</sup> ինչ խնդրէ զմաքրութիւն կամ աւուրքք ինչ այլ անթերի:

Կղ. Եղերուք դուք<sup>6</sup> կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է, ո՛չ առժամանակեայք որպէս զՀինն, այլ մինչ<sup>7</sup> ի կատարած ազգաց և ժամանակաց վաստակել առաքինութեամբ:

Դու, մանուկ, մարգարէ (Ա 76):

Իբրու հոգի էր ի մանուկն, նա և ի ծերունի[ն] անդ<sup>8</sup>:

34ա կղ. Ո՛չ գուճակ այլոց մարգարէիցն, որ ի հեռուստ // վասն նորա<sup>9</sup> մարգարէանային<sup>10</sup>, առաջի երեսաց նորա գնալ և քարոզել, որպէս

<sup>1</sup> B զանձինս իւրեանց

<sup>2</sup> B որք

<sup>3</sup> A ձախ լս. ունի՝ որպէս եւ ես

<sup>4</sup> B առնուցու

<sup>5</sup> B մասնաւորին

<sup>6</sup> B չեք դուք

<sup>7</sup> B մինչև

<sup>8</sup> B Դու մանուկ... գրված է Իբրու... անդ նախադասութիւնից հետո

<sup>9</sup> B չեք վասն նորա

<sup>10</sup> B մարգարէանան այլ

ցուցանէրն<sup>1</sup> իսկ ակն յանդիման. «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովի. Ա 29):

ԻԳ Մեծ է պատիւ մարգարէիս այսորիկ, զի այսպէս մերձակայ լինել Տեառն իւրում, որպէսզի<sup>2</sup> նորա յառաջ ընթանալ<sup>3</sup>, և Քրիստոսի զկնի գալ:

**Բարձրելոյն կոչեսջիր** (Ա 76):

ԿՂ Թէպէտե յերկրի երևեցաւ մարդ գոլով, այլ Տէր է բարձանց և խորոց: Ըստ հրեշտակին առ Կոյսն, թէ՛ «Որդի Բարձրելոյն կոչեսցի» (Ա 32):

**Պատրաստել զճանապարհս նորա** (Ա 76):

ԻԳ. Զհոգի և զմարմին մաքուր և կաղսն ճանապարհ ոտիցն<sup>4</sup>:

**Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդոց**<sup>5</sup> (Ա 77):

ԿՂ Զհաւատոցն, որ ի Սուրբ Երրորդութիւնն ծանուցումն:

ԵՓ Զի գիտասցեն զխորհուրդս անցաւորս ի ճշմարտութենէ անտի, որ ո՛չ անցանէ: Զի շնորհք և ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն:

ԻԳ. Արդ՝ եկն Յովհաննէս, առաջ<sup>6</sup> ել իբրև զփեսաւէր<sup>7</sup>, զի ուսուցէ<sup>8</sup> հարսինն բառնալ զտգեղութիւն, պայծառազարդ և ցանկալի փեսային լինել: Հաւատով<sup>9</sup> ճանաչել զարքայն երկնաւոր և մտանել յառազաստ նորա լուսափայլ:

**Իսկ թողութիւն մեղաց** (Ա 77):

ԶԱզամայ<sup>10</sup> պարտիս<sup>11</sup> ի մեզ<sup>12</sup> միանգամայն, և զմեզս<sup>13</sup> ի ձեռն մկրտութեանն ազատեաց:

**Վասն գթութեան<sup>14</sup> Տեառն Աստուծոյ մերոյ** (Ա 78):

Ո՛չ ըստ մերում ինչ արժանաւորութեան արար թողութիւն

<sup>1</sup> B ցուցանէ

<sup>2</sup> B որպէս

<sup>3</sup> B ընթանայ

<sup>4</sup> B չիք Զհոգի... ոտիցն

<sup>5</sup> B ժողովրդեան իւրոյ

<sup>6</sup> B յառաջ

<sup>7</sup> A փեսաւէր

<sup>8</sup> B ուսուցանէ

<sup>9</sup> B հաւատով ճշմարիտ

<sup>10</sup> B այսինքն զԱզամայ

<sup>11</sup> B պարտիսն

<sup>12</sup> B չիք ի մեզ

<sup>13</sup> B զմերս

<sup>14</sup> B գթոյ ողորմութեան

34բ մեղաց, // այլ ըստ իւրում գթոյն ողորմեցաւ մեզ Տէր Աստուած, զծնեալն ի Մարիամայ սրբո[ւ]հ[ւ]ոյ դաւանելով, որում դու արժանաւորեցար գոլ կարապետ:

Որով երևեցաւ մեզ արեգակն ի բարձանց (Ա 78):

Եփ. Վասն աստեղ մոգուցն ասէ: Իսկ մարգարէն Զաքարիայ. «Ահա այր, և ծագումն<sup>1</sup> անուն նորա, և ի ներքոյ իւրմէ ծագեսցէ<sup>2</sup>» (Ձաք. 2 12): Արդ՝ բնութեամբ է լուսատու<sup>3</sup> իմանալեաց և զգալեաց հոգոց մարդկան, և բժշկութիւն<sup>4</sup> ի թևս զխաչէն ասէ: Նաև Դաւիթ ասէ. «Ծագեաց ի խաւարի լոյս, ողորմած, գթած է Տէր Աստուած» (հմմտ. Սաղմ. 68Ա 4): Եւ Մաղաքիայ՝ «Ծագեցից երկի[ւ]ղաժաց իմոց հաւատացելոց ծագումն արդարութեան» (հմմտ. Մաղաք. Դ 2): Ըստ առաքելոյն՝ «Նովաւ յամենայն մարդիկ արդարութիւն կենաց» (Յռոմ. Ե 18):

Իգ. Զի այց արար կորուսելոցս<sup>5</sup> այն, որ մարդ երևեցաւ՝ ի կնոջէ ծնեալ Տէր, միւսնոյն<sup>6</sup> ըստ աստուածութեանն: Արեգակն ի բարձանց ծագեաց մեզ՝ լուսաւոր առնել զխաւար մեր:

Կդ. Սա յերկնից երևեցաւ մեզ, արեգակն՝ լուսաւորել<sup>7</sup> զհոգի և զմարմինս<sup>8</sup>, որք ի խաւարի կռապաշտութեան նստէաք: Ըստ մարգարէին. «Ժողովուրդ, որ նստէր ի խաւարի և ի ստուերս մահու, ետես<sup>9</sup> զլոյս մեծ» (հմմտ. Ես. Թ 2):

Եփ. Կա՛մ վասն մոգուցն ասաց, զի ապստամբէին յառաջ քան զծագելն, և ի ստուերս նստէին ըստ արուեստգիտութեամբն<sup>10</sup> իւրեանց, որ էր քաղդէացոց, կա՛մ ստուերք կռապաշտութիւնն<sup>11</sup>

35ա Հեթանոսաց, // կա՛մ վասն իսրայեղացոցն<sup>12</sup> ասաց, զի ի խաւարի<sup>13</sup> էին, և մոգքն լուսաւորեցին զնոսա՝ ասելով, թէ՛ «Ո՞ւր ծնանիցի արքայն հրէից» (հմմտ. Մատթ. Բ 2)՝ զարթուցանելով զնոսա ի բանս մարգարէիցն:

<sup>1</sup> Բ ծագումն է

<sup>2</sup> Բ ծագիցէ

<sup>3</sup> Բ լուսատուն

<sup>4</sup> Բ բժշկութիւն իւր

<sup>5</sup> Բ կորուսելոյս

<sup>6</sup> Բ նոյն

<sup>7</sup> Բ լուսաւորելով

<sup>8</sup> Բ զմարմին մեր

<sup>9</sup> Բ էտես

<sup>10</sup> Բ արուեստագիտութեան

<sup>11</sup> Բ կռապաշտութեանն

<sup>12</sup> Բ իսրայէլացոցն

<sup>13</sup> Բ զի խաւար

ԻԳ Կամ զմեղս և<sup>1</sup> զանգիտութիւն<sup>2</sup> խաւար ասաց, և զՅիսուս՝ լոյս ի Հաւրէ ծագեալ փարատիչ խաւարի: Եւ դարձեալ. լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, զի ի քեզ Տէր յայտնեսցի և փառք նորա ի քեզ երևեսցի: Եւ աւետարանիչն ասէ. «Լոյս եկն յաշխարհս, և սիրեցին մարդիկ զխաւար»՝ զանհաւատութիւն<sup>3</sup> և զմեղս, «առաւել քան զլոյս» (Յովհ. Գ 19)՝ գործք բարիք<sup>4</sup>, որով փառաւորի<sup>5</sup> Աստուած ի տեսողաց:

Ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան (Ա 79):

ԿՂ Ի մահաբեր ճանապարհաց մեղաց յաւիտենական<sup>6</sup> գնացսն<sup>7</sup>, որ տանի ի կեանսն յաւիտենականս:

ԻԳ. Մի<sup>8</sup> առաքինութիւն<sup>9</sup> խաղաղացուցանէ զմեզ յաստուածակողմն կոյս, իսկ չարութիւն<sup>10</sup> թշնամի առնէ Աստուծոյ: Ըստ այնմ՝ «Արագենք ոտք նոցա հեղուլ<sup>11</sup> զարիւն» (Առակ. Ա 16): Արագ ի<sup>12</sup> բեկումն և թշուառութիւն<sup>13</sup> ի ճանապարհս նոցա, զի զճանապարհս խաղաղութեան ո՛չ ծանեան: Արդ՝ եկեալ Փրկիչն<sup>14</sup> մեր՝ զթիւրեալսն<sup>15</sup> մեր ուղղեաց ի ճանապարհս արդարութեան:

Մանուկն<sup>16</sup> աճէր և զաւրանայր լի Հոգով (Ա 80):

35բ Յովհաննու // ամենայն ինչ ի Հոգւոյն ուղղեալ լինէր, զի լցոյց զնա յորովայնէ: Եւ այլ ո՛չ եթող զնա, և ամենայն ուրեք խնամակալ և պաշտպան էր նմա:

Եւ էր նա յանապատ[ի], մինչև յաւր երևելոյ նորա Իսրայելի (Ա 80):

Ասեն ոմանք, եթէ փախուցին զնա յանապատ[ն] ի Հերովդէ<sup>17</sup> մանկասպանութեանցն: Եւ ո՛չ է անգէպ, զի յայտնի էր ամենե-

<sup>1</sup> B *չիք* և

<sup>2</sup> B անգիտութեան

<sup>3</sup> B այսինքն՝ զանգիտութիւն, զանհաւատութիւն

<sup>4</sup> B այսինքն՝ քան զգործս բարիս

<sup>5</sup> B փառաւորեսցի

<sup>6</sup> A *նախ*՝ յաւիտենական, *ապա բուն գրչությամբ դարձրած*՝ յաւետարանական

<sup>7</sup> B գնացս

<sup>8</sup> B վասնզի *փիս* մի

<sup>9</sup> B առաքինութիւնն

<sup>10</sup> B չարութիւնն

<sup>11</sup> B ի հեղուլ

<sup>12</sup> B *չիք* Արագ ի

<sup>13</sup> A թշվառութիւն

<sup>14</sup> B ստեղծիչն

<sup>15</sup> B զթիւրեալ ոտս

<sup>16</sup> B և մանուկն

<sup>17</sup> B Հերովդէի

ցուն՝ հիացմամբ յղութեամբն և ծննդեամբն<sup>1</sup>, որք ասէին. «Զի՞նչ լինիցի մանուկս այս» (Ա 66): Եւ Հերովդէս, զի ո՛չ<sup>2</sup> նշանաւորս ետ կոտորել<sup>3</sup>, իսկ նա համբաւեալ էր, և [ի] դէպ էր, թէ զնա խնդրէր: Վասն որոյ Յիսուս իջանէ[ր] յեգիպտոս, և զՅովհաննէս փախուցանէին յանապատ տեղիս: Եւ իբրև կատարեցաւ չափ աւուրց նորա, եկն լնուլ զսպասաւորութիւնն իւր, և այնուհետև համարեցաւ<sup>4</sup> Իսրայելի իբրև զհրեշտակ իջեալ յերկնից:

<sup>1</sup> Ե յղութեամբ և ծննդեամբ

<sup>2</sup> Ե զոչ *փխ* զի ոչ

<sup>3</sup> Ե կորուսանել

<sup>4</sup> Ե կատարեցաւ

## Գլուխ Բ

Ել<sup>1</sup> հրաման յԱւգոստոս<sup>2</sup> կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս (Բ 1):

ԻԳ Այս աշխարհագրութեամբ ամենայն ինչ պատշաճեալ կատարի, որ և զԱւգոստոս<sup>3</sup> կայսրն յորդորեաց լինել սպասաւոր աստուածային ծննդեանն ի ձեռն աշխարհագրին: Ըստ որում և զՊարսս ձգեաց<sup>4</sup> յերկրպագութիւն ի ձեռն ջահընկալ աստեղն, որ 36ա ցուցաւ նոցա: Ետ<sup>5</sup>, որպէսզի ամենայն արարածք //ընծայաբեր[ք] լիցին<sup>6</sup> ի միասին նորածին արքային: Այսպէս յայտնի պատիւ մեծի<sup>7</sup> խորհրդոյն, յորժամ հրեշտակք և մարդիկ<sup>8</sup> և լուսաւորք երկնից ի միասին ընծայաբերք եղեն:

ԿԴ Ըստ թուոց<sup>9</sup> գլխոյն սովորէին կարգաւորել զսակս հարկապահանջութեան: Եւ աստ ցուցանէ, թէ թագաւորն Աւգոստոս զիւր պատկերն գրել տայր ի դրամին, և Քրիստոս զիւր պատկերն ի մարդն գրէ<sup>10</sup>: Որպէս ասաց. «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ» (Մատթ. ԻԲ 21): Մարդն<sup>11</sup> անդրադարձութեամբն դրամ ասի:

Այս առաջին աշխարհագիր եղև (Բ 2):

ԿԵ Տեսե՞ր, զի մինչ<sup>12</sup> ի ծնունդն Քրիստոսի ունել եղև հրէիցն զթագաւորութիւնն: Եւ առընթեր ծննդեանն Քրիստոսի տիրեցին ի վերայ նոցա հեթանոսք, որ նշանակէր զբարձումն նոցա սեփական թագաւորութեանն, ընդ նմին՝ և հին կրաւնիցն և աւրինացն, և հաստատութիւն նորոյ կտակիս ի ձեռն Քրիստոսի ծննդեանն, որում աշակերտելոց էին հեթանոսք: Ըստ մարգարէութեան հայրապետին Յակոբայ՝ «Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ» (Ծճճդ. ԽԹ 10):

<sup>1</sup> Եւ ել

<sup>2</sup> Ա յՈգոստոս Ե յՕգոստոս (այսուհետ չենք նշում)

<sup>3</sup> Ա զՈգոստոս

<sup>4</sup> Ա ցգեաց

<sup>5</sup> Ա տ տառի թանաքը թափված է Ե չիք ետ

<sup>6</sup> Ե լինիցին

<sup>7</sup> Ե մեծագոյն

<sup>8</sup> Ե մարդիկք

<sup>9</sup> Ե թուոյ

<sup>10</sup> Ե գրէր

<sup>11</sup> Ե զի մարդն

<sup>12</sup> Ե մինչև

ԻԳ Վասնզի առաջին աշխարհակալ Աւգոստոս<sup>1</sup> ցուցաւ ի հռոմայեցւոց անտի, զի որք յառաջ քան զնա հիպատոսք և պէտք  
 36բ գաւառաց կային և // ո՛չ բնաւից թագաւոր: Եւ ամենայն ինչ ըստ բարբառոյ մարգարէիցն ընոյր, վասնզի ի<sup>2</sup> ծագեալ Որդոյն Աստուծոյ առ զհեթանոսս իւր ի ժառանգութիւն, զի պարտ էր գաւազանաւս այսու երկաթեալ հով[ու]ել զո՛չ կամեցողս թագաւորութեան նորա, որպէս ինքեանք խնդրեցին առաջի Պիղատոսի:

Վասն այսորիկ<sup>3</sup> մեծացուցանէ և ձգէ<sup>4</sup> զՏէրութիւն գաւազանիս ընդ ամենայն տիեզերս:

Ստ. Յորում ժամանակի ծնաւ Քրիստոս, որ յերկինս<sup>5</sup> գրեաց զմեզ: Որպէս Աստուածաբան[ն] ասէ. «Յաշխարհագրէն պատկառեայ, որով յերկինս գրեցար»: Եւ արդ՝ յայտ է, եթէ ամենակալն Աստուած մարդացաւ և եմուտ ի գիր աշխարհակալ թագաւորին՝ ծնանելով ի Կուսէն, և եմոյծ զմեզ ի գիր կենացն յաւիտէնից: Ո՛չ մրով գրեալ, այլ արեամբն ի խա[չի]ն, [զի ի խ]աչին եղաւ գիր եռակի՝ վկայելով զնա թագաւոր<sup>6</sup>, որում հաւատայ եկեղեցի՝ մի յԵրրորդ[ու]թենէն զխաչեալն<sup>7</sup>:

Ի դատաւորութեանն ասորոց Կիւրինեայ<sup>8</sup> (Բ 2):

ԻԳ Զի թէ փոյթ եղև աւետարանչին գրել զդատաւորն ասորոց, զոր կացուցին ընդ իւրեանց իշխանութեամբ հռոմայեցիքն, և յայտ է, թէ ընդ տէրութեամբ նոցա մտեալ էին:

Եւ<sup>9</sup> երթային մտանել յաշխարհագիրն յիւրաքանչիւր գաւառէ (Բ 3):

37ա ԻԳ. // Վասնզի ի վերայ ամենեցուն եղեալ էր արքունի հրամանաւ[ն]՝ գրիլ ի դպրութիւն մատենից նոցա՝ զիւրաքանչիւր<sup>10</sup> ոք յազգէն և ի գաւառէն անվրէպ նշանակեալ:

Ել և Յովսէփ ի Գալիլէ<sup>11</sup> ի քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան (Բ 4):

<sup>1</sup> A Ոգոստոս  
<sup>2</sup> B չէք ի  
<sup>3</sup> B այնորիկ  
<sup>4</sup> A ցգէ  
<sup>5</sup> A ի յերկինս  
<sup>6</sup> A այս պարբերութեան ուղղանկյուն չակերտների միջի տառերը վնասված են:  
<sup>7</sup> A զգլխաչեալն  
<sup>8</sup> B Կիւրինայ  
<sup>9</sup> B չէք եւ  
<sup>10</sup> B զի իւրաքանչիւր  
<sup>11</sup> B Գալիլէ

ԻԳ. Ծնորհք Հոգևոյն զամենայն ինչ ըստ պատշաճին ուղղեաց լինել: Զի լիցի մաւրն բնակութիւն Նազարեթ և աշխարհագրաւն ածցի[ն] ի Բեթղեէմ, և յետ դառնալոյն յԵգիպտոսէ՝ բնակեսցի<sup>1</sup> ի Նազարէթ: Ըստ Աւետարանին Մատթէոսի՝ «Նազովրասցի<sup>2</sup> կոչեսցի» (Մատթ. Բ 23):

Ոսկ. Արդ՝ թէ ո՞ր մարգարէ ասաց զայս՝ մի՛ քննէր:

այլ. [Բայց ոմանք զԵսայեայ բանն ասեն, թէ՛ «Ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (Ես. ԺԱ 1), զի Նազարն ծաղիկ թարգմանի<sup>3</sup>: Իսկ ոմանք ասեն, թէ<sup>4</sup> բազում<sup>5</sup> գիրք մարգարէականացն<sup>6</sup> կորեան և ո՛չ գտան[ի] ուրեք: Եւ զայս<sup>7</sup> ի մնացորդացն ուսանի<sup>8</sup>, եթէ ոք կամի<sup>9</sup>: Քանզի<sup>10</sup> զԵրկրորդ Աւրէնսն գտան յաղբ թաղեալ ի տաճարին յաւուրս Յովսիայ թագաւորի[ն] (տե՛ս Դ Թագ. ԻԲ 1-20), քանզի ծոյլք էին և յամբարշտութիւն<sup>11</sup> յաճախեալք, զի զկէսն<sup>12</sup> ինքեանք առ չարութեանն<sup>13</sup> կոտորէին և ընկենուին և զայլսն անփոյթ արարեալ կորուսին:

Ստ. Իսկ Նազաւրն գաւազան ասի յերայեցին<sup>14</sup>, և բազումք ի մարգարէիցն սուրբ ասացին զՔրիստոս: Վկայէ և Գաբրիէլ<sup>15</sup>, աւելով. «Որ ծնանելոց[ն] է ի քէն, սուրբ է և Որդի Բարձրելոյն կոչեսցի» (Ա 35): Եւ մարգարէն Նազորացի<sup>16</sup> ծնունդ ասէ զՔրիստոս:

37ք Իգ. // Իսկ աւետարանիչն, վասնզի սնաւ ի Նազարէթ, ասէ, եթէ՛ «Նազորասցի<sup>17</sup> կոչեսցի» (Մատթ. Բ 23): Բայց այն, եթէ Նազորացի<sup>18</sup> ծնունդ է Քրիստոս, ծածկեցաւ ի նոցանէ, որպէս կանխաւ ասացաք: Վասն որոյ ասէին, թէ՛ «Մարգարէ ի Գալիլէս<sup>19</sup> ո՛չ յառնէ» (Յովհ. Է 52), այլ Քրիստոս զամենայն ինչ անսխալ կատարեաց:

<sup>1</sup> B բնակեցաւ

<sup>2</sup> B Նազովրեցի

<sup>3</sup> A B՝ թարգմանի

<sup>4</sup> վերականգնված է ըստ B ձեռագրի (տե՛ս էջ 41բ):

<sup>5</sup> A զի բազում

<sup>6</sup> B ի մարգարէականացն

<sup>7</sup> B ոչ զայս

<sup>8</sup> B նոքա ուսանին

<sup>9</sup> B կամին *փխ* ոք կամի

<sup>10</sup> B զի

<sup>11</sup> A յամպարշտութիւն

<sup>12</sup> B զկէսս

<sup>13</sup> B չարութիւն

<sup>14</sup> B յերայեցեոց թարգմանն

<sup>15</sup> B Գաբրիէլ առ Կոյսն

<sup>16</sup> B Նազորացի

<sup>17</sup> B Նազորեցի

<sup>18</sup> B Նազովրայ

<sup>19</sup> B Գալիլէս



Ի քաղաքէ<sup>1</sup> Դաւթի, որ կոչի Բեթղեէմ<sup>2</sup>, վասն լինելոյ նմա ի տանէ և յազգէ Դաւթի (Բ 4):

Աստ Միքիայ մարգարէութիւնն լցաւ, որ ասէ. «Դու Բեթղեէմ<sup>3</sup>, երկիր Հրէաստանի, չես կրսեր<sup>4</sup> յիշխանս Յուդայ, ի քէն Հովիւ<sup>5</sup> և առաջնորդ ժողովրդեան իմոյ, և ելք նորա ի սկզբանէ<sup>6</sup>» (հմմտ. Միք. Ե 2, Սաւոթ. Բ 6):

ԵՓ Որ ցուցանէ զՔրիստոս ի վեր քան զամենայն սկիզբն, որով ամենայն ինչ եղև: Ըստ առաքելոյ և աւետարանչին՝ «Ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ոչինչ» (Յովհ. Ա 3):

Մովս. Բեթղեէմ տուն հացի ասի, որպէս ասաց Տէր. «Ես եմ հացն կենաց» (Յովհ. Զ 51): Եւ տեղիս այս հեթանոսաց էր և ի նահապետէն Աբրահամէ<sup>7</sup> գնեցաւ, զի լիցի<sup>8</sup> ճանապարհ հեթանոսաց առ կենդանութիւն<sup>9</sup>: Զի հեթանոսաց երկիր էր, յորում ծնաւ Քրիստոս: Բեթղեէմ տուն էր նահապետացն, զի Յուդայ ծնաւ զՓարէս ի Թամարայ, զի և ի<sup>10</sup> հեթանոսաց անմաքուր կանայք ի դստերացն Իսրայելի յաջորդեցին մաքրութիւն, զի հեթան(ո)սաց ժողովարան պարծեսցի՝ այսպէս<sup>11</sup> ունելով նախամայր Արբոյ Կուսին: Զի որպէս հրէայքն պարծէին թագաւորաւք նախահարբք[ն] սրբոյ Կուսին, նմանապէս և Սուրբ եկեղեցի տեղեալն Եւթամարաւ, Բահարաւ<sup>12</sup>, Հոութաւ<sup>13</sup>, և զեկեալ փրկութիւնն նոցա առնելով ընդ թագաւորս և ընդ նահապետս, զմեծ և զառաքինի կանայսն<sup>14</sup>:

38ա ԶԲեթղեէմ<sup>15</sup> հասարակաց արար և զաստուածընկալ զայրն, զմարմնացեալ Բանն յառաքինի կանանցն՝ որք<sup>16</sup> ի հեթանոսաց: Ի նահապետացն և ի թագաւորաց[ն] Իսրայելի և ի սուրբ Կուսէն

1 Բ քաղաք  
2 Բ Բեթղեէմ  
3 Բ Բեթղեէմ  
4 Բ կրսեր  
5 Բ ելցէ Հովիւ  
6 Բ սկզբանէ աւուրց  
7 Բ Աբրահամու  
8 Բ լինի  
9 Բ կենդանութեան  
10 Բ չիք ի  
11 Բ այնպէս  
12 Բ Բահարաւ  
13 Բ Հոութաւ, Բերսաբէիւ  
14 Բ շարունակվում է (էջ 42ա). «Այլ Դարձեալ. և այս գիտելի է, զի Թամար ապաշխարութեան աւրինակ եղև հեթանոսաց, զի զայր ո՛չ գիտաց նա մինչև ցաւը մահուան իւրոյ: Եւ ո՛չ Յուդայ, ո՛չ զԹամար և ո՛չ զայլ կին, այլ զամենայն ժամանակս կենաց իւրոց ապաշխարութեամբ պատուեցին»:  
15 Բ ԳԲեթղեէմ (այսուհետ չենք նշում)  
16 Բ որ

Հասարակաց փայլէ<sup>1</sup> Արեգակն արդարութեան, որ ջահաւորեաց  
զընդհանուր տիեզերս ամենայն:

Վասն լինելոյ ի տանէ և յազգէ Դաւթի՝ մտանել յաշխարհա-  
գիրն Մարիամաւ<sup>2</sup> Հանդերձ (Բ 4-5):

Իգ. Գայ Յոսէփ<sup>3</sup> ի Հրէաստան, ի հայրենի գաւառն իւր՝ որդի  
Դաւթի գոլով, և ածէ զՄարիամ ի գեաւղն<sup>4</sup> Դաւթի, քանզի էր և  
նա դուստր Դաւթի: Զի այսպէս ի տանէ Դաւթի ծնեալ լինի որ-  
դին Դաւթի ըստ մարմնոյ, վասն որոյ գրէ աւետարանիչն ո՛չ  
միայն զՅովսէփ եկեալ, այլ «Մարիամաւ<sup>5</sup> Հանդերձ»:

Որ խաւսեցեալն<sup>6</sup> էր նմա<sup>7</sup> և էր յղի (Բ 5):

38բ Տակաւին ևս խաւսեալ ասի<sup>8</sup> և ի հրեշտակէ անդի<sup>9</sup> իբրև  
զսպասաւոր կարգեալ, // զի մի՛ արատ ինչ յարիցի<sup>10</sup> ի փրկական  
ծնունդն:

Եւ ի հասանել նոցա անդ, լցան աւուրք ծնանելոյ նորա (Բ 6):

Չափեաց նա իւր աւուրք<sup>11</sup> ծննդեան աւրինաւք<sup>12</sup> բնութեանս:  
Վասնզի այսպէս հաճեցաւ երբե՛մն լուծանել կապ<sup>13</sup> բնութեանս և  
երբե՛մն վարել նովաւ: Եւ յիրաւի իսկ: Զի Աստուած էր, որ երևե-  
ցաւն մարդ: Պարտ էր, զի զմարդավայելուչն և զաստուածավայե-  
լուչն կատարեսցէ յատկաբար, զի ի կնոջէ ծնեալն<sup>14</sup> մարդոյ է,  
իսկ ի Կոսէ[ն] և առանց առն՝ Աստուծոյ է: Արդ՝ ամենայն  
տնաւրէնութիւն[ն] Քրիստոսի լի են խոնարհագունաւքն<sup>15</sup> և  
բարձրագունաւքն, վասնզի Աստուած էր միացեալ ի մարմնի:

Եւ ծնաւ զորդին իւր (Բ 7):

ԿԴ. Եւ ընդէ՞ր ո՛չ ասէ, եթէ ծնաւ որդի, այլ եթէ՝ «զորդին իւր»:  
Այլ զի ի Կոյսն միայն յարիցէ զորդիութեանն անուն, վասնզի ի

<sup>1</sup> Բ փայլեաց

<sup>2</sup> Բ Մարիամաւ

<sup>3</sup> Բ Յովսէփ

<sup>4</sup> Բ գեւղն

<sup>5</sup> Բ [Մ]արիամաւ

<sup>6</sup> Բ խաւսեալն

<sup>7</sup> Բ չիք նմա

<sup>8</sup> Բ խաւսել ասէ

<sup>9</sup> Բ անտի

<sup>10</sup> Բ յարիցէ

<sup>11</sup> Բ աւուրս

<sup>12</sup> Բ աւրինակ

<sup>13</sup> Բ զկարգ

<sup>14</sup> Բ ծնանելն

<sup>15</sup> Բ խոնարհագունիւքն

Մարիամայն էր ծնեալ և ո՛չ ըստ հասարակականին՝ յառնէ և ի կնոջէ:

**Զանդրանիկ[ն]** (Բ 7):

Եւ զի՞նչ անդրանիկն իմանի: Այլ, զի երկրորդ Ադամ ասի Քրիստոս, ըստ որում և սկիզբն առնելոց<sup>1</sup> էին որդիք մարդկան վերստին ծննդեամբն ի ձեռն ակազանին, որով նախ ինքն մկրտեցաւ՝ բանալով զարգանդ ակազանին, հրաւիրել<sup>2</sup> յորդեգրութիւն

39ա երկնաւոր<sup>3</sup> Հաւրն, և առնել հաղորդ իւրոյ անմահութեանն // և անապականութիւն<sup>4</sup> ըստ առաջին ստեղծմանն:

**Պատեաց ի խանձարուրս** (Բ 7):

Ստ. Նորոգ ծնեալ մանուկ և հինաւուրցն Աստուած, ընդ Հաւր անժամանակ: Արդ՝ այսպէս փոքրկացոյց զանձն անշնչացեալ, զի համարձակ լիցուք մերձենալ առ նա, ընդ որումն սերովբէքն ծպտեալ<sup>5</sup> զառաւելութիւն լուսոյ փառացն ո՛չ կարէին տեսանել: Այսաւր ընտրէ զխոնարհութիւն ընդդէմ առաջին բարձրութեանն, որով կորուսաք զփառս: Եւ Արարիչն Եւայի թոռն նորա եղև, պարաբառնայ<sup>6</sup> զանէծս և զցաւս երկանց նախամաւրն: Եւ զի քան<sup>7</sup> զայս մեծութիւն շնորհի ամենեցուն Արարիչն, որ ի ձեռին ունի զամենայն մարդկաւրէն ի ծնունդ եկեալ, տղայաբար խանձարապատ<sup>8</sup> եղեալ:

**Եւ եղ զնա ի մսուր** (Բ 7):

Կր. Եւ ի մսուր [յ]անբանից եղաւ, վասնզի մարդկային բնութիւնս յերբեմն<sup>9</sup> գեղեցիկ ստեղծմանէն փոխեցաւ յանասնական ախտս: Ըստ որում մարգարէն ասէ. «Մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ, հաւասարեաց<sup>10</sup> շնչաւոր անասնոց» (հմմտ. Սաղմ. ԽԸ 13, 21): Յարձակեցաւ ի դիւական զոհս յանխտիր<sup>11</sup> գոլով, վասն որոյ դնի ի մսուր անասնոց՝ կերակրելով բանական և երկնաւոր հացիւն, որ տայր նոցա զկեանսն յաւիտենականս:

<sup>1</sup> Բ առնելոյ

<sup>2</sup> Բ հրաւիրելով

<sup>3</sup> Բ չիք երկնաւոր

<sup>4</sup> Բ անապականութեանն

<sup>5</sup> Բ ծպտեալ

<sup>6</sup> Բ որով բառնայ

<sup>7</sup> Բ զինչքան

<sup>8</sup> Բ խանձարապատ

<sup>9</sup> Բ երբեմնի

<sup>10</sup> Բ հաւասար

<sup>11</sup> Բ ախտիւ

39բ // **Զի ո՛չ գոյր նոցա տեղի յիջավանի**<sup>1</sup> (Բ 7):

Ստ. Աստ ամենայն ինչ յառաջինն դառնայ կարգս, և ընու զցանկուլթիւն մաւրն առաջնոյ այն<sup>2</sup>, որ ցանկացաւ աստուածանալ: Եւ Քրիստոս ծնեալ մանուկ և եղեալ ի մսուր, և իւր խոնարհութեամբն բարձրացոյց յիւր աստուածային փառսն: Քանզի յայրին ի<sup>3</sup> փոքր տեղոջ<sup>4</sup> ծնանելով այն, զոր ո՛չ տանին արարածք, զի վերստին բացցէ քեզ զ[ը]նդարձակութիւն դրախտին փափկութեան:

**Զի ո՛չ գոյր նոցա տեղի յիջավանի**<sup>5</sup> (Բ 7):

ԻԳ Վասն աշխարհագրին, զի բազումք ժողովեալ էին: Եւ նոքա երթալին<sup>6</sup> յայր անդ աւթել, որ է արտաքոյ շինին, զի մի՛ ոք մերձակայ<sup>7</sup> ի մարդկանէ աստուածային ծննդեանն լիցի<sup>8</sup>: Նորին աղազաւ և ի ժամն<sup>9</sup> գիշեր ընտրեաց: Եւ ծնաւ առանց ցաւոց, որ յղացաւ առանց սերման, և մնաց անխախտելի կնիք կուսութեանն: Վկան<sup>10</sup> կուսութեան մաւրն յետ ծննդեանն գերեզմանն<sup>11</sup> կնքեալ, յորմէ ել: Եւ<sup>12</sup> դրունքն փակեալ ընդդէմ և<sup>13</sup> եմուտ առ աշակերտսն:

**Եւ հովիւք էին ի տեղոջն յայնմիկ բացաւթեայք** (Բ 8):

ԿՂ Եւ է՞ր վասն հովուացն յայտնեցան հրեշտակք[ն], վասնզի զարս<sup>14</sup> տգէտս կացուցանէ վկայս մարգարէութեանցն, զի ուսցին 40ա հրէայքն զկնի մարգ(//)արէութեանցն զվարդապետութեան ճառեալ գնացս: Դարձեալ. զի որպէս հովուաց[ն] հաւատացեալ է զպահպանութիւն հաւտից[ն], նոյն գունակ և, որք աշակերտելոց էին այսաւր ծնեալ թագաւորին, հաւատալոց էր պահպանութիւնս հաւտից բանաւորաց և հալածել զապականիչ գազանն<sup>15</sup> և պահ-

<sup>1</sup> A յիջաւանի B իջեվանի

<sup>2</sup> B առաջնոյն *փիս* անաջնոյ այն

<sup>3</sup> B *գրփիս* ի յայրին

<sup>4</sup> B տեղոջ

<sup>5</sup> A յիջաւանի B յիջեվանի

<sup>6</sup> B գնացին

<sup>7</sup> B *չիք* մերձակայ

<sup>8</sup> B տեսող լինիցի

<sup>9</sup> B գժամն *փիս* ի ժամն

<sup>10</sup> B վկայ է

<sup>11</sup> B և գերեզմանն

<sup>12</sup> B *չիք* եւ

<sup>13</sup> B ընդ որ *փիս* ընդդէմ և

<sup>14</sup> B զարրս

<sup>15</sup> B գազանս

պանել զհաւտն Քրիստոսի: Զոր ասէ<sup>1</sup> Տէր յանձն<sup>2</sup> իւր՝ ասելով. «Ես եմ հովիւ[ն] քաջ» (Յովհ. Ժ 14):

ԻԳ Վասնզի զմաւրն և զՅովսեփայ բառնայ զտրտմութիւն լուսոյ ծագմամբն և հրեշտակացն երեւմամբն և մոգուցն երկրպագութեամբն<sup>3</sup>: Հովուացն կամեցաւ յայտնել [զ]սքանչելիս: Որպէս զյարութեան սքանչելիս ծածկեաց ի բազմաց և յայտնեաց, որոց ինքն կամեցաւ, նոյնպէս և զհովիւսն<sup>4</sup> կամեցաւ տեսող<sup>5</sup> լինել նոր սքանչելեացն, զի պարզամիտք էին և առանց նենգութեան:

ԵՓ Ի հովուաց անտի արար սկիզբն, զի մի ոք, որ յանապատի իցեն, վրիպեալ գտանիցեն<sup>6</sup> յաւետեաց անտի խաղաղութեան ճշմարիտ հովուին:

Որք պահէին զպահպանութիւն գիշերոյ հաւտից[ն] (Բ 8):

Կր. Է՞ր սակս ի<sup>7</sup> գիշերի: Վասնզի որպէս ի ծագել<sup>8</sup> արեգականն

40ք Հալածի խաւար, այսպէս // ի ծնանելն Քրիստոսի հալածելոց էր խաւար կռապաշտութեան[ն], որ ծածկեալ ունէր զմարդկային բնութիւնս: Այլ ընդէ՞ր ի գիշերի: Վասնզի ի նուազել<sup>9</sup> գիշերին<sup>10</sup> և յառաւելուլ լուսոյն, ըստ գնացից արեգական, ծագելոց էր Արեգակն արդարութեան: Ուստի և ի նմին աւուր խոնարհի արեգակն, որպէս թէ յերկրպագութիւն նորածին թագաւորին: Եւ դարձեալ. առընթեր բարձրանայ ի նորա պատիւ: Այլ ընդէ՞ր ի Բեթղեէմ ծնանի: Վասնզի Բեթղեէմ թարգմանի տուն հացի: Իրաւապէս երկնային հացն, որ կերակրելոց է<sup>11</sup> զազգս մարդկան, ծնանի ի Բեթղեէմ, որոյ անունն յառաջագոյն, որ ինչ յապա լինելոց էին, հրաշափառ իրք նշանակեցաւ:

Հրեշտակ Տեառն երևեցաւ<sup>12</sup>, և փառք Տեառն ծագեաց առ նոսա (Բ 9):

<sup>1</sup> B անուանէ

<sup>2</sup> A B ի յանձն

<sup>3</sup> B մոգուց ընծայաբերութեամբն

<sup>4</sup> A զհովիւսն

<sup>5</sup> B տեսող

<sup>6</sup> B գտանիցին

<sup>7</sup> B *չիք* ի

<sup>8</sup> B ծագեալ *փի* որպէս ի ծագել

<sup>9</sup> A նվաղել

<sup>10</sup> B խաւարին *փի* գիշերին

<sup>11</sup> B էր

<sup>12</sup> B երևեցաւ նոցա

Իգ. *Զի՞նչ<sup>1</sup> իցեն փառք Տեառն: Լուսոյն փայլումն, որ յայտնեաց զփառս աստուածութեան[ն] երկնաւոր արքային, որ տղայ խանձարրապատ դնէր ի մտուր[ս] և հովուացն բացայայտէր: Լոյս էր, որ շուրջ փայլատակեաց զհովուաւքն, յորժամ անժամանակ լոյսն ընդ ժամանակէիս խառնիւր<sup>2</sup> մարդեղութեամբ:*

**Եւ երկեան յերկի[լ]դ<sup>3</sup> մեծ** (Բ 9):

*Վասն ժամուն, զի գիշեր էր, և լուսոյն ծագումն սաստիկ:*

41ա // **Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի երկնչիք** (Բ 10):

ԿՂ. *Վասնզի զարհուրեալ տազնապեցան ի լուսատեսակ ճառագայթից հրեշտակին, որ երևեցաւն: Վասն այսորիկ ցածուցանէ զերկի[լ]դն<sup>4</sup>, զի կարասցեն ի միտ առնուլ, զոր լուանն:*

Իգ. *Հանդերձ այնու<sup>5</sup> նախ բառնայ զերկի[լ]դն, որպէս առ Կոյսն և Զաքարիայ, զի համարձակեսցին զնալ տեսանել զնա և ի միտ առնուլ զասացեալսն, և լիցին վկայ զարմանալեացն:*

**Ահա աւասիկ<sup>6</sup> աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ** (Բ 10):

*Մեծ ուրախութիւն քան զայս ո՛չ երբեք եղև, զի անքննելի են խնամք[ն] Աստուծոյ, որ<sup>7</sup> առ մարդիկ ցուցաւ: Եւ առաւելութիւն պարզեացն անցանէ, քան զչափ մարդկան զարժանաւորութիւն<sup>8</sup>: Առ այս հայելով՝ բազումք յանհաւատութիւն ընկղմեցան, զի Աստուծոյ բնութիւնն՝ ընդ մերումս միացեալ<sup>9</sup>: Զի զառաջին տրտմութիւն[ն] մեր, որ մեղաւք կործանեցաք, բարձցէ և զառաջին փառսն<sup>10</sup> և զուրախութիւնն մեր ընդարձակութեամբ տացէ:*

**Որ եղիցի ամենայն ժողովրդեան[ն]** (Բ 10):

ԿՂ. *Ո՛չ ասէր<sup>11</sup> ըստ Մովսիսի կամ ըստ այլոց մարգարէիցն, որ յազգիին<sup>12</sup>, յատուկ<sup>13</sup> փրկութիւն:*

ԻԳ. *Այս փրկութիւն ամենայն հաւատացելոց<sup>14</sup> է:*

<sup>1</sup> A գինչ ինչ

<sup>2</sup> B խառնէր

<sup>3</sup> B երկեւղ

<sup>4</sup> B զերկեւղն

<sup>5</sup> B հանդարտ ձայնիւ *փիւ* հանդերձ այնու

<sup>6</sup> B ահաւասիկ

<sup>7</sup> B *չիք* որ

<sup>8</sup> B զարժանաւորութեան

<sup>9</sup> B միաւորեալ

<sup>10</sup> B փառսն մեր

<sup>11</sup> B ասէ

<sup>12</sup> B ազգիին

<sup>13</sup> B յատուկ լինէր

<sup>14</sup> B մարդկան հաւատացելոց

**Զի ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ (Բ 11):**  
 41բ Կդ. Փրկութիւն ձեզ ծնաւ այսաւր, // այլ ո՛չ է այս սկիզբն իւրոյ թագաւորութեանն:

**Որ է աւծեալ Տէր (Բ 11):**  
 Յոյժ բարձրագոյն<sup>1</sup> քան զսկիզբն: Թէպէտև մարդ գոլոյն<sup>2</sup> աւծեալ ասի, այլ<sup>3</sup> ինքն Տէր է աւծեալ զթագաւորս և զմարգարէս:

ԵՓ Որ է ինքն Տէր և սկիզբն խաղաղութեան լինելոյ:  
 Իգ. Յորժամ յեղեղու<sup>4</sup> ոք յայլ լեզու[ս], այսպէս ասի, թէ լցեալ են բանք մարգարէից[ն]: Եւ ըստ հայ լեզուաց[ն] այսպէս ասեն. «Ծնաւ ձեզ այսաւր Յիսուս, որ է Տէր Քրիստոս»: Ահա ճշմարտեցաւ<sup>5</sup> բանք մարգարէիցն, որ անուանեցաւ<sup>6</sup> Յիսուս Քրիստոս և Տէր ամենեցուն:

**Ի քաղաքի Դաւթի (Բ 11):**  
 Ըստ մարգարէութեանն Դաւթի. «Ի պողոյ որովայնի<sup>7</sup> նորա նստուցանել յաթոռ նորա» (հմմտ. Սաղմ. 6ԼԱ 11):  
 Իգ. Այս է Բեթղեէմ, ուստի Դաւթի էր: Եւ այսպէս ելից զբանս Միքիայ (տե՛ս Միք. 2 9), և «Ծնաւ ի քաղաքի Դաւթի»:

Եւ այս նշանակ ձեզ. Գտանիցէք<sup>8</sup> մանուկ պատեալ ի խանձարուրս և եղեալ ի մսուր (Բ 12):  
 ԿՂ Վասնզի բարձրագոյն[ս] վասն նորա քարոզեաց և ինքեան[ք] հրաշալի երևամբն: Եւ Տէր և Փրկիչ զնա կոչելով՝ զնէ զխոնարհագոյնսն, թէ զոր գտանիցէք այժմ մանուկ ի խանձարուրս պատեալ և ի մսուր եղեալ, նա է, վասն որոյ քարոզեմ:

Իգ. Ստուգէ՛<sup>9</sup> զնոսա տեսանողս<sup>10</sup> լինել մանկանն, զի մի՛ միայն 42ա վասն մանկանն խաւսեսցին, այլ զնոր սքանչել(//)իքն որ ցուցաւ՝ պատմեսցեն:

**Յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն[ք] զաւրաց երկնաւորաց (Բ 13):**

<sup>1</sup> B բարձրագոյն է  
<sup>2</sup> B մարդանալոյն  
<sup>3</sup> B այլև  
<sup>4</sup> B յեղեղու  
<sup>5</sup> B ճշտեցաւ  
<sup>6</sup> A անվանեցաւ B անուանեցին զնա  
<sup>7</sup> B յորովայնէ  
<sup>8</sup> B գտանէք  
<sup>9</sup> B ստիպէ  
<sup>10</sup> B տեսանաւղս

- Կդ. Առընթեր հրեշտակապետին քարոզութիւնն<sup>1</sup>, որ առ հովիւսն, վկայեն<sup>2</sup> և բազմութիւնք զաւրաց<sup>3</sup> առ ի հաստատութիւն հաւատոց<sup>4</sup>, զոր լուանն:
- ԻԳ. Ապա սաստկանայ լուսոյն պայծառութիւնն ի վերայ այրին: Եւ երևի բազմութիւնք հրեշտակաց, զի յայտնեսցի, եթէ ո՞վ ոք է<sup>5</sup>, որ սպասաւորենն: Զի վասն մարդոյ, յորժամ երևեցան նոքա, մի կամ երկու միայն, իսկ յորժամ բազումք՝ անդ երևեցաւ և Աստուած: Եւ բազումք նմա կան ի սպասաւորութեան<sup>6</sup>, ըստ որում ի լերինն Սինեայ<sup>7</sup>, քանզի<sup>8</sup> առ Մովսիսիւ յայտ է ի փողոցն հնչեցուցանելն<sup>9</sup>: Եւ յորժամ երևեցաւ Դանիելի, ինքն ասաց Դանիէլ. «Հազարք հազարաց կային առաջի նորա և բիւրք բիւրուց պաշտէին զնա» (Դան. Է 10): Յայտ<sup>10</sup> է, յորժամ<sup>11</sup> երևին բազմութիւնք հրեշտակաց ի պատիւ Աստուծոյ երևելոյ, զիտել, թէ Աստուած է: Ըստ նմին և աստ յայտնեցան [ի] սքանչումն տեսողաց ի պատիւ այնմ<sup>12</sup>, որ ի խանձարուրս պատեալ և ի մտուր դնէր:

**Որք աւրհնէին զԱստուած (Բ 13):**

- Քանզի Աստուած էր, որ երևեցաւ մարդ՝ ծնեալ ի կնոջէ: Վասն 42բ այնորիկ իմա(//)նալի դասք իջեալ յերկրի<sup>13</sup> Աստուծոյ աւրհնութիւնս երգէին:

**Փառք ի բարձունս Աստուծոյ (Բ 14):**

- Կդ. Ըստ անձառ մարդասիրութեանն, որ այսաւր ծնաւ յերկրի<sup>14</sup> ի բարձանց<sup>15</sup> զաւրաց[ն] ասեն, այլ ո՛չ յերկրայնոցս, որք ո՛չ ճանաչեն զդեռևս<sup>16</sup> զՆոր թագաւորութիւն:

<sup>1</sup> B քարոզութեան

<sup>2</sup> B վկայեսցեն

<sup>3</sup> B զաւրաց երկնաւորացն

<sup>4</sup> B հաւատոյ

<sup>5</sup> B իցեն

<sup>6</sup> B սպասաւորութիւն

<sup>7</sup> B Սինէական

<sup>8</sup> B չիք քանզի (տեղը ջնջված է)

<sup>9</sup> B հնչեցուցանելոյն

<sup>10</sup> B յորմէ յայտ

<sup>11</sup> B իբրև

<sup>12</sup> B այնմիկ

<sup>13</sup> A B ի յերկրի

<sup>14</sup> A B ի յերկրի

<sup>15</sup> A բարցանց

<sup>16</sup> B դեռևս



Եփ. Իբրև ընկալան ներքինք[ս] ի վերնոց անտի փառս յերկրի<sup>1</sup>, աղաղակէին փառաբանութիւն Աստուծոյ յերկինս<sup>2</sup>՝ կամաւոր գալստեամբն Քրիստոսի:

Իգ. Որ կամեցաւ կեցուցանել զանցաւորս<sup>3</sup> և զաւտարացեալս ո՛չ մեծ իշխանութեամբ, այլ նուաստութեամբ, ո՛չ զաւրութեամբ, այլ<sup>4</sup> տկարութեամբ, ո՛չ թողու զմեղս աստուածաբար, այլ ինքն<sup>5</sup> բառնայ մարդկապէս<sup>6</sup>: Առնու զմեղս մեղաւորաց և ինքն անուանի մեղք, և շնորհէ մեղուցելոց թողութիւն: Արդ՝ այս յայտնի էր նոցա ի ծնեալ մանկանէն, ընդ որ հիացեալ ասեն.

**Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն (Բ 14):**

ԵՓ Ի ժամանակին, յորում<sup>7</sup> էջ աստուածութիւնն և զգեցաւ զմարդկութիւն<sup>8</sup>, խաղաղութիւն յերկիր<sup>9</sup> աղաղակէին հրեշտակքն: Եւ, յորժամ վերացաւ մարդկութիւնն յերկինս՝ ընկղմեալ աստուածութեամբ, նստեալ ընդ աջմէ Հաւր, «Խաղաղութիւն յերկինս<sup>10</sup> և աւրհնութիւն ի բարձունս» աղաղակէին մանկունք[ն] 43ա եկեղեցոյ առաջի նորա: Աստի ուս(//)եալ՝ առաքեալ ասէ. «Արար խաղաղութիւն արեամբ խաչին, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի<sup>11</sup>» (Կողոս. Ա 20): Եւ որպէս շնորհք ողորմութեանն<sup>12</sup> ուրախ արարին զմեղաւորքն յերկրի, սոյնպէս և ապաշխարութիւն[ք] սոցա ուրախ արարին զհրեշտակս<sup>13</sup> յերկինս<sup>14</sup>:

**Խաղաղութիւն յերկրի (Բ 14):**

Ո՛չ գազանաց և անասնոց, այլ յոյս բարի որդոց մարդկան:

ԿԴ Վասնզի ի ձեռն այսաւրածին թագաւորի[ն] եղև ծաւալումն հրեշտակաց յերկրի, և մարդկան դասակցութիւն ընդ նոսա:

ԻԳ Վասնզի ի բառնալ մեղացն բարձաւ պատերազմ[ն], որ ընդ Աստուծոյ և ընդ մարդկան: Վասնզի<sup>15</sup> եկն Յիսուս, սպան զթշնա-

<sup>1</sup> A B Ի յերկրի (B ունի կես էջեց ավել գրութիւն, որի աջ լս. կարմիր մեկանով նշված է. «Աւելի է, մի՛ գրեք, շրջէ», իսկ հաջորդ էջը դատարկ է)

<sup>2</sup> B Ի յերկինս

<sup>3</sup> B զմարդիկ զանցաւորքս

<sup>4</sup> B և *փի* ոչ զաւրութեամբ այլ

<sup>5</sup> A յինք

<sup>6</sup> A մարդկապէս B մարդասիրապէս

<sup>7</sup> B յորժամ

<sup>8</sup> B զմարդկութիւնս

<sup>9</sup> A B Ի յերկիր

<sup>10</sup> B Ի յերկինս

<sup>11</sup> B Ի յերկրի

<sup>12</sup> B ողորմութեանն Աստուծոյ

<sup>13</sup> B հրեշտակք

<sup>14</sup> A B Ի յերկինս

<sup>15</sup> B զի

մուծիլն ի մարմնի իւրում, և աւետարանեաց [զ]խաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց՝ միջ[ն]որդութեամբ իւրով:

**Ի մարդիկ հաճութիւն (Բ 14):**

Կղ. Վասնզի խռովեալ զղորդէր աշխարհս դիւական մոլութեամբ: Եւ փոխանակ Արարչին՝ դիւաց երկիր պագանէին, կա[ր]գ եղեալ<sup>1</sup> հրեշտակք ընդ մարդկան՝ տեսանելով զմարդիկ<sup>2</sup> փոխանակ ինքեանց թագաւորին, զի<sup>3</sup> դիւաց երկիր պագանէին: Եւ այժմ հաշտեցաք ընդ Աստուծոյ՝ մահուամբ Որդւոյ<sup>4</sup> նորա, և միաւորեցան հրեշտակք և մարդիկ<sup>5</sup> ի փառաբանութիւն Աստուծոյ:

43բ ԻԳ Եւ զի՞նչ, քան զայս // մեծ հաճութիւն<sup>6</sup>: Զի զՈրդին իւր ետ մեզ<sup>7</sup>: Եւ եկեալ Որդին՝ եղև գլուխ մեզ, և որով և<sup>8</sup> ընդ գլխոյն հաշտէ, նովին և ընդ անդամս մարմնոյ նորա ունի [զ]հաղորդութիւն և<sup>9</sup> զհաշտութիւն:

**Եւ եղև իբրև վերացան ի նոցանէ հրեշտակքն յերկինս (Բ 15):**

Վերացան յերկինս<sup>10</sup> յանդիման նոցա: Զի ի միտ առցեն հովիւքն, եթէ անտի<sup>11</sup> իջին, ուստի և մանուկն էր «ի մսուր եղեալ», որում զփառս երգէին:

**Ասեն ցմիմեանս<sup>12</sup>. Եկայք երթիցուք մինչև ցԲԵԹՂԵՏՄ<sup>13</sup> (Բ 15):**

Իմացան հովիւքն, թէ աստուածային է տեսիլն: Լուան և ի հրեշտակէն, եթէ՝ «Տեսանիցէք<sup>14</sup> մանուկ պատեալ ի խանձարուրս և եղեալ ի մսուր» (Բ 12): Վասն որոյ փութացան ստուգութեամբ կալ ի վերայ յայտնութեանն: Կարծէին ի գեղջէից անտի<sup>15</sup> ստուգել զիրան:

**Տեսցուք զի՞նչ է բանս այս, որ եղև, զոր Տէր եցոյց մեզ (Բ 15):**

<sup>1</sup> Ե եղեալ էին

<sup>2</sup> Ե զմարդիկք

<sup>3</sup> Ե չէք զի

<sup>4</sup> Ե Որդւոյ

<sup>5</sup> Ե մարդիկք

<sup>6</sup> Ե հաշտութիւն

<sup>7</sup> Ե մեզ զՄիածինն և զփառակիցն

<sup>8</sup> Ե չէք և

<sup>9</sup> Ե չէք հաղորդութիւն և

<sup>10</sup> Ե կրկ. յերկինս յերկինս

<sup>11</sup> Ե անդ

<sup>12</sup> Ե հովիւքն ընդ միմեանս

<sup>13</sup> Ե ցԲԵԹՂԵՏՄ

<sup>14</sup> Ե գտանիցէք

<sup>15</sup> Ե սրբ. հետազայում՝ անդ

Զլուստոյն հոսուամն տեսին ի վերայ այրին: Զի թէպէտե՞<sup>1</sup> զամենայն վայրսն<sup>2</sup> ելից ճառագայթիւք, և հրեշտակացն դասքն ի վերայ այրին երևեցան և տային փառս Աստուծոյ, սակայն հովիւքն ո՛չ գիտէին, թէ յայրի անդ իցէ Քրիստոս: Վասն որոյ տեսիլն երևեցաւ, վասն այնր ընթացան<sup>3</sup>:

**Եկին փութանակի ի գեաւդն<sup>4</sup> (Բ 16):**

Ստ. Նախ յայրն<sup>5</sup> կանխեցին<sup>6</sup>, զի ի մէջ հովուացն և գեղջն էր

44ա այրն<sup>7</sup>: //Ըստ բանից հրեշտակին յայրի<sup>8</sup> անդ գտին զնոսա, և<sup>9</sup> առանց կարծեաց հաւատացեալ երկրպագեցին<sup>10</sup> այն, ինչ ծնիցելոյ մանկանն:

**Ծանեան վասն բանին զամենայն ինչ, զոր<sup>11</sup> ասացաւ վասն մանկանն (Բ 17):**

Իգ. Ի տեսլենէ[ն] անտի<sup>12</sup> զամենայն<sup>13</sup> ինչ ստուգութեամբ, զոր ասացաւ<sup>14</sup> ի հրեշտակէն: Հովիւքն անբան հաւտից[ն] արժանի եղեն տեսանել<sup>15</sup> զհովիւն Սուրբ երկնաւոր: Այն, որ եկն դնել զանձն վասն ոչխարացն և խնդրել զմոլորեալն<sup>16</sup> ի վերայ լերանց և բլրոց: Որպէս Եսայի ասէ. «Իբրև զհովիւ<sup>17</sup> մի<sup>18</sup> հով[ու]եսցէ զհաւտ իւր, և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինսն<sup>19</sup> և ի ծոց իւր կրեսցէ զնոսա<sup>20</sup>, և մխիթար լիցի յղեացն» (հմմտ. Ես. Խ 11):

**Ամենեքին<sup>21</sup>, որ լսէին, զոր խաւսեցան հովիւքն (Բ 18):**

<sup>1</sup> Ե թէպէտ

<sup>2</sup> Ե վայրն

<sup>3</sup> Ե ընթացան ի գեղն

<sup>4</sup> Ե չիք ի գեաւդն

<sup>5</sup> Ե Ե ի յայրն

<sup>6</sup> Ե ընթացան և կանխեցին

<sup>7</sup> Ե այրն: «Եւ գտին զՄարիամ և զՅովսէփ և զմանուկն եղեալ ի մսուր» (Բ 16):

<sup>8</sup> Ե Ե ի յայրի

<sup>9</sup> Ե չիք և

<sup>10</sup> Ե երկրպագեալ

<sup>11</sup> Ե որ չիս զամենայն ինչ զոր

<sup>12</sup> Ե չիք անտի

<sup>13</sup> Ե ծանեան զամենայն

<sup>14</sup> Ե որ ասացաւն

<sup>15</sup> Ե տեսանելով

<sup>16</sup> Ե զմոլորեալս

<sup>17</sup> Ե որպէս հովիւ

<sup>18</sup> Ե մի զի

<sup>19</sup> Ե զգառինս իւր

<sup>20</sup> Ե չիք զնոսա

<sup>21</sup> Ե ամենեքեան

Արդ՝ զայս տեսեալ հովուացն՝ լռել<sup>1</sup> ո՛չ ունէին<sup>2</sup> վասն սքանչելի տեսեանն: Թէպէտե ամփոփեաց<sup>3</sup> զփառս աստուածութեանն իւրոյ՝ զկերպարանս ծառայի առեալ, այլ յայտնեաց զինքն սաստկութեամբ լուսոյն, և քարոզեաց ի ձեռն հովուացն զփառաբանութիւնն<sup>4</sup> իւր[ոյ]:

Մարիամ զամենայն զբանս<sup>5</sup> զայսոսիկ պահէր (Բ 19):

Կր. 44բ. Քանզի սքանչելիք ի սքանչելեաց յաճախէին<sup>6</sup> նմա զհիացումնն միանգամայն և զիմաստութիւնն<sup>7</sup>, // որով կրթեալ փորձ գտանէր, առաջին հրեշտակին երևումնն և աւետիսն և անսերմ յղութիւն<sup>8</sup> և յեղիսաբեթէ<sup>9</sup> բանքն, որ<sup>10</sup> առ նա, կուսութիւն և առանց ցաւոց ծնունդն, և լուսոյն ծագումնն, հրեշտակացն փառաբանութիւնն և մոգուցն ջահընկալ ճանապարհ ի հեռուստ աշխարհէ իւր<sup>11</sup> յերկրպագութիւն:

Խելամուտ լինէր ի սրտի իւրում (Բ 19):

Իմանալ զկատարած խորհրդոյն և ո՛չ խաւսել<sup>12</sup> ընդ ումեք և ո՛չ պատմել<sup>13</sup> զսքանչելիսն, որ առ նա ցուցաւ, զոր սովոր են առնել անմիտ կանայք: Այլ նմա չէր աւրէն այսոցիկ պատմիչ լինել, այլ՝ լռել:

Դարձան հովիւքն, փառաւոր առնէին և աւրհնէին զԱստուած վասն ամենայնի, զոր լուան<sup>14</sup> և տեսին, որպէս պատմեցաւ նոցա (Բ 20):

Իգ. Արդ՝ հովուացն ամենայն ինչ բարիոք վճարեցաւ, զահաւոր տեսեանն<sup>15</sup> և հրաբուն զաւրացն, որ փառս տային Աստուծոյ: Իմացան, եթէ աստուածային է ծնունդն, և<sup>16</sup> հաւատացին: Եւ դար-

<sup>1</sup> A լռեալ

<sup>2</sup> B ունէին, այլ ամենեցուն պատմէին, զոր լուանն և տեսին: Ամենեքեան, որ լուանն, զարմանային

<sup>3</sup> A անփոփեաց

<sup>4</sup> B զփառաբանութեան

<sup>5</sup> B բանս

<sup>6</sup> B ընկալեալ յաճախէին

<sup>7</sup> B զիմաստութեան

<sup>8</sup> B անսերմն յղութիւնն

<sup>9</sup> B եղիսաբեթի

<sup>10</sup> B չիք որ

<sup>11</sup> B իւրեանց

<sup>12</sup> B խաւսէր

<sup>13</sup> B պատմէր

<sup>14</sup> A B լուանն

<sup>15</sup> B տեսեամբն

<sup>16</sup> B և տեսին և

ձան անդրէն ի հաւտն իւրեանց և փառաւորէին<sup>1</sup> զԱստուած՝ ուսեալք ի հրեշտակաց[ն]: Ընդ նոսին աւրհնէին զՏէր, վասնզի ի բարկութեան ժամանակի զողորմութիւն յիշեաց, զի զնոսա արժանացոյց իւր անձառ<sup>2</sup> խորհրդոցն:

45ա Իբրև<sup>3</sup> լցան աւուրք ութ // թլփատել զնա (Բ 21):

Կդ. Թէպէտ<sup>4</sup> այնքան բարձրագոյն աւետարանի վասն<sup>5</sup> Կուսին ի հրեշտակէն և յեղիսաբեթէ և ի հովուացն, սակայն ո՛չ արգելոյր զնա<sup>6</sup> [ի] կատարել զաւրէնսն, զի սրբութեամբ<sup>7</sup> ունէին ժողովուրդ[ք]ն:

ՍՏ Ձի աւրէնքն հրամայէր զբնութիւնն<sup>8</sup> սրբութեամբ պահել ութաւրեայ՝ ի վեր ճանապարհ առնելով պղծելոյ<sup>9</sup> մարդոյ ի սրբութիւն սրբութեանն հանդերձ[եալ] ութերեկին<sup>10</sup>:

ԻՊ Ձի Աբրահամայ<sup>11</sup> ետ զնա դրոշմ և զաւակաց նորա՝ որոշել զնոսա<sup>12</sup> ի հեթանոսաց և զկնիք<sup>13</sup> հաւատոցն արդարութեան: Դարձեալ. զ[յ]աւելուած մորթն հերձեալ ի բաց՝ ուսոյց ի բաց հանել զչարութիւնն:

Ստ.(ոկ.) Իսկ Քրիստոսի սպասաւոր լինել թլփատութեանն՝ առ ի հաստատուն առնել զաւետիս հարցն ըստ առաքելոյ, և զաւետիսն Աբրահամու լնլոյ<sup>14</sup> և զճշմարտութեանցն Աստուծոյ կատարելոյ: Եւ այս յայտնի ցուցեալ է ի սուրբ հարցն ի բազում տեղիս<sup>15</sup>:

<sup>1</sup> Բ փառաւոր առնէին

<sup>2</sup> Բ անձառելի

<sup>3</sup> Բ և իբրև

<sup>4</sup> Բ թէպէտ և

<sup>5</sup> Բ վասն նորա

<sup>6</sup> Բ զնոսա

<sup>7</sup> Բ զոր բնութեամբ

<sup>8</sup> Բ զբնութիւնս

<sup>9</sup> Բ պղծեցելոյ

<sup>10</sup> Բ ութերեկին

<sup>11</sup> Բ Աբրահամու

<sup>12</sup> Բ զնա

<sup>13</sup> Բ կնիք

<sup>14</sup> Բ լնու

<sup>15</sup> Բ շարունակվում է (էջ 46ա). «ԱԲ Այլ Դարձեալ էառ Քրիստոս թլփատութիւն վասն բազում պատճառի: Նախ՝ զի զաւրէնս, զոր ետ ինքն այլոց, ինքն կատարեսցէ: Երկրորդ՝ զի ցուցցէ զխոնարհութիւն՝ զնելովն զինքն ի ներքոյ աւրինացն, որ ո՛չ էր պարտական: Երրորդ՝ զի զարիւնն իւր ո՛չ միայն ի յայրական տիսն, այլ և ի յերեխայականն հեղցէ վասն մեր: Չորրորդ՝ զի ուսուցէ մեզ թլփատիլ հոգևորապէս: Հինգերորդ՝ զի յամալթ արասցէ զհերետիկոսսն, որք ասացին զնմանէ ո՛չ ունել մարմին ճշմարիտ, այլ առ աչաւք: Վեցերորդ՝ զի մի՛տայցէ հրէիցն պատճառ դայթագղութեան՝ ո՛չ առնլովն զթլփատութիւնն: Եւթներորդ՝ զի հաստատեսցէ զՀին Աւրէնսն, զոր պարտ էր պահել մինչև ի նա, զի աւրինականքն կենդանի էին նախքան զչարչարանքն Տեառն, այլ յետ չարչարանացն՝ մեռեալ: Այլ յետ որոյ յայտնեցաւ ճշմարտութիւն Աւետարանին ի

Կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալ էր<sup>1</sup> ի հրեշտակէն, մինչև յղացեալ էր զնա յորովայնի (Բ 21):

ստ. Եւ այս խորհուրդ նկարեցաւ<sup>2</sup> ի ձեռն Յեսուայ համանմանն<sup>3</sup> Յիսուսի: Զի նախ՝ մկրտեաց զԻսրայէլ յանցանելն Յորդանանու 45բ և ապա՝ թլփատեաց զնոսա գայլախազիւ: // Զի ամենայն ինչ ընդ գործովք արուեստիւ անկաւ, բայց միայն գայլախազն մնաց ի պատկերագործութենէ, զի պղծեցին զամենայն նիւթ, և առաւել զերկաթ: Իսկ գայլախազն վէժ է աւրինակ ճշմարիտ վիմին և անգործ ի չարեաց, որ ո՛չ արար մեղս և ո՛չ գտաւ նենգութիւն<sup>4</sup> ի բերան նորա: Որ ասացն<sup>5</sup>. «Գայ իշխան աշխարհիս և յիս ինչ ո՛չ գտանէ» (Յովհ. ԺԴ 30): Եւ նովաւ<sup>6</sup> թլփատեցաք զանձեռագործ թլփատութիւնն ի Յորդանան, ի<sup>7</sup> կենցաղոյս մտանել յերկիրն<sup>8</sup> պարգևաց, որ է երկիրն կենդանեաց: Եւ նախ՝ Յիսուս մկրտեցաւ<sup>9</sup> աւազանաւն և ապա՝ թլփատէ յաւուրն ութերորդի յարութեանն: Զորս իմանալի վէժն Քրիստոս Հոգևով չրթամբ[ք] իւրով սատակեսցէ՝ յասելն. «Զգիտեմ<sup>10</sup> զձեզ» (Մատթ. ԻԵ 12, Ղուկ. ԺԳ 25, 27): Իսկ աստ՝ թլփատեալքն մկրտութեամբ յեաւթներորդիս<sup>11</sup>, որք զհին մարդն մերկասցին<sup>12</sup> և խայտառակեցին զպետութիւն իշխանին

յաշխարհս, յայնժամն թաղեցաւ:

Արդ՝ թլփատի Քրիստոս ո՛չ միայն աւրինական թլփատութեամբն, այլև՝ հոգևորականաւն: Ուստի կարեմք բացատրել զթլփատութիւնն Քրիստոսի քառակի: Նախ՝ թլփատեաց զնա Հայրն ի ծննդեան աղքատութեան սրովն: Երկրորդ՝ թլփատեցին զնա իւրքն յաւուրն ութերորդի սրով Աւրինացն: Երրորդ՝ թլփատեաց ինքն զինքն յամենայնի կեանս իւր՝ սրով խոնարհութեանն: Չորրորդ՝ թլփատեցին զնա հրէայքն ի չարչարանս սրով Խաչին և գայս՝ զինուորաւքն Պիղատոսի:

Դարձեալ. թլփատի և այժմ Քրիստոս ի յիւրսն չորեքկին: Նախ՝ բամբասանաւքն, որ բառնան զբարեկամս և զբարի համբաւս: Երկրորդ՝ յափշտակողաւք, որք յափշտակեն զժամանակաւոր բարիս: Երրորդ՝ հերետիկոսաւք, որք բառնան զհոգիս: Չորրորդ՝ բռնաւորաւք, որ բառնան զմարմինն:

Արդ՝ հոգևոր թլփատութիւնն մեր է կրկին: Առաջինն՝ է թլփատութիւն մտաց ի ներկայումս: Երկրորդն՝ է մարմնոյ ի հանդերձեալն ի պատժոյն ապականութեանն»:

<sup>1</sup> B որպէս ասացաւն *փի* որ կոչեցեալ էր

<sup>2</sup> B կատարեցաւ

<sup>3</sup> B համանման

<sup>4</sup> A նենգութիւն

<sup>5</sup> B ասաց

<sup>6</sup> B սովաւ

<sup>7</sup> B *չէք* ի

<sup>8</sup> A ի յերկիրն

<sup>9</sup> B մկրտեաց

<sup>10</sup> B ոչ գիտեմ

<sup>11</sup> B յեաւթներորդիս

<sup>12</sup> B մերկացին

յաւիտեանիս այսորիկ, ի յարութեանն ընդ յարուցելոյն Քրիստոսի յայտնին փառաւ<sup>1</sup>:

**ԻՊ** Իսկ Յիսուս յանձն առնու զայն<sup>2</sup> ըստ աւրինացն, զի լցցէ զնա<sup>3</sup>: Ո՛չ հրաժարէր նա յիւր աւանդեալ աւրինացն, զի մի՛ ոք պատճառս տայցէ<sup>4</sup>, որք չար զաւրէնսն ասեն<sup>5</sup>: Իսկ Յիսուս ելից

**46ա** զաւրէնսն որպէս բարի, // զոր առ Յովհաննէս ասաց. «Այսպէս պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս» (Մատթ. Գ 15):

**ԵՓ** Արդ՝ լնու զաւրէնսն, զի բարի է տղայոց ըստ իւր ժամանակին: Եւ փոխէ զնա ո՛չ վասն չարութեան[ն], այլ վասն տկարութեանն: Եւ տայ աւրէնս կատարեալս<sup>6</sup> արանց կատարելոց, և փոխանակ կաթին[ն] և մեղու տղայոց՝ խաչ և չարչարանք կատարելոցս<sup>7</sup>:

<sup>1</sup> Բ փառաւք նոցա

<sup>2</sup> Բ զայս

<sup>3</sup> Բ զնա և ապա լուծցէ զնա

<sup>4</sup> Բ տացէ այնոցիկ

<sup>5</sup> Բ ասէին

<sup>6</sup> Բ կատարեալ

<sup>7</sup> Բ կատարելոցն: Ապա շարունակվում է (էջ 46բ-47բ). «Այլ Պարտ է գիտել, զի Զաքարիա թլփատեաց ի վերայ բազկացն Յովսեփայ ո՛չ հատանելով, այլ ճեղքելով, որպէս աւրէն էր անդրանկաց՝ ճեղքել և ո՛չ հատանել: Որպէս Եսաւ անդրանիկն իսահակայ կցողակն դեղաւք ողջացոյց զմարմին իւր և արար անթլփատ, զի ցրուեսցէ զուխտն Աստուծոյ (տե՛ս ԾՆՆՊ. ԻԵ): Իսկ Տէրն մեր էր անդրանիկ ի Հաւրէ և անդրանիկ ի մաւրէ և անդրանիկ շնորհաց և արդարութեան, և անդրանիկ յարութեան մեռելոց: Վասն այնորիկ անդրանկապէս ընկալաւ զաւրէնս թլփատութեան:

Դարձեալ. կոչեցաւ Յիսուս, որ կոչեցեալ էր ի հրեշտակէն: Յիսուս, որ է փրկիչ, կոչեցաւ ի թլփատութեանն: Քրիստոս, որ է աւծեալ, կոչեցաւ ի մկրտութեանն: Մարդ, որ է պատկեր, կոչեցաւ ի ծննդեանն: Չորս գիր է մարդն, որ նշանակէ ի չորից տարերաց մարդկան մարմին առեալ: Եւ Քրիստոսն է (7) գիր է, նշանակէ ի (7) արփեան շնորհս Հոգւոյն լիապէս ունել ի մկրտութեանն: Ոչ թէ որպէս ասեն հերձուածողք՝ ի մկրտութեանն ընկալեալ զշնորհս և Քրիստոս կոչեցեալ, զի Քրիստոսն աւծեալ թարքմանի, և այս աւծումնս յարգանդի Կուսին եղև միաւորութեամբ: Ըստ որում աստուածութեամբն էաւծ զմարդկութիւնն իւր: Եւ եղև աւծեալն իբրև զաւծաւղն, որով համարձակիմք ասել զուզաստուած, այսինքն՝ միաստուած ըստ Աստուածաբանին Գրիգորի: Որպէս ի ծննդեանն ասէր հրեշտակն. «Ծնաւ ձեզ այսաւր փրկիչ, որ է աւծեալ Տէր, ի քաղաքի Դ[աւթի]» (Բ 11): Նոյնպէս ի մկրտութեանն կոչեցաւ Քրիստոս, և յայնմ հետէ բաշխէր զշնորհս հաւատացելոց իւրոց: // Նոյնպէս ի թլփատութեանն կոչեցաւ Յիսուս և է Յիսուսն վեց գիր, որ նշանակէ զկատարեալ փրկութիւնն մեր, զի վեց թիւն կատարեալ է: Եւ ի խորհուրդ վեց դարուս: Ի վեց աւր կատարեաց զբոլոր էակս: Զվեց շարժումն մարմնոյ մերոյ պատճառ ապականութեան փոխեաց և արար անապական:

**47ա** Դարձեալ. զբոլոր փրկութիւն տնաւրէնութեան Տեառն նշանակէ, որ ի մարդեղութեան իւրում ըստ վեց յեղանակի փրկութիւն շնորհեաց ազգի մարդկան: Նախ՝ փրկեաց ի մեղաց: Ըստ այնմ, որ ասէր հրեշտակն. «Նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց» (Մատթ. Ա 21): Երկրորդ՝ փրկեաց յարինացն ծառայութեանէ և յանիծիցն: Ըստ այնմ առաքեաց Աստուած Որդին իւր, որ եղև ի կնոջէ, և եմուտ ընդ աւրինաւք, զի զորս ընդ աւրինաւքն իցեն, զնեսցէ, այսինքն՝ ազատեսցէ: Նմանապէս կրելով յինքեան զանէծս՝ եբարձ զանէծս աւրինացն և Աղամայ: Ըստ այնմ՝ «Քրիստոս զնեաց զմեզ յանիծից աւրինացն՝ եղեալ

**Իբրև լցան առուրք սրբութեան նոցա ըստ աւրինացն Մովսիսի**

(Բ 22):

**ԻԳ** *Կին ոք, յորժամ սերմ առիցի<sup>1</sup> և ծնցի արու, կացցէ առուրս քառասուն ի վերայ սրբութեան դաշտանին իւրոյ: Այս է պատճառն, վասնզի արուն յորովայնի մաւրն ի քառասուն աւր[ն] կենդանանայ վասն լերդին ջերմութեան յաջակողմանն, և էգն ի*

վասն մեր անէծք» (Գաղատ. Գ 13): *Երրորդ՝ փրկեաց զմեզ ի բուռն ծառայութենէ սատանայի: Ըստ այնմ՝ «Որ, ասէր ի դիմաց Հաւր, փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի և փոխեաց յարքայութիւն Որդոյ իւրոյ սիրելոյ» (Կողոս. Ա 13): Չորրորդ՝ փրկեաց ի ձեռաց մահու, որպէս ասէ Պաւղոս, եթէ՝ «Մահուամբն իւրով խափանեաց զայն, որ զիշխանութիւն մահուան ունէր, այսինքն է՝ զսատանայ, և ապրեցուցէ զայնոսիկ, որ մահուան երկիւղիւ հանապաղ կային վտարանդեալք ի ծառայութիւն» (Եբր. Բ 14-15): Հինգերորդ՝ փրկեաց զհոգիսն ի դառն տանջանաց դժոխոցն, զամենայնսն՝ զարդարս և զմեղաւորս առհասարակ՝ ըստ առաքելոյ: Ել ի բարձունս խաչին, գերեաց զգերեալսն ի սատանայէ և էառ աւար առհասարակ: Եւ թէ՛ «Լուաւ զհեծութիւն կապելոց և արձակեաց զորդիս մահապարտաց» (Սաղմ. ԾԱ 21): Վեցերորդ՝ փրկեաց ի դիւամոլ կռակաշտութեանց և էած յաստուածապաշտութիւն ճշմարիտ հաւատոց: Որպէս ասէր յետ յարութեանն. «Երթայք մկրտեցէք զամենայն հեթանոսս: Ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ» (Մատթ. ԻԸ 19-20):*

*Դարձեալ. գիտելի է, զի յանունս այս Յիսուս՝ են վեց գիր, այսինքն՝*  
**Յարազուարճութիւն տրտեցելոց,**  
**Իրաւունք սրբոց,**  
**Սրբութիւն երանելեաց,**  
**Ուղղութիւն մոլորելոց,**  
**Հոտ (լս.՝ Իիւթ) անոյշ խնդրողացն զփրկութիւն,**  
**Սանդուխք ելողացն ի յերկինս:**  
**Կոչեցաւ անուն նորա Յիսուս:**

*Իսկ արժանաւորութիւն անուանս այս բազմապատիկ է: Քանզի է յաւիտենից աւրհնեալ: Ի հնոցն կանխաւ աւրինակեալ, այսինքն՝ ի Յեսուայ, ի մարգարէիցն ցանկացեալ: Ըստ Եսայայ, որ ասէ. «Անուն քո ի բաղձանս հոգւոյ» (հմմտ. Ես. ԻԶ 13): Ի սրբոց հարցն (կրկ.՝ հարցն) մարգարէացեալ: Քանզի ասեն վարդապետք. «Քաղցր անունն Յիսուս մարգարէացեալ եղև բերանով Դաւթի և Ամբակումայ»: «Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց» (Սաղմ. ԺԷ 48): «Ես ի Տէր յուսացայ» (Սաղմ. Լ 8)՝ յԱստուած Յիսուս իմ: ՅԱստուծոյ անուանեալ, որպէս ասէ առաքեալ. «Շնորհեաց նմա անուն, որ ի վեր է քան զամենայն անուն» (Փիլիպ. Բ 9): Ի հրեշտակէն կանխաւ աւետարանեալ. ըստ Ղուկասու, որ ասէ. «Կոչեցցես զանուն նորա Յիսուս» (Ա 31): Յերանուհւոյ Կուսէն քարոզեալ. ըստ այնմ, որ ասէ. «Սուրբ է անուն նորա» (Ա 49): Յառաքելոցն պատուեալ. ըստ այնմ, որ ասէ Գործոցն. «Գնային առաքեալքն յերես[աց ատենին], զի վասն անուան Տեառն արժանի եղեն»*

**47բ** *նախատանաց» (Գործք Ե 41): Ի մարտիրոսացն վկայեալ, // զի վասն անուանս այսորիկ չարչարեցան: Ի խոստովանողացն գովեալ. ըստ սաղմոսին, որ ասէ. «Գովեցէք մանկունք զՏէր» (Սաղմ. ԾԺԲ 1): Եւ դարձեալ. «Յարևելից մինչև ի մուտս արևու գովեալ է անուն Տեառն» (Սաղմ. ԾԺԲ 3): Ի սուրբ կուսանացն նախաճաշ կեալ, ուստի ասէ Երգս Երգոցն. «Եւղ թափեալ է անուն քո» (Երգ. Ա 2): Զի Յիսուս անունն մեղր է ի բերանս, քաղցր երգ ի լսելիս, զուարճութիւն ի սիրտս: Յամենայն սրբոց բարձրացեալ. ըստ սաղմոսին, որ ասէ. «Մեծ արարէք զՏէր իւնև, և բարձր արարէք զանուն նորա» (Սաղմ. ԼԳ 4): Եւ Պետրոս ի Գործս Առաքելոցն ասէ. «Ո՛չ է այլ անուն ի վերայ երկրի, որով պարտ է մեզ կեալ» (Գործք Դ 12): Այսքան»:*

<sup>1</sup> B առցէ



ձախակողմն<sup>1</sup>՝ վասն փեծաղանն<sup>2</sup> հովութեան: Արդ՝ աւրէնքն պիղծ համարէին, ուր [ի] մեռեալն մերձենայր, վասնզի այսչափ յորովայնի մաւրն մեռեալ կայր արուև կամ էգն: Պիղծ համարեր<sup>3</sup> մայրն, և ի ծնանելն, ըստ չափու աւուրցն, զմեռեալն կրելով՝ սրբութիւն պահէր:

ՈԿ 46բ Մեկնէ զբանս զայս Յոհան Ոսկեբերան[ն]՝ ասելով. «Զի թէպէտև ո՛չ էր սերմ առեալ Կոյսն, այլ // անհնար էր զաւրինաւքն անցանել մաքուրն և անաղտն յամենայնի, որ ըստ աւրինացն և ի վեր քան զաւրէնսն սուրբ էր, քանզի Հոգին Սուրբ էր մաքրիչ և սպասաւոր անարատ ծննդեանն»: Արդ՝ ո՛չ էր նա ընդ հարկաւ աւրինացն, բայց զի մի՛ երևեսցի նա քակտիչ ի սկզբան աւրինացն: Վասն այնորիկ յանձն առնու նա<sup>4</sup> զսրբութիւն աւրինացն, զի այս<sup>5</sup> յայտ է ի բազմաց, եթէ անսերմ և առանց արեան է ծնունդ նորա: Վասն որոյ մնայ զաւուրս քառասուն անդ, ուր էր ի Բեթղեէմ, և ապա գնայ<sup>6</sup> յերուսաղէմ ի տաճարն՝ ըստ Ղուկայ Աւետարանին: Զի որպէս թլփատեցաւ, նոյնպէս և Կուսին<sup>7</sup> մարմնովն զսրբութիւն պահեաց: Արդ՝ որպէս թլփատեցաւ Քրիստոս վասն մեր հոգևոր թլփատութիւն<sup>8</sup>՝ ի բաց դնելով զծննդեանն ծածկութիւն<sup>9</sup> մեր, նոյնպէս և սրբեցաւ վասն զմեզ սրբելոյ:

Ածին զնա յերուսաղէմ՝ յանդիման լինել Տեառն (Բ 22):

ՍՏ 47ա Չոգաւ յերուսաղէմ վասն ի խաղաղութիւն<sup>10</sup> զմեզ մուծանել<sup>11</sup> ի քաղաքն, յորում եմուտ Քրիստոս յաւրինակ<sup>12</sup> աշխարհիս: Ի տաճարն եմուտ վասն ի վերին խորանսն<sup>13</sup> բնակեցուցանելոյ զմեզ: Ընծայեցաւ վասն զմեզ ընծայեցուցանելոյ Աստուծոյ Հաւր, // քանզի ընդ գլխոյն ընծայեցաք մեք<sup>14</sup> անդամք նորա: Մատեաւ առաջի Հաւր ըստ մարգարէութեանն Եսայեայ, եթէ՝ «Մատեաւ առաջի նորա իբրև զմանուկ ի յոստին երկրէ» (հմտ. Ես. ԾԳ 2): Ի

<sup>1</sup> B Զ (80) աւրն ի ձախակողմանն

<sup>2</sup> B փայծեղանն

<sup>3</sup> B համարեալ էր

<sup>4</sup> B չիք նա

<sup>5</sup> B չիք այս

<sup>6</sup> B գնաց

<sup>7</sup> B Կոյսն

<sup>8</sup> B թլփատութեամբ

<sup>9</sup> B ծածկոյթն

<sup>10</sup> B խաղաղութեան *փխ* ի խաղաղութիւն

<sup>11</sup> B մուծանելոյ

<sup>12</sup> B աւրինակ

<sup>13</sup> B խորանն

<sup>14</sup> B և մեք

Կոուսէն ասեն, զի զաւտարացեալքս և ի<sup>1</sup> դիպահոջ կացեալքս առաջի Աստուծոյ մատուցանիցէ: ԶԱղամայ մարմինս<sup>2</sup> էառ Քրիստոս, և Հաւր յանդիման արար:

Որպէս և<sup>3</sup> գրեալ է յաւրէնս Տեառն, թէ՛ Ամենայն արու, որ բանայ զարզանդ սուրբ, Տեառն կոչեսցի (Բ 23):

ԻԳ Այսինքն՝ առաջին ծնունդն, որ է անդրանիկ: Եւ ո՞ւր եղան այս աւրէնք: Ի ժամանակին իբրև եհար զանդրանիկսն եգիպտացոց, ասաց Տէր. «Իմ են ամենայն անդրանիկքս<sup>4</sup> եգիպտացոց<sup>5</sup>» (Իմմտ. Ելք ԺԲ 12, 29, ԺԳ 2): Նոյնպէս սրբեցան Աստուծոյ անդրանիկքն Իսրայելի: Իբրև ո՛չ կամեցան<sup>6</sup> տալ ժողովուրդն<sup>7</sup> զանդրանիկսն առ Տէր փոխանակ անդրանկացն Իսրայելի զորդիսն Ղևեայ: Եւ ի թուել[ն] զնոսա պակաս գտան որդիքն Ղևեայ քան զորդիսն Իսրայելի: Եւ վասն այսորիկ հարկեցան զերկրամեանն անդրանիկքն Իսրայելի տալ քահանայիցն:

ԲԴ. Զի՛ «Զի՛ք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ իգի, զի ամենեքին<sup>8</sup> դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» (Գաղատ. Գ 27-28):

Տալ պատարագ ըստ ասելոյն<sup>9</sup> յաւրէնս Տեառն՝ զոյգս տատարակաց կամ երկու ձագք<sup>10</sup> աղաւնեաց (Բ 24):

ԻԿ. Եղան այս աւրէնք ո՛չ յատուկ որոշել պատարագ Տեառն տատարակ և աղաւնի, // այլ սկսեալ ի զուարակէն իջանէ մինչև ի տատարակ և յաղաւնի վասն աղքատութեան նոցա: Զի որոյ<sup>11</sup> ո՛չ իցէ զուարակ կամ խոյ կամ նոխազ, մատուցէ պատարագ տատարակ կամ աղաւնի: Արդ՝ Տեառն մերոյ մատուցան աղաւնիք վասն աղքատութեան[ն], սակայն ո՛չ առանց խորհրդեան: Վասնզի զնմանն մատուցանէր զանմեղն և զողջախոհն: Դարձեալ. զերկնայինն և զերկրայինս<sup>12</sup>, զի թէպէտև ծանր և վայրաբեր է մարմինն, ամբառնայ ընդ յաւրս<sup>13</sup> և անուանին թռչունք երկնից:

<sup>1</sup> A սրբ.՝ զի

<sup>2</sup> B մեղապարտ մարմինս

<sup>3</sup> B չէք և

<sup>4</sup> B անդրանիկքդ

<sup>5</sup> B Իսրայելացոց փոխանակ զի հարի ես զանդրանիկն եգիպտացոց

<sup>6</sup> B կամեցաւ

<sup>7</sup> B ժողովուրդսն

<sup>8</sup> B ամենեքեան

<sup>9</sup> B ասացելոյն

<sup>10</sup> B ձագս

<sup>11</sup> B ուր

<sup>12</sup> B զերկրայինն

<sup>13</sup> B աւրս

Նմանապէս մարդ, զուգութեամբ հոգոյ և մարմնոյ, պատարագել Տեառն:

ԿԲ Տատրակք ողջախոհութեան նշանակք են, ըստ որում բնաւորեալ են, իսկ աղաւնիք[ն]՝ միամտութեան: Վասն այնորիկ տատրակք, զի ըստ հոգւոյն մարդկան ողջախոհութեան ունէին նշանակք, իսկ աղաւնիքն<sup>1</sup>՝ ըստ մարմնոյ միամտութեան ի Քրիստոս:

ԲՂ Միաբանեալ ասի հոգւով և մարմնով, քանզի երկուքումքն<sup>2</sup>՝ զոյգս տատրակաց[ն] և աղաւնեացն: Բայց յայտ են պատարագ ընդունելի և հաճոյ Աստուծոյ, նաևս՝ արանց և կանանց յանդիման լինել երեսացն Աստուծոյ իւրով պատարագաւն:

Ստ. Ինքն մատուցանէր և ինքն ընդունէր ընդ Հաւր և ընդ Հոգւոյն Սրբոյ: Զնոյն և Քրիստոս կատարեաց, որ զրոյն է լուծիչ և կատարիչ հոգւոյն, սրբութեան և մաքրութեան, և քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ, զոր Աստուած հաստատեաց և ո՛չ 48ա մարդ: // Զի մեք զորդեգրութիւն ժառանգութիւն<sup>3</sup> հրաւիրելոցն ի Քրիստոս առցուք, որպէս խոստումնն է: Յաղագս այնորիկ տնաւրինեցաւ ի կնոջէ և եմուտ ընդ աւրինաւք մարմնոյ: Եղեալ անդրանիկ՝ ի բազում եղբարս ընծայեցաւ ի տաճարին, զի մեք հաղորդեսցուք նորա աստուածութեանն ըստ աճման հաւատոցն:

ԿԲ. Արդ՝ զի՞նչ յայտնեն տատրակքն և աղաւնիքն: Ո՛չ ապաքէն մինն քաղցրախաւս է ի հաւս վայրենիս, իսկ միւսն՝ հեզ և հանդարտ<sup>4</sup>: Այսպիսի ինչ եղև առ մեզ Տէրն մեր և Փրկիչն: Քանզի զկատարեալ հեզութիւնն ունելով<sup>5</sup> զաղաւնոյ՝ նոյնպէս և զաւրինակ քաղցրախաւս տատրակի հաւանեցոյց [զ]տիեզերս բարեձայնութեամբ, և լնու զիւր այգին, այսինքն՝ զմեզ զհաւատացեալս: Քանզի գրեալ է յԵրգս Երգոցն, թէ՛ «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի<sup>6</sup> մերում» (Երգ. Բ 12): Վասնզի խաւսեցաւ ընդ մեզ աստուծային, աւետարանական և փրկական քարոզութեամբն:

Եւ ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անունն էր Սիմէոն (Բ 25)<sup>7</sup>:

<sup>1</sup> Բ աղաւնիքն

<sup>2</sup> Բ երկուքումքն

<sup>3</sup> Բ ժառանգութեան

<sup>4</sup> Բ հանդարտ

<sup>5</sup> Բ ունելով

<sup>6</sup> Բ յերկրիս

<sup>7</sup> Բ շարունակվում է (էջ 48բ). «Այլ ի նախնի ծնաւդաց ո՛չ առնէ յիշատակ, եթէ ո՞ւմ որդի և յո՞ր ազգէ: Վասնզի սուրբքն ի յառաքինութենէ անձանց գովին և ո՛չ յարենէ, զոր գիշեր և հեշտութիւն նշանակէ: Այլ որպէս Նոյ և Յոբ և Դանիէլ ի Հոգւոյն գրին և յաստուածպաշտութենէն եղեն անուանիք, նոյնպէս և ծերու-

- Իգ. Իսկ որք ի ժամանակաց անտի Պտղոմեայ կամիցեն զնա, իբրու եթէ մի ի թարգմանչաց անտի էր և սա, և ասաց ընդդէմ Եսայեայ, եթէ ո՛չ է հնար<sup>1</sup> կուսի ծնանել<sup>2</sup>:
- ԻԳ. Ո՛չ է ի դէպ այս: Զի<sup>3</sup> ամենայն ոք, որ յաստուածային խորհուրդն թերահաւատեաց, պատժեցաւ և ո՛չ պատուեցաւ<sup>4</sup>: Արդ<sup>5</sup>՝ աւետարանիչն բառնայ զայս կարծիս<sup>6</sup>.

էր<sup>7</sup> արդար և երկեղած<sup>8</sup> յԱստուծոյ<sup>9</sup> (Բ 25):

- Բղ. Զի<sup>10</sup> ուր երկիր[ւ]ղ Տեառն է, անդ պահպանութիւն պատուիրա-  
48բ նացն Աստուծոյ է // և հոգւոյ և մարմնոյ մաքրութիւն և մերժումն  
ամենայն չարեաց:

Արդար (Բ 25):

- Իգ. Ըստ աւերինացն: Դարձեալ. արդար<sup>11</sup> յամենայն<sup>12</sup> առաքինու-  
թիւն<sup>13</sup>, և Հոգով<sup>14</sup> լցեալ, բարեպաշտաւն և երկիր[ւ]ղած յԱստու-  
ծոյ:

Եւ ակն ունէր մխիթարութեանն Իսրայելի (Բ 25):

նին Սիմէոն: Այլ ոմանք ասեն զսա որդի Յեսուայ Յովսեփեկանց քահանային: Եւ ոմանք ասեն, եթէ եղբայր է Եղիազարայ այն, որ յիշէ Մաթէոս, եթէ՝ «Աքիս ծնաւ զԵղիազար և զեղբարս նորա» (հմմտ. Սատթ. Ա 14): Այլ ստուգեալ է, թէ յՀՐ (72) թարգմանչացն էր, զոր Պտղոմէոս թարգմանել ետ զամենայն Սուրբ Գիրս յեբրայեցոց լեզուէն ի յունաց լեզուն: Եւ ի թարգմանելն զԵսայի մարգարէն, եկեալ յայն տեղին, որ ասէ. «Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ» (Ես. Է 14), և վերացուցեալ զգրիչն յոգոց եհան և ասէ. «Երանի աչացն այն, որ նայի ի կուսածին մանուկն, և գրկացն, որ բառնայ զնա»: Եւ Հոգին Սուրբ, որ կայր ի վերայ թարգմանութեանն, ասաց նմա մի՛ տեսանել զմահ, մինչև տեսցես զաւծեալն Տեառն»:

<sup>1</sup> Եւ ոչ որպէս ասեն ոմանք, թէ թերահաւատեցաւ, թէ անհնարին է *փիս* Իսկ որք ի ժամանակաց... Հնար

<sup>2</sup> Ե ծնանիլ: Եւ

<sup>3</sup> Ե նախ զի

<sup>4</sup> Ե պատուեցաւ որպէս զԶաքարիա

<sup>5</sup> Ե երկրորդ զի *փիս* արդ

<sup>6</sup> Ե կարծիս ասելով

<sup>7</sup> Ե և էր այրն այն

<sup>8</sup> Ե երկիւղած

<sup>9</sup> Ե *Այնուհետև շարունակում է (էջ 48 բ). «Այլ Այրն ասելով՝ ցուցանէ, թէ վարեալ էր վարուք մարդկան ըստ ուղիղ բանութեանն, այսինքն բանական մասն հոգւոյն տիրեալ էր ցասման և ցանկութեանն: Դարձեալ. այլ զայն ասէ, որ զաստուածային կերպարանն գտիրական պատկերն, զսկզբնատպի գեղեցկութեան նկարն, զթագաւորական կնիքն, ներս ի յինքն անսխալապէս պահեալ ունի»:*

<sup>10</sup> Ե իսկ *փիս* զի

<sup>11</sup> Ե արդար զայն ասէ, որ

<sup>12</sup> Ե զամենայն պատուիրանքն աստուածաղիբ պահեալ է և ի ծայր ամենայն

<sup>13</sup> Ե առաքինութեան ժամանեալ

<sup>14</sup> Ե Հոգովն Աստուծոյ

Իգ. Արդ՝<sup>1</sup> արդարոցն դասքն ծանեան զխորհուրդ գալստեանն<sup>2</sup> Քրիստոսի, թէ բնակեացէ<sup>3</sup> Աստուած<sup>4</sup> ընդ մարդկան<sup>5</sup>, և զանէծս դատապարտութեանն բարձցէ<sup>6</sup> իւրով մարմնովն: Բորբոքեցան<sup>7</sup> մեծ<sup>8</sup> ցանկութեամբ՝ տեսանելով զնա<sup>9</sup> զանտեսանելին հրեշտակաց յերկրի երևեալ, դիւրամերձ մարդկան աստուածային յայտնութեան<sup>10</sup>, որով բառնալոյ<sup>11</sup> էր զսուգ և զտրտմութիւն, որ սրբէր զարտաւար յերեսաց [յ]ամենայն երկրէ: Այսպէս բարեգործեալ մխիթարէր<sup>12</sup> զԻսրայէլ և զամենայն հեթանոսս:

Եւ Հոգին Սուրբ էր ի նմա (Բ 25):

ԲՂ. Զի ուր Հոգի Տեառն<sup>13</sup>, անդ ազատութիւն և պայծառութիւն և<sup>14</sup> տեսութիւն<sup>15</sup> մեծամեծացն Աստուծոյ, որք այնոցիկ են ցանկացեալ: Եւ Սիմէոն բաց<sup>16</sup> աչաւք տեսանէր իբրև ընդ հայելի զիմանալի զլոյսն առաւել բացափայլ ճառագայթիւք քան զարեգակն:

Եւ էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն Սրբոյ մի՛ տեսանել զմահ, մինչև տեսցէ զաւծեալն Տեառն (Բ 26):

ԻԳ. Այս բանքս հաւասար առնեն զսա մարգարէիցն, և<sup>17</sup> մեծագու-

49ա նի արժանացաւ շնորհի: Զի որում // նոքա ցանկացան և ո՛չ տեսին, սա ցանկացաւ և ետես: Որպէս Տէրն առ աշակերտսն ասաց. «Զեր երանի աչացդ՝ զոր<sup>18</sup> տեսանեն և ականջացդ՝ զոր<sup>19</sup> լսեն, զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զիս և ո՛չ տես-

<sup>1</sup> Բ **չիք** արդ

<sup>2</sup> Բ գալստեանն և մարդեղութեանն

<sup>3</sup> Բ **չիք** բնակեացէ

<sup>4</sup> Բ Աստուած յերկրի երևեացի և

<sup>5</sup> Բ մարդկան շրջեացի

<sup>6</sup> Բ բառնայ զանէծս տրտմութեան մարդկան և սրբեաց զարտաւար յամենայն երեսաց մարդկան **փիս** զանէծս բարձցէ

<sup>7</sup> Բ իսկ սուրբքն բորբոքեցան

<sup>8</sup> Բ մեծաւ

<sup>9</sup> Բ տեսանել **փիս** տեսանելով զնա

<sup>10</sup> Բ յայտնութիւնն

<sup>11</sup> Բ բառնալոյ

<sup>12</sup> Բ մխիթարեալ

<sup>13</sup> Բ Տեառն է

<sup>14</sup> Բ է և

<sup>15</sup> Բ **չիք** տեսութիւն

<sup>16</sup> Բ Հոգւովն Սրբով իմանայր զնա Փրկիչ աշխարհի և արձակիչ կապելոց, և բաց

<sup>17</sup> Բ և առաւել ևս

<sup>18</sup> Բ զի

<sup>19</sup> Բ զի

սին» (Մատթ. ԺԳ 16-17): Արդ՝ զայս յայտնեաց Հոգին Սուրբ, որ էր ի սմա<sup>1</sup>, և նա ցանկացաւ տեսանել զնա մարմնով: Եւ վասնզի մերձ էր ժամանակն, վասն այնորիկ հաճեցաւ լնուլ զցանկութիւն արդարոյն: Եւ հրամանն Աստուծոյ կապեաց զբնութիւն մահկանացուիս<sup>2</sup>, զի մի՛ լուծցէ մահ:

**ԵՓ** Անց մահ յայս կոյս [և] յայն կոյս, և ի ծերն ո՛չ մերձենայր իբր արձան եղեալ ի ճանապարհին: Թէ որ փոխեսցէ զնա, նա է, որ գալոցն էր<sup>3</sup>, որ զբնութիւնս արար անմահ և վասն անհնազանդութեանն ելոյծ:

**Այլ.** Նոյն զաւրութիւնն արձանացոյց զսա ընդ[դ]էմ մահու մնալ այնորիկ, որ բառնալոց էր<sup>4</sup> զթագաւորութիւն մահու: Քանզի այս է մխիթարութիւն Իսրայելի և ամենեցուն, որ հաւատով կոչեցան որդիք Աբրահամու<sup>5</sup>:

**Եւ**<sup>6</sup> ակն ունէր մխիթարութեանն Իսրայելի<sup>7</sup> (Բ 25):

Զի զմխիթարութիւն ժողովրդեանն ընդունէր նա և զսահմանն<sup>8</sup> Իսրայելի պահէր:

**ԿՐ** Ծանալթ առնէր ամենեցուն, որք յերուսաղէմ էին, զոր յառաջագոյն քարոզէր Աստուած ի ձեռն սրբոց մարգարէիցն, որպէսզի եղիցի յայտնի ըստ ժամանակաց Որդին<sup>9</sup> և կեցուցէ զկորուսեալսն:

**49ք** // Ասէ մարգարէիւն. «Մերձեալ է<sup>10</sup> փրկութիւն իմ, և ողորմութիւն իմ յայտնի եղիցի» (հմմտ. Ես. ԾԶ 1), իսկ փրկութիւն իմ որպէս ջահ բորբոքեսցի<sup>11</sup>: Քանզի արդարութիւն և ողորմութիւն Քրիստոս է, և նովաւ ապրեցաք<sup>12</sup> և գտաք զողորմութիւն, և լուսաւորեցաք ի խաւարային ախտիցն ի ձեռն հաւատոցն, որ ի նա:

**Եւ եկն Հոգովն**<sup>13</sup> ի տաճարն (Բ 27):

<sup>1</sup> Ե նմա

<sup>2</sup> Ե մահկանացուին

<sup>3</sup> Ե է

<sup>4</sup> Ե բառնայ *փխ* բառնալոց էր

<sup>5</sup> Ե զոր ոմանք Շ (500) ամաց ասեն զսա և այլք ՆԶ (480): Այլ ստուգեալ է ի սրբոցն, եթէ ՅնԴ (344) ամաց էր քահանայն Սիմէոն *փխ* Քանզի այս է մխիթարութիւն... Աբրահամու

<sup>6</sup> Ե *չիք* և

<sup>7</sup> Ե Երուսաղեմի

<sup>8</sup> Ե զսահմանս

<sup>9</sup> Ե Որդին Աստուծոյ

<sup>10</sup> Ե է վաղվաղակի

<sup>11</sup> Ե վառեսցի

<sup>12</sup> Ե արդարացաք

<sup>13</sup> Ե Հոգովն

Կղ.(բղ.) Հոգովն գայր ի տաճարն ընդառաջ աւծելոյն, Հոգովն գմեծութիւնն աստուածութեանն ի փոքր ժամու փառաւորէր, Հոգով իմանայր զնա Տէր և Փրկիչ աշխարհի: Այսպիսի էր այրս այս՝ Հոգով լցեալ և բարեպաշտութեամբ կատարեալ, որ զԱստուած արժանի եղև տեսանել, զոր ո՛չ ոք ի մարդկանէ ետես և ո՛չ տեսանել կարող է:

ԻԳ Արդ՝ իբրև եկն լրումն խորհրդոյն և աւարտումն աւետեացն, ընկալաւ հրաման ի Հոգւոյն<sup>1</sup> ի նմին ժամու գալ ի տաճարն, զի տեսող<sup>2</sup> և վկայ լիցի ճշմարտութեանն առ ամենեսին, թէ ո՞վ այն իցէ, որ երևեցաւ տղայ մարմնով:

**Եկն Հոգովն ի տաճարն (Բ 27):**

Ստ. Այսինքն՝ Հոգին ասաց նմա գալ ի տաճարն<sup>3</sup>: Իսկ յորժամ եկն Քրիստոս<sup>4</sup> ի դուռն տաճարին, որ յարևելից, զոր Եզեկիէլ ասէր, եթէ՝ «Դուռնդ այդ փակեալ կա[ց]ցէ մինչև մտցէ և ելցէ Տէր, այն, որ կայ և մնայ» (հմմտ. Եզեկ. ԽԴ 2): Արդ՝ եկն Սիմէոն<sup>5</sup> Հոգովն յայն դուռն և ապա ի մտանելն ի տաճարն՝ գոչեաց դուռնն և ինքնին բացաւ: Ելից ձայն գթաղաքն, որ նշանակէր գթարողու-

50ա թիւնն Քրիստոսի, // և զղորդումն, զի կուռք, որ էին ի քաղաքն, կործանեցան:

**Իբրև ածին ծնաւղքն զմանուկն (Բ 27):**

ԻԳ Ծնաւղ<sup>6</sup> ո՛չ միայն [գ]Մարիամ<sup>7</sup>, այլև [գ]Յովսէփ, որպէս<sup>8</sup> կարծէր ի բազմաց: Զի թէպէտ ո՛չ էր նպաստ գարմանալ ի ծննդեանն, բայց սպասաւոր եղև այնպիսի ծննդեան և<sup>9</sup> ելից զՀաւր վերակացութիւն<sup>10</sup>, հայր<sup>11</sup> անուանէ զնա:

**Առնել ըստ սովորութեան աւրինացն ի վերայ նորա (Բ 27):**

<sup>1</sup> B Հոգւոյն Սրբոյ

<sup>2</sup> B տեսաւ

<sup>3</sup> B *չիք* Այսինքն... տաճարն

<sup>4</sup> B Յիսուս

<sup>5</sup> A Սիմէոն

<sup>6</sup> A ծնող

<sup>7</sup> B գՄարիամ ասէ

<sup>8</sup> B որ

<sup>9</sup> B այլ *փի* բայց սպասաւոր... և

<sup>10</sup> B վերակացութիւն, վասն այնորիկ

<sup>11</sup> A նախ՝ հայրն, ապա՝ ն-ն գրչի ձեռքով սրբագրած-հանած

Այսինքն<sup>1</sup> կացուցանել զմանուկն առաջի Տեառն: Եւ քահանային մատուցանել զնուէրս պատարագացն և հեղուլ զարիւնն առ յատակ սեղանոյն, և տանել ի ներս ի սրբութիւնն և սրսկել զսրբեցելաւքն<sup>2</sup>:

Նա<sup>3</sup> առ ընկալաւ զնա ի գիրկս իւր (Բ 28):

ԲՂ Ձի, որ Հոգովն որպէս<sup>4</sup> յառաջագոյն շարժէր, նոյն և զՈրդին ի գիրկս ընդունէր: Նաև Հայր ո՛չ է<sup>5</sup> ի բացէ<sup>6</sup>, զի ուր Հոգին Սուրբ<sup>7</sup> և Որդին Միածին, անդ<sup>8</sup> և Հայր[ն] ամենակալ: Ձի, յորժամ զմինն յերիցն իմանաս, զԵրրորդութիւն իսկութեամբ ստուգես հաւատով: Արդ՝ նախքան զաւրինացն զսրբութիւնն<sup>9</sup> ծանեալ զսրբէիցն<sup>10</sup> [զ]սրբարարն և զսրբութիւն սրբոցն<sup>11</sup> անհամեմատ յարարածոց, և զանսկիզբն Բանն ի ծոցոյ Հաւր առաքեալ տղայապէս ի գիրկս<sup>12</sup> ընդունէր զէակիցն Հաւր և Հոգւոյն Սրբոյ: Որպէս մանուկ ի գիրկս<sup>13</sup> ընդունէր զԱրարիչն երկնի և երկրի: Քրոբէական<sup>14</sup> աթոռ յերկրի երևեցան գիրկք<sup>15</sup> ծերունոյն<sup>16</sup> Սիմէոնի, ի գիրկս նորա հանգչի ի բիւրոց<sup>17</sup> հրեշտակաց վերաւհնեալն:

50բ // Ձոր ո՛չ տանի երկինք և երկիր ի գիրկս ծերոյն պարփակի, որ զերկինս և զերկիր ընու, ի գիրկս<sup>18</sup> նորա ժողովի կամաւորապէս: Ո՛ր փափագելի գոգոյն, որ զլոյսն աննուագելի<sup>19</sup> ունէր յինքեան, որ զանհասն քերովբէից և զՏէրն փառաց և զիշխանն կենաց<sup>20</sup> և մահու և զթագաւորն թագաւորաց ի գիրկս բազմեալ տեսանէր:

<sup>1</sup> B *չիք* Առնել ըստ սովորութեան... Այսինքն

<sup>2</sup> B զսրբացելովքն

<sup>3</sup> B այսպէս և նա

<sup>4</sup> A որ՝ վրան համառոտագրման նշան, B ի Հոգւոյն Աստուծոյ *փիս* Հոգովն որպէս

<sup>5</sup> B էր

<sup>6</sup> B բացեայ

<sup>7</sup> B Սուրբ է

<sup>8</sup> B անդ է

<sup>9</sup> B զաւրինաց սրբութիւնն

<sup>10</sup> B զսրովբէից

<sup>11</sup> B սրսոյն

<sup>12</sup> B գիրկս իւր

<sup>13</sup> B գիրկս իւր

<sup>14</sup> B քրովբէական

<sup>15</sup> B երևեցաւ գիրկ

<sup>16</sup> B ծերոյն

<sup>17</sup> B բիւրուց

<sup>18</sup> B *չիք* ծերոյն պարփակի... գիրկս

<sup>19</sup> A աննվագելի

<sup>20</sup> B կենդանեաց



*Ո՛վ խորք մեծութեան և մարդասիրութեանն Աստուծոյ, որ վասն մեր աղքատացաւ, զի զմեզ ճոխացուցէ յիւրում մեծութեանն<sup>1</sup>:*

**Եւ ակրհնեաց զԱստուած** (Բ 28):

**ԲՂ.** *Որ առաքեաց զՄիածինն<sup>2</sup> ի փրկութիւն աշխարհի: Ակրհնեաց զՀայրն ամենակալ, որ գթացաւ ի<sup>3</sup> ստեղծուածս՝ կեցուցանել զազգս մարդկան ի մեղաց: Ակրհնեաց զԲանն<sup>4</sup> Աստուած, որ ծագեաց զլոյս մեծ մեղաւք խաւարելոցս ըստ յանցուածոյն<sup>5</sup> Ադամայ: Ակրհնեաց զէնն և զէրն և զերեւելն Աստուած բարերար: Զի հաճեցաւ ընդ մեզ Հայրն բարերար, և Հոգին Սուրբ գթացաւ ի մեզ խնամովն, որ են<sup>6</sup>: Եւ Որդին Միածին մարդասէր կերպարանաւք գտաւ<sup>7</sup> որպէս մարդ, և աստուածապէս հրաշագործեաց ի վեր քան զմարդ ի միում աստուածութեանն, որ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին: Եւ զբազմաստուածութիւնն արտաքս մերժեաց, զի միում աստուածութեանն զփառս և զպատիւ և զակրհնութիւն ընծայեցուցուք<sup>8</sup>: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս հաւատասցուք, յորմէ ամենայն արարածք:*

**Իգ.** *Գոհանայ զԱստուծոյ և ակրհնէ զամենակեցոյց բնութիւնն, որ այնպէս խնամաւք ապրեցոյց զազգս մարդկան:*

**51ա // Արդ՝ արձակեա՛ զԺառայս քո, Տէ՛ր** (Բ 29):

*Արդ՝ արձակումն խնդրէ երիս<sup>9</sup> յամենեցունց Տեառնէն: Մի[ն]՝ յաւրինացն յաւետարանն, երկրորդ՝ ի կապանաց մեղաց<sup>10</sup> յարդարութիւն, երրորդ՝ ի մահկանացուացս յանմահականսն<sup>11</sup>: Արձակեայ Հայր ամենակալ յազատութիւն<sup>12</sup> փառաց Որդւոյ քո: Լոյծ զկապանս դատապարտութեան տնաւրէնութեամբ<sup>13</sup> քո, Աստուած Բանդ միացեալ ի մարմնի: Նորոգեայ զհնութիւն հոգոյ և մարմնոյ Սուրբ Հոգի, և մշտնջենաւոր պարգեւաւք լցո՛՛ ծննդեամբ*

<sup>1</sup> Ե յիւր մեծութիւնն

<sup>2</sup> Ե զՄիածինն իւր

<sup>3</sup> Ե յիւր

<sup>4</sup> Ե զբոլորիցն

<sup>5</sup> Ե յանցուածոյն

<sup>6</sup> Ե խնամով նորին

<sup>7</sup> Ե նախ՝ գթացաւ և գտաւ, ապա սրբազրված

<sup>8</sup> Ե ընծայեացուք

<sup>9</sup> Ե **չիք** երիս

<sup>10</sup> Ե **չիք** մեղաց

<sup>11</sup> Ե յանմահ կեանսն

<sup>12</sup> Ե ի ծառայութենէ ակրինացն յազատութիւն

<sup>13</sup> Ե տնաւրէնութեան

աւազանին<sup>1</sup> ի կեանս, որ ո՛չ շարժի և ո՛չ սասանի և ո՛չ գոյ հանումն կենդանութեան:

ՍՏ Արդ՝ ծերունին Սիմէոն<sup>2</sup> երեք հարիւր քառասունչորս ամ ապրեալ աւրինակ էր Ադամայ և դուստրն Փանուկելի<sup>3</sup>՝ Եւայի, որք աղաղակէին. «Արձակեա՛ զծառայքս քո փոխանակ Ադամայ և որք<sup>4</sup> ի դժոխս արգելեալ կային»: Սիմէոն<sup>5</sup> աւրինակ էր աւրինացն և մարգարէիցն<sup>6</sup>, և ի գալն Քրիստոսի լռեցին աւրէնքն և մարգարէքն: Ըստ առաքելոյ՝ «Լրումն աւրինացն Քրիստոս է» (հմմտ. 3ռոմ. ԺԳ 10):

Արձակեա՛ զիս ի խաղաղութիւն (հմմտ. Բ 29):

ԵՓ Շմաւոն և Մովսէս<sup>8</sup> արձակեցան ի խաղաղութիւն սիրով: Ձայս ասաց, զի ո՛չ ի սոսկ մանուկ նա էր, այլ Հոգւոյն աչաւք երևութացեալ զիմանալի հուր աստուածութեանն տեսանէր՝ միացեալ ընդ նորածին մանկանն: Արձակեա՞ ի դժուարակիր<sup>10</sup> մարմնոյս տաղկացեալ:

7 · Ս. Կունդ, Մեկն. Դուկասոս n (Բ 29):

51բ Ձի ստացաւ զբնութիւնս մեր արարչութեամբ, թէպէտ տղայ գոլով ի գիրկս բարձեալ կրի: // Ետես և գայն, զի զամենսին գնելոց էր նա ծառայս իւր արեամբ և խաչիւ:

ԵՓ Ձի աւրէնքն իբրև ծերացեալ ո՛չ զաւրեաց արդարացուցանել զորք: Ետես զճրի արդարացուցիչն և խնդրէր արձակիլ:

Ձի տեսին աչք իմ զփրկութիւն<sup>12</sup> (Բ 30):

Տեսանէր, որում սպասէին փրկութեան նորա արդարք և մարգարէք ի դարուց դարս<sup>13</sup>:

ԻԳ Ետես զփրկութիւնն, զոր կատարելոց էր:

Ոսկ. Ձայնէր, եթէ<sup>1</sup> յուրախութիւնս մեծ բերկրեսցուք: Ձի տեսի աչաւք իմովք զարքայն Քրիստոս՝ թագաւորեալ ի վերայ ամենայն

<sup>1</sup> B սուրբ աւազանին

<sup>2</sup> A Սիմէոն

<sup>3</sup> B Փանուկելի

<sup>4</sup> B որոց

<sup>5</sup> A Սիմէոն

<sup>6</sup> B Աննա՝ մարգարէիցն

<sup>7</sup> B արձակեա՛

<sup>8</sup> B Աննա *փի* Մովսէս

<sup>9</sup> B արդ՝ արձակեա՛

<sup>10</sup> A դժվարակիր

<sup>11</sup> B արդ՝ արձակեայ

<sup>12</sup> B *չիք* զփրկութիւն

<sup>13</sup> A «Տեսանէր... դարս» Հատվածը գրված է «Ձի տեսին աչք իմ զփրկութիւն» խորագրից առաջ

երկրի: Ես տեսի և հաւատացի: Տեսի, զոր մարգարէք և թագաւորք ցանկացան տեսանել և ո՛չ տեսին:

**Զոր<sup>2</sup> պատրաստեցեր** (Բ 31):

- ԵՓ Այլ, զի ասէ նմա սպասեսցեն հեթանոսք [զ]փրկութեան, զոր պատրաստեաց<sup>3</sup>:
- Կղ.(Կր) Քանզի յառաջագոյն պատրաստեալ էր խորհուրդն Քրիստոսի ի սկզբանէ աշխարհի և յայտնեցաւ յետին ժամանակս յաւիտենիս այսորիկ:

**Առաջի ամենայն ժողովրդոց** (Բ 31):

- ԲՂ Զի ազատութիւն ամենեցուն տուաւ<sup>4</sup> ի մեղաց: Վասնզի յաղաքս ամենայն ազգաց պատարագեցաւ, պէտք էին միայն ընծայել ի<sup>5</sup> հաւատս, և կենագործութիւն նորա առաջի ամենեցուն կայր պատրաստեալ:

**Լոյս [ի] յայտնութիւն հեթանոսաց** (Բ 32):

- ԲՂ Այսպէս Երրորդութեանն լոյս ծաւալեցաւ ի մեզ, որ լուսաւորէր զմարդիկ ի լոյս աստուածագիտութեան: Քարոզէր զլոյս մեծ հեթանոսաց, որ ի խաւարէ կռապաշտութեան ի լոյս հաւատոյ
- 52ա էած: Վասնզի լոյսն հեթանոս(//)աց ի Հաւրէ ծագեցաւ փրկական տնաւրէնութեամբն՝ արձակելով զհեթանոսս ի դից պաշտմանցն՝ մկրտելով զնոսս յանուն Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն: Պայծառութիւն հոգոց և լուծումն գիշերոյ մեղաց, և փոփոխումն վարուց ի հոգեւորսն, զի որ Հոգովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ:

- ԵՓ Եւ որպէս ասէ. «Հեռաւորք յիշեն<sup>6</sup> զիս» (Ձաք. Ժ 9): Վասնզի բազումք էին մոլորեալք, որ կոչեցան ի ձեռն Քրիստոսի, և ուխտ խաղաղութեան ընկալան յԱստուծոյ ի ձեռն հաւատոցն առ Քրիստոս: Զ[ը]նդանութեան<sup>7</sup> շնորհ[ս]ն սփռեալ՝ սերմանեաց ընդ ժողովուրդս ամենայն աստուածային աշակերտաւքն: Եւ ապա, որք հեռաւորք էին յԱստուծոյ, ըստ զթութեան մարգասիրին եղեն մերձաւորք: Վկայէ Պաւղոս, թէ՛ «Հեռաւորք երբեմն՝ այժմ մերձաւորք արեամբն Քրիստոսի» (հմմտ. Եփես. Բ 13): Պարծանս ունին զՔրիստոս, քանզի ասէ զաւրացուցէ զնոսս ի Տէր Աստուած

<sup>1</sup> Բ ձայնէ թէ

<sup>2</sup> Բ փրկութիւն զոր

<sup>3</sup> Բ զփրկութիւն, զոր պատրաստեցեր

<sup>4</sup> Ը տվաւ

<sup>5</sup> Բ չէք ի

<sup>6</sup> Բ յիշեսցեն

<sup>7</sup> Բ զընտրութեան

*իւրեանց: Եւ Դաւիթ՝ «Տէ՛ր, ի լոյս երեսաց քոց զնասցուք և յանուն քո ցնծասցուք զաւրհանապազ, և յարդարութեան քում բարձր եղիցուք, զի պարծանք զաւրութեանց մերոց դու ես, Տէ՛ր» (Սաղմ. 22 16-18): Եւ Երեմիայ՝ «Տէր զաւրութիւն իմ և աւգնական յաւուր չարէ՛<sup>1</sup> և ապաւէն: Առ քեզ հեթանոսք եկեսցեն ի ծագաց երկրէ և ասասցեն. Ջիւրդ ստացան հարքն մեր զսուտ կուռքն, որք ոչինչ էին աւգուտ» (*հմմտ.* Երեմ. ԺԶ 19):*

**Եւ փառք ժողովրդեան քում Իսրայելի (Բ 32):**

Բղ. 52բ. *Ջի նոցա էր արդարութիւնն<sup>2</sup> և աւրէնքն և աւետիսն: Ի նոցանէ և Քրիստոս ըստ մարմնոյ, որ ի վերայ ամենեցուն Տէր<sup>3</sup>, // աւրհանեալ յաւիտեանս. ամէն: Եւ մինչև ցայժմն յԻսրայելի<sup>4</sup> փառք քարոզի<sup>5</sup> ի հարցն և ի մարգարէիցն և յառաքելոցն, փոքր բանիւք զմեծամեծս քարոզէին<sup>6</sup> ի փոքր տղայումն:*

ԻԳ. *Ո՞վ քանի մեծ է կուրութիւն[ն] Իսրայելի, յորքա՞ն բարձրութենէ փառաց կողոպտեցին զանձինս, յորպիսի՞ աստուածային պատուոյ անկան թշուառացեալ<sup>7</sup>: Ջայս ետես Հոգւոյն ակամբն, զի աւրէնք[ն] և մարգարէք[ն] ցանկ խրատէին զԻսրայէղ, զի մի՛ կորուսցէ զփառսն՝ ասելով. «Դարձի՛ր Յակոբ, բուռն<sup>8</sup> հար զծագմանէ առաջին լուսոյ նորա<sup>9</sup>, և մի՛ տար զփառս քո այլում և զաւգուտն քո ազգի աւտարոտոյ» (Բարուք Դ 2-3): Սակայն նոքա ո՛չ կամեցան հաղորդել փառաց նորա, այլ թշնամիք և պատերազմողք եղեն ո՛չ նմա միայն, այլև մարգարէիցն, որ<sup>10</sup> քարոզէին զնա: Ըստ այնմ, թէ՛ «Խստապարանոցք և անթլփատք ականջիւք և սրտաւք<sup>11</sup>, դուք հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ կայք» (Գործք Է 51): Իսրայէղ արհամարհեաց զփառս նորա, բայց նա յայտնեցաւ փառաւք: Որք հաւատացին<sup>12</sup> նմա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, և նա անպարտ լիցի: Եւ նոքա անձամբ զանձինս դատապարտեցին<sup>13</sup>:*

<sup>1</sup> Բ չարի

<sup>2</sup> Բ որդէգրութիւն

<sup>3</sup> Բ Աստուած

<sup>4</sup> Բ Իսրայելի

<sup>5</sup> Բ քանգի

<sup>6</sup> Բ քարոզէր

<sup>7</sup> Բ թշուառացեալքն

<sup>8</sup> Բ և բուռն

<sup>9</sup> Բ լուսոյն *փի* լուսոյ նորա

<sup>10</sup> Բ որք

<sup>11</sup> Բ *զրփի* սրտիւք և ականջաւք

<sup>12</sup> Բ հաւատային

<sup>13</sup> Բ դատապարտեցեն

ԿՂ Սակայն ապրեալք և փառաւոր լինէին մնացորդք Իսրայելի ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: Եւ սկիզբն եղեն սուրբ<sup>1</sup> առաքեալքն, և պտուղ բարեփառութեամբ ընդհանուր<sup>2</sup> շրջափայլեցին ի ներքոյ երկնից:

**Եւ էին Հայր նորա<sup>3</sup> (Բ 33):**

Բայց զի<sup>4</sup>նչ պարտ է զՅովսէփ ասել<sup>4</sup>, որ ոչինչ խորհրդածու-  
53ա թիւն // ունէր ընդ նորայսն: Որպէսզի<sup>5</sup> մեք Հայր ասեմք զԱս-  
տուած և ո՛չ բնութեամբ, այլ գլթութեամբ և խնամածութեամբ<sup>6</sup> և  
սպասաւորութեամբ<sup>7</sup> մարմնոյն<sup>8</sup> Քրիստոսի և մաւր նորա Մարիա-  
մու<sup>9</sup>: Զի մի՛ ինչ<sup>10</sup> ի փրկական ծնունդն յարիցէ ինչ չարն<sup>11</sup>, այլ  
զի եղիցի<sup>12</sup> վկայ մարդեղութեանն և Մարիամայ մաքրութեանն,  
զի արդար կոչեցաւ ի հրէշտակէն (տե՛ս Մատթ. Ա 19):

**Եւ մայր նորա (Բ 33):**

Զի թէ՛ մայր նորա, որ ծնաւ և սնոյց, հիանայր, ո՞վ ոք ի  
մարդկանէ Համարձակեսցի ինչ իմանալ կամ<sup>13</sup> ասել: Զի ո՞վ գի-  
տաց զմիտս Տեառն կամ ո՞վ եղև նմա խորհրդակից, և ստուգեաց  
զխորհուրդ տնաւրէնութեան նորա և զանճառ խոնարհութիւն  
աւծելոյն: Վասն այսորիկ Աստուած միացաւ ի մարմնի, որպէսզի  
ապականելոցս մարմնով<sup>14</sup> զանապականութիւն շնորհեսցէ: Յա-  
ղազս այսորիկ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ. ընդ գե-  
րեալքս<sup>15</sup>՝ ազատեցուցիչն, ի գիրկս ծառային՝ թագաւորն փառաց,  
ի դժոխս՝ աւերողն<sup>16</sup> դժոխոց:

**Զարմացեալ ի վերայ բանիցն, զոր խաւսէին<sup>17</sup> զնմանէ (Բ 33):**

Ո՛ր զարմանալեացս, ո՞վ<sup>1</sup> ո՛չ սքանչասցի ի վերայ տնաւրէնու-  
թեան Բանին Աստուծոյ, զի ո՛չ իմանալ զաւրէ մարդկան միտք և

1 B **չեք** սուրբ  
2 A ընթանուր  
3 B Եւ էին Հայրն և մայր նորա զարմացեալք ի վերայ բանիցն, որ խաւսէին զնմանէ  
4 B Հայր ասել  
5 B այլ որպէս  
6 B խնամակալութեամբ  
7 B արարչագործութեամբ  
8 B նոյնպէս և զՅովսէփ սպասաւորութեամբ մարմնոյն  
9 B Մարիամու Հայր կոչէ աւետարանիչն  
10 B **չեք** ինչ  
11 B չար  
12 B լիցի  
13 B և  
14 B ապականեալ մարմնոյս  
15 B գերեալս  
16 A B աւերողն  
17 B որ խաւսէր

բան: Զի անքննելի է մարդեղութիւնն Քրիստոսի: Նաև ո՛չ հրեշտակացն է իմանալ[ի], թող թէ մեզ, որ բազմաչեայ քրորէիցն<sup>2</sup> անհասանելին է:

Իգ. Կարծէին թագաւորել նմա ի վերայ տանն Յակոբայ, որպէս 53բ Դաւիթ հայր նորա ըստ մարմնոյ: Իսկ զայն, թէ ան(//)բովանդակելի աստուածութիւնն միանայ ի նմա, անգիտանային նոքա: Քանզի այն էր պատշաճ ծածկել զինքն ի նոցանէ, զի կարող լիցին<sup>3</sup> բնակիլ ընդ նմա: Զի թէ գիտէին նոքա, թէ Աստուած ամենակալ է, զի ա՞րդ հանդուրժէին կալ առաջի նորա և հայել ի նա, և կաթնաջամբել<sup>4</sup>, և սնուցանել, և զխնամս տղայական կատարել: Ըստ աւետարանին, թէ՛ «էր բանն ծածկեալ յառաքելոցն, զի մի՛ գիտացեն» (ԺԸ 34): Արդ՝ յայտնեցաւ Սիմէոնի և Զաքարիայի հաւրն Յովհաննու, զի ո՛չ կալոց էին ի ժամանակաւ ընդ նմա, մի անգամ<sup>5</sup> տեսին և լցաւ ցանկութիւն նոցա:

Ոս. (յոհ) Կամ այն, զի ո՛չ ասաց նմա<sup>6</sup> հրեշտակն, թէ մեռանիցի, այլ եթէ՛ «Փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց» (Մատթ. Ա 21): Եւ աւրհնեաց զնոսա Սիմէոն զՄարիամ<sup>7</sup>:

ԲՂ Վասն հրաշափառ և<sup>8</sup> փրկական ծննդեանն: Արձանացուցեր

ՅՀ. Միածնաւդ զարիւն անասնոցն, որ մատչէին ի սրբութիւն[ս]ն: Դու ես շառաւեղ<sup>9</sup> յազգէն Յուդայ, պարծանք կուսից և մայր հաւատո[ց], լուծիչ երկանց Եւայի և ազատիչ նախնո[յն] քո հաւր: Քանզի ծնեալս ի քէն հանդերձեալ է մեռանիլ վասն մարդկան: Եւ ահա սպիք բեւեացն երևին ինձ ի ձեռս և յոտս նորա: Զոր Եսայի ասաց, թէ՛ «Նորա վիրաւքն բժշկեցաք ամենեքին» (Ես. ԾԳ 5-6):

ԿԲ Զի Կոյսն ո՛չ [է]առ յանձն զմարդկա[յի]ն բնութեան աւրէնս, զի կուսութեամբ ծնաւ և ո՛չ յառնէ, այլ ի Հոգւոյն Սրբոյ: Զի աւրհնութիւնն այն, որ յԱբրահամէ և ի հարցն, սահմանեցաւ ի 54ա նոսա, և ի նոցանէ ևս<sup>10</sup> սփռեցան ի հեթանոսս, որք // ընկալան և ո՛չ ապերախտ եղեն որպէս զԻսրայէլ, այլ վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած և զՅովսէփ:

<sup>1</sup> B ով ոք

<sup>2</sup> B քրորէիցն

<sup>3</sup> B լինիցին

<sup>4</sup> B կաթն ջամբել

<sup>5</sup> A անկամ

<sup>6</sup> B չիք նմա

<sup>7</sup> B չիք զՄարիամ

<sup>8</sup> B չիք և

<sup>9</sup> B շառաւիղ

<sup>10</sup> B չիք ևս

Բղ. *Զի վասն անճառ ծննդեանն եղև սպասաւոր և խնամածու: Եւ Ղուկաս թուէ զնա<sup>1</sup> յազգահամարսն:*

Ահա<sup>2</sup> սա կայ ի կանգնումն և ի գլորումն բազմաց ի մէջ Իսրայելի (Բ 34):

*Ի գլորումն հրէիցն եղև, զի գրեալ է, թէ՛ «Գթեցին նոքա առ վիմին» (Յոնն. Թ 32): Եւ որ հարցի ընդ վիմիս այսմիկ<sup>3</sup>, խորտակեացի, և ի վերայ ուրուք թէ անկցի՝ հոսեաց զնա: Եւ ի կանգնումն հեթանոսաց. ըստ այնմ, թէ՛ «Որ կանգնելոց է՝ իշխան հեթանոսաց<sup>4</sup>» (Ես. ԺԱ 10):*

Եփ. *Զի ասէ<sup>5</sup>. «Ահա դնեմ ի Սիրոն վէմ գլորման, և որ հաւատայ ի նա<sup>6</sup>՝ մի՛ ամաչեսցէ» (Յոնն. Թ 33): Կամ գլորումն անաւրէնութեան և ի<sup>7</sup> կանգնումն արդարութեան, եթէ ո՛չ անկցի անհաւատութիւնն<sup>8</sup>, հաւատն<sup>9</sup> ո՛չ կանգնի, եթէ ո՛չ թողցի պոռնկութիւն՝ մաքրութիւն ո՛չ նորոգի: Եւ Պաւղոս՝ «Յորժամ տկարանամ, յայնժամ զաւրանամ» (Բ Կորնթ. ԺԲ 10): Տկարանայ մարմնով ճգնեալ և զաւրանայ հոգով ըստ յուսոյն: Սոյնպէս և Տէրն:*

Եփ. *Որք անհաւատք և անյոյսք ո՛չ իմացան<sup>10</sup> զխորհուրդ գալստեանն՝ անկեալ խորտակեցան: Մարգարէն զգուշացուցանէ, որք են յերուսաղէմ. «ԶՏէր նոյն սուրբ արարէք, և նա եղիցի ձեզ յերկի[ւ]ղ<sup>11</sup>: Եւ եթէ յուսացիս ի նա, եղիցի քեզ ի սրբութիւն»:* *ԶՏէ՛ր Աստուած զէմ[մ]անուելն ո՛չ արար սուրբ Իսրայէլ և ո՛չ կամեցաւ յուսալ ի նա: Գլորեցան զքարի հարեալ վասն անհաւատութեանն: Եւ բազումք կանգնեցան, որք ընկալան զհաւատս 54ք նորա, // և փախեան<sup>12</sup> ի մարմնաւոր ցանկութեանց<sup>13</sup> ի հոգեւորսն և ի ծառայական հոգւոյն: Առին զՀոգին Սուրբ և հաղորդ եղեն աստուածութեանն<sup>14</sup> և գտան արժանի որդեգրութեանն և յոյս ունին<sup>15</sup> տեսանել զվերին քաղաքն [և] զերկնից արքայութիւնն:*

<sup>1</sup> Բ զնոսա

<sup>2</sup> Բ և ասէ ցՄարիամ մայր նորա. Ահա

<sup>3</sup> Բ այս

<sup>4</sup> Բ հեթանոսաց ի նա հեթանոսք յուսացին

<sup>5</sup> Բ ասէ թէ

<sup>6</sup> Բ *զրփիս* ի նա հաւատացէ

<sup>7</sup> Բ *չէք* ի

<sup>8</sup> Բ անաւրէնութիւն և անհաւատութիւնն

<sup>9</sup> Բ հաւատացեալն

<sup>10</sup> Բ իմանան

<sup>11</sup> Բ յերկեւղ

<sup>12</sup> Բ փոխեցան

<sup>13</sup> Բ սրբութեանց

<sup>14</sup> Բ աստուածային բնութեանն

<sup>15</sup> Բ յուսոյն *փիս* յոյս ունին

Իգ. Մարգարէանայ Սիմէոն և թարգմանէ զբանս մարգարէիցն, զոր նոքա գուշակեցին ծածուկ խորհրդով ի վերայ Տեառն մերոյ:

**Ի նշան հակառակութեան (Բ 34):**

Զխաչն պատուական ասէ: Որպէս Պաւղոս վկայէ. «Հրէից գայթակղութիւն<sup>1</sup> և հեթանոսաց յիմարութիւն» (Ա Կորնթ. Ա 23), և մեզ փրկելոցս՝ զաւրութիւն Աստուծոյ:

Ստ. Արդ՝ հակառակորդացն լինի նշան խաչին կորուստ, իսկ ճանաչողացս զՔրիստոս՝ զաւրութիւն և փրկութիւն և կեանք:

ԵՓ Զի այլ<sup>2</sup> ազգք<sup>3</sup> խորհեցան ի վերայ Քրիստոսի բազմազանք: Զի ոմանք ասեն մարմին չարչարելի չէ առ նա, և կէսք՝ ո՛չ ճշմարիտ մարմնով երևեցաւ յաշխարհի: Եւ այլք ասեն մարմին երկրաւոր, և այլք՝ յառաջ քան զաշխարհս, և այլք՝ սկիզբն ի Մարիամայ եղև, քանզի և Մովսէս զաւճն<sup>4</sup> նշան կանգնէ (տե՛ս Թիւք Իւ 4-9): Վասն վիմին սասանեցաք և յաղագս գլխոյ անկեանն քակտեցաք, վասն խաղաղութեանն պատերազմեցաք և յաղագս սիրոյն յատելութիւն դարձաք, վասն բարձրանալոյն ի խաչն նպաստացաք<sup>5</sup>: Զայս ամենայն ախտացան մարդիկ և պատ-

55ա ճառն, զի Աստուած մարմնով երևեցաւ և մա(//)րդ աստուածախառն ի վերայ երկրի երևեցաւ<sup>6</sup>:

**Եւ ընդ քո իսկ անձնդ անցցէ սուր (Բ 35):**

ՍՏ Մարգարէացաւ զՄարիամու գայթազղելն ի խաչելն Քրիստոսի, որպէս առաքեալքն, որ թողին զնա և փախեան գայթազղեալք, թէ ո՛չ էր սա Որդի Աստուծոյ: [Եւ] ուրացան զնա իւրքն:

ԿՐ Սուր ասէ զտրամութիւնն, զոր առնոյր ի վերայ Քրիստոսի՝ տեսանելով [զ]խաչեալ, զոր ծնաւ: Զի ո՛չ գիտէր, թէ վերագոյն է քան զմահ և յառնէ ի մեռելոց: Եւ մի՛ զանգիտեր և զարմանար, թէ անգիտացաւ սուրբ Կոյսն, որ և զառաքեալսն տեսանեմք թերահաւատեալս<sup>7</sup>: Վասն այսորիկ և երանելին թո[վ]մաս, եթէ ո՛չ էր արկեալ զձեռս ի կողսն և շաւշափեալ զտեղի բեռնացն յետ յարութեանն (տե՛ս Յովհ. Ի 20-27), ո՛չ հաւատայր առաքելոցն ասելոյն, եթէ յարեաւ Քրիստոս և երևեցաւ նոցա: Աւետարանիչն զրէ

<sup>1</sup> Բ Հրէիցն գայթազղութիւն

<sup>2</sup> Բ այլք այլ

<sup>3</sup> Բ ազգ

<sup>4</sup> Բ գձողն և զաւճն

<sup>5</sup> Բ նուաստացաք և յաղագս մահուն տկարացաք

<sup>6</sup> Բ շրջեցաւ *փխ* երևեցաւ

<sup>7</sup> Բ թերահաւատեալք



զամենայն ինչ յաւգուտ<sup>1</sup> մեզ<sup>2</sup>, որ վասն մեր Որդի մարդոյ եղև և ո՛չ անարգ համարեցաւ զաղքատութիւն, զի փառաւորեցսուք զնա որպէս զՓրկիչ և զՏէր և զԱստուած:

ԵՓ Ձաքարիայ մարգարէ ասէ. «Ձարթի՛ր սուր ի վերայ հովուի Իմոյ» (Ձաք. ԺԳ 7): Ձչարչարանացն Քրիստոսի ասէ, որ ի հրէիցն<sup>3</sup> ապարաս[ա]նութեան է<sup>4</sup>: Եւ Հոգով լցեալն Սիմէոն ասաց, քանզի սաստկապէս որպէս սրով սպանանեալ լինէր Կոյսն<sup>5</sup>:

ԻԳ Քանզի հրեշտակն ասաց. «Թագաւորէ՛ <sup>6</sup> ի վերայ տանդ Յակոբայ անվախճա[ն]ս<sup>7</sup>» (Ս 32), և յայտնեցաւ աստուածային զաւրու-  
 55բ թիւնքն // սքանչելագործ նշանաւքն: Մարիամ կարծեաց, եթէ մերձեցաւ ժամանակ թագաւորելոյ<sup>8</sup> նորա, և չարչարանացն բանն ծածկեցաւ ի նմանէ, և ետես զնա դատապարտեալ և կախեալ զխաչէ[ն], բւեռեալ և մեռեալ: Տկարացաւ թերութեամբ, եթէ յի՞նչ եղև կատարումն այսչափ զարմանալի գործոց: Եթէ յայտնի էր նմա մահն և յարութիւնն, ապա ո՛չ տրտմէր: Այս է պատճառն:

**Ձի յայտնեսցին ի բազում արտից խորհուրդք (Բ 35):**

Ստ. Յայտնեալ կորիցեն գայթաղութիւնք ամենայն: Եւ զի կարծեաց նա<sup>9</sup>, եթէ պարտիզապանն իցէ, զի եղև զարմացեալ յետ յղութեանն և ծննդեան նորա, և պատմէ այլոց, եթէ որպէս յղացաւ: Եւ ի զարմանալի բանիցն նորա զաւրացան և այլքն ևս, որք երկմտէին վասն նորա:

ԻԳ Ձի մարդկան միտք և տկարութիւն յայտնեցաւ, զի յամենեցուն և յառաքելոցն ծածկեցաւ չարչարանքն: Թէպէտև Տէրն ասէ, թէ՛ «Որդի մարդոյ մատնի և ի խաչ ելանէ» (Մատթ. ԻԶ 2) և յերիւր յաւուր<sup>10</sup> յարիցէ, վաղվաղակի մոռացան: Բայց նա վասն այսորիկ ասաց, զի յետ յարութեանն յիշե[ս]ցեն և հաւատացեն և հաւանեցուցեն զբազումս, թէ կամաւ և ո՛չ բնութեամբ<sup>11</sup> մեռաւ: Ամենեքին ակն ունէին և<sup>12</sup> հրէայքն, թէ ո՛չ յաշխարհի, այլ յաւիտեանս<sup>13</sup> է թագաւորութիւն նորա: Մեր լուաք յաւրինացն, եթէ

<sup>1</sup> A B ի յաւգուտ

<sup>2</sup> B մեր

<sup>3</sup> B վերայ *փի* հրէիցն

<sup>4</sup> B հնոյն Իսրայելի *փի* է

<sup>5</sup> B *չիք* Եւ Հոգով լցեալն Սիմէոն... կոյսն

<sup>6</sup> B թագաւորեսցէ

<sup>7</sup> B անվախճան

<sup>8</sup> B թագաւորութեան

<sup>9</sup> B *չիք* նա

<sup>10</sup> B *նախ*՝ յաւուր, ապա յ-ն ջնջած

<sup>11</sup> B բունութեամբ. *ու-ն գրչի ձեռքով ավելացված տողի վերևում*

<sup>12</sup> B *չիք* և

<sup>13</sup> B յաւիտեան

56ա Քրիստոս յաւիտեան կ[ե]լայ, դու զիա<sup>1</sup>րդ ասես, // թէ<sup>1</sup> պարտ է բարձրանալ Որդոյ մարդոյ: Զսոյն և Կղ[ե]ոպաս<sup>2</sup> ասաց. «Մեք ակն ունեաք, թէ նա է, որ փրկելոցն է զԻսրայէլ» (ԻԴ 21): Զայս ասացին, զի ո՛չ գիտէին, թէ մահ նորա փրկութիւնն է աշխարհի, որ ծածկեցաւ ի բազմաց: Եւ Սիմէոնի և Յովհաննու յայտնեցաւ, որ ասէր, թէ՛ «Սա է Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա 29):

Եւ անդ էր Աննա մարգարէ (Բ 36):

ԲԴ Ամենեցուն ծանաւթ առնէ աւետարանիչն զկինն բարեպաշտաւն՝ մարգարէական հոգով լցեալ: Սիմէոն<sup>3</sup> յարանց մարգարէացաւ քարոզել զտնաւրէնութիւնն Տեառն, և Աննա՝ ի կանանց բազմամեայ<sup>4</sup>: Երկոքին<sup>5</sup> խաւսեցան ազգամամբ Սուրբ Հոգւոյն, զի ամենեցուն յայտնի և հաւատարիմ լիցի<sup>6</sup> յայտնութիւնն Տեառն և գալուստն յԵրուսաղէմ ի տաճարն: Արդ՝ նոքա ահանատես եղեն մեծի լուսոյն<sup>7</sup> ի գճուճ մարմնի:

ԻԳ Զբազում մաքուր ոգիս<sup>8</sup> ելից հոգւով մաքրութեամբ և կացոյց վկայս աստուածային մարդեղութեանն: Ահա յորովայնի գոլով Կուսին և Հոգով լցոյց զԵղիսաբեթ, որ աղաղակեաց. «Աւրհնեալ ես դու ի կանայս, և ավրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ա 42), և մարգարէն Զաքարիա՝ «Աւրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, որ յայց ել, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ» (Ա 68), զհոգիւսն և զմոգսն կացոյց վկայս, և աստ՝ [զ]Սիմէոն և [զ]Աննայ ողջախոհք:

Դուստր Փանուկելի<sup>9</sup> յազգէ Ասերայ (Բ 36):

56բ Բազում փոյթ եղև // աւետարանչիս գրել վասն կնոջս այսորիկ<sup>10</sup> անուամբն և ազգաւն և հարբն և մարգարէութեամբն:

Սա կացեալ ընդ առն իւրում ամ եւթն<sup>11</sup> ի կուսութեան<sup>12</sup> (Բ 36):

<sup>1</sup> A եթ փիւ թէ

<sup>2</sup> B սրբ. Կղէովպաս

<sup>3</sup> A Սիմէոն

<sup>4</sup> B բազմաց

<sup>5</sup> B երկոքեանն

<sup>6</sup> B լինիցի

<sup>7</sup> B խորհրդոյն

<sup>8</sup> B մաքսաւորս փիւ մաքուր ոգիս

<sup>9</sup> B Փանուկելի

<sup>10</sup> B այսմիկ

<sup>11</sup> B եաւթն (այսուհետ չենք նշում)

<sup>12</sup> B կուսութենէ իւրմէ

Յայտ առնէ եւթն ամ միայնակեաց<sup>1</sup> ընդ առն իւրում, և ընդ այլում զուգել ո՛չ կամեցաւ:

Եւ էր այրի<sup>2</sup> ամաց ութսուն և չորից, որ ո՛չ մեկնէր ի տաճարէն զցայգ և զցերեկ, պահաւք և աղաւթիւք պաշտէր զՏէր (Բ 37):

Ջի նախատեալ լինէր ի մէջ Իսրայելի այրութիւնն, այլ նա մերձ էր յաւետարանիս շնորհս, վասն որոյ չգրէր ինչ զնախատինս[ն], որ ի մարդկանէ բազմայրութեամբն: Այսքան վկայէ Ղուկաս զառաք[ին]ութեան վարուց սորա, որ երկարածիգ աղաւթիւք անմեկնելի էր ի տաճարէն, որպէսզի ցուցցէ, եթէ արժանի<sup>3</sup> էր այնպիսումն շնորհի և յայտնութեան տեսող:

Սա ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏեառնէ և խաւսէր զնմանէ ընդ ամենեսին<sup>4</sup> (Բ 38):

Ամենեցուն բացայայտեր զմարմնացեալ Բանն Աստուած ի սրբոյ Կուսէն, զոր մարգարէքն յառաջագոյն նախագուշակեցին, որպէս Հոգին Սուրբ տայր նոցա բարբառել: Այսպէս գոհացեալ խաւսէր մարգարէուհին, զի տեսանէր Հոգւոյն ազդեցութեամբն, որով գոհանայր ողջախոհն:

US Տա՛ վկայութիւն, թէ՛ «Սա՛ է Հրեշտակ ուխտին և տէր տաճարին, զոր խնդրէք» (հմմտ. Մաղաք. Գ 1), որպէս ասաց Մաղաքիայ: «Ահա եկն և լցաւ ժամանակն» (հմմտ. Ողբ Դ 18), զոր գուշակեցին մարգարէիցն դասքն:

Որք ակն ունէին մխիթարութեանն Երուսաղեմի (Բ 38):

57ա Եփ. Որ աստուածային // ցանկութեամբն վառեալ բաղձային փրկութեանն Փրկչին, և անըմբելի<sup>5</sup> ջերմութեամբ անձկային տեսանել յաւժարութեամբ զտենչալին մաքուր հոգոց:

Բղ. Որ մարգարէիցն անդ երևեցաւ անծանական<sup>6</sup> յաղագս մեր տղայաբար երևեալ<sup>7</sup> ստեղծիչն բոլորից, զի զփրկութեան առցեն զաւետիս հրաւիրեալքն ի ժառանգութիւն արքայութեանն երկնից: Արդ՝ նոքա տեսին զանտեսանելին ի մարմնի միացեալ և զԲանն ի ստեղծուածի<sup>8</sup> նիւթեղէն ծածկեալ, և քարոզեցին զփրկական գալուստն: Եւ դուք այսպէս հաւատացէք:

<sup>1</sup> B միայն եկաց

<sup>2</sup> B չէք այրի

<sup>3</sup> B արժան

<sup>4</sup> B ամենեսեան

<sup>5</sup> B անբերելի

<sup>6</sup> B անժամանակն

<sup>7</sup> B երևեալ տղայ փի տղայաբար երևեալ

<sup>8</sup> B ստեղծուած

ԻԳ Արդ՝ խաւսէին զայս, եթէ մերձ է փրկութիւնն Երուսաղեմի: Այլ ո՛չ ընդ այնոսիկ, որ չարքն էին, այլ որ մեծաւ բաղձանաւք ակն ունէին զալստեանն Տեառն. «Արդարութիւն յերկնից երևեցաւ, և ճշմարտութիւն յերկրէ բուսաւ» (Սաղմ. 27 12)՝ Դաւիթ ասէ: Եւ Եսայի՝ «Բ[ղ]խեսցէ զաւազան յարմատոյն Յեսսեայ» (Ես. ԺԱ 1): Բղխումն՝ Բանն Աստուած, զաւազան՝ թագաւորական [և] քահանայական իշխանութեան<sup>1</sup>, և ծաղիկ՝ աստուածավայելուչ մարմինն փրկագործ՝ ո՛չ միայն Երուսաղեմի, այլև ամենայն ծննդոց[ս] Ադամայ:

**Իբրև կատարեցին զամենայն ըստ աւրինացն Տեառն (Բ 39):**

Տե՛ս արդարև ճշմարիտ ցուցումն:

ՅԿ. Կնքեաց զաւրինականսն, և դարձան ի Գալիլիայ ի քաղաքն իւրեանց [ի] Նազարեթ: Դարձուցանէ զեւթնարփի շնորհացն զանազանութիւնն ի Հեթանոսս, որք եղեն լսողք և կատարիչք<sup>2</sup> հրամանաց նորա, // որ յայտնեցաւ լոյս Հեթանոսաց և փառք ժողովրդեանն Իսրայելի: Մատթէոս զայս ո՛չ գրեաց, այլ միայն զծնանիլն ի Բեթղեէմ և ընծայաբեր լինել մոգուցն և Հերովդէի զչարելն և զիջանելն յԵգիպտոս, այլ<sup>3</sup>՝ ըստ որում [ոչ] ասաց Ղուկաս: Բայց Ղուկաս ընու զպակասութիւնն, զի ո՛չ ի Բեթղեէմէ գնաց յԵգիպտոս, այլ՝ ըստ որում ասաց Ղուկաս<sup>4</sup>. «Դարձան ի Նազարեթ» (Բ 39), զի ո՛չ գոյր նոցա բնակութիւն<sup>5</sup> ի Բեթղեէմ, այլ միայն վասն աշխարհագրին եղեն անդ և մարգարէութեանն լրման և աւրինացն կատարման<sup>6</sup>:

**Մանուկն աճէր և զաւրանայր (Բ 40):**

Կղ.(Կր.) Աճելն և զաւրանալն ճշմարիտ՝ մարդեղութեանն<sup>7</sup> ճշմարիտ<sup>8</sup> նշանակէ: Զի որպէս ճշմարիտ մարդ եղև տղայացեալ, այսպէս և աճումն ընկալաւ, զի մի՛ առաջաւք ոք<sup>9</sup> համարեսցի:

Իգ. Որպէս զաստուածայինն եդ կարգաւ, այսպէս և զմարդկայինսն գրէ Ղուկաս, զի ստուգեսցի մարմնոյն Բանն: Աճէր

<sup>1</sup> Բ իշխանութիւն

<sup>2</sup> Բ լսաւղք և կատարիչ

<sup>3</sup> Բ չէք այլ

<sup>4</sup> Բ ասէ փիւ ըստ... Ղուկաս

<sup>5</sup> Բ տեղի բնակութեան

<sup>6</sup> Բ շարունակվում է (էջ 53բ). «Այլ Բանդի ութարեայ թլփատեցաւ և քառասնաւրեայ ի տաճարն ընծայեցաւ: Եւ գնաց ի Նազարէթ, և անդ եկաց երկուտասան ւար: Եւ յետ երկուտասան ւար փախեաւ ի յԵգիպտոս: Եւ անդ եկաց երկուտասան (լս. սրբ.՝ է) ամ, մինչև մեռաւ Հերովդէս և թագաւորեաց Արքեղայոս և ապա դարձաւ ի Նազարէթ ի քաղաք իւր»:

<sup>7</sup> Բ զճշմարիտ մարդեղութիւնն

<sup>8</sup> Բ չէք ճշմարիտ

<sup>9</sup> Բ չէք ոք

տղայական մարմինն ընդ ամենակատարածութեանն<sup>1</sup> խառնեալ միութեամբ: Ըստ առաքելոյն՝ «Ի նմա բնակեաց ամենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս<sup>2</sup>» (Կորնոս. Բ 9): Ո՛չ մարդկեղէն իմաստութեամբ, այլ աստուածային կատարեալ իմաստութեամբ, ամենայնիւ լցեալ:

ԲԴ. Աստուած ինքն աճումն ո՛չ ընդունի, բայց ըստ մարմնոյն աճմանն, առ սակաւ սակաւ մասնաւորէր զաստուածային զգաւորութիւնն, որչափ բաւէին տանել<sup>3</sup> մարդիկ: Որպէս արեգակնն ցուցա-

58ա նէ զիւր ճառ(//)ագայթսն՝ ընդելացուցանելով լուսոյն, զի մի՛ փոխանակ լուսաւորելոյ շրտուցանէ գտեսողսն<sup>4</sup>:

**Շնորհք Աստուծոյ էին<sup>5</sup> ի վերայ նորա** (Բ 40):

ԿԲ **Զի ո՛չ ի սկզբան եցոյց ինչ զաստուածային<sup>6</sup> զաւրութիւնն, այլ յետ մկրտութեանն, զի վասն այսորիկ<sup>7</sup> և ըստ աճմանն և շնորհացն ասէ զբացատրութիւնն: Ո՛չ իբրև ստացական, այլ բնութեամբ ունողի և յայտնողի ըստ պատշաճութեան, և վայելչաբար կարգ[ե]աց տնաւրէնութեանն:**

ԻԳ **Շնորհք ասէ զՍուրբ Հոգւոյն հեղումնն: Ըստ Յովհաննու՝ «Ո՛չ չափով տայր<sup>8</sup> Հայր Որդոյ զՀոգին» (Յովհ. Գ 34), զի ո՛չ տայ և ո՛չ չափէ: Զի ո՛չ չափի ի Հաւրէ յՈրդւոյ<sup>9</sup>, այլ համապատուակից և բնագոյակից<sup>10</sup> է և հակից Հաւր՝ լիով յերկրի և բովանդակ յերկինս: Եւ զի՞նչ է կրակին լուցումն կամ զի՞նչ<sup>11</sup> յամենայն եկեղեցիս աւետարան կարգել<sup>12</sup> և ի չորս անկիւնս, երբ այլ եկեղեցիք ո՛չ լինին: Այս է պատճառն, զի չորս կողմ աշխարհիս մոլորեցաւ յԱստուծոյ և մոռացաւ [զ]այն, որ գրեաց Դաւիթ Հոգովն, թէ՛ «Ո՛չ յարեւելից և ո՛չ յարեւմտից և ո՛չ յանապատէ լերանց, այլ Աստուած դատաւոր է» (Սաղմ. 77) և Տէր երկնի և երկրի: Իսկ լուցումն հրոյն, զի զփառս և զպատիւ Տեառն ի տարերս և<sup>13</sup> ի կրակ**

<sup>1</sup> Բ ամենակատար աստուածութեանն  
<sup>2</sup> Բ մարմնապէս, այսինքն՝ հապէս և ճշմարտապէս  
<sup>3</sup> Բ տանելին  
<sup>4</sup> Բ շրտացուցանէ գտեսաւղսն  
<sup>5</sup> Բ աստուածային *փխ* Աստուծոյ էին  
<sup>6</sup> Բ զաստուածական  
<sup>7</sup> Բ այնորիկ  
<sup>8</sup> Բ տաց  
<sup>9</sup> Բ Որդւոյ  
<sup>10</sup> Բ գոյակից  
<sup>11</sup> Բ զի՞նչ է  
<sup>12</sup> Բ կարգալ  
<sup>13</sup> Բ *չիք* և

- մոգուլթեան և յայլազգի<sup>1</sup> իրս փոխեցին, ողորմեցաւ Հայր և դարձոյց գալստեամբ Միածնին յիւրում Տեառն և Արարչին՝ յերրորդուլթեանն<sup>2</sup> [յ]երկրպագութիւն: Ըստ Տեառն բանին՝ «Եկեսցէ
- 58բ ժամանակ և // արդեն իսկ է» (Յովհ. Դ 23), յորժամ ճշմարիտ երկրպագութեան Հաւրն<sup>3</sup> Հոգևով երկիր պագանեն: Եւ զի՞նչ լապտերացն վառումն. ողորմութիւն<sup>4</sup> Աստուծոյ<sup>5</sup>: Ըստ Տեառն բանին<sup>6</sup>՝ «Հուր եկի արկանել յաշխարհս» (ԺԲ 49), որ է կիզումն մեղաց և ուռուումն հոգոց մարդկան: Եւ ծերքն և տղայքն, որ շրջապատեալ գան զբոցովն ծպտեալ<sup>7</sup>, իբրև զսերովբէքն սաւառնեալ գոչեն. «Տէր ընդ այս է: Այո՛, Տէր է այս»: Վասնզի, որ յառաջ մոլորեալ էին ի տարերս, ուսեալք ի տղայոցն՝ ծանեան զՏէր: Ըստ այնմ, որ յՈղորմեան տաւնին ասէին. «Աւրհնեալ եկեալ յանուն Տեառն, ավրհնեալ, որ գալոց է<sup>8</sup>, ավրհնութիւն որդւոյ Դաւթի» (հմմտ. Մատթ. ԻԱ 9, Յովհ. ԺԲ 13): Իսկ Ովսաննայ[ն]՝ կեցո՛ կամ ապրեցո՛, կամ մեծութիւն կամ առաւելագոյն: Սա նա է, որ ի սկզբանէ ընդ Հաւր յառաջ քան զյաւիտեանս, այսաւր ի վախճանի ժամանակիս<sup>9</sup> եկեալ յաշխարհս, այսաւր<sup>10</sup> կատարի խորհուրդն ի մատրանն, որ է կաթողիկէն մեծ: Վասնզի նա է երկնաւորն Երուսաղէմ յերկրի հաստատեալ, և ի նմա է տաճարն փառաց, որ է անդրանկաց եկեղեցին: Անդ՝ ուր սրսկումն արեանն Քրիստոսի, անդ, ուր քահանայապետն մեր Քրիստոս մտեալ՝ իւրով արեամբն պատարագեալ, զմեզ սրբեաց ի մեռելոտի գործոց մերոց: Որպէս Պաւղոս առաքեալ ասէ. «Անդ յաւիտենական փրկութիւն» (հմմտ. Եբր. Թ 12): Ըստ վկայութեան նորին առաքելոյ, յորում տաւնեմք գտանս
- 59ա զայս հաւատացեալք, // եթէ կաթողիկէն վերին արքայութիւնն է հանդերձեալ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում վայել է փառք յաւիտեանս. ամէն:

Երթային ծնաւղք նորա ամի ամի յԵրուսաղէմ ի տաւն Զատկին (Բ 41):

<sup>1</sup> B յայլազգի ազգի

<sup>2</sup> B Երրորդութեան

<sup>3</sup> B Հաւր

<sup>4</sup> B ողորմութեան

<sup>5</sup> B Տեառն նշանակ

<sup>6</sup> B ձայնին

<sup>7</sup> B ծպտեալ

<sup>8</sup> B ես

<sup>9</sup> B վախճան ժամանակի

<sup>10</sup> B այս

Եփ.(Իգ.) Այս ի Մովսես<sup>1</sup> աւանդեցաւ նոցա. ո՛չ էր հրաման արտաքոյ Երուսաղեմի տաւնել զտաւն ելիցն յԵգիպտոսէ: Վասն այնորիկ յամենայն զաւառաց ժողովէին յԵրուսաղէմ: Ելանէին Յովսէփ և որդիք նորա՝ հանդերձ Մարիամաւ և Յիսուսիւ: Ի մէջ սոցա է, զոր Մատթէոս գրեաց, թէ՛ «Հրեշտակ Տեառն երևեցաւ Յովսէփայ<sup>2</sup> և ասէ. Առ զմանուկդ և զմայր<sup>3</sup> իւր<sup>4</sup> և գնայ յԵգիպտոս» (Մատթ. Բ 13): Եւ եկին յԵգիպտոսէ, բնակեցան ի Նազարեթ:

Եւ Յիսուս էր ամաց երկոտասանից, և ծնաւդք<sup>5</sup> նորա դարձան անդրէն, և մանուկն Յիսուս մնաց յԵրուսաղէմ (հմմտ. Բ 42-43):

Զի կամեցաւ փոքր ինչ յայտնել զանձն:

Եւ Մարիամ և Յովսէփ կարծեցին, եթէ<sup>6</sup> ընդ ուղևորան իցէ: Եկին աւուր միոյ ճանապարհ և խնդրեցին զնա և ո՛չ գտին: Խուժկեցան ի խորհուրդս իւրեանց և մեծ տրտմութեամբ դարձան յԵրուսաղէմ խնդրել զնա (հմմտ. Բ 44-45):

Քանզի դեռ երկի[ւ]ղ<sup>7</sup> մանկասպանութեան[ն] ի միտս նոցա էր. «Գուցէ ծանեան զնա և գաղտ սպանին<sup>8</sup>»:

ԵՓ Նա մինչդեռ երկամեան էր, զայս կամեցան առնել ընդ նմա՝ հանդերձ Հերովդէի<sup>9</sup> արքայիւն իւրեանց: Արդ՝ եկեալ յԵրուսաղէմ՝ շրջէին մեծ տառապանաւք:

Եւ յետ երես<sup>10</sup> աւուրց գտին զնա ի տաճարին (Բ 46):

59բ Իգ. Մի<sup>11</sup> աւր գնալն, միւս ևս // դառնալն անդրէն և յերրորդին գտին զնա, որ նշանակէր յարութեան նորա, զի յաչս նոցա իբրև զմեռեալ էր: Եւ յետ երից աւուրց կենդանի գտին զնա ի տաճարին:

Զի նստէր ընդ վարդապետան, զի<sup>12</sup> լսէր ի նոցանէ և հարցանէր զնոսա: Զարմացան<sup>13</sup>, որ լսէին ի նմանէ ընդ իմաստութեան պատասխանիս նորա (Բ 46):

<sup>1</sup> A Սիմէոնէ

<sup>2</sup> B Յովսեփու

<sup>3</sup> B *գրփի* զմայրդ և զմանուկդ

<sup>4</sup> B *չիք* իւր

<sup>5</sup> A ծնողք

<sup>6</sup> B կարծէին թէ

<sup>7</sup> B երկեւղ

<sup>8</sup> B սպանին գաղտնաբար *փի* գաղտ սպանին

<sup>9</sup> B Հերովդէիւ

<sup>10</sup> B երից

<sup>11</sup> B միւս

<sup>12</sup> B և *փի* զի

<sup>13</sup> B զարմանային

Յայտնեաց զինքն ո՛չ սքանչելեալք, այլ իմաստութեամբ բանից, զի ծանիցեն զիմաստութիւն աստուածավայելուչ մանկանն: Ամենայն ուրեք ցուցանէ զհանդէս աստուածային ի յանդիմանութիւն նոցա, որք տեսին և ո՛չ հաւատացին<sup>1</sup>:

**Իբրև տեսին զնա, սքանչացան** (Բ 47):

Մի՛ զի կենդանի գտին, երկրորդ՝ զի ընդ վարդապետս աւրինացն խաւսէր, և երրորդ՝ զի յայն տիս մեկնեցաւ ի նոցանէ, զի ո՛չ էր կարաւտ սպասաւորութեան լցուցիչն<sup>2</sup> կարաւտելոց, զի դասք հրեշտակաց ի ծննդեանն և ամենայն ուրեք սպասաւորէին նմա: Ըստ այնմ՝ «Մատեան հրեշտակք և պաշտէին զնա» (Մատթ. Դ 11): Եւ տեսալ՝ զուարճացան:

**Ասէ ցնա մայր իւր. Որդեա՛կ, զի՞նչ գործեցեր<sup>3</sup> ընդ մեզ, զի հայր քո և ես տառապեաք<sup>4</sup> խնդրել զքեզ** (Բ 47):

Յասնուլ կամ սաստել զանգիտէին: Զի թէպէտ ծայրագոյն բարձրութիւն աստուածութեան նորա ծածկեցաւ, բայց ամենայնիւ<sup>5</sup> ի վեր գտաւ քան զբնութիւն մարդկան: Եւ վասն որոյ Յով-  
60ա սէփ ո՛չ համարձակի //ասել ինչ իբրև զհայր: Իսկ որ ծնաւն, վստահանայ խաւսել՝ աղերսելով դնէ գտրտմութիւն տառապանացն:

**Ասէ ցնոսա. Զի՞ խնդրէք զիս, ո՞չ գիտէք, եթէ ի տան Հաւր իմոյ պարտ է ինձ լինել** (Բ 48):

ԵՓ Ընդդէմ այս<sup>6</sup> բանիս խաւսիլ իմաստութեամբ, որում ո՛չ կարացին նոքա հասու լինել: Ասէ չունիմ ինչ պէտս վերակացու [ի] սպասաւորութեան ձեր, ո՛չ տարադէպ ինչ գործեցի, յորոյ անուն շինեցաւ տաճարս այս յերկրի տուն Աստուծոյ: Ըստ այնմ՝ «Տուն իմ տուն աղաւթից կոչեսցի» (Մատթ. ԻԱ 13):

ԻԳ Արդ՝ Որդի էր նա մշտնջենաւորին Հաւր: Եւ որդոյ<sup>7</sup> սեփական է<sup>8</sup> ի տան հաւրն բնակիլ<sup>9</sup>: Այլ նոքա ո՛չ իմացան, թէպէտև յայտնի բանս ասաց: Զի ասաց հրեշտակն, թէ՛ «Որ ծնանելոցն է ի քէն, սուրբ է և Որդի Աստուծոյ կոչեսցի» (Ա 35): Արդ՝ պիտոյ էր

<sup>1</sup> Բ Հաւատացին և ի հաստատութիւն հաւատոյ վերջնոցս

<sup>2</sup> Բ լցուցչին

<sup>3</sup> Բ գործեցեր դու

<sup>4</sup> Բ տառապէաք

<sup>5</sup> Բ ամենայնի

<sup>6</sup> Բ սրբ. այսմ

<sup>7</sup> Բ որդի

<sup>8</sup> Բ և

<sup>9</sup> Բ բնակի



նոցա յայնժամ անգիտանալ: Եւ կարի աւգտակար յետ վերանալոյն նորա յայտնել այսոքիկ<sup>1</sup> ամենեցուն, որ քարոզ[իչ]ք են աստուածութեան նորա:

Էջ<sup>2</sup> ընդ նոսա և գնաց ի Նազարեթ, և էր նոցա Հնազանդ (Բ 50):

Քանզի ինքն եղ զաւրէնս՝ հաւր և մաւր Հնազանդ լինել, ի բարիս արժան էր կատարել նմա: Զի մեծ քան զամենայն էր<sup>3</sup> ծնեալն<sup>4</sup> ի կնոջէ<sup>5</sup>:

Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ<sup>6</sup> և շնորհաւք յԱստուծոյ և ի մարդկանէ (Բ 51):

60բ Եւ այս ծանուցաւ յառաջագոյն յԱստուծոյ և ի մարդկանէ, զի<sup>7</sup> տղայութիւն[ն] ծածկեաց մեծութիւն<sup>8</sup> շնորհին: Իսկ ի կատարելութիւն եկեալ // տեսանէին զպարկեշտ վարս նորա և զհաստատութիւն<sup>9</sup> անձինն և զբանս շնորհաց<sup>10</sup>, որ ելանէր ի բերանոյ Տեառն: Եւ զվայելչութիւն դիմացն պատիւ և փառս բազումս շնորհեցին նմա մարդիկ:

ՍՏ Արդ՝ տղայ<sup>11</sup> գոլով ի Հաւրէ միայն ունէր պատիւ և փառս, զի նա միայն ճանաչէ<sup>12</sup> զնա: Իսկ զարգանալովն՝ ի մարդկանէ ընդունի փառս: Զի Ղուկաս գրէ. «Ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցուն[ց]» (հմմտ. Բ 46-48, Զ 6):

<sup>1</sup> Բ այսոքիկ

<sup>2</sup> Բ Եւ էջ

<sup>3</sup> Բ էր այն, որ

<sup>4</sup> Բ ծնաւ

<sup>5</sup> Բ *չարունակվում է* (էջ 55ա). «Եւ մայրն նորա պահէր զամենայն բանսն ի սրտի իւրում (Բ 51):

*Որքան բարձրագոյնս ինչ իմանալ բաւական լինէր, պահէր զայն իմաստութեամբ և ուշ դնէր կատարածի ելիցն»:*

<sup>6</sup> Բ *գրվիս* հասակաւ և իմաստութեամբ

<sup>7</sup> Բ զի և

<sup>8</sup> Բ ծածկէ և անյայտէ գմեծութիւն

<sup>9</sup> Բ զհամեստութիւն

<sup>10</sup> Բ պիտանիս և շնորհալիցս

<sup>11</sup> Բ այսպէս տղայ

<sup>12</sup> Բ ճանաչէր

## Գլուխ Գ

Ի հնգետասան[երորդի]<sup>1</sup> ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի<sup>2</sup> դատաւորութեանն<sup>3</sup> Պիղատոսի Պոնտացւոյ<sup>4</sup> (Գ 1):

ԻԳ Արդ՝ Ղուկաս<sup>5</sup> զժամանակն լի պատմութեամբ<sup>6</sup> զամենայն<sup>7</sup> ասէ: Զծնունդն, որ ի ժամանակին Աւգոստոս<sup>8</sup> կայսեր եղև, որով ի Նազարեթէ ածեալ լինէր ի Բեթղեէմ վասն աշխարհագրին: Եւ ապա յետ երկոտասան ամի յայտնէ զանձն ի տաճարին՝ խաւսելով ընդ վարդապետս արինացն: Իսկ զժամանակն դնէ ի հինգետասան ամի Տիբերեայ թագաւորութեանն, սկիզբն առնու մկրտութեանն Յովհաննու և Քրիստոսի: Իսկ Մատթէոս ո՛չ առնէ ինչ փոյթ զժամանակաց, այլ միայն գրէ զտնաւրէնութիւն Բանին: Զի յետ դառնալոյն յԵգիպտոսէ և բնակեալ ի Նազարեթ՝ անդէն վաղվաղակի մերձ դնէ զգալն Յովհաննու. «Յաւուրան յայնոսիկ զայ Յովհաննէս Մկրտիչ» (Մատթ. Գ 1):

61ա Եւ [ի] չորրորդապետութեանն Գալիլեացոց Հերովդէ[է]ի և Փիլիպոսի<sup>9</sup> եղբաւր նորա [ի] չորրորդապետութեանն<sup>10</sup> //Տիւրացոց և Տրաքոնացոց<sup>11</sup> աշխարհին, [և ի] չորրորդապետութեանն Լուսինեայ Աբելինացոյ<sup>12</sup> (Գ 1):

Կարևոր համարեցաւ վասն ստուգութեան զկուսակալսն դնել, որ էին ի նմին աշխարհի, և անուանէ զնոսա չորրորդապետս: Վասնզի ի վախճանելն Հերովդի<sup>13</sup>, այն, որ ունէր զպատիւ և զանունն արքայութեանն, խորհեցան բառնալ յորդոյ<sup>14</sup> նորա զպա-

<sup>1</sup> Բ հինգետասաներորդի

<sup>2</sup> Բ և ի

<sup>3</sup> Բ դատաւորութեանն Հրէաստանի

<sup>4</sup> Բ Պոնդացւոյ և ի չորրորդապետութեան գալիլեացոց Հերովդէի, և Փիլիպոսի եղբաւր նորա, ի չորրորդապետութեան ի Տիւրացոց և ի Տրաքոնացոց աշխարհին, և ի չորրորդապետութեան Լուսինայ Աբելինացոց և ի քահանայապետութեանն Աննայի և Կայիափայ եղև Բանն Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիա յանապատի անդ: Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց (Գ 1-3)

<sup>5</sup> Բ Ղուկաս անթերի պահէ

<sup>6</sup> Բ և զկարգ պատմութեանն լիով *փխ* լի պատմութեամբ

<sup>7</sup> Բ զամէնն

<sup>8</sup> A Ոգոստոս

<sup>9</sup> Բ Փիլիպոսի

<sup>10</sup> Բ չորրորդապետութեան

<sup>11</sup> Բ Տիւրացոց և Տրաքոնացոց

<sup>12</sup> Բ Լուսինայ Աբելինացոց

<sup>13</sup> Բ Հերովդէի

<sup>14</sup> Բ յորդոց

տիւն, և<sup>1</sup> ընդ<sup>2</sup> չորս բաժանելով զիշխանութիւնն՝ ետուն չորից որդոց նորա, և անուանեցին զնոսա չորրորդապետս: Եւ են այսօրքիկ. Արքեղայոս, Հերովդէս, Փիլիպ[պ]ոս և Լուսինեայ: Իսկ եթէ Մատթէոս զԱրքեղայոս թագաւոր ասէ փոխանակ հաւրն (տե՛ս Մատթ. Բ 22), չեն ինչ ընդդէմ այսօրքիկ: Նաև զՀերովդէս չորրորդապետ թագաւոր անուանէ<sup>3</sup>: Ասէ. «Տալ նմա մինչև ցկէս թագաւորութեան նորա» (հմմտ. Մարկ. Զ 23):

Ի դատաւորութեանն Հրէաստանի Պիղատոսի Պոնտացոյ<sup>4</sup> (Գ 1):

Արդ՝ Արքեղայոս սակաւ ժամանակ կեցեալ՝ վախճանի: Իսկ Հռոմք<sup>5</sup> փոխանակ նորա կացուցին զՊիղատոս Պոնտացի<sup>6</sup> դատաւոր Երուսաղեմի:

Եւ ի քահանայապետութեանն Անայի<sup>7</sup> և Կայիափայ (Գ 2):

Ի նմին ժամանակի բռնացան ի վերայ քահանայապետութեանն Անայ և Կայիափայ՝ ի հռոմայեց[ւ]ոցն առեալ զիշխանութիւն[ն] ամի ամի, և ո՛չ ըստ աւրինացն Մովսիսի<sup>8</sup> ընտրեալք: Նա, զի և<sup>9</sup> ժամանակն մերձեալ էր բառնալոյ [յ]աւրինական

61բ կարգացն և քահանայութեանն: // Արդ՝ զսոսա զամենեսին կարգէ վասն վերջին քննողաց ժամանակին, զի աներկբայ ունիցին, որ խնդրողքն իցեն խորհրդոյն:

Եղև Բանն Աստուծոյ<sup>10</sup> ի վերայ Յովհաննու որդ[ւ]ոյ Զաքարիայ յանապատի անդ: Եւ եկն յամենայն կողմանս Յորդանանու քարոզել (Գ 2-3):

Որպէս մարգարէքն յԱստուծոյ կոչեցան մարգարէանալ ի վերայ ժողովրդեանն, այսպէս<sup>11</sup> Յովհաննէս յԱստուծոյ<sup>12</sup> կոչեցաւ յանապատէ՝ անտես բնաւ գոլով ի մարդկանէ: Եւ երևեցաւ մարդկան սքանչելի վարուք, որ հիացումն էր տեսողացն, վասն

<sup>1</sup> Բ չիք և

<sup>2</sup> Բ ի փիւ ընդ

<sup>3</sup> Ը անվանէ

<sup>4</sup> Բ Պոնդացոյ

<sup>5</sup> Բ հռոմայեցիք

<sup>6</sup> Ը բառը գրիչը սրբագրել է լս. Բ Պոնդացի

<sup>7</sup> Բ Անայի

<sup>8</sup> Բ Մովսեսի

<sup>9</sup> Բ նաև զի փիւ նա, զի և

<sup>10</sup> Ը յԱստուծոյ

<sup>11</sup> Բ այսպէս և

<sup>12</sup> Ը ի յԱստուծոյ

խստաբեր<sup>1</sup> վարուցն: Քանզի տեսչութիւնն Աստուծոյ զայս տնաւրինեաց յառաջագոյն այնպիսի լինել Կարապետին՝ յղութեամբն և ծննդեամբն զարմանալի, և առաքինութեամբն կարի անցանել զչափ մարդկան<sup>2</sup> բնութեան[ս]: Արդ՝ զսա պահեաց քարոզ և վկայ իւրում աստուածութեանն, զի հաւատարիմ լիցի ամենայնիւ վկայութիւն նորա: Ըստ Յովհաննու աւետարանչին. «Ո՛չ էր նա լոյսն<sup>3</sup>, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն» (Յովհ. Ա 8), զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Արդ՝ եկեալ յանապատէ որպէս հրեշտակ՝ յերկնից իջեալ անկերակուր, խարազնագգեստ:

**Քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց (Գ 3):**

Ուսուցանէր ապաշխարել և մկրտել ի ջուրս, զի սրբեսցին յաղտէ<sup>4</sup> մեղաց և պատրաստք լիցին յ[ը]նդունել<sup>5</sup> նոցա զեկեալ ազատիչն:

**ՍՏ** Ջի Յովհաննէս կանխեաց յառաջագոյն, աւետարանեաց Իսրայելի, զի յետ մկրտութեան ջրոյն եկեսցէ մեծ պարզևք մկրտութեանն<sup>6</sup> հրոյն և ջրոյն:

**62ա** // Որպէս<sup>7</sup> գրեալ է յԵսայեայ մարգարէի<sup>8</sup>. Ձայն բարբառոյ յանապատի (Գ 4, տե՛ս Ես. Խ 3):

**ԵՓ** Ձայն և բարբառ Յովհաննէս յորջորջեցաւ, այսինքն՝ որպէս ի ձեռն ձայնին<sup>9</sup> Բանն յայտնի, սոյնպէս<sup>10</sup> բարբառ գոլով Յովհաննէս Բանին<sup>11</sup> մարմնացելոյ՝ քարոզէր զգալուստ Բանին:

**ՍՏ** Ձայն՝ Յովհաննէս, բարբառ՝ Քրիստոս, զի վրիպեալ էր յաստուածպաշտութենէ երկիրն<sup>12</sup>: Քանզի որպէս ձայնիւն զբանն իմանամք և զբարբառն, նոյնպէս և ի ձեռն Յովհաննու զԲանն Աստուծոյ և զբարբառն կենաց:

**ԵՓ** Արդ՝ ձայն[ն] Յովհաննէս է, այլ Բան[ն], որ գնայր<sup>13</sup> ի մէջ ձայնին՝ Տէր մեր: Արդ՝ ձայնն զարթոյց<sup>1</sup>, և Բանն լուսաւորեաց

<sup>1</sup> Ե խստամբեր

<sup>2</sup> Ե մարդկային

<sup>3</sup> Ե լոյս

<sup>4</sup> Ե յաղտոյ

<sup>5</sup> Ե լինիցին ընդունել

<sup>6</sup> Ե պարզև մկրտութեան

<sup>7</sup> Ե որպէս և

<sup>8</sup> Ե յԵսայի մարգարէէ

<sup>9</sup> Ե ձայնի

<sup>10</sup> Ե սոյնպէս և

<sup>11</sup> Ե Բանին Աստուծոյ

<sup>12</sup> Ե երկիր

<sup>13</sup> Ե գայր

զնոսա: Զայնն աղաղակեաց ի լսելիս նոցա, և Բանն բաշխեաց զպարգևս նոցա:

**Զայն բարբառոյ յանապատի** (Գ 4, տե՛ս Ես. Խ 3):

**ՅՀ** Լուսաւորէր զ[յ]անապատն ամենայն քարոզութեամբ[ն], զի այնպէս փոյթ ունէին մարգարէքն, մինչ զի ո՛չ զՏէրն միայն, այլ և զսպասաւորս նորա<sup>2</sup> յառաջագոյն քարոզէին և զտեղիսն, յոր շրջելոյ<sup>3</sup> էր, և զքարոզութեան աւրինակն:

**ՍՏ** Իսկ յանապատ ի ճանապարհի Հոգոյ<sup>4</sup> ո՛չ գնայ Բանն Աստուծոյ: Զայն[ն]<sup>5</sup> աստուածային գոչէ ի Հոգոջ, որ անապատ է ի մարդկան զբաղմանց<sup>6</sup> և ի խռովութենէ, և միայնացեալ ընդ Աստուած: Ըստ ասողին. «Եղեն որպէս ճնճղուկ միայն ի տանիս» (Սաղմ. ԾԱ 8):

**Պատրաստ արարէք զճանապարհս Տեառն** (Գ 4, տե՛ս Ես. Խ 3):

**ՍՏ** Տե՛ս, զիա՞րդ Մկրտիչն և մարգարէն ի մի ճանապարհ գան: Մարգարէն ասէ. «Պատրաստ արարէք զճանապարհս Տեառն» (Ես. Խ 3) և Մկրտիչն՝ «Արարէք պտուղ արժանի ապաշխարութեան» **62բ** (Մատթ. Գ 8): Տեսանե՞ս, զի վասն // կարապետելոյ եկն Յովհաննէս և յառաջագոյն ճանապարհ հորդելոյ<sup>7</sup>: Եւ ո՛չ պարգևս շնորհել, որ է թողութիւն մեղաց, այլ պատրաստել զոգիս առ յ[ը]նդունել<sup>8</sup> զԱստուածն ամենեցուն:

**Ստ.** Առանց<sup>9</sup> Յովհաննու և նորին նմանողի ո՛չ պատրաստի ճանապարհ Քրիստոսի:

**Եւ ուղիղ արարէք զչաւեղս<sup>10</sup> նորա** (Գ 4, տե՛ս Ես. Խ 3):

Որոց ո՛չ են ուղիղ շաւիղքն, ո՛չ կարեն տանել յինքեանս<sup>11</sup> զուղիղն զՔրիստոս:

**Ամենայն ձորք լցցին** (Գ 5, տե՛ս Ես. Խ 4):

Զխոնարհս բարձրացուցանէ: Ըստ այնմ, եթէ՛ «Տայ շնորհս խոնարհաց» (Առակ. Գ 34):

<sup>1</sup> Բ գարթոյց զնոսա

<sup>2</sup> Բ զսպասաւորսն

<sup>3</sup> Բ որ շրջելոց

<sup>4</sup> Բ զբաղեալ ի Հոգոց

<sup>5</sup> Բ այլ ձայնն

<sup>6</sup> Ը բաղմանց

<sup>7</sup> Բ ճանապարհհելոյ

<sup>8</sup> Ը Բ ի յընդունել

<sup>9</sup> Բ զի առանց

<sup>10</sup> Բ զչաւիղս

<sup>11</sup> Ը Ը ի յինքեանս

ԻԳ. *Ջաւրութիւնն Քրիստոսի, ընդդէմ<sup>1</sup> հակառակամարտ զաւրու-  
թեանն, զի լնու զխորս ձորոց, որ<sup>2</sup> են վիհք անհաւատութեան, ո-  
րով ըմբռնեալ մարդկան ազգ իբրև վհաւ<sup>3</sup> ո՛չ կարեն<sup>4</sup> անցանել ի  
կեանս: Արդ՝ լնու զայն, զի դիւր անցանելի լիցի ի ձեռն հաւա-  
տոց յարդարութիւն կենաց:*

**Լերինք և բլուրք խոնարհե[ս]ցին** (Գ 5, տե՛ս Ես. Խ 4):

*Ջհպարտացեալս խոնարհեցուցանէ և հարթէ զլեռնացեալ  
թագաւորութիւն[ն] սատանայի, որ ամբարձաւ ի վերայ մարդ-  
կան, զի Տէր ամբարտաւանից<sup>5</sup> հակառակ է:*

**Եղիցին դժուարինք ի դիւրինս** (Գ 5, տե՛ս Ես. Խ 4):

Ստ. *Ջդժուարութիւն աւրինացն՝ ի հաւատոցն դիւրութիւն:*

**Եւ առապարք ի հարթս ճանապարհաց** (Գ 5, տե՛ս Ես. Խ 4):

*Ջի ո՛չ ևս<sup>6</sup> է քրտունք և ջանք, այլ շնորհք է ձրի ի<sup>7</sup> թողու-  
թիւն մեղաց:*

ԻԳ. *Եւ զանկոխ ճանապարհ առաքինութեանն դիւրագնալի արար,  
որք կամիցինն, զի ո՛չ կարէ այնուհետև առապարն արգելել զնո-  
սա:*

**Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ** (Գ  
6, տե՛ս Ես. Խ 5):

ՅՀ. *Ամենայն ուրեք յայտ առնէ, թէ ի ծագս ամենայն տիեզերաց  
63ա հեղուն աւետարան(II)ացն<sup>8</sup> զաւրութիւնք ո՛չ միայն հրէիցն, այլև<sup>9</sup>  
ամենայն երկրի, ի ծովու և ի<sup>10</sup> ցամաքի:*

ԻԳ. *Եւ ամենեցուն տայ զփրկութիւնն իւր Աստուծո, միայն եթէ  
յուժարեսցին հաղորդել փրկութեանն:*

**Ասէ<sup>11</sup> ցծողովուրդսն, որք ելին մկրտել<sup>12</sup> ի նմանէ** (Գ 7):

<sup>1</sup> Ե ընդդէմ կայ

<sup>2</sup> Ե որոց

<sup>3</sup> Ե վհաւ

<sup>4</sup> Ե զաւրէին

<sup>5</sup> Ե նախ՝ ամենից, ապա՝ գրչի ձեռքով սրբագրած լուսանցքում:

<sup>6</sup> Ե **չիք** ևս

<sup>7</sup> Ե և **փի** ձրի ի

<sup>8</sup> Ե աւետեացն

<sup>9</sup> Ե այլ

<sup>10</sup> Ե **չիք** ի

<sup>11</sup> Ե և ասէ

<sup>12</sup> Ե մկրտել

Մատթէոս ասէ, եթէ՝ «Ետես<sup>1</sup> գսադուկեցիսն և զփարիսեցիսն եկեալ ի մկրտութիւն նորա» (Մատթ. Գ 7): Զիա՞րդ ասաց Քրիստոս, եթէ Յովհաննու ո՛չ հաւատացին<sup>2</sup> (տե՛ս Մատթ. ԻԱ 32):

ՅՀ Ո՛չ էր այն հաւատալ, յորժամ զոր նա քարոզէր, նոքա ո՛չ ընդունէին: Քանզի մարգարէիցն կարծէին, թէ ունկնդիրք են: Եւ երևի, թէ ո՛չ եղեն ունկնդիրք: Զի վասն որոյ մարգարէացանն վասն Քրիստոսի, հրէայքն ո՛չ ընկալան: Ըստ այնմ, թէ՝ «Հաւատացեալ էր ձեր Մովսիսի<sup>3</sup>, հաւատայիք և ինձ» (Իմմտ. Յովի. Ե 46): Արդ՝ յայտ է, թէպէտ եկին և մկրտեցան՝ ո՛չ<sup>4</sup> հաստատեցան ի հաւատս քարոզութեան նորա:

ՍՏ Արդ՝ տեսեալ Յովհաննու, եթէ թիւր և<sup>5</sup> կամակոր մտաւք<sup>6</sup> մերձենային ի նա՝ ո՛չ խոստովանելով զմեղս իւրեանց: Ասէ ցնոսաւ.

**Ծնունդք իժոց** (Գ 7, տե՛ս Մատթ. Գ 7):

Ո՛վ համարձակութիւն: Ընդ որպիսի՞ մարդիկ խաւսէր: Որք արեան մարգարէիցն էին ծարաւիք, որք չէին ընդհատ յաւձից[ն]: Յիրաւի կոչեաց զնոսա «ծնունդս<sup>7</sup> իժից», զի զազանն այն սպանանէ զծնաւդսն՝ զհայրն յղութեամբ, և զմաւրն ուտէ զորովայնն և արտաքս ելանէ, որպէս<sup>8</sup> նոքա զհա[յ]րս և զմա[յ]րս սպանանէին և զվարդապետս:

ՍՏ Աներևոյթ թշնամոյն<sup>9</sup> սպասաւորք և նորին որդիք «ծնունդք 63բ իժից» են, որք զնորա վարդապետութեան[ն] // զհետ երթան և վարժին:

Ո՞ր եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոց իցէ<sup>10</sup> (Գ 7, տե՛ս Մատթ. Գ 7):

ՈԿ Տե՛ս, զի անուամբ գեհենին մորմոքեցուցանէ զնոսա: Քանզի ո՛չ զսովորականացն<sup>11</sup> սպառնայ [զ]սով<sup>12</sup> կամ<sup>13</sup> [զ]սուր կամ

<sup>1</sup> B **չիք** ետես  
<sup>2</sup> B հաւատային  
<sup>3</sup> B Մովսեսի  
<sup>4</sup> B այլ ոչ  
<sup>5</sup> B **չիք** թիւր և (նախ՝ իւր, ապա քերած-ջնջած)  
<sup>6</sup> B **չիք** մտաւք  
<sup>7</sup> B ծնունդք  
<sup>8</sup> B որպէս և  
<sup>9</sup> B թշնամոյն  
<sup>10</sup> B գալոցն է  
<sup>11</sup> B զսովորականն  
<sup>12</sup> B պատուհաս, այսինքն՝ զսով  
<sup>13</sup> B **չիք** կամ

[զ]գերուլթիւն, այլ՝ այլ իմն տանջանս բարբառիւր, զոր<sup>1</sup> ո՛չ էր երբեք լսեալ նոցա յայտնի: Ուստի<sup>2</sup> գիտէք, թէ բարկուլթիւն գալոց է, և հարկ է փախչել<sup>3</sup>, զի ցուցանէք՝ խոստովանելով զմեղս, որ ոչդ<sup>4</sup> խոստովանիքդ:

**Արարէք պտուղ արժանիս<sup>5</sup> ապաշխարուլթեան** (Գ 8, տե՛ս Մատթ. Գ 8):

Քանզի չէ բաւական յարդարուլթիւն<sup>6</sup> միայն փախչել[ն] ի չարեաց, այլև առաքինուլթիւնս բազմացուցանել<sup>7</sup>, վասնզի նորին մերքս<sup>8</sup> և բարձրագոյն, քանզի ինքն իսկ գայ դատաւորն, որ արքայուլթեանն Տէր է, և մեծ զգաստուլթեամբ յերկինս<sup>9</sup> կոչէ<sup>10</sup>: Արդ՝ միմիայն զտերևս ստացուք<sup>11</sup>, որպէս զթղենին, զոր անէծ Քրիստոս, որ ցուցանէր բերել պտուղ, և եբեր միայն տերև:

**Եւ մի՛ ասէք, թէ ունիմք հայր զԱբրահամ** (Գ 8, տե՛ս Մատթ. Գ 9):

Զայս ասելով՝ ո՛չ եթէ արգելոյր, զի մի՛ կոչեսցին որդիք սրբոցն, այլ զի մի՛ ի նոսա պանծացեալք<sup>12</sup> պատճառանաւքն ծուլասցին ի հարցն առաքինուլթենէ[ն], այլ անձամ[բ]ք լիցին պիտանիք:

**Կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու** (Գ 8, տե՛ս Մատթ. Գ 9):

ՅՀ. Տեսանե՛ս, զիա՞րդ կարճէ զնոսա ի հպարտուլթենէն: Մի՛ կարծէք, եթէ դուք կորնչիք<sup>13</sup>, և անորդիս<sup>14</sup> առնէք զնահապետն<sup>15</sup>: Զի դիւրին է Աստուծոյ ի քարանց առնել մարդիկ և տալ նմա յորդիս<sup>16</sup>:

<sup>1</sup> Բ բարբառի որ

<sup>2</sup> Բ արդ՝ ասէ ըստոյզ *փիւ* ուստի

<sup>3</sup> Բ փախչել ի բարկուլթենէն: Իսկ դուք ո՛չ փախչիք ի չարեաց

<sup>4</sup> Բ ոչ

<sup>5</sup> Բ արժանի

<sup>6</sup> Բ արդարուլթիւն

<sup>7</sup> Բ բազումս ցուցանել

<sup>8</sup> Բ *չիք* վասնզի... մերքս

<sup>9</sup> *Ա* ի յերկինս

<sup>10</sup> Բ կոչէ գառաքինիսն

<sup>11</sup> Բ զտերևն ստացուք

<sup>12</sup> Բ պանծացեալք

<sup>13</sup> Բ կործանիք և կորնչիք

<sup>14</sup> Բ անորդիք

<sup>15</sup> Բ զնահապետսն

<sup>16</sup> Բ որդիս



**64ա ԵՓ** // Իսկ ոմանք զհեթանոսս ասեն, որք երկրպագուք էին քարանց: Ըստ այնմ, եթէ՝ «Հայր ազգաց բազմաց արարից [զ]քեզ» (հմմտ. ԾՆՈդ. ԺԷ 5):

**ՍՏ** Որք ըստ մարմնոյ պարծին<sup>1</sup> յԱբրահամ, Յովհաննէս մարգարէանայ զնոցա զքարանալն և զլուծանելն<sup>2</sup> և զհեթանոսաց կոչումն, որ փոխանակ քարեղէն սրտի ստացան հոգի մարմնեղէն, որ<sup>3</sup> քարանց և փայտից անզգայից ծառայ էին:

**Ահաւասիկ տապար առ արմին ծառոյ կայ** (Գ 9, տե՛ս Մատթ. Գ 10):

**ՈԿ** Ձի՛ք ինչ ահագին, քան զայսպիսի բան, զի ո՛չ գերանդի թռուցեալ և ո՛չ այգ[ւ]ոյ ցանկ քակեալ, և ո՛չ<sup>4</sup> կոխան յաւտարաց<sup>5</sup> լեալ<sup>6</sup>, այլ տապար սրեալ: Եւ նոյն ահագին, զի և ի դուրս եկեալ հասեալ և առ արմին դնի, զի ո՛չ ասաց առ ոստս կամ առ միրգսն, այլ՝ «առ արմին»: Ձի յայտ արար՝ ասելովն, թէ ծուլանայցեն՝ առանց բժշկութեան ունին զվէրսն և անյոյս և առանց զղջանալոյ: Եւ տե՛ս, զի ընդ սաստն և զմխիթարութիւնն խառնէ: Թէպէտև այնպէս մատոյց, սակայն զձեզ արար տեարս կտրելոյ և չկտրելոյ: Ձի թէ դառնայք և լինիք պիտանիք, անցանէ և ո՛չ մեղանչէ ձեզ տապարն: Ապա եթէ ի նմին չարիսն<sup>7</sup> հաստատեալ կայք՝ արմատաքի տակակոտոր խլէ զծառն:

**ՍՏ** Ո՞վ իցէ տապարաւորն, որ կտրէ զանհաւատութիւն[ն]: Լո՛ւր, զի առաքեալ ասէ. «Բանն Քրիստոսի ազդող է և հատու քան զամենայն սուր երկսայրի»(Եբր. Դ 12), յորմէ կոճոպեցան ոստք ծառոյն իմանալի՝

**64բ** // անհնազանդեալքն<sup>8</sup> Քրիստոսի վարդապետութեանն՝ հրէայքն, և պատուաստեցան ի գեղեցիկ ձիթենին Քրիստոս հեթանոսք:

**Ամենայն ծառ, որ ո՛չ առնէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի** (Գ 9, տե՛ս Մատթ. Գ 10):

**ՈԿ.(յոհ)** Հանէ և մերժէ զպարծանս նոցա, որ ի նախնիսն<sup>9</sup>, եթէ նորին իսկ Աբրահամու որդի իցես և բիւր<sup>10</sup> նահապետս ունիս նախնիս, կրկին պատիժս կրելոց ես վասն անպտուղ լինելոյն: Դարձեալ.

<sup>1</sup> B պարծէին  
<sup>2</sup> B քարանալն և զլուծանելն  
<sup>3</sup> B որք  
<sup>4</sup> B ջրջված է  
<sup>5</sup> B աւտարաց  
<sup>6</sup> A լիեալ  
<sup>7</sup> B չարիքն  
<sup>8</sup> B այսինքն՝ անհնազանդեալքն  
<sup>9</sup> B նախապետսն  
<sup>10</sup> B բիւր

ցուցանէ աստ, եթէ կամելն և եթ պիտոյ է և վաղվազակի ծաղկալից, պտղալից<sup>1</sup> զարդարի ծառն:

**Եւ ի հուր արկանի** (Գ 9, տե՛ս Մատթ. Գ 10):

ԻԳ *Սպառնայ տապարով աստուածային բարկութեանն զանգեղջսն և զանբժշկելիսն, հատանէ աստեն<sup>2</sup> ի հաղորդութենէ Աստուծոյ և անդ ի յաւիտենական կեանսն մատնէ հրոյն տանջանաց:*

**Հարցին զնա ժողովուրդքն և ասեն. Զի՞նչ գործեսցուք** (Գ 10):

*Տեսեալ զնա ժողովրդոցն յայնպիսի վարս խստաբերս և զարմանալիս և այնպիսի ահագինս բարբառեալ՝ զարհուրեցան՝ ասելով. «Յոյց մեզ հնարս ապրել յաստուածային բարկութեանցն»:*

**Եւ նա ասէ. Ո՞ր իցէ երկու հանդերձ, տացէ զմինն<sup>3</sup> այնմ, որ ո՛չ իցէ<sup>4</sup>** (Գ 11):

*Եդ առաջի նոցա ճանապարհ առաքինութեան, և<sup>5</sup> ո՛չ զԱւրինացն, այլ զԱւետարանին, զոր ի Քրիստոսէ ընդունելոց էին: Ահաւասիկ յայտնապէս ունի [զ]գաւրութիւն և [զ]ձև կերպարանաց Տեառն բանիցն, զի նա աւրինադրեաց աշակերտացն. «Մի՛ զգեանուլ երկուս պարեգաւտս» (Մարկ. Զ 9):*

**Եւ ոյր կայցէ<sup>6</sup> կերակուր, նոյնպէս արասցէ** (Գ 11):

65ա *Սկսանի խրա(//)տել զնոսա զաւրագոյն առաքինութեամբ, վասնզի գլուխ ամենայն առաքինութեանց սէրն է, զի ի դատաստանի անդ ո՛չ այլ առաքինութիւն ինչ խնդրեցաւ: Այլ վասն սորին ոմանք պատուեալ պսակին և ոմանք պատժեալ տանջին: Յաղագս որոյ ուսուցանէ զնոսա մարդասէրս<sup>7</sup> լինել և այնպէս փրկութեան հաւատոցն հասանել:*

**Եկին մաքսաւորքն մկրտել և ասեն. Զի՞նչ գործեսցուք** (Գ 12):

*Նորա համբաւն զամենեսին զարթոյց գալ առ նա, որպէս ախտացեալք առ բժիշկս, և բազմաց եղև պատճառք փրկութեան: Որպէս ասաց Տէրն. «Մաքսաւորք և մեղաւորք արդարացուցին*

<sup>1</sup> B և պտղալից

<sup>2</sup> B աստ

<sup>3</sup> B զմին

<sup>4</sup> B ունիցի

<sup>5</sup> B *չիք* և

<sup>6</sup> B ո՞ր կայցէ

<sup>7</sup> B մարդասէր

զԱստուած, զի մկրտեցան ի մկրտութիւնն Յովհաննու» (Է 29): Ո՛չ մկրտեցան միայն, այլև հարցանէին<sup>1</sup> ուսանել հնարս, հասանել պարգևացն Աստուծոյ: Եւ նա եղ աւրէնս ո՛չ բարձրագոյնս, այլ կարելիս կամողացն ի վեր ելանել: Եւ չափէ զաւրէնսն ըստ աւրուեստին և գործոյն<sup>2</sup>, զի ո՛չ միով ճանապարհաւ ամենեքին զաւրէն գնալ, և ո՛չ ի նոյն տեղիս հասանել: Վասն որոյ ըստ աւաքինութեան շաւղացն և աւթեվանքն<sup>3</sup> չափեցան: Ըստ այնմ՝ «Ի տան Հաւր իմոյ աւթեվանք<sup>4</sup> բազում են» (Յովհ. ԺԴ 2):

**Ասէ ցնոսա. Մի՛ աւելի քան զհրամայեալսն ձեզ առնէք** (Գ 13):

Թէպէտ աւրէնք գոյին, սոքա անաւրէնք էին: Այլ նա բառնալ զայս ո՛չ ունէր, քանզի իշխանութեանց<sup>5</sup> հաստատեալ էր: Եւ Քրիստոս ո՛չ ուսոյց ապստամբ լինել յաւրինաց թագաւորացն, 65բ բայց ի հաւատոցն և եթ: // Եւ առաքեալ հրամայէ հատուցանել ամենեցուն զպարտսն, զհարկս, զմաքս, զերկի[ւ]ղ:

**Հարցին ցնա զինուորքն. Եւ մեք զի՞նչ գործեսցուք** (Գ 14):

Թէպէտ իւրաքանչիւր ոք յիրս ինչ աշխարհիս բերմամբ ըմբռնի, սակայն ընտրին բազում պիտանիք ի վատթար արուեստից և չարք ի բարի խրատողաց: Եւ ահա յայտնի ի դպրացն և ի փարիսացոցն, որք աւրինաւքն սնան և զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս, և ո՛չ հաւատացին քարոզութեանն Յովհաննու: Եւ ահա մաքսաւորք և զինուորք յանբարի գործոց բարի<sup>6</sup> գտան:

**Ասէ ցնոսա. Մի՛ զոք խուկեցէք և մի՛ զոք զրպարտիցէք: Շատ լիցի ձեզ թոշակն ձեր** (Գ 14):

Խրատէ ցնոսա որպէս պատշաճ է: Զի նոքա, որ յայս հարեալ են<sup>7</sup>, իբրև զգազանս ձեացուցանեն զանձինս առ տկարս՝ յափշտակել և կեղեքել, և զանպարտսն պարտաւոր առնեն<sup>8</sup>, խոշոր<sup>9</sup> և անընդել դիմաւք վարին, զի լցցեն աւարաւ գտունս իւրեանց: Արդ՝ յայսպիսեաց<sup>10</sup> խրատէ ի բաց լինել, և շատանալ միայն իւրեանց վաստակաւքն, զոր կարգեցին թագաւորքն: Եւ այն համարեալ լիցի նոցա որպէս պտուղ երկրագործաց[ն]:

<sup>1</sup> B հարցանեն

<sup>2</sup> B գործոցն

<sup>3</sup> A օթեանքն

<sup>4</sup> A օթեանք

<sup>5</sup> A յիշխանութեան

<sup>6</sup> B բարիք

<sup>7</sup> B էին

<sup>8</sup> B առնել

<sup>9</sup> B և խոշոր

<sup>10</sup> B յայսպիսեաց իրաց

Մինչ ակն ունէր ամենայն ժողովուրդն, և<sup>1</sup> խորհէին ի սիրտս իւրեանց, եթէ նա իցէ Քրիստոսն՝ վասն Յովհաննու<sup>2</sup> (Գ 15):

Վասնզի «ժամանակն մերձեալ էր» (հմմտ. Յովհ. Դ 23)՝ ըստ մարգարէիցն, որ սահմանեցին զգալուստ նորա, և ամենայն ոք ակն ունէր: Եւ տեսեալ զՅովհաննէս այնպիսի վարուք, զոր ո՛չ ոք տեսին<sup>3</sup> այնպէս ի մարդկանէ, կարծէին թէ սա իցէ Քրիստոսն:

66ա // Պատասխանի ետ. Ես մկրտեմ զձեզ ջրով (Գ 16, տե՛ս Մատթ. Գ 11):

ՅՀ Այսու յայտ առնէ, եթէ կամաց ևեթ պէտք են և հաւատոց և ո՛չ ապաշխարութեան կամ քրտանց<sup>4</sup>: Զոր աւրինակ դիւրագոյն է մկրտել, նոյնպէս դիւրագոյն է նորոգել և լինել առաքինի, որպէսզի ասիցէ. «Իմ մկրտելս<sup>5</sup> մարմնական է, Նորայն՝ սրբող<sup>6</sup> է հոգւոյն»:

ԻԳ Փոքրկացոյց զիւր մկրտութիւնն սոսկ ջուր ասելով: Վասն այսորիկ Յովհաննէս վարդապետէ զՔրիստոսի բարձրութիւնն:

«Յապաշխարութիւն» (Մատթ. Գ 11):

ՅՀ. Յուցանէ զնուազութիւն իւրոյ մկրտութեանն, եթէ ո՛չինչ աւելի էր, բայց միայն ապաշխարութիւն: Զի ո՛չ ասաց, եթէ ես մկրտեմ զձեզ ի ջուր թողութեան, այլ եթէ՝ «յապաշխարութիւն»:

Ստ. Յայտ արար, եթէ աւգտեց[ուց]անէ զայնոսիկ, որք բարի կամաւք և ուղիղ մտաւք մերձեանան: Եւ դատապարտէ զայնոսիկ, որք<sup>7</sup> կամակորութեամբ մկրտին:

Բայց որ զկնի<sup>8</sup> իմ գայ՝ զաւրագոյն է քան զիս (Գ 16, տե՛ս Մատթ. Գ 11):

Անճառ պարզեաւք լի է: Զի մի՛ յորժամ լուիցես, եթէ «զաւրագոյն է քան զիս», և համեմատութիւն ինչ իբրև ընդ մեծի և ընդ փոքու առնիցես զնորայն ընդ իս: Քանզի ո՛չ ընդ ծառայս յետինս արժանի եմ ընդ կարգ մտանել և ո՛չ սակաւ մասն ինձ սպասաւորութիւն<sup>9</sup> ցուցանել:

<sup>1</sup> Ե չիք և

<sup>2</sup> Ե **դրփիս** վասն Յովհաննու թէ նա իցէ Քրիստոսն

<sup>3</sup> Ե ետես

<sup>4</sup> Ե **չիք** և ոչ ապաշխարութեան կամ քրտանց

<sup>5</sup> Ե մկրտութիւնս

<sup>6</sup> Ե սրբաւղ

<sup>7</sup> Ե որ

<sup>8</sup> Ե զհետ

<sup>9</sup> Ե սրբ.՝ սպասաւորութեան

**Ես չեմ բաւական բառնալ գկաւչիկս նորա** (Գ 16, տե՛ս Մատթ. Գ 11):

ՅՀ Վասն այսորիկ ո՛չ գկաւչիկս միայն, այլև ո՛չ<sup>1</sup> զխրացս կաւչկացն, որ վա[տ]թարագոյն թուի և նուազ մասն սպասաւորութեան: Յետ իմ յայտնելոց է, որում<sup>2</sup> ո՛չ եմ արժանի

ՍՏ զբանս երկուս կաւչկաց նորա՝ զմարդանալոյն և ի դժոխս զի-  
66բ ջան(//)ելոյն մտաւք իմաւք<sup>3</sup> իմանալ և մեկնել: Կամ զբան և զմեկնութիւն Հին և Նոր Կտակարանաց ցուցանէ աննախանձ դանչափ բարձրութիւնն, որով նա մկրտէ զհաւատացեալս:

**Նա մկրտէ զձեզ ի Հոգին Սուրբ և ի հուր** (Գ 16, տե՛ս Մատթ. Գ 11):

ՅՀ Տե՛ս, աստ զիմաստութիւն Մկրտչին: Զի յորժամ ինքն քարոզէր, արհաւիրս ի վերայ արկանէր, և<sup>4</sup> յորժամ առ Տէրն առաքէ, քաղցունս և ախորժականս ցուցանէ: Աստ և զառաւելութիւն կարգացն յայտ արար, զի ո՛չ ասաց, եթէ տացէ ձեզ զՀոգին Սուրբ, այլ եթէ՝ «մկրտեսցէ զձեզ»

**Ի հուր** (Գ 16):

Եւ պատմութեամբ հրոյն զյորդ<sup>5</sup> և<sup>6</sup> զանարգել զչնորհս ցուցանէ՝ զմեղացն թողութիւն, և զպատժոցն ազատութիւն, և զորդեգրութիւն<sup>7</sup>, և զեղբայրութիւն:

**Հոգին Սուրբ** (Գ 16):

Կղ.(կր.) Վասնզի նովաւ լինելոց է մկրտութեանն մաքրութիւն: Վասն այսորիկ նախ՝ ի Հոգին ասաց, և ապա՝ ի հուր: Վասնզի որպէս բաժանէ հուր զնիւթն յիւրաքանչիւր աղտեղութեանց և նորածես գործէ, այսպէս և՝ Քրիստոսի մկրտութիւն: Վասնզի և հրէայքն, թէպէտ<sup>8</sup> ո՛չ խոստովան[է]ին զնա յայտնապէս գոլ Քրիստոս, սակայն այնպէս խորհրդածէին զնմանէ: Վասն այնորիկ<sup>9</sup> և Յովհաննէս վարդապետէ զՔրիստոսի բարձրութիւնն:

Ստ. Զի ո՛չ միայն մեղացն թողութիւն շնորհէ, այլ ամենեւին ջնջումն և ծախումն արասցէ՝ թողութիւն Հոգւովն և ջրովն, և ծախումն հրովն իմանալեան:

<sup>1</sup> B չեք ոչ  
<sup>2</sup> B որոյ  
<sup>3</sup> B իմովք  
<sup>4</sup> B չեք և  
<sup>5</sup> B գորդոյ  
<sup>6</sup> B չեք և  
<sup>7</sup> B գորդիութիւն  
<sup>8</sup> B թէպէտև  
<sup>9</sup> B այսորիկ

**Որոյ Հեծանոցն ի ձեռին իւրում է** (Գ 17, տե՛ս Մատթ. Գ 12):

67աՅՀ Վերագոյն գտանջանացն ճառս յայտ արար: Իսկ աստ զ(11)դատաւորն ամենեցուն մատամբն ցուցանէ, զի մի՛ ծուլասցես<sup>1</sup> մեծամեծ խոստմամբքն: Յարէ ի նոյն զընտրութիւն Հեծանոցին, որ լինիցի: Մի՛, ասէ, բաւական Համարիցիք<sup>2</sup> զմկրտութիւնն, թէ յետ այնր անպիտան լինիցիք: Քանզի պիտոյ էր քաջութիւնն և զգաստութիւնն յետ մկրտութեանն: Քանզի Հեծանոց Քրիստոսի զաւրութիւնն է՝ ընտրող<sup>3</sup> և որոշող, ցորենոյ և յարգոյ, արդարոց և մեղաւորաց:

**Սրբեսցէ զկալն իւր** (Գ 17, տե՛ս Մատթ. Գ 12):

Ստ. Կալն երկիրս է, որպէս ի Դատաւորսն գրեալ է, թէ եղ Գեթեհոն<sup>4</sup> զգեղմն ի կալին (տե՛ս Ղատ. Զ 36-40), որ են տիեզերք ամենայն, որ յառաջագոյն չորացեալ էին յաստուածպաշտութենէն, բայց միայն ի վերայ բրդին իջեալ ցաւղն, որ են իսրայելեան տունն: Իսկ ի վաղիւն չորութիւն ի վերայ գեղմանն և ի վերայ ամենայն կալուն անձրև, որ նշանակէր զչնորհս Սուրբ Հոգւոյն բարձեալ ի հրէիցն և տալ Հեթանոսաց զգալարութիւն[ն]:

**Ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս<sup>5</sup> իւր** (Գ 17, տե՛ս Մատթ. Գ 12):

ՅՀ Եթէ կացցես մնասցես ցորեան, թէպէտ փորձութիւնք գան ի վերայ, ոչինչ կրեսցես վիշտս, զի՝ «Ի՞<sup>6</sup> կալն կամնասայլք սղոցածև զցորեան[ն] ո՛չ կարեն կոտորել» (տե՛ս Ես. ԽԱ 15):

**Եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով<sup>7</sup>** (Գ 17, տե՛ս Մատթ. Գ 12):

Մի՛ այտուհետև լինիցիս յարդ, և այսր և անդր աղամող<sup>8</sup> իցես իբրև զուռ: Եւ մի՛ չար ցանկութեանն կայցես<sup>9</sup> առընթեր, թէ յարդի<sup>10</sup> տկարութիւն իջանես: Աստ անհնարին աղետ կրեսցես, կամնասայլիւք<sup>11</sup> մանր կոտորիս<sup>12</sup>, և անդ զանմահականսն ընդունիցիս գտանջանսն:

<sup>1</sup> B ծուլանայցեն

<sup>2</sup> B Համարիք ձեզ

<sup>3</sup> A ընդրող

<sup>4</sup> B Գեղէտվն

<sup>5</sup> A յշտեմարանս

<sup>6</sup> B չէք ի

<sup>7</sup> B հրովն

<sup>8</sup> B աղամաղ

<sup>9</sup> B կացցես

<sup>10</sup> B յարդի նման ի

<sup>11</sup> B և կամնասայլիւք

<sup>12</sup> A կոտորել

67բ **ԶՀերովդէս // յանդիմանէր, և նորին<sup>1</sup> արկաւ ի բանդ<sup>2</sup>** (*հմմտ.* Գ 19-20):

ՍՏ **Հերովդէս և կինն խորհուրդ արարին, զի կինն խնդրե[ս]ցէ և Հերովդէս երդնուցու և ասացէ, թէ ո՛չ ստեմ գերդումն իմ: Արդ<sup>3</sup>՝ ապաշաւեաց նա, երդնուցու<sup>4</sup> տալ զգլուխն Յովհաննու յետոյ<sup>5</sup>, զի այնպէս կարծեսցեն, թէ ո՛չ էր կամք իւր: Արդ՝ աւրինացն հրաման էր զմեռեալ եղբաւրն կինն առնուլ: Բայց որում ուստր է կամ դուստր՝ ո՛չ էր աւրէն առնուլ, զի որում ո՛չ իցէ զաւակ, յարուսցէ զաւակ եղբաւրն և դիցէ զանուն եղբաւրն՝ իբր յարութիւն լինել եղբաւրն:**

**Յիսուս էր ամաց երեսնից** (Գ 23):

Կր. **Ընդէ՞ր ասէ Յիսուս երեսնամեայ մկրտեցաւ և ո՛չ ըստ որ[ոյ] այժմ ի նա հաւատացեալքս<sup>6</sup>: Վասնզի զթլփատութիւնն ի տղայական հասակի ըստ Աւրինացն կատարեաց՝ առ ի ցուցանել, եթէ իւր են տուեալ աւրէնքն և ինքեամբ ելից և չէ հակառակ Աւրինացն: Վասն որոյ թողու զմկրտութիւնն մինչև [յ]երեսուն ամն, զի զԱդամ յայնպիսում ստեղծ հասակի, որ ի ձեռն մեղացն ապականեցաւ, բայց զի դարձեալ զանապականութիւն և զանմահութիւն վերստին ծննդեամբն էաք ժառանգելոց: Վասն այնորիկ և ի նմին ժամանակի և ի հասակի<sup>7</sup> մկրտի<sup>8</sup>:**

**Սկսեալ լինել** (Գ 23):

**Մարմնովն ընդ ժամանակաւ մտեալ ի մաւրէ, և ունի զանժամանակն ի Հաւրէ:**

**Որպէս և կարծէր** (Գ 23):

**Յայնցանէ, որք ո՛չ էին տեղեակ խորհրդոց նորա:**

<sup>1</sup> B նորին աղադաւ

<sup>2</sup> B բանտ

<sup>3</sup> B և յետոյ *փի* արդ

<sup>4</sup> B *չիք* երդնուցու

<sup>5</sup> B *չիք* յետոյ

<sup>6</sup> B հաւատացեալք

<sup>7</sup> B հասակին

<sup>8</sup> B-ում կրկնված է՝ «եւ նաքն Յիսուս էր ամաց երեսնից... հասակի մկրտի» (*տե՛ս էջ 61ա*), որից հետո շարունակվում է. «[Ա,յլ] *Իսկ հաւատացեալք ո՛չ մկրտին վասն Գ (3) պատճառի: Նախ՝ զի բնութիւն տղայոցն յոյժ տկար է, շուտով կարէ մեռանիլ և կորնչի առանց մկրտութեան, վասն այն պարտ է շուտով մկրտել: Իսկ որք յապաղեն և ո՛չ մկրտեն ծնաւդքն թէ՛ քահանայք և թէ՛ այլք, մահու չափ մեղանչեն: Դարձեալ. վասն փորձութեան սատանայի պարտ է շուտով մկրտել, որ սատանայ վնաս չառնէ հոգւոյն կամ մարմնոյն: Դարձեալ. զի տղայութիւնն դիւրաւ մտանէ յիրս ինչ և հաստատագոյն տպաւորի ի նմա ամենայն գործ բարեպաշտութեան»: Այնուհետև շարունակվում է. «Սկսեալ լինել...»:*

**Թէ որդի իցէ Յովսիփայ<sup>1</sup>, որ Հեղիայն,**

60ա

<sup>1</sup> B Յովսիփայ: շարունակվում է (տ՝ 59բ-60բ). «Այլ Բազում և այլ ինչ մխիթարութեան աւետարան էր ժողովուրդն: Բայց Հերովդէս չորրորդապետ, յանդիմանեալ ի նմանէ վասն Հերովդիայ կնոջ եղբաւր իւրոյ և վասն ամենայն չարեացն, զոր գործեաց Հերովդէս, յաւել և զայն ևս ի վերայ ամենայնի և եղ ի բանտի գՅով- Հաննէս: Եւ եղև ի մկրտելն ամենայն ժողովրդեանն, և ըստ Յիսուսի մկրտելն և կալ յաղաթս, բանալ երկնից և իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր տեսեամբ իբրև զաղաւնի ի վերայ նորա: Եւ զալ ձայն ի յերկնից, որ ասէր. «Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ Հաճեցայ» (Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22), «Դմա լուարուք» (Թ 35):

Հաւրն բարբառն եաւթն գերազանցութիւն ցուցանէ առ Որդի: Նախ՝ որ ասէ «Դա», գմիւտութիւն Բանին և մարմնոյն ցուցանէ անբաժանելի: Զի ո՛չ ասէ «գոք», որ է երկու անձն, և ո՛չ «ի դմա», որ է երկու բնութիւն, այլ՝ «դա» և «գոք», մի՛ անձն և միացեալ բնութիւն: // Երկրորդ, որ ասէ «է՛», որպէս ասաց. «Ես եմ, որ էն» (Եւր Գ 14), այսինքն՝ մշտնջենաւոր և անփոփոխելի մարմնով: Երրորդ՝ «Որդի», այսինքն՝ ի բնութենէ իմմէ ծնեալ նախքան զյաւիտեանս և ժամանակաւ ծնեալ ի մաւրէ նոյնն որդի: Չորրորդ՝ «իմ», այսինքն՝ Համագոյա- կից իմ և ո՛չ կրտսեր և միւտորեալ մարմնովն փառակից իմ եղև: Հինգերորդ՝ որ ասէ «սիրելի»՝ գՀամակամութիւնն ընդ իւր ցուցանէ, զի մի է կամք և մի գործ Հաւր և Բանին մարմնացելոյ: Եւ «սիրելի», զի ո՛չ է ատելի Որդի, որպէս Հինն Իսրայէլ: Վեցերորդ՝ «ընդ որ Հաճեցայ», զիւր և զՀոգւոյ Հաճութիւնն ասէ ի տնաւրէնութիւնն Որդւոյ: Եւթներորդ՝ «դմա լուարուք», որ հաւասար է իմ և ձեզ, զի Աստուած է մարգացեալ: Այլև զվճիռ դատաստանին լուարուք:

Եւ թէ վասնէ՞ր Քրիստոս ի Յովհաննէ մկրտեցաւ: Նախ՝ վասն այն մկրտեցաւ, զի աւրինակ խոնարհութեան տացէ: Որպէս ասաց Տէրն. «Թոյլ տուր այժմ, զի այսպէս պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս» (Մատթ. Գ 15), այսինքն՝ զխոնարհութիւնն: Զի յորժամ ետես Յովհաննէս, զահի Հարեալ դողայր, և ասէ. «Տէր, ինձ պարտ է ի քէն մկրտիլ և դու առ ի՞նչ դաս» (Մատթ. Գ 14): Ո՛վ ետես, ե- թէ կաւն զՆուրն սրբէ: Արդ՝ ես կաւ եմ և դու ջուր սրբարար, «և դու առ ի՞նչ դաս» ի սրբութիւն: Ո՛վ ետես, եթէ խոտ գՀուր այրեսցէ, «և դու առ ի՞նչ դաս» ի մաքրութիւն: Ո՛վ ետես, եթէ ճրագ զարեգակն լուսափայլեսցէ, «և դու առ ի՞նչ դաս» ի լուսաւորութիւն: Նուազն ի մեծէն առնու զաւրՀնութիւն: Եւ դու արա- րիչ և ես արարած, որպէ՞ս իշխեմ մկրտել զքեզ: Ասէ. «Թոյլ տուր այժմ, զի այս- պէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս» (Մատթ. Գ 15): Այս է. «Մեծն խոնարհեցաւ, զի զմեզ բարձրացուցէ» (հմմտ. Մատթ. ԻԳ 12, Ղուկ. ԺԴ 11, ԺԸ 14): Աստուած մարդ եղև, զի մարդն լինիցի Աստուած: Տէրն եղև ծառայ, զի ծառայն լինիցի Տէր: Աստուած յերկնից էջ ի յերկիր, զի մարդն ի յերկրէ երկնիցէ յեր- կինս: Աստուած եղև Որդի մարդոյ, զի մարդն լինիցի Որդի Աստուծոյ: Անմահն եղև մահկանացու, զի մահկանացուն լինիցի անմահ: Մեծատունն յամենայնի ե- ղև աղքատ, զի զաղքատսն փարթամացուցէ: Նսեմացաւ լոյսն, զի զմեզ լուսա- ւորեսցէ: Քաղցեաւ Հացն, զի զմեզ յագեցուցէ: Ծարաւեցաւ աղբերն, զի զմեզ արբուցէ: Տրտմեցաւ ուրախութիւնն, զի զմեզ ուրախացուցէ: Երկնչէր Համար- ձակութիւնն, զի զմեզ զաւրացուցէ: Վաստակեցաւ ճանապարհն, զի զգնացս մեր առ երկնայինսն ուղղեսցէ: Այսպէս և սրբութիւնն մկրտեցաւ, զի զմեզ ի մե- ղաց սրբեսցէ:

60բ

Իսկ թէ վասնէ՞ր մկրտեցաւ ի Յորդանան գետ: Առաջին պատճառ՝ զի Յորդանանն ի ճանապարհ Աւետեաց երկրին է, // ընդ որ անցին իսրայէլացիքն՝ առաջնորդութեամբն Յեսուայ: Իսկ խոստացեալ եր- կիրն գերկնից արքայութիւնն ցուցանէ: Եւ մկրտութիւնն, զոր կացոյց Քրիստոս, ճանապարհ է երկնից արքայութեանն: Ըստ այնմ՝ «Որ ո՛չ ծնցի ի ջրոյ և ի Հոգ- ւոյ, ո՛չ մտցէ յարքայութիւնն Աստուծոյ» (Յովհ. Գ 5):

Դարձեալ. զի որպէս Յեսուա յետս դարձաւ մեղքն Ադամայ:

Դարձեալ. որպէս Յեսուա միջնորդութեամբն Յորդանանու անցոյց զիսրայէլա- ցոց ժողովուրդն յերկիրն պարգեաց, նոյնպէս և Յիսուս Քրիստոս Որդին Աստու- ծոյ մկրտութեամբն իւրով ի Յորդանան անցոյց զժողովուրդն յերկնից արքայու-



68ա //որ Մաթիային<sup>1</sup> (Գ 23):

Ղուկաս զՀեղի ասէ Հայր Յովսեփայ, և Մատթէոս՝ զՅակոբ  
(տե՛ս Մատթ. Ա 16):

US Արդ՝ ասելի էր, թէ երկուցունցն որդի էր Յովսէփ, Յակոբայ՝  
բնութեամբ, և Հեղիայ՝ որդեգրութեամբ: Եւ Հեղի և Յակոբ եղ-  
բարք էին ո՛չ ի միոջէ հաւրէ, այլ ի մի մաւրէ: Հեղի անորդի մե-  
ռանի և զկիւնն Հեղեայ<sup>2</sup> առ Յակոբ, զի յարուսցէ զաւակ եղբաւրն

թիւնն: Այլ ոմանք ո՛չ անցին յիսրայելացն յայնկոյս Յորդանանու, զի սիրէին  
զանասունս իւրեանց, նոյնպէս անասնաբարոյքն ո՛չ մտանեն յերկիրն պարզեա-  
կան, որ ո՛չ հաւատացին Քրիստոսի Աստուծոյ մերոյ խոստմանն, որ չմտանեն  
յարքայութիւնն երկնից:

Դարձեալ. երկոտասան քարինքն հանաւ ի յոտնատեղաց քահանայիցն ի Յոր-  
դանանու և սեղան շինեցաւ Աստուծոյ: Եւ երկոտասան քարինք արտաքոյ բե-  
րեալ եղաւ ի գետն Յորդանանու, որ ցուցանէ, թէ երկոտասան առաքեալքն ժո-  
ղովրդովք իւրեանց ելին ի ջրոյ մեղաց հաւատովն Քրիստոսի: Եւ երկոտասան  
ազգ որդոցն իսրայելի մտին ի ջուր մեղաց՝ ո՛չ հաւատալով քարոզութեան Աւե-  
տարանին Քրիստոսի:

Այլ և այս գիտելի է, զի խորհուրդ մկրտութեանն է խորհուրդ հաւատոյ, զի  
մկրտութեամբն լինի սկիզբն հաւատոյ: Եւ որպէս Յեսու ընտրեաց երկոտասան  
մարդ, որ երկոտասան քարինս հանին ի Յորդանանու և եզին ի ցամաքի (տե՛ս  
Յեսու Դ 1-4), նոյնպէս Քրիստոս ընտրեաց զերկոտասան առաքեալսն, որ երկոտա-  
սան քարինք, պատուական ակունք, որ է հիմն հաւատոյ, հանին ի Յորդանանու,  
այսինքն ի մկրտութենէն:

Ձառաջինն քարն եհան Պետրոս՝ ասելով. «Հաւատամք ի մի Աստուած, Հայր ա-  
մենակալ, արարող երկրի» (հմմտ. Ժ 21, ԺԸ 19, Յակ. Բ 19):

Երկրորդ՝ Յովհաննէս. «Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ»  
(հմմտ. Գործք ԺԱ 17):

Երրորդ՝ Յակոբոս. «Յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ և ծնաւ ի Մարիամայ կուսէն»  
(հմմտ. Մատթ. Ա 18):

Չորրորդ՝ Անդրէաս. «Չարչարեալ, խաչեալ, մեռեալ և թաղեալ» (հմմտ. Գործք Բ  
29):

Հինգերորդ՝ Թովմաս. «Իջեալ ի դժոխս»:

Վեցերորդն՝ Բարթոլղիմէոս. «Յերրորդ աւուր յարուցեալ» (հմմտ. Մատթ. Ժ 22,  
Ի 19, Ղուկ. Թ 22, ԺԸ 33):

Եւթներորդ՝ Փիլիպպոս. «Ելեալ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր» (հմմտ.  
Սաղմ. ԾԹ 1, Մատթ. ԻԲ 44, Սարկ. ԺԲ 36, Ղուկ. Ի 42, Գործ Բ 34, Եբր. Ա 13):

Ութերորդ՝ Մաթէոս. «Գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս» (հմմտ. Զոռմ. Գ  
19):

Իններորդ՝ Յակոբոս Ալփեայ. «Հաւատամք և ի Սուրբ Հոգին»:

Տասներորդ՝ Սիմոն. «Եւ ի Սուրբ Կաթողիկէ Եկեղեցի սրբոց հաղորդու-  
թեամբ»:

Մեոտասան՝ Թադէոս. «Եւ ի թողութիւն մեղաց» (հմմտ. Գ 3):

Երկոտասաներորդ՝ Մատաթիա. «Մարմնոյն յարութիւն և ի կեանսն յաւիտե-  
նական»:

Եւ որպէս երկոտասան քարն այն նշանակէ, թէ ընդ Յորդանան անցեալ են,  
նոյնպէս, որ հաւատայ յերկոտասան բանս յայս, նշանակէ, թէ մկրտեալ է:

Դարձեալ. եղիա բաժանեաց զՅորդանան յերկուս և անց յայնկոյս Յորդանա-  
նու և ապա վերացաւ հրեղէն կառաւք յերկինս: Այսպէս որք անցանեն ընդ ջուր  
մկրտութեանն, նոքա մկրտութեամբ հրով Հոգւոյն հասանեն յերկնից արքայու-  
թիւնն: Վասն այն պատշաճ էր Քրիստոսի մկրտիլ ի Յորդանան: Այսքան առ  
այս»:

<sup>1</sup> B Հեղեայն որ Մատաթային (տես էջ 61ա-ու)

<sup>2</sup> A Հեղի

իւրոյ ըստ Աւրինացն: Ծնաւ զՅովսէփ: Արդ՝ Յակոբայ բնութեամբ որդի է Յովսէփ, և Հեղիայ<sup>1</sup>, ըստ հրամանին Մովսիսի<sup>2</sup>:

Եւ ի վերջնումն սկսեալ բերէ զազգահամարն ի Յովսէփ<sup>3</sup> և<sup>4</sup> ի Դաւիթ և յԱբրահամ, յԱդամ և յԱստուած:

ԻԳ Իսկ Ղուկաս ի հոգևոր ծննդենէն կարգէ զազգահամարն և զրէ [զ]շնորհաւք որդիս[ն], եթէ եղաք մեք հոգևոր ծննդեամբ որդիք Աստուծոյ: Իսկ Մատթէոս աւետարանիչն թուէ յԱբրահամէ մինչև ի Քրիստոս (տե՛ս Մատթ. Ա 1-16), զի ի նոցանէ զաւակացն ծնանելոց էր<sup>5</sup> Քրիստոս: Մատթէոս զՍաղոմոն<sup>6</sup> ասէ, ի Սաղոմոնէ ի Մարիամ գայ: Ըստ բանի հրեշտակին. «Յովսէփ, որդի՛ Դաւիթ, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո» (Մատթ. Ա 20): Եւ Ղուկաս զՆաթան ասէ (տե՛ս Գ 31), զի ի նմանէ իջանէ յազգն Յովսէփ:

ԿԲ Ընդէ՞ր Մատթէոս առընթեր ծննդեան[ն] Քրիստոսի դնէ, իսկ Ղուկաս՝ առընթեր մկրտութեանն: Մատթէոս վերուստ ի վայր թուէ զազգն, իսկ Ղուկաս՝ ներքուստ ի վեր: Քանզի Մատթէոս զխոնարհումն յերկնից յերկիր<sup>7</sup> ի ձեռն ծննդաբանութեանն բացայայտէ, իսկ Ղուկաս առընթեր մկրտութեանն կարգէ զազգն, 68բ ներքուստ ի վեր թուէ: // Ձի որպէս ի ձեռն Ադամայ յանցանացն ի ստորև անկաք ի<sup>8</sup> բնակութիւն, այսպէս և Քրիստոսի մկրտութեամբն վերստին<sup>9</sup> դարձաք յերկինսն: Որպէս Ադամ ի ձեռացն

<sup>1</sup> Ե Հեղեայ

<sup>2</sup> Ե Մովսեսի, որպէս յառաջիկայդ շարագրէ աւետարանիչն Ղուկաս: Որ Յակոբայն, որ Հեղեայն, որ Մատթէայն: Որ Դևեայն, որ Մելքեայն, որ Յաննեայն, որ Յովսեփայն: Որ Մատթէայն, որ Ամովսայն, որ Նաուամայն, որ Եսդեայն, որ Նանգեայն: Որ Մատթէայն, որ Մատթէայն, որ Սեմեայն: Որ Յովսեփայն, որ Յովգայն: Որ Յովնանայն, որ Բեսայն, որ Զորոբաբելին, որ Սաղաթիելին, որ Ներէայն: Որ Մեղքէայն, որ Ադդեայն, որ Կովսամայն, որ Ելմովղաղայն, որ Երայն: Որ Յեսուայն, որ Եղիազարայն, որ Յովրամայն, որ Մատթէայն, որ Դևեայն: Որ Սիմէոնին, որ Յուզային, որ Յովսեփայն, որ Յովնամայն, որ Եղիկիմայն: Որ Մեղքեայն, որ Մեննայն, որ Մատթէայն, որ Նաթանայն, որ Դաւիթին: Որ Յեսսեայն, որ Ովբեթայն, որ Բոյոսայն, որ Սաղմանայն, որ Նասսոնին: Որ Ամինադաբայն, որ Արամայն, որ Ադմեայն, որ Առնեայն, որ Եսրովմայն, որ Փարեսին, որ Յուզային: Որ Յակոբայն, որ Իսաակայն, որ Աբրահամուն, որ Թարային, որ Նաքովրայն: Որ Սերուքայն, որ Բազալայն, որ Փաղեկայն, որ Եբերայն, որ Սաղային: Որ Կայնանայն, որ Արփաքսաթայն, որ Սեմայն, որ Նոյին, որ Դամեքին: Որ Մաթուսաղային, որ Ենովքայն, որ Յարեղին, որ Մաղաղիէլին, որ Կայնանայն: Որ Ենովսայն, որ Սեթայն, որ Ադամայն, որ Աստուծոյն (Գ 23-38)

<sup>3</sup> Ե Յովսեփայ

<sup>4</sup> Ե չիք և

<sup>5</sup> Ե է

<sup>6</sup> Ե զՍողոմոն (այսուհետ չենք նշում)

<sup>7</sup> Ե Ե ի յերկիր

<sup>8</sup> Ե չիք ի

<sup>9</sup> Ե դարձեալ վերստին

*Աստուծոյ ստեղծեալ զգրախտն ընկալաւ բնակութիւն, այսպէս և մեր ի Քրիստոս մկրտեալք վերստին ժամանեցաք ի դրախտն<sup>1</sup>:*

**62ա** <sup>1</sup> *Բ շարունակվում է (էջ 61բ-62ա). «Այլ Այլև զայս պարտ է գիտել, զի որպէս աւետարանիչն Ղուկաս ի յայտնութենէ Հոգւոյն Աստուծոյ արար զպատմութիւն նախահարցն, նոյնպէս ասեն վարդապետք ի ժամ մկրտութեանն // Քրիստոսի, յորժամ տեսին զբազմացն երկնից զհայրական զձայնն զաղաւնակերպ իջումն Հոգւոյն, և հիացեալ զարմանային, թէ այս ո՞ր աղաբաւ եղև: Եւ ի Հոգւոյն Աստուծոյ շարժեալք ասեն, թէ վասն որդւոյն Յովսեփայ, որ Յակոբայն է որդի: Եւ հարցանելով՝ մի զմի տարեալ հասուցին ի յԱդամ և ի ստեղծաւղն Ադամայ՝ ծնունդ գոլ բնութեամբ զՅիսուս Քրիստոս կուսածին մարմնովն Աստուծոյ Հաւր իսկապէս: Զի բնութեամբ Որդին Աստուծոյ եկն և եղև բնութեամբ որդի Կուսին, և բնութեամբ որդի կուսին եղև բնութեամբ Որդի Հաւր Աստուծոյ: Վասնզի զանխառնելի աստուածութիւնն խառնեալ միացոյց ի բնութիւնս մեր անչփոթապէս, և զբնութիւնս մեր առեալ միացոյց յաստուածութիւն իւր անճառապէս»:*

## Գլուխ Գ

Եւ Յիսուս լի Հոգւովն Սրբով դարձաւ [ի] Յորդանանէ, և վարէր ի<sup>1</sup> Հոգւոյն յանապատ<sup>2</sup> (Դ 1-2):

ԵՓ Հան վարեաց զնա Հոգին յանապատն փորձել ի սատանայէ: Զի վասն քաղցրութեանն իւրոյ հակառակ ո՛չ կամեցաւ կալ ընդդէմ նորա, գուցէ լցցին ականջք լսաւղացն կարծեալք, եթէ ո՛չ կարէր նա դիմակաց լինել մարտի նորա: Վասն այնորիկ ո՛չ կամեցաւ նա երթալ ընդ փորձչին իւրոյ: Եւ մի՛ եղիցի տեղի ուրացողաց, թէ կրսերագոյն<sup>3</sup> է Հոգին քան զՈրդի: Զի թէ ի մարտ պատերազմի հանէր զնա և ո՛չ ի պատիւ և ի հանգիստ, զիա՞րդ ո՛չ քննեն զայս, եթէ կրսերութիւն էր Հոգւոյն քան զՈրդի<sup>4</sup>, զիա՞րդ ի Հոգւոյն տուեալ լինի իշխանութիւն հանել զնա յանապատ: Զի ահա իբրև իշխան երևեցաւ Հոգին Սուրբ՝ հանելով զնա յանապատ: Ո՛չ ոք գիտէ զմարդոյն, բայց եթէ հոգին, որ ի նմա է: Նոյնպէս և<sup>5</sup> զԱստուծոյն ո՛չ ոք գիտէ, բայց եթէ Հոգին Աստուծոյ: Եւ ո՛չ է Հոգի նորա ստացուած նորա: Աւրինակաւ հաւանեցուցանէ զմեզ, զի ո՛չ է հոգիս մեր աւտար բնութեանս մերում: Զի Հոգին Սուրբ քննէ զխորս[ն] Աստուծոյ: Ո՛չ եթէ ուսանելով 69ա քննէ: Զի այն, որ քննին, // փոքր է քան զայն, որ քննեն: Զի Տէր Աստուած<sup>6</sup> մեծ է և՛ «Քննէ զերիկամունս<sup>7</sup> և զսիրտս մեր» (հմտ. Սաղմ. Է 10, Երեմ. ԺԱ 20), զի ասէ. «Մկրտեցէք զնոսա յանուն Հաւր և Որդ[ւ]ոյ և Հոգ[ւ]ոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 19): Եւ ո՛չ ասաց, եթէ յանուն Հաւր և յանուն Որդւոյ և յանուն Սուրբ Հոգւոյն: Զի ցուցցէ, եթէ մի է բնութիւն նոցա, որ ի մի անուան անդ երիս անձինս անուանեաց:

«Դուք տաճար Աստուծոյ էք, և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» (Ա Կորն. Գ 16):

Եւ եթէ տաճար են, զիա՞րդ են ի բնութենէ Հոգւոյն: Եւ ի Գործս Առաքելոցն ասէ. «Փոխանակ զի հաճոյ եղև ձեզ. փորձել զՀոգին Տեառն» (Գործք Ե 9): Եւ դարձեալ ո՛չ ստեցեր մարդկան, այլ՝ Աստուծոյ:

<sup>1</sup> B **չեք** ի

<sup>2</sup> B յանապատ աւուրս քառասուն փորձել ի սատանայէ

<sup>3</sup> B կրսերագոյն (այսուհետև չենք նշում)

<sup>4</sup> B զՈրդոյ

<sup>5</sup> B և ոչ

<sup>6</sup> B **չեք** Աստուած

<sup>7</sup> B զերիկամունս

ՅՀ Ե՞րբ: Յետ Հոգւոյն Սրբոյ իջանելո՞յ, յետ<sup>1</sup> բարբառոյն ի վերայ գալո՞յ. «Դա՛ է Որդի իմ սիրելի» (Մատթ. Գ 17, ԺԷ 5, Մարկ. Թ 6): Եւ զարմանալի այն է, զի ի Հոգւոյն Սրբոյ ասէ ելանել, զի զամենայն ինչ վասն մեր վարդապետութեան արար, զի իւրաքանչիւր ոք ի մկրտելոցն, յորժամ ի մեծամեծ փորձութիւնս անկանիցին, մի՛ խոռովեսցին և մի՛ լքեալ գտանիցին: Զի ո՛չ եթէ վասն այնորիկ առեր զգէնն, եթէ վատնիցիս, այլ զի կռուիցիս: Զի<sup>2</sup> ուսցիս, եթէ որչա՞փ ինչ զաւրագոյն եղեր ի Հոգւոյն, վասն այնորիկ ո՛չ վայրապար երթայ յանապատն: Այլ եթէ ի Հոգւոյն Սրբոյ վարեցաւ ըստ տնտեսութեանն, զի մի՛ ոք իւրովի դիմեսցի ի փորձութիւնս, այլ վարեալ յայլոց կայցէ<sup>3</sup> պնդակազմ և առաքինասցի:

Կր.(եփ.) Զի շնորհք մկրտութեանն ի մեզ լինելոց է անմեկնելի, ըստ Հոգւոյն Սրբոյ աներևոյթ երևամբ, զոր անդ աղաւնակերպ երևեցաւ: // Զի ցուցցէ, եթէ ո՛չ զկնի մկրտութեանն շնորհք Հոգւոյն մեկնին, միայն եթէ արժանաւորապէս<sup>4</sup> զանձինս յաւրինեսցեմք<sup>5</sup>:

ԵՓ Վասնէ՞ր մինչև յերեսուն ամն ո՛չ փորձեաց զնա: Քանզի նշան յերկնից ի վերայ աստուածութեան նորա ո՛չ էր տուեալ, և դոյզնաբար իբրև զայլս էր նա<sup>6</sup>, և ո՛չ վկայութիւնս մեծամեծս ի ժողովրդենէն ունէր նա: Լռեաց նա ի փորձելոյ զնա մինչև ի սկիզբն այսոցիկ: Այլ իբրև լուաւ նա, եթէ՝ «Ահաւասիկ Քրիստոս<sup>7</sup>՝ Փառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա 29), յափշտութիւն մեծ կայր նա: Սակայն համբեր<sup>8</sup> մինչև մկրտեցաւ Յիսուս: Տեսանել, թէ իբրև զկարաւտեալ մկրտի, և ետես<sup>9</sup> [զ]լցուցիչ կարաւտութեան զեկեալն ի մկրտութիւն: Եւ զի էջ ի ջուր անդ և զփայլիւն<sup>10</sup> լուսոյն<sup>11</sup> ի վերայ ջուրցն և զձայնն, որ եղև յերկնից: Եդ ի մտի իւրում և ասէ. «Եթէ մարտիւ փորձանաց ո՛չ փորձեմ զնա, ո՛չ կարեմ ճանաչել զնա»: Յովհաննէս ո՛չ գրեաց զփորձութիւնս<sup>12</sup>, վասնզի աստուածաբան էր. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն» (Յովհ. Ա 1): Քանզի Աստուծոյ և լուսոյ աստուածութեանն անհնարին է փոր-

1 B և յետ  
 2 B այլ զի  
 3 B կացցէ  
 4 B արժանապէս  
 5 B յաւրինիցիմք  
 6 B և դոյզնաբար... նա՝ տառերը թափված են  
 7 B չիք Քրիստոս  
 8 B համբերեաց՝ եաց-ը այնուհետև ջնջած  
 9 B թէ իբրև  
 10 B զփայլումն  
 11 B լուսոյն ետես  
 12 B զփորձութիւնսն

ձեզ<sup>1</sup>, այլ՝ ըստ մարդկութեանն, զոր էառ ի փրկութիւն մեզ: Վասն այսորիկ լռեաց Յովհաննէս:

ԻԳ Եկն սատանայ փորձել, զի կա՛մ առցէ զչափ զաւրութեան նորա, կա՛մ իբրև զտկար յանդիմանեացէ զնա վասն բարբառոյն  
70ա Հաւր, // որ վկայեաց ի վերայ նորա: Եւ յամենայն մեքենայս խաբէութեան նորա գնաց ընդ նմա, և նա ո՛չ կարաց հասու լինել բնութեան<sup>2</sup> նորա:

Եւ ո՛չ եկեր և ո՛չ արբ յաւուրսն յայնոսիկ, և քաղցեալ<sup>3</sup> (Դ 2):

ԵՓ. Վասնզի յաղթեացէ ախոյանին և առաջի ամենեցուն խայտառակեացէ զհպարտութիւն նորա, և ուսուցանէ մեզ բանիւք իւրովք քաղցնուլ Բանին Տեառն: Իսկ Մովսէս և Եղիայ ընդէ՞ր ո՛չ ուրեք յայտնին<sup>4</sup>, թէ քաղցեան, և Տէր մեր քաղցեալ: Զի յամալթ արասցէ զայնոսիկ, որք ասեն, եթէ ո՛չ էառ մարմին: Զի տացէ պատճառ սատանայի, զի տացէ պատճառս<sup>5</sup> թշնամոյն դիմել ի մարտ: Զի յորժամ գիրկ ընդ գիրկ խառնեցի, ցուցանէ, եթէ որպէ՞ս պարտ է կռուել և յաղթել: Եւ յորժամ մարտեալ մի անգամ և երկիցս և երիցս, զգետնեալ դիւրաւ ըստ իւրում պատշաճութեանն:

ՍՏ Փորձէ սատանայ զմարդիկ ո՛չ ջանիւ, իսկ զՔրիստոս՝ ո՛չ այնպէս: Վասնզի, թէ ի պահոցն ո՛չ էր քաղցեալ, սկիզբն փորձութեանն ո՛չ լինէր: Եւ յորժամ քաղցեալ, կարծէր<sup>6</sup> թէ սոսկ մարդ է: Յաղագս այնորիկ մատուցեալ՝ և փորձէր զնա:

Ասէ<sup>7</sup> ցնա սատանայ. Թէ Որդի ես Աստուծոյ, ասա՛ քարիդ այդմիկ, զի հաց լիցի<sup>8</sup> (Դ 3):

ԵՓ Եւ ո՛չ արար, զի մի՛ տացէ զցանկութիւն մեղաւորին: Բերանն  
70բ սատանայի դատապարտեցաւ, // թէ որ յԱստուծոյ է, կարող է զքարինս հաց առնել: Ուսուցանէ զնա Տէր մեր բանիւս<sup>9</sup>, թէ կարող է<sup>10</sup> զքարինս հաց առնել: Ուսի՛ր փորձիչ, թէ առանց հացի կարէ Աստուած լցուցանել զքաղցութիւն, կարէ և զքարինս դարձուցանել ի կերակուր: Կարէ և զքաղցութիւն լիացուցանել<sup>11</sup>,

<sup>1</sup> B փորձիլ

<sup>2</sup> B աստուածութեան

<sup>3</sup> B ի կատարելն նորա քաղցեալ

<sup>4</sup> B յայտնի

<sup>5</sup> B և *փխ* զի տացէ պատճառ

<sup>6</sup> B կարծեաց

<sup>7</sup> B և ասէ

<sup>8</sup> B լինիցի

<sup>9</sup> B բանիւն *փխ* մեր բանիւս

<sup>10</sup> B է Աստուած

<sup>11</sup> B լցուցանել

գլխովին լիութիւն առնել զքաղցն: Արար Տէր մեր ի լերինն զցանկութիւն փորձողին կոխան և առնկէց ի գետին<sup>1</sup> խոնարհ: Զի կոխեսցեն զնա հեթանոսք, որ երբեմն կոխեալ էին ի դիւաց: Զոր ակրինակ ջուր[ը]քն, որով<sup>2</sup> հեղձուցանէր փարաւոն զմանկատին, նովիմբ[ը] հեղձաւ<sup>3</sup>: Սոյնպէս և Գողիադ սրովն իւրով սատակէր զբազումս, նովին հատ Դաւիթ զգլուխ նորա (տե՛ս Ա Թագ. Ժ 49-51): Մովսէս խաչին խորհրդով պատառեաց զծովն (տե՛ս Ելք ԺԴ 29-31), և Դաւիթ վիմին խորհրդովն կործանեաց զԳողիադ: Եւ Տէրն մեր բանիւ բերանովն<sup>4</sup> պարտաւորեաց զսատանայ և մարմնովն, որով կորուսաներն<sup>5</sup>, նովին յաղթահարեցաւ սատանայ:

**ԿԲ** Կարծեաց զնա գոլ իբրև զմի ի սրբոցն, զի բազում անգամ լուաւ Որդի Աստուծոյ գոլ և անդրանիկ<sup>6</sup> շնորհիւ: Իսկ աստ սիրելի յաւելուած լուաւ և տարակուսեցաւ, ուստի և ի մարտ պատերազմի մտանէր:

Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Գրեալ է. Ո՛չ թէ<sup>7</sup> հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ (Դ 4, տե՛ս Բ Օր. Ը 3):

**71ա ՍՏ** Ուսուցանէ զմեզ, յորժամ ո՛չ միայն որկոր(//)ստութեամբ և չարչարանաւք մարմնոյ փորձիմք, այլև՝ բանիւք քաղցրութեամբ: Ասասցուք ցնա<sup>8</sup>. «Դու աւաղիկ սուտ կարծիս այդպիսի բանիւք կամ<sup>9</sup> հացիւք կերակրաւք կենդանանալ Հոգւոց<sup>10</sup>: Իսկ մեք յԱստուած միայն ունել կերակուր՝ ո՛չ պիտոյանամք քում կերակրովմ<sup>11</sup>»: Որպէս ուսաք ի Քրիստոսի պատասխանատուութենէն<sup>12</sup>, որ յԵրկրորդ Աւրէնս[ն] գրեալ է (տե՛ս Բ Օր. Ը 3): Եւ մարդ, որ փորձի և ո՛չ կերակրի բանիւն Աստուծոյ, նա ապրել ո՛չ կարէ:

**ԻԳ** Զի թէ վկայեալ էր զինքն գոլ Աստուծոյ Որդի, ի բաց կացեալ լինէր<sup>13</sup> այնուհետև սատանայ, խափանէր<sup>14</sup> փրկութիւն մարդկան, որ ի ձեռն խաչին: Իսկ եթէ ասէր, թէ՛ «Ո՛չ եմ Որդի Աստուծոյ»,

<sup>1</sup> B չիք գետին  
<sup>2</sup> B որ  
<sup>3</sup> B հեղձնու  
<sup>4</sup> B բերանոյն  
<sup>5</sup> B մարմնով կորուսանէր զնա  
<sup>6</sup> B մարդիկ  
<sup>7</sup> B դրփիս եթէ ոչ  
<sup>8</sup> B չիք ցնա  
<sup>9</sup> B և  
<sup>10</sup> B Հոգւոյ  
<sup>11</sup> B քո կերակրովդ  
<sup>12</sup> B պատասխանատուութենէն  
<sup>13</sup> B էր  
<sup>14</sup> B և խափանէր

ստույթեան<sup>1</sup> այնուհետև բարբառէր, որ ո՛չ վայել է<sup>2</sup> Աստուծոյ: Վասն այնորիկ յայլ<sup>3</sup> իմն ղարձուցանէր<sup>4</sup> զբանն, սակայն՝ գեղեցկագոյն:

Ո՛չ հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ (Դ 4, տե՛ս Բ Օր. Ը 3):

ՍՏ Որպէս յանապատին ի հրամանէ Աստուծոյ ի ձեռն մանանային այնքան բազմութիւն[ք] ապրեցան: Ո՛չ հացիւ միայն կերակրիմ ես, որ եղէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ:

Հանեալ<sup>5</sup> զնա ի լեառն[ն] մի բարձր<sup>6</sup> (Դ 5):

Եփ.(կր.) Ո՛չ եթէ սատանայ հանէր զնա ի լեառն, այլ նա կանխագէտ գոլով նորա խորհրդոյն<sup>7</sup> չոգաւ զհետ<sup>8</sup>:

Եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս երկրի (Դ 5):

ՍՏ Պիտակաբար, այլ ո՛չ ճշմարտութեամբ, զի կարէր իսկ ոչ: Որպէս անհնար է քարիւ կերակրիլ մարմնոյ, այսպէս անհնար կարծեմ յաշտարակն ելանել և<sup>9</sup> ի լեառն բարձրագոյն մարմնով:

71բ // Ասէ<sup>10</sup> ցնա սատանայ. Քեզ տաց զայս ամենայն իշխանութիւն[ս] և զփառս, զի ինձ տուեալ է (Դ 6):

ԵՓ Ձի սա է աւետիք աւրինացն: Այլ նա միով իւրիք յայսցանէ<sup>11</sup> ո՛չ խռովեցաւ, ի խնդացուցանել զնա ո՛չինչ ուրախ եղև և ի զարհուրեցուցանել զնա ո՛չինչ նուազեցաւ: Եւ ի ճանապարհս իւրում<sup>12</sup> զնայր նա և զկամս Հաւր իւրոյ կատարէր:

Ինձ տուեալ<sup>13</sup> է (Դ 6):

Ի միտ առ, զի այլ Արարիչ է երկրի և նմա տալով տուաւ<sup>14</sup>: Եւ ո՛չ բնութեամբ ունի իշխանութիւն, այլ նոքա կամեցան: Որպէս

<sup>1</sup> B ստույթիւն

<sup>2</sup> B էր

<sup>3</sup> B այլ

<sup>4</sup> B ղարձուցանէ

<sup>5</sup> B և հանեալ

<sup>6</sup> B բարձր եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի

<sup>7</sup> B խորհրդոցն

<sup>8</sup> B Այնուհետև մեկ թերթ չգրված է (64ա-բ), իսկ 65ա-ի սկզբում կրկնված է. «նորա:

Եւ յամենայն մեքենայս խաբէութեան նորա... խորհրդոցն չոգաւ զհետ»:

<sup>9</sup> B որպէս

<sup>10</sup> B ասէր

<sup>11</sup> A B ի յայսցանէ

<sup>12</sup> B իւր

<sup>13</sup> A տվեալ

<sup>14</sup> A տվաւ



ասէ առաքեալ. «Որում պատրաստէք զանձինս ձեր<sup>1</sup> ի ծառայութիւն Հնազանդութեան, ծառայէք որպէս կամիք» (հմմտ. Գռոմ. Զ 16):

ԿԲ Ո՛չ հրաժարէր ստութեամբ ասել իւր գոյ զթագաւորութիւնն: Այլ զի թէպէտ ո՛չ ստուգապէս զնա Որդի Աստուծոյ խոստովանէր, սակայն<sup>2</sup> գիտէր ի պատուիրանացն, եթէ գո՞<sup>3</sup> Արարիչ<sup>4</sup> և թագաւոր արարածոց: Վասն այնորիկ անդի տուեալ ասաց՝ զողալով, խորամանկութեամբ<sup>5</sup>:

Արդ՝ թէ<sup>6</sup> անկեալ երկիր պագանիցես ինձ<sup>7</sup>, քեզ եղիցի այս<sup>8</sup> ամեն[այն] (Դ 7):

ԵՎ. Զի յայտնի լիցի<sup>9</sup> ամբարտաւանութիւն<sup>10</sup> այնորիկ, որ ի սկզբանէ կամեցաւ Աստուած լինել: Մարմին Տեառն մերոյ յանդիմանէ զամենայն մարմինն<sup>11</sup>:

Արդ՝ ած զնա յԵրուսաղէմ և կացոյց<sup>12</sup> զնա ի վերայ աշտարակին: Ասէ. Թէ Որդի ես Աստուծոյ, ա՛րկ զքեզ աստի ի վայր (Դ 9):

ԵՎ. Եւ ահա ցարդ<sup>13</sup> ևս կանգուն կայ տեղին, և տաճարն կործանեալ է, որպէս ասաց Քրիստոս (հմմտ. Յովհ. Բ 19-23): Եւ տեղին, յորոյ վերայ կայր նա, պահեցաւ նշան:

72ա Ստ. Ո՛չ կարէ Քրիստոս ընկենուլ զինքն, քանզի // որ ընկենուլ զինքն ի շին[ու]ածոյ տաճարին, ինքն զինքն բանսարկուիւն պատրաստեաց: Գուցէ, որ մեղաւն աստուածային վարդապետութեանն, ընկէց զինքն ի տաճարէն Աստուծոյ<sup>14</sup>: Իսկ Քրիստոս ամենևին ո՛չ մեղաւ, զի ա՞րդ ընկենոյր զինքն ի տաճարէն:

Զի գրեալ է. Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո (Դ 10-11):

<sup>1</sup> B **չիք** ձեր

<sup>2</sup> B **չիք** ստուգապէս... սակայն

<sup>3</sup> B **չիք** գո

<sup>4</sup> B Արարիչ է

<sup>5</sup> B խորամանկութեամբ

<sup>6</sup> B դու թէ

<sup>7</sup> B առաջի իմ **փխ** ինձ

<sup>8</sup> B **չիք** այս

<sup>9</sup> B յայտ լինիցի

<sup>10</sup> A ամբարտաւանութիւն

<sup>11</sup> B զանմարմինն **փխ** զամենայն մարմինն

<sup>12</sup> B ած կացոյց

<sup>13</sup> B արդ

<sup>14</sup> B **չիք** Աստուծոյ

US Գրեաց Դաւիթ վասն արդարոց ո՛չ երկնչել<sup>1</sup> ի դիւէ [ի] հասարակաւրէ և ո՛չ ի նետէ թռուցելոյ ի տու[ը]նջեան (հմմտ. Սաղմ. Դ 6): Իսկ Քրիստոս ո՛չ հրեշտակաց աւգնականութեան կարաւտանայր՝ Արարիչ գոլով հրեշտակաց, բայց գրի, թէ<sup>2</sup> յաղագս Քրիստոսի ասացաւ: Հիմ արդեք ո՛չ ասաց, որ<sup>3</sup> ի կարգին էր, թէ՛ «Ի վերայ իժի և քարբի գնասցես, և առ ոտն<sup>4</sup> կոխեսցես զառեւծ[ն]<sup>5</sup> և զվիշապ[ն]» (Սաղմ. Դ 13): Քանզի<sup>6</sup> այդ ամենայն ինքն էր, վասն այնորիկ լուեաց: Բարեպաշտք զինքեանս ո՛չ մեռուցանեն: Իսկ որպէս ինձ թուի, կարի վերջին անմտութիւն է զՔրիստոս զգալի մարմնով իմանալ: Հետեիլ սատանայի, ելանել յաշտարակ տաճարին կամ ի լեառն բարձր, կամ զիա՞րդ երեւի նմա ամենայն թագաւորութիւնք երկրի, թէպէտև զլուխ լերինն, մինչ ընդ<sup>7</sup> լուսնական գունդն երկնից է:

Ասէ ցնա Յիսուս. Գրեալ է. Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո (Դ 12):

Կղ.(եփ.) Գրեալ է յԵրկրորդ Աւրէնսն (տե՛ս Բ Օր. Զ 16): Իսկ Յիսուս<sup>8</sup> ո՛չ ցասեաւ նմա, զի ի գրոց խաւսեցաւ ընդ նմա, ի գրոց Յիսուս արար նմա պատասխանի: Զի այսու տացէ մեզ միտս, // թէ սատանայի ո՛չ նշանաւք ինչ, այլ հանդարտութեամբ և երկայնմտութեամբ պարտ է յաղթել<sup>9</sup>:

Եւ Յիսուս կատարեաց զամենայն փորձութիւնսն (Դ 13):

ՅՀ Ինձ այսպէս թուի, թէ զգլխաւորսն յայտ առնէ, զի այլքն ամենայն ընդ նոքաւք իցէ փակեալ:

ԻԳ Աւրինակ վարուց առաքինութեան եդ առաջի այնոցիկ, որ հաւատան և մկրտին ի մահ նորա: Իմանալ և ճանաչել, եթէ հանդէս ճգանց կայ առաջի նոցա և ո՛չ հանգստեան: Վասնզի<sup>10</sup> ինքն առաջին մարտեաւ և յաղթեաց, և ուսոյց զաւրինակ պատերազմին և յաղթութեան:

Սատանայ ի բաց եկաց առժամանակ մի (Դ 13):

<sup>1</sup> B երկնչիլ

<sup>2</sup> B սրբ. գրեթէ *փի* գրի թէ

<sup>3</sup> B որ ինչ

<sup>4</sup> B *չիք* և առ ոտն

<sup>5</sup> B զառիւծն

<sup>6</sup> B գի

<sup>7</sup> B ի

<sup>8</sup> B Քրիստոս

<sup>9</sup> A յախթել

<sup>10</sup> B գի

US Սատանայ ըստ եբրայեցիոցն ընդիմակաց կամ հակառակ ասի:  
 ԿՂ Վասնզի ո՛չինչ կատարեցաւ, յորմէ հարցափորձեացն և պատասխանի լուաւ ի պատուիրանաց[ն] Աստուծոյ: Անյուսացեալ ի բաց եկաց ի նմանէ բանսարկուն, երկուցեալ ի սաստելոյն՝ փախեալ ի նմանէ:

ԵՓ. Զի չարախաւսութեամբն և նախանձու փարիսացւոցն և դպրացն խափանեցէ զգաւրութիւն նորա, այլ որպէս պարտեցաւ նա ի սկզբանն անդ, նոյնպէս և ի կատարածին մահուամբն իւրով յաղթեաց առաւել: Դարձեալ. ցուցանէ, թէ յետ այնորիկ իւրովք գործակցաւք զիմեաց ի վերայ նորա<sup>1</sup>:

Եւ դարձաւ Յիսուս<sup>2</sup> (Դ 14):

73ա Եւ այս<sup>3</sup> զի ասէ. «Ո՛չ ոք կարէ մտանել ի տուն հզաւրին և աւար հարկանել զգործ(//)իս նորա» (Մատթ. ԺԲ 29), եթէ ո՛չ նախ՝ զհզաւրն կապեսցէ և ապա՝ զգանձս նորա աւար հարկանեսցէ, զոր և արար իսկ ի ներքս ի տան իւրում: Եւ ապա սկիզբն արար քարոզութեանն իւրում: Եւ<sup>4</sup> հորդեաց մեզ ճանապարհ ի ձեռն պահոց՝ իջեալ ի լեռնէ անտի<sup>5</sup> իբրև զնահատակ քաջ ի հանդիսէն եկեալ կամ իբրև զթագաւոր յաղթող<sup>6</sup> ի պատերազմէ զհակառակորդն վանեալ: Այսպէս և Յիսուս զգաւրագլուխն դիւաց գերի առեալ և կապեալ<sup>7</sup> զհսկայն՝ սկիզբն առնու<sup>8</sup> այնուհետև վարդապետութեանն իւրոյ:

Զաւրութեամբ Հոգւոյն [ի] Գալիլէ<sup>9</sup> (Դ 14):

Որպէս ասաց, թէ՛ «Վարեցաւ Հոգւովն Սրբով փորձիլ ի սատանայէ» (Դ 1-2), այսպէս և զգառնալն Հոգւով[ն] ասաց առ ի նշանակել, թէ զկնի մկրտութեանն ո՛չ նոյն աւրինակաւ զմարմնականսն յատուկ երևեցոյց, այլ զկնի մկրտութեանն սկիզբն հո-

<sup>1</sup> Եւ շարունակվում է (եղ 66ա). «Այլ Այլև զայս պարտ է գիտել, զի քաղցի կերպարանս եցոյց Քրիստոսս, վասն այնորիկ մտաւ փորձիչն և ասէ. «Ասա՛, զի քարինքդ հաց լինիցի» (Մատթ. Դ 3): Եւ միայնակեցի ձեռով երևեցաւ, զոր և ոմանք զՅովհաննու նմանութիւնն ասեն: Եւ միւս փորձութեամբն բռնաւոր թագաւորի կերպարանաւք ձեացաւ՝ զաւրաւք և խորանաւք իջեալ ի գլուխ լերինն և յաշտարակ տաճարին՝ հրեշտակապետ ի կերպարանաւք սաւառնացեալ թեաւք, զի ի վայր արկցէ զՔրիստոսս»:

<sup>2</sup> Ե Յիսուս գաւրութեամբ Հոգւոյն ի Գալիլէ

<sup>3</sup> Ե այն

<sup>4</sup> Ե չիք և

<sup>5</sup> Ե անդի

<sup>6</sup> Ե ոք յաղթող

<sup>7</sup> Ե կապեաց փխ և կապեալ

<sup>8</sup> Ե առնէ

<sup>9</sup> Ե Գալիլէ

գեորապէս առնէ, որ աստուածութեանն է նշանակ, և հրաշագործութիւնք սկսանին: Ըստ այնմ,

ԱԾԲ եթէ՝ «Քրիստոսի մարմնականքն վախճանեցան և հոգեորքն սկսանին»:

Զիա՞րդ ո՛չ զարհուրեցան, որք զպատիւ Հոգւոյն

ԻԳ նուազ ասացին: Եւ<sup>1</sup> ահա նոյն էութեամբ ամենայն ուրեք ընդ նմա է՝ [ի] յղանալն և ի սննդեանն և ի մկրտութեանն: Եւ հանելոզն յանապատ, և նոյն Հոգւոյն զաւրութեամբն գայ ի Գալիլիայ<sup>2</sup>, առնէ նշանս և ցուցանէ զաւրութիւնս՝ գործակցութեամբ Հոգւոյն:

Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն կողմանս գաւառին (Դ 14):

73բ // Եւ այնքան մեծամեծ նշան սքանչելիքն<sup>3</sup>, զի ամենայն ուրեք սիռեալ տարածեցաւ համբաւ նորա, մինչև ի հեռաբնակ տեղաց բազումք ժողովեցան տեսանել զնա, որ ունէին ախտս, զի բժշկեսցեն<sup>4</sup>: Իսկ Մատթէոս ասէ, թէ՝ «Շրջէր ի Գալիլիայ<sup>5</sup>, ուսուցանէր և բժշկէր զամենայն հիւանդութիւնս<sup>6</sup>: Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորոց: Եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս և նեղեալս, և բժշկեաց զնոսս» (Մատթ. Դ 23-24):

Եւ<sup>7</sup> ուսուցանէր զնոսս<sup>8</sup> փառաւորեալ յամենեցունց<sup>9</sup> (Դ 15):

ԻԳ Տեսեալ ժողովրդեանն զնորանշան սքանչելիսն<sup>10</sup>, որ ամենայն ուրեք յաճախէին ի նմանէ, զոր ո՛չ երբէք տեսին և ո՛չ լուան, մինչ կուրին ասել, եթէ՝ «Ո՛չ երբէք լուաք, թէ՛<sup>11</sup> եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ» (Յովհ. Թ 32): Եւ զիմաստութիւն անչափ ծանեան, եթէ առաւել է քան զբնութիւն մարդոյ: Եւ ոմանք հաւատացին, եթէ Քրիստոսն իցէ, ամենայն<sup>12</sup> ուրեք փառք յաճախէին նմա:

Եւ եկն ի Նազարեթ, ուր սնեալն էր (Դ 16):

<sup>1</sup> Ե զի

<sup>2</sup> Ե Գալիլեայ

<sup>3</sup> Ե նշանք և սքանչելիքն արար

<sup>4</sup> Ե բժշկեսցին

<sup>5</sup> Ե Գալիլեայ

<sup>6</sup> Ե հիւանդս

<sup>7</sup> Ե և նա

<sup>8</sup> Ե ի ժողովուրդս նոցա

<sup>9</sup> Ե յամենեցունց

<sup>10</sup> Ե զնոր նշանսն և զսքանչելիսն

<sup>11</sup> Ե լուաք թէ՛՝ զրված է ձախ լուսանցում գրչի ձեռքով Ե եթէ

<sup>12</sup> Ե և ամենայն

Ստ. *Թէպէտեւ գիտէր զնոսա, զի ո՛չ էին ընդունելոց զբանն նորա, սակայն զայ առ նոսա, զի անպատասխանի արասցէ զնոսա: Ըստ այնմ՝ «Իմ եթէ ո՛չ էր եկեալ և խաւսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա» (Յովհ. ԺԵ 22):*

**Եւ եմուտ ըստ սովորութեանն<sup>1</sup> յաւուր շաբաթու ի ժողովուրդս նոցա (Դ 16):**

Իգ. *Ըստ առաջին սովորութեանն մինչ բնակէր ընդ նոսա: Շինեցին նոքա ամենայն ուրեք<sup>2</sup> ժողովրդարանս: Ըստ այնմ, զոր ծերքն մատուցեալ առ Տէրն ասէին. «Սիրէ զազգս մեր և զժողովրդ(//)անոցս նա շինեաց մեզ» (Է 5): Շինեցին յամենայն տեղիս ո՛չ վասն զոհ մատուցանելոյ, այլ աղաւթս առնելոյ յաւուր շաբաթու, զի աւր պարապոյ էր, ժողովէին աղաւթս առնել և լսել զպատգամս մարգարէիցն:*

**Մտեալ անդ Յիսուս ետուն նմա գիր զԵսայի[այ] մարգարէին (Դ 17):**

ԻԳ *Ո՛չ զի ընթերցցի<sup>3</sup>, այլ զի յանդիմանեսցեն զնա: Քանզի սնաւ ի մէջ նոցա և գիտէին, զի դպրութիւն ո՛չ ուսաւ: Խորհեցան ամաչեցուցանել զնա յատենի անդ երկշաւեղ<sup>4</sup> կարծեաւք: Եթէ ասէ, թէ դպրութիւն ո՛չ գիտեմ, թշնամանս զիցեն նմա՝ ասելով. «Զիա՞րդ վարդապետես, որ զգիրս ո՛չ գիտես» (հմմտ. Յովհ. Է 15): Կամէին<sup>5</sup> ի հրապարակի անդ<sup>6</sup> ձաղել զնա և թափել զդառնութիւն թիւնիցն, զոր յղացեալ երկնէին ի միտս իւրեանց:*

**Եւ յարեաւ ընթեռնուլ (Դ 17):**

*Իբրև տեսին, զի առ ընկալաւ, հիացան, զարմացան, և ամենայն ժողովուրդն պշուցեալ հայէին ի նա:*

**Բացեալ<sup>7</sup> եգիտ զայն տեղին<sup>8</sup>, յորում գրեալ[ն] էր. Հոգի Տեառն ի վերայ իմ (Դ 17-18, տե՛ս Ես. ԿԱ 1):**

Եփ.(Իգ.) *Արդ՝ ո՛չ ըստ պատահմանն բացաւ, այլ որպէս կամեցաւ: Աստուածային իմաստութեամբն եբաց զայն, ինչ որ վասն նորա*

<sup>1</sup> B սովորութեան իւրում

<sup>2</sup> B ժողովուրդն *փի* ուրեք

<sup>3</sup> A ընթերճցի

<sup>4</sup> B երկշաւիղ

<sup>5</sup> B զի կամէին

<sup>6</sup> B *չիք* անդ

<sup>7</sup> B և իբրև եբաց զգիրսն

<sup>8</sup> B տեղի

զրեալ էր: Զի զամենայն ինչ անպակաս զրեցին մարգարէքն վասն նորա:

ՍՏ Յուցանէ աւետարանիչն, վասնզի բացեալ զգիրսն նախ այն պատշաճի. «Հոգի Տեառն ի վերայ իմ» (Ես. ԿԱ 1):

Եւ ասացաւ, թէ՛ «Յիսուս դարձաւ զաւրութեամբ Հոգւոյն ի Գալիլիայ<sup>1</sup>» (Դ 14): Տեսանե՛ս, որպէ՛ս երևին ճշմարտութիւնն. տեսին զՀոգին Սուրբ աղանակերպ իջմամբ ի մկրտութեանն<sup>2</sup> (տես՝ Մատթ. Գ 16, Մարկ. Ա 10, Ղուկ. Գ 22, Յովհ. Ա 32): Եւ աստ ընթերցաւ

74բ զմարգ(//)արէականն. «Հոգի Տեառն ի վերայ իմ» (Ես. ԿԱ 1): Մարգարէն<sup>3</sup> զգէմս Քրիստոսի առեալ խաւսի: Այսպէս և այլ մարգարէքն մարգարէանային<sup>4</sup>: Եւ աւետարանիչքն<sup>5</sup> զրէին զամենայն ինչ Հոգւոյն ներգործութեամբն, որպէս և այլուր<sup>6</sup>. «Հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան» (Ես. ԺԱ 2), և այլուր՝ «Հոգի Տեառն ի վերայ իմ» (Ես. ԿԱ 1), զոր ընդհանրական<sup>7</sup> հաւատացելոց ի Քրիստոսէ տուեալ լինի:

Վասն որոյ աւծ<sup>8</sup> իսկ զիս (Դ 18):

Վասն որոյ<sup>9</sup> աւծաւ իւրով աստուածութեամբն մարդկութիւնն:

Իգ. Կոչեցին զնա աւծեալ մարգարէքն և ցուցին, եթէ ո՛չ ըստ աւրինի այլոց աւծելոցն, որ աւծան եւղով<sup>10</sup> մարմնականաւ, այլ նա աւծաւ Հոգւով Սրբով, այսինքն՝ տերունական մարմինն: Որպէս ասաց Պետրոս. «Աւծեալ զնա աստուածարար զմարմինն<sup>11</sup>» (տես՝ Գործք Բ 36):

Աւետարանել աղքատաց առաքեաց զ[իս] (Դ 18):

Առաքեցաւ ի Հաւրէ [աւետարանել զփրկութիւն] աղքատ զազգս<sup>12</sup> մարդկան, ասէ<sup>13</sup>, զոր և հրեշտակքն ցհովիւսն ասէին, թէ՛ «Ծնաւ ձեզ այսաւր փրկիչ, որ է աւծեալ Տէր<sup>14</sup>» (Բ 11): Զաղ-

<sup>1</sup> B Գալիլեայ

<sup>2</sup> B մկրտութիւնն

<sup>3</sup> B աստ մարգարէն

<sup>4</sup> B չիք և այլ... մարգարէանային

<sup>5</sup> A աւետարանչքն

<sup>6</sup> B այլուր ասէ

<sup>7</sup> A B ընթերցանական

<sup>8</sup> B և աւծ

<sup>9</sup> B չիք վասն որոյ

<sup>10</sup> B աւծելոյ աւծանի իւղով

<sup>11</sup> B զկուսածին մարմինն

<sup>12</sup> B ազգիս

<sup>13</sup> B չիք ասէ

<sup>14</sup> B Տէր և Աստուած

քատացեալս ասէ, զկողոպտեալ<sup>1</sup> զհոգիս յաստուածածանաւթու-  
թենէ[ն] և զմերկացեալս[ն] ի հաւատոյ<sup>2</sup> Արարչին և զան-  
կեալս[ն] ի փառաց դրախտէն<sup>3</sup>:

Ստ. Եւ եկեալ Տէրն մեր տայ աւետիս՝ դարձեալ յառաջինն<sup>4</sup> հանե-  
լով զմեզ ի փառսն, կամ այն իսկ, թէ՛ «Երանի աղքատաց հոգով,  
զի նոցա է արքայութիւն<sup>5</sup> երկնից» (Մատթ. Ե 3):

**Քարոզեալ<sup>6</sup> գերեաց թողութիւն (Դ 19):**

Կր. Որք գերեալ մեղաւք էին: Վասն որոյ ասաց ցանդամալոյծն.  
75ա «Թողեալ լիցին քեզ մեղք քո» (Ե 48) և ամենայն // հիւանդաց հո-  
գով: Զի ի ձեռաց սատանայի կորզեաց ի ձեռն քարոզութեանն և  
իջմանն ի դժոխս: Եւ հոգոցն, որ էին ի դժոխս, եկեալ քարոզեաց:

**Կուրաց տեսանել (Դ 19):**

Զկուրացեալսն սրտիւ յաստուածածանաւթութենէն լուսաւո-  
րեաց<sup>7</sup> աստուծային ծագմամբն, որ լուսաւորէ զամենայն մարդ<sup>8</sup>,  
որ գալոց է յաշխարհս, որոց<sup>9</sup> աչք մտացն լուսաւորեցան գիտու-  
թեամբ Տեառն:

**Արձակել զվիրաւորեալս ի թողութիւն (Դ 19):**

Որ զմեղաւք զվիրաւորեալսն արձակեաց ի թողութիւն<sup>10</sup> ի  
ձեռն մկրտութեանն: Ըստ այնմ՝ «Բժշկէ զբեկեալն սրտիւ<sup>11</sup>» (Ես.  
ԿԱ 1) և պատէ զամենայն վէրս նոցա: Զբեկեալ հոգիսն ի սատա-  
նայական հարուածոցն, զոր ինքն իսկ առակաւ յայտնեաց  
զինամս[ն], զոր եցոյց առ այն, որ անկաւ ի ձեռս աւագակաց.  
«Պատեաց, ասէ, զվէրս գինով և ձիթով<sup>12</sup>» (հմմտ. Ժ 34):

**Քարոզել զտարեկան<sup>13</sup> Տեառն (Դ 19):**

Զգալստենէն և զմարդանալոյն նշանակեաց զժամանակն, ա-  
սէ<sup>14</sup>, զոր Քրիստոս աւր անուանեաց. «Գնացէք, ասէ, ի լոյս,

<sup>1</sup> B այսինքն զկողոպտեալ

<sup>2</sup> B հաւատոց

<sup>3</sup> B դրախտին

<sup>4</sup> B յառաջինսն

<sup>5</sup> B արքայութիւնն

<sup>6</sup> B քարոզել

<sup>7</sup> B չիք լուսաւորեաց

<sup>8</sup> B մարդիկ

<sup>9</sup> B որոյ

<sup>10</sup> B յազատութիւն փի ի թողութիւն

<sup>11</sup> B զբեկեալ սիրտս

<sup>12</sup> B զբիթով և գինով

<sup>13</sup> B տարեկան

<sup>14</sup> B չիք ասէ

մինչդեռ ավր կայ» (*հմմտ.* Յովհ. ԺԲ 35): *Իսկ ընդունելի գհեթանոսացն ասէ և առհասարակ զմեղաւորացն, զորոց ընկալեալ զդարձն՝ շնորհեաց զյանցանսն: Եւ զորս ի տնաւրէնութեան ժամանակի, ընդունելով զմաղթանս իւրաքանչիւրոցն, բժշկեաց ի մարմնական ախտիցն աստուածային հրաշափառ ներգործութեամբն:*

«Եւ ամ փրկութեան» (*հմմտ.* Բ Կոր. Ա 6):

Ստ. Եւ զոր ամի ամի զխորհուրդ փրկութեան մերոյ կատարեմք<sup>1</sup>,

75բ զոր և Եսայի՝ «Աւր հատուցման» (Ես. ԿԱ 2, ԿԳ 4) ասէ, ի ծն(//)նդենէ Փրկչին մինչ ի կատարած հատուցանէ<sup>2</sup> ղիւաց՝ զապաշխարողսն հանելով ի նմանէ:

Եւ խփեալ զգիրսն ետ ընդ պաշտաւնեայն<sup>3</sup> և նստաւ (Դ 20):

Իգ. Սկսաւ մեկնել զայն ինչ, զոր նոքա ո՛չ կարէին<sup>4</sup> իմանալ, զի վասն նորա գրեալ էր [զ]այս բանս ի մարգարէէն: Եւ Քրիստոս եկն և ելից և<sup>5</sup> արդարացոյց զբանս ծառայից իւրոց մարգարէիցն:

Եւ ամենայն ժողովրդեանն աչք ի նա հայէին (Դ 20)

Ջարմացեալ գովէին և արդարացուցանէին զբանս նորա:

Ասէ ցնոսա. Այսաւր լցաւ գիրքս այս յականջս ձեր (Դ 21):

ՍՏ Աստ զամենայն մարգարէիցն ասացեալսն հաստատէ և այսու զփրկութիւն ամենայն հաւատացելոց նշանակէ:

ԻԳ Քանզի եկն լրումն ավրինացն և մարգարէիցն, զի ահաւասիկ՝ Յիսուսի բժշկելն զբազում հիւանդս: Լցաւ բանն Եսայեայ<sup>6</sup>, զի ասէ. «Նա զհիւանդութիւնս մեր եբարձ և զցաւս մեր վերացոյց» (Մատթ. Ը 17, *հմմտ.* Ես. ԾԳ 4): Ըստ նմին՝ «Եւ Տէրն ընթերցեալ զգիրս» (*հմմտ.* Դ 17), որ վասն նորա գրեցաւ:

Եւ ամենեքին<sup>7</sup> վկայէին նմա և զարմացեալ<sup>8</sup> ընդ բանս շնորհացն, որ ելանէին ի բերանոյ նորա (Դ 22):

<sup>1</sup> Բ Դարձեալ. ամ փրկութեան զխորհուրդ փրկութեան մերոյ ասէ, զոր ամի ամի կատարեմք *փխ* Եւ ամ փրկութեան... կատարեմք

<sup>2</sup> Բ Հատուցանեմք

<sup>3</sup> Բ ցպաշտաւնեայն

<sup>4</sup> Բ կարացին

<sup>5</sup> Բ *չիք* և

<sup>6</sup> Բ Եսայիայ

<sup>7</sup> Բ ամենեքեան

<sup>8</sup> Բ զարմացեալ էին



Այսչափ ասացեալ աւետարանիչն: Եւ զի բազումս և գեղեցիկս խաւսեցաւ, վասն որոյ զարմանային ընդ յաճախութիւն բանիցն և ընդ վայելչութիւն<sup>1</sup> նորա, որպէս և այլուր զարմացեալ ասէին. «Զիա՞րդ զգիրս գիտէ, զի ուսեալ բնաւ չիք» (Յովհ. Է 15): Եւ ի լերինն զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ ուսուցանէր և ո՛չ որպէս դպիրքն:

76ա // Եւ ասէին. Ո՞չ սա՛ է որդին Յովսեփայ (Դ 22):

Արդ՝ իբրև տեսին դպիրքն և փարիսացիքն, թէ ըստ որում խորհեցանն, ո՛չ եղև նոցա, այլ նորին հակառակն, սկսան զչարել: Եւ ո՛չ ունէին<sup>2</sup> այլ ինչ, որով պարսաւանս գիցեն: Ի նմին ժամու ի սպանութիւնս մտաբերեցին ըստ աւրինակի այնոցիկ, որ զՅակոբոս ի վերայ աշտարակին կացուցին: Զի իբրև տեսին, եթէ ետ վկայութիւն ըստ աստուածութեանն Յիսուսի, և ասեն չարիս գործեցաք, ելցուք<sup>3</sup> զնա յաշտարակէն<sup>4</sup>, արկցուք<sup>5</sup> ի վայր, զի տեսցեն և ո՛չ հաւատասցեն բանից նորա: Այսպէս և սոքա կամեցան սպանանել զնա:

Ապաքէն<sup>6</sup> առի՞ս ասացէք<sup>7</sup> զառակս զայս. Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո ի մէնջ (Դ 23):

Եփ. Մինչ դու<sup>8</sup> կամիս զմեզ բժշկել, զքեզ ապրեցոյ: Զի<sup>9</sup> թէպէտ և կարաւտ էին բժշկութեան, սակայն ո՛չ կարէր<sup>10</sup> վասն թերահաւատութեան նոցա:

Իգ. Արդ՝ ասաց զառակն զայն, զի ծանեաւ զդաւաճանութիւն նոցա: Կամիս բժշկել զմեզ որով ուսուցանես, արդ՝ զանձն քո զերծո՛, զի մի՛ մեռցիս:

Որչափ լուաք, զի արարէր ի Կափառնաւում, արա՛ աստ ի քում գաւառի (Դ 23):

Զայս ասացեալ՝ յանդիմանեաց զնենգաւոր բարս նոցա: Եւ զի գիտասցեն, զի<sup>11</sup> զնոսա անուանեաց գաւառ իւր վասն սնանելոյն ի մէջ նոցա:

<sup>1</sup> A վայելջութիւն

<sup>2</sup> B ունէին ասել

<sup>3</sup> B ելցուք արկցուք

<sup>4</sup> B յաշտարակէ անդի

<sup>5</sup> B չիք արկցուք

<sup>6</sup> B ասէ ցնոսա. Ապաքէն

<sup>7</sup> B ասէք

<sup>8</sup> B դեռ

<sup>9</sup> B և զի

<sup>10</sup> B կարէր բժշկել

<sup>11</sup> B եթէ

**Ասեմ ձեզ. Չէ մարգարէ անարգ, բայց եթէ ի քաղաքի իւրում**

(Ղ 24):

**ՍՏ** Քաղաք իւր և երկիր զՀրէիցն ասէ: Եւ դարձեալ. զի<sup>1</sup> զմար-

**76բ** կիոնացիսն յանդիմանեսցէ, որ ասեն, թէ // ո՛չ վասն աստուածու-  
թեանն խաւսէր ընդ նոսա: Արդ՝ ո՛չ յայտնապէս ասէ զնոսա<sup>2</sup>, թէ  
չարք են, զի ո՛չ ընկալան զնա, այլ խաղաղէ զիրսն՝ յայտ արա-  
րեալ, եթէ սովորական կիրք են, զի և զմարգարէսն ո՛չ ընկալան ի  
բնակութիւնս իւրեանց:

Չի ո՛չ արար անդ նշան<sup>3</sup> ոչ վասն տկարութեան նորա, այլ  
վասն չարութեան նոցա:

**Բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայելի: Եւ ո՛չ  
ուրեք առաքեցաւ Եղիայ, բայց միայն առ կին այլազգի<sup>4</sup>** (Ղ 25-26,  
տե՛ս Գ Թագ. ԺԷ 8-16):

**ԿՐ** Այսու զնոսա կսկծեցուցանէ յիշատակաւ Եղիայի, թէ որպէս  
անդ այրիքն<sup>5</sup>, թէպէտ յիսրայելէ էին, չեղեն արժանաւորք Եղիա-  
յի՝ ըստ ո՛չ գալոյն<sup>6</sup> ողջախոհս: Այսպէս և ո՛չ դուք ինձ: Այլ հե-  
թանոսք ընդունելոց են<sup>7</sup>, որպէս կինն այրի զԵղիայ, զի պատկեր  
էր ո՛չ ձեր<sup>8</sup>:

**ԵՓ** Արդ՝ ի պատճառս Նազարեթայ Տէր մեր եդ երկու աւրինակս  
ի մէջ Իսրայելի և հեթանոսաց, և ի պատճառս տաճարին եցոյց  
միւս ևս այլ տաճար վասն մարմնոյ իւրոյ:

Դարձեալ. զի ամենայն ժողովուրդ[ք]ն ազգատոհմ էին մար-  
գարէիցն, և նա պատուեաց զհարիւրապետ[ն] այլազգի՝ զարմա-  
ցեալ ընդ հաւատս նորա և զտաճկասորին<sup>9</sup> և սքանչացեալ էր  
ընդ նոսա: Եւ Եղիայ փախեալ ի հեթանոսս, և Տէր մեր արգել զա-  
չակերտսն, զի ողջոյն մի տա[յ]ցեն հեթանոսաց (տե՛ս Մատթ. Ժ 5):

**ԻԳ.** Այլև աստ յայտ առնէ, թէև<sup>10</sup> ի մարգարէիցն ի<sup>1</sup> ժամանակն  
այնպիսի անարժան գտան նոքա շնորհացն Աստուծոյ քան զհե-

<sup>1</sup> B *զրփիս* զի դարձեալ  
<sup>2</sup> B *չիք* զնոսա  
<sup>3</sup> B նշանս  
<sup>4</sup> B Արդարև ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայելի, յորժամ փակեցան երկինք զերես ամս և զվեց ամիսս, և եղև սով մեծ ընդ ամե- նայն երկիր: Եւ ո՛չ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եղիայ, բայց միայն ի Սարեփթայ Սիդոնացուոց առ կին մի այրի  
<sup>5</sup> B բազում այրիքն  
<sup>6</sup> B գալոյն  
<sup>7</sup> B են զիս  
<sup>8</sup> B ձեր այլ հեթանոսաց  
<sup>9</sup> B գտածիկ ասորին  
<sup>10</sup> B թէ

77ա թանոսս, և ցուցանէ, թէ փոխ(1)ելոց է աւետարանն ի նոցանէ ի հեթանոսս: Եւ հին է այս և ո՛չ նոր՝ խոտել Աստուծոյ զհրէայսն և ընտրել<sup>2</sup> զհեթանոսս, զի<sup>3</sup> Աւրէնք Աստուծոյ էին ո՛չ հաղորդել ընդ հեթանոսս: Եւ զի սով մեծ էր, և Տէրն յայտ արար զնեղութիւնն, որ գալոց էր ի վերայ նոցա: Զի սով անհնարին պաշարելոց էր զնոսա, յորժամ աւետարանն փոխեսցի<sup>4</sup> ի հեթանոսս, և աղբիւրանան շնորհք Հոգւոյն<sup>5</sup> ի նոսա: Ըստ որում և<sup>6</sup> առ կնոջն այնմիկ ցուցաւ:

Բազում<sup>7</sup> բորոտք էին ի մէջ Իսրայելի, և ո՛չ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէ[ե]ման Ասորի (Դ 27):

ԿԲ Այսպէս և Նէ[ե]ման, զի ո՛չ յազգէն, այլ՝ հաւատաւք<sup>8</sup> բժշկեցաւ:

ԻԳ Երկուքում[բ]քս յայտ արար զշնորհս որդեգրութեանն, որ բառնալոց էր ի հրէիցն և հեղլոց ի վերայ հեթանոսաց: Սրբեցաւ Նէ[ե]ման ջրովն Յորդանանու, և զբորոտութիւն նորա զգեցաւ Գէեզի աշակերտն Եղիսէի (տե՛ս Դ Թագ. Ե 21-27): Այսպէս<sup>9</sup> հեթանոսք մերկացան զմեղս և զանհաւատութիւն[ս] աւագանին ջրովն, և զմեղս զգեցան աշակերտքն Մովսիսի, որպէս Գեհեզի զբորոտութիւնն Նէ[ե]մանայ<sup>10</sup> Ասորոյ: Այսպէս առ Տէրն մեր յայտնի ցուցաւ փրկութիւնն հեթանոսաց հարիւրապետիւն և քանանացովն:

Լցան ամենեքին նախանձու իբրև լսէին զայս<sup>11</sup> (Դ 28):

ԵՓ Իբրև տեսին նոքա, թէ անարգէ զամենայն երկիրն Իսրայելի գոյիւ իւրով և պատուէ զհեթանոսս, յարեան այնուհետև իբրև զմարդ նախանձաւորք, ընկեցին<sup>12</sup> զնա:

77բ ՍՏ Զայս լուան նազարացիքն // և սկսան զայրանալ: Եւ գտին ժամանակ՝ զչարութիւնն, զոր երկնէին ի գործ արկանել: Ասէին. «Զորդիսն Իսրայելի Աստուած պատուեաց, և սա անարգէ և ընտրէ զհեթանոսս»:

<sup>1</sup> B չիք ի

<sup>2</sup> A ընդրել B ընտրեալ

<sup>3</sup> B զի և

<sup>4</sup> B փոփոխի

<sup>5</sup> B Հոգւոյն Սրբոյ

<sup>6</sup> B չիք և

<sup>7</sup> B և բազում

<sup>8</sup> B հաւատովք

<sup>9</sup> B այսպէս և

<sup>10</sup> B Նէեման

<sup>11</sup> B Եւ լցան ամենեքեան բարկութեամբ ի ժողովուրդն իբրև լսէին զայս

<sup>12</sup> B և ընկեցին

Եւ յարուցեալ հանին զարտաքոյ<sup>1</sup> քաղաքին և ածին զնա ի գլուխ<sup>2</sup> լերինն գահավրէժ<sup>3</sup> առնել զնա (Ղ 29):

ԵՓ. Զի թէպէտև ժպրհոութեամբ ընկեցին զնա, այլ նա Աստուած էր, ո՛չ<sup>4</sup> անկաւ: Սակայն աւգն հնազանդեալ ի վերայ թևոց իւրոց՝ ընկալաւ զնա:

ԻԳ. Եւ բարձեալ կրէր զնա որպէս ջուր ծովուն, որ ի վերայ մկանաց<sup>5</sup> նորա գնայր նա:

ԵՓ. Բայց նա ո՛չ ետ<sup>6</sup> զանձն ընկենուլ: Զի այսպէս կարծէր սատանայ, թէ յերկեղէն<sup>7</sup> իւրմէ ո՛չ արկ զինքն յաշտարակէ տաճարին: Եւ զի մի ոք ասիցէ, թէ առ տկարութեան[ն] ո՛չ էջ անտի<sup>8</sup>: Լնու զայն աստ, զի թոյլ ետ «գահավրէժ<sup>9</sup> առնել»:

Եւ ինքն անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր (Ղ 30):

ԵՓ. Այսու ուսուցանէ հաւատս անհաւատիցն: Թերևս վասն այսորիկ ընկալան զնա գալիլեացիքն, զի տեսին զնա, զի ընդ<sup>10</sup> մէջ նոցա երթայր նա, այլ<sup>11</sup> ո՛չ ևս համարձակեցան նոքա առնել նմա ինչ:

Եւ էջ ի Կափառնաւում ի քաղաք[ն] Գալիլէաց[ւ]ոց և ուսուցանէր (Ղ 31):

Իսկ Մատթէոս ասէ. «Եթող զՆազարեթ և եկն<sup>12</sup> բնակեցաւ ի Կափառնաւում առ ծովեզրին<sup>13</sup>» (Մատթ. Ղ 13):

Ստ. Քանզի Գալիլիայ<sup>14</sup> մեկնի խառնակութիւն, իսկ Կափառնաւում՝ տեղի մխիթարութեան, որ ի մատնելն Յովհաննու եղև խառնակումն և շփոթումն:

78ա. Էջ<sup>15</sup> բնակեցաւ // ի Կափառնաւումն<sup>16</sup>, ինքն և մայր իւր և եղբարք իւր (հմմտ. Ղ 31):

<sup>1</sup> B զնա արտաքոյ

<sup>2</sup> B մինչև յարտեան *փի* ի գլուխ

<sup>3</sup> B գահավէժ

<sup>4</sup> B որ ոչ

<sup>5</sup> B մկանանցն

<sup>6</sup> B ետ թոյլ

<sup>7</sup> B յերկեղէն

<sup>8</sup> B անդի

<sup>9</sup> B գահավէժ

<sup>10</sup> B ի

<sup>11</sup> B *չիք* նա այլ

<sup>12</sup> B *չիք* եկն

<sup>13</sup> B ծովեզրին

<sup>14</sup> B Գալիլեայ

<sup>15</sup> B էջ և

<sup>16</sup> B Կափառնաւում

ԻԳ Վասնզի կարի նախանձու չարութեամբ լի էին նազարացիքն: Վասն այնորիկ<sup>1</sup> որոշեաց զիւրան ի նոցանէ, զի ո՛չ էր ժամանակ չարչարանս կրել վասն նորա:

«Գայ ի Կափառնաւում ի սահմանս<sup>2</sup> Զաբողոնի և Նեփթաղէմի<sup>3</sup>» (Մատթ. Դ 13):

ՍՏ Զաբողոն թարգմանի բնակութիւն, իսկ Նեփթաղէմ<sup>4</sup> ընդարձակութիւն: Վասնզի ընդարձակեցան<sup>5</sup> շնորհք վարդապետութեանն Քրիստոսի, զի զմարգարէութիւնն<sup>6</sup> կատարեսցէ և զվարդապետսն ամենայն աշխարհաց ժողովեսցէ, զի անդ չըջէին առ ծովակիրն: Որպէս ասաց Եսայի. «Երկիր Զաբողոնի և Նեփթաղէմի<sup>7</sup> ճանապարհ յայնկոյս ծովուն<sup>8</sup>, գալէլէացոց<sup>9</sup> հեթանոսաց: Եւ ժողովուրդ, որ նստէիք ի խաւարի, տեսէք զլոյս մեծ» (Ես. Թ 1-2):

Եւ էր ի ժողովուրդն<sup>10</sup> այր մի ի դիւէ պղծոյ<sup>11</sup>, աղաղակեաց. Թուլացո<sup>12</sup>, զի կայ մեր և քո Յիսուս Նազաւրացի: Եկիր կորուսանե՞լ զմեզ (Դ 33-34):

Վասնզի Քրիստոս աստուածային զաւրութեամբն ի ծածուկ սկսաւ չարչարել զնա, իսկ նա, որ ի լերին[ն] անդ զմեծութիւն աշխարհի եղ առաջի և հայցէր երկրպագութիւն, այժմ տազնապեալ աղաղակէ իբրև զծառայ ոք չարչարեալ ի Տեառնէ:

Եւ Յիսուս<sup>13</sup> ասէ. Պապանձեաց և ել<sup>14</sup> (Դ 35):

Եւ նա առժամայն փախստական լինի:

Եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն (Դ 36):

Զի ո՛չ ըստ ակրինի արանց սրբոց աղաւթիւք հալածէր զդեւս, զի իշխանութեամբ սաստեաց այսոց պղծոց:

Յարուցեալ ի ժողովրդենէն՝ եմուտ ի տուն Սիմոնի: Եւ զո-

<sup>1</sup> Բ այսորիկ

<sup>2</sup> Բ սահմանն

<sup>3</sup> Բ Նեփթաղիմայ

<sup>4</sup> Բ Նեփթաղիմ

<sup>5</sup> Բ ընդարձակեցաւ

<sup>6</sup> Բ զմարգարէութիւնս

<sup>7</sup> Բ Նեփթաղիմայ

<sup>8</sup> Բ *զրփիս* ծովուն յայնկոյս Յորդանանու

<sup>9</sup> Բ գալիլէացոց

<sup>10</sup> Բ ժողովրդեանն

<sup>11</sup> Բ պղծոց

<sup>12</sup> Բ Թողացոյ

<sup>13</sup> Բ Սաստեաց ի նա Յիսուս և

<sup>14</sup> Բ ել ի դմանէ

78բ քանչն<sup>1</sup> // Սիմոնի տազնապէր ջերմամբ (Դ 38-39):

ՅՀ Բայց դու միտ դիր Պետրոսի, զիա՞րդ ակնածէր ի Յիսուսէ: Այսպիսի հիւանդ ունելով՝ չիչխէր ստիպել տանել զնա ի տուն, այլ կայր մինչև զվարդապետութիւնն կատարեսցէ<sup>2</sup> և զայլս բժշկեսցէ:

**Աղաչեաց զնա վասն նորա** (Դ 39):

Յորժամ ի տունն եմուտ Յիսուս, ապա աղաչեաց, զի ի սկզբանէ այնպէս խրատեալ էր Պետրոս զանձն ո՛չ մեծ համարել, քան զայլսն: Ապա ուրեմն ինքն Յիսուս իւրովի եկն: Տե՛ս, որպիսի՞ յարկք էին որսորդացն, բայց սակայն<sup>3</sup> Յիսուս ո՛չ զարշեցաւ երթալ ի խողն, զի զմեզ<sup>4</sup> խրատեսցէ կոխել զհպարտութիւն[ն]:

Մատթէոս ասէ. «Կալաւ զձեռանէ նորա և եթող զնա<sup>5</sup> ջերմն»

(Մատթ. Ը 15):

Իսկ Ղուկաս.

**Սաստեաց, և վաղվաղակի պաշտէր զնա** (Դ 40):

Կատարեալ առողջութիւն շնորհէր նմա: Նորանշան բժըշկութեամբ զգաւրութիւն իւր ցուցանէր: Գիտէք, զի յետ թողլոյ ջերմանն բազում ժամանակաւ զայ ի՞նչ կատարեալ առողջութիւն, իսկ անդ<sup>7</sup> փոյթ ընդ փոյթ լինէր:

**Եւ ընդ արևուն մտանելն, հիւանդք ի պէսպէս ցաւս, դնէր ձեռն և բժշկէր** (Դ 41):

Տեսանե՞ս, զի բազումք զային ի հաւատս, զի ո՛չ յայնմ ժամու մեկնէին ի նմանէ: Եւ միտ դիր, որպէ՞ս<sup>8</sup> [զ]բազում սքանչելեաւքն վազեն աւետարանիչքն, զի ո՛չ մի ըստ միջէ պատմեն:

**Ելանէին դեւքն և աղաղակէին. Դո՛ւ ես Որդի Աստուծոյ** (Դ 42):

ԻԳ Այնքան զաւրութիւն եցոյց՝ տանջելով զդեւս, մինչ[և յ]ակամայ խոստովանէին զնա գոլ Որդի Աստուծոյ: Զի լուեալ էր և՞ նոցա, թէ՛ «Գալոց է, որ զցաւս մարդկան բժշկէ» (հմմտ. Ես. ԾԳ 4)՝ ըստ Եսայեայ:

<sup>1</sup> B գոքանչ

<sup>2</sup> B վճարեսցէ

<sup>3</sup> B զի *փիս* Տես որպիսի... սակայն

<sup>4</sup> B զքեզ

<sup>5</sup> B *չիք* զնա

<sup>6</sup> B *չիք* ի

<sup>7</sup> B անտ

<sup>8</sup> B թէ ո՞րպէս

<sup>9</sup> B *չիք* և

79ա // Իբրև տիւ եղև, ել գնաց յանապատ տեղի (Դ 43):

Վասնզի զայն գիշերն ի տան Պետրոսի կալաւ վանս և ի ժողովրդենէն մեկնեցաւ և յամբոխիցն կալ առանձինն: Արդ՝ զի զամենայն խրատ<sup>1</sup> մեզ սկսաւ առնել և ուսուցանել չխնդրել փառս ի մարդկանէ և<sup>2</sup> թափել ի զբաղմանց: Ըստ որում Դաւիթ ցանկայր. «Ո՞յ<sup>3</sup> տայր ինձ ոք<sup>4</sup> զթևս որպէս [զ]աղաւնոյ, զի<sup>5</sup> հեռացեալ դադարէի յանապատի» (հմմտ. Սաղմ. ԾԴ 7-8):

Ժողովուրդն խնդրէին զնա (Դ 43):

Որք ծանեան զմեծութիւն զաւրութեան սքանչելագործութեան նորա, ո՛չ կամեցան բնաւ որոշել ի նմանէ:

Եւ Յիսուս ասէ. Այլոց<sup>6</sup> քաղաքաց պարտ է աւետարանել (Դ 44):

Բայց նա զհարկաւոր պէտս առաջի եղ, զի վասն ամենեցուն առաքեցաւ:

<sup>1</sup> A ի խրատ

<sup>2</sup> B սրբազրված՝ ևս

<sup>3</sup> B ո՞

<sup>4</sup> B չիք ոք

<sup>5</sup> B զի թռչէի վերանայի

<sup>6</sup> B և այլոց

## Գլուխ Ե

**Եղև ի խոնել զնովաւ ժողովրդոցն, և լսել զԲանն Աստուծոյ**  
(Ե 1):

*Այլ նոքա բազմանային և խոնէին զնովաւ յամենայն կողմանց, զի մի՛ գնասցէ ի նոցանէ: Ջայս առնէին, զի հարան ի սէր նորա, և ընդ զաւրութիւն[ս]ն զարմացեալք կամէին<sup>1</sup> միշտ տեսանել զսքանչելիս նորա և լսել զքաղցր բարբառ իմաստութեան նորա բանիցն: Ըստ առակողին՝ «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում» (Երգ Բ 12):*

**Եմուտ ի նաւ մի, որ էր Սիմոնի** (Ե 3):

*Եփ. Երկու նաւքն՝ մինն թլփատութեան և մինն անթլփատութեան, էին աւրինակ: Եւ դարձեալ. զի մի՛ ի թիկանց կուսէ ոք եղիցի, այլ ամենեքին հանդէպ երեսաց նորա կայցեն<sup>2</sup> առ ծովեզերին: Այլև զի մի՛ տեղին անլուր արասցէ զլսաւղսն:*

**Նստաւ և ուսուցանէր զժողովուրդն** (Ե 3):

**79բ** *Ս Արդ՝ աւետարանիչքն, զի<sup>3</sup> ո՛չ էին բաւական գրել, նաև՝ «Ո՛չ աշխարհս բաւական էր տանել» (Յովհ. ԻԱ 25)՝ ըստ Յովհաննու:*

**Իբրև լուեաց ի խաւսելոյ, ասէ ցՍիմոն. Արկէք զգործիս ձեր յորս: Եւ<sup>4</sup> Պետրոս ասէ. Ջամենայն գիշերս աշխատ եղաք<sup>5</sup> և ո՛չ կալաք** (Ե 4-5):

**ԵՓ** *Խորհուրդ մարգարէիցն, որ գիշեր համարեցաւ քարոզութիւն նոցա, զի աշխատեալ*

**ԻԳ** *ո՛չ կարացին փրկել զոք: Եւ գիշեր, զի ո՛չ ծագեաց արեգակն ի բարձանց, որ լուսաւորելոց էր զաշխարհս ամենայն, որ էին ի խաւարի:*

**Բայց վասն քո բանիցդ<sup>6</sup> արկցուք զգործիս** (Ե 5):

*Իսկ աստ մերձ էր Արեգակն: Եւ տիւ՝ լուսափայլ վարդապետութիւնն Քրիստոսի, հրաման տայ ո՛չ զանգիտել, այլ<sup>1</sup> արկանել զուռկանս<sup>2</sup> Բանին ի ծովացեալ աշխարհս մեղաւք:*

<sup>1</sup> Բ կային

<sup>2</sup> Բ կացցեն

<sup>3</sup> Բ *չէք* զի

<sup>4</sup> Բ *չէք* և

<sup>5</sup> Բ աշխատեցաք

<sup>6</sup> Բ բանիդ



**ԵԼ փակեցին զբազմութիւնն ձկանցն: Եւ ականարկէին որսակցացն աւզնել նոցա** (Ե 6-7):

**ԵՓ** *Սորհուրդ եւթանսուն և երկուցն, զի սակաւ էին նոքա յորս: Ըստ այնմ՝ «Աղաչեցէք զՏէր Հնձոցն, զի հանցէ մշակ<sup>3</sup> ի հունձս իւր»* (Մատթ. Թ 38):

**Իգ.** *Եւ ինքն առակաւ զնոյն եցոյց. «Նմանեցաւ<sup>4</sup> արքայութիւնն Աստուծոյ ուռկանի արկելոյ ի ծով և յամենայն ազգաց ժողովելոյ»* (Մատթ. ԺԳ 47): *Այսպէս զաւրանայ կողմն հեթանոսաց:*

**Իբրև ետես Պետրոս, անկաւ առ ոտսն Յիսուսի. Տէ՛ր, ի բաց գնայ յինէն, զի այր մեղաւոր եմ ես** (Ե 8):

*Ծանեաւ զզաւրութիւնն նորա ի վեր քան զբնութիւնն մարդկան: Ամենայն ուրեք մարդկան տկարութիւնն յանդիմանի, որպէս աչացն առ արեգականն պայծառութիւնն և հոգոց մարդկան յաստուածայինսն մերձեցեալ: Որպէս Եսայի // ետես զփառսն Աստուծոյ և զսերոբէիցն<sup>5</sup> զսրբասցութիւնն<sup>6</sup>, և<sup>7</sup> ասէ. «Վայ ինձ, զի ես այր մեղաւոր եմ և պիղծ շրթունս ունիմ»* (Ես. Զ 5):

**Եւ Յիսուս ցՍիմոն ասէ. Մի՛ երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որսասցես** (Ե 10):

**Ստ.(կր.)** *Յաղագս այսորիկ<sup>8</sup> որսորդքն մարդկան որսալով զնոսա, և կորզեալ ցանցիւքն վարդապետութեան<sup>9</sup> ի ժանեաց կամակոր վիշապին, որ կամի զամենայն մարդ որսալ ի կորուստ իւր՝ ի հուրն յաւիտենական:*

**Որսասցես ի կեանս** (Ե 10):

**Իգ** *Ո՛չ որսալ ի մահ և յապականութիւն, այլ ի մահուանէ «ի կեանս», և յաղտաղտուկ կորստական ջուրց մեղաց[ն]՝ ի ջուրն կենդանի, որ խաղաղացուցանէ ի կեանսն յաւիտենականս[ն], որպէս ասաց Քրիստոս, և յանհաւատութենէ ի հաւատս ուղիղս և վարս պարկեշտս: Ըստ մարգարէին՝ «Առաքեցից ի վերայ ձեր որսորդս և որսայցեն զձեզ ի վերայ լերանց և<sup>10</sup> բլրոց»* (Երեմ. ԺԶ 16):

<sup>1</sup> Բ *չիք* այլ

<sup>2</sup> Բ գուռկան

<sup>3</sup> Բ մշակս

<sup>4</sup> Բ նման է

<sup>5</sup> Բ զսերովբէիցն

<sup>6</sup> Բ զսրբասացութիւնն

<sup>7</sup> Բ *չիք* և

<sup>8</sup> Բ այնորիկ

<sup>9</sup> Բ ցանցիւք վարդապետութեամբն

<sup>10</sup> Բ *չիք* և

Հանեալ<sup>1</sup> գնաւն ի ցամաքն՝ թողին զամենայնն<sup>2</sup> և գնացին զհետ Յիսուսի<sup>3</sup> (Ե 11):

US Թողին զգործ անցաւոր լուսոյս և հետևեցին ի մեծ և յիմանալի և յանստուեր լոյսն: Եւ դու միտ դիր հաւատոցն հնազանդութեան: Թէպէտև ի գործ[ս] արուեստին զբաղեալ էին, սակայն ո՛չ դանդաղեցան, և Յովհաննէս<sup>4</sup> ո՛չ ասաց: Եւ վաղվաղակի յուժարեցան գնալ զհետ, որ ցուցանէ զառաքինութեան նոցա զհանդէս:

Ի գնալն ի քաղաք անդր, և բորոտն<sup>5</sup> իբրև ետես զՅիսուս, անկաւ ի վերայ երեսաց իւրոց և<sup>6</sup> աղաչեաց գնա<sup>7</sup>. Տէ՛ր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել (Ե 12):

80բ ՅՀ Ո՛չ վայրապար, // այլ բազում ջերմութեամբ և սերտ հաւատով: Քանզի ո՛չ ասաց, եթէ յաղաւթս կաց, և խնդրէ յԱստուծոյ, այլ եթէ՝ «կամիս, կարող ես»:

Ի նա ապաստան արար զիշխանութիւնն:

ԵՓ Բորոտին թուեցաւ, թէ որպէս Եղիայ<sup>8</sup> պահէ զաւրէնսն:

Զգեաց զձեռն իւր, հասոյց ի նա Յիսուս և ասէ. Կամիմ, սրբեա՛ց (Ե 13):

Ընդէ՞ր կամաւք և բանիւ սրբեաց և զձեռն իսկ մատուցանէր: Թուի ինձ, եթէ ցուցցէ, թէ չէ հնազանդ աւրինացն, այլ Տէր է աւրինացն: Եւ ելոյծ զաւրէնս[ն]՝ մերձենալով առ նա, զի յայտ արացէ, թէ աւրէնսդրչի<sup>9</sup> աւրէնքն ո՛չ մեղանչեն: Եւ, որ բնութեամբ սուրբ է, չէ ինչ, որ զնա անսրբիցէ: Զի ո՛չ պղծի նա ի պղծոյ անտի, այլ փախչի ի նմանէ պղծութիւնն:

Եւ վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն (Ե 13):

US Հաւատով սրբեցաւ հոգւոյն բորոտութիւնն, սրբեաց զմարմինն, և զհոգին ած ի ցածութիւն:

Պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել (Ե 14):

<sup>1</sup> B և Հանեալ

<sup>2</sup> B գամենայն

<sup>3</sup> B նորա *փխ* Յիսուսի

<sup>4</sup> B Յովհաննու

<sup>5</sup> B Եւ եղև ի հասանելն նորա ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ *փխ* Ի գնալն... բորոտն

<sup>6</sup> B *չէք* և

<sup>7</sup> B գնա և ասէր

<sup>8</sup> B Եղիայ

<sup>9</sup> B աւրէնսդրին

ՅՀ Այլ զի անպարծութիւնն ուսուցանէ և գիտէր, զի չառնու<sup>1</sup> յանձն թագուցանել:

Երթ ցոյց զանձն քո քահանային (Ե 14):

Վասն այսորիկ առաքէ առ քահանայսն, զի մի՛ ասիցեն, թէ զքահանայիցն զփառսն յափշտակեաց, զգործս նոցա կատարէ, կամ զի քննիչ արասցէ սքանչելեացն:

Կարծէր<sup>2</sup>, զի մի<sup>3</sup> ելցէ համբաւ նորա ի Հրէաստան, թէ Աստուած իցէ:

Ստ. Քանզի բանիւ սրբել զբորոտութիւնն՝ Աստուծոյ գործ է: Իսկ Յիսուս դեռևս ո՛չ կամէր յայտնել զինքն քահանայիցն, թէ Աստուծոյ Որդի է և մարդացաւ:

Եւ մատոյ զպատարագն վասն սրբութեան քո, զոր հրամայեաց Մովսէս (Ե 14):

81ա ՅՀ Այսու զաւ(11)րէնսն կատարեաց, զի<sup>4</sup> ո՛չ ամենայն ուրեք լուծանէ, այլ մերթ զայն առէ և մերթ զայս, և զանամաւթութեան լեզուս հրէիցն խնուցու<sup>5</sup>

Ի վկայութիւն նոցա (Ե 14):

ՅԸ. Ո՛չ յուղղութիւն<sup>6</sup> նոցա կամ ի վարդապետութիւն, այլ յամբաստանութիւն և ի կշտամբութիւն, թէ յինէն եղև ամենայն ինչ և կատարեցաւ: Թէպէտև դուք չէիք ուղղելոց, այլ ես զիմն կատարեցի:

Եւ<sup>7</sup> ուսուցանէր, և փարիսեցիքն և աւրինացն<sup>8</sup> վարդապետքն նստէին (Ե 17):

ԻԳ. Ահալասիկ ի Տեառնէ ասացեալ բանքն ո՛չ գրեցան: Տե՛ս, որպիսի<sup>9</sup> ինչ պարտ էր նմա խաւսել ըստ աստուածեղէն իմաստութեանն:

Ի խաւսել նորա<sup>9</sup>,

<sup>1</sup> B չառնույր

<sup>2</sup> B կարծեմ

<sup>3</sup> B չէք մի

<sup>4</sup> B քանզի

<sup>5</sup> B խնու

<sup>6</sup> A B ի յուղղութիւն

<sup>7</sup> B և եղև ի միտմ առուրց և ինքն

<sup>8</sup> B աւրինաց

<sup>9</sup> B չէք ի խաւսել նորա

Արք<sup>1</sup> բերէին մահճաւք զայր մի անդամալոյժ<sup>2</sup>, ընդ ցուոցն կախեցին<sup>3</sup> առաջի նորա (Ե 18-19):

ԵՓ Տե՛ս դու, զի հաւատք այլոց յայլս զինչ գործեցին: Զի ո՛չ պահանջեաց ի նմանէ հաւատս, զի շինուած էր նա քակուտ: Որպէս ի միամաւրէն ո՛չ պահանջեաց ի նմանէ<sup>4</sup> հաւատս, այլ ի հաւրէ նորա, զի՞նչ պարտ էր նմա կամ Հաւր նորա:

Թողեալ<sup>5</sup> լիցին քեզ մեղք քո (Ե 20):

ԿԲ Զիա՞րդ թողոյր Յիսուս, եթէ ո՛չ էր զուգակից Հաւրն, զի վասն մեղաց էր հիւանդութիւն նորա: Զի [ի] յանցանաց հոգւոյն<sup>6</sup> լինի արտաժէտութիւն մարմնոյն: Վասնզի հաւատաց հոգով և մարմնով յՈրդին<sup>7</sup> Աստուծոյ, վասն այսորիկ թողան մեղք հոգւոյն, և մարմնոյն առողջութիւն եղև:

Եւ ասեն ոմանք ի դպրաց[ն] և ի փարիսացոցն. Հայհոյէ դա: Ո՞ր կարէ թողուլ զմեղս, բայց միայն Աստուած: Գիտաց<sup>8</sup> Յիսուս 81բ զխորհուրդս նոցա, ասէ<sup>9</sup>. Զի՞ // խորհիք չարիս<sup>10</sup> ի սիրտս ձեր<sup>11</sup> (Ե 21-22):

ՅԿ. Բայց նոքա չարեաւք ի սիրտս իւրեանց ծածկեալ էին<sup>12</sup> և ո՛չ կարէին զիրան ի վեր հանել: Սակայն զնոյն կազմէին աւամայ: Իսկ Յիսուս ամենագէտն զնշան իւրոյ աստուածութեանն յայտ առնէ, քանզի հանգիտապատիւ է Հաւր, և Աստուծոյ միայն է զսրտին ծածուկն ի վեր հանել: Որպէս մարգարէն ասէ. «Որ քննէ զսիրտս և զիրկամունս<sup>13</sup> Աստուած» (Սաղմ. Ե 10, Երեմ. Ի 12):

<sup>1</sup> Ե Որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց գալիլէացւոց և Հրէաստանի և Երուսաղեմի, և զաւրութիւն Տեառն էր ի բժշկել զնա: Եւ ահա արք (Ե 17-18)

<sup>2</sup> Ե որ էր անդամալոյժ և խնդրէին զնա մուծանել ի ներքս և զնել

<sup>3</sup> Ե **չիք** ընդ ցուոցն կախեցին

<sup>4</sup> Ե **չիք** ի նմանէ

<sup>5</sup> Ե Եւ իբրև ո՛չ գտանէին, թէ ընդ ո՞ր մուծանիցեն ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիսն և ի ցլուոցն կախեցին զնա, և իջուցին մահճաւքն հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատս նոցա՝ ասէ ցնա. Այր դու, թողեալ (Ե 19-20)

<sup>6</sup> Ե ոգւոյն

<sup>7</sup> Ե յՈրդւոյն

<sup>8</sup> Ե իբրև գիտաց

<sup>9</sup> Ե պատասխանի ետ և ասէ ցնոսա

<sup>10</sup> Ե **չիք** չարիս

<sup>11</sup> Ե ձեր, զի՞նչ դիւրագոյն է ասել. Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել. Արի և զնա՛ (Ե 23)

<sup>12</sup> Ե ծածկէին

<sup>13</sup> Ե զերկամունս

Այլ զի գիտասաղիք, զի<sup>1</sup> իշխանութիւնն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեզս (Ե 24):

Կր. Մի<sup>2</sup> թէ յերկինս: Ո՛չ: Այլ զի ցուցցէ, թէ յերկինս քաջայայտ է հրեշտակացն առնել, զոր ինչ և կամի իշխանաբար, այլ երկրաւորացս դեռևս՝ զիս ո՛չ ճանաչելով: Այլ զի և սոցա յայտնի լինի<sup>2</sup>, թէ Որդիս մարդոյ, որ գայթաղիք ի ձեռն մարմնոյս<sup>3</sup>, Որդի Աստուծոյ է, որ զնոյն իշխանութիւնն և յերկրի ունի որպէս յերկինս: Այլ ի դէպ էր, ասէ. «Իշխանութիւնն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեզս»: Այլ վասն անորիչ և անքակ գոլով մարդկութիւնն յաստուածութենէն, ըստ որում տեսանէին: Վասն այսորիկ<sup>4</sup> ասաց «Որդի մարդոյ» և ո՛չ հրաժարէր ի մարդկային կարգաց:

Ասէ<sup>5</sup> ցանդամալոյծն. Առ<sup>6</sup> զմահիճս քո և երթ ի տուն քո: Եւ առաջի ամենեցուն գնաց ի տուն իւր (Ե 24-25):

ԵՓ Ձի վասն մեղաց իւրոց լուծաւ նա: Եհաս Բանն Տեառն ամենակալ[ի], քաւեաց զծածուկ մեղս նորա և բժշկեաց զյայտնի մարմինս նորա: Ձի Աստուած էր նա ծածուկ՝ միացեալ ի մարմնի յայտնի:

Առ զմահիճս քո<sup>7</sup> (Ե 24):

ՍՏ Մահիճս տախտ<sup>8</sup> մարմինն լսի, որ զհոգին ի վեր ունի:  
82ա // Արդ՝ ասէ Բանն Աստուծոյ ցՀոգին առ զմարմին քո առողջացեալ և «երթ ի տուն քո» (Ե 24), այսինքն է՝ [յ]առաքինութիւնն, որ է բնակութիւն հոգւոյ՝ ազատեալ ի մեղաց:

Իբրև տեսին ժողովուրդքն<sup>9</sup>, փառաւոր առնէին զԱստուած և<sup>10</sup> ասէին. Թէ<sup>11</sup> տեսաք այսաւր նոր նշանս (Ե 26):

<sup>1</sup> Ե եթէ

<sup>2</sup> Ե լինիցի

<sup>3</sup> Ե մարդոյս

<sup>4</sup> Ե այնորիկ

<sup>5</sup> Ե և ասէ

<sup>6</sup> Ե քեզ ասեմ, արի առ

<sup>7</sup> Ե չիք առ... քո

<sup>8</sup> Ե դարձեալ մահիճս աստ

<sup>9</sup> Ե եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն առ զիւրև յորոյ վերայ անկեալ դնէր, գնաց ի տուն իւր և փառաւոր առնէր զԱստուած, զարմանք կալան զամենեսեան և փիւ Իբրև... ժողովուրդքն

<sup>10</sup> Ե լի եղեն ահիւ և

<sup>11</sup> Ե ասեն եթէ

ԻԳ Մեծ քան զամենայն մարդ զնա կարծելով և յԱստուծոյ եկեալ: Զի թէ յայն բարիօք էին հաւատացեալ, ապա և<sup>1</sup> ոտն ոտն յառաջ գային ճանաչել, թէ Որդի է Աստուծոյ:

Յետ<sup>2</sup> այնորիկ ել անտի և ետես մաքսաւոր մի Ղևի անուն<sup>3</sup>, և<sup>4</sup> ասէ ցնա. Ե՛կ զկնի<sup>5</sup> իմ (Ե 27):

ՈԿ Զի յայտնի արասցէ զզաւրութիւն այնորիկ, որ կոչեաց զնա: Զի ո՛չ եթէ ցածութիւն ինչ էր յայնպիսի<sup>6</sup> յոռութեանց, այլ անդէն ի միջոյ չարութեանցն կորզեաց, որպէս զերանելին Պաւղոս զմոլեգին և զկատաղին, որ հուր հնչեցուցանէր, ցածոյց:

Թողեալ զամենայն<sup>7</sup> յարեաւ զնաց զհետ նորա (Ե 28):

Որպէս տեսէր<sup>8</sup> զկոչողին զզաւրութիւնն, նոյնպէս ուսիր զկոչեցելոյն հնազանդութիւնն<sup>9</sup>: Վաղվաղակի թողեալ զմաքսաւորութիւնն և զշահն՝ և ո՛չ արժանի համարեցաւ երթալ ի տուն առ ընտանիսն<sup>10</sup>, որպէս ձկնորսքն զուռկանսն և զնաւն:

Եւ արար ընդունելութիւն ի տան իւրում (Ե 29):

Իբրև կոչեաց զնա մեծամեծ պատուով, պատուեաց<sup>11</sup> և վանակից եղև ի տան նորա: Այսու հանդերձելոցն վստահ առնէր զնա:

Եւ<sup>12</sup> էր ժողով բազում մաքսաւորաց<sup>13</sup>, որ էին բազմեալ ընդ նմա (Ե 29):

Քանզի նա կոչեաց զամենեսին և Քրիստոս զամենայն աւր(//)-ինակս բժշկութեանն եցոյց:

ԵՓ Այս է տեսիլ սքանչելի, հրեշտակք դողան և բազմեալ են մաքսաւորքն, ուրախ լինէին: Զուարթունք զահի հարեալ<sup>14</sup> էին ի մեծութենէ նորա, և մաքսաւորք ուտեն ընդ նմաւ:

<sup>1</sup> B չէք և

<sup>2</sup> B և յետ

<sup>3</sup> B որում անուն էր Ղևի

<sup>4</sup> B զի նստէր ի մաքսաւորութեան և

<sup>5</sup> B զհետ

<sup>6</sup> A ի յայնպիսի

<sup>7</sup> B և նա թողեալ զամենայն

<sup>8</sup> B տեսանէր

<sup>9</sup> B չէք նոյնպէս... հնազանդութիւնն

<sup>10</sup> B ընդանիսն

<sup>11</sup> B պատուեաց զնա

<sup>12</sup> B Եւ արար ընդունելութիւն մեծ նմա Ղևի ի տան իւրում, և

<sup>13</sup> B մաքսաւորաց և այլոց

<sup>14</sup> B նախ՝ զարհեալ, ապա սրբագրված՝ զարհուրեալ

**Փարիսացիք և դպիրքն տրտնջէին զնմանէ<sup>1</sup> (Ե 30):**

*Փարիսացիքն և դպիրքն<sup>2</sup>՝ հերձեալ նախանձու, և մաքսա-  
ւորք՝ ցնծան ուրախութեամբ: Տեսին վերինք[ն] և զարմացան, և  
ներքինք[ն]՝ յիմարեցան: Սատանայ մաշեցաւ, մահ վատթարա-  
ցաւ<sup>3</sup>:*

**Առ աշակերտսն ասէին. Ընդէ՞ր ընդ մաքսաւորսն ուտէք<sup>4</sup> (Ե  
30):**

**Ոսկ.** *Առ աշակերտսն քրթմնջէին: Եւ այսպէս մեղմեխանաւք<sup>5</sup> կա-  
մէին քակել զգուլթ վարդապետին յաշակերտացն:*

**Եւ Յիսուս<sup>6</sup> ասէ ցնոսա. Ո՛չ է<sup>7</sup> պիտոյ բժիշկ ողջաց,<sup>8</sup> այլ հի-  
ւանդաց<sup>9</sup> (Ե 31):**

**Ոս.** *Տեսանե՛ս, զիա՞րդ ընդդէմ նոցա<sup>10</sup> դարձուցանէ զԲանն, թէ ո՛չ  
է<sup>11</sup> արժան նորա մարդասիրութեանն անտես առնել զվիրաւորսն  
մեղաւք, զի ո՛չ է վնաս, այլ ուղղութիւն և բազմութիւն<sup>12</sup> արժանի  
գովութեան:*

**Ասեն<sup>13</sup>. Ընդէ՞ր աշակերտքն<sup>14</sup> Յովհաննու պահեն<sup>15</sup> (Ե 33):**

*Ուստի՞ էին ուսեալ. ի Յովհաննու պահոցն աշակերտքն նո-  
րա:*

**Եւ փարիսացիքն (Ե 33):**

*Յաւրինացն ուսան փարիսացիքն<sup>16</sup>, որպէս ասէր փարիսացին.  
«Պահեմ երկիցս ի շաբաթու» (ԺԸ 12):*

**Եւ քոյղ ուտեն (Ե 33):**

<sup>1</sup> Եւ տրտնջէին փարիսացիքն և դպիրքն զնմանէ առ աշակերտսն նորա և ասէին

<sup>2</sup> Ե **չիք** և դպիրքն

<sup>3</sup> Ե և մահ վատթարեցաւ

<sup>4</sup> Ե ուտէք և ըմպէք

<sup>5</sup> Ե մեխմեխանաւք

<sup>6</sup> Ե պատասխանի ետ Յիսուս

<sup>7</sup> Ե ինչ են

<sup>8</sup> Ե ողջոց

<sup>9</sup> Ե հիւանդաց, զի ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն

<sup>10</sup> Ե **չիք** նոցա

<sup>11</sup> Ե էր

<sup>12</sup> Ե բազմութեան

<sup>13</sup> Ե Եւ նոքա ասեն ցնա

<sup>14</sup> Ե աշակերտն

<sup>15</sup> Ե պահեն ստէպ և խնդրուածս առնեն: Նոյնպէս և փարիսեցոցն, և քոյղ ուտեն  
և ըմպեն

<sup>16</sup> Ե **չիք** փարիսացիքն

Գրեաջիր, թէ դու իբրև զբժիշկ առնես զայդ, իսկ աշակերտքն ընդէ՞ր թողեալ զպահս՝ առ սեղանն ջերանին<sup>1</sup>:

Ասէ ցնոսա Յիսուս<sup>2</sup>. Մի՞թէ կարող [ից]էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ<sup>3</sup> (Ե 34):

83ա Եփ. // Տէր մեր զամենայն ժամանակս, որ եղև յաշխարհի, առագաստ անուանեաց զնա և զինքն փեսայ: Ո՛չ է մարթ փեսաւիրացն պահել: Նախ՝ բժիշկ և ապա՝ փեսայ, զի զանճառ խորհուրդսն այնպիսի անուամբ յայտնեաց: Յուշ առնելով զՅովհաննոն, թէ՛ «Որ ունի հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ 29):

Եկեսցեն աւուրք, յորժամ վերասցի<sup>4</sup> նոցանէ փեսայն և ապա պահեսցեն<sup>5</sup> (Ե 35):

ՅՀ Ո՛չ որկ[ո]րստուլթեան<sup>6</sup> իրք էին, այլ սքանչելի տեսուլթեան, քանզի Յովհաննու չարչարանաւքն<sup>7</sup> պարծէին նոքա: Յածուցանէ զհպարտուլթիւն նոցա՝ զիւր չարչարանս[ն] ճառելով և զյարուլթիւնն: Ո՛չ էր ժամանակ, ասէ, զի յարուլթիւնն ի վեր քան զբնուլթիւնս է:

Ո՛չ<sup>8</sup> ոք արկանէ [ի] նոր հանդերձ[է] ի վերայ հնացեալ ձորձոյ<sup>9</sup> (Ե 36):

Ոկ. Զփարիսաց[լ]ոցն և զդպրացն սիրտն ասէ, որք Հին աւրինաւքն ներկեալ<sup>10</sup> էին այլ<sup>11</sup> հնացեալ անհաւատուլթեամբ: Ո՛չ ժուժկալեն, այլ ցնդեն զչնորհն, քանզի իմաստուլթիւն<sup>12</sup> յանձն չար արուեստ ո՛չ մտանէ:

Նոր գինի պայթեցուցանէ գտիկս հինս<sup>13</sup> (Ե 37):

<sup>1</sup> Ե ջերանային

<sup>2</sup> Ե Եւ նա ասէ ցնոսա

<sup>3</sup> Ե իցէ հրաման տալ պահել

<sup>4</sup> Ե բարձցի ի

<sup>5</sup> Ե պահեսցեն յաւուրսն յայնոսիկ

<sup>6</sup> Ե որկորուստ

<sup>7</sup> Ե սրբագրված՝ աշակերտաւքն

<sup>8</sup> Ե Ասաց և առակ մի նոցա թէ ոչ

<sup>9</sup> Ե ձորձոյ: Ապա թէ ո՛չ, և զնորն պատուէ և ընդ հնոյն չմիաբանի կապերտն, որ ի նորոյն

<sup>10</sup> Ե նախ՝ արկեալ, ապա սրբագրված՝ աշակերտեալ

<sup>11</sup> Ե և փխ այլ

<sup>12</sup> Ե իմաստուլթիւնն Աստուծոյ

<sup>13</sup> Ե Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր գտիկսն հինս: Ինքն հեղու և տիկքն կորընչին



US Նոր և սքանչելի վարդապետութեանս ո՛չ հանդուրժեն ոգիք հնացեալք<sup>1</sup> ախտիւք հրէական և հեթանոսական: Ո՛չ<sup>2</sup> կարեն հանդուրժել իմ վարդապետութեանս, այլ՝ հերձնուն:  
«Մի տայք զսրբութիւնս ձեր շանց» (Մատթ. Է 6):

**Գինի<sup>3</sup> նոր ի տիկս նորս արկանելի է<sup>4</sup>** (Ե 38):

Միայն ուսանել զիմ նոր վարդապետութիւնս, նոր սիրտ իմ աշակերտացն, քանզի ո՛չ էին մաշեալ հրէական վարդապետութեամբն:

<sup>1</sup> Ե հնացեալ

<sup>2</sup> Ե այնպիսիքն ոչ

<sup>3</sup> Ե այլ գինին

<sup>4</sup> Ե է և երկոքին պահին: Եւ ո՛չ ոք ըմպէ զհինն և կամիցի զնորն, քանզի ասէ, թէ հինն քաղցրագոյն է (Ե 38-39)

## Գլուխ Զ

- 83բ // Եղև ի շաբաթու [յ]երկրորդումն առաջնոյն<sup>1</sup> (Ձ 1):  
 Որ էր ամն ողջոյն շաբաթ: Ըստ աւրինացն շաբաթ, որ թարգմանեն կրկին դատարկութիւն:
- Անցանել<sup>2</sup> նմա ընդ արտաւրեայսն<sup>3</sup> ի շաբաթու (Ձ 1):  
 Ո՛չ զի շաբաթն կամէր լուծանել, այլ ո՛չ առանց պատճառի<sup>4</sup>:
- Եւ աշակերտքն<sup>5</sup> կորզէին հասկ, շփեն<sup>6</sup> ընդ ափ և ուտեն<sup>7</sup> (Ձ 1):  
 Դու զարմացիր ընդ աշակերտսն, զի հրաժարեալ էին ի մարմնական դարմանաց<sup>8</sup> և սովամահ ճնշէին հանապազ, սակայն ո՛չ թողուին զվարդապետն:
- Ոմանք<sup>9</sup> ի փարիսացոցն ասեն<sup>10</sup>. Զի՞նչ գործէք, ո՛չ է՞<sup>11</sup> աւրէն ի շաբաթու (Ձ 2):
- ԿՐ Փարիսացիքն վասն երկու պատճառանաց բամբասէին զնոսա:  
 Զի շաբաթ էր և աւրէնքն հրամայէին դատարկանալ, իսկ նոքա հասկ կորզէին և ուտէին: Երկրորդ<sup>12</sup> զի աւրէնքն ասեն նախ՝ քահանայիցն մատուցանել յարմտեացն և ապա՝ ժողովրդեանն մերձենալ: Իսկ անդ ո՛չ էր քահանայիցն դեռ մատուցեալ:
- Յիսուս<sup>13</sup> ասէ. Ո՞չ է՞<sup>14</sup> ընթերցեալ<sup>15</sup> ձեր, յորժամ<sup>16</sup> արարն Դաւիթ, յորժամ քաղցեալ<sup>17</sup> և որ ընդ նմայն էին (Ձ 3):
- ոկ. Ընդէ՞ր զ Դաւիթ յիշէ: Զի յոյժ մեծ էին փառք մարգարէին, և<sup>18</sup> պատուով երեսացն կամէր ցածուցանել զմիտս նոցա:

<sup>1</sup> Երկրորդում առ նոյն

<sup>2</sup> Եւ եղև ի շաբաթու երկրորդում առաջնոյն անցանել

<sup>3</sup> Երտորեայսն

<sup>4</sup> Եւ չիք ի շաբաթու... պատճառի

<sup>5</sup> Եւ աշակերտքն նորա

<sup>6</sup> Եւ շփէին

<sup>7</sup> Եւ ուտէին

<sup>8</sup> Եւ դարմանոց

<sup>9</sup> Եւ ոմանք

<sup>10</sup> Եւ փարիսացոցն ասեն ցնոսա

<sup>11</sup> Եւ զոր էէ

<sup>12</sup> Եւ երկրորդ

<sup>13</sup> Եւ Պատախանի ետ նոցա Յիսուս և

<sup>14</sup> Եւ չիցէ

<sup>15</sup> Եւ ընթերձեալ

<sup>16</sup> Եւ զոր

<sup>17</sup> Եւ քաղցեալն ինքն

<sup>18</sup> Եւ չիք և

**Զիւրդ եմուտ ի տուն Աստուծոյ և զհացն առաջաւորութեան եկեր<sup>1</sup> (Ձ 4):**

*[Ի] ձեր աւրինաց գիտասլիք<sup>2</sup> նոյն գունակ, և աստ եղև, մա-*

**84ա նաւանդ թէ առաւել, զի անդ՝ Դաւիթ, իսկ ա(//)ստ՝ Տէրն Դաւթի:**

**Տէր է Որդի մարդոյ և շաբաթու (Ձ 5):**

*Տէր է ամենայնի: Զոր կամի գործէ ի շաբաթու, և հնազանդին նմա դեւք և ախտք: Այսպէս և աւուրն Տէր է փոխել ի դատարկութիւնէ յառաքինութեանն գործ, որպէս իմանի այժմ մարտիրոսաց յիշատակն ի շաբաթու:*

*Ի միւս շաբաթն մտանէր ի ժողովուրդն, անդ էր այր մի, որոյ ձեռն գաւսացել էր: Սպասէին դպիրքն և փարիսացիքն, զի շաբաթու բժշկեցէ, զի չարախաւսեացն զնմանէ<sup>3</sup> (Ձ 6-7):*

**ՈԿ** *Հարցանելովն գրաւել փութային՝ մեղմեխանաւք<sup>4</sup> արգելել զբժշկութիւնն: Ո՛չ կամէին ուսանել<sup>5</sup>, այլ չարախաւսել: Մարկոս ասէ. «Եւ զայրն կացոյց ի մէջ» (հմմտ. Մարկ. Գ 3):*

**ՍՏ** *ողորմութիւն զնոսա յորդորելով, զի երեսաւքն փոքր մի խոնարհեցուցանէ զնոսա: Զի յորժամ զիջանիցեն տեսլեամբն, ապա ի չարեացն ցածնուցուն, և յառնէն ակնածեալ՝ դադարեացն ի վայրենական մտացն<sup>6</sup>:*

**Հայեցաւ շուրջ զամենեքում[ք]<sup>7</sup> (Ձ 10):**

*Զի այնու ձգիցէ զնոսա առ ինքն, սակայն<sup>8</sup> այնպէս եղեն անմտագոյնք<sup>9</sup>, քանզի զանբժշկական ախտ ջերանային:*

**Ասէ ցայրն. Զգեա՛ զձեռն քո: Եւ ձգեաց, և հաստատեցաւ<sup>1</sup> (Ձ 10):**

<sup>1</sup> B գառաջաւորութեան եկեր և ետ այնոցիկ, որ ընդ նմայն էին, զոր ոչ էր աւրէնք ումեք ուտել, բայց միայն քահանայապետիցն: Եւ ասէ ցնոսա (Ձ 4-5)

<sup>2</sup> B աւրինացդ իմասլիք

<sup>3</sup> B Եւ եղև ի միւսում շաբաթուն մտանել նմա ի ժողովուրդն և ուսուցանել, և էր անդ այր մի և ձեռն իւր աջ գաւսացեալ էր: Եւ սպասէին նմա դրպիրքն և փարիսացիքն, թէ ի շաբաթուն բժշկեցէ, զի գտանիցեն չարախաւսութիւն զնմանէ:

<sup>4</sup> B մեխմեխանաւք

<sup>5</sup> A բառը սրբագրված է և հստակ չէ. կարգացվում է ունգԱնել, ուն-ի վերևում ստ լինի գրված (ստունգԱնել<sup>6</sup>): Տեքստում գրել ենք B-ի տարբերակը:

<sup>6</sup> B մտացն: «Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա: Ասէ ցայրն, որ ձեռն իւր գաւսացեալ էր. Արի անց ի մէջ: Եւ նա յարուցեալ եկաց» (Ձ 8)

<sup>7</sup> B **չիք** Հայեցաւ... զամենեքումբք

<sup>8</sup> B սակայն ոչ

<sup>9</sup> B աստ **փխ** անմտագոյնք

ԵՓ *Դարձեալ. ի շաբաթուն բժշկէ, զի իրաւունս կամի տալ, որ ինչ յաշակերտսն գործեցան, և ցածուցանէ զնոսա այսպիսի աւրինակաւք: Եւ ամենայն ուստեք կուտէ պատասխանիս վասն շաբաթուն լուծանելոյ իբրև զմարդ, զի // ի շաբաթու թլփատութիւն առնու, և երբեմն իբրև զԱստուած. «Հայր իմ մինչև ցայժմ<sup>2</sup> գործէ, և ես գործեմ» (Յովհ. Ե 17):*

Լցան<sup>3</sup> յիմարութեամբ և խնդրէին<sup>4</sup>, թէ զի՞նչ արասցեն<sup>5</sup> Յիսուսի (Ձ 11):

*Ո՛չինչ վնասեալք ի նմանէ՝ սպանանել մտաբերէին, զի այնչափ անհնարին չարիք են նախանձն: Զի ո՛չ միայն ընդ աւտարսն, այլև ընդ ընտանիս մարտնչի:*

Ել<sup>6</sup> ի լեառնն<sup>7</sup> կալ յաղաւթս (Ձ 12):

ԻՓ *Խոյս տայր յամբոխէ անտ[ի], միայն զի ի՞նչ լինել ի լերինն՝ ընդ<sup>9</sup> Հաւր խաւսեսցի, և ո՛չ կարաւտ ինչ էր: Եւ կամ ո՞ր իցէ տեղի, յորում ամփոփի Աստուած: Այլ զի մեզ լիցի յուսումն<sup>10</sup> վարդապետութեան:*

Հանէր զգիշերն յաղաւթս Աստուծոյ<sup>11</sup> (Ձ 12):

Ստ. *Առ ի մեր խրատ առնելով: Թուի ինձ, եթէ ի նմին միաշաբաթու զայն կատարեաց: Քանզի ո՛չ ասաց ծունր կամ երկրպագութիւն, որպէս գրեալ է ի մատնութեան գիշերին, թէ սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակերտացն՝ «եդ ծունր և կայր յաղաւթս» (ԻԲ 41): Անդ<sup>12</sup> յետ աղաւթիցն հրամայեաց, թէ՛ «Ննջեցէք այսուհետև և Հանգերուք» (Մարկ. ԺԴ 41): Իսկ յաստուածային գիշերիս ո՛չ գտանեմք այնպիսի ինչ ասացեալ, այլ եթէ՛ «Հանէր զգիշերն*

<sup>1</sup> Ե Ասէ ցնոսա Յիսուս. Հարցից ինչ զձեզ, զի՞նչ արժան է ի շաբաթու բարի ինչ առնե՞լ, եթէ չար գործել, ոգի մի ապրեցուցանե՞լ, եթէ՞ կորուսանել: Եւ հայեցեալ շուրջ գամենեքումք զայրագին ասէ ցնա. Զգեա՛ զձեռն քո: Եւ նա ձգեաց և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն (Ձ 9-10):

<sup>2</sup> Ե այժմ

<sup>3</sup> Ե նոքա լցան

<sup>4</sup> Ե խաւսէին ընդ միմեանս

<sup>5</sup> Ե առնիցեն

<sup>6</sup> Ե Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել

<sup>7</sup> Ե լեառն

<sup>8</sup> Ե *չիք* զի ի (տեղը ջնջված է)

<sup>9</sup> Ե զի ընդ

<sup>10</sup> Ե ուսումն

<sup>11</sup> Ե Եւ հանէր զգիշերն ի գլուխ յաղաւթսն Աստուծոյ: Եւ իբրև այդ եղև, կոչեաց զաշակերտսն իւր (Ձ 12-13)

<sup>12</sup> Ե և անդ

ի գլուխ յաղաւթսն<sup>1</sup> Աստուծոյ»: Յակոբայ՝ [յ]եղբաւրէն Տեառն, հրամայեցաւ երուսաղեմացոցն զնոյնն կատարել<sup>2</sup>, մինչև ցայսաւր զմիաշաբաթն պայծառացուցանեն գիշերապաշտութեան<sup>3</sup>:

Իբրև այգ եղև, կոչեաց զերկոտասանս և ընտրեաց<sup>4</sup> ի նոցան[է] զՍիմոն՝ զոր և Պետրոսն անուանեաց<sup>5</sup> (Ձ 13-14):

85ա Ոկ. Ո՛չ սակաւ յարգանք են այս(//)ոքիկ երկանուն, զմինն յառաքինութենէ և զմիւսն յազգականութենէ կոչէ:

ԶՅակոբոս և զՅովհաննէս եղբայրն (Ձ 14):

Տե՛ս, զի ո՛չ ըստ իւրաքանչիւր պատուոյն է, զի Յովհաննէս ո՛չ միայն քան զայլսն, այլև քան զեղբայրն մեծ է:

Յակոբոս Ալփե[ան]<sup>6</sup> (Ձ 15):

Քանզի մեկնէ զսա Յակոբայ<sup>7</sup> Զերեթեայ:

Սիմոն Նախանձայոյզ, Մատթէոս Կանանացի (Ձ 15):

Ասէ, զի երկանուն էր նա:

Յուդայ Յակոբեան (Ձ 16):

Զոր Յովհաննէս ասէ. «Յուդա՝ ո՛չ<sup>8</sup> Իսկարեովտացին<sup>9</sup>» (Յովհ. ԺԴ 22): Զատանէ զսա ի մատնչէն:

Յուդայ Իսկարեովտացին<sup>10</sup>, որ եղև իսկ մատնիչ (Ձ 16):

Ո՛չ իբրև զթշնամոյ, այլ իբրև զպատգամաւոր պատմէ զամենայնն աւետարանիչն: Քանզի ո՛չ ասաց ամենադժնէի, այլ ի քաղաքին յանուանէ կոչէ զնոսա<sup>11</sup>, զորս<sup>12</sup> զձկնորսն, զմաքսաւորսն:

յոհ. Քանզի չորքն ի նոցանէ ձկնորսք էին և երկուքն մաքսաւորք՝ Մատթէոս և Յակոբոս<sup>13</sup>, բայց միւսն՝ մատնիչ իսկ:

<sup>1</sup> B յաղաւթս

<sup>2</sup> A, B՝ կատարեալ (B-ում՝ ջնջած)

<sup>3</sup> B պայծառացուցանել գիշերապահութեամբ

<sup>4</sup> A ընդրեց

<sup>5</sup> A նախադասութիւնը հետևառաջութեամբ է, սրբագրված է գրչի ձեռքով B չիք իբրև այգ... անուանեաց

<sup>6</sup> B Յակովբոս Ալփեան՝ գրված է Յակոբայ Զերեթեայ-ից հետո

<sup>7</sup> B Յակովբոս

<sup>8</sup> B և ոչ

<sup>9</sup> B Սկարիովտացին

<sup>10</sup> B Սկարիովտացի

<sup>11</sup> A այս նախադասութեան վերելում ավելացված է այլ մեկնող. «Զսոսա զԺԲ (12)-եսին առաքեաց Յիսուս» B զնա

<sup>12</sup> B Եւ իբրև այգ եղև, կոչեաց զաշակերտսն և ընդրեաց ի նոցանէ երկոտասանս (Ձ 13): Զնոսա զորս

<sup>13</sup> B Յակովբոս

**Զորս<sup>1</sup> առաքեալս անուանեաց** (Ձ 13):

**ԵՓ** *Զի՞նչ առաքեաց<sup>2</sup> զնոսա: Զի որպէս ինքն քարոզեաց առանց վարձու, այնպէս և նորա: Իբրև զայն, զի ասէ. «Զրի առէք և ձրի տուք» (Մատթ. Ժ 8): Դարձեալ. զի քարոզեսցեն զճշմարտութիւնն և արասցեն նշանս, և չարչարեսցեն իբրև զնա, և յինքեանս նկարեսցեն զՔրիստոս իբրև զպատկեր:*

**Ամբարձել զաչս իւր յաշակերտս իւր** (Ձ 20):

*Ո՛չ միայն ընդ աշակերտս խաւսի, այլ նոքաւք ընդ ամենեսին:*

**85բ** *Երանի աղքատաց<sup>3</sup>, // զի նոցա է արքայութիւնն երկնից* (Ձ 20):

**ՈԿ** *Զխոնարհս և զբեկեալս սրտիւք ասէ: Բազումք խոնարհին և<sup>4</sup> ո՛չ կամաւ, այլ [ի] բռնա[զ]բաւսիկ ինչ իրաց: Աստ աղքատ զայս<sup>5</sup> ասէ, որ յԱստուծոյ հրամանացն երկնչին: Ըստ այնմ, թէ՛ «Յո՞հանգեաց<sup>6</sup>, թէ՛<sup>7</sup> ո՛չ ի հեզս և ի խոնարհս և որ դողան ի բանից իմոց» (Ես. 42 2): Զոր գովէ մարգարէն, թէ՛ «Պատարազ Աստուծոյ՝ հոգի խոնարհն է» (Սաղմ. Ծ 19): Եւ անձամբ խոնարհեալ ընդունելի<sup>8</sup> եղիցուք որպէս զողջակէզս խոյոց<sup>9</sup> և զուարակաց, քանզի յամբարտաւանութենէ<sup>10</sup> մտին յաճախութիւնք չարեաց, որ զաշխարհս ապականեցին: Վասն այնորիկ և ըստ խստին զգեղն կազմեաց, և իբրև զհիմն անշարժ, և հաստատուն զնէ զայս աւրէնս ի ներքոյ, և<sup>11</sup> զամենայն շինուածս առաքինութեան ի վերունի: Իսկ եթէ սա<sup>12</sup> ի միջոյ բառնայ, եթէ<sup>13</sup> մինչև յերկինս բարձրացեալ է, քակտեցի, թէ պահք իցեն կամ աղաւթք<sup>14</sup>, ամենայն եղծանի:*

**Ստ.** *Աղքատ և տառապել հոգով նա է, որ ի բարձրութենէ զինքն խոնարհեցուցանէ, որպէս Քրիստոս, որ զանձն խոնարհեցոյց՝ զկերպարանս ծառայի առնլով հակառակ ապստամբ վիշապին:*

<sup>1</sup> B գորս և

<sup>2</sup> B առաքեսցէ

<sup>3</sup> B աղքատաց հոգւով

<sup>4</sup> B այլ

<sup>5</sup> B զայն

<sup>6</sup> B սրբ.՝ հանգեայց

<sup>7</sup> B եթէ

<sup>8</sup> A ընդունուելի

<sup>9</sup> A խոյուց

<sup>10</sup> A յամպարտաւանութենէ

<sup>11</sup> B որ

<sup>12</sup> B զսա

<sup>13</sup> B և

<sup>14</sup> B աղաւթք կամ ողորմութիւն կամ զգաստութիւն

Այլ Քրիստոս զաղքատութիւն[ն] կամաւորութեամբ ասաց: Եւ զի մեծագոյն է աղքատութիւնն հոգով քան զհեզութիւնն:

Երանի, որ քաղցեալ են այժմ, զի յազեսցին (Ձ 21):

ՈԿ Կամ զամենայն առաքինութիւնս ասէ կամ զմիոյ մասնէ, որ  
86ա // ընդդէմ ագահութեանն է, որ ամենայն ցանկութեամբ կատարէ  
զնա: Որպէս Տէրն ասաց. «Ո՛չ քաղց հացի և ո՛չ ծարաւ ջրոյ, այլ  
սով ի՛ լսելոյ զպատգամս Տեառն»: Յուցանէ, թէ որ արդարու-  
թեան ցանկանայ, նա է, որ զամենայն զգուշութեամբ ունի:

ՍՏ Ո՛չ մարմնական կերակրոց և ըմպելեաց ասաց Քրիստոս, այլ  
որ ցանկան<sup>2</sup> արդարութեանն հասանել, և փութան այնու կերակ-  
րով զոգիս իւրեանց լնուլ: Այնպիսիքն իրաւապէս երանին, քան-  
զի թողեալ զմարմնոյ կերակուրս՝ բաղձանայ<sup>3</sup> արդարութեան և  
ճշմարիտ կերակրոյն, որ ի Տեառնէ է:

Երանի, որ լան այժմ, զի ծիծաղեսցեն<sup>4</sup> (Ձ 21):

Զոր Մատթէոս ասէ «սգաւորացն» (Մատթ. Ե 4): Ո՛չ վայրապար  
սգաւորացն երանէ, այլ վասն այնոցիկ, որ վասն մեղացն լան: Եւ  
է այլ լալ, որ վասն աշխարհիս կենացս է: Զոր առաքեալ դառնա-  
պէս թշնամանէ, թէ՛ «Աշխարհիս տրտմութիւնս<sup>5</sup>՝ մահ գործէ» (Բ  
Կորնթ. Է 10), իսկ վասն մեղաց լալն յոյժ աւգուտ է, քանզի ապաշ-  
խարութիւնն է, և փրկութիւն գործէ առանց զղջանալոյ: Ապա և  
զփոխարէն առաքինութեան նորա յարէ ի նոյն, եթէ նոքա «ծիծա-  
ղեսցեն»: Արդ՝ աղէ ասայ ո՞ւր: Աստ և անդ: Իսկ նա այնչափ<sup>6</sup>  
մարդասէր է, զի ո՛չ միայն ի տանջանացն ազատէ, այլև մեղացն  
թողութիւնն շնորհէ և երանելի ևս առնէ: Է և այլ տեսակ լալոյ, որ  
ն՛չ վասն անձանց, այլ և վասն այլոց հրամայէ, որպէս սրբոցն ո-  
86բ գիքն Մովսիսի և Եղիայի, // Դաւթի և Յովհաննու և Պաւղոսի:

Երանի է ձեզ, յորժամ նախատեսցեն<sup>7</sup> զձեզ մարդիկ (Ձ 22):

Եւ մի՛ կարծիցես, թէ ամենայն ուրեք բարիոք է խաղաղու-  
թիւնն: Այլ վասն այնորիկ ասէ «յորժամ հալածեսցեն զձեզ»՝  
կա՛մ վասն առաքինութեան, կա՛մ վասն աստուածապաշտութեան:

<sup>1</sup> Բ չէք սով ի

<sup>2</sup> Բ ցանկայ

<sup>3</sup> Բ բաղձան

<sup>4</sup> Բ ծիծաղեսցին

<sup>5</sup> Բ տրտմութիւն

<sup>6</sup> Բ անչափ

<sup>7</sup> Բ նախատիցեն

*Որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Որ կամին աստուածապաշտութեամբ կ[ե]ալ ի Քրիստոս Յիսուս, ի Հալածանս կայցեն<sup>1</sup>» (Բ Տիմոթ. Գ 12):*

**ՍՏ** *Բազումք յաղագս Քրիստոսի Հալածեցան ի բռնաւորաց յայրս և ի փապարս, սրով<sup>2</sup> և տանջանաւք, յաղագս սիրոյն Քրիստոսի: Նմանողքն երանելոյն Պաւղոսի, զոր ո՛չ մահ և ո՛չ սէր երկրայնոցս կարացին մեկնել ի սիրոյն Քրիստոսի (տե՛ս Զոռմ. Ը 35):*

**Եւ Հանիցեն անունն չար, սուտ գձէնջ վասն Որդոյ<sup>3</sup> մարդոյ (Ձ 22):**

*Եւ կարդան մոլորեցուցիչս կա՛մ յանգործս<sup>4</sup> կա՛մ այլ ինչ կոչեացեն:*

**ԿՐ** *Աստ երկուս կէտ[ս] եղ ի միջի: Մի՛ յորժամ վասն նորա իցեն և միւս՝ յորժամ սուտ և չար բանք իցեն:*

**ՍՏ** *Քանզի բազումք վասն կախարդութեան արտաքսեցան և նախատեցան, և ընկալան զամենայն բանս չարս: Ո՛չ վասն արդարութեան և բարեպաշտութեան ընկալան զայն ամենայն, այլ ճշմարիտ և ո՛չ սուտ: Սոքա ո՛չ երանին, այլ հերքին արժանապէս: Իսկ որ վասն<sup>5</sup> Քրիստոսի նախատին և լսեն զամենայն բան չար յիմար մարդկանէ, նոքա են երանելիք:*

**Յնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս (Ձ 23):**

**87ա** *Արդ՝ դու, թէպէտ<sup>6</sup> իւրաքանչիւր յերանութիւնն<sup>7</sup> ո՛չ լսես զարքայութիւնն երկնից, մի՛ // տրտմիր, զի թէպէտ այլևայլ անուանէ զհատուցումն, այլ զամենեսին յարքայութիւնն տանելոց է:*

**Զի այսպէս Հալածեցին զմարգարէսն, որ յառաջ քան զձեզ էին (հմմտ. Ձ 23):**

**ՅՀ** *Քանզի արքայութեան խոստումնն առյապաջ էր, ընդ մարգարէիցն տայ նոցա մխիթարութիւն: «Մի՛ կարծէք, ասէ, թէ վասն չար կրաւնից էք<sup>8</sup> վարդապետ և վասն այնորիկ Հալածիցիք»: Զի ո՛չ եթէ ի չարութենէ<sup>9</sup> կրաւնից, այլ ի լսողացն չարութենէ զան ի վերայ նեղութիւնք և վիշտք:*

<sup>1</sup> B կայցեն

<sup>2</sup> B որով

<sup>3</sup> B Որդոյ

<sup>4</sup> B ժանդագործս

<sup>5</sup> B յաղագս

<sup>6</sup> B թէպէտև

<sup>7</sup> B յերանութիւնն

<sup>8</sup> B իցէք

<sup>9</sup> B A չարութեան է



ԻԳ Դարձեալ. թեթևացուցանէ զվշտին ծանրութիւնն մարգարէիցն անուամբն: Եւ ահա դարձեալ են աւուրք վշտացն և ուրախութիւնն սահման<sup>1</sup> կայ յաւիտեան<sup>2</sup>:

**Վա՛յ ձեզ մեծատանց** <sup>3</sup> (Ձ 24):

Ստ. **Ձի**<sup>4</sup> յ[ը]նդունայն հանգստեան աշխարհիս խաբեցայք և գյաւիտենական բարկութիւնն գանձեցէք անձանց, զորոյ<sup>5</sup> զաւրինակն ի Ղազարէ<sup>6</sup> և ի մեծատանէն առցես:

**Վա՛յ ձեզ, որ յագեալդ այժմ**<sup>7</sup>, **զի քաղցիջիք**<sup>8</sup> (Ձ 25):

Ձկերակուր հեշտացուցիչ, զի նոքաւք<sup>9</sup> բազումք անկանին յախտս բազմապատիկ<sup>10</sup>: Ձի գհարկաւոր պէտք բնութեանս ունէին և աւելորդ<sup>11</sup> շուայտութեամբ և արբեցութեամբ թշնամի գանձինս Քրիստոսի արարին: Որպէս ասէ առաքեալ. «Լալով ասեմ զթշնամեաց խաչին<sup>12</sup>, որոց կատարածն կորուստ է, որոց Աստուած որովայնն<sup>13</sup> է և փառք՝ ամաւթն» (Փիլիպ. Գ 18-19):

**Վա՛յ ձեզ, որ ծիծաղիքդ**<sup>14</sup> (Ձ 25):

87բ ԻԳ Որոց կորուստն առաջի կայ, // և նոքա անմտութեամբ ծիծաղին: Քանզի Քրիստոսի չարչարանքն վասն նոցա վայրապար եղև: Ձայսաւրինակ պարսաւանաց ամենայն ուրեք յաստուածային գրոց խրատիմք:

**Վա՛յ ձեզ, յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ, զի այնպէս**<sup>15</sup> առնէին սուտ մարգարէիցն<sup>16</sup> (Ձ 26):

Որք ուղիղ վարս ունին ըստ Աստուծոյ, չէ հնար, թէ չարքն բարի ասիցեն, որք յանդիմանեալ<sup>17</sup> լինին: Ձի բարին Քրիստոս նախատինս կրեաց:

<sup>1</sup> Բ անսահման

<sup>2</sup> Բ նոցա յաւիտեան

<sup>3</sup> Բ մեծատանցդ զի ընկալաք զմխիթարութիւն ձեր

<sup>4</sup> Բ վասնզի

<sup>5</sup> Բ զորոց

<sup>6</sup> Ը Ղազարէ

<sup>7</sup> Բ էք այժմ

<sup>8</sup> Բ քաղցիցիք

<sup>9</sup> Բ սրբ.՝ Ձի կերակրօք հեշտացուցչաւք *փիս* Ձկերակուր... նոքաւք

<sup>10</sup> Բ բազմապատիկս

<sup>11</sup> Բ *չիք* աւելորդ

<sup>12</sup> Բ խաչին Քրիստոսի

<sup>13</sup> Բ որովայն

<sup>14</sup> Բ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք և լացէք

<sup>15</sup> Բ մարդիկք զի այդպէս

<sup>16</sup> Բ մարգարէիցն հարք նոցա

<sup>17</sup> Բ յանդիմանեալս

**Յովհ.** Եւ առաքելոցն ո՛չ ամենեքին բարի ասէին, այլ ոմանք: **Զի** ո՛չ է հնար, որք<sup>1</sup> յառաքինութեան են<sup>2</sup> ըստ Աստուծոյ կամացն, թէ յամենայն մարդկանէ բարի լսիցեն<sup>3</sup>: Իսկ որ ամենեցուն<sup>4</sup> հաճոյանալ խնդրեն՝ կեղծաւորքն և կախարդքն, զի անձանց են ծառայք և ո՛չ Աստուծոյ: **Զի** Աստուծոյ իրաւանցն ո՛չ է փոյթ նոցա, այլ զանձանց խնդրեն և ո՛չ ըստ Յիսուսի<sup>5</sup> Քրիստոսի. «Սիրեցին<sup>6</sup> զփառս մարդկան քան զփառս Աստուծոյ» (Յովհ. ԺԲ 43):

**Սիրեցէք զթշնամիս ձեր** (Ձ 27):

**ՍՏ** **Զայլահաւատսն ասէ, զի ուղղեսցես զնոսա և մի՛ անփոյթ արասցես, յորժամ ձեռնահաս իցես: Դարձեալ. թշնամի է մարմնաւորս հոգեւորին, որպէս առաքեալ ասէ. «Մարմին պատերազմի ընդ հոգւոյն, և հոգի՝ ընդ մարմնոյ» (հմմտ. Գաղատ. Ե 17): Քանզի մարմին<sup>7</sup> հոգւոյն գործակից է, հարկաւոր է ածել յուղղութիւն հոգւոր: **Զի** յորժամ հինգ զգայութիւնք մարմնոյս միաւորի ընդ հոգւոյն, յայնժամ լնու մարգարէութիւնն. «Տասնադեալ սաղմոս ասացից քեզ» (Սաղմ. ԾԽԳ 9): // Բայց վասն անբաւ բարեպաշտութեանն<sup>8</sup> ասէ զերեւելի թշնամիս սիրել. «Թէ քաղցեալ իցէ թշնամին, հաց տուր նմա, և թէ ծարաւի՝ ջուր» (Յոնն. ԺԲ 20):**

**Բարի արարէք ատելեաց ձերոց** (Ձ 27):

**ՅՀ** **Դու ի քո ծառայակցէն նախատիս և արհամարհիս, և Աստուած՝ յիւրում ծառայէն, որում երախտիս բազում առնէ:**

**Աւրհնեցէք զանիծիչս ձեր** (Ձ 28):

Դու բանս ևեթ ծախես<sup>9</sup>, իսկ Աստուած՝ արդիւնս մեծամեծս. զարեգակն ծագէ և զաւղս ցաւղէ:

**ԻՊ** **Արդ՝ ավրհնութեամբ վճարել պարտ է, յորոց նեղութեամբ չարչարանս կրեցաք:**

**Որ հարկանէ զծնաւտ քո, մատո՛ նմա և զմիւստ<sup>10</sup>** (Ձ 29):

<sup>1</sup> Բ որ

<sup>2</sup> Բ է

<sup>3</sup> Բ լսացէ

<sup>4</sup> Բ յամենեցուն

<sup>5</sup> Բ զՅիսուսի

<sup>6</sup> Բ սրբ.՝ զի սիրեցին

<sup>7</sup> Բ մարմինս

<sup>8</sup> Բ բարեբարութեանն

<sup>9</sup> Բ ծախեայ

<sup>10</sup> Բ զմիւսն

US Վասն այսորիկ<sup>1</sup> աւգտի ասէ: Եւ<sup>2</sup> զի ածիցէ զթշնամիսն<sup>3</sup> ի զգաստութիւն, յորժամ ընդ այն նայիցի, եթէ մատոյց զմիւսն: Թէպէտև քան զգազանս վայրենի<sup>4</sup> իցէ, ո՛չ երբեք յանդգնեսցի կրկին հարկանել:

Որ հանէ զբաճկոնս, մի՛ արգելուլ և զշապիկս<sup>5</sup> (Ձ 29):

Տեսանե՞ս զզգաստութեանն առաւելութիւն: Յետ տալոյ զպարեգաւտն, թէև զբաճկոնն մերկանալ հասանիցէ, սակայն մի՛ տայցես<sup>6</sup> պատճառս թշնամոյն:

Որ խնդրէ<sup>7</sup> տուր (Ձ 30):

իգ. Միրով և առատ հարկաւորութեամբ հատուցանել<sup>8</sup>:

Որ հանէ ի քէն<sup>9</sup> (Ձ 30):

Որ բռնանայ հանել, մի՛ արգելուլ հակառակել:

Որպէս<sup>10</sup> կամիք, թէ արասցեն ձեզ մարդիկ<sup>11</sup> (Ձ 31):

Որ չափով<sup>12</sup> կամաց յուժարիս զայլս առ քեզ բարեգործել, նո՛վին կամաւք հոգով դու նոցա հատուցես:

Թէ<sup>13</sup> սիրէք զսիրելիս<sup>14</sup> ձեր, ո՞ր<sup>15</sup> շնորհ է ձեր (Ձ 32):

88բ // Մի՛ ոք վստահասցի ունել զմեղաւորացն աւրինակն, զոր նոքա հանապազ առնեն բարիս բարեացն և սէր սիրոյ փոխորէն:

Տուք փոխ, ուստի ո՛չ ակն ունիք առնուլ<sup>16</sup> (Ձ 35):

<sup>1</sup> B նոցա

<sup>2</sup> B չէք և

<sup>3</sup> B զթշնամին

<sup>4</sup> B վայրի

<sup>5</sup> B Որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ և զշապիկքս:

<sup>6</sup> B տայցես

<sup>7</sup> B ամենայն որ խնդրէ ոք ի քէն

<sup>8</sup> B հատուցանես

<sup>9</sup> B Եւ զոր ինչ հանէ ոք ի քէն մի՛ պահանջեր

<sup>10</sup> B և որպէս

<sup>11</sup> B մարդիկք, այնպէս և արասջիք և դուք նոցա

<sup>12</sup> B բառի վրա սրբ. հոգ՝ չափ հոգով

<sup>13</sup> B և եթէ

<sup>14</sup> B դուք զսիրելիս

<sup>15</sup> B զի՞նչ

<sup>16</sup> B ստ. Եւ եթէ տայք փոխ այնոցիկ, յորոց ակն ունիցիք առնուլ, ո՞ր շնորհ է ձեր: Քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զկշիռն: Բայց սիրեցէք զթշնամիս ձեր և բարի արարէք ատելեաց ձերոց: Եւ տուք փոխ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ: Եւ եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք Բարձրելոյ, զի նա քաղցր է ի վերայ չարաց և ապաշնորհաց: Եղերուք զթածք որպէս և Հայրն ձեր զթած է (Ձ 34-36)

US Իսկ որ ամենայն կարաւտելոց շնորհէ առատահաւասար<sup>1</sup>, սիրեաց և ետ տնանկաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան<sup>2</sup>: Երանելիք են, զի նմանողք եղեն Աստուծոյ առատ բնութեան[ն], որ առ չարս և ապերախտս, ո՛չ արար անտես ի պարգևացն իւր:

Մի՛ դատիք, զի մի՛ դատեսջիք<sup>3</sup> (Ձ 37):

Ստ. Որ ոք ընդ պատժաւք իցէ, մի՛ այլոց<sup>4</sup> դառն դատիչ լիցի, զի մի՛ զԱստուծոյ իրաւացի<sup>5</sup> ատեանն անձին ամբաստան լիցի<sup>6</sup>: Այլ այն, որ կարգեցաւ աւրէնք հոգոցն<sup>7</sup>, քննեսցէ և ուղղեսցէ սիրով, և մի՛ զաւրութեամբ<sup>8</sup> վնասեսցէ: Իսկ վայրապար ձաղելն կարի անպատշաճ է և չարութիւն հոգոց<sup>9</sup> յայտնիչ:

Ոչ կարէ<sup>10</sup> կոյր կուրի առաջնորդել<sup>11</sup> (Ձ 39):

Աւրինակաւ եցոյց, եթէ իմաստնոյն<sup>12</sup> պարտ է լինել վերակացու: Որ հանճարեղն է զառաջնորդութիւն կալցի, ապա եթէ անմիտն<sup>13</sup> զաւրանայ տիրել անձինն և բազմաց զահալլէժութիւն<sup>14</sup> առնէ:

Ո՛չ է աշակերտ առաւել<sup>15</sup> քան զվարդապետ իւր<sup>16</sup> (Ձ 40):

US Աշակերտն մինչդեռ ևս<sup>17</sup> յաշակերտութեան իցէ, անհնար է լաւագոյն լինել քան զվարդապետն իւր, և ելանել ի պատիւ վարդապետին: Բայց թէ դուն ուրեք լիցի: Զայս յինքն<sup>18</sup> ասաց և յառաքեալսն<sup>19</sup>՝ մխիթարելով զնոսա<sup>20</sup> վասն պանդխտութեան և

<sup>1</sup> B առատ և հաւասար

<sup>2</sup> B ամենայն յաւիտեան

<sup>3</sup> B Մի՛ դատիք և ոչ դատիցիք: Մի՛ պատժէք և ո՛չ պատժիցիք: Արձակիցիք, տուք և տացի ձեզ. չափ բարւոք թաթաղուն, շարժուն տացեն ի գոգս ձեր, նովին չափով, որով չափէք, չափեսցի ձեզ (Ձ 37-38)

<sup>4</sup> B այլոյ

<sup>5</sup> A իրավացի B զիրաւացի

<sup>6</sup> B սրբ. առնիցէ

<sup>7</sup> B աւրինաւք հոգւոյն

<sup>8</sup> B գրբախաւսութեամբ

<sup>9</sup> B չարութեան հոգւոյ

<sup>10</sup> B Ասաց և առակ մի առ նոսա. Միթէ կարիցէ՞

<sup>11</sup> B առաջնորդել, ոչ ապաքէն երկոքինն ի խորխորատ անկանիցին

<sup>12</sup> B իմաստնոցն

<sup>13</sup> B անմիտն է և

<sup>14</sup> B զահալլէժութիւն

<sup>15</sup> B լաւ

<sup>16</sup> B իւր, ամենայն կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր

<sup>17</sup> B չիք ևս

<sup>18</sup> B ինքն

<sup>19</sup> B զառաքեալսն

<sup>20</sup> B չիք զնոսա

89ա *փախստեան. «Մի՛ տրտմիք, զի ո՛չ էք դուք առ(//)աւել քան զՏէրս և զվարդապետս, զի<sup>1</sup> որ զնոյն կրեմ վասն մարդկան փրկութեան»:*

**Զի՞ տեսանես զչիղ<sup>2</sup> յական եղբաւր քո, և ի քոյ ականդ<sup>3</sup> զգերանդ ո՛չ տեսանես<sup>4</sup> (Ձ 41):**

*Զթեթեազոյն յանցանս եղբաւրն ի մէջ ածել և<sup>5</sup> նախատես, և ի քոյ ոգոջդ զմեծ մեղս անտե՞ս առնես:*

**Կեղծաւոր, Հան՛ն զգերանդ քո<sup>6</sup> (Ձ 42):**

ՈԿ *Արդ՝ պարտ է քեզ անձամբ զանձնդ դատապարտել և ապա՛ զեղբայրն վասն փոքր յանցանացն: Եւ առաքեալ ասէ. «Եթէ զանձինս քննեաք<sup>7</sup>, ապա ո՛չ դատապարտեաք<sup>8</sup> զայլս» (Ա Կորնթ. ԺԱ 31):*

ԻԳ *Ո՛չ կեղծաւորեալ բարին միշտ ձեռնայ:*

**Զի ո՛չ է ծառ բարի, որ պտուղ չար առնէ<sup>9</sup>, և ո՛չ<sup>10</sup> ծառ չար, որ պտուղ բարի առնէ<sup>11</sup> (Ձ 43):**

*Իսկ եթէ ասիցէ ոք զիա՞րդ Մովսէս բարի ի վերայ ջրոյն<sup>12</sup> հակառակութեան թերահաւատեաց (տես՛ս Ելք ԺԴ 13-31) և Դաւիթ զՈւրիայ սպան և զկինն յափշտակեաց (տես՛ս Բ Թագ. ԺԱ 14-27) և Պետրոս ուրացաւ (տես՛ս Յովհ. ԺԸ 25-27), ասասցուք, թէ մինչդեռ ի մեղսն էին, ո՛չ ունէին զաւրութիւն բարի պտղաբերութեան, այլ ի չարէ<sup>13</sup> հրապուրեալ՝ կամակոր մտացն յարձակին<sup>14</sup> և բերեն պտուղ չար:*

**Զի իւրաքանչիւր ծառ<sup>15</sup> ի պտղոյ իւրմէ ճանաչի (Ձ 44):**

<sup>1</sup> B *չէք* զի

<sup>2</sup> B զչեւղ

<sup>3</sup> B քո յական

<sup>4</sup> B նշմարես: Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. Եղբա՛յր, թող Հանից զչեւղդ յականէ քու՞մէ: Եւ դու ի քում ականդ զգերանդ ոչ տեսանես (Ձ 41-42)

<sup>5</sup> B ածեալ *փխ* ածել և

<sup>6</sup> B Կեղծաւոր, Հան՛ն նախ զգերանդ յականէ քու՞մէ և ապա հայեսջիր Հանել զչեւղ յականէ եղբաւր քո

<sup>7</sup> B քննեաք

<sup>8</sup> B դատապարտեաք

<sup>9</sup> B *զրփիս* առնէ զպլտուղ չար

<sup>10</sup> B ոչ դարձեալ

<sup>11</sup> B առնէ պտուղ բարի, զի իւրաքանչիւր ծառ ի պլտոյ իւրմէ ճանաչի

<sup>12</sup> B ջուրցն

<sup>13</sup> B չարէ և ի

<sup>14</sup> B արձակին

<sup>15</sup> B ծառն

US Բարի ծառն, որ է<sup>1</sup> հոգի, որ բերէ պտուղ, առաքինութեամբ ճանաչի:

Ծառ<sup>2</sup> չար (Ձ 43):

Հոգի, որ բերէ պտուղ սուտ և չար վարդապետութիւն: Ձի՛ք ի նոսա զգաւնութիւն և ո՛չ քաղցրութիւն: Մինչև<sup>3</sup> զհանդերձս գառնենիս ունին և զբարսն գայլենիս, թէպէտև սակաւ թագուցանեն<sup>4</sup>, այլ է ի նոսա, զոր<sup>5</sup> ո՛չ կարեն ծածկել: // Ուստի դիւրին է զնոսա ճանաչել:

Ձի ո՛չ<sup>6</sup> ի փշոց քաղեն խաղող<sup>7</sup> և ո՛չ ի մորենոյ թուզ<sup>8</sup> (Ձ 44):

Որպէս անհնարին են այսոքիկ, նոյնպէս և յայնպիսի հոգոջ քաղցր և առողջ վարդապետութիւն գտանել: Հրամայէ զգուշանալ ի խաբեբայ և ի չար վարդապետաց և ի սուտ մարգարէից (տե՛ս Մատթ. է 15), զի պատրող բանիւք և խորամանգութեամբ և շոգմոգութեամբ յաչս մարդկան թուին հեզ քան զոչխար և քաղցր քան զթուզ և [զ]խաղող: Իսկ ի սիրտս իւրեանց խորամանգութեամբ կորուսանեն զհոգիս հաւանողաց իւրեանց: «Յափշտակող<sup>9</sup> քան զգայլ և քան զփուշ և զտատասկ» (հմմտ. Մատթ. է 15-16), առաւել դժնդակագոյն խոցոտեն:

Ամենայն, որ լսէ զբանս իմ և առնէ զնոսա, նման է առն, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի<sup>10</sup> (Ձ 47-48):

Ջառաքինութիւն ի վերայ վիմին Քրիստոսի, որ հետք աւձին ո՛չ երևին ըստ առակողին:

Յառնել հեղեղացն ո՛չ շարժեցան, զի<sup>11</sup> ի վերայ վիմի հաստատեալ էր<sup>12</sup> (Ձ 48):

<sup>1</sup> B չիք որ է

<sup>2</sup> B եւ ծառ

<sup>3</sup> B այլ

<sup>4</sup> B սակաւ թագուցանեն

<sup>5</sup> B չիք է ի նոսա զոր

<sup>6</sup> B ոչ եթէ

<sup>7</sup> B թուզ

<sup>8</sup> B կթեն խաղող: Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բխէ զբարիս, և մարդ չար ի չարէն բղխէ զչար, քանզի ի յաւելուածոյ սրտին խաւսի բերան նորա: Ձի՞ կոչէք զիս Տէր Տէր, և զոր ասեմս՝ ո՛չ առնէք (Ձ 44-46) *փխ* թուզ

<sup>9</sup> B յափշտակողք են

<sup>10</sup> B Ամենայն, որ գայ առ իս և լսէ զբանս իմ և առնէ զնոսա, ցուցից ձեզ ո՞ւմ նման է: Նման է առն առն, որ շինեաց տուն, որ փորեաց և խորեաց և եդ հիմն վիմի ի յառնել հեղեղաց բախեաց զետ գտունն:

<sup>11</sup> B և ոչ կարաց շարժել զնա, զի հիմն

<sup>12</sup> B *զրփխ* հաստատեալ էր ի վերայ վիմի

ՅՀ Հեղեղ՝ բանսարկուն չար՝ հրաւիրող ի գործս դառնութեան, և գետք ամենայն՝ հոգիք չարութեան: Իսկ առաքինիքն՝ Աբրահամ, Յոբ, Մովսէս, մարգարէքն և յետոյ առաքեալքն և նմանողք նոցին, որ ի բազում փորձանացն պահեցան անշարժ: Քանզի, որ զանդամանդ հարկանէ, ինքն հարկանի, որ ընդդէմ խթանի աքացէ՝ ինքն խոցի: Նոյնպէս որ զառաքինին նենգէ՝ ինքն պատժի:

90ա Իսկ որ լսէ զբանս իմ // և ո՛չ առնէ, նման է<sup>1</sup>, որ շինէ զտուն իւր<sup>2</sup> ի վերայ հողոյ անհիմն<sup>3</sup> (Ձ 49):

Իգ. Զի վաստակեն և ո՛չ վայելեն: Յափշտակողքն, շնացողքն<sup>4</sup> բազում տառապանս կրեն և աւգտին<sup>5</sup> անդի<sup>6</sup>, որպէս Աքայաբ էր և խաչահանու[ն]քն և առ սրբաւքն<sup>7</sup> հալածիչք նոցա և ամենայն մարմնասէրքն, որք<sup>8</sup> զերկրաւորս և եթ խորհին:

Զոր բախեաց գետն, և եղև կործանումն մեծ յոյժ<sup>9</sup> (Ձ 49):

Թուի ինձ, թէ զհանդերձեալ դատաստանացն հատուցումն<sup>10</sup> ասէ:

<sup>1</sup> B է առն

<sup>2</sup> B շինիցի տուն *փխ* շինէ զտուն իւր

<sup>3</sup> B առանց հիման

<sup>4</sup> B սրբ.՝ և շնացողքն

<sup>5</sup> B սրբ.՝ ոչ աւգտին

<sup>6</sup> B անտի

<sup>7</sup> B սրբովքն

<sup>8</sup> B և որք

<sup>9</sup> B Զոր բախեաց գետն, և վաղվաղակի անկաւ և եղև կործանումն տանն այնորիկ մեծ:

<sup>10</sup> B զհատուցումն

## Գլուխ Է

Իբրև<sup>1</sup> կատարեաց զամենայն բանս իւր ի լսելիս ժողովըրդեանն (Է 1):

Ոկ. Թէպէտ տաղտկալ<sup>2</sup> պարտ էր ընդ ծանրագոյն հրամանսն, նա աւանիկ այնպէս<sup>3</sup> իմն էր զաւրութիւն վարդապետին, մինչ ախորժելի զբանս առնել: Եւ զբազմաց միտս գրաւել և ի մեծամեծ զարմանս ածել, զի ո՛չ կամէին բնաւ, եթէ լռեսցէ ի խաւսելոյ: Եւ դու միտ դիր իմաստութեան Տեառն, զի պէսպէս<sup>4</sup> շահս յաճախէր մերձաւորացն: Զի մինչչև ելեալ էին ի լեառնն՝ զբազումս բժշկեաց, զի յառաջագոյն ճանապարհ հորդեսցէ բանիցն: Եւ յետ այնչափ վարդապետութեան դարձեալ ի նշանս դայ, զի հաստատեսցէ արդեամբք զբանն:

Եւ եմուտ ի Կափառնաւում: Հարիւրապետի ուրում<sup>5</sup> ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախճանել<sup>6</sup> (Է 1-2):

Ոկ 90բ Բայց ո՛չ վախճանեցաւ յաղագս Տեառն: Մերձ էր ի մեռանել, վասնզի մարդ էր, այլ ո՛չ մեռաւ յաղագս աղաչաւդին, // վասնզի աստուածասէր էր, բնութիւնն զպարտսն պահանջէր, այլ բնութեան Տէրն զստացուածն ստացողին ի ձեռն հաւատոցն պարգևէր: Մահ զբնութիւնն հարկէր՝ առ վախճանն բռնադատելով: Այլ յինքն ձգէր<sup>7</sup> հաւատն՝ ընդ մահուն մարտնչելով և զՆոր աւրէնսն լուծանելով: Մի՛ թերահաւատէր, թէ հաւատքն այնքան զաւրացան մինչև զմահուն կապանս խզել և ի վհից սանդարամետաց զոգին ի վեր կորզել: Հաւատք զդժոխոց դրունս բանայ և գերկինս փակէ: Զբնութեան զաւրէնսն փոփոխէ և զզաւրութիւն հրոյ<sup>8</sup> շիջուցանէ: Զբոցն ցաւդ գործէ, զմահու աչս կուրացուցանէ: Ի գրոց հաւանեցուցանեմ: Երանելին Պետրոս բանիւ զդրունս դժոխոցն եբաց և զՏաբիթայն ի խորոցն ի վեր ած<sup>9</sup>, քանզի ասաց. «Տաբիթայ արի կաց» (Գործք Թ 40), և վաղվաղակի դրունք դժոխոց բացան և նիգք տարտարոսին ի բաց անկան:

<sup>1</sup> B և իբրև

<sup>2</sup> B տաղտկանալ

<sup>3</sup> B այնպիսի

<sup>4</sup> B թէ ո՞րպիսի *փի* զի պէսպէս

<sup>5</sup> B ուրումն

<sup>6</sup> B վախճանել, որ էր նմա պատուական

<sup>7</sup> A ցգէր

<sup>8</sup> B *գրփի* զհրոյ զաւրութիւնս

<sup>9</sup> B էած



Մեռեալն քան զկենդանի արագագոյն լուաւ: Եղիայ մարգարէն հաւատովք վստահացաւ ասել<sup>1</sup>. «Ո՛չ եղիցի անձրև ի վերայ երկրի, բայց եթէ բանիւ բերանոյ իմոյ» (հմտ. Գ Թագ. ԺԷ 1): Եւ երկինք պղնձացաւ<sup>2</sup>, և փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս<sup>3</sup>: Երկիր եղև իբրև զերկաթ՝ զբնութեան սովորութեան պտուղ ո՛չ տալով: Գիտացեր, ո՞րքան զաւրաւոր է հաւատ: Մարդ յերկրի<sup>4</sup> հրամայէր և Աստուած յերկինս<sup>5</sup> հաստատէր զիրսն: Մահկանա-

**91ա** ցու բեր(11)ան[ն] բարբառէր, և Աստուծոյ կամքն հաւանէին՝ գործովքն հաստատել զԲանն: Ապա ուրեմն երկնից փական են մահկանացու բերան[ն]՝ բարեպաշտ հաւատով զարդարել<sup>6</sup>: Եւ ի հրեղէն կառս համարձակեցաւ ելանել: Իբրև զթռչուն յերկնային կեանսն վերացաւ, և մինչև ցայժմ ո՛չ ճաշակեաց զմահ: Ո՛չ բնութեամբ աւրինաւք, այլ՝ շնորհաւք Միածնին և զաւրութեամբ հաւատոցն: Եւ Ենոք<sup>7</sup> անխոնարհելի պահեցաւ կենաց ի կեանս, մարմնով ամբարձեալ, մահու և ծերութեան հաւատով յաղթեաց:

**Որ էր պատուական ծառայ (Է 2):**

Թէպէտև աւելաստացութիւն կենցաղոյս ծառայ արար, այլ բարեմիտ տէրն զազգակցութիւն բնութեանն<sup>8</sup> ո՛չ ուրացաւ: Ո՛չ արհամարեաց իբրև զծառայ, այլ իբրև զհամագգիս<sup>9</sup> իւր սիրէր: Մարդասիրութիւն զծառայութեան լուծն թեթեացոյց: Ուսարուք ծառայակից<sup>10</sup> տեարք, մի՛ իբրև զաւտար ի բնութենէս զծառայութիւն համարիք և մի՛ իբրև ի՛<sup>11</sup> թշնամիս յազգակիցն ո՛չ խնայէք: Հաւանեցարուք Պաւղոսի, որ ասէ. «Տեա՛րք, զհաւասարութիւն ծառայից<sup>12</sup> տուք, յապաղելով զսպառնալիս. գիտելով, եթէ<sup>13</sup> ձեր և նոցա Տէր գոյ յերկինս» (Կողոս. Գ 1):

Ներեաց Աստուած ծառայ լինել, զի դու ուսանիցիս Աստուծոյ ծառայել: Բարեմիտ պահանջես զստրո՞ւկն, բարեմիտ դու առ Տէրն քո լեր: Տանջես զմեղուցեալն և դու մի՛ մեղիցես, զի մի՛

<sup>1</sup> B ասելով

<sup>2</sup> B պղնձացան

<sup>3</sup> B ամիսս

<sup>4</sup> A, B ի յերկրի

<sup>5</sup> A, B ի յերկինս

<sup>6</sup> B զարդարեալ

<sup>7</sup> B Ենովք

<sup>8</sup> B բնութեանս

<sup>9</sup> B զհոմագգիս

<sup>10</sup> B ծառայից

<sup>11</sup> B չիք ի

<sup>12</sup> B զբիւս զծառայից հաւասարութիւն

<sup>13</sup> B թէ

91բ տանջեսցիս յԱստուծոյ: // Ո՛չ տաս թողութիւն համազգոյն<sup>1</sup>, և դու մի՛ խնդրէր թողութիւն ի Տեառնէ: Ուսարուք և դուք մարդասիրաբար ծառայել Աստուծոյ: Որպէս դուք<sup>2</sup> յԱստուծոյ հայցէք<sup>3</sup> մարդասիրութիւն, մարդասիրութեան մասն տո՛ւք ազգակցին:

**Իբրև լուաւ<sup>4</sup> զՅիսուսէ** (Է 3):

Զի՞նչ լուաւ. եթէ բանիւ բժշկէ, բանիւ սքանչելագործէ, բանիւ զմեռեալս կենդանացուցանէ և զղեւս հանէ: Բանիւ զամենայն վճարէ, զի կենդանի է Բանն Աստուծոյ, զաւրաւոր և հատուքան զամենայն սուր երկսարի: Ո՛չ բանջար դեղս մերձեցուցանէ, այլ բան ի նմանէ առաքի և գործն կատարի: Տե՛ս, որքա՞ն էր<sup>5</sup> ի մէջ հարիւրապետին և հրէիցն զանազանութիւն: Քանզի ի սոսկ լսելոյն հաւատաց և աղաչէր իբրև զԱստուած: Իսկ նոքա առաջի աչաց տեսանէին զսքանչագործն և ուրանային: Թէպէտ աչք քան զլսելիս հզաւրագոյն է, այլ զչարութեան ախտ նախանձուն վարդապետ ունէին: Յաղագս այնորիկ կոյր դատաստանաւն զԱստուած ուրանային:

**Առաքեաց զծերսն ի հրէից<sup>6</sup> և աղաչեաց զնա** (Է 3):

Կամեցաւ<sup>7</sup> հարիւրապետն երթալ, և արգելին զնա հրէայքն բարեմարդիկ՝ ասելով. «Մեք երթամք և ածեմք»:

**Զի եկեսցէ ապրեցուցէ զծառայ նորա** (Է 3):

Ո՛չ յաղագս արհամարհանաց ինչ հրաժարէր երթալ, այլ ինքն դանդաղէր յաղագս ինքեան պաղատել վասն մեծ պատուոյն Քրիստոսի: Գիտէր զինքն մարդ մահկանացու և զՅիսուս Աստուած յԱստուծոյ, Միածին, որ յանձնէ<sup>8</sup> Հաւրէ, յերկեղածութենէ զերիցունսն<sup>9</sup> առաքէր: Զառաքելական հր(//)ամանսն նախքան զառաքեալսն կատարէր: Զարչարեսցի ոք՝ աղաւթեսցէ, բարեմտեսցի, սաղմոս ասասցէ: Հիւանդասցի ոք՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցոյն<sup>10</sup> և աղաւթեսցեն ի վերայ նորա: Դու ընդ ախտակցութիւն առն սքանչացիր, զի զհիւանդ ծառայն ո՛չ արհամարհեաց,

<sup>1</sup> B հոմազգոյն

<sup>2</sup> B դու

<sup>3</sup> B հայես

<sup>4</sup> A լվաւ

<sup>5</sup> B է

<sup>6</sup> B հրէիցն

<sup>7</sup> A ձախ լս. ունի՝ «Ա.»

<sup>8</sup> A, B ի յանձնէ

<sup>9</sup> B յերկիւղածութենէ զերիցունսն

<sup>10</sup> B եկեղեցւոյն

և որպէս վասն անձին ցաւոց ջանայ: Տեսանե՛ս, որքա՞ն առնէ փոյթ. բարեխաւս առաքէ վասն բժշկութեանն, զի գիտէր զԱստուած Տէր ինքեան և անձին նորա:

**Սիրէ՛՛ զազգս մեր** (t 5):

Ո՛չ գիտէին գովել զայրն: Պարտ էր ասել ինքն կամեցաւ գալ և աղաչել: Եւ մեք իբրև տեսաք զվիշտս նորա, արգելաք զնա: Եւ այնպէս մարթ էր ցուցանել զնորա հաւատոցն առաքինութիւն, այլ ո՛չ կամէին վասն նախանձու յայտնել զհաւատս առն ճշմարիտ հաւատոցն, մտաց բարեաց նշանակ և աստուածպաշտութեան սէրն<sup>2</sup>, որ առ Աստուած և առ մարդիկ՝ հարազատ խնամք: Վասնզի<sup>3</sup> լրումն աւրինացն սէր է, զոր ունէր հարիւրապետն:

**Եւ զժողովրդանոցս նա շինեաց մեզ** (t 5):

Որ առ Աստուած զբարեմտութիւն նշանակէ: Քանզի, որ զԱստուծոյ տունն կազմէ իբրև զերեւելի իմն արձան, և վասն Աստուծոյ սիրոյն զտաճարն զայն շինէ: Տե՛ս, զիա՞րդ բարեգործք ի կարեաց ժամու յիշատակին բազում համարձակութեամբ: Բարեգործութիւն<sup>4</sup> ընձեռեն, վասնզի ամենայն ուրեք զեղեցիկ գործք բաւական են թախանձել: Եւ նոքա այսպէս աղաչէին: Իսկ Յիսուս ընդունէր զպաղատանսն՝ ո՛չ պատկառելով յիրիցանցն, այլ զհարիւրապետին զհաւատսն ընդունելով:

92բ // **Եւ Յիսուս գնաց ընդ նոսա** (t 6):

Թերևս հեղգագոյնս<sup>5</sup> գնայր: Հանդարտութեամբ առնէր զգնացսն՝ ո՛չ յամելով ի բարեգործութիւն, այլ ժամանակ տալով, զի զհարիւրապետին զծածկեալ սէրն յայտնեսցէ՝ հրապարակատես<sup>6</sup> առնելով զանհաւասարելի հաւատն ի յանդիմանութիւն անհաւատիցն, զի զպայծառ և զմաքուր և զյստակ բան նորա տարածեսցէ:

**Եւ իբրև ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս և ասէ. Տէ՛ր, մի՛ ինչ աշխատ լինիր** (t 6):

Յառաջագոյն յուժարութեամբ առաքէր զիրիցունսն<sup>7</sup> զայն առնելով, և ինքն կայր, մնայր և ներէր: Ի ներքս ի տանն զմտաւ

<sup>1</sup> Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ և ասէին, թէ արժանի է, որում զշնորհս զայս առնես, զի սիրէ

<sup>2</sup> Եւ սէրն է

<sup>3</sup> Ա աջ լս. ունի՝ «Բ»

<sup>4</sup> Եւ բարեխաւսութեամբ

<sup>5</sup> Եւ հեղգագոյնս

<sup>6</sup> Եւ հրատարակապէս

<sup>7</sup> Եւ զերիցունսն

ածէր<sup>1</sup> զորչափութիւն զանազան<sup>2</sup> պատուոյն Յիսուսի և զծառայան առաքէր:

**Չեմ<sup>3</sup> բաւական, թէ<sup>4</sup> ընդ հարկաւ իմով մտցես** (Է 6):

Ո՛վ<sup>5</sup> իմաստութիւն, ո՛վ արթուն միտք հարիւրապետին, ո՛չ զանխլացաւ ի նմանէ Աստուած ի մարմնի ծածկեալ: Տեսանէր զտաճարն և իմանայր զբնակիչն, ո՛չ անգիտացաւ զտէրն ի ծառայի կերպի, զթագաւորն՝ զերոյ<sup>6</sup> զիմաւք, զփոքրն՝ անսահմանելի մեծութեամբ: Ընկալաւ միւս ևս յառաջագիմութիւն և զբարձրագոյն հոգւոյն մտածութիւն, որով ասէ:

**Տէ՛ր<sup>7</sup>, ո՛չ եմ բաւական** (Է 6):

Որպիսի ոք էր և Պետրոս: Յորսոյ ձկանցն հիացաւ և ի միտէառ զմեծութիւն զաւրութեանն Քրիստոսի: Աղաչէր զնա և ասէր. «Ի բաց երթ յինչն, զի այր մեղաւոր եմ<sup>8</sup>» (Ե 8): Եւ, որ յազազ Պետրոսի է բանս, թողից այժմ և զղևտացոցն<sup>9</sup> ասացից զբորոտութիւն ախտին երգիւն<sup>10</sup> և այրածք և պաղպաղմունք:

93ա // Դժուարաւ բարժանելի<sup>11</sup> են ախտքս այսոքիկ բազմաց<sup>12</sup>, մանաւանդ ի սկզբան ախտին, որք կամէին քահանայիցն տեղեակ լինել: Ածէին աւրէնքն զքահանայն ի յորման տեղին, և անդ քննէր: Եթէ բորոտութիւն էր, ամենայն որ ի տանն կայր՝ պիղծ երևէր<sup>13</sup>: Յաղագս որոյ բազումք յառաջագոյն ի բաց հանէին զկարասին և ապա կոչէին զքահանայն: Ձայն մտածութիւնն առեալ հարիւրապետին՝ հրաժարէր զմերձենալ նորա:

**Ո՛չ եմ բաւական, թէ<sup>14</sup> ընդ յարկաւ իմով մտանիցես** (Է 6):

Յուով ընդ յարկաւս ընդ այսմիկ գիտեմ զիմ մեղան, հրաժարեմ ի<sup>15</sup> դատաւորի գալստենէ<sup>16</sup>: Նախքան ի բաց մաքրել, գիտեմ<sup>17</sup>

<sup>1</sup> B զմտածէր

<sup>2</sup> A զբոված է ձախ լս.

<sup>3</sup> B զի չեմ

<sup>4</sup> B եթէ

<sup>5</sup> A ձախ լս. ունի՝ «Բ» (պետք է լինի «Գ»)

<sup>6</sup> B գերագոյն

<sup>7</sup> B սրբ. է տողի վերևում

<sup>8</sup> B եմ ես

<sup>9</sup> B զղևտացուցն

<sup>10</sup> B ախտի երգուն

<sup>11</sup> B բաժանելի

<sup>12</sup> B ի բազմաց

<sup>13</sup> B պղծէր և աւերեր

<sup>14</sup> B եթէ

<sup>15</sup> B որպէս

<sup>16</sup> B դատաստանէ

<sup>17</sup> A աջ լս. ունի՝ «Դ»

զքեզ ամենայն քահանայից առաջնորդ և Հաւր քահանայապետ: Եւ վասն այնորիկ ասացի. «Չեմ բաւական, թէ<sup>1</sup> ընդ յարկաւ իմով մտցես»: Երկինք աթոռ են քո, երկիրս<sup>2</sup>՝ պատուանդան ոտից քոց: Ո՞ր տունն տանի զանբովանդակելիդ<sup>3</sup>: Ո՞չ ունիմ յարկ գերկինս, ո՞չ ունիմ թագաւորական ապարանս, եթէ զթագաւորդ երկնից ընկալայց: Զիա՞րդ ընդ ձեզուամբ<sup>4</sup> իմով ընդունիմ, որ ի վերայ ջուրցն էարկ զվերնայարկս իւր: Զիա՞րդ աղքատ<sup>5</sup> աւթեվանքս<sup>6</sup> իմ տաղաւարակից ընկալցի, որ թզաւ գերկինս չափես (հմմտ. Ես. Խ 12), ո՞ր տեղի տանի, ո՞ր գերկինս և գերկիր լնուս: Որպէս ի բարեգործ ի մուտ փափագիմ<sup>7</sup>, իբրև ի դատաւորի գալստենէ զարհուրիմ: Այցելու ես հոգոց, քննիչ ես իրիկամանց<sup>8</sup>, դատաւոր ես մեղաւորաց: Երկեայ յինէն<sup>9</sup>: Լուարո՛ւք այժմ, որ զՔրիստոս 93բ ընդունելոց եմք: // Լուիցուք և նախանձաւորք լիցուք, քանզի մարթի և այժմ ընդունել զնա:

**Ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկս իմ (Է 7):**

Բանիւ միայն ասաց, և գործքն կատարին: Յայտնապէս գիտաց, եթէ բանիւ Տեառն երկինք հաստատեցան և Հոգով<sup>10</sup> բերանոյ նորա ամենայն զաւրութիւնք նոցա: Եւ ամենայն եղեալք բանիւ նորա յարմարեալ լինին, վասնզի աստուածային ծանաւթութեամբն լուսաւորեալ էր այրն: ԶՅիսուս ի մարմնի տեսանելով՝ զնոյն և Որդի Աստուծոյ ճանաչէր: Գիտաց, զոր ինչ յառաջագոյն ասաց Սողոմոն յաղագս Քրիստոսի. «Ո՛չ բանջար և ա՛յլ դեղ բժշկեսց ժողովուրդս<sup>11</sup> քո, այլ բանք քո Տէր, որ զամենայն բժշկէ<sup>12</sup>» (Իմաստ. ԺԶ 12): Գիտեմ, զո՞ր բան խաւսիս և զորքա՞ն ստացեալ ես զաւրութիւն: Զի բանք<sup>13</sup> քո զամենայն՝ արարեալ կատարեաց: Ո՛չ<sup>14</sup> վշտացաւ Հայր ի ծնանելն զքեզ, ո՛չ<sup>15</sup> վտանգիս առնելով, ո՛չ աշխատիս գործելով: Վասնզի բանք քո առ ամե-

1 B եթէ  
 2 B սրբ.՝ և երկիրս  
 3 A զանբաւանդակելիդ  
 4 B ձեզամբ  
 5 B յաղքատ  
 6 A աւթեանք  
 7 B փափաքիմ և  
 8 B երիկամանց  
 9 B ի քէն  
 10 B Հոգւոյ  
 11 B զժողովուրդս  
 12 B բժշկես  
 13 B բան  
 14 A ձախ լս. ունի՝ «ե»  
 15 B Եւ ոչ

նայնն<sup>1</sup> դիւրահնար գտանի: Ո՛չ զաւղ հնչեցուցանէ, այլ զքո կամսդ<sup>2</sup> յայտնէ: Տո՛ւր նշանակ հաւանութեան լսողաց<sup>3</sup>: Տե՛ս զիմաստութիւնն<sup>4</sup>, զերթալն աղաչել յապաղէր<sup>5</sup>: Գիտութիւն նորա վկայէր և ի մտանելոյն հրաժարէր:

**Զի ես այր մի եմ՝ ընդ իշխանութեամբ կարգեալ** (Է 8):

Զի եթէ ես, որ մարդս եմ և ընդ իշխանութեամբ այնչափ ձեռնահաս եմ, որչա՞փ դու, որ Տէրդ ես և Աստուած և չես ընդ իշխանութեամբ: Զի թէ ես, որ հանգիտապատիւս<sup>6</sup> եմ և ընդ իշխանութեամբ եմ, սակայն վասն սակաւ իշխանութեան առաքելութեանս, զոր հրամայեմ, այն լինի: // Զայնպիսի իմաստութիւնն մտածութիւն<sup>7</sup> փոխեաց յայլ<sup>8</sup> մեծագոյնս, զի ի զաւրութիւն յառաջանայր և աղբիւրանայր<sup>9</sup> ի նմանէ իմաստութիւնն: Մանկանայ<sup>10</sup> ի տեսութեանցն յաճմունսն<sup>11</sup>: Գիտեմ, զի քան զամենեցուն իշխանութիւնս գերազանցեալ ես զհրեշտակաց և այլոց<sup>12</sup> անբռնութից, և իբրև զմի ի բազմաց եկիր առ մեզ մերով բնութեամբս, և զամենեցուն ունիս զիշխանութիւն: Ըստ մարգարէին. «Հրամանի քում<sup>13</sup> մնայ տիւ, զի ամենեքին<sup>14</sup> ծառայ քո են» (Սաղմ. ԾԺ 91): Ննջես և ծով ամբոխի յառնես՝ և խաղաղանայ ալիք, սաստես՝ և խաղաղանան հողմք: Զմեռեալս կոչես, և արագագոյն լսեն քեզ քան զկենդանիս:

**Ունիմ ընդ ինև զինուորս կարգեալ** (Է 8)<sup>15</sup>:

Թուի, թէ զերկնից զաւրացն ասէ առաքեայ զմի ի հրեշտակացն: Ասէ. «Եւ բժշկեա՛ զմանուկս<sup>16</sup> իմ» (Է 7): Զի եթէ ախտ և մահ և այլն<sup>17</sup> ամենայն ինչ յայսպէս<sup>18</sup> հնազանդին նմա, որպէ՞ս

<sup>1</sup> B սրբ.՝ ամենայն ինչ

<sup>2</sup> B կամքդ

<sup>3</sup> B լսողաց

<sup>4</sup> B զիմաստութիւն առն

<sup>5</sup> B աղաչէր և զյապաղելն

<sup>6</sup> A հանգիտապատիւս

<sup>7</sup> B մտածութեան

<sup>8</sup> A, B ի յայլ

<sup>9</sup> B աղբերանայր

<sup>10</sup> A մանգանայ

<sup>11</sup> B մեռելութեանցն յաճախմանէ

<sup>12</sup> B զայլոց

<sup>13</sup> B քո

<sup>14</sup> B ամենեքեան

<sup>15</sup> A աջ լս. ունի՝ «Զ»

<sup>16</sup> B զմանուկն

<sup>17</sup> B այլ

<sup>18</sup> B բառի տեղն ազատ է թողնված

իւր զինուորքն, որ կան ի հնազանդութեան նմա զիւրաքանչիւր ումեք: Ջանձնիշխանական յարձակումն նշանակէ<sup>1</sup> ի լաւագոյնսն և ի վատթարագոյնսն: Ջիտփոխումնն յայտնէ, որք ի մարդկանէ զանազանք, և<sup>2</sup> որջացեալ խորհուրդս: Ըստ Պաւղոսի. «Հաճեալ եմ ընդ աւ[րէն]սն<sup>3</sup> Աստուծոյ, ըստ ներքին մարդոյն: Տեսանեմ միւս աւրէնս ընդդէմ զինուորեալ աւրինաց իմոց և գերեալ զիմսն<sup>4</sup> աւրինաւքն մեղաց» (Յռոմ. Է 22-23): Որպէս<sup>5</sup> յիրաւի, ուրեմն, ասէր զինուորս ո՛չ հակառակ ինձ<sup>6</sup>, այլ ՝ ընդ ինև:

**Ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլու՛մ թէ եկ՝ և գայ** (Է 8):

94բ // *Տե՛ս, զիա՞րդ եցոյց, եթէ մահու իշխէ իբրև ծառայի և հրաման տայ իբրև զՏէր: Տեսանե՛ս որչա՞փ էին հաւատք առն, զոր ինչ յետոյ ամենեցունց յայտնի լինելոց էր: Ջայն անդէն առժամայն ասէր, եթէ իշխանութիւն ունի կենաց և մահու<sup>7</sup> իջուցանել ի դժոխս և հանել յերկինս: Բայց ես ո՛չ իշխեմ<sup>8</sup>, այլ իշխեմ խորհրդոցս: Թուի, թէ հարիւրապետն վասն այնորիկ<sup>9</sup> կոչեցեալ էր իբրև իշխան և ինքնակալ<sup>10</sup> խորհրդոցս. զոմանս ի բաց խլեմ, ոմանց ի տեղին կարգել հրամայեմ, արտաքս հանեմ զվատթարսն, ի ներքս կոչեմ զբարիսն, մերժեմ զչարութիւն, մուծանեմ զառաքինութիւն: Որպէս Դաւիթ ասէ. «Խոտորեա՛ ի չարէ և արա՛ զբարի» (Սաղմ. ԼԳ 15): Ջի թէ ո՛չ փոխես<sup>11</sup> զչար խորհուրդս, ո՛չ կարես ի ներքս մուծանել զառաքինութիւն: Քանզի<sup>12</sup> ո՛չ կարէ հարազատ ամուսին ընդ հարձին բնակել:*

**Ծառայի իմու՛մ թէ արա՛ զայս՝ և առնէ** (Է 8):

Ո՛չ զինուորաց միայն ճառէ, այլև զծառայից<sup>13</sup>, որ մեծ հնազանդութեան նշանակ է: Սակայն, որ այնչափ հաւատս ունէր, զանձն անարժան համարէր: Իսկ Քրիստոս ցուցանէ, թէ արժանի է, և ի տունն յուժարեաց երթալ: Եւ զառաւելագոյնսն արար, զի զարմանայր ընդ հաւատս առն: Ջի ասէր, թէ ո՛չ մարմնական

<sup>1</sup> B զարձակումն նշանակէր

<sup>2</sup> B և ազգի ազգի

<sup>3</sup> A բառը վնասված է

<sup>4</sup> B զիս

<sup>5</sup> B ասկա

<sup>6</sup> B ինչ

<sup>7</sup> A կենաց եւ մահու՝ գրված է ձախ լս. գրչի ձեռքով

<sup>8</sup> B նախ՝ իշխեմ, ապա սրբագրած՝ իշխան եմ

<sup>9</sup> B այնորիկ

<sup>10</sup> B ինքնիշխան

<sup>11</sup> B փախուցես

<sup>12</sup> A ձախ լս. ունի՝ «է» B զի

<sup>13</sup> B ծառայից

ախտից ծառայեմ, ո՛չ որովայնի ծառայեմ, ո՛չ հեշտութեան հա-  
լանիմ, ո՛չ մոլորեցուցանէ՝<sup>1</sup> զիս արբեցութիւն՝<sup>2</sup> ո՛չ յաղթիմ յա-  
նաւրէն սիրոյն: Աւրինաւք Աստուծոյ յարդարեմ զխորհուրդս:  
Որպէս քաջ երեսանակակալ՝<sup>3</sup> ո՛չ թողում արտաքոյ՝<sup>4</sup> զանարժան  
95ա խորհուրդս, //այլ բարեպաշտութեամբ վարեմ զ[ը]նթացս:

**Իբրև լուաւ Յիսուս, զարմացաւ** (Է 9):

Յիսուս զարմացաւ վաղվաղակի ընդ հաւատս առն, և յայտնի  
ամենեցուն քարոզէր, և մեծ ևս քան զոր խնդրեաց՝ արար: Եկն  
մարմնաւոր առողջութիւն մանկանն, առ զերկնից արքայութիւնն  
և չոգաւ:

ԵՓ Աստուած զարմացաւ վասն մարդոյն, մինչդեռ ամենայն ժո-  
ղովուրդն մաւտ կայր, յաւրինակ այլոցն, զի նմանող<sup>5</sup> լինիցին:

**Զի ո՛չ յԻսրայէլ այսպիսի հաւատս գտի**<sup>6</sup> (Է 9):

ՈԿ Զի զհրէայսն յամաւթ արասցէ, զի ո՛չ հաւատային ի նա իբր  
աւտար<sup>7</sup>, քանզի հարիւրապետն չէր ի նոցանէ: Եւ մեծ իսկ է առն  
հեթանոսի այնպէս<sup>8</sup> իմաստանալ, որում տերունական Բանն վկա-  
յեաց ծայրագոյն հաւատոց նորա: Քանզի զքաջութիւն հոգոյ նո-  
րա տեսանելով, որ ցաւակից երևեցաւ ծառային, հաւատաց ա-  
նախտի<sup>9</sup> Փրկիչն: Հրէայքն տաղտկային ընդունել զՔրիստոս Աս-  
տուած, և սա ճանաչէր զբարեգործն, զիտաց զզաւրութիւն նորա,  
որով պայծառացան զուարթունք: Գիտաց զԱստուծոյ Բանն,  
զանձնին Հաւր զՄիածին Որդին Յիսուս:

ԵՓ Առ ած զնոսա, զի լինիցին<sup>10</sup> բարեխաւսք նորա, և գտին  
կշտամբեալք, զի ո՛չ էր ի նոսա հաւատք նորա:

ԿՐ Որոց պարտ էր ըստ աւրինաց[ն] և մարգարէիցն, որք վասն  
իմ գուշակեցին փութալ ձեզ ի հաւատս. «Ո՛չ գտի այսքան հա-  
ւատս յԻսրայէլ»:

ՈԿ. Ոմանք ի նահապետացն<sup>11</sup> ասեն: Տե՛ս, զիա՞րդ զիւրաքանչիւր  
ոք զմեր հաւատոցն կշռէ զսէրն: Համեմատելով փորձէ զբարեմ-

<sup>1</sup> B մոլորեցուցանեմ

<sup>2</sup> B արբեցութեամբ

<sup>3</sup> B երասանակակալ

<sup>4</sup> B արտաքս

<sup>5</sup> B նմանողք

<sup>6</sup> B Ոչ յԻսրայելի այսչափ հաւատս գտի: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն և գտին  
զծառայն հիւանդ բժշկեալ:

<sup>7</sup> B գաւտար

<sup>8</sup> B այնպիսի

<sup>9</sup> A անաղտի

<sup>10</sup> B լինին

<sup>11</sup> B նահապետան



տուութեան զչափն, զի հր[է]այքն ասէին, թէ ժանդացուցէր զհայրենի ճոխութիւն[ն]: Իսկ հարիւրապետն խոստովանէր զՅիսուսի զիշխանութիւն և զամենաճոխութիւն<sup>1</sup>, ո՛չ ուրանայր առ ծառայն արտակից եղեալ, և առատ ընկալաւ զԱստուծոյ զիտութիւն և զերկնի<sup>2</sup> վայելումն:

95բ // Ի<sup>3</sup> վաղիւն երթայր ի քաղաքն<sup>4</sup>, որում անուն<sup>5</sup> էր Նա[յ]իւն (Է 11):

Եփ.(Իգ.) Իբրև ո՛չ կամէր Յիսուս ի միում տեղոջ<sup>6</sup> լինել: Զի ո՛չ եկն նա ի Հաւրէ բնակութիւն խնդրել յերկրի, այլ շրջել և ուսուցանել և առ ինքն ժողովել և ընծայել Աստուծոյ Հաւր: Որպէս և ինքն ասաց, թէ՛ «Եւ<sup>7</sup> այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել, զի յայն իսկ առաքեցայ» (Դ 44):

էին<sup>8</sup> ընդ նմա աշակերտք իւր<sup>9</sup> և ժողովուրդք<sup>10</sup> բազում (Է 11):

Զի վասն նշանացն, զոր տեսանէին, և վարդապետութեան, յորս վայելէին, ո՛չ կամէին բնաւ մեկնել ի նմանէ: Վասնզի ո՛չ էին յայսցանէ<sup>11</sup>, որ նախանձու չարութեան հեղձեալ էին, այլ՝ մարդք պարզամիտք և առանց նենգութեան<sup>12</sup>:

Իբրև մերձ եղեն ի դուռն քաղաքին, ահա ելանէր պատանի մի մեռեալ, որդի միամաւր մաւր իւրոյ: Նա<sup>13</sup> էր այրի (Է 12):

Արդ<sup>14</sup> մերձ եղեալ աստ՝ պատահէ մեծագոյն սքանչելեաց, քան որ ի Կափառնաւում<sup>15</sup>: Աստ ո՛չ կին ոք տագնապեալ յախտէն և ո՛չ մանուկ բժշկեալ մերձ ի մահ, այլ՝ պատանի մեռեալ և մերձ ի գերեզման<sup>16</sup>, հողով ծածկեալ, և միամաւր: Արժանի ողբ<sup>17</sup> էր նա վասն առո[յ]ութեան հասակին, զի նա միամաւր էր և ո՛չ գոյր նորա այլ որդի միւթար փոխանակ մեռելոյն: Ո՛չ յոյս որ-

<sup>1</sup> B սրբ.՝ զՅիսուս և զամենայն ճոխութիւն նորա

<sup>2</sup> B գերկնից

<sup>3</sup> B և եղև ի

<sup>4</sup> B քաղաք մի

<sup>5</sup> B սրբ.՝ անունն

<sup>6</sup> B տեղոջ

<sup>7</sup> B չիք եւ

<sup>8</sup> B երթային

<sup>9</sup> B և աշակերտք նորա

<sup>10</sup> B ժողովուրդ

<sup>11</sup> B յայսցանէ

<sup>12</sup> B չիք և առանց նենգութեան

<sup>13</sup> B և նա

<sup>14</sup> A ձախ լս. ունի՝ «թ»

<sup>15</sup> B Կափառնաւումն

<sup>16</sup> B սրբ.՝ գերեզման դնել և

<sup>17</sup> B ողբոց

դեծնութեան, զի այրի էր և ծեր, պակասեալ ի գաւրութենէ ծնանելոյ, դառնացեալ ոգով<sup>1</sup>:

Իբրև ետես զնա Յիսուս<sup>2</sup>, գթացաւ ի նա և ասէ. Մի՛ լար (Է 13):

Ետես զաղիողորմն թշուառութեանն<sup>3</sup>, և զկականումն ճայնին, և զտատանումն մատանցն, և զկրծիցն կոծումն, և զհոսումն ար-

96ա տասուաց, և զտուայտումն, և զ(//)տխրութիւն դիմացն, զոր<sup>4</sup> տեսեալ աստուածային սիրով:

Գթացաւ<sup>5</sup> (Է 13):

Զիա՞րդ ո՛չ գթայր ամենաբարի բնութեամբն: Զի թէ չարքն ողբային զնա, որչա՞փ ևս առաւել ամենառատն<sup>6</sup> պարգևաւք զխնաման ցուցանէր: Լուծանէր զտրտմութիւն՝ զտրտմութիւն՝ դադարեցուցանէր և զարտասուսն<sup>7</sup>:

Եւ մատուցեալ մերձեցաւ ի դադաղսն, և որ բարձեալ բերէին՝ զտեղի առին (Է 14):

Ո՛չ յանկարծադէմ ինչ իրս<sup>8</sup> առնէր, զի մի՛ արհաւիրս արկանիցէ տեսողացն: Այլ նախ՝ խաւսի ընդ մաւր մեռելոյն և ապա՝ ձգեալ զձեռնն դադարեցոյց ի գնալոյն, զի<sup>9</sup> ամենեքին ուշ ունիցին տեսանել, թէ զի՞նչ կամիցի առնել:

Ասէ<sup>10</sup>. Պատանի՛ դու, քեզ ասեմ<sup>11</sup>: Կանգնեցաւ, նստաւ<sup>12</sup> մեռեալն (Է 14-15):

Յարուցանէր զորդին և շնորհէր նմա աստուածային սքանչելեաւք, զոյգ ընդ հրամանին և իրսն կատարէին: Զի նա էր, որ ասաց, և եղեն արարածք<sup>13</sup>, հրամայեաց և հաստատեցան:

Եւ սկսաւ խաւսել<sup>14</sup> (Է 15):

<sup>1</sup> B սգով

<sup>2</sup> B *դրփիս* Յիսուս զնա

<sup>3</sup> A թշվառութեանն

<sup>4</sup> B զոր և

<sup>5</sup> B գթացաւ ի նա

<sup>6</sup> B առատն

<sup>7</sup> B Լուծանէր զտրտմութիւնն, դադարեցուցանէր զարտասուսն

<sup>8</sup> B զիրսն *փիս* ինչ իրս

<sup>9</sup> A *աջ լս. ունի* «ժ»

<sup>10</sup> B և ասէ

<sup>11</sup> B ասեմ արի

<sup>12</sup> B և նստաւ

<sup>13</sup> B ամենայն արարածք

<sup>14</sup> B խաւսել և ետ զնա ցմայր իւր

Հեզ և հանդարտ խաւսէր և ընդելական ձայնիւ: Զի մի՛ ամբոխեսցին վասն նորանշան գործելոյն, զի կամեցաւ Տէր զյոյս յարութեան հաստատել: Որպէս և ինքն ասաց. «Եկեսցէ ժամանակ, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի նորա և եկեսցեն արտաքս» (Յովհ. Ե 28-29): Զի հաւատարիմ լիցի ասացեալն, տայ առհաւատչեայ զյարութիւն պատանոյն: Եւ զՂազար այր կատարեալ չորեքաւրեայ լի ժահահոտութեամբ ի գերեզմանէն յարուցանէր, զի զսահուկեցեաց<sup>1</sup> խցցէ զբերանն, որ ո՛չ խոստովանին զյարութիւնն:

96բ // Զի և մեք ուսեալք<sup>2</sup>՝ հաւատասցուք մերում<sup>3</sup> յարութեանն: Իջուցանէ ի դագ[ա]ղացն զպատանին, զի ինքնին<sup>4</sup> ոտիւք երթայցէ զհետ բազմութեանն ի քաղաքն:

Եւ ահ կալաւ զամենեսին<sup>5</sup> (Է 16):

Այսպէս բնաւորեալ են նշանք, զի զամենայն միտս առ ինքն ըմբ[ռ]նեալ ձգէ:

Փառաւոր առնէին զԱստուած (Է 16):

Երկեան և սկսան տալ փառս Աստուծոյ: Ո՛չ այլ ինչ խաւսել, այլ միայն փառաւորել<sup>6</sup> և<sup>7</sup> իմանալ, եթէ այցելութիւն աստուածային է:

Ասեն. Մարգարէ ոմն յարուցեալ է ի միջի մերում (Է 16):

Թէպէտև զպատշաճ աստուածային մարդեղութեանն ո՛չ ծանեան, սակայն ի դպրացն և ի փարիսացոցն չար նախանձոյն<sup>8</sup> ազատէին:

Այց<sup>9</sup> արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն (Է 16):

Քանզի ծանեան, եթէ նշանք բարեաց է զմեռեալս յարուցանելն, զի այլ են նշանք կորստեան: Ըստ որում մարգարէն ետ Րոբովամայ, յորժամ զոհէր առաջի ոսկի երնջոցն, պատառեցաւ սեղանն և հեղաւ արգանակ զոհին (տե՛ս Գ Թագ. ԺԳ 1-5): Եւ Երուսաղեմի աւերածոյն նշան զհետ Քրիստոսի չարչարանացն՝ կառք և ե-

<sup>1</sup> B սրբ.՝ զսահուկեցուցն

<sup>2</sup> B յուսացեալք

<sup>3</sup> B մերոյ

<sup>4</sup> B ինքն

<sup>5</sup> B զամենեսեան

<sup>6</sup> A փառաւորեալ B չիք փառաւորել

<sup>7</sup> B փառս տալ Աստուծոյ և

<sup>8</sup> B սրբ.՝ նախանձուն

<sup>9</sup> B և թէ այց

ընկալիք ի վերայ Որդոյն<sup>1</sup> վեր քան զնոսա խաղացեալ: Վասն որոյ Դաւիթ աղաւթէ<sup>2</sup>. «ՅԱստուծոյ առնել նշան բարութեան և մի՛ չարեաց» (հմմտ. Սաղմ. 26 17):

Եւ ել զրոյց ի Հրէաստան և յամենայն կողմանս աշխարհին<sup>3</sup> (Է 17):

Վասնզի մեծ էին սքանչելիքն: Եւ կարի իմն զարմանալի թուի յաչս մարդկան զմ[եռեա]լս<sup>4</sup> յարուցանել, զոր տեսեալ Համբաւեցին բնաւ աշխարհին:

Պատմեցին Յովհաննու աշակերտքն վասն այնորիկ: Եւ կոչեաց երկուս յաշակերտաց իւրոց, առաքեաց առ Տէր. Դո՞ւ ես, որ գալոց ես, թէ այլում ակն կալցուք<sup>5</sup> (Է 18-19):

97ա ՈԿ //Արդ՝ ո՛չ եթէ երկմտեաց Յովհաննէս, այլ աշակերտքն Յովհաննու՝ ո՛չ հաւատային Յովհաննու, զի ասէր մեծ գոլ զՅիսուս քան զինքն (հմմտ. Գ 16),

ՍՏ որ յարգանդի երկրպագեաց Քրիստոսի և ի մէջ որովայնին ցնծաց, որ ետես զՀոգին Սուրբ ի նմանութիւն աղաւնոյ՝ իջեալ ի վերայ Քրիստոսի, և լուաւ զհայրական զձայնն, եթէ՛ «Դա է Որդի իմ սիրելի» (Մատթ. Գ 17, Ժ 5, Մարկ. Թ 6): Որպէս Տէր մեր ասէր. «Վասն ժողովրդեանս առնեմ, զի հաւատացեն» (Յովհ. ԺԱ 42): Նոյնպէս և աստ:

Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս<sup>6</sup> (Է 21):

ԻԳ Իսկ Յիսուս ո՛չ ասաց, եթէ ես եմ, զի անպատշաճ էր, իսկ Յիսուս<sup>7</sup> ձեռն ի գործ արկեալ՝ բազում նշանս արար: Զի լցցի մարգարէութիւն Եսայեայ<sup>8</sup>, որ ասէր<sup>9</sup>. «Յայնժամ աչք կուրաց բացեն<sup>10</sup>

<sup>1</sup> B աւղոյ

<sup>2</sup> B մաղթէ

<sup>3</sup> B Եւ ել զրոյցս այս ընդ ամենայն Հրէաստան և վասն նորա և ընդ ամենայն կողմանս աշխարհին

<sup>4</sup> A բառը վնասված է

<sup>5</sup> B Պատմեցին Յովհաննու աշակերտք իւր վասն ամենայնի այսորիկ: Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր և ասէ. Դո՞ւ ես, որ գալոց ես, թէ այլում ակն կալցուք: Եւ եկեալ առ նա արքն ասեն. Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ. Դո՞ւ ես, որ գալոցն ես, թէ այլում ակն կալցուք:

<sup>6</sup> B զբազումս ի հիւանդութեանց և ի հարուածոց և յայսոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել

<sup>7</sup> B սրբ.՝ այլ *փի* իսկ Յիսուս

<sup>8</sup> B յԵսայայ

<sup>9</sup> B ասէ

<sup>10</sup> B բացցին

և ականջք խլից լուիցեն: Յայնժամ վազեսցէ կաղն իբրև գեղջիւ-  
րու<sup>1</sup>, և պարզ լիցի<sup>2</sup> լեզուք ծանրախաւսաց» (Ես. ԼԵ 5-6):

**Ասէ Յիսուս<sup>3</sup>. Երթայք պատմեցեք Յովհաննու<sup>4</sup> (Է 22):**  
*Հաւատացին իբրև տեսին զնշանսն<sup>5</sup>:*

**US** *Երանի<sup>6</sup>, որ ո՛չ գայթազղեսցի<sup>7</sup> յիս (Է 23):*  
*Եցոյց, եթէ զծածուկս նոցա գիտէ: Վասն այնորիկ<sup>8</sup> արդեամբք*  
*տայր իմանալ նոցա: Եւ մեղմով յայտնէր նոցա զմտաց նոցա*  
*զգայթազղութինս<sup>9</sup> և իմանալ տայր նոցա, և չառնէր զայլ ոք*  
*վկայ և կշտամբիչ, բայց զնոսա միայն, որ գիտէին: Եւ այնու ևս*  
*առաւել ամէր զնոսա գիւրև:*

**Իգ. 97բ** *Եւ իբրև գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ Յիսուս և ա-*  
*սէ. Զի՞ ելէք տեսանել եղէ՞ գն ի հողմոյ շարժուն<sup>10</sup> (Է 24):*  
*Եւ ասէ Յիսուս. «Մի՞թէ եղէգան նման կարծէք զՅովհաննէս,*  
*եթէ ի հողմ[ոյ] շարժեցաւ և երկմտեաց»: Ո՛չ, որ այսր // և անդր*  
*բերիցէ՝ երբեմն վկայեալ և դարձեալ երկբայեալ կարծեաւք<sup>11</sup>:*

**Ա՛յր ի հանդերձս փափկութեան զարդարեալ (Է 25):**  
*Կամ զփափկութեան<sup>12</sup> զհետ<sup>13</sup> գնաց և հաստատութիւն լու-*  
*ծաւ<sup>14</sup>: Ո՛չ երբեք: Ո՛չ էր փոյթ<sup>15</sup> Յովհաննու զփափկութենէ<sup>16</sup>*  
*մարմնոյ, այլ ազատի յամենայն զբաղմանց աշխարհիս:*

**Մարգարէ՞: Այո, ասեմ ձեզ, և առաւել քան զմարգարէ<sup>17</sup> (Է 26):**

<sup>1</sup> B գեղջերու  
<sup>2</sup> B լիցին  
<sup>3</sup> B պատասխանի ետ նոցա և ասէ  
<sup>4</sup> B Յովհաննու զոր տեսանէքդ և լուայք, զի կոյրք տեսանեն և կաղք գնան և բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին  
<sup>5</sup> B *չիք* Հաւատացին... զնշանսն  
<sup>6</sup> B Եւ երանի իցէ  
<sup>7</sup> B գայթազղիցէ  
<sup>8</sup> B այսորիկ  
<sup>9</sup> B զգայթազղութիւն  
<sup>10</sup> B Եւ իբրև գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խաւսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու. Զի՞նչ ելէք յանապատն տեսանել եղէ՞ գն ի հողմոյ շարժուն, այլ զի՞նչ ելէք տեսանել այր ի հանդերձս փափկութեան զարդարեալ: Ահաւանիկ, որ ի հանդերձս երևելիս և ի փափկութեան են, յարքունիս են (Է 24-25):  
<sup>11</sup> B կարծիւք  
<sup>12</sup> B փափկութեան  
<sup>13</sup> A զհետ  
<sup>14</sup> B նորա լուծաւ  
<sup>15</sup> B ոչ երբեք փոյթ էր  
<sup>16</sup> B փափկութիւն  
<sup>17</sup> B Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ: Այո, ասեմ ձեզ, առաւել ևս քան մարգարէ, զի սա է, վասն որոյ գրեալն է, թէ՛ Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ յարդարեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ամէն ասեմ ձեզ, մեծ ի ծնունդս կանանց

ԵՓ *Զի մաւտակայ էր Քրիստոսի, և մարգարէքն վասն գալստեան թագաւորին մարգարէանային: Իսկ Յովհաննէս արժանի եղև տեսլեանն, զոր մարգարէքն քարոզեցին, այլև<sup>1</sup>՝ մկրտելոյ արժանի եղև:*

**Մեծ ի ծնունդս կանանց ո՛չ ոք է** (Է 28):

ՍՏ *Մեծ քան զԱբէլ և զԵնոք<sup>2</sup> և զՆոյ և զՄովսէս և զԱբրահամ և զ[Յ]եսու և զԴաւիթ և զՍողոմոն: Այլ ո՛չ է<sup>3</sup> նա մեծ, քան զառաքեալսն, զի նա ի Հնումն էր և ի Հայր միայն մկրտէր և ո՛չ յերիս<sup>4</sup> անձինս, և մկրտէր առանց Հոգոյ: Տէր մեր ասէր. «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտեսջիք ի Հոգին Սուրբ» (Գործք Ա 5, ԺԱ 16): Եւ զնորա մկրտեալսն՝ և առաքեալքն մկրտեցին: Մովսէս աւետիս [յ]երկիր աստ տայ և աւրհնէ զանդս և զհաւտս (հմմտ. Բ Օր. ԺԵ 19), և Դաւիթ զորդիս և զկին այգոյ<sup>5</sup> նմանեցուցանէ և<sup>6</sup> ո՛չ այլ ինչ խոստումն (տե՛ս Սաղմ. ԾԻԷ 3), իսկ Պաւղոս ասէ. «Աւրհնեաց զմեզ Աստուած ամենայն հոգևոր աւրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս» (Եփես. Ա 3):*

Եփ. *Արդ՝ կշռեայ զմարգարէիցն աւրհնութիւն[ն] և տե՛ս զառաքելոցն: Մեծ է Յովհաննէս, զի գիտաց «զԳառն Աստուծոյ» (Յովհ. Ա 29): Այլ մեծ են<sup>7</sup> փառք արքայութեանն առաւել, որ յայտնելոց են<sup>8</sup> արժանաւորաց[ն]: // Թէ՛ ձկտեսցեն<sup>9</sup> ընդ այնր բարութեան<sup>10</sup>, որ անդ<sup>11</sup> իցեն, նուազագոյնք իցեն իբրև զոչինչ:*

**Բայց փոքրիկն յարքայութեանն<sup>12</sup> Աստուծոյ մեծ է քան զնա** (Է 28):

ՍՏ *Փոքրիկ<sup>13</sup> զինքն ասէ, քանզի կրսերագոյն էր քան զՅովհաննէս: «Ես, որ ծնեալս եմ ի Կուսէն<sup>14</sup>, մեծ եմ քան զնա» (հմմտ. Է 28):*

մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է (է 26-28):

<sup>1</sup> Բ այլ

<sup>2</sup> Բ զԵնոք

<sup>3</sup> Բ էր

<sup>4</sup> Ը ի յերիս

<sup>5</sup> Բ այգոյ

<sup>6</sup> Բ չիք և

<sup>7</sup> Բ է

<sup>8</sup> Բ է

<sup>9</sup> Բ ձկտիցին

<sup>10</sup> Բ բարութիւնսն

<sup>11</sup> Բ անդի

<sup>12</sup> Բ յարքայութեան

<sup>13</sup> Բ փոքրիկն

<sup>14</sup> Բ Կուսէ

Իսկ ոմանք յերկնաւոր դասուցն՝ սրովբէքն, քրովբէքն<sup>1</sup>, աթուք, իշխանութիւնք, պետութիւնք, հրեշտակք, հրեշտակապետք՝ անուանք այսոքիկ, որ թուի փոքրագոյն և մեծ քան [զ]Յովհաննէս: Զի թէպէտե<sup>2</sup> Յիսուս փոքրկացաւ քան զհրեշտակս վասն չարչարանաց մահու, այլ մեծ է քան զնա: Իսկ զԱստուածածինն փոքրագոյն կարծել քան զՅովհաննէս, վասնզի արու պատուական է քան զէգ: Բայց թուի ինձ զԱստուածածինն մեծ զոլ քան զՅովհաննէս: Յետ<sup>3</sup> խաչելութեանն փոքր մարդ՝ հաւատացեալ և մկրտեալ յերրորդութիւնն, մեծ է<sup>4</sup> քան զՅովհաննէս: Իսկ արքայութիւն կոչի յետ խաչին աւուրքն. «Ո՛չ արբից ի բերոյ որթոյ, մինչև արբից ընդ ձեզ յարքայութիւն<sup>5</sup>» (ԻԲ 18, հմմտ. Սարկ. ԺԴ 25):

**Եւ ժողովուրդքն և մաքսաւորքն իբրև լուան, արդարացուցին զԱստուած, և մկրտեցան ի Յովհաննէ՝**<sup>6</sup> (Է 29):

ԻԳ **Գոհացան զԱստուծոյ և արդարացուցին զառաքիչ նորա, զի վկայեցին և հաւատացին և մկրտեցան ի նմանէ: Եւ ծանեան, եթէ յԱստուծոյ առաքեցաւ:**

**Իսկ փարիսացիքն և աւրինականքն զխորհուրդն Աստուծոյ անարգեցին**<sup>7</sup> (Է 30):

*Զայս մեծ և երկնային խորհուրդս տուեալ նմա ի վերուստ:*

**Եւ ո՛չ մկրտեցան ի նմանէ: Նման են մանկտոյ, որ նստիցին ի հրապարակս**<sup>8</sup> (Է 30, 32):

98բ Ստ. // *Նման են հրէայքն մանկտոյ յիմարի, որք նախատեն զիւրեանց նմանիս, որ ո՛չ սգակից լինին և ո՛չ ուրախակից: Նոյնպէս և այն ազգն ո՛չ եղեն ուրախակից Քրիստոսի<sup>9</sup>, որ եկն և եբարձ «զմեղս աշխարհի<sup>10</sup>» (Յովհ. Ա 29):*

<sup>1</sup> Բ սէրովբէքն, քերովբէքն

<sup>2</sup> Բ թէ

<sup>3</sup> Բ դարձեալ յետ

<sup>4</sup> Բ *չէք* է

<sup>5</sup> Բ յարքայութիւնն

<sup>6</sup> Բ Եւ ամենայն ժողովուրդն իբրև լուան և մաքսաւորքն, արդարացուցին զԱստուած, զի մկրտեցան ի մկրտութիւնն Յովհաննու:

<sup>7</sup> Բ Իսկ փարիսացիքն և աւրինականք զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան ի նմանէ:

<sup>8</sup> Բ Եւ ոչ մկրտեցան ի նմանէ: Արդ՝ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ և ո՞ւմ իցեն նմանողք: Նման են մանկտոյ, որ ի հրապարակս նստիցեն, կարդայցեն զմիմեանս և ասիցեն. Փողս հարաք ձեզ և ոչ կաքաւիցէք, ողբացաք և ոչ լացէք:

<sup>9</sup> Բ *չէք* Նոյնպէս և այն... Քրիստոսի

<sup>10</sup> Բ աշխարհիս

**Ողբացաք և ո՛չ լացիք** (Է 32):

*Զի վարքն Յովհաննու ողբումն էր, որ կոչէր ի սուգ<sup>1</sup>: Եւ նոքա ո՛չ եղեն տրտմակից Յովհաննու, որ էր ի սուգ վասն յանցանաց նոցա: Եւ ի մէջս իւր կրէր զմեռելութիւն նոցա:*

**Եկն Յովհաննէս<sup>2</sup>, ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր<sup>3</sup>** (Է 33):

**Ի Գ** *Յովհաննէս անկերակուր և սգատեսիկ հանդերձիւն կոչեաց զնոսա յողբս՝ ապաշխարել զմեղս իւրեանց:*

**Եկն Որդի մարդոյ, ուտէ և [ը]մպէ<sup>4</sup>** (Է 34):

*Եկն Յիսուս՝ փեսայն առագաստին, ճրի թողութիւն շնորհէր յանցանաց նոցա, իբրև զմանկունս<sup>5</sup> իւր ժողովել զնոսա յառագաստ ուրախութեան: Այլ նոքա իբրև զմոլորեալս<sup>6</sup> ընդ երկոսեանն պատերազմէին:*

**Արդարացաւ իմաստութիւն յորդոց իւրոց** (Է 35):

**ՍՏ** *Զի որք հաւատան և հնազանդին, ուղիղ և արդար ցուցանեն զաւրէնսդիրն, զի կրելի են աւրէնք նորա, և ճշմարիտ է տէրութիւն նորա:*

**Աղաչէր զնա ոմն<sup>7</sup> ի փարիսացոցն<sup>8</sup>, զի կերիցէ ճաշ ընդ նմա** (Է 36):

**Ի Գ** *Փարիսացի էր, այլ ո՛չ չարութեամբ լցեալ իբրև զայլս: Զի գոյր և ի նոսա գտանել զոմանս բարիս, որպէս և այրս այս: Զի թէպէտև որպէս պարտ էր գիտել զայս՝ ո՛չ գիտէր: Բայց իբրև մարգարէ<sup>9</sup> հայէր ի նա, շնորհս առնել նմա և մտանել ի տուն նորա:*

**Եւ մտեալ ի տուն փարիսացոյն<sup>10</sup> բազմեցաւ** (Է 36):

**99ա** *// Որ յաթոռ փառաց ընդ Հաւր: Եւ<sup>11</sup> երկինք և երկիր ո՛չ տանէին զնա, որ ի կերպարանս Աստուծոյ էր առեալ զմեր բնու-*

<sup>1</sup> Ե կոչի սուգ

<sup>2</sup> Ե Յովհաննէս Մկրտիչ

<sup>3</sup> Ե ըմպէր և ասէիք զևք գոյ ի նմա

<sup>4</sup> Ե ըմպէ և ասէք. Ահա այր կերող և արբեցող բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց: Եւ արդարացաւ իմաստութիւնն յորդոց իւրոց

<sup>5</sup> Ե զմանուկ

<sup>6</sup> Ե մոլորեալս

<sup>7</sup> Ե *դրփիս* ոմն զնա

<sup>8</sup> Ե փարիսեցւոցն

<sup>9</sup> Ե ի մարգարէ

<sup>10</sup> Ե փարիսեցւոյն

<sup>11</sup> Ե *չիք* Եւ



*թիւնս, և յամենայնի եցոյց զխոնարհութիւն՝ գալստեամբ իւրով յաշխարհ:*

**Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր: Իբրև լուաւ, եթէ<sup>1</sup> բազմեալ է ի տան փարիսեցոյն, առեալ<sup>2</sup> շիշ մի ի[ւ]ղոյ<sup>3</sup> ազնուի (Է 37):**

*Կինս այս կատարեալ հաւատս ընծայեաց, զի ո՛չ ունէր ցաւս ինչ կամ խեղութիւն մարմնականս, որպէս և այլ<sup>4</sup> բազումք, որ զմարմնոյ փրկութիւն խնդրէին<sup>5</sup>: Եւ ո՛չ է կատարեալ հաւատ, որ զմարմնոյ փրկութիւն հայցէ: Զի մարմինն բռնադատէ առ ամենայն ոք ձգել<sup>6</sup> և յուսայ<sup>7</sup> գտանել բժշկութիւն: Բայց հոգոյ ախտ ո՛չ այսպէս ստիպեն գտանել բժշկութիւն<sup>8</sup>, այլ սիրեն փախչել իբրև ի պատերազմողէ, որք ձեռն արկանեն բժշկել: Իսկ կինս, լի հաւատով և երկի[ւ]ղիւ, մատեալ գտանել զմեղաց<sup>9</sup> թողութիւն: Զի իբրև ետես զզաւրութիւնս<sup>10</sup> նորա ի մարմինս մարդկան, զոր յարոյց ի մեռելոց և բժշկեաց յախտից, հաւատաց, եթէ կարող է բառնալ զմեղս: Երեք աւետարանիչքն միևնոյն ասեն զկինս զայս, իսկ Յովհաննէս զայլ ոմն անուանէ՝ Մարիամ քոյր Ղազարու, մաքուր և սուրբ<sup>11</sup> վարիւք (տե՛ս Յովհ. ԺԱ 2):*

**Կայր յետոյ և լայր առ ոտս նորա և արտասուաւք թանայր զոտս նորա<sup>12</sup> (Է 38):**

*Լուաց զոտս նորա և լուսափայլ պայծառացաւ հոգի նորա:*

**Եւ հերովք գլխոյ իւրոյ ջնջեաց (Է 38):**

*Մաքրեաց<sup>13</sup> զոտս նորա և մաքրափայլ լուսազգեստ պայծառացաւ<sup>14</sup> փառաւք:*

<sup>1</sup> B գիտաց թէ *փխ* լուաւ եթէ

<sup>2</sup> B փարիսեցոյն, բերեալ

<sup>3</sup> B եւղոյ

<sup>4</sup> B այլք

<sup>5</sup> B խնդրեն

<sup>6</sup> A ցգել

<sup>7</sup> B ուսանի

<sup>8</sup> B զբժշկութիւն

<sup>9</sup> B մեղաց

<sup>10</sup> B զզաւրութիւն

<sup>11</sup> B *չիք* և սուրբ

<sup>12</sup> B Կայր յետոյ և առ ոտսն նորա լայր և արտասուաւքն սկսաւ թանալ զոտս նորա և հերով գլխոյ իւրոյ ջնջէր:

<sup>13</sup> B Եւ լուսափայլ պայծառացաւ հոգի նորա, և հերովք գլխոյ նորա ջնջեաց, մաքրեաց

<sup>14</sup> B զարդարեալ պսակեցաւ *փխ* պայծառացաւ

99բ ՈԿ

Համբուրերը զոտս նորա և աւծանէր ի[ւ]ղով[ն] (Է 38):

Ձի այնուհիկ պարտ էր զարմ(//)անալ ընդ կնոջն, զի ո՛չ իբր ի լոկ մարդ մերձենայր, այլ իբրև յԱստուած և ի Տէր, քաւիչ յանցանաց մարդկան: Վասն այնորիկ զանդամսն<sup>1</sup>, որ պատուական է քան զամենայն մարմին[ն], զգլխոյն ասեմ, մատոյց առ ոտսն Յիսուսի:

Տեսեալ փարիսացոյն՝ ասէր ի միտս իւր. Սա եթէ մարգարէ էր<sup>2</sup>, գիտէ՞ր, թէ որպիսի՞ կին մերձենայ ի սա, զի մեղաւոր է<sup>3</sup> (Է 39):

Իսկ փարիսեցիին թերի: Սակաւ<sup>4</sup> հաւատով սկսաւ տկարանալ, զի<sup>5</sup> հաւատայր, թէ մարգարէ է: Իսկ վասն Քրիստոսի անճառ խոնարհութեանն՝ և յայնմանէ<sup>6</sup> վրիպեցաւ, և ո՛չ բնաւ եթէ մարգարէ էր՝ հաւատայր:

ԵՓ Իսկ դու զո՞ գիտացեր զնա: Շմաւո՛ն<sup>7</sup>: Ձիա՞րդ ետուր թոյլ նմա մտանել ի բազմականս քո և ո՛չ յայսմանէ գիտացեր, թէ Աստուծո՞ւ է հոգիս: Եւ ո՛չ զայնուհիկ կամս նորա<sup>8</sup>, որ ածին զնա, կարաւոր էր զնա զնա զնա:

Յիսուս ասէ ցՍիմոն. Սիմոն<sup>9</sup>, երկու պարտապանք էին առն միում<sup>10</sup> փոխատուի. մինն պարտ էր հինգ հարիւր դահեկան (Է 40-41):

ԿՐ Փոխատու զինքն ասէ, որ ի պատկեր իւր գոյացոյց զմարդկային բնութիւնս՝ շնորհելով զինքն իշխանութիւն և զտերութիւն, զոր ի դահեկանն առակեաց զպարտսն, որ նշանակէր զթագաւորական պատկերն<sup>11</sup>, յոր մարդն ստեղծաւ պատկեր Աստուծոյ: Ըստ որում<sup>12</sup> ըստ հաւատոց պարտի հատուցանել վայելչապէս զգործս: Հինգ հարիւր առակէ զհեթանոսս ըստ կռապաշտութեան չարեաց:

<sup>1</sup> B զանդամն  
<sup>2</sup> B ոք էր ապա  
<sup>3</sup> B Եւ տեսեալ փարիսեցւոյն, որ կոչեացն զնա, ասէր ընդ միտս իւր. Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէ՞ր, թէ ով և որպիսի՞ ոք կին մերձենայ ի սա, զի մեղաւոր է:  
<sup>4</sup> B չիք սակաւ  
<sup>5</sup> B զի ոչ  
<sup>6</sup> A, B ի յայնմանէ  
<sup>7</sup> B զՇմաւոն  
<sup>8</sup> B նորա գիտացեր  
<sup>9</sup> B Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Սիմովն, ունիմ ինչ ասել քեզ: Եւ նա ասէ. Ասա՛ վարդապետ: Եւ ասէ  
<sup>10</sup> B ուրումն *փխ* առն միում  
<sup>11</sup> A պատկն, տկ տառերի վերևում այլ գրով աւելացված է երն: B պարտքն  
<sup>12</sup> B չիք ըստ որում

**ԵԼ միւսն յիսուն<sup>1</sup>** (Է 41):

*Զհրէայսն<sup>2</sup> ասաց, զի ծանաւթութիւն ունէին ընդ Աստուծոյ ըստ Աւրինացն: Իսկ հինգ հարիւրն՝ հինգ տասն և յ[ի]սուն[ն], հինգ տասամբքն աւարտի, որ նշանակէ զհինգ զգայութիւնս, որով մարդկային բնութիւն[ս] // գործէ զբարի և զչար:*

**ԵՓ** *Զի յայտ արասցէ յայտնապէս, եթէ գրեաց նա զպարտիս երկուցունցն<sup>3</sup>:*

**ԵԼ ո՛չ գոյր նոցա հատուցանել, երկուցունցն<sup>4</sup> շնորհ[եաց]** (Է 42):

**ԿՐ** *Վասնզի մարդանալովն<sup>5</sup> Աստուծոյ Բանին՝ իւրաքանչիւրք<sup>6</sup> ազատեցան ի պարտուց, որ երբեմն ո՛չ ունէին հատուցանել յառաջնումն:*

**Իգ.** *Իսկ Յիսուս աստուածային տեսութեամբն քննէ զմիտս մարդկան: Եցոյց նմա, եթէ ո՛չ միայն զյայտնի գործն գիտէ զկնոջն, այլև զծածուկ միտս նորա տեսանէ:*

**Մտի<sup>7</sup> ի տուն քո, ջուր ոտից իմոց ո՛չ ետուր<sup>8</sup>** (Է 44):

**ԵՎ.** *Բարի՞ք ո՛չ ետուր ջուր: Զի մի՛ խափան լիցի արտասուաց կնոջն մեղաւորի լուանալ, զոր պատրաստեաց արդարացուցչին իւրոյ: Ո՛չ հրով ջեռացոյց Սիմոն ջուր վասն նորա, զի սիրով արտասուաւքն եռացին կնոջն մեղաւորի, որ արար առաւել լուացումն այնմիկ, որ ետ նմա զմեծ պարգևս: Լուացաւ և հանգեաւ և ետ վարձս լուացողին զքաւութիւն մեղաց: Զմկրտութիւնն Յիսուսի լուանայր և, աստուածութիւնն միացեալ ի մարմնի՝ զվարձան հատուցանէր: Լուանալ մարդկութիւնն<sup>9</sup> մարթէր, իսկ սրբել զմեղսն՝ աներևոյթ աստուածութեանն: Նա արտասուաւք լուաց զփոշի ոտից նորա: Եւ նա բանիւք<sup>10</sup> սպիտակացոյց զհոգի և զմարմին նորա:*

<sup>1</sup> B յիսուն, և իբրև ոչ գոյր նոցա հատուցանել երկուցունց շնորհեաց:

<sup>2</sup> B «Եւ միւսն յիսուն» զհրէայսն

<sup>3</sup> B երկուցունց

<sup>4</sup> B երկուցունց

<sup>5</sup> B ի մարդանալն

<sup>6</sup> B իւրաքանչիւր ոք

<sup>7</sup> B Արդ՝ ասա՛ ո՞ առաւել սիրեսցէ զնա: Ասէ Սիմովն. Ինձ այսպէս թուի, եթէ որում բազումն շնորհեաց: Եւ նա ասէ ցնա. Ուղիղ դատեցար: Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ցՍիմովն. Տեսանես՞ զայս կին, մտի (Է 42-44)

<sup>8</sup> B ետուր: Իսկ սա արտասուաւք իւրովք եթաց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց: Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ (Է 44-45)

<sup>9</sup> B մարդկութեանն

<sup>10</sup> B բանիւք

**Համբոյր մի ո՛չ ետուր** (Է 45):

Եփ. Այսու հաստատէ վասն անդամոց իւրոց, թէ արդարև մարմին չաւշափելի զգեցաւ նա:

**Ո՛չ դադարէ ի համբուրելոյ զոտս**<sup>1</sup> (Է 45):

Յնծասցեն<sup>2</sup> ապաշխարողք և ողջասցեն յանցաւորք: Եւ ի դուռն բացեալ մտցեն, և որք սիրեն զկեանս, աղաչեսցեն զՏէր: 100բ // Զի դուռն, որ փակեալ էր, արտասուս<sup>3</sup> կնոջն իջին և բացին: Արտասուս հեղեալ՝ լուաց զտեղին<sup>4</sup>, ուր գրեալ էին հինգ հարիւր դահեկան պարտուց նորա: Ստիպեաց զնա կարաւտութիւն Տեառն, և ամալթով մերձեցաւ: Զի ետես նա զայն, որ ո՛չ նախատէ զկարաւտեալսն, յորժամ ժտին առ նա: Եւ անարգէ զմեծատունս<sup>5</sup>, զի գարշին:

Իգ. Իսկ սա ո՛չ ունէր համարձակութիւն յերեսն<sup>6</sup> նորա, ո՛չ դադարեաց ի համբուրելոյ զոտս նորա, որ մաքրագունիցն էր պատկանելի՝ թող թէ կնոջս<sup>7</sup> լցեալ մեղաւք:

**Եւզով զգլուխս իմ ո՛չ աւծեր, իսկ սա ի[ւ]զով անուշով աւծ**<sup>8</sup> (Է 46):

Իգ. Ո՛վ աղբիւր<sup>9</sup> բարեաց որպիսի նուէրս ընկալաւ յայսպիսի<sup>10</sup> ձեռաց: Յայտ առնէ, թէ ո՛չ ի նուէրս հայի, այլ ի սիրտս<sup>11</sup> մերձեցելոցն<sup>12</sup>: Որպէս գրեալ է. «Հոտոտեցաւ Տէր ի ճենճերս Նոյի» (հմտ. ԾԱՃԳ. Ը 20-21):

**Թողեալ լիցին քեզ մեղք քո բազում** (Է 47):

Եփ. Բաց<sup>13</sup> զբերանն իւր գթութեամբ,

կր. և գովեաց զպատուազիրն իւր:

Իգ. Զի վաստակեցաւ կինն և արժանացոյց զանձն հատուցման: Քրիստոս յայտնեաց զանձն իւր, վասն որոյ ասաց մարգարէն.

<sup>1</sup> Բ զոտս իմ

<sup>2</sup> Ա ցնձասցեն

<sup>3</sup> Բ արտասուք

<sup>4</sup> Բ լուացին զտեղիսն

<sup>5</sup> Բ զմեծատունն

<sup>6</sup> Բ յերեսս

<sup>7</sup> Բ կնոջ

<sup>8</sup> Բ Իւզով զգլուխս իմ ոչ աւծեր, սա իւզով անուշիւ աւծ, վասն որոյ ասեմ քեզ (Է 46-47):

<sup>9</sup> Բ աղբիւր (այսուհետ չենք նշում)

<sup>10</sup> Բ յայսպիսի

<sup>11</sup> Բ միտս *փխ* սիրտս

<sup>12</sup> Բ մերձեցելոյն

<sup>13</sup> Բ եբաց

«Բառնալ զանաւրէնութիւնս մեր և ընկենուլ ի խորս ծովու»  
(*հմմտ.* Միքիա Է 18-19):

**Զի որում շատ թողաւ<sup>1</sup> շատ սիրէ և որում սակաւ՝ սակաւ** (Է 47):

Գիտենայ<sup>2</sup> ծածուկ տեսութեամբ[ն] և արդար իրաւամբքն չափել և հաւասարել ամենեցուն ըստ վաստակոց զվարձսն, նոյնպէս և՛ ըստ հաւատոցն և սիրոյն զչնորհս թողութեան, քանզի առատ է պարգևաւք և ողորմած է ի թողուլն:

**Թողեալ լիցին քեզ մեղք քո** (Է 48):

**101ա** Իբրև արդարացոյց ի // դատելն զբանս և<sup>3</sup> ապաշխարութեամբ<sup>4</sup> թողու զմեղսն: Վասնզի իւր էր մարգարէութիւնն յասելն անաւրինին, թէ<sup>5</sup> դարձցի ի ճանապարհաց իւրոց չարաց<sup>6</sup>՝ ամենայն անաւրէնութիւնք և մեղք մի՛ յիշեսցի: Եւ եթէ ի ստուերի այս եղաւ, ո՞րչափ ևս առաւել ի շնորհս ազատութեան:

**Եւ սկսան, որ բազմեալն էին, ասել ընդ<sup>7</sup> միտս իւրեանց. Ո՞վ է սա, որ զմեղս թողու** (Է 49):

Այսպիսի ինչ ախտացան և առ անդամալուծին, այլ անդ յանդիմանէ զնոցա զմտացն զկարծիսն: Եւ հաստատէ<sup>8</sup> զանդամալուծն մարմնով, որ վասն մեղաց ունէր զհիւանդութիւն, և ունէր իշխանութիւն թողուլ զմեղս: Եւ արդ՝ զՍիմոն ի մտացն կարծիս յայտնեաց, որ քարոզէր զիւր աստուածային տեսութիւնն: Վասն այսորիկ աստ ոչինչ փոյթ արար:

**Ասէ<sup>9</sup> ցկինն. Հաւատք քո կեցուցին զքեզ<sup>10</sup>** (Է 50):

**ԵՓ** Յայտնեաց զհաւատս կնոջն փառաւք և մերկացոյց, խայտառակեաց զխորհուրդս փարիսացոյն<sup>11</sup> տրտնջողին: Եւ երևեցոյց զինքն բժիշկ հաւատացելոց, թէ նա ինքն բժշկէ զամենայն: Եւ եղև դատաւոր ծածկելոցն և զՍիմոնի<sup>12</sup>, որ ո՛չ համարեցաւ զնա, եթէ զյայտնիսն գիտէ նա:

<sup>1</sup> Ե թողուցու

<sup>2</sup> Ե Գիտէ նա

<sup>3</sup> Ե զբան իւր *փիս* զբանս և

<sup>4</sup> Ե ապա իշխանութեամբ

<sup>5</sup> Ե անաւրէնն եթէ

<sup>6</sup> Ե չարեաց

<sup>7</sup> Ե ընդ նմա ասել ընդ

<sup>8</sup> Ե հաստատէր

<sup>9</sup> Ե և նա ասէ

<sup>10</sup> Ե զքեզ, երթ ի խաղաղութիւն

<sup>11</sup> Ե փար[իս]եցւոյ

<sup>12</sup> Ե Սիմովնի

**Երթի խաղաղութիւն** (Է 50):

*Ուսուցանէ զամենեսին այնպէս<sup>1</sup> ընծայեցուցանել հաւատս և արժանի լինել շնորհի թողութեան:*

Իգ. *Այլև եցոյց, եթէ բարձաւ խռովարարն: Արդ<sup>2</sup>՝ զորաւրինակ մարմնոյ ցաւ պատերազմի ընդ մարմինն<sup>3</sup>, այսպէս և մեղք ընդ հոգւոյն՝ սպանանել զնա աւրինաւք մեղաց[ն]: Այլև ընդ Աստուծոյ տայ պատերազմ թշնամի առնել և աւտարացուցանել, և առնէ<sup>4</sup> հաղորդս դիւաց:*

<sup>1</sup> B այնպիսի

<sup>2</sup> B *չիք* արդ

<sup>3</sup> B պատերազմին ընդ մարմնոյ

<sup>4</sup> B առնել

## Գլուխ Ը

- 101բ** // ԵԼ<sup>1</sup> ինքն շրջեր ընդ քաղաքս և ընդ գեաւղս (Ը 1):
- Ոսկ** Ո՛չ զգեղս թողոյր և զքաղաքս<sup>2</sup> և զանց<sup>3</sup> առնէր, այլ յամենայն տեղիս երթայր՝
- ՍՏ** ցուցանելով զմարդասիրութիւն իւր առ տնանգսն և<sup>4</sup> աղքատսն և<sup>5</sup> տառապեալսն:

**ԵԼ** քարոզէր զԱւետարանն արքայութեան և բժշկէր զախոսս (Ը 1-2):

- ՈԿ** Երկուս բարութիւնս պարզեւէր: Մի՝ զերկնից արքայութեան<sup>6</sup> աւետիսն խոստանայր և միւս՝ զի<sup>7</sup> զպէսպէս ցաւս բժշկէր: Ո՛չ պատժէր զանհաւատսն և ո՛չ դոյզն ինչ սաստէր: Զի զմեզ ուսուցէ չարախաւսացն ո՛չ չարութիւն<sup>8</sup>, այլ մեծ<sup>9</sup> երախտիւք պահէր<sup>10</sup>: Որչափ բամբասիցեն, սակայն դու ի բարի առնելոյն մի՛ դադարեր: Վասն այսորիկ<sup>11</sup> խրատէ զմեզ Քրիստոս առ բարերարութեան էակնոյն<sup>12</sup>:

**ԵԼ** կանայք ոմանք, որ բժշկեալ էին յայսոց չարաց (Ը 2):

- ԻԳ** Զամենայն ժողովելոցս<sup>13</sup> ասէ և չգարչի յումեքէ, զոր ինքն ստեղծ, այլ մեծաւ խնամով ժողովէ առ ինքն զարս և զկանայս, սրբէ<sup>14</sup> ի հոգոյ և ի մարմնական ախտից:

Շրջէին ընդ նմա և սպասաւորէին Մարիամ Մագդաղենացի<sup>15</sup>, յորմէ եւթն դեւն ելեալ էին<sup>16</sup>, և կին<sup>17</sup> հազարապետին Հերովդի և

<sup>1</sup> Ե և եղև յետ այնորիկ և

<sup>2</sup> Ե զքաղաքս

<sup>3</sup> Ե սրբ.՝ գյանց

<sup>4</sup> Ե և առ

<sup>5</sup> Ե և առ

<sup>6</sup> Ե արքայութիւնն

<sup>7</sup> Ե չէք զի

<sup>8</sup> Ե չարութեամբ

<sup>9</sup> Ե մեծաւ

<sup>10</sup> Ե պատահել

<sup>11</sup> Ե այնորիկ

<sup>12</sup> Ե բարերարութիւնն այն

<sup>13</sup> Ե ժողովելոց

<sup>14</sup> Ե և սրբէ

<sup>15</sup> Ե որ կոչէր Մագդաղենացի

<sup>16</sup> Ե էր

<sup>17</sup> Ե Յովհաննա կին Քուզա

**Շուշան և այլ<sup>1</sup> բազումք, որք պաշտէին զնա յ[ը]նչից իւրեանց (Ը 2-3):**

*Կանայք էին նշանաւորք, որք ո՛չ վասն աղքատութեան եկեալ<sup>2</sup> յարեցան ի նա, այլ վասն հաւատոցն և բանիցն վարդապետութեան և նշանացն, զոր առնէր և երախտեացն, զոր ընկալան, որ ազատեաց զնոսա ի դիւացն, որ չարչարեալք էին և ո՛չ կամէին մեկնել ի նմանէն:*

**Եւ ժողովեալ<sup>3</sup> բազումք ի<sup>4</sup> քաղաքաց քաղաքաց եկելոց<sup>5</sup> առ նա (Ը 4)՝ առ եզր ծովուն Գալիլեացոց<sup>6</sup>:**

**102ա Ոսկ** *Որսայր և արկանէր ընդ ուռկանաւ<sup>7</sup> զայնոսիկ, որ առ ծ(//)ովուն դեգերէին: Եւ առհասարակ զամենեսին ի մի վայր գումարէր, զի մի՛ զոք ի թիկանց թողուցու: Այլ զամենեսին ի դիմաց կացուցանէ, զի զալէկոծութիւն կենցաղոյս ցամաքեցուցանիցէ<sup>8</sup>:*

**Խաւսէր ընդ նոսա առակաւ (Ը 4):**

*Ի լերինն: Թէպէտե այնչափ վարդապետեաց, ո՛չ առակ յաւդեաց, զի տխմարք էին և ո՛չ էին կարող<sup>9</sup> յայտնապէս լսել զԲանն Քրիստոսի, իսկ աստ դպիրքն և փարիսացիքն ընդ նոսա էին: Բանայ առակաւ զբերանն, խաւսի զիմաստութիւն՝ ի սկզբանէ զծածկեալն:*

**Եւ սերմանահան<sup>10</sup> (Ը 5):**

**Ոկ** *Ուստի՞ ել, որ «գերկինս և գերկիր լնու» (հմմտ. Երեմ. ԻԳ 24)՝ ըստ մարգարէին, և ո՛չ ի տեղոջէ ի տեղիս փոփոխի: Վասն տեսութեան եկեալ առ մեզ մարմնապատ լինելով, քանզի մեք ո՛չ կարէաք մտանել առ նա վասն մեղաց պարսպին: Ինքն իւրով գլթովն եկն առ մեզ:*

**Իգ.** *Զինքն անուանէ սերմանող<sup>11</sup> Բանին և գհոգիս մարդկան մտաւոր երկիր, յոր սերմ[ն] անկանիցի<sup>12</sup>:*

<sup>1</sup> B այլք  
<sup>2</sup> A գրված է ձախ լս. գրչի ձեռքով B չիք եկեալ  
<sup>3</sup> B ի ժողովել  
<sup>4</sup> B բազում ժողովրդոց և ըստ  
<sup>5</sup> B եկելոցն  
<sup>6</sup> B Գալիլեացոց  
<sup>7</sup> B ուռկանսն և  
<sup>8</sup> B ցամաքեցուցանէ  
<sup>9</sup> B կարաւր (այսուհետ չենք նշում)  
<sup>10</sup> B Եւ սերմանացանն սերմանել զսերմանիս իւր:  
<sup>11</sup> B սերմանաւր  
<sup>12</sup> A անգանիցի



Եւ ի սերմանելն՝ ոմն<sup>1</sup> անկաւ առ ճանապարհաւն<sup>2</sup> և եղև կոխան (Ը 5):

ԵՓ Ոգիք զրկողացն որպէս այն, որ զմին քանքարն էառ և անարգեաց զբարերար տուիչն: Զի ո՛չ կակղացաւ ընդունել զսերմն Բանի նորա և եղև կոխան ամենայն չարեաց: Վասն այսորիկ ո՛չ եղև երկիր նորա տեղի<sup>3</sup> վարդապետին, որ մշակէր արաւրով Բանին՝ պատառել զխստութիւնն նորա և սերմանել ի նմա զուսուամն աստուածային:

Եւ թռչունք երկնից կերան զնա (Ը 5):

ԵՓ. Զչարն անուանեաց թռչուն, զի ո՛չ բռնութեամբ յափշտակեաց զվարդապետութիւն ի լսելեաց նորա: Զի եցոյց զաւրինակն, 102բ զի աւետարանին ճայնն ի դուրս լսելեացն մերձ էր, // որպէս հասցորենոյն ի վերայ երկրի: Նա ո՛չ կամեցաւ ծածկել յարգանդ<sup>4</sup> սրտի իւրոյ զսերմանիսն, որ անկաւ<sup>5</sup> ի նմա, և ետ թռչնոց մուտ՝ անփոփել ի ներքոյ թևոց իւրոց:

Եւ այլն անկաւ ի վերայ ապառաժի<sup>6</sup> (Ը 6):

Բարերարն զգթութիւն իւր եցոյց ողորմութեան<sup>7</sup>: Զի թէպէտև ո՛չ էր գործել զխստութիւնն երկրի նորա, սակայն ո՛չ խնայեաց ի նմա զսերմն իւր: Այնոքիկ են, որ դառնան յաշակերտութենէ նորա, և<sup>8</sup> իբրև զայնոսիկ, որ ասացին. «Խի՛ստ է բանդ, ո՞ կարէ լսել դմա» (Յովհ. 2 61): Նման Յուդայի, զի լուաւ նմա և եղև ապառաժուտ, և ի ժամանակի փորձութեանն եղև անպտուղ:

ՈԿ Բայց բանաւոր երկրի[ն] հնար է քարին երկիր<sup>9</sup> պարարտ լինել:

Եւ այլն անկաւ ի մէջ փշոցն<sup>10</sup> (Ը 7):

ԵՓ Զգաւրութիւն իւր փշոցն և տատասկացն ետ: Եւ փուշն թագաւորեաց առատապէս, զի եղիցի նա անպատասխանի: Եկն մեծատունն առ Տէրն մեր՝ ցուցանելով զվարսն ի մանկութենէ: Եւ Տէր սրբեաց զփուշն ի սերմանեացն՝ ասելով. «Եթէ կամիս կատա-

<sup>1</sup> B իւրում էր որ *փխ* ոմն

<sup>2</sup> B ճանապարհաւ

<sup>3</sup> B երկիրն այն տեղիք սերման

<sup>4</sup> A, B ի յարգանդ

<sup>5</sup> A անգաւ

<sup>6</sup> B յապառաժի և ընդ բուսանելն չորացաւ առ ի չգոյէ հիւթոց *փխ* ի վերայ ապառաժի

<sup>7</sup> B ողորմութեամբ

<sup>8</sup> B *չիք* և

<sup>9</sup> B *չիք* երկիր

<sup>10</sup> B փշոց և ընդ նմին բուսեալ փշոցն հեղձուցին զնա

րեալ լինել, տո՛ւր զինչս քո աղքատաց» (Մարկ. Ժ 21): *Եւ նա<sup>1</sup>, իբրև ետես զսերմն ի փշոցն հեղձուցչացն ազատեալ, տրտմեցաւ վասն մեծութեանն մերկանալոյ, որ փուշ ապականիչ աստուածային սերմանն էր, և փշաբեր երկրին<sup>2</sup> պարտ էր լինել սերման տեղոյն<sup>3</sup>:*

**Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ<sup>4</sup> (Ը 8):**

**ՍՏ** *Հոգիք արդարագործաց նման կոչեցելոցն, որ թողին զամենայն ինչս իւրեանց և զնացին զհետ Քրիստոսի:*

**Իսկ երեսնաւորն (հմմտ. Մատթ. ԺԳ 23):**

**ՈԿ** *Նշանակէ զ[ը]նթացս ի մանկութենէ յերիտասարդութիւն և<sup>5</sup> յերիտասարդութենէ ի ծերութիւն<sup>6</sup>: Արդ՝ սերմանահասն մի էր և երկիրն մի, // և արմտիքն ի չորս բարժանեցան<sup>7</sup>: Սակայն բարերարն եցոյց զքաղցրութիւն իւր, զի յետինքն ընդ առաջինն զվարձս հաւասար առին (տե՛ս Մատթ. Ի 16): Այլ սոքա այնոքիկ են, որ ընտրեցան<sup>8</sup> յաշակերտութիւն Քրիստոսի, և ժամանակ հալածանաց ո՛չ յարեալ ի վերայ<sup>9</sup>, և բարիոք վաստակաւք իւրեանց պսակեցան և իբրև զերկիր պտղաւք զարդարեցան:*

**Իսկ վաթսնաւորքն<sup>10</sup> (հմմտ. Մատթ. ԺԳ 23):**

*Այնոքիկ են, որ կոչեցան ի չարչարանք վասն Աստուծոյ մարտիրոսութեամբ<sup>11</sup>: Եւ ո՛չ ժամանեցին փոխանակ Տեառն մեռանել, այլ կացին մնացին բարիոք մինչև ի վախճանն:*

**Իսկ հարիւրաւորն (հմմտ. Ը 8, Մատթ. ԺԳ 23):**

**ՍՏ** *Թուի ինձ, թէ կատարումն է ամենայն ընտրութեան և կնիք, վկայ լինել վասն Քրիստոսի և մեռանել:*

**Հարցին ցնա աշակերտքն և ասեն. Ընդէ՞ր խաւսիս ընդ նոսա առակաւք<sup>12</sup> (հմմտ. Ը 9):**

---

<sup>1</sup> **Բ չիք** նա  
<sup>2</sup> **Բ երկիրն**  
<sup>3</sup> **Բ սերմանն տեղի**  
<sup>4</sup> **Բ պարարտ և բուսեալ՝** արար պտուղ հարիւրապատիկ: Զայս իբրև խաւսեցաւ, ասէ. Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ  
<sup>5</sup> **Բ չիք** յերիտասարդութիւն և  
<sup>6</sup> **Բ և ի ծերութենէ**  
<sup>7</sup> **Բ բարժանեցան**  
<sup>8</sup> **Ը ընդրեցան**  
<sup>9</sup> **Բ վերայ** նոցա  
<sup>10</sup> **Բ վաթսնաւորն**  
<sup>11</sup> **Բ մարտիրոսացան**  
<sup>12</sup> **Բ թէ զի՞նչ իցէ առակն *փի* Ընդէր... առակաւք**

ՈԿ. Արժան է գարմանալ ընդ աշակերտսն, եթէ<sup>1</sup> զիա՞րդ ցանկային ուսանել և ի դէպ ժամանակի հարցանել: Եւ ո՛չ առաջի ամենեցուն զայն առնէին: Եւ զայս Մարկոս յայտ առնէ, թէ մատեան առանձինն (հմմտ. Մարկ. Զ 32): Այսպէս պարտ էր մաւրն և եղբարցն առնել:

Ասէ<sup>2</sup>. Զեզ տուել է զիտել զխորհուրդս արքայութեանն երկնից<sup>3</sup>, և նոցա չէ տու[եալ]<sup>4</sup> (Ը 10):

Զայս ասելով՝ ո՛չ եթէ հարկ ինչ կամ վիճակ մուծանէ, այլ զնոսա առնէ պատճառս բարեացն և չարեաց[ն]: Եւ ցուցանէ, թէ շնորհք են ի վերուստ տուեալ, բաց ո՛չ զանձնիշխանութիւն խափանէ: Եւ այս ի յաջորդացն յայտ է:

Զի տեսցեն և ո՛չ տեսցեն (Ը 10):

Ո՛չ եթէ բնութեամբ էր կուրուցիւն նոցա, այլ կամաւ ո՛չ տեսանէին: Եւ զի յայտ է, զի յանձնիշխան կամս էր<sup>5</sup> կուրուցիւն 103ք նոցա, քանզի տեսանէին զդեւս հանեալ // և ասէին, թէ՛ «Բէեղ-զերեղաւ հանէ դա<sup>6</sup>» (ԺԱ 15, 18):

Լսելով լուիցեն և մի՛ իմացին<sup>7</sup> (Ը 10):

Լսէին, զի Աստուած<sup>8</sup> մերձեցուցանէր զնոսա և բազում միաբանութիւն ցուցանէր զիւրն ընդ Հաւր: Եւ նոքա ասէին. «Ո՛չ է դա յԱստուծոյ» (Յովի. Թ 16): Տեսանե՞ս, զի զմարդարէն կոչէ յամբաստանութիւն նոցա, զի անձնիշխանութեամբ զաչս և զականջս կափուցին:

Ո՛չ ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ կարասեալ (Ը 16):

<sup>1</sup> Եւ աշակերտութեանն *փի* աշակերտսն եթէ

<sup>2</sup> Եւ նա ասէ

<sup>3</sup> Եւ արքայութեան Աստուծոյ

<sup>4</sup> Կ տվ[եալ] Եւ *չիք* և նոցա չէ տուեալ

<sup>5</sup> Եւ է

<sup>6</sup> Եւ դա զդեւս

<sup>7</sup> Եւ Բայց այլոցն առակաւք, զի տեսցեն և մի՛ տեսցեն, և լուիցեն և մի՛ իմացեն, բայց առակն այս ինչ է: Սերմն՝ Բանն Աստուծոյ է, և որք առ ճանապարհաւն այնոքիկ են, որ լսենն, և ապա գայ սատանայ հանէ զբանն ի սրտից նոցա, զի մի՛ հաւատացեն և ապրեսցին: Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, և արմատս ոչ ունին, որք առ ժամանակ մի հաւատան և ի ժամանակի փորձութեան հեռանան: Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ, նոքա են, որ իբրև լսեն զբանն և ի հոգս և ի ցանկութիւն մեծութիւն աշխարհիս զբաղեալ՝ հեղձնուն և անպտուղ լինին: Իսկ, որ յերկիրն պարբաւ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն ընդունին, և տան պտուղ համբերութեամբ (Ը 10-15)

<sup>8</sup> Եւ յԱստուած

US Ո՛չ յաղագս երևելի ճրագին ասէ զայն<sup>1</sup>, այլ վասն իմանալոյն և ուղիղ<sup>2</sup> վարդապետութեանն, որ ոչն ծածկի անաւթիւք իւիք կամ ի ներքոյ մարմնոյ «կամ<sup>3</sup> ընդ մահճաւք» (Ը 16): Այսոքիկ են մարմինք մարդկան՝ լսողք<sup>4</sup> Բանին վարդապետութեան ճշմարիտ լուսոյն Քրիստոսի:

Այլ ի վերայ աշտանակի տան<sup>5</sup> (Ը 16):

Որպէս անաւթ տան և աշտանակ, նոյնպէս և հոգւոյն զաւրու-  
թիւնն և մարմնոյն:

Իգ. Կամ որպէս ջահ վառեալ<sup>6</sup> զառաքեալսն յիւր<sup>7</sup> լուսոյն<sup>8</sup>:

Զի որպէս չիք ինչ ի ծածուկ, որ ո՛չ յայտնեսցի<sup>9</sup> (Ը 17):

Եւ ո՛չ է արէն նոցա թաքուն լինել<sup>10</sup>: Այլ որպէս<sup>11</sup> զլոյս սփռեալ ընդ բնաւ աշխարհս, որ յայնժամ ընդ Պաղեստին ծած-  
կեալ էին:

Զի ոյր գուցէ, տացի նմա և յաւելցի (Ը 18):

Ստ. Որպէս զի ասիցէ, թէ՛ «Որ ունի զճրագն և լինէ<sup>12</sup> լուսով ի վե-  
րայ աշտանակի, տացի նմա գաղտնին և յայտնին» (հմմտ. ԺԱ 33):  
Բայց, որ ունիցի զսերմն բարի՝ զհոգին բարին, որ սերմանեցաւ ի  
նմա: Եւ ամենայն տունկ, զոր տնկեաց Հայր Տեառն մերոյ՝ աս-  
տուածային վարդապետութիւնն, զի ամենայն, որ զհաճոյսն Աս-  
տուծոյ առնէ, յայնպիսի տունկ յաւելցի:

Եւ ոյր ոչն գուցէ, զոր<sup>13</sup> ունիցի, բարձցի ի նմանէ (Ը 18):

Քանզի ո՛չ իբրև յԱստուծոյ ինչ բառնալով, այլ նա զանձն ո՛չ  
արար արժանի:

<sup>1</sup> B գայս

<sup>2</sup> A ուղեղ

<sup>3</sup> B կամ դնէ

<sup>4</sup> B լսաւղք

<sup>5</sup> B դնէ, զի որ մտանեն զլոյս տեսցեն *փխ* տան

<sup>6</sup> B վառեաց

<sup>7</sup> A, B ի յիւր

<sup>8</sup> B լոյսն

<sup>9</sup> B յայտնի լիցի և ոչ գաղտնի որ ոչ ծանիցի և եկեցէ ի յայտ: Տեսէք այսուհետև  
զիարդ լսէքդ (Ը 17-18)

<sup>10</sup> B *չիք* եւ ոչ է արէն... լինել

<sup>11</sup> B իբրև

<sup>12</sup> B դնէ

<sup>13</sup> B և զոր

**104ա** // «Ամենայն տունկ, զոր<sup>1</sup> ո՛չ տնկեաց Հայր<sup>2</sup> իմ երկնաւոր, խլէ<sup>3</sup>» (Մատթ. ժե 13):

**ԻԳ** Այլ ընդ[ղ]իմակաց Հոգին բարձցի<sup>4</sup> ի նմանէն: Իսկ<sup>5</sup> որ ո՛չ կամեցաւ լսել և տալ զպտուղ բարեաց, ըստ գրեցելոյն՝ «Ամենայն ուռ, որ ո՛չ բերէ պտուղ բարի, կտրէ զնա» (Յովհ. ժե 2):

**Եկին առ նա մայրն և եղբարք իւր: Եւ<sup>6</sup> կան արտաքոյ և խնդրեն<sup>7</sup> տեսանել** (Ը 19-20):

*Փառասիրութեամբ ձգեն զնա հրամանաւ:*

**ՍՏ** Գուցէ նշանակէ մայր և եղբայր<sup>8</sup> զՀին Կտակարանացն զժողովորդն, որք ո՛չ ընկալան զԲանն Քրիստոսի: Մայր Քրիստոսի յայտ է՝ կոյսն Մարիամ<sup>9</sup>, և եղբարք նորա ո՛չ ստուգապէս՝ որդիքն Յովսեփայ<sup>10</sup>, թէպէտև ոմանք կարծեցին, որք ոչն զիտացին զխորհուրդ աստուածային ծննդեանն:

**Ասէ<sup>11</sup> ցնոսա. Մայր իմ և եղբարք<sup>12</sup> սոքա են, որ լսեն զԲանն Աստուծոյ<sup>13</sup> և առն[են]** (Ը 21):

**ՍՏ** Յուցանէ, թէ մայր նորա նա է, որ լսեն զԲան նորա և առնեն:

**ՈԿ** Տեսանե՞ս, զի զարմացոյց և արար զոր խնդրէին: Զի որպէս ի հարսանիքն, սոյնպէս և աստ: Նախ՝ զսնափառութեան ախտն բժշկեաց և ապա՝ զպատշաճ պատիւ մաւրն հատոյց: Արդ՝ որ ոք կամիցի նմա մայր լինել, ընդ այն ճանապարհ զնա[ս]ցէ, որ նայն գնաց:

**Եւ եղև ի միւսում<sup>14</sup> աւուր ինքն ել ի նաւ և աշակերտք նորա** (Ը 22):

---

<sup>1</sup> Ե որ  
<sup>2</sup> Ե Հայրն  
<sup>3</sup> Ե խլեցի  
<sup>4</sup> Ե բարձցէ  
<sup>5</sup> Ե **չիք** իսկ  
<sup>6</sup> Ե և ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն: Ազդ եղև նմա և ասեն. Մայր քո և եղբարք քո  
<sup>7</sup> Ե կամին զքեզ **փի** խնդրեն  
<sup>8</sup> Ե մայրն և եղբարքն  
<sup>9</sup> Ե Մարիամ Աստուածածինն  
<sup>10</sup> Ե Յովսեփայ քանզի և Քրիստոս ոչ ճշմարտապէս որդի Յովսեփայ  
<sup>11</sup> Ե Եւ ասէ  
<sup>12</sup> Ե եղբարք իմ  
<sup>13</sup> Ե **ղրփի** զԲանն Աստուծոյ լսեն  
<sup>14</sup> Ե միւում

*Զնոյն և Մարկոս այսպէս ասէ. «Զի ո՛չ զկարգ ժամանակին ամենեքին<sup>1</sup> ասացին և ո՛չ զամենայն ինչ գրեցին» (տե՛ս Մարկ. Դ 35-40):*

**Եկայք անցցուք յայն կոյս ծովակիրդ<sup>2</sup> (Ը 22):**

ՍՏ *Ծով և ալիք կենցաղոյս մերոյ մրրիկ, և ոյք<sup>3</sup> ալէկոծէին ամենայն բանիւ՝ սուտանուն գիտութեամբ:*

**Եւ մինչդեռ նաւէին, ի քուն եմուտ: Էջ մրրիկ հողմոյ ի ծովակն<sup>4</sup> (Ը 23):**

Եփ. *Արդ՝ այն, որ ն[ն]ջեաց, զարթեալ և ննջեցոյց զծովն: Զի խռո-104բ վուրիւն // ծովուն, որ ննջեաց, յայտ արասցէ զգաւրութիւն աստուածութեան նորա, որ ո՛չ ննջէ:*

**Սաստեաց հողմոյն և ջրոյն, և եղև խաղաղութիւն<sup>5</sup> (Ը 24):**

*Զի ահաւասիկ իշխանութեամբ հնազանդեցուցանէ: Արդ՝ հողմովն և ծովովն և այս[ոք]իւքն, զոր լռեցոյց Տէր մեր, յայտ արար, թէ Որդի է Աստուծոյ և արարչակիրց:*

Ստ. *Դարձեալ. զհոգոց խռովութիւն և զալէկոծութիւն նշանակէ, որ լինին ի սատանայէ: Զայնպիսեացն հոգին ննջեալ ասէ և ո՛չ ազդեալ, մինչև ի գալուստ աշակերտացն և աղաչանաւք մարգարէիցն զարթուցանէին զՔրիստոս ի փրկութիւն ազգի մարդկան: Եւ զփառացումն<sup>6</sup> ամբարշտութեան<sup>7</sup> և զհպարտութիւն մոլորութեանն զաղարեցոյց աստուածածանալթութեամբն<sup>8</sup>:*

**Ո՞ր<sup>9</sup> արդեաւք սա իցէ<sup>10</sup>, զի<sup>11</sup> հողմոց և ծովու<sup>12</sup> հրաման տայ, և հնազանդին սմա (Ը 25):**

<sup>1</sup> B ամենեքեան

<sup>2</sup> B Եւ ասէ ցնոսա. Եկայք անցցուք յայն կոյս ծովակիր: Եւ գնացին: Եւ մինչդեռ նաւէին, ի քուն եմուտ, և էջ մրրիկ հողմոյ ի ծովակն և ուռնոյր և տագնապէին: Մատուցեալ զարթուցին գնա և ասեն. Վարդապետ, վարդապետ, կորնչիմք աւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջուրցն: Եւ հանդարտեցին և եղև խաղաղութիւն: Ասէ ցնոսա. Ո՞ր են հաւատք ձեր: Եւ զահի հարեալ զարմացան և ասէին ցմիմեանս (Ը 22-25):

<sup>3</sup> B որք

<sup>4</sup> B *չիք* Եւ մինչդեռ... ծովակն

<sup>5</sup> B *չիք* Սաստեաց... խաղաղութիւն

<sup>6</sup> B զշփացումն

<sup>7</sup> A ամպարշտութեան

<sup>8</sup> B աստուածային ծանօթութեամբն

<sup>9</sup> B ո՞ր

<sup>10</sup> B *զրփիւ* իցէ սա

<sup>11</sup> B զի և

<sup>12</sup> B ջրոց *փիւ* ծովու

ՈԿ *Զի քունն և տես մարմնոյն մարդ ցուցանէին, բայց ծովն յանկարծակի հանդարտեալ՝ Աստուած ցուցանէր զնա: Քանզի ո՛չ գաւազանաւ պատառէր<sup>1</sup>, որպէս Մովսէս, և ո՛չ ձեռս<sup>2</sup> ընդ երկին<sup>3</sup> տարածեալ: Եւ ո՛չ աղաւթից կարաւտացաւ<sup>4</sup>, այլ որպէս Տեառն վայել է սաստել աղախնոյ, և Արարչի՝ իւրում արարածոց: Այնպէս սանձէր բանիւ միայն, զի ո՛չ հետք խռովութեան ծովուն գտանէին:*

*Իջին<sup>5</sup> յաշխարհն Գերգեսացոց<sup>6</sup>, որ է յայնկոյս Հանդէպ Գալիլիայ<sup>7</sup> (Ը 26):*

ՈԿ *Եւ ընդ ելանել նոցա<sup>8</sup> ի ցամաքն, պատահեաց նոցա այր մի դիւահար<sup>9</sup>: Ընդէ՞ր Մատթէոս երկուս<sup>10</sup> և Ղուկաս մի ասէ<sup>11</sup>: Զի մինն դժնդակ էր, զի զկապանսն և զշղթայսն խզէր և ընդ անապատսն<sup>12</sup> մոլորեալ շրջէր: Իսկ Մարկոս ասէ, թէ՛ «Քարամբք կոծէր զանձն» (Մարկ. Ե 5):*

105ա ԻԳ // *Արդ՝ զծառայակիցն իւրեանց ըմբռնեալ չարչարեցին, վասն որոյ նեղեալ չարչարէ զնոսա Քրիստոսի ծածուկ զաւրութիւնն:*

*Եւ<sup>13</sup> ո՛չ ի տան բնակէր<sup>14</sup>, այլ ի գերեզմանս (Ը 27):*

ստ. *Քանզի ի գերեզմանս բնակէին<sup>15</sup> դեւքն չարաչար: Նաև, զի<sup>16</sup> ո՛չ միայն ի կենդանեաց մարմին բնակին<sup>17</sup>, այլև ի մեռելոց: Իսկ ի Հանդիպել[ն] Յիսուսի՝ ելեալ ի մեռելոցն, և աղաչէին<sup>18</sup>:*

*Զի՞ կայ իմ<sup>19</sup> և քո՝ Որդի Աստուծոյ<sup>20</sup> (Ը 28):*

<sup>1</sup> B պատառեաց

<sup>2</sup> B ձեռն

<sup>3</sup> B երկինս

<sup>4</sup> B կարաւտեցաւ

<sup>5</sup> B և նաւեցին իջին

<sup>6</sup> B Գերգեսացոց

<sup>7</sup> B Գալիլեայ

<sup>8</sup> B նորա

<sup>9</sup> B այր մի ի քաղաքէն յորում էին դեւք *Վիւ* նոցա... դիւահար

<sup>10</sup> B երկուս ասէ

<sup>11</sup> B *չիք* ասէ

<sup>12</sup> B անապատն

<sup>13</sup> B Եւ բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ և

<sup>14</sup> B բնակեալ

<sup>15</sup> B բնակեալ էին

<sup>16</sup> B Նա զի և

<sup>17</sup> B բնակեն

<sup>18</sup> B *չիք* և աղաչէին

<sup>19</sup> B մեր

<sup>20</sup> B Յիսուս Որդի Աստուծոյ Բարձրելոյ

Արդ՝ Որդի Աստուծոյ կոչէին զՅիսուս, որպէս պարտեալ ի նորա զաւրութեան են<sup>1</sup> և սքանչացեալք ի վարդապետութիւն նորա, որպէս Որդոյ Աստուծոյ, քանզի ժողովուրդքն<sup>2</sup> մարդ համարէին զնա: Եկին դեւքն և Աստուած քարոզեցին զնա:

**Աղաչեմք<sup>3</sup> զքեզ, մի՛ տանջեր զմեզ տարաժամ<sup>4</sup> (Ը 28):**

**Եփ.** Տէր մեր ժամանեաց, կալաւ զնոսա յանաւրէն գործս, զի զստեղծուած նորա պէսպէս կտտանաւք կտտէին: Եւ վասն առաւելութեան անաւրէնութեան իւրեանց համարէին, թէ ո՛չ մնայ ժամանակին պատասխանի<sup>5</sup>, կամ վասն այնորիկ աղաչէին, զի մի՛ առաքեսցէ զնոսա յանդունդս: Զի թէ հրամայեալ էր զայն, ո՛չ կարէին ա՛յլ ուրեք լինել, վասնզի զփորձ առին զաւրութեան նորա, և որպէս ո՛չ յայտնեաց զանձն ի փորձութեան<sup>6</sup> անապատին՝ և<sup>7</sup> ո՛չ աստ:

**Եւ անդ էր երամակ մի խոզից արաւտական: Աղաչեցին զՅիսուս, զի հրամայեսցէ նոցա մտանել ի նոսա<sup>8</sup> (Ը 32):**

**ՍՏ** Աստ յայտ արար, թէ ո՛չ ի խոզսն իշխեն մտանել, որչա՞փ ևս ի պատկեր[ն] Աստուծոյ: Եւ զի հեղձեալ ի ջուրսն ազատեսցեն<sup>9</sup> ի խռովութեանց նոցա, զի և խորհեցան դեւքն դառնալ ի տունս նոցա:

**Ելին դեւքն և մտին ի խոզսն, և դիմեցին ի ծովն և հեղձան<sup>10</sup> (Ը 33):**

**105բ Ոկ.** Ընդէ՞ր կոտորեցին դեւքն զխոզսն: // Քանզի ամենայն ուրեք տրտմութիւն փութան ածել ի վերայ: Նաև<sup>11</sup> կարի իմն խնդան

<sup>1</sup> Բ զաւրութենէ  
<sup>2</sup> Բ ժողովուրդն  
<sup>3</sup> Բ աղաչեմ  
<sup>4</sup> Բ զիս, քանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անդի, զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ի շղթայս և պահէր յերկաթս և խզէր զկապանսն, և վարէր ի դիւէն յանապատս: Եհարց ցնա Յիսուս և ասէ. Զի՞նչ անուն է քեզ: Եւ նա ասէ. Լեզնոն: Զի դեք բազում մտեալ էին ի նա և աղաչէին զնա, զի մի՛ հրաման տայցէ նոցա երթալ յանդունդս (Ը 28-31) **փի** զմեզ տարաժամ  
<sup>5</sup> Բ դատաստանի  
<sup>6</sup> Բ փորձութեամբ  
<sup>7</sup> Բ նոյնպէս և  
<sup>8</sup> Բ Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արաւտական ի լերինն և աղաչեցին զնա, զի հրաման տացէ նոցա մտանել ի նոսա: Եւ հրամայեաց նոցա: Եւ ելեալ դեք յառնէն մտին ի խոզեանն և դիմեաց երամակն ի գահէ անտի ի ծովակն և հեղձաւ (Ը 32-33):  
<sup>9</sup> Բ ջուրն ազատեսցին  
<sup>10</sup> Բ **չիք** Ելին... հեղձան  
<sup>11</sup> Բ և



ընդ կորուստն և չար անցս<sup>1</sup>, քան զխոզսն<sup>2</sup> ընդ նոսա անցուցանէին<sup>3</sup>: Եւ եթէ ո՛չ ՝ [յ]Աստուծոյ խնամոցն արգելեալ էր զմեզ, չար քան զանասունսն սատակէին:

**Իսկ խոզարածքն փախեան և պատմեցին ի քաղաքն<sup>4</sup> (Ը 34):**

Քանզի զոր ինչ ո՛չ կամէին դեւքն լինէր: Զի Քրիստոսի զաւրութիւնն լուսաւորեալ քարոզէր և դիւացն զաւրութիւնն յամալթ լինէր, որպէս յանապատին և յաստուածածանաւթութիւն ձգէր զմարդիկքն:

**Եւ ելին<sup>5</sup> տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս<sup>6</sup> (Ը 35):**

Զի կարի անմիտք էին գերգեսացիքն, որք սահման եղին ինքեանց ո՛չ ելանել և տեսանել զնշանսն Տեառն, և զի՛ աբազք և վաճառասէրք էին: Վասն այնորիկ հեղձուցանէր գերամակս<sup>8</sup> խոզից նոցա, զի ակամայ ելցեն<sup>9</sup>, տեսցեն զնա:

**Աղաչէր զնա ամենայն բազմութիւն գերգեսացուց զնալ ի սահմանաց նոցա<sup>10</sup> (Ը 37):**

**ԵՓ** Հալածեցին գերգեսացիքն ի գաւառէ իւրեանց զայն, որ կարող էր հալածել զդեւս ի սահմանաց նոցա: Զի երկեան բնակիչք երկրին այնորիկ, զի մի՛ հրաման տայցէ դիւացն մտանել ի նոսա: Վա՛յ է նոցա, զի դեւք մտանելոց են ի նոսա, որք հալածեալ են յամենայն տեղիս: Առաւել բազմանան ցաւք նոցա, զի բժշկին ո՛չ ետուն մտանել յինքեանս<sup>11</sup>:

**Իբրև դարձաւ Յիսուս անդրէն, ընկալաւ զնա ժողովուրդն<sup>12</sup> (Ը 40):**

<sup>1</sup> Ե Ընդ անցս մարդկան

<sup>2</sup> Ե ընդ խոզսն առաւել

<sup>3</sup> Ե անցուցանէին չարիս

<sup>4</sup> Ե Իբրև տեսին խոզարածքն զիրսն, որ եղեն, փախեան և պատմեցին ի քաղաքին և յազարակս:

<sup>5</sup> Ե Իբրև ելին

<sup>6</sup> Ե Յիսուս և գտին զայրն ուստի դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն Յիսուսի և երկեան: Պատմեցին նոցա, որոց տեսեալն էր, թէ զիա՞րդ փրկեցաւ դիւահարն (Ը 35-36)

<sup>7</sup> Ե վասնզի

<sup>8</sup> Ե հեղձոյց գերամակ

<sup>9</sup> Ե ելեալ

<sup>10</sup> Ե Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն Գերգեսացուց զնալ ի սահմանացն նոցա, քանզի ահիւ մեծաւ տաղնապէին:

<sup>11</sup> Ե, Ե ի յինքեանս

<sup>12</sup> Ե Եւ նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն: Աղաչէր զնա այրն, ուստի դեւքն ելեալ էին շուրջ ընդ նմա: Արձակեաց զնա և ասէ. Դարձ ի տուն քո և պատմեա՛, զոր միանգամ

- ՈԿ Իւր քաղաք զԿափառնաւումն կոչէ, զի ծնաւ ի Բեթղէմ<sup>1</sup> և սնաւ ի Նազարեթ, և բնակութիւն իւր<sup>2</sup> ի Կափառնաւումն էր:
- Իգ. Որք ո՛չ էին նախանձու չարութեամբ ընդ նմա:

106ա Եւ եկն այր մի, որ(//)ում անունն Յայրոս, իշխան ժողովրդեանն, անկեալ առ ոտսն Յիսուսի աղաչէր զնա մտանել ի տունն նորա և բժշկել զդուստր նորա երկոտասան ամեայ, որ էր մերձ ի մահ<sup>3</sup> (Ը 41-42):

Ժամանեցին արդիւնքն բանիցն, զի սուգ անհնարինք<sup>4</sup>:

- ՈԿ. Եւ<sup>5</sup> միամաւր էր մանուկն երկոտասան<sup>6</sup> ամեայ: Այն եղև, զի<sup>7</sup> յամաւթ լիցին ժպիրհքն, որք լրբութեամբ հակառակէին ընդ նմա:

Եւ ընդ երթալ նորա կին մի տեռատես երկոտասան ամեայ, մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ ի հանդերձս նո[րա]<sup>8</sup> (Ը 42-44):

- ԵՓ Արդ՝ կինս այս ած զմտաւ, թէ այն<sup>9</sup>, որ կարող է զհոգի[ն] երկոտասան ամեայ դստերն դարձուցանել ի մարմինն, կարող է<sup>10</sup> և զերկոտասան ամեայ զհարուածս բժշկել: Արդ՝ որ մերձենայր ի նա մարմնապէս, շաւշափումն մարմնոյ տեսանէր: Եւ որ մերձենայր ի նա հոգեպէս, զանշաւշափելի աստուածութիւնն տեսանէր<sup>11</sup> ի ձեռն մարմնոյն: Անսուրբ<sup>12</sup> էր ըստ աւրինացն տեռատեսն և սերմնակաթն, և ո՛չ մտանէր ի տաճարն:

արար քեզ Աստուած: Գնաց ի քաղաքն և քարոզէր, զոր ինչ արար նմա Յիսուս: Իբրև դարձաւ Յիսուս անդրէն, ընկալան զնա ժողովուրդն, քանզի ամենեքին ակն ունէին նմա (Ը 38-40):

<sup>1</sup> B Բեթղազէմ

<sup>2</sup> B նորա

<sup>3</sup> B Եւ ահա եկն այր մի, որոյ անունն էր Յայրոս և նա էր իշխան ժողովրդեանն, անկեալ առ ոտսն Յիսուսի աղաչէր զնա մտանել ի տունն նորա, զի դուստր միամաւր էր նորա ամաց իբրև երկոտասանից և էր մերձ ի մահ:

<sup>4</sup> B անհնարինք էին

<sup>5</sup> B զի

<sup>6</sup> B և երկոտասան

<sup>7</sup> A զի զի

<sup>8</sup> B Եւ ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա: Եւ կին մի էր ի տեռատեսութեան արեան ամաց երկոտասանից, որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել: Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա, և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա: Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է՞, որ մերձեցաւն յիս: Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որ ընդ նմայն էին. Վարդապետ, ժողովուրդքդ պնդեն և նեղեն զքեզ: Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի, եթէ զաւրութիւն ել յինէն (Ը 42-46):

<sup>9</sup> B զիմաստութիւնն զայն թէ *փիս* զմտաւ թէ այն

<sup>10</sup> B է նա

<sup>11</sup> B չօշափէր

<sup>12</sup> B դարձեալ անսուրբ

US Այլ զի աւրինակ էր, որոց անդադար զգարչելի ցանկութիւնն հոսէ<sup>1</sup>: Իսկ ի մերձենալն ի Քրիստոս՝ զգարչելի հոսումն ախտիւքն<sup>2</sup> ցամաքեցոյց: Նախ<sup>3</sup>՝ զհոգւոյն ախտն հաւատովն սրբեաց և ապա՝ մարմնոյն հոսումն բժշկեցաւ:

Ասէ Յիսուս. Ո՞ր մերձեցաւ յիս (Ը 45):

Ընդէ՞ր ո՛չ յայտնեաց Տէր մեր, թէ ո՞վ մերձեցաւ ի նա, զի վկայ լիցի<sup>4</sup> այն, որ բժշկեցաւն:

Զի գաւրութիւն ել յինէն (Ը 46):

Յայտնեաց Յիսուս զգաւրութիւն իւր, որ բժշկեաց զնա ի ծածուկ: Ո՛չ ինքն վկայեաց վասն անձին իւրոյ, զի ի մէջ թշնամեաց կայր: Մնաց, զի գործքն եղիցին իւր քարոզ<sup>5</sup>:

Իբրև ետես կինն, եթէ ո՛չ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով, պատմեաց<sup>6</sup> առաջի ամենեցուն<sup>7</sup> (Ը 47):

106ք ԿԲ Որպէս բժշկութեանն<sup>8</sup> հաւատաց, զոր ծածկաբար խորհեցաւ, // այսպէս և՛ գիտութիւնն<sup>9</sup> Քրիստոսի:

Քաջալերեաց, դո՛ւստր<sup>10</sup> (Ը 48):

Որպէս յայնժամ ցանդամալոյծն ասէր. «Քաջալերեաց, որդեա՛կ» (հմմտ. Մարկ. Ժ 49): Քանզի զարհուրեալ էր կինն, վասն այնորիկ<sup>11</sup> քաջալերեաց զնա ի հաւատս:

Հաւատք քո կեցուց[ին] զքեզ<sup>12</sup> (Ը 48):

Կր.(ոսկի.) Գովէր զհաւատս կնոջն և այնու խրատէ՝ տալով համարձակութիւն արտաժէտացն և մեղաւորացն մերձենալ ի նա հաւատով որպէս կինն:

<sup>1</sup> B հոսէր

<sup>2</sup> B նախ ինքն *փխ* ախտիւքն

<sup>3</sup> B զի նախ

<sup>4</sup> B է

<sup>5</sup> B բառի վրա ունի լուսանցային սրբագրում. «Դարձեալ. վասն այնորիկ յայտնեաց զգաղտնիս նորա, զի մի՛ վնասեցէ հոգւով, որ առողջացաւ մարմնով, զի թէ ոչ էր յայտնեալ, հաւատով եկն՝ անհաւատութեամբ դառնայր, թէ ոչ է ծածկազէտ»:

<sup>6</sup> B և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա, պատմեաց

<sup>7</sup> B ամենայն ժողովրդեանն և թէ որպէ՞ս բժշկեցաւ առժամայն

<sup>8</sup> B բժշկութեամբ

<sup>9</sup> B գիտութեանն

<sup>10</sup> B Եւ ասէ ցնա. Քաջալերեաց դոստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն:

<sup>11</sup> B այսորիկ

<sup>12</sup> B *չիք* Հաւատք... զքեզ

**Գա՛ ոմն՝ ի տանէն ժողովրդապետին և ասէ. Մեռաւ դուստրն քո՛<sup>1</sup> (Ը 49):**

*Զի մի՛ կարծիք՝ ինչ լիցի յարութեանն՝<sup>2</sup>: Վասն այնորիկ՝<sup>4</sup> մեղմով երթայր և խաւսէր ընդ նոսա՛<sup>5</sup>:*

**Իսկ Յիսուս իբրև լուաւ՝ ասէ՛<sup>6</sup>. Մի՛ երկնչիր, այլ՝<sup>7</sup> հաւատայ՝<sup>8</sup> (Ը 50):**

**Իգ.** *Զի ուսցիս, թէ որպիսի՞<sup>9</sup> հաւատս արժանի՞<sup>9</sup> է ընձեռել՝<sup>10</sup>:*

**Եւ մտեալ ի տունն՝ ո՛չ զոք եթող՝<sup>11</sup>, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս և զհայր մանկանն և զմայր՝<sup>12</sup> (Ը 51):**

**Ոկ.(իգ.)** *Զի մի՛ ասիցեն, եթէ այլազգ յարոյց զմանուկն և ո՛չ հրամանաւ:*

**Լային և կոծէին զնա՛<sup>13</sup> (Ը 52):**

*Զի կոծողք և փողահարք մտեալ էին ի տունն և ամբոխք բազումք:*

**Յիսուս ասէ. Ո՛չ է մեռեալ, այլ ն[ն]ջէ՛<sup>14</sup> (Ը 52):**

*Յառաջ քան զգնալն՝<sup>15</sup> յարոյց Բանիւ՝ և՛<sup>16</sup> ասելով. «Ո՛չ է մեռեալ»: Դարձեալ. զի իբրև ի քնոյ զարթուցանելոց էր զնա:*

**Կալաւ զձեռանէ նորա և յարոյց զնա և ասէ. Արի՛ կաց, մանո՛ւկ դու: Եւ դարձաւ ոգի նորա ի նմա՛<sup>17</sup> (Ը 55-56):**

<sup>1</sup> Եւ մինչ զեռ նա խաւսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զգա:

<sup>2</sup> Ե կարծիք

<sup>3</sup> Ե յարութիւնն

<sup>4</sup> Ե այսորիկ

<sup>5</sup> Ե կնոջն

<sup>6</sup> Ե պատասխանի ետ նմա և ասէ

<sup>7</sup> Ե միայն

<sup>8</sup> Ե հաւատայ և կեցցէ

<sup>9</sup> Ե Քրիստոսի արժան

<sup>10</sup> Ե նախ՝ ընձառել, ապա դարձրած՝ ընձայել

<sup>11</sup> Ե եթող մտանել

<sup>12</sup> Ե զմայր նորա, լային ամենեքեան և կոծէին զնա

<sup>13</sup> Ե լային... զնա՝ գրված է ստորին լս.

<sup>14</sup> Ե եւ նա ասէ. Մի՛ լայք, զի չէ մեռեալ, այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի զիտէին, թէ մեռաւ:

<sup>15</sup> Ե զգալն

<sup>16</sup> Ե չիք և

<sup>17</sup> Ե եւ նորա, հանեալ զամենեսեան արտաքս, կալաւ զձեռանէ նորա, բարբառեցաւ և ասէ. Արի՛ կաց, մանո՛ւկ դու: Եւ դարձաւ ոգի նորա և կանգնեցաւ վաղվաղակի, և հրամայեաց տալ նմա ուտել: Եւ զարմացան ծնողքն նորա, և նա պատուիրէր մի՛

US Ո՛չ այլ հոգի արկ է մարմինն, այլ զնոյն անդրէն դարձուցա-  
նէր:

**Եւ հրամայեաց տալ նմա ուտել (Ը 56):**

*Զի հաստատուն լիցի իրսն տեսողացն: Վասն այնորիկ կերա-  
կուր հրամայէր<sup>1</sup> տալ նմա, զի<sup>2</sup> մի՛ առաջաւք ինչ կարծիցի[ն]:*

---

ուտեք ասել, որ ինչ եղևն:

<sup>1</sup> B հրամայէ

<sup>2</sup> B և զի

## Գլուխ Թ

**Կոչեաց զառաքեալսն և ետ նոցա զաւրութիւն ի վերայ դիւաց<sup>1</sup>**

(Թ 1):

*Հալածել ի մարդկանէ:*

Ի գ. *Զի միմիայն նա, այլև անուն նորա զաւրասցի առնել նշանս յատուկ որպէս Աստուած:*

**107ա // Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ<sup>2</sup>**

(Թ 2):

*Պատուէր տայ ուսուցանել և որպէս պարտ է<sup>3</sup> սպասաւորաց Բանին, զի նախ՝ մերկասցին յամենայնէ և<sup>4</sup> ապա՝ քարոզ լիցին արքայութեանն:*

**Մի՛ գաւազան<sup>5</sup>** (Թ 3):

ԵՓ «Գաւազան[ն]» նշանակ է ուղղութեան և խոնարհութեան: Եւ զի ո՛չ ցուպս, զի ո՛չ ի հաւտս կատաղիս ելին արածել նոքա: Որպէս Մովսէս, որ հաւտն ի վերայ հովուին թշուառեցաւ<sup>6</sup>, թողաւ ցուպն և առաւ սուսեր<sup>7</sup>, իսկ աստ՝ հաւտն ի խաղաղութեան բնակեալ: Վասն այնորիկ առաւ գաւազան, զի<sup>8</sup> Մովսէս երեք անուամբ՝ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ զԱստուած հաշտեցոյց ընդ որդիսն անաւրէն, որչա՞փ ևս առաւել երեք<sup>9</sup> Աստուածութիւնն քաւեսցէ զամենայն ազգս Ադամայ: ԶՄովսէս ի նմանութիւն ետ նոցա, զի նա զոսկերս արդարոցն ընդ իւր կրէր<sup>10</sup>, և սոքա՝ զմարմին արդարացուցչին ամենայն մարդկան:

**Մի՛ մախաղ, մի՛ հաց, մի՛ երկուս հանդերձս** (Թ 3):

<sup>1</sup> Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն՝ ետ նոցա զաւրութիւն և իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց, և բժշկել զհիւանդութիւնս:

<sup>2</sup> Եւ Աստուծոյ և բժշկել զախտաժէտս

<sup>3</sup> Եւ էր

<sup>4</sup> Եւ **չէք** և

<sup>5</sup> Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ, մի՛ գաւազան և մի՛ մախաղ, մի՛ հաց և մի՛ արծաթ:

<sup>6</sup> Եւ թշուառացաւ

<sup>7</sup> Եւ սուրն

<sup>8</sup> Եւ զի եթէ

<sup>9</sup> Եւ երեք անձնեայ

<sup>10</sup> Եւ արդարոյն կրէր ընդ իւր

ՈԿ Ի գլուխ առաքինութեան կամեցաւ հանել զնոսա, քանզի ամենայն տիեզերաց առաքէր<sup>1</sup> զնոսա վարդապետս, և իբրև զհրեշտակս ի մարդկանէ կամի յարդարել զնոսա, և յանհոգս<sup>2</sup> յամենայն երկրաւորացս և կատարեալս:

Մի' արծաթ (Թ 3):

ԵՓ Զի մի' գտանիցի ի նոսա Յուդայ, զի նա պակասեցոյց զԱքար ի կենաց և զԳեհեզի<sup>3</sup> բորոտեցոյց (տե'ս Դ Թագ. Ե 21-27) և զամենայն ժողովուրդն յանցոյց յանապատին, զարծաթն<sup>4</sup> արգել ի նո-

107բ ցանէ, զի մի ոք // կարծէ վաճառականս և ո'չ քարոզողս<sup>5</sup>:

ՍՏ Եւ զի առաքելական ճանապարհն ո'չ կարաւտանայ աշխարհական ոսկոյ և արծաթոյ:

Յոր<sup>6</sup> տուն մտանիցէք, անդ ազջիք և անդի<sup>7</sup> գնացէք (Թ 4):

ՈԿ Զի մի' զասպնջականն տրտմեցուցանիցէք<sup>8</sup> որկորստութեան պատճառաւ: Եւ<sup>9</sup> ասասջիք զփոշի, որ կռեալ<sup>10</sup> ի մեզ ի քաղաքէս<sup>11</sup> ձերմէ, թափթափեմք<sup>12</sup> ի ձեզ: Վասնզի ո'չ ընկալայք զքարոզութիւնս<sup>13</sup> մեր, անպարտ եմք:

Ստ. Եւ զփոշիտ, հեղեալ ի մեզ զմեզս և զանաւր[էն]ութիւն վարդապետաց քաղաքիտ ձերոյ<sup>14</sup>, թափթափեմք<sup>15</sup> ի ձեզ: Իսկ ոտս<sup>16</sup> ինձ թուի, թէ զվերջին տկար զաւրութիւն Հոգւոյն նշանակէ, ուստի և Քրիստոս զոտս աշակերտացն լուանայր և ո'չ զձեռս և<sup>17</sup> զգլուխս: Այլև զաղտ, որ կռուեալ է ի նոցանէ, զվատթարագոյն զաւրութիւն<sup>18</sup> նոցա, որ կա'մ ի կերակրոց,

---

<sup>1</sup> B առաքելոց էր  
<sup>2</sup> B անհոգս  
<sup>3</sup> B զԳեհեզի  
<sup>4</sup> B և կամ վասն այն զարծաթն  
<sup>5</sup> B սրբ.՝ քարոզք  
<sup>6</sup> B եւ յոր  
<sup>7</sup> B անտի  
<sup>8</sup> B տրտմեցուցանէք  
<sup>9</sup> B Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յամենայնէ, զփոշի ոտից ձերոց թաւթափեսջիք ի վկայութիւն նոցա (Թ 5): Եւ  
<sup>10</sup> B թէ զփոշիս որ կռեալ է  
<sup>11</sup> B քաղաքէս  
<sup>12</sup> B թաւթափեմք  
<sup>13</sup> B զքարոզութիւն  
<sup>14</sup> B ձերոց  
<sup>15</sup> B թաւթափեմք  
<sup>16</sup> B սրբ.՝ աստ  
<sup>17</sup> B և ոչ  
<sup>18</sup> B զաւրութիւնս

կա՛մ<sup>1</sup> յայլ ինչ գործոց հակառակութեան, կա՛մ տրտմութեան, զի արբեալք ելանիցէք: Եւ նոքա որպէս անարժանք մի՛ աւգտեսցեն<sup>2</sup>, այլ վրէժս տայցեն<sup>3</sup>:

**Շրջէին ընդ քաղաքս և ընդ գեւղս աւետարանել զարքայութիւնն<sup>4</sup> (Թ 6):**

ՅՀ. Տեսանե՞ս զառաքելական սպասաւորութեանն պատիւ: Զի ո՛չ նման Մովսիսի և մարգարէիցն մարմնաւորս հրամայէ նոցա, զի նոքա գերկրի բարութիւն<sup>5</sup> քարոզէին, իսկ սոքա<sup>6</sup>՝ նոր իմն և չքնաղ զարքայութիւն և, որ ինչ անդէն<sup>7</sup>, երանութիւնք:

108ա // Լուաւ Հերովդէս չոր[ը]որդապետ զգործսն Յիսուսի<sup>8</sup> (Թ 7):

յՀ. Քանզի թագաւորն Հերովդէս, որ զմանկունսն կոտորեաց, սորա հայրն մեռեալ էր: Եւ զի ուսանիցիս զհպարտութիւն իշխանին, զի յառաջնումն ո՛չ կամեցաւ լսել զգործս նորա, այլ ՝ ի<sup>9</sup> յետ բազում ժամանակաց: Զի այնպիսի են իշխանք հպարտութեամբն զգաձեալք, անագան ուսանէին զկարևոր իրսն վասն անփոյթ առնելոյ:

**Վասն ասելոյն յոմանց, թէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, և ոմանց, թէ Եղիայ է<sup>10</sup> (Թ 7-8):**

ԻԳ. Իսկ յորժամ վասն նշանացն սկսան ասել, եթէ Եղիայ կամ այլ ոք ի մարգարէից անտի յարուցեալ է, ապա և ինքն իսկ Հերովդէս ցանկայր տեսանել զնա:

**Յետ այսորիկ առաքելովքն գայ ի Բեղսայիղա (հմմտ. Թ 10):**

<sup>1</sup> Եւ կամ

<sup>2</sup> Եւ աւգտեսցին

<sup>3</sup> Եւ տայցեն

<sup>4</sup> Եւ ելեալ՝ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեւղս, աւետարանէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս

<sup>5</sup> Եւ բարութիւնս

<sup>6</sup> Եւ նոքա

<sup>7</sup> Եւ անկ են

<sup>8</sup> Եւ ամենայն և զարմանայր *փի* Յիսուսի

<sup>9</sup> Եւ *չէք* ի

<sup>10</sup> Եւ Վասն ասելոյն յոմանց, եթէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, և յոմանց եթէ Եղիայ յայտնեցաւ և յայլոց, եթէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ: Ասէ Հերովդէս. ԶՅովհաննէս ես գլխատեցի, իսկ սա ո՞վ իցէ, զորմէ զայսպիսի իրս լսեմ: Եւ խնդրէր տեսանել զնա: Դարձան առաքեալքն և պատմեցին նմա զամենայն, զոր արարին: Եւ առեալ զնոսա՝ խոսեաց առանձինն ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիղա (Թ 7-10):



Եւ ժողովուրդքն գնային զհետ նորա, և խաւսէր ընդ նոսա վասն արքայութեանն [Աստուծոյ]<sup>1</sup> (Թ 11):

**ԻԳ** Ժողովուրդքն<sup>2</sup> ուրախացան ի բանս նորա և հիացեալ էին վասն սքանչելեացն և զաւրութեանցն, զոր առնէր:

**ՅՀ** Բայց ժողովուրդն իբրև բեռեալ էին ընդ նմա և երթային զհետ նորա: Զի սէրն ամենայնի յաղթէ և զամենայն դանդաճանդան<sup>3</sup> ի բաց փարատէ: Վասն որոյ և զհատուցումն անդրէն առնուին:

Եւ աւրն սկսաւ տարածամել, մատեան երկոտասանքն և ասեն<sup>4</sup>. Արձակեա՛ զժողովուրդդ<sup>5</sup> (Թ 12):

**108բ** Զի մինչև ցերեկոյն վարդապետութեամբ զհոգիս նոցա կերակրեաց, // իսկ մարմնաւոր առողջութեան նոցա ոչինչ արար փոյթ: Քանզի իւրաքանչիւր ոք յախտածէտացն<sup>6</sup> ո՛չ էին բժշկեալ, զի թէ բժշկեալ էին, ինքեանք խնդրէին զաւթեմանն<sup>7</sup>:

Արձակեայ զժողովուրդսդ, զի երթիցեն շուրջ ի գեւղս և յագարակս, և գտցեն կերակուր<sup>8</sup> (Թ 12):

Իսկ աշակերտքն, թէպէտև վասն հացի յուշ արարին, այլև զբժշկութիւն ախտածէտացն խնդրէին:

**Զի յանապատ տեղոջ եմք** (Թ 12):

Թէպէտ<sup>9</sup> և տեղիս անապատ է, այլ, որ զամենայն աշխարհս կերակրէ, աստ է: Վասն<sup>10</sup> այնորիկ յանապատն հանէր, զի առանց կարծեաց լինիցին սքանչելիքն:

**Ասէ ցնոսա Յիսուս. Դուք տուք նոցա ուտել** (Թ 13):

Կամէր կերակրել զնոսա: Եւ ո՛չ անձամբ ինչ առնէր, այլ անսայ աղաչել: Զի մի՛ կարծեսցին, եթէ յառաջ երթայ սքանչե-

<sup>1</sup> B Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին զհետ նորա և ընկալեալ խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր:

<sup>2</sup> B ժողովուրդն

<sup>3</sup> A դանդաճանդանդան

<sup>4</sup> B ասեն ցնա

<sup>5</sup> B զժողովուրդսդ

<sup>6</sup> A, B ի յախտածէտացն

<sup>7</sup> A գաւթեմանն

<sup>8</sup> B Զի երթեալ շուրջ ի գեւղսն և յագարակս, հանգրիցեն և գտցեն կերակուր:

<sup>9</sup> B Զքանզի, ո՛վ դուք գի՞նչ ասէք, թէպէտ

<sup>10</sup> B այլ վասն

լեացն: Զի դեռևս իբր<sup>1</sup> ի մարդ հայէին ի նա և իբրև ընդ<sup>2</sup> մարդ խաւսէին ընդ նա և ո՛չ ընդոստնուն: Եւ նորա ասեն. Ոչինչ ունիմք քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս<sup>3</sup> (Թ 13):

**ՍՏ** Քանզի ափշեալ էին միտք նոցա և ընդ երկիր քարչէին: Իսկ Յովհաննէս գարեղէն ասէ զնկանակն (տե՛ս Յովհ. Զ 9, 13): Այնպիսի էին և մարգարէիցն սեղանքն<sup>4</sup>: Եւ աստ ուսուցանէ զմեզ արհամարհել զբազում խորտիկս:

**Ասէ. Բազմեցուցէ՛ք զդոսա դասս դասս: Եւ առեալ զնկանակսն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս<sup>5</sup> (Թ 14, 16):**

**109ա** Զի պարտ էր նմա հաւատարիմ լինել, թէ Հաւր զուգական<sup>6</sup> է և ի նմանէ ծն(//)եալ, և զծնաւղն պատուեսցէ:

**ԵՓ** Եւ<sup>7</sup> յական թաւթափելն՝ զհացն բազմացոյց, զի զոր տասն ամիսք աշխատութեամբք առնեն, տասն մատունքն նորա արարին վաղվաղակի: Եդ զձեռն իւր ի ներքոյ հացին որպէս զերկիր, և խաւսեցաւ ի վերայ նորա որպէս զորոտումն: Եւ ի շարժել շրթանցն՝ ցանեաց ի վերայ նորա իբրև անձրև<sup>8</sup>: Եւ շոգ ի բերանոյ նորա՝ ի տեղիս արևոյ, և պսակեալ կատարեաց<sup>9</sup> սրբութեամբ:

**Աւրհնեաց, երեկ և տայ<sup>10</sup> ցաշակերտսն (Թ 16):**

Արդ՝ հացն ի մէջ սակաւութեան ծնանէր: Զի ծանեաւ, եթէ նա է աւրհնիչն առաջին, որ ասաց. «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր» (ԾԱՆԴ. Ա 28): Զի նկանակքն իբրև զամուլ բազմացան աւրհնութեամբ նորա:

**Արկանէին ժողովրդեանն<sup>11</sup> (Թ 16):**

<sup>1</sup> Ե իբրև

<sup>2</sup> Ե ի

<sup>3</sup> Ե Եւ նորա ասեն. Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս, բայց եթէ երթիցուք զնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր: Քանզի էին արք իբրև հինգ հազար (Թ 13-14):

<sup>4</sup> Ե սեղան

<sup>5</sup> Ե Ասէ ցաշակերտսն. Բազմեցուցէք զդոսա դասս դասս յիսուն յիսուն: Եւ արարին այնպէս և բազմացուցին զամենեսեան: Եւ առեալ զհինգ նկանակն և զերկունս ձկունս հայեցաւ յերկինս:

<sup>6</sup> Ե հաւատար

<sup>7</sup> Ե և նա

<sup>8</sup> Ե զանձրեւ

<sup>9</sup> Ե կատարեալ

<sup>10</sup> Ե տայր

<sup>11</sup> Ե ժողովրդեան

Իբրև մատեալ Շմալոն առնուլ, կարծեաց, եթէ իւր բաւական իցէ: Եւ բազուկքն լի անթաւքն տանէր և ի ձեռացն ո՛չ պակասէր աճելովն: Եւ ի մէջ բազկաց նոցա բազմանայր ի բերանոյ Որդոյն Աստուծոյ:

**Կերան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սակաւի (Թ 17):**

Լի ի հինգ հազարացն:

Արդ՝ կռեցաւ արուեստ նորա քաղցրութեամբ ընդ հազարացն, և յաղթեցին երկոտասան թիւն ամենեցուն: Ո՛չ եթէ որչափ կարաւտեալք յագեցան, այնչափ կարէ առնել արուեստագէտն, քանզի զաւրութիւն արուեստին անբաւ է քան զկարաւտեալս: Ո՛չ միայն երկոտասանքն կրէին զնշխար[հ]ս<sup>1</sup> հացին, այլև եւթանասունքն: Արդ՝ անուշ էր հացն իբրև զմանանայն յանապատին:

**109ք** // Նաև մանանայն այգուցն ապականէր, և նա որքան ընդ երկարէր, անուշանայր: Նշխար[հ] բարձին, զի մի՛ կարծիցի<sup>2</sup>, թէ առաջաւք արար: Զի, յորժամ պահեսցի զմի աւր և զերկուս, հաւատասցեն, եթէ ճշմարտութեամբ արար:

**ԻԳ** Յիշատակ սքանչելեացն և յանդիմանութիւն<sup>3</sup> չարին, որ հայցէր զքարինսն հաց լինել: Զի մի՛ ոք տկարասցի, թէ ո՛չ ետ զցանկութիւն մեղաւորին: Արդ՝ հաւանեցուցանէ զքեզ հացիւն և ջրովն, զոր փոխեաց ի գինի ի մէջ թակուկացն:

**Հարցանէ ընդ աշակերտսն. Զո՞վ ոք ասեն ժողովուրդն, թէ իցեմ (Թ 18):**

**Ստ.** Ո՛չ զձեզ վասն գաղտնեացն հարցանեմ, այլ, որ երևիմս ձեզ, ասացէք ինձ, զի հաւատացից ձեզ վասն ծածկութիցն: Իսկ արդ՝ Տէր, մի՞թէ դու ո՛չ գիտես զմիտս և զխորհուրդս մարդկան, որ քննիչդ<sup>4</sup> ես ամենայն խորհրդոց և ոչինչ է քեզ աներևոյթ, և որ գիտեսդ<sup>5</sup>, որ ինչ յապագայն գալոց է:

**Ասեն<sup>6</sup>. ԶՅովհաննէս Մկր[տիչ] (Թ 19):**

<sup>1</sup> A, B գնշխարս (այսուհետ չենք նշում)

<sup>2</sup> B կարծիցեն

<sup>3</sup> B սրբ.՝ ի յանդիմանութիւն

<sup>4</sup> B քննիչս

<sup>5</sup> B գիտեսս

<sup>6</sup> B Եւ եղև ի կալն նորա յաղաւթս առանձինն, էին ընդ նմա և աշակերտքն նորա: Եհարց զնոսա և ասէ. Զո՞ ոք ասեն զյինէն ժողովուրդքն թէ իցեմ: Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն

*Բանք արժանի պիտոյ էին, այլ ո՛չ գովէին:*

**ԵՓ** *Զի տեսողք նշանացն<sup>1</sup> ո՛չ եղեն բաւական միահաւասար թարգմանել զմեծութիւն նորա, այլ նմանեցուցանէին զնա Յովհաննու վասն նորոգութեան մկրտութեանն և սքանչելի ծննդեան նորա:*

**ԵԼ** *այլք՝ զԵղիայ (Թ 19):*

*Վասն նախանձու տան Հաւր իւրոյ:*

**Իսկ** *այլք, թէ՛ մարգարէ<sup>2</sup> (Թ 19):*

*Նմանեցուցանէին Երեմիայի վասն սրբութեանն յորովայնէ:*

**110ա** // *Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն<sup>3</sup> (Թ 20):*

**ՈԿ.** *«Դուք» ասելովն՝ նշանակէ, զի հարցուածոյ նշանովն ելցեն ի մեծ միտս և մի՛ ի նմին խոնարհութեան կայցեն<sup>4</sup> որպէս բազումք: Վասն այսորիկ<sup>5</sup> ո՛չ ի սկզբան քարոզութեանն հարցանէր, այլ յորժամ բազում նշանս արար և վասն բարձրագոյն կրաւնիցն խաւսեցաւ:*

**Պատասխանի ետ Պետրոս և ասէ. [Զ]Քրիստոսն Աստուծոյ (Թ 20):**

*Ապա Շմաւոն՝ գլուխ[ն], զգլխաւոր բանն խաւսեցաւ՝ ձեռներեց եղեալ ի պատասխանիս:*

**ՍՏ** *Տեսանե՞ս, զի վասն աստուածութեանն էր հարցուածն<sup>6</sup>: Եւ Պետրոս երևելի մարմնովն զաներևոյթ աստուածութիւնն խոստովանեցաւ միացեալ ի մարմնի: Եւ Յիսուս ասէ ցնա. «Երանի է քեզ, Սիմոն» (Մատթ. ԺԶ 17): Արդ՝ որովհետև զիս, որ երևիմս, յառաջ քան զյաւիտեանս իմացար և Աստուած ի սկզբանէ անուանեցեր և զխորհուրդս տեսչութեան իմոյ ծանեար իմաստութեամբ և զկերպարանս ծառայի Աստուած խոստովանեցար: Ընկալ և դու գերանական բարբառոյն պատիւն:*

**Նա սաստեաց ի նոսա<sup>7</sup>. Մի՛ ումեք ասել զայն (Թ 21):**

<sup>1</sup> Ե տեսանողքն նշանաց նորա

<sup>2</sup> Ե մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ

<sup>3</sup> Ե զյինէն թէ իցիմ

<sup>4</sup> Ե կացցեն

<sup>5</sup> Ե այնորիկ

<sup>6</sup> Ե նախ հարցուածն, ապա սրբազրած՝ հայցուածն

<sup>7</sup> Ե զնոսա և պատուիրեաց

**ԿՐ** Եւ է՞ր վասն պատուիրեաց: Ծածկել<sup>1</sup> կամէր զիւր աստուածա-  
կան<sup>2</sup> մեծութիւնն, և յայտնէ զայն, եթէ պարտ է նմա չարչարել:  
Եւ յետ այնորիկ համարձակութեամբ ի բառնալ զչարչարանս  
խաչին, և վասն անուան նորա ի քարոզել յայտնապէս զաստուա-  
ծութիւն նորա:

**ՍՏ** Եւ զի մի՛ դայթագղեսցին բազումք՝ ասելով. «Զիա՞րդ իցէ սա  
110բ Քրիստոս, որ ո՛չ // կատարեաց զամենայն բանս<sup>3</sup> մարգարէիցն»:

**Պարտ է Որդոյ մարդոյ մատնել**<sup>4</sup> (Թ 22):

**ԻԳ** Ընդէ՞ր յաճախ Որդի մարդոյ զնէ: Զի մի՛ մարմնոյն բանք  
ինչ կարծիւք լինիցի, յորժամ յայնպիսի փառսն տեսանեմք: Հաս-  
տատեաց, եթէ նա է ստուգիւ, որ առաւ յԱղամայ բնութենէս: Եւ  
Աստուած է հաւասար ծնաւդին, որ միացաւ ի մարմնի: Այլև կա-  
մի, զի մի՛ ոք տկարացի վասն մարմնոյն խառնման ընդ աս-  
տուածութեանն, և համարձակութեամբ դաւանեսցեն զնա Աս-  
տուած և դատաւոր ամենայն ազգաց: Վասն այսորիկ ի բազում  
տեղիս Որդի մարդոյ կոչէ. «Տեսանիցէք զՈրդի մարդոյ» (Մատթ. ԻԶ  
64, Մարկ. ԺԴ 62), զի ելանիցէ ուր էրն զառաջինն, և «Ո՛չ ոք ել յեր-  
կինս, եթէ ո՛չ որ էջն յերկնից<sup>5</sup> Որդի մարդոյ, որ էն յերկինս»  
(Յովհ. Գ 13):

**Չարչարել**<sup>6</sup> ի քահանայից և ի ծերոց և ի դպրաց, և սպանանել<sup>7</sup>  
(Թ 22):

**Ոկ. (Իգ.)** Աստուած էր մարմինն, որ կրէր զչարչարանսն, և անմահ էր  
աստուածութիւնն, որ զգեցաւ զմարմինն: Աստուածութիւնն  
զմարմինն աստուածացոյց: Արդ՝ հաւասար միաւորեալ ընդ Բա-  
նին, որպէսզի այնու մեռանիցի և թաղեսցի վասն մեր: Եւ նոյն  
աստուածութեամբն յարիցէ, զի անմեկնելի էր Բանն ի մարմնոյն  
ի վերայ խաչին և ի գերեզմանին: Եւ ո՛չ ապականութիւն հասու  
եղև մարմնոյն:

**Եւ յերիւր**<sup>8</sup> յաւուր<sup>9</sup> յառնել (Թ 22):

<sup>1</sup> A ծածկեալ  
<sup>2</sup> B աստուածապաշտական  
<sup>3</sup> B զբանս *փխ* զամենայն բանս  
<sup>4</sup> B Եւ ասէ, թէ պարտ է Որդոյ մարդոյ բազում չարչարել և անարգել  
<sup>5</sup> B *չիք* որ էջն յերկնից  
<sup>6</sup> B *չիք* չարչարել  
<sup>7</sup> B սպանանել և յերիւր աւուր յառնել  
<sup>8</sup> A յերիւր  
<sup>9</sup> B աւուր

*Զի Աստուած էր անապական և ո՛չ մահանայր անմահ Բանն: Քանզի անմահ էր<sup>1</sup>, և նա<sup>2</sup> ինքն զինքն յարոյց ի մեռելոց, որ կա-*

*11ա մաւ մեռաւ, և // մնաց անմահ<sup>3</sup> աստուածութիւնն: Եւ<sup>4</sup> համբար-  
ձաւ յերկինս նովին մարմնով[ն], զոր էառ, և նոյն հանդերձեալ է  
գալ` [ի] դատել զկենդանիս և զմեռեալս:*

**Եթէ ոք կամի գալ զկնի իմ<sup>5</sup> (Թ 23):**

**ՈԿ** *Մի՛ գայս և եթ համարես ջիք զկնի իմ գալ<sup>6</sup>, որ այժմ անկեալ<sup>7</sup>  
գայք, այլ բազում վաստակոց և ճգանց պէտք են: Եթէ այր իցէ,  
եթէ կին, եթէ իշխանութեամբ` ընդ այն ճանապարհ եկեսցէ`*

**Ուրասցի զանձն (Թ 23):**

*Այն իսկ է, զի ո՛չ խնայեսցեմք ի մարմինս մեր: Թէպէտև  
տանջեսցեն կամ հալածեսցեն և կամ այրեսցեն, մի՛ խնայեսցուք  
ի չարչարանաց որպէս գայլոց<sup>8</sup> մարմին:*

**Ստ.** *Զի, որ մերկանայ զՀին մարդն, զինքն ուրանայ: Ըստ Պաւղոս-  
սի. «Կենդանի եմ ես, ո՛չ ես, այլ կենդանի է<sup>9</sup> յիս Քրիստոս» (Գա-  
ղատ. Բ 20):*

**Առցէ<sup>10</sup> զխաչ իւր<sup>11</sup> և եկեսցէ զկնի<sup>12</sup> իմ (Թ 23):**

**ստ.** *Զնախատանաց իրս մահու չափ ասէ և զնախատանաց խաչի:  
Ըստ առաքելոյն. «Ինձ, ասէ<sup>13</sup>, աշխարհ ի խաչ ելեալ է, և ես` աշ-  
խարհի» (Գաղատ. Զ 14):*

**Որ կամի զանձն իւր կորուսանել` կեցուցէ զնա, և որ կորուս-  
ցէ զանձն իւր վասն իմ` գտցէ զնա<sup>14</sup> (Թ 24):**

<sup>1</sup> B է

<sup>2</sup> B բնաւ *փիս* նա

<sup>3</sup> B *չիք* անմահ

<sup>4</sup> B *չիք* եւ

<sup>5</sup> B եւ ասէր առ ամենեսեան, եթէ ոք կամի զկնի իմ գալ:

<sup>6</sup> B *չիք* Մի գայս.. գալ

<sup>7</sup> B զկնի անկեալ

<sup>8</sup> B գայլոյ

<sup>9</sup> B *չիք* է

<sup>10</sup> B և առցէ

<sup>11</sup> B իւր հանապազ

<sup>12</sup> B զհետ

<sup>13</sup> B *չիք* ասէ

<sup>14</sup> B Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել` կորուցէ զնա, և որ կորուցէ զանձն իւր վասն իմ` կեցուցէ զնա:

**ԻԳ** Արդ՝ աստ կորուսանել և առ նմա գտանել պարտ է: Զի յիմարքն են, որ զմահկանացուէս<sup>1</sup> բուռն հարկանեն և ի մնացական ժառանգութեանց անդի<sup>2</sup> զրկեալք են. հրոյ և կորստեան գտանիցին ժառանգորդք:

**ԿՐ** Արդ՝ որ հրաժարէ ի չարչարանաց և ի մահուանէ և կարծէ կեցուցանել զանձն, յաւիտենական կորստեամբն կործանելոց է:  
**111ք** // Իսկ, որ մատնէ զանձն չարչարանաց և մահու, յաւիտենական կենաւքն կեցուցէ:

**Ջի՞նչ աւգուտ է մարդոյ, թէ՞<sup>3</sup> զաշխարհ շահե[ս]ցի<sup>4</sup>** (Թ 25):

Որ շահի զաշխարհս ամենայն, վնասէ զանձն իւր:

**Ստ.** Աշխարհ այժմ ո՛չ զբոլոր արարածս ասէ, քանզի ո՛չ մարթի շահել զաստեղս և զերկինս, այլ զերկրային իրացս<sup>5</sup> ասաց:

**ԿՐ** Կամ, որ աստ կեայ ուրացութեամբ, և զանձն իւր<sup>6</sup> կորուսանէ անհաւատութեամբ:

**Զի որ յամալթ համարի զբանս<sup>7</sup> իմ և զիս** (Թ 26):

Զի վասն հաւատոյ ճառեաց նոցա և զհամբերութիւն վարդապետեաց: Եւ ըստ կանխագիտութեանն իւրոյ դնէ զվարդապետութիւնն, որ խոնարհութեամբն իւրով դնեաց զարարածս: Քանզի ուրանալոց էին թերահաւատքն յառաքելական<sup>8</sup> քարոզութեանցն և ի կուսական ծննդենէն և կաթնասուն գոլով, և կամ նուաստագունաւքն<sup>9</sup> ասեմ զքաղցն, զծարաւն, զվաստակելն և զասելն զինքն մարդ և Որդի մարդոյ և մեծ քան զինքն զՀայր: Որ ամալթ համարին զայս ոմանք և ո՛չ խոստովանին զնա Աստուած և Որդի Աստուծոյ:

**Զնա<sup>10</sup> Որդի մարդոյ յամալթ արացէ** (Թ 26):

**ԻԳ** Արդ՝ մի՛ ոք նախատինս համարեսցի խաչելոյն երկիր պագանել, այլ պարծանս անձինն՝ զապտակն, զմերկանալն, զքղամիդն, զեղէզնն, զթուրն, զխաչն, զբեւեւսն, զգեղին, զնախատանաց

<sup>1</sup> B զապականացուէս

<sup>2</sup> B անտի

<sup>3</sup> B եթէ

<sup>4</sup> B զաշխարհս շահեսցի և զանձն իւր կորուցէ կամ տուժեսցի

<sup>5</sup> B իրաց

<sup>6</sup> B չէք իւր

<sup>7</sup> B զբանն

<sup>8</sup> A, B ի յառաքելական

<sup>9</sup> A նվաստագունաւքն B նուաստագունացն

<sup>10</sup> B Զնա և

**112ա** մահն: Ապա եթէ ոք զայս ամաւթ համարեսցի, // այսինքն՝ մարմնականաւք, որով զնոսա փրկեցի, որ ուրանայ զիս, զահագինն զնէ առաջի, եթէ յամաւթ արարից զնա<sup>1</sup>, յորժամ հայրենի փառաւքն ծագիցիմ:

**Յորժամ գայցէ փառաւք Հաւր Իւրոյ**<sup>2</sup> (Թ 26):

**ՅՀ** Տեսանե՞ս, զի մի են փառք Հաւր և Որդոյ: Զի<sup>3</sup> եթէ փառք մի են, ապա յայտ է, եթէ էութիւն մի իսկ են, զի ի<sup>4</sup> միում բնութեան ո՛չ այլևայլ փառք են: Եւ արդ՝ զի<sup>5</sup> երկնչիս, ո՛վ Պետրէ, յորժամ զմահուանէտ լուիցես, յայնժամ տեսանելոց ես<sup>5</sup> զիս փառաւք Հաւր իմոյ: Եւ եթէ ես ի փառս և դուք ի փառաւորութեան, զի ո՛չ յայսմ<sup>6</sup> աշխարհիս և եթ իցեն կեանք ձեր, այլ յառաւելագոյն[ն] փոխելոց էք<sup>7</sup>:

**Ասեմ ձեզ, զի թէ են ոմանք ի սոցանէ, որ աստ կան**<sup>8</sup> (Թ 27):

**Ստ.** Զիմաստնագոյն աշակերտան զՊետրոս և զՅակոբոս<sup>9</sup> և զՅովհաննէս, որ էին գլխաւորագոյնք:

**Որք մի՛ ճաշակե[ս]ցեն զմահ, մինչև տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ**<sup>10</sup> (Թ 27):

**Իգ.** Զի ո՛չ էին ճաշակելոց զմահ, մինչև տեսցեն զաւրինակ հանդերձեալ գալստեան նորա: Զի<sup>11</sup> յորժամ զամենայն ստեղծուածս ի մի վայր ժողովէ և ցուցանէ զինքն՝ աստուածային և բնական և արքայական փառաւքն եկեալ<sup>12</sup>:

**ԿՐ** Աստ արքայութիւն զերևումն փառացն ասաց:

**ՅՀ.** Արդ՝ ընդէ՞ր յառաջագոյն ասաց, զի կիրթք տեսլեանն լինիցին, և թոռով աւուրցն կարաւտանայցեն, և արթունք լինիցին ի

**112բ** միտ առնուլ զ(//)հոգ[ս] իրացն, զոր տեսանելոց էին: Զի արժան էր, որ զփականս երկնից ունէր աստեն տեսանել, զոր վստահանայր ունել:

<sup>1</sup> Բ զնոսա

<sup>2</sup> Բ Յորժամ գայցէ փառաւք Իւրովք և Հաւր և հրեշտակաց սրբոց:

<sup>3</sup> Բ և **փի** զի

<sup>4</sup> Բ **չիք** ի

<sup>5</sup> Բ տեսանիցես

<sup>6</sup> Ը ի յայսմ

<sup>7</sup> Բ ես

<sup>8</sup> Բ Բայց արդարև ասեմ եթէ են ոմանք ի ղոցանէ որ այդր կան:

<sup>9</sup> Բ աշակերտն Պետրոս և զՅակովբոս

<sup>10</sup> Բ զարքայութիւն Աստուծոյ **փի** զորդի... արքայութեամբ

<sup>11</sup> Բ տեղը բաց է թողնված

<sup>12</sup> Բ եկեալ «արքայութեամբ»



Եւ եղև յետ այսց<sup>1</sup> բանից իբրև աւուրք ութ (Թ 28):

**ԱՅԼ (ստ.)** Որ ունի զխորհուրդ ութերորդի յաւիտենին մուտ, յորում հանգուցանէ զամենայն վաստակաւորս իւր, յետ հինգերորդի<sup>2</sup> շրջագայ աւուրցս կենցաղոյս այսորիկ: Յանշրջելի և ի հաստատուն[ն], զոր Սողոմոն առակաւոր բանիւն ասէ, թէ՛ «Տուր բաժին<sup>3</sup> ի եւթնանց<sup>4</sup>»՝ կենցաղոյս այսմիկ, «այլև ութից» (ժող. ժԱ 2), այսինքն՝ հանդերձեալ յաւիտեանք<sup>5</sup>: Զի աւրն այն վերջին ո՛չ ի գիշեր փոխի: Ըստ Զաքարիայի մարգարէի, թէ՛ «Եղիցի<sup>6</sup> աւրն այն մի և Տէր մի և անուն նորա մի»: Զի ո՛չ ոք Տէր կեցուցանէ զկուռս կա՛մ զմամոնայս կա՛մ զայլ ինչ ախա՛ր ցանկութեան: Որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Եղիցի Աստուած ամենայն» (Ա Կորնթ. ԺԵ 28)՝ յաւիտեանս յաւիտենից:

**ԿՐ** Վասնզի [յ]ութերորդ դարուն գալոց է յաւուր միաշաբաթոջ, յորում արար սկիզբն արարածոց: Ի նմին աւուր գալոց է զգերեզմանս բանալ և նորոգել զմարդկութիւնս: Արդ՝ այս է խորհուրդ ութերորդ աւուրն, որ յայտնեաց զաստուածային փառացն երևումն ի Թաբոր<sup>8</sup> լերինն:

Առեալ զՊետրոս և զՅակոբոս<sup>9</sup> և զՅովհաննէս (Թ 28):

**113ա ՍՏ** Զի ի ժամանակի չարչարանացն, յորժամ աղաւթէր // զանցանել բաժակին առ ի մեր վարդապետութիւն, գերիսս զայս տանելոց էր: Զի, տեսանելով անդ զչարչարանաց իրս, ի միտ առցեն, եթէ սա է, զոր մարգարէքն քարոզէին զաստուածաբար երևումն: Ապա, ուրեմն, կամաւորապէս եկն ի չարչարանս և ո՛չ ի հարկէ:

**ԵՓ** Ընդէ՞ր ո՛չ տարաւ զամենայն աշակերտսն: Վասնզի ընդ նոսա էր Յուդայ աւտարացեալն յարքայութենէն, տանել<sup>10</sup> ո՛չ էր արժանի և միայն թողուլ ո՛չ էր աւրէն: Զի մարդկան իբրև զկատարեալ համարեալ էր վասն ընտրութեանն<sup>11</sup> Քրիստոսի, որ ընտրեաց<sup>12</sup> զնա, և ո՛չ էին յայտնեալ չարութիւն նորա: Բայց Քրիստոս գիտէր, եթէ նա է<sup>13</sup> մատնիչ նորա:

<sup>1</sup> B այս  
<sup>2</sup> B եւթներորդի  
<sup>3</sup> B բաժինս  
<sup>4</sup> B ի յեւթնանց  
<sup>5</sup> B յաւիտեանն  
<sup>6</sup> B եղիցին  
<sup>7</sup> B գալստ  
<sup>8</sup> A Թափոր B Թաբաւր  
<sup>9</sup> B զՅակովբոս  
<sup>10</sup> B տանելոյ  
<sup>11</sup> A ընդրութեանն  
<sup>12</sup> A ընդրեաց  
<sup>13</sup> B էր

**Ել ի լեառն կալ յաղաւթս** (Թ 28):

**ՍՏ** *Զի Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս արհամարհեցին զերևելի աշխարհս: Վասն այսորիկ ելին ընդ Քրիստոսի ի լեառն, զի և զհրաշագոյն զփառս տեսին զԲանին Աստուծոյ:*

**ՊՂ** *Եհան զնոսա ի լեառն զՆոր Կտակարանի պաշտանեայս՝ «Գրեալ ասրէնս ի սիրտս նոցա» (հմմտ. Երեմ. ԼԱ 33)՝ ըստ մարգարէին<sup>1</sup>, զի ասանդեսցեն եկեղեցոյ, զոր տեսին և հաստատեցին: Եւ զի Պետրոս դարձեալ լուիցէ, զոր Հայր իսաւսեցաւ նովաւ: Ականջաւքն լուիցէ, զոր պատմեաց լեզուաւն և աչաւքն տեսցէ, զոր հաւատայրն սրտիւ:*

**Եհան զնոսա ի լեառնն**<sup>2</sup> (հմմտ. Թ 28):

*Հաստատել զվէմն, զոր Հայր եդ հիմն Նոր Սիոնի, զծայր անկեան, զոր եդ // Որդի [ի] հիմն եկեղեցոյ: «Եհան ի լեառնն»<sup>3</sup>, զի դիցէ զվէմն ի վերայ գլխոյ նորա «եւթն աչեալ»<sup>4</sup> (Ձաք. Գ 9)՝ ըստ Զաքարիայ մարգարէին՝ նշանակելով զչնորհս<sup>5</sup> Սուրբ Հոգւոյն: Եւ<sup>6</sup> զի մի՛ ոք զհիմն քաղաքին երկնից, որ ի վերայ լերին[ն] շի- 15 · Ս. Կունդ, Մեկն. Դուկասու, և զի տեսցեն զփառս Որդոյն: Եւ վկայեսցէ Յովհաննէս, թէ «ճեսա՛ք զփառս նորա իբրև զՈրդոյ<sup>7</sup> Աստուծոյ» (հմմտ. Յովհ. Ա 14): Արդ՝ երեք սիւնքն եկեղեցոյ, յորոց վերայ հանգչի Երրորդութիւնն և<sup>8</sup> նախապատուե[ս]ցէ զվկայութիւն երիցն, քան զմիոյն Մովսիսի:*

**Եւ եղեն**<sup>9</sup> տեսիլ երեսաց նորա այլակերպ (Թ 29):

**ԿՐ** *Զաստուածահրաշ երևուամն ցուցանէ, զի ծանիցեն, եթէ ո՛չ ի հարկէ, այլ կամաւ կրէ զչարչարանս և զմահ, այլ և՛ վասն արարածոց փրկութեան: Եւ զի նոքա յանձն առցեն վասն նորա չարչարել՝ առ ի կեցուցանել զանձինս իւրեանց: Եւ դարձեալ. արեգակնակերպ երևուամն նշանակէր, եթէ նոյն պայծառութեամբ տեսանելոց եմք զնա, որպէս և են: Եւ նման նմա լինելոց եմք այսպիսի պայծառութեամբ [և] փառաւք:*

<sup>1</sup> Բ մարգարէին Երեմիայի. «Տա՛ց զասրէնս ի միտս նոցա և ի սիրտս նոցա զրեցից զնոսա» (Երեմ. ԼԱ 33):

<sup>2</sup> Բ լեառն

<sup>3</sup> Բ լեառն

<sup>4</sup> Բ աչաւք

<sup>5</sup> Բ զչնորհս ներգործութեան

<sup>6</sup> Բ չիք եւ

<sup>7</sup> Բ զՈրդոյ

<sup>8</sup> Բ սուրբ և

<sup>9</sup> Բ եղև

**ՍՏ** Արդ՝ երեսքն փայլէին պայծառութեամբ, ահաւոր գեղեցկութեամբ տեսլեան, զի սոսկալի Արեգակն արդարութեան այրել զգործս խաւարային<sup>1</sup> գիշերոյ և պայծառացուցանել զգործ[ս] աստուածային տունջեան:

**Փոխեցաւ Հանդերձ<sup>2</sup> նորա սպիտակ փայլուն** (Թ 29):

**Եփ. (ստ.)** **Ջի գիտասցեն, եթէ այն, որ փոխեաց զհանդերձն իւր, նոյն է,**  
**114ա** որ կենդանացուցանէ զմարմին[ն] իւր, զոր զգեցեալն էր: // **Ջի**  
**այն, որ ետ նմա զՀոգին և միացոյց ի փառս իւր անմատոյց, կարող է կեցուցանել զնա ի մահուանէ, յորմէ ամենայն մարմին ճաշակէր զնա:**

**Ստ.** **Դարձեալ. հանդերձն նշանակէր զառաքելական և զաւետարանական գիրս, որ աստուածաբանի և մեկնի ի միտս նոցա լուսազարդ բանիւք:**

**Եւ խաւսէին ընդ նմա Մովսէս և Եղիայ<sup>3</sup>** (Թ 30):

**ԵՓ** **Նոքա երկոքեանն չարչարեցան վասն Աստուծոյ: Վասն այնորիկ<sup>4</sup> սիրելիքն միմեանց երևեցան և սիրեցան ի Տեառնէ: Եւ Աստուած արար հաւասարութիւն անուանց նոցա ի միում վայրի. «Յիշեցէք, ասէ, զաւրէնսն Մովսիսի<sup>5</sup> ծառայի իմոյ» (Մաղաք. Դ 4), և «Ահաւասիկ առաքեմ առ ձեզ զԵղիայ Թեաբացի<sup>6</sup>» (Մաղաք. Դ 5): **Ջի<sup>7</sup> Աստուած՝ զմինն ի բարձանց և զմինն<sup>8</sup> ի խորոց, զի երկրորդեացէ առաջի Շմաւոնի, եթէ սպասեն նորա մարդեղութեանն յերկնից հրեշտակք և յերկրի<sup>9</sup> արդարք, և վկայեցեն Մովսէս[ի] աւրինաւքն և Եղիայ[ի] մարգարէիւքն Քրիստոսի մարդեղութեանն: Եւ Տէրն՝ ասելով ցորդիսն **Ջեբեթեայ<sup>10</sup>, թէ՛** «Որոց պատրաստեալ է ի Հաւրէի ի[մ]մէ» (Մատթ. Ի 23): **Վասն այսորիկ երևեցաւ Մովսէս ընդ աջմէ և Եղիայ ընդ ահեկէ: Այս, որ<sup>11</sup> ծանոյց զինքն աշակերտացն, և ա՛ծ զՄովսէս աւրինադիր և զԵղիայ նախանձախնդիր աւրինացն՝ [ի] յանդիմանութիւն և յամաւթ<sup>12</sup> հրէիցն, որ հակա-******

<sup>1</sup> Ե խաւարինս

<sup>2</sup> Ե Եւ փոխեցաւ Հանդերձն

<sup>3</sup> Ե Եւ ահա արք երկու խաւսէին ընդ նմա, որ էին Մովսէս և Եղիայ՝ երևեալ փառաւք:

<sup>4</sup> Ե այսորիկ

<sup>5</sup> Ե Մովսէսի

<sup>6</sup> Ե Թեաբացի

<sup>7</sup> Ե Եւ զի

<sup>8</sup> Ե զմիւսն

<sup>9</sup> Ե յերկիր

<sup>10</sup> Ե Ջեբեթեայ

<sup>11</sup> Ե այսաւր **փիւ** Այս որ

<sup>12</sup> Ե զրված է աջ լս. գրչի ձեռքով

ուակ Աստուծոյ և աւրինացն համարէին զնա գոլ, և յուսումն<sup>1</sup> առաքելոցն և նման նոցա հաւատալ և լինել:

**Երևեալ փառաւք** (Թ 31):

**114բ ՊՂ** Զի կենդանիք և մեռեալք առհաս(//)արակ յայտնելոց էին փառաւք յարքայութեանն<sup>2</sup>, ըստ երանելոյն<sup>3</sup> Մովսիսի և Եղիայի: Եւ զի ցուցցէ աշակերտաց իւրոց, եթէ ո՛չ միշտ ի վիշտս կայցեն, այլ անցանեն պատերազմունքն: Եւ նոքա փառաւք<sup>4</sup> ճոխասցին յարքայութեանն<sup>5</sup>: Եւ պատմեսցեն եկեղեցոյ, եթէ ո՛չ միայն Որդոյ են փառք յարքայութեանն, այլև զնոսա համապատիւս երևեցոյց անդ, զի կոյսք և ողջախոհք ուրախ լինելոց են ի փառս աստուածայինս:

Արդ՝ եկեղեցի ունի զխորհուրդ արքայութեանն, որ ընդունի զկոյսս և զողջախոհս: Նման այսորիկ Մովսիսի՝ Պետրոս, և Եղիայի՝ որդիքն Զեբեդեայ:

**Ասէին զելից**<sup>6</sup> նորա, զոր կատարելոց էր յԵրուսաղէմ (Թ 31):

**ՈԼ.** Վասն չարչարանացն և յարութեանն: Զի [ի] միտ առցեն աշակերտքն և մի՛ ինչ աւտար յանկարծադէպ համարեսցին, այլ յառաջագոյն մարգարէիւք գուշակել<sup>7</sup> զկամաւոր փրկագործութիւնն: Ըստ այնմ, թէ՛ «Հաւատարմացուսցէ զբան ծառայից իւրոց» (հմմտ. Գ Թագ. Ա 36): Զի աղերս արկանէին մարգարէքն զփրկութիւն աշխարհի աւարտել յԵրուսաղէմ, թէ՛ լցաւ բանք մարգարէիցն ի մարդեղութեան<sup>8</sup> քո, կատարեսցի փրկութիւն մարդկան [ի] խաչելութեամբ<sup>9</sup> քո:

**ՊՂ** Լսելի<sup>10</sup> արար Մովսիսիւ և Եղիայիւ զփրկութիւն իւր, զի լսելոց էին զհայհոյութիւնն Աննայի և Կայիափայ: Եւ զի մարգարէքն եկեալ աղաչէին, զի եկեալ կատարեսցէ զխորհուրդն, վասն որոյ եկեալ իսկ էր:

<sup>1</sup> B վասն յուսոյն *փիս* յուսումն

<sup>2</sup> B յարքայութիւնն

<sup>3</sup> B *չիք* երանելոյն

<sup>4</sup> B *չիք* փառաւք

<sup>5</sup> B յարքայութիւնն

<sup>6</sup> B Եւ ասէին զելիցն

<sup>7</sup> B գուշակեալ

<sup>8</sup> B մարդեղութիւնն

<sup>9</sup> B խաչելութեան

<sup>10</sup> B կամ լսելի

**115ա ԻԳ** *Զի պատ(//)առեսցէ զգիր պարտեացն Ադամայ: Եւ<sup>1</sup> եղև միա-  
ւորութիւն մարգարէիցն և առաքելոցն, զի յեկեղեցիս միաբանե-  
լոց<sup>2</sup> էին բանք մարգարէիցն և առաքելոցն և աւետարանչացն:*

**Իսկ Պետրոս և որ ընդ նմայն էին<sup>3</sup>՝ ծանրացեալք ի քնոյ (Թ 32):**

**ՈԿ** *Քուն զծանրութիւն կոչէ, որ ի տեսլեանն եղև նոցա, զոր աւ-  
րինակ՝ աչք, որ<sup>4</sup> ի բազում լուսոյ այլայլին: Նոյնպէս և նոքա  
անդ կրէին, զի ո՛չ եթէ գիշեր [էր], այլ՝ տիւ: Բայց լուսոյն առա-  
ւելութիւնն ծանրացուցեալ նուաղեցուցանէր<sup>5</sup> զաչացն զտկարու-  
թիւնն<sup>6</sup>:*

**Զարթեան և տեսին զփառս նորա<sup>7</sup> (Թ 32):**

**ԻԳ** *Եցոյց զփառսն<sup>8</sup> յառաջ քան զանարգանսն:*

**Ծանրացեալք ի քնոյ անտի (Թ 32):**

**ՈԼ.** *Թմբրութիւն<sup>9</sup> աշակերտացն ո՛չ տաղտուկ ինչ և անախորժելի  
լինէր, յորմէ գերծանել ոք սիրէ<sup>10</sup> և փախչել, այլ առաւել քաղցր  
և ախորժելի էր: Զի որպէս սրորէիցն և քերորէիցն<sup>11</sup> և հրաբուն  
զաւրացն, և որպէս<sup>12</sup> Պետրոս ի զարմացման եղեալ, զանաւթն  
կտաւեայ<sup>13</sup> տեսանելով, խաւսի ընդ Աստուծոյ: Եւ Պաւղոս յեր-  
րորդ երկինս համաբարձաւ<sup>14</sup> և<sup>15</sup> լսէր Բանս անճառս զԵրրորդու-  
թեանն զխորհուրդն<sup>16</sup>: Եւ այժմ բազումք ի սրբոցն, և որք ըստ  
իւրաքանչիւր կարի աշխատութեամբ մաքրեն զխորհուրդս իւ-  
րեանց, և յաղաւթելն<sup>17</sup> քաղցրանան միտք, մինչ ի թնդմանէ  
սրտին յորդեն արտասուէրն: Եւ այս լինի ի ստեպ յիշելոյն զԱս-  
տուած, և մտացն աչաւք ի նա հայելով՝ ստանան: Որպէս<sup>18</sup> նա-*

<sup>1</sup> B այլ և  
<sup>2</sup> B միանալոց  
<sup>3</sup> B **չիք** էին  
<sup>4</sup> B **չիք** որ  
<sup>5</sup> A նվաղեցուցանէր  
<sup>6</sup> B զտեսութիւնն  
<sup>7</sup> B նորա և զերկուս արսն, որ կային առ նմա  
<sup>8</sup> B զփառքն  
<sup>9</sup> B թմբրութիւն  
<sup>10</sup> B սիրել  
<sup>11</sup> B սրովբէիցն և քրովբէիցն  
<sup>12</sup> B **չիք** որպէս  
<sup>13</sup> B կտաւէ  
<sup>14</sup> B յերկինս վերացաւ  
<sup>15</sup> B **չիք** և  
<sup>16</sup> B խորհուրդ  
<sup>17</sup> B սրբ.՝ յաղթելն  
<sup>18</sup> B և կամ որպէս

խավկայն սուրբն Ստեփաննոս աղաւթիւք զերկինս եբաց //115բ և տեսանէր զՈրդին Աստուծոյ ընդ աջմէ Հաւր Աստուծոյ<sup>1</sup> և ապա՝ յանապական ուրախութեամբ լնոյր:

Ասէ<sup>2</sup> Պետրոս ցՅիսուս. Բարիոք<sup>3</sup> է մեզ աստ լինել (Թ 33):

**ԵՓ** Ետես զլեռոն, զի հանգուցեալ էր ի հակառակութենէ դպրացն, և հաճոյ թուեցաւ բնակիլ ընդ Մովսիսի և ընդ Եղիայի: Եւ ուրախ եղև, զի հեռացաւ ի Հերովդէէ<sup>4</sup> և [ի] Կայիափայ: Եւ բուրեաց հոտ անուշուրեան դրախտին<sup>5</sup>, և եհաս ի հոտոտելիս նորա և քաղցրացաւ նմա: Ետես նա զփառս նորա փոխանակ անարգանաց նորա, և ուրախ եղև յոյժ:

**ԿՐ** Կամ կասկածէր սակս հրէիցն, զի դեռևս ո՛չ կատարելապէս իմանայր զՔրիստոսէ: Բարիոք էր անդ լինել և միշտ զՔրիստոս տեսանել: Յանկացաւ յանպիսի<sup>6</sup> փառս տեսանել զՔրիստոս:

Արասցուք երիս տաղաւարս. մի քեզ և մի Մովսիսի<sup>7</sup> և մի Եղիայի (Թ 33):

**ԵՓ** Զիա՞րդ գիտացին աշակերտքն զՄովսէս և զԵղիայ: Որպէս Յովհաննէս գիտաց զՏէր մեր, իբրև եկն առ նա, որպէս<sup>8</sup> և ինքն ասաց, թէ՛ «Ես ո՛չ գիտէի զնա» (Յովհ. Ա 31, 33): Արդ<sup>9</sup>՝ Հոգին Սուրբ յայտնեաց ի բերան Շմաւոնի, զոր ինչ ո՛չ գիտէր նա:

**ՊՂ** Գիտութիւն մեծ բարբառեցաւ նա<sup>10</sup> ի տգիտութեան իւրում, զի ծանեաւ զխորհուրդ Երրորդութեանն, զի աւր էր յայտնութեան Որդոյ՝ ընդ Հաւր պատուակից գոլով: Ո՛չ ծածկեցաւ Մովսէս և Եղիայ ի նոցանէ: Ծանեան երեքն զերեք անձինս աստուածութեանն, զի պատմեսցեն զգալուստ նորա, թէ՛ վասն է՞ր եղև:

**ՈՂ.** Մարգարէական<sup>11</sup> հոգովն իմացան, զոր ի յարութեանն՝ ամենայն սուրբք և արդարք, որով ճանաչեն վեր(//)ջինքս<sup>12</sup> գառաջինքն:

Ո՛չ գիտէր զինչ խաւսէր (Թ 33):

<sup>1</sup> Ե չիք Աստուծոյ

<sup>2</sup> Ե և եղև ի մեկնելն նոցա ի նմանէ, ասէ

<sup>3</sup> Ե վարդապետ բարիոք

<sup>4</sup> Ե Հերովդիէ

<sup>5</sup> Ե արքայութեան դրախտին

<sup>6</sup> Ա, Ե ի յայնպիսի

<sup>7</sup> Ե Մովսէսի

<sup>8</sup> Ե զի որպէս

<sup>9</sup> Ե սրբ.՝ այսպէս

<sup>10</sup> Ե չիք նա

<sup>11</sup> Ե կամ մարգարէական

<sup>12</sup> Ե վերջինք

**ՈԿ** *Զի յահէն տագնապեալ էր և յահագին տեսնէնէն: Նաև այլ աւետարանիչքն ասեն, թէ ոչինչ առողջ մտաւք խաւսեցաք<sup>1</sup>, քանզի յահէն ըմբռնեալ էր, քանզի զարհուրեցան և սոսկացան և<sup>2</sup> այլ առաքեալքն:*

**ԿՐ.** *Վասնզի ի լուսոյ ճառագայթիցն ո՛չ գիտէր զինչ պարտէր խաւսել:*

**Եկն ամպ<sup>3</sup> և հովանի եղև ի վերայ նոցա<sup>4</sup> (Թ 34):**

*Զի ի միտ առցէ<sup>5</sup> Շմաւոն, եթէ այս տեսչութիւն է և ձեռագործ շինուածոյ պէտս ո՛չ ունի:*

**ՊՂ** *Հոգին Սուրբ լուսափայլ ամպով երևէր ի վերայ նոցա, և եցոյց նոցա զլոյս Հոգւոյն Սրբոյ: Զի պատմեսցեն, եթէ լոյս ճշմարիտ է նա, որ լուսաւորէ զամենայն մարդ զեկեալսն յաշխարհ:*

**ՍՏ** *Արդ՝ փոխանակ երից տաղաւարացն՝ «ամպ» լուսաւոր «հովանի եղև նոցա<sup>6</sup>»: Զի<sup>7</sup> հանգուսցէ և հանգչի, որ գայ յաւետարանս, յաւրէնս և ի մարգարէս: Իսկ ամպն<sup>8</sup>, որպէս կարծեմ, Հոգին Սուրբ է: Զի ի համբառնալն առ Հայր լուսեղէն ամպաւք<sup>9</sup> վերանայր, և ի միւս անգամ գալստեանն այնպէս գայ: Իսկ մարգարէիցն և առաքելոցն ընդ ամպովն լինելն նշանակէ զամենայն սուրբք և զարդարքն, որ ի գալստեանն ամպովք վերանան ընդառաջ Քրիստոսի և այնպէս յամենայն ժամ ընդ Տեսոն լինին:*

**Զայն եղև ամպոյն<sup>10</sup> (Թ 35):**

**ՈԿ** *Ինքն ո՛չ խաւսէր և ո՛չ Մովսէս և ո՛չ Եղիայ, այլ մեծն և արժանին հաւատարմութեան վկայն Հայր բարբառ արձակէր յամպոյն, քանզի այն(//)պէս միշտ երևի Աստուած: Ըստ այնմ, եթէ՝ «Ամպ և մէգ շուրջ զնովաւ» (Սաղմ. ԴՁ 2) և այլուր, թէ՝ «Նստեալ ի վերայ թեթև ամպոյ» (Ես. ԺԹ 1): Եւ դարձեալ. եթէ՝ «Որ եդ յամպս զգնացս իւր» (Սաղմ. ԾԳ 3), և Դանիէլ, եթէ՝ «Տեսի իբրև զՈրդի մարդոյ, զի գայր ի վերայ ամպոց» (հմմտ. Դանիէլ Է 13): Եւ այլուր, եթէ՝ «Ամպն անջրպետեաց զնա յաչաց նոցա»: Վասն այնորիկ անդի<sup>11</sup> գայր, զի հաւատասցեն, եթէ յԱստուծոյ գայ բարբառն:*

<sup>1</sup> B խաւսեցաւ  
<sup>2</sup> B որպէս և  
<sup>3</sup> A, B ամբ  
<sup>4</sup> B նոցա, և երկեան ի մտանելն նոցա ընդ ամպովն  
<sup>5</sup> B առցեն  
<sup>6</sup> B ի վերայ նոցա  
<sup>7</sup> B և զի  
<sup>8</sup> A ամբն  
<sup>9</sup> B ամպովք  
<sup>10</sup> B ամպոյն և ասէ. Դա է Որդի իմ ընտրեալ  
<sup>11</sup> B անտի

Դա՛ է Որդի իմ սիրելի ընտրեալն<sup>1</sup> (Թ 35):

**ՊՂ** Այսաւր Շմաւոն ի լերինն լուաւ, զոր Յովհաննէս լուաւ<sup>2</sup> Յորդանան: Ո՛չ յանձն առնոյր Մկրտիչն, հակառակէր Պետրոս: Մինն՝ վասն երկի[ւ]ղի արգելոյր զՋրով մկրտութիւնն, իսկ միւսն՝ վասն սիրոյ ջանայր խափանել զարիւն մկրտութեանն: Արդ՝ Յովհաննէս անսայր կատարել կամացն Յիսուսի, իսկ Պետրոս, որ թարգմանի վէմ, կայր կարծր, զոր մեծին Հաւր ձայնն հնազանդեցուցանէր: Յովհաննէս ի խոնարհ լսէր. «Դա՛ է Որդի իմ սիրելի» (Մատթ. Գ 17, ԺԷ 5, Մարկ. Թ 6), և զի ժողովրդարանին էր քարոզ, Շմաւոն ի լերինն ուսանի, զի եկեղեցոյ էր գլուխ և վարդապետ: Յովհաննէս ի խոնարհս տեսանէր զՀոգին Սուրբ, զի զմարմին խոնարհութեանն Յիսուսի մկրտէր, իսկ Պետրոս ի լերինն տեսանէր զՀոգին լուսափայլ ամպով, զի ի Հաւրէ տեղակասցի վասն արեան մկրտութեանն Յիսուսի և վասն փառաց աստուածութեան Որդոյն:

**ԻԳ** Ընտրեալն<sup>3</sup> սիրելի, թերևս<sup>4</sup> ստոյգ Որդի:

Դմա լուարուք (Թ 35):

**117ա** Որպէս եթէ ի խաչ կամի ելանել, մի՛ // ինչ ընդդէմ դառնայցէք: Եթէ<sup>5</sup> այդպէս իցէ, որ այլու՞մ ձայնի լսէ<sup>6</sup>, մահու մեռանիցի:

**ՊՂ** Ձայնեաց Հայր ի լսելիս նորա, զի զգուշասցի<sup>7</sup> Շմաւոն ոչինչ խնդրել [ի] կամաց Հաւր և Որդոյ արտաքոյ, և որպէս թէ ասել Յիսուսի առ նա. «Անսա՛ գեթ Հաւր, Շմաւո՛ն, որ բազում անգամ յառաջագոյն ասացի, թէ պարտ է ինձ չարչարել վասն ձեր: Դու քաւեցեր<sup>8</sup> Մովսէս և Եղիայ և ո՛չ ախորժեցեր»: Արդ՝ հնազանդեայ Հաւր յասելն՝ «Դմա լուարուք»:

Ընդ լինել բարբառոյն գտաւ Յիսուս միայն (Թ 36):

**ՈԿ** Զի մի՛, յորժամ կարի ահն զարհուրեցուցէ զնոսա, յիշատակ իրացն մերժեսցի: Վասն այնորիկ<sup>9</sup> վաղվաղակի փարատէ զերկի[ւ]ղն<sup>10</sup>: Եւ երևէր ինքն միայն, զի<sup>11</sup> յայտնի լիցի, եթէ ո՛չ վասն միոյ ուրուք նոցա եկն բարբառն յերկնից, այլ վասն միոյն Յի-

<sup>1</sup> B ընտրեալ

<sup>2</sup> B չէք լուաւ

<sup>3</sup> A ընդդէմ

<sup>4</sup> B սերտ և փխ թերևս

<sup>5</sup> B և եթէ

<sup>6</sup> B լսեն

<sup>7</sup> B զգուշասցին

<sup>8</sup> B կարգեցեր: Խոսեցան փխ քաւեցեր

<sup>9</sup> B այսորիկ

<sup>10</sup> B զերկեւղն

<sup>11</sup> B Եւ զի



սուսի: Եւ իբրև բարբառն եկն, նոքա անհետ եղեն, զի եթէ վասն միոյ ուրուք ի մարգարէիցն ասացեալ էր, ո՛չ ինքն միայն մնայր ի զատանել երկուցունցն<sup>1</sup> ի<sup>2</sup> Յիսուսէ: Եւ ի գալ ձայնին Հաւր՝ անհետ եղեն Մովսէս և Եղիայ: Եւ արդ՝ ո՛չ<sup>3</sup> էր պիտոյ, եթէ առաքեալք[ն] ուսցին վասն Որդոյ, զի կանխաւ ի Հաւրէ ստուգեալ էին: Այլ աստ ուսան աշակերտքն, զոր ո՛չ գիտէին, թէ վասնէ՞ր եղև զալուստ նորա: Եւ մի՛ գայթաղեսցին ի բանս նոցա, այլ ուշ ունիցին բարբառոյն Հաւր, և մի՛ խառնեսցին խաւսք Տեառն ընդ ծառայիցն և պղտորեսցին<sup>4</sup> միտք նոցա:

117բ // Կարծել վասն Մովսէսի և Եղիայի գասելն:

**US** Եւ մի՛ մոռասցին վասն ելիցն, որ լուան ի Հաւրէ և ի մարգարէից անտի, այսինքն՝ զԱւետարանս և զԱւրէնս և զՄարգարէս միաբանել վասն Քրիստոսի մարդեղութեանն և մի եղեն:

Ո՛չ<sup>5</sup> ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ<sup>6</sup> (Թ 36):

ԵՎ. Քանզի գիտէր Յիսուս, եթէ ո՛չ հաւատան նոցա: Այլ որպէս զմոլորականս համարին<sup>7</sup> զնոսա և ասէին, եթէ ուստի՞ գիտէք դուք զԵղիայ, և զի ի՞նչ Մովսիսի<sup>9</sup> գերեզմանին վերայ<sup>10</sup> ո՛չ ոք եհաս: Լինէր այնուհետև հայհոյութիւն: Վասն այնորիկ ասաց. «Մնացէք դուք» (հմմտ. Մարկ. ԺԴ 34) մինչև ընդունիցիք զաւրութիւն: Զի, յորժամ պատմեսցեն և ո՛չ հաւատասցեն, կեցուսջիք զմեռեալս վասն դրսովութեան նոցա և վասն ձեր փառաց: Եւ դարձեալ. «մնացէք» մինչև պատառեսցին գերեզմանք, և ելցեն արդարքն հին և նոր և եկեսցեն յԵրուսաղէմ քաղաք<sup>11</sup> թագաւորին մեծի: Ապա այնուհետև հաւատան նոքա, եթէ այն, որ յարոյց զմեռեալս, նոյն յարոյց զՄովսէս և զԵղիայ: Եւ<sup>12</sup> ասէին. «Տեսցո՛ւք, եթէ գա՞յ Եղիայ ի Երուսաղէմ զդա» (Մարկ. ԺԵ 36): Եւ տեսին եկեալ ձայնիւ նորա արդարք բազումք ներքուստ ի դժոխոց<sup>13</sup>: Զի թէ մեռեալք լուան և եկին, որչա՞փ ևս կենդանին Եղիայ:

<sup>1</sup> B երկուցն  
<sup>2</sup> B չէք ի  
<sup>3</sup> B զի ոչ  
<sup>4</sup> B մի պղտորեսցին  
<sup>5</sup> B և ոչ  
<sup>6</sup> B յայնոսիկ և ոչ ինչ յորոց տեսինն  
<sup>7</sup> B համարէին  
<sup>8</sup> B չէք ի  
<sup>9</sup> A Մովսիսի  
<sup>10</sup> B չէք վերայ  
<sup>11</sup> B ի Երուսաղէմ ի քաղաք  
<sup>12</sup> B և զի  
<sup>13</sup> B ի ներքուստ դժոխոց

**ԻԳ** Այլ պահեսցեն յիւրում ժամանակի յայտնութեանն և մի՛ տարածամ քարոզել զաստուածութիւնն նորա, զի այս ժամանակ չար-  
**118ա** չարանաց է: Եւ ապ(11)ա յայտնի տէրութիւնն նորա և համարձակ բառնան զխաչ չարչարանաց նորա և քարոզեն զաստուածութիւնն նորա:

Եւ<sup>1</sup> ահա այր մի ի ժողովրդենէն<sup>2</sup> աղաղակեաց ի<sup>3</sup> ժամուն յայնմիկ (Թ 38):

**ԻԳ** Այր անհաւատութեամբ լի<sup>4</sup>:

Հարցանէ ցնա Յիսուս. Քանի՞ ժամանակք են: Եւ նա ասէ. Ի մանկութենէ բազում անգամ ի հուր արկանէ, երբեմն<sup>5</sup> ի ջուր, զի կորուսցէ զնա (հմմտ. Թ 39):

**ՈԿ** Եւ արդ՝ դու տե՛ս զբարերարութիւնն Աստուծոյ և զանչափ խնամակալութիւնն, զի այնչափ ժամանակս ի նոսա<sup>6</sup> էր դեւն և ո՛չ տայր մեղանչել: Զի եթէ ո՛չ վայելեալ էր յԱստուծոյ խնաման այրն, ի վաղուց հետէ կորուսեալ էր զնա: Քանզի ասաց, եթէ՝ «Ի հուր արկանէ և ի ջուր», որ այնչափ յանդուգն էր: Նաև ի սպանանելոյ ո՛չ ակնածէր, եթէ ո՛չ սանձեալ էր զմոլեգնութիւնն նորա:

Աղաչեցի<sup>7</sup> զաշակերտսն քո, զի հանցեն<sup>8</sup>, և ո՛չ կարացին (Թ 40):

**ԵՓ** Մեկուսի գտեալ զաշակերտսն, և աշակերտքն ո՛չ կարացին հանել վասն անհաւատութեան հաւր մանկանն: Զի իբրև առ կախարդս եկն առ նոսա, և նոցա ո՛չ էր յայտ անհաւատութիւնն նորա: Կարծեաց, եթէ ո՛չ են կատարեալ յարուեստ<sup>9</sup> գիտութեան վարդապետին իւրեանց: Ապա եթէ ո՛չ, ընդէ՞ր ո՛չ բժշկէին զնա: Եհաս բանս այս<sup>10</sup> առ աշակերտսն, և կացոյց զնոսա ի մէջ ծփանաց:

Եւ Յիսուս ասաց. Ո՛վ ազգ անհաւատ և թիւր<sup>11</sup> (Թ 41):

<sup>1</sup> Եւ եղև ի վաղիւն մինչ ի ջանէին նոքա ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում: Եւ

<sup>2</sup> Ե ժողովրդենէ անտի

<sup>3</sup> Ե և ասէ ի

<sup>4</sup> Ե Այր մի անհաւատութեամբ

<sup>5</sup> Ե սրբ.՝ և երբեմն

<sup>6</sup> Ե նմա

<sup>7</sup> Ե և աղաչեցի

<sup>8</sup> Ե հանցեն զնա

<sup>9</sup> Ե ի յարուեստ

<sup>10</sup> Ե չիք այս

<sup>11</sup> Ե Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՞վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ եղցց ընդ ձեզ և անսայցեմ ձեզ, մատո՛ւ այսր զորդին քո:

- Իգ. Որ զծածոկսն տեսանէր: Ասէ. «Անհաւատութիւն քո է պատճառ, ընդէ՞ր մեղադրես աշակերտացն»:
- 118բ Ոկ. // Ո՛չ<sup>1</sup> ի նորա դէմսն ձգէր զբանն, այլ առ ամենայն հրէայսն: Քանզի թերևս գայթազդեալ էին ամենեքին, որ անդ կային:

**Մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ և անսայցեմ ձեզ** (Թ 41):

Յուցանէ, եթէ ախորժելի էր Քրիստոսի մահն իւր և ցանկալի էր նմա մեկնիլ ի նոցանէ: Եւ ծանրագոյն թուէր նմա շրջել ընդ նոսա, քան ի խաչ ելանել<sup>2</sup>:

**Մինչդեռ<sup>3</sup> մատչէր, զարկոյց զնա դեւն և շարժեաց** (Թ 42):

Հրաման տայր դիւին<sup>4</sup> լլկել զնա: Ո՛չ եթէ ի ցոյց ինչ<sup>5</sup> ժողովդեանն արար զայն, այլ վասն Հաւրն: Զի յորժամ տեսցէ, եթէ ի կոչելոյն միայն խռովեցաւ դեւն, և հաստատեսցի ի հաւատս վասն նշանին, որ լինելոց էր:

**Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյն<sup>6</sup> և բժշկեաց զմանուկն<sup>7</sup>** (Թ 43):

**ԵՓ** Զի արագ լսէր նմա<sup>8</sup> այսն պիղծ, քան զմարդիկ գալ ի հաւատս:

**ԻԳ** Հալածական առնէր զդեւն, զի տեսցեն և երկիցեն: Եւ գիտացեն, եթէ յորքան չարեաց զերծոյց զնոսա, և մի՛ մոռացին զբրախտիս բարերարութեան նորա:

**Ասէ ցաշակերտսն<sup>9</sup> իւր. Դի՛ք դուք ի միտս<sup>10</sup> ձեր զբանս զայս<sup>11</sup>, զի Որդի մարդոյ մատնելոց է<sup>12</sup>** (Թ 44):

Իգ. Զի մի՛ ասիցեմք, եթէ ընդէ՞ր աստ ցանկ տուայտիմք: Յաղագս այնորիկ վասն չարչարանացն ճառէ, զի յորժամ լսեն, բնաւ ո՛չ կամիցին<sup>13</sup> տեսանել զԵրուսաղէմ:

<sup>1</sup> B նաև ոչ

<sup>2</sup> B Մինչև ցե՞րբ... ելանել՝ սրբ. է ստորին լս.

<sup>3</sup> B և մինչդեռ

<sup>4</sup> A դիվին

<sup>5</sup> B չէք ինչ

<sup>6</sup> B պղծոյ

<sup>7</sup> B զմանուկն և ետ զնա ցհայր իւր: Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ: Եւ ի զարմանալ ամենեցուն ի վերայ ամենայնի, զոր առնէր (Թ 43-44)

<sup>8</sup> B չէք նմա

<sup>9</sup> B ցաշակերտսն

<sup>10</sup> B լսելիս փիւ միտս

<sup>11</sup> B զայստիկ

<sup>12</sup> B է ի ձեռս մարդկան: Եւ նոքա ոչ գիտէին զբանն (Թ 44-45)

<sup>13</sup> B կամեցին

Եւ էր բանն ծածկեալ ի նոցանէ, զի մի՛ գիտասցեն<sup>1</sup> (Թ 45):

119ա *Յանգիտութիւն<sup>2</sup> իմն հաստատեալք չառնուին<sup>3</sup> ի միտ, թէ պարտ էր<sup>4</sup> նմա ի մեռելոց յառնել: // Եւ զի բացցէ զմիտս նոցա և իմասցին, զոր ասացն զխորհրդոյն զաւրութիւնն: Քանզի ո՛չ զառնելն<sup>5</sup> ինչ գիտէին, այլ զայն լաւ իմն համարէին, թէ բնաւ ո՛չ մեռանի:*

Եմուտ խորհուրդ ի նոսա, թէ ո՞վ մեծ իցէ (Թ 46):

*Մարդկաւորէն իմն ախտացան առաքեալքն ի նմին ժամու:*

Եւ Յիսուս առ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա<sup>6</sup> (Թ 47):

ՍՏ *Պարտ է ամենեցուն, որ կամիցին<sup>7</sup> մտանել յարքայութիւնն, լինել որպէս մանուկ: Աստուծոյ տուեալ յորդորումն, և՛ «Ահաւա- սիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած» (Եբր. Բ 13): Քանզի ամենեքին, որ կատարեալ միտս ունին, տղայք են առ չարութեանն:*

Որ ոք ընկալցի զման[ուկ]<sup>8</sup> (Թ 48):

Ոկ. *Մանուկ աստ զայսպիսի մարդս կոչէ, որ անմեղք են և խո- նարհք և քամահեալք ի բազմաց: Արդ՝ վասն նոցա պատուոյն զարքայութիւնն երկնից տաց<sup>9</sup> ձեզ փոխարէն<sup>10</sup>:*

Որ<sup>11</sup> փոքրիկն է ի ձեզ<sup>12</sup>, նա եղիցի մեծ (Թ 48):

ԻՊ *Տէրն ուսուցանէ զնոսա զվերջինն ունել տեղի խոնարհու- թեան, զի այն է պատճառ ստոյգ բարձրութեան: Եւ այնպիսիքն բնակեցուցանեն զնա յինքեանս<sup>13</sup> և զՀայր նորա:*

Ասէ Յովհաննէս. Տեսաք զոմն, զի յանուն քո դեւս Հանէր<sup>14</sup> (Թ 49):

<sup>1</sup> B գիտասցեն, և երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ

<sup>2</sup> B իբր յանգիտութիւն

<sup>3</sup> B չառնուն

<sup>4</sup> B է

<sup>5</sup> B սրբ.՝ գյառնելն

<sup>6</sup> B Իբրև ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի, կացոյց ի մէջ նոցա առ իւր: Եւ ասէ ցնոսա (Թ 47-48):

<sup>7</sup> B կամեսցին

<sup>8</sup> B զմանուկս զայս յանուն իմ, զիս ընդունի, և որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ

<sup>9</sup> B տացի

<sup>10</sup> A փոխորէն

<sup>11</sup> B զի որ

<sup>12</sup> B ձեզ յամենեսին

<sup>13</sup> A ի յինքեանս

<sup>14</sup> B Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ. Վարդապետ, տեսաք զոմն, որ յանուն քո դեւս

Անդ<sup>1</sup> յաճախեաց շնորհք Հոգևոյն Արբոյ ի ժամուն յայնմիկ առ անարժանս և կամ, որպէս առ որդիքն ըՍկ[և]եայ, «որ երդմնեցուցիչք<sup>2</sup> էին» (Գործք ԺԹ 13): Այնք<sup>3</sup>, որ ասեն<sup>4</sup>. «Յանուն քո զաւրութիւնս բազումս արարաք<sup>5</sup>» (Մատթ. Է 22), զի ամենեքում[բ]ք մեծասցին յանուն<sup>6</sup> Յիսուսի: Արդ՝ յորժամ հեղու զպարգևսն, անարժանք առնուն ձրի, և յորժամ փակէ, բազում արժանաւորք թափուր մնան՝ որպէս ի մարմնաւոր պարգևս է տեսանել: Յորժ(//)ամ տայ առատապէս զբարութիւն երկրի՝ չարք և բարիք վայելեն, և յորժամ արգելու՝ ամենեքին վտանգին:

**119ք** **Ստ.** Եւ արգելաք զնա, զի ո՛չ շրջէր ընդ մեզ (Թ 49):  
 Իսկ Յովհաննէս անգիտացեալ արգել զնոսա:

**Ասէ Յիսուս.** Մի՛ արգելոյք, որ ո՛չ է ձեր թշնամի՝ ի ձեր կողմ[ն] է (Թ 50):  
 Բայց, որ ետ զշնորհսն, յայտնի էր նմա: Որպէս այլուր ասէ, եթէ՛ «Ո՛չ ոք է, որ առնէ անուամբ իմով զաւրութիւն<sup>7</sup> և կարէ հայհոյել զիս» (Մարկ. Թ 38): Եւ Պաւղոս վասն այնոցիկ, որ կամէին նեղութիւնս հասուցանել նմա ի վերայ կապանացն, առ որս ասէ. «Ոմանք առ հետուութեան, և կէսք ի սիրոյ զՔրիստոս քարոզեն» (հմմտ. Փիլիպ. Ա 16-17)՝ եթէ՛ պատճառանաւք և եթէ՛ ճշմարտութեամբ Քրիստոս պատմի: Եւ ընդ այս խնդամ:

**ՈԿ** Ի<sup>8</sup> կատարել աւուրց վերանալոյ<sup>9</sup> նորա (Թ 51):  
 Կատարեալն Աստուած եղև մարդ կատարեալ՝ անախտ ծննդեամբ առեալ անապական մարմին: Անճառ Բանն Աստուած առեալ աճուամն մարմնոյ և շրջեցաւ ընդ մարդկան: Եւ, որ ելից զաւրէնս թլփատութեամբ, մատնեցաւ վասն մեր:  
**ՍՏ** Յառաջելով նորա իմաստութեամբ և հասակաւ և շնորհիւ:  
**ԻԳ** Կամ եթէ զայն իսկ կամի յայտնել, զի մերձ էր չարչարանքն և մահն և յարութիւնն, և վերանալն ի բուն և<sup>1</sup> ի ստոյգ բարձրութիւնն:

Հանէր:  
<sup>1</sup> Բ չիք Անդ  
<sup>2</sup> Բ երդմնեցուցիչքն  
<sup>3</sup> Բ և այնք  
<sup>4</sup> Բ սրբ.՝ սակս  
<sup>5</sup> Բ սրբ.՝ արարին  
<sup>6</sup> Բ մեծասցի անունն  
<sup>7</sup> Բ զաւրութիւնս  
<sup>8</sup> Բ և եղև ի  
<sup>9</sup> Բ վերանալոյն

**Եւ ինքն հաստատեաց զերեսս իւր երթալ յերուսաղէմ** (Թ 51):

*Զի անդ պարտ էր կատարել ամենայն գրելոց, որպէս ասաց. «Ո՛չ է պարտ մարգարէի չարչարել արտաքոյ<sup>2</sup> քան զերուսաղէմ»* (ԺԳ 33):

**Եւ առաքեաց զաշակերտան<sup>3</sup> առաջի երեսաց իւրոց: Իբրև մտին ի գեւղ մի Սամարացոց<sup>4</sup>** (Թ 52):

**120ա US** *Իսկ սամարացիքն պահապանք ասին, //իսկ զհրէայսն<sup>5</sup> որպէս զփուշ ի հուր առաքեաց զնոսա յերկիրն աւետեաց ի մէջ եւթն ազգին, որ բնակեալ էին անդ:*

**Իգ.** *Թերևս թշնամութեամբ էին սամարացիքն ընդ երուսաղէմացիսն:*

**Պատրաստել նմա<sup>6</sup> կերակուր** (Թ 52):

*Արդ՝ առաքէ<sup>7</sup> զնոսա վանս ունել և պատրաստել զպէտսն: Զի թէպէտ<sup>8</sup> ինքն անկարաւտ էր, որպէս և կամէր և ո՛չ ընդ հարկաւ կարիւք, սակայն որ ընդ նմայն էին, ընդ կարեաւք<sup>9</sup> էին:*

**Եւ ո՛չ ընկալան զնա<sup>10</sup>** (Թ 53):

*Արդ՝ զայս ինքն տնաւրինէ իսկ, զի մի՛ ընկալցին և երկայնամիտ լինի առ նոցա ստահակութեանն<sup>11</sup>: Զի յորժամ մեկնեսցին ի նմանէ և ո՛չ ընկալցեն<sup>12</sup> զնոսա, մի՛ զայրասցին, այլ նմանեսցին<sup>13</sup> հեղութեան վարդապետին իւրեանց:*

**Եւ ասեն աշակերտքն. Տէ՛ր, կամիմք, զի ասասցուք, զի իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնոսա<sup>14</sup>** (Թ 54):

*Կամեցան ըստ նմանութեանն Եղիայի հուր իջուցանել ի վերուստ տանջողական և լինել վրէժխնդիր իբրև զնա: Արդ՝ զայս ասացին, զի վստահ էին ի զաւրովիւն վարդապետին, եթէ զամենայն ինչ, զոր կամի, կարէ վճարել, այն, որում Մովսէս և Եղիայ*

<sup>1</sup> B իբրև *փխ* ի բուն և

<sup>2</sup> B *գրփխ* արտաքոյ չարչարել

<sup>3</sup> B հրեշտակս

<sup>4</sup> B Եւ իբրև չոգան, մտին ի գեւղ մի Սամարացոց պատրաստել ինչ նմա

<sup>5</sup> B զհրէայքն

<sup>6</sup> B ի նմա

<sup>7</sup> B առաքեաց

<sup>8</sup> B թէպէտև

<sup>9</sup> B կարիւք

<sup>10</sup> B զնա, զի դէմ եղեալ էր նորա երթալ յերուսաղէմ: Իբրև տեսին աշակերտքն՝ Յակովբովս և Յովհաննէս, ասեն. Տէր կամիս զի արասցուք և իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնոսա (Թ 53-54):

<sup>11</sup> B ստահակութիւնն

<sup>12</sup> B ընդունիցին

<sup>13</sup> B նմանեսցեն

<sup>14</sup> B *չիք* Եւ ասեն աշակերտքն... զնոսա

իբրև զծառայք եկեալ կային առ նա: Եւ<sup>1</sup> մոռացան զայն, որ ասաց. «Մի՛ կար<sup>2</sup> հակառակ չարին» (Մատթ. Ե 39), և՝ մատուցանել զծնաւտն յուժարութեամբ (տե՛ս Մատթ. Ե 39, Ղուկ. Զ 29), զի յագեսցի: Քանզի անկատարք էին նախքան զ[ը]նդունել զՀոգին:

**Սաստեաց ի նոսա<sup>3</sup>** (Թ 55):

Սաստելովն զգաստացուցանէ, որպէս և ամենայն ուրեք: Եւ աստ ի<sup>4</sup> բարեմտութիւն կրթելով զնոսա՝ երկայնամիտ լինել<sup>5</sup> առ չարսն:

**Ո՛չ գիտէք որո՞յ հոգոյ էք<sup>6</sup>** (Թ 55):

120բ // Այնմ, որ զպարզեւսն բաշխէ, եթէ այնմ, որ զպատիժսն: Քանզի և այս<sup>7</sup> գործակցութիւն Հոգւոյն է ի պատժելն և ի պսակելն:

**Ո՛չ եկի զոգիս<sup>8</sup> մարդկան կորուսանել, այլ կե[ցուցանել]** (Թ 56):

Այս՝ գալուստս սերմանելոյ ժամանակ<sup>9</sup> և բարեգործելոյ զհոգիս մարդկան: Եւ երկայնամիտ լինել մինչև ի ժամանակ հնձոյն, յորում ոմանք խրճուես կապին ի նիւթ հրոյ լինել, որք արտաքոյ բնութեանն որոմն գտան: Եւ, որք պահեսցին զ[ը]նտանի<sup>10</sup> բնութիւն ցորենոյն, խնամով ժողովին յշտեմարանս և պահին յաւիտենական:

**Գնացին<sup>11</sup> յայլ գեւղ<sup>12</sup>** (Թ 56):

Աստ լնու, զոր ասաց, եթէ՝ «Հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՝ փախիջիք յայլ» (Մատթ. Ժ 23):

**Ասէ ոմն ցնա. Եկից և ես գկնի քո յոր և երթիցես<sup>13</sup>** (Թ 57):

Ոկ. Արդ՝ դպիրն ընչասէր և հպարտ ետես զբազում նշանս և զյուրովագոյն ժողովս առ նա, կարծեաց, եթէ ինչս ժողովեսցէ վասն աստուածահրաշ սքանչելեացն:

**Ասէ<sup>1</sup> Յիսուս. Աղուեսուց որջք գոն** (Թ 58):

<sup>1</sup> B Զի *փի* Եւ

<sup>2</sup> B կալ

<sup>3</sup> B Դարձաւ սաստեաց ի նոսա և ասէ: *էջի (98ա) աջ լս. ավելացված է. «Դարձեալ. Ը (8) օրն կատարեցաւ. և ապա ի լեառն թաքօր վերացաւ»:*

<sup>4</sup> B *չէք* ի

<sup>5</sup> B լինելով

<sup>6</sup> B հոգւոյ էք դուք

<sup>7</sup> B այն

<sup>8</sup> B Զի Որդի մարդոյ ոչ եկն զորդիս

<sup>9</sup> B ժամանակ է

<sup>10</sup> B զընդանի

<sup>11</sup> B Եւ գնացին

<sup>12</sup> B գեաւղ

<sup>13</sup> B Եւ մինչդեռ երթային նոքա ի ճանապարհի, ասէ ոմն ցնա. Եկից գհետ քո յո՞ր վայր և երթիցես:

Ստ. Վասնզի ետես զհոգի դպրին, զի խորամանկութեամբ<sup>2</sup> խաւսէր ընդ նմա: Աղուես<sup>3</sup> նենգաւոր խորհրդոյ տեղի կոչի ի մարդկանէ<sup>4</sup>, որպէս ասաց վասն Հերովդէի. «Երթայք ասացէք աղուեսուն այնմիկ» (ԺԳ 32):

Եւ թռչնոց երկնից՝ դադարք (Թ 58):

Բանասարկու<sup>5</sup> կամի նորին զաւրացն հպարտութեամբ ուռուցեալ, որ ի ճանապարհի եկեալ<sup>6</sup> թռչնոց երկնից կերան զսերմն:

ԻԳ Կամ դեւք՝ աղուեսք<sup>7</sup> նենգաւորք, որ թռչին յաւզս<sup>8</sup> բոյն եւ դեալ էին ի նմա:

Եւ Որդոյ<sup>9</sup> մարդոյ ո՛չ գոյ, ուր դիցէ զգլուխ իւր (Թ 58):

ՍՏ Իմոյ աստուածութեանս ո՛չ գոյ ի քեզ հանգիստ, յորում  
121ա հանգչի // հոգին Քրիստոսի: Ըստ ասելոյն. «Յո՞ հանգեաց, եթէ ո՛չ ի հեզս և ի խոնարհս» (Ես. ԿԶ 2)՝ ո՛չ համարելով զնոսա արժանի աշակերտութեան<sup>10</sup>:

Որդի մարդոյ ո՛չ ունի հանգուցանել զգլուխ իւր ի քեզ և ի նմանողս քո (հմնտ. Թ 58):

Ասէ ցոմն<sup>11</sup>. Եկ զկնի<sup>12</sup> իմ: Եւ նա ասէ. Հրաման<sup>13</sup> տուր թաղել<sup>14</sup> զհայր իմ (Թ 59):

ՈԿ Թուի ինձ, եթէ յանհաւատից էր մեռեալն, և բազումք էին, որ թաղէին զնա: Եւ դու միտ դիր աշակերտին հնազանդութեանն, յորժամ նա ասաց:

Ասէ<sup>15</sup> Յիսուս. Թոյլ տուր մեռելոցն<sup>16</sup> թաղել զմեռեալս իւրեանց (Թ 60):

ՍՏ Որ մեռեալ են մեղաւք, թէպէտև ոգիքն ի մարմնոյն դեռևս ո՛չ են ելեալ:

<sup>1</sup> B ասէ ցնա

<sup>2</sup> B խորամանկութեամբ

<sup>3</sup> B վասն այնորիկ աղուես

<sup>4</sup> B մարդկանէ զնա

<sup>5</sup> B բանասարկուին

<sup>6</sup> B սրբ.՝ անեկեալ

<sup>7</sup> B աղուես

<sup>8</sup> A ի յաւզս

<sup>9</sup> B Որդոյ

<sup>10</sup> B աշակերտութեան զի

<sup>11</sup> B ցմիւս ևս

<sup>12</sup> B զհետ

<sup>13</sup> B Տէ՛ր, հրաման

<sup>14</sup> B ինձ երթալ նախ թաղել

<sup>15</sup> B ասէ ցնա

<sup>16</sup> B թող զմեռեալսն *փի* թոյլ... մեռելոցն



**ԿՐ** Թէպէտև կենդանի գոլով սզան և շարժին, այլ վասն մեղացն, որ տիրէ ի վերայ նոցա, մեռեալք են: Զի են, որ ըստ Հոգոյ մեռեալք ասին վասն մեղաց, և են, որ ըստ մարմնոյ, որպէս Ադամ առաջին աւուրն պատուիրանագանցութեամբն մեռաւ զմեղաց մահն:

**ԵՎ. (ԻԳ.)** Ընդէ՞ր ո՛չ ետ թոյլ, զի մի՛ ժառանգութեամբքն<sup>1</sup> զբաղեալ կորուսցէ զլաւագոյնսն:

**ՍՏ** Կամ, որք ի չարութենէ ի լաւագոյնսն փոխին, նոցա չարութեան[ն] հայրն սատանայ մեռեալ լինի: Իսկ Քրիստոս կենդանայ ի նոսա, որպէս Պաւղոս ասաց. «Կենդանի է յիս Քրիստոս» (Գաղատ. Բ 20): Իսկ որք յառաքինութենէ ի չարութիւն փոխին կամ մնան ի չարութիւն, հայրն նոցա սատանայ կենդանի է ի նոսա, և ինքեանք՝ մեռեալք մեղաւք:

**Ասէ մի ոմն ցնա. Զհետ քո եկից, Տէ՛ր, բայց նախ՝ հրամայեայ 121բ հրաժարել ինձ ի տանէ իմմէ: Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ոք արկ(//)անէ զձեռն զմաճով և հայեսցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութիւն Աստուծոյ՝<sup>2</sup> (Թ 61-62):**

Որպէս<sup>3</sup> ոք կամիցի վարել<sup>4</sup> և թողուլ զվարն<sup>5</sup> անպիտան և անսերմ[ն], վասնզի պտղոյն<sup>6</sup> ո՛չ հասանէ, նոյնպէս և, որ սկիզբն առնէ առաքինութեան և յետս դառնայ, անպիտան է և ո՛չ շահի զարքայութիւնն երկնից:

**ԻԳ.** Իսկ Յիսուս ո՛չ թողացոյց: Վասնզի<sup>7</sup> ի հրաժարելն գութ ընդանեացն և բանք գորովալիցք, զոր խաւսել սովոր են, նոքա կապեալ արգելուն ի գնալոյ զհետ նորա: Այլ պարտ է ըստ նմանութեանն Պետրոսի և Յակոբեանցն<sup>8</sup> գնալ, որ ո՛չ փոյթ արարին գործեացն և բազմութեան ձկանցն:

<sup>1</sup> Բ ժառանգութեամբն

<sup>2</sup> Բ Ասէ և այլ ոմն. եկից զհետ քո, Տէ՛ր, բայց նախ՝ հրաման տուր ինձ հրաժարել ի տանէ իմմէ: Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ոք արկանէ ձեռն զմաճովն և հայեսցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ:

<sup>3</sup> Բ զի որպէս

<sup>4</sup> Բ վարեալ

<sup>5</sup> Բ զվարն

<sup>6</sup> Բ պտուղն

<sup>7</sup> Բ զի

<sup>8</sup> Բ Յակովբայն

## Քլուիս Ժ

**Յետ այսորիկ երևեցոյց Տէր այլևս<sup>1</sup> եւթանասուն և երկուս (Ժ 1):**  
 US *Ձի դատեսցին զեւթանասուն և երկու ազգս հեթանոսաց, քանզի յետ ջրհեղեղին եւթանասուն և երկու ազգ սփռեցան յորդոց[ն] նոյի:*

ԻԳ *Ձայս նկարեաց գալ ժողովրդեանն յԱղիմ, ուր էին երկոտասան աղբիւր և եւթանասուն և երկու արմաւենի, որ շնորհեաց ըմպել<sup>2</sup> ժողովրդեանն, և կերակուր պտուղ քաղցր: Ըստ նմին աւրինակի և առաքելոցն դասքն արբուցին ամենայն ազգաց զջուրն կենդանի և կերակրեցին քաղցրութեամբ Բանին ճշմարտութեան:*

**Եւ առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր<sup>3</sup>, ուր ինքն երթալոց էր (Ժ 1):**

ԵՓ. *Այսինքն՝ որպէս քարոզեաց նոցա<sup>4</sup> ձրի, նոյնպէս և նոքա՝ 122ա ըստ նմանութեան իւրոյ: Ձի<sup>5</sup> քարոզեսցեն զճշմարտութիւնն // և արասցեն նշանս և չարչարեսցեն<sup>6</sup> ըստ նմանութեան նորա: Եւ նկարեսցեն զնա [յ]ինքեանս իբրև ի պատկերի. «Ձրի առէք և ձրի տուք» (Մատթ. Ժ 8):*

**Ասէ<sup>7</sup> ցնոսա. Հունձք բազում են (Ժ 2):**

ՅՀ *Ո՛չ ի սերմանել ինչ առաքեմ զձեզ, այլ ի հնձել: Որպէս և Յովհաննէս ասաց. «Եթէ այլք վաստակեսցեն, և դուք ի վաստակս նոցա մտէք» (Յովհ. Դ 38): Ձայս ասելով՝ զմտաց նոցա զհպարտութիւնն ցածուցանէր: Եւ խրախոյս տայ, թէ մեծ ջանն անցեալ է:*

**Մշակք սակաւ<sup>8</sup> (Ժ 2):**

*Մի՞թէ յաւել զոք ի նոսա: Ո՛չ: Այլ զնոսա միայն առաքեաց և ո՛չ արար յաւելուած ի նոսա, այլ՝ զաւրութիւն շնորհելով:*

US *Մշակս անուանեաց, որ սերմանէին զվարդապետութիւնն որպէս յերկիր բարի, քանզի բազումք ի հեթանոսաց ընդունելոց էին:*

<sup>1</sup> B և այլս

<sup>2</sup> A ըմբել

<sup>3</sup> B իւր յամենայն քաղաքս և ի տեղիս

<sup>4</sup> B նա

<sup>5</sup> B եւ զի

<sup>6</sup> B չարչարեսցին

<sup>7</sup> B և ասէ

<sup>8</sup> B սակաւք

**Աղաչեցէք զՏէր Հնձոց<sup>1</sup> (Ժ 2):**

Յորդորէ զառաքեալսն աղաւթել առ Հայր, զի բազմասցին վարդապետք, որք ուղղապէս հատանեն և հնձեն զԲանն ճշմարտութեան:

**Առաքեմ<sup>2</sup> զձեզ իբրև զգառինս ի մէջ գայլոց (Ժ 3):**

ՅՀ. **Զի զամենեցուն զդրունս եբաց առաջի նոցա և նշանագործութեամբն ամուր վառեաց զնոսա: Եւ իբրև զերկաթի անդամանդս գործեաց, զի զգաւնացեալ<sup>3</sup> ի գառանց կերպս<sup>4</sup> երթիցեն և ի մէջ գայլոցն մտանիցեն: Եւ այնպէս ցուցանիցեն զիմ զաւրութիւնս, յորժամ զառինքն գայլոցն յաղթիցեն: Զի թէպէտև և բիւր ան- 122բ գամ կեղեքիցիք, մի՛ խածանէք, // այլև զնոսա ի ձեր բարսդ<sup>5</sup> դարձուցանիցէք: Մեծ զարմանք են. սակաւ արք զամենայն աշխարհս լի գայլիւք զգաւնացուցանեն:**

**Մի<sup>6</sup> քսակ, մի մախաղ, մի կաւչիկս (Ժ 4):**

Մերկս առաքէ զնոսա և միապարեգաւտս և<sup>7</sup> անցուպս:

ԻԳ **Զնոյն տայ պատուէր զերկոտասանիցն՝ մի՛ ինչ բնաւ փոյթ առնել մարմնոյ պիտոյից:**

**Ի ճանապարհի ողջոյն մի՛ ումեք տացէք<sup>8</sup> (Ժ 4):**

ԿՐ **Միայն քարոզութեանն պարապիցէք, զի եթէ ի ծանաւթից և յազգականաց ոք հանդիպի ի ճանապարհի, որ ո՛չ է տեղի քարոզութեան, «ողջոյն մի՛ տայցէք»:**

ՍՏ **Մի՛ ընկենոյք յանպիտանս և յանարժանս զքարոզութիւնն, այլ պահեցէք արժանաւորացն և ողջախոհացն զխաղաղութիւնն:**

ԻԳ **Մի՛ ի ճանապարհի տար ողջոյն, այլ ի տունս պատշաճ է: Իսկ<sup>9</sup> ի ճանապարհի տալ զսա վայրապար է, զի ո՛չ շահի ինչ: Առ անբարիսն գործէ և ո՛չ յանդիմանել զամպարիչտս, և զչարսն կարէ:**

**Յոր տուն մտանիցէք ասասլիք նախ<sup>10</sup> ողջոյն տանս այսմիկ (Ժ 5):**

<sup>1</sup> B Արդ՝ աղաչեցէք զտէր Հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր:  
<sup>2</sup> B ահա առաքեմ  
<sup>3</sup> B զգաւնացեալս  
<sup>4</sup> B կերպ  
<sup>5</sup> B բարս  
<sup>6</sup> B մի բառնայք  
<sup>7</sup> B և բոկք և  
<sup>8</sup> B Եւ ի ճանապարհի ումեք ողջոյն մի տայցէք:  
<sup>9</sup> B նախ՝ իսկ, ապա ջնջած և սրբագրած՝ զի  
<sup>10</sup> B **զրփիս** նախ ասասլիք թէ

ԵՓ Ողջոյնս այս խորհուրդ է նորոյ աշխարհի<sup>1</sup>, զի նովաւ խափանին թշնամութիւնք և նովաւ ճանաչեն մարդիկ զմիմեանս: Այս ողջոյն ծածկեալ էր ընդ առագաստեալ մոլորութեան, զոր ի սկիզբն<sup>2</sup> առաւաւտին սկսանին տալ մարդիկ միմեանց և աւրհնել

123ա զԱրարիչն լուսոյ: Վասն այսորիկ առաք(//)եաց զնոսա Տէր մեր ընդ աշակերտսն իւր իբրև զկարապետ, զի արասցէ խաղաղութիւն և պատրաստեցէ առաջի աչաց նոցա: Իբր սգացեալ էր զձայն առաքելոցն և սերմանեալ էր<sup>3</sup> ի լսելիսն՝ զատանել զորդիս ազգատոհմին իւրոյ և մնայր ի նոսա: Զի առ տուիչն և առ առողն է նա, որպէս Որդի առ Հայր և առ մեզ: Յայտ արարեալ է<sup>4</sup>, եթէ ամենայն ուրեք է նա, և վասն Որդոյ քարոզէ, եթէ առ ամենեսին է նա, և առ Հաւր է կատարած նորա:

ԻԳ Իսկ ողջոյն՝ հաղորդութեան է<sup>5</sup> սիրոյ, և երկնաւոր խաղաղութեան առնէ<sup>6</sup> ընդունելութիւն, զի ընդ նմին և տուող խաղաղութեան մտեալ հանգչի: Վասն այնորիկ ասաց մի՛ վարկպարագի առ ճանապարհաւն ընկենուլ զնա:

Ապա եթէ<sup>7</sup> ո՛չ իցեն արժանի ողջոյնն ձեր, առ ձեզ դարձցի<sup>8</sup> (Ժ 6):

ԵՎ. Իսկ այնոքիկ, որ բանիւ միայն ընդունին զնա և չեն պատրաստեալ անձինք նոցա յանդաման Քրիստոսի, սփռին<sup>9</sup> ի վերայ նոցա իբրև զլոյս, և փոխի ի նոցանէ իբրև զարև<sup>10</sup> զԱրեգակն<sup>11</sup> յաշխարհի: Այս ողջոյն՝ անուամբք<sup>12</sup> քարոզեալ էր և ծածկեալ զաւրութեամբ և գիտութեամբ:

Մի՛ փոխիցիք տանէ ի տուն (Ժ 7):

ՅԸ. Մի՛ զասպնջականն տրտմեցուցանել և մի՛ որկորստութեամբ կարծիս տալ<sup>13</sup>:

<sup>1</sup> B աշխարհիս

<sup>2</sup> A, B յսկիզբն

<sup>3</sup> B ի սերմանելն *փխ* սերմանեալ էր

<sup>4</sup> B *չիք* է

<sup>5</sup> B և *փխ* է

<sup>6</sup> B է

<sup>7</sup> B թէ

<sup>8</sup> B դարձցի: Եւ ի նմին տան ազանիջիք (Ժ 7):

<sup>9</sup> B ոչ սփռին

<sup>10</sup> B *չիք* արև

<sup>11</sup> A արեգական

<sup>12</sup> B անուամբք՝ սրբ. է աջ լս.

<sup>13</sup> B «Ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ, զի արժանի է մշակն վարձու իւրոյ» (Ժ 7): Մի՛ զասպնջականն տրտմեցուցանել և մի՛ որկորստութեանն կարծիս տալ: «Մի՛ փա-

**Բժշկեսալիք, որ ի նմա հիւանդք իցեն** (Ժ 9):

*Տեսանե՞ս, քան զնշանսն առնել զմիտս նոցա<sup>1</sup> [յ]արդարել կամի, զի նշանք առանց մտացն ուղղութեան չէ ինչ աւգուտ<sup>2</sup>:*

**Մերձեալ է արքա[յուլթիւն] Աստուծոյ<sup>3</sup>** (Ժ 9):

*123ք // Տեսանե՞ս զառաքելոցն զսպասաւորութիւնն, տեսանե՞ս զառաքելական պատիւն<sup>4</sup>: Ո՛չ զմարմնաւորս հրամայէ ասել, որպէս Մովսէս և մարգարէքն զերկնի և զերկրի բարութիւնս, այլ սոքա՝ զարքայութիւնն և, որ ինչ անդ<sup>5</sup>, երանութիւնքն:*

**Որ ո՛չ ընդունիցին զձեզ, իբրև ելանիցէք ի հրապարակս նոցա՝ թաւթափեսալիք զփոշի<sup>6</sup>** (Ժ 10-11):

*Ստ. Զի զփոշին անգամ, որ կռուեցաւ ի ճանապարհին, ի նոսա դարձուցին, որ է<sup>7</sup> նշանակ աշխատութեանն անաւգուտ եղեալ: Կամ ասեն. «Մեք անպարտ<sup>8</sup> եմք, արարաք ըստ հրամանի վարդապետին և դատարկ եղև աշխատութիւնս մեր, դո՛ւք տեսալիք»:*

**ՅՃ. (ոսկ)** *Ինքեանք վկայ լիցին, եթէ երանելի հիւրընկալութեանն չեղեն արժանի:*

**Սողոմեացոցն ընդարձակագոյն լիցի յաւուր յայնմիկ<sup>9</sup>** (Ժ 12):

*Հրեշտակքն ոչինչ նշանս արարին ի Սողոմ, այլ զնոսս նշանս արարին արարածոց և առակ: Այլ սոքա տեսին զնշանս, զի կոյրք բացան, բայց ի Սողոմ զտեսողսն հրեշտակք կո[ւ]րացուցին կամ թեթևագոյն տանջին ի հանդերձեալսն, որում<sup>10</sup> որ զայնս<sup>11</sup> ամենայն չարագործեաց, զի նոքա հրեշտակացն մեղան: Իսկ արքն<sup>12</sup>,*

---

Ինչիք տանէ ի տուն, յոր քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի գնիցեն ձեր և բժշկեսալիք, որ ի նմա հիւանդք իցեն, և ասալիք նոցա. Մերձեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ» (Ժ 7-10) **Փիւ** Մի փախիցիք... տալ

<sup>1</sup> B **չիք** նոցա  
<sup>2</sup> A աւգուտս  
<sup>3</sup> B Մերձեալ... Աստուծոյ՝ սրբ. է աջ լս.  
<sup>4</sup> B **չիք** տեսանես զառաքելական պատիւն  
<sup>5</sup> B անդ են  
<sup>6</sup> B զփոշիս, որ կռուեալ է ի քաղաքէս ձերմէ յոտս մեր թաւթափեսցուք ի ձեզ: Բայց զայս գիտասալիք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ:  
<sup>7</sup> A են **փիւ** է  
<sup>8</sup> B անպարտք  
<sup>9</sup> B Ասեմ ձեզ, զի սողոմայեցոց ընդարձակագոյն լիցի յաւուր յայնմիկ քան քաղաքին այնմիկ:  
<sup>10</sup> B Սողոմ **փիւ** որում  
<sup>11</sup> B զայս  
<sup>12</sup> B սոքա

որ զաշակերտսն ո՛չ ընկալան, զԱստուած անարգեն: Զի ասաց Քրիստոս. «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ» (Ժ 16):

**Վա՛յ քեզ Քորազին** (Ժ 13):

US Որ թարգմանի ըստ հեբրայեցոցն<sup>1</sup> աստ խորհուրդ<sup>2</sup>:

124ա //Վա՛յ քեզ Բեթսայիդայ<sup>3</sup> (Ժ 13):

Որ է զաւառ Պետրոսեանց և Յովհաննեանց<sup>4</sup>, որ ասի տուն որ-սողաց:

ԻՊ Ուսեալ ի մարգարէիցն և տեսեալ աչաւք զՔրիստոս և զառաքեալսն՝ անհաւատք մնացին:

**Տի[ւ]րոս** (Ժ 13):

US Որ է Ծուր, և ըստ հեբրայեցոցն ասէ պնդութիւն:

**Սիդոն** (Ժ 13):

Որ է Ծառան<sup>5</sup>, որ ասի որսողք:

ԻՊ Եղկելի կոչէ զտիւրացիսն և զսիդոնացիսն, որք ո՛չ ընկալան զպատգամս մարգարէիցն: Բայց եթէ տեսեալ էին զսքանչեւագործութիւն առաքելոցն՝ ի հաւատս հաստատեալ լինէին:

**Կափառնաւում**<sup>6</sup> (Ժ 15):

US Անմխիթարութիւն, ապա ուրեմն որպէս կարծեմ անմխիթար եղեալք էին՝ յորդորեալ<sup>7</sup> երբեմն վարդապետութեամբ աստուածային Բանից: Եւ յետ այնորիկ՝ մեղուցեալք ի չար վարդապետացն հեթանոսաց, որք ո՛չ այսպիսի էին բնութեամբ, որպէս հինգ առաքեալքն էին, ուստի Փիլիպպոս և երկու այլ լուծք գլխաւորացն:

Ոկ. (յոհ.) Կամ, որք տեսին զնշանս աստուածագործս և լուան զձայն Տեառն Աստուծոյ ահանջաւք իւրեանց, և ո՛չ հաւատացին նմա, այլ մեք լուեալ<sup>8</sup> կատարեսցուք զհրամայեալսն ի Տեառնէ: Զի ո՛չ

<sup>1</sup> B երրայեցոցն

<sup>2</sup> B խորհուրդումն (Որ թարգմանի... խորհուրդումն՝ սրբ. է ստորին լս.)

<sup>3</sup> B Բեթսայիդա, զի եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ էին զարութիւնքն, որ եղեն ի ձեզ, վաղուց ևս արդեաւք ի խորգ և ի մոխիր նստեալ և ապաշխարեալ էր: Բայց Տիւրոսի և Սիդոնի ընդարձակագոյն լիցի ի դատաստանի քան ձեզ: Եւ դու, Կափառնաւում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև ի դժոխս իջես (Ժ 13-15):

<sup>4</sup> B Յովհաննուց

<sup>5</sup> B Ծառան

<sup>6</sup> B Կապեռնատում

<sup>7</sup> B զի յորդորեալ

<sup>8</sup> A լվեալ

միայն անհաւատիցն, այլև մեզ անհնարին<sup>1</sup> տանջանք սահմանեաց, եթէ ո՛չ լինիմք ասպնջական հիւրոցն, որ առ մեզ մտանեն:

Որ ձեզ լսէ, ինձ լսէ<sup>2</sup> (Ժ 16):

Ստ. Որ լսէ զվարդապետութիւն առաքելոցն, զՔրիստոսի վարդապետութիւնն լսէ:

Որ զձեզ ընդունի, զիս ընդունի (հմմտ. Ժ 16):

Ոկ. (յհ.) 304բ ԵՓ // Յուցանէ աստ առաւել ասպնջականացն, քան հիւրոցն լինել խնամածու: Եւ զգլխաւոր պատիւն տայ, որոյ չիք այլ զուգական: // Արդ՝ մարդիք դուզնաքեայ աւծան<sup>3</sup> յառաքելութիւն առաքչին իւրեանց և առաքինացան յանկարծակի նշանաւք ցաւոցն հիւանդութեանց և այսոց պղծոց:

Դարձան եւթանասունքն խնդութեամբ<sup>4</sup> (Ժ 17):

Իգ. Իբրև շնորհապարտ պարգևաց նորա:

Եւ ասեն. Տէ՛ր, և դեւք հնազանդան<sup>5</sup> (Ժ 17):

Իգ. Զի անունն Քրիստոսի հնազանդեցուցանէր նոցա զդեւս, որ նախքան զայն զարհուրեալք<sup>6</sup> էին ի դիւաց: Անուամբ նորա հալածէին, վասնզի այնպէս<sup>7</sup> պարտ էր լինել ի սկզբանն, զի զաւրասցի աւետարանն յաղթել անհաւատութեանն, զի անուամբ Տեառն առաքելոցն պատահեաց այս մեծարգոյ զաւրութիւնս:

Եւ Յիսուս ասէ<sup>8</sup>. Տեսանէի զսատանայ անկեալ յերկնից<sup>9</sup> (Ժ 18):

ԵՓ Արդ՝ իբրև անկաւ յերկնից, կամեցաւ թաքչել յերկրի: Եւ ո՛չ ետ նմա թոյլ արիւնն և ջուրն, որ ել ի կողից Կենարարին, որ ի վերայ երկրի գնացին, և զի ի վերայ աւդոց թռչիցին: Ասացաւ, թէ մերժեցան<sup>10</sup> ի տարածանել բազկացն Քրիստոսի ի վերայ խաչին: Փախեաւ<sup>11</sup>, անկաւ<sup>12</sup> յամուրս իւր և անդ վատթարացոյց<sup>13</sup> զնա: Ըստ ասելոյն. «Անկցին ի կողմանէ քում[մ]է հազարք»,

<sup>1</sup> B նախ՝ անհրամանին, ապա քերած-ջնջած

<sup>2</sup> B լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ:

<sup>3</sup> B ածան

<sup>4</sup> B Դարձան եւթանասուն և երկուքն խնդութեամբ ասեն. Տէր և դեւք հնազանդին մեզ յանուն քո:

<sup>5</sup> A հնազանջան B հնազանդին մեզ յանուն քո

<sup>6</sup> B զաւր հուրեալք

<sup>7</sup> B այսմ

<sup>8</sup> B Եւ ասէ Յիսուս ցնոսա

<sup>9</sup> B յերկնից իբրև զփայլակն

<sup>10</sup> B մերժեցաւ

<sup>11</sup> A փախեւ

<sup>12</sup> B և անկաւ

<sup>13</sup> B վատթարեցոյց

վասնզի «զբիւրք<sup>1</sup> են ընդ աջմէ քուճմէ» (Սաղմ. Ղ 7)՝ *հրեշտակք: Այլ իբրև զնաց նա ի տուն ապաւինի իւրոյ, սակայն և անդի<sup>2</sup> հալածեաց զնա ի ժամանակին, իբրև ելոյծ նա զկապեալսն<sup>3</sup> և եհան զարգելեալսն: Արդ՝ խիթայր սատանայ յառաջագոյն ընդ նա, և հաւանեցոյց զխաչահանունն՝ ասելով. «Եթէ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ» (Մատթ. ԻԷ 40), *զի տեսցուք և հաւատասցուք ի քեզ: // Եթէ գոնեայ այսուիկ մնասցէ յամրոցի իւր իբրև զխորշակ:**

**Տեսի զսատանայ իբրև զփայլակ<sup>4</sup>, զի անկ[աւ] (Ժ 18):**

*Յայլ<sup>5</sup> ի<sup>6</sup> մեծութենէ և ի տերութենէ և յիշխանութենէ<sup>7</sup>, որ ասէր<sup>8</sup>. «Եղից զաթոռ իմ յամպս և<sup>9</sup> ի վերոյ քան զաստեղս երկնից, և եղէց նման<sup>10</sup> Բարձրելոյն» (Ես. ԺԴ 14):*

**ԻՊ** *Արդ՝ իջեալ ի խոնարհ Տէրն բարձանց՝ կապեաց զհսկայն: Ըստ այնմ, եթէ՝ «Իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս» (Յովհ. ԺԲ 31), որ<sup>11</sup> պատերազմէր: Ըստ Ջաքարիայի տեսութեանն՝ «Եկեալ թագաւորն խորտակեաց զկառսն Եփրեմի<sup>12</sup>»՝ և<sup>13</sup> զսատանայ<sup>14</sup>, «և զերիվարս յերուսաղեմէ»՝ զպաշտաւնեայք նորա, «և խորտակե[ս]ցէ զաղեղն պատերազմողի» (հմմտ. Չաք. Թ 9-10)՝ զմեքենայս և զնետս նորա զաղտածիգս: Եւ Եսայի ասէ. «Յայնժամ բազում կաղք աւար առնուցուն» (Ես. ԼԳ 23) և «Տկար մարդիկ ի խաղաղութեան<sup>15</sup> բնակեսցեն» (Ես. ԺԴ 30):*

**Տեսի, ասէ, զսատանայ անկեալ յերկնից (Ժ 18):**

**ԵՓ** *Ո՛չ յերկնից անկաւ, քանզի ո՛չ փայլակն յերկնից անկանի, այլ ամպք ծնանին զնա: Ջաւրինակ փայլական<sup>16</sup>, յանկարծակի յական<sup>17</sup> քթթել: Այսպէս անկաւ սատանայ ի ներքոյ խաչին յաղ-*

<sup>1</sup> Բ բիւրք

<sup>2</sup> Բ անտի

<sup>3</sup> Բ զկապանս

<sup>4</sup> Բ զփայլակն

<sup>5</sup> Բ յայնմ

<sup>6</sup> Բ *չիք* ի

<sup>7</sup> Բ յիշխանութենէ իւրմէ

<sup>8</sup> Բ ասաց

<sup>9</sup> Բ *չիք* յամպս և

<sup>10</sup> Բ նմանել *փիս* և եղէց նման

<sup>11</sup> Բ և զհոգորն տկարացոյց, որ

<sup>12</sup> Բ զկառս յեփրեմէ

<sup>13</sup> Բ որ է *փիս* և

<sup>14</sup> Բ սատանայ

<sup>15</sup> Բ խաղաղութեամբ

<sup>16</sup> Բ գոր աւրինակ փայլակն

<sup>17</sup> Բ *սրբ.*՝ անկան յական ի



*թուլթեան, յանկարծակի յիշխանութենէ իւրմէ, որպէս փայլական յամպոց անկաւ: Եւ զոր աւրինակ՝ նա<sup>1</sup> ելանէ ի տեղոջէ իւրմէ և այլ ո՛չ դառնայ անդրէն, այնպէս և սատանայ անկաւ յերկնից և այլ ո՛չ ևս հաստատի:*

**Ահաւասիկ<sup>2</sup> ետու ձեզ իշխանութիւն<sup>3</sup> (Ժ 19):**

- ԻԳ. *Զի ուսցուք, եթէ չէ կարաւտ յայլ ումեքէ առնուլ, այլ ինքն իշխանութեամբ տայ որպէս կամի: Ըստ որում Պետրոսի ասաց. «Ես<sup>4</sup> տաց քեզ զփականս արքայութեան<sup>5</sup> երկնից» (Մատթ. ԺԶ 19):*
- 125բ // *Իսկ ասելն երբեմն ց Պետրոս. «Աղաչեցի զՀայր, զի մի՛ պակասեսցին հաւատք քո» (ԻԲ 32), կամ ասելն ցՀայր. «Վասն սոցա աղաչեմ» (հմմտ. Յովհ. ԺԷ 9), այն զմիաբանութիւնն ընդ Հաւր նշանակէ:*

**Կոխել զաւճս և զկարիճս (Ժ 19):**

- ԵՓ. *Փոխանակ, զի ընթացոյց զստութիւնն զաւճն առ գարշապարն, բարձրացոյց Քրիստոսի ողորմութիւնն՝ զառաքելոցն գարշապարն<sup>6</sup>, ի ձեռն խաչին, զի եղիցի<sup>7</sup> ի վերոյ քան զիշխանութիւնն սատանայի:*

- ԻԳ. *Զդաժանագոյն<sup>8</sup> կենդանիսն դնէ աւրինակ: Եւ<sup>9</sup> որպէս Եսայի ասէ. «Մանուկ մատաղ ածցէ զձեռն իւր ի բոյն կորեանց իժից» (Ես. ԺԱ 8), և «Մի՛ վնասեսցի ոք ի լերին սրբութեան<sup>10</sup> իմոյ» (Ես. ԿԵ 25):*

- ԻԳ. *Եւ Դաւիթ. «Ի վերայ իժից և քարբից գնասցես» (Սաղմ. Ղ 13):*

- ԻԳ. *Իսկ արդ՝ պնդակազմ առնէ զառաքեալսն աստուածային զաւրութեամբն, և հրաման տայ մերկ գարշապարաւք կոխել զաւճս և զկարիճս:*

**Եւ զամենայն զաւրութեամբն թշնամոյն<sup>11</sup>, և ձեզ ինչ ո՛չ մեղիցեն (Ժ 19):**

*Եւ ոչինչ ունել կասկած, զի եբարձ զաւրութեամբ, որով վնասեաքն<sup>1</sup>: Քանզի չիք ոք այնպէս թշնամի<sup>2</sup> և պատերազմող, որ*

<sup>1</sup> Ե նոր

<sup>2</sup> Ե ահա

<sup>3</sup> Ե իշխանութիւն կոխել զաւճս և զկարիճս

<sup>4</sup> Ե և *փես* ես

<sup>5</sup> Ե արքայութեանն

<sup>6</sup> Ե զգարշապարն

<sup>7</sup> Ե եղիցին

<sup>8</sup> Ե աստ զդաժանագոյն

<sup>9</sup> Ե *չիք* եւ

<sup>10</sup> Ե սրբութեանն

<sup>11</sup> Ե զաւրութիւն թշնամոյն

կամի զկորուստ մեր: Վասն որոյ զաւրացոյց, զի յաղթեսցուք այնմիկ, որ յաղթահարեաց զբնութիւնս մեր և յառաջինն մեր փոխեաց ի փառս: Իսկ եթէ այժմ խածանէ զոք, անձանց մեղէ, որ արկին<sup>3</sup> զանձինս ընդ նորա մահաբեր թիւնաւքն<sup>4</sup>:

Բայց ընդ այն մի՛ խնդայցէք<sup>5</sup>, եթէ այսք հնազանդին ձեզ (Ժ 20):

Թէպէտ<sup>6</sup> էին իրքն արդարև խնդութեան արժանի, նա<sup>7</sup> այլ ևս մեծագոյն առաջի դնէ:

Խնդայցէք, զի անուանք ձեր գրեալ են յեր[կինս] (Ժ 20):

126ա // Մովսէս գտոյն ասէ. «Եթէ թողուս սոցա զմեղս՝ թող, ապա եթէ<sup>8</sup> ո՛չ՝ և զիս ջնջեայ ի դպրութենէն, յորում գրեցեր» (Ելք ԼԲ 31-32): Զի ըստ մարմնական բանից ձևացուցանել և զիմանալիսն, զի են աստ դպրութիւնք թագաւորաց, յորում գրեալ են իւրաքանչիւրոցն արժանաւորութիւնք, որք նոցա կարգեցին զանձինս ի ծառայութիւն: Այսպիսի են և առ<sup>9</sup> Աստուծոյ գրեալքն, որք նմա ի սպասաւորութիւն նուիրեցին զանձինս: Ո՛չ եթէ գիր է անդ դրոշմեալ, այլ անվրէպ աստուածային գիտութիւն[ն], որ գիտէ կշռել ըստ վաստակոցն զպարգևսն: Զի<sup>10</sup> ոմանք գրեցան և ջնջեցան որպէս Յուդայ, և որք մարգարէացան և դեւս հանին, և ո՛չ են անուանք նոցա ի գիրս<sup>11</sup> կենաց, այլ լսեն. «Ի բաց կացէք յինէն ամենայն մշակքդ<sup>12</sup> անիրաւութեան» (ԺԳ 27):

Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգևովն Սրբով<sup>13</sup> (Ժ 21):

Իգ. Ամենայն ուրեք ի տնաւրէնութիւնն Տեառն մերձ դնէ զՀոգևոյն գործակցութիւնն՝ Հոգևովն լինել ցնծութիւն Որդոյ և Հաւր կամացն լրումն:

Գոհանամ զքէն, Հա՛յր<sup>1</sup> (Ժ 21):

<sup>1</sup> B վնասէաք

<sup>2</sup> B բնութեամբ թշնամի

<sup>3</sup> B արկանեն

<sup>4</sup> B թունաւքն

<sup>5</sup> B խնդայք

<sup>6</sup> B թէպէտև

<sup>7</sup> B նաև

<sup>8</sup> B թէ

<sup>9</sup> B չիք առ

<sup>10</sup> B Եւ զի

<sup>11</sup> B գիրն

<sup>12</sup> B մշակք

<sup>13</sup> B Սրբով և ասէ

Իգ. Վասնզի բազում ինչ անձամբ դնէ: Աստ<sup>2</sup> գոհանայ զՀաւրէ և ցնծայ Հոգովն: Թուի, թէ յայտնէ զմիաբանութիւն և զգործակցութիւն ընդ Հաւր և<sup>3</sup> Հոգւոյն, զի զամենայն ինչ Հայր գործէ Որդով և Հոգւով:

ՈԿ Տե՛ս, որչա՞փ իրաւք փութայ ածել զնոսա ի հաւատս, գոհանայ<sup>4</sup> վասն մեր ամենեցուն: Զի ցուցցէ զՀայր մեծ և սքանչելի, և զինքն և զՀոգի[ն] հաւասար Հաւր և զամենեսին՝ ի նորին գիտութիւնն ձգելով<sup>5</sup>:

126բ // Ծածկեցեր<sup>6</sup> զայս յիմաստնոց և ի գիտնոց (Ժ 21):

Յայսմ<sup>7</sup> վայրի իմաստուն զգպիրս[ն] և զփարիսացիսն կոչէ ո՛չ ճշմարտութեամբ, այլ խորամանկութեամբ<sup>8</sup> և նենգութեանն<sup>9</sup> կարծեաւք:

ՍՍ Ծածկեցաւ<sup>10</sup> յիմաստնոց աշխարհէս, զի իմաստունք մաքառին ընդդէմ հաւատոյ և ո՛չ ունին զպարզ և զուղիղ միտս: Ծածկեցաւ ի նոցանէ:

Եւ յայտնեցեր տղայոց (Ժ 21):

ՈԿ Այն իսկ է անմեղաց և միամտաց<sup>11</sup> աշակերտացն: Եւ յիրաւի վայելեցին այն<sup>12</sup>, և ցուցանէ, եթէ որք անկան ո՛չ միայն ի նմանէ, այլև՝ ի Հաւրէ: Եւ այսու զաշակերտսն յորդորագոյնս առնէ և ցուցանէ, թէ որպիսի՞ շնորհի արժանի եղեն որսորդքն:

Ստ. Զորս կոչեաց երանելին Պաւղոս յիմարս Աստուծոյ, զի՝ «Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ» (Ա Կորնթ. Ա 25):

Այո՛, Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո (Ժ 21):

ՈԿ. Եւ այսու ցուցանէ, եթէ իւր և Հաւր մի կամք են, զի Որդի արար և վճարեաց:

Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հ[աւրէ]<sup>13</sup> (Ժ 22):

<sup>1</sup> B Հայր, Տէր երկնից և երկրի

<sup>2</sup> B այլ աստ

<sup>3</sup> B և ընդ

<sup>4</sup> B և գոհանայ

<sup>5</sup> A ցգելով

<sup>6</sup> B զի ծածկեցեր

<sup>7</sup> A յայսմն

<sup>8</sup> B խորամանկութեամբ

<sup>9</sup> A նենկութեանն

<sup>10</sup> B Դարձեալ ծածկեցաւ

<sup>11</sup> B միամիտ

<sup>12</sup> B ի յայն

<sup>13</sup> B Հաւրէ իմմէ

Ոկ. (յհ.) Եւ դու մի՛ մարդոյ տուեալ կարծիցես, և<sup>1</sup> մի՛ երկուս Աստուածս անծինս կարծիցես<sup>2</sup>: Քանզի երկու բնութիւն միացաւ ի մի Քրիստոս, որ անմեկնելի է ի ծոցոյ Հաւր: Բարձրացաւ ի վերայ խաչին Բանն Աստուած և մեռաւ մարդկային բնութեամբ: Եւ կաց<sup>3</sup> մնաց անմահ՝ միացելովն ի նմա աստուածութեամբ: Վասն այնորիկ մահ մարմնոյն աստուածային անմահ բնութեանն համարէր:

ՍՏ Քանզի Որդին Աստուծոյ մատնեցաւ վասն ամենեցուն: Վասն այնորիկ մահ մարմնոյն աստուածային անմահ բնութեամբն<sup>4</sup>  
 127ա համարէր: //Վասն այնորիկ տալ, ասացաւ, նմա իմաստութիւն Աստուծոյ, զի հալածեսցէ զանաւրէնութիւն, և զաւրուրէն Աստուծոյ, զի զաւտար իմաստութիւնն խափանեսցէ, և ճշմարտութիւն, զի կորուսցէ զստութիւն[ն]:

ՍՏ Աստ<sup>5</sup> յանդիմանի Մարկիոն, որ ասէր երկու երկինք միայն Որդոյ և ո՛չ Հաւր: Եւ թէ<sup>6</sup> ո՞չ էին Հաւր, զի ա՞րդ ետ Որդոյ: Վասնզի<sup>7</sup> ոմանք կարծէին վասն Հաւր, եթէ Արարիչ է Որդոյ և ո՛չ Հայր: Վասն այսորիկ հատանելով զկարծիս նոցա՝ ասաց. «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրէ իմմէ»:

Ո՛չ<sup>8</sup> ոք գիտէ զՈրդի, եթէ ո՛չ Հայր (Ժ 22):

ԵՓ Արդ՝ զայս<sup>9</sup> վասն այնորիկ ասէ, ո՞վ<sup>10</sup> է, որ ճանաչէ զՀաւր միտս<sup>11</sup>, եթէ ո՛չ Բանն, որ ելանէ ի նմանէ, որ ի վեր է քան զամենայն միտս: Եւ խորհուրդս<sup>12</sup>, որ շարժին, ի խոնարհ գտանին ի նմանէ: Եւ ո՛չ եթէ տեսանելն և լսելն, զի և հրէայքն տեսին զՏէր մեր: Եթէ գիտացեալ էին, ո՛չ ի խաչ հանէին: Որպէս ասաց. «Հայր, թող սոցա, զի ո՛չ գիտեն զինչ գործեն» (ԻԳ 34): Արեգակն<sup>13</sup> և լուսին և արմատք և քարինք պատուականք երեւին, այլ ո՛չ ոք գիտէ: Արդ՝ Որդի Հաւր խորհուրդ է:

<sup>1</sup> B այլև

<sup>2</sup> B կարծիցես և մի երկուս ծնունդս, նա ևս

<sup>3</sup> B եկաց *փի* և կաց

<sup>4</sup> B բնութեանն

<sup>5</sup> B դարձեալ աստ

<sup>6</sup> B եթէ *փի* եւ թէ

<sup>7</sup> B և վասնզի

<sup>8</sup> B և ոչ

<sup>9</sup> B զայս ամենայն

<sup>10</sup> B զի ով

<sup>11</sup> B զՀայր *փի* զՀաւր միտս

<sup>12</sup> B զամենայն խորհուրդ

<sup>13</sup> B արդ՝ արեգակն

- US *Որպէսզի կապեսցէ զգիտութիւն երկուցունց ի միմեանս, նաև<sup>1</sup> գէտութիւն բնութեանն Աստուծոյ ո՛չ ոք կարէ գիտել: Ըստ առաքելոյն. «Ընդ հայելի աւրինակաւ փոքր ի շատէ գիտեմք» (Ա Կորն. ԺԳ 12):*
- ԻԳ *Հայր<sup>2</sup> միայն գիտէ զՈրդի ստոյգ գիտութեամբ, իսկ մեր գիտութիւնս մասնաւոր տուեալ է ի Հաւրէ վասն Որդոյ<sup>3</sup>:*
- US *Որում<sup>4</sup> Հայրն յայտնէ: Որպէս ասացաւ Պետրոսի, թէ՛ «Մար-127բ մին և արիւն ո՛չ յայտնեաց քեզ, // այլ Հայրն<sup>5</sup> իմ, որ յերկինս է» (Մատթ. ԺԶ 17):*
- ԻԳ. *Ցուցանէ զբնութեանն հաւասարութիւն, զի Որդի միայն գիտէ զՀայր որպէս պարտ է գիտել:*

**Եւ ում կամիցի Որդին յայտնել<sup>6</sup> (Ժ 22):**

*Արդ՝ կամեցաւ և ծանուցեալ եղև Աստուած Հայր՝ վասն կամաց իւրոց և Որդի՝ վասն գործոց իւրոց:*

- ՈԿ *Յորժամ ի գործոցն առին զհանդէս զաւրութեան նորա ո՛չ միայն նշանաւքն, զոր տեսանէին արարեալ, այլ զի անուամբ նորա մեծամեծ զաւրութիւնս կարացին առնել:*

**Առ աշակերտսն ասէ. Երանի՛ աչաց ձերոց, զի տեսանեն և ա-կանջաց ձերոց, զի լսեն<sup>7</sup> (Ժ 23-24):**

- US *Վասնզի երևելի աչաւք փարիսացիքն և հրէայքն տեսին զՔրիստոս և զգալի<sup>8</sup> և զմարմնական ձայնն լուան և ո՛չ հաւատացին: Ապա ուրեմն երանէ զաչս և զականջս առաքելոցն, զի այնպէս տեսանէին զՔրիստոս, որպէս Որդի Աստուծոյ, և այնպէս լուան, որպէս պատշաճ էր Որդոյ Աստուծոյ լսել: Քանզի չէր ինչ ընդհատ ի հանդերձեալ փառացն, այն, որում ի նա յուսամք: Նաև ի<sup>9</sup> մարմնի միացեալ տեսանէին և խաւսէին ընդ ամենեցուն՝ Արարչին և նորոգողին: Յիրաւի<sup>10</sup> երանէ առանձինն զնոսա:*

<sup>1</sup> B Ասէ նաև  
<sup>2</sup> B այլ Հայր  
<sup>3</sup> B Որդւոյ, և յՈրդւոյ վասն Հաւր, և ի սոցունց վասն Հոգւոյն, և ի Հոգւոյն վասն Հաւր և Որդւոյ  
<sup>4</sup> B Եւ որում  
<sup>5</sup> B Հայր  
<sup>6</sup> B յայտնել: Դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ (Եւ ում... յայտնեալ՝ սրբ. է ստորին լս.)  
<sup>7</sup> B Եւ դարձեալ առ աշակերտսն ասէ. Երանի աչաց, որ տեսանիցեն, զոր տեսանէք: Ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել, զոր դուք տեսանէք և ոչ տեսին:  
<sup>8</sup> B սրբ. զգալի  
<sup>9</sup> B ընդ  
<sup>10</sup> B և յիրաւի

**Զի բազում արդարք<sup>1</sup> և թագաւորք կամեցան տեսանել, զոր տեսանէքդ, և ո՛չ տեսին** (Ժ 24):

*Քանզի բազումք ի մարգարէիցն և յարդարոցն իմանալի աշաւք տեսին զաւր գալստեանն Քրիստոսի: Որպէս և ինքն ասէ<sup>2</sup>, եթէ Աբրահամ ետես զմարդանալն իմ և [զ]իջանելն ի դժոխս և հանեալ զկապեալսն ի վիշապին կամակորութենէ (հմմտ. Յովհ. Ը 53-59): Այլև առաջի եղեալ բանայ զմիտս նոցա իմանալ և ի միտ*  
**128ա** *առնուլ, թէ //զորպիսի<sup>օ</sup> զոք<sup>3</sup> տեսանեն, զոր սուրբք ամենիքեան ցանկային: Եւ, զոր հարսն բարբառի, ցոյց ինձ դէմս քո, զի գեղեցիկք<sup>4</sup> են, և խաւսք քո քաղցունք:*

**Յարեաւ<sup>5</sup> ոմն աւրինական, փորձէր զնա և ասէր. Վարդապե՛տ, զի՞նչ գործեցից, [զի] զկեանսն յաւիտենականս ժառանգեցից<sup>6</sup>** (Ժ 25):

**ԻԳ** *Այս աւրինական ի հարցուածոցն<sup>7</sup> և ի պատասխանոյն Տեառն ցուցեալ<sup>8</sup>, զի ո՛չ էր յատելեաց[ն] Քրիստոսի, թէպէտ<sup>9</sup> աւետարանիչն ասէ, եթէ փորձելով մատեաւ: Արդ՝ համբաւէին փարիսացիքն, եթէ լուծանէ զաւրէնսն և զմարգարէսն արհամարհէ և Աստուած զանձն անուանէ, հակառակ<sup>10</sup> Աստուծոյ է: Զայս կարծիս կամեցաւ բառնալ աւրինականն: Հարցանէր՝ փորձելով, եթէ զաւրինացն դնէր<sup>11</sup> առաջի, եթէ զհակառակ նորին, իսկ որ զծածուկսն տեսանէ, քաղցրութեամբ ածէ յուղղութիւն, և ցուցանէ զանձն միաբան աւրինացն և առաքէ զնա աւրէնսն<sup>12</sup>:*

**Ասէ ցնա. Յաւրէնսն<sup>13</sup> զի՞նչ գրեալ է, որպէ՞ս ընթեռնուս** (Ժ 26):

*Ազատէ զինքն յայնպիսի կարծեաց և ասէ. «Ո՞չ ապաքէն խրատեցար յաւրինացն և ուսար<sup>14</sup> ի մարգարէիցն, որ ունիս հասանել փրկութեան, դու և ամենեքին, որք նովաւ դաստիարակեն զանձինս»:* Զայս լուեալ՝ ողջացաւ ի կարծեացն:

<sup>1</sup> B մարգարէք

<sup>2</sup> B իսկ ասէ

<sup>3</sup> B ոք

<sup>4</sup> B գեղեցիկ

<sup>5</sup> B Եւ ահա յարեաւ

<sup>6</sup> A ժառանկեցից

<sup>7</sup> B յաւրինակի հարցուածոցն

<sup>8</sup> B ցուցեալ եղև

<sup>9</sup> B թէպէտև

<sup>10</sup> B և հակառակ

<sup>11</sup> B դնէ

<sup>12</sup> B սրբ.՝ յաւրէնսն

<sup>13</sup> B Եւ նա ասէ ցնոսա. Յաւրէնս

<sup>14</sup> B յաւրինացն և ուսար

**Սիրեսցես<sup>1</sup> զՏէր Աստուած քո** (Ժ 27):

*Տէր մի է: Քանզի Յիսուս ո՛չ արտաքոյ Հաւր զանձն այլ ոմն Աստուած անուանեաց, այլ պահեաց զաստուածութիւնն Հաւր և զանձն միաբան ընդ ծնաւդին<sup>2</sup> իբրև զՈրդի: Եւ՝ ասելով<sup>3</sup>. «Զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած» (Յովհ. Ժ 3) և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս:*

**128բ // Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ<sup>4</sup> և յամենայն զաւրութենէ<sup>5</sup>** (Ժ 27):

*Ջամենայն տեսակս<sup>6</sup> վերջին լինել առ Աստուծոյ սէր, ի Տեառնէ աւետարանեցաւ և յաւրինացն, և<sup>7</sup> զամենայն զաւրութիւն և զցանկութիւն ի նա ունել: Արդ՝ ուսոյց Տէրն զծնողացն արհամարհել զպատիւ, եթէ խափանիչ լինին կամացն Աստուծոյ: Եթէ<sup>8</sup> ոք հրաման առնու գործել զմեզս հրամանաւն Աստուծոյ, մի՛ վերջացի, որպէս ի պոռնկանոցէն հրամայեաց առնուլ զկիրնն: Եւ որ զմարգարէն եհար՝ հաճոյ գտաւ, իսկ որ ոչն եհար՝ պատժեցաւ: Արդ՝ ամենայն ուրեք զսէրն<sup>9</sup> Աստուծոյ զաւրանալ և զամենայն ոյժ և զզաւրութիւն<sup>10</sup> ի նա թափել, և զամենայն նեղութիւնս յուժարութեամբ կրել վասն նորա, և զամենայն հեշտալիս անարգել և միայն զսէրն Աստուծոյ ընտրել<sup>11</sup>:*

**Եւ զ[ը]նկեր քո իբրև զանձն քո** (Ժ 27):

*Վասնզի ցոյցք աստուածային սիրոյն ունի եղբայրսիրութիւնն, և բազմապատիկ բանիւք<sup>12</sup> առատագոյնս ունի միտս տալ բանիս:*

**Եւ Յիսուս ասէ<sup>13</sup>. Ջայդ արա՛ և կեցցես** (Ժ 28):

*Ո՛չինչ կամեցաւ յաւելուլ<sup>14</sup> առ այն, այլ գովեաց զաւրէնան և զպատասխանիսն, եթէ ուղիղ է և կեցուցանէ, որք պահեն զնա:*

<sup>1</sup> Ե նա պատասխանի ետ և ասէ. Սիրեսցես

<sup>2</sup> Ը ծնողին

<sup>3</sup> Ե ըստ ասելոյն

<sup>4</sup> Ե անձնէ քումմէ

<sup>5</sup> Ե զաւրութենէ քումմէ և յամենայն մտաց քոց

<sup>6</sup> Ե ճախ լս. սրբ. տեսակս առաքինութեան

<sup>7</sup> Ե չեք և

<sup>8</sup> Ե եւ եթէ

<sup>9</sup> Ե սրբ. ի սէրն

<sup>10</sup> Ե զաւրութիւն

<sup>11</sup> Ը ընդրել

<sup>12</sup> Ե զնացիւք

<sup>13</sup> Ե ասէ ցնա. Ուղիղ ետուր զպատասխանիդ

<sup>14</sup> Ե յամել

**Իբրև կամեցաւ արդարացուցանել զանձն, ասէ<sup>1</sup>. Եւ ո՞վ է իմ ընկեր (ժ 29):**

*Կարծեցաւ ոմանց, թէ ամբարտաւանութեամբ ինչ խաւսեցաւ: Բայց ո՛չ: Ի տերունական բանից անտի յայտ<sup>2</sup> է, քանզի յաւրէնսն գրեալ էր. «Սիրել զսիրելին և ի բաց դառնալ ի թշնամոյն<sup>3</sup>»: Եւ*

**129ա** *այսպէս ո՛չ էր հասարակ տարածեալ սիր(1)ոյն առաւելութիւն ի թշնամիսն և ի սիրելիսն: Կամեցաւ ուսանել, եթէ որպէս պարտ է բաժանել սիրոյն, զի հաղորդեսցի գիտութեամբն:*

**Եւ Յիսուս ասէ<sup>4</sup>. Այր մի իջանէր յերուսաղեմէ յերեքով<sup>5</sup> (ժ 30):**

**ՍՏ** *Այրն, որ իջանէր յերուսաղեմէ, Ադամ և ամենայն մեղաւորք ըստ նմանութեան յանցանացն Ադամայ: Յերուսաղեմէ՝ ի դրախտէն, յորմէ արտաքսեցաւ և անկաւ ի ստորին բնակութիւնս: Երեքով, որ է կուրութիւն, աշխարհս է, յոր<sup>6</sup> բնակեցաւ յետ դրախտին:*

**ԻԳ** *Ամենայն ուրեք զանձն աւրինակ տայ բարեաց, զոր ինչ ուսոյցն. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ» (Մատթ. ժԱ 29) և «Որդի մարդոյ ո՛չ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել» (Մատթ. Ի 28, Մարկ. ժ 45) և «Սիրեցէք զմիմեանս, որպէս ես<sup>7</sup> զձեզ սիրեցի» (Յովհ. ժԵ 12):*

**Անկաւ ի ձեռս աւազակացն<sup>8</sup> (ժ 30):**

**ՍՏ** *Աւազակք՝ սատանայ և դեւք նորա:*

**ԻԳ** *Ադամ և ամենայն ծնունդք նորա իբրև զայր մի՝ անկեալ ի ձեռս նոցա, քանզի յաստուածային վայելչութենէ<sup>9</sup> փառաց դրախտին, զոր ունեաք<sup>10</sup>, սողոսկեալ անկաք ի բարձրութենէն ի խոնարհ՝ իջեալ ի ձեռն դաւաճանողին զմեզ:*

**Որք մերկացին<sup>11</sup> զնա (ժ 30):**

<sup>1</sup> Ե նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ ցՅիսուս

<sup>2</sup> Ե սրբ.՝ յայտնի է

<sup>3</sup> Ե թշնամոյն

<sup>4</sup> Ե Պատախանի ետ Յիսուս և ասէ

<sup>5</sup> Ե յերեքով

<sup>6</sup> Ե որ

<sup>7</sup> Ե չեք ես

<sup>8</sup> Ե եւ անկաւ ի ձեռս աւազակաց:

<sup>9</sup> Ե վայելչութենէ

<sup>10</sup> Ե ունեաք

<sup>11</sup> Ե մերկացուցին



US *Ի փառացն և յանմահութենէն զանկեալն<sup>1</sup> ասէ:*  
 ԻՊ *Եւ մերկացեալ յաստուածային շնորհացն՝ խայտառակ գտաք,  
 մինչև ասել Աստուծոյ. «Ո՛չ մնացէ Հոգի Իմ Ի մարդիկդ յայդոսիկ,  
 վասն լինելոյ դոցա մարմին» (ԾԱՌԴ. Զ 3): Եւ զամենայն զգառնութիւն<sup>2</sup>  
 սատանայի եհեղ Ի մեզ վասն չար յուժարութեանն մերոյ և  
 անտես առնելոյն Աստուծոյ, վասնզի<sup>3</sup> եղաք ուխտ ընդ  
 դժոխս և ընդ մահու դաշինս կռեցաք, և եղաք զյոյսն  
 129բ մեր Ի խստութիւն: // Եւ յուժարութեամբ հերքեցաք յամենակալին  
 խնամոցն:*

**Վէրս<sup>4</sup> Ի վերայ եդին** (Ժ 30):

US *Մեղքն և յանցանքն և չարաչար կիրքն:*

**Թողին կիսամահ** (Ժ 30):

*Զի մեռաւ մեղաւքն՝ վիրաւորեալ կիսամահ սամարացոյն և<sup>5</sup>  
 վասն ակնկալութեան, այսինքն՝ Փրկչաւն Ի կենդանութիւն փոխիլ:*

ԿՂ *Զի<sup>6</sup> ո՛չ կարացին յափշտակել զհոգին Ի մարմնոյն ասէ զայս:*

ԻՊ *Իսկ նախանձ թշնամոյն հնարեցաւ զամենայն բնութիւնս  
 մարդկան առհասարակ սպանանել մեղաւք: Այլ աստուածային  
 շնորհն մնաց<sup>7</sup> յարդարսն յամենայն դարս՝ ըստ նմանութեան  
 Մելքիսեղեկի և այլոց արդարոցն:*

**Քահանայ գայր Ի ջլանելի<sup>8</sup>** (Ժ 31):

ԿՂ *Մելքիսեղեկ ասի [և] Ղևտացի<sup>9</sup>:*

US *Որպէս ինձ թուի՝ մարգարէք և վարդապետք աւրինացն, որ  
 յառաջ քան զՔրիստոս:*

ԻՊ. *Բազում մարգարէք և քահանայք, զնոյն բնութեանս կիրս ունեցող,  
 հազիւ<sup>10</sup> ուրեմն զերծուցին զանձինս Ի մահաբեր վիրաց  
 մեղացն: Սակայն անկելոցն աւզնել ո՛չ զաւրեցին, թէպէտև տեսին  
 զծնունդս Ադամայ: Անկեալ ընդ այսպիսի արտիւք՝ զանց  
 արարին, զի ո՛չ էին կարող փրկել:*

<sup>1</sup> B զանկանելն

<sup>2</sup> B թոյնս գառնութեան

<sup>3</sup> B զի

<sup>4</sup> B Եւ վէրս

<sup>5</sup> B քերած-ջնջած է

<sup>6</sup> B Եւ զի

<sup>7</sup> B զաստուածային շնորհսն մնացոյց

<sup>8</sup> B մի գայր Ի ջլանելի

<sup>9</sup> B Ղևտացին

<sup>10</sup> A հազիւ

**Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն<sup>1</sup> (Ժ 33):**

- ԿՂ** *Ջմարդկային կիրս ասէ:*
- ԵՓ** *Արդ՝ Տէր մեր իբրև կամեցաւ կեցուցանել զազգս մարդկան, զի ընթացան հրեշտակք անուամբ իւրեանց և թագաւորք կոչմամբ իւրեանց և մարգարէք նշանաւք իւրեանց և քահանայք նուիրականաւք իւրեանց: Եւ մարդիկ // ո՛չ փրկեցան, մինչև էջ յերկնից այն, որ բուռն հարկանէ և յարուցանէ:*
- ՍՏ** *Սամարացի՝ Քրիստոս, որ սամարացի կոչեցաւ և դիւահար<sup>2</sup>: Որպէս ասէ Գրիգորիոս. «Այլ փրկեաց զազգս մարդկան»:*
- ԻԳ** *Եմուտ<sup>3</sup> յորովայն Կուսին և եկն ծննդեամբ յերկիր և շրջեցաւ անարատութեամբ: Թէպէտև կարող էր աստուածաբար փրկել, զի ամենայն ինչ նմա<sup>4</sup> հնարաւոր է, սակայն իրաւամբք կամեցաւ կեցուցանել: Էառ զմերս և հատոյց զպարտիս<sup>5</sup> մեր: Եւ, զոր աւրինակ՝ զանկեալ անասունն ի խորխորատ ո՛չ ոք կարէ ի վեր բերել, եթէ ո՛չ ինքն ի խորխորատն իջանէ, և զմանուկ զլորեալ ոք չկարէ ի վեր առնուլ, թէ ո՛չ առ նա խոնարհեսցի, նոյնպէս և Տէրն:*

**Տեսեալ<sup>6</sup> զնա՝ գթացաւ: Եւ պատեաց<sup>7</sup> զվէրս նորա (Ժ 33-34):**

- ԵՓ** *Ջի որքան յաճախեաց սատանայ խոցոտել զմեզ, յաճախեաց կենարարն<sup>8</sup> պատել զվէրս մեր: Ըստ այնմ, եթէ՛ «Ուր առաւել եղեն մեղքն, առաւել եղեն շնորհքն» (Յոռմ. Ե 20), վասնզի ճրի դեղաւք բժշկեաց զմեզ: Եւ սատանայ ճրի եհար և վիրաւորեաց զմեզ, զի ո՛չինչ վնասեցաք նմա:*

**Արկ ի վերայ նորա<sup>9</sup> ձէթ<sup>10</sup> (Ժ 34):**

- ՍՏ** *Տէր<sup>11</sup> «ձէթ» զողորմութիւնն ասէ, զոր արար ի վերայ նորա, «գինի» (Ժ 34)՝ ուրախութիւն[ն], զոր ի փրկելն յառաջագոյն պարգևեաց:*
- ԻԳ** *Կամ աւագանին շնորհքն՝ զաւծումն որդեգրութեան, և գինին՝ արիւնն փրկական, որ կենդանացոյց զմեռեալս մեղաւք և առողջացոյց զվէրս հոգոց:*

<sup>1</sup> B նոյն առ նովաւ

<sup>2</sup> B և դիւահար՝ սրբ. է ձախ լս.

<sup>3</sup> B արդ՝ եմուտ

<sup>4</sup> B *չիք* նմա

<sup>5</sup> B զպարտս

<sup>6</sup> B և տեսեալ

<sup>7</sup> B մատուցեալ պատեաց

<sup>8</sup> B կենդանարարն

<sup>9</sup> B *չիք* նորա

<sup>10</sup> B ձէթ և գինի

<sup>11</sup> B *չիք* Տէր

- Նդ** **ի վերայ գրաստի<sup>1</sup> իւրոյ** (Ժ 34):
- US** *Գրաստ, յոր եհան մարմինն իւր, որով եբարձ գմեղս աշխարհի:*
- 130բ ԻԳ** *// Արդ՝ երբեմն ի վերայ ուսոյ բառնայ և երբեմն ի վերայ գրաստի<sup>2</sup>, զի որ<sup>3</sup> ինչ պատշաճի կերպարանն, սոյնպէս<sup>4</sup> ձևացուցանէ գԲանն:*
- Ած զնա ի պանդոկ<sup>5</sup> մի<sup>6</sup>** (Ժ 34):
- US** *Պանդոկն<sup>7</sup>՝ եկեղեցի Աստուծոյ, պանդոկապետն<sup>8</sup>՝ առաքեալք և նոցին նմանողք՝ վարդապետք եկեղեցոյ:*
- ԻԳ** *Ի սմա ժողովէ զանկեալս<sup>9</sup> և զվիրաւորեալս յարկածից մեղաց, զոր ինքն կենդանացոյց, զի վերակացուք տեսուչք և խնամակալք լիցին, զի մի՛ դարձեալ աւագակք տիրեսցեն:*
- Հանեալ ետ ցպանդոկապետն<sup>10</sup> երկուս դահեկանս<sup>11</sup>** (Ժ 35):
- US** *Հին և նոր կտակարանք:*
- Ջոր ինչ ծախեսցես ի դմա, ի միւս անգամ գալստեանն<sup>12</sup> իմում հատուցից քեզ** (Ժ 35):
- US** *Դարձումն սամարացոյն երկրորդ գալուստն<sup>13</sup> Քրիստոսի, յորժամ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց առաքելոցն և այլոց վարդապետաց զպսակն արդարութեան, զի ջանացան վաստակեալք ճգնութեամբ և դարձուցին զորդիս Ադամայ ի բարեպաշտութիւն:*
- ԻԳ** *Ապա, թէ ասիցէ ծառայն չար. «Յամէ տէր իմ զգալն» (Մատթ. ԻԴ 48, Ղուկ. ԺԲ 45) և սկսանի հարկանել զծառայակիցսն, եկեսցէ Տէր ծառայիցն այնոցիկ, ընդ մէջ կտրեսցէ զնա բառնալ զիւրսն:*

<sup>1</sup> B Եւ եդեալ ի վերայ գրաստու

<sup>2</sup> B գրաստու բառնայ

<sup>3</sup> B զոր

<sup>4</sup> B նոյնպէս

<sup>5</sup> A պոնդոկ

<sup>6</sup> B Ած զնա ի պանդոկի մի և դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի (Ժ 31-35):

<sup>7</sup> A պոնդոկն

<sup>8</sup> A պոնդոկապետն

<sup>9</sup> B զանկեալ

<sup>10</sup> A ցպոնդոկապետն

<sup>11</sup> B դահեկանս և ասէ. Դարման տար դմա և զոր ինչ ծախեսցես ի դա, ի միւս անգամ գալստեան իմում հատուցից քեզ:

<sup>12</sup> B գալստեան

<sup>13</sup> B գալուստն է

Արդ՝ ո՞ [յ]երիցն<sup>1</sup> թուի<sup>2</sup> քեզ մերձաւոր անկելոյն<sup>3</sup> (Ժ 36):

ԵՓ Արդ՝ Տէր մեր շամարտացովն զքահանայան և զղևտացիան նախատեսց, զի ո՛չ արարին ողորմութիւն ի վերայ ազգին իւրեանց: Ո՛չ<sup>4</sup> շամարտացի լերուք, ասաց Տէրն, այլ եցոյց զվիրաւոր հրէայն<sup>5</sup>, զի զնոսա յամաւթ արասցէ շամարտացովն, որ թշնամի էր: Նաև<sup>6</sup> հեթանոսաւքն, որով առակեաց, որ ո՛չ արարին

131ա ող(//)որմութիւն ի վերայ ազգին իւրեանց, զի այլազգի և թշնամի էր նոցա:

Եւ նա ասէ. Որ արար զողորմութիւն ի վերայ նորա (Ժ 37):

ԻՊ Վասնզի յայտնի էր և առանց քննութեան:

Ասէ ցնա Յիսուս. Երթ, արա՛ դու<sup>7</sup> նոյնպէս (Ժ 37):

ԵՓ Ի վերայ հրէի որդոյ ժողովրդեան քո, զոր հրամայեցին Աւրէնքն գթալ ի վիրաւորն (տե՛ս Բ Օր. ԻԱ 1-8): Եւ դու մի՛ իբրև զայնոսիկ, որ ո՛չ արարին ողորմութիւն լինիր, այլ համարեալ լիցի ցաւոտն իբրև զմերձաւորն քո, և մեծ հոգաբարձութեամբ բժշկել զնա:

ԻՎ. Փոխանակ<sup>8</sup>, զի այցելու եղեն կարաւտելոց՝ պսակեալ պատուին, և ոմանք՝ արհամարհոտք և անգութք պատժին, որք անտես արարին զկարաւտեալսն:

Եւ եղև ի գնալ նոցա և ինքն եմուտ ի գեւղ<sup>9</sup> մի: Եւ կին ոմն, անուռն Մարթայ, ընկալաւ զնա ի տուն իւր<sup>10</sup> (Ժ 38):

ԻՊ Զարմանք են սքանչելի և անչափ ողորմութիւն խոնարհութեանն<sup>11</sup>. յորպիսի՞ տուն մտանէր և զամենայն սպասաւորութիւն հեզութեամբ ընդունէր և ամենայն ումեք խաւսակից լինէր<sup>12</sup>:

Վանս<sup>13</sup> կալաւ ի տանն Մարթայի և Մարիամու<sup>14</sup>:

<sup>1</sup> B յերիցունց ի նոցանէ

<sup>2</sup> A թվի

<sup>3</sup> B լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց

<sup>4</sup> B զի ոչ

<sup>5</sup> B զվէրսն միայն որ ի հրէայան

<sup>6</sup> B այսինքն *փի* նաև

<sup>7</sup> B և դու արա *փի* արա դու

<sup>8</sup> B Եւ փոխանակ

<sup>9</sup> B գեաւղ

<sup>10</sup> B տան իւրում և նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ:

<sup>11</sup> B խոնարհութիւնն *փի* ողորմութիւն խոնարհութեանն

<sup>12</sup> B լինիր

<sup>13</sup> B Վասն այնորիկ

<sup>14</sup> B Մարիամու: Որ և եկն նստաւ առ ոտս տանն և լսէր զբանս նորա (*Վասն... Մարիա-*

ԻԳ. Սորբա են քորքն Ղազարու, և գեղն<sup>1</sup> Բեթանիայ՝ ըստ Յովհաննու (տե՛ս Յովհ. ԺԱ 1):

Մարիամ եկն նստաւ առ ոտսն Տեառն և լսէր զբանս վարդապետութեանն<sup>2</sup> (Ժ 39):

Ստ. Նշանակէ Մարիամ զբանական<sup>3</sup> և զտեսական իմաստութիւնն, և Մարթայ՝ զգործականն, և երկոքին<sup>4</sup> հետեին միմեանց: Ո՛չ<sup>5</sup> բանականն կատարի առանց գործականին և ո՛չ գործականն առանց բանականին: Որպէս Ղուկաս ի Գործս Առաքելոցն ասէ. «Սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել» (Գործք Ա 1): Դարձեալ. 131բ նշանակէ Մարթայ զայնպիսիսն, որք ի տու(//)նս իւրեանց ընդունին զՔրիստոս հիւթապէս և մարմնաւորաբար ի հոգիս իւրեանց, և զեռևս հրէաբար կեան<sup>6</sup> ի Հին խմորոյն<sup>7</sup> ո՛չ ազատեալք: Իսկ Մարիամ՝ զայնոսիկ, որ<sup>8</sup> հոգեւորապէս ընդունին զՔրիստոս և զհոգին ի տունս իւրեանց գաղտնի հրէայ, որ զվերինն խնդրէ և ո՛չ զերկրայինս:

ԻԳ. Մարթայ<sup>9</sup> նշանակէ զհրէական ժողովուրդն, որ ջանան<sup>10</sup> ի գիրն, որ այժմն<sup>11</sup> սպանանէ, և զհոգին որ կեցուցանէ՝ ո՛չ խնդրեն: Իսկ Մարիամ՝ զհեթանոսաց եկեղեցիս, որ, թողեալ զտերև աստուածային գրոց[ն]՝ և զգեղեցիկ պտուղն խնդրէ:

Ո՛վ Մարթայ, վասնէ՞ր հոգաս և աշխատիս, ի բազում իրս միոյն պէտք են<sup>12</sup> (հմմտ. Ժ 41-42):

ՍՏ Վասն է՞ր աշխատի[ս] և ջանաս ի բազում աւրէնս և ի պատուիրանս՝ միոյն պէտք են, յոր ամենայն աւրէնք և մարգարէք կատարին. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ» (Մատթ. ԻԲ 37, Մարկ. ԺԲ 30) և որ ինչ ի կարգին է:

մու՝ սրբ. է ձախ լս.):

<sup>1</sup> Բ գեղան (այսուհետ չենք նշում)

<sup>2</sup> Բ Եւ Մարթայ զբաղեալ էր ի բազում սապատու, եկն եկաց առ նմա և ասէ *փի* Մարիամ եկն նստաւ... վարդապետութեանն

<sup>3</sup> Բ զբնական

<sup>4</sup> Բ երկոքեանն

<sup>5</sup> Բ զի ոչ

<sup>6</sup> Բ կան

<sup>7</sup> Բ խմորոցն

<sup>8</sup> Բ որք

<sup>9</sup> Բ կամ Մարթայ

<sup>10</sup> Բ ջանայ

<sup>11</sup> Բ այժմ

<sup>12</sup> Բ Տէ՛ր, ոչ ինչ է քեզ փոյթ, զի քոյրդ իմ միայն եթող զիս ի սպասու: Արդ՝ ասա՛ դմա, զի աւգնեսցէ ինձ: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Մարթա՛, Մարթա՛, դու հոգաս, և զի բազում իւրիք զբաղեալ ես (Ժ 40-41):

ԻԳ Վասնզի աշխարհաւրէն և ո՛չ հոգևորապէս կայր ի սպասաւորութեանն որպէս այնոքիկ, որ զսիրելիսն անչափ պարարեն և զաւտարսն անփոյթ առնեն: Սակաւոյ պէտք են<sup>1</sup> զքաղցոյն պէտսն վճարել, որ ինչ առ ձեռն պատրաստէ կամ երախտիս մատոյց և արհամարհեցաւ: Զի Տէրն ո՛չ ունէր պէտս սպասաւորութեան նորա: ԶՄարիամ յարգէ, զի զամենայն առաքիւնութիւն[ն] կամեցաւ ուսանել և ըստ կարգի ուղղել:

---

<sup>1</sup> Ե բայց աստ սակաւ ինչ պիտոյ է, Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի նմանէ

## Գլուխ ԺԱ

Եւ եղև ի տեղոջ ուրեք կալ յաղաւթս<sup>1</sup> (ԺԱ 1):

132ա ԻԳ. Որպէս ամենայն առաքինութիւն<sup>2</sup> զանձն արինակ կացոյց, // նոյնպէս և յաղաւթելն, որ անկարաւտն է:

Ասէ ցնա մի ոմն յաշակերտաց իւրոց. Տէ՛ր, ուսո՛ մեզ յաղաւթս կալ, որպէս Յովհանն իւրոց աշակերտացն<sup>3</sup> (ԺԱ 1):

Այլ եթէ զի՞նչ Յովհաննէս ուսոյց, չէ յայտ, վասնզի ո՛չ գրեցաւ այլ մասն ինչ յամենայնէն:

Ասէ ցնոսա. Յորժամ կայցէք յաղաւթս, ասաւջիք. Հա՛յր մեր, որ յե[րկինս] (ԺԱ 2):

ՈԿ. Փոխանակ ամենայն մարմնոյ մատուցանէ զաղաւթսն, նաև զթշնամութիւն բառնայ այսուիկ, և զհպարտութիւնն ցածուցանէ և զամենայն բարութեանց մայրն<sup>4</sup> ի տեղոջն հաստատէ:

ԿՂ. Դարձեալ. աստ կանխագոյն բանիւն ցուցանէ, եթէ վճարեցաք ի ծառայութեան կարգացն, և ի վիճակ որդեգրութեանն հրաւիրեցաք: Ըստ առաքելոյն, եթէ՝ «Ո՛չ առաք<sup>5</sup> զհոգին ծառայութեան, այլ զհոգին որդեգրութեան, որով աղաղակեմք. Աբբա, Հայր» (Յոռմ. Ը 15): Այսուհետև չես ծառայ, այլ որդի: Ըստ այնմ, եթէ՝ «Որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել» (Յովհ. Ա 12):

ՈԿ. Ուսոյց յառաջագոյն, եթէ որպէ՞ս պարտ է աղաւթել, և այժմ զբանս աղաւթիցն ասաց:

Սուրբ եղիցի անուն քո (ԺԱ 2):

Ստ. (ոկ.) Մի՞թէ հանապազ ո՛չ էր սուրբ: Այո՛: Բայց ի գործելն մեր զգործս անարժանս պղծիլ ասի անուն նորա: Որպէս ասաց մարգարէն. «Դուք պղծեցէք զանուն իմ ի մէջ ազգացն, յորս մտէք անդ» (հմմտ. Եզեկ. ԼԶ 22): Եւ Տէր ասաց ցՄովսէս. «Զան[ուն] իմ սուրբ ո՛չ արարէք ի վերայ վիմիղ»: Իսկ յորժամ առնիցեմք զգործս բարիս, սուրբ ասի լինել անուն նորա:

ԿՂ. Ո՛չ նա պէտս ունի վերստին սրբութեան, որ մաքուրն է, այլ

<sup>1</sup> Եւ եղև ի տեղոջ ուրեք կալ յաղաւթս և իբրև դադարեաց:

<sup>2</sup> Եւ առաքինութեանց

<sup>3</sup> Եւ Ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէ՛ր, ուսո՛ մեզ յաղաւթս կալ, որպէս Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց:

<sup>4</sup> Եւ սրբ.՝ մայրն գտերն

<sup>5</sup> Եւ ասէք

132բ յիս<sup>1</sup> ասէ սուրբ լիցի քո հայրութեան անունդ<sup>2</sup>: // Ձայս նշանակէ, եթէ եղիցին գործքն մեր սուրբք և արդարք առաջի նորա:

**Եկեացէ արքայութիւն քո** (ԺԱ 2):

ՍՏ Հանապազ արքայ և թագաւոր էր Քրիստոս: Բայց մեզ այժմ ասի թագաւորել, յորժամ զկամս նորա առնեմք: Իսկ որք ո՛չ առնիցեն զպատուիրանս նորա, նոքա ո՛չ ասին ընդ թագաւորութեամբ նորա: Այլ լսեն զայն. «Երթայք յինչն» (Մատթ. ԻԵ 41), և «Ո՛չ գիտեմ զձեզ» (Մատթ. ԻԵ 12, Ղուկ ԺԳ 25, 27): **Ջի զորս ո՛չ ճանաչէր, զիս՞րդ ասի նոցա թագաւորել:**

**Ջհաց մեր հանապազորդ<sup>3</sup> տո՛ւր մեզ<sup>4</sup>** (ԺԱ 3):

ՍՏ Թուի ինձ ո՛չ երևելի<sup>5</sup> կերակուր մարմնոյս ասէ: Քանզի ինքն ասաց. «Ո՛չ հացիւ<sup>6</sup> միայն կերակրի մարդ, այլ ամենայն բանիւ<sup>7</sup>» (Ղ 4), որ ելանէ<sup>8</sup> ի բերանոյ Աստուծոյ: Կամ հաց զԲանն կենդանութեան ասէ, որ էջն յերկնից. «Ես եմ հացն կենաց իջեալ յերկնից» (Յովհ. Զ 41): **Հրամայէ աղաւթել և հանապազ կերակրել զհոգիս մեր հացիւն այնուիկ:**

**Թող զմեզս մեր, և մեք թողուցումք, որ պարտիցին մեզ<sup>9</sup>** (ԺԱ 4):

ՈԿ Որպէսզի ի մէնջ է սկիզբն, և մեք եմք Տէր դատաստանին մերոյ: **Ջքեզ իսկ, ասէ, զպատժապարտդ արարի Տէր և դատաւոր վճիռ<sup>10</sup> տալով, որպէսզի դու իսկ կշռեսցես անձին<sup>11</sup> դատաստան: Նոյնպէս և ես զքեզ դատեցայց: Եթէ թողուս ծառայակցին, իմոյ<sup>12</sup> շնորհացս հանդիպեսցիս:**

ՍՏ Արդ՝ արժանաւորեսցուք և մեք թողուլ մերոց դրժողացն, զի դու և Հայր քո թողցես մեզ: Քանզի և Քրիստոս մեկնելով զայս յետ սակաւու[ց] ա[սէ]<sup>13</sup>. «Ապա, եթէ<sup>14</sup> ո՛չ թողուցուք մարդկան

133ա զյանցանս // նոցա, և ո՛չ Հայրն երկնաւոր թողցէ ձեզ» (Մատթ. Զ 15):

<sup>1</sup> A ի յիս

<sup>2</sup> B անուն

<sup>3</sup> A հանապազորդ

<sup>4</sup> B մեզ զաւր ըստ աւրէն

<sup>5</sup> B գերեւելի

<sup>6</sup> B հացիւն

<sup>7</sup> B բանիւն

<sup>8</sup> B ելանեն

<sup>9</sup> B Եւ թող զմեզս մեր, զի և մեք թողուցումք ամենայնի, որ պարտիցի մեզ:

<sup>10</sup> A վճիւռ

<sup>11</sup> B անձինդ

<sup>12</sup> B թողցես ծառայակցին իմոց

<sup>13</sup> բառը ջնջված է

<sup>14</sup> B թէ



Մի<sup>11</sup> տանիր զմեզ ի փորձութիւն (ԺԱ 4):

Ստ. *Զիա՞րդ ինքն տանի ի փորձութիւն, որպէս զԱբրահամ և զՅոբ: Բայց կրկնակի ասի փորձութիւնն: Մին, որ յԱստուծոյ ասի<sup>2</sup> վասն սրբոց, զի ցուցցէ մարդկան, եթէ որպիսիք իցեն, և զայլս խրատեսցեն հանդիսիւն իւրեանց: Որպէս եղև առ Յոբ, որ ասաց. «Աստուած, եթէ<sup>3</sup> այլ զինչ բարիք իցեն մեծագոյն<sup>4</sup> քան զայդ, որ ցուցի զհամբերութիւն քո» (հմտ. Յոբ Բ 10) սատանայի և մարդկան: Այսպիսի փորձութիւն՝ բարի և աստուածային: Իսկ միւսն, որ յաղագս դժնեայ մեղացն և արհամարհութեան Բանին Աստուծոյ՝ անտես լինին ի խնամոցն Աստուծոյ: Վասն այսորիկ փորձին ի բանսարկուէն և ի մարդկանէ որպէս<sup>5</sup> տանջանաւք:*

Ո՞վ<sup>6</sup> է ի ձէնջ, որոյ իցէ բարեկամ<sup>7</sup> (ԺԱ 5):

ՍՏ *Քանզի սիրելի և բարեկամ աշակերտացն Յիսուսի Հայր Աստուած է և Քրիստոս Որդի նորա,*

ԿՂ *որում սպասաւորեն հրեշտակք, որ սիրէ զպատկերն կորուսեալ, զորոյ զհրամանն եկաւորութիւն ասի<sup>8</sup> ի ձեռն հրեշտակին:*

ԻԳ *Այս առակ և դատաւորին հաւասարապէս խրատեն զմեզ, թէ պարտ է պաղատանաւք խնդրել զԱստուած, զի ինքն Տէր է և տուող<sup>9</sup> պարգևաց: Եւ կարևոր համարեցաւ ուսուցանել մեզ զիւր սեփական բնութեանն կամս: Արդ՝ առաջին բարեկամ Աստուած<sup>10</sup>, որ յոչ էից արար և առատ պարգևաւք լցոյց: Զի թէպէտև մեք ապերախտ գտաք, սակայն նա պահէ զբարեկամութիւնն և զսէրն մինչև յետին շունչն, և յելս կենացն խնդրէ զնա, և որքան հնար է տայ զփրկութիւնն:*

Ի մէջ գիշերի (ԺԱ 5):

133բ ՍՏ *Կենցաղոյս<sup>11</sup> կարճեալ, // յորում մտանէ սատակիչն՝ շաւշափելով զԲանն կենաց<sup>12</sup>, այսպիսի զգայութիւնք: Թէպէտև<sup>13</sup> անար-*

<sup>1</sup> Եւ մի  
<sup>2</sup> Ինի  
<sup>3</sup> Թէ  
<sup>4</sup> Ե մեծագոյն բարի *փխ* բարիք իցեն մեծագոյն  
<sup>5</sup> Ե պէսպէս  
<sup>6</sup> Ե և ով  
<sup>7</sup> Ե բարեկամ և երթայցէ առ նա ի մէջ գիշերի  
<sup>8</sup> Ե երկաւորութեան ասէ  
<sup>9</sup> *Ա* տվող  
<sup>10</sup> Ե սրբ.՝ Աստուած է  
<sup>11</sup> Ե կենցաղս  
<sup>12</sup> Ե և ճակատամարտի ընդ *փխ* շաւշափելով զբանն կենաց  
<sup>13</sup> Ե որ թէպէտև

գին ի վա[տ]թարաց և վաճառին երկուց դանկից<sup>1</sup>՝ յիմարութեանն և լրբութեանն, սակայն Աստուծոյ ո՛չ է մոռացեալ մի<sup>2</sup> ի նոցանէ: ԻԳ Իսկ ժամանակն գիշեր, յորում ոչինչ գործի: Թերևս<sup>3</sup> նմանեցուցանէ զտագնապ ցաւոցն և զվտանգելից շնչոյն, զի գիշեր չար է այն: Կա՛մ<sup>4</sup> վասն մեծի տարակուսանացն, կա՛մ ժամանակս այս գիշեր խաւարային և տրտմալից<sup>5</sup> առ հաւասարութեան ժամանակին այնորիկ պայծառութեան և յամենայնէ չքաւորեալ: Եւ թոշակ կենացն ճանապարհին գտանել յումեքէ<sup>6</sup> ո՛չ է հնար, որպէս հինգ կուսանքն, որոց պակասեաց ի[ւ]ղն<sup>7</sup>: Զի թէպէտև հայցեցին յիմաստնոցն, ո՛չ առին: Եւ այն, զի ողորմածք էին:

**Եւ ասիցէ. Բարեկամ, տո՛ւր ին[ձ] փոխ (ԺԱ 5):**

Բարեկամ՝ հոգի և միտք: Այն, որ զժամանակս զայս կեայ անաւրէնութեամբ, ի գալ պահանջողին մաղթէ հոգին առ միտքն:

**Երիս նկանակս (ԺԱ 5):**

ԿՂ Սուրբ Երրորդութեանն խոստովանութիւնն, որ ի ձեռն հացին ճանաչի: Եւ ընդէ՞ր ի նկանակսն առակէ զհաւատս: Վասնզի ի ձեռն նկանակաց հացին, որ է Որդոյ մարմնաւորութիւն, ծանեաք զՍուրբ Երրորդութիւնն:

ԻԳ Մատուցեալ առ Աստուած աղաչէ գերիս անձինս և մի Տէրութիւն և բնութիւն: Զի նկանակքն երեք մի են բնութեամբ: Դարձեալ. եթէ ոք զթիւ Երրորդութեանն տացէ և հաղորդութիւն<sup>8</sup> մարմնոյն Քրիստոսի, յորմէ մաղթէ, զի մի՛ զրկեալ գտցի:

**Բարեկամ<sup>9</sup> իմ եկն յուղ[ղ]ոյ<sup>10</sup> (ԺԱ 6):**

ԿՂ Երկրորդ բարեկամ՝ հրեշտակ[ք], վասնզի սիրեն զփրկութիւն մարդոյն:

134ա ԻԳ // Սակայն ի մեղաւորէն գարշին և ի բաց դառնան, զի սրբութեան են սիրողք: Ապա եթէ ապաշխարեն, խնդութիւն մեծ է նոցա: Զի ըստ Աստուծոյ զփրկութիւն մեր կամին և ո՛չ զկորուստն, զի արագունք են և պահանջողք հոգւոյն: Եւ խնդրէ առաջի դնել

<sup>1</sup> B դանգից

<sup>2</sup> B գմինն

<sup>3</sup> B սրբ.՝ թերևս գիշերի

<sup>4</sup> B բառը քերած-ջնջած է

<sup>5</sup> B խաւարին և տրտմալից է

<sup>6</sup> A, B ի յումեքէ

<sup>7</sup> B եւղն

<sup>8</sup> B սրբ.՝ ի հաղորդութիւն

<sup>9</sup> B գի բարեկամ

<sup>10</sup> B առ իս յուղոյ

սեղան՝ զգործս բարիս և ընդունելի: Եւ նա՝ թափուր յամենայնէ, որպէս գնաց չարաչար:

**Ո՛չինչ ունիմ դնել առաջի նորա** (ԺԱ 6):

Դառնայ [յ]առաջին բարեկամն Աստուած, և ի նմանէ ժտի<sup>1</sup> գտանել, զոր կորոյս յանցաւորութեամբն: Զի չարքն և ի հաւատոցն վրիպեալք են, որպէս այն, զի<sup>2</sup> հրաման ետ կտրել ընդ մէջ, զի մի՛ ընդ անհաւատսն պատժեսցի: Բառնալ ի նմանէ, զոր ունէր գքրիստոնէութեան անունն:

**Ո՛չինչ ունիմ դնել առաջի նո[րա]<sup>3</sup>** (ԺԱ 6):

ԿՂ. **Յինէն<sup>4</sup> հաւատս կամ գործս, ուստի և զերիս նկանական հայցէր:**

**Նա<sup>5</sup> ի ներքուստ տայ պատասխ[ան]** (ԺԱ 7):

Հոգին ի տկարացեալ մարմնոյն:

**Եւ ասէ. Մի՛ աշխատ առներ, զի դուրքս փակեալ են<sup>6</sup>** (ԺԱ 7):

Զկենաց ժամանակն ասէ, զոր ի վատթարս ծախեաց:

ԻԳ. **Եւ անյուսացեալ, զի դրունք ապաշխարութեանն փակեցան: Թէպէտև ի մարմնի էր, սակայն՝ ժամանակն կարճեալ և զգայարանքն խփեալ, ընդ որ ելանեն պաղատանք և արտաւար, և լուանայ գնեխեալ և զփտեալ վէրսն:**

**Եւ մանկունքս ընդ ինև կան յանկողնի<sup>7</sup>** (ԺԱ 7):

ԿՂ. **Որ ի մանկութենէ հետևեցի<sup>8</sup> աւետարանական քարոզութեանց, այժմ ո՛չ կարեմ, ասէ, ըստ արժանաւորութեան և արդար դատաստանաց տալ ըստ հաւատոցն և զգործս բարեաց:**

134բ Իգ. // **Զի մանկունք մեղացն, որ յղացայ զցաւս և ծնայ զանաւրէնութիւնս<sup>9</sup>: Զայս պատասխանի տայ միտքն<sup>10</sup> ի ներքուստ տկարացեալ մարմնոյն: Այլ նա ստիպէ, զի գոնէ զհաւատոյն<sup>11</sup> բան տայցէ, զի մի՛ ընդ անհաւատսն կորիցէ:**

<sup>1</sup> B ժտէ  
<sup>2</sup> B գոր  
<sup>3</sup> B Ոչինչ... նորա՝ սրբ. աջ լս.  
<sup>4</sup> A ի յինէն  
<sup>5</sup> B և նա  
<sup>6</sup> A է  
<sup>7</sup> B յանկողնի, ոչ կարեմ յառնել և տալ քեզ  
<sup>8</sup> B ոչ հետևեցի  
<sup>9</sup> B զանաւրէնութիւն ընդ ինև կան  
<sup>10</sup> B միտքն հոգոյն  
<sup>11</sup> B գոնեայ զհաւատոցն

Ասեմ ձեզ. թէպէտև ո՛չ յարուցեալ տացէ վասն բարեկամութեանն, սակայն վասն ժտութեանն տայցէ<sup>1</sup> (ԺԱ 8):

ԿՂ Յուցանէ, եթէ ախորժելի են նմա աղաւթքն, որով կեան և ապրին, վասնզի ողորմած է: Ըստ որում՝ յաջորդին<sup>2</sup> յայտ առնէ յորդորելով:

ԻԳ Արդ՝ միտքն հաւանի ժտելոյն տալ ո՛չ միայն զհաւատոյն Բան, այլև զամենայն խոստովանութիւն: Կարի մեծ երանութիւն է, և մի՛ ոք անյուսացի խնդրել զառատ պարգևսն, որ շնորհէ զմեղացն լուծումն: Քանզի վայրապար ինչ ո՛չ յայնմանէ ասացեալ լինի: Որ ասաց. «Երկինք և երկիր անցեն և Բանք իմ մի՛ անցցեն» (Մատթ. ԻԴ 35, Մարկ. ԺԳ 31, Ղուկ. ԻԱ 33): Բայց թերևս ժտելն<sup>3</sup> կարի մեծ իցէ և տաժանելի<sup>4</sup> և անչափ զղջումն: Զի այնչափ հնարեցաւ բարեգործել<sup>5</sup>, մինչ զի զամենայնն տալ:

Ասեմ<sup>6</sup> ձեզ. խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ (ԺԱ 9):

ԿՂ Առ ի ցուցանել մեզ, թէ մինչև յետին շունչն ախորժէ զհայցելն և զբարիոք<sup>7</sup> խոստովանելն առ յաւգուտ<sup>8</sup> մեզ և ի փրկութիւն այն, որ ո՛չ կամի զմահ մեղաւորին:

ՍՏ Զայն, զոր պարտ է ձեզ գտանել, զոր<sup>9</sup> յառաջագոյն ասաց. «Խնդրեցէք նախ զարքայութիւն<sup>10</sup> Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մատթ. Զ 33, *հմմտ.* Ղուկ ԺԲ 31): Եւ մի՛ լիցի<sup>11</sup> այն, թէ խնդրէք և ո՛չ առնոյք, վասնզի չարաչար խնդրէք:

Բախեցէք՝ և բաց[ց]ի ձեզ<sup>12</sup> (ԺԱ 9):

135ա ՍՏ Եթէ բախեմք, որպէս արժան է՝ առնելով // զողորմութիւն<sup>13</sup> և զայլ առաքինութիւն, յայնժամ բաց[ց]ի մեզ: Ապա եթէ ոք<sup>14</sup> ո՛չ

<sup>1</sup> Ե Ասեմ ձեզ. եթէ ո՛չ յարուցեալ տացէ նմա վասն բարկութեան, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տայցէ նմա զինչ և պիտոյ իցէ:

<sup>2</sup> Ե յաջորդն

<sup>3</sup> Ե ժտեալն

<sup>4</sup> Ե տաժանելի

<sup>5</sup> Ե բարի գործել

<sup>6</sup> Ե և ես ասեմ

<sup>7</sup> Ե զբարեոք (*այսուհետ չենք նշում*)

<sup>8</sup> Ե, Ե ի յաւգուտ

<sup>9</sup> Ե որպէս

<sup>10</sup> Ե զարքայութիւնն

<sup>11</sup> Ե լինիցի

<sup>12</sup> Ե ձեզ, զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա

<sup>13</sup> Ե ողորմութիւն

<sup>14</sup> Ե չիք ոք

ուռնիցի ողորմութիւն, այնպիսոյն ո՛չ բացցի: Որպէս յիմար կուսանացն, որք ամբարհաւածեալ<sup>1</sup> էին և լուան ի փեսայէն. «Երթայք յինէն<sup>2</sup>» (Մատթ. ԻԵ 41):

Ո՞ ոք ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, մի՞թէ քար տայցէ նմա<sup>3</sup> (հմմտ. ԺԱ 11-12):

ՈԿ **Ձի թէ որդի ես<sup>4</sup>, ապա ո՛չ<sup>5</sup> զանաւգուտն խնդրեցեր<sup>6</sup> և մի՛ զաշխարհիս, այլ զհոգևորսն, զի առնուցուս: Ձի թէ այնպէս խնդրես, որ տուողին<sup>7</sup> վայել է, և քեզ աւգուտ իցէ՝ առնուցուս: Ձի թէ մարդիկ զվնասակարն ո՛չ տան որդոց, որչա՞փ ևս առաւել Աստուած մերժէ ի մէնջ զո՛չ աւգտակարն<sup>8</sup>:**

Արդ՝ թէ<sup>9</sup> դուք, որ չարքդ էք, գիտէք պարգևս բարիս տալ որդոց<sup>10</sup> ձերոց, որչա՞փ ևս առաւել Հայրն ձեր երկնաւոր<sup>11</sup> (ԺԱ 13):

ՍՏ **Իսկ եթէ մարդիկ, որոց միտքն հաստատեալ են ի խնամս չարեաց, զբարիս պարգևեն որդոց իւրեանց, որչա՞փ ևս առաւել Հայրն երկնաւոր, որ բարին է բնութեամբ և անբաւ մարդասիրութեամբ, տայ բարիս այնոցիկ, որ արժանապէս հայցեն:**

Եւ հանէր դեւ մի համր, և<sup>12</sup> յելանել դիւին՝ խաւսեցաւ համրն<sup>13</sup> (ԺԱ 14):

ՈԿ. **Ո՛վ անհնարին չարիք դժնդակ դիւին, զի գերկոսեան զմուտսն<sup>14</sup> երեսց՝ զաչսն և զբերանն, որով հաւատալ մարթէր:**

ԵՓ **Արդ՝ ի դիւահարն զխորհուրդ ժողովրդեանն առակէր մարգարէն. «Թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, զլըսելիս իւրեանց ծանրացուցին և զաչս իւրեանց<sup>15</sup> կափուցին, զի մի՛ տեսցեն աչաւք և լուիցեն ականջաւք» (Ես. Զ 10, տե՛ս Մատթ. ԺԳ 15, Գործք ԻԸ 27) և այլն ևս:**

<sup>1</sup> A ամպարհաւածեալ  
<sup>2</sup> A յինէն այսաւք: Միգուցե այսպես հասկանալ. «Երթայք յինէն» այ[ս]աւք [հանդերձ]:  
<sup>3</sup> B Յո՞ ոք ի ձէնջ հայր խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն աւճ տայցէ նմա, և կամ խնդրիցէ ձուկն, միթէ կարիճ տայցէ նմա:  
<sup>4</sup> B **չիք** ես  
<sup>5</sup> B **չիք** ոչ  
<sup>6</sup> B մի խնդրիցես  
<sup>7</sup> B տուաւղին  
<sup>8</sup> B աւգտակարսն  
<sup>9</sup> B իսկ եթէ **փխ** արդ թէ  
<sup>10</sup> B որդւոց  
<sup>11</sup> B յերկնից տայցէ բարիս այնոցիկ, որ խնդրեն ի նմանէ  
<sup>12</sup> B և եղև  
<sup>13</sup> B համր  
<sup>14</sup> B մուտսն  
<sup>15</sup> B **չիք** ծանրացուցին... իւրեանց

**135բ ԵՓ** **Եւ զարմացան ամենայն ժողովուրդ[քն] (ժԱ 14):**  
 // Ետ նմա խաւսել և լսել և տեսանել: Խորհուրդ է այնոցիկ,  
 որք հաւատացին ի նա, այսինքն է՝ հեթանոսաց<sup>1</sup>, որք կուրացեալ  
 էին ի ճշմարտութենէն և խցեալ լսելիք ի բանից նորա<sup>2</sup>:

**Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Բեղզեբեղաւ<sup>3</sup> իշխանաւն<sup>4</sup> դիւաց  
 հանէ զդեւս<sup>5</sup> (ժԱ 15):**  
**ԻՊ** Իսկ այնոքիկ, որ վարակեալ էին անհաւատութեամբ<sup>6</sup>, ասեն.  
 «Գործակից է նորա<sup>7</sup> իշխանն դիւաց, և նովաւ հանէ զդեւս»:

**Եւ այլք փորձէին և նշան յերկնից<sup>8</sup> խնդրէին (ժԱ 16):**  
**ՍՏ** Նշան լսի յաստուածային գիրս, որպէս լեալ է և պատմի ի Հին  
 Կտակարանս հանդերձելոց իրաց<sup>9</sup>:  
**ԵՓ** Ձոր Մովսէս արար յանապատին, զի զհաց երկնից ետ նոցա:  
**ՈԿ.** Ձի<sup>10</sup>նչ զարմանք իցեն, եթէ առ ինև զայսպիսի գործս ցուցա-  
 նէք, որ անծանալթս եմ<sup>10</sup> ձեզ, որ և առ հարբն այնչափ զփորձ ա-  
 ռեալ զաւրութեանց:

**Նշան յերկնից (ժԱ 16):**  
**ԻՊ** Այսինքն<sup>11</sup> զարեգակն պաշարել կամ անդրէն յետս ձգել: Կամ  
 տարակուսեալ ոմանք առ այս ասէին. «Դեք յերկինս<sup>12</sup> հանել<sup>13</sup> ո՛չ  
 կարեն, ցոյց մեզ անտի նշան»:

**Իբրև գիտաց<sup>14</sup> զխորհուրդս նոցա (ժԱ 17):**  
**ՈԿ** Ձայս յառաջագոյն բամբասեցին: Այլ յայնժամ<sup>15</sup> ո՛չ սաս-  
 տեաց, զի տացէ նոցա ի նշանացն իմանալ զզաւրութիւն նորա,  
 բայց նոքա ի նոյն<sup>16</sup> յաճախէին: Ապա սաստէ ևս<sup>17</sup> և զաստուա-  
 ծութիւնն իւր ցուցանէ, որով զձաձուկս սրտից նոցա ի մէջ բերէ:

<sup>1</sup> Բ գհեթանոսս

<sup>2</sup> Բ Աստուծոյ փիւ նորա

<sup>3</sup> Բ Բէեղզեբեղաւ

<sup>4</sup> Բ իշխանաւ

<sup>5</sup> Բ դա զդեւս

<sup>6</sup> Բ Թերահաւատութեամբն

<sup>7</sup> Բ նմա

<sup>8</sup> Ա, Բ ի յերկնից

<sup>9</sup> Բ չիք իրաց

<sup>10</sup> Բ է

<sup>11</sup> Բ այսինքն է

<sup>12</sup> Ա, Բ ի յերկինս

<sup>13</sup> Բ հասանել

<sup>14</sup> Բ իսկ նորա գիտացեալ

<sup>15</sup> Ա, Բ ի յայնժամ

<sup>16</sup> Բ զնոյն փիւ ի նոյն

<sup>17</sup> Բ չիք ևս

**Ամենայն<sup>1</sup> թագաւորութիւնն բաժանեալ յանձն՝ աւերի<sup>2</sup> (ԺԱ 17):**  
*Ի ծանաւթից<sup>3</sup> բերէ աւրինակս: Թէպէտև յերկրի<sup>4</sup> զաւրագոյն քան զթագաւորութիւնն ո՛չ գոյ, սակայն կորնչելոց է, յորժամ անձամբ<sup>5</sup> ընդ անձին<sup>5</sup> հարկանիցի:*

**Տուն բարժանել<sup>6</sup> յանձն՝ կործանի (ԺԱ 17):**  
 136ա *Ապա զի<sup>6</sup> ևս գտանէ<sup>7</sup> կա(//)մ զքաղաքէ ճառիցես:*  
 Ոկ. *Թէպէտև փոքր կամ բնաւ մեծ ոք իցէ և ընդ անձինն կռուիցի<sup>8</sup>, կորնչելոց է:*

**Ապա թէ<sup>9</sup> սատանայ բաժանեցաւ յայնձնէ, զիա՞րդ կա[յ]ցէ<sup>10</sup> թագաւորութիւնն նորա (ԺԱ 18):**  
 ԻԳ *Սատանայ ընդ անձին պատերազմող ո՛չ տայ ցրուել զիւրսն, այլ ժողովէ զաւրանալ, զի մի՛ տկարասցի:*

**Որդիքն<sup>11</sup> ձեր ի՞նչ հանիցեն (ԺԱ 19):**  
*Ապա յաշակերտացն<sup>12</sup> զի՞նչ ունիք ասել, զի նոքա անուամբ իմով զնոյն գործեն:*

**Նոքա եղիցին ձեզ դատաւորք<sup>13</sup> (ԺԱ 19):**  
*Զի որդիք ձեր են և ո՛չ ախտացան զձերդ:*

**Իսկ եթէ մատամբն<sup>14</sup> Աստուծոյ հանեմ զդեւս (ԺԱ 20):**  
 Ոկ *Յայտ արարեալ, եթէ մեծի զաւրութեան<sup>15</sup> է հանել զդեւս և ո՛չ դոյզն ինչ շնորհաց:*  
 ԻԳ *Զհոգին անուանեաց մատն, զոր Մատթէոս «Հոգևովն Աստուծոյ» (Մատթ. ԺԲ 28) ասէ, և վասն նոյն էութեանն միութեանն եցոյց:*

**Ապա հասեալ է ի վերայ ձեր արքայու[թիւնն] Աստուծոյ (ԺԱ 20):**

---

<sup>1</sup> B ասէ ցնոսա. Ամենայն  
<sup>2</sup> B աւերի և տուն բաժանեալ յանձն կործանի  
<sup>3</sup> B ծանաւթիցս  
<sup>4</sup> A, B ի յերկրի  
<sup>5</sup> B անձն  
<sup>6</sup> B բաժանեալ  
<sup>7</sup> B ի տանէ  
<sup>8</sup> B կռուեսցի  
<sup>9</sup> B եթէ  
<sup>10</sup> B կացցէ  
<sup>11</sup> B Զի ասէք զյինէն եթէ Բէեզգեբուզաւ իշխանաւ հանէ դա զդեւս, եթէ ես Բէեզգեբուզաւ հանեմ զդեւս՝ որդիքն  
<sup>12</sup> B աշակերտացն  
<sup>13</sup> B Վասն այգորիկ նոքին եղիցին ձեր դատաւոր:  
<sup>14</sup> B մատամբ  
<sup>15</sup> B մեծ զաւրութիւն

ՈԿ. Տե՛ս, զի ա՞րդ միւս անգամ բժշկէ՛ զնոսա և ածէ՛ յիւր գիտութիւնն: Յայտ առնէ, թէ՛ ընդ իւրեանց բարիսն մարտնչէին: Զի զոր մարգարէքն յառաջագոյն գուշակէին, եկն եհաս ժամանակ բարութեան ձեր: Եւ կայ առ դուրս Որդին Աստուծոյ, և դուք հակառակ նորին գործէք: Ո՛չ միայն ո՛չ ընդունիք<sup>1</sup>, այլև ընդդէմ բախէք ևս:

Իգ. Եհաս Աստուծոյ թագաւորութիւն բառնալ զմահու իշխանութիւն, և զձեզ կամի հաւատով ժողովել յազատութիւն կամ անհաւատութեամբ ցրուել և ընդ դեւան պատժել:

Հգաւր<sup>2</sup> վառեալ պահիցէ՛ զտուն իւր<sup>3</sup> (ԺԱ 21):

ՍՏ Հգաւր զ[ը]նդդիմակացսն<sup>4</sup> Աստուծոյ ասաց<sup>5</sup>, զոր նոքա Բեւեղ-գեբեղ<sup>6</sup> կոչէին իշխան դիւացն զէն<sup>7</sup> նորա և տուն՝ զպաշտաւնեայս նորա, յորս բնակէ<sup>8</sup>: Զի որպէս տուն և տաճար Քրիստոսի,

136բ զայն<sup>9</sup>, որ բնակէ Քրիստոս, ասէ: «Բնակեցայց ի նոսա //և զնացից<sup>10</sup>» (Բ Կորնթ. Ձ 16)՝ ասէ<sup>11</sup> և երանելին Պաւղոս, որոյ տունն մեք եմք:

Եթէ՛ հգաւրագոյն քան զնա եկեալ յաղթիցէ՛ զսպառազ[ինութիւնն]<sup>12</sup> (ԺԱ 22):

ՈԿ Եւ չէ՛ հնար այլ ինչ հանելոյն, եթէ՛ ո՛չ նախ նմա յաղթիցէ: Եւ այս ամենեցուն իսկ<sup>13</sup> յայտ է, և այսու մեծ<sup>14</sup> առաւելութեամբ և զառաջինսն իսկ հաստատէ: «Այնչափ, ասէ, ո՛չ զաւրավիզն<sup>15</sup> առնում զսատանայ, այլև կապեմ իմով<sup>16</sup> իշխանութեամբ և զկազմած նորա յափշտակեմ»:

<sup>1</sup> Բ ընդունիք ևս

<sup>2</sup> Բ յորժամ հգաւր

<sup>3</sup> Բ իւր, ի խաղաղութեան եւ ինչք նորա

<sup>4</sup> Բ զընդդիմակացն

<sup>5</sup> Բ չիք ասաց

<sup>6</sup> Բ Բէեղգեբեղ

<sup>7</sup> Բ իսկ զէն

<sup>8</sup> Բ բնակեալ է

<sup>9</sup> Բ զայնոսիկ ասէ

<sup>10</sup> Բ զնացից ի նոսա և եղէց նոցա Աստուած

<sup>11</sup> Բ չիք ասէ

<sup>12</sup> Բ Եւ հգաւրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեցէ նմա, սպառազինութիւնն նորա հանէ, յոր յուսացեալ էր և զաւար նորա բաշխեցէ:

<sup>13</sup> Բ չիք իսկ

<sup>14</sup> Բ մեծաւ

<sup>15</sup> Բ զորաւիզն

<sup>16</sup> Բ իսկ իմով



Որ ո՛չ ընդ իս է<sup>1</sup>, հակառակ իմ է (ԺԱ 23):

Ես, ասէ, կամիմ առ Աստուած մերձեցուցանել և առաքինութիւն ուսուցանել և արքայութիւն խոստանալ<sup>2</sup>: Եւ սատանայ և դեւք՝ զհակառակ նորին: Եւ զիա՞րդ, որ ո՛չ ընդ իս ժողովիցէ, ընդ իս իցէ, կամ իմ գործակից լինելոց իցէ, զի նա զրահանք<sup>3</sup> ևս լինի և զիմ միաբանեալսն ցրուէ:

Եւ որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցր[ուէ] (ԺԱ 23):

Ստ. Որ ոք ժողովէ բանիւ և ճշմարտութեամբ և զաւրութեամբ և լուսով, որ է Քրիստոս, այնպիսին ո՛չ կորուսանէ: Իսկ որ առանց բանի և լուսոյ և իմաստութեան ժողովէ, այնպիսին իրաւապէս ցրուէ:

ԻԳ Իսկ որ հակառակ աստուածային իշխանութեանն ժողովէ՝ կորուսանէ:

Յորժամ այսն ելանէ<sup>4</sup> ի մարդոյն<sup>5</sup> (ԺԱ 24):

Եփ. Զի նոքա նշան խնդրէին, և Յիսուս ած նոցա աւրինակ: Զի՞նչ աւգուտ է ձեզ, եթէ բժշկիք դուք առժամանակ մի, իբրու ոչ էք հաւատացեալք, զի յետ բժշկելոյն եթէ երկմտիք՝ չար ևս քան զառաջինն լինիցի<sup>6</sup> ձեզ: Արդ՝ զԻսրայէլ<sup>7</sup> անունն դնէ մարդոյ, զի մինչ բնակէին յԵգիպտոս ի հնազանդութիւն փարաւոնի<sup>8</sup>: Եւ 137ա այսն պիղծ գոյր // ի նոսա, և առաքեաց փրկել զնոսա: Առաքեաց զԲան[ն] իւր և բժշկեաց զնոսա, և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց: Եւ փախեալ այսն պիղծ ի նոցանէ, և անցոյց զնոսա ընդ<sup>9</sup> ծով և ընդ եռանդն հրոյ, և ո՛չ կամեցան մաքրիլ:

ԿՂ Կամ այն իսկ է, թէ՛ «Ըստ ձերում առաջին անհաւատութեանն և կռապաշտութեանն միանգամ ի ձեռն իմոց մարգարէիցն մերժեցի ի ձէնջ զդեւսն, որում ծառայ էիք: Եւ զեւթն ազգն հանդերձ դիւաւքն հալածեցի՝ ձեզ տալով զերկիրն ի ժառանգութիւն: Եւ դուք ի ժամանակի հաւատոցն դարձեալ ուրացաք<sup>10</sup> զիս»:

<sup>1</sup> B **զրփիս** է ընդ իս  
<sup>2</sup> B խոստանամ  
<sup>3</sup> A, B **զրահանք**  
<sup>4</sup> B ելանիցէ  
<sup>5</sup> B մարդոյ  
<sup>6</sup> B լինի  
<sup>7</sup> B զի Իսրայէլ  
<sup>8</sup> B փարաւովնի  
<sup>9</sup> B **չէք** ընդ  
<sup>10</sup> B ուրացայք

Շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և<sup>1</sup> ո՛չ գտանէ<sup>2</sup> (ԺԱ 24):

ԻԳ Փախստական գնաց ի հեթանոսս, ուր ո՛չ հոսեցաւ ջուր շնորհաց Հոգւոյն Սրբոյ, այլ ո՛չ եգիտ անդ հանգիստ, վասնզի բ[ղ]խեաց ի նոսա ջուրն կենդանի աւետարանին շնորհաց: Եւ գնացին դեւքն<sup>3</sup> յանջրդիս, և եղև անապատն ի<sup>4</sup> ճահիճս, և երկիրն ծարաւուտ ի գնացս ջուրց:

Եւ ո՛չ գտաւ տեղի չար այսոյն (ԺԱ 24):

ՈԿ Ձի լուան հեթանոսք գբարբառն. «Որ ոք ծարաւի իցէ<sup>5</sup>, եկեսցէ առ իս և արբցէ զջուրն կենդանի» (հմմտ. Յովի. Է 37, Յայտ. ԻԲ 17): Դարձեալ. «Ետու զձեզ յուխտ ազգաց և ի լոյս հեթանոսաց» (Ես. ԽԲ 6, ԽԹ 6), և «Ի նա հեթանոսք յուսասցին» (Ես. ԺԱ 10, Յռմ. ԺԵ 12), կամ «Տեղի անջրդի» (հմմտ. Սատթ. ԺԲ 43, Ղուկ. ԺԱ 24)՝ հոգիք մարդկան մկրտութեամբ մաքրեալ և բարեգործութեամբ զարդարեալ, ուր ո՛չ գտանէ սատանայ հանգիստ:

137բ ԿՂ Իսկ հրէայքն՝ մնացեալք թափուր յաստուածային շնորհացն:// Դառնան ի ձեզ դեւքն յանջրդիքդ, որ<sup>6</sup> ցամաքեալ էք յաստուածային մկրտութեան հրամանէն<sup>7</sup>:

Դարձայց ի տունն իմ ուստի ելին: Երթայ գտանէ մաքրեալ և յարդ[արեալ] (ԺԱ 24-25):

ՍՏ Հոգիք մեղաւորացն մաքրեալք յարդարութեանց, յորս հանգիստ և բնակութիւն առնէ սատանայ և պաշտաւնեայք նորա:

ԵՓ. Դարձեալ. նմանեցուցանէ զազգն փարիսական մարդոյ, որ յարդարէ զհոգին իւր տաճար դիւաց և բնակութիւն նոցին:

Երթայ առնու եւթն այլ չարագոյն քան զինքն, և մտանէ ի մարդն<sup>8</sup> (ԺԱ 26):

ԿՂ. Ձոր ասաց Երեմիայ. «Յղացաւ և ծնաւ եւթն» (հմմտ. Երեմ. ԺԵ 9)՝ գորթն յանապատին: Եւ զԲոքովամայ<sup>9</sup>՝ երկու ոսկի երինջսն (տե՛ս Գ Թագ. ԺԲ 28), և զՄանասէի՝ չորեքդիմի պատկերն (տե՛ս Բ Մնաց. ԼԳ

<sup>1</sup> Բ և իբրև

<sup>2</sup> Բ Շրջի ընդ անջրդին տեղին, խնդրէ հանգիստ և իբրև ոչ գտանէ՝ ասէ. Դարձայց անգրէն ի տունն իմ ուստի ելի: Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ (ԺԱ 24-25):

<sup>3</sup> Բ գետք փխ դեւքն

<sup>4</sup> Բ չիք ի

<sup>5</sup> Բ է

<sup>6</sup> Բ յանջրդիսդ որք

<sup>7</sup> Բ հոսմանէն

<sup>8</sup> Բ Յայնժամ երթայ և առնու եւթն այլ այս չար ևս քան զինքն և մտանէ անդ:

<sup>9</sup> Բ զԲովբովամայ

7): Առնու զեւթն դեւսն, որք հալածեցան եւթն ազգաւքն, և զերկիր նոցա ժառանգեցին, դառնայ նոքաւք, բնակէ ի ձեզ:

Որ լինի յետին մարդոյ<sup>1</sup> չար քան զառաջինն (ԺԱ 26):

Որ չարագոյն է ութիցն<sup>2</sup> դիւաց<sup>3</sup> բնակութիւն քան զմիոյն: Զի ո՛չ դարձեալ գայ Քրիստոս բժշկել զցաւս չարաչար ձրի առանց հաւատոց և բարի գործոց:

Ի խաւսելն զայս՝ ձայն եբարձ կին մի և ասէ. Երանի՛ որովայնին, որ կրեաց զքեզ և ստեանցն, որ դիեցոյց<sup>4</sup> (ԺԱ 27):

Իգ. Ետես կինն զՏէր մեր, զի ամենայնիւ<sup>5</sup> գեղեցիկ էր<sup>6</sup> և զարմանալի տեսլեամբ, մարմինն<sup>7</sup> չափ հասակաւ, և մասունք անդամոցն պատշաճ, և դիմաւք զուարթ, և հեշտալի<sup>8</sup> տեսողացն, և քաղցրահայեաց: Զոր Դաւիթ Հոգովն ասէ. «Գեղեցիկ էր տեսանելով, քան զամենայն որդիս մարդկան» (Սաղմ. ԽԴ 3): Այն մարմինն, որ ընդ աստուածային բնութիւնն միացաւ խառնեալ, // որ ամենայն եղանակաց արարիչ է և զարդարիչ, և ինքն յորովայնի անդ կազմէր զիւր մարմինն<sup>9</sup>: Զայս և Մարիամ, լցեալ Հոգով նախքան զծնունդն, ասէր. «Այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգ[ք]» (Ս 48): Եւ Տէրն զայս երանութիւն[ս] ետ տեսողացն զնա հաւատով. «Երանի աչաց ձերոց, որ տեսանեն»<sup>10</sup> (Մատթ. ԺԳ 16, Ղուկ. Ժ 23):

Յիսուս<sup>11</sup> ասէ. Երանի, որ լսեն զԲանն Աստուծոյ և առնեն (ԺԱ 28):

Զի մի՛ ոք աւտար լիցի յայնպիսի շնորհէ<sup>12</sup>: Քանզի գիտէր, եթէ բազումք հասանելոց են այնպիսի շնորհաց: Եւ ո՛չ<sup>13</sup> կամի, եթէ ոք նուազեսցի<sup>14</sup> ի հոգևոր պարգևաց նորա, որ ջանայ հասա-

<sup>1</sup> B Եւ լինի յետինն մարդոյն  
<sup>2</sup> B եւթիցն  
<sup>3</sup> B չիք դիւաց  
<sup>4</sup> B Եւ եղև մինչդեռ խաւսէր զայս, ձայն եբարձ կին մի ի ժողովրդենէ անդի և ասէ. Երանի է որովայնին, որ կրեացն զքեզ, և ստեացն, որ դիեցուցին զքեզ:  
<sup>5</sup> A ամենայնիւ  
<sup>6</sup> B երևէր  
<sup>7</sup> B և մարմինն ի  
<sup>8</sup> B հրաշալի  
<sup>9</sup> B իւր զմարմինն  
<sup>10</sup> B չիք Երանի աչաց... տեսանեն  
<sup>11</sup> B Եւ նա ասէ. Երանի այնոցիկ է, որ լսեն զԲանն Աստուծոյ և առնիցեն: Յիսուս  
<sup>12</sup> B շնորհացն  
<sup>13</sup> B չիք ոչ  
<sup>14</sup> B ոչ նուազեսցի

նեկ մեծին<sup>1</sup>: Արդ՝ եբաց զգոռուն առաջի ամենայն հոգոց անարգել, որք կամին մտանել:

Ի դիզանել ժողովրդոցն ասէ. Ազգս այս նշան խնդրէ յերկնից մի՛ տացի<sup>2</sup> (ԺԱ 29):

Եւ յիրաւի, զմեծամեծ<sup>3</sup> նշանս տեսին և իբր թէ բնաւ ո՛չ տեսին, տակաւին ևս խնդրէին:

ՍՏ Վասնզի ո՛չ կամէին ուսանել, այլ նենգութեամբ փորձել: Վասնզի չար խորհրդով վիշապին մոլորեցան, զի թողեալ զայր[ն] իւրեանց՝ զԲանն ճշմարտութեան՝ Քրիստոս<sup>4</sup>, աւրինազանց եղեն:

Նշան յերկնից մի՛ տացի (ԺԱ 29):

ԵՓ Որոտումն իբրև զՍամուելին<sup>5</sup> եցոյց, եթէ ի խորոց ելանէ քարոզութիւն, զոր դուք ի բարձանց կամիք լսել: Քանզի լուան ի բարձանց և ո՛չ հաւատացին, զի ի խորոց ել Յունան<sup>6</sup> և քարոզեաց կործանումն քաղաքի[ն] նոցա:

Բայց նշանն Յովնանու (ԺԱ 29):

Ան. Նշանն Յունանու<sup>7</sup> աւրինակ էր<sup>8</sup> զկորուստն ձեր: Զի նա ո՛չ ետ բանիւ նշան Նինուէի, այլ ինքն եղև նշան նոցա: Զի թէ ապստա(//)մբեսցեն իբրև զնա, կորիցեն յանդունդս իբրև զնա<sup>9</sup>, թէ հաւատասցեն իբրև զնա, փրկեսցին ի մահուանէ իբրև զնա: Սոյնպէս Տէր մեր ետ նշան զյարութիւնն իւր: Զի թէ հաւատասցեն, յորժամ յարիցէ ի դժոխոց, ապրեսցին, ապա եթէ ո՛չ՝ կորիցեն: Զի գիտէր Տէր մեր, թէ կորնչելոց են: Վասն այնորիկ առաւելաւ յայտնեաց զկորուստ նոցա:

Որպէս եղև Յունան նշան նինուէացոցն<sup>10</sup>, այսպէս Որդի մարդոյ ազգիս այս[միկ] (ԺԱ 30):

ԵՓ Զի երկու աւրինակաւք էր նշանն: Թէ արհամարհեսցեն, իջցեն կենդանոյն ի դժոխս, կա՛մ ապաշխարեսցեն և կեսցեն ի մահուա-

<sup>1</sup> B մեծի չնորհացն

<sup>2</sup> B Եւ ի դիզանել ի վերայ նոցա ժողովրդոց՝ սկսաւ ասել. Ազգս այս ազգ չար է, նշան խնդրէ և նշան յերկնից ոչ տացի սմա:

<sup>3</sup> B գի մեծամեծ

<sup>4</sup> B ճշտութեան զՔրիստոս

<sup>5</sup> A Սամուելին

<sup>6</sup> B Յունան

<sup>7</sup> B Յովնանու (այտուհետ չենք նշում)

<sup>8</sup> B է

<sup>9</sup> B և *փխ* կորիցեն... զնա

<sup>10</sup> B Զի որպէս եղև Յովնան նշան նինուէացոցն

նէ իբրև զնոսա, որպէս Տէր մեր եղև ի գլորումն և ի կանգնումն, կա՛մ կեց[ց]են անուամբ նորա, կա՛մ մեռանիցին մահուամբ նորա:

**Դչխոյն Հարաւոյն<sup>1</sup> յարիցէ ի դատաստանի<sup>2</sup> (ԺԱ 31):**

**ԵՓ** Աւրինակ էր եկեղեցոյ: Որպէս նա առ Սողոմոն<sup>3</sup> եկն (տե՛ս Գ Թագ. Ժ 1-13), նոյնպէս և եկեղեցի առ Տէր մեր<sup>4</sup>: Եւ որպէս նա դատապարտեաց զնա<sup>5</sup> գալովն, նոյնպէս և՛ եկեղեցի: Զի նա ցանկացաւ զանցաւոր<sup>6</sup> իմաստութիւնն տեսանել զմահականացու թագաւորին, նովաւ դատի զհրէայսն: Որչա՞փ ևս առաւել եկեղեցի՝ զթագաւորն անմահ և զիմաստութիւնն անմոռաց, զի թէ՛ չարչարիմք ընդ նմա, ընդ նմա և փառաւորիմք:

**Ահաւասիկ<sup>7</sup> առաւել քան զՍողոմոն<sup>8</sup> է աստ (ԺԱ 31):**

**ՍՏ** Անդ կինն առ թագաւորաւն<sup>9</sup>, և աստ Տէրն երկնի և երկրի առ ծառայսն: Նա՛ ի ծագաց երկրէ<sup>10</sup> և ես՛ ընդ քաղաքս և ընդ գեւղս շրջիմ: Սողոմոն<sup>11</sup> զծառոց և զփայտից խաւսեցաւ, և ես՛ անճառ իր(//)աց և զահագին խորհրդոց:

**Արք նինուեացիք յարիցեն ի դատաստան[ի] ընդ ազգիս ընդ այսմիկ<sup>12</sup> (ԺԱ 32):**

**ՍՏ** Յիրաւի դատապարտին, զի նոքա լուեալ Յունանու ծառային Աստուծոյ ապաշխարեցին, իսկ հրէայքն լուեալ ճայնի Որդոյն Աստուծոյ՝ ո՛չ հնազանդեցան:

**Ա.ն.** Զգալուստն Յունանու յառաջագոյն ո՛չ ոք քարոզեաց, իսկ զՔրիստոս՝ բազում մարգարէք: Նա կորուստ քարոզեաց, և սա փրկութիւն աւետարանեաց: Նա նշանս ո՛չ արար, իսկ սա՛՝ բազում նշան: Նմա դիւրաւ հաւատացին հեթանոսք, իսկ զսա ո՛չ ընկալան հրէայքն: Վասն այսորիկ դատապարտելոց եմ զնոսա: Գնաց Յունան քարոզ Նինուէի (տե՛ս Յովնան Գ 3), որպէս Քրիստոս

<sup>1</sup> B Հարաւոյ  
<sup>2</sup> B դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ և դատապարտեսցէ զսոսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի:  
<sup>3</sup> B Սողոմոն  
<sup>4</sup> B **չէք** մեր  
<sup>5</sup> B զնոսա  
<sup>6</sup> B զյանցաւոր  
<sup>7</sup> B և ահա **փխ** ահաւասիկ  
<sup>8</sup> B զՍողոմոն  
<sup>9</sup> B թագաւորն եկն  
<sup>10</sup> B երկրէ յարեաւ  
<sup>11</sup> B Սողոմոն  
<sup>12</sup> B այսմիկ և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու:

Հեթանոսաց զառաքեալսն առաքեաց (տե՛ս Մատթ. ԻԸ 19): Մերկացան թագաւորք զթագս և զգեցան քուրճ, և Հեթանոսք զթագս խոնարհեցուցին ընդ լծովն Քրիստոսի: Թողին նոքա զարծաթ և զոսկի և սրբեցան ի պոռնկութենէ որպէս եկեղեցի[ք] Հեթանոսաց՝ զաղքատութիւն և [գ]լուսութիւն:

ԱՀԱ<sup>1</sup> առաւել քան զՅունան<sup>2</sup> է աստ (ԺԱ 32):

Յունան աւրինակ Քրիստոսի՝ առաքեալ ի Հաւրէ<sup>3</sup> Հեթանոսաց քարոզ: Յունան հրաժարէր յառաջ քան զգալն ի դժոխոց, և Տէր մեր ասէր աշակերտացն. «Ի ճանապարհ Հեթանոսաց մի՛ երթայք» (Մատթ. Ժ 5): Էջ նա ի ցամաքէն ի ծով խոռովեալ, և Քրիստոս՝ յերկնից ի ծով ծփեալ կենցաղոյս: Ել վիճակ Յունանու արդարոյ, զի այլքն ապրեացին ի մահուանէ: Ել վիճակ Տեառն անպարտն<sup>4</sup> մահու, զի զմեզ ի մեղաց ապրեցուցէ: Որպէս մարգարէացաւ Կայիափայ. «Լաւ է միոյն մեռանել» (Յովհ. ԺԸ 14), քան ազգիս

139բ կորնչել: // Եւ որպէս Մովսէս երկու նոխազաւքն<sup>5</sup> վիճակաւ, մին Ազգայելին և մին Տեառն, այսինքն՝ բարկութեան Աստուծոյ, որ Տեառն էր՝ զենոյր, իսկ Ազգայելին՝ արձակէր ազատ յանապատ անկոխ (տե՛ս Ղևտ. ԺՁ 5-10): Այսպէս Տէր մեր զենաւ վասն բարկութեան Աստուծոյ և առաքեաց զմեզ երթալ յերկինս՝ յանկոխն ի<sup>6</sup> մահկանացուացս:

Ո՛չ ոք լուցանէ ճրագ և դնէ ընդ թաքստեամբ<sup>7</sup>, այլ ի վերայ աշտանակի (ԺԱ 33):

ՍՏ Այն երանելի լոյսն ընդ թաքստեամբ իշխանի աշխարհիս ո՛չ ծածկեցաւ, քանզի ելոյց զճրագն և ո՛չ ետ յաշխարհի թաքչել:

Այլ ի վերայ աշտանակի (ԺԱ 33):

Իշխանական գոյացութեան[ն], զի զլոյս տացեն բոլոր աշխարհիս: Ասի գրաւան և սատանայ այսու<sup>8</sup> աւրինակաւ, զի պատրէ զոմանս, որք ուսան ի Քրիստոսի վարդապետութենէն, հարկ առնէ զգիտութիւն և զառաքինութիւն ո՛չ վարդապետել այլոց,

<sup>1</sup> B և աՀա

<sup>2</sup> B զՅովնան

<sup>3</sup> B չիք Հաւրէ

<sup>4</sup> B անպարտին

<sup>5</sup> A նախազաւքն

<sup>6</sup> B չիք ի

<sup>7</sup> B Ոչ ուրուք լուցեալ ճրագ դնէ ի թաքստեան

<sup>8</sup> B այս

որպէս այն, որ թաքոյց զքանքարն յիւր մարմինն յախտ ո՛չ ուսուցանելով, անիծիւք<sup>1</sup> ել «ի խաւարն արտաքին» (Մատթ. ԻԵ 30): Իսկ որ զհինգն և [զ]երկուսն առին, լուսաւորեցին զայլս<sup>2</sup>: Լուան ի Տեառնէ. «Բարի և հաւատարիմ, մոլտ յուրախութիւն տեառն քո» (Մատթ. ԻԵ 21, 23):

Ճրագ մարմնոյ ակն է, թէ<sup>3</sup> ակն առատ է<sup>4</sup> (ԺԱ 34):

Կր. Արդ՝ յորժամ լուսաւոր ունիս միտս, հոգի և մարմին<sup>5</sup> պայծառանայ, իսկ եթէ միտքտ<sup>6</sup> մեղանչական է, բաւանդակ հոգի և մարմինդ խաւարի և ի հուրն անշիջանելի մտանէ: Իսկ եթէ հոգին լուսաւոր է գործովք առաքինութեամբ և ողորմութեամբ, և մարմինն<sup>7</sup> լուսաւորեսցի յարքայութիւնն երկնից:

Արդ՝ զգոյշ լեր, գուցէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար իցէ<sup>8</sup> (ԺԱ 35):

140աՈԿ Թէ տրաւք, որ լոյս է և արդ(//)արացուցիչ, մեղանչես դու, որչա՞փ ևս մեղաւքն, զի<sup>9</sup> խաւարեցուցիչք են: Արդ՝ շնութիւն և հայհոյութիւն մի<sup>10</sup> կողմ է: Իսկ երկու<sup>11</sup> կողմ<sup>12</sup>, թէ տաս պարծանաւք կամ<sup>13</sup> ի ցոյցս մարդկան, և ո՛չ հաճոյութեամբ Աստուծոյ: Զի յորժամ նաւապետն ընկղմի, և ճրագն շիջանի, և զաւրավարն գերի երթայ, որպիսի՞ յոյս կայցէ<sup>14</sup>, քան ի բանդի<sup>15</sup> բնակեալ: Չար ևս այն է, յորժամ միտքն այնպիսի ախտի ծառայեսցեն:

Յողաչել զնա փարիսացոյն մտանել ի տուն նորա<sup>16</sup> (ԺԱ 37):

ՍՏ Փարիսացիքն և սադուկեցիքն առանձնականք ասին, որ<sup>17</sup> զմայրաքաղաքն Երուսաղէմ ունէին, նոքա քան զայլսն

<sup>1</sup> B անիծաւք  
<sup>2</sup> B զայլսն: «Զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն» (ԺԱ 33)  
<sup>3</sup> B յորժամ  
<sup>4</sup> B է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի, և երբ ակնն չար է, և մարմինն խաւարին եղիցի:  
<sup>5</sup> B մարմինդ  
<sup>6</sup> B միտքդ  
<sup>7</sup> B մարմինդ  
<sup>8</sup> B իցէ: Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն, որպէս յորժամ ճրագն նշուղիւք լուսաւորեսցէ զքեզ (ԺԱ 35-36):  
<sup>9</sup> B որ  
<sup>10</sup> B ի մի  
<sup>11</sup> B մի  
<sup>12</sup> B կողմ է  
<sup>13</sup> B և կամ  
<sup>14</sup> B կացցէ  
<sup>15</sup> B բանտի  
<sup>16</sup> B Եւ մինչ խաւսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի, զի ճաշակերիցէ առ նմա:  
<sup>17</sup> B որք

դժնդակք էին, որչափ քան զայլսն աւելի ի պարգևսն վայելէին, նոյնչափ աւելի զհպարտութիւն ունէին:

**Յիսուս մտեալ բազմեցաւ: Փարիսացիս զարմացաւ, զի ո՛չ նախ մկրտեցաւ քան զճաշն<sup>1</sup> (ԺԱ 37-38):**

ՈԿ Արդ՝ քահանայքն բազում ինչ նորա մուտս արարին: Թէպէտ<sup>2</sup> Մովսէս սպառնալով ասաց. «Մի՛ առաւելու և մի՛ հատանել» (հմմտ. Ելք 7-8), և նոքա ասեն. «Ո՛չ է պարտ անլուայ ձեռաւք հաց ուտել» (հմմտ. Մատթ. ԺԵ 20, տե՛ս Մարկ. Է 1-4): Եւ բաժակաց և ստոմանաց և պղնձաց<sup>3</sup> և անձանց մկրտութիւն, քանզի ծաղու էին իրքն: Քանզի հասեալ էր ժամանակն ազատել ի խտրանացն: Եւ նոքա առաւել կապէին զանձինս, վասնզի կասկածէին, թէ գուցէ հանիցէ ի նոցանէ զիշխանութիւնն: Կամէին ինքեանք երևել աւրինազիրք, և ինքեանք անաւրէնութեամբ լի էին: Եւ զիւրեանցն պահէին և զԱստուծոյ աւրինաւքն անցանէին:

**Սրբեցէք զարտաքին բաժակին և զպնակին, և ներքին ձեր լի է յափշտակութեամբ<sup>4</sup> (ԺԱ 39):**

140բ Արհամարհելի է մարմնական սրբութիւն[ն] // և մեծ պատիժ, որ ո՛չ սրբէ զհոգին առաքինութեամբ: Այլ նոքա փառամոլութեամբ մարմնոյ սրբութեան զգուշանային և առաքինութեան անփոյթ առնէին: Իսկ Մատթէոս ասէ. «Սրբեա՛ զներքինն, զի արտաքինն սուրբ լիցի<sup>5</sup>» (Մատթ. ԻԳ 26): Յուցանէ, թէ հարկաւ հոգւոյն սրբութեանն զհետ գայ մարմնականն:

**Ջարժանն տուք ողորմութիւն, և ամենայն ձեր սուրբ է<sup>6</sup> (ԺԱ 41):**

ԻԳ Բայց դուք ուսարուք զստոյգ սրբութիւն, այսինքն՝ տուք ողորմութիւն կարաւտելոցն և լուացէք զմիտս ի խղճէ մեղացն: Այնպէս սրբեցարուք, և<sup>7</sup> մարմնոյ աղտ զձեզ ո՛չ վնասէ:

**Վա՛յ ձեզ փարիսացոցդ, զի տասանորդէք զանանուխ և զփեղենա<sup>8</sup> (ԺԱ 42):**

<sup>1</sup> Եւ եւ մտեալ բազմեցաւ: Իբրև ետես փարիսեցին, զարմացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշն:

<sup>2</sup> Ե զի թէպէտև

<sup>3</sup> Ե պղնձաց

<sup>4</sup> Ե Ասէ ցնա Տէր. Այժմ դուք փարիսեցիք զարտաքին բաժակին և զպնակին սրբէք և ներքինն ձեր լի է յափշտակութեամբ և չարութեամբ:

<sup>5</sup> Ե Անմիտք ոչ ասպքէն, որ զարտաքինն արար, և զներքինն նոյն արար (ԺԱ 40) *փի* Իսկ Մատթէոս ասէ... լիցի

<sup>6</sup> Ե Բայց աղէ զարժանն իսկ տուք ողորմութիւն, և ահա ամենայն ինչ սուրբ է ձեր:

<sup>7</sup> Ե զի

<sup>8</sup> Ե Այլ վայ ձեզ փարիսեցւոց, զի տասանորդէք զանանուխ և զփեղենայ և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրովն Աստուծոյ:



ՈԿ Ի մանուկնսն հաւաստիս պահանջէին և գմեծամեծաւքն Աստուծոյ արհամարհէին:

ԻԳ Եւ ազահուլթեամբ անսխալ յամենայնէ խնդրէին:

**Եւ անցանէք զիրաւամբք և զսիրովն Աստուծոյ: Զայս արժան էր առնել, և զայն ո՛չ թող[նել]<sup>1</sup> (ԺԱ 42):**

ՈԿ Թէպէտ տասանորդէին, ո՛չ էր վնաս առնել զողորմութիւն և ո՛չ իբրև զաւրէնս պահել զմանուկնսն:

ԻԳ Զի զնոսա զգուշութեամբ պահէք և գմեծն զաւգտակարն ո՛չ խնդրէք:

**Վա՛յ ձեզ<sup>2</sup>, զի սիրէք զբարձրագահս ի ժողովուրդս և զողջոյնս<sup>3</sup> ի հրապարակս (ԺԱ 43):**

ՈԿ. Թէպէտ փոքր ինչ թուի, այլ մեծ չարեաց պատճառք են, զի զքաղաքս և զեկեղեցիս Աստուծոյ<sup>4</sup> կործանէ: Եւ ինձ արտասուս գայ, յորժամ զնախաթոռոցն լսեմ: Որչա՞փ չարիք անտի՞<sup>5</sup> ծնան եկեղեցոյ Աստուծոյ, զոր չէ պարտ ձեզ ի վեր հանել: Մանաւանդ, թէ ձերդ<sup>6</sup> ո՛չ են կարաւտ ուսանել ի մէնջ, քանզի ինքեանք ճարտար գիտեն:

141ա ՍՏ Թէ սիրելն մեղադրութիւն է, առնելն որչա՞փ // ևս, և որսալն և հասանելն նմին:

**Վա՛յ ձեզ, զի էք<sup>7</sup> իբրև զգերեզմանս անյայտս<sup>8</sup> (ԺԱ 44) բռելոց<sup>9</sup>:**

ՈԿ Դարձեալ անապարծութեամբ պախարակէ զնոսա, որ է վերջին թշուառութիւն, ուր ո՛չ Քրիստոս բնակէ, և ո՛չ Հոգւոյն Սրբոյ ազդէ զաւրութիւնն: Քան[զ]ի ողբոց արժանի են չար ցանկութեամբքն<sup>10</sup> այնորիկ, որքան զորդուն<sup>11</sup> պիղծէն կեղծաւորէին<sup>12</sup>, որ ամենայն չարեաց պատճառ է: Վասն այնորիկ ո՛չ հաւատային ի Քրիստոս: Նոյնպէս և այժմ՝ արտաքոյ զարդարեալք և ի ներքոյ լի՛ են անաւրէնութեամբ:

<sup>1</sup> Բ զայնու ոչ անցանել

<sup>2</sup> Բ ձեզ փարիսեցւոց

<sup>3</sup> Բ զնախողջոյնս

<sup>4</sup> Բ այս *փխ* Աստուծոյ

<sup>5</sup> Բ անդի

<sup>6</sup> Բ ձերտ

<sup>7</sup> Բ էք դուք

<sup>8</sup> Բ անյայտս, և մարդիկք զնան ի վերայ և ոչ գիտեն: Պատասխանի ետ ոմն յաւրինականացն և ասէ ցնա. Վարդապետ, զայդ բանս ասելով՝ և զմեզ թշնամանես (ԺԱ 44-45):

<sup>9</sup> Բ *չիք* բռելոց

<sup>10</sup> Բ ցանկութեամբն

<sup>11</sup> Բ զորդունս

<sup>12</sup> Բ զի կեղծաւորէին

**Վա՛յ աւրինականաց, զի բառնայք մարդկան, և դուք մատամբ ո՛չ մերձենայք**<sup>1</sup> (ԺԱ 46):

*Քանզի առանց ներելոյ և թողութեան են, որք բանիւք և եթ ճարտար են և հեղգ ի գործոց բարեաց: Եւ ո՛չ են<sup>2</sup> այն<sup>3</sup> փոքր չարիք, զի ո՛չ կամին հուպ երթալ:*

**Վա՛յ ձեզ, զի շինէք զչիրիմս մարգարէիցն**<sup>4</sup> (ԺԱ 47):

*Որպիսի մտաւք շինէին<sup>5</sup>, ո՛չ<sup>6</sup> պատուէին զսպանեալսն: Այլ ձաղէին և կասկածէին, եթէ գուցէ ժամանակաւ անյայտ լիցի և յիշատակն խափանեսցի: Որպէս նշան յաղթութեան կանգնէին զգերեզմանն:*

**Ապա ուրեմն վկայէք գործոց հարցն ձերոց, որ կոտորեցին զմարգարէսն**<sup>7</sup> (ԺԱ 48):

ՍՏ *Ո՛չ մեղադրի, որ կամաւք ո՛չ հաղորդի Հաւրն:*

ԵՓ *Եւ, ըստ աւրինացն մարգարէիցն, սպանութեան չի՛ք ապաշխարութիւն:*

Իգ. *Որչափ ևս առաւել նոքա, և դուք չար<sup>8</sup> քան զնոսա, զի զՏէր մարգարէիցն սպանանելոց էք:*

Եփ. *Ձի գրեալ է. «Որ սպանցէ՝ մեռցի»:* Եւ ո՛չ ասէ, թէ դարձցի և թողցի նմա: Այլ վասն իւր սպանմանն ետ նոցա ապաշխարութիւն, 141բ *եթէ կամեսցին: // Սպանութեամբ վերջնոցս հաղորդ եղեն առաջնոցն<sup>9</sup> յայտնապէս՝ խոստովանութեամբ բերանոյն իւրեանց:*

**Առաքեցից ի նոսա իմաստունս և մարգարէս և առաքեալս, և ի նոցանէ սպանանեն և հալածեն**<sup>10</sup> (ԺԱ 49):

Ոկ. *Ձի մի՛ ասիցեն, թէ զՏէրն իւրեանց ի խաբս<sup>11</sup> խաչեցաք, այլ ի ծառայան<sup>12</sup> ո՛չ ժտեցաք<sup>13</sup>, և ի նոսա ո՛չ խնայեցէք<sup>1</sup>:*

<sup>1</sup> Եւ նա ասէ. Եւ ձեզ վայ աւրինականացդ, զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ միով ի բեռինսն ոչ մերձենայք:

<sup>2</sup> Եւ հեղգ... են՝ սրբ. է ստորին լս.

<sup>3</sup> Եւ այս

<sup>4</sup> Եւ մարգարէիցն և հարքն ձեր սպանինն զնոսա

<sup>5</sup> Եւ սրբ. վասն ազահութեան

<sup>6</sup> Եւ ոչ

<sup>7</sup> Եւ Ապա ուրեմն վկայէք, եթէ կամակից էք գործոց հարցն ձեր, զի նոքա կոտորեցին զնոսա և դուք զգերեզմանս նոցա շինէք:

<sup>8</sup> Եւ չարք

<sup>9</sup> Եւ առաջնոցն

<sup>10</sup> Եւ վասն այտորիկ իմաստութիւնն Աստուծոյ ասաց. Առաքեցից ի նոսա մարգարէս և առաքեալս, և ի նոցանէ սպանանիցեն և հալածիցեն:

<sup>11</sup> Եւ խափս

<sup>12</sup> Եւ այլ և զծառայանս

<sup>13</sup> Եւ գիտացաք

Իգ. *Զայս յայտ արար, թէ ո՛չ ակտարոտի է սպանանելն Յիսուսի յորդոց նոցա, քանզի նոքա սպանողք մարգարէիցն և տիրասպանք են:*

**Խնդրեսցի**<sup>2</sup> արիւն ամենայն մարգարէիցն<sup>3</sup> [հեղեալ] ի սկզբանէ աշխարհի<sup>4</sup> (ԺԱ 50):

Եփ. *Արդ՝ սպանին զվրէժխնդիրն ծառայից իւրոց<sup>5</sup>: Զի այն, որ զդատաւորն սպանանէ, բարեկամ է սպանողացն, զի ջնջեաց զվրէժխնդիրն սպանողաց[ն] և ընդարձակեաց զձեռս սպանողացն:*

**Յարենէ Աբելի արդարոյ**<sup>6</sup> (ԺԱ 51):

Եփ. *Ո՛չ սպան զնա Հերովդէս ընդ մանկանցն, և ո՛չ նազորացիքն<sup>7</sup>, որ ընկեցին զնա ի լեռնէ անտի<sup>8</sup>, զի ո՛չ ունէր հրաման արտաքոյ Երուսաղեմի մեռանել: Տե՛ս դու: Թէպէտ Երուսաղէմ սպան զնա Հերովդէս, և Նազարեթ խառնեալ են ի սպանողս նորա: Եւ խնդրէ ի նոցանէ վրէժ:*

**Զաքարիայ** (ԺԱ 51):

Ստ. *Ոմանք զՅովհաննու հայրն ասեն և կէսք զմարգարէն, և այլք զոմն երկանուն քահանայ, զոր Գիրք<sup>9</sup> Յուդայ<sup>10</sup> կոչեն<sup>11</sup>: Յովսեպպոս յիշէ, թէ Յովաս թագաւոր[ն] եսպան:*

**Ընդ սեղանն և ընդ տաճարն** (ԺԱ 51):

Ոկ. *Բայց դու միտ դիր կրկին ժպրհուլթեան նոցա: Զի ո՛չ միայն զսուրբսն կոտորէին, այլև ի սուրբ տեղոջէն ո՛չ պատկա[ռէին]<sup>12</sup>:*

142ա Եփ. *Այսու զչ(//)արուլթիւն նոցա յայտ արար, զի ո՛չ ամաչէին ի տեղոջէ քաւուլթեանն և ո՛չ յերեսաց մեծարանաց Տեառն:*

**Այո՛, խնդրեսցի յազգէս յայսմանէ**<sup>13</sup> (ԺԱ 51):

<sup>1</sup> Ե խնայեցաք  
<sup>2</sup> Ե զի խնդրեսցի  
<sup>3</sup> Ե մարգարէից  
<sup>4</sup> Ե աշխարհի յազգէ յայսմանէ  
<sup>5</sup> Ե նորա  
<sup>6</sup> Ե Յարենէն Աբելի մինչև ցարիւնն Զաքարիայ կորուսելոյ:  
<sup>7</sup> Ե նազովրացիքն  
<sup>8</sup> Ե անդի  
<sup>9</sup> Ե գորգի *փխ* գոր գիրք  
<sup>10</sup> Ե Յովիդա  
<sup>11</sup> Ե ասեն զԱզարիայ  
<sup>12</sup> Թուղթը վնասված է  
<sup>13</sup> Ե Այո՛, ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ յայսմանէ:

- ՈԿ. Ո՛չ գայլ ոք սպանին, այլ զիմաստունսն և զմարգարէսն: Ասէ. «Ի գլուխ ձեր դարձուցից զայն ամենայն և սաստիկ գործեցից զվրէժխնդրութիւնն»:
- ԵՓ. Զի որ բազում յանցաւորս տեսանիցէ պատժեալ և ո՛չ զգաստանայ: Զար քան զամենեսին<sup>1</sup> վրէժ տալոց է:

Վա՛յ ձեզ աւրինականացդ, զի փակէք զարքայութիւն, դուք ո՛չ մտ[անէք]<sup>2</sup> (ԺԱ 52):

- ՈԿ Վարդապետի գործ է ապրեցուցանել զկորուսեալն<sup>3</sup>, իսկ ժանդի<sup>4</sup> գործ է զապրանացն կորուսանել:
- ԻԳ Զի զգիրս մարգարէիցն փակեցին ի տգիտացն, զի մի՛ հաւատասցեն, թէ նա է Քրիստոսն, և մտցեն ընդ դուռն կենաց:

Սկսան<sup>5</sup> դպիրքն և փարիսացիքն զչարել<sup>6</sup> (ԺԱ 53):

- ՍՏ Դպիրքն ընդ երկոտասան ազգն ցրուեալ էին ի մէջ Իսրայելի: Հնարէին բանիւն զրպարտութիւն դնել ի վերայ նորա:

<sup>1</sup> Բ գամենայն

<sup>2</sup> Բ Վայ ձեզ աւրինականացդ, զի թաքուցանէք զփականս գիտութեանն. դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք: Եւ ի խաւսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամենայն ժողովրդեանն զամաւթի հարկանէին (ԺԱ 52-53):

<sup>3</sup> Բ զկորուսեալսն

<sup>4</sup> Բ ժանտի

<sup>5</sup> Բ Եւ սկսան

<sup>6</sup> Բ փարիսացիքն զչարել և զրդուել ընդ նմա վասն բազում իրաց և սպանանել, որսալ ինչ բանս ի բերանոյ նորա, զի չարախաւսեացեն զնմանէ, որովք ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն մինչև կոխել զմիմեանս (ԺԱ 53-ԺԲ 1):

## Գլուխ ԺԲ

**Յիսուս ասէ. Ջգոյշ լերուք ի խմորոյ փարիսեցոցն<sup>1</sup> (ԺԲ 1):**

- ՍՏ *Ի վարդապետութենէ փարիսական, որ է կեղծաւորութիւն:*  
 ԻԳ. *Ջի ո՛չ կարէ միշտ չարն բարի ձեւանալ, և ո՛չ բարիքն միշտ ի չարացն հալածանս կրեն: Այլ է ժամանակ, յորում խայտառակի նոցա կեղծաւորութիւնն:*

**Ջի ոչինչ է ի ծածուկ, որ ո՛չ յայտնեսցի, և գաղտնի, որ ո՛չ ծանիցի (ԺԲ 2):**

- ՍՏ *Թէպէտ ի մարդկանէ ծածուկ ինչ գործեցաւ, սակայն ի ժամանակի պայծառանայ ձեր թաքուն առաքինութիւնդ, և դատի Աստուած զգաղտնիս մարդկան: Եւ ամենայն յայտնեալ՝ յանդիմանի, 142բ յորժամ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնէ // զգաղտնիս խաւարի և լուսաւորեսցէ զխորհուրդս սրտից:*

**Ջոր ինչ ասեմ<sup>2</sup> ի խաւարի, լսելի լիցի ի լոյս (ԺԲ 3):**

- ԵՓ *Այսինքն՝ զոր ինչ ծածուկ խաւսիմս ընդ ձեզ, ասացէք զայն յայտնի համարձակութեամբ: Կամ զհրէայսն ասաց խաւար և զհեթանոսս լոյս:*  
 ՍՏ *Թէպէտ չէր<sup>3</sup> խաւար, զի զայսպիսի բանս խաւսէր ընդ նոսա: Կամ զոր այժմ առակաւք ուսուցանեմ, քարոզեցէք համարձակութեամբ և յայտնապէս:*

**Ջոր յունկանէ լուայք<sup>4</sup>, քարոզեցէք ի վերայ տանեաց<sup>5</sup> (ԺԲ 3):**

- ՍՏ *Այսինքն՝ բարձր ձայնիւ զամենեսին ուսուցէք, որք կամին: Ջի ընդ նոսա միայն խաւսէր ի միում անկեան, վասն այնորիկ «ունկն» ասէ: Առ այնչափ համարձակութիւն լինելոց էր:*  
 ԻԳ *Ասէ զաւրութեամբ Հոգւոյն տարածեցէք ընդ տիեզերս<sup>6</sup>:*

**Մի՛ զարհուրիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին<sup>7</sup> (ԺԲ 4):**

<sup>1</sup> Եւ Սկսաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ՝ զգոյշ լերուք անձանց ի խմորոց սաղուկեցուցն, որ է կեղծաւորութիւն:

<sup>2</sup> Եւ վասնզի զոր ինչ ասիցէք

<sup>3</sup> Եւ ոչ էր

<sup>4</sup> Եւ լվայք

<sup>5</sup> Եւ զոր յունկանէն խաւսեցարուք ի շտեմարանս, քարոզեցի ի վերայ տանեաց:

<sup>6</sup> Եւ տիեզերես

<sup>7</sup> Եւ Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛ զարհուրիցիք յայնցանէ, որ սպանանէն զմարմին և յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել:

ԵՓ Յայտ արար, եթէ ի վերայ մարմնոյս<sup>1</sup> միայն գոյ իշխանութիւն մարդոյ, իսկ<sup>2</sup> ի վերայ հոգւոյն և մարմնոյ՝ արկանելով ի գեհեանն<sup>3</sup>:

ՍՏ Ուսուցանէ<sup>4</sup> աստ, թէ հոգի անմահ է: Բայց սպանութիւն աստ զմարմինն ի զգայութեանց յանզգայութիւն փոխէ, իսկ մահ հոգոյ է փոխելն յառաքինութենէ ի մեղս: Զի հոգի, որ մեղանչէ, նոյն և մեռցի:

Երկերուք յայնմանէ, որ յետ սպանանելոյն իշխանութիւն ունի արկանել ի գեհեանն<sup>5</sup> (ԺԲ 5):

143ա Կորուստ հոգոյ և մարմնոյ զյաւիտենական տանջանսն ասէ: Եւ զեկուցանէ, թէ հոգի և մարմին ի միասին պատժին, զի աստ բազումք յապականութենէ երկնչին և ի մահուանէ խիթան: Կամեցաւ Տէր մեր համարձակել բանիւս այսմիկ, // թէ առաւել ևս պարտ է երկնչել յԱստուծոյ, որ կարող է զ[հ]ոգի և զմարմին յորդունս և «ի կրճել ատամանց» (Մատթ. Ը 12, ԺԳ 42, 50, ԻԲ 13, ԻԳ 51, ԻԵ 30, Ղուկ. ԺԳ 28) տանջել:

Հինգ<sup>6</sup> ձագ երկուց դանկաց<sup>7</sup> վաճառի, և մի ի նոցանէ ո՛չ է մուսաց[եալ] առաջի Աստուծոյ (ԺԲ 6):

ՍՏ Իսկ Մարկոս ասարի միոջ ասէ: Ըստ հելլենացոցն դանգ մի ասէ, ըստ եբրայեցոյն<sup>8</sup> երկու դանգ<sup>9</sup>, իսկ ասարիոնն՝ վաթսուն դանկ<sup>10</sup> դահեկան մի արծաթի, որ յայնմն<sup>11</sup> ժամանակն վարէր վաճառաւորաց: Ըստ վերատեսութեան ճնճղուկ՝ մարդիկ, և երկու թիւքտ սրբոց<sup>12</sup> նման տատրակ[ի] և աղաւնի, որ ի սեղանն մատուցանէին: Նոյնպէս և ի նուազսդ<sup>13</sup> գտցես զաւրինակդ:

ԵՓ Արդ՝ երկու ճնճղուկ և ո՛չ մի կամեցաւ ցուցանել զհաւսն տկար, զի մեծ հաւն մի մի վաճառին, որչա՞փ ևս առաւել վերա-

<sup>1</sup> B մարմնոյ  
<sup>2</sup> B իսկ Աստուծո  
<sup>3</sup> B գեհեանն  
<sup>4</sup> B Եւ ուսուցանէ  
<sup>5</sup> B Այլ ցուցից ձեզ յուճէ երկնչիցիք: Երկնջիք յայնցանէ, որ յետ սպանանելոյն ունի իշխանութիւն արկանել ի գեհեանն: Այո՛, ասեմ ձեզ, յայնմանէ երկնջիք:  
<sup>6</sup> B ապաքէն հինգ  
<sup>7</sup> B դանգաց  
<sup>8</sup> B եբրայեցուցն  
<sup>9</sup> A դանկ  
<sup>10</sup> B դանգ  
<sup>11</sup> B յայն  
<sup>12</sup> B թիւքդ սրբոյ  
<sup>13</sup> B նուազտ

կացու Հայր փոքու հաւատացելոցն<sup>1</sup>՝ աւրինակաւ սիրոյն, որ առ մեզ ցուցանի:

ԻԳ Եւ զի մի ոք յիմար յապականացու բնութիւնս հայելով՝ վհատեսցի:

Ձեր ամենայն հեր գլխոյ թուեալ են<sup>2</sup> (ԺԲ 7):

ԿՂ Որչա՞փ ևս անձինք ձեր: Վասն այնորիկ զճնճղուկ<sup>3</sup> և զհերսն դնէ, որ առաւել անզգայականք են ի մարմինս<sup>4</sup>, որ ի հատանելն ո՛չ զգայ: Արդ՝ այդոքիկ ո՛չ վասն բազմութեանն, այլ վասն նուազութեանն և անպատուականութեանն<sup>5</sup> թուեալ են առաջի Աստուծոյ, զիա՞րդ վասն անձանց կարճամտէք, թէ անփոյթ առնէ զհոգաբարձութենէ ի ժամանակի չարչարանաց կամ պսակաց:

Մի՛ երկ[ն]չիք, զի քան զբազում ձագս լաւ էք<sup>6</sup> (ԺԲ 7):

ՍՏ Ձի քան զամենայն ճնճղուկս լաւագոյն կոչին առաքեալքն և քան զայն ճնճղուկն<sup>7</sup>, որ միայնացաւ [ի] տանիսն:

Որ<sup>8</sup> խոստովանեսցի յիս առաջի մարդկան, և Որդոյ<sup>9</sup> մարդոյ խոստովանեսցի զնա<sup>10</sup> առաջի հրեշտակաց Աստուծոյ (ԺԲ 8):

143բ ԿՂ. // Փոխանակ, զի դուք զիս Որդի Աստուծոյ խոստովանիք առաջի մարդկան, ես զձեզ առաջի հրեշտակաց՝ իմ աշակերտ բարձրագոյն վկայութեամբ: Ձի առաջի մարդկան խոստովանել ի վկայութիւն անվախճան կենացն լինի և ուրացութիւն կորուստ ցուցանէ:

ԻԳ Արհամարհել զմահ և խոստովանել զնա և վկայ աստուածութեան նորա լինել:

Եւ, որ ուրացցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ (ԺԲ 9):

ՍՏ Ուրանալ ասի, որք զնա սոսկ Որդի մարդոյ կոչէին, և հաւատալ ասի, որք զնա Որդի Աստուծոյ խոստովանին բնութեամբ և փառակցութեամբ:

<sup>1</sup> B հաւատացելոյն  
<sup>2</sup> B Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է  
<sup>3</sup> B զճնճղուկս  
<sup>4</sup> B մարմինն  
<sup>5</sup> A անպատուականութեանն  
<sup>6</sup> B էք դուք  
<sup>7</sup> B ճնճղուկս  
<sup>8</sup> B Ասեմ ձեզ, զի ամենայն որ  
<sup>9</sup> B որդի  
<sup>10</sup> B խոստովանեսցի զնմանէ

ԵՓ Եւ այն, զի ասէ. «Ո՛չ գիտեմ զձեզ» (Մատթ. ԻԵ 12, Ղուկ. ԺԳ 25, 27), ո՛չ եթէ ծածկեալ են ի նմանէ, այլ զի ո՛չ ընդունի զնոսա: Տե՛ս, զի գիտէ զնոսա և հրաժարէ ի նոցանէ, զի մի՛ ընկալցի զնոսա:

Որ<sup>1</sup> ասէ. Բան զՈրդոյ<sup>2</sup> մարդոյ թողցի նմա (ԺԲ 10):

ՍՏ Բազում ինչ ասացիք զինէն<sup>3</sup>, թէ մոլորեցուցիչ է և Աստուած հակառակ Աստուծոյ: Ներումն ունին, եթէ դառնան յապաշխարութիւն<sup>4</sup>, որպէս բազումք յայնցանէ<sup>5</sup>, որք զայն բան ասացին և<sup>6</sup> հաւատացին, և թողան նոցա, և որպէս ի վերջոյ գլուխ առաքելոցն:

Բայց, որ զՀոգին Սուրբ հայհոյեացէ<sup>7</sup>, մի՛ թողցի նմա (ԺԲ 10):

Իսկ որ զՀոգին Աստուծոյ իշխան դիւաց կոչեացէ, վասն այնորիկ նմա ո՛չ եղիցի<sup>8</sup> թողութիւն, և աստ և անդ տացէ տոկոսիս:

ԵՓ Զի հայհոյութեամբս<sup>9</sup> այս և սատանայ ո՛չ տայ նոցա թոյլ դառնալ յապաշխարութիւն: Իսկ որ գիտութեամբ հայհոյեցին, ասաց. «Մի՛ թողցի նմա»: Վկայէ Յուդայ Սկար[ի]ովտացին, զի նորա ապաշաւ հոգւոյն ո՛չ եղև ընդունելի: Եւ զի դիւաց կցորդարարին զնա, զի դիւի ո՛չ է յայսմ // աշխարհիս քաւութիւն և ո՛չ անդ:

Ոկ. Արդ՝ աւելի քան զդեւս պարտ է նոցա անէծս ընդունել: Զի գիտէին, թէ այն հայհոյութիւն[ն] առանց թողութեան է, և յանդգնութեամբ գործէին:

Ոկ. Այլ մեք, որ ուղիղ փառաւորել ուսաք ամբողջ զպատիւն և զերկրպագութիւն պահեմք՝ Հոգւոյն Սրբոյ Աստուած խոստովանելով ընդ Հաւր և ընդ Որդոյ, որպէսզի ի ձեռն այս ճմարիտ խոստովանութեանս, հաւատով ի Հոգին Սուրբ, տաճար առնեմք զմեզ Սուրբ Երրորդութեանն: Քանզի, որ թերի և անկատար առնէ զխոստովանութիւնն ի Հոգին Սուրբ, ի բաց որոշեաց զանձն ի Սուրբ Երրորդութենէն, և առանց թողութեան շեղչէ ինքեան զհայհոյութեան դատապարտութիւն: Մեծ հայհոյութիւն է ո՛չ խոստովանելն՝ կատարել<sup>10</sup> ամենայնիւ ընդ Հաւր և ընդ Որդոյ

<sup>1</sup> B Եւ ամենայն որ

<sup>2</sup> B զՈրդւոյ

<sup>3</sup> B գլխէնէն

<sup>4</sup> A, B ի յապաշխարութիւն

<sup>5</sup> A, B ի յայնցանէ

<sup>6</sup> B չեք և

<sup>7</sup> B հայհոյիցի

<sup>8</sup> B եղև

<sup>9</sup> B հայհոյութիւնս

<sup>10</sup> B կատարեալ



զՀոգին Սուրբ և հրաժարել յամենայն հերձուածոց: Ուսաք ճշմարիտ ու ուղիղ հաստատութեամբ<sup>1</sup> զխոստովանութիւն ի Հայր և յՈրդի և ի Հոգին Սուրբ:

**Յորժամ մտանիցեն զձեզ ի պետութիւնս և յիշխանութիւնս<sup>2</sup>** (ԺԲ 11):

**ՈԿ.** Յայտ արար, թէ ընդ ամենայն հեթանոսս առաքելոց էր զնոսա քարոզել<sup>3</sup>, զի ամենայն բնակիչք երկրի մարտնչէին ընդ նոսա: Բաբէ, որպիսի<sup>4</sup> ինչ զաւրութիւն էր Քրիստոսի, որ պատուիրէրն, և որպիսի<sup>5</sup> հնազանդութիւն լսողացն, զի ո՛չ ածին զմտաւ, թէ յո՞ կարիցեմք փախչել, յորժամ հրէայք և հեթանոսք և իշխանք ի վերայ յառնիցեն:

**Չի Հոգին Սուրբ ուսու[ս]ցէ ձեզ<sup>4</sup> զինչ պարտ իցէ խաւս[ել]** (ԺԲ 12):

Ի պատիւ մարգարէիցն հանէ զնոսա, յորժամ ասաց, թէ զաւրութիւն ընդունելոց են ի բարձանց:

**144բ ԻԳ** // Վասնզի տգէտք էին անհոգս, և վստահս<sup>5</sup> առնէ զնոսա ի Հոգւոյն Սրբոյ գործակցութիւն, զի նա տայ պատասխանի փոխանակ նոցա:

**Ասաց ոմն ի ժողովրդենէն<sup>6</sup>. Վարդապետ, ասա՛ ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւն[ն]** (ԺԲ 13):

**ԻԳ** Որպէս ասէն է զրկելոց առ արդարս և ժողովուրդս զիմել, զի իրաւունս գտցեն: Թերևս այնպիսի ոմն էր հանգիպել ստահակի յաղագս մարմնոյ, մատեաւ առ Յիսուս տալ նմա իրաւունս:

**Ո՞ կացոյց զիս իշխան և բարժանարար ի վերայ ձեր<sup>7</sup>** (ԺԲ 14):

Հրաժարէ դատաւորն երկնի և երկրի: Ըստ որում ասաց ցՊիղատոս<sup>8</sup>. «Իմ թագաւորութիւնս ո՛չ է յայսմ աշխարհի» (հմմտ. Յովհ. ԺԸ 36):

**ՍՏ** Եւ<sup>9</sup> ըստ Ջաքարիայ մարգարէին, որ ասաց Հոգով. «Ո՛չ եմ մարգարէ» (Ձաք. ԺԳ 5), իբրու մարգարէ էր: Չնոյն և Ամովս մար-

<sup>1</sup> B Հաստատութիւն  
<sup>2</sup> B Այլ յորժամ տանիցին զձեզ ի ժողովուրդս և ի պետութիւնս և յիշխանութիւնս, մի՛ հոգայցէք, որպէս թէ զի՞նչ պատասխանի տայցէք կամ զի՞նչ ասիցէք:  
<sup>3</sup> B քարոզս  
<sup>4</sup> B զձեզ ի նմին ժամու  
<sup>5</sup> B վստահ  
<sup>6</sup> B ժողովրդենէն ցնա  
<sup>7</sup> B Եւ ասէ ցնոսա. Այլ դու, ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր:  
<sup>8</sup> B ցՊիղատոս  
<sup>9</sup> B **չէք** Եւ

գարէ ասէ: «Ես ո՛չ մարգարէ եմ» (Ամոլս Է 14): Եւ զի մի՛ տայցէ պատճառ<sup>1</sup> չարախաւսութեան դատաւորացն, թէ ցանկայ իշխանութիւն ձգել յինքն:

**Տեսէք և զգոյշ լերուք յազահուլթենէ, զի ո՛չ ի մթերաց ինչ իցեն կեանք մարդկան<sup>2</sup>** (ԺԲ 15):

ՍՏ Որ Հայրն է որբոց և դատաւոր զրկելոց, և Աստուած՝ դատաւոր արդար, հզաւր, զգուշացուցանէ<sup>3</sup> զմարդիկ զ[ը]նտանիս<sup>4</sup> գաւակաց անտես ո՛չ առնել: Ըստ Եսայեայ՝ «Ո՛չ զրկել զ[ը]նտանիս<sup>5</sup> կամ զաւտարս» (հմմտ. Ես. ԾԸ 7), զի ո՛չ [յ]աստի կեանս յաւելու ազահուլթիւն և ո՛չ ի հանդերձեալսն ընդ մեզ ուղեկից լինի:

**Առն մեծատան ետուն անդք տոհմականք<sup>6</sup>** (ԺԲ 16):

ԻԳ Զայս առակ եդ առաջի ամենեցուն, որ մտանեն յաշխարհս, զի 145ա ուսեալ ազատեսցուք ի չար ծառայութեանց ցանկութեան: // Վասնզի տեսչութիւն Աստուծոյ ո՛չ առնէ անտես զոք, զի թէ աղքատացուցանէ՝ փորձէ, թէ համբերեմք և ո՛չ տրտնջեմք՝ կարճամտեալք դիւրակործանք: Թէ մեծութիւն տայ՝ փորձէ, թէ ո՛չ յաւրանամք ի փառս: Եւ որպէս Աբրահամ հրամանաւ Աստուծոյ ի հայրենեացն ել և եկն յաւտար երկիր, խոստացաւ տալ ի ժառանգութիւն զերկիրն, և ած սով: Եմուտ յԵգիպտոս, հանաւ կիինն ի նմանէ: Եւ արդարն եկաց հաստատուն և դարձաւ փառաւք, զի ետ զկիինն՝ հանդերձ ստացուածաւք<sup>7</sup>, ի տեղի իւր: Եւ մեծացաւ, մինչ իւր ծառայիւքն գերեացն սողոմացիոց<sup>8</sup> դարձ արար և ո՛չ առ յաւարէն (տե՛ս ԾՆՆդ. ԺԲ 1-20): Եւ Յոբ փառաւքն ո՛չ ամբարտաւանեաց<sup>9</sup> և ի բառնալ մեծութեանն ո՛չ զայրացաւ և ո՛չ ետ անգգամութիւն Աստուծոյ: Եւ են աղքատք, որ ի նեղութեան[ն] անյոյս<sup>10</sup> եղեն յԱստուծոյ, թէ ո՛չ է Աստուած: Եւ զորս մեծացոյց, մոռացան զԱստուած, որ մեծացոյց զնոսա, և ախտիւք ընչիցն յաստուածային փառացն, որ յերկինս պահի արդարոցն՝ անյոյս եղեն:

<sup>1</sup> B պատճառս

<sup>2</sup> B Եւ ասէ ցնոսա. Տեսէք և զգոյշ լերուք յամենայն ազահուլթենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա:

<sup>3</sup> B զգուշացուցէ

<sup>4</sup> B զընդանիս

<sup>5</sup> B զընդանիս

<sup>6</sup> B Խաւսեցաւ առ նոսա առակ մի և ասէ. Առն որումն մեծատան ետուն անդք տոհմականս:

<sup>7</sup> B ստացուածովք

<sup>8</sup> B սողոմայեցւոց

<sup>9</sup> A ամպարտաւանեաց

<sup>10</sup> B անյոյս

**Ետուն անդք տոհմականք<sup>1</sup>** (ԺԲ 16):

*Բազմացոյց Աստուած զսերմանիս նորա, զոր արկ յերկիր<sup>2</sup>, զի ուսցի նմանանել<sup>3</sup> երկրին բարեաց, և հոգիս<sup>4</sup> իւր առատացուցանել՝ զպտուղ առաքինութեան[ն] Աստուծոյ: Զի մեք երկիր եմք Աստուծոյ, որ ընկալաք զսերմն Բանին Աստուծոյ, և պարտապան եմք սերմանողին հատուցանել զպտուղ բարեաց գործոց: Եւ ըստ առաքելոյ՝ «Ընդունել զաւրհնութիւն<sup>5</sup>: Ապա եթէ փշաբերքն<sup>6</sup> մերձ են յանէծս, և վախճանն կորուստ և այրումն<sup>7</sup> գեհեանին» (հմմտ. Եբր. Զ 7-8):*

**Խորհէր ի միտս իւր, թէ զի՞նչ արարից<sup>8</sup>** (ԺԲ 17):

**145բ** // *Զի որպէս այնոքիկ, որ յոյժ չքաւորք իցեն և տարակուսեալ ասեն՝ ուստի՞ հանդերձ, ուստի՞ կերակուր, այնպէս և սա ախտիւն ազահութեան ըմբռնեալ տարակուսէր:*

**Ո՛չ<sup>9</sup> գոյ տեղի, ուր ժողովեցից զարդիւնս իմ<sup>10</sup>** (ԺԲ 17):

*Հաւատացելոյն ամենայն աշխարհս<sup>11</sup> լի ստացուածովք է, իսկ անհաւատին՝ և ո՛չ դանդ մի: Քանզի աղքատ և ծառայ է, որ ախտիւ ազահութեամբ կապեալ է, թէպէտ բազումս ունի: Եւ զի՞նչ աւգուտ ի փարթամութենէն իցէ, յորժամ ցանկութեամբ ընչիցն իբր կարաւտ ոք չարչարի: Այլ<sup>12</sup> ստոյգ<sup>13</sup> ազատ<sup>14</sup>, որ զամենայն արհամարհէ և վերանայ քան զերեւելիս և ո՛չ իւրք ըմբռնի: Այնպիսին [յ]երանելի կեանս կայ առանց ցաւոց և հոգոց, որ զմիտսն չարչարէ որպէս մեծատանց<sup>15</sup>:*

**Քակեցից զչտեմարանս և<sup>16</sup> մեծամեծս շինեցից<sup>17</sup>** (ԺԲ 18):

<sup>1</sup> B տոհմականս  
<sup>2</sup> A, B ի յերկիր  
<sup>3</sup> B ուսցին նմանել  
<sup>4</sup> B ի հոգիս  
<sup>5</sup> B զաւրհնութիւնն  
<sup>6</sup> B թէ փշաբերք են  
<sup>7</sup> B յայրումն  
<sup>8</sup> B Եւ խորհէր ի միտս իւր և ասէր. Զի՞նչ գործեցից:  
<sup>9</sup> B Զի ոչ  
<sup>10</sup> B իմ, և ասէ. Գիտեմ զի՞նչ արարից (ԺԲ 17-18)  
<sup>11</sup> B աշխարհ  
<sup>12</sup> B Այլ  
<sup>13</sup> A ստոյգ  
<sup>14</sup> B ազատ է  
<sup>15</sup> B զմեծատանց  
<sup>16</sup> B իմ և ևս  
<sup>17</sup> B շինեցից և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ:

Ո՛վ յիմարութիւն, որպէս թէ երկրի զաւրութիւն պակասեաց և այլ ո՛չ ևս տայ զպտուղ, և ամենեքին կորնչին և ինքեանք միայն մնան յերկրի: Պարտ էր ածել զմտաւ, թէ որ ասաց. «Բ[ղ]խեսցէ երկիր զսերմն սերմանել ի վերայ երկրի» (ԾՆՈՂ. Ա 11): Նոյն և յառաջակայ ժամանակա բազմացուցանէ, և ամենայն ոք իւրովքն շատանայ և ո՛չ կարաւտի փոխ առնուլ ի դրացոյն, բայց եթէ իրաւամբք Տէր զբարկութիւնն շարժէ վասն այնպիսեաց ամպարչտաց:

US Ովսէ<sup>1</sup> մարգարէ ասէ վասն ագահաց. «Մեծացայ և գտի ինձ ցաւս» (հմտ. Ովսէ ԺԲ 8), այսինքն՝ զմամոնայ և ամենայն վաստակք իմ մի՛ գտցին<sup>2</sup> վասն անաւրէնութեանց, որ յանց[ե]այ ես նորաւք:

Ունցիս բարիս՝ կեր, արբ և ուրախ լեր<sup>3</sup> (ԺԲ 19):

146ա ԻԳ // Զայսպիսի ախտացեալսս Սողոմոն քան զամենայն վատթարս և աղտեղագոյնս կոչէ՝ յասելն. «Որ ի նոցանէ ստրկագոյնք են, զորորովայնն աստուածացուցին»: Զի իբր Աստուծոյ կան ի ծառայութեան<sup>4</sup>, զի մի՛ պակասեցէ և երկի[ւ]ղիւ տագնապին, և բազում ժամանակաց մթերս ժողովեն: Եւ ո՛չ իմանան, թէ ի կէս աւուրց լքցեն զամենայն և մերկ, խայտառակ երթան յայն<sup>5</sup> կեանսն: Վասն որոյ առ նոսա ասէ Աստուած<sup>6</sup>.

Անմիտ, յայսմ գիշերի գոգիդ<sup>7</sup> ի քէն ի բաց պահանջեմ<sup>8</sup> (ԺԲ 20):

Արդարև անմտութիւն մեծ է, որ իւր ոգոյն<sup>9</sup> տեղի<sup>10</sup> ո՛չ է ունել: Եւ այսքան զբաղմամբ սիրով հարեալ է ի կենցաղս հոսանուտ, զոր եղկէ Ամբակում. «Վա՛յ, որ յաճախէ անձին իւրոյ, որ ո՛չ իւր իցէ» (Ամբկ. Բ 6): Եւ մինչև յե՞րբ<sup>11</sup> ծանրացուցանես զանուր ծանր, զի յանկարծակի յարիցէ գերիչք<sup>12</sup> նորա, և զարթիցեն դաւաճանողք նորա, և եղէց ես նոցա յափշտակութիւն<sup>13</sup>: Զի դու կո-

<sup>1</sup> B Ովսէէ

<sup>2</sup> B գտցեն

<sup>3</sup> B Եւ ասացից ցանձն իմ. անձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց, հանգիւր, կեր, արբ և ուրախ լեր:

<sup>4</sup> B ծառայութիւն

<sup>5</sup> A, B ի յայն

<sup>6</sup> B Ասէ ցնա Աստուած *փիս* վասն... Աստուած

<sup>7</sup> B սրբ.՝ զհոգիդ

<sup>8</sup> B պահանջիցեն

<sup>9</sup> B հոգւոյն

<sup>10</sup> B Տէր *փիս* տեղի

<sup>11</sup> B *չիք* յե՞րբ

<sup>12</sup> B կերիչք

<sup>13</sup> B սրբ.՝ ի յափշտակութիւն

ղոպտեցեր զբազուժս, և զքեզ կողոպտեսցեն ամենայն ժողովուրդք:

**Զոր պատրաստեցեր, ո՞ւմ լիցի<sup>1</sup>** (ԺԲ 20):

Ո՞վ որքան<sup>2</sup> է յիմարութիւն, և զիա՞րդ զաւրացաւ յաղթել մամոնայ յետ այսքան խրատու աւրինաց և մարգարէից և աւետարանչաց և հայրապետաց [և] վարդապետաց: Եւ ձգէ յախտս և գերեալ վարէ աւրինաւք մեղաց, և ո՛չ զարհուրիմք: Եւ ո՛չ զանգիտեմք, զի ահա, զոր պատրաստեցեր, ատելիքն վայելեն:

**Նոյնպէս և<sup>3</sup>, որ գանձէ անձին, և ո՛չ յԱստուած մեծանայ** (ԺԲ 21):

146բ **Զի մի ոք, որ ի նոյն գործ ամպարչտութեան իցէ, կարծէ անպարտ վճարել:** // Այլ գիտէ<sup>4</sup>, զի տոկոսիւք ի մէնջ<sup>5</sup> պահանջեն, զի Աստուծոյ<sup>6</sup> իրաւունք[ն], զի որ աստ սիրեցին անձանց գանձել և առ Աստուած ո՛չ մեծացան, յանտի ճոխութենէն զրկեալք են: Եւ պահի նոցա. «Ի բաց դնացէք յինէն» (Մատթ. Թ 24)՝ անիծիւք: Եւ տարագրին յերանութենէ աղքատացն, զոր և Դաւիթ ասաց. «Ժառանգութիւն մեղաւորաց հուր և ծծումք» (հմմտ. Սաղմ. Ժ 7): **Զի ո՛չ կամեցան յԱստուած մեծանալ:**

**Ասէ ցաշակերտսն. Մի՛ հոգայք վասն հոգոց, թէ զի՞նչ ուտիցցէք<sup>7</sup>** (ԺԲ 22):

US **Թէպէտ հոգի ո՛չ կարաւտի մարմնական կերակրոյ, սակայն ո՛չ կարէ կալ ի մարմինն առանց երևելի կերակրոյ:** Վասնզի զգաւրիք, հոտոտելիք, ճաշակելիք, շաւշափելիք հոգւոյն ազդեցութիւնք են և ո՛չ մարմնոյն: Թուի ինձ վասն այնորիկ<sup>8</sup> ասաց. «Զկերակուր և զըմպելի հոգւոյն» (հմմտ. Գռոմ. ԺԳ 17):

**Զի հոգի<sup>9</sup> առաւել է քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ** (ԺԲ 23):

<sup>1</sup> B Իսկ զոր պատրաստեցերն, ո՞ւմ լինիցի, նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ (ԺԲ 20-21):  
<sup>2</sup> B ոք որքան  
<sup>3</sup> B **չիք** և  
<sup>4</sup> B գիտելի է  
<sup>5</sup> B **չիք** ի մէնջ  
<sup>6</sup> B գԱստուծոյ  
<sup>7</sup> B Ասէ ցաշակերտսն իւր. Վասն այսորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք ընդ ոգոյ, թէ զի՞նչ ուտիցցէք և մի՛ ընդ մարմնոյ, թէ զի՞նչ զգենուցուք:  
<sup>8</sup> B այսորիկ  
<sup>9</sup> B ոգի

Ձի որ զմեծն ետ, զփոքրն զիա՞րդ ո՛չ տայցէ<sup>1</sup>: Արդ՝ որ զմարմինն ստեղծ, զիա՞րդ զկերակուրն ո՛չ շնորհեսցէ:

ԻՊ Ձի որ ընդ կարեաւք զբնութիւնս արար, կարող է լինուլ զպէտս մարմնոյն:

Հայեցարուք ընդ ազուաւս, զի ո՛չ սերմանեն և ո՛չ հնծեն<sup>2</sup> (ԺԲ 24):

ՍՏ Պատմութիւն վասն ձագուց ազուաւուց: Յորժամ հանէ զձագսն ի ձուոցն, գնան հայրն և մայրն և մոռանան զձագսն: Իսկ [ի] մոռանալ ծնաւդացն<sup>3</sup> և ո՛չ<sup>4</sup> կերակրելն յԱստուծոյ բազում խնամակալութենէն, զիջութիւն<sup>5</sup> իմն լինի զբերանոյ<sup>6</sup> ձագուցն, և որդունք ծնանին և ժողովին ի նեխութեանց<sup>7</sup> այլ շնչա-

147ա ւորք՝ ճանճ և մժեխ: // Եւ<sup>8</sup> այլ շնչաւորք և նոյնպիսիք<sup>9</sup> ի ճանճոց կերակրին, մինչև կարիցեն թռչել և որսալ զկերակուրս իւրեանց: Եւ վերաբերի ազուաւ և ձագք ազուաւուն ի մեղաւորս, որք գոչեն առ Տէր սրտիւ իւրեանց, և տայ նոցա զկերակուրս հոգոց:

Եւ Աստուած կերակրէ զն[ոսա]<sup>10</sup> (ԺԲ 24):

Վասն որոյ և Դաւիթ ասէ. «Ո՞ տայ կերակուր ամենայն անասնոց, ձագուց<sup>11</sup> ազուաւուց, որ կարդան առ նա» (Սաղմ. 61:9): Եւ Յորե<sup>12</sup>. «Ո՞<sup>13</sup> պատրաստեաց կերակուր ազուաւուց» (Յոր. ԼԸ 41):

ԻԳ. Իսկ արդ՝ եթէ զփոքունս զայս, որ ի պէտս ձեր եղեն, խնամէ Աստուած, զիա՞րդ զձեզ<sup>14</sup>, վասն որոյ և զամենայն ինչ հաստատեաց, անտես առնիցէ:

Որչա՞փ ևս առաւել զձեզ, որ լաւ էք քան զթռչունս<sup>15</sup> (ԺԲ 24):

<sup>1</sup> B տացէ

<sup>2</sup> B հնծեն, որոց ոչ գոն շտեմարանք և ոչ համբարանոցք:

<sup>3</sup> B A ծնողացն

<sup>4</sup> B յոչ

<sup>5</sup> B գիծութիւն

<sup>6</sup> A զի բերանոյ

<sup>7</sup> B նեխութենէ

<sup>8</sup> B չիք այլ շնչաւորք... Եւ

<sup>9</sup> B չիք և

<sup>10</sup> B զնոսա, որչա՞փ ևս առաւել զձեզ, որ լաւ էք քան զթռչունս:

<sup>11</sup> B ձագաց

<sup>12</sup> B չիք Յոր

<sup>13</sup> A որ B ով է որ

<sup>14</sup> B սրբ.՝ ոչ զձեզ

<sup>15</sup> B Որչա՞փ... որ՝ սրբ. ձախ լս., մնացածը՝ չիք

Եւ չասաց, եթէ տեսէք, զի թռչին թռչունք, որ չէր մարթ մարդկան, այլ եթէ կերակրին առանց հոգալոյ, զոր մեք, եթէ կամիմք, դիւրին է ուղղել: Եւ զայս այնոքիկ ցուցանեն, որ արդեամբք զնոյն վճարեցին:

Ո՞վ ի ձէնջ հոգալովն<sup>1</sup> կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի<sup>2</sup> (ԺԲ 25):

ՈԿ *Տեսանե՛ս, զի ա՞րդ յայտ արար, թէ որպէս ի մարմինն ասէ հոգալովն ո՛չ կարէ՞<sup>3</sup> յաւելուլ ինչ, նոյնպէս և ո՛չ ի կերակուրն ժողովելոյ:*

ԻԳ *Պարտ է գիտել, եթէ որ կարի իմն հոգայ, առանց վերին նախախնամութեանն վճարել ինչ ո՛չ կարէ: Զի ո՛չ, որ նուազն է հասակաւն, կարէ յաւելուլ փոքր ինչ յաւելուածս: Արդ՝ հրաժարեցուցանէ յայսպիսի<sup>4</sup> հոգւոց, վասնզի հեթանոսական մտաց է:*

Հայեցարուք ընդ շուշանն որպէս աճէ<sup>5</sup> (ԺԲ 27):

147բ ՈԿ *Յառաւելութենէ գեղեցկ(//)ութեանն, զոր տուեալ է նմա, զարթուցանէ ի հաւանութիւն բանիցն ասացելոց: Եւ ուսուցանէ ո՛չ հոգալ, այլև մի՛ դրդուիլ կարի ընդ պէս պէս հանդերձս: Զի խոտոյ նման է վայելչութիւն և դալարոյ պայծառութիւն<sup>6</sup>: Եւ պատուական է խոտ քան զայնպիսի պաճուճանս: Այլ<sup>7</sup> ընդէ՞ր այնպիսի գեղեցիկ արար Աստուած զձաղիկն: Զի զիւր իմաստութիւնն և զզաւրութիւնն ցուցցէ, և ամենայն<sup>8</sup> ուստեք զնորա փառսն և զիմաստութիւնն նշանակեն արարածք:*

Ո՛չ ջանայ և ո՛չ նիւթէ<sup>9</sup> (ԺԲ 27):

*Զի<sup>10</sup> զքեզ յաշխատութենէ ազատ առնիցէ<sup>11</sup>: Զի ո՛չ եթէ չհոգալն աշխատութիւն իցէ, այլ հոգալն, և ո՛չ եթէ զգործելն խոտ իցէ, այլ զտատամ ասելն<sup>12</sup>:*

Եւ ո՛չ Սողոմոն յամենայն փառս իւրում զգեցաւ<sup>1</sup> (ԺԲ 27):

<sup>1</sup> Բ առ հոգալ  
<sup>2</sup> Բ մի, իսկ արդ՝ եթէ ի փոքուն չէ բաւական, վասն այլոցն զի՞ հոգայցէք (ԺԲ 25-26):  
<sup>3</sup> Բ կարիցէ  
<sup>4</sup> Բ հրաժարեցուցէ յայսպիսեաց  
<sup>5</sup> Բ աճէ, ոչ ջանայ և ոչ նիւթէ  
<sup>6</sup> Բ պայծառութեան  
<sup>7</sup> Բ Այլ  
<sup>8</sup> Բ յամենայն  
<sup>9</sup> Բ Ոչ... նիւթէ՝ սրբ. ձախ լս.  
<sup>10</sup> Բ Եւ ասեմ ձեզ, ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ (ԺԲ 27): Զի  
<sup>11</sup> Բ ազատիցէ  
<sup>12</sup> Բ զտատամեալն

Զի եթէ Սողոմոն<sup>2</sup> պարտեցաւ ի գեղեցկութենէ նոցա, որ քան զամենայն թագաւորս փառաւոր էր, որչա՞փ միանգամ կամ երկիցս և ո՛չ մի աւր [յ]այնպիսի զարդուն զարդարեցաւ յամենայն թագաւորութեան փառս իւրում, զի յամենայն ծաղկա[ն]ց պարտեցաւ:

Եթէ զխոտն վայրի, որ այսաւր է և վաղիւն ի Հնոց<sup>3</sup> արկանելի, Աստուած այնպէս զգեցուցանէ (ԺԲ 28):

Զի՞նչ<sup>4</sup> նուազագոյն քան զայն կայցէ, որ այսաւր է և վաղիւն չիցէ: Այսպիսի պայծառութիւն զգեցուցանէ, զի թէ խոտոյն, որ չիցէ ինչ<sup>5</sup> պիտոյ և հրոյ ճարակ է, այնպիսի գեղեցկութիւնս շնորհեաց, զիա՞րդ ո՛չ քեզ տայցէ<sup>6</sup> զամենայն զպէտս:

Որչա՞փ ևս առաւել զձեզ թերահաւատք<sup>7</sup> (ԺԲ 28):

148ա Զի թէ որոց վասն մեր եղեն, այնչափ խնամ ունիցի, որ(//)չա՞փ ևս առաւել մեզ, զի թէ ծառայիցն՝ այնչափ ևս առաւել տերանցն<sup>8</sup>: Եթէ նուազիցն<sup>9</sup>, որք ոչինչ ի պէտս համարի են, Աստուած այնպիսի դարմանս ցուցանէ, որչա՞փ առաւել<sup>10</sup> քեզ պարգևեսցէ, որքան զամենայն երևելի և պիտանի ես Աստուծոյ: Եւ զձեզն ասելով՝ զառաւել պատիւն և զփոյթն, զոր ունի ընդ ազգիս մերում, ակնարկէ: Չեզ, որոց զոգիսդ շնորհէ և [զ]մարմինդ ստեղծ, և վասն ձեր գերեւելիսն արար, զԱւրէնսն և զՄարգարէսն առաքեաց և զՄիածինն ետ:

Մի<sup>11</sup> զբաղնուցուք, եթէ<sup>12</sup> զինչ ուտիցէք կամ ըմպիցէք (ԺԲ 29):

Նոյն և՛ Մատթէոս. «Մի՛ հոգար զվաղիւն» (Մատթ. Զ 34):

ՍՏ Թերևս ասիցէ ոք զպատուիրանս զայս ի վեր քան զբնութիւնս մեր<sup>13</sup>, քանզի ո՞վ ի մարդկանէ ո՛չ հոգայ վասն վաղուեան կերակրոյն<sup>14</sup> և զգեստու հանդերձոյն<sup>1</sup>, յարդարոցն մեծագունիցն՝

<sup>1</sup> Բ չիք եւ ոչ... զգեցաւ  
<sup>2</sup> Բ Սողոմոնովն  
<sup>3</sup> Բ Հնոցն  
<sup>4</sup> Բ զի  
<sup>5</sup> Բ չիք ինչ  
<sup>6</sup> Բ տայցէ  
<sup>7</sup> Բ Իսկ եթէ զխոտն, որ այսաւր ի բացի է և վաղիւ ի Հնոց արկանելի, Աստուած այնպէս զգեցուցանէ, որչա՞փ ևս առաւել զձեզ թերահաւատք, և դուք մի՛ խնդրէք զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք (ԺԲ 28-29):  
<sup>8</sup> Բ տերանցս  
<sup>9</sup> Բ նուազիւն  
<sup>10</sup> Բ ևս առաւել  
<sup>11</sup> Բ եւ մի  
<sup>12</sup> Բ թէ  
<sup>13</sup> Բ մեր եդ  
<sup>14</sup> Բ կերակրին



Աբրահամ, Իսահակ և Յակոբ և Յոբ<sup>2</sup>, որք ստացան անդս և  
 Հաւտս, յորոց կերակրիմք և զգեանումք: Ապա կարծեմք անհնար է  
 բառնալ զայսպիսի հոգաբարձութիւն, զոր կարէ մարդն յ[ի]նքե-  
 նէ հոգալովն առնել: Եւ որպէս երանելին Պաւղոս գրեր<sup>3</sup> առ Տի-  
 մոթէոս. «Յորժամ գայցես, բերջիր զփիլոն<sup>4</sup> զգեստուն, զոր թողի  
 ի Տրովալայ<sup>5</sup> առ Կարպոսի» (Բ Տիմ. Դ 13): Այսու յայտ է, եթէ հոգա-  
 բարձութիւն չափաւոր կերակրոյ և հոգևոր<sup>6</sup> զգեստուն ո՛չ հրա-  
 մայեաց ի բաց բառնալ: Բայց կրկին է հոգալդ: Մինն՝ ո՛չ է հա-  
 ճոյ Աստուծոյ՝ հոգալով անձրեւել սերմանց և տնկոց, կամ որդիս  
 148բ ստանալ ընչիւք, // կամ զանազան կերակուր և հանդերձ: Զայս  
 Աստուած ո՛չ հրամայեաց հոգալ, զի կէսքն անհնարինք էին և ո-  
 մանք աւելորդ: Իսկ երկրորդն՝ կատարելոցն ո՛չ հրամայեաց հո-  
 գալ, որպէս Յովհաննէս և Եղիայ և առաքեալքն և մարգարէքն,  
 որք ո՛չ վարէին և ո՛չ հնձէին: Ըստ այնմ. «Ընկեա՛ ի Տէր զհոգս  
 քո և նա կերակրէ զքեզ» (Իմմտ. Ա Պետ. Ե 7):

Զայն<sup>7</sup> ամենայն հեթանոսք<sup>8</sup> խնդրեն (ԺԲ 30):  
 Հեթանոսաց անուամ[բ]քն<sup>9</sup> պատկառեցուցանէ զնոսա:

Այլ Հայր ձեր գիտէ, թէ<sup>10</sup> պիտոյ է այդ<sup>11</sup> ամենայն (ԺԲ 30):

ՍՏ Զի զնոսա ի մեծ յոյսն հանցէ: Զի թէ Հայր իցէ, ապա ո՛չ ժու-  
 ժէ անտես առնել զորդի<sup>12</sup> իւր, յորժամ յանհնարին չարիսն իցեն:  
 Քանզի ի ճաշ թագաւորի երթալով՝ ո՛չ<sup>13</sup> պարտ է<sup>14</sup> հոգալ, թէ  
 զի՞նչ ուտիցէ<sup>15</sup>: Արդ՝ զԱստուծոյ առատաբուխ<sup>16</sup> պարգևսն մի՛  
 ինչ մեք աղքատ համարեցուք:

ԻԳ Վասնզի Արարիչ է բնութեանս և ո՛չ թողու կարաւտութեամբ  
 լուծանիլ ի կենցաղոյս:

<sup>1</sup> Բ Հանդերձին  
<sup>2</sup> Բ Յակովբ և Յովբ  
<sup>3</sup> Բ գրէ  
<sup>4</sup> Բ զփիլոն  
<sup>5</sup> Բ Տրովալա  
<sup>6</sup> Բ սրբ. հարկաւոր  
<sup>7</sup> Բ զի զայն  
<sup>8</sup> Բ հեթանոսք աշխարհի  
<sup>9</sup> Բ անուամբն  
<sup>10</sup> Բ զի  
<sup>11</sup> Բ ձեզ այն *փի* այդ  
<sup>12</sup> Բ զորդիս  
<sup>13</sup> Բ երթալ՝ ո՞վ ոչ  
<sup>14</sup> Բ պարտի  
<sup>15</sup> Բ ուտիցէ, և յորժամ յաղբիւր երթայ, թէ զի՞նչ ըմպիցէ  
<sup>16</sup> Բ առատաբուղիս

**Խնդրեցէք զարքայութիւնն և այդ յաւելցի<sup>1</sup> (ԺԲ 31):**

Ոկ. *Ջերկնից յիշեցուցանէ և ի վերին աշխարհն կոչէ, վասնզի զՀինն եկն քակել: Չեզ չէ պարտ զայս լաւ համարել, քան զարքայութիւնն Աստուծոյ, զի երկրաւորքս ո՛չ են համեմատ հանդերձելոցն և վստահ ևս լինել, թէ ընդ այնր և այս<sup>2</sup> յաւելու: Մի՛ խնդրէր զերևելիս և ո՛չ երթայ ի քէն:*

**Մի՛ երկնչիր հաւտ փոքրիկ (ԺԲ 32):**

*Ոմանք զմարդկային բնութիւնս ասեն,*

Կր *վասն յոյժ նուազագոյն<sup>3</sup> առ հրեշտակացն դասիւքն: Վասնզի ի տեղի անկելոց հրեշտակացն ստեղծաւ, զի ի տասն դասուցն մինն շեղեցաւ: Յիրաւի «փոքրիկ» ասի<sup>4</sup>, զի որպէս անդ ի հա-*

149ա *րիւրսն առակեաց // զհրեշտակաց բազմութիւնն և ի մի զմարդկութիւնս: Ասի<sup>5</sup> թէ՛ «Եթող զիննսուն և զինն ոչխար[ս]ն և եկն ի խնդիր մոլորեալ ոչխարին» (հմնտ. Մատթ. ԺԸ 12, Ղուկ. ԺԵ 4), այսինքն՝ մարդկային բնութեանս: Արդ՝ «մի՛ երկնչիր» ըստ փոքր գոլոյդ և նուազութեան<sup>6</sup> և տկար նիւթոյդ զաւրութեանդ<sup>7</sup>:*

ԻԳ *Իսկ ոմանք՝ զառաքեալսն: Բայց թուի ինձ, թէ զաղքատսն ասաց, որոց ետ գերանութիւնն, կամ որ նեղ ճանապարհաւն փութան մտանել յերկինս, որ են «հաւտ փոքր»<sup>8</sup> առ կորուսելոցն բազմութիւնս: Արդ՝ Հաւր անուամբն վստահ առնէ և արքայութեան պատուովն մխիթարէ, զի ո՛չ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն:*

**Ջի հաճեցաւ Հայր քո՞ տալ քեզ զարքայութիւն (ԺԲ 32):**

Կր. (ստ.) *Ջնոյն աշտիճան հրեշտակացն ասէ, զոր արքայութիւն երկնից անուանեաց, միայն թէ զհաճոյս նորա առնիցես:*

ԻԳ *Ո՛չ<sup>10</sup> ակամայ կամ<sup>11</sup> բռնադատեալ յովմեքէ, այլ մեծ քան զարքայութիւնն<sup>12</sup> արժանացոյց պատուոյ: Ըստ գրեցելոյն՝ «Ժառանգք<sup>1</sup> Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի» (Յոռմ. Ը 17):*

<sup>1</sup> Բ Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ, և այն յաւելցի ձեզ:

<sup>2</sup> Բ այսր

<sup>3</sup> Բ նուազ գոլոյն

<sup>4</sup> Բ ասէ

<sup>5</sup> Բ Եւ ասէ

<sup>6</sup> Բ նուազութեանդ

<sup>7</sup> Բ զաւրութեան

<sup>8</sup> Բ փոքրիկ

<sup>9</sup> Բ ձեռ

<sup>10</sup> Բ Եւ արդ ոչ

<sup>11</sup> Բ կամաւք

<sup>12</sup> Բ զարքայութեանն

US Եւ Եսայի ասաց. «Տէ՛ր, հաշտեալ եմ ընդ քեզ տառապեալտ, մինչև մխիթարութեամբ լցուցից յարքայութեանն» (հմմտ. Ես. ԾԴ 11):

Վաճառեայ զինչս քո և տուր աղքատաց<sup>2</sup> (ԺԲ 33):

Ստ. 149p *Ձի կամաւ լիցի աղքատանալն, որ է լաւագոյն քան զաղքատս կերակրել, և որ զայլս սեղանաւոր է և ինքն ի նմանէ մխիթարի: Բայց չքաւորք բնաւ զկեանս իւրեանց տառապանաւք անցուցանեն: Ըստ այնմ. «Երթ վաճառեայ, զոր ինչ ունիս, և տուր աղքատաց», զի դիւրընթաց մտցես յարքայութիւնն: // Տո՛ւր զերկրայինս Քրիստոսի, և առ ի նմանէ զերկնից ճոխութիւն<sup>3</sup>: Որպէս ի վաճառն լինի, եթէ ո՛չ տայ զոր ունի, ո՛չ առնու զցանկալին անձին իւրոյ:*

Արարէք<sup>4</sup> ձեզ քսակ առանց հնանալոյ դանձ<sup>5</sup> յերկինս (ԺԲ 33):

US *Ձերկրաւոր դանձուց վնասն յայտ առնէ և զերկնից դանձուց աւգուտն<sup>6</sup> ցուցանէ: Մի՛ երկնչիր ո՛չ ծախին և ո՛չ հնանան: Եթէ երկնչիս, բաշխեա՛ աղքատաց: Եւ յայնժամ ո՛չ ծախին, այլ յաւելուածով առնուս<sup>7</sup>:*

Որ<sup>8</sup> ո՛չ գող մերձենայ, և ո՛չ ցեց ապականէ<sup>9</sup> (ԺԲ 33):

*Յեց՝ սատանայ<sup>10</sup> և նմանողք նորա: Թէպէտև ո՛չ դիւրածախ ապականիչն թուի, սակայն զինչ և հնարեսցիս՝ ո՛չ կարես արգելուլ զվնաս նորա: Ձի թէպէտ ցեց ո՛չ ուտեն<sup>11</sup> զոսկին, սակայն գողք յափշտակեն:*

Ուր դանձք, անդ և սիրտք ձեր<sup>12</sup> (ԺԲ 34):

ԿԲ *Ուր զգանձն եղիր, յայտ է, եթէ միտքս<sup>13</sup> անդ ժողովեցաւ: Ապա թէ զձեռնդ առ կարաւտեալն ձգես, խորհուրդ<sup>14</sup> առ Աստուած հատուցիչ գտանի:*

<sup>1</sup> A Ժառանկք  
<sup>2</sup> B Վաճառեցէք զինչս ձեր և տուր ողորմութիւն:  
<sup>3</sup> B ճոխութիւնսն  
<sup>4</sup> B Եւ արարէք  
<sup>5</sup> B դանձ անպակաս  
<sup>6</sup> A ռգուտն  
<sup>7</sup> B այլ... առնուս՝ սրբ. է աջ լս.  
<sup>8</sup> B ուր  
<sup>9</sup> B ապականէ, զի ուր դանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին  
<sup>10</sup> B սատանայ է  
<sup>11</sup> B ուտէ  
<sup>12</sup> B ձեր եղիցին  
<sup>13</sup> B միտքդ  
<sup>14</sup> B ի խորհուրդ

US Կամ իմանալի է գանձ պաղատանք, զոր երկրասէրք առնեն, որպէս զբազումս տեսանեմք: Զայնպիսի գանձ արգելու և յերկինս հրամայէ ամբարել<sup>1</sup>:

**Եղիցին գաւտիք ձեր պնդեալ ընդ մէջս<sup>2</sup> (ԺԲ 35):**

Պատրաստ ունելով զսպասաւորութիւն: Եւ որք սրբութեամբ և զգաստութեամբ կեան, նոցա մէջք պնդեալ են:

ԻԳ Ժիր մշակս կամի զամենեսին լինել, զի զՏեառն հրամանն անսխալ լց[ց]են:

**Եւ ճրագունք լուցեալք (ԺԲ 35):**

Ստ. Վասնզի գիշեր է կենցաղս և ճրագի պէտք են, որ է միտքն ալան<sup>3</sup> հոգւոյն, և գիտութիւն պայծառ ունիցին: Զի մի՛ խաւարեալք տգիտութեամբ թմբրեսցին զմեղացն քուն և մի՛ խաւարաւ 150ա գնասցեն // և անպատրաստք ի նորա գալըստեանն լիցին:

**Եւ դուք նմանողք մարդկան, որ ակն ունիցին տեառն<sup>4</sup>, թէ երբ գայցէ ի հարսանեաց<sup>5</sup> (ԺԲ 36):**

ԻԳ. Զգուշացուք գալըստեան նորա, որպէս զիմաստուն կուսանսն, որք պայծառ լապտերաւք պատրաստ<sup>6</sup> մտին յառազաստ Տեառն իւրեանց վաղվաղակի (տե՛ս Սատթ. ԻԵ 1-13):

**Զի գաւտի ընդ մէջ ածիցէ և բազմեցուցէ<sup>7</sup> (ԺԲ 37):**

US Ըստ ասացելումն. «Զգեցաւ Տէր գաւրութիւն՝ ընդ մէջ իւր ածաւ» (Սաղմ. ԴԲ 1): Եւ է արդարութեամբ պնդեալ զմէջ իւր, որով զիւրաքանչիւր ոք ըստ արժանեաց բազմեցուցէ և ըստ արժանեաց սպասաւորէ:

ԻԳ Ո՛վ քանի՞ անչափ է մարդասիրութիւն նորա, զի զոր առնու, բազմապատիկ հատուցանէ<sup>8</sup>: Առնու զապականացու ողորմութիւնն կարաւտելոցն և տայ զանապական կեանսն:

**Եւ անցեալ՝ պաշտիցէ գնոսա (ԺԲ 37):**

US Արդ՝ զանց արարեալ Տեառն զերեւելաւքս սպասաւորէ այնոցիկ, որ արթունք են յիմանալիսն:

<sup>1</sup> B և երկինս... ամբարել՝ սրբ. աջ լս.

<sup>2</sup> B մէջս և ճրագունք լուցեալք

<sup>3</sup> B ակն

<sup>4</sup> B տեառն իւրեանց

<sup>5</sup> B դառնայցէ ի հարսանեաց, զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա:

<sup>6</sup> B չիք պատրաստ

<sup>7</sup> B Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զոր եկեալ տէրն գտանիցէ արթունս: Ամէն ասեմ ձեզ, զի գաւտի ընդ մէջ ածցէ և բազմեցուցէ գնոսա և անցեալ պաշտիցէ գնոսա:

<sup>8</sup> B հատուցէ

ԻԳ *Զի զոր մեք գաւտի ածեալ ծառայեցաք կամաց նորա, զոր պատուիրեաց, ծառայէ և նա մեզ: Զամենայն կամս մեր կատարէ և զցանկուծիւնս մեր լնու, և ամենայն աստուածային խորհրդոցն<sup>1</sup> տեղեակ առնէ զմեզ: Այսպէս սպասաւորիմք ի Տեառնէ:*

**Թէ յառաջնում պահուն:**

ՍՏ *Առաջին և երեկոյին պահ մարդոյն մանկութեանն հասակն է:*

**Եթէ երկրորդ<sup>2</sup> (ԺԲ 38):**

ստ. *Երիտասարդականն է:*

**Երրորդ<sup>3</sup> (ԺԲ 38):**

*Մերականն է:*

Ստ. *Արդ՝ հրամայէ արթուն կալ յամենայն հասակի, զի արժանացին բազմեալ և սպասաւորեալ ի Տեառնէ:*

ԻԳ *Մի՛ ծախել զժամանակս ամենայն հեղգութեամբ և յոչ ժամու 150ք սպասաւորել, զի որ այսպիսի // խորհրդով վարին շուայտել:*

**Եթէ<sup>4</sup> գիտէր տանուտէրն յորում պահուն<sup>5</sup> գող գայ<sup>6</sup> (ԺԲ 39):**

ԿՐ *Այսինքն է՝ և ո՛չ դուք զժամ մահուն և ո՛չ զիմ գալըստեանն:*

ՈԿ *Զի թէ գիտէին բազումք, եթէ երբ մեռանիցիմք, ընդ այն ժամանակս և եթ պնդէին: Վասն որոյ զիւրաքանչիւր ժամանակ կենացն վախճանի ո՛չ արար յայտ, զի արթունք լիցին: Թուի, թէ զծոյլսն պատկառեցուցանէ. որչափ ընչիցն հոգան ի գողոցն, այնչափ հոգոց իւրեանց դարման ո՛չ տանին:*

**Դուք<sup>7</sup> եղբրուք պատրաստք, զի յորում ժամու ո՛չ ակն ունիցիք<sup>8</sup>, գայ Որդ[ի] մարդոյ (ԺԲ 40):**

ՍՏ *Ո՛չ լինիցիք պատրաստականք, այլ իբրև անզգայք գնայիք<sup>9</sup> աստի: Վասն այսորիկ ի սատակումն քնածիցն<sup>10</sup> գալոց է աւրն այն: Զոր աւրինակ, թէ նա գիտէր՝ փախչէր, նոյնպէս և դուք, եթէ էիք պատրաստականք՝ ապրէիք: Զայս ո՛չ միայն վասն կա-*

<sup>1</sup> B խորհրդոյն  
<sup>2</sup> B Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահուն եկեացէ, և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Եւ եթէ յերկրորդ  
<sup>3</sup> B Եւ երրորդ  
<sup>4</sup> B բայց գայն գիտասջիք, եթէ  
<sup>5</sup> B ժամու  
<sup>6</sup> B գայ, չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում  
<sup>7</sup> B և դուք  
<sup>8</sup> B կարծիցէք *փիւ* ակն ունիցիք  
<sup>9</sup> B նայիք  
<sup>10</sup> A քնած էիցն

տարածի աշխարհի ասաց, այլև վասն կատարածի իւրաքանչիւր մարդկան: Արդ<sup>1</sup>՝ արթուն լերուք ի գործս բարիս, յորժամ Տէրն ձեր կոչէ զոգիսդ<sup>2</sup> ի մարմնոյդ:

**Ասէ Պետրոս. Առ մե՞զ է առակդ, եթէ՞ առ ամենեսեան**<sup>3</sup> (ԺԲ 41):

ԻԳ **Կամեցաւ ուսանել զխորհրդոյն զաւրութիւնն, թէ ամենեցուն է պատուէրս և հատուցումն, թէ նոցա, որ յայնժամ լսէին:**

**Ասէ Տէր. Ո՞վ է հաւատարիմ և իմաստուն տնտես, զոր կացուսցէ տէր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ կերակուր ի ժամու**<sup>4</sup> (ԺԲ 42):

ՍՏ **Ձի ո՛չ խորեաց ինչ և զողութեամբ ո՛չ ընդ վայր գտերունիսն ծախեաց: Հաւատք և իմաստութիւն, յորժամ զառաքինի ոք գտանէ, զհետ երթան միմեանց, զի որպէս Պաւղոս և Պետրոս և նոցին նմանողքն, որք տան կերակուր զվարդապետութիւնս իւրեանց ի ժամու արժանաւորացն: // Իսկ որ ունի զիմաստութիւն խորամանկութեամբ, ո՛չ հաւատարիմ է այնպիսի: Եւ ո՞րք են իմաստունք հանգոյն աւճին և տնտեսուն<sup>5</sup> անիրաւութեան: Վասն պաշտան և հնազանդութեան սրբոցն, զի<sup>6</sup> սպ[աս]աւորէ, ծառայէ<sup>7</sup> Աստուծոյ, որպէս Մովսէս պաշտանեայ, ծառայ<sup>8</sup> Աստուծոյ ասի (տե՛ս Ելք ԺԴ 31), և Աստուած տեսող լինի ծառայից իւրոց:**

**Երանի ծառային այնմիկ, զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Ի վերայ ինչից իւրոց կացուսցէ զնա**<sup>9</sup> (ԺԲ 43-44):

ՍՏ **Ձի՞նչ այնմ պատուոյ զուզական կայցէ<sup>10</sup>: Ո՞ր<sup>11</sup> բան զայն մեծարանս կարէ յանդիման կացուցանել զերանութիւնսն և զբարութիւնսն, յորժամ երկնից թագաւորն, որ զամենայն ի ձեռին ունի, զմարդ ի վերայ ինչից իւրոց կացուցանէ:**

**Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում. Յամէ տէր զալ**<sup>12</sup> (ԺԲ 45):

<sup>1</sup> B *չեք* արդ

<sup>2</sup> B *զհոգիսդ*

<sup>3</sup> B Ասէ Պետրոս. Տէ՛ր, առ մե՞զ ասացեր զառակդ զայդ, թէ առ ամենեսեան:

<sup>4</sup> B Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացուսցէ տէր իւր ի վերայ գերզաստանի իւրոյ տալ ի ժամու զկերակուրս:

<sup>5</sup> B *տնտեսին*

<sup>6</sup> B *պաշտանեայ և հնազանդութեամբ սրբոյն, զի որ*

<sup>7</sup> B *սրբ.*՝ և ծառայ

<sup>8</sup> B *սրբ.*՝ և ծառայ

<sup>9</sup> B Երանի իցէ ծառային այնմիկ, զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Արդարեւ ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ինչից իւրոց կացուսցէ զնա:

<sup>10</sup> B *կացուսցէ*

<sup>11</sup> B *սրբ.*՝ և ո՞ր

<sup>12</sup> B Ապա եթէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում. Յամէ տէր իմ ի զալ:

US Ո՛հ հեգ<sup>1</sup> և թշուառական ծառային. ապաքէն ունիս ակն, ընդէ՞ր ո՛չ հոգայցես:

Ստ. Ձի չար և յիմար ասէ<sup>2</sup>, որ արասցէ ըստ յիմարութեան և զգործսն վատթարութեան:

Սկսանիցի հարկանել զծառայակիցսն իւր<sup>3</sup> (ԺԲ 45):

ՈԿ Թուի ինձ, եթէ զայս զթշնամանողացն և զազահացն ասէ, և ամբաստանութիւնս<sup>4</sup> բազում[ս] ցուցանէ զնոցանէ, որ փոխանակ կերակրելոյ գան:

Հարկանէ<sup>5</sup> ուտել և ըմպել և արբենալ (ԺԲ 45):

Թուի ինձ զբարեկամացն ակնարկէ աստ. ընդ<sup>6</sup> որկորստութեանն մեծամեծ տանջանք կան, զոր զուշակեաց: Ո՛չ վասն այնորիկ առեր, զի ի բարեկեցութեան վայելեսցես, այլ զի յողորմութիւն ծախեսցես: Թէպէտև յարդար վաստակոց է կամ ի հայրենեաց, վասն աղքատաց հաւատացաւ քեզ այն:

Եկեալ տէր ծառային այն՝ կտրեսցէ զնա ընդ մէջն<sup>7</sup> (ԺԲ 46):

151բ // Վասն որոյ զցասումն յայտ արար: Ձի զսէրն ծանոյց աշակերտաց իւրոց, քանզի այն իսկ է, որ յերկիրս տանի և Քրիստոսի նմանողս<sup>8</sup> առնէ ըստ կարի մերում:

Եւ ծառայ, որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և ո՛չ<sup>9</sup> ըստ կամացն պատրաստե[ս]ցէ<sup>10</sup>, արբցէ գան բազում<sup>11</sup> (ԺԲ 47):

ԻԳ Գիտութեամբ<sup>12</sup> չափով կշռէ: Վասնզի որ գիտութեամբ արհամարհոտ գտաւ պատուիրանին, աններելի ունի զդատաստանս:

Եւ որ ոչն գիտէ, և արժանի գանի գործէ<sup>13</sup> (ԺԲ 48):

Իսկ որ առ տգիտութեանն յանցեալ, կրեսցէ սակաւ պատուհասս այլ ներելով, զի արդար է ի դատաստանի Աստուած: Իմ եթէ

<sup>1</sup> B հեք  
<sup>2</sup> B ևս է  
<sup>3</sup> B Եւ սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնեայս:  
<sup>4</sup> B ամբաստանութիւն  
<sup>5</sup> B գա հարկանէ՝ սրբ. է աջ լս.  
<sup>6</sup> B զի ընդ  
<sup>7</sup> B Եկեսցէ տէր ծառային այնորիկ, յաւուր յորում ակն ոչ ունիցի և ի ժամու, յորում ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ (ԺԲ 47-48):  
<sup>8</sup> B նմանաղս  
<sup>9</sup> B ոչ պատրաստիցէ  
<sup>10</sup> B նորա փխ պատրաստեսցէ  
<sup>11</sup> B բազում: Եւ որ ոչն գիտիցէ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ:  
<sup>12</sup> B սրբ.՝ գիտութեան  
<sup>13</sup> B չիք Եւ որ ոչն... գործէ

չէր եկեալ և խաւսեալ<sup>1</sup> ընդ նոսա, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա: Բայց արդ՝ չի՛ք պատճառս վասն մեղաց իւրեանց:

Ամենայնի, որում շատ տուաւ, շատ պահանջեսցի<sup>2</sup> ի նմանէ (ԺԲ 48):

Ստ. Ո՛չ է հաւասար ամենեցուն տուեալ և ո՛չ հասարակ ամենեցուն աւանդեալ ի Քրիստոսէ:

Եւ որում բազում տուաւ, առաւել խնդրեսցի<sup>3</sup> (ԺԲ 48):

Աւանդեալ Պետրոսի և Ղուկասու, բայց ո՛չ հաւասարապէս: Ուստի և առաւելագոյն խնդրեսցէ ի Պետրոսէ:

Հուր եկի արկանել յերկիր: Եւ զի՞նչ: Կամիմ, զ[ի] բորբոքե[ս]ցի (ԺԲ 49):

ՍՏ Հուր արկանի ի մարմինն<sup>4</sup>, որ երկիր անուանեաց, զի մոխրացուցէ զխորհուրդս մարմնոյ: Եւ ծախեսցէ զխոտ, զփայտ և զեղէգն՝ զվատթար խորհուրդս և զմիտս: Վասնզի՝ «Աստուած, աւսէ, հուր ծախիչ է» (Եբր. ԺԲ 29): Հրոյս այսմիկ<sup>5</sup> ազդեալ ի մեզ՝ ճրագք<sup>6</sup> մեր լուցանին և դամբարք մեր ո՛չ շիջանին:

ԻԳ Կամ<sup>7</sup> զզաւրութիւն աւետարանին պէսպէս աւրինակաւք նմանեցուցանէ, որպէս հնար է: Հուր՝ ջեռուցանող<sup>8</sup> և սրբիչ, և լուսաւոր բնութեանն շնորհք Հոգւոյն Սրբոյ աւագ(//)անին՝ հրով ծախեալ զաղտ մեղացն, և մաքրեալ՝ պայծառացոյց յառաջին անարատութիւնն:

Մկրտութիւնն ունիմ մկրտել և փութամ մինչ կատարե[ս]ցի<sup>9</sup> (ԺԲ 50):

ԻԳ Ասէ զչարչարանսն և զխաչն: Զայս և որդոցն Զբեղեայ ասաց. «Կարէ՞ք զբաժակն ըմպել և զմկրտութիւնն իմ մկրտել» (Մատթ. Ի 22, Մարկ. Ժ 38): Թուի, թէ<sup>10</sup> զհաւասարութիւն շնորհին ցուցանէ: Եւ զի մկրտութիւնն լուծանէ զմեղս, նոյն և՛ չարչարանքն, զոր փութայ<sup>11</sup> Յիսուս<sup>1</sup> կատարել, որ մաքուրն էր առաւել:

<sup>1</sup> Բ խաւսեցեալ

<sup>2</sup> Բ խնդրեսցի

<sup>3</sup> Բ ևս պահանջեսցէ ի նմանէ *փի* խնդրեսցի

<sup>4</sup> Բ արկ ի մարմինս

<sup>5</sup> Բ այսորիկ

<sup>6</sup> Բ ճրագ

<sup>7</sup> Բ Եւ կամ

<sup>8</sup> Բ ջեռուցանաւղ

<sup>9</sup> Բ Եւ մկրտութիւնն մի ունիմ մկրտել, և զիա՞րդ. փութամ մինչ կատարեսցի:

<sup>10</sup> Բ *չիք* թէ

<sup>11</sup> Բ փութան



Մկրտեցաւ, զի սրբեսցէ իւրով արեամբն զՂուրս, և զնոյն տացէ մեզ ի սրբութիւն: Եւ մկրտութեամբ մահուն «բարձցէ զմեզս յաշխարհէ» (հմմտ. Յովհ. Ա 29):

Ոկ. Ձոր Մովսէս և Եղիայ ի լերինն փութացուցանէին կատարել զելան յԵրուսաղէմ, այսինքն է՝ փրկութիւն աշխարհի:

Համարիք, եթէ խաղաղութի՞ւնն եկի արկանել<sup>2</sup> յերկիր: Ո՛չ, այլ բաժին<sup>3</sup> (ԺԲ 51):

ՍՏ Նախ զխաղաղութիւն, զոր ունի հոգին առ մարմինն:

ԻԳ Ջչար միաբանութիւնն բառնայ և զսիրոյն անաւրէնութիւնն, և հաստատէ զերկնային զխաղաղութիւն՝ աստուածային սիրովն զաւրացեալ: Այսպէս հաւատոյ Բանն<sup>4</sup> ի ներս<sup>5</sup> մտեալ՝ բարձանաց զբնութիւնն, և աստուածային սէրն ի վերայ հասեալ՝ յաղթեաց<sup>6</sup> ակտային<sup>7</sup> սիրոյն:

Եւ<sup>8</sup> ի տան միում բարձանեալք<sup>9</sup> (ԺԲ 52):

ստ. Հինգ զգայութիւնք են յիւրաքանչիւր մարմնի տան: Եւ հինգ զգայութիւնքս, մինչդեռ ո՛չ է ընկալեալ զվարդապետութեանն բան<sup>10</sup>, միաբան են, իսկ յորժամ ընդունին՝ մեկուսանան՝ տեսութիւն և լսելութիւն, ի հոտոտելեացն և ի ճաշակելեացն, ի շաւշափելեացն, յերիցն զգայութեանց:

Երեքն յերկուցն<sup>11</sup> (ԺԲ 52):

152բ // Իսկ ի վարդապետելն Բանին<sup>12</sup>, յայնժամ երկու զգայութիւնքդ՝ տեսութիւն և լսելութիւն, իմաստասիրականք են: Եւ բանաւորագոյնք բարձանին<sup>13</sup> յերից մարմնաւորացն: Քանզի հոտոտելիք և ճաշակելիք և շաւշափելիք յուս[ու]մնական<sup>14</sup> ոչինչ աւգտակար են իմաստասիրապէս կեալ, բայց ի մարմնոյն կազմածն և ի հաստատութիւն պիտոյ են: Իսկ «երկուքն յերիցն»՝ տեսութիւն և լսելութիւն, բաժանեալ յիմաստասիրական կենդա-

1 B չիք Յիսուս  
2 B տալ  
3 B ասեմ ձեզ, այլ բաժինս  
4 B Բանին  
5 B յարս փխ ի ներս  
6 A յախթեաց  
7 B ակտաւոր  
8 B Ձի եղիցին յայսմ հետէ հինգ փխ և  
9 B բաժանեալք  
10 B զվարդապետութիւնն  
11 B յերկուց  
12 B բանիւ  
13 B բաժանին  
14 A, B ի յուսմնական[ն]

նութիւնն՝ աւգտակար են: Վասնզի տեսութեամբ գիտել<sup>1</sup> զերկինս  
և զդիրս աստեղաց, զկարգս նոցա և զբոլոր աշխարհս, զարմա-  
նամք ընդ Արարիչն<sup>2</sup>: Նոյնպէս լսելութեամբն ուսանիմք զԲանս  
ուղղակի վարդապետութեանն<sup>3</sup>, և ուսեալք՝ զայլս ուսուցանեմք:

**Բաժանեսցի Հայր յորդոյ**<sup>4</sup> (ԺԲ 53):

Բարժանումն<sup>5</sup> հաւատոյ յանհաւատութենէ: Հայր<sup>6</sup>, միտք  
բարի խորհրդով ի վատթարէ՝ ո՛չ հաւանելով նոցա:

ԻՊ Քանզի զաւրացաւ Բանն<sup>7</sup> Տեառն. «Որ սիրէ զհայր կամ  
զմայր առաւել քան զիս, չէ՛ ինձ արժանի» (Մատթ. Ժ 37): Վասն այ-  
սորիկ եղև պատերազմ ի մէջ հաւատացելոցն և անհաւատիցն:

**Եւ որդի ի հաւրէ** (ԺԲ 53):

Ստ. Ո՛չ թաղելով զհայրն մեռեալ՝ անհաւատութեամբ:

**Մայր ի դստերէ** (ԺԲ 53):

Զյետին և զյոռի<sup>7</sup> պտուղն՝ անհաւատ կամ պիղծ վարիւք<sup>8</sup> ո՛չ  
ընդունելով:

**Դուստր ի մաւրէ** (ԺԲ 53):

Ի նիւթոյն, որով<sup>9</sup> միաւորի հոգին ընդ հոգևորան՝ զհոգևորան  
համեմատել[ով] մաքրական վարիւք<sup>10</sup> առաքինութեանց կամ հա-  
ւատոց:

**Սկեսուր ի հարսնէ** (ԺԲ 53):

Սկեսուր՝ մայր հոգւոյն, որ ի նմանէ է, որ եղեալ է առն ա-  
նաւրինի:

153ա // Հարսն<sup>11</sup> ի սկեսրէ<sup>12</sup> իւրմէ (ԺԲ 53):

Ժողովուրդն, որ յաղագս յանցանացն որոշեցաւ ի Հոգւոյն:

<sup>1</sup> Բ գտեալ

<sup>2</sup> Բ Արարչին

<sup>3</sup> Բ վարդապետութեամբ

<sup>4</sup> A, B ի յորդոյ (B յորդոյ)

<sup>5</sup> Բ բաժանումն

<sup>6</sup> Բ և Հայր

<sup>7</sup> Բ գոռի

<sup>8</sup> Բ վարուք

<sup>9</sup> Բ որում

<sup>10</sup> Բ վարուք

<sup>11</sup> Բ և Հարսն

<sup>12</sup> Բ սկեսրէ

**Ասէ առ Ժողովուրդն<sup>1</sup> (ԺԲ 54):**  
 ԻՊ **Յանդիմանէ զնոսա, որք անգիտանային զայս մեծ խորհուրդս:**

**Յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից, ասէ՛ք<sup>2</sup>, թէ անձրև գայ: Եւ լինի այնպէս (ԺԲ 54):**

Աւրինակաւ յայտ առնէ, թէ ժամանակք, որ ի մարգարէիցն ասացան վասն Քրիստոսի գալստեանն, լցան, և զոր ինչ պարտ էր նմա գործել՝ զուշակեցին: Զիա՞րդ ո՛չ ճանաչէք, եթէ մերձ է փրկութիւն ձեր: Զի յարևմտից կուսէ, յորժամ մերձ առ<sup>3</sup> ծովն ամպ ծագէ, գիտէք, եթէ անձրև գայ: Զի ամպոյն նմանեցան, որք զԲանն Աստուծոյ յաշխարհս սերմանեցին: Եւ հրաման տայց<sup>4</sup> ամպոց իմոց, զի մի՛ տեղասցեն յայգի իմ: Եւ Յիսուս, ամպով ծածկեալ մարմնովն, ծագեաց ի մեզ յարևմտեայս՝ հոսելով զանձրև կենաց: Եւ ցաւղն, որ ի քէն ցաւղէ<sup>5</sup>, բժշկութիւն է նոցա, որ բուսոյց ի մեզ զգեղեցիկ առաքինութիւնն:

**Յորժամ<sup>6</sup> հարաւ շնչէ, ասէ՛ք, եթէ խորշակ լինի: Եւ լինի այնպէս (ԺԲ 55):**

Հարաւային կողմն ջերմային է վասն արեգականն միշտ ընդ այն անցանելոյն, և խոնարհ են վայրքն: Անդի<sup>7</sup> ուսաք, եթէ շնչել հարաւոյն խորշակ առնէ: Զիա՞րդ ո՛չ նովին խորհրդովք<sup>8</sup> աստուածայնոցն և հոգևորացն հասանէք գիտութեան: Ո՛չ Տէր մեր արկ սուր յերկիր, այլ որք ի սատանայէ զրգուեցան: Սուր ի գործ արկանել ընդդէմ բարեպաշտիցն՝ ո՛չ ամպոյն<sup>9</sup> էր վնասն, այլ հարաւային խորշակին: Եւ արեգակն տապով փորձութեամբ չորացոյց զսերմն, որ ի վերայ վիմացն // անկաւ (տե՛ս Մատթ. ԺԳ 6, Մարկ. Դ 6): Այսպէս փոխին առակք, որ ինչ ի նմա իրք: Ի դէպ գոյ տեղոյն:

**Կեղծաւորք զերեսս երկնի և երկրի փորձէք<sup>10</sup>, իսկ զժամանակս<sup>11</sup> զիա՞րդ ո՛չ փորձէք (ԺԲ 56):**

<sup>1</sup> B Ասաց և ցժողովուրդն:  
<sup>2</sup> B իսկոյն ասէք  
<sup>3</sup> A մերձեցաւ *փխ* մերձ առ  
<sup>4</sup> B տայց  
<sup>5</sup> B *չիք* ցաւղէ  
<sup>6</sup> B Եւ յորժամ  
<sup>7</sup> B անտի  
<sup>8</sup> B խորհրդով  
<sup>9</sup> A ամբոյն  
<sup>10</sup> B գիտէք փորձել  
<sup>11</sup> B զժամանակս զայս

ՈԿ Որ<sup>1</sup> աւրինակ յերկինս<sup>2</sup> ա՛յլ ժամանակ է ձմերանոյ<sup>3</sup> և ա՛յլ ջերմոյ: Եւ ո՛չ ոք տեսանիցէ զձմերանոյ<sup>4</sup> նշանս և ջերմոյ ակն ունիցի<sup>5</sup>: Նոյնպէս և առ իս պարտիք իմանալ. ա՛յլ ժամանակ է այժմու գալստեանս և ա՛յլ հանդերձելոյն: Այժմ երկրաւոր նշանացս պէտք են<sup>6</sup>, և զերկնիցն յայլում<sup>7</sup> ժամանակի պահեալ են: Այժմ իբրև զբժիշկ եկի և ապա՝ իբրև զդատաւոր: Այժմ՝ ի խնդիր մոլորելոցն, և ապա՝ զվրէժն խնդրեմ: Այժմ լռել[ե]այն եկի և ապա՝ բազում աշխարհատեսութեամբ: Զի զերկինս գալարիցեմ և զարեգակն կորուսանեմ և լուսնի ո՛չ տամ ծագել: Ապա և զաւրութիւնք երկնից շարժեսցին և փայլակն երևեսցի ի գալստեանն: Իսկ այժմ ո՛չ է այնր նշանաց ժամանակ, քանզի եկի մեռանել և անհնարին չարչարանս չարչարել:

Ընդէ՞ր և յանձանց ո՛չ խնդրէք<sup>8</sup> զարժանն (ԺԲ 57):

Կամի ճանաչողս<sup>9</sup> զնոսա լինել:

ԻԳ Թէ անձրեաց առատացուցանել զպտուղս է<sup>10</sup>, իսկ կորուսանել խորշակին՝ Տեառն բարեգործելն<sup>11</sup>, և նոցա վատթարացն՝ զսուրն շարժել:

Յորժամ երթայցես ընդ ոսոխին<sup>12</sup> քում առ իշխանն (ԺԲ 58):

Ոսոխ զսատանայ ասեն: Հրամայէ ոչինչ ունել ի նորայոցն: Զի այն է բարեմիտ լինելն. հրաժարել ի նմանէ յառաջ քան անդր երթալն: Ոչինչ գտանել ի նորայոցն առ մեզ խորհուրդս վատթարս կամ գործս, որք լինին ի սատանայէ՝ յոսոխէն<sup>13</sup> // ամենայն բարոյ, որ յորդորէ գործել զամենայն անաւրէնութիւն:

Ի ճանապարհի տուր զհաշիւն<sup>14</sup> զերծանել ի նմանէ (ԺԲ 58):

ԿՐ Ծանապարհք՝ կենցաղս<sup>15</sup>:

<sup>1</sup> B գոր

<sup>2</sup> A, B ի յերկինս

<sup>3</sup> B ձմերայնոյ

<sup>4</sup> B ձմերայնոյ

<sup>5</sup> B ունիցի և ոչ ոք զջերմոյ ժամանակի նշանն և ձմերայնոյ ակն ունիցի

<sup>6</sup> B չէք են

<sup>7</sup> B այլում

<sup>8</sup> B իսկ ոչ ընտրէք *փի* ոչ խնդրէք

<sup>9</sup> B ճանաչաւղս

<sup>10</sup> B չէք է

<sup>11</sup> A բարեգործեալն

<sup>12</sup> B ոսոխի

<sup>13</sup> A, B ի յոսոխէն

<sup>14</sup> A զհաշիւն

<sup>15</sup> B կենցաղոյս ի ճանապարհք

US *Փոխեսցուք զանիրաւ խորհուրդս՝ զմեզս մեր խոստովանելով, զի աստէն արդարացուք: Ասա՛ դու նախ զանաւրէնութիւնս<sup>1</sup>, զի արդարացիս:*

**Գուցէ քարչէ առ դատաւորն, և մատնիս դահճին և արկանիս ի բանդ<sup>2</sup> (ԺԲ 58):**

*Ապա եթէ ո՛չ, խոստովանեսցուք և փոխեսցուք զանաւրէնութիւնս մեր յարդարութիւն՝ ի կատարել ճանապարհիս. մերկապարանոցք<sup>3</sup> կամք առաջի դատաւորին Քրիստոսի: Եւ ոսոխն դատապարտելով զմեզ՝ մատնիմք ի դատաւորէն դահճի՝ հրեշտակին<sup>4</sup>: Եւ տանջանաւք անկանիմք ի բանդ<sup>5</sup>՝ «ի խաւարն արտաքին» (Մատթ. Ը 12, ԻԲ 13, ԻԵ 30):*

**Ո՛չ<sup>6</sup> ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին բնիոնն (ԺԲ 59):**

*Զնաքարակիտն, որ է դանկն յետին, զամենայն պարտիս անաւրէնութեան յանցանաց մինչև ցյետին փոքրագոյն մեղսն, զոր բանիւ միայն և խորհրդով ակամայութեամբ գործեալք, որ «յետին<sup>7</sup> բնիոն» և նաքարակիտ անուանեաց:*

<sup>1</sup> Բ զանաւրէնութիւնս քո

<sup>2</sup> Բ Միգուցէ քարչիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահճն արկանիցէ ի բանտ:

<sup>3</sup> Բ մերկապարանոցք

<sup>4</sup> Բ այսինքն՝ հրեշտակին

<sup>5</sup> Բ բանտ

<sup>6</sup> Բ Ասեմ քեզ, ոչ

<sup>7</sup> Բ Յիսուս Քրիստոս *փխ* յետին

## Գլուխ ԺԳ

Եկին ոմանք ի նմին ժամանակի և ասեն<sup>1</sup> նմա վասն գալիլեացոցն<sup>2</sup>, գորոց գարիւն<sup>3</sup> Պիղատոս խառնեաց ընդ գոհս նոցա (ԺԳ 1):

Կր. Պիղատոս<sup>4</sup> Հռոմայեցի էր, և հրամայեաց ո՛չ կատարել հրէիցն ի նորա իշխանութեանն<sup>5</sup> զիւրեանց պաշտաւնն: Իսկ գալիլեալցիք՝ հրէայք, եկեալ ոմանց՝ կատարէին գաւրէնսն: Եւ լուեալ Պիղատոսի՝ առաքեաց կոտորեաց զնոսա, և խառնեցաւ արիւն սպանելոցն ընդ արիւն գոհիցն:

154բ ԻԳ Յարմար պատահեաց այս համբաւ, զի ո՛չ գալիլեաց(11)իքն էին պատճառ սրոյն, որ ըստ աւրինացն Աստուծոյ մատուցին զգոհս իւրեանց ի տաճարի անդ, այլ յանդգնութիւն դատաւորին: Եւ ո՛չ աւետարանն էր պատճառ սրոյն, այլ անաւրէնութիւն թագաւորացն: Եւ ընդէ՞ր գործեաց զայս Պիղատոս: Ոմանք զմահն Յովհաննու ասեն պատճառ, իբրու թէ ի Հրէաստանէ գոլով յիշխանութենէ նորա՝ և Հերովդէս սպան զնա, և յայնմանէ զհարեալ Պիղատոս զեկեալսն ի քաղաքէն Հերովդէի կոտորեաց: Արդ՝ եկեալ պատմեցին Տեառն մերոյ տեսանել, թէ հաճի ընդ գործն ընդ այն. իբրև<sup>6</sup> զթշնամի մատնեսցեն Հերովդէի:

Եւ Յիսուս ասէ. Համարիք, եթէ այն գալիլեացիքն եղեն մեղաւոր, որք զայն կրեցին<sup>7</sup> (ԺԳ 2):

Իսկ Յիսուս ահ արկանէ նոցա վասն այնպիսի դատաստանաց, զի էր կարծիս առ ամենեսին, եթէ ի մեղս իւրեանց կորեան, որով աւրէնքն սպառնան վրէժս ամպարշտաց: Քանզի էր ահագին սպանումնն, զի եկին զոհել, և ի տաճարի անդ սպանան<sup>8</sup>, և ընդ գոհսն խառնեցաւ արիւն նոցա: Վասն որոյ վրէժխնդրութիւն յԱստուծոյ<sup>9</sup> համարեցան, զի ո՛չ ընկալաւ զպատարագս նոցա: Այլ Տէր մեր ո՛չ արդարացոյց զնոսա, և ետ հակառակ ինչ<sup>10</sup>, սակայն սպառնայ, թէպէտև երկայնամտութիւնն Աստուծոյ ներէ, զի

<sup>1</sup> B պատմեցին

<sup>2</sup> B գալիլեացոցն

<sup>3</sup> B գարիւնն

<sup>4</sup> B Պիղատոս

<sup>5</sup> B իշխանութիւնն

<sup>6</sup> B զի իբրև

<sup>7</sup> B Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Համարիք եթէ այն գալիլեացիք եղեն մեղաւորք, քան զամենայն գալիլեացիս:

<sup>8</sup> B սպանին

<sup>9</sup> B Աստուծոյ

<sup>10</sup> B և ոչ ետ հակառակ ինչ պատասխանի *փիս* այլ Տէր... ինչ

ապաշխարեսցեն: Դուք զնոսա միայն համարիք մեղաւորս և զանձինս ձեր արդարս, թէ<sup>1</sup> ո՛չ այդպէս<sup>2</sup>, որպէս դուքդ<sup>3</sup> կարծէք:

**Այլ եթէ ո՛չ ապաշխարէք, կորնչելոց էք** (ԺԳ 3):

Թէպէտև սպառնայ, այլ զքաղցրութիւն[ն] ընդ նմին խառնէ, և առաջի արկանէ զապաշխարութիւնն, զի այնու կեցցեն և մի՛ կորիցեն:

155ա // **Կամ նոքա ութուտասանքն, յորոց վերայ անկաւ աշտարակն ի Սելովամ և սպան զնոսա** (ԺԳ 4):

ԿԲ **Սոքա հագարացիք էին, և սպանան: Արդ՝ այսու երկուքումք կսկծեցուցանէ զհրէայսն:**

ԻԳ **Զոր համարեցան վասն մեղաց յարդար դատաւորէն Աստուծոյ կործանեալ<sup>4</sup>:**

**Եթէ<sup>5</sup> ո՛չ ապաշխարիցէք ամենեքին<sup>6</sup>, նոյնպէս կորնչիցիք** (ԺԳ 5):

ԿԲ **Որպէս բարձան իսկ ի Տիտոսէ և ի Վեսպիանոսէ սրով և գե-րութեամբ:**

ԻԳ. **Առ այս [զ]նոյն երկիր[ւ]ղ և զերկայնամտութիւն<sup>7</sup> առաջի դնէ, զի ապաշխարեսցեն և մի՛ կորիցեն: Քաղցրութիւնն Աստուծոյ առ ոմանս երկայնամիտ լինի, և զոմանս ցոյց առնէ ամպարշտաց, զի մի՛ անզգայեալ ասիցես<sup>8</sup>, եթէ չի՛ք Աստուած և ո՛չ դատաստան ի վերուստ: Եւ ո՛չ զամենեսին հարկանէ, զի մի՛ սպառեսցին<sup>9</sup> բնա-կիչք երկրի:**

ԵՎ. **Ի տաւնի անդ<sup>10</sup> Հերո[վ]դիա, յորժամ եհատ զգլուխն Յովհան-նու, զոր անիրաւութեամբ սպան առանց աւրինացն, Պիղատոս<sup>11</sup> զաւրս ժողովեաց և յդեաց կոտորեաց, զորս եգիտ ի բազմականի անդ: Զի Հերովդի ոչինչ կարաց առնել, զարմատ<sup>12</sup> զաւրաց նորա կորոյս: Եւ բարկացաւ նմա մինչև յաւր դատաստանի Տեառն մե-րոյ, որ եղև պատճառ հաշտութեան: Եւ դարձեալ զի արգելան**

<sup>1</sup> B քերած-ջնջած է

<sup>2</sup> B այդպէս իցէ

<sup>3</sup> B դուք

<sup>4</sup> B կործանեալ, զի զայնպիսի անցս կրեցին

<sup>5</sup> B ոչ ասեմ ձեզ, այլ եթէ

<sup>6</sup> B ամենեքեան

<sup>7</sup> B զերկայնամտութիւն

<sup>8</sup> B ասիցեն

<sup>9</sup> B սպառեսցեն

<sup>10</sup> B անտի

<sup>11</sup> A Պիղատոս

<sup>12</sup> B բայց զարմատ

նոքա յիշխանութենէ հռոմայեցոցն, զի մի՛ իշխեսցեն մատուցանել պատարագ ի տաճարին, և ի նմին տեղոջ կոտորեաց զնոսա: Եւ փարիսացիքն ի փորձել եկին զնա իբր զհարկացն, զի տեսցեն, 155բ թէ հաճոյ է // նմա կոտորել նոցա վասն զոհիցն: Ասասցեն. «Հակառակ է աւրինացն, ի՛ կողմն հեթանոսաց է»: Եւ թէ լինի ի կողմ աւրինացն, զնմանէ ամբաստան լինի՞ առաջի Պիղատոսի, թէ դա հակառակ է արքայութեան ձերոյ՞:

Թզենի մի էր տնկեալ ուրումն յայգւոջն<sup>4</sup> (ԺԳ 6):

ԿԲ Այգւոյն<sup>5</sup> զՀաւրէ գուշակէ, և թզենի<sup>6</sup> հրէայքն են, որ յայգի ի Պաղեստին, յորում զնոսա յատուկ տնկեաց: Ըստ այնմ՝ «Այգի յԵգիպտոսէ, հաներ զհեթանոսս, զԻսրայելս<sup>7</sup> տնկեցեր» (Սաղմ. 38 9):

ԳԲ. Ծշգրիտ պատկէր մարդկութեանս է թշուառացեալ:

Եկն խնդրել պտուղ<sup>8</sup> և ո՛չ եգիտ (ԺԳ 6):

ԻԳ Զհաւատացեալս<sup>9</sup> յեկեղեցի<sup>10</sup> Աստուծոյ,

կԲ. յորում<sup>11</sup> պարտապան եմք տալ զպտուղ առաքինութեան:

ԻԳ. Այլ թէ ո՛չ տամք հատանել, որպէս ասաց. «Ամենայն ծառ, որ ո՛չ բերէ<sup>12</sup> պտուղ, հատանեն<sup>13</sup> և ի հուր այրի» (Մատթ. Գ 10):

Այս երեք ամք են, որ դամ խնդրել պտուղ, և ո՛չ գտ[անեմ]<sup>14</sup> (ԺԳ 7):

ԵՓ Վասն երից գերութեան նոցա: Զի խրատեսցին և ո՛չ խրատեցան: Ասէ. «Զուր տարապարտուց հարի ես զորդիս ձեր, և ո՛չ խրատեցան գալ առ իս»: Ժամանակն եւթանասունեւթներորդացն, քանզի ի ժամանակին անդ՝ դարձին իւրեանց, կատարին երեք ամքն, որ յառաջ քան զնորա գալուստն էր:

<sup>1</sup> B և ի

<sup>2</sup> B լինիցին

<sup>3</sup> B ձերոյ: «Համարիք եթէ նոքա պատրաստականք եղեն քան զամենայն մարդիկ, որ բնակեալ են յԵրուսաղէմ» (ԺԳ 4):

<sup>4</sup> B Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում:

<sup>5</sup> B ճախ լս. բացատրութիւն՝ տնկող

<sup>6</sup> B թէ զի ~~փի~~ թզենի

<sup>7</sup> B և զնոսա ~~փի~~ զԻսրայելս

<sup>8</sup> B պտուղի ի նմա

<sup>9</sup> B զհաւատս և զբարի գործս զհաւատացեալս

<sup>10</sup> A ի յեկեղեցի

<sup>11</sup> B որում

<sup>12</sup> B առնէ

<sup>13</sup> B հատանի

<sup>14</sup> B Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են, յորմէ հետէ դամ խնդրել պտուղ ի թզենոջ և ոչ գտանեմ:



«Խնդրեցի ի<sup>1</sup> նոցանէ այր մի խրամակարկատ<sup>2</sup>, և ո՛չ գտի»  
(*հմմտ.* ԺԳ 7):

Ի Սողոմ<sup>3</sup> տասն խնդրեցաւ: «Երեք ամբ» եցոյց Փրկիչն զանձն իւր նոցա նշանաւքն, որ գործեցաւ<sup>4</sup>, և ո՛չ ետուն պտուղ հաւատոյ<sup>5</sup>:

Կր. «Այգեգործ» (ԺԳ 7)՝ Քրիստոս, «երեք ամբ»՝ որ եկն ի մկրտու-  
156ա թիւնն եռամեան դա(//)տարկութեամբ:

Գր. (*նարեկ*) Որ զբնաւ գյաւիտեանս<sup>6</sup> պարունակէ ժամանակ, զանցեալն և զներկայս<sup>7</sup>, որ զապառնոյն<sup>8</sup> յամայր [յ]ամրութեամբ յերկարած- գելոյ՝ [յ]այգի աշխարհիս արմատացելոյ սին սաղարթիւ պաճու- ճեալ, գրկեալ ի պողոյ:

Կտրեա՞լ զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ (ԺԳ 7):

Կր Զի նոքա միայն էին ի Պաղեստին և ո՛չ այլ ոք, յորոց<sup>10</sup> հաւա- տալոց էին ոմանք:

ԵՓ Զի կամեցաւ Հայր խլել զնոսա: Այն, զի ասաց ցՄովսէս. «Թոյլ տուր<sup>11</sup> ջնջել զդոսա» (*հմմտ.* Ելք ԼԲ 10-12), զի ետ նմա պատ- ճառ աղաչել և խնդրել ի նմանէ:

ԻԳ Արդ՝ թէ կամէր սատակել, զի՞նչ պէտք էին, «Թոյլ տուր» (*հմմտ.* Ելք ԼԲ 10-12), «ի բաց կաց» (*հմմտ.* Մատթ. ԻԵ 41, Ղուկ. ԺԳ 27): Եւ ո՞վ ոք էր Մովսէս, որ ընդդէմ կայր նորա, որ բազում պաղատա- նաւք ընդ Յորդանան ո՛չ էանց: Աւրէնս եդ առաջնորդաց՝ բարե- խաւս լինել աղաւթիւք ի վերայ մեղաւորաց, հաշտեցուցանել զանբարկանալին բնութեամբ: Սակայն ձեանայ, զի զարհուրե- ցուսցէ զառաջնորդս խնամակալութիւն ի ներս բերել:

Նա ասէ. Տէ՛ր, թողացոյ և զայս ամ ևս<sup>12</sup> (ԺԳ 8):

ԵՓ. Յայտ վայրի եցոյց մշակն, թէ կամեցաւ Տէր խլել զնա: Յայտ արար զխնամակալութիւն իւր մշակն և զգուլթն իւր ողորմածն:

Կր. Զժամանակ քարոզութեան աշակերտացն ցուցանէ, յորս բա- զումք ի նոցանէ հաւատացին:

<sup>1</sup> Ե ես ի

<sup>2</sup> Ե սրբ.՝ հրամանակատար

<sup>3</sup> Ե Սողոմվայ

<sup>4</sup> Կ գործեցավ

<sup>5</sup> Ե հաւատոց

<sup>6</sup> Ե յաւիտեանս

<sup>7</sup> Կ զներկայս

<sup>8</sup> Ե զապառնին

<sup>9</sup> Ե Արդ՝ կտրեա՛

<sup>10</sup> Ե որոց

<sup>11</sup> Ե տուր ինձ

<sup>12</sup> Ե Նա պատասխանի ետ և ասէ. Տէ՛ր, թող զդա այս ամ ևս, մինչ շուրջ զգովաւ բրեցից և արկից արդ, թերևս արասցէ պտուղ: Ապա թէ ոչ՝ յամէ ևս հատցես զդա (ԺԳ 8-9):

Իգ. 156բ. Իսկ առ մարդիկ զգործս առին ի մշակացուցանել, որպէս Պաւղոս առ Տիմոթէոս գրեաց. «Սաս(//)տեայ, յանդիմանեայ, խրատեայ երկայնմտութեամբ, վարդապետութեամբ» (հմմտ. Բ Տիմ. Դ 2): Եւ Պաւղոս ընդ հիւանդացեալսն հիւանդանար, ընդ գայթազդեալսն տապանայր: Եւ ցեզեկիէլ ասէր Աստուած. «Զի մի՛ արեան ուրուք պարտապան լիցիս հեղգութեամբ» (հմմտ. Երեմ. ԽԸ 10):

Ստ. Արդ՝ հրշետակք բարեխաւսք, այլև՝ խնամակալք, որք դեգերին հանապազ առ մեզ, ընդ մերումս կարեկցելով՝ բարեմասնութիւնս մերում սպասեն: Եւ յաւիտենական փրկութեան մեր աղերսեն՝ ասելով. «Զգործս ձեռաց քոց մի՛ անտես առնէր» (Սաղմ. ԾԼԵ 8): Քանզի արդարև մեր են աղաչանքս այս՝ ի բարերարէդ Աստուծոյ կարգեալ առ նոսա, զի նոքա բանիւ են ստեղծեալ և մեք ձեռաւք բարեգործեալ<sup>1</sup>:

Բրեցից և արկից աղբ<sup>2</sup> (ԺԳ 8):

ԻԳ. Արուեստք<sup>3</sup> են<sup>4</sup> երկրագործացն զերկիր ածել<sup>5</sup> ի պտղաբերութիւն, իսկ<sup>6</sup> վերակացուք մարդկան բանիւ զբանաւոր երկիր<sup>7</sup> կակղեն<sup>8</sup> զխստութիւն մտացն իբր բրջաւ՝ զարթուցանել<sup>9</sup> զՋերմութիւն սիրոյն Աստուծոյ յոգիս, ըստ զաւրութեան աղբոյն, և առնել պտղաբերս առաքինութեամբ<sup>10</sup>, և գերծանել ի սրոյ<sup>11</sup> աստուածային բարկութեանն<sup>12</sup>:

Ապա թէ ո՛չ՝ յամէ ևս հատցես (ԺԳ 9):

Կր. Որք ո՛չ արարին պտուղ հաւատոց, ի Տիտոսէ ջնջեցան՝ հատեալք սրով, որպէս անդ հատումն թղենոյն նշանակեաց<sup>13</sup>:

Իգ. Իսկ զանպտուղսն<sup>14</sup> յարմատոյ հաւատոյ[ն] և ի կենաց աստի կտրէ<sup>15</sup>: Իսկ եթէ զմշական չար անուանէ և<sup>16</sup> զբարկութիւնն

<sup>1</sup> Բ **չիք** Յայսմ վայրի եցոյց մշակն... բարեգործեալ

<sup>2</sup> A ախբ

<sup>3</sup> Բ Զի՞նչ էր բրբն և արկանել աղբ, արուեստք **փխ** Բրեցից... արուեստք

<sup>4</sup> Բ են սոքա

<sup>5</sup> Բ որով զանբան երկիր ածեն

<sup>6</sup> Բ Եւ դիւրին է գայս յեղուլ ի մերս տեսութիւն, թէ զիա՞րդ **փխ** իսկ

<sup>7</sup> Բ **չիք** զբանաւոր երկիր

<sup>8</sup> Բ կակղել

<sup>9</sup> Բ և զարթուցանել

<sup>10</sup> Բ առաքինութեան

<sup>11</sup> Բ հատանելոյ անդի **փխ** սրոյ

<sup>12</sup> Բ սրոյ բարկութեանն և մնալ յարաժամ ի տան Աստուծոյ տքնեալս

<sup>13</sup> Բ **չիք** Ապա թէ ոչ յամէ... նշանակեաց

<sup>14</sup> Բ ի նմին անպտուղեան մնացեալն ապա իրաւամբք

<sup>15</sup> Բ կտրել գնա

<sup>16</sup> Բ մշակն ևս չարանայցէ և սա

157ա սաստս<sup>1</sup>. // «Զչարսն չարաւ կորուսցէ<sup>2</sup>» (Մատթ. ԻԱ 41): Զչար հո-  
վիւն<sup>3</sup> ի միում<sup>4</sup> հաւտիդ ես խնամարկեցից<sup>5</sup>:

Եւ ուսուցանէր ի միում ժողովրդանոցացն ի շաբաթու<sup>6</sup> (ԺԳ 10):  
ԻԳ Ժողովրդարանն<sup>7</sup> տեղի աղաւթից շինեալ, յոր<sup>8</sup> ժողովեալ յա-  
ւուր շաբաթու ի գործոյ պարապեալ լսէին<sup>9</sup> զպատգամս մարգա-  
րէիցն և խնդրուածս առնէին<sup>10</sup>: Եւ<sup>11</sup> Յիսուս մտեալ անդ՝ ուսու-  
ցանէր, որպէս երբեմն<sup>12</sup> առ նազաւրացիսն<sup>13</sup>, և խրատէր զնոսա,  
որպէս աւրէն էր: Ապա<sup>14</sup> գայ ի սքանչելիսն՝ վկայաբանիցն կա-  
ցուցանելով<sup>15</sup>:

Եւ ահա կին մի, զոր ունէր այս հիւանդութիւն ամս ութու-  
տասն, և ո՛չ կարէր ի վեր հայել<sup>16</sup> (ԺԳ 11):

Զի կարի չար պատերազմ է բնութեանս և թշնամի սատանայ<sup>17</sup>  
ո՛չ միայն ոգոյ<sup>18</sup>, այլև մարմնոյ:

Եւ Յիսուս տեսեալ զնա՝ ասէ. Կին դո՛ւ, արձակեալ ես ի հի-  
ւանդութենէդ<sup>19</sup> (ԺԳ 12):

Գթածն<sup>20</sup> Յիսուս թէպէտև յառաջ ո՛չ մատեաւ և հաւատս ո՛չ  
ընծայեաց, ո՛չ<sup>21</sup> կարաց անտես առնել ողորմածն, որ<sup>22</sup> յայնքան  
չար դիւին ձեռս մատնեալ էր<sup>23</sup>:

Եւ եդ ձեռս ի վերայ<sup>24</sup> (ԺԳ 13):

<sup>1</sup> B զբարկութեանն Աստուծոյ զսաստ զանձամբ իւրով կրեսցէ: Ըստ այնմ  
<sup>2</sup> B կորուսցէ և գայգին տացէ այլոց մշակաց  
<sup>3</sup> B Եւ եթէ զչար հովիւսդ չարաչար կորուսից և  
<sup>4</sup> B իմում *փխ* ի միում  
<sup>5</sup> B խնամեցից  
<sup>6</sup> B շաբաթս: Եւ ահա կին մի, զոր ունէր այս հիւանդութեան ամս ութ և տասն և էր  
կարկամեալ, և ոչ կարէր ամենևին ի վեր հայել (ԺԳ 10-11):  
<sup>7</sup> B ժողովարանն  
<sup>8</sup> B շինեցաւ նոցա յամենայն տեղիս, յորում  
<sup>9</sup> B լսել  
<sup>10</sup> B առնել  
<sup>11</sup> B Վասն որոյ և  
<sup>12</sup> B *չիք* երբեմն  
<sup>13</sup> B նազովրացիսն և ուսուցանել  
<sup>14</sup> B Եւ ապա  
<sup>15</sup> B կացուցանել  
<sup>16</sup> B Եւ զկինն գայն տեսեալ, զոր չար այսոյն կորացուցեալ էր, և ոչ տայր ի վեր հայել:  
<sup>17</sup> B և պատերազմող և թշնամի էր բնութեանս և վնասակար *փխ* պատերազմ... սատանայ  
<sup>18</sup> B հոգւոյ  
<sup>19</sup> B *չիք* Եւ Յիսուս տեսեալ... հիւանդութենէդ  
<sup>20</sup> B Եւ զի՞նչ արդեաւք առ այս գթածն  
<sup>21</sup> B այլ որ եկն կեցուցանել ոչ  
<sup>22</sup> B *չիք* ողորմածն որ  
<sup>23</sup> B ի ձեռս մատնեալն  
<sup>24</sup> B Եւ տեսեալ զնա Յիսուս՝ կոչեաց առ ինքն և ասէ ցնա. Կին դու, արձակեալ ես ի

Եւ այս իւրոյ աստուածային իմաստութեանն գործէ՝ դնել ձեռն աստ, որպէս բորոտին (տե՛ս Մատթ. Ը 3), զի ցուցցէ, թէ ո՛չ գարշի յուճեքէ բժիշկն: Եւ բանիւ ի բացուստ, որպէս որդի թագաւորազինն, որ ասաց. «Ե՛րթ, որդին քո կենդանի է» (Յովհ. Դ 50): Զի ցուցցէ, թէ յամենայնի կարող է, թէ կամի կեցուցանել:

**Եւ<sup>1</sup> առժամայն ուղղեցաւ** (ԺԳ 13):

Զոյգ ընդ բանիցն ընթացաւ առողջութիւն[ն]: Որպէս ասէ Նսայի. «Նա զցաւս մեր բառնայ» (Ես. ԾԳ 4), և զհիւանդութիւնս մեր առողջացուցանէ: Եւ Մաղաքիա. «Ահա այր, և ծագումն անուն նորա» (Զաք. Զ 12), և բժշկութիւն և կեանք // ի լեզուի իւրում:

**Փառաւոր առնէր զԱստուած** (ԺԳ 13):

Քանզի այս բնութեան[ս] մերոյ կիրք են, զի նեղեալ անձինք և գերծեալք ի վտանգից աւրհնեն և գոհանան զԱստուծոյ: Ըստ այնմ. «Տէր ի նեղութեան յիշեցաք զքեզ» (Ես. ԻԶ 16): Իսկ ի հանգստեան դունուրեք յիշեն զԱստուած կամ գոհանան: Ուստի հարկի Աստուած ածել զբարկութիւն, զի յիշեսցեն<sup>2</sup>: Յորժամ սպանանէր զնոսա, դառնային և խնդրէին զԱստուած: Աւրինակ էր կինս այս հեթանոսաց փրկութեան, որք կարկամեալք էին և կորացեալք ի ծանր մեղաց բեռանց, որ ո՛չ էր հնար յերկնից բարձրութիւնն հայել և զփառն<sup>3</sup> Աստուծոյ տեսանել: Վասն որոյ զթագեալ ի մեզ Արարիչն բնութեանս ուղղեսցի<sup>4</sup> ի վեր՝ հայեալ<sup>5</sup> ի մեր տեղի բնակութեանն:

**Ժողովրդապետն ցասուցեալ, թէ՛ Ընդէ՞ր Յիսուս ի շաբաթութիւն[չկեաց]**<sup>6</sup> (ԺԳ 14):

Ո՛չ վասն շաբաթուն ցասեալ, այլ վասն բժշկութեանն, որ զփառս նորա յայտնեաց: Եւ ո՛չ յաւրինացն<sup>7</sup> այսպիսի էին հաւաստիք վասն շաբաթու: Եւ բազում ինչ, որ փոքունք էին, առանց աշխատութեան գործէին: Եւ ո՛չ կամէին լուծումն շաբաթու, զի արձակէին ի մարոյ զանասուն և զէջ տալ ջուր և ո՛չ հա-

Հիւանդութենէ քումմէ *փիս* և եղ ձեռս ի վերայ

<sup>1</sup> B Եւ եդ ի վերայ նորա ձեռն և

<sup>2</sup> B յիշեսցեն զԱստուած

<sup>3</sup> B զփառս

<sup>4</sup> B ուղղեաց

<sup>5</sup> B հայեցեալ

<sup>6</sup> B Պատախանի ետ ժողովրդապետն ցասուցեալ, թէ՛ Ընդէ՞ր ի շաբաթութիւն[չկեաց] Յիսուս:

<sup>7</sup> A, B ի յաւրինացն

մարէին<sup>1</sup> վնաս: Եւ արդ՝ զի՞նչ դիւրին քան բանիւ արձակել ի հիւ-  
ւանդութենէ, ընդ որ պարտ էր հիանալ և քան զաւրէնսդիրն ի  
վեր համարել, թէև զաւրէնսն լուծանէր: Այլ չար է<sup>2</sup> նախանձն և  
կոյր, և ո՛չ տայ հայել ի ճշմարտութիւնն: Եւ որքան մեծամեծս  
տեսանէ<sup>3</sup>, առաւել կատաղի<sup>4</sup> և ո՛չ կարէ լսել<sup>5</sup>:

**Վեց**<sup>6</sup> աւր է, յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք<sup>7</sup>  
(ԺԳ 14):

158ա // Ո՞ք քանի էր կուրութիւն մտաց նոցա, իբր թէ ինքն ունի իշ-  
խանութիւն ամենայն ցաւոց շնորհել առողջութիւն: Ո՛չ ապաքէն,  
որ զաւրաւոր է նշանաւք քան զքեզ, պարտ էր գիտել, թէև<sup>8</sup> ի-  
մաստուն է և գիտէ զամենայն հաւաստիս աւրինացն: Այլ որպէս  
ասացի չար է նախանձն և, որ ընդ նովաւ վարեալ<sup>9</sup> են, չիմանան  
զպատշաճն:

**Կեղծաւորք, զէշ և զեզն արձակէք տալ ջուր ի շաբաթու**<sup>10</sup> (ԺԳ  
15):

Կեղծաւորս<sup>11</sup> կոչէ, զի չարութեամբ խաւսէին, և պատրուակ  
զշաբաթն իւրեանց չարութեանն առնէին՝ վրէժխնդիր աւրինացն  
ձևանային լինել, և չէր նոցա փոյթ վասն շաբաթու: Վասն<sup>12</sup> ա-  
նասնոցն կարեաց չգրէին ինչ զշաբաթն և վասն մարդոյ, վասն ո-  
րոյ զշաբաթն եդ Աստուած, զի հանգիցէ: Եւ նոքա կամէին, զի  
չարչարիցի<sup>13</sup> և մի՛ բժշկեալ հանգիցէ: Եւ այլուր ասէ զանկեալ ա-  
նասունն ի վեր հանէք, որ կարի աշխատութիւն է<sup>14</sup>, որչա՞փ մեծ է  
մարդ քան զանասուն:

**Ասէ. Այս դուստր Աբրահամու է, որ կապեաց սատ[անայ] ու-  
թուտասն ամ, ո՞չ էր արժան արձակել ի շաբաթու**<sup>15</sup> (ԺԳ 16):

<sup>1</sup> B չհամարէին  
<sup>2</sup> A են  
<sup>3</sup> B տեսանէին և  
<sup>4</sup> B կատաղէին  
<sup>5</sup> B կարէին լսել  
<sup>6</sup> B Եւ ասէ ցօղոզիւրդն. Վեց  
<sup>7</sup> B բժշկեցարուք և մի յաւուր շաբաթու  
<sup>8</sup> B թէ  
<sup>9</sup> B վարակեալ  
<sup>10</sup> B Պատասխանի ետ նմա Տէր և ասէ. Կեղծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու  
ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մարոյ և տանի տայ ջուր:  
<sup>11</sup> B կեղծաւորս և կոյրս  
<sup>12</sup> B Վասն որոյ ունի զլեզուս նոցա, որք վասն  
<sup>13</sup> B չարեսցի  
<sup>14</sup> B էր  
<sup>15</sup> B Իսկ այս դուստր Աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւորիկ ութուտասն

Ցուցանէ զնոցա անզգամութիւնն և զսատանայի պարտութիւնն, զի իրաւունք էին բժշկել զայնպիսի ախտացեալն: Զի դուստր էր նահապետին, որով ինքեանք պարծէին. «Զաւակ Աբրահամու եմք» (Յովի. Ը 33), և ասէին. «Անարգէ զորդիս Աբրահամու Յիսուս»: Եւ, ահաւասիկ<sup>1</sup>, և նոքա անարգեն, և Յիսուս յարգէ: Եւ հրէայքն ատէին զաղքատս և զախտածէտս և զարչէին, և փրկութիւն // նոցա անփոյթ էր առ նոսա: Իսկ նա Արարիչ էր բնութեանս և վասն այնորիկ եկն, զի ազատեսցէ ի սատանայէ: Ո՛չ հայէր յարտաքին տգեղութիւնն<sup>2</sup>, այլ կարեկից լինէր բնութեանս և ողորմէր, որ այնքան ամաց չարչարեալ էր, որ և զզազանս խոնարհեցուցանէր ի խնամս:

Եւ զայս իբրև ասաց, յամաւթ լինէին ամենեքին<sup>3</sup> (ԺԳ 17):

Ի բանիցն ճշմարտութենէ յանդիմանեալք՝ զամաւթի հարեալ լուեցին:

Եւ<sup>4</sup> ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ գործէին<sup>5</sup> (ԺԳ 17):

Իսկ պարզամիտ ժողովուրդն, որ առանց նախանձու էին, ուրախ լինէին, և դպիրքն վնասէին, և զչարեալ՝ հերձ[ն]ուին, և ռամիկն շահ մեծ ունէին՝ զնշանսն տեսանելով: Եւ զբանս վարդապետութեան լուեալ՝ ցնծութեամբ փառաւորէին զԱստուած:

Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխ[ոյ]<sup>6</sup> (ԺԳ 19):

«Հատ մանանխոյ» զինքն ասէ Քրիստոս<sup>7</sup>, վասնզի փոքրկացաւ և աղքատացաւ՝ առեալ զկերպարանս ծառայի: Եւ<sup>8</sup> վասն աւետարանական քարոզութեանն. «Որ փոքր էր» (Մատթ. ԺԳ 32) ի սկզբանէ աշակերտացն, և սփռեալ տարածեցաւ ընդ տիեզերս:

Եւ ամեալ՝ եղև ծառ<sup>9</sup> (ԺԳ 19):

ամ, ոչ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու:

<sup>1</sup> Եւ ահաւասիկ՝ գրված է լւ.

<sup>2</sup> Եւ տգեղութիւնն

<sup>3</sup> Եւ ամենեքեան, որ հակառակն կային նմա

<sup>4</sup> Եւ Եւ ամենայն

<sup>5</sup> Եւ գործէին ի նմանէ

<sup>6</sup> Եւ Եւ ասէր. Ո՞ւմ նման է արքայութիւնն Աստուծոյ: Նման է հատոյ մանանխոյ (ԺԳ 18-19):

<sup>7</sup> Եւ չիք Հատ... Քրիստոս

<sup>8</sup> Եւ չիք Եւ

<sup>9</sup> Եւ Զոր առեալ մարդոյ արկ ի պարտէզ իւր, ամեաց և եղև ծառ:

US *Իսկ յորժամ փառաւորեցաւ և բարձրացաւ, ձգեաց զամենեսին առ ինքն և ժառանգեաց զազգս և իշխեաց ամենայն ծագաց երկրի:*

*Եւ բան նորա<sup>1</sup> փոքր էր յառաջագոյն և անարգ երևեր:*

*Աճեաց քան զամենայն բան, որ սերմանեալ էր ի մարդիկ և մեծացաւ յոյժ:*

159ա ԵՓ *Զի թագաւորեաց աւետարան նորա մինչև ի ծագս երկրի. // «Ընդ ամենայն երկիր ել բարբառ» (Յոռմ. Ժ 18) աւետեաց<sup>2</sup> նորա:*

*Եւ թռչունք երկնից բնակէին<sup>3</sup> յոստս նորա (ԺԳ 19):*

US *Հոգիք առաքելոց և մարգարէից և ամենայն սրբոց, յորս բնակեն թռչունք երկնաւորք: Եւ այնչափ զաւրացաւ, մինչ զաւրք «երկնից բնակեն յոստս նորա»: «Ոստ<sup>4</sup> նորա» թուի ինձ, որք մեծացան բանիւ նորա՝ առաքեալքն և նմանողք նոցա:*

ԵՓ *Թռչունք՝ հեթանոսք, աշխատեալք հանգչին<sup>5</sup> ի վերայ հաւատոց. «Եկայք առ իս ամենայն աշխատեալքտ» (Մատթ. ԺԱ 29):*

*Նման է արքայութիւն Աստուծոյ խմորոյ<sup>6</sup> (ԺԳ 21):*

ԵՓ *Որպէս խմոր ի զանգուած, նոյնպէս և մարմինն Քրիստոսի ի զանգուած տանն Ադամայ, կամ՝ վարդապետութիւն[ն] Քրիստոսի:*

*Առեալ կնոջ՝ թաքոյց ի գրիւս երիս<sup>7</sup> (ԺԳ 21):*

Ստ. (Եփ.) *Կին՝ հոգի մարդոյն:*

*Գրիւս երիս (ԺԳ 21):*

*Երեք մասունք հոգոյն՝ բանական, սրտմտական, ցանկական<sup>8</sup>: Երեք<sup>9</sup> մասունք ժամանակիս՝ անցեալն և առաջիկայս և հանդերձեալքն: Որ յերեք<sup>10</sup> ժամանակի յայսմիկ պահեսցէ յինքեան զվարդապետութիւնն Քրիստոսի, այնպիսին բոլոր զինքն լուսաւորեաց:*

<sup>1</sup> B բանն որ  
<sup>2</sup> B աւետարանաց  
<sup>3</sup> B բնակեալ էին  
<sup>4</sup> B ոստք  
<sup>5</sup> A հանկչին B հանգչէին  
<sup>6</sup> B Եւ դարձեալ ասէ. Ո՞ւմ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ: Նման է խմորոյ, գոր առեալ թաքոյց յալեր երից գրուաց, մինչև խմորեցաւ ամենայն (ԺԳ 20-21):  
<sup>7</sup> B չէք Առեալ... երիս  
<sup>8</sup> A ցանգական  
<sup>9</sup> B Եւ երեք  
<sup>10</sup> A, B ի յերեք

**ԵԼ չըջեր ընդ քաղաքս և ընդ գեղս<sup>1</sup>, ուսուցանէր** (ԺԳ 22):  
 ԻԳ *Ո՛չ կամէր, թէ զոք անտես արասցէ, այլ ամենայն ուրեք փու-  
 թայր հասանել, զի բարեգործեսցէ զամենեսին բանիւ և զաւրու-  
 թեամբ:*

**ԵԼ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ** (ԺԳ 22):

*Քանզի մերձ էր ժամանակ չարչարանացն, զոր պարտ էր յԵ-  
 րուսաղէմ կատարել ամենայն գրելոցն:*

**Ասէ ոմն ցնա. Տէ՛ր, սակաւք են<sup>2</sup>, որ ասլրելոց են<sup>3</sup>** (ԺԳ 23):

159բ *Ի նմանէ լուաւ նեղ լինել զուռնն և անծուկ ճանապարհն  
 (տե՛ս Մատթ. Է 14), որ տանի ի կեանսն: Եւ տարակուսեալ վասն այ-  
 նորիկ՝ հարցանէր, թերևս այլ ինչ ուսանիցի: // Որպէս և Պետրոս,  
 զի ասէր. «Իսկ ո՞ կարէ ասլրել<sup>4</sup>» (Մատթ. ԺԹ 25, Մարկ. Ժ 26): Եւ նա ա-  
 սէ<sup>5</sup>. «Ջանացարուք մտանել ընդ նեղ դուռն<sup>6</sup>» (ԺԳ 24): Իսկ Յիսուս  
 զնոյն դնէ առաջի, զոր միանգամ խաւսեցաւ առ նոսա, զի մի՛  
 վայրապար ոք համարեսցի զմուտ կենացն: Այլ մեծի ճգնութեան  
 և արեան չափ ջանալոյ պէտք է: Եւ զամենայն ինչ, որ յաշխար-  
 հիս է, ի բաց դնել և զանձն ևս կորուսանել, և ապա մտանել ի  
 կեանսն:*

**Ձի<sup>7</sup> բազումք խնդրեցին<sup>8</sup> մտանել, և ո՛չ կարացին<sup>9</sup>** (ԺԳ 24):

*Ձի մի՛ համարեսցին, թէ որպէս խնդրէ ոք և առնու: Ի սոսկ  
 խնդրելոյն ոչինչ վճարի<sup>10</sup>, այլ ամենայն ուստեք զսպել զինքն ի  
 ցանկութեանց, և ընդ քիրտն և ընդ ապոյթ<sup>11</sup> գալ և ընդդէմ բնու-  
 թեանս ոգորել, և ընդ արտաքինսն տալ պատերազմ: Ըստ այնմ,  
 եթէ՝ «Բազում նեղութեամբ պարտ է մտանել ի հանգիստն» (հմմտ.  
 Գործք ԺԴ 21):*

**Յորմէ հետէ մտցէ տանուտէրն և փակեսցէ զդուռնն: Եւ  
 սկսանիք բախել. Տէ՛ր,<sup>12</sup> բա՛ց և<sup>13</sup> մեզ** (ԺԳ 25):

<sup>1</sup> B գեաւղս

<sup>2</sup> B իցեն

<sup>3</sup> B իցեն

<sup>4</sup> B ասլրիլ

<sup>5</sup> B ասէ ցնոսա

<sup>6</sup> B *դրփիս* դուռն նեղ

<sup>7</sup> B Ասեմ ձեզ, զի

<sup>8</sup> B խնդրեսցեն

<sup>9</sup> B կարացեն

<sup>10</sup> B վճարէ

<sup>11</sup> B ասլաթութ

<sup>12</sup> B Տէր Տէր

<sup>13</sup> B *չիք* և



Եցոյց բանիւն զինքն Տէր բնաւիցս, սակայն<sup>1</sup> որոշեալ իւր ա[ր]քայուլթիւն զերկինս<sup>2</sup>, յորում ժողովէ զիւրսն, և, [ի] հասարակաց յատենի նստեալ, դատի իրաւամբք: Եւ յարուցեալ՝ տանի զոմանս յերկինս և ոմանց որոշէ զդրախտն: Եւ այնպէս փակեցան<sup>3</sup> դրունքն, որ այժմ ի բաց են ջանացողին: Եւ ո՛չ արգելու զնեղեալսն, որք փութան մտանել: Այլ այնժամ փակէ, զի չի՛ք անդ տեղի արտասուաց, թէև յովկիրանոսի չափ<sup>4</sup> հեղու, թէև վարիւք<sup>5</sup> հառաչանաւք բղխէ: Եւ է սա ասացեալ ամենայն ամ-

160ա պարշտաց, //եթէ «փակեցին դրունքն», այնուհետև բախելն վայրապար է:

Եւ ասիցէ<sup>6</sup>. Ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք (ԺԳ 25):

Եւ ահա գիտէ զնոսա: Քանզի յառաջագոյն խաւսից նոցա<sup>7</sup>, յայտ է, թէ գիտէ զնոսա: Սակայն իւր յարկացն արժանիս լինել ո՛չ գիտէ:

Յայնժամ սկսանիցէք<sup>8</sup> ասել. Կերաք առաջի քո և արբաք, և ի հրապարակս մեր ուսուցեր (ԺԳ 26):

Թուի, թէ նոքա էին, որ մերձ էին յայնժամ և լսէին զբան նորա, և ո՛չ ընծայէին նմա<sup>9</sup> իբրև Աստուծոյ և Որդոյ Աստուծոյ: Սակայն թշնամիք և պատերազմողք ո՛չ<sup>10</sup> էին, այլ մարգարէ համարէին: Եւ զոր լսէինն իբրև ի մարգարէէ և ո՛չ յԱստուծոյ, ունէին<sup>11</sup> բարեկամութիւն ընդ նմա իբրև ընդ մարդոյ: Եւ յայտնէ յայնցանէ, որ յետ յարութեանն հաւատացին ի նա և մի ի հրեշտակաց համարէին զնա՝ առ որս<sup>12</sup> գրէ Պաւղոս (տե՛ս Գաղատ. 7 14): Զի ուսցին զնա գոլ յԱստուծոյ և Աստուած կամ հաւատացին և գործս բարիս ո՛չ նուիրեցին: Վասն<sup>13</sup> այնորիկ տարագրին:

Ի հրապարակս ուսուցե[ր] (ԺԳ 26):

<sup>1</sup> Եւ սակայն աւր  
<sup>2</sup> Եւ զերկինս կոչէ  
<sup>3</sup> Եւ փակեցին  
<sup>4</sup> Եւ չափովն  
<sup>5</sup> Եւ կարի փխ վարիւք  
<sup>6</sup> Եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ  
<sup>7</sup> Եւ խաւսի ցնոսա  
<sup>8</sup> Եւ սկսանիջիք  
<sup>9</sup> Եւ սրբ.՝ նմա հաւատ  
<sup>10</sup> Եւ չիք ոչ  
<sup>11</sup> Եւ սրբ.՝ և այլք ունէին  
<sup>12</sup> Եւ որ  
<sup>13</sup> Եւ Եւ վասն

*Ձի ուսոյց և ո՛չ ուսան: Ըստ այնմ, եթէ՝ «Ես ո՛չ դատեմ<sup>1</sup> զոք, այլ Բանն, զոր խաւսեցայ, նա<sup>2</sup> դատի զնոսա» (հմմտ. Յովհ. ԺԲ 47-48):*

**Կերաք և արբաք առաջի քո** (ԺԳ 26):

*Կամ այն է, զի եկեր ընդ նոսա: Ձի ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէր և ըմպէր կամ ի լերին անդ կերան և արբին առաջի Աստուծոյ:*

**Ի<sup>3</sup> բաց կացէք յինէն ամենայն մշակդ անիրաւութեան** (ԺԳ 27):

*Ձի<sup>4</sup> մշակեցին ո՛չ զբարիս և զարդարութիւնս, այլ՝ զանաւրէնութիւն: Ուստի չի՛ք անդ գտանել հնար փրկութեան:*

**160ք // Անդ եղիցի լալ և կրճել ատամանց** (ԺԳ 28):

*Առ վտանգի ցաւոցն, զի մի կարծիցեն, թէ այնչափ միայն իցէ պատիժն, զի յառագաստէն ի բաց վարեալք տանիցին և ի գեհեանն<sup>5</sup> մատնեսցին:*

**Յորժամ տեսանիցէք<sup>6</sup>** (ԺԳ 28):

*Քանզի այն է արքայութիւն, յորժամ Երրորդութիւնն յերկիր իջանէ, և ամենայն բազմութիւնք հրեշտակաց տեսանին: Ո՛չ զայն ասէ, յորժամ վերանան և մտանեն յերկինս, քանզի զայն անհնար է մեղաւորաց տեսանել, այլ զայն, յորժամ արքայն երկնից յատեան նստից և ամենայն ազգ մարդկան անդ գումարին:*

**ՁԱբրահամ, զԻսահակ և զԱկոբ և զմարգարէսն<sup>7</sup>** (ԺԳ 28):

*Յայնժամ «տեսեալ» շինէին<sup>8</sup> դասք արդարոցն պայծառ քան զարեգակն, և զանձինս ձեր ողորմելիս «հանեալ արտաքս<sup>9</sup>» (ԺԳ 28), զոր տեսեալ ամպարիչտքն՝ և անհնարին սգով և անմխիթար տրտմութեամբ լցեալ լինէին: Ի դէպ ելանէ մեզ: Յետ այսքան խրատու դատապարտիմք, և զոր վասն այլոց կորստեան խաւ-*

<sup>1</sup> Բ դատիմ

<sup>2</sup> Բ չիք նա

<sup>3</sup> Բ Եւ ասիցէ. Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. ի

<sup>4</sup> Բ չիք զի

<sup>5</sup> Բ տանիցեն և ի գեհեանն

<sup>6</sup> Բ նախադասութեան տեղն ազատ է թողնված

<sup>7</sup> Բ Յորժամ տեսանիցէք զԱբրահամ և զԻսահակ և զՅակովբ և զամենայն մարգարէսն յարքայութեան Աստուծոյ, և զձեզ հանեալ արտաքս:

<sup>8</sup> Բ լինին

<sup>9</sup> Բ չիք հանեալ արտաքս

սիմք՝ անձամբք նմանեմք, հէքս և թշուառականս զանձինս<sup>1</sup> ո՛չ իմանամք:

**Եկեսցեն<sup>2</sup> յարևելից և յարևմտից, ի հիւսուսոյ, ի<sup>3</sup> հարաւոյ (ԺԳ 29):**

**Ոկ.** Քանզի բազում սքանչելիս եցոյց, ապա մեծ համարձակութեամբ բարբառի: Եւ նշանակ է զհեթանոսաց, որք յանկարծաբար հաւատացին ի Քրիստոս:

**161ա** Յարևելից՝ զմոզան է<sup>4</sup> իմանալ և յարևմտից, անխոնարհելի հաւատով և եռացեալ սիրով, զոր մարգարէն կանխաւ ասաց. «Ճանապարհ արարէք այնմ, որ նստի //ընդ արևմուտս. Տէր<sup>5</sup> է անուն նորա» (Սաղմ. ԿԷ 5):

**Եւ բազմեսցեն<sup>6</sup> յարքայութեանն Աստուծոյ (ԺԳ 29):**

Զգողն Աբրահամու արքայութիւնն ասէ՝ առ ի կսկծեցուցանելոյ<sup>7</sup> զնոսա: ԶԱբրահամ բերէ<sup>8</sup> ի մէջ և զարքայութիւն: Որպէս Յովհաննէս ասէր. «Ի քարանց<sup>9</sup> յարուցանել որդիս Աբրահամու» (Մատթ. Գ 9, Ղուկ. Գ 8):

**Իգ.** Զի ամենայն հեթանոսք ի չորից ծագաց երկրէ ժողովելոց են առ Աստուածն Աբրահամու:

**Եւ յետինք եղիցին առաջինք, և առաջինք՝ յետինք<sup>10</sup> (ԺԳ 30):**

**ՅՀ** Զայս թէպէտ խառնիխուռն վասն բազմաց ասէ, այլ վասն փարիսացոցն և դպրացն է իմանալ: Որպէս վերագոյն ասէր զոմանս լինել որդիս Աբրահամու և զորդիսն Աբրահամու ի բաց մերժել:

**ԻԳ** Զի յառաջագոյն ընտրեցան հրէայք և յետեալ գտան հեթանոսք: Իսկ ի գալ շնորհացս վերջացան հրէայք և մտին հեթանոսք՝ ճրի գտեալ փրկութիւն և վասն ողորմութեան փառաւոր առնել զԱստուած: Գրեաց մարգարէն զգուշանալ Իսրայելի. «Մի՛ տար<sup>11</sup>, ասէ, զփառս քո այլու՞մ և զաւգուտ<sup>12</sup> քո ազգի աւտարո-

<sup>1</sup> Ե զանձինս մեր

<sup>2</sup> Ե Եւ եկեսցեն

<sup>3</sup> Ե և ի հիւսւ[ս]ոյ և ի

<sup>4</sup> Ե չիք է

<sup>5</sup> Ե և Տէր

<sup>6</sup> Ե բազմեսցին

<sup>7</sup> Ե կսկծեցուցանել

<sup>8</sup> Ե էած

<sup>9</sup> Ե քարանցս յայսցանէ

<sup>10</sup> Ե Եւ ահա իցեն յետին, որ եղիցին առաջինք, և իցեն առաջինք, որ լինիցին յետինք:

<sup>11</sup> Ե տալ

<sup>12</sup> Ե զաւգուտն

տոյ» (Բարուք Դ 3): *Ընտրեաց Աստուած գհեթանոսս, զի նախանձաբեկ արասցէ զհրէայսն: Ըստ Մովսիսի՝ «Ազգաւ անմտաւ կսկծեցուցից զնոսա»* (Յռոմ. Ժ 19): *Եւ Պաւղոս՝ «Նախանձ արկից նոցա մարմնով իմով»* (Յռոմ. ԺԱ 14): *Այլ նոքա անձամբ զանձինս աւտարացուցին ի շնորհացն Աստուծոյ:*

Ի նմին աւուր մատեան ոմանք ի փարիսացոցն առ Յիսուս և ասեն. Ել գնա՛ աստի, քանզի կամի Հերով[վ]դէս սպան[անել]<sup>1</sup> (ԺԳ 31):

ԿՐ Վասնզի լցան նախանձու յաղազս զաւրութեանց և նշանացն, 161բ զոր առնէր: // Եւ երթայր ժողովուրդն զհետ նորա: Կամէին, զի գնասցէ ի նոցանէ: Եւ ի ձեռն Հերով[վ]դի<sup>2</sup> երկի[լ]դ ինչ մտերմաբար զգուշացուցանելով՝ առաջի արկանէին:

Իգ. Ի նմին աւուր, յորժամ զայնպիսի երկի[լ]դալից բանս առաջի եղ, յորմէ<sup>3</sup> զանգիտել պարտ էր նոցա և դողալ, նոքա խորհեցան հալածել զնա: Եւ իշխանութեամբ ո՛չ համարձակէին ի ժողովրդենէն, զի կախեալ էին զնմանէն: Եւ Հերովդէի չէին ինչ այնպիսի կամք, քանզի<sup>4</sup> ինքն իսկ Հերովդէս, լուեալ վասն սքանչելեացն զոր առնէր, ցանկայր տեսանել զնա, զի թէպէտև զՅովհաննէս գլխատեաց սակս յանդիմանութեանն<sup>5</sup>: Իսկ Յիսուս ո՛չ ետես զնա և ո՛չ բանս ինչ անարգանաց խաւսեցաւ ընդ նմա, քանզի Յիսուս կարի սքանչելի էր նշանաւք քան զՅովհաննէս: Եւ նոքա ո՛չ զգուշացուցանէին, այլ դաւաճանէին մեռանել, զի հեղձեալ ևս էին ի<sup>6</sup> նախանձու չարութեանն: Որպէս յայնժամ Ամասիայ քուրմն Բեթելայ՝ ասելով ցԱմովս տեսանող<sup>7</sup>. «Տուր տեղի, գնա՛ ի Հրէաստան, անդ մարգարէացիր: Ի Բեթել մի՛ մարգարէանար, քանզի տուն թագաւորաց է» (Ամովս Է 12-13): *Զայս ասելով՝ շարժէր զՐոբովամ<sup>8</sup> ի վրէժխնդրութիւն: Ասէ. «Ժողովուրդս կուտէ<sup>9</sup> ի վերայ քո, Ամովս, և երկիրս ո՛չ հանդարտ է»* (հմմտ. Ամովս Է 10-11), զի մերժեցեն զմարգարէն: Նոյնպէս և աստ:

<sup>1</sup> Բ Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսացիք և ասեն ցնա. Ել և գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ:

<sup>2</sup> Բ Հերովդէի

<sup>3</sup> Բ յորմէ և

<sup>4</sup> Բ վասնզի

<sup>5</sup> Բ սակայն վասն յանդիմանութեանն ոչ կամէր սպանանել զՅիսուս *փխ* սակս յանդիմանութեանն

<sup>6</sup> Բ *չէք* ի

<sup>7</sup> Բ առ Ամովս տեսանալ

<sup>8</sup> Բ զՐովբովամ

<sup>9</sup> Բ կուտի

Երթայք<sup>1</sup> ասացէք աղուեսունն այնմիկ. Ահաւասիկ դեւս հանեմ<sup>2</sup> և բժշկութիւնս կատար[եմ] (ԺԳ 32):

162ա Կր. Ի դէմս Հերո[վ]դէի առն[է] զպատասխանին, ուստի նոքա // զեկուցանէին զբանն և ծածկէին զանձանց իւրեանց նենգութիւնն: Վասն այնորիկ և առ Հերո[վ]դէս դարձուցանէ զբանն, որ իմանի առ նոցա խորամանկութեանն:

ԻԳ «Աղուես» ասէ վասն նենգութեան բարուց նոցա, այլև որպիսի ինչ բանք են՝ յայտնէ:

«Աղուես»՝ զբարս նենգութեան<sup>3</sup> մարդկան ցուցանէ:

Ահաւասիկ նշանս առնեմ<sup>4</sup> այսաւր և վաղիւն (հմմտ. ԺԳ 32):

ԿՐ «Այսաւր»՝ նախքան զաւանդելն զհոգին ի վերայ խաչին, իսկ «վաղիւն»՝ յորժամ մարդկային շնչովն էջ առ շունչս մեռելոց և զհաւատացեալսն փրկեաց:

ԻԳ Քանզի ամենայն տնաւրինականացն կատարումն էր Խաչն և Յարութիւնն: Քանզի նոքա զերկի[ւ]ղ մահու եղին առաջի, որով կամեցան մերժել զնա: Իսկ նա եցոյց, եթէ չէրկնչի ի մահուանէ, այլև կատարումն նորա չարչարանքն իսկ են<sup>5</sup>:

Եւ յերիւր աւուր<sup>6</sup> կատարիմ (ԺԳ 32):

Աւետարանել մարմնաւորացս և հոգոցն ի դժոխս: Եւ ապա արտաքս գոլով՝ ի գերեզմանէն յերկինս համբառնամ՝ զնալով ի ձէնջ որպէս ախորժէքդ:

Բայց պարտ է այսաւր և վաղիւն<sup>7</sup> և ի միւսում<sup>8</sup> աւուր զնալ (ԺԳ 33):

Ո՛չ ասէ ըստ ձերում խորհրդոցդ երկի[ւ]ղիւ ի բաց հրաժարեմ աստի սակս Հերո[վ]դէի<sup>9</sup> մինչև կատարեսցի, վասն որոյ առաքեցայ:

Կր. (ԻԳ.) Ըստ այնմ՝ «Մի՛ կա[յ]ր<sup>10</sup> հակառակ չարին» (Մատթ. Ե 39): Աշակերտացն ետ պատուէր. «Եթէ հալածեսցեն զձեզ ի քաղաքսս

<sup>1</sup> B Եւ ասէ ցնոսա. Երթայք

<sup>2</sup> B *դրփիս* հանեմ զդեւս

<sup>3</sup> B *չիք* նենգութեան

<sup>4</sup> B *չիք* ահաւասիկ նշանս առնեմ

<sup>5</sup> B էին

<sup>6</sup> B յաւուր

<sup>7</sup> A վաղիվն

<sup>8</sup> B միւսում

<sup>9</sup> B Հերովդէի

<sup>10</sup> B կալ

162բ յայսմանէ, փախիջի՛ք<sup>1</sup> յայլ» (Մատթ. Ժ 23): Նոյնպէս և ինքն ամենայն ուրեք, յորժամ գրգռէին հրէայքն, խոյս տայր: Էր ուրեք, զի կապէր զան(//)ճնիշխան կամս նոցա, մինչև եհաս ժամանակ կատարածին և տեղին, յորում սահմանեցաւ: Զի կատարեսցին, որ ինչ վասն նորա գրեցան<sup>2</sup>:

Զի ո՛չ է մարթ մարգարէի արտաքոյ<sup>3</sup> քան զԵրուսաղէմ կորնչել<sup>4</sup> (ԺԳ 33):

ԵՓ Այս իսկ է, զի ասէ. «Մի՛ իշխեր դու զենուլ<sup>5</sup> անխտիր զպատարագ զատկաց քոց, այլ ի տեղոջ<sup>6</sup>, ուր ընտրեսցէ<sup>7</sup> Տէր Աստուած քո բնակեցուցանել զանուն իւր անդ» (Բ Օր. ԺԶ 5-6): Եւ առաքեալ վկայէ. «Զատիկ մեր զենաւ Քրիստոս» (Ա Կորնթ. Ե 7): Աւրինակ ի մէջ Իսրայելի և ճշմարտութիւն ի ձեռն Քրիստոսի:

Երուսաղէմ, Երուսաղէմ (ԺԳ 34):

Կր. Զի՞նչ յայտ առնէ կրկնելովն: Ողորմելոյ<sup>8</sup> և եղուկ կոչելոյ կերպարանք են և կարևոր սիրոյ: Որպէս ոք ուրուք ցանկացեալ իցէ, ցանկ սիրեսցէ, և նա արհամարհիցէ, որ<sup>9</sup> սիրիցէ զնա: Վասն այնորիկ տանջելոց է: Այնուհետև իրաւունս դնել առաջի յառաջ քան զմերձենալ պատժոցն, որ գալոց էր ի վերայ նոցա: Զոր առ մարգարէիւքն յայտ առնէ. «Դարձ առ իս» (հմմտ. Սաղմ. ԻԲ 3, Եզեկ. ԺԴ 6) և ո՛չ դարձաւ: Վասն այնորիկ կոչեաց զնա յանուանէ և խաւսի թախանձանաւք ընդ Երուսաղէմի:

Որ կոտորէիր զմարգարէսն<sup>10</sup> և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ (ԺԳ 34):

ԻԳ Զանարժան զսպանութիւն կարգէ: Դնէ առաջի զմարգարէիցն մահն, զոր անխնայ<sup>11</sup> կոտորեցին:

Քանիցս անգամ կամեցար<sup>12</sup> ժողովել զմանկունս<sup>13</sup> քո (ԺԳ 34):

<sup>1</sup> B փախեսջիք

<sup>2</sup> B գրեցաւ

<sup>3</sup> B կորնչել արտաքոյ

<sup>4</sup> B չէք կորնչել

<sup>5</sup> A զենուր

<sup>6</sup> B տեղոջ

<sup>7</sup> A ընդրեսցէ

<sup>8</sup> A ողորմելի

<sup>9</sup> B գնա որ

<sup>10</sup> B զմարգարէս

<sup>11</sup> A յանխնայ

<sup>12</sup> B կամեցայ

<sup>13</sup> B զորդիս

Այսու<sup>1</sup> վասն անձինն տայ իրաւունս, թէ այսպիսի իրաւք ո՛չ դարձար, ո՛չ մի անգամ և երկիրցս, այլև բազում անգամ կամեցար<sup>2</sup>: Այն իսկ է, զի ասէ. «Այս երեք ամբ են, զի դամ խնդրել  
163ա պտուղ ի թղենոյդ<sup>3</sup> և ո՛չ գտանեմ» (ԺԳ 7)՝ //մեծաւ գթով և խնամակալութեամբ, և դուք ցրուեցէք զանձինս ձեր:

Որպէս հաւ գձագս<sup>4</sup> (ԺԳ 34):

ՈԿ Յաւրինակէն ցուցանէ զխնամս գթոյն, քանզի կարի ջերմ է թռչունն այն առ որդիսն: Եւ մարգարէքն ամենայն ուրեք ի թռչնոց բերէին աւրինակ: Եւ յաւրհանութիւնսն Մովսէս<sup>5</sup> տարածեաց զթևս իւր, ընկալաւ<sup>6</sup> զնա<sup>7</sup>: Եւ ի սաղմոսն զկարի գուլթ<sup>8</sup> և զխնամսն և զհովանի ունել<sup>9</sup> թռչնոյն<sup>10</sup> նմանեցուցանէ (տե՛ս Սաղմ. ԺԶ 9, Լե 8, ԾԶ 2, Կ 5, ԿԲ 8, Ղ 4):

Թողեալ լից[ի] տունս ձեր աւերակ<sup>11</sup> (ԺԳ 35):

Մերկ յիմէ աւգնականութենէ: Ապա ուրեմն նա էր, որ վերակացու լինէր նոցա և ունէր և յանձանձեր:

Ո՛չ<sup>12</sup> ևս տեսանիցէք զիս մինչև ասիցէք. Աւրհանեալ եկեալ<sup>13</sup> յանուն Տեառն (ԺԳ 35):

Եւ այս յոյժ սիրելոյն բանք են, որ ի հանդերձելոյն<sup>14</sup> փութայ ածել զնոսս զիւրեաւ: Զի աստ զհանդերձեալ աւրէն ասէ Մատթէոս զերկրորդ գալստենէն (տե՛ս Սատթ. ԺԹ 28), իսկ Ղուկաս զայն<sup>15</sup> ժամանակէ, որ մինչև ցիւսչն: Բայց այսու և զՅարութենէն ալնարկէ և զԵրկրորդ Գալստենէն և զկարի անհաւատից գուշակէ, որք յայնժամ<sup>16</sup> երկիր պագանելոց էին նմա:

<sup>1</sup> A ու տառը վնասված է

<sup>2</sup> B կամեցայ

<sup>3</sup> B թղենոյս

<sup>4</sup> B գձագս իւր ընդ թևովք, և ոչ կամեցարուք:

<sup>5</sup> B Մովսէսի

<sup>6</sup> B սրբ. և ընկալաւ

<sup>7</sup> B զնոսս

<sup>8</sup> B կարի գուլթ

<sup>9</sup> B ունելն

<sup>10</sup> B թռչնոց

<sup>11</sup> B Ահա թողեալ լիցի ձեզ տունդ:

<sup>12</sup> B Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ

<sup>13</sup> B եկեալն

<sup>14</sup> B հանդերձելոց

<sup>15</sup> B յայնմ

<sup>16</sup> A, B ի յայնժամ

## Գլուխ ԺԳ

Եւ ի մտանել նորա ի տուն ուրեմն յիշխանաց փարիսացոցն ուտել հաց ի շաբաթու<sup>1</sup> (ԺԴ 1):

ԻԳ Թէպէտ առնէին նմա ընդունելութիւն փարիսացիքն, այլ ո՛չ կատարեալ սիրով որպէս Սիմոնն, որ աղաչէր. «Զի կերիցէ ճաշ ընդ նմա» (Է 36, ԺԱ 37), և վասն կնոջն մեղաւորի, որ մերձեցաւ յոտսն Յիսուսի, գայթազդէր (տե՛ս Է 37-38), և միւս փարիսացիին, որ կոչեաց զնա. // «Եւ<sup>2</sup> զի Յիսուս ո՛չ մկրտեցաւ» (ԺԱ 38): Տկարանայր փարիսացիին, որ յանդիմանեաց բազում բանիւք: Այսպէս կոչեմ<sup>3</sup> բարեկամաբար (հմմտ. ԺԴ 10):

Եւ նոքա սպասէին նմա (ԺԴ 1):

Սպասեն պատճառս հակառակութեան գտանել, որպէս զայրն, որ<sup>4</sup> ձեռնն գաւսացեալ էր, առաջի կացուցին և սպասէին, եթէ բժշկեսցէ ի շաբաթու, զի չարախաւսեսցեն զնմանէ (հմմտ. Մատթ. ԺԲ 10):

Էր անդ այր մի<sup>5</sup> ջրգողեալ առաջի նորա (ԺԴ 2):

Նոքա գիտէին զՅիսուս, զի կամս բարիս ունէր առ աղքատս և առ ախտացեալս: Եւ անտես ո՛չ առնէր զայրն, վասն այնորիկ սպասէին:

Եւ Յիսուս ասէ ցաւրինաւորսն և ցփարիսացիսն. Արժա՞ն իցէ ի շաբաթու բժշկել: Եւ նոքա լուեցին<sup>6</sup> (ԺԴ 3-4):

Այլ նա, որ գիտէ<sup>7</sup> զխորհուրդս մարդկան<sup>8</sup>, կանխաւ ունի զլեզուս նոցա: Որպէս անդ ասէր. «Զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞ ինչ անել, եթէ՞ չար գործել» (Ձ 9, Մարկ. Գ 4): Եւ անդ պատասխանի արար նոցա, և ապա զառողջութիւն ախտացելոյն<sup>9</sup> շնորհեաց: Նոյնպէս և աստ առնէ: Նախ՝ հարցանէ, թէ «արժան է ի շաբաթու բժշկել», եթէ՞ ոչ: Եւ իբրև ո՛չ գոյր նոցա պատասխանի առ այն,

<sup>1</sup> Եւ եղև ի մտանել նորա ի տուն ուրեմն յիշխանացն փարիսացոց ի շաբաթու ուտել հաց, և նոքա սպասէին նմա:

<sup>2</sup> Եւ չէք եւ

<sup>3</sup> Եւ կոչեն

<sup>4</sup> Եւ որոյ

<sup>5</sup> Եւ ևս այր ոմն էր անդ

<sup>6</sup> Եւ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցաւրինաւորս և ցփարիսացիս, եթէ՞ Արժան իցէ ի շաբաթու բժշկել: Եւ նոքա լուև եղեն:

<sup>7</sup> Եւ գիտէր

<sup>8</sup> Եւ նոցա

<sup>9</sup> Եւ ախտացելոցն



«նոքա լուսին»։ Զի յորժամ վերին իմաստութիւնն խաւսի<sup>1</sup>, խափանեալ իմաստութիւնս<sup>2</sup> այս զիա՞րդ կարէ արդարանալ։

Բուռն<sup>3</sup> հարեալ զնմանէ՝ բժշկեաց<sup>4</sup> (ԺԴ 4)։

Ո՛չ ժամանակի կարաւտացաւ<sup>5</sup> և ո՛չ դեղոյ, այլ առժամայն բանիւ տուեալ զառողջութիւնն, զի նա ասաց և եղև, հրամայեաց և հաստատ[եցաւ]։

Եւ արձակեաց զնա զնալ (ԺԴ 4)։

164ա Որ նախքան զայն կարի // ծանրացեալ էր ախտիւն և պակասեալ ի գնալոյ։

Եւ ասէ ցնոսա. Ո՞յր ուրեք<sup>6</sup> էչ կամ եզն անկանիցի ի ջրհոր, ո՛չ<sup>7</sup> վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ո՛չ կարացին տալ պատասխանի առ այն (ԺԴ 5-6)։

Փարիսեցիքն<sup>8</sup> ոչինչ համարձակեցան խաւսել, բայց նա՞<sup>9</sup> տակաւին և վկայս անձին իւրոյ<sup>10</sup> ի գրոց կացուցանէր, զի մի՛ բնաւ ի միասին ունիցին ասել։

Ասէ ցնոսա. Յորժամ կոչեսցիս ի կոչունս, մի՛ բազմեսցիս յառաջին բարձին<sup>11</sup> (ԺԴ 8)։

ԻԳ Կրթէ զմեզ մեծաւ խնամով ի խոնարհութիւն։ Ո՛չ միայն անտի<sup>12</sup> հատուցմանն, այլև ի մերձակայիս ցուցանէ զփառասիրութիւնն դժուարին իրք, իսկ զխոնարհութիւնն՝ հեշտալիք։ Զայս աւրինակ բանից յամենայն իրս իբրև զաւգտակարս դնէ, որպէս ասաց. «Լե՛ր իրաւախորհ ընդ ոսոխին<sup>13</sup> քում՝ զերծանել<sup>14</sup> ի նմանէ, զի մի՛ մատնեսցիս դատաւորին» (հմմտ. Մատթ. Ե 25)։ Այսպէս կարևոր համարի ո՛չ միայն գեհենին երկի[ւ]ղիւն<sup>15</sup> զարհուրեցու-

---

<sup>1</sup> Բ **չիք** խաւսի  
<sup>2</sup> Բ իմաստուաւտութիւնս  
<sup>3</sup> Բ Եւ բուռն  
<sup>4</sup> Բ բժշկեաց զնա  
<sup>5</sup> Բ կարաւտեցաւ  
<sup>6</sup> Բ ուրուք ի ձէնջ  
<sup>7</sup> Բ և ոչ  
<sup>8</sup> Բ պատասխանի փարիսեցիքն։ Առ այն **փխ** առ այն։ փարիսեցիքն  
<sup>9</sup> Բ գնոսա  
<sup>10</sup> Բ իւր  
<sup>11</sup> Բ Ասաց և առ կոչնականսն առակ մի հայեցեալ, թէ զիա՞րդ բարձ ընտիր լինէին, ասէ ցնոսա. Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչմունս։  
<sup>12</sup> Բ սրբ.՝ վասն անտի  
<sup>13</sup> Բ ոսոխի  
<sup>14</sup> Բ զերծանել  
<sup>15</sup> Բ զերկեղիւն

ցանել, այլև աստի ամալթովն, զի են, որքան յայն կենացն վրիպեալ<sup>1</sup>, յաստեացս առաւել զարհուրին: Յիսուս ինքն է կոչաւղ փեսայ<sup>2</sup> մաքուր և անախտ<sup>3</sup> հարսանիս և առաջաստ ուրախութեան երկինք<sup>4</sup>, յորում<sup>5</sup> ժողովէ ի ձեռն հաւատոցն կոչման՝ քարոզութեամբ առաքելոցն:

Մի՛ բազմիցիս յառաջին բարձին<sup>6</sup> (ԺՂ 8):

164բ Ընդ թանձրամիտսն խաւսի մի՛ անմտութեամբն զառաջին աթոռսն ինդրել, զի մի՛ ամալթով զվերջինն ընկալցիս: Խրատէ // մի՛ անձամբ զանձն յառաջ մատուցանել յաշտիճան ինչ բարձրագոյն: Որպէս զայնոսիկ, որ պարսաւեալ են ի գրոց, որ մղին առ սեղանն և ո՛չ անսան Աստուծոյ ընտրութեանն<sup>7</sup>՝ կոչողին շնորհելոյ զպատիւն: Որպէս ճանաչէ այն, որ զանյայտսն տեսանէ, զի լիցի կոչողին փառաւք պատուասիրութեամբ:

Այլ յորժամ կոչեսցիս, բազմեսջիր յետին տեղոջ: Եւ այն, որ կոչեսցն զքեզ, ասիցէ. Բարեկա՛մ, ի վեր մատիր: Եւ եղիցի քեզ փառք առաջի բարձակցացն քոց<sup>8</sup> (ԺՂ 10):

Ձի իւրեանց ախտիւն զրգեալք՝ ուսցին զխոնարհարութիւն: Եթէ ո՛չ վասն աստուածային փառացն, գոնեայ վասն մարդկան փառացն պարտ էր խոնարհել: Ձի կարի չար է փառասիրութեան ախտն, յամբարտաւանութիւն<sup>9</sup> և յոխակալութիւն, և ի նախանձ ըմբռնեալ արկանեն զհոգին: Ձի այլ յանցանք թէպէտև ապականիչ են ոգոց<sup>10</sup>, սակայն զգայութիւնքն հեշտանան փոքր ինչ: Իսկ սոքա զոգիսն<sup>11</sup> հանդերձ մարմնովն հաշեն<sup>12</sup> և թշնամի և ատելի մանեցեցունց առնեն: Վասն որոյ Տէրն երանէ զաղքատս և զհեզս և զսգաւորս (հմմտ. Մատթ. Ե 3-5), զի այնպիսիքն յայսպիսեաց ախտից ազատեն և ի մարմնի խաղաղ կեանս ունին՝ և առանց ամբո-

<sup>1</sup> B վրիպեալք

<sup>2</sup> B և փեսայ

<sup>3</sup> A անաղտ

<sup>4</sup> B ուրախութիւնն երկնայինք

<sup>5</sup> B յորժամ

<sup>6</sup> B բարձին, գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեսցալն ի նմանէ, և եկեալ որ զքեզն և զնա կոչեսց, ասիցէ ցքեզ. Տուր սմա տեղի: Եւ ապա սկսանիցիս ամալթով զյետին տեղին ունել (ԺՂ 8-9)

<sup>7</sup> A ընտրութեանն

<sup>8</sup> B Այլ յորժամ կոչեսցիս, երթիջիր, բազմեսջիր ի յետին տեղոջ, զի յորժամ գայցէ, որ կոչեսցն զքեզ, ասիցէ ցքեզ. Բարեկա՛մ, ի վեր մատիր: Յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց:

<sup>9</sup> A յամբարտաւանութիւն

<sup>10</sup> B հոգւոց

<sup>11</sup> B զհոգիս

<sup>12</sup> B հալեն

խելոյ, և սիրելիք ամենեցունց, և Աստուծոյ բարեացն արժանա-  
ւորք: Իսկ փառասէրք և ամբարտաւանք<sup>1</sup> անտ<sup>2</sup>, յամենեսին<sup>3</sup> ա-  
տելի[ս] և անպատուադիրս, և աստ պարսաւեալք են և ի հան-  
դերձեալսն յԱստուծոյ անարգեալք<sup>4</sup> և խաւարի ժառանգորդք:

165ա // **Զի ամենայն, որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրա[սցի]** (ԺԴ  
11):

**ՍՏ** Իսկ որ զինքն խոնարհեցուցանէ կամաւորութեամբ, նա բարձ-  
րասցի: Իսկ որ ի տնանկութեան է<sup>5</sup>, խոնարհի և տառապի, կամ ի  
նախատանաց ուրուք, այսոքիկ<sup>6</sup> ո՛չ է<sup>7</sup> խոնարհութիւն: Բայց  
Քրիստոս հրամայէ ինքն զինքն խոնարհեցուցանել յուժարու-  
թեամբ, որպէս ինքն կամաւորութեամբ խոնարհեցաւ:

Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի<sup>8</sup> (ԺԴ 11):

Իգ. Իսկ որ աստ գոն գործել<sup>9</sup> յարգել զանձինս, յայնմ ատենին<sup>10</sup>  
յետեալ գտանին: Եւ կորացեալ ամաչեսցեն, զի զսնոտիս<sup>11</sup> բարձ-  
րութիւն խնդրեցին և ո՛չ աստուածայնոցն բաղձացան:

Ասէ ցկոչնատէրն. Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կո-  
չեր զբարեկամս և զեղբարս և զազգականս քո<sup>12</sup> (ԺԴ 12):

Մի՛ բնաւ զոք կոչել ի փարթամաց կամ ի բարեկամաց, զի ու-  
նին նոքա հատուցանել հաւասար չափով<sup>13</sup>: Եւ յԱստուծոյ և ո՛չ  
մի ինչ հատուցումն լինի քեզ: Որպէս ասաց Քրիստոս. «Մեղա-  
ւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն զկշիռն» (Ձ 34):

Այլ<sup>14</sup> դու կոչես՝ զաղքատս և զամենայն կաղս և զկոյրս, որոց  
ո՛չ է տալ այժմն փոխարէն: Եւ յայնժամ երանելի ես (ԺԴ 13-14):

<sup>1</sup> A ամպարտաւանք  
<sup>2</sup> B սրբ.՝ զհպարտսն *փի* փառասէրք... անտ  
<sup>3</sup> B զամենեսեան  
<sup>4</sup> B անարգեալ  
<sup>5</sup> B տնանկութենէ  
<sup>6</sup> B սրբ.՝ և այսոքիկ  
<sup>7</sup> B կոչին *փի* ոչ է  
<sup>8</sup> B Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհասցի, և որ խոնարհեցուցանէ  
զանձն՝ բարձրասցի:  
<sup>9</sup> B գուն գործէ  
<sup>10</sup> B ատենէն  
<sup>11</sup> B սնոտի  
<sup>12</sup> B Ասէ և ցկոչնատէրն. Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս  
և քո և մի զեղբարս քո և մի զազգականս քո և մի՛ զըրացիս քո և մի՛ զմեծամեծս, զի  
մի՛ և նոքա փոխարէն կոչիցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն:  
<sup>13</sup> B *չիք* Մի բնաւ զոք... չափով  
<sup>14</sup> B Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչես՝ զաղքատս և զխեղրս և զկաղս և

Զի զԱստուած<sup>1</sup> ունիս պարտական, և հատուցանէ քեզ բազմապատիկ յարքայութեանն<sup>2</sup> արդարոց:

Իբրև լուաւ զայս ոմն ի բազմականացն, ասէ<sup>3</sup>. Երանի, որ կերիցէ ճաշ յարքայութեանն<sup>4</sup> Աստուծոյ<sup>5</sup> (ԺԴ 15):

Բաղձացաւ բարեաց, ո՛չ իմանալեաց իրացն բնութեան, այլ մարմնապէս իմանայր զհատուցումն արդարոց: Որպէս սաղուկեցիքն ասեն. «Ի յարութեանն ո՞ւմ լինիցի կին» (Մատթ. ԻԲ 28, 165բ Մարկ. ԺԲ 23): Նոյն(//)պէս և այլս այս կարծեաց մարմնոյ հեշտացուցիչ կերակուր: Իսկ Յիսուս ո՛չ սաստեաց, զի տգիտութեամբ և ո՛չ չարութեամբ խաւսեցաւ:

Այր<sup>6</sup> ոմն գործեաց ընթրիս, հրաւիրեաց [զբազումս] (ԺԴ 16):  
ԿՐ «Այր» զինքն անուանէ Տէրն, և «ընթրիս»՝ զժամանակս<sup>7</sup> խաչին, յորժամ բաշխէր զմարմին և զարիւնն իւր: Իսկ ընդէ՞ր ընթրիս ասաց և ո՛չ ճաշ: Վասնզի յետին ժամանակս եկն ի մերձեալ<sup>8</sup> կատարածի:

Եւ առաքեաց զծառայս իւր ի ժամու ընթրեացն<sup>9</sup> (ԺԴ 17):  
ՍՏ Ծառայ կոչէ զՄովսէս և զմարգարէքն:  
Ծառայ<sup>10</sup>՝ Քրիստոս[ի], վասնզի ի կոչումն և ի փրկութիւն ամենեցուն<sup>11</sup> ծառայեաց Հաւր՝ զծառայի զկերպարանս առեալ, և եկեալ ո՛չ ի սպասաւորիլ, այլ ի սպասաւորել բազմաց (հմմտ. Մարկ. Ժ 45): Եւ «Ես, ասէ, ի մէջ ձեր եմ, ո՛չ բազմեալ, այլ սպասաւոր» (հմմտ. ԻԲ 27):

Կոչել<sup>12</sup> զհրաւիրեալսն (ԺԴ 17):  
ԿՐ Զառաքեալսն, որք բազում խնամով ելին կոչել յեկեղեցի Աստուծոյ, որ բաշխի<sup>13</sup> մարմին[ն] և արիւնն կենսաբեր:

զկոյրս, և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ և հատուցի քեզ փոխարէն ի յարքայութիւն արդարոց: Այլ

<sup>1</sup> A բառն առանց պատվանշանի է

<sup>2</sup> B յարքայութիւնն

<sup>3</sup> B ասէ ցնա

<sup>4</sup> B յարքայութեան

<sup>5</sup> B երկնից ~~փի~~ Աստուծոյ

<sup>6</sup> B Եւ նա ասէ. Այր

<sup>7</sup> B զժամանակ

<sup>8</sup> B մերձեալ

<sup>9</sup> B ընթրեացն կոչել զհրաւիրեալսն, թէ՛ Եկայք:

<sup>10</sup> A բառափերջի այ-ին ունի պատվանշան (միգուցէ՝ ծառ[այ] Աստուծոյ Քրիստոս<sup>o</sup>)

<sup>11</sup> A ծամենեցուն

<sup>12</sup> B կոչեալ

<sup>13</sup> A բաշխի ի

Պատրաստեա՞ւ՝ ամենայն ինչ (ԺԴ 17):

**ՍՏ** Սեղան իմաստութեան և գիտութեան աստուածայնոյ:

Սկսան հրաժարել ամենեքին մի ըստ միողէ՞ (ԺԴ 18):

Ջաշխարհասիրացն և զմարմնասիրացն ասէ, որք ո՛չ հետևեցին աւետարանական քարոզութեանն, որք են հրէայքն:

**ԻՊ** Նոքա, յուլացեալ և կապեալ աշխարհի ցանկութեամբ, վերջացան գալ զհետ կոչողին՝: Եւ իւրաքանչիւր զիւրն դնէ առաջի, որով ըմբռնեցաւ ի պատճառս մեղացն:

Առաջինն ասէ. Ագարակ գնեցի՞ (ԺԴ 18):

**ՍՏ** Ո՛չ կամեցան գալ որք ուսան, զի գնեցին ագարակս՝ աղանդ[ս] աւտարս յաստուածպաշտութենէ: Այնպիսին հարկաւորի ելանել և տեսանել զագարակն, //այսինքն՝ փորձիւ քննել զաղանդն հաւատոյն, զոր ստացաւ:

166ա

Միւսն ասաց՞. Լուծս հինգս եզանց գնեցի և երթամ փորձել՞ (ԺԴ 19):

**Ստ.** Թողեալ զիմանալի և [զ]մտաւոր խորհուրդս բարիս, որով Աստուած փառաւորի ի խորհուրդս սրբոց իւրոց, և միայն մարմնեղէն հինգ՞ զգալութեամբքս՝ իմաստասիրէ գերկրաւորս:

**Իգ.** Թերևս՝ ամենայն զգալարանաւք շողախեալ:

Եւ այլն՞. Կին ածի, վասն՞ այնորիկ ո՛չ կարաց՞ գալ (ԺԴ 20):

**Ստ. (Իգ.)** Ո՛չ զուգեցաւ ընդ իմանալի և ընդ հոգեւոր իմաստութեանն, այլ յաշխարհիս այսորիկ ի զբաղումն ցանկութեան:

**ԻՊ** Ի՞նչ սէր կանանց՞ հարեալ՝ ո՛չ կամեցան անսալ կոչողին:

Եւ եկեալ ծառայն՞ պատմեաց՞ տեառն իւր[ում] (ԺԴ 21):

<sup>1</sup> B Զի ահաւասիկ պատրաստ է  
<sup>2</sup> B Եւ սկսան մի ըստ միողէ ամենեքեան հրաժարել:  
<sup>3</sup> B A կոչաւողին  
<sup>4</sup> B գնեցի, և հարկ է ելանել տեսանել զնա. աղաչեմ զքեզ կալ զիս հրաժարեալ:  
<sup>5</sup> B զագարակս այսինքն  
<sup>6</sup> B Եւ միւսն ասէ  
<sup>7</sup> B փորձել զնոսա, աղաչեմ զքեզ կալ զիս հրաժարեալ  
<sup>8</sup> B տեղն ազատ թողած  
<sup>9</sup> B զգալութեամբս  
<sup>10</sup> B այլն ասէ  
<sup>11</sup> B և վասն  
<sup>12</sup> B կարեմ  
<sup>13</sup> B սրբ.՝ և ի  
<sup>14</sup> B կամացն *փի* կանանց  
<sup>15</sup> A ծառայքն  
<sup>16</sup> B պատմեաց զայն

**ՍՏ** Պատմէ զհրաժարումն հրէիցն ի փրկութենէն Քրիստոսի աստուածային<sup>1</sup>:

**ԻԳ** Չարացան<sup>2</sup> անհաւատութեամբ: Անարգանս և մահս տանջանաւք հասուցանէին ի վերայ նոցա, որք կոչէին զնոսա յարքայութիւն և ի փառսն Աստուծոյ:

Ապա բարկացեալ տէրն ասէ. Ելէք ի հրապարակս<sup>3</sup> (ԺԴ 21):

Յազգս հեթանոսաց, որ ո՛չ էին գնացեալ ի շաւեղս<sup>4</sup> պատուիրանաց[ն]:

**ԿՐ.** Որք ընդարձակ ճանապարհ գնային՝ վարելով զկեանս իւրեանց առանց վարդապետութեան հաւատոց<sup>5</sup>:

Փողոցս (ԺԴ 21):

**Ստ.** Որ երիւրեալ կարծէին զչարութեան գնացս իւրեանց:

Քաղաք (ԺԴ 21):

Երկրաւոր աշխարհս:

Զաղքատս<sup>6</sup> (ԺԴ 21):

**ԻԳ** Զաղքատացեալս յաստուածային<sup>7</sup> ճոխ աստուածպաշտութեանցն, զաղքատացեալսն ի շնորհաց Սուրբ Հոգոյն և ի հայրենի փառացն:

Կաղս (ԺԴ 21):

**ԿՐ.** Զհեթանոսս<sup>8</sup>, որք խեղ<sup>9</sup> էին հոգով ըստ կռապաշտութեանցն և բիւր<sup>10</sup> չարեացն:

**ՍՏ** «Կաղս», որք ո՛չ գնան ընդ ճշմարիտ իմաստութիւնն<sup>11</sup> և ընդ ճանապարհս արդարութեան:

Զկոյրս<sup>12</sup> մոյծ այսր (ԺԴ 21):

Յիմարս աշխարհիս<sup>13</sup>:

<sup>1</sup> A բառն առանց պատվանշանի է B Աստուծոյ մերոյ

<sup>2</sup> B Իսկ այլք չարացան

<sup>3</sup> B Յայնժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր. Ել վաղվաղակի ի հրապարակս և ի փողոցս քաղաքիդ:

<sup>4</sup> B շաւեղս

<sup>5</sup> B հաւատոյ

<sup>6</sup> B Եւ գաղքատս

<sup>7</sup> A բառն առանց պատվանշանի է

<sup>8</sup> B զհեթանոսս ասէ

<sup>9</sup> B խեղ և կաղ

<sup>10</sup> B ի բիւր

<sup>11</sup> B իմաստութեանն

<sup>12</sup> B Եւ վկոյրս

<sup>13</sup> B սրբ.՝ զՅիմարս աշխարհիս

166բ ԻԳ // Զկուրացեալսն ի լուսոյ գիտութենէ<sup>1</sup> Աստուծոյ:

Ասաց տէրն. Եւ ի ճանապարհս և արա՛ մտանել, զի լցցի տուն իմ<sup>2</sup> (ԺԴ 23):

ԿՐ Տուն՝ աշխարհ<sup>3</sup> հաւատացելոց, ընթրիս առակեաց: Վասն որոյ և ասաց. «Երանի, որ կերիցէ ճաշ յարքայութեանն<sup>4</sup> Աստուծոյ<sup>5</sup>» (ԺԴ 15):

ՍՏ Հրամայէ կոչել զայնոսիկ, որք արտաքոյ քաղաքին են: Կարծեմ, թէ որք ի դժոխս<sup>6</sup> արգելեալք էին՝ հոգիք սրբոցն, զորս<sup>7</sup> ազատեաց Քրիստոս իւր իջմամբն ի դժոխս: Կամ յամպարչտաց<sup>8</sup> չար ճանապարհաց այսպէս դիւրալուր հեթանոսք կատարեն զհրամանն՝ նուիրելով<sup>9</sup> զանձինս փոխանակ տանն Յակոբայ, որ խոտորեցան ամենայն հեթանոսք ի չորից ծագաց երկրի<sup>10</sup> եկեալ լցին զարքայութիւնն Աստուծոյ:

Ասէ<sup>11</sup>. Ո՛չ ոք յայնց կոչեցելոց ճաշեսցէ յ[ը]նթրեաց իմոց (ԺԴ 24):

ԻԳ Սպառնայ անհաւատիցն, զի մի՛ ի ձև կերպարանաց առակիս հայելով՝ կարծիցի<sup>12</sup> դիւրիւն կոչունք<sup>13</sup> հարսանեաց յատուկ, այլ<sup>14</sup> գիտասցեն ծանր և տաժանելի: Վասնզի խաչեալ է փեսայն, և մանկունք հարսանեացն սպանեալ են, և որդիք առագաստին՝ կոտորեալք, և հրաւիրակքն<sup>15</sup>՝ արեամբ: Եւ խաչիւ կոչեն քարկոծեալք<sup>16</sup> և խո[ղ]խողեալ կոչեցեալքն, և արեամբ թաւթաւեալ<sup>17</sup> են հանդերձք նոցա հարսանեացն:

---

<sup>1</sup> B և ի գիտութենէ  
<sup>2</sup> B Եւ ասէ ծառայն. Տէ՛ր, եղև զոր հրամայեցերն, և կայ ևս տեղի: Եւ ասէ տէրն ցծառայն. Եւ ի ճանապարհս և ի ցանգս, և արա՛ այսր մտանել, զի լցցի տունս իմ (ԺԴ 22-23):  
<sup>3</sup> B աշխարհս  
<sup>4</sup> B յարքայութեան  
<sup>5</sup> B երկնից  
<sup>6</sup> A դժոխս  
<sup>7</sup> B չէք զորս  
<sup>8</sup> B ամպարչտաց  
<sup>9</sup> B նուիրել  
<sup>10</sup> B երկրէ  
<sup>11</sup> B Ասեմ ձեզ, զի *փխ* ասէ  
<sup>12</sup> B կարծիցէ  
<sup>13</sup> B զայն և կոչմունք  
<sup>14</sup> B այլ  
<sup>15</sup> B չէք հրաւիրակքն  
<sup>16</sup> B խաչիւ կոչի հրաւիրակքն: Քարկոծեալ են կոչողքն  
<sup>17</sup> B թաթաւեալ

Դարձեալ ասէ ցնոսա. Եթէ ոք գայ առ իս և ո՛չ ասէ զհայր կամ զմայր<sup>1</sup> (ԺՂ 26):

- US *Զիա՞րդ, որ զթշնամիսն սիրել<sup>2</sup> հրամայեաց, աստ ատել հրամայէ զհայր և զմայր, զեղբարս և զքորս, զկին և զորդի[ս] և զանձինս: Արդ՝ որպէս ինձ թուի յորդորէ յայս որպէս Մատթէոս ասէ. «Եթէ ոք սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ո՛չ է ինձ արժանի» (Մատթ. Ժ 37): Այլ առաւելագոյն սիրով և անքակ[տ]ելի 167ա մտաւք սիրեսցէ զԱստուած, // և ապա՝ զհայր և զմայր, զկին և զորդիս: Զի սոցա սէրս, որ առ իմ սիրովն<sup>3</sup> է, մեղմագոյն երևեսցի և իբր զատելութիւն թուեսցի:*

Ուրասցի<sup>4</sup> զանձն, ո՛չ կարէ իմ աշակերտ լի[նել] (ԺՂ 26):

- US *Որպէս թէ այլոյ մարմին տանջի, այնպէս սրտառուչ լինի: Եւ, որ մերկանայ զՀին մարդն, զինքն ուրասցի՝ ասելով. «Կենդանի եմ ես, ո՛չ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» (Գաղատ. Բ 20)՝ այնու ո՛չինչ գործելով արտաքոյ կամացն Աստուծոյ:*

Եւ<sup>5</sup>, որ ո՛չ բառնայ զխաչն<sup>6</sup> և գայ զկնի<sup>7</sup> իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լին[ել] (ԺՂ 27):

- ԿՐ *Զնախատանաց<sup>8</sup> մահուանէ յայտ արար զխաչ յուս եդեալ՝ միշտ ընդ իւր շրջեցուցանել:*

- Ստ. *Ըստ ասելոյն. «Ինձ աշխարհ ի խաչ ելեալ է» (Գաղատ. Զ 14), այսինքն՝ ցանկութիւն աշխարհիս մեռաւ յիս, «և ես աշխարհի» (Գաղատ. Զ 14)՝ և իմ ցանկութիւնս յաշխարհէս<sup>9</sup> մեռաւ: Զայս Պաւղոսի է ասեալ<sup>10</sup> և նմանեաց նորա<sup>11</sup>:*

Ասէ. Ո՞ ոք կամիցի շինել աշտ[արակ], ո՞չ նախ նստեալ հաշուեսցի, թէ<sup>12</sup> ունիցի բաւական ի կատարումն (ԺՂ 28):

*Զի ո՛չ միով չափով է հանդէս աշակերտութեան Տեառն, զի են կամք Աստուծոյ առաջին և երկրորդ, քանզի այն է հաճոյական*

<sup>1</sup> B Եւ երթային ընդ նմա ժողովուրդ բազումք: Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. Եթէ ոք գայ առ իս և ոչ ասեայ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքորս, նա և զանձն ևս իւր՝ ոչ կարէ իմ աշակերտ լինել (ԺՂ 25-26):

<sup>2</sup> A սիրեալ

<sup>3</sup> B իմովն *փի* իմ սիրովն

<sup>4</sup> B Որ ոչ ուրասցի

<sup>5</sup> B գի *փի* և

<sup>6</sup> B զխաչ իւր

<sup>7</sup> B զհետ

<sup>8</sup> B Զի ի նախատանաց

<sup>9</sup> B յաշխարհիս

<sup>10</sup> B ասել

<sup>11</sup> A *աջ լս. գրիչը գրել է. «Կէս է գրոցս»:*

<sup>12</sup> B Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ և ոչ նախ նստեալ համրիցի զծախսն, եթէ



կամք Աստուծոյ առաջին: Ապա եթէ ո՛չ՝ զերկրորդէն բուռն հարկանել: Եւ զայսուսիկ ուսանիմք յառաքելոյն՝ ասելովն ամուրեացն<sup>1</sup> և այրեացն. «Լաւ է նորա<sup>2</sup>, եթէ կայցեն իբրև զիս» (Ա Կորնթ. Է 8): Ըստ նմանութեան նորա սրբութեամբ քաղաքավարել, որ են<sup>3</sup> առաջին կամք Աստուծոյ և հաճոյական: Իսկ երկրորդ կամք<sup>4</sup> ապա եթէ ո՛չ ժուժեսցին<sup>5</sup>՝ ամուսնասցին: Եւ Յովհաննէս 167բ այլ կամաւք խաւսի ընդ ժողովուրդս և այլ ընդ զինուորս // և այլ ընդ մաքսաւորս: Նոյն է և հրամանք Տեառն: Այլ է պատուէր<sup>6</sup> առաքելոցն և այլ աշխարհավար մարդկան: Արդ՝ այսպէս զգուշալի է, որք կամին զաշտարակ առաքինութեանն շինել, և զամբողջութենն<sup>7</sup> անվնաս պահել ի ժամանակի<sup>8</sup> հալածանաց և ի փորձութեանց դիւաց անդի<sup>9</sup>:

**Գուցէ սկսանիցէ շինել և ո՛չ կարիցէ կատարել: Ամենեքին, ոյք տեսանիցեն զնա, ծաղր առնիցեն<sup>10</sup> (ԺԴ 29):**

Մի՛ թերակատար կամաւք ի հոգ և<sup>11</sup> կրթութեանն գտեալ՝ ծաղր տեսողացն լիցի<sup>12</sup>: Եւ այսպէս զգուշագոյն աւերինակաւք առ փորձութիւնսն վարժէ զմեզ: Որպէս ասաց Տէրն. «Յորժամ գտուն առաքինութեան իմաստութեամբ ի վերայ հաստատուն վիմի դնել և մնայ<sup>13</sup> անվնաս և միամտութեամբ: Եւ մի՛ ի վերայ աւագոյ, զի մի՛ ի սատանայական ձմերանոյն<sup>14</sup> անկցի» (տե՛ս Մատթ. Է 24-25): Եւ զոր անդ կործանմամբն զարհուրեցուցանէ, աստ ծաղր լինելովն զգուշացուցանէ:

Իգ. (եփ.) **Ո՛չ եթէ բանիւք պիտոյ էր աշակերտել նմա, այլ՝ գործաւք: Վասն այսորիկ եղև անձուկ<sup>15</sup> ճանապարհն կենաց, այսինքն՝ այնոքիկ, որ ո՛չ մարմնովն վարին, այլ հոգևոր առաքինութեամբն զարդարին:**

<sup>1</sup> Բ վասն ամուրեացն

<sup>2</sup> Բ նոցա

<sup>3</sup> Բ է

<sup>4</sup> Բ սրբ.՝ կամք Աստուծոյ

<sup>5</sup> Բ ժուժեսցին

<sup>6</sup> Բ հրամանք

<sup>7</sup> Բ զամբողջութեան

<sup>8</sup> Բ ժամանակ

<sup>9</sup> Բ անտի

<sup>10</sup> Բ Միգուցէ իբրև արկանիցէ հիմն և չկարիցէ կատարել, ամենեքեան, որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել զնա և ասել, թէ այս այր սկսաւ շինել և ոչ կարաց կատարել:

<sup>11</sup> Բ հոգևոր *փի* հոգ և

<sup>12</sup> Բ լինիցի

<sup>13</sup> Բ մնալ

<sup>14</sup> Բ ձմերայնոյն

<sup>15</sup> Բ անձուկ

Եւ<sup>1</sup> ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի<sup>2</sup> (ԺՂ 31):

Կր. (Կղ.)

Յերկուս թագաւորս առակէ զմարդկային բնութիւնս և զդիւլաց: Վասնզի մարդ անձնիշխան է և թագաւոր կամաց իւրոց, գործել որպէս և կամի՝ զբարի և զչար: Այսպէս և սատանայ անձնիշխան է և թագաւոր, որպէս և Տէրն անուանէ զնա «իշխան աշխարհի» (Յովհ. ԺԲ 31): Պարտ է զ(//)ամենայն ինչ խորհրդեամբ գործել և փորձել իւրաքանչիւր զիւր զաւրութիւնն: Զի են, որք նահատակին կուսութեամբ, և են, որք ո՛չ են բաւական ըստ Տեառն բանի, այլ որոց տուեալն է:

168ա

Նախ խորհեսցի, եթէ կարիցէ՞ զդէմ ունել տասն Հազարաւ (ԺՂ 31):

Արդ՝ վասնզի միշտ զպատերազմ է ի մէջ երկուց թագաւորաց՝ մարդոյն և սատանայի, պարտ է նախ խորհել մարդոյն, եթէ կարիցէ զդէմ ունել «տասն Հազարաւ», այսինքն է՝ տասն զգայար[ան]աւք՝ հոգեկանաւք և մարմնականաւք:

Ան. Ընդդէմ<sup>3</sup> այնորիկ, որ գայցէ ի վերայ նորա քսան Հազարաւ, որ է սատանայ: Վասնզի նա մարդկային զինուք<sup>4</sup> տասամբքն դնէ զպատերազմն, որպէս ի ձեռն զգայարանացն յաղթեաց Եւայի. «Ետես, ասէ, կինն, զի բարի է ծառն ի կերակուր և հաճոյ աչաց հայելոյ և գեղեցիկ ի տեսանել» (ԾԱՆՈ. Գ 6): Եւ ապա սատանայ զիւրսն ի վերայ եբեր՝ զնրբագոյնսն և զ[յ]ոգնահնար իմաստութիւնն: Արդ՝ պարտ<sup>5</sup> է մարդոյն<sup>6</sup> զիւրսն նահանջել զգգայարանսն, և բաւանդակ ի մարմնական կրիցն ի բաց հրաժարել, և ո՛չ առնել զբնութիւնն իւր պատերազմի նորա ընդունակ:

Իգ. Պարտ<sup>7</sup> է իմաստութեամբ խորհել, եթէ կարող իցէ մեռուցանել զախտս տասն զգայարանաւքս<sup>8</sup> զբիւր առաքինութեամբքս<sup>9</sup>, որք իբրև զզինուորս<sup>10</sup>, և ընդ սոսա ելանեն պատերազմել: Սատանայ կրկնապատիկ զաւրոյ<sup>11</sup>, զի երբեմն մերկ չարութեամբն ձախ կող-

<sup>1</sup> Ե կամ

<sup>2</sup> Ե թագաւորի և ոչ նստեալ նախ խորհցի, եթէ կարող իցէ տասն Հազարաւ:

<sup>3</sup> Ե դէմ ունել

<sup>4</sup> Ե զինուք զգայարանաւք

<sup>5</sup> Ե նախ պարտ

<sup>6</sup> Ե մարմնոյն

<sup>7</sup> Ե կամ պարտ

<sup>8</sup> Ե զգայարանաւքն

<sup>9</sup> Ե առաքինութեամբ

<sup>10</sup> Ե զինուորս

<sup>11</sup> Ե զաւրու

մամբն<sup>1</sup> տան պատերազմ, և է ժամանակ, զի աջակողմամբն մատ-  
չի<sup>2</sup> խաբէութեամբ նենգել:

168բ // Պարտ է հաւաստի քննել և ընդդէմ կալ հնարիցն սատանա-  
յի, որք յերես[ս] բարոյ և չարի փոփոխ մատչին<sup>3</sup>: Եթէ ունիցի ոք  
այսոցիկ բաւական զաւրութիւն, որպէս այնոքիկ, որք քաջացան  
և յաղթեցին և զբազմապատիկ մեքենայսն սատանայի լուծին, և  
չնաւհաւքն Քրիստոսի յաղթեցին: Արդ՝ կարի լաւ<sup>4</sup> է առաջար-  
կութիւնս: Իսկ եթէ երկնչի ի կոչմանէս յայս՝ զի մի՛ տկարու-  
թեամբ և պարտութեամբ մատնեսցի:

Ապա թէ ո՛չ, մինչդեռ հեռագոյն է<sup>5</sup>, հրեշտակութիւն արձա-  
կեսցէ, զի<sup>6</sup> աղաչեսցէ ի խաղաղութիւն (ԺԴ 32):

Կր. (ԿԼր.) Իսկ, որ ո՛չ այսպէս զանձինս դաստիարակեն և հրաժարեն ի  
նորա պատերազմէն, և կան դատարկք յաղթահարեալք<sup>7</sup>:

Իգ. Ո՛չ եթէ խաղաղութիւն ինչ է մեր ընդ դեւս, զի զայն պի-  
տանացու է ընտրել<sup>8</sup>: Այլ զի դէմք առակիս այսպիսեաւք<sup>9</sup> տան  
նշանակ մեզ, զի իմասցուք, եթէ յորժամ և մեծի կոլսութեան  
հանդիսիս ո՛չ եմք բաւական, ընտրեսցուք զերկրորդն՝ կալ ընդ  
հաւատացեալս անկողնոյն<sup>10</sup> ամուսնութեան հաւասարեալ, և  
յանհնարին պատերազմացն հեռագոյն դնել զանձինս: Եւ, զի ու-  
նի առակ խորհրդոյն ի Քրիստոս և յեկեղեցի: Արդ՝ զի զմեղրն և  
զխմորելն յ[ը]նծայսն ընկալաւ, իսկ ի սեղանն հանել արգել: Զի<sup>11</sup>  
այնոքիկ, որք ո՛չ ունին զաւրութիւն և հանճար, միջնորդ լինել  
Աստուծոյ և մարդկան, մի՛ ցանկասցին բնաւ մեծութեան պա-  
տուին ի վտանգէն երկուցեալ, այլ ընդ վերակացութեամբ հզաւ-  
րիցն լիցի<sup>12</sup>: Եւ որ ո՛չ է կարող զաւ(//)րավարել իմաստութեամբ,  
169ա իմաստութեամբ կացցէ ընդ այլոց խնամակալութեան: Եւ որ ո՛չ է  
կարող<sup>13</sup> նաւակառոյց լինել, հմտագունին տեղի տայցէ կալ ընդ-  
դէմ ալեաց ծփանաց[ն]: Եւ որ ի հոգևոր վերակացութեանն, ո՛չ է

<sup>1</sup> B ձախակողմամբն  
<sup>2</sup> B աջ կողմամբն մատնիչն  
<sup>3</sup> B սրբ.՝ փոփոխմամբ մարտնչին  
<sup>4</sup> B լաւ և պիտանի  
<sup>5</sup> B իցէ  
<sup>6</sup> B առաքեալ *փի* արձակեսցէ զի  
<sup>7</sup> A յախթահարեալք  
<sup>8</sup> A ընդրել  
<sup>9</sup> B այսպիսեաւքս  
<sup>10</sup> B սուրբ անկողնոցն  
<sup>11</sup> B Եւ զի  
<sup>12</sup> B լինիցի  
<sup>13</sup> B *չիք* կարող

կարող հովուել և ընդ գայլսն մարտնչել, կացցէ ընդ այլոց ի հովութեան առանց վտանգի:

**Եւ, որ ո՛չ հրաժարէ յամենայն ընչից<sup>1</sup>, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել** (ԺՂ 33):

Ի փորձութեան ժամանակս: Եթէ հասանեն հալածանք վասն Տեառն ամենայն ումեք, պարտ է յամենայնէ հրաժարել, որպէս և Տէր ետ պատուէր: Ապա թէ պատաղի սնոտիւքս կորոյս զաշակերտութիւնն և ճշգրտեն զպատմութիւնս զայս առաջիկայ ակր[ին]ակ բանից<sup>2</sup>:

**Բարիոք<sup>3</sup> է աղ** (ԺՂ 34):

**ԵՓ** Աղ կուրացուցիչ է աւձից: Եւ որպէս աղ, թէ ընդ կերակուրն ո՛չ խառնի, անուտելի [է], իսկ յորժամ խառնի, զհամեղութիւն իւր տայ ի<sup>4</sup> նմա: Նոյնպէս և դուք: Թէպէտև<sup>5</sup> զամենայն առաքինութիւնս<sup>6</sup> ունիք և ո՛չ յայլոց աւգուտ արկանիցէք, ոչինչ էք<sup>7</sup>, զի այլոց անհամութիւն ձիաւք մարթի գալ ի համեղութիւն<sup>8</sup>:

**Ստ.** Աղ<sup>9</sup> չափաւոր խառնեալ ի կերակուր՝ զանհամեղութիւն[ն]<sup>10</sup> ի համեղութիւն ածէ և զդառնութիւն[ն] ի քաղցրութիւն: Իսկ աւելին կամ պակասն յանհամութիւն ածէ և զանդառնութիւնն ի դառնութիւն: Նոյնպէս և «աղ երկրի» (Մատթ. Ե 13) անուանեցան աշակերտքն ի Քրիստոսէ: Զի գեղեցիկ և չափաւոր վարդապետութեամբ որպէս հանդուրժէին լսելիք մարդկան և զ(//)գիւրապաշտութիւն, որ է անհամութիւն հոգոյ<sup>11</sup>, փոխե[ս]ցին ի բարեպաշտութիւն, այսինքն՝ ի քաղցր և յանուշակ<sup>12</sup> առաքինութիւն: Արդ՝ կարծեմ զայս նշանակելով Եղիսէոս մարգարէն զդառնութիւն ջրոյն Երիքովի<sup>13</sup> ի քաղցրութիւն փոխեաց<sup>14</sup> (տե՛ս Դ Թագ. Բ 21):

169բ

**Ապա եթէ<sup>15</sup> աղն անհամեսցի, ի՞նչ համեմեսցի** (ԺՂ 34):

<sup>1</sup> Բ Արդ՝ այսպէս ամենայն ոք ի ձէնջ, որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց  
<sup>2</sup> Բ բանիցս  
<sup>3</sup> Բ բարւոք  
<sup>4</sup> Բ չիք նմա  
<sup>5</sup> Բ թէպէտ  
<sup>6</sup> Բ առաքինութիւն  
<sup>7</sup> Բ չիք ոչինչ էք  
<sup>8</sup> Բ ի համ եկեսցէ փիւ ձիաւք... համեղութիւն  
<sup>9</sup> Բ կամ աղ  
<sup>10</sup> Բ զանհամութիւն  
<sup>11</sup> Բ հոգոց  
<sup>12</sup> Բ յանուշահոտ  
<sup>13</sup> Բ Երեքովի  
<sup>14</sup> Բ քաղցրացոյց փիւ քաղցրութիւն փոխեաց  
<sup>15</sup> Բ թէ

Այս վարդապետութիւնն է, եթէ «անհամեսցի՝ ի՞նչ» վարդապետեսցի:

Բայց եթէ արտաքս անկցի և կոխան լիցի ի<sup>1</sup> մարդկանէ:

Աղ էր և Յուդայ Իսկարիովտացին<sup>2</sup>, բայց անհամեսցաւ ի սատանայէ: Դառնացեալ եղև և ի Քրիստոսէ արտաքս անկաւ և կոխան եղև ի մարդկանէ: Կամ աղ՝ բարեպաշտութեան էր և սատանայ, որ դառնացաւ յիւրմէ<sup>3</sup> չարութենէն և անկաւ ի հրաբուն փառացն, և ի վարսաւոր քերոբէէն<sup>4</sup> հարեալ՝ ծաղր եղև, խաղալիք<sup>5</sup> հրեշտակաց, և կոխեցաւ ի սրբոց արանց: Որպէս ասաց Տէր. «Ի վերայ աւձից և քարբից» (Սաղմ. Դ 13)՝ աներևութից զնալ, որք ի ստուերէն (տե՛ս Գործք Ե 15)՝ ի<sup>6</sup> Պետրոսի և ի քրտանէն և [ի] վարչամակաց (տե՛ս Գործք ԺԹ 12)՝ Պաւղոսի, փախուցեալ սարսէին:

Ո՛չ յերկիր<sup>7</sup> (ԺԴ 35):

**ԻԳ** Եթէ տայցէ պտուղ իբրև զհող երկրի:

Ո՛չ յաղբ<sup>8</sup> (ԺԴ 35):

Առ<sup>9</sup> ի [յ]արկանել ի պարտէզ [ի] զաւրացուցանել զպտուղ: Եւ անպիտան է ո՛չ իբրև զփայտ ի շինուած կամ ի ջեռնուլ, և գործել կերակուր, զի ամենայն իրք առ ինչ պիտանացու է, և աղ 170ա ի համեմել զկերակուր: //Ապա եթէ անհամի, զիւր բնութիւնն կորոյս՝ և ո՛չ յայլ ինչ պիտանացու: Այսպէս և, որ զառաջնորդութիւն[ն] ստացաւ և հեղգութեամբն անպիտան գտաւ, չէ այլ ինչ պիտանացու յեկեղեցոջ Աստուծոյ: Որպէս և Եզեկիէլ ասէ. «Զի՞նչ է փայտ որթոյ, զի ոչինչ ի նմանէ լինի անաւթ և ո՛չ իցէ յորմն տան<sup>11</sup>, թէ կախիցէ<sup>12</sup> ոք ինչ զնմանէ և զհատուցումն հրով սպառնայ յասելն՝ զաւտ նորա հուր ծախէ» (հմմտ. Եզեկ. ԺԵ 1-4):

<sup>1</sup> B լինիցի *փխ* լիցի ի  
<sup>2</sup> A Իսկարեովտացի  
<sup>3</sup> A ի յիւրմէ  
<sup>4</sup> B քերովբէիցն  
<sup>5</sup> A խաղալիկ  
<sup>6</sup> B *չիք* ի  
<sup>7</sup> A ի յերկիր B յերկիր և ոչ յաղբէ պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:  
<sup>8</sup> A, B ի յաղբ  
<sup>9</sup> B սրբ.՝ այսինքն՝ առ  
<sup>10</sup> B այսինքն՝ առ  
<sup>11</sup> B յորմ տան պիտանացու  
<sup>12</sup> B կախեսցէ

## Գլուխ ԺԵ

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք՝ լսել ի նմանէ (ԺԵ 1):

**ԵՓ** Ընտրեաց զՅակոբոս մաքսաւոր, զի քաջալերեսցեն<sup>1</sup> ընկերք նորա երթալ ընդ նմա: Բազմեցոյց<sup>2</sup> գնոսա առ ինքն: Այս է տեսիլ սքանչելի, հրեշտակք դողան և մերձ են մեղաւորք և ուրախ լինին: Զուարթունք զահի հարեալ են ի մեծութենէ նորա, և մաքսաւորք ուտեն և ըմպեն ընդ նմա: Տեսին վերինք՝ զարմացան<sup>3</sup>, և ներքինք յիմարեցան: Սատանայ ապշեցաւ<sup>4</sup>, մահ վա[տ]թարացաւ, ուրախութիւն յերկինս<sup>5</sup> և ցնծութիւն հրեշտակաց, զի հնազանդեցան ապստամբք և զգաստացան մաքսաւորք և արդարացան մեղաւորք:

Տրտնջէին փարի[ս]եցիքն և դպիրքն<sup>6</sup>. Ընդէ՞ր զմաքսաւորս<sup>7</sup> ընդունի և ուտէ ընդ նոսա (ԺԵ 2):

**ԵՓ** Փարիսեցիք խռովեցան և դպիրք բորբոքեցան հերձեալք ի նախանձուէ, և մաքսաւորք և մեղաւորք ցնծան<sup>8</sup> ուրախութեամբ:  
**170բ ԻԳ** //Բամբասէին զբժիշկն՝ խոնարհեալ առ ախտացեալս, և զհո-վիւն՝ զնացեալ զհետ կորուսեալ ոչխարին:

Այր ոմն ունէր հարիւր ոչխար, և կորուսեալ զմի ի նոցանէ<sup>9</sup> (ԺԵ 4):

Զի որպէս մարդ զհոգոյն<sup>10</sup> զհրեշտակաց ունի զբնութիւն, այսպէս և առ հրեշտակս առականաց զմարդկային բնութիւնս: Այսպէս և իննսուն և ինն<sup>11</sup> ոչխար, որ չիցեն մոլորեալ, զհրեշտակաց բազմութիւն<sup>12</sup> նշանակէ, և որպէս ոչխարն ի գաւթէն հեռանալով զմոլորեալ իմանին, այսպէս և Ադամ ի դրախտէն:

<sup>1</sup> Ե քաջալերեսցին

<sup>2</sup> Ե սրբ.՝ և բազմեցոյց

<sup>3</sup> Ե և զարմացան

<sup>4</sup> Ե մաշեցաւ *փի* ապշեցաւ

<sup>5</sup> Ե, Ե ի յերկինս

<sup>6</sup> Ե դպիրք և ասէին

<sup>7</sup> Ե սա զմեղաւորս

<sup>8</sup> Ե ցնծացան

<sup>9</sup> Ե Ասաց առ նոսա զառակս զայս. Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ, որոյ իցէ հարիւր ոչխար, և կորուցանիցէ մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսունն և զինն յանապատի և երթայցէ զհետ կորուսելոյն մինչև գտանիցէ զնա (ԺԴ 3-4):

<sup>10</sup> Ե ըստ հոգոյն

<sup>11</sup> Ե *չիք* և ինն

<sup>12</sup> Ե բազմութիւնքն

US Հարիւր թիւտ<sup>1</sup> կատարեալ զհոգիս մարդկան նշանակեաց, կորուսեալ<sup>2</sup> ոչխարն՝ որ մեղաւք և անաւրէնութեամբ կորեալ:

Եկն ի խնդրել՝ զկորուսեալ ոչխարն բարձեալ ի վերայ ուսոյ իւրոյ (ժԵ 5)<sup>3</sup>:

Ձի զանաւրէնութիւնս մեր եբարձ մարմնով ուսով իւրովք, յորոյ<sup>4</sup> զխաչն բարձեալ՝ երթայր<sup>5</sup> ի չարչարանս «Հովիւն քաջ» (Յովհ. Ժ 11, 14), որ ել զհետ առիւծուն<sup>6</sup> և թափեաց աքացս<sup>7</sup> երկուս, այսինքն՝ երկու[ս] ոտս և ունկն<sup>8</sup> դրոշմաւոր, լսելիք մարդկան, որ առակի ի<sup>9</sup> մեր բնութիւնս:

ԻԳ Արդ՝ այն, որ բազմապատիկ եցոյց զխնամս մարդասիրութեանն մինչև ի վերայ ուսոց<sup>10</sup> բառնալ և տանել յառաջին պատիւն<sup>11</sup>, և ինքն ոչխար փոխանակ աշխարհի:

Կամ կին, որ ունիցի դրամս տասն, և կորուսանիցէ դրամ մի<sup>12</sup> (ժԵ 8):

ԿՐ Ծասն դրամ զեկուցանէ զթիւ տասն դասուց հրեշտակաց, վասն որոյ մի ի դասուցն ասաց զմարդկային բնութիւնս: // Ձի որպէս տասն ամբ<sup>13</sup> ի հարիւր աւարտի, այսպէս և միակաւն<sup>14</sup> ի տասն իսկ<sup>15</sup> դրոշմի: Եւ զի որպէս դրամն ունի զթագաւորական տպաւոր[եալ] զպատկերն, այսպէս և մարդ զթագաւորական տպաւորեալ զպատկեր ունէր յինքեան<sup>16</sup>: Ըստ Մովսիսի, թէ՛ «Արար Աստուած զմարդն ըստ պատկերի իւրում» (Ծննդ. Ա 27):

<sup>1</sup> Ե թիւ  
<sup>2</sup> Ե որպէս կորուսեալ  
<sup>3</sup> Ե եւ իբրև գտանէ, դնէ գնա ի վերայ ուսոց իւրոց խնդրով և երթայ ի տուն, կոչէ զբարեկամս և զգրացիս և ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն և ինն արդարոյ, որոց ոչ իցէ ապաշխարութիւն (ժԵ 5-7):  
<sup>4</sup> Ե յորս  
<sup>5</sup> Ե և երկթայր  
<sup>6</sup> Ա առուծուն  
<sup>7</sup> Ե աքեացս  
<sup>8</sup> Ե ոտմունսս **փի** ոտս և ունկն  
<sup>9</sup> Ե **չիք** ի  
<sup>10</sup> Ե ուսից  
<sup>11</sup> Ա բնութիւնն և պատիւն, առաջին բառերի և շարկապի վրայ ունի գրչի ձեռքով արված սրբագրման նշանն  
<sup>12</sup> Ե Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն, և եթէ կորուսանիցէ դրամ մի:  
<sup>13</sup> Ե տասամբք  
<sup>14</sup> Ե միականաւն  
<sup>15</sup> Ե **չիք** իսկ  
<sup>16</sup> Ա, Ե ի յինքեան

US Կին՝ Հոգի մարդոյն<sup>1</sup>, տասն դրամն, որ նկարեալ ի<sup>2</sup> նմա կատարեալ առաքինութիւն՝ միաբանութեամբ Հինգ Հոգոյն զգայութեամբն ընդ Հինգ մարմնոյն զգայութիւնն, յորոց եթէ կորուսանիցէ մի յառաքինութենէն, բազմադիմի առակաւք զխնամ աստուածային սիրոյն յայտնեաց, զոր ունի առ մարդ: Եւ յայց ելեալ կորուսելոյ պատկերին այն, որ յիսկզբանն պայծառ և անապական ստեղծաւ ի բարի Արարչէն, արծաթեղէն<sup>3</sup> և պատուեալ մարդս է<sup>4</sup> պակասեալ ի տասն դասուց հրեշտակաց: Արդ՝ եկն ի խնդրել զպատկերն իւր՝ անյայտեալ խաւարաւն անգիտութեան<sup>5</sup> և անհաւատութեամբ, և ծածկեալ աղբով<sup>6</sup> և անաւրէն մեղաւք:

Լուցանէ<sup>7</sup> ճրագ (ԺԵ 8):

US ԶԲանն աստուածային, յորում լինի յիշողութիւն աստուածային պատուիրանին. «Մի՛ շնար: Մի՛ գողանար: Մի՛ եղիցին քեզ այլ<sup>8</sup> աստուածք աւտարք» (Ելք Ի 14, 15, 3):

Իգ. Առ զմարմինն պայծառ՝ աստուածային բնութեամբն միացեալ, լուծանէ զխաւար անգիտութեան: Որպէս ասաց Տէր. «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12): Եւ Եսայի ասէ. «Որք էիք ի խաւարի և ի ստուերս մահու, լոյս ծագեաց ի ձեզ» (հմմտ. Ես. Թ 2):

171բ // Ածէ աւել ի տանն<sup>9</sup> (ԺԵ 8):

ստ. Զտունն սրբէ՝ զՀոգին ի չարութենէ, որ եղև ի պատուիրանազանցութենէն: Ի մեղաց մաքրեաց՝ շնորհաւք որդեգրութեամբ Հոգոյն:

Խնդրէ ստէպ և գտանէ<sup>10</sup> (ԺԵ 8-9):

Զիւր<sup>11</sup> թագաւորական պատկերն, և յառաջին մաքուր արծաթեղէն բնութիւնն բարձրացոյց:

Կոչէ զբարեկամս և զզրացիս իւր<sup>12</sup> (ԺԵ 9):

<sup>1</sup> B Հոգիս արդարոցն *փխ* Հոգի մարդոյն

<sup>2</sup> B է ի

<sup>3</sup> B և արծաթեղէն

<sup>4</sup> B *չեք* է

<sup>5</sup> B անգիտութեամբ

<sup>6</sup> A ախբով

<sup>7</sup> B ոչ լուցանիցէ

<sup>8</sup> B *չեք* այլ

<sup>9</sup> B Ածիցէ աւել ի տան:

<sup>10</sup> B Եւ խնդրեսցէ ստէպ մինչև գտանիցէ:

<sup>11</sup> B Եւ գտանէ զիւր

<sup>12</sup> B Եւ իբրև գտանէ, կոչէ զբարեկամս և զզրացիս և ասէ:



US *Ջհամափառ[ս] և [զ]զուգահաւասար հոգիս:*

**Եւ ասէ ցնոսա. Ուրա՛խ լերուք, զի գտի<sup>1</sup> (ժԵ 9):**  
*Ջկորուսեալ առաքինութիւնն<sup>2</sup>:*

**Այսպէս ուրախութիւն<sup>3</sup> եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի, որ ապաշխարէ<sup>4</sup> (ժԵ 10):**

ԵՓ *Ուրախութիւն գկնի տրտմութեանն լինի: Ջի եղեն տրտմակից հրեշտակք, զի մեղան մաղիկ: Լինի ուրախութիւն, յորժամ ապաշխարեն: Որպէս ասաց Տէր. «Ուրախ լինել պարտ էր<sup>5</sup>, զի եղբայրս<sup>6</sup> քո մեռեալ էր և կենդանացաւ» (ժԵ 32): Ահա ուրախութիւն և տրտմութիւն հոգեղինաց: Տրտմութիւնք<sup>7</sup> չարչարանք են, զիա՞րդ յերկինս<sup>8</sup> տրտմութիւն և ուրախութիւն առնի: Ջի պարտաւորեցան մարդիկ ի մեղս, անուանեցաւ տրտմութիւն<sup>9</sup> ի վերինս: Ջի թէ զհրեշտակս տրտմեցուցին մեղք մեր, քանի՞ ևս արժան է մեզ ապաշխարել, զի զԱստուած տրտմեցուցաք՝ զԱրարիչ[ն] հրեշտակաց:*

ԻԳ *Հիացաւ առաքեալն անճառելաւքն և ի փառս հանգուցանէ զբանն: Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեանն Աստուծոյ, զի*

172ա *առանց քննելոյ են դատաստանք նորա: Որպէս ասաց Դաւիթ. // «Մեծ են գործք քո և յոյժ խոր են խորհուրդք քո» (Սաղմ. ՂԱ 6): Եւ այր անզգամ զայս ո՛չ ծանեաւ, և անմիտն զայս ի միտ ո՛չ առ<sup>10</sup>, եթէ զիա՞րդ էջ խոնարհութեամբ Աստուած և եղև մարդկապէս ընդ մեզ: Եւ շրջեցաւ Աստուած ընդ մարդկան և խոստացաւ զմեզ նորրոգել վերստին, և զարդարեաց զպատկերն, զոր եգիտ յաղբն<sup>11</sup> զազրալի գործովք<sup>12</sup> թաղեալ: Եւ ցնծացաւ Արարիչն բնութեամբ, ուրախութեամբ երկնաւորաց և երկրա[ւորաց]ս ի միասին, Հայրն բոլորեցունց, վասն փրկութեան մարդկ[ան]<sup>13</sup>:*

<sup>1</sup> B լերուք ընդ իս զի գտի գորամն իմ, գոր կորուսի  
<sup>2</sup> B *չիք* զկորուսեալ առաքինութիւնն  
<sup>3</sup> B Այնպէս ասեմ ձեզ ուրախ  
<sup>4</sup> B ապաշխարիցէ  
<sup>5</sup> B է  
<sup>6</sup> B եղբայր  
<sup>7</sup> B տրտմութիւն  
<sup>8</sup> A, B ի յերկինս  
<sup>9</sup> B տրտմութիւնս  
<sup>10</sup> B էստ  
<sup>11</sup> A ի յալբն  
<sup>12</sup> B գործով  
<sup>13</sup> B մերոյ *փի* մարդկան

**Առն<sup>1</sup> միոջ էին երկու որդիք** (ԺԵ 11):

Ձի զամենայն, ինչ Քրիստոս անձամբ վճարեաց, զխնամս զթուլթեանն եցոյց: Ձի գնաց<sup>2</sup> զհետ մոլորեալ ոչխարին և եգիտ զպատկերն թագաւորական, զի մի՛ Որ[գ]ոյ միայն շնորհակալ լիցին ար[ար]ածք ամենայն: Յուցանէ աստ զՀաւր սեփական խնամակալութիւնն, քանզի նա հաճեցաւ Որդոյն միջնորդութեամբ, որ պատարագեցաւ վասն մեր:

**Առն միոջ էին երկու որդի[ք]** (ԺԵ 11):

Պատիւ դնէ ծառայական բնութեանն<sup>3</sup> և արարիչ բնութեանն: Երէց են հերշտակք, զի յառաջնում աւուրն զոյացան, յորժամ ասաց Աստուած. «Եղիցի լոյս» (Ծննդ. Ա 3): «Ի լուսոյ եղեն», որպէս Գրիգոր Աստուածաբան ասէ: Առաջին լոյս՝ Աստուած և երկրորդ լոյս՝ հերշտակք և երրորդ լոյս՝ մարդ, զոր. «Փոքր ինչ խոնարհ արար<sup>4</sup> քան զհերշտակս» (Սաղմ. Ը 6). ասաց Դաւիթ:

ՍՏ Երէց<sup>5</sup> որդի զհոգիս նշանակէ, որք ո՛չ մեղան, և կրսերագոյն՝  
172բ զհոգիսն, որք մեղան և ապաշխարեն: Եւ վասնէ՞ր են կրսերագոյն հոգիք անառակացն: // Վասն անառակութեան և վասն բարժանելոյ<sup>6</sup> յառաքինութենէ եղբաւր[ն] իւրոյ, վասն որոյ կրսեր կոչեցաւ, և երէց՝ հոգիք արդարոցն: Հայր այժմ զՓրկիչն կարծեմ, որ ասաց ցաշակերտսն. «Որդեակք իմ» (Յովհ. ԺԳ 33): Եւ դարձեալ. «Քաջակերեաց, դո՛ւստր, հաւատք քո կեց[ուցի]ն զքեզ» (Մատթ. Թ 22):

**Ասէ կրսերն ցհայրն. Տուր ինձ բարժին<sup>7</sup>** (ԺԵ 12):

ԻԳ Առակիս դէմս<sup>8</sup> այսպէս պահանջեն և կարգ բանից:

**Եւ նա բարժանեաց<sup>9</sup> նոցա զկեանսն<sup>10</sup>** (ԺԵ 12):

Ձոր ստացաւ արարչութեամբ և ետ իմանալեացն զերկնից բնակութիւն<sup>11</sup>: Իսկ զգալեացս մեզ՝ զդրախտն ի բնակութիւն և

<sup>1</sup> B Եւ ասէ. Առն

<sup>2</sup> B գնայ

<sup>3</sup> B բնութեանս

<sup>4</sup> B չիք արար

<sup>5</sup> B սրբ.՝ դարձեալ երէց

<sup>6</sup> B բարժանելոյ

<sup>7</sup> B Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. Հայր, տուր ինձ բարժին, որ անկանի յընչիցդ: Եւ նա բարժանեաց նոցա զկեանսն:

<sup>8</sup> B դէմք

<sup>9</sup> B բարժանեաց

<sup>10</sup> B զկեանս

<sup>11</sup> B բնակութիւնսն

ամենաբարի<sup>1</sup>, և անկարաւտ, անմահ և անապական յամէնառատ պարգևէն<sup>2</sup>, և ո՛չ պահեաց գործակցութեամբ չարին: Կամեցաւ աստուածանալ և անաստուած կալ ի դրախտի անդ, և յաստուածատուր փառացն մերկացաւ:

**Եւ յետ ո՛չ բազում աւուրց**<sup>3</sup> (ԺԵ 13):

Յայտ արար, զի ո՛չ եկաց ժամանակ ինչ ի վայելչութեան[ն], ի փափկութեան դրախտին, այլ ի սակաւ աւուրց ինչ վաղվաղակի անց զպատուիրանաւն:

**Գնաց յաշխարհ Հեռի**<sup>4</sup> (ԺԵ 13):

Ստ. **Զի՛ք տեղի Հեռի յԱստուծոյ.** «Թէ<sup>5</sup> ելանեմ յերկինս, դու անդ ես, և թէ<sup>6</sup> իջանեմ ի դժոխս<sup>7</sup>, անդ մերձ ես» (Սաղմ. 6ԼԸ 8): **Թէ՛** «Առից զթևս իմ<sup>8</sup>, բնակեցայց յեզր ծովու, սակայն անդ ձեռք քո տիրեացեն<sup>9</sup> (հմտ. Երեմ. ԻԳ 23-24): **Արդ՝ չիք տեղի, որ որոշէ զմեզ յԱստուծոյ, բայց միայն մեղք: Որպէս ասաց Տէր.** «Մեղք ձեր որոշեն ի մէջ ձեր և Աստուծոյ» (Ես. ԾԹ 2): **Մերկացաւ Ադամ ի**

173ա **դրախտէն լուսոյ, որով ծածկեալն էր, //և ամալթով կորանայր և ի մէջ ծառոցն թաքուցանէր զանձնն: Եւ անմահն մահկանացու եղև: Վասն այնորիկ հան, արձակեաց զնա ի տեղոջէ անմահիցն յերկիր մահկանացու և ապականելի:**

Ստ. **Յերկիր Հեռի յարդարութենէ և յերկնային կենդանութենէ, յերկրային ցանկութիւնս, և ի խաւարային յաշխարհս յայս:**

**Անդ**<sup>10</sup> **վատնեաց զինչս իւր** (ԺԵ 13):

Իգ. **Զաստուածային<sup>11</sup> շնորհաց զպակասումն ասէ: Զի թէպէտեւ ել ի դրախտէն, սակայն մնաց առ նմա փայլակն ի շնորհաց հոգոյն: Զոր եթէ պահեալ էին ադամայինքս մաքուր վարիւք<sup>12</sup>, երանելի ոմն էին, որպէս Աբէլ և Ենովս, Ենոք<sup>13</sup> և Նոյ:**

<sup>1</sup> Ե զդրախտին բնակութիւն և ամենայն բարի

<sup>2</sup> Ե պարգևատուէն

<sup>3</sup> Ե ավուրց ժողովեալ գամենայն կրտսեր որդոյն:

<sup>4</sup> Ե Հեռի և անդ վատնեաց զինչս իւր:

<sup>5</sup> Ե եթէ

<sup>6</sup> Ե եթէ

<sup>7</sup> Ե դժոխսս

<sup>8</sup> Ե չիք իմ

<sup>9</sup> Ե տիրեցին

<sup>10</sup> Ե Եւ անդ

<sup>11</sup> Ե Աստուածային

<sup>12</sup> Ե վարուք

<sup>13</sup> Ե Ենովք

**Զի կեայր<sup>1</sup> անառակութ[եամբ] (ժԵ 13):**

Վասն որոյ և անառակ վարիւք<sup>2</sup> զայն ևս կորոյս և հեգ<sup>3</sup> և թշուառական գտաւ ՝ թափուր յամենայն բարի պարգեաց հոգոյն:

US **Զոր<sup>4</sup> Հայր ավանդեաց նմա զինչս, որ են առաքինութիւնք, իսկ նորա, զհրամանաւ Հաւրն, զանց արարեալ ՝ կորոյս զամենայն առաքինութիւնսն<sup>5</sup>:**

Սկ.(գր.) **Ես ո՛չ փախեայ և ի գործոց տղմականաց ՝ ո՛չ զանհնարինն զմտաւ ածելով սովոյ կղկղանս, դիմեցի առ Հայրն, և ո՛չ զանբաւ գթութիւն նորա, կալայ<sup>6</sup> ջատագով յանձն<sup>7</sup> զրկեալս յողորմութեանէ շնորհի նշխարին, թէպէտև զանմեղութիւն ո՛չ պահեցի և սրտահաճութիւն<sup>8</sup> բարեսէր Հաւրն և<sup>9</sup> ի գիտութիւն զալ ճշմարտութեանն և կեալ սիրելի ամենեցուն<sup>10</sup>, որպէս ես<sup>11</sup>, որ շարա-**  
 173p **գրեցի<sup>12</sup>՝ ուսեալ զամենայն գործս // աստուածային առաքինութեան ի Քրիստոսէ և յաշակերտաց նորա, և արտաք[ս]եցայ<sup>13</sup> անառակ գործովք վարեալ<sup>14</sup>:**

**Եւ իբրև սպառեաց զամենայնս<sup>15</sup> (ժԵ 14):**

Գր. **Ջպակասեալն ի բարեաց գործոց եցոյց, և անկաւ ի բարեաց շնորհացն Աստուծոյ: Եւ յետ այսորիկ ճշմարիտ աստուածածանալթութիւն բարձաւ ի նմանէ:**

**Եղև<sup>16</sup> սով սաստիկ յաշխարհին յայնմի[կ] (ժԵ 14):**

Դառնազոյն և տաժանելի<sup>17</sup> է հոգոյն սովն: Թէպէտև ոմանք իմարեալ կրեն զնա և ո՛չ իմանալ կարեն, սակայն տազնապին անըմբերելի<sup>18</sup> սովովն խարշեալք: Ըստ այնմ<sup>19</sup>՝ «Տայց ձեզ ո՛չ սով

<sup>1</sup> B կայր

<sup>2</sup> B վարութք

<sup>3</sup> A, B հեք

<sup>4</sup> B կամ գոր

<sup>5</sup> B առաքինութիւնսն

<sup>6</sup> B կալ

<sup>7</sup> B սրբ.՝ վտանգին

<sup>8</sup> B սրտահաճութեան

<sup>9</sup> B այլ

<sup>10</sup> B յամենեցունց (Ես ոչ փախեայ... ամենեցուն՝ գրված է Ժ 14՝ «Եւ սկսաւ չքաւորել» տան մեկնությունից հետո)

<sup>11</sup> B մի որպէս ես

<sup>12</sup> B շարագրեցիս

<sup>13</sup> B արտաքսեցի

<sup>14</sup> B վարելովք

<sup>15</sup> B զամենայն

<sup>16</sup> B Եւ եղև

<sup>17</sup> B տաժանելի

<sup>18</sup> B անբերելի

<sup>19</sup> B այնմ որ ասէ

Հացի և ո՛չ ծարաւ ջրոյ, այլ սով ի լսելոյ<sup>1</sup> գԲանն Տեառն<sup>2</sup>» (Ամոս Ը 11): *Յաղագս<sup>3</sup> այնորիկ՝ չքաւորել<sup>4</sup>:*

US *Կամ սով ի խնամակալութենէն Աստուծոյ, զի նուազեալ ի բարեացն<sup>5</sup> դարձցի առ Հայրն, ցանկացեալ Հաւրն մարդասիրութեանն և գորովասիրութեանն:*

**ԵԼ սկսաւ<sup>6</sup> չքաւորել (ԺԵ 14):**

*Այսինքն է՝ մոռացումն<sup>7</sup> եկն իւրոց ցանկութեանն և յորմէ անկաւ յամենապատիկ շնորհացն<sup>8</sup>:*

**Գնացեալ<sup>9</sup> յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացեաց<sup>10</sup> աշխարհին այնորիկ (ԺԵ 15):**

ԳՐ. ԻԳ

*Ջի ի ստոյգ գիտութենէն Աստուծոյ վրիպեցաւ մարդ և յարեցաւ ի դեւս: Ըստ այնմ, եթէ՝ «Թողին զիս և ընդ դեւան բեւեռեցան» (հմմտ. Երեմ. Ա 16): Եւ թողին զաղբիւրս ջրոյ կենդանութեան<sup>11</sup> և փորեցին իւրեանց ջրհոր ծակոտկէն, որ ո՛չ տանի ջուր: Կուռք, որոյ անունն Աստուծոյ էր, ի վերայ նորա աւզնութիւն և ո՛չ երբեք: Սկսան այնուհետեւ դեւքն պատիր խաբէութեամբ երևումն տալ սնտախ, որով հաւանեցան մարդիկ ծառայել նոցա: 174ա Եւ նա անյագ<sup>12</sup> //չարութեամբ վարեցաւ ընդ մեզ և եհեղ զբարկութիւն իւր: Քանզի ընդդէմ Աստուծոյ հաստատեաց զինքն և<sup>13</sup> թշնամի և՛ հակառակ Արարչին: Համբարձաւ<sup>14</sup> և անկաւ ի պատուոյն, և հնազանդեցոյց զմեզ ընդ իւր անկել<sup>15</sup>, և տիրեաց բնութեանս մերում<sup>16</sup>: Եւ, զի Աստուծոյ փառացն վնասել ո՛չ կարաց, գտեալ զմեզ պատկեր Աստուծոյ՝ ամենայն զազրալի գործովք թշնամանեաց զկերպարանս մեր քան զամենայն անարգ*

<sup>1</sup> B լսել  
<sup>2</sup> B Աստուծոյ  
<sup>3</sup> A յաղագս  
<sup>4</sup> B այսորիկ չքաւորեալ  
<sup>5</sup> B ի նուազել բարեացն  
<sup>6</sup> A սկսավ  
<sup>7</sup> B սրբ.՝ ի մոռացումն  
<sup>8</sup> B շարունակվում է Ա. 13-ի «Մի ես, որ ո՛չ փախեայ և ի գործոց տղմականաց... ամենեցուն» հատվածը:  
<sup>9</sup> B Եւ գնացեալ  
<sup>10</sup> B քաղաքացոց  
<sup>11</sup> B կենդանոյ  
<sup>12</sup> A անյայգ  
<sup>13</sup> B չիք և  
<sup>14</sup> B ամբարձաւ  
<sup>15</sup> B անկանել  
<sup>16</sup> B մերոյ

կենդանիս: Որպէս ատելի ոք թագաւորի նմա, վնասել ո՛չ զաւրէ, որդոյ նորա կամ ծառայից թափէ զդառնութիւն՝ թագաւորին համարելով զվնասն:

**Առաքեաց<sup>1</sup> զնա յագարակ իւր ար[ա]ծել խո[զս]** (ԺԵ 15):

Քանզի այսպէս գիտեն պատուել դեւք զ[ը]նդունողս<sup>2</sup> իւրեանց, վասնզի յաշխարհիս<sup>3</sup> վարս վերջին գործ անարգութեան խոզարածն է և հոգոց անմաքուր վարք, զոր հաւանեցոյց ի զագրագոյնս [ի] կենդանեաց ի պաշտաւն առնուլ և զոհս մատուցանել և երկիր պագանել իբրև Աստուծոյ: Ըստ առաքելոյն՝ «Փոխեցին զփառս անեղին<sup>4</sup> Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելի<sup>5</sup>՝ մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց: Վասն այնորիկ<sup>6</sup> մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան ի պղծութիւն<sup>7</sup>» (Յոռմ. Ա 23-24): *Զինչքա՞ն զայս անարգութեան<sup>8</sup> կիրք խոզարած լինել գարշութեամբ անասնոցն և վատթար գնացիւք, և յիմարագոյն քան զանասունս գտաք<sup>9</sup>, զի՞ «Եզն և էշ զմսուր<sup>10</sup> ստացչին իւրոյ ծանեան»* (հմմտ. Ես. Ա 3), և մարդիկ զԱրարիչն իւրեանց ո՛չ ծանեան:

174բ Ստ. *Կամ յերկնաւոր գաւառէն<sup>11</sup> սատանայ<sup>12</sup> // և պաշտաւնեայք նորա հեռացան: Եւ մտին յագարակ<sup>13</sup> սատանայի, ուր ո՛չ տունկք երկնաւորք, զոր տնկեաց Հայր: Եւ իբրև խոզք զմարգարիտն կոխեն և անցանեն: Նա է խոզարած, որ զցանկութիւն մարմնականս կատարէ և թաւալի ի ժանդահոտութիւն ախտից մարդկան, այլ այնպիսիքն պիղծ հոգովն լցեալ են, և ի մարմին<sup>14</sup> սերմանեն և ո՛չ ի հոգի:*

**Ցանկայր<sup>15</sup> ընուլ զորովայն<sup>16</sup> յեղջերէն, զոր խոզքն ուտէին, և ո՛չ ոք տայր նմա** (ԺԵ 16):

<sup>1</sup> Եւ յղեաց *փիս* առաքեաց

<sup>2</sup> Ե զընդունիչս

<sup>3</sup> Ե այլևս վասնզի յաշխարհի

<sup>4</sup> Ե անեղծին

<sup>5</sup> Ե եղծանելոյ

<sup>6</sup> Ե այսորիկ

<sup>7</sup> Ե գործել զանարժանս *փիս* ի պղծութիւն

<sup>8</sup> Ե ապականութեան

<sup>9</sup> Ե անմիտ *փիս* գտաք

<sup>10</sup> Ե զմսուրս

<sup>11</sup> Ե *սրբագրված*՝ գաւառապետէն

<sup>12</sup> Ե ստացան *փիս* սատանայ

<sup>13</sup> Ե յագարակս

<sup>14</sup> Ե մարմինս

<sup>15</sup> Ե և ցանկայր

<sup>16</sup> Ե զորովայն իւր

ԻԳ *Զի անասունք, զոր բնաւորեաց ի նոսա, Արարիչն պահեցին, զի գոյ բնական առաքինութիւն յանասուն կենդանիս: Որպէս արագիլ արդար<sup>1</sup> ի գրոց ասացաւ և տատրակ՝ ողջախոհ, և անասունք ճանաչեն զամուսնութեան զսահման և խնայեն ի ծնունդս իւրեանց: Իսկ մարդիկ և զայս ևս լքին և զծնունդս իւրեանց այրեցին առաջի դիւաց, յորոյ վերայ անասունք զանձինս իւրեանց մատնեն: Այլ մարդիկ զոհեցին զուստերս և զգոտերս դիւաց յուժարութեամբ: Նաև ո՛չ իբրև զմտաւորս և զբանաւորս կերակրիմք զհաց հաւատոյն, որով հաստատին ոգիք ի բարեպաշտութեան և զի բնաւ, որ կերակուր է խոզից, աւրինաւք բնութեամբն վարիլ ի ցանկութիւնս: Իսկ մարդիկ աղտեղագոյն և գարշ խառնակութեամբ անարգեցին զբնութիւնս, զի մի՛ ասացից զիգացն և զարուացն, զոր առաքեալ նախատէ զխայտառակութեան գործն և զոլովիւքն<sup>2</sup> զանց արարից վասն պարկեշտութեան լսողացն: Զոր Յովէլ ասէ, թէ՛ «Պակասեցան կերակուրք ի տանէ Աստուծոյ» (Յովէլ Ա 16)՝ գիտութիւն սուրբ յանմաքուր անձանց:*

175ա US // *Կամ բանական հոգի ցանկայ վարդապետութեան բանից: Թէպէտև ո՛չ բարիոք է վարդապետութիւն, որպէս<sup>3</sup> եղջերդ<sup>4</sup> այդ պտուղ քաղցր, ընդ նմին և դառն, որ<sup>5</sup> նշանակէ զբան<sup>6</sup> մարմնասիրաց, որք ասեն զմարմնական ցանկութիւն բարի՝ «Ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց» (Բ. Տիմոթ. Դ 3):*

**Եւ ո՛չ ոք տայր նմա** (ժԵ 16):

*Բարեմտաց զխախտեալ ուսմունսս ո՛չ աւանդեն յետինքն, զի մի՛ յանդիմանեսցին:*

**Եկեալ ի միտս իւր** (ժԵ 17):

*Քանզի ի միտս եկեալ անառակին՝ յիշեաց զառաջին բարետոհմութիւնն և զյետին թշուառութիւն, զոր անառակութեամբ ստացաւ, ապա զմտաւ ած<sup>7</sup> դառնալ յԱրարիչն<sup>8</sup>: Ծանեաւ ի խնամոց աստի կենացս, եթէ՛ «Գթած է իբրև զՀայր» (հմմտ. Ձ 36), որք ի չարիս հարեալ են<sup>9</sup> և յԱստուծոյ թիկունս դարձուցեալ<sup>10</sup>: Եւ նա*

<sup>1</sup> B *չեք* արդար  
<sup>2</sup> B գլուխակաւքն  
<sup>3</sup> B *չեք* բարիոք... որպէս  
<sup>4</sup> B գեղջիւրդ  
<sup>5</sup> B *չեք* որ  
<sup>6</sup> B գբանս  
<sup>7</sup> B էած  
<sup>8</sup> B յԱրարիչն իւր  
<sup>9</sup> A նախ եան, ապա ա-ն հետագայում քերած-ջնջած  
<sup>10</sup> B դարձուցանեն

ի բաց ո՛չ դառնայ, այլ տակաւին<sup>1</sup> խնամէ զպէտս բնութեանս յերկնից<sup>2</sup> և յերկրէ զպտուղս և զտարածումն լուսոյ, զճառագայթից ծաւալումն, զաւդոց<sup>3</sup> ցնդումն: Քանի՞ ևս ունի բարեգործել հոգևորապէս դարձելոցն առ նա, քանզի ունէր մարդն բնութեամբ եդեալ ի նմա յԱրարչէն՝ ճանաչել զԱստուած և սիրել զնա և ընտրել զբարին և զչարն ի միմեանց: Թէպէտև աստուած խաւսութիւնք լռեցին և ուսուցիչ ո՛չ ոք էր, և զայս առաքեալ յայտնեաց, թէ՛ «Գիտութիւն<sup>4</sup> Աստուծոյ յայտնի էր ի նոսա, քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա: Զի աներևոյթ աստուածութիւն և զաւրութիւն<sup>5</sup> ի սկզբանէ աշխարհիս արարծովքս իմացեալ տեսանին, զի ո՛չ գտանիցին<sup>6</sup> տալ պատասխանի: // Զի ծանեան զԱստուած, և ո՛չ իբրև զԱստուած փառաւորեցին կամ գոհացան, այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց» (Յռոմ. Ա 19-21): Աստի իմանամք, եթէ բնական իմաստութեամբ քննեցին զարարածս և զշրջանս լուսաւորացն և բազում արուեստս գտին, վասն որոյ նովին իմաստուն քննութեամբ պարտ էր իմանալ զԱրարիչ ամենեցունց, որ գերիվերոյ կացեալ իշխան՝ կառավարէ զամենայնն:

ՍՏ Եւ յինքն եկեալ որպէս զթմբբեալ, և զթմբբութիւն ի բաց ընկեցեալ՝ յիշեաց զՀաւրն երանութիւն:

**Քանի՞ վարձկանք են** (ԺԵ 17):

Թուի, թէ որք կարգեցան լուսաւորք յԱրարչէն ծառայել մարդկան և իբրև որդոց<sup>7</sup> կալ ի սպասաւորութիւն: Միշտ անցանելով չափեն զժամանակս՝ ջահ լուցեալ ի վերուստ լուծանելով զխաւար և սնուցանելով զպտուղս, որ վասն մեր կան ի ծառայութիւն:

Ստ. Վարձկան<sup>8</sup> կոչի, որ ծառայէ Աստուծոյ կամ այլ ումեք: Եւ ծառայէ ո՛չ վասն սիրելոյ զնա, այլ<sup>9</sup> փոխանակ ծառայութեանն վարձուց ակն ունիցի:

**Ի տան հաւր իմոյ** (ԺԵ 17):

ԿՐ Տուն ասի, որ է եկեղեցի Աստուծոյ, յորում երկրպագի երկնաւոր Հայրն:

<sup>1</sup> A տակավին

<sup>2</sup> A, B ի յերկնից

<sup>3</sup> B զաւդոյն

<sup>4</sup> B գիտութիւնն

<sup>5</sup> B աստուածութիւնն և զաւրութիւնն

<sup>6</sup> B գտանիցեն

<sup>7</sup> B որդոյ

<sup>8</sup> B Այլև վարձկան

<sup>9</sup> B այլ զի



**Հասցալիցք** (ԺԵ 17):

**ԻԳ** *Զի գեղեցիկ են պայծառութեամբ և անկարաւտք ամենևին, իսկ մարդկան բնութիւնս՝ թշուառութեամբ լի և խաւարաւ անգիտութեամբ փակեալ, մինչև սովամահ կորնչել զյաւիտենական կորուստն:*

**ԿՐ.** *Իսկ «Հացն կենաց իջեալ յերկնից» (Յովհ. Զ 41) Քրիստոս է, որ բաշխի ի վերայ սրբոյ սեղանոյ[ն]:*

**Յարուցեալ գնացից առ Հայրն իմ<sup>1</sup>** (ԺԵ 18):

*Եւ<sup>2</sup> եկեալ՝ զփութապէսն ասէ, զի որք դառնան և ապաշխարելն<sup>3</sup> խորհին, նոյնպէս մի՛ յապաղեսցեն:*

**176ա** // **Ասացից<sup>4</sup>. Հա՛յր, մեղա՛ յերկինս<sup>5</sup>** (ԺԵ 18):

*«Յերկինս» ասելով՝ զառաջին յանցանսն, որ ի դրախտին, գուշակէ, զի անդ նախ՝ մեղաւ մարդկային բնութիւնս, որ և երկինք անուանի վասն անախտութեանն և անապականութեանն:*

**ՍՏ** *Յերկնաւորս<sup>6</sup> մեղայ, զի թողի զերկնաւորացն գործն և յերկրաւորս<sup>7</sup> քարշեցայ ի խնամոցն Աստուծոյ:*

**ԻԳ** *Այսպիսի եղև բնութիւնս: Թէպէտև<sup>8</sup> դիւրամեղ է, սակայն առանց ուսանելոյ ինքնագէտ է ապաշխարութեան և ապաշաւանաց, զոր գործեաց: Որպէս Տէրն գովեաց զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար (տե՛ս ԺԶ 1-8), և որպէս նինուեացիքն, որ ի մարգարէէն կործանումն միայն լուան և իմացան, եթէ Աստուած է, որ վասն անաւրէնութեան կորուստ սպառնայ և վասն արդարութեան կեցուցանէ (տե՛ս Յովն. Գ 5-10):*

**ԳՐ** *Մեղայ, Տէ՛ր, մեղայ, և [զ]անաւրէնութեանց իմոց<sup>9</sup> ես ինձէն վկայեմ:*

**ՍԿ.** *Եւ գրեմ զպարտուց զսակ[ս] անձինս մեղաց, քան զհող երկրի Հմափոշոյ<sup>10</sup> մեղայ բարերարիդ գթութեանց անարգս մեղայ:*

**Եւ առաջի քո** (ԺԵ 18):

*Զի անցեալ զպատուիրանաւ քո ի սատանայ յարեցայ:*

<sup>1</sup> B իմ և ասացից ցնա:  
<sup>2</sup> B **չիք** եւ  
<sup>3</sup> B գապաշխարելն  
<sup>4</sup> B **չիք** ասացից  
<sup>5</sup> B յերկինս և առաջի քո  
<sup>6</sup> B Այսինքն՝ յերկնաւորս  
<sup>7</sup> B գործսն և յերկրաւորացս  
<sup>8</sup> B որ թէպէտ  
<sup>9</sup> B գանաւրէնութիւնս իմ  
<sup>10</sup> B փոշոյ

Ո՛չ<sup>1</sup> ևս եմ արժանի կոչել որդի քո, արա՛ զիս իբրև<sup>2</sup> զմի ի վարձկանաց քոց (ժԵ 19):

ԳՐ Անառակ որդին պատկառանաւք հայրենի գլթոցն<sup>3</sup> թախանձանս արկանէր՝ ողորմելի և աղերսական ձայնիւ, արտասուագո՛չ ողբովք մատուցեալ<sup>4</sup> առաջի քո, «Հա՛յր գլթութեանց և<sup>5</sup> Աստուած» (Բ Կորնթ. Ա 3) բոլորից:

Չեմ արժանի և բնաւ<sup>6</sup> ծառայ կոչիլ (ժԵ 19):

Ո՛չ միայն որդի, այլև<sup>7</sup> անպիտան վարձկան: Ընկալ զսովեալս և զտարագրեալս վնասիւք<sup>8</sup>, և զցաւս քաղցոյ<sup>9</sup> լլկանաց նուաղե-

176բ ցելոյս<sup>10</sup> կեցոյ հացիւդ կենաց, // յագեցոյ և բժշկեայ և ողորմեայ:

Յարուցեալ եկն առ հայրն: Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես հայրն և գլթա[ցաւ]<sup>11</sup> (ժԵ 20):

ՍՏ Դեռևս հեռի էր, վասնզի ի յանցանացն ո՛չ էր թաւթափեալ, միայն զղջացեալ փութայր առ հայրն: Ո՛վ մեծ մարդասիրութիւն Հաւրն

ԻՊ և ամենաբարի բնութիւնն<sup>12</sup>: Ո՛վ քանի՞ անչափ են խնամքն Քրիստոսի, որ զծածուկս Հաւրն կամացն յայտնեաց մեզ և ընտանեցոյց Որդի[ս] անուանելով, որ և ծառայս ո՛չ էաք արժանաւորք, և զնա Հայր անուանեաց<sup>13</sup> զարարչագործն և, որ ինչ կարի սեփական է, սիրոյ եցոյց:

Յարեաւ ընթացաւ ընդառաջ<sup>14</sup> (ժԵ 20):

ՍՏ Թուի, թէ զառակիս դէմս առ Աբրահամ դնէ<sup>15</sup>, զբնութիւնս մեր գուշակէ: Արդ՝ իբրև էր Աբրահամ յՈվր քաղաքի, քաղաքի<sup>16</sup>

<sup>1</sup> B Եւ ոչ

<sup>2</sup> B որպէս

<sup>3</sup> B գլթոյ

<sup>4</sup> B մատուցանել

<sup>5</sup> B չիք և

<sup>6</sup> B ոչ բնաւ

<sup>7</sup> B այլ

<sup>8</sup> B վնասուք

<sup>9</sup> B քաղցոյս

<sup>10</sup> A նուախեցելոյս

<sup>11</sup> B Եւ յարուցեալ առ հայր իւր: Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն, գլթացաւ ի նա:

<sup>12</sup> B բնութեանն

<sup>13</sup> A անվանեաց

<sup>14</sup> B Եւ ընթացաւ ընդ յառաջ, անկաւ զպարանոցաւն նորա:

<sup>15</sup> B ասէ և փիս դնէ

<sup>16</sup> B չիք քաղաքի

քաղղեացոց, և անդ երևեցաւ նմա Աստուած, յորժամ պաշտէր զտարերս լուսաւորաւքդ: Եւ նա խնդրեաց զտանել զԱստուած, և արագ եգիտ զԱստուած: Եւ պատմեաց զաւետիսն տոհմի իւրոյ և հաւատացին, և յուժարեցան զնալ<sup>1</sup> յոր կողմ և<sup>2</sup> երթայցէ Աբրահամ: Բայց եղբայր իւր Առան ո՛չ հաւատաց տեսեանն, սատակեաց զնա Տէր (տե՛ս ԾՃՆԳ. ԺԱ 28):

Իգ. Ո՛չ ապաշխարութիւն ինչ, ո՛չ արտասուք, ո՛չ հառաչանք, այլ միայն դիմեաց զնալ: Եւ նա տեսեալ ընդառաջ զնաց: «Հաւատ[աց] Աբրահամ յԱստուած, և համարեցաւ նմա յարդարութիւն<sup>3</sup>» (Յոռմ. Դ 3) և, որք ի հաւատոց անտի<sup>4</sup> են, աւրհնին ընդ հաւատացելոյն Աբրահամու: Եւ Աստուած փառաց երևեցաւ հաւր մերում<sup>5</sup>, մինչև բնակեցուցեալ էր զնա ի Խառան, զինչքա՞ն զայս<sup>6</sup> ընդառաջ լինել հաւրն անառակին:

177աՍԲԿ //Իւրով ի բազում գլթով ընթացաւ ընդառաջ, որպէս բարեգործի ումեք որդոյ ի սկզբանէ: Նա ևս առաւել որպէս փափագող կենդանութեան մեռելոյ<sup>7</sup> և ի գիւտ<sup>8</sup> կորուսելոյ:

Անկաւ զպարանոցաւ նորա (ԺԵ 20):

Ստ. Որ ազատեալն էր ի լծոյ սատանայի:

Եւ համբուրեաց զնա (ԺԵ 20):

Տայր նմա և զհամբոյրն Նշանակելով զմիաւորութիւն առ որդին:

Սրկ.(ստ.) Ո՛չ արդէք յիշեաց ինչ խնամ առատն<sup>9</sup> զառաջին անզգամութեան զսխալանացն սաստկութիւն վերստին առ ինքն դարձմամբ: Ո՛չ գարչեցաւ ի տգեղութենէ հոգոյ նորա մաքուրն յամենայնի: Եւ գերազանցեալ սրբութեամբ ծայրագունիլ ո՛չ անսաց ի կատարում գալ գործով, զոր ինչ խորհեցաւ թշուառացեալ որդին՝ հայելով ի սրտին ախորժակն<sup>10</sup> միայն, արար մոռացումն ապիրատութեանն: Գիրկս արկանէր զերբեմն ապստամբելոյ որդոյն [զ]պարանոցաւն՝ համբուրելով վասն կարաւտութեանն: Զտարածամ

<sup>1</sup> B գտանել *փխ* գնալ  
<sup>2</sup> B *չիք* և  
<sup>3</sup> B արդարութիւն  
<sup>4</sup> B հաւատոցն անդի  
<sup>5</sup> B մերում Աբրահամու  
<sup>6</sup> B գայս պատիւ  
<sup>7</sup> B կենդանութեանն մեռելոց  
<sup>8</sup> B *գրփխ* գիւտ ի  
<sup>9</sup> B սրբ. ամենառատն *փխ* խնամ առատն  
<sup>10</sup> B ախորժակս

անդրէն դարձեալ<sup>1</sup> որդին, զի թէպէտև անազան, սակայն ո՛չ անարժան գովութեան:

- ԻԳ Արդ՝ երևեցաւ Աստուած Աբրահամու առ կաղնե[ա]ւն Մամբրէի: Աբրահամ ընդառաջ գնաց, երկիր եպագ և ետ ողջոյն և համբուրեաց (տե՛ս ԾՆՆդ. ԺԸ 1-5): Ահաւասիկ անկաւ զպարանոցաւ անառակին և համբուրելն, և<sup>2</sup> նստելն առ նմա, լուանալն և ուտելն (տե՛ս ԺԵ 20-23):

Ասէ՛ցնա որդին. Հա՛յր, մեղայ յերկինս (ԺԵ 21):

- ԿՐ. Լե՛ր ընդառաջ քո ողորմութեամբ, բանաւորացս ապաւինութիւն<sup>4</sup>:

- ԻԳ. Թէպէտև հայրն անյիշաչար եղև, սակայն նա խոստովանի 177բ զյանցանացն ստահակութիւն: // Եւ<sup>5</sup> այս իսկ է պիտանացու: Զի յորժամ մեք յիշեմք՝ Աստուած թողու և մոռանայ զյանցանսն, իսկ յորժամ մոռանամք՝ նա յիշէ զանաւրէնութիւնս մեր: Արդ՝ զգէմս Ադամայ և ամենայն ծննդոց նորա առեալ՝ նահապետին<sup>6</sup> ասէ. «Հա՛յր, մեղա՛ յերկինս»:

- ԿՐ. Զգրախտն կոչեաց երկինս, յորում՝ առաջին [յ]անցանքն և դատապարտութիւնքն, որով այսքան ապականութիւն հեղաւ ի բնութիւնս մեր: Իսկ «[յ]երկինս» ասել զգրախտն՝ վասն տեղոյն գրութեան և անմահ և անապական<sup>7</sup> կենացն:

Մեղա՛ և առաջի քո (ԺԵ 21):

- ԿՐ. Զի ո՛չ թաքուստ և անյայտ ուրեք, այլ առաջի ամենատես աչացդ, ուր<sup>8</sup> չիք հնար թաքչել, զի զանգործս իմ տեսին աչք քո և ի գիրս քո ամենեքին գրեցան:

Ո՛չ ևս եմ արժանի կոչել որդի քո (ԺԵ 21):

Այսպիսի միտս ունել պարտ է յանցաւորաց: Թէպէտև ի խնամոցն Աստուծոյ արժանաւորին թողութեան<sup>9</sup>, սակայն զանձինս առ յանցաւորս պարտ է ունել և յիշատակաւ<sup>10</sup> մեղացն խոնարհել:

<sup>1</sup> B դարձուցեալ

<sup>2</sup> B չիք և

<sup>3</sup> B եւ ասէ

<sup>4</sup> B Լե՛ր... ապաւինութիւն՝ գրված է «Ասէցնա որդին...» (ԺԵ 21) տնից առաջ

<sup>5</sup> B զի փիւ և

<sup>6</sup> B նահապետն

<sup>7</sup> B ապական

<sup>8</sup> B որով

<sup>9</sup> B գթութեանն փիւ թողութեան

<sup>10</sup> A յիշատակավ

Զի որչափ մեք զանձինս ի<sup>1</sup> խոնարհ ընկենումք, նա ի վեր տանի, և որչափ ամբառնամք<sup>2</sup>, նա ի ստորևս ընկենու:

Ասէ հայրն զԾառայս<sup>3</sup> իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և զգեցուցէք<sup>4</sup> (ԺԵ 22):

Ըստ որում՝ «Եւ զեզն պարարակ, ասաց, զենուլ» (հմտ. ԺԵ 23): Եւ ո՛չ ի նմին<sup>5</sup> զենեալ էր, այլ խորհրդով զենաւ վասն յուսոյն վստահութեան: Նոյն աւրինակաւ զգեցան արդարքն զգգեստն անապականութեան զՔրիստոս յուսով խոստմանն: Եւ

178ա ո՛չ եմք մատուցեալ ի լեառն շաւշափելի, այլ յիմանալի լեառնն // և ի բանակս բիւրաւոր հրեշտակաց: Եւ տակաւին յաշխարհի եմք, բայց հաւատով<sup>6</sup> ունիմք զպարգևս: Նոյնպէս և աստ ասէ.

**Զգեցուցէք** (ԺԵ 22):

Դէմք են առակաւոր բանից, զի ո՛չ<sup>7</sup> ըստ աւրինի թագաւորաց պաշտանէիւք վճարէ, բայց ամենակատար բնութիւնն<sup>8</sup> ո՛չ կարաւոր սպասաւորաւք վարիլ, որոյ կամելն գործ է կատարեալ:

Իգ. Զգեցոյ գթած և անոխակալ, անաւրինեալ մեղաւորիս<sup>9</sup> զանկապուտ հանդերձին զծածկոյթ<sup>10</sup>:

ՍՐԿ Արդ՝ մերկութիւն<sup>11</sup> նշաւակութեանս ո՛չ տերև թգենոյ,

ԳՐ. այլ զեղեցիկ պատմուճանաւ լինէր զգեցեալ, զոր ունէր նախքան զաւտարանալն ի Հաւրն<sup>12</sup> պայծառութենէն:

ՍՏ Կամ առաջին պատմուճան՝ զառաջին զարգ հոգոյն<sup>13</sup>, որով զարդարէ և ուրախացուցանէ զհոգի ապաշխարողացն և ի բաց ընկենու գտրտմական<sup>14</sup> անզարդութիւն<sup>15</sup> յանցանացն:

**Տուք**<sup>16</sup> զմատանին ի ձեռս նորա<sup>17</sup> (ԺԵ 22):

<sup>1</sup> B անարժան համարիմք և ի  
<sup>2</sup> B համբառնայ ոք  
<sup>3</sup> B ցծառայսն  
<sup>4</sup> B ագուցէք նմա  
<sup>5</sup> B ձախ լս. սրբ.՝ (նմին) աւուր  
<sup>6</sup> B հաւատովք  
<sup>7</sup> B չէք ոչ  
<sup>8</sup> B բնութեանն  
<sup>9</sup> B մեղապարտիս  
<sup>10</sup> B ծածկոյթ  
<sup>11</sup> B մերկութեան  
<sup>12</sup> B ունէր նախ յաւտարանալն Հաւրէն  
<sup>13</sup> B տողի վերևում ավելացրած՝ ասէ  
<sup>14</sup> B գտրտմականսն  
<sup>15</sup> B մեղաց փխ անզարդութիւն  
<sup>16</sup> B Եւ տուք  
<sup>17</sup> B նորա և կաւշիկս յոտս նորա

- ԿՐ *Ջազատութիւնն ի ծառայական կարգացն, և զորդեգրութեան աշտիճան<sup>1</sup> ի ձեռն որդեգրութեան<sup>2</sup> աւազանին պատմութեանաւն:*
- ՍՏ *Մատանի՝ զնկարագիրն, որով զործական հոգին զարդարի:*
- ԳՐ. *Արդ՝ աւանդակորոյս ձեռացն աղտեղեալ մեղաւք՝ զկնիք մատանոյն համարձակութեան ամենառատ կամաւք մատուցես ինձ:*
- Իգ.(գր.) *Կամ զի քանդակուածով<sup>3</sup> ականն զնոյն թագաւորական պատկերն նշանակէ, զոր դարձեալ դրոշմէ ի նա զտիպս թագաւորական կնքոյն:*
- Եւ զկաւչիկս յոտս նորա** (ԺԵ 22):
- 178բ Կր. *Ձի աներկի[ւ]ղ լիցի գարշապարն ի թիւնից աւձին՝ // ընթանալ զյաւիտենական ճանապարհն: Կաւչիկս ո՛չ զեզիպտացոցն, զոր հրամայեաց ի բաց ընկենուլ այնոցիկ, որ զնան ի վերայ Սուրբ երկրի, այլ որ ի պատրաստութենէ սուրբ աւետարանին կազմեցան:*
- ԳՐ *Նաև<sup>4</sup> զգարշապարացն թշուառութիւն<sup>5</sup> ամրացոյց ի խածանող վիշապէն: Ձմերկութիւն ոտից ամուր վերարկու<sup>6</sup>՝ պահպանութեամբն ամրափակէ վերստին խորհրդական կաւչկաւք:*
- Իգ. *Ձի համարձակ լիցի կոխել զգլուխ կամակոր աւձին և զամենայն զաւրութիւն թշնամոյն: Եւ իբրև զթագաւոր նըստուցանէ պատ[ո]ւով յաթոռ զքնութիւնս մեր:*

**Ածէք<sup>7</sup> զեզն պարարակ, զենէք, կերիցուք<sup>8</sup>** (ԺԵ 23):

*Ո՛վ մեծ խորհրդեանս և արժանի զարմանալեացս<sup>9</sup>, որ հիացուցանէ զթանճրամիտս ընդ Հաւրն գթածի, որ վասն անառակ ծառայից փրկութեան զստոյգ և զսիրելի Որդին ի զենուամն տայ ուրախութեամբ:*

**Ուրախ լիցուք** (ԺԵ 23):

*Ընդ Որդոյն, որ զայս ամենայն առաջի դնէ լսողացն՝ վասն անձին իւրոյ զենման յուրախութիւն<sup>10</sup> ապստամբացս: Վկայէ և*

<sup>1</sup> B աստիճան

<sup>2</sup> B *չիք* որդեգրութեան

<sup>3</sup> B քանդակուածով

<sup>4</sup> B նա

<sup>5</sup> B թշուառութիւնս

<sup>6</sup> B ոտիցս ամուր վերարկուաւ

<sup>7</sup> B Եւ ածէք

<sup>8</sup> B կերիցուք և ուրախ լիցուք

<sup>9</sup> A զարմանակեացս

<sup>10</sup> A, B ի յուրախութիւն

Եսայի. «Որպէս գոչիւար ի սպանդ վարեցաւ, և<sup>1</sup> որպէս գորոջ առաջի կտրչի անմոռնչ կայ» (Ես. ԾԳ 7):

Ստ. Արդ՝ զուարակ պարարեալ՝ Բանն ողջախոհ վարդապետութեամբ, կամ ինքն իսկ Քրիստոս Բան և իմաստութիւն Աստուծոյ: Որպէս Սողոմոն<sup>2</sup> ասէ. «Իմաստութիւն շինեաց իւր տուն և կանգնեաց սիւնս եւթն: Զէն զզենլիս իւր և խառնեաց զխառնելիս իւր» (Առակ. Թ 1-2):

ԿԲ Զի մկրտելոցն և որդիացելոցն վայելէ մարմին և արիւն Փրկչին:

Գր. Մարդասիրութեամբ կարաւտելոց բաշխեաց նուէրս առատապէս, //որ<sup>3</sup> մատուցեալ միշտ բաշխի և կայ անպակաս ի լրութեան: Յարակայ զենեալ ի սպանդարանի անթիւ սեղանոց՝ անսպառութեամբ բոլոր յամենեսին և բնաւ յամենայնի: Էութեամբ է<sup>4</sup> յերկինս և իսկութեամբ յերկրի, աննուազ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ զենեալ և բաշխեալ ի մասունս անհատս, զի զամենեսին հաւաքեսցէ առ ի նոյն մարմին գլխոյն իւրում: Եւ արդ՝ Հայր<sup>5</sup> ամենագութ, որ զամենայն անպատում պարգևեցեր<sup>6</sup> մարդկան՝ յաղթեալ ի մարդասիրութենէ քումմէ, բարձրեալ, հզաւր, անսկիզբն, անեղ, անբաւընդակելի, աննիրհելի, ակն նկատաւղ, ծնաւղ<sup>7</sup> անքն[ն]ին փառաց Միածնիդ:

ՍԲԿ Զուգականին Որդւոյ սիրելոյ և հնազանդութեան խոնարհութիւն<sup>8</sup>, ամենայնիւ հաւասար մեզ և առանց մեղաց, անչարչարական էութեան, զուգազունին՝ չարչարանք մարմնով, և անմահին՝ մեռելութիւն յաղագս մեր կենդանութեան:

Զի<sup>9</sup> որդիս իմ մեռեալ էր և եկեաց (ԺԵ 24):

ԻԳ. Դառնագոյն մահ այն է, որ մեղացն է, որ զճշմարիտ կեանսն սպանանէ:

Կորուսեալ էր և գտաւ<sup>10</sup> (ԺԵ 24):

Տաժանելի<sup>1</sup> կորուստ այն է, որ հոգոյն է ապականութիւն ի գեհեննի անդ, և կենդանութիւն և կարի զարմանալի և աստուա-

<sup>1</sup> B չիք և  
<sup>2</sup> B Սողոմոն  
<sup>3</sup> B չիք որ  
<sup>4</sup> B չիք է  
<sup>5</sup> B ո՞ Հայր  
<sup>6</sup> B պարգևս պարգևեցեր  
<sup>7</sup> A ծնող  
<sup>8</sup> B հնազանդութեամբ խոնարհութեանն  
<sup>9</sup> B Զի այս  
<sup>10</sup> B գտաւ. և սկսան ուրախ լինել

ծայրին և յաւիտենական: Նոյնպէս և գտանելն՝ առ յԱստուծոյ<sup>2</sup> յարկսն յաւիտենից բնակելով, և ուրախութիւն անփոխանորդելի:

Գր. Աւետարանեայ<sup>3</sup> բանիւ աւրհնութեամբ զկենդանութիւն ինձ  
179բ մահացելոյս, զբարեբանութիւն կամացդ յայտնեայ, // ստացիր<sup>4</sup> քեզ անուն անճառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութեան<sup>5</sup>: Կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան, զվճիռ հոգոյս ջրեսցես աստուածապէս՝ կայլակաւք որդոյ քո սիրելոյ: Վստահութիւն փրկութեան բարեաց, արեամբ Քրիստոսի քո, նկարեսցես զհոգի և զմարմին կորուսելոյս:

ՍՐԿ Որ եկն կոչել զմեղաւորս յապաշխարութիւն և բժշկել զախտաժէտս հիւանդութեամբ չարութեան:

Եւ էր երէց որդի նորա յագարա[կի]<sup>6</sup> (ԺԵ 25):

Որպէս յԵրգսն<sup>7</sup> ասէ Սողոմոն<sup>8</sup>. «Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղեմի» (Երգ Բ 7), որ են հրեշտակք ի զաւրութիւն և յուժգնութիւն ագարակի զարթուցանել զսէրն, որ ո՛չ մեղան, և բարի և պարարտ անդաստանի եղեն գործանեայք<sup>9</sup>:

Եւ ի մերձենալ<sup>10</sup> ի տունն՝ լուաւ զձայն երգոցն<sup>11</sup> և զպար[ուց] (ԺԵ 25):

Արդ՝ պարտ էր ի դառնալ որդոյն առ հայրն և ապաշխարել, համաձայն երգոց<sup>12</sup> լսելի լինել: Եւ երգք համաձայնք են աստուածաբանութիւնք, աւրհնութիւնք և այլոց<sup>13</sup> այսպիսի զանազանք, և ո՛չ հակառակ ձայնից դէմք:

ԳՐ Առ երկնաւորսն և առ երկրաւորս տաւնէ զկորուսելոցս կենդանութիւն՝ վերնոցն պարակցութեամբ:

ԻԳ Այս յաւրեալ բան նշանակէ զիմանալեացն<sup>14</sup> բնութիւն, թանձր աւրինակաւք ձեացուցանէ զհաղորդութիւն առակին առ ճշմարտութիւն: Զի այս խորհուրդ փրկութեան մարդկան ծածկե-

<sup>1</sup> B տարժանելի

<sup>2</sup> A, B ի յԱստուծոյ

<sup>3</sup> B Աւետարանէ

<sup>4</sup> B և ստացիր

<sup>5</sup> B և ինձ... փրկութեան՝ սրբ. է ստորին լս.

<sup>6</sup> B յագարակի, և մինչդեռ գայր

<sup>7</sup> A, B ի յերգսն

<sup>8</sup> B Սողոմոն

<sup>9</sup> B գործունեայք

<sup>10</sup> B մերձ եղև *փես* ի մերձենալ

<sup>11</sup> B երգոց

<sup>12</sup> B երգուց

<sup>13</sup> B այլք

<sup>14</sup> A զիմանակեացն



ցաւ յիմանալեացն, որ մերձ են առ Աստուծոյ: Որպէս ասէ առ ռաքեալ. «Խորհուրդն, որ ծածկեալն<sup>1</sup> էր յաւիտեանցն<sup>2</sup> և յազգաց, այժմ

180ա յայտնեցաւ» (Կողոս. Ա 26)՝ *ի ձեռն // եկեղեցոյ, իշխանութեանց և պետութեանց:*

Եւ կոչեալ<sup>3</sup> զմի ի ծառայիցն՝ Հարցանէր զի՞նչ<sup>4</sup> իցէ այն: Եւ նոքա ասեն, զի եղբայր քո եկեալ է, և եզեն Հայր քո զեզն պարարակ<sup>5</sup> (ԺԵ 26-27):

ՍՏ Արդ՝ ի<sup>6</sup> վերանալն Քրիստոսի յերկինս<sup>7</sup> աստուածային և մերոյին բնութեամբս միացեալ՝ ունելով զսպիս բեկեացն և զխոցումն<sup>8</sup> տիգին, զոր ի հանդերձեալսն ծանեաք նոյն կերպիւ գալով, զի տեսցեն զոր խոցեցինն: Ընդ որ մարգարէն<sup>9</sup> հիացեալ ասէ<sup>10</sup>. «Զի՞նչ է այդ վերք ի ձեռս քո» (հմմտ. Ձաք. ԺԳ 6): Եւ լուեալ զայս ասէ. «Զոր վիրաւորեցայ ի տան սիրելոյ իմոյ» (Ձաք. ԺԳ 6): Նոյն տեսեալ<sup>11</sup> և Եսայի ասէ<sup>12</sup>. «Ո՞վ է սա, որ դիմեալ գայ յեղոմայ: Կարմրութիւն ձորձոց իւրոց ի բոսորայ» (Ես. ԿԳ 1), որ թարգմանի մարմին, որ թերևս զկարմրութիւն արեանն, որ բ[ղ]խեաց ի կողից նորա: Քանզի պահէ զկողն և զարիւնն ի յանդիմանութիւն հրէիցն, զոր [մ]ի՛, յորժամ տեսցեն զնա փառաւք եկեալ, ուրասցին, եթէ զսա մեք ո՛չ խաչեցաք:

Վասն այսորիկ<sup>13</sup> զարիւնն և զտեղին խոցեալ և սպիացեալ՝ մնաց յարութեանն<sup>14</sup>, զի յամաւթ արասցէ զնոսա ի ժամանակի թագաւորութեանն իւրոյ:

ԻԳ Իսկ իբրև եմուտ յերկինսն<sup>15</sup> աւրհնութեամբ հրեշտակացն, որք յուղարկէին զնա, և մերձեցաւ յառաջին դասն Գաբրիելեան, որք տեղեակ էին տնաւրէնութեանն, և նոքա մեծաւ ցնծութեամբ ելին ընդառաջ բազմութիւն զաւրացն և սկսան բարձրաձայն ուրա-

1 B ծածկեալ  
2 B յաւիտեանց  
3 B կոչեալ առ ինքն  
4 B թէ զի՞նչ  
5 B նոքա ասեն... պարարակ՝ սրբ. է աջ լս.  
6 B **չէք** ի  
7 A ի յերկինս  
8 B զխոցումն  
9 B մարգարէին  
10 B ասէր  
11 B նոյնպէս **փխ** նոյն տեսեալ  
12 B Հարցանէ  
13 B այնորիկ  
14 B մնայ մինչ ի յարութեանն  
15 A, B ի յերկինս

խոսվեամբ աւրհնել զՔրիստոս: Զի տեսին մարմնով զայն, որ ո՛չ երբեք տեսին ըստ աստուածութեանն: Եւ շարժեալք յիւրեաց կայենիցն՝ յուղարկէին զնա փառաբանութեամբ:

Ստ. (կւր.) // Իսկ վերին դասքն՝ սրբէիցն և քրոբէից<sup>1</sup> և այլն ամենայն, 180ք զարմացեալ հիանային՝ տեսանելով զաղամական<sup>2</sup> պատկերն երկնազ[ն]աց եղեալ, անգիտանային զտնաւրէնութեան խորհուրդն սքանչացեալք: Քանզի անհաս մտաց էր Բանն, զի ծածկեաց Որդին Աստուծոյ զստորեալ ճանապարհն և ո՛չ<sup>3</sup> զեկոյց հրեշտակաց, զի խայտառակեսցէ զբանսարկուն ի ծածուկ: Եւ ո՛չ էր ժամանակ պատուոյ, այլ անարգութեան: Զի մի՛ ուսցին սպասաւորք, զի զառ ի ստորին<sup>4</sup> զիջանելն ո՛չ գիտացին: Վասն այսորիկ<sup>5</sup> աստուատ զվեր<sup>6</sup> ճանապարհն զարմանային սքանչելիս նոր և սոսկալի իրս արտաքոյ բնութեանն՝ տեսանելով զնա մարմնով ի վեր երթեալ:

ԻՊ Եւ զանսովոր ձայն հնչմանն աղաղակէին<sup>7</sup> առաջին դասուցն, որք ընդ նմա գային աւրհնութեամբ: Եւ ի սքանչացման եղեալ՝ սկսան և նոքա աղաղակել զԵսայեան<sup>8</sup>. «Ո՞վ է սա, որ զիմեալ գայ յԵդոմայ» (Ես. 49 1): Սկսանի ինքն Յիսուս առնէ պատասխանի, քանզի յառաջ գնայր<sup>9</sup> քան զհրեշտակս, որք ընդ նմայն էին, որ ո՛չ թողու զճառայս իւր ի տարաբերս: Ասէ. «Ես եմ, որ խաւսիմ զարդարութիւն և պատմեմ զճշմարտութիւն և զիրաւունս փրկութեան» (Ես. 49 1):

ՍՏ Ո՞վ գեղեցիկ տիրական Բանին, ո՞վ ճշմարտութիւն նմա միայնումն վայելուչ գոլով զգործան ասէ, իսկ զպատիւն լուէ, քանզի ո՛չ ասաց ես եմ Տէրն ձեր, այլ զայն լուեաց: Ի գործոցն կամեցաւ զինքն ծանուցանել:

181ա ԻՊ Վասն որոյ անգիտացեալ իշխանութեանցն հա(//)րցանեն. «Վասնէ՞ր կարմիր են ձորձք քո, և հանդերձք քո իբրև հնձանահարի» (Ես. 49 2): Յորում պատասխանի առնէ նոցա Տէր. «Հնձան հարի միայն և ի հեթանոսաց ո՛չ ոք էր ընդ իս: Կոխեցի զնոսա սրտմտութեամբ իմով» (Ես. 49 3), զի «Ո՛չ ոք էր, որ աւգնէր», և ո՛չ

<sup>1</sup> Ե սերովբէից և քերովբէից

<sup>2</sup> Ե գաղամային

<sup>3</sup> Ե չէք ոչ

<sup>4</sup> Ե ստորինսն

<sup>5</sup> Ե այնորիկ

<sup>6</sup> Ե զվերին

<sup>7</sup> Ե աղաղակին

<sup>8</sup> Ե գեսայեան

<sup>9</sup> Ե յառաջն գայր

ոք էր<sup>1</sup>, որ փրկէր, «և ո՛չ ոք էր, որ ի թիկունս հասանէր» (Ես. 49 5): Ապա ողորմեցայ կորուսելոցն:

ՍՏ Ո՛վ ճշգրտութիւն մարգարէին, մանաւանդ եթէ Հոգոյն Սրբոյ ամենագիտողի, քանզի ո՛չ Եսայե[ա]ն<sup>2</sup> են այսօրիկ, այլ Հոգոյն Սրբոյ, որ ի նմա խաւսէր՝ գիտացեալ յառաջ, որ ի Քրիստոս կատարելոց էր, զբանն պատշաճեաց:

Իգ. Իսկ ներքին դասքն, որ ընդ նմա գային, իբրև տեսին, եթէ անգիտութեամբ որպէս զմարդ ոք հարցաքննեն զնա, ասեն մեծածայն աղաղակաւ՝ իբրև սաստելով իշխանութեանցն և պետութեանցն և այլ հրաբուն զաւրացն. «Համբարձէք իշխանք զգրունս ձեր ի վեր<sup>3</sup>, և մտցէ թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ 7): Այսինքն՝ թոյլ տուք, ի բաց կացէք, ճանապարհ արարէք: Եւ նոքա հիացեալ՝ զարմացան, վասնզի ո՛չ գիտէին նոքա զոք թագաւոր փառաց մարմնով, որ այնպիսի բուն զաւրութեամբ մտանէր յերկինս և այսպիսի<sup>4</sup> նոր տեսութեան պատահել<sup>5</sup> բանից: Դարձեալ կրկնեն. «Ո՛վ է սա թագաւոր փառաց<sup>6</sup>» (Սաղմ. ԻԳ 8): Ապա ներքինքն ասեն. «Տէր զաւրութեանց, սա է թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ 10): Տէր զաւրութեանց յատուկ<sup>7</sup> Աստուծոյ է: Եւ զայս լուեալ՝ բնաւ ապշեցան վերինքն, զի ո՛չ կարացին կալ ի վերայ խորհրդոյն, միայն

181ք լուեալ դադարեցին: // Իսկ յորժամ տեսին, թէ անց ընդ ամենայն դասս իշխանութեանց և պետութեանց և տերութեանց, և ել ի վերոյ քան զամենայն երկինս և եմուտ ի ներքին կողմն վարագուրին: Եւ նստաւ ընդ աջմէ Հաւր ի բարձունս իբրև յիւր սեփական աթոռ: Ապա զներքին դասն սկսան հարցանել, զի ուսցին ի նոցանէ: Եւ այս է, ասէ<sup>8</sup>, երէց որդոյն կոչելն զմի ծառայակիցն<sup>9</sup> և հարցանել:

Ստ. Բայց<sup>10</sup> երկու պատճառ են անգիտանալոյ հրեշտակացն վերնոց: Մի՝ զի յաթոռ փառաց տեսանէին ընդ Հաւր, թէպետև յորովայնի Կուսին լիով յերկրի<sup>11</sup> և բովանդակ<sup>12</sup> յերկինս<sup>13</sup>: Եւ միև

1 B **չէք** ընդ իս: Կոխեցին... ոչ ոք էր  
2 B Եսայեայ  
3 B **չէք** ի վեր  
4 B այս  
5 B պատահեալ  
6 B **չէք** Տէր զաւրութեանց... փառաց  
7 B այս յատուկ  
8 B ասելն  
9 B ի ծառայիցն  
10 A բացց  
11 A, B ի յերկրի  
12 A բաւրնդակ  
13 A, B ի յերկինս

ևս՝ զի յառաջ ի ձեռն հրեշտակաց լինէր երևումն կամ ազդեցութիւն<sup>1</sup> ինչ<sup>2</sup> Աստուծոյ առ մարդիկ: Կամեցաւ Աստուած, որ մեք ո՛չ վերջանայաք ի հրեշտակաց, զտնաւրէնութիւն[ն] ի նոցանէ ծածկեաց<sup>3</sup>, զի զայս զանճառելի խորհուրդս<sup>4</sup> ի մարդկանէ ուսանիցին:

Եւ նոքա ասեն<sup>5</sup>. Ձի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա (ԺԵ 27):

ԻԳ Արդ՝ զաբրիելեան դասքն, որ շրջէին ընդ մարդկան, զայս լուան ի մարգարէիցն՝ զիջանելն յերկնից<sup>6</sup>, զառնուլ մարմին ի Կուսէն և միաւորելն ընդ աստուածութեանն, և տալ զանձն ի չարչարանս ընդ<sup>7</sup> մարդկան, և արդարացուցանել և առ ինքն ժողովել, զոր ուսան յելից խորհրդոյն, որ կատարեցաւ ի մէջ մարդկան և ուսուցին զվերին դասապետութիւնսն:

182ա ՍՏ Եւ այս է, զոր ասէ Պաւղոս, թէ՛ «Յայտնեցաւ //բազմապատիկ իմաստութիւն<sup>8</sup> Աստուծոյ ի ձեռն եկեղեցոյ իշխանութեանց և պետութեանց» (հմմտ. Եփես. Գ 10):

Բարկացաւ և ո՛չ կամէր մտանել<sup>9</sup> (ԺԵ 28):

ԻԳ Մարդկաւրէն ձևացուցանէ<sup>10</sup> զբանն, զի հրեշտակք ահիւ և դողութեամբ կան առաջի Աստուծոյ և ո՛չ իշխեն խաւսիլ<sup>11</sup> ինչ: Բայց իմացան, եթէ բնութիւն մարդոյ միացաւ ընդ աստուածութեանն և նստաւ ընդ աջմէ Հաւր, և նմա կրկնի<sup>12</sup> ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորացս: Ծանեան, եթէ մարդկան ազգ քան զնոսա ի վեր էանց ի բուն իսկ յերկինս<sup>13</sup>, որ ո՛չ ոք եմուտ յիմանալեացն: Ըստ այնմ՝ «Ո՛չ ոք ել յերկինս, եթէ ո՛չ որ էջն յերկնից» (Յովհ. Գ 13): Եւ որպէս խոստացաւ առաքելոցն, եթէ՛ «Ուր եսն եմ, և դուք ընդ իս իցէք» (հմմտ. Յովհ. ԺԲ 26), և առ Հայր զայս աղաւթէր. «Կամիմ, զի ուր ես եմ, և սոքա ընդ իս իցեն, զի տեսցեն զփառս իմ» (Յովհ. ԺԵ 24): Ստուգապէս բարկացան հրեշտակք,

<sup>1</sup> Բ ազդումն

<sup>2</sup> Բ չիք ինչ

<sup>3</sup> Բ ծածկեալ

<sup>4</sup> Բ զխորհուրդս

<sup>5</sup> Բ նա ասէ ցնա

<sup>6</sup> Բ ի յերկնից

<sup>7</sup> Բ վանն

<sup>8</sup> Բ իմաստութիւնն

<sup>9</sup> Բ մտանել: Եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա

<sup>10</sup> Բ ձևացուցէ

<sup>11</sup> Բ խաւսել

<sup>12</sup> Բ կրկնեցի

<sup>13</sup> Բ ի յերկինս

զի կրի ի նոսա այս ախտ, որ ոգոց միայն է առ մեզ, այսինքն՝ նախանձ և փառասիրութիւն և ամբարտաւանութիւն<sup>1</sup>: Բայց ո՛չ զաւրանայ բռնադատել զնոսա որպէս զմեզ: Եւ ի՞<sup>2</sup> դէպ է ասել զայս.

**Այս<sup>3</sup> քանի՞ ամօք են, զի ծառայեմ քեզ, և երբեք զպատուիրանաւ քո՞<sup>4</sup> ո՛չ անցի** (ԺԵ 29):

Բայց սակայն յայնպիսի պատիւ<sup>5</sup>, բնութիւն նոցա ո՛չ ել և ո՛չ այլ յաւելուած պատուոյ առին:

ՍՏ **Գիտեա՛, զի ո՛չ է՞<sup>6</sup> անգործ և դատարկ Սուրբ զուարթնոցն՝<sup>7</sup> կենցաղ, այլ ունին ի բնութեանն<sup>8</sup> իւրեանց պաշտաւն ծառայութեան՞<sup>9</sup>:**

**Ուլ մի՞<sup>10</sup> ո՛չ ետուր ինձ՞<sup>11</sup>** (ԺԵ 29):

182բ ԻԳ **Արդ՝ ո՛չ եթէ զայս ասել բաւական էին, // այլ միայն խորհեցան ախտիւ նախանձուն:**

ՍՏ **Վասնզի զենումն ուլոյ՝ Հոգոյ բանականի՞<sup>12</sup>, որ բարձրացուցանէ՞<sup>13</sup> զմեղուցեալսն և հանէ՞<sup>14</sup> ի սուրբ կենդանութիւն, վասնզի ո՛չ մեղաւ երէց որդին, վասն այնորիկ և ո՛չ ուլոյ պիտոյանայր ի զենումն կամ զմտացն յարձակումն և՞<sup>15</sup> մեղս շնչականս:**

**Իսկ յորժամ եկն որդիտ՞<sup>16</sup> քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս** (ԺԵ 30):

Բանքս վստահ եղելոյ են յառաջախոհութեան, բայց պոռնիկք ի զանազան չարութեան հիւթս կան՞<sup>17</sup> մարմնական կենցաղոյս:

---

<sup>1</sup> A, B ամպարտաւանութիւն  
<sup>2</sup> B **չէք** ի  
<sup>3</sup> B Պատասխանի ետ և ասէ ցհայրն. Այս  
<sup>4</sup> B քով  
<sup>5</sup> B յայնպատիւ **փես** յայնպիսի պատիւ  
<sup>6</sup> B են  
<sup>7</sup> B զուարթոցն  
<sup>8</sup> B բնութիւնն  
<sup>9</sup> B պատշաճ ծառայութիւն  
<sup>10</sup> B մի երբեք  
<sup>11</sup> B ինձ, զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ  
<sup>12</sup> A բանականի որ բանականի. \_«որ բանականի» բառերը, ռետինով կարծես ջնջած-հանած լինի  
<sup>13</sup> B բարձրացուցանելն է  
<sup>14</sup> B զմեղուցեալն և հանել  
<sup>15</sup> B ի  
<sup>16</sup> B որդիդ  
<sup>17</sup> B չարութիւնք հիւթական

**Ջեներ դմա զեզն<sup>1</sup> պարարակ** (ԺԵ 30):

Սրկ. Արտաքս լեալ<sup>2</sup> նախանձու և կարծեաց անպատուութեան<sup>3</sup> անձինն, զանճառելիսն առաջի արկանէր ցնծութեանն պատճառ:

Եւ հայրն ելեալ՝ աղաչէր. Դու<sup>4</sup> հանապազ ընդ իս ես, և ամենայն ինչ, որ<sup>5</sup> իմ է, քո է (ԺԵ 31):

Ստ. Վկայութիւն<sup>6</sup> է Հաւրն, թէ ո՛չ երբեք մեկուսացաւ ի բարոյն:

Իգ. Ջի անկարաւտ բնութեանն և<sup>7</sup> անկարիք, և յայնքան բարձրութեան կացեալ, և ո՛չ տիրական ինչ կամս կամ հարկեցուցիչ ի մեղս<sup>8</sup>: Եւ զայս պատիւ ո՛չ արեամբ և ո՛չ ճգամբք կրից ստացան, այլ ընդ ստեղծուածին յամէնառատ պարգևատուէն ճրի շնորհ ընկալան:

**Այլ ուրախանալ և խնդալ պարտ էր** (ԺԵ 32):

Ոկ. Ձուարճակից առնէր զիմանալի հոգիսն իւրոյ մարդասիրական բնութեանն<sup>9</sup>, և երէց որդոյն աղերսէր՝ ասելով<sup>10</sup>.

**Ջի եղբայրս<sup>11</sup> քո այս մեռեալ էր և եկեաց<sup>12</sup>** (ԺԵ 32):

Մեռեալ էր, վասնզի կենդանարարն գոհացութեանն<sup>13</sup> ցրուեաց՝

183ա կելովն ան(//)առակութեամբ<sup>14</sup>:

**Կորուսեալ էր և գտաւ** (ԺԵ 32):

ՍՏ Վասնզի լայն և ընդարձակ ճանապարհաւն<sup>15</sup> գնայր զտարողն ի կորուստ, և գտաւ՝ ի բաց եզեալ զմեռելոյ և զկորուսելոյ<sup>16</sup>: Մի՛ զանպարտ բնութիւնս տխրագգած առներ, մի՛ յուրախութեան հաւրն<sup>17</sup> զընդդէմսն իմասցիս: Եւ գործեսցես ո՛չ վայելչական

<sup>1</sup> B զեզ

<sup>2</sup> B ելեալ

<sup>3</sup> A անպատուութեան

<sup>4</sup> B Եւ ասէ ցնա. Որդեակ, դու

<sup>5</sup> B **զրփիս** որ ինչ

<sup>6</sup> B վկայ

<sup>7</sup> B բնութիւն են և

<sup>8</sup> B մեղս ստացան

<sup>9</sup> B մարդասիրութեանն **փիս** մարդասիրական բնութեանն

<sup>10</sup> B **չիք** ասելով

<sup>11</sup> B եղբայր

<sup>12</sup> B եկեաց, կորուսեալ էր և գտաւ:

<sup>13</sup> B գոյացութիւնն

<sup>14</sup> B անառակութեամբ զմտաւ ամեալ զայ առ հայրն և կենդանացաւ

<sup>15</sup> B ճանապարհ

<sup>16</sup> B զմեռելութիւն և զկորուստն

<sup>17</sup> B հաւրս

բնութեան բարեաց<sup>1</sup>, մի՛ յանպատ[ու]ութիւն իջուցանել՝ տրտմա-  
գին երևելով, մի՛<sup>2</sup> ո՛չ ծանիցես զժամանակիս արժանաւորութիւն,  
այլ ընդ այլոյ վարկաներ<sup>3</sup>: Ո՛չ է քում գերաշխարհիկ իմաստու-  
թեանդ վայելուչ: Յայնժամ էր տրտում, յորժամ հեռին էր ի մէնջ,  
և սովոյ գինքն վաճառէր և ընդ խոզս թաւալեալ շրջէր, յիրս, որ  
ո՛չ էր արժան: Եւ զբարետոհմութիւն իւր թշնամանէր անառա-  
կութեամբ: Իսկ արդ՝ փոխեցաւ ընդ իրին<sup>4</sup> և ժամանակն, զիա՞րդ  
իմաստունն<sup>5</sup> յամենայնի ո՛չ բերես ի քեզ զընտրութիւն<sup>6</sup>: Այսպէս  
և այսու թելադրութեամբ հաւանեցուցանէր զանդրանիկն յուրա-  
խութիւն եղբաւրն: Ապա պայծա[ռա]նայր տաւն[ն], և սիրով ընդ  
միմեանս հայէին եղբարքն, և հայրն յաւելոյր զտաւնականսն յա-  
ղագս որդոց առ իրեարս խանդաղատանացն<sup>7</sup>: Եւ պարաւորքն եր-  
գէին զգոհացողականսն ի վերայ փրկութեան մեղաւորացն<sup>8</sup>, ընդ  
Հաւրն ողորմածի և գթասիրի՝ հիացեալ էին ակամ[բ]ք բազմա-  
կանացն յաղագս անբաղդատելի<sup>9</sup> մարդասիրութեանն Հաւր[ն] և  
հեզութեան քաղցրութեանն, անո-  
183բ խակալութեանն<sup>10</sup>, առատութեանն, // և միանգամայն ասել իսկա-  
կան նորա բարեզարդութեանն և ամենայն աշխարհի<sup>11</sup> խնամա-  
ծութեանն:

<sup>1</sup> B բարոյն

<sup>2</sup> B քերած-ջնջած է

<sup>3</sup> B վարկանիս

<sup>4</sup> A դիրին

<sup>5</sup> B իմաստունդ

<sup>6</sup> A զընդրութիւն

<sup>7</sup> B խանդաղատեցան

<sup>8</sup> B մեղացն և

<sup>9</sup> A անբախդատելի

<sup>10</sup> B Եւ անոխակալութեանն

<sup>11</sup> B ամենաշնորհ փիւ ամենայն աշխարհի

## Գլուխ ԺԶ

Եւ ասէ առ աշակերտս<sup>1</sup> իւր<sup>2</sup>. Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես (ԺԶ 1):

ԻԳ Այր զինքն անուանէ, որ յառաջ զուարակ ածեալ ի զենումն, և աստ այր յաղագս այրացեալ աստուածութեանն և վասն հզաւր և արիական բնութեանն, և տկարանալի<sup>3</sup>: Մեծատուն[ն] ամենայնիւ զծայրս մեծութեանն բնութեամբ ունի և ո՛չ ստանալով: «Որոյ էր տնտ[ես]»: Արդ՝ ստացաւ նա արարչութեամբն զերկիր իբրև գյատակ և զերկինս<sup>4</sup> իբրև զձեղուն՝ ի վերուստ ձգեալ, և հաստատեաց զսա իբրև զմի տուն ամէնառատ գանձիւք՝ պաշտպանեալ կանխաւ: Եւ [ի] լրման ժամանակացն եկն և նորոգեաց զեկեղեցի, և կացուցանէ տնտես զմարդ<sup>5</sup> ըստ իւրաքանչիւր աշտի՝ ճանի սպասաւորութեան: Եւ իւրաքանչիւր ոք եթէ մեծի և եթէ փոքու արժանացաւ շնորհի, և եղաւ ի հոգոյն տնտես, որում մարմնական ինչ արուեստ կամ ստացուած կամ իշխանութիւն հոգևոր կամ մարմնաւոր կամ զաւրութիւն հաւատացաւ նմա և նմին տնտես է: Զի տնտեսն չունի ինչ զիւր սեփական, այլ ի տերունեացն հաւատացաւ նմա, և պարտական է ըստ կամաց Տեառն մատակարարել: Այսպէս և մարդկան ազգի ի Տեառնէ տուաւ նոցա, և պարտական են ըստ կամացն Աստուծոյ զայն ի գործ արկանել: Որպէս ի քանքարսն է տեսանել, որք ի փոքուն գտան բարիք, մեծին արժանացան և որ // զլացաւն՝ պատժեցաւ (տեն 184ա Մատթ. ԻԵ 14-30):

Եւ ասէր առ աշակերտսն (ԺԶ 1):

Առաջին և մեծ սպասաւորութիւն առաքելոցն: Ըստ այնմ, թէ՛ «Զորս եղ Աստուած յեկեղեցոջն<sup>6</sup>, նախ՝ զառաքեալսն, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս» (Ա Կորնթ. ԺԲ 28): Վասն այնորիկ առ առաքեալսն<sup>7</sup> դնէ<sup>8</sup> զդէմս առակին, և, որ զամենայն շնորհս և զգործս<sup>9</sup> մատակարարութեան ընկալան ի Քրիստոսէ:

<sup>1</sup> B աշակերտսն

<sup>2</sup> B *չէք* իւր

<sup>3</sup> B անտկարանալի

<sup>4</sup> B զերկին

<sup>5</sup> B զմարդիկ

<sup>6</sup> B յեկեղեցոջ

<sup>7</sup> B յառաքեալսն *փխ* առ առաքեալսն

<sup>8</sup> B *ձախ լս. սրբ.* դարձուցան

<sup>9</sup> B զշնորհս և զգործ



Վասն այնորիկ բազում անուամբ կոչէ զնոսա ի Գրոց. երբեմն՝ «[ի] գուճարել երկնաւորին զթագաւորս» (Սաղմ. ԿԷ 15) և «Կացուցեն<sup>1</sup> զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր» (Սաղմ. ԽԴ 17): Եւ այսպէս<sup>2</sup> համարեսցին զմեզ մարդիկ իբրև զպաշտաւնեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ, առ որս առատացաւ շնորհք Հոգոյն: Վասն այնորիկ առ նոսա հատուցանէ<sup>3</sup> զբանն, և նոքաւք ընդ ամենեսին խաւսի, որ գտան<sup>4</sup> հաւատարիմ և իմաստուն տնտես, և ետուն զկերակուր ի ժամու հաւատացելոց:

Եւ եղև, ասէ<sup>5</sup>, ամբաստանութիւն, որպէս թէ վատնէ<sup>6</sup> զինչս նորա (ԺԶ 1):

ԿԲ Զի ո՛չ ծածկի առաջի Աստուծոյ, որք ո՛չ ի հաճոյս Աստուծոյ մատակարարեն<sup>7</sup>: Վասն այնորիկ<sup>8</sup> եղև ամբաստանութիւն:  
ԻԳ Արդ՝ որ գաներեւոյթն<sup>9</sup> տեսանէր և նախքան զգործելն ճանաչէր<sup>10</sup>, զի թէպէտև նա ամենատես է բնութեամբ և ո՛չ կարաւտի գուշակելոյ ումեք, սակայն երկայնամիտ է, ներէ ժամանակս յանցաւորաց: Իսկ մարդիկ, կարճամիտ գոլով, թէ տեսանեն զոք յափշտակելով, գտնանկս<sup>11</sup> և զայլս ի գործս<sup>12</sup> զաւրութեան, ձեռս յերկինս<sup>13</sup> համբարձեալ առ Աստուած: // Ըստ այնմ՝ «Զրկեալն ի ձէնջ աղաղակէ, և բողոք նոցա եհաս յականջս Տեառն» (Յալ. Ե 4)՝ ի քրորէս<sup>14</sup>: Նաև հրեշտակք, որք կարգեցան ի պահպանութիւն մարդկան, տեսանելով զգարչ գործս ամպարչտաց<sup>15</sup>, տաղտկան[ան] և ամբաստան լինին առ Աստուած, զի ի վրէժխնդրութիւն փութացի<sup>16</sup>:

184բ

Թէպէտև սրտմտութիւն Աստուծոյ<sup>17</sup> իբրև զհուր ձորալիր պարանոցաթաղ<sup>18</sup>, և յայտնելոց է բարկութիւն Աստուծոյ ի վերայ

1 B Կացուցեսս  
2 B այնպէս  
3 B հաստատէ  
4 B գտանէ  
5 B զնմանէ *փխ* ասէ  
6 B վատնիցէ  
7 B մատակարարին  
8 B այսորիկ  
9 B գաներեւոյթն  
10 A ճանանչէր  
11 A գտնանգս  
12 B գործ  
13 A, B ի յերկինս  
14 B քրովբէս  
15 B ամբարըչտաց  
16 B փութացին  
17 B Տեառն  
18 B պարանոցաթաղ յորդեսցէ  
24 - Ս. Կունդ, Մեկն. Ղուկասու

որդոցն անհաւանութեան, որք քաղցրութեամբն Աստուծոյ ո՛չ ապաշխարեցին, այլ գանձեցին անձանց զբարկութիւն:

Վասն որոյ կոչէ զնա տէր և ասէ<sup>1</sup>. Զի՞նչ է այս, զոր լսեմս զքէն, տո՛ւր զհամար տնտեսութեան<sup>2</sup> (ԺՁ 2):

Մարդկաւրէն ձեացուցանէ զբանն որպէս թէ լուաւ և իբր թէ յերկբայս է, և քննութեամբ կամի ստուգել զայս: Կա՛մ կարգ բանիցն պահանջեաց<sup>3</sup>, կա՛մ խրատել զմեզ կամեցաւ, զի մի՛ զոք առանց քննութեան դատեսցուք: Ըստ այնմ, թէ՛ «Իջեալ տեսից ըստ աղաղակին այնմիկ, որ յիս վճարեցա՞ւ» (ԾԱՆԳ. ԺԸ 21): Այլ հաւաստի քննութիւն[ն] Աստուծոյ ի՛<sup>4</sup> Յարութեանն սահմանեալ ընդ<sup>5</sup> բանից և ընդ մտաց շարժման տալոց եմք համար, այլ աստ՝ կոչելն<sup>6</sup>, յորժամ լուծանի ի կենցաղոյս:

ԿՐ Եւ ի հասանել մահուն, որ է տնտեսութեանն ի բաց բարձումն:

Զի ո՛չ ևս կարես լինել տնտես (ԺՁ 2):

ԻՊ Եւ ո՛չ է աւրէն չար ի նմին կալ, յորում անաւրինեցաւ ոք: Եւ զոր ինչ ընկալաւ ոք յԱստուծոյ, պարտ է զգուշութեամբ հատուցանել: Իսկ որ վատթարագոյն գտաւ ի հոգևորսն կամ ի մարմնաւորսն մատակարարութեամբ, // ո՛չ է աւրէն կալ ի նմին, այլ տարածամ բառնալ, զի մի՛ վատնիչ լիցի<sup>7</sup> աստուածային գանձուցն:

185ա

Ասէ ընդ միտս իւր տնտեսն. Զի՞նչ արարից<sup>8</sup>, զի տէր իմ հանէ զտնտ[եսութիւնս] (ԺՁ 3):

ԿՐ. Բառնայ<sup>9</sup> ի կենաց աստի:

Գործել ո՛չ կարեմ (ԺՁ 3):

ԻՊ Ո՛չ է ժամանակ գործոյ, այսինքն՝ աղաչանաց և ներելոյ, զի գործաւք<sup>10</sup> առաքինութեան զժառանգ<sup>11</sup> անաւրէնութեանն ի բաց

<sup>1</sup> B կոչեաց և ասէ ցնա *փի* Վասն... ասէ

<sup>2</sup> B տնտեսութեան քո

<sup>3</sup> B այսպէս պահանջեաց

<sup>4</sup> B է ի

<sup>5</sup> B սրբ.՝ զի ընդ

<sup>6</sup> B սրբ. բառի վերևում՝ զմահն ասէ

<sup>7</sup> B լինիցի

<sup>8</sup> B գործեցից

<sup>9</sup> B սրբ.՝ այսինքն՝ բառնայ

<sup>10</sup> B գործովք

<sup>11</sup> B զժանգ

քերեսցէ և գտեղիքն բարեաց գործովք լցցէ: Ի մարմնի<sup>1</sup> գոլով ծանեաւ, զի ո՛չ ժամանակն էր գործելոյ ինչ, զի առաջի կայր ճանապարհն գնալոյ:

Մուրանալ՝ ամաչեմ (ԺՁ 3):

**ԿՐ**      Ձի ո՛չ սուրբքն աւգնեն և ո՛չ արդարքն բարեխաւսեն:  
**ԻՊ**      Արդ՝ անդ ողորմութիւն գտանել կարի լրբութիւն էր ժողովին, զի մեծատունն խնդրելովն ո՛չ ընկալաւ (տե՛ս ԺՁ 19-31) և ո՛չ<sup>2</sup> յիմար կուսանքն, որոց պակասեաց իւղն<sup>3</sup> (տե՛ս Մատթ. ԻԵ 1-13):

Ապա ասէ. Գիտեմ զինչ արարից: Եւ կոչեալ զպարտապանս տեսան՝ ասէ ցառաջինն. Դու քանի՞ ինչ պարտիս տեսան իմոյ: Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ: Ասէ. Կայ զգիր քո և նիստ գրեայ յիսուն<sup>4</sup> (ԺՁ 4-6):

185բ      Իմաստունքն փոքր աշխարհ ասացին զմարդն և միտքն տնտես: Եւ պարտականք Տեսուն են հոգին և մարմինն, և միտքն՝ իշխան և ուղղիչ սոցա: Եւ առեալ յինքն՝ պնդեալ<sup>5</sup> ունի զգիր պարտեացն, որով մեղաւ Աստուծոյ: Եւ հեշտութեամբ զախորժակս բնութեանն յաշխարհի գործեաց և անփոյթ արար զսպանալիս դատաստանին Աստուծոյ: Եւ ո՛չ կամի տալ զգիր յանցանացն ի ձեռն<sup>6</sup> հոգոյն և մարմնոյն, զի խոստովանութեամբ և հառաչանաւք և արտասուաւք անկցի առաջի Աստուծոյ, // և ի ձեռն ապաշխարութեանն պատառեսցի, այլ ըստ նմանութեան այնր տնտեսի հարկանէ զծառայակից հոգին և զմարմինն, ուտելով և ըմպելով ընդ պոռնիկս՝ ընկղմեալ ցանկութեամբ աշխարհիս, և ո՛չ կամի մաղթանաց<sup>7</sup> հոգոյն լսել պարտականի: Իսկ ի մերձեանալ պահանջող հրեշտակին, որ կոչէ տալ զհամար տնտեսութեանն, և նա ի ժամուն յայնմիկ տագնապէր ի ցաւոց մարմնոյն: Եւ բարձեալ է ցանկութիւն մեղաց[ն] և ապականեալ որովայնն, ո՛չ ընդունի կերակուր և ըմպելի: Եւ զոր մատուցանեն՝ դժուարելով ի բաց վարէ, թէև կարի համեղագոյն իցէ: Ձի իբրև զշուն տոռամբք ձգեն ի սպանումն և իբրև զեղջերու հարեալ լերդակողմն: Եւ առ

<sup>1</sup> B մարմին  
<sup>2</sup> B չիք ոչ  
<sup>3</sup> B իւղն ոչ առին  
<sup>4</sup> B Գիտեմ զինչ արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս, ընկալցին զիս ի տունս իւրեանց: Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ի պարտապանաց տեսուն իւրոյ՝ ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ պարտիս տեսան իմում: Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ: Ասէ ցնա. Կայ զգիր քո և նիստ գրեա՛ վաղվաղակի յիսուն:  
<sup>5</sup> A պնտեալ  
<sup>6</sup> B ձեռս  
<sup>7</sup> A մաղթանաց B մաղթանաց

վտանգի ցաւոցն անարգէր զոսկին և զարծաթն և զփառասիրութիւն[ն] և զնախանձն, և ամենայն ուրեք տրտմականքն յաճախեն: Եւ ապա կոչէ միտքն զհոգին և զմարմինն, և տայ ի ձեռս նոցա զգիր պարտեացն՝ խոստովանութեամբն, և ապա շնորհէ պարտապանացն զթողութիւն, թերևս հնար լիցի թեթևանալ ի բեռանց և ազատել<sup>1</sup> ի խղճէմտացն:

Ասէ միտքն ցհոգին. «Քանի՞ ինչ պարտիս»: Եւ նա ասէ. «Հարիւր<sup>2</sup> մար ձիթոյ» (ԺՁ 6):

Վասնզի հարիւր թիւն գլուխ և կատարեալ թիւ է: Եւ ի բարի սերմանս Տեառն երևեցաւ պտղաբերութիւն, որ է ամենայն առաքինութիւն: Նոյնպէս և աստ հարիւր թիւն, զի որ ի գլուխ ամենայն առաքինութեանց եհաս՝ այսու նշանակեցաւ<sup>3</sup>: Աստ<sup>4</sup> ցուցանի, որ հոգով միայն մեղաւ՝ առանց մարմնոյ<sup>5</sup> գործակցութեան:

Գրեցաւ «յիսուսն» (ԺՁ 6):

186ա // Արդ<sup>6</sup> կէս վնասուն թողեալ լինի: Վասնզի թեթև և դիւրաշարժ գոլով է ի մեղս, և դժուարաւ արգելի վասն [ան]արգութեան<sup>7</sup> բնական բերմանն, շողղելոյ ի ցանկութիւն: Վասն այնորիկ բազմաց արժանի լինի թողութեան [յ]արդար իրաւանցն Աստուծոյ: Իսկ ձէթ, որով զանկեալս ի ձեռս<sup>8</sup> աւազակացն ձիթով և գինով բժշկեաց, նշանակէ զաւծումն մկրտութեանն և կենդանի արիւնն, որով փրկեաց զմեզ, ըստ նմին և աստ մեղուցեալն յետ աւազանին շնորհացն: Եւ հաղորդութեան մարմնոյ և արեան Տեառն պարտական գտաւ, և վասն զղջմանն և պաղատանացն՝ յելս հոգոյն: Եւ, զոր ազահեաց՝ բաշխելով կարաւտելոցն յիսուն[ն]<sup>9</sup>, կէս պարտեաց մեղացն թողեալ լինի:

Դարձեալ ասէ ցմիւսն. Դու քան[ի]՞ ինչ պարտիս: Եւ նա ասէ. Հարիւր<sup>10</sup> քո ցորենոյ, որ է կապիճ: Եւ նա ասէ. Կա՛ զգիր քո և նիստ գրեա՛ ութսուն (ԺՁ 7):

<sup>1</sup> B ազատիլ

<sup>2</sup> B հարեւր (այսուհետ չենք նշում)

<sup>3</sup> B աջ լս. սրբագրված՝ նմանապէս և մոլորութիւնն

<sup>4</sup> B իսկ աստ

<sup>5</sup> B չիք մարմնոյ

<sup>6</sup> B չիք Արդ

<sup>7</sup> B անարգելութեան

<sup>8</sup> B զանկեալն ի ձեռն

<sup>9</sup> B ի կարոտելոց յանունն

<sup>10</sup> B հարեւր

186բ Իսկ որ մարմնով գամենայն չարիս կատարեաց, սակաւ ինչ թողեալ լինի. քսան միայն, զի մարմնովն շաղախեցաւ ընդ մեղս: Եւ առաւել<sup>1</sup> հեշտացաւ գարշ ցանկութեամբն, զոր գործեաց մարմնով և մտաւք հոգոյն կամակար, զի ունէր խափանել զնա և ո՛չ կամեցաւ: Այլ յուժարութեամբ արհամարհեաց զաւրէնս և գործեաց զմեղս: Զի մարմինն զդժուարաշարժ է ժամանակի, և գործակցի կարաւտանայ ընդ զցանկութիւն[ն]: Եւ դիւրին է արգելուլ բարեաց խորհրդովն, և իբրև սանձիւք ընկրկել<sup>2</sup> զյարձակումնն ի մեղս: Զի ո՛չ դժուարին է արգելուլ զձեռս յարիւն հեղլոյ, ի հարկանելոյ, ի<sup>3</sup> զրկելոյ և յազահելոյ, և յորովայնամոլութենէ, և ի պոռնկութենէ: Եւ ի չափով մերձենալ ի կարևորագոյնսն // դիւրին է և անչափն դժուարին: Իսկ որ առ մարմին[ն] տերունական մեղաւ անարժան հաղորդութեամբ, և զղջանալովն գտանէ թողութիւն սակաւ, քսան միայն, վասնզի կարի ծանր է մարմնոյ և արեանն Քրիստոսի: «Փորձեսցէ<sup>4</sup> մարդ զանձն իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն արբցէ, զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ» (Ա Կորնթ. ԺԱ 28-29), «պարտական եղիցի մարմնոյ և արեանն Տեառն» (Ա Կորնթ. ԺԱ 27): Զի որ ոք զաւրէնսն Մովսիսի արհամարհէր, անողորմ դատաստանաւ ամենայն ժողովուրդն քարկոծ առնէին զնա: Ապա քանի՞<sup>5</sup> պատժոց արժանի են, որ անարժան հաղորդեցան: Զի զՈրդին Աստուծոյ կոխեցին<sup>6</sup> և զարիւն նորոյ<sup>7</sup> սուրբ ուխտին խառնակ համարեցան, և զհոգին շնորհաց թշնամանեցին: Այսպէս անչափ յանցանք են և ծանր վնաս արեանն Աստուծոյ պարտապան լինել: Բայց վասն մարդասիրութեանն աւրինակ եդ ներելոյ, զի մի՛ ոք անյոյս կորիցէ: Զի խրատէ ողորմութեամբ և ցուցանէ [զ]քաղցրութիւն: Պարտ է յուսալ, թէպէտև անբաւ<sup>8</sup> են<sup>9</sup> պարտիքն, և դատել ի ժամանակս ապաշխարութեան:

**Գովեաց<sup>10</sup> տէր զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար (ԺԶ 8):**

<sup>1</sup> A առավել

<sup>2</sup> B ընդըրկել

<sup>3</sup> B և ի

<sup>4</sup> B ըստ առաքելոյ. Փորձեսցէ

<sup>5</sup> B քանի պատիկ

<sup>6</sup> B առ ոտն կոխեցին

<sup>7</sup> B նոր և

<sup>8</sup> B կարի անբաւ

<sup>9</sup> B է

<sup>10</sup> B Եւ գովեաց

*Թէպէտև առընթեր մահունև և յետին շունչն հասանելոյ, սակայն ո՛չ արար անփոյթ յիւրմէ փրկութենէն:*

**ՍՏ** Արդ՝ տնտեսն անիրաւութեան նշանակէ զամենայն մեղաւորս, որ իւր պարտապանացն թողու զյանցանս և առնէ իւր սիրելիս:

**ԵՓ** Սակայն անաւրէն գաւառապետն մեղացն իմաստուն գտաւ և գովեցաւ առաջի Տեառն: **Ջի** մեղաւք մատնեաց զգանձս առաջինս<sup>1</sup>, // և խորամանկութեամբ եթող զպարտս ի վերջին ժամուն: Արդ՝ մի՛ վերջացուք յելսն<sup>2</sup> մեր խնդրել զնա, թէպէտև կարի ծանր է<sup>3</sup> բեռն մեղացն և բարձր քան զգլուխ մեր, զի աւասիկ ինքն է թողութեանն շտեմարանապետն: **Ջի** թէպէտև ո՛չ արդարացուցանէ ընդ ժառանգաւորս Աստուծոյ, սակայն ազատէ ընդ մէջն կտրելոյ<sup>4</sup>, զոր կապեալ ոտիւք<sup>5</sup> և կապեալ ձեռաւք հանէ<sup>6</sup> «ի խաւարն արտաքին» (Մատթ. Ը 12, ԻԲ 13, ԻԵ 30): Եւ արդ՝ մեծ է յայսպիսեացս<sup>7</sup> ապրել և տալ քաւութիւն:

**Ջի** որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են<sup>8</sup> յազգս իւրեանց (ԺՁ 8):

**Ջի** մարդիկ անկեալ ի փառաց և աւտարացեալք յԱստուծոյ՝ հնարս գտան ապաշխարութիւն<sup>9</sup> խնդրել զԱստուած և մերձենալ առ նա: Եւ ծանեան, թէ զոր յանցանքն աւտարացուցին, զիտէ ուղղութիւն ընդանի առնել Աստուծոյ: Եւ ճանապարհ, յորմէ խտտորեցաք, ընդ նոյն յետս դառնալ և անվրէպ ածեն<sup>10</sup>:

**Քան** զորդիս լուսոյ յազգս<sup>11</sup> իւրեանց (ԺՁ 8):

**ԿՐ** **Ջ**հրեշտակս ասէ, զի ո՛չ սատանայ, որ ի նմին նիւթոյ էր կարաց յետ անկմանն [յ]այսպիսումն փրկութեան հասանել:

**ԻՊ** **Ջի** չարացան անմտութեամբ: Եւ մի՛ ոք ընդդէմ դիցէ, թէ մարմինն ո՛չ ունին: Առ որս ի դէպ է ասել, զի թէ ի նոյն տեղի ուստի անկաւն<sup>12</sup>, ո՛չ ելանել<sup>1</sup>, սակայն այլ ո՛չ ևս չար գտանել:

<sup>1</sup> B զգանձն առաջինն

<sup>2</sup> A, B ի յելսն

<sup>3</sup> B են

<sup>4</sup> B սրբ.՝ ոչ կտրելով

<sup>5</sup> B ոտաւք

<sup>6</sup> B հանեալ

<sup>7</sup> A, B ի յայսպիսեացս

<sup>8</sup> B են քան զորդիս լուսոյ

<sup>9</sup> B ապաշխարութեան

<sup>10</sup> B տողի վերևում սրբ.՝ առ Աստուած

<sup>11</sup> A ի յազգս

<sup>12</sup> A ոչ անկաւն, ոչ-ի վրա ունի սրբադրման նշան և մասեմբ ջնջված է

Եւ պարտ է իմանալ, թէ որ վասն յանցանաց ի խոնարհ ընկէց, ունի զաւրութիւն<sup>2</sup> վասն անհնազանդութեանն ի հարուածս արկանել և ըստ բազմապատիկ չարեացն հատուցանել: Իսկ նա [յ]այսպի-

187բ սեացս ինչ զմտաւ ո՛չ էած, այլ անմտացաւ // և պատերազմող<sup>3</sup> զինքն կացոյց: Եւ ընդ պատկերին Աստուծոյ, մարտուցեալ պատրանաւք, ուսոյց ապաստամբել յԱստուծոյ: Եւ հաւանեցոյց գործակից առնել անաւրէնութեանն իւրոյ, մինչ<sup>4</sup> շարժեցաւ Աստուած վրէժս հատուցանել նմա հուր տանջողական: Զի թէ ապաշաւեալ էր, այնպիսի տանջանք ո՛չ պատրաստէին նմա:

Եւ ես ձեզ ասեմ. Արարէք ձեզ բարեկամս ի մամոն[այ]է անիրաւութեան, զի յորժամ պակասեցէ<sup>5</sup> այն, ընկալցին զձեզ [ի] յարկան յաւիտենական[ս]<sup>6</sup> (ԺԶ 9):

ՍՏ Մամոնայ հարստութիւն և մեծութիւն ընչիցն է, զոր, բաշխեալ առատապէս կամ թողեալ զպարտիս, ստանայ իւր սիրելիս՝ զհրեշտակս և զհոգիս արդարոց:

ԵՎ. Եւ զի ո՛չ հնարեցաւ<sup>7</sup> ստանալ բարեկամ<sup>8</sup> կերակրիչ, այլ Ադամ<sup>9</sup> ստացաւ ինչ, որ ո՛չ իւր էր, այսինքն՝ փուշ ցաւաւք հանդերձ: Որզի՛ք Ադամայ, գնեցէք ձեզ անցաւորաւքս զանանցանելի կեանսն:

ԻԳ Իսկ որ զմամոնայ բարիոք մատակարարեն, զերկնից ժառանգութիւն[ն] նովաւ ստանան, այլ՝ անիրաւ զնա կոչելով: Ըստ որում և զակն չար կոչէ (տե՛ս Մատթ. Զ 23, Ի 15): Եւ դարձեալ. «Դուք, որ չարքդ էք» (Մատթ. Է 11, Ղուկ. ԺԱ 13): Սոքա երբեմն չար ան[ու]ան[իւն]՝ ընդդէմ կալով աւրինաց տուողին և երբեմն բարիս անուանին, յորժամ աւրինաւք բաշխին: Եւ կորստական արծաթովն ստացան ի ձեռս աղքատաց զՔրիստոս

Բարեկամ (ԺԶ 9):

Յորժամ պակասեցի, ընկալցին զձեզ: Եւ<sup>10</sup> ի մերձենալ յաւրն գալստեանն յետին, ամենայն ինչ պակասէ ստացողաց, քանզի

<sup>1</sup> բառի վերևում ավելացված է՝ և տէր  
<sup>2</sup> B գաւաւրութիւն  
<sup>3</sup> B պատերազմող Աստուծոյ  
<sup>4</sup> B մինչև  
<sup>5</sup> B պակասիցէ  
<sup>6</sup> B յաւիտենաց  
<sup>7</sup> B սրբ.՝ Ադամ կամեցաւ  
<sup>8</sup> B ինչ բարեկամ  
<sup>9</sup> B այլ փիւ կերակրիչ այլ Ադամ  
<sup>10</sup> B չիք Եւ

188ա *Հատուցման է ժաման(//)ակն և ո՛չ գործոյ: Իսկ առնուլ փոխ յու- մեք է կամ գտանել ողորմութիւն, և<sup>1</sup> եթէ կարի յոյժ հայցէ, ո՛չ է հնար, քանզի իրաւանց են աւուրքն և ո՛չ ողորմութեան:*

Ստ. Արդ<sup>2</sup> սահմանեալ է արդեանցն հաւաքումն և անդ դնել զգուշութեամբ յանվնասելի յարկսն, զոր ստացաք անիրաւու- թեամբ: Զի յորժամ երևելիքս անցանեն, ընդունիցիք զայն, որ ա- սաց. «Քաղցեայ և ետուք ինձ ուտել» (Մատթ. ԻԵ 35):

Որ ի փոքուն հաւատարիմ է՝ ի բազմին հաւատարիմ է, որ ի բազմուն անիրաւ է, և ի փոքուն անիրաւ է<sup>3</sup> (ԺՁ 10):

Եթէ ոք չար ախտիւ ազահութեանն կապեցաւ ի սակաւուն և յանարգին, մի՛ ասիցէ, թէ յուովն արգելոյր զախտն<sup>4</sup>, զի ի բազ- մանալ ընչիցն զաւրանայ ընդ նմին ազահութեանն ախտ զաւրա- ցուցիչ, զի մի՛ ոք խաբէութեամբ անպարտ զինքն համարիցի վրիժուցն: Վասն այսորիկ եդ զայս: Եւ<sup>5</sup> զցուրտ ջուրն հայցեաց, զի մի՛ ոք վերջասցի ի պարգևացն կամ ազատեսցի ի պատժոցն: Զի աստի կենացս ամենայն ինչ փոքունք են և անարգ: Եւ բիւր<sup>6</sup> ձեռաւք ո՛չ [ը]մբռնի, այլ ի բաց ճողոպրի<sup>7</sup>:

Թէ<sup>8</sup> յանիրաւ մամոնէէն<sup>9</sup> չեղէք հաւատարիմ, զճշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ (ԺՁ 11):

Յիրաւունս<sup>10</sup> դատաստանի կարգեալ է բանս, զի անիրաւու- թիւն մեր մերժեաց զմեզ յերկնային գանձուցն: Ըստ այնմ, թէ՛ «Անիրաւք զարքայութիւն<sup>11</sup> Աստուծոյ ո՛չ ժառանգեն» (Ա Կորնթ. Զ 9): Զի որք զապականացուս ո՛չ կամեցան տալ և գնել զանապա- կանն և զմեծն, այլ խեղդիւ ցանկութեամբ ընչիցն կապեցան, իրաւամ[բ]ք // մերժին յանտի փառացն, որ<sup>12</sup> ո՛չ ցանկացան ստա- նալ գնա, որ է ճշմարիտ և անյուծանելի: Իսկ «անիրաւ մամո- նայ», այսինքն՝ անհաւատարիմ<sup>13</sup> ստացողին, զի ո՛չ բերաք զնա

188բ

<sup>1</sup> B *չեք* և

<sup>2</sup> B այլ աստ

<sup>3</sup> A է ի բազ[մ]ին B Որ ի փոքուն հաւատարիմ է՝ և ի բազմին հաւատարիմ է, և որ ի փոքուն անիրաւ է, և ի բազմին անիրաւ է:

<sup>4</sup> B *չեք* մի ասիցէ... զախտն

<sup>5</sup> B *սրբ.*՝ այլ և

<sup>6</sup> B բեր

<sup>7</sup> A ճիղոպրի

<sup>8</sup> B իսկ արդ՝ եթէ

<sup>9</sup> B մամոնայէն

<sup>10</sup> A, B ի յիրաւունս

<sup>11</sup> B զարքայութիւնն

<sup>12</sup> B որք

<sup>13</sup> B *սրբ.*՝ անհաւատարիմ է



յաշխարհս և ո՛չ աստի տանիմք: Քանզի զոր ինչ հաւատայ Աստուած ումեք, ո՛չ վասն այնր<sup>1</sup> տայ, զի ինքն միայն վայելէ, այլ սպասաւոր կարգեցաւ աստուածային գանձուցն: Եւ պարտապան է ըստ կամաց տուողին սփռել աղքատաց: Զի աստ<sup>2</sup> արդարութիւն նորա մնայ յաւիտեան և յետ աստի վճարելոյս<sup>3</sup>, ժառանգէ զկեանսն յաւիտեան<sup>4</sup>:

**Թէ<sup>5</sup> յաւտարին չեղէք հաւատարիմ, զձերն ո՞ տաց[ցէ<sup>6</sup> ձեզ]** (ԺԶ 12):

189ա *Զի ի ստեղծանելն մեր ո՛չ տուաւ մեզ տեղի բնակութեան աստ կամ ժառանգութիւն<sup>7</sup>, այլ սեփականեաց մեզ զդրախտն զանմահ տնկոցն վայելչութիւն, յարածամ կալ ի նմա անլոյծ կենդանութեամբ՝ առանց հնանալոյ և տկարութեան: Այլ խաբէութիւն աւճին էած զմեզ յաւտարոտի աշխարհս դատապարտութեան, ժամանակաւ չափել և յուսով ակն ունել անդրէն դարձին, և աստ վարել առաքինութեամբ և ի մերն բնակութիւն հաւաքել զմերձակայս, և յաւտարէս զփախուստն անդ<sup>8</sup> ուղղել: Ապա թէ ընդ աւտարոտիս<sup>9</sup> կապեցաք ցանկութեամբ և զմերն ո՛չ ընտրեցաք<sup>10</sup> խնդրել, այլ գնացաք զկնի սնտոի մեծութեան և անվայելուչ հեշտութեան և կապեցաք ընդ ախտս երկրաւորս: Աստուած արդար է ի բանս և յաղթէ<sup>11</sup> ի դատելն, վասն(//)զի բառնայ ի մէնջ և ո՛չ տայ զմերն մեզ: Վասնզի ո՛չ կամեցաք գտանել զնա, այլ կապեալս հանէ արտաքս խաւարին՝ առնել ժառանգորդ<sup>12</sup>:*

**Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել** (ԺԶ 13):

*Զի միմեանց հակառակ հրաման տան:*

US *Զի թէ այսպէս ո՛չ էր, ո՛չ երկուս տէրս անուանէին<sup>13</sup>: Արդ՝ ողորմածութիւն առնել՝ լինի ծառայ հրամանին Աստուծոյ, և ժողովել<sup>14</sup> և պահել՝ լինի ծառայ հրամանի բանսարկուին: Վասն ո-*

<sup>1</sup> B և ոչ վասն այսր  
<sup>2</sup> B **չէք** աստ  
<sup>3</sup> B վճարելոյ  
<sup>4</sup> B յաւիտեանական  
<sup>5</sup> B և եթէ  
<sup>6</sup> B տացէ  
<sup>7</sup> B ժառանգութեան  
<sup>8</sup> A ասդ  
<sup>9</sup> B յաւտարոտիս **փխ** ընդ աւտարոտիս  
<sup>10</sup> A ընդրեցաք  
<sup>11</sup> B յաղթող է  
<sup>12</sup> B ժառանգ  
<sup>13</sup> B տեարս անուանին  
<sup>14</sup> B ժողովելով

րոյ մարգարէն ասէ. «Մեծութիւն թէ<sup>1</sup> առևս<sup>2</sup> դայցէ, մի՛ յուժարասցին սիրտք ձեր» (Սաղմ. ԿԱ 11):

**Ջմինն ատիցէ և զմիւսն սի[րէ]**<sup>3</sup> (ԺՁ 13):

Կր. Յուցանէ աստ, թէ դիւրին է առնել<sup>4</sup> ի լաւ անդր: Ջի մի՛ ոք ասիցէ, թէ չկարեմ գերծանել: Յուցանէ, թէ հնար է փոխել, որպէս աստի անդր, նոյնպէս և անդի<sup>5</sup> աստ: Եւ հաւանեցուցանէ զլսաւղսն լինել դատաւոր անաչառ բանիցն:

Ո՛չ կարէք ծառայել Աստուծոյ<sup>6</sup> և մամոնայի (ԺՁ 13):

**ՍՏ** Մամոնայ ընչիցն մեծութիւն ասի ըստ հերբայական բառին: Ջի մին հափշտակել հրամայէ և միւսն<sup>7</sup> մերկ լինել, մին՝ զգաստանալ, և միւսն՝ պոռնկիլ, մին՝ արբենալ և շուայտել, և միւսն՝ պարկեշտութեամբ ճաշակել, մին՝ չհայել ի մ[աւ]տաւորս, և միւսն՝ աստէն բեւեռել:

**Ջայս լուեալ փարիսացիքն<sup>8</sup>, քանզի արծաթասէրք էին, անգոսնէին զնմանէ<sup>9</sup>** (ԺՁ 14):

**ՍՏ** Փարիսեցիքն առանձնական<sup>10</sup> թարգմանին, նոյն<sup>11</sup> և՛ սաղուկեցիքն:

**ԻԳ** Վասնզի ծառայ գոլով մամոնայի՝ սկսան անգոսնել զՏէրն, // **189բ** որոց պարտ էր զարհուրել ի դատաստանացն և մերկանալ զախտցանկութեան արծաթոյն<sup>12</sup>: Իսկ նոքա պարսաւեն և հեզնեն զԲանս ուղեղս<sup>13</sup> վարդապետութեան:

**Դուք արդարացուցանէք զանձինս ձեր առաջի մարդկան** (ԺՁ 15):

Աստուծոյ<sup>14</sup> աւրէնքն ուսուցանեն մեզ վասն մարդկան փառաց բարիս ո՛չ գործել, ապա թէ ո՛չ՝ յԱստուծոյ զանձն աւտարա-

<sup>1</sup> Ե իթէ

<sup>2</sup> Ե - առիւ, Սաղմ. - առուով: Այլ տեղ Ա-ն նույնպէս ունի առիւ, տես ԺՁ 20-21ա-ի մեկնութեան հատվածում: Նույնը տես ԺՁ 20-21-ում

<sup>3</sup> Ե զմեւսն սիրիցէ, կամ զմինն մեծարիցէ և զմեւսն արհամարհիցէ

<sup>4</sup> Ե դառնալ

<sup>5</sup> Ե անտի

<sup>6</sup> Ե **դրփիս** Աստուծոյ ծառայել

<sup>7</sup> Ե մեւսն (այսուհետ չենք նշում)

<sup>8</sup> Ե Իբրև լսէին զայս ամենայն փարիսեցիքն

<sup>9</sup> Ե և անգոսնէին զնա

<sup>10</sup> Ա բառի վրայ հետագայում ավելացրած է՝ արդար

<sup>11</sup> Ե նոյնպէս

<sup>12</sup> Ե արծաթին

<sup>13</sup> Ե ուղիղ

<sup>14</sup> Ե Արդ՝ Աստուծոյ

ցուցանէ: Եւ ո՛չ վասն Աստուծոյ, այլ վասն մարդկան է փոյթ նոցա: Իսկ փարիսացոցն<sup>1</sup>՝ կրկին չարութեամբ լի: Մի՛ զի ո՛չ<sup>2</sup> գործեցին բարիս, և միւս ևս՝ զի ձեռնային առ մարդիկ որպէս արդարք: Դատաստան ունին տալ վասն չարեացն և վասն կեղծաւորեալ բարուցն, որով խաբեն զպարզամիտս[ն] ի մարդկանէ:

**Սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր<sup>3</sup> (ԺԶ 15):**

Անպարտս ո՛չ առնէ, այլ պահէ հատուցման ժամանակին վրէժխնդրութիւն ամպարշտացն:

**Որ<sup>4</sup> առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ (ԺԶ 15):**

Որք յամենայն հնարս մտանեն և միշտ յայն հային, զի պատուեսցին ի մարդկանէ: Ջի զփառս ի միմեանց խնդրեն և զփառս Աստուծոյ ո՛չ խնդրեն: Ահա բազում արդարք ի նշանաւոր մարդկանէ պատուեսցան, և ո՛չ փոքրկացաւ պատիւ նոցա յԱստուծոյ: Ջի ասաց Տէր. «Ո՛չ կարէ քաղաք թաքչել, որ ի վերայ լերինն շինեալ է, և ո՛չ ճրագ ծածկի գրուանաւ<sup>5</sup>» (Մատթ. Ե 14): Այսու յայտ է, թէ՛ պիղծ այնքիկ են, որ ինքեանք որսան փառս, և ո՛չ, որ<sup>6</sup> յայլոց մեծարին հարկիւ և ո՛չ ախորժելով կամաւք:

**Աւրէնք և մարգարէք մինչև ի Յովհաննէս (ԺԶ 16):**

**190ա ՍՏ** Մովսէս աւրինաւքն և մարգարէքն յաղագս Քրիստոսի // մարգարէացան, և ակն ունէին զալստեան նորա: Նոյնպէս և Յովհաննէս: Արդ՝ Քրիստոս եկեալ առ զհայրենի ժառանգութիւնն՝ «Տաց քեզ զազգս ի ժառանգութիւն մինչև ի ծագս երկրի» (հմմտ. Բ Օր. ԻԸ 49): Եւ տեսանի զուզածայն՝ Մովսիսի և մարգարէիցն, զԲանն Աստուած մինչև Յովհաննէս, որ եցոյց մատամբն, և Աստուծոյ հաստատելով զվկայութիւն աւրինացն և մարգարէիցն, թէ՛ «Սա է Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29):

**ԻԳ** Արդ՝ աւրէնքն կամեցան արդարացուցանել զմարդիկ և ո՛չ զաւրեցին: Եկն Տէրն աւրինաց և մարգարէիցն<sup>7</sup> Յիսուս, և ձրի շնորհաւք արդարացոյց զմարդիկ:

<sup>1</sup> A փարիցացոցն  
<sup>2</sup> B ոչ ևս  
<sup>3</sup> B նախ գրած է՝ «Դուք էք... ձեր» (տե՛ս Ղուկ. ԺԶ 15), ապա՝ ջնջած և թողած մեջբերվածը:  
<sup>4</sup> B զի որ  
<sup>5</sup> A գրաւանաւ  
<sup>6</sup> B որք  
<sup>7</sup> A մարգարգարէիցն

Արքայութիւն<sup>1</sup> Աստուծոյ աւետարանի, և ամենայն ոք զնա  
բռն[աբարէ] (ԺՁ 16):

US Աւուրքն<sup>2</sup> Յովհաննու և Քրիստոսի ո՛չ ժամանակաւ չափի,  
որպէս Աքագուն և Սողոմոնին<sup>3</sup> և այլոց թագաւորաց, մարդկան<sup>4</sup>,  
այլ՝ ուղղութեամբ: Ըստ այնմ. «Ծագեսցի յաւուրս<sup>5</sup> նորա արգա-  
րութիւն<sup>6</sup>, աւետարանումն արքայութեան երկնից և բազում խա-  
ղաղութեամբ մինչև կատարեսցի լուսին» (հմմտ. Սաղմ. 7): Արդ՝  
որ խրատեալ է յառաջագոյն ի բանիցն Յովհաննու և Քրիստոսի,  
և զնայ զխիստ և զանծուկ ճանապարհն, այնպիսին բռնի յափշ-  
տակէ զարքայութիւնն երկնից: Վասնզի բռնաւորէ զմարմինն  
իւր և զմարմնոյն ցանկութիւնն ի բաց կտրէ:

Դիւրին է երկնի<sup>7</sup> և երկրի անցանել, քան յաւրինացն<sup>8</sup> նշանա-  
խեցի անկանել<sup>9</sup> (ԺՁ 17):

190ք Ամենայն ինչ, որ ի Մովսիսէ ասացան վասն Քրիստոսի և  
զալստեան նորա, ամեն(//)այնն<sup>10</sup> եղիցի յառաջ քան զկատարածն  
երկնի և երկրի: Այլ յաւտ մ[ի] կամ նշանախեց մ[ի], որ է գիծ  
գրոյ միոյ կամ բառ ինչ, որ թուի սոսկ: Եւ ո՛չ հարկաւորապէս  
գրել և կամ կէս գրոյ, որ նշանակէ ձայնաւորութիւն, ո՛չ է դա-  
տարկ գրեալ յաւրէնս և ի մարգարէսն:

Ամենայն, որ արձակէ զկին իւր, և ո՛չ վասն բանի պոռնկու-  
թեան<sup>11</sup>, և առնէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ<sup>12</sup> (ԺՁ 18):

Զի աւրինաւք իսկ կապեցան մարմինք նոցա, և որոշումն շուն  
գործէ, յորմէ բարժանեցաւ<sup>13</sup> և առ որումն բնակեաց կինն:

Էր ոմն<sup>14</sup> մեծատուն, ազանէր<sup>15</sup> բեհեզս և ծիրանիս (ԺՁ 19):

<sup>1</sup> B Յայնմն հետէ արքայութիւն

<sup>2</sup> B Աւրէնքն

<sup>3</sup> B Սաղոմոնին

<sup>4</sup> B և մարդկան

<sup>5</sup> B յաւուրսն

<sup>6</sup> B չիք արգարութիւն

<sup>7</sup> B Իցէ երկնից

<sup>8</sup> B յաւրինացն միոյ

<sup>9</sup> A անգանել

<sup>10</sup> B և ամենայնն

<sup>11</sup> B չիք և ոչ վասն... պոռնկութեան

<sup>12</sup> B նախ՝ շնանայ, ապա սրբ.

<sup>13</sup> B բարժանեցաւ

<sup>14</sup> B Այր ոմն էր

<sup>15</sup> B և ազանէր

- ԻԳ** Են ոմանք, որ առանց փրկութեան զնացին ի գերեզմանս: Աւրինակ դնէ զմեծատունն: Ձի որք չարք են, մի՛ վստահացին յերկայն[ա]մտելն Աստուծոյ, թէ միշտ ներէ: Սակայն քինախնդիր է ի վերայ ամպարչտութեան և անիրաւութեան մարդկան: Յեղելոց իրաց մերձ դնէ, որ ինչ պատահեաց յետ աստի՜ վճարելոյս մեծատանն և Ղազարոյն<sup>2</sup>: Ձի թանձրամիտ մարդիկ յերևելիս հարեալ են ցանկութեամբ, որ ժամանակ մի է, և ո՛չ հոգան վասն աներևութիցն, որ է յաւիտենական:
- ԿՐ** Արդ՝<sup>3</sup> մեծատունն մեծատանց ի[մա]նի<sup>4</sup> պատկեր, թէպէտ բեհեզն և ծիրանին թագաւորաց պատշաճէ:
- ՍՏ** Ձամենայն<sup>5</sup> մեծատունս առակէ<sup>6</sup>, որ միայն զմարմնոյն հոգան և յերկրային իրս զբաղեալ են:
- ԵՓ** Կամ զքահանայս ժողովրդեանն առակեաց և զիշխանս հրէից, որք ի հանգստեան էին և զգեցեալ էին ծիրանիս:

**191ա** // Եւ<sup>7</sup> ուրախ լինէր հանապազ առատապէս (ԺԶ 19):

**ԻԳ** Ձի զամենայն ինչ առատութեամբ առնէր<sup>8</sup>, զգեստ պայծառ և կերակուր ամենալիցս: Եւ ամենայն ուրեք ուրախութիւն յաճախէ ի նմա, և տրտմականք ո՛չ բնաւ ուրեք: Արդ՝ Աստուծոյ նախախնամութիւն տայ փարթամութիւն անժուժկալիցն, զի վճարեսցեն զպէտս իւրեանց: Եւ աւելորդաւքն հաղորդեսցին աղքատաց և զնեսցեն զհանգիստն երկնից: Վասն այնորիկ<sup>9</sup> զոմանս աղքատս արար, զի վասն կարաւտութեանն բարեգործեսցին առ նոսա մեծատունքն, և ապականացուաւք ստասցին զանապական կեանս: Ապա եթէ չարանան հեշտութեամբ և ազահոլութեամբ, վճարէ զնոսա յաստի կենացս<sup>10</sup>, և ի հանդերձեալսն անպատասխանի առնէ, տանջէ<sup>11</sup> արդարութեամբ:

**Աղքատ ոմն Ղազար անուն դնէր ի դրան նորա, ցանկայր փշրանաց սեղանոյ մեծատանն<sup>12</sup> (հմմտ. ԺԶ 20-21):**

---

<sup>1</sup> B բառի վերևում սրբագրված՝ կենաց  
<sup>2</sup> B սրբ.՝ Ղազարու  
<sup>3</sup> B չէք Արդ  
<sup>4</sup> A տառերը վնասված են  
<sup>5</sup> B սրբ.՝ Այլ զամենայն  
<sup>6</sup> B բառի վերևում սրբագրված՝ աստ  
<sup>7</sup> A եւր  
<sup>8</sup> B ունէր  
<sup>9</sup> B այսորիկ  
<sup>10</sup> B կենացս հեշտութեամբ  
<sup>11</sup> B սրբ.՝ և տանջէ  
<sup>12</sup> B Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ, և ցան-

Եփ.(կր.) Իսկ աղքատն՝ աւրինակ ամենայն աղքատաց: Իսկ ի գիր անկելոյ անունն աղքատին<sup>1</sup> և մեծատանն ո՛չ, վասնզի ո՛չ արժանաւորեցաւ ընդ աղքատին<sup>2</sup> գրիլ: Ըստ մարգարէին. «Ջնջեսցին նոքա ի դպրութենէ կենաց, և ընդ արդարս քո մի՛ գրեսցին» (Սաղմ. ԿԸ 29): Իսկ աղքատին մերձ առ դրանն լինելոյ՝ այնքանեաւք զանագորոնութիւն<sup>3</sup> մեծատանն ցուցանէ, զի թէ հեռագոյն էր ուրեք աղքատն, ո՛չ այնքան անողորմ երևէր մեծատունն:

**ՍՏ** Ամենայն<sup>4</sup>, որ աղքատ է հոգով: Ըստ<sup>5</sup> Տեառն բանի, թէ<sup>6</sup>՝ «Երանի աղքատաց հոգով<sup>7</sup>, զի նոցա է արքայութիւն<sup>8</sup> երկ[նից]» (Սատթ. Ե 3):

**191բ ԵՓ** // Ջաշակերտս իւր և խաչին<sup>9</sup> Ղազարու նմանեցուցանէ, զի ո՛չ ոք տկարացեալ իբրև զնա: Ջանուն բարեկամաց իւրոց յայտնեաց՝ Ղազարու, և զանուն թշնամեաց իւրոց՝ մեծատանն: Ըստ այնմ՝ «Վա՛յ ձեզ մեծատանաց» (Ձ 24), զի այսու կենաւքս չափեցաւ մխիթարութիւն ձեր:

Իգ. Իսկ աղքատք, թէ գոհացողք լինիցին, ի մեծ հանգիստ և ի փառս լինին և յաւիտեանս<sup>10</sup> մխիթարեսցին, իսկ եթէ տրտնջողք և մտաւք յուժարեալք՝ ի մեծութիւն<sup>11</sup>: Եւ ո՛չ լսեն մարգարէին, թէ՛ «Մեծութիւն<sup>12</sup> առի՞ն՞ զայցէ, մի՛ յուժարեսցին<sup>13</sup> սիրտք ձեր» (Սաղմ. ԿԱ 11): Այսպիսիքս կրեն զաղքատութիւն դժուարին, և ի պարգևաց[ն] Աստուծոյ զրկեալ լինին ի հատուցման աւուրն:

**Այլ<sup>14</sup> շունք ևս լեզուին<sup>15</sup> զվէրս նորա** (ԺՁ 21):

Իսկ մեք առ սահաւուս ուսանիմք զտմարդի բարս մեծատանն և զհաստատուն միտս արդարոյն, զի ո՛չ խոնարհեցաւ առ նա մեծատունն և ո՛չ նայեցաւ ի վիշտս նորա: Եւ աղքատն ո՛չ չարացաւ նեղութեամբն, այլ կայր հաստատուն հանդերձեալ յուսովն ի

կայր ընու գորովայն իւր ի փշրանացն, որ անկանէին ի սեղանոյ մեծատանն:

<sup>1</sup> A ախքատին

<sup>2</sup> A ախքատին

<sup>3</sup> B զանագորոնութիւն

<sup>4</sup> B զի ամենայն

<sup>5</sup> B բառի վերևում սրբագրված՝ երանելի է

<sup>6</sup> B ըստ այնմ եթէ

<sup>7</sup> B հոգւով

<sup>8</sup> B արքայութիւնն

<sup>9</sup> B չէք և խաչին

<sup>10</sup> B յաւիտեան

<sup>11</sup> B մեծութեան

<sup>12</sup> B մեծութիւնն

<sup>13</sup> B յուժարեսցին

<sup>14</sup> B Այլ և

<sup>15</sup> B գային լեզուին

տառապանս: Զի անպատասխանի լինիցի փափկացեալն, և ո՛չ կարէ ասել, թէ ո՛չ տեսի: Որքան զշունս անողորմ բարս եցոյց, զոր ի փշրանացն անկելոցն, ո՛չ կամեցաւ բարեգործել այնպիսուամն վշտացելոյ: Եւ զի մեծատունք ասեսցեն<sup>1</sup> զչար բարս, և աղքատք ուսցին զարդարոյն համբերութիւն:

Եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակացն<sup>2</sup> Աստուծոյ<sup>3</sup> ի գոգն Աբրահամու (ԺԶ 22):

192ա ԿՐ Փոխանակ սովոյն և ցրտ(//)ոյն և բիւր<sup>4</sup> նեղութեանցն:

ԵՓ Արդ՝ հաւաս[ար] էր մահք<sup>5</sup> մեծատանն և Ղազարուն, և<sup>6</sup> ո՛չ հաւասար հատուցումն: Զի Ղազար, որ ծառայեացն<sup>7</sup> և ո՛չ կամեցան մերձենալ առ նա, ի վերայ բազկաց հրեշտակաց փառաւորեալ լինէր: Զի ո՛չ<sup>8</sup> նմա տեղի մեծատունն ի տանն իւրում, գոգն Աբրահամու եղև բնակետղ նորա:

ԻՊ Լուծան տրտմականքն, ժամանեաց մխիթարութիւն[ն], բարձան վէրքն, և ընկալան զնա գոգն Աբրահամու և կեանքն յաւիտենական: Եւ, որ ի դրան մեծատանն անկեալ դնէր, ի նահապետին գոգն գրգեալ հանգչէր<sup>9</sup>:

Մեռաւ մեծատունն և թաղեցաւ ի դժոխս<sup>10</sup> (ԺԶ 22-23):

ԿՐ Փոխանակ աստ փափկութեանս, որ անողորմութեամբ վարեցաւ,

ԵՓ էանց<sup>11</sup> հեշտալի փափկութիւն<sup>12</sup> և որ ինչ ունէր յերկրի մնաց, և զոր չարաչարն ստացաւ՝ եթող աստ: Մերկ եկն յաշխարհս և մերկանդամ գնաց: Փոխեցաւ ուրախութիւն[ն] ի տրտմութիւն և հանդերձիցն վայելչութիւն, և կերակրոցն հեշտութիւն լուծան, և վիշտքն բազմացան:

Թաղեցաւ ի դժոխս<sup>13</sup> (ԺԶ 22-23):

<sup>1</sup> Բ ատեսցեն

<sup>2</sup> Բ գնա հրեշտակաց

<sup>3</sup> Բ չիք Աստուծոյ

<sup>4</sup> Բ բեւր

<sup>5</sup> Բ մահ

<sup>6</sup> Բ այլ

<sup>7</sup> Բ Ղազար, որ ծառայք մեծատանցն *փխ* ի Ղազարոս ծառայեացն

<sup>8</sup> Բ ոչ ետ

<sup>9</sup> Բ հանկչէր

<sup>10</sup> Բ դժոխսն

<sup>11</sup> Բ բառի վերևում սրբ.՝ անտի կենաց

<sup>12</sup> Բ բառի վերևում սրբ.՝ ի նմանէ

<sup>13</sup> Բ դժոխսն

**ԻԳ** Ո՛չ բարեկամք և ո՛չ ինչք զաւրեցին աւգնել նմա, բայց միայն զմարմինն գերեզմանի ետուն պատուով: Զի ո՛չ ոք ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամենայն, և ո՛չ իջցեն փառք տան նորա ընդ նմա: Անուանք նոցա կարգասցին ի հողս իւրեանց և ո՛չ առաջի Աստուծոյ: Իսկ վասն արդարոցն թաղման[ն] ո՛չ յիշեաց, թէ<sup>1</sup> կա՛մ անպատիւ թաղեցաւ, կա՛մ ո՛չ թաղեցաւ: Մի՛ ոք

**192բ** տրտմեսցի // ընդ անթաղ մնալն մարմնոյն<sup>2</sup> կամ անարգ զոք թաղեալ մի՛ երանիցէ<sup>3</sup>, այլ ի վարսն նայեսցի, թէ ոգին [ի] կենդանութ[եա]ն է:

Մինչ<sup>4</sup> ի տանջանսն էր, ետես զԱբրահամ ի հեռաստանէ և զՂազար հանգուցեալ ի գոգն<sup>5</sup> (ԺՁ 23):

Որք տարակուսին վասն այսոցիկ<sup>6</sup>: Ըստ առաքելոյն, թէ՛ «Ձև ևս ընկալան զաւետիան Աստուծոյ» (Եբր. ԺԱ 13), զի մի՛ առանց մեր կատարեսցին<sup>7</sup>: Զի ամենեցուն էջք ի դժոխս<sup>8</sup> եղև նախքան զմահն Քրիստոսի, որով լուծաւ մահ և դժոխք աւերեցաւ<sup>9</sup>: Զի որպէս յերկրի բնակեալ են արդարք և մեղաւորք ի միասին, այսպէս ի<sup>10</sup> դժոխս փակեցան: Եւ որպէս աստ չարչարին ոմանք ի դիւաց, որպէս կարկամելն, ութ և տասն ամեան<sup>11</sup>, զոր կապեաց սատանայ: Եւ որպէս այն, որ երբեմն ի հուր արկանէր և երբեմն ի ջուր, զի կորուսցէ: Նոյնպէս և մեղուցեալքն ոգով տանջին ի նմանէ: Իսկ սուրբք որպէս և<sup>12</sup> սաստեն<sup>13</sup> և հալածեն, յորոց երկեղիւ տագնապին, այսպէս և՛ ի դժոխս: Եւ որք աստ մեղաւք և անհաւատութեամբ կեցին<sup>14</sup>, անդ չարաչար տանջին որպէս մեծատունն: Իսկ առ սուրբսն և ո՛չ բնաւ համարձ[ակ]ին նոքա, զի մինչ մարմնով էին՝ հալածէին զնոսա Աստուծոյ աւգնականութեամբն: Զի՛ «Թէ ելանեմ յերկին<sup>15</sup>՝ անդ ես, և թէ՛ իջանեմ ի դժոխս՝ հուպ

<sup>1</sup> B չիք թէ

<sup>2</sup> B մարմնոցն

<sup>3</sup> B եպերիցէ

<sup>4</sup> B Ամբարձ զաչսն իւր մինչ

<sup>5</sup> B զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ

<sup>6</sup> B այնոցիկ

<sup>7</sup> B կատարեսցի

<sup>8</sup> B սրբ.՝ դժոխքն

<sup>9</sup> B աւարեցաւ

<sup>10</sup> B և ի

<sup>11</sup> B ամացն

<sup>12</sup> B չիք և

<sup>13</sup> B աստէն

<sup>14</sup> B կացին

<sup>15</sup> B յերկինս



ի մաւտ ես դու, Տէ՛ր» (Սաղմ. 6ԼԸ 8): Եւ ո՛չ է՝<sup>2</sup> տեղի թափուր ի քէն: Այսպէս<sup>3</sup> և հոգիք արդարոցն ի ձեռս<sup>4</sup> Աստուծոյ են, և ո՛չ մերձենայ ի նոսա չարն, և բանակք հրեշտակաց շուրջ զնոքաւք, որ զՂազար տարան ի գոգն Աբրահամու: Իսկ մեծատունն տան-

193ա ջէր //ի դիւացն տագնապեալ:

**ԵՓ** Այլ մեծատանն կրկին էին տանջանքն իւր: Մի՛ զի տանջէր, և միւս ևս՝ զի հայէր նա ընդ Ղազար ուրախութեամբ զուարճացեալ:

**ԿՐ** Փոխանակ, զի աստ Ղազար ետես զմեծատունն յարքայական փառսն և ի ճոխութիւնսն<sup>5</sup>:

**ԵՓ.** Արդ՝ տե՛ս, որչափ մեծատունն գրգեալ փափկացաւ, այնչափ<sup>6</sup> վատթարեալ խոնարհեցաւ, և որչափ տկարացաւ Ղազար, այսպէս մեծացաւ պատուով<sup>7</sup> պսակաւոր ճոխութեամբ:

Աղաղակեաց<sup>8</sup>. Հա՛ր Աբրահամ, ողորմեայ<sup>9</sup> ինձ (ԺՁ 24):

**ԵՓ.** Զիա՞րդ զԱբրահամ միայն տեսանէր, քան զամենայն արդարսն: Զի բարեկամ աղքատաց էր Աբրահամ, վասն այնորիկ տեսանէր զնա:

Զի պապակիմ<sup>10</sup> ի տապոյ<sup>11</sup> (ԺՁ 24):

**Իգ.** Զիք ի դժոխս հուր կիզիչ, զի այս յիւրում ժամանակի պահեալ է դիւաց և որք հաղորդ եղեն չարեաց նոցին: Իսկ Տէրն զնեղութիւն[ն], զոր կրեն ոգիք ամպարշտացն ի դիւաց անտի, առակեաց ի տապ:

Առաքեա՛ զՂազար<sup>12</sup>, զի թաց[ց]է զծագ<sup>13</sup> մատինն ի ջուր և զովացու[ս]ցէ զլեզ[ու իմ]<sup>14</sup> (ԺՁ 24):

Նշանակէ առաքումն Ղազարու, զի փոքր մի հալածել զդեւսն, որպէս աստ այսահարք ապաւինին յարս սուրբս զերծանել ի

1 B եթէ  
2 B չէք է  
3 B այնպէս  
4 B ձեռին  
5 A ճոխութեանն  
6 B այնպէս  
7 A պատվով  
8 B Եւ նա աղաղակեաց և ասէ  
9 B ողորմեաց  
10 A տապակիմ  
11 B տապոյ աստի  
12 B Եւ առաքեա՛ զՂազարոս  
13 A զձագ  
14 B իմ, զի պապակիմ ի տապոյ աստի  
25 - Ս. Կունդ, Մեկն. Ղուկասու

վտանգէն, զոր կրեն ի դիւաց: Այսպէս և մեծատունն գիտէր, զի՝  
«Զաւրութեամբն Աստուծոյ պահին»<sup>1</sup> (Ա Պետր. Ա 5) արդարքն խա-  
ղաղութեամբ ի դիւաց անտի: Նորին Աստուծոյ աւգնականու-  
թեամբն ունէր Ղազար հալածել ի մեղաւորացն զդեւան, զի մի՝  
տանջեսցեն»<sup>2</sup>:

**ԿՐ** Փոխանակ զի աստ զհայցուածս կարաւտութեան աղքատին  
193բ ո՛չ լցոյց մեծատունն, // ո՛չ<sup>3</sup> հանդիպեցաւ կաթի[լ] ջրոյն, և զի  
աստ ո՛չ արժանաւորեցոյց զաղքատն փշրանաց սեղանոյ իւրոյ:

**ԻՊ** Աղքատին անունն բազում անգամ յիշի, իսկ մեծատանն՝ և  
ո՛չ ուրեք: Թուի, թէ առաջին սրբոցն էր անուանակից: Եւ վասն  
այնորիկ լռեաց, զի մի՛ բարի անուամբն չարն կոչեսցի: Կամ թէ ի  
մերձակայ լսողացն<sup>4</sup> ոք անուամբ մեծատանն կայր անդ: Եւ խնա-  
յեաց ի նա, զի մի՛ խռովեալ ամբոխեսցի<sup>5</sup>՝ կարծելով առ ինքն  
զբանն:

Աբրահամ ասէ. Յիշեա՛, որդեա՛կ, զի ընկալար զմխիթարութիւն  
ի կեանս քո, և Ղազար զչարաչարանսն: Վասն այսորիկ սա աստ<sup>6</sup>  
մխիթարի, և դու այդր պապակիս<sup>7</sup> (ԺՁ 25):

**ԵՓ** Ուսուց մեզ Աբրահամ, զի մի՛ յուսասցուք գտանել [զ]ողոր-  
մութիւն ի վախճանին: Իբր պտուղ ողորմութեան ո՛չ ունել՝ ո՛չ  
ներէ մեզ: Զի թէ<sup>8</sup> Աբրահամն այն, որ բարեկամ էր աւտարաց, որ  
ի վերայ սողոմեացոցն<sup>9</sup> արար ողորմութիւն՝ պաղատելով առ Տէր,  
զի մի՛ կորիցեն, ո՛չ կամեցաւ<sup>10</sup> ողորմել այնմիկ<sup>11</sup>, որ ո՛չ զթացաւն  
ի վերայ Ղազարու, զի ա՞րդ յուսամք մեք, թէ լինի մեզ թողու-  
թիւն: Զի նա կարգայր նմա «հայր» իմ, և Աբրահամ կոչի<sup>12</sup> «որ-  
դեակ» իմ, և աւգնել ո՛չ կարաց նմա:

**ԻՊ** Զի ողորմութեանն չափ սահմանեալ է, և ի յաւիտենիս յայս-  
միկ ձգի, և անդր անցանել ո՛չ ունի: Զի որչափ<sup>13</sup> յաճախէ ոք ի

<sup>1</sup> B պահէին

<sup>2</sup> B տանջեսցին

<sup>3</sup> B եւ ոչ

<sup>4</sup> B լսողացն

<sup>5</sup> B ամբոխիցէ

<sup>6</sup> A աստր

<sup>7</sup> B Եւ ասէ ցնա Աբրահամ. որդեա՛կ, յիշեա՛, զի ընկալար անդրէն զբարիս քո ի կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս: Արդ՝ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս:

<sup>8</sup> B չիք թէ

<sup>9</sup> B սողովմայեցոցն

<sup>10</sup> B կարաց

<sup>11</sup> B ի վերայ այնորիկ

<sup>12</sup> B կոչէր

<sup>13</sup> B որչափ և

194ա մեղս և զղջացեալ դառնայ առ Տէր՝ արդարացուցանէ աւրինաւք<sup>1</sup> ընկալեալ: Իսկ եթէ ընդ մեզ մտանեն մեղքն ի գերեզմանն, այնուհետև նախանձ հրոյ, որ ուտէ զհակառակորդսն, և ո՛չ // ոք գտանէ արտասուաւք թողութիւն: Աստ դատաստանաւք խաւսի և արդարութեամբ դատի:

**Ընկալար զբարիսն քո** (ԺՁ 25):

Փափկանալով և շուայտելով: Եւ առ կարաւտեալն Ղազար ո՛չ հաճեցար բարեգործել: Դու ինքն ուսուցեր, թէ ո՛չ է պարտ վշտացելոց առնել խնամակալութիւն: Վասն այնր անըմբերելի<sup>2</sup> եհաս տանջանաց, որպէս առաքեալ ասէ. «Պարտ է հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն և ձեզ նեղելոցս<sup>3</sup> հանգիստ» (Բ Թես. Ա 6): Ըստ այնմ և նահապետն զիրաւունս կարգեաց:

Վասն որոյ ասէ. Ի վերայ այսր ամենայնի վիհ<sup>4</sup> մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ, զի ո՛չ աստի առ ձեզ կարէ անցանել և ո՛չ այտի առ մեզ ոք անցանէ<sup>5</sup> (ԺՁ 26):

ԿՐ Յուցանէ, թէ ո՛չ է հնար, որք ըստ գործոց իւրեանց ի տանջանս ընդունին<sup>6</sup> փոխել յարքայութիւնն<sup>7</sup>, քանզի անց ժամանակ ապաշխարութեան]: Զի որպէս բաժանեալ են ի միմեանց արդարք և մեղաւորք<sup>8</sup>, նոյնպէս և<sup>9</sup>՝ կայանաւք և տեղաւք: Եւ զայս գիտա[ս]ց[ուք], թէ Յարութեանն նշանակէ առակն, և զայս ևս իմա, թէ ծանալութիւն է միմեանց ի հանդերձեալսն<sup>10</sup>:

ՍՏ Մի՛ ոք ընդ այս տարակուսեսցի: Քանզի և ի միում քաղաքի տեսանեմք զոմանս ի գահոյս փափկացեալս և ի սպասաւորաց պատուեալ, և ոմանք ի կապանս և ի խորին արգելանոցս փակեալ: Այսպէս տեսցես զՂազար և զմեծատունն՝ վհաւ ի բաց փակեալ ի միմեանց:

<sup>1</sup> B սրբ.՝ աւրինակաւքս  
<sup>2</sup> B այսր անհամբերելի  
<sup>3</sup> B նեղելոցդ  
<sup>4</sup> A վիծ  
<sup>5</sup> B եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել, ոչ կարեն, և ոչ այտի ոք առ մեզ անցանել *փխ* զի ոչ աստի... անցանէ  
<sup>6</sup> B ըմբունին  
<sup>7</sup> A, B ի յարքայութիւն[ն]  
<sup>8</sup> B բառի վերևում սրբ.՝ գործովք  
<sup>9</sup> B *չիք* և  
<sup>10</sup> B հանդերձելումն

**Աղաչեմ զքեզ Աբրահամ, առաքեայ զդա ի տուն Հաւր [Իմոյ]<sup>1</sup>**  
(ԺՁ 27):

*Տուն զաշխարհս կոչէ, վասնզի Աղամայ ասէ<sup>2</sup> բնակութիւն զոլ,*

194բ // *Իսկ «Հաւր Իմոյ», վասնզի Աղամ Հայր մեր Հասարակաց է, իսկ*

**Եղբարք Հինգ** (ԺՁ 28):

*Ջհինգ զգայութիւնս ասէ, որով մարդիկ գործեն զբարի և զչար:*

**ԻԳ** *Ջի<sup>3</sup>նչ աւգուտ է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուծեսցէ: Մերկանալ զաստի կենացս հեշտութիւնս, և ամենայն նեղութեանց ժուժկալեալ: Եւ զայն խնդրել միայն, որով զաղէտս տարակուսանացն ի բաց քերեցէ<sup>3</sup> յանձնէ, զոր մեծատունն փորձիւ ծանեալ, որ կարծէր զնոյն միտս ուն[ել] եղբարցն և հաւատալ, թէ արդարև այնպէս իցէ: Եւ գործել զառաքինութիւն և մերկանալ զցանկութիւն աշխահի, որ չգիտէր, թէ եղբարքն նորին ախտիւն<sup>4</sup> ըմբռնեալ են և ո՛չ հաւատան: Կամ եթէ արդարև են նորին, որ<sup>5</sup> ողորմեցաւ և աղաչեաց, զի առաքեսցէ զՂազար քարոզել նոցա:*

**ԵԼ<sup>6</sup> ասէ Աբրահամ. Ունին զՄովսէս և զմարգարէսն, նոցա լուիցեն** (ԺՁ 29):

**ԵՓ** *Արդ՝ ո՛չ եթէ, որ կենդանիք իցեն, նոքա են<sup>7</sup> կենդանիք և ո՛չ եթէ, որ թաղեալն են, նոքա են մեռեալ: Այլ որ արդարդ<sup>8</sup> են, կենդանիք են Աստուծոյ, թէպէտև մեռանին: Իսկ մեղաւորքն մեռեալք են բարեգործութեանն և Աստուծոյ, կամ ցուցանելով, թէ առ հրէայսն ասաց զառակն: Վասնզի նոքա ունէին<sup>9</sup> զՄովսէս և զմարգարէսն, որ հանապազ պատուիրէին վասն ողորմութեան:*

**ԻԳ.** *Վասնզի<sup>10</sup> լի են բանք մարգարէիցն ամենայն աստուածային իմաստութեամբ, որք սաստեն և սպառնան թանձրամտացն, որք*

<sup>1</sup> B Եւ ասէ. Արդ՝ աղաչեմ զքեզ, Հայր, զի արձակեսցես զդա ի տուն:

<sup>2</sup> B ասի

<sup>3</sup> B քերեսցէ

<sup>4</sup> A ախտիվն

<sup>5</sup> B նորա եղբարք, որ նորին ախտիւ և չար մեղաւք վարէին, որոց

<sup>6</sup> B Են իմ անդ եղբարք Հինգ, որպէսզի տացէ նոցա վկայութիւն, զի մի և նոքա գայցեն յայտեղի տանջանաց (ԺՁ 29): Եւ

<sup>7</sup> B իցեն

<sup>8</sup> B արդարք

<sup>9</sup> B ունին

<sup>10</sup> B Ջի

195ա շաղկալ են ընդ գիջութեան<sup>1</sup> ախտիցն: Զի երկի[ւ]ղիւ տանջանացն հեռացին ի մեղաց և մեծ զգուշութեամբ հայցեն զ(//)փառս արդարոցն, զի ցանկասցին հասանել պսակացն:

Եւ ասէ<sup>2</sup>. Ո՛չ, հայր Աբրահամ, բայց եթէ<sup>3</sup> ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա՝ ապաշխարեսցեն<sup>4</sup> (ԺՁ 30):

Զի մինչդեռ<sup>5</sup> ի մարմնի էր, առասպելք թուէին բանք մարգարէիցն վասն սիրոյ ընչիցն և այլոցն հեշտութեանց, որ ըմբռ[ն]եալ պահեն զնոսա<sup>6</sup>: Իսկ յորժամ մերկացաւ ի մարմնէ<sup>7</sup>, ազատեցաւ յախտիցն և զգաստացաւ ի չար կրիցն<sup>8</sup>, որով տանջեալ լինէր ի դիւաց: Կարծէր, եթէ զամենայն լուեալ ի մեռելոյ<sup>9</sup> հաւատան և ապաշխարեն, և զերծանին յայնպիսի ահագին ախտէն և ի վշտացն:

Ասէ ցնա, թէ Մովսիսի և մարգարէիցն ո՛չ լսեն, և ո՛չ եթէ ի մեռելոց ոք երթիցէ՝ հաւատասցեն<sup>10</sup> (ԺՁ 31):

ԿՐ Քանզի գիտէր Աբրահամ, եթէ մարգարէքն հաւատարմագոյն են քան զմեռեալս: Զի ի Հոգոյն Սրբոյ խաւսեցան, քանզի պատգամաւորք էին Աստուծոյ նոքա: Եւ անտի առեալ խաւսէին ընդ նոսա, զի երկիցեն ի տանջանաց գեհենին<sup>11</sup> կամ ցանկասցեն բարեացն հատուցման: Եւ յուժարեսցին<sup>12</sup> բարեգործել առ աղքատս վասն երանեալ<sup>13</sup> յուսոյն և հանգստեանն արդարոց:

ԻԳ Նաև Տէրն՝ ասելով. «Առաքեաց զԺառայս, զի ի պտղոյ այգոյն<sup>14</sup> առցեն: Եւ նոքա զոմանս սպանին, զոմանս անարգանաւք յուղարկեցին» (հմտ. Մատթ ԻԱ 34-35): Արդ՝ որ ո՛չ ի մարգարէիցն զայս հաւատացին, մեռելո՞ց լուիցեն<sup>15</sup>, որ ցանկութեամբ աշխարհիս վարակեալք էին և զբանս մարգարէիցն չգրէին ինչ<sup>16</sup>: Ըստ

<sup>1</sup> B գիջութիւն

<sup>2</sup> B նա ասէ

<sup>3</sup> B թէ

<sup>4</sup> B և ապաշխարիցեն

<sup>5</sup> B մինչ

<sup>6</sup> B պահէին զնա

<sup>7</sup> B մարմնոյ

<sup>8</sup> B չարեացն *փխ* չար կրիցն

<sup>9</sup> B մեռելոց

<sup>10</sup> B Եւ ասէ ցնա, եթէ Մովսիսի և մարգարէիցն ոչ լուան, և ոչ թէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն:

<sup>11</sup> B գեհենոյն

<sup>12</sup> B յաւժարեսցեն

<sup>13</sup> B երանելի

<sup>14</sup> B այգոյն

<sup>15</sup> B մեռելո լուիցեն<sup>ն</sup>

<sup>16</sup> A յինչ

այնմ, թէ՛ «Զբանս սուրբս խոտան համարեցան» (*հմմտ.* Յոբ 25):  
 Արդ՝ մի՛ թուեսցի ուղիղ բան մեծատանն, թէ՛ զմեռեալ ոք տեսա-  
 նէին, որ պատ(//)մէր զանտի կենացն, հաւատային և զղջացեալ  
 195բ ապաշխարէին: Կոչեաց զՂազար ի գերեզմանէն (*տե՛ս* Յովհ. ԺԱ 43),  
 զի խաւսեսցի նոցա, զի մի՛ կորիցեն: Իսկ եղբարք մեծատանն՝  
 քահանայապետք և ծերք ժողովրդեանն, խորհեցան սպանանել  
 զյարուցիչն՝ Յիսուս, և զյարուցեալն՝ զՂազար: Այսքան վայրե-  
 նամիտք եղեն անհաստատութեամբն<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Բ անհաստատութեամբն

## Գլուխ ԺԷ

Եւ ասէ առ աշակերտսն. Չէ մարթ չգալ գայթ[ակղութեան]<sup>1</sup> (ԺԷ 1):

Բով քն[ն]ութեան է, զի գտեալ փորձիւն յայտնեսցին և վատթարքն յանդիմանեսցին: Ըստ առաքելոյ. «Պարտ է գայթազղութեանն<sup>2</sup> գալ, զի որ ընտիրքն<sup>3</sup> են՝ երևեսցին» (հմտ. Ա Կորնթ. ԺԱ 19):

Բայց վայ այնորիկ<sup>4</sup> է, յորոյ ձեռն գայցէ (ԺԷ 1):

Ոկ.(կր.) Չոր աւերինակ զհիւանդ ոք, որ ի բազում դարմանս վայելէ և ո՛չ կայ ի պատուէր բժշկին, զայնպիսին աշխարէ բժիշկն վա՛յ և եղուկ ասել, զի ծուլութեամբն զայրացոյց զցաւն, զի յուրք<sup>5</sup> թէպէտև խրատեցան, ո՛չ աւգտեցան: Եւ յորժամ աշխարեցան<sup>6</sup>, ուշաբերեցին, դնէ զվայն, զի այնու զարթուցանէ և կասկածագոյն<sup>7</sup> առնէ կանուխ ասելով<sup>8</sup>:

Իգ. Իսկ առիթն գայթազղութեան ո՛չ<sup>9</sup> իբրև զգայթազղեալն ուսուցանէ արթունս լինել, զի մինն անձինն և մի այլոց արենապարտ լինել: Ջի որք մեղանչենն, ո՛չ բարկութեամբ ընկենու, այլ սաստիւս ել<sup>10</sup> և ուղղութեամբ ստանալ:

Լաւ էր նմա, թէ<sup>11</sup> վէմ երկա[յ]նաքար կախեալ էր զպարանոցաւն<sup>12</sup> և ընկենոյր<sup>13</sup> ի ծով (ԺԷ 2):

ՍՏ 196ա Վասն որոյ բազում տանջանս կրելոց եմք, զի յայտ արասցէ: Թէև այլ տանջանք չար կան, քան զերկա[յ]նաքար(//)իւն յանդունդս<sup>14</sup> ընկղմել: Եւ եթէ այս անհնարին է, որչա՞փ և[ս] առաւել այն. զարմատ հպարտութեանն խլեսցէ և բժշկեսցէ զախտ փառասիրութեան[ն]:

<sup>1</sup> B Ասաց և առ աշակերտսն իւր. Ոչ է մարթ չգալ գայթազղութեան:

<sup>2</sup> B գայթազղութեան

<sup>3</sup> B ընդիրքն

<sup>4</sup> B այնմիկ

<sup>5</sup> B յաւելուածովք *փխ* յուրք

<sup>6</sup> B աշխատեցան և

<sup>7</sup> B կասկածագոյնս

<sup>8</sup> B լս. սրբ.՝ վայ մարդոյն

<sup>9</sup> B ոչ է

<sup>10</sup> B սաստիւս ածել

<sup>11</sup> B եթէ

<sup>12</sup> B կախէր զպարանոցէ նորա

<sup>13</sup> B անկանէր

<sup>14</sup> B սրբ.՝ այսինքն՝ յանդունդս

Քան եթէ գայթաղեցուցանէր զմի ի փոքրկանց<sup>1</sup> (ժԵ 2):

**ՍՏ** Քանզի փոքունք դիւրաւ գայթաղին: Արդ՝ մի՛ անփոյթ աւրասցուք զնոսա, զի մի՛ ոք առ մեզ կորիցէ: Փոքր կոչէ, որ ի հաւատոցն տկար է, այլ որ ազատն է ի վեր քան զգայթաղութիւն: Քանզի խաղաղութիւն բազում է, որ սիրէ զՏէր, և ո՛չ գայթաղի և ո՛չ զայլս գայթաղեցուցանէ:

**Իգ.** Իսկ որոց բանէ և իմաստութեամբ վարեն, սովին լծակցեալս և պահեն զսահման երկուցունց յաւգուտ անձանց և որ զհետ գանէ:

Ասեն առաքեալքն. Տէր յաւել ի մեզ հաւատոս: Թէ ունիցիք հաւատոս քան զհատ ման[անխոյ]<sup>2</sup> (ժԵ 5-6):

Հատ մանանխոյ զինքն ասէ, վասնզի փոքրկացաւ առեալ զկերպարանս ծառայի:

**ԵՓ** Կամ վասն փոքրկութեան քարոզութեանն, որ ի սկզբանն էր, ասաց:

Եւ ասիցէք թղենոյս, թէ<sup>3</sup> խլեաց աստի<sup>4</sup> և տնկեաց ի ծով լինի<sup>5</sup> (ժԵ 6):

**Իգ.** Բազում անգամ լուան, թէ ամենայն ինչ դիւրին է այնմ, որ հաւատայ: Եւ ոմանք գովեցան ի հաւատոցն. «Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո» (Մատթ. ժԵ 28), և ընդ հարիւրապետին զարմացաւ ընդ հաւատս (տե՛ս Մատթ. Ը 10, Ղուկ. ժԵ 9): Եւ ոմանք պարսաւեցան վասն անհաւատութեանն: Կամեցան առաքեալքն ուսանել զբան հաւատոյն, որ զաւրացեալ է և [յ]ամենայնի յաղթէ, և զանհնարինս առնէ հաւատալի և զաներևոյթն<sup>6</sup> առնէ երևելի, աչաց<sup>7</sup> տեսանելի: Զի զծառ արմատացել յերկրի հրամայէ խլել և տնկել<sup>8</sup> ի վերայ ջուրց, // և արմատանալ իբրև ի հաստատուն երկիր: Եւ այլուր՝ «զԼերինս փոփոխել» (Ա Կորնթ. ԺԳ 2) և «Ընկենուլ ի ծով» (հմմտ. Միքիա Է 19):

<sup>1</sup> Բ Քան թէ գայթաղեցուցանէ զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ: Զգոյշ կացէք անձանց: Եթէ մեղիցէ եղբայր քո՝ սաստեա՛ նմա, և եթէ ապաշխարիցէ՝ թող նմա: Եւ եւթն անգամ մեղիցէ քեզ, և եւթն անգամ դարձցի ի քեզ և ասիցէ ապաշխարեմ, թողցես նմա (ժԵ 3-4):

<sup>2</sup> Բ Եւ ասեն առաքեալքն ցՏէր. Յաւելաւ մեզ հաւատոս: Եւ ասիցէ Տէր. Եթէ ունիցիք հաւատոս քան զհատ մանանխոյ: Եւ ասիցէք թթենոյս այսմիկ խլեաց և տնկեաց ի ծով, և հնազանդեսցի ձեզ:

<sup>3</sup> Բ այսմիկ *փի* թէ

<sup>4</sup> Բ *չիք* աստի

<sup>5</sup> Բ և հնազանդեսցի ձեզ *փի* լինի

<sup>6</sup> Բ զաներևոյթս

<sup>7</sup> Բ և աչաց

<sup>8</sup> Բ հրամանաւ խլեալ և տնկեալ



**ԻԳ** Արդ՝ ընկալան առաքեալքն զհաւատս զայս և զգաւրութիւնն, և վստահէին յամենայն ինչ վճարել բանիւ: Վասն որոյ գրեն համարձակութեամբ, զաւրութեամբ այնմիկ, որ ասաց. «Հնազան[դ]եցոյց<sup>1</sup> ձեզ զամենայն<sup>2</sup>» (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 27): Արդ՝ որ ունի հաւատ<sup>3</sup> կատարեալ, ամենայն հոսանք փորձանաց ո՛չ կարեն դրդուեցուցանել զնա: Ի<sup>4</sup> հաւատն վստահ առնէ և ի գործն: Մեղս<sup>5</sup>, թէ տեսանէի ի սրտի իմում, մի<sup>6</sup> թէ լսէր ինձ Տէր: Արդ՝ սրբեաց զնոսա Հոգով և յաւել ի նոսա զամենայն զաւրութիւն<sup>6</sup> և զիմաստութիւն, զի յանհաւատութենէ ածեալ ի կրաւնս աստուածպաշտութեան և ընծայեալ Աստուծոյ ժողովուրդ սուրբ:

Ո՞վ<sup>7</sup> ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ Հողագործ կամ հովիւ (ԺԷ 7):

**ՍՏ** Թէպէտև կարի անզուգական է աւրինակն: Իսկ Տէրն ո՛չ համարի անարժան<sup>8</sup> աստուածային պատուոյն, այլ խնդրէ ի մէնջ ցուցանել այնպէս<sup>9</sup> հնազանդութիւն, որչափ ծառայք առ տէրն իւրեանց, և գործովք զաւրագոյն քան զտէր: Վասնզի տեսարք նոցա աշխատութեամբն փափկանան:

Մտանիցէ յազարակէ վաստակեալ: Ո՛չ ասիցէ ցնա. Պատրաստեա՛ զինչ ընթրելոց իցեմ, և գաւտի ածեալ պաշտեա՛ զիս, մինչև կերայց և արբից, և ապա դու կեր[իցես]<sup>10</sup> (ԺԷ 7-8):

**ՍՏ** Արդ՝ եթէ ծառայն այնքան ծառայակցին հնազանդէր, իսկ դուք՝ իմ գոլով ծառայք: Նա՛ հողագործ, դուք՝ հրաշափառագործ: Արդ՝ եթէ նա լռութեամբ անպա(//)տճառ կատարէ զհրամայեալսն, որչա՞փ և[ս] առաւել դուք, որ զերկինս փոխանակ հողագործութեան արաւրադրէք և սերմանէք զբանն կենաց, պարտիք կատարել զհրամայեալսն:

**ԻԳ** Եւ նա կայ անշշու՞ն<sup>11</sup> ի հնազանդութեան և չհամարի ինչ, զոր գործեաց: Եւ այն վասն փոքր պարենի լրման, զոր ունի

<sup>1</sup> B և հնազանդեցի

<sup>2</sup> B ամենայն

<sup>3</sup> B հաւատս

<sup>4</sup> B Այլ նա ի

<sup>5</sup> B գմեղս

<sup>6</sup> B գաւրութիւնս

<sup>7</sup> B Իսկ ով

<sup>8</sup> B անարժանից

<sup>9</sup> B այնպիսի

<sup>10</sup> B Որ իբրև մտանիցէ յազարակէ, ասիցէ ցնա վաղվադակի, թէ անց բազմեա՞ց, այլ ոչ ասիցէ ցնա թէ պատրաստեա՛ զինչ ընթրելոց իցեմ, և գաւտի ածեալ պաշտեա՛ զիս, մինչև կերիցես և արբես դու:

<sup>11</sup> B անշշու՛նչ

յայնպիսեաց անտի: Մի՞թէ շնորհ ինչ ունիցի ծառային այնմիկ, որ<sup>1</sup> արար զհրամայեալսն<sup>2</sup>: Զի հարկ բռնութեան է, զոր<sup>3</sup> կատարեն նոքա, և ո՛չ գործ ինչ շնորհի ասի: Արդ՝ եթէ առ հաւասար բնութեանն այնպէս կան ի հնազանդութեան, քանի՞ ևս պարտ է Տեառն սպասաւորել պատկառելով: Եւ որքա՞ն զաւրանամք յայսպիսի սպասաւորութեան, զանձինս ի չափ<sup>4</sup> ունել պարտ է: Եւ այս կարի իրաւամբք, զի նա բնութեամբ ունի գտէրութիւնն, և մեր բնութեանս Արարիչ: Զի ամենեքին ծառայ քո եմք, և Տէր բոլորից անկարաւտ, և զմեր կարաւտութիւնս լցուցիչ, և անկարաւտ մերում սպասաւորութեան<sup>5</sup>: Եւ փոքու վաստակոցս մեր վարձս բազումս խոստացաւ այն, որ անկարաւտ է մեր բարեգործութեանս, այլ պատճառս խնդրէ փրկութեան մերում<sup>6</sup>:

Նոյնպէս և դուք, յորժամ զամենայն հրամանս առնիցէք, ասաջիք, թէ ծառայք անպիտան եմք, զոր պարտեաք առնել՝ արարա՛ք<sup>7</sup> (ժԷ 10):

197բ Զի մի՛ վասն այսու ինչ նշանացս<sup>8</sup>, որ տուաւ ի ձեռս նոցա, զոր կատարէին, հպարտացին ինչ, և վրիպակ գտանիցին ի գործս իւրեանց, քանզի գիտէ զա(//)մբարտաւանութիւն<sup>9</sup> ապականիչ ամենայն բարեաց: Զգուշացուցանէ, զի մի՛ ոք տգիտութեամբ վնասեսցի, և ամենայն պահպանութեամբ պահէ զմեզ: Նաև Պաւղոս ասէ. «Թէ կամաւ աւետարանեմ, վարձք է ինձ, և եթէ ակամայ՝ տնտեսութիւն յանձնէ ինձ» (Ա Կորնթ. Թ 17), «Բայց վայ է ինձ, թէ ո՛չ աւետարանեմ» (Ա Կորնթ. Թ 16): Եւ զոր ինչ արար, ասէ. «Ո՛չ ես, այլ շնորհքն Աստուծոյ, որ յիս» (Ա Կորնթ. ժԷ 10): Տայ Աստուծոյ շնորհացն: Արդ՝ զայս ամենայն ոք ստացի առ Աստուած ի վերայ ամենայն նեղութեան և վաստակոց, զոր վասն նորա կրեմք՝ անպիտան զմ[ե]զ համարեալ, որպէս թէ բնաւ ոչինչ արարաք:

US Զի յետ այնր ընդունիցիք զանսպառ հատուցումն ի Քրիստոսէ Աստուծոյ<sup>10</sup>:

<sup>1</sup> B գի

<sup>2</sup> B զամենայն հրամանսն

<sup>3</sup> B զոր ինչ

<sup>4</sup> B չափու

<sup>5</sup> B սպասաւորութեանս

<sup>6</sup> B մերոյ

<sup>7</sup> B Նոյնպէս և դուք, յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեր, ասաջիք, թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտեաքն առնել՝ արարա՛ք:

<sup>8</sup> B նշանաց

<sup>9</sup> A զամպարտաւանութիւն

<sup>10</sup> B յԱստուծոյ փրկ ի Քրիստոսէ Աստուծոյ

**ԻԳ** Ապա զի՞նչ կրեսցեն, որք ո՛չ արարին և փքացան մեծամտե-  
լով:

Եւ եղև մինչ երթայր նա յԵրուսաղէմ, և<sup>1</sup> անցանէր ընդ մէջ  
Սամարիայ գալիլեացոցն<sup>2</sup> (ժԷ 11):

Այս վերջին գալն է նորա յԵրուսաղէմ, և մերձ առ այս է  
յղելն առ նա քերցն Ղազարու, զոր յարոյցն ի մեռելոց:

Մինչդեռ մտանէր ի գիւղ ուրեմն, պատահեցին նմա տասն բո-  
րոտք, որ կացին ի Հեռաստանէ, բարձին գձայնս իւրեանց և ասեն.  
Յիսո՛ւս վարդապետ, ողորմեա՛ց մեզ<sup>3</sup> (ժԷ 12-13):

**ԿՐ** Ո՛չ իշխեցին մերձենալ, գալ առ նա, քանզի գիտէին, թէ Նղի-  
սէ զն[է]եման ո՛չ կամեցաւ տեսանել, թէպէտ Յորդանանաւ  
սրբեցաւ (տե՛ս Դ Թագ. Ե 1-18, Ղուկ. Դ 27):

Ասէ՜ ցնոսա. Երթայք ցուցէք զանձինս ձեր քահանայիցն (ժԷ  
14):

**198ա** Վասնզի այսպիսի էր աւրինացն պատուէր. «Մարդ ոք, ասէ,  
յորում երևեսցի արած բորոտութեան, մատիցէ առ քահանայն և  
քահանային տեսանելով» (հմնտ. Ղևտ. ԺԳ 9), թէ լսնագոյն իցէ //  
կամ պաղպաղուն, կամ նստագոյն, զի ցուցցէ զինքն պահող աւ-  
րինացն, և զնոսա՝ բամբասող<sup>5</sup> նորա:

Եւ<sup>6</sup> իբրև գնացին, առժամայն բժշկեցան ի ճանապարհ[հի]<sup>7</sup> (ժԷ  
14):

Եւ<sup>8</sup> ո՛չ աղաւթիւքն սրբեցան, այլ աստուածային զաւրու-  
թեամբն: Արտաքոյ աւրինացն աւրինագիրն բժշկէր զնոսա, զի  
աւրինացն այս էր պատուէր. յորժամ քահանայն կրկին տեսանե-  
լովն ըստ առաջին կերպին մնայր բորոտն, քակէր զասիւոթսն  
հանդերձին և գերծոյր զգլուխն, և կապէր ի վերջոյ զբերանն: Եւ  
հանէին զնա՝<sup>9</sup> արտաքոյ բանակին ութ աւր: Եւ ապա երրորդ ան-

<sup>1</sup> B և ինքն  
<sup>2</sup> B և գալիլեացոց  
<sup>3</sup> B Եւ մինչդեռ մտանէր ի գեաւղ ուրեմն, պատահեցան նմա տասն այր բորոտք,  
որք կացին ի Հեռաստանէ, բարձին գձայնս և ասեն. Յիսո՛ւս վարդապետ, ողոր-  
մեա՛ց մեզ:  
<sup>4</sup> B Եւ իբրև ետես զնոսա, ասէ  
<sup>5</sup> B նախանձոտս և բամբասող  
<sup>6</sup> B Եւ եղև  
<sup>7</sup> B սրբեցան *փի* բժշկեցան ի ճանապարհի  
<sup>8</sup> B *չիք* Եւ  
<sup>9</sup> B զնոսա

գամ տեսանէին, թէ նոյն իցէ, թէ այլ կերպիւ, կամ սրբեալ իցէ, լուանայր և պատարագ մատչէր ըստ աւրինին:

**ՍՏ** Իսկ սրբութիւնս այս Յիսուսի էր գործ կարողին, որ ի գնալն՝ «առժամայն բժշկեցան»:

**ԿՐ** Քանզի [ի] խնդրել աշակերտացն յաւելումն հաւատոց: Տէրն յարդար էր զպատահումն նոցա ի նորասքանչ զարմացումն և ի հաստատութիւն հաւատոց առաքելոցն, թէ կամք նորա կատարէ զամենայն ինչ յերկինս և յերկրի:

Եւ ոմն ի նոցանէ իբրև ետես, թէ սրբեցաւ, անդրէն ի ձայն բարձր փառաւորէր զԱստուած: Անկաւ առ ոտս նորա և գոհանայր<sup>1</sup> զՏեառնէ. և ինքն էր սամարացի<sup>2</sup> (ժԵ 15-16):

**ԿՐ** Իսկ սամարացոյն դարձումնն զհեթանոսաց ընդունելութիւն նշանակէ յառաքելոցն<sup>3</sup> վարդապետութիւն[ն]:

**ԻՊ** Քանզի գիտէր նա, թէ նովաւ այս զաւրութիւնք կատարին: Սամարացի գոլով և բարբարոյ՝ տպացոյց յինքն զխորհուրդ փրկութեան ամենայն հեթանոսաց, // զի սրբեցան աւագանաւն յանաւրէնութեանց շնորհաւքն Աստուծոյ: Ըստ այնմ՝ «Հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած» (ՅճՈՄ. ժԵ 9):

Ասէ Յիսուս<sup>4</sup>. Ո՛չ սոքա տասն<sup>5</sup> սրբեցան, իսկ արդ՝ իննունքն ո՞ւր են: Զի ո՛չ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս (ժԵ 17-18):

Որք ի հրէից աստի<sup>6</sup> էին ապերախտք գոլով՝ ո՛չ կամեցան գոհանալ կամ տալ փառս Աստուծոյ: Նկարեցաւ ի նոսա հրէիցն խորհուրդն, որք զիւաց համբաւէին<sup>7</sup> զգործս Աստուծոյ, որք<sup>8</sup>, բազում խնամս գտեալ ի նմանէ, յանապատի անդ և յերկրին Քանանու: Եւ երախտամոռացք եղեալ՝ առ դեւս հաստատէին դաշինս: Եւ յայտնի է այս ի մարգարէից անտի, որք պախարակէին զանհաւատութիւն[ն] Իսրայելի: Եւս բազմապատիկ եղեն<sup>9</sup> նոցա ստամբակութիւնն Քրիստոսիւ, և անշնորհակալու եղեալք, որպէս

<sup>1</sup> A գոհանանայր

<sup>2</sup> B Եւ ոմն ի նոցանէ իբրև ետես, թէ սրբեցաւ, դարձաւ անդրէն ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած: Անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա և գոհանայր գնմանէ. և ինքն էր սամարացի:

<sup>3</sup> A, B ի յառաքելոցն

<sup>4</sup> B Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ

<sup>5</sup> B *զրփիս* տասն սոքա

<sup>6</sup> B անտի

<sup>7</sup> A համբավէին B համարէին

<sup>8</sup> B որ

<sup>9</sup> B եղև

յայտնի է ամենեցուն, որք միտ դնեն: Վասն որոյ զարմանայ ընդ նոսա, որք յայնպիսի ախտէ ազատեալք<sup>1</sup>՝ բարեմիտ ո՛չ եղեն գոհանալով կամ փառս տալով:

**Ասէ՛ցնա. Արի՛ գնայ, հաւատք քո կեցուցին զ[քեզ] (ժԷ 19):**

Ամենայն ուրեք յայտնի է այս: Զի հեթանոսք պատշաճ հաւատս ընծայէին<sup>3</sup> Տեառն քան զհրէայսն, որք ապերախտք<sup>4</sup> գտան առ Քրիստոսիւ<sup>5</sup> որպէս առ մարգարէիւքն: Զի հեթանոսք հաւատովք<sup>6</sup> ապրեցան, զի<sup>7</sup> ուսցին և այլք այնպիսի հաւատս մատուցանել: Եւ նա հաստատե[ս]ցի ի նմին՝ իմացեալ, թէ գովելի են հաւատք:

**Իբրև հարցաւ ի փարիսացոցն<sup>8</sup>, թէ ե՞րբ գայց[է] արքայութիւն<sup>9</sup> Աստուծոյ (ժԷ 20):**

199ա Փարիսացոյն բանք և հարցուածք լի էին նենգութեամբ և // կեղծաւորութեամբ: Եւ ո՛չ երբեք հարցանեն նոքա, զի ուսցին կամ ի վերայ ճշմարտութեանն հասցեն, այլ զի դաւաճանք լիցին: Զի թէ յայլու՞մ ժամանակի ասիցէ<sup>10</sup> զգալուստն իւր, ասասցեն<sup>11</sup> ժողովրդեանն. «Ահաւասիկ ո՛չ է նա Քրիստոսն, զի հրաժարեցոյց զանձն»: Ապա եթէ ասիցէ. «Այս է ժամանակ<sup>12</sup>», ասեն ժողովրդեանն. «Ո՞ւր իցէ Եղիայ, զի արժան է<sup>13</sup> առաջի նորա գալ» (հմնտ. Մարկ. Թ 10):

ՈԿ Արդ՝ զիրք մարգարէիցն երկու գալուստ ասեն: Առաջնոյն<sup>14</sup> կարապետ՝ զՅովհաննէս ցուցանեն, իսկ երկրորդին՝ զԵղիա: Բայց դպիրքն և փարիսեցիքն զայս ընդ միմեանս խառնէին և զժողովուրդն թիրէին: Զվերջին գալուստ յուշ առնէի[ն] նոքա ժողովրդեանն և ասէին, թէ՛ «Սա էր Քրիստոսն<sup>15</sup>», ապա՝ «Եղիա-

1 B ազատեալ  
2 B եւ ասէ  
3 B ընծայեցին  
4 B որ ապախտաւորք  
5 B Քրիստոսիւն  
6 B հաւատով  
7 B և զի  
8 B փարիսեցուցն  
9 B արքայութիւնն  
10 B ասասցէ  
11 B ասիցեն  
12 B ժամանակն  
13 B է նմա  
14 B եւ առաջնոյն  
15 B Քրիստոս

յի նախ պարտ էր գալ» (Մարկ. Թ 10): *Սուտ ուսուցանէին<sup>1</sup>, յաւըէին թակարդ<sup>2</sup> ժողովրդեան[ն] չհաւատալ ի Քրիստոս:*

**ՍՏ** *Դաւիթ<sup>3</sup> ասէ վասն առաջին գալստեանն. «Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման»՝ անձայն, և «Իբրև զցաւ զցաւ յերկիր» (Սաղմ. 74 6)՝ զհանդարտ իջումն, որ առ Կոյսն: Իսկ երկրորդն՝ «Աստուած մեր յայտնապէս եկեսցէ և ո՛չ լուեալ դադարեսցէ: Հուր առաջի նորա գնա[ւ]ցէ և մրրիկ յոյժ: Կոչեաց զերկիրնս և զերկիր ի դատել զժողովուրդ իւր» (Սաղմ. 118 3-4): Եւ Դանիէլ ետես զառաջինն՝ «Վէմ<sup>4</sup> առանց ձեռին հատեալ» (հմմտ. Դան. Բ 34, 45), որ զպատկերն փշրեալ եբարձ, իսկ<sup>5</sup> [զ]երկրորդն՝ «Որդի Մարդոյ ընդ ամպս եկեալ» (հմմտ. Դան. Է 13): Իսկ զպիրքն մի ասէին զալուստ և զեղիայ Կարապետ՝ ի կործանումն և ի շփոթումն ժողովրդեանն:*

**Ասէ Յիսուս<sup>6</sup>. Ո՛չ գոյ<sup>7</sup> արքայութիւն Աստուծոյ խտրանաւք** (ժԷ 20):

**199բ** *// Սկսան<sup>8</sup> ի հեթանոսաց հրէայքն՝ աստեղաց տալ [զ]չարժումն<sup>9</sup> և զերևումն<sup>10</sup> աստեացս: Եւ բախտ և ճակատագիր ուսուցին, յորմէ աւրէնք և մարգարէք հրաժարեցուցին: Նոքա զԱստուծոյ խնամակալութիւն և զմարդկան անձնիշխանութիւն բարձին: Եւ զամենայն ինչ ժամանակի և լուսաւորաց ետուն, բարեբախտ կամ չարաբախտ ոք լինել, և զժամանակ չար և բարի ասացին: Զբարին ի բարի ժամանակի ստացեալ և զչարն ի չար ժամանակի: Եւ ի մարգարէիցն ի բաց կացեալ<sup>11</sup>, որք հոգոյն իմաստիւք խաւսեցան առ նոսա:*

**Եւ չասացին<sup>12</sup>, թէ աստ<sup>13</sup> է կամ անդ** (ժԷ 21):

**Զի<sup>14</sup> արքայութիւն այն էր Քրիստոսի<sup>15</sup>:**

<sup>1</sup> B Զվերջին գալուստ... ուսուցանէին՝ սրբ. է ստորին լս.

<sup>2</sup> A թակարթ

<sup>3</sup> B Արդ՝ Դաւիթ

<sup>4</sup> B զվէմն

<sup>5</sup> B և

<sup>6</sup> B Պատասխանի ետ նոցա և ասէ

<sup>7</sup> B գայ

<sup>8</sup> B բառի վերևում սրբագրված՝ ուսանել

<sup>9</sup> A գերև շարժումն

<sup>10</sup> B զբերումն

<sup>11</sup> B կացին

<sup>12</sup> B չասիցեն

<sup>13</sup> B ահաասիկ աստ

<sup>14</sup> B զի ահա

<sup>15</sup> B Աստուծոյ ի ներքս ի ձեզ է *փխ* այն էր Քրիստոսի

**US** Ազգեցուծիւնն հոգոյն ի մէջ և ի ներքս զաւրուծիւնն ունի: Աւրհնեայ անձն իմ զՏէր և ամենայն ներքինք<sup>1</sup> իմ զանուն սուրբ նորա: Արդ՝ յորում ազգեցուծեամբ է Քրիստոս, ի նոսա ի ներքս է արքայուծիւնն[ն] Աստուծոյ: Իսկ յորս ո՛չ է ազգեցուծեամբ, ի նոսա և արքայուծիւնն[ն] Աստուծոյ ո՛չ կարէ լինել: Նոյնպէս և ի փարիսացիսն էր ազգեցուծիւնն[ն] Աստուծոյ, որպէս և երանելին Պաւղոս ասէ (հմմտ. Կողոս. Բ 12): Ո՛չ աստ և ո՛չ անդ, այլ ամենայն ուրեք մերձ է, և որք կամին մերձենան առ նա: Ըստ Պաւղոսի<sup>2</sup>՝ «Մի՛ ասիցես ո՞վ ելանիցէ յերկինս զՔրիստոս իջուցանել անտի կամ իջանիցէ յանդունդս, այսինքն՝ զՔրիստոս յարուցանել ի մեռելոց: Այլ մերձ է բան հաւատոյ<sup>3</sup> և բարեգործութեան ի բերան քո և ի սրտի քում» (Յռոմ. Ժ 6-8): Ըստ այնմ. «Աստուած մերձաւոր եմ ես և ո՛չ Աստուած հեռաւոր» (Երեմ. ԻԳ 23): Իսկ եթէ զմարմնով  
**200ա** գալուստն կամիցիք խնդրել, է՞ր //տակաւին ի մէջ նոցա դիւրագոյն մերձենալի, որք հաղորդէ աստուածութեան նորա: Իսկ եթէ զերկրորդն և այն ո՛չ կարաւտի քարոզչաց, այլ սաստիկ լուսով յերկնից<sup>4</sup> ծագէ: Զի ո՛չ է տեղի ուրեք, որ ծածկէ զնա, այլ ի վերուստ եկեալ տեսանի յամենեցունց:

Ասէ<sup>5</sup> առ աշակերտսն. Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրց Որդոյ<sup>6</sup> տեսանել, և ո՛չ տեսանից[էք] (ժԷ 22):

**ԿՐ** Յորժամ կատարին տնաւրինականքս և յերկինս ամբառնան<sup>7</sup>, զկնի այսորիկ ո՛չ կարէք տեսանել: Ապա ցանկանայք<sup>8</sup> տեսանել մի յաւուրցն<sup>9</sup>, յորս ուսուցանէի զձեզ: Զի այժմ ո՛չ կատարելապէս ճանաչէք զիս, որպէս զկնի ամբարձմանն, յորժամ Հոգին Սուրբ իջանիցէ ի ձեզ: Եւ ապա կատարելապէս իմանայցէք գոլ Որդի Աստուծոյ, զոր այժմ Որդի մարդոյ տեսանէք ի միջի ձերում:

**ԻՊ** Այսու և զփարիսացիսն կամի ընդոստուցանել, որք հարցանէին զնա վասն գալստեան նորա: Իբրև պատրուակաւ յայտնէ զանձն նոցա իմանալ, թէ զոր տեսանեն<sup>10</sup>՝ այն է, որում մարգա-

<sup>1</sup> B նախ՝ ոսկերք, ապա սրբազրված՝ ներքին  
<sup>2</sup> A, B՝ Մովսիսի (B բառը ջնջած, դարձրած՝ Պաւղոսի)  
<sup>3</sup> B հաւատոց  
<sup>4</sup> A, B ի յերկնից  
<sup>5</sup> B Ասաց և  
<sup>6</sup> B Որդւոյ մարդոյ  
<sup>7</sup> B ամբառնամ  
<sup>8</sup> B ցանկանայցէք  
<sup>9</sup> B յաւուրս  
<sup>10</sup> B տեսանէք

րէքն բաղձացան<sup>1</sup>, որ նախքան զերեւելն ծանեան զնա, և ո՛չ տեսին: Նոյն կայ առաջի այնոցիկ, որք շրջեցան ընդ նմա: Զի յետ վերանալոյ նորա բորբոքէր ի սիրտս նոցա անըմբելեցի<sup>2</sup> ցանկութեամբ սէր նորա: Իբրև յիշէին զտեսանելն զնա և [զ]շրջելն ընդ նմա, և զբանսն, որով խաւսէր ընդ նոսա: Նաև այն ևս կարի սրտակիզէր զնոսա, // զի մինչ էր ընդ նոսա, որպէս պարտ էր զիտել, ո՛չ զիտէին զնա: Եւ այս յայտնի էր նմա, զի յետ անդրէն դառնալոյն կալոց էին համաւրէն ի վերայ գիտութեան նորա: Թէպէտև թախանձանաւք խնդրէին՝ ո՛չ կարէին հասանել:

200բ

**Եթէ ասիցեն ձեզ. Ահաւասիկ է աստ<sup>3</sup> կամ անդ, մի՛ երթայցէք զհետ (ժԷ 23):**

Ասէ զիւր գալստեանն նշան, որ ո՛չ միայն նոցա յաւգուտ էր, այլ<sup>4</sup> մեզ և որք յետ մեր լինելոց են: Առ անգամ մի և ի տեղոջէն<sup>5</sup> զգուշացուցանէ: Իսկ Մատթէոս ասէ, թէ՛ «Յարիցեն սուտ<sup>6</sup> քրիստոսք և սուտ մարգարէք և տացեն<sup>7</sup> նշանս և արուեստս մեծամեծս առ ի մոլորեցուցանելոյ<sup>8</sup>, եթէ հնար ինչ իցէ, և զընտրեալսն<sup>9</sup>» (Մատթ. ԻԴ 24, նաև՝ Մարկ. ԺԳ 22):

ԿՐ

Եւ այս նախքան զաւերն Երուսաղեմի գուշակեցան փոքր ինչ, այլ յաւետ նախ՝ առընթեր իւրոյ գալստեանն լինել, յորժամ յաճախեն հալածանքն և կարծեցուցանող նշանքն: Զոր առ աչաւք ցուցանէ յարեգակն և ի լուսին և<sup>10</sup> յաստեղս՝ առ ի հաւատարմացուցանել<sup>11</sup> զինքն գոլ Քրիստոս: Արդ՝ յասելն, եթէ զգոյշ կացէք, թէպէտև Յուդաս և Թեղաս զնոյն ախտացան, այլ առաւել ևս գուշակեաց զՆեոին գալուստն<sup>12</sup>, զոր պատրէ<sup>13</sup> նշանաւք զմարդիկ զինքն գոլ Քրիստոս:

**Զի որպէս փայլակն փայլատակեալ ի ներքոյ երկնից ընդ երկնաւք<sup>14</sup> ծագիցէ (ժԷ 24):**

<sup>1</sup> A բախձացան

<sup>2</sup> B անբերելի

<sup>3</sup> B Եւ եթէ ասեն ձեզ եթէ ահաւասիկ է փիւ եթէ... աստ

<sup>4</sup> B այլև

<sup>5</sup> B չիք և ի տեղոջէն

<sup>6</sup> A սուտս

<sup>7</sup> B տայցեն

<sup>8</sup> B մոլորեցուցանել

<sup>9</sup> A զնդրեալսն

<sup>10</sup> B չիք և ի լուսին և

<sup>11</sup> A հաւատարմացուցանելոյ, վերջի ոյ տառերը քերած-ջնջած

<sup>12</sup> A զգալուստն

<sup>13</sup> B պատրեն

<sup>14</sup> B յերկնիւք



**ԻԳ** Որք ի խաւարային տունս իցեն և ի վիհս խորինս: Ո՛չ յայլ ումեք է ուսանիցին, այլ նոյն ի[ն]քն յայտնեալն նորա՝ քարոզէ  
**20և** զնա: // Եւ կարի ևս առաւելութեամբ յայտնութիւն նորա քան զաւրինակն, քանզի արեգակնս<sup>1</sup> զխաւար զգենլոց է<sup>2</sup>, և ամենայն բնութիւնք կերպափոխք<sup>3</sup> լինին: Արդ՝ վասնզի զայս եդ հաւաստի գիտութիւն, զի նենգութիւնք մի՛ զաւրասցին և հաւատք խափանեսցին, որ զաներևոյթսն ըմբռնմամբ յինքն ձգէ:

**Նոյնպէս և Որդի մարդոյ յաւուրն իւրում** (ժԷ 24):

Վասն պայծառ և լուսաւորութեան փառացն միանգամայն բնաւիցն յայտնի լինի:

**Բայց նախ՝ պարտ է նմա բազում չարչարանս կրել<sup>4</sup> և խոտել յազգէս յայսմանէ<sup>5</sup>** (ժԷ 25):

**ԿԲ** Յորմէ հաստատեաց զկրաւնս աստուածածանաւթութեանն և սկիզբն եղև մտին հեթանոսաց: Զի խոտեսցի նուաստութեամբ և ի ժամանակի իւրում բարձրացցի փառաւք: Միով բնութեամբ գործէ զայս, զի ամենայն ոք նախ՝ տրտմականացն համբերեսցէ և ապա՝ ի կատարածին հեշտալեացն հաղորդեսցի:

**Որպէս<sup>6</sup> եղև յաւուրս[ն] Նոյի, նոյնպէս եղիցի<sup>7</sup> յաւուրս Որդոյ մարդոյ<sup>8</sup>** (ժԷ 26):

Եփ. Զի որք հոսեցին զմիտս զհետ լոյծ ցանկութեանցն, զի հարեալք ի մարմինս և յորովայնս՝ հոսեցաւ ի նոսա լոյծ բնութեան ջուրց, ապականիչ մարմնոյ, որովայնի<sup>9</sup>, մինչև յաւրն<sup>10</sup>, յորում եմուտ Նոյ ի տապան<sup>11</sup>: Իսկ այն, որ արգել զանձն ի գէջ խառնակութեանց նոցա և ո՛չ կցորդեցաւ անաւրէնութեանց նոցա, ո՛չ հեղեղեաց զնոսա ջուր[ն] ապականիչ:

**Որպէս յաւուրսն Ղովտայ եղև** (ժԷ 28):

<sup>1</sup> B արեգակն

<sup>2</sup> B զգենու *փխ* զգենլոց է

<sup>3</sup> B կերպարանափոխք

<sup>4</sup> B բազումս չարչարել *փխ* բազում... կրել

<sup>5</sup> A ի յայսմանէ

<sup>6</sup> B եւ որպէս

<sup>7</sup> B և եղիցի

<sup>8</sup> B Որդւոյ մարդոյ. ուտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին:

<sup>9</sup> B և որովայնի

<sup>10</sup> B յաւուրն

<sup>11</sup> B տապանն, և եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսեան

201բ // Սողոմոնեցիքն<sup>1</sup> ախտացան զամենայն չար խառնակութիւնս և ո՛չ ի միտ առին, թէ վրէժխնդիր է Աստուած այնոցիկ:

Այլ շինէին, տնկէին, վաճառէին, գնէին<sup>2</sup> (ժժ 28):

Ընդարձակէին զանձինս ի դժոխս, և անյագ<sup>3</sup> եղեն իբրև զմահ: Նորին աղազաւ բացան<sup>4</sup> դժոխք և եկուլ զնոսա, և որովայն մահու ապականեաց զնոսա<sup>5</sup>:

Ուտէին, ըմբէ[ին]<sup>6</sup> (ժժ 28):

Ձի՞նչ էր անաւրէնութիւն[ն] Սողոմայ. յաճախութիւն հացի և յղփութիւն գինոյ:

Յորում<sup>7</sup> աւուր ել Ղովտ ի Սողոմայ, տեղեաց հուր և ծծումբ յերկնից և կորոյս զա[մենեսին] (ժժ 29):

ԿՐ Ձի ո՛չ<sup>8</sup> ջեռաւ ի ցանկութիւն<sup>9</sup> նոցա, ո՛չ պատեցաւ ի հրոյ բաժակէ նոցա: Սողոմեացաւքն<sup>10</sup> զարհուրեցոյց զանհաւատսն:

Նմին աւրինակի և յաւուրն Որդոյ մարդոյ յայտնելոց է<sup>11</sup> (ժժ 30):

Ձայս ընտրութիւն<sup>12</sup> առ արդարս և մեղաւորս կանխաւ ժամանէ խրատել, զի ուսցին փախչել ի սողոմեցոց<sup>13</sup> հրոյն և ի կործանմանէն:

Յայնմ աւուր կայց[է]<sup>14</sup> ի տանիս և կարասի իւր ի տան<sup>15</sup> (ժժ 31):

ԵՓ Ձի լաւ է այնուհետև մերկանդամ մազապուրծ ապրել և ո՛չ մտանել ի տուն առնուլ զհանդերձս, զի<sup>16</sup> ո՛չ փրկին նոքա, որ-

<sup>1</sup> B Արդ՝ սողոմայեցիքն

<sup>2</sup> B Նոյնպէս և որպէս յաւուրսն Ղովտայ եղև. ուտէին, ըմպէին, գնէին, վաճառէին, տնկէին, շինէին:

<sup>3</sup> A անյայդ

<sup>4</sup> B բացաւ

<sup>5</sup> B և որովայն... զնոսա՝ սրբ. է վերինս լս.

<sup>6</sup> B և ըմպէին

<sup>7</sup> B Եւ յորում

<sup>8</sup> B որ ոչ

<sup>9</sup> B ցանկութիւնս

<sup>10</sup> B Արդ՝ սողոմեացովքն

<sup>11</sup> B Ըստ նմին աւրինակի եղիցի և յաւուրն յորում Որդի մարդոյ յայտնելոց է:

<sup>12</sup> B ընտրութեան

<sup>13</sup> B սողոմեացուց

<sup>14</sup> B որ կայցէ

<sup>15</sup> B տան. մի՛ իջցէ առնուլ զայն

<sup>16</sup> B Եւ զի

պէսզի<sup>1</sup> հանապազ: Ձիք<sup>2</sup> ի վերայ նոցա խնամք ողորմութեան և հոգաբարձութեանն Աստուծոյ:

Եւ որ ի տանիս (ժԷ 31):

ստ. Ի բարձր կատարելութիւն առաքինութեանն և ի շինուածս աստուածաշատութեան և ի պսակ[ն] անթառամելի: Ձի շփոթ մեծ տազնապի և վտանգ տարակուսանաց, և արհաւիրք անհնարինք 202ա շուրջ պաշարեն զամենեսին ի դղորդելն երկրի // և ի բանալն երկնից: Եւ կերպարանափոխ<sup>3</sup> լինել արարածոցս<sup>4</sup>, և ի ձայնիցն, որ աղաղակեն ո՛չ<sup>5</sup> միայն երկնաւորացն, որ փողով մեծաւ ժողովեն, այլև յերկրաւորացս<sup>6</sup> աստի, որ հառաչեն.

Մի՛ իջցէ առնուլ զայն (ժԷ 31):

Ի մարմնաւորաց:

Եւ որ յանդի իցէ, մի՛<sup>7</sup> դարձցի յետս առնուլ զհանդերձս<sup>8</sup> (ժԷ 31):

Ոկ. Ձի որք ի ներքս ի քաղաքին իցեն՝ փախիցեն, որչա՞փ ևս առաւել, որ արտաքոյն իցեն: Ո՛չ է պատշաճ անդրէն ապաստան լինել:

ՍՏ Որ թողեալն է զհանդերձս իւր զմարմնական ցանկութիւնս, մի՛ դարձցի յետս ի նոյն<sup>9</sup> վաւաշոտութիւն<sup>10</sup>:

Յիշեցէք զկինն Ղովտայ (ժԷ 32):

ԻԳ Որ դարձաւ յետս և անց զպատուիրանաւն: Եւ զի մի՛ զնոյն արտացեալ զառաջինսն և զվեջինսն տուժեսցին: Առ հաւատացեալսն ասէ վասն<sup>11</sup> վաղվաղակի<sup>12</sup> փոփոխման մեր, և<sup>13</sup> անպիտան լինել գոյիցն, զոր տաժանաբար<sup>14</sup> հաւաքեցաք:

1 B որպէս  
2 B Ձի չիք  
3 B կերպարանափոխ  
4 B արարածոց  
5 B մի  
6 B յերկրաւորաց  
7 B նոյնպէս մի  
8 B առնուլ զհանդերձս՝ սրբ. ձախ լս.  
9 B չիք նոյն  
10 A վաւաշոտութիւն  
11 B նաև վասն  
12 B յանկարծակի  
13 B չիք և  
14 B տալ ժանաբար

**Որ խնդրեսցէ զանձն ապրեցուցանել<sup>1</sup> (ժՏ 33):**

*Որ հրատարէ ի չարչարանաց և ի մահուանէ, որ վասն հաւատոց լինի և կարծէ ապրեցուցանէ<sup>2</sup> զանձն`*

**Կորուսցէ զանձն (ժՏ 33):**

*Յաւատեանական կորստեամբն կործանելոց են:*

**Եւ որ կորուսցէ` ապրեցուցէ զնա (ժՏ 33):**

*Իսկ որ մատնե[ս]ցէ զանձն չարչարանաց և մահու յաւատեանական կենդանութեամբն` ապրեցուցէ զնա, զի նախ` կորուսցեն վասն աւրինացն Աստուծոյ և մի` յուժարութեամբ գտցեն զանձինս, զի մի` առանց յուժարութեան կորուսցեն:*

**Յայնմ<sup>3</sup> գիշերի, թէ իցեն<sup>4</sup> (ժՏ 34):**

**202բ ԿՐ**

*«Գիշեր» ասելով` // ցուցանէ, թէ ի գիշերի լինելոց է գալուստն յետին: Զի իբրև ի գիշերի անհոգացեալք մարդիկ նմանեալ մեռելոց ի քուն մտեալ յանկողինս և իբրև մեռեալք ի գերեզմանս նիրհելով: Յայնմ ժամանակի ծագեսցէ Արեգակն արդարութեան:*

**Եթէ իցեն<sup>5</sup> երկու ի մի մահիճս, մինն` առցի և միւսն` թողցի (ժՏ 34):**

**ՍՏ**

*Զթագաւորաց և զիշխանաց և զմեծատանց յայտ առնէ, զի այնպէս յանպատրաստ<sup>6</sup>, մինչ ակն ո՛չ ունիցին և ո՛չ զմտաւ ածիցեն` հասանէ ի վերայ նոցա: Յուցանէ, թէ ո՛չ մեծատունք ամենեքին կորնչին և ո՛չ աղքատք ամենեքին ապրին: Քանզի ի մեծատանց և յաղքատաց ոմանք ամպով<sup>7</sup> վերացեալ ապրին, և ոմանք թողեալ յերկրի` տանջին գեհենիւն, մինն` ի հաւատս և ի վարս առաքինութեան:*

**Եթէ իցեն<sup>8</sup> երկու աղալ ի միասին, մինն` առցի (ժՏ 35):**

**ԿՐ**

*Եւ որպէս երկու[քն] աղան յերկանի<sup>9</sup> աշխարհիս: Եւ որ բարիք ուսուցանէ և համբերութեամբ կրէ զբեռն և զկարիս աշ-*

<sup>1</sup> B Որ խնդրեսցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա:

<sup>2</sup> B ապրեցուցանել

<sup>3</sup> A յայմն B Ասեմ ձեզ յայնմ

<sup>4</sup> B իցէ

<sup>5</sup> B թէ եղիցի

<sup>6</sup> B յանպատրաստից

<sup>7</sup> B ամպովք

<sup>8</sup> B Եւ եթէ եղիցին

<sup>9</sup> A ի յերկանի B ի յերկանս

խարհիս վարէ, որ ո՛չ ըստ մեղաց, ընկալցի յարքայութիւն Աստուծոյ: Աղքատաց է աւրինակ, որք<sup>1</sup> զպարենի աւուրն աշխատութեամբ գտանեն:

**ԵԼ միւսն՝ Թողցի** (ժՏ 35):

Նորին աղքատութեանն գործակից, որ ո՛չ բարիոք գործէ՝ տրտնջելով և նեղասրտութեամբ կրէ զաղքատութիւն[ն], որպէս<sup>2</sup> անարժան ի բաց ընկեսցի:

**ԵԼ եթէ իցեն երկու յանդի, մինն՝ առցի** (ժՏ 35):

**ՍՏ 203ա** Անդաստան՝ հոգիք մարդկան և միտք, որ ըստ Աստուծոյ հաճոյիցն գործէ զանդաստան իւր, //որպէս<sup>3</sup> Նոյ և Աբրահամ, և<sup>4</sup> ո՛չ հոգովք<sup>5</sup> մարմնականաւք վարի՝: Այնպիսին ամպովք վերասցի և ընկալցի յարքայութիւն[ն]:

**ԵԼ միւսն՝ Թողցի** (ժՏ 35):

Որ մարմնական ցանկութեամբ գործէ զանդաստան<sup>7</sup>, որպէս Կային, նա ի բաց ընկեսցի յարքայութենէն:

**Ասեն<sup>8</sup> ցնա. Յո՞՞ Տէր** (ժՏ 36):

Տարակուսեալ առ բանիցն զաւրութիւն, հարցանեն՝ զիա՞րդ Տէր:

**ԵԼ նա ասէ ցնոսա. Ուր մարմինն է, անդ<sup>9</sup> արծուիք ժողով[եսցին]** (ժՏ 37):

**ԵՎ.** Զհրեշտակացն դասուց և զմարտիրոսաց և զսրբոցն ամենեցունց գուշակեն<sup>10</sup>:

**ԿՐ** Որպէս արծուիք հզաւրագոյն<sup>11</sup> քան զայլս ի թռչնոց<sup>12</sup>, այսպէս և սուրբքն քան զայլ մարդիկ: Եւ որպէս արծուիք ընդ աւզսն<sup>13</sup> նկատեն զտեղիս, ուր կերակուր տեսանեն և անդր ախոր-

<sup>1</sup> B որ  
<sup>2</sup> B և որպէս  
<sup>3</sup> B Եւ կամ որպէս  
<sup>4</sup> B որ և  
<sup>5</sup> B հոգաւք  
<sup>6</sup> B **չիք** վարի  
<sup>7</sup> B **չիք** զանդաստան  
<sup>8</sup> B Պատասխանի ետուն և ասեն  
<sup>9</sup> B անդ և  
<sup>10</sup> B գուշակէ  
<sup>11</sup> B արծուի հզաւրագոյն է  
<sup>12</sup> B զայլ թռչունս  
<sup>13</sup> B յաւզս

ժելով հասանեն, այսպէս և՛ արդարքն: Ըստ Պաւղոսի բանին՝ «Ի վերայ ամպոց յափշտակեալք<sup>1</sup> հասանեն անդ, ուր մարմնով դատաւորն երևի» (հմմտ. Ա թես. Դ 16)՝ նստեալ յաթոռ<sup>2</sup> ի վերայ երկրի դատել զազգս մարդկան: Այն, որ մարմնով զփայտէ կախեցաւ վասն Աղամայ մեղացն, և որպէս արծի[ւ]ք<sup>3</sup> հերձանելով զաւդն<sup>4</sup> վաղվազակի հասանեն ուր և կամիցին, այսպէս<sup>5</sup> արդարք ամպովք յաշփտակեալ հասանեն ի դրախտն:

**ՍՏ** Գէշ և անկած անուանեաց զիւր մարմինն, վասնզի չարչարեցաւ և մեռաւ, որ անկաւ վասն փրկութեան մերոյ, իսկ յոյն[ն] անկած ասէ: Իսկ արծուիս<sup>6</sup>՝ զհաւատացեալս ի նա, որք թագաւորապէս և արժանաբար կերակրին ի նմանէ: Ո՛չ ազոաւս և ո՛չ ան  
 203բ գեղս<sup>7</sup> և ո՛չ այլ ինչ մեռելակեր հաւ<sup>8</sup>, // այլ՝ արծուի<sup>9</sup>: Վասնզի հաւս այս զպատրաստորս և զմեռեալ մարմին ո՛չ համարի արժան ուտել, բայց զոր ինքն վաստակի և ջանայ և զկենդանիսն որսացեալ կերակրի:

<sup>1</sup> Բ յափշտակեալ

<sup>2</sup> Բ ի յաթոռ

<sup>3</sup> Բ արծուիք

<sup>4</sup> Բ զաւդս

<sup>5</sup> Բ այսպէս և

<sup>6</sup> Բ արծուի

<sup>7</sup> Բ ազոաւ և անգեղս

<sup>8</sup> Բ մեռելակիր հաւս

<sup>9</sup> Բ արծուիս

## Քլուիս ԺԸ

**Դատաւոր մի էր<sup>1</sup> (ԺԸ 2):**

**Կր.** *Զիշխանական միտսն ասէ, որ ի մէջ մարմնոյն և ոգոյն<sup>2</sup> որպէս կամի ներգործէ, երբեմն ի բարիսն միտելով, որ են հոգեկան առաքինութիւնք, և է, զի զմարմնական վատթար ախտն:*

**ԻՊ.** *Արդ՝ միտքն է<sup>3</sup> դատաւոր, և ընտրէ որպէս և կամի: Եւ կրէ և յշտեմարանի պահէ: Եւ զոր ո՛չ ախորժէ, ի բաց դառնայ և արտաքոյ փակեալ պահէ, կամ թէ մտեալ և արտաքս հանէ: Եւ այսպէս ոմանք բարիք և ոմանք չարք լինին: Բայց աստ վասն չար մարդոյ է առակս:*

**Ստ.** *Անիրաւի և չարի:*

**Ի քաղաքի (ԺԸ 2):**

**Կր.** *Աշխարհս ընդարձակ*

**ԻՊ.** *կամ զբնակութիւն մարդկան ասէ, որ մտանեն և շրջին: Եւ բնակի[ն] ի սմա չարք և բարիք: Եւ զգայութեանս<sup>4</sup> դրունք են, որ ընդունին զմտեալսն:*

**ՅԱստուծոյ ո՛չ երկնչէր և ի մարդկանէ ո՛չ ամաչէր (ԺԸ 2):**

**ԻՊ.** *Այսպիսի են միտքն վասն նրբութեան և ծածուկ գոլոյն: Աստուծոյ երկի[ւ]ղն<sup>5</sup> արհամարհեալ է ի նմանէ: Եւ իրաւագէտ[ն] վկայէ, որ քննէ զամենայն ապիրատութիւն և ո՛չ թաքչի ինչ ի նմանէ գործք աղտեղիք, թէ մտածութիւն անաւրէն էառ<sup>6</sup>, զի գարշ խորհրդով շաղի ի զազրալիս: Սակայն, զի մարդիկ ո՛չ տեսանեն, և նա ո՛չ ամաչէ՝ զարատաւոր կիրս և վնասակար<sup>7</sup> ցանկութիւնս հանապազ յինքն ձգելով: Եւ խստացեալ է ընդդէմ սպառնալեացն Աստուծոյ, և զամաւթ մարդկան չգրէ ինչ:*

**204ա ՍՏ** // *Քանզի յԱստուծոյ ո՛չ երկեալ և ետ խաչել զՈրդի նորա, և սպան զմարգարէս նորա և զառաքեալս: Եւ մինչև ցայժմ հալածանս ի վերայ քրիստոնէից յարուցանէ ըստ ներելոյն Աստուծոյ,*

<sup>1</sup> B Ասաց և առակ մի նոցա առ այն, թէ՛ Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղաւթս և մի՛ ձանձրանալ: Ասէ. Դատաւոր մի էր (ԺԸ 1-2):

<sup>2</sup> B հոգւոյն

<sup>3</sup> A են

<sup>4</sup> B զգայութիւնքս

<sup>5</sup> B երկեղն

<sup>6</sup> B սրբ.՝ իցէ առ նա

<sup>7</sup> B զվնասակար

դատաւոր ամբարտաւան և ամբարհաւաճ<sup>1</sup>: Ի մարդկանէ ո՛չ ամա-  
չէ՝ արհամարհելով զազգս մարդկան:

Եփ. Անիրաւութիւն<sup>2</sup> նորա խիստ էր, զի համարձակեցաւ և էանց<sup>3</sup>  
զերկի[ւ]ղիւն Աստուծոյ: Եւ ժպրհութիւն նորա արհամարհեաց  
զամալթ մարդկան:

Եւ այրի մի էր ի նմին քաղաքի (ԺԸ 3):

Կիղ. Հոգի մարդկան՝ անկեալ ի ճոխութենէ և ի փառաց զբախտին,  
և զրկեալ ի բարեաց:

Իգ. Զի կարի մեծ տագնապ է հոգոյն<sup>4</sup> դատարկանալ յառաքինու-  
թենէ: Թէպէտ<sup>5</sup> փիշելոցն մեղաւք ո՛չ երևի, սակայն հոգին կրէ  
զապականութիւն՝ մարմնական ախտիւք լցեալ<sup>6</sup>:

ՍՏ Հոգի մարդոյ այրի եղեալ է<sup>7</sup> ի Քրիստոսէ, որ է փեսայ եկեղե-  
ցական հոգոյ:

Պայր առ նա և ասէր (ԺԸ 3):

Բողոքէր հոգոյն առ միտսն, յորժամ զղջացեալ խոցոտէ  
զմիտս մեր յիշատակաւ պիղծ<sup>8</sup> գործոցն<sup>9</sup>, որով զժամանակն<sup>10</sup> ծա-  
խեցաք, և զղջացեալ յապաշաւանս դառնամք: Եւ երբեմն առանց  
ջանից արտասուեմք, և յաստեացս յատելութիւն փոխիմք, և զար-  
ձակեալն<sup>11</sup> խնդրեմք: Այս ամենայնի թախանձել<sup>12</sup> հոգոյն է<sup>13</sup>:

ՍՏ Ա[յ]րոյն թողեալ զՔրիստոս՝ ապաւինի ի դատաւորն անի-  
րաւ<sup>14</sup>, լլկեալ ի մեղացն անյագութեանց<sup>15</sup>:

Դատ արայ ինձ (ԺԸ 3):

204բ Իգ. Բարժանել<sup>16</sup> չափով կարեաց մարմնոյն բնութեան տալ //  
զհարկաւորն, որ ի հաստատութեան պահէ զնա և ո՛չ անչափն

<sup>1</sup> A ամպարտաւան և ամպարհաւաճ

<sup>2</sup> B Արդ՝ անիրաւութիւն

<sup>3</sup> B սրբ.՝ խոտել փխ և էանց

<sup>4</sup> B ոգոյն

<sup>5</sup> B Զի թէպէտ

<sup>6</sup> B լցեալք

<sup>7</sup> B չէք է

<sup>8</sup> B պիղծ

<sup>9</sup> B խորհրդոցն փխ գործոցն

<sup>10</sup> B զժամանակսն

<sup>11</sup> B զարևատել

<sup>12</sup> B թախանձելոյ

<sup>13</sup> B կայ

<sup>14</sup> B անիրաւութեան

<sup>15</sup> A անյագութեանց

<sup>16</sup> B բարժանել



Հեղուկ ցանկութեամբ: Ըստ նմին և հոգոյն մասն պատշաճ առաքինութեան<sup>1</sup>, որով պահի ի կենդանութեան, և մի՛ կրեսցէ զմեղացն<sup>2</sup> մահն:

**Յոսոխէ իմմէ** (ԺԸ 3):

Սատանայ, որ զմարմինն<sup>3</sup> միշտ զէն կազմէ զգայարանացն ցանկութեամբ ընդդէմ հոգոյն:

**ՍՏ** Մարթի ի չարսն և յանիրաւսն: Ումեմն իշխել և ումեմն իշխիլ, որպէս Բեղզեբեղ<sup>4</sup> իշխան դիւաց ասացաւ: Արդ՝ այրոյն<sup>5</sup> իրաւունս խնդրէ՝ թաւթափեալ<sup>6</sup> ի դառնութենէ<sup>7</sup> ոսոխին, կամ դեւ էր, որ լլկէր, կամ մարդ<sup>8</sup>՝ հնազանդեալ սատանայի:

**Եւ ո՛չ կամէր ի բազում ժամանակս** (ԺԸ 4):

Զմտացն վատթարագոյն յուժարութիւն[ն] ցուցանէ:

**ԿՐ.** Որ մեղաւքն կապեալ էր և ո՛չ տայր թոյլ մերկանալ զչարն և ազատել զանձնն ի պատժոց: Այլ կայ<sup>9</sup> ի ժամանակն, և առժամայն ընտրէ զախորժակս մարմնոյն տալ. յառաջակայ ժամանակն ընկենուլ զբարեգործելն: Եւ այս սնոտի յուսովս խաբէ զինքն, յայնկարծակի լուծանի ի կենաց աստի: Անպատրաստ, դատարկ ի բարի գործոց մտանէ ի մշտնջենաւոր կապանքն<sup>10</sup>:

**Ասէ ի միտս իւր. Թէև<sup>11</sup> յԱստուծոյ ո՛չ երկնչիմ և ի մարդկանէ ո՛չ ամաչեմ** (ԺԸ 4):

**ԻԳ** Այսինքն՝ թէ չգոյր յԱստուծոյ կարգեալ տանջանք ամպարչտաց<sup>12</sup> դատաստանաւն առնուլ վրէժս և ի մարդկանէ ամաւթ:

**Գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրոյն՝ արարից նմա դատ** (ԺԸ 5):

**205ա** //Մտացն խղճի[ւ] լաւագոյն է դառնալ<sup>13</sup> յարդարութիւն և ազատիլ ի տրտմական կրից:

<sup>1</sup> B առաքինութիւն  
<sup>2</sup> B զմեղաց  
<sup>3</sup> B զմարմինս  
<sup>4</sup> B Բէեղզեբեղ  
<sup>5</sup> B Եւ արդ այրոյն թողեալ զՔրիստոս ապաւինի ի դատաւորն անիրաւութեան և  
<sup>6</sup> B թաւթափել  
<sup>7</sup> B բռնութենէ  
<sup>8</sup> B և կամ մարմին  
<sup>9</sup> A նախ՝ կայ, ապա սրբ.՝ հայի ի  
<sup>10</sup> B տանջանքն  
<sup>11</sup> B Յետ այնորիկ ասէ ի մտի իւրում, եթէ և  
<sup>12</sup> B ամբարչտաց  
<sup>13</sup> B սրբ. է աջ լս.

**ԿՐ** Վասնզի<sup>1</sup> ստէպ յիշելով զերկի[ւ]ղն Աստուծոյ սրտջացեալ մտացն՝ խորհրդածէ ի հոգևորսն:

ստ. Խրատէ<sup>2</sup> առակս, թէ պարտ է անձանձրոյթ աղաչել զԱստուծո:

**Զի մի՛ ի սպառ եկեալ թախանձիցէ զիս** (ԺԸ 5):

**ԻԳ** Արդ՝ այս յայտնի է ոմանց, որք ի խղճէմտացն կրեն տագնապ<sup>3</sup> առ ի չժուժել նեղասրտութեանն, զոր յիշատակաւ մեղացն կրեն: Եւ են, որ հատանեն զյոյս ասպաշխարութեան<sup>4</sup>՝ ո՛չ արդարանալ նովաւ<sup>5</sup> և ո՛չ տանելով խղճի մտացն, ի խեղդ մտաբերեցին: Զդժուարակիր<sup>6</sup> է հոգոյն թախանձն, որ զմիտսն տանջէ յիշատակ մեղացն: Եւ գիտելով ի լաւագոյնսն փոխել՝ ազատի ի վշտացն կրից:

Լու արարուք<sup>7</sup> զի՞նչ դատաւորն անիրաւութեան արար<sup>8</sup> (ԺԸ 6):

**ԿՐ** Այսինքն՝ զդարձումն մտացն, որ ի ստէպ յիշատակացն լինի: Զի աղաւթքն և հանապազ յիշատակ երկի[ւ]ղին Աստուծոյ դարձուցանեն զանիրաւ միտսն: Յաղագս<sup>9</sup> զեզերելոյն և թախանձելոյն արար նմա դատաստան]:

**ԵՓ** Առաւել խիստ էր ժտութիւն ա[յ]րոյն, որ խոնարհեցոյց զերկոսեանն, և զկնի իւր կամացն էած զայս, յետոյ<sup>10</sup> դառն անիրաւ և ոսոխ փոխեաց ժտութիւն: Եւ ետ պտուղ քաղցր, որ աւտար էր նոցա: Արդ՝ արար նոցա դատաստանս ուղիղ[ս] և հատուցումն արար կնոջ այրոյն:

205բ **ԻԳ** է<sup>11</sup>, զի և զանմարդի և զվայր(//)ենամիտ դատաւորն հաւանեցուցին մաղթանքն<sup>12</sup> բազում գալ յիրաւունս:

**Իսկ Աստուծո՛ւն առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի** (ԺԸ 7):

<sup>1</sup> Ե Այլ վասնզի

<sup>2</sup> Ե Նախ և խրատէ

<sup>3</sup> Ե գտագնապն

<sup>4</sup> Ե ասպաշխարութեամբ

<sup>5</sup> Ե չիք նովաւ

<sup>6</sup> Ե դժվարակիր Ե զի դժուարակիր

<sup>7</sup> Ե Եւ ասէ Տէր. Լուարուք

<sup>8</sup> Ե ասէր

<sup>9</sup> Ե Արդ՝ յաղագս

<sup>10</sup> Ե երկու ոսոխ *փիս* յետոյ

<sup>11</sup> Ե Եւ է

<sup>12</sup> Ե մաղթանքն

Եւ որք դառնան, Աստուած առնէ վրէժխնդրութիւն հոգեկանաց, այսինքն է՝ ձեռնատու լինի յառաքինասէր գործս<sup>1</sup> առ ի ժուժկալութիւն, յորժամ աղաղակեն առ նա ստէպ աղաւթիւք և պաղատանաւք:

**Եփ.** Իսկ արդարութիւն Աստուծոյ պահանջել զիտէ, և ողորմութիւն Աստուծոյ<sup>2</sup> կեցուցանել ճանաչէ: Թէպէտև անաւրէնութիւն նորա հակառակ էր արդարութեան նորա և չարութիւն նորա ընդդէմ էր ողորմութեան և քաղցրութեան նորա, որչա՞փ ևս<sup>3</sup> առաւել կարեմք մեք ժտութեամբ բռնադատել զողորմութիւն և զարդարութիւն Աստուծոյ: Զի տացէ նմա զպտուղ բնութեան իւրեանց<sup>4</sup>, այսինքն՝ արդարութիւն նորա զվրէժս մեր խնդրէ ի սատանայէ և ողորմութիւն նորա հանգուցէ զմեզ:

**ՍՏ** Քրիստոս՝ արդարութեան արեգակն և դատաւոր[ն], լուիցէ աղաչանաց և խնդրուածոց<sup>5</sup> այնոցիկ, որ հանապազ աղաչեն և պաղատեն զնա:

**Իգ.** Քանի առնէ<sup>6</sup> արդարադատ բնութեանն, որ յամենայնի<sup>7</sup> պատրաստէ խնդրողացն, միայն թէ զարժանն խնդրեսցեն<sup>8</sup>, որ մեզ աւգտակար է և նմա պատշաճ: Վասնզի սկիզբն զայն եղ, թէ՛ «Պարտ է յաղալթս կալ և ո՛չ ձանձրանալ» (ԺԸ 1): Եւ տալոյն  
**206ա** երաշխաւոր լինի և անիրաւ դատ(//)աւորաւն զամէնարդարն Աստուած հաւատարիմ առնէ: Զի թէ ժամանակաւ երկայնամիտ լինի՝ [ի] տալոյն կարի անմիտ<sup>9</sup> լինել ո՛չ է արժան<sup>10</sup>:

**Այո**<sup>11</sup> ասեմ ձեզ, առնէ<sup>12</sup> վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի (ԺԸ 8):

**Իգ.** Վասն այնորիկ<sup>13</sup> ասէ զայս, զի որք չարքն իցեն՝ մի՛ արհամարհիցեն զերկայնատուութիւն Աստուծոյ, այլ երկիր[ւ]ղիւ վրէժխնդրութեանն չարչարեսցին: Եւ, որ նեղեալքն են, յուսովն մխիթարեսցին, զի ի դատաստանի կացեալ Աստուծոյ՝ դատի ար-

<sup>1</sup> B վարս *փխ* գործս

<sup>2</sup> B նորա

<sup>3</sup> B *չեք* ևս

<sup>4</sup> B սրբ.՝ իւրոյ

<sup>5</sup> B խնդրուածաց

<sup>6</sup> B աւն է

<sup>7</sup> B բնութիւն նորա ամենայնի

<sup>8</sup> B խնդրեսցուք

<sup>9</sup> B կարճամիտ *փխ* կարի անմիտ

<sup>10</sup> B արժան

<sup>11</sup> B Եւ երկայնամիտ միայն լինիցի առ նոսա: Այո՞ (ԺԸ 7-8)

<sup>12</sup> B զի արասցէ *փխ* առնէ

<sup>13</sup> B արդ *փխ* վասն այնորիկ

դարձվածք: Թէպէտե՛<sup>1</sup> մասնաւոր աստ ցուցանէ, երբեք երբեք առ արդարս կամ մեղաւորս,  
 Կի. սակայն ամենայն<sup>2</sup> իրաւունք նորա ի հանդերձեալ ատեանն ժամանեալ մնայ:

Իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ արդեք<sup>3</sup> հաւատս յերկրի (ԺԸ 8):

Կր. Հաւատս աստ ո՛չ գիտատովանութիւն Սուրբ Երրորդութեանն ասէ, այլ զսերտ և զաներկբայ հաւատոցն, որովք կարողք<sup>4</sup> և մարտիրոսքն զարիւնս<sup>5</sup> իւրեանց հեղին վասն Տեառն:

ԻԳ Ձի յայտնի լիցի, թէ ամենայն գործք բարիք սպառին յերկրէ, և միայն աստուածգիտութիւն[ն] մնացեալ լինի առ ոմանս: Քանզի զայս արդեք յայտ առնէ, վասնզի Նեոն, եկեալ յանբարի յաւուրան [յ]այնոսիկ և զաւրացեալ լինի իշխանութեամբ ընդ կրաւնից աստուածպաշտութեանն, տայ պատերազմ բառնալ զնա:

Ասաց առ<sup>6</sup> ոմանս պանծացեալս<sup>7</sup>, թէ արդարք իցեն և խոտեսցեն<sup>8</sup> զբազումս, զառակս զայս (ԺԸ 9):

206բ ԻԳ // Չար է ամբարհաւաճութիւն և, որ ի նոյն յարին, ախտ հոգոյն<sup>9</sup>, վասնզի կրկին գործեն ի մեզ զվնաս[ն]: Մի՛, զի զբարիսն, որ ի մեզ է, հոսեն իսկ, և վատթարագունիցն իմանալ ո՛չ տան զմեզ<sup>10</sup>, և մարմնոյ հանգիստ ո՛չ շնորհեն, որպէս յայլ տեսակս ախտիցն, քանզի մարմնական ախտք առ հեղգագոյնսն բնաւորեցան բոլսանել: Իսկ ամբարտաւանութիւն և ամբարհաւաճութիւն<sup>11</sup> և սնափառութիւն անփոյթս<sup>12</sup> յառաքինութեան վարս առ նոսա<sup>13</sup> զաւրանայ: Եւ մեծ տոյժք են ոգոցն, որ տաժանաբար տանին տքնութեան<sup>14</sup> և պահոց պնդութեան<sup>15</sup>, և մաքրութեամբ բա-

<sup>1</sup> Ե Զի թէպէտե

<sup>2</sup> Ե չիք ամենայն

<sup>3</sup> Ե չիք արդեք

<sup>4</sup> Ե կատարողք եղեն

<sup>5</sup> Ե սրբ.՝ և զարիւնս

<sup>6</sup> Ե և առ

<sup>7</sup> Ե պանծացեալս յանձինս

<sup>8</sup> Ե խոտիցեն

<sup>9</sup> Ե ախտք հոգւոց

<sup>10</sup> Ե մեզ

<sup>11</sup> Ե ամպարտաւանութիւն և ամպարհաւաճութիւն

<sup>12</sup> Ե առփոյթս

<sup>13</sup> Ե չիք առ նոսա

<sup>14</sup> Ե տաժանաւոր տքնութեամբ փիւ տաժանաբար... տքնութեանն

<sup>15</sup> Ե պնդութեամբ

րեպաշտին ընդ պոռնիկսն, և ընդ փափկացեալսն<sup>1</sup> վրիպեալ գտանին ի հաւաստի ընտրութեանն:

**Արք երկու ելին ի տաճարն կալ յաղաւթս (ԺԸ 10):**

Քանզի աւրինացն սահմանէր հատուցանել զոհս Աստուծոյ, և զգուշութիւն<sup>2</sup> նուիրաց առաքինութեան: Տեղի էր նոցա իւրաքանչիւր ումեք կալ յաղաւթս ի տաճարին: Յաղագս այնորիկ անդ ելանեն:

**Մինն՝ փարիսացի<sup>3</sup> և միւսն՝ մաքսաւոր (ԺԸ 10):**

Մինն՝ ի կարի<sup>4</sup> լաւագունիցն առ նոսա, և միւսն՝ ի չարացն, յորմէ և նոքա գարչէին: Եւ բամբասէին զՅիսուս վասն առ նոսա մտանելոյն<sup>5</sup>: Եւ<sup>6</sup> Տէրն զմնացեալն ի չարիս հեթանոսաց և մաքսաւորաց նմանեցուցանէ: Արդ՝ զսոսա<sup>7</sup> առ միմեանս եղեալ Տէրն՝ զմինն վասն ամբարտաւանութեանն<sup>8</sup> ընդ չարսն պատժէ և զմիւսն վասն խոնարհութեան արդար վկայէ:

207ա կր. Թէպէտե<sup>9</sup> առ հրէայսն ասաց զառակսն, //սակայն զամենեսին խրատէ ո՛չ հպարտութեամբ կալ յաղաւթս որպէս փարիսեցին:

**Փարիսեցին կայր մեկուսի և զայս<sup>10</sup> աղաւթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքէն (ԺԸ 11):**

Իգ. Ահա գոհութիւն չար քան զտրտունջ: Ըստ այնմ, զոր չար հովիւքն գործէին և ասէին. «Աւրհնեալ է<sup>11</sup> Տէր և մեծացաք<sup>12</sup>» (Ձաք. ԺԱ 5): Ըստ նմին և սա յաղաւթելն վրիպի և ի բարեպաշտելն գայթազդի: Ախտիւ ամբարտաւանութեանն<sup>13</sup> յիմարեալ՝ առաջի նորա մեծաբանէր, զի<sup>14</sup> որ յառաջ քան զգործելն զամենեցուն վարս<sup>15</sup> անվրէպ գիտէ: Ո՛չ ներեաց Աստուծոյ ճանաչելոյն<sup>16</sup>, որ ստեղծ

<sup>1</sup> B իսկ պոռնիկքն և փափկացեալքն  
<sup>2</sup> B զգուշութեան  
<sup>3</sup> B փարիսեցի  
<sup>4</sup> B գրփի կարի ի  
<sup>5</sup> B մտանելոցն  
<sup>6</sup> B նաև  
<sup>7</sup> B զնոսա  
<sup>8</sup> A ամպարտաւանութեանն  
<sup>9</sup> B գի թէպէտե  
<sup>10</sup> B զայս առանձինն  
<sup>11</sup> B չիք է  
<sup>12</sup> B մեծացաք յոյժ  
<sup>13</sup> A ամպարտաւանութեանն B ամբարտաւանութեամբ  
<sup>14</sup> B քերած-ընջած  
<sup>15</sup> B վէրս  
<sup>16</sup> B ճանաչողին

զսիրտս, և ի միտ առնու զամենայն գործս նոցա: Ո՛վ զոհոթիւն չար:

Ո՛չ<sup>1</sup> եմ իբրև զայլս ի մարդկանէ զափշտակողս<sup>2</sup> և զանիրաւս և զշուռնս (ԺԸ 11):

Որ մեծ յանդգնութեամբ յայսպիսի միտս եկեալ, զամենեսին չարս համարելով և զանձն միայն արդար, արդ՝ զի՞նչ [չ]ահ, զի այլք նախատեսցին նորա լաւութեամբն: Ո՞չ [ապա]քէն<sup>3</sup> հատուցանողն ո՛չ սխալէ: Տէր ճանաչէ զարդարն և զամբարիշտն<sup>4</sup>, զի<sup>5</sup> ամբարտաւանք<sup>6</sup> ի մտաց ևս անկանին: Արդ՝ ո՛չ էր սա ի<sup>7</sup> խոնարհ, յորում հանգչի<sup>8</sup> Աստուած, այլ ունելով զմայրն անմտութեան՝ մոլորեալ ի դիւաց:

սողմ. Ո՛չ<sup>9</sup> կարէր արգելուլ, զոր երկներ սրտիւ, զի<sup>10</sup> որ զանձն գովէ՝ լի՛ է պարսաւանաւք. «Գովեսցէ զքեզ ընկերն և մի՛ քո բերանդ<sup>11</sup>» (Առակ ԻԷ 2): Զի<sup>12</sup> մարդ էր ախտացեալ<sup>13</sup> բնութեամբ, և ո՛չ իմանայր:

207բ Որպէս<sup>14</sup> Յոբ // յանդիմանէ. «Ո՞վ է առանց մեղաց, թէ մի աւր<sup>15</sup> իցէ կեանք նորա ի վերայ երկրի<sup>16</sup>» (Յոբ ԺԴ 4): Եւ երկինք չեն անպարտ առաջի նորա, թող թէ մարդ, որ ըմպէ զանաւրէնութիւն: Ըստ այնմ՝ «Անաւրէնութիւն յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ<sup>17</sup>» (Սաղմ. Ծ 7): Եւ ո՞վ ոք վստահացաւ յարդարոցն յարդարութիւն պարծել առաջի ամենատես բնութեանն<sup>18</sup>:

Եփ. Իսկ փարիսացին ստոյգ ասաց յաղաւթսն, բայց պարծանաւք խաւսեցաւ, խոտեցաւ:

<sup>1</sup> B Զի ոչ

<sup>2</sup> A յապշտակող B սրբ.՝ զյափշտակողս

<sup>3</sup> բառը վնասված է

<sup>4</sup> A, B զամբարիշտն

<sup>5</sup> B վանդի

<sup>6</sup> A ամպարտաւանք

<sup>7</sup> B չէք ի

<sup>8</sup> A հանկչի

<sup>9</sup> B եւ ոչ

<sup>10</sup> B նա զի

<sup>11</sup> B բերան

<sup>12</sup> B եւ զի

<sup>13</sup> B ախտացեալք

<sup>14</sup> B Այլ որպէս

<sup>15</sup> B աւրեայ

<sup>16</sup> B յերկրի *փխ* ի վերայ երկրի

<sup>17</sup> B Յղացաւ զցաւս, և ծնաւ զիս մայր իմ (Սաղմ. է 15, Ծ 7):

<sup>18</sup> B բնութեանն: Սակայն, զի թէ յերկնիցն բարբառ լինի մի ոք, հաւատացէ մինչև յաւրն, յորում քննէ Աստուած զգաղտնիս մարդկան: Եւ ապա իւրաքանչիւր գովութիւնն եղիցի ի Տեառնէ:

**Կամ իբրև զմաքսաւորս զայս (ԺԸ 11):**

*Մեծ ամբաստանութիւն ոգոցն չարութեան, յորժամ Հասարակաբարձեն<sup>1</sup> զմիտս ամբարտաւանս<sup>2</sup>: Բայց այն կարի ևս չարագոյն է, յորժամ յայն<sup>3</sup> մինն, որ մերձն կայր<sup>4</sup>, կրթէ զբանն և առ ոտն Հարկանէ, զոր և սա անչափ ախտացաւ և էանց ընդ ամենեւին: Եւ ո՛չ անխայեաց զայն, որ կայր առաջի Աստուծոյ և ժտէր գտանել թողութիւն: Այլ անփակ բերանով և ի նա յարձակեաց բանս ամբարտաւանութեան<sup>5</sup>:*

**Սկ.** *Ձի թէ յերկնից բարբառ լինի, մի՛ ոք հաւատասցէ մինչև յաւրն, յորում քննէ Աստուած զգաղտնիս մարդկան, և ապա՝ իւրաքանչիւր գովութիւն եղիցի ի Տեառնէ<sup>6</sup>:*

**Այլ պահեմ երկիցս ի շաբաթու և տամ տասանորդս ի ստացուածոց<sup>7</sup> (ԺԸ 12):**

*Տեսանե՞ս, զի զստացուածս իւր ասաց ստուգաբար և<sup>8</sup> ո՛չ յԱստուծոյ շնորհեալ: Այ[սո]ւ<sup>9</sup> ամենայն ուստեք զհպարտութիւն*

**Իգ.** *յանձն իւր ձգէր: Ո՞վ յիմարութիւն, ո՞ւմ առաջի պարծիս՝ արբեալ ամբարհաւածութեամբ<sup>10</sup>: Վասն որոյ Տէրն աստի զգուշացոյց. «Յորժամ զամենայն առնիցէք<sup>11</sup>, աս (//)ասջիք՝ ծառայք անպիտանք եմք, զոր պարտն էր առնել՝ արարա՛ք» (ԺԷ 10): Պարտական եմք առնելոյն և ո՛չ պարծելոյն:*

**Եւ մաքսաւորն կայր մեկուսի և<sup>12</sup> ո՛չ զաչս յերկինս ամբառնայր<sup>13</sup> (ԺԸ 13):**

**Կր.** *Տե՛ս, որպէ՞ս զհակառակն դնէ՝ զխոնարհութիւն ընդդէմ ամբարտաւանութեանն<sup>14</sup>: Նա զանձն գովէ. «Ո՛չ եմ իբրև զայլս», և սա ո՛չ զաչս յերկինս համբառնայր՝ անարժան համարելով զանձն:*

<sup>1</sup> B Հասարակաբար ձգեն  
<sup>2</sup> A ամպարտաւանս  
<sup>3</sup> B **չիք** յայն  
<sup>4</sup> B կայ  
<sup>5</sup> A ամպարտաւանութեան  
<sup>6</sup> B **չիք** Ձի թէ յերկնից բարբառ... Տեառնէ  
<sup>7</sup> B յամենայն ստացուածոց իմոց  
<sup>8</sup> B այլ  
<sup>9</sup> B և **փի** այսու  
<sup>10</sup> A ամպարհաւածութեամբ  
<sup>11</sup> B առնիջիք  
<sup>12</sup> B և ոչ կամէր և  
<sup>13</sup> B ընդ երկինս ամբառնալ  
<sup>14</sup> A ամպարտաւանութեանն

**ԻԳ** Այս<sup>1</sup> եղև պատճառ կործանման փարիսեցոյն: Եւ<sup>2</sup> Տէրն, որ կամեցաւ կանգնել զբնութիւնս<sup>3</sup> մերոյ սխալանս, խոնարհութեամբ եմուտ ի բնութիւնս, զի զվէրս հպարտութեան բժշկեսցէ: Եւ զսոյն եցոյց մեզ ճանապարհ բարձրութեան: Փարիսեցին՝ զպատճառս անկմանն մեր գտաւ և անկաւ, իսկ մաքսաւորն՝ զզեղ<sup>4</sup> փրկութեան մերոյ, որ յԱստուծոյ շնորհեցաւ, գտեալ կանգնեցաւ: Որ նմանեցաւ դարձին Մանասէի, որ ասէր. «Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից» (հմմտ. Ես. ԼԸ 14):

Եւ սա ո՛չ կամէր զաչս յերկինս ամբառնալ<sup>5</sup>, այլ բախէր զկուրծս<sup>6</sup> իւր<sup>7</sup> և ասէր. Աստուած, քաւեա՛ զիս զմեղաւորս (ԺԸ 13):

**ԵՓ** Արդ՝ մաքսաւորն, որ զմեղսն խոնարհութեամբ ասէր, հաճոյ եղև: Զի զմեղսն խոստովանել ծանր է քան զարդարութիւն[ն]: Աստուած ընդ այն հայի, որ բարձեալ ունի զծանրութիւն:

**ԿՐ** Յիրաւի ընկալաւ զայսպիսի խոնարհութեան աղաւթս, զի կատարեալ էր զղջմամբն:

Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա (ԺԸ 14):

**208բ ԵՓ** // «Որ քննէ զսիրտս» (Սաղմ. Է 10), արդարացոյց զսա միովս, որ խոնարհեցաւ՝ զմաքսաւորն<sup>8</sup>: Զի թէ մեղաւոր էր փարիսեցին, մեղս ի վերայ մեղաց յաւելոյր: Զի յաղաւթս եկաց և եղև<sup>9</sup> բարկութիւն վասն<sup>10</sup> ամբարտաւանութեանն<sup>11</sup>:

**ԻԳ** Արդ՝ սա զմեղսն խոստովանելով առաջի Աստուծոյ՝ կորոյս զնա, և նա՝ զարդարութիւն: Վասն այնորիկ թափուր գտաւ ի բարեաց: Սա ի ծովէ<sup>12</sup> մեղաց ալեկոծեալ՝ զնաւահանգիստն<sup>13</sup> խնդրեաց զպետն<sup>14</sup> նաւարկելոց և ի յարուցեալ մրրկէն ապրեցաւ, իսկ նա մերձ ի նաւահանգիստն ընկղմեցաւ, զի ո՛չ խնդրեաց զնաւապետն աւգնական, այլ զանձինն ճարտարութիւն:

<sup>1</sup> B Արդ՝ այս

<sup>2</sup> B նաև

<sup>3</sup> B զբնութեանս

<sup>4</sup> B դեղ

<sup>5</sup> B համբառնալ

<sup>6</sup> B զկուրծսն

<sup>7</sup> B *չէք* իւր

<sup>8</sup> B զմաքսաւորն միով առաքինութեամբ խոնարհութեանն *փխ* զսա... զմաքսաւորն

<sup>9</sup> B եհեղ

<sup>10</sup> B ի վերայ ինքեան վասն

<sup>11</sup> A ամպարտաւանութեանն

<sup>12</sup> B ծովու

<sup>13</sup> B ի նաւահանգիստի անդ

<sup>14</sup> B զնաւապետն



**Զի ամենայն որ խոնարհեցուցանէ<sup>1</sup> զանձն՝ բարձրասցի<sup>2</sup>, և որ բարձրացուցանէ<sup>3</sup> զանձն՝ խոնարհեցի<sup>4</sup> (ԺԸ 14):**

*Քանզի մարդ ո՛չ է իւր բաւական, այլ ձեռն Աստուծոյ, որ բարձրացուցանէ զխոնարհս: Զի որք ի նա ապաստան առնեն զանձինս և ի չափու ունին, Տէրն<sup>5</sup> ստուգութեան ի բարձր հանէ զնոսա և ի պատիւ փոխանակ խոնարհութեան նոցա: Իսկ որք<sup>6</sup> փառասիրութեամբ զանձինս յառաջ մատուցանեն ի փառս և ո՛չ վստահացան յԱստուծոյ առնուլ, որ բաշխէ զփառս<sup>7</sup>, վասն այնորիկ նա յինքն ամփոփէ զիւրան և այնպէս յանդիմանէ զմեր տկարութիւնս՝ մերկացեալ յաստուածային փառացն:*

**Մատուցանէին առ նա մանկտի, զի մերձեցի<sup>8</sup> ի նոսա (ԺԸ 15):**

**209ա ԻԳ** *Աձեալ լինէին ի ծնաւդացն<sup>9</sup> մանկունքն, զի աւրհնեցին: Քանզի ծանեան, եթէ ձեռն, որ //բառնայ զցաւս, նա հաստատէ զմանկունս՝ անվնաս պահելով ի խաղաղութիւն<sup>10</sup>:*

**Աշակերտքն<sup>11</sup> սաստէին նոցա (ԺԸ 15):**

**ՈԿ** *Պատիւ առնէին վարդապետին: Ուսուցանէ խոնարհել նոցա և զհպարտութիւն առ ոտն կոխել:*

**Ասէ Յիսուս. Թոյլ տուք մանկտոյդ գալ առ իս (ԺԸ 16):**

*Առնու և ի գիրկս ունի, և այնպիսեացն զարքայութիւն խոստանայ:*

**ԻԳ** *Աւրինակ բարեաց ամենեցուն անդի<sup>12</sup> ետ, զի զեկամուտ չարիսն և զամբարտաւանութիւն<sup>13</sup> մերկացին: Եւ յառաջինն զարձցին՝ յ[ը]նտանի բնութիւն[ն] անմեղ և խոնարհ: Եւ զփառսն, զոր կորուսին, առցեն խոնարհութեամբ:*

**Զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից<sup>14</sup> (ԺԸ 16):**

<sup>1</sup> B բարձրացուցանէ  
<sup>2</sup> B խոնարհեցի  
<sup>3</sup> B խոնարհեցուցանէ  
<sup>4</sup> B իւր բարձրացի  
<sup>5</sup> B Եւ Տէրն  
<sup>6</sup> B որ  
<sup>7</sup> B և ոչ վստահացան... զփառս՝ սրբ. աջ լս.  
<sup>8</sup> B մերձենայցէ  
<sup>9</sup> A ծնողացն  
<sup>10</sup> B խաղաղութեան  
<sup>11</sup> B Իբրև տեսին աշակերտքն  
<sup>12</sup> B անտի  
<sup>13</sup> A զամբարտաւանութիւն  
<sup>14</sup> B Աստուծոյ *փխ* երկնից  
27 - Ս. Կունդ, Մեկն. Ղուկասու

Դնէ գայս<sup>1</sup>, զի մեք կամաւք լիցուք, որպէս մանկունքն բնութեամբ են:

Ոկ. Քանզի հանդերձեալ էին աշակերտքն բարձրանալ և պատուիլ<sup>2</sup> յամենայն տիեզերաց: Յառաջագոյն գրաւէ զմիտս նոցա, և ո՛չ տայ թոյլ մարդկաւրէն<sup>3</sup> ինչ իրս<sup>4</sup> ախտանալ և ո՛չ պատիւս պահանջել ի մարդկանէ:

Հարցանէ ոմն իշխան և ասէ<sup>5</sup> (ԺԸ 18):

ՍՏ Ամենեցուն<sup>6</sup>, որ մտանեն յարքայութիւն Աստուծոյ, պարտ է լինել որպէս մանուկ: ՅԱստուծոյ տուեալ յորդորումն. «Ահաւաւիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած» (Ես. Ը 18): Քանզի ամենեքին, ոյք ունին<sup>7</sup> կատարեալ միտս առ չարսն, տղայք են:

Իգ.(գր.) Ետես<sup>8</sup> մեծատունն, թէ զգրունս արքայութեանն բանայ մանկանցն և որք նման են նոցա, շարժեցաւ բարիքը նախանձու 209թ և մատե ուսանել // զճանապարհն, որ տանի ի կեանսն:

Վարդապետ բարի<sup>9</sup> (ԺԸ 18):

Եփ.(կրղ.) Եկն մեծատունն առ դատաւորն քաղցր լեզու[աւ և] պատրանաւք: Կոչեաց զնա բարերար, յանաւթ<sup>10</sup> ետ նմա, որպէս տան ընկերաց իւրեանց:

Զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենից ժառանգ[եցից]<sup>11</sup> (ԺԸ 18):

Ոկ. Քանզի ո՛չ սակաւ յուժարութիւն եցոյց պատանին այն, զի այնպիսի<sup>12</sup> իրաց ցանկացաւ: Մինչդեռ այլքն փորձէին և կէսքն վասն ցաւոց մատչէին, և նա վասն արքայութեանն հարցանէր:

Ասէ<sup>13</sup> Յիսուս. Զի՞ ասես<sup>14</sup> բարի, չի՛ք ոք բարի<sup>15</sup> (ԺԸ 19):

<sup>1</sup> Բ չեք դնէ գայս

<sup>2</sup> Բ պատիւ ընդունել

<sup>3</sup> Բ մարդկաւրէնս

<sup>4</sup> Բ չեք իրս

<sup>5</sup> Բ չեք Հարցանէ ոմն... ասէ

<sup>6</sup> Բ Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընդունի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ, ոչ մտցէ ի նա (ԺԸ 17): Ամենեցուն

<sup>7</sup> Բ որք ունիցին

<sup>8</sup> Բ Հարցանէ ոմն իշխան և ասէ (ԺԸ 17): Ետես

<sup>9</sup> Բ Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ. Վարդապետ բարի, զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից:

<sup>10</sup> Բ զի որպէս յանաւթս

<sup>11</sup> Բ չեք Զինչ գործեցից... ժառանգեցից

<sup>12</sup> Բ այսպիսի

<sup>13</sup> Բ Ասէ ցնա

<sup>14</sup> Բ ասես զիս

<sup>15</sup> Բ բարի, բայց մի Աստուած

**ԵՓ** Եցոյց դատաւորն, թէ կաշառ և ակնառուութիւն յատենի նորա ո՛չ գոյ: Զի՞ կոչես զիս<sup>1</sup> բարերար, զոր դու յինէն ուսանել կամիս: Ես ստոյգ գիտեմ: Առ կինն մեղաւոր բարերար եղև Քրիստոս, զի իբրև առ թողիչ մեղաց եկն: Փախեալ Տէրն մեր յայսմանէ, զի ետ<sup>2</sup> նմա մարդ բարի: Զի յայտ արասցէ, թէ ի Հաւրէ բնութեամբ ունի զբարերարութիւն[ն] և ո՛չ ստացական, որպէս մարդ:

**Բայց միայն Աստուած Հայր** (ԺԸ 19):

**Ստ.** Զի յայտ արասցէ, թէ Որդի գոյ նորա<sup>3</sup> նման: Եւ ո՛չ մարթի կոչել Հայր, թէ ո՛չ վասն Որդոյ, ո՛չ թէ Աստուած և Աստուած հակառակ, այլ՝ Աստուած յԱստուծոյ, Տէր ի Տեառնէ: Արդ՝ թէ ծառն բարի է, ձգեալ լինի վկայութիւն<sup>4</sup> ի վերայ պաղոյ նորա բարի<sup>5</sup> (տե՛ս Մատթ. Է 17): Ո՛չ զանձն արտաքոյ բարոյն փակեաց, այլ ընդ նմին զուգակից և փառակից<sup>6</sup>, ուսուցին<sup>7</sup> Աստուած բարի և ո՛չ մարդ սոսկ ասել:

**Զպատուիրանս գիտե՞ս** (ԺԸ 20):

**ԵՓ** Արդ՝ մեծացաւ այրն ըստ ակրհնութեանցն: Եւ յուսացաւ նա **210ա** յերկր(//)աւոր մեծութիւնս իւր, զոր ակրհնքն խոստացան: Եւ եկն առնուլ վկայութիւն ի Քրիստոսէ զմեծութիւնէն իւրմէ և զգործոց: Եւ հարցանէ վասն ակրինացն, թէ պահէ՞ զի՞նչ հատուցումն լինի նմա յերկրի:

**Մի՛ շնար** (ԺԸ 20):

**ԻԳ** Զի լցցեն զարձակում[ն] բնութեանն<sup>8</sup>, որ առանց վնասու տուաւ նոցա ամուսնութիւն:

**Մի՛ սպանաներ** (ԺԸ 20):

Զի անակրհնութիւն մեծ է բառնալ զոք ի կենաց, որ ինքն ո՛չ կարէ այլում տալ կեանս:

**Մի՛ գողանար** (ԺԸ 20):

Զի անձամբ չափեսցէ զվնաս ընկերին կսկծմանն<sup>9</sup>:

<sup>1</sup> Բ չիք գիտ

<sup>2</sup> Ը գիտ

<sup>3</sup> Բ նորին

<sup>4</sup> Բ վկայութիւն բարի

<sup>5</sup> Բ չիք բարի

<sup>6</sup> Բ Ոչ զանձն... փառակից՝ սրբ. է ստորին լս.

<sup>7</sup> Բ ուսուցանէ

<sup>8</sup> Բ ցանկութեանն

<sup>9</sup> Բ կասկածմանն

**Մի' սուտ վկայեր** (ԺԸ 20):

*Զի ո'չ զրպարտութեամբ սահմանի աստուածայինքն, զի Աստուած վրէժխնդիր է անազնականաց: Զի գրեալ է. «Վկայ սուտ մեռցի» (հմմտ. Առակ. ԻԱ 28):*

**Պատուեա' զհայր քո և զմայր** (ԺԸ 20):

*Զի, յետ առաջին պատճառին Աստուծոյ, երկրորդ ունիմ գոսսա, զի, որ առ սոսա պատիւն է կամ անարգանք[ն], յԱստուած ձգի:*

**Զայդ<sup>1</sup> ամենայն պահեսցի ի մանկութենէ իմմէ** (ԺԸ 21):

*Իսկ նա<sup>2</sup> վրիպական և սուտ բանիւք ասէր:*

**Ասէ Յիսուս. Մի' ևս պակաս է ի քէն<sup>3</sup>** (ԺԸ 22):

**ԻԳ.** *Արդ՝ Տէր մեր եթող ի պահպանութենէ սակաւ մի, զի յորժամ եկեսցեն հարցանել, երկրորդեացէ<sup>4</sup> զմնացորդս աւրինացն, զայն, որով կատարեալ լինէր: Զի որպէս Պաւղոս՝ «Որ ընկալաւ զայն ի Տեառնէ, որ ո'չ կամէր, և ո'չ անկանէր ի սիրտ նորա լսել» (հմմտ. Ա Կորնթ. Բ 9): Կամ այն է, որ<sup>5</sup> ասէ. «Սիրեսցես զ[ը]նկեր քո իբրև զանձն քո» (Մատթ. ԺԹ 19):*

**ԻԳ** *Արդ՝ կշռեաց զգործ<sup>6</sup> նորա աւրինաւքն և գտաւ պակասեալ: 210բ Զի թէ չսփով բաժանեաց անձին և ընկերին, // ուստի<sup>7</sup> բազմացան այնքան մթերք նորա: «Թէ սփոփեաց<sup>7</sup> և ետ աղքատաց, արդարութիւն նորա մնայ յաւիտեան<sup>8</sup>» (Սաղմ. ԾԺԱ 9), ապա ո'չ վշտացեալ գտանէր:*

**Զոր ինչ<sup>9</sup> ունիս վաճառեայ և տուր աղքատաց** (ԺԸ 22):

**ԵՓ** *Քանզի մեծ իմն պատուիրելոց էր. զհատուցումն առաջի դնէ: Դիր զմեծութիւնդ յերկինս ի ձեռն աղքատաց և յուսայ ի դա, զի քեզ պահեսցի: Որքան յերկրի է, չարաչար յուսացեալ ես ի դա, զի՝ «Ուր գանձքն են, անդ և սիրտք ձեր եղիցին» (Մատթ. Զ 21, Ղուկ. ԺԲ 34):*

<sup>1</sup> Եւ նա ասէ. Զայդ

<sup>2</sup> Եւ չիք նա

<sup>3</sup> Եւ իբրև լուաւ զայն Յիսուս, ասէ ցնա. Միւս ևս պակաս է ի քէն. զամենայն գոր ունիս՝ վաճառեա' և տուր աղքատաց:

<sup>4</sup> Եւ երկրորդեացէ Տէր մեր

<sup>5</sup> Եւ գոր

<sup>6</sup> Եւ զգործս

<sup>7</sup> Եւ սփոփեաց *փի* թէ սփոփեաց

<sup>8</sup> Եւ յաւիտեանս յաւիտենից

<sup>9</sup> Եւ չիք ինչ

**ԵԼ ՈԼՆԻԳԻԱ ԳԱՆՃՆԱ յԵՐԿԻՆԱ**<sup>1</sup> (ԺԸ 22):

*ԵԼ փոխանակ կաթին և մեղու տղայաբարոյ<sup>2</sup> մարդկան ի Քրիստոս կատարելոցն խաչ և բևեռ<sup>3</sup>:*

**ՍՏ** *Գանձ գառատութիւն պարգևացն կոչէ մշտնջենական և առանց գողանալոյ: ԵԼ ուսուցանէ, թէ ո՛չ կորնչին իրքն<sup>4</sup>, այլ առաւել տոհմականաւք աճեն, և առաւել քան զոր տայցեսն<sup>5</sup>, առնուս: ԵԼ որքան մեծ են երկինք քան զերկիր, զի ստացուածքն բարժանեն<sup>6</sup> զսոյն, որ առ Աստուած, և երկուցն Հասանել<sup>7</sup> անհնար է:*

**ԵԼ ԵԿ ՂԿՆԻ ԻՄ** (ԺԸ 22):

*Զհետ նորա<sup>8</sup> երթալն առաւել պարգևաց է Հատուցումն:*

**ԿՐ** *Զի զամենայն ինչ վասն նորա առնիցէ: ԵԼ Հանապաղ<sup>9</sup> սպանման և մահու ակն ունիցի, քան յ[ը]նչիցն թափել: Այս պատուիրան մեծ է, որ զարիւն<sup>10</sup> վասն նորա հեղու:*

**Իբրև**<sup>11</sup> **լուաւ զայս, տրտմեցաւ, քանզի էր մեծատուն յոյժ** (ԺԸ 23):

**ՈԿ.** *Քանզի ո՛չ այնպէս ըմբռնեալ են, որ<sup>12</sup> սակաւ ունին<sup>13</sup>, իբրև զայնոսիկ, որ հեղձեալ<sup>14</sup> են ընչիցն բազմութեամբ, յայնժամ բուռն լինի // անաւրէնութիւն<sup>15</sup>: ԵԼ աստ միտ զիր, զի այսպէս մղձկեցաւ, զի պատասխանի անգամ<sup>16</sup> ո՛չ կարաց<sup>17</sup> տալ, այլ տիրեալ<sup>18</sup> երթայր պապանձեալ:*

**Ասէ Յիսուս. Դժուարաւ, որ զինչս ունի, մտցէ յարքայութիւն**<sup>19</sup> (ԺԸ 24):

<sup>1</sup> B յերկինս և եկ զկնի իմ  
<sup>2</sup> B տղայաբարու  
<sup>3</sup> B ԵԼ փոխանակ... բևեռ՝ գրված է ԺԸ 22՝ «ԵԼ ունիցիս... յերկինս» տնից առաջ  
<sup>4</sup> B ինչքն  
<sup>5</sup> B տացեսն  
<sup>6</sup> B բաժանել  
<sup>7</sup> B *չիք* զսոյն, որ... Հասանել  
<sup>8</sup> B Աստուծոյ *փիւ* նորա  
<sup>9</sup> A Հանապաս  
<sup>10</sup> B զարիւն նորա  
<sup>11</sup> B Նա իբրև  
<sup>12</sup> B որք  
<sup>13</sup> B ինչ ունիցին  
<sup>14</sup> B յըղբեալ  
<sup>15</sup> B յայնժամ բուռն լինի անաւրէնութիւնք՝ սրբ. է ձախ լս.  
<sup>16</sup> A անկամ  
<sup>17</sup> B չկարաց  
<sup>18</sup> B *նախ*՝ խտրեալ, *ապա սրբ.*՝ խնոժորեալ  
<sup>19</sup> B Իբրև ետես զնա Յիսուս տրտմեալ, ասէ. Որպէ՞ս դժուարաւ, որ ինչս ունիցին,

*Ո՛չ զինչսն խոտէ, այլ զայնոսիկ, որք առ ընչիւքն կապեցան: Զի թէ մեծատունն դժուարաւ մտանէ, որչա՞փ ևս, որ զայլոյն ա-  
գահէ:*

**Դիւրին է<sup>1</sup> մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան  
յարքայութիւն մտանել<sup>2</sup> (ԺԸ 25):**

**Եփ.** *Դժուարին է կատարելոցն մտանել<sup>3</sup> ընդ դուռն արքայու-  
թեանն: Զոր ակրինակ՝ դուռն գոյ կուսանացն և դուռն աշխար-  
հականացն, բայց ընդ դուռն կուսանացն դժուարին է նոցա մտա-  
նել:*

**ՍՏ** *[Ի] յոյնն ուղտ ասէ մալխոյն, որ նշանակէ զթիւրս և զկորու-  
սեալս վատթար գործովք: Բայց այսպիսեացս դիւրագոյն է գտա-  
նել թողութիւն ապաշխարութեամբ և մտանել յարքայութիւն,  
քան մեծատունն մեծութեամբ:*

**Եւ աշակերտքն ասէն. Ո՞ կարէ ասրել<sup>4</sup> (ԺԸ 26):**

**Ոսկ.** *Աշակերտքն խռովէին, զի իբրև զվարդապետ<sup>5</sup> գութ և խնամ  
ունէին առ բազումս և դողային ի վերայ տիեզերաց:*

**Եւ Յիսուս<sup>6</sup> ասէ. Անհնարինք մարդկան<sup>7</sup>՝ հնարաւորք են  
[յ]Աստուծոյ (ԺԸ 27):**

**ՍՏ** *Որ ինչ մարդկան տկար է, Աստուծոյ զաւրաւոր է, զի զոր կա-  
մի՝ կարէ: Զի մարդիկ զոր կամին՝ ո՛չ կարեն գործել:*

**Ասէ Պետրոս. Մեք<sup>8</sup> թողաք զամենայն ինչս մեր և եկաք զկնի-  
քո՞<sup>9</sup> (ԺԸ 28):**

**211ք Ոսկ.** *// Ի՞նչ դիմաց աղքատաց<sup>11</sup>, զի ասիցեն<sup>12</sup> ո՛չ ունիմ ինչս, ո՛չ կա-  
րեմ կատարեալ լինել: Հարցաւ Պետրոս, զի դուք քաջալերես՞իք:  
Զի որպէս մեք զայլոց իրս ի՞նչ մեր դէմս<sup>14</sup> ասեմք, նոյնպէս առա-*

---

մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ:

<sup>1</sup> B Դիւրագոյն իցէ

<sup>2</sup> B Աստուծոյ մտանել

<sup>3</sup> B խաչիւ մտանել

<sup>4</sup> B Եւ որ լուսնն՝ ասէին. Եւ ո՞ կարիցէ ասրել:

<sup>5</sup> B զվարդապետին *փի* իբրև զվարդապետ

<sup>6</sup> B նա

<sup>7</sup> B առ ի մարդկանէ

<sup>8</sup> B ահաւասիկ մեք՝ սրբ. ձախ լս.

<sup>9</sup> B *չիք* և եկաք զկնիքո

<sup>10</sup> B Արդեաւք այս ի

<sup>11</sup> B աղքատաց է

<sup>12</sup> B ասեն

<sup>13</sup> B *չիք* ի

<sup>14</sup> B *չիք* դէմս

քեալն՝ վասն տիեզերաց: Զի ինքն զփականս երկնից էառ, որ-  
չա՞փ ևս<sup>1</sup> առաւել յանտի բարիսն վստահէր:

Եկաք մեք զկնի քո<sup>2</sup> (ԺԸ 28):

Զի թողուլն վասն հետ երթալոյն եղև և դի[ւ]րագոյն կազմե-  
ցաւ:

ԻԳ Զի ընդ ծովակին զտիեզերս ընկալան: Սոքա զկարճամիտսն  
հաստատեն<sup>3</sup> առ հանդերձեալսն, և զյոյս առ հատուցումն Քրիս-  
տոսի պահեն:

ՈԿ. Եւ զի մի ոք, յորժամ լսիցէ զդուքն, աւելի պատիւ աշակեր-  
տացն կարծիցեն աստ և<sup>4</sup> ի հանդերձեալ աշխարհին: Այլ նա զա-  
ւետիսն ընդ բնաւ տիեզերս տարածեաց, և ի մաւտաւորացս  
զհանդերձեալսն հաւատարիմ առնէ:

Որ եթող գտուն կամ զծնողս կամ զեղբարս կամ զկին վասն  
արքայութեանն<sup>5</sup> (ԺԸ 29):

Իսկ ցոր<sup>6</sup> ասիցէ. «Թողուլ գտուն կամ զորդիս», ո՛չ վայրա-  
պար քակիլ պարտ է յամուսնոյն և ո՛չ զի զանձինս սպանանի-  
ցեմք ասաց, այլ զի քան զամենայն ինչս<sup>7</sup> նախամեծար զարքա-  
յութիւն<sup>8</sup> համարիցիմք, քան զկին և զեղբարս, քան<sup>9</sup> զորդիս:  
Թուի, թէ հալածանսն<sup>10</sup> ակնարկեաց այսուիկ, զոր բազում  
ծնաւդք<sup>11</sup> խափան լինին աստուածապաշտութեանն և կանայք և  
որդիք: Վասն այնորիկ ասէ, թէ՛ «Նափանիչք լինին առաքինու-  
թեանն» (հմմտ. Ա Կորնթ. Թ 12): Մի՛ կին ի կանայս<sup>12</sup> համարեսցի և

212ա մի՛ հարք ի հարս // և մի՛ այլն ամենայն յազգատոհմն:

Առնու բազմապատիկ ի ժամանակիս և յաշխարհին, որ գա-  
լոց[ն] է, զկեանս<sup>13</sup> յաւիտենականս ժառանգեսցէ (ԺԸ 30):

<sup>1</sup> B չիք ևս

<sup>2</sup> B Եւ եկաք զկնի քո:

<sup>3</sup> B հանդարտեն

<sup>4</sup> B չիք և

<sup>5</sup> B Եւ նա ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ ոք է, որ եթող գտունս կամ զծնաւդս  
կամ զեղբարս կամ զկին կամ զորդիս վասն արքայութեան Աստուծոյ:

<sup>6</sup> B որ

<sup>7</sup> B ինչ

<sup>8</sup> B գաստուածապաշտութիւնն

<sup>9</sup> B սրբ.՝ և

<sup>10</sup> B զհալածանս

<sup>11</sup> A ծնողք

<sup>12</sup> B կանանց

<sup>13</sup> B Եթէ ոչ առնուցու բազմապատիկ ի ժամանակի յայսմիկ և յաշխարհին, որ գալոցն է,  
զկեանսն

Արդ՝ նոքա զեղէգն և զգործին թողին և զամենեցուն իշխանութիւն մեծութեամբ ունին: Պատիւս<sup>1</sup> ի տանց և յաշխարհաց, նաև զանձինս հաւատացելոց և զմարմինս, քանզի բազում անգամ վասն նոցա մեռանել յանձն առնուին:

Առանձինն ասէ ցնոսա. Ահաւասիկ ելան[եմք] յԵՐՈՒՍԱՂԷՄ և կատարի ամենայն գրեալք մարգարէիցն վասն իմ<sup>2</sup> (ԺԸ 31):

ԻՊ. Լցաւ ժամանակ մարգարէութեանն<sup>3</sup> կատարելոյ, որ վասն չարչարանացն և մահուն, նախատանացն ի<sup>4</sup> հրէից և հեթանոսաց, և սքանչելի յարութեանն: Եւ նոքա իմանալ ո՛չ զաւրէին:

Եւ էր բանն ծածկեալ ի նոցանէ, զի մի՛ գիտացեն<sup>5</sup> (ԺԸ 34):

ՈԿ. Եւ իբրև յանգիտութիւն հաստատեալ՝ ո՛չ առնուին ի միտ, թէ՛ «Պարտ է նմա ի մեռելոց յառնել» (Յովհ. Ի 9): Եւ զի բանայցէ զմիտս նոցա և իմասցին<sup>6</sup>, զոր ասաց, ո՛չ զայն ինչ<sup>7</sup>, զի մի՛ մեռանիցի, այլ թէ որպէ՛ս կամ որո՞վ աւրինակաւ կամ որպիսի՞ ինչ խորհուրդ իցէ: Քանզի ո՛չ զյառնելն ինչ գիտէին, և զայն լաւ համարէին, զի մի՛ մեռանիցի բնաւ:

ԻՊ. Զի<sup>8</sup> յայնժամ ծածկեսցի, և յետ ելից իրացն յիշեսցեն զառաջինսն:

Ի մտանել<sup>9</sup> նորա յԵՐԻՔՈՎ, կոյրք երկու<sup>10</sup> նստէին<sup>11</sup> առ ճանապարհաւն<sup>12</sup> (ԺԸ 35):

Յաւրինակ հրէիցն և հեթանոսաց մնային աստուածային լուսոյն, որ ծագելոց էր նստելոցս ի խաւարի և ի<sup>13</sup> ստուերս մահու:

<sup>1</sup> A պատիվս

<sup>2</sup> B Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք յԵՐՈՒՍԱՂԷՄ, և կատարեսցի ամենայն գրեալքն մարգարէիւք վասն Որդւոյ մարդոյ, զի մատնեսցի հեթանոսաց, և կատակեսցի և հարկանիցեն, և սպանիցեն զնա և յերիբ առուր յարիցցէ (ԺԸ 31-33):

<sup>3</sup> B մարգարէութեանցն

<sup>4</sup> B չիք ի

<sup>5</sup> B Եւ նոքա ոչինչ իմացան յայնմանէ, այլ էր բանն ծածկեալ ի նոցանէ և ոչ գիտէին զասացեալսն:

<sup>6</sup> B իմանալ *փիս* և իմասցին

<sup>7</sup> B ինչ ասաց

<sup>8</sup> B Եւ զի

<sup>9</sup> B Եւ եղև ի մաւտելն

<sup>10</sup> B ոմն *փիս* երկու (ձախ լս. սրբ.՝ երկու): Ներքևի լս. գրիչը ծանոթագրել է. «Մեկնիչս երկու կոյր ասէ, բայց ի մերս մին է թարգմանեալ»:

<sup>11</sup> B նստէր

<sup>12</sup> B ճանապարհաւն մուրացիկ

<sup>13</sup> B չիք ի



212բ **Իբրև լուան զանց[ան]ելն<sup>1</sup>, հարցանէին, թէ ո՞վ իցէ<sup>2</sup> (ԺԸ 36):**  
*// Եւ նախանձաւորքն փոքրկացուցանեն զփառս նորա մախանաւք:*

Իգ. **Նազաւրացի, ասեն, անցանէ<sup>3</sup> (ԺԸ 37):**  
*Ուխտաւոր թարգմանի: Եւ ծանեան կոյրք զաղաչանս<sup>4</sup> նոցա:*

ԵՓ **Աղաղակեցին<sup>5</sup>. Յիսո՛ւս, որդի՛ Դաւթի, ողորմ[եաց]<sup>6</sup> (ԺԸ 38):**  
*Արգ՝ եկն լոյսն յաշխարհ, զի կուրաց տեսանել տացէ և զթե՛րահաւատսն հաստատեսցէ ի հաւատս ճշմարիտս<sup>7</sup> Սուրբ Երրորդութեանն: Եւ ի հասանելն առ կոյրսն<sup>8</sup>՝ ետ նոցա աղաղակել.*

**Յիսո՛ւս, որդի՛ Դաւթի, ողորմեաց մեզ<sup>9</sup> (ԺԸ 38):**  
*Բարիոք կոչեցին զնա որդի Դաւթի, այն, որ առեր<sup>10</sup> զողորմութիւն ի վերայ կաղացն և կուրացն և գաւսացելոցն<sup>11</sup>: Ըստ այնմ՝ «Եթէ, որ<sup>12</sup> մատիցէ սրով առ կաղս և կոյրս, ատելի<sup>13</sup> է անձին<sup>14</sup> Դաւթի» (Բ Թագ. Ե 8): Զի բարեկամք էին նորա<sup>15</sup>, որք ասէին. «Մի՛ մտցէ այսր Դաւիթ» (Բ Թագ. Ե 6):*

**Որք առաջի երթային, սաստէին, և նոքա առաւել ևս աղաղակ[էին]<sup>16</sup> (ԺԸ 39):**  
*Մեծածայն բարբառ արձակէին: Թէպէտև այլքն սաստէին, սակայն նոքա յաղաղակելոյն ո՛չ դադարէին: Զի այնպիսիք են ժուժկալացն հոգիքն. որչափ խափանեն՝ առաւել յորդորին:*

<sup>1</sup> Ե զանցանել ժողովրդեանն  
<sup>2</sup> Ե զինչ է այն *փխ* ով իցէ  
<sup>3</sup> Ե Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցին անցանէ:  
<sup>4</sup> Ե սրբ.՝ գլաչաղանս  
<sup>5</sup> Ե աղաղակեացին և ասեն  
<sup>6</sup> Ե ողորմեաց ինձ  
<sup>7</sup> Ե ճշմարիտ  
<sup>8</sup> Ե կոյրն  
<sup>9</sup> Ե ինձ  
<sup>10</sup> Ե արար  
<sup>11</sup> Ե երուսացւոց *փխ* և գաւսացելոցն  
<sup>12</sup> Ե ոք  
<sup>13</sup> Ե ա տառի ներքևում ունի սրբագրման կլոր նշան, իսկ տողի վերևում նույնանման նշանի տակ այլ ձեռքով և մելանով ավելացված է. «Ուսցի՛, թէ ով ոք ի Սիրովն»:  
<sup>14</sup> Ե սրբ.՝ անձինն  
<sup>15</sup> Ե Որ ոչ Հատոյց վրէժս նոցա *փխ* Զի բարեկամք էին նորա  
<sup>16</sup> Ե Եւ որ առաջինն երթային, սաստէին նմա, զի լուեսցէ: Եւ նա ևս առաւել աղաղակէր. Որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Զտեղի առ Յիսուս և հրամայեաց ածել զնա առ իւր: Եւ իբրև մերձ եղև առ նա, ևհարց զնա և ասէ. Զի՞նչ կամիս դու, զի արարից քեզ (ԺԸ 39-41):

**ԻԳ** Յաւրինակ<sup>1</sup> հաւատացելոցն, որք ո՛չ ի սպառնալեացն երկեան և ո՛չ ի հարուածոց զանգիտեցին լռել ի քարոզելոյ զաստուածութիւն նորա:

**Եւ Յիսուս կոչեաց զնոսա և ասէ<sup>2</sup>. Զի՞նչ կամիք<sup>3</sup>, զի ար[արից]<sup>4</sup>**  
(ԺԸ 40-41):

**Ոկ.** Զի մի՛ ասիցեն նախանձոտքն, եթէ<sup>5</sup> նոք[ա] այլ ինչ խնդրեն<sup>6</sup> և նա զայլ ինչ շնորհէ<sup>7</sup>:

**Եւ ասեն. Տէ՛ր, զի բացեն<sup>8</sup> աչք մեր և տեսցուք** (ԺԸ 41):

**Տէր՝ զաստուածութիւն խոստովանէին և որդի Դաւթի՝**  
**213ա** **զմարդկութիւն բացայայտէին<sup>9</sup>, վասն որոյ և<sup>10</sup> ընդ(//)ունին զհայցելին: Եւ մեք<sup>11</sup>, թէ հաւատով մատչիմք առ Աստուած, զամենայնն առնումք: Տեսանե՞ս, զի և<sup>12</sup> յառաքելոցն ո՛չ կալան բարեխաւս, զի և բազումք ըմբերանէին:**

**Եւ Յիսուս ասէ ցնա. Հաւատք<sup>13</sup> քո կեցուցին զքեզ: Եւ առժամայն տեսանէր** (ԺԸ 42-43):

**Այն իսկ էին պատճառք բժշկութեան, վասն որոյ յաշխարհս եկեալ էր:**

**ԻԳ** Աւրինակ<sup>14</sup> ներքին մարդոյն լուսաւորութեան նշան արարեալ:

**Երթայր զհետ նորա և փառաւոր առնէր զԱստուած<sup>15</sup>** (ԺԸ 43):

**Ոկ.** Եւ ո՛չ մեկնէին ի նմանէ, որպէս բազումք յետ երախտեացն ապերախտք գտան<sup>16</sup>: Իսկ սոքա յառաջ քան զպարգևս ժողովալք, և յետ պարգևացն<sup>17</sup>՝ մտադիւրք, քանզի զհետ իսկ երթային՝ փառաւորելով զնշանագործն:

<sup>1</sup> Ե կամ յաւրինակ

<sup>2</sup> Ե **չիք** Եւ Յիսուս... ասէ

<sup>3</sup> Ե կամիս դու

<sup>4</sup> Ե արարից քեզ: Եւ նա ասէ. Տէ՛ր, զի բացցին աչք իմ և տեսից:

<sup>5</sup> Ե **չիք** եթէ

<sup>6</sup> Ե խնդրեցին

<sup>7</sup> Ե շնորհեաց

<sup>8</sup> Ե բացցին

<sup>9</sup> Ե բացայայտեն

<sup>10</sup> Ե **չիք** և

<sup>11</sup> Ե մեզ

<sup>12</sup> Ե **չիք** և

<sup>13</sup> Ե Հայեաց, հաւատք

<sup>14</sup> Ե Այլ զայս աւրինակ լուսաւորութեան

<sup>15</sup> Ե զԱստուած: Եւ ամենայն ժողովրդեանն տեսեալ՝ տայր աւրհնութիւն Աստուծոյ:

<sup>16</sup> Ե ասպիստաւոր գտանին

<sup>17</sup> Ե պարգևին

## Գլուխ ԺԹ

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով<sup>1</sup> (ԺԹ 1):

Խոնարհութեամբ ամենայն ուրեք մտանէ և շրջի, զի մի՛, որք կամիցին<sup>2</sup> մերձենալ առ նա, խափան ինչ լիցի<sup>3</sup>: Նա, զի և Յեսու, անուանակիր[ն] Յիսուսի, ի Մովսեսէ կացեալ առաջնորդ ժողովրդեանն, հրամանաւն Աստուծոյ տապանակաւն շուրջ գալ ժողովրդաւքն<sup>4</sup> զԵրիքով քաղաքի<sup>5</sup>, և ձայնիւ առանց մեքենայից հոսի ամբողջիւն պարսպին (հմմտ. Յեսու Զ 1-21): Եւ ապրեալ լինի պոռնիկն, և Յեսու նզովէ, որ վերստին շինէ զքաղաքն Երիքով, և որ ազահեր ի նզովից անտի<sup>6</sup> առնուլ ինչ: Վասն որոյ՝ Յեսու աւրինակ Յիսուսի<sup>7</sup> և<sup>8</sup> Երիքով՝ աւրինակ<sup>9</sup> դժոխոց: Եւ ապրեցուցանէ Յեսու զպոռնիկն (տե՛ս Յեսու Զ 23) յաւրինակ հեթանոսաց: // Վասն որոյ Դաւիթ յիշէ ի քաղաքին Աստուծոյ զՐահաբ<sup>10</sup> պոռնիկն և զբարելոնացիսն և զծուրացիսն<sup>11</sup> և զժողովուրդս հնդկաց (տե՛ս Սաղմ. ԶԶ 4): Այսպիսի<sup>12</sup> առակաւոր բանիւ<sup>13</sup> խաւսէին մարգարէքն: Յաղագս որոյ ասէ Յեսու. «Անիծեալ, որ շինէ զԵրիքով» (Յեսու Զ 26), և Յիսուս ասէ. «Անիծեալ, որ շինէ<sup>14</sup> զդժոխս, զոր աւերեցի»: Եւ ո՞ք են, որ շինեն զնա: Որք դարձեալ հնազանդին մեղաց, յորմէ ազատեցան:

Եւ ահա այր մի<sup>15</sup> կոչեցեալ Զաբէոս, և<sup>16</sup> ցանկայ<sup>17</sup> տեսանել զՅիսուս (ԺԹ 2-3):

Յանկացեալ մաքսաւորին տեսանել զՅիսուս՝ յաւրինակ մարդկային բնութեանս:

<sup>1</sup> A Երիքով (այսուհետև չենք նշում)

<sup>2</sup> B կամենան

<sup>3</sup> B լինիցի

<sup>4</sup> B ժողովրդովքն

<sup>5</sup> B քաղաքիւ

<sup>6</sup> B անդի

<sup>7</sup> B Յիսուսի աւերէ

<sup>8</sup> B չիք և

<sup>9</sup> B զԵրիքով յաւրինակ

<sup>10</sup> B զՐաբաբ

<sup>11</sup> B զծուրացիսն

<sup>12</sup> B Արդ՝ այսպիսի

<sup>13</sup> B բանիւք

<sup>14</sup> B շինեն

<sup>15</sup> B մի անուն

<sup>16</sup> B և նա էր մաքսապետ և

<sup>17</sup> B ցանկայր

Եւ նա էր մաքսապետ և<sup>1</sup> մեծատուն յոյժ (ԺԹ 2):

Ազգք<sup>2</sup> մեծացեալ մեղաւք, զոր մաքսեցին յամենեցունց:

Ցանկայր տեսանել զՅիսուս<sup>3</sup> և ո՛չ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւն<sup>4</sup> (ԺԹ 3):

Ցանկացաւ տեսանել<sup>5</sup> մարդկային բնութիւնս, տեսանել զստոյգ աստուածգիտութիւն: Եւ ո՛չ կարացին փոքր գիտութեամբ հասանել ի մեծ գիտութիւն Աստուծոյ, վասնզի մոլորեցան ի բազում աստուածս<sup>6</sup>:

Ընթացաւ ի մոլաթղեւին<sup>7</sup>, զի տեսանիցէ զնա, քանզի ընդ այն իսկ անցանելոց էր Յիսուս<sup>8</sup> (ԺԹ 4):

**ԵՓ** [Ե]թող Զաքէոս զարդար աւրէնսն և զսնտոի բաջաղմունս հեթանոսաց, և ել նա ի խուլ թղեւի անդ, որ խորհուրդ էր խլացեալ լսելեաց հրէից և հեթանոսաց: Եւ նկարեցաւ խորհուրդ փրկութեան ամենայն ազգաց, զի [Ե]թող նա զխորս ներքինս և վերացաւ յաւղսն միջինս, զի հայեսցի ընդ բարձրացեալ<sup>9</sup> աստուածութիւն[ն] Քրիստոսի:

214ա Իգ. Արդ՝ մարդկան բնութիւնս խափանել<sup>10</sup> իմաստութեամբ բարձրանայ<sup>11</sup> քննել զարարածս և գտանել զբնաւից արարչագործն: Եւ ո՛չ կարացին կալ ի վերայ ճշմարտութեանն: Մոլորեցան, և զրեւս համբաւեցին<sup>12</sup> արարիչս:

Իբրև եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ<sup>13</sup>. Փութայ էջ այտի<sup>14</sup>, զի այսաւր ի տան քում արժան է ինձ ազանել (ԺԹ 5):

**ԵՓ** Փութացոյց Տէր մեր ի ջուցանել զնա ի խուլ թղենոյ անտի<sup>15</sup>, որ խորհուրդ էր թղեւին գործոց նորա: Զի մի<sup>16</sup> կացէ նա ի խուլ-

<sup>1</sup> B և ինքն

<sup>2</sup> B Ազգ

<sup>3</sup> B Եւ խնդրէր տեսանել, թէ ո՞վ իցէ Յիսուս

<sup>4</sup> B Հասակաւ

<sup>5</sup> B **չիք** տեսանել

<sup>6</sup> B բազմաստուած կուսակալութիւնսն

<sup>7</sup> B Եւ ընթացեալ յառաջս, ել ի ժանտայթղեւին

<sup>8</sup> B **չիք** Յիսուս

<sup>9</sup> A նախ վերացեալ և բարձրացեալ, ապա՝ «վերացեալ և» բառերի վրան ունի դուրս գրման կետանշաններ:

<sup>10</sup> B խափանելի

<sup>11</sup> B բարձրացան

<sup>12</sup> B Համարեցան

<sup>13</sup> B ասէ ցնա. Զակքէոս

<sup>14</sup> B այդի

<sup>15</sup> B անդի

<sup>16</sup> B ոչ

*թեան, այլ եռասցի նա ի սէր[ն] Տեառն մերոյ: Եւ ձուլեսցէ զնա, զի եղծցի Հնուլթիւն նորա, և նկարեսցի նոր մարդ:*

**Իգ.** *Ըստ<sup>1</sup> նմին աւրինակի իջուցանէ զհեթանոսս ի բարձրութենէ իմաստութեան նորա<sup>2</sup>: Քննէին տեսանել զնա, զի<sup>3</sup> Աստուած քննութեամբ ո՛չ իմանի, այլ հաւատովք ճանաչի: Ըստ այնմ՝ «Իմաստութեամբն Աստուծոյ ո՛չ ծանեալ աշխարհ զՏէրն բոլորից: Հաճեցաւ Աստուած իմաստութեամբ քարոզացն<sup>4</sup> ապրեցուցանել զհաւատացեալս» (Ա Կորնթ. Ա 21), քանզի հաւատոց միայն է նա հասանելի: Որպէս ասէ առաքեալ. «Հաւատովք բնակեալ Քրիստոսի<sup>5</sup> ի սիրտս մեր, և սիրով արմատացեալ և հաստատեալ» (Եփես. Գ 17):*

**Փութացաւ և էջ, և ընկալաւ զնա ուր[ախութեամբ]<sup>6</sup> (ԺԹ 6):**

**ԵՓ** *Վասնզի Զաքէոս եհաս խնդրուածոց աղաւթից իւրոց, որ ի միտս ասէր, եթէ՝ «Երանի իցէ այնմ, որ արժանասցի արդարոյն այնմիկ, որ մտանէ վանս նորա»:*

**ԻԳ** *Արդ՝ այն, որ ցանկացաւ տեսանել և ո՛չ կարէր, արժանացաւ 214բ բնակակից և սեղանակից լինել, զի յազեսցի փառաւք նորա, // զոր ո՛չ ական ունէր վասն խղճի մտացն և զանգիտէր ի մեծութեան<sup>7</sup> պատուոյ նորա: Իսկ ծածկատեսն իմացաւ, թէ հնարէ<sup>8</sup> զարծաթոյն պայծառութիւն զեղեցիկ պատկերին գտանել զթաղեալն յաղբս մաքրել<sup>9</sup>, զի ո՛չ գարշի յիւր պատկերէն, զոր ստեղծ<sup>10</sup> ձեռաւք:*

**Իբրև տեսին ամենեքին<sup>11</sup>, տրտնջէին և ասէին<sup>12</sup>. Առ առն մեղաւորի եմուտ լուծանել (ԺԹ 7):**

*Զի կեղծաւորութեամբ գարշէին ի մեղաւորացն նոքա և ո՛չ ի մեղացն, յորմէ գարշելն աւգտակար է և հեռանալն<sup>13</sup>: Այլ Տէրն սրբիչ է և ո՛չ աղտեղանայ, և մեղք նմա ո՛չ<sup>14</sup> կարէ վնասել:*

<sup>1</sup> B Եւ ըստ  
<sup>2</sup> B որով *փխ* նորա  
<sup>3</sup> B վասնզի  
<sup>4</sup> B յիմարութեամբ քարոզութենէն  
<sup>5</sup> B *զրփխ* Քրիստոսի բնակեալ  
<sup>6</sup> B յուրախութեամբ  
<sup>7</sup> B մեծութենէ  
<sup>8</sup> A հրարէ  
<sup>9</sup> B և մաքրել  
<sup>10</sup> B եստեղծ  
<sup>11</sup> B ամենեքեան  
<sup>12</sup> B ասէին թէ  
<sup>13</sup> A հեռանալ  
<sup>14</sup> B ոչ ևս

Վասնզի<sup>1</sup> լոյսն<sup>2</sup> խաւար ո՛չ կարէ ծածկել, և զկենդանութեան տուիչն մահ ո՛չ մեռուցանէ: Զի մեղս ո՛չ արար, այլ կարողապէս զմեղս բազմաց վերացոյց: Վասն այսորիկ եկն զմեղաւորս արդարացուցանել: Որպէս ասէ<sup>3</sup> առաքեալ. «Արդարութիւն միոյն յամենեսին արդարութիւն կենաց» (Հռոմ. Ե 18):

**Եկն եկաց Զաքէոս և ասէ<sup>4</sup>. Տէր՛, ահա զկէս ընչից իմոց տայց աղքատաց<sup>5</sup>** (ԺԹ 8):

**Եփ.** Ետես Զաքէոս և ծանեաւ, թէ զամենայն, որ ինչ իմ գործեալ է, գիտէ նա: Վասն այնորիկ սփռեաց առատութեամբ, զի զիտաց զհատուցողն<sup>6</sup> ողորմութեանց, որ ասաց ընչեղին. «Վաճառեա՛ զինչս քո և տուր» (Մատթ. ԺԹ 21) ողորմութիւն, և «Երանի ողորմածացն<sup>7</sup>, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե 7):

**Եւ եթէ զոք զրկեցից, հատուցից չորեքկին** (ԺԹ 8):

**215ա** Արդ՝ մոռացեալ լիցի<sup>8</sup> առաջին թղենին Աղամայ երկրորդ թղենեալն մաքսապետին, և տունն Աղամայ պարտաւորի //ի ձեռն Զաքէի, որ արդարացաւ: Եւ յամալթ լիցի ժողովուրդն ուրացող՝ յանկարծակի աշակերտութեամբ[ն] Զաքէի, որ խոստովանեցաւ զտէրութիւն նորա՝ վրէժխնդիր գործոց մարդկան:

**Իգ.** Վասն որոյ փութացաւ հատուցանել չորեքպատիկ զզրկանսն  
**Իգ.** ընդ ազահուլթեանն, և ընդ չար գործելոյն չորեքպատիկ զդարձն անդրէն տալ:

**Ասէ<sup>9</sup> Յիսուս. Այսաւր եղև փրկութիւն տանս այսմիկ** (ԺԹ 9):

**ԵՓ** Երեկ՝ յափշտակող և այսաւր՝ տուիչ, երեկ՝ մաքսաւոր և այսաւր՝ աշակերտ:

**ԻԳ** Ընդ մտանել փրկողին փրկեցաւ Զաքէոս տամբն: Նոյն աւրինակաւ ի<sup>10</sup> մտանելն Յիսուսի յաշխարհս յայս փրկութիւն եղև ամենեցուն, որք հաւատացին ի նա:

**Քանզի սա<sup>11</sup> որդի Աբրահամու է** (ԺԹ 9):

<sup>1</sup> B և

<sup>2</sup> B զլոյսն

<sup>3</sup> B ասեն

<sup>4</sup> B ասէ ցՏէր

<sup>5</sup> B տաց աղքատաց: Եւ եթէ զոք զրկեցի, հաւատացից չորեքկին:

<sup>6</sup> B արք.՝ զհատուցանողն

<sup>7</sup> B ողորմածաց

<sup>8</sup> B լինի

<sup>9</sup> B Եւ ասէ ցնա

<sup>10</sup> B ընդ

<sup>11</sup> B և սա

**ԵՓ** Այլ գիտ[ե]այ, ո՛վ սիրելի, թէ ծնունդ նոր<sup>1</sup> լինէր անդ, զի ասէ. «Սա է որդի Աբրահամու»:

**ՍՏ** Արդ՝ վասնզի Զաքէոս զգործսն Աբրահամու գործեաց, որդի Աբրահամու անուանեցաւ ի Տեառնէ: Զի ստոյգ որդի Աբրահամու նա է, որ գործէ զգործսն Աբրահամու, և որդի Աբրահամու, որ նման է հաւատոց նորա: Որ ցանկացաւ տեսանել զՔրիստոս, ետես և ուրախ եղև: Զի Իսահակ ո՛չ բնութեանն էր որդի Աբրահամու, այլ հաւատոցն, զի ի ծերութեան ժամանակին ծնաւ: Եւ հեթանոսք ո՛չ բնութեամբ են որդիք Աստուծոյ, այլ հաւատովքն ի Քրիստոս ծնան՝ մկրտելով յանուն Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ:

Եկն<sup>2</sup> Որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալսն<sup>3</sup> (ԺԹ 10):

**215բ Իգ.** // Արդ՝ ամենայն ազգաց անկեալ ի վիհս կորստեան իբրև զմի ոչխար<sup>4</sup>: Եւ եկն «հովիւն քաջ» (Յովի. Ժ 11, 14)՝ բնութեանս Արարիչ, գտանել զկորուսեալսն և ի վերայ ուսոցն բառնալ<sup>5</sup>:

**Ստ.** Զայն, որ ընդ լայն և ընդարձակ ճանապարհ[ն] գնայր զտարողն ի կորուստ, և կենդանացաւ գալստեամբն Քրիստոսի և գտաւ ժառանգորդ երկնից խորանացն:

Յաւել առակ մի վասն համարելոյ նոցա, թէ այժմ մերձեալ է արքայութիւն Աստուծոյ<sup>6</sup> (ԺԹ 11):

**Իգ.** Աշակերտքն, և որ մերձն էին, համարէին, թէ առժամայն յայտնելոց է վերին թագաւորութիւնն մարմնապէս յերկրի<sup>7</sup>: Եւ էր այսպիսի կարծիք առ նոսա: Նորին աղագաւ և որդիքն Զեբեդեայ ընդ աջմէ և ընդ ահեկէ նստել խնդրէին (տե՛ս Մատթ. Ի 21, Մարկ. Ժ 35): Վասն այնորիկ յառաջակայ առակաւ բառնայ զայնպիսի կարծիսն:

**Ասէ<sup>8</sup>. Այր ոմն ազնուակ[ան]** (ԺԹ 12):

<sup>1</sup> Եւ ծնունդն որ

<sup>2</sup> Եւ Զի եկն

<sup>3</sup> Եւ զկորուսեալսն

<sup>4</sup> Եւ զոչխար մի

<sup>5</sup> Եւ բարձեալ

<sup>6</sup> Եւ եւ մինչդեռ նոքա գայս լսէին, յաւել առակ մի և ասէ վասն մերձենալոյն նորա յերուսաղէմ և համարելոյ նոցա, եթէ առժամայն յայտնելոց իցէ արքայութիւնն Աստուծոյ:

<sup>7</sup> Եւ Ի յերկրի

<sup>8</sup> Եւ չեք ասէ

**ԿՐ** Այր աստանուր<sup>1</sup> Փրկիչն զինքն անուանէ, իսկ ազնուական՝ ըստ որումն է[ջ] յերկնից<sup>2</sup> աստուածութիւն և ի սրբոյ Կուսէն անապականաբար ծնեալ:

**ԻՊ** Վասն<sup>3</sup> բնութեանս մեր, զոր էառ և միացոյց ընդ աստուածութեանն և անզուգական բարձրութեամբ միևնոյն արար: Եւ մերոյ բնութեանս որոշեաց զդրախտն ի բնակութիւն, տեղի ամենաբարի և անկարաւտ, անմահ և անապական, խառնեալ<sup>4</sup>, և միանալ ընդ նմա ի կեանսն յաւիտենից<sup>5</sup>:

**Գնաց յաշխարհ հեռի** (ԺԹ 12):

**Ստ.** Եկեալ յերկնից<sup>6</sup> երկրաւորացս թագաւորեաց:

**ԿՐ** Որ ի ժամանակի խաչին աւանդեաց զմարդկային հոգիսն<sup>7</sup> ի 216ա ձեռն Հաւր // և չոգաւ առ հոգիսն, որ ըմբռնեալն էին: Ըստ առաքելոյ բանին, թէ՛ «Քրիստոս վասն այսորիկ<sup>8</sup> մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց տիրեսցէ» (հմմտ. 3ռոմ. ԺԴ 9): Զի որպէս ազգակից մերով մարմնովս քարոզեաց մարմնաւորացս<sup>9</sup> զիւր աստուածութիւն[ն], այսպէս և ազգակից մերով հոգովս՝ երթեալ քարոզեաց զիւր աստուածութիւն[ն], որ յոյժ հեռի են բնութիւնք<sup>10</sup> հոգոցն ի մարմնական կենցաղոյս՝ անտեսանելի գոլով: սրկ. Եմուտ ի գերեզման[ն], որ կրէ զամենայն բանիւ<sup>11</sup>, և ապականեալ զեղծագործն, որպէս խաչիւն զչարհարանսն՝ անապական առնելով զ[ը]մբռնեալսն ի մահուանէ:

**Սրկ.** Իջանելով<sup>12</sup> ի դժոխս՝ մարդկային անձամբ իւրով յաշիտակել զորս ի նմա՝ զիշխանութիւն<sup>13</sup> նորա խափանելով: Կապէր զհզաւրն<sup>14</sup>՝ կորացուցանելով զամբարտաւանութիւն<sup>15</sup> նորա<sup>16</sup>:

**Առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ** (ԺԹ 12):

<sup>1</sup> B աստ անաւր

<sup>2</sup> A, B ի յերկնից

<sup>3</sup> B նաև վասն

<sup>4</sup> B խառնել

<sup>5</sup> B յաւիտենաց

<sup>6</sup> A, B ի յերկնից

<sup>7</sup> B հոգին

<sup>8</sup> B այնորիկ

<sup>9</sup> B մարմնաւորաց

<sup>10</sup> B սրբ.՝ բնակութիւնք

<sup>11</sup> B բանիւ և զաւրութեամբ

<sup>12</sup> B իջանէր և

<sup>13</sup> B և զիշխանութիւն

<sup>14</sup> B զիշխանն մահարար հզաւր զաւրութեամբ իւրով և

<sup>15</sup> A զամպարտաւանութիւն

<sup>16</sup> B աստ չիք «Եմուտ ի գերեզմանն... նորա» (Հատվածը մեկնված է ԺԹ 12-ում)



**ԻԳ** Վասնզի ընդ առնուլն զմարմինն ի Կուսէն և ընդ սկիզբն յղանալոյն ունէր, որ ինչ՝ յատուկ աստուածութեանն<sup>1</sup>, և ո՛չ յետ այնորիկ ընկալաւ ինչ: Որպէս և ինքն ասաց. «Իշխանութիւն ունի Որդի մարդոյ թողուլ զմեզս» (Ե 24): Եւ իշխանութիւն տայ աշակերտին թողուլ և ունել: Եւ հաւատայ նոցա զփականս արքայութեանն երկնից, զի փակեացէ մեղուցելոցն և բացցէ զղջացելոցն: Եւ այսպիսի բնութեամբ ունէր զիշխանութիւն միացեալ ընդ մարմնոյն: Բայց զկնի յարութեանն, իբրու թէ ո՛չ ունէր, ասէ. «Տուաւ ինձ իշխանութիւն<sup>2</sup> յերկրի<sup>3</sup>» (Մատթ. ԻԸ 18): Վասն<sup>4</sup> յայտնի լինելոյ տէրութեանն իւրոյ<sup>5</sup> ասէր:

**216բ ՈԿ** Մարդկաւրէն իմն // խաւսելով ընդ նոսա, քանզի չե ևս առեալ էին զհոգին, որ կարող էր բարձրագոյնս առնել զնոսա և զմեծամեծսն ծանուցանել:

**ԿԲ** Արդ՝ առեալ Քրիստոսի զղաւանութեանն անուն իւրոյ աստուածութեանն և թագաւորութեանն յապստամբ ծառայիցն ի կռապաշտ ոգոյն<sup>6</sup>: Զի թէպէտե հասարակաց իմանի Աստուած գոլ, սակայն ո՛չ հետեւոցն և ուրացելոցն և երկրպագուացն դիււաց իմանի<sup>7</sup> Աստուած գոլ: Իսկ յորժամ ծանուցաւ հոգոցն՝ յայտնելովն և քարոզելովն զինքն, ըստ առաքելոյ բանին, թէ՛ «Հոգոցն, որ ի բանդին էին<sup>8</sup>, երթեալ քարոզեաց» (Ա Պետր. Գ 19) ապստամբելոցն<sup>9</sup>, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւն[ն]: Յայնժամ խոստովանեցաւ Աստուած և թագաւոր հոգոցն՝ որ գունակ և մարմնոցս<sup>10</sup>:

**Գնաց յաշխարհ հեռի (ԺԹ 12):**

**ստ.** Համբառնալն մարմնով յերկինս, զի երկնայնոցն և երկրայնոցս թագաւորեաց:

**Ստ.** Չիք<sup>11</sup> հեռագոյն տեղի, քան որ նայն գնաց:

**ԻԳ** Ի սրբութիւն սրբոցն՝ մտանել<sup>12</sup> ի ներքին կողմն վարագուրին:

<sup>1</sup> Բ աստուածութեանն էր

<sup>2</sup> Բ ամենայն իշխանութիւն (այնուհետեւ շարունակվում է ԺԹ 11-ի՝ «Եմուտ ի գերազմանն... զամբարտաւանութիւն նորա» մեկնութիւնը)

<sup>3</sup> Բ յերկինս և յերկրի

<sup>4</sup> Բ Եւ վասն

<sup>5</sup> Բ **չիք** տէրութեանն իւրոյ

<sup>6</sup> Բ ոգւոցն

<sup>7</sup> Բ ճանաչի

<sup>8</sup> Բ **չիք** Հոգոցն որ... էին

<sup>9</sup> Բ երբեմն ապստամբելոցն

<sup>10</sup> Բ մարմնոցն

<sup>11</sup> Բ նաև չիք

<sup>12</sup> Բ մտանելով

**ԿՐ** Եւ անդ առնու<sup>1</sup> ի հաւատացելոց փառաբանութիւն, և երկրպագութիւն ի հրեշտակաց և ի մարդկանէ: Ըստ այնմ՝ «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և ամենայն լեզու խոստովան լիցի<sup>2</sup> Տէր Յիսուս<sup>3</sup> ի փառս Աստուծոյ Հա[ւր]» (Փիլիպ. Բ 10-11):

Եւ կոչեալ առ ինքն<sup>4</sup> զծառայս իւր (ԺԹ 13):

**ԻՊ** Արդ՝ երևեցաւ այժմն ծննդեամբ, և վարագուրեաց ի մէնջ զաստուածութիւն իւր թանձրագոյն մարմնովն, և կոչեաց զամենայն ազգս ծառայս իւր:

**217ա ԵՓ** Զի սփռեալ է գիտութիւն նորա // ի վերայ ամենայն ազգաց: Որպէս ասացին նինուեացիքն. «Ո՞ գիտէ, դառնայ Տէր և ողորմի» (հմմտ. Յովնան Գ 9): Արդ՝ յայտ է, թէ<sup>5</sup> գիտէին, զի<sup>6</sup> ողորմած է և սիրէ զապաշխարողսն: Գա՛ն արբին փաղշտացիքն<sup>7</sup> և գիտացին զՏէր բժիշկ: Դատապարտեցաւ Ամոն և եհան զորդին իւր պատարագ Տեառն: Նոյնպէս և Բաբել մատուցանեն եգիպտացիքն պատարագս Տեառն<sup>8</sup>: Տեսե՞ր աւասիկ, զի գիտէին զնա Տէր ամենայն հեթանոսք, որպէս Իսրայէլ բարկութեամբ: Իսկ առ հաւատացեալսն ասէր մարգարէն. «Արարից զկաղն ի ժառանգութիւն և զտկարն յազգս<sup>9</sup> հզաւր»:

Ետ նոցա տասն մնաս և ասէ ցնոսա. Յարգեցէք մինչև<sup>10</sup> եկից (ԺԹ 13):

**ԻՊ** Զմնասս զայս հասարակաբար ամենեցուն ետ, զաւրինաց<sup>11</sup> նորա հնազանդութիւն գործել և<sup>12</sup> պահել, որում ամենայն ոք ինքնատէր և<sup>13</sup> բաւական: Որպէս ասէ Մաղաքիաս. «Քանզի յարևելից մինչև ի մուտս արևու, փառաւորեալ է անուն իմ ընդ ամենայն հեթանոսս» (Մաղաք. Ա 11), և «Ժողովեցից զհեռացեալսն, և զցրուեալսն մերձեցուցից» (հմմտ. Ա Մակ. Գ 9):

<sup>1</sup> Բ առնուլ

<sup>2</sup> Բ խոստովանեսցի *փի* խոստովան լիցի

<sup>3</sup> Բ Տէր է Յիսուս Քրիստոս

<sup>4</sup> Բ կոչեցեալ *փի* կոչեալ առ ինքն

<sup>5</sup> Բ զի

<sup>6</sup> Բ թէ

<sup>7</sup> Բ փրկւշտացիքն

<sup>8</sup> Բ *չիք* նոյնպէս և Բաբել... Տեառն

<sup>9</sup> Բ յազգ

<sup>10</sup> Բ զայդ մինչև

<sup>11</sup> Բ զ-ն՝ *քերած-ջնջած*

<sup>12</sup> Բ գործել և՛ սրբ. ստորին լս.

<sup>13</sup> Բ է և

ստ. Իսկ տասն ասացեալ մնասն, որ նշանակէ<sup>1</sup> զկատարեալ առաքինութիւն[ն], միաբանութեամբ հինգ հոգեղէն զգայութեամբք ընդ հինգ մարմնեղէն զգայութեանցս, զի տասն կատարեալ թիւ է:

Իգ. Որով<sup>2</sup> ընդունիմք զբարիսն կամ ի բաց ընկենումք զչարն<sup>3</sup>: Կամ զաւրէնս իւր թուեաց Քրիստոս ըստ աւրինացն, որ տուաւ<sup>4</sup> հրէիցն՝ ի մի ածելով<sup>5</sup> ամենայն զգուշութեամբ: Եւ սպասել զալստեան նորա, և ըստ վաստակոց ակն ունել հատուցման:

217բ Իգ // Կամ աւրէնք նոր տուան<sup>6</sup> Իսրայելի, ի գալստեանն<sup>7</sup> թարգմանեցին և<sup>8</sup> ամենայն լեզուք

եփ. խորհել նովին հոգով և աւրհնեսցեն զայն, որ գրեացն զնա: Ըստ այնմ, թէ՛ «Ամենայն հոգիք աւրհնեսցէք զՏէր» (Սաղմ. 60 6) և «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նորա<sup>9</sup>» (Յոնմ. Ժ 18):

ԿԲ Կամ զչնորհս վարդապետութեանն ի<sup>10</sup> կաթողիկէ եկեղեցոջ գործել<sup>11</sup> նոքաւք՝ քահանայից և վարդապետաց և ամենայն ժողովրդոց, մինչև ի միւս անգամ գալուստն:

Իսկ քաղաքացիքն, որ<sup>12</sup> ատէին զնա (ԺԹ 14):

Իգ Իւրքն էին: Ըստ ասելոյն. «Յիւրսն եկն և իւրքն զնա ո՛չ ընկալան» (Յովի. Ա 11): Ատեցին<sup>13</sup> զնա, զի լոյս էր յանդիմանիչ գործոց նոցա: Եւ նոքա սիրեցին զխաւար առաւել քան զլոյս, զի ծածկեսցեն զգործս իւրեանց զազրալիս<sup>14</sup>, որք էին գերեզմանք լցեալք ապականութեամբ:

Ստ. Ըստ այնմ՝ «Ատեցին զյանդիմանիչս ի դրունս իւրեանց» (Ամովս Ե 10): Եւ որպէս Յովէլ ասէ. «Բայց դու, Իսրայէ՛ղ, լուսով աւրինացն և մարգարէիցն և քահանայիցն<sup>15</sup>, խաւարեցան աչք քո» (Իմմտ. Յովէլ Բ 10, Գ 15): Ահա որպէս որդիք հնդկաց էք դուք ինձ որ-

<sup>1</sup> B նկարէ  
<sup>2</sup> B որովք  
<sup>3</sup> B զչարիս  
<sup>4</sup> A տվաւ  
<sup>5</sup> B ածել  
<sup>6</sup> B աւրէնքն որ տուան  
<sup>7</sup> B Քրիստոսի գալստեանն  
<sup>8</sup> B չէք և  
<sup>9</sup> B նոցա  
<sup>10</sup> B չէք ի  
<sup>11</sup> B ասէ գործել  
<sup>12</sup> B Եւ քաղաքացիք նորա  
<sup>13</sup> B այլ ատեցին  
<sup>14</sup> B զազրալիցս  
<sup>15</sup> B քահանայիցն ոչ լուսաւորեցար

դիք Իսրայելի: Եթէ կամիք դուք հաւատալ յիս, որդիք էք Աբրահամու, ապա եթէ ոչ՝ մի՛ պարծիք, քանզի ի՛հ հեթանոսս արարի զշնորհս որպէս և ի ձեզ: Զի Իսրայէլ հանի ես յերկրէն Եգիպտոսոց և զփղշտացիսն ի Գամրաց կողմանէ և զասորիսն ի Բոսորայ (տե՛ս Ամոս Թ 7): Եւ զի՛<sup>2</sup> ասէ մարգարէն. «Մեծամեծք նոցա լի են անաւրէնութեամբ, և բնակիչքն խաւսին ստութեամբ: Վասն այնորիկ սկսայց հարկանել զքեզ վասն մեղաց քոց» (հմմտ. Միքի 2 12): // Ո՛չ<sup>3</sup> միայն ատեցին, այլ և բազում ձաղանաւք նախատեցին<sup>4</sup> և ընդ փայտի բեռեալ՝ սպանին: Եւ նորա՝ առ Հայր երթեալ: Եւ զվկայս աստուածութեան նորա, որք քարոզէին զամենակալ թագաւորութիւն նորա, հալածական արարին, զի մի՛ յայտնեսցեն զպատիւ թագաւորութեան նորա:

Առաքեցին առ նա հրեշտակս և ասեն. Ո՛չ կամիմ[ք] զքեզ թագաւորել ի վերայ մեր<sup>5</sup> (ԺԹ 14):

ԿՐ Զոր<sup>6</sup> քաղաքացիս ասաց զհրէայսն<sup>7</sup>: Վասնզի ի նոցանէ ծնաւ ըստ մարմնոյ Տէրն<sup>8</sup>: Որք ասէին ցՊիղատոս<sup>9</sup>. «Զիք մեր թագաւոր, բայց<sup>10</sup> ի կայսերէ» (Յովհ. ԺԹ 15): Եւ դարձեալ. «Մի՛ գրել<sup>11</sup> թագաւոր հրէից» (Յովհ. ԺԹ 21), որք սպանան ի Տիտոսէ սովով և սրով:

ԵՓ. Զոր Մաղաքիա<sup>12</sup> վկայէ. «Մինչչև եկեալ հարից սատակեցից գերկիրն Իսրայելի» (հմմտ. Մաղաք. Դ 5-6): Զվերջին սատակումն նոցա ի հռոմայեցոցն: Յոյց<sup>13</sup>, զոր ասաց Դանիէլ մարգարէն. «Յորժամ տեսանիցէք զպղծութիւն աներածոյն Երուսաղեմի, զի կայցէ ի տեղոջն սրբութեան» (հմմտ. Դան. ԺԱ 31): Եւ<sup>14</sup> Քրիստոս ասաց. «Թողեալ լիցի<sup>15</sup> տունդ ձեր աներակ, և ասացէք լերանց թէ՛ ծածկեցէք զմեզ և բլրոց թէ՛ անկերուք ի վերայ մեր» (հմմտ. ԻԳ 30):

<sup>1</sup> B և ի

<sup>2</sup> B չիք զի

<sup>3</sup> B լս. սրբ.՝ իսկ զՔրիստոս

<sup>4</sup> B նախատանաւք ձաղեցին փիւ ձաղանաւք նախատեցին

<sup>5</sup> B Առաքեցին հրեշտակս զկնի նորա և ասեն, թէ՛ Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր:

<sup>6</sup> B զի որ

<sup>7</sup> B զհրայսն

<sup>8</sup> B Տէր մեր

<sup>9</sup> B ցՊիղատոս

<sup>10</sup> B յ-ն՝ քարած-ջնջած

<sup>11</sup> B գրել

<sup>12</sup> B Մաղաքիաս

<sup>13</sup> B զայս փիւ ցոյց

<sup>14</sup> B նաև

<sup>15</sup> B լիցին

Եւ եղև ի դառնալ<sup>1</sup> նմա՝ առեալ զթագաւորութիւնն (ԺԹ 15):

**ԿՐ** *Ջերկրորդ գալուստն ասէ յերկիր ի դատել զկենդանիս և զմեռեալս:*

**ԻՊ** *Եւ յայնժամ յայտնէ զինքն իւր ընտանի<sup>2</sup> բնութեամբն՝ փառաւք թագաւորութեանն իւրոյ:*

Եւ կոչեաց<sup>3</sup> զծառայան, յորս<sup>4</sup> տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ, եթէ ո՞ր զինչ շահեցաւ (ԺԹ 15):

**218բ** *Նստի ի դատել: Ըստ այնմ՝ «Հայր ո՛չ դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդոյ իւրոյ<sup>5</sup>, // զի ամենեքին<sup>6</sup> պատուեսցեն զՈրդի, նովին սահմանաւ՝ Հաւր» (հմտ. Յովհ. Ե 22):*

**ԵՓ** *Ձի յաւուր<sup>7</sup> յայնմիկ յայտնելոց է<sup>8</sup> վրէժխնդրութիւն Աստուծոյ՝ առնլով համարս յամենեցունց հաւաստի քննութեամբ:*

Եկն առաջինն և ասէ. Տէր մնասն քո տասն մնաս արար (ԺԹ 16):

**ԻՊ** *Մատեան առաջի նորա ըստ կարգի: Ձի, որ կատարեալ ցուցաւ ի գործս առաքինութեան, նախ՝ զիւրն պատմել զառաքինութիւն, յոր և յաւրէ ոք զբանս: Յաղագս կատարեալ բարեգործութեան թուոց է ասացեալ:*

Ասէ<sup>9</sup> ցնա. Ազնիւ ծառայ<sup>10</sup> (ԺԹ 17):

*Ամենայն պատուով փառաւորէ զառաքինացեալսն՝ անուանակցութեամբ: Ձի, զոր Աստուծոյ ետ՝ այր ոմն ազնուական ասելով, նովին անուամբ զծառայան կոչէ:*

Եւ բարի (ԺԹ 17):

**ՈԿ.** *Որպէս ասաց ինքն. «Ձի՛ք ոք բարի, բայց մի Աստուած» (Մարկ. Ժ 18, Ղուկ. ԺԸ 19): Քաջ ծառայ և բարեգործ: Այն իսկ է, բարեգործին զ[ը]նկերին կարիսն տեսանելով՝ հաղորդիլ նմա կարեկցութեամբ:*

**Ձի ի փոքուդ հաւատարիմ եղեր** (ԺԹ 17):

*Ջամենայն երանութիւնս այսու բանիւս յայտ առնէ:*

<sup>1</sup> Բ դառնալն

<sup>2</sup> Բ ընդանի

<sup>3</sup> Բ կոչեալ

<sup>4</sup> Բ որոց

<sup>5</sup> Բ իւրում

<sup>6</sup> Բ ամենեքեան

<sup>7</sup> Բ յաւուրն

<sup>8</sup> Բ յայտնեսցի

<sup>9</sup> Բ եւ ասէ

<sup>10</sup> Բ ծառայ և բարի

**ԻԳ** *Ըստ որում զվատթարսն յանհաւատարիմ լինելոյն<sup>1</sup> դատի և զարդարս ի հաւատարիմ լինելոյն պատուէ: Յառաջագոյն ասաց<sup>2</sup>. «Յանիրաւ մամոնային և յաւտարին չեղէք հաւատարիմ» (ԺԶ 11): Զճշմարիտն և զձերն ձեզ ո՞ հաւատայ: Իսկ աստ ասէ.*

**Ի** *փոքուղ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքաց (ԺԹ 17):*

*Արդ՝ ո՛չ եթէ քաղաք իցէ<sup>3</sup> մարմնաւոր ի հանդերձեալսն, զի*

**219ա** *իշխանս կացուցանէ զնոսա, որք զաւրէնս նորա կատարեցին, // այլ վասնզի բազմապատիկ խոստացաւ: Եւ աստի քաղաքաւք<sup>4</sup> նշանակէ զանիմանալիսն, որոյ ճարտարապետ և Արարիչ Աստուած է:*

**Եկն երկրորդն և ասէ. Մնասն քո<sup>5</sup> (ԺԹ 18):**

**ՍՏ** *Արծաթն քո հնգապատիկ<sup>6</sup> ընտրեալ և փորձեալ ի հողոյ:*

**Հինգ մնաս արար (ԺԹ 18):**

*Արդ՝ յայտնէ զայս սուրբ առաքեալն Պաւղոս. «Իւրաքանչիւր ոք ի ձէնջ, եթէ սաղմոս ունիցին, թէ՛<sup>7</sup> մարգարէութիւն, թէ՛ յայտնութիւն, թէ՛ լեզուս, թէ՛ թարգմանութիւն» (Ա Կորնթ. ԺԳ 26): Իսկ եթէ ի Մատթէոս այլ ազգ կայ առակ, զայս պարտ է ասել, եթէ այլ այս է և այլ<sup>8</sup> այն:*

**Ասէ և<sup>9</sup> ցնա. Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց (ԺԹ 19):**

**ԻԳ** *Եւ սա ընդունի<sup>10</sup> յարդարադատ իրաւանցն Աստուծոյ չափով առաքինութեանն զպարգևսն:*

**Կր.** *Զի ըստ հաւատոցն աճեցուցանել զբան հաւատոցն և զառաւելութիւն գործոցն առաքինութեանց, կարգաւորութիւն յանձինս և ի ժողովուրդս:*

**ՍՏ** *Ուսուցանել և գործել զաստուածայինսն՝ հաճութեամբ<sup>1</sup> զլուսափայլ վարսն:*

<sup>1</sup> Բ լինոյ

<sup>2</sup> Բ լի՛ ասաց

<sup>3</sup> Բ իցեն

<sup>4</sup> Բ քաղաք

<sup>5</sup> Բ քո արար հինգ մնաս

<sup>6</sup> Բ եաւթնապատիկ

<sup>7</sup> Բ եթէ

<sup>8</sup> Բ այլ է

<sup>9</sup> Բ **չէք** և

<sup>10</sup> Բ ընդունի չափով

Եկն և<sup>2</sup> միւսն և ասէ. Տէ՛ր, ահա մնասն քո<sup>3</sup> ծրարեալ ի վարչա-  
մակի (ԺԹ 20):

ԿՐ Այսինքն՝ ո՛չ ի գործ արկ<sup>4</sup> զհաւատոցն բան, մնաց անպտուղ՝  
պատճառելով զանձին<sup>5</sup> և զայլոց ծուլութիւն: Գուցէ, որք աշա-  
կերտինն<sup>6</sup> և ո՛չ անսայցեն իմոյ վարդապետութեանս<sup>7</sup>, և զնոցա  
գործսն յինէն պահանջէիր:

Երկեայ<sup>8</sup> ի քէն, զի այր մի ստամբակ ես. բառնաս, զոր ո՛չ ե-  
ղիր, և հնձես, զոր ո՛չ սերմանեցեր (ԺԹ 21):

ԻԳ Զի թէ հեզ ասացեալ էիր զՏէ՛րն, գոյին իրաւունք պատճառե-  
219բ լոյ: Վստահացայ ի հեզութիւն քո և հեղգացայ: // Իսկ որովհետև  
գիտէիր զնա խիստ և արկանող զտանջանս զգլխով ամբարշտաց<sup>9</sup>,  
պարտ էր զգաստանալ և զարհուրել ի բռնութենէ անտի<sup>10</sup>, և ի  
գործ արկանել զարծաթն, զի մի՛ պատիժս կրեսցես ի ստամբակ  
տեառնէն:

Ասէ<sup>11</sup> ցնա. Ի բերանոյ քում[մ]է դատեցայց զքեզ, ծառա՛յ ան-  
հաւատ<sup>12</sup> (ԺԹ 22):

Զի գիտէիր զդատաւորն պատժող մեղաւորաց: Անհաւատ<sup>13</sup> ա-  
սելով՝ ընկենու ի հաւատոցն զայն, որ ո՛չ սպառնալիքն և ո՛չ  
պատիւն զարթուցին ի գործելն:

Ընդէ՞ր<sup>14</sup> ո՛չ արկէր<sup>15</sup> զարծաթն իմ ի սեղանաւորսն<sup>16</sup> (ԺԹ 23):

ԿՐ. Այսինքն՝ ի լսելիս հաւատացելոց: Զի որպէս մարմինք ի ձեռն  
կերակրոց զաւրանան և տւեն, այսպէս և հոգիք ի ձեռն գիտու-

---

<sup>1</sup> B գաստուածահաճութեամբ  
<sup>2</sup> B չէք և  
<sup>3</sup> B քո, զոր ունէի  
<sup>4</sup> B արկի  
<sup>5</sup> B զանձինս  
<sup>6</sup> B աշակերտին  
<sup>7</sup> B վարդապետութեանս  
<sup>8</sup> B երկնչէի  
<sup>9</sup> A, B ամպարշտաց  
<sup>10</sup> B անդի  
<sup>11</sup> B Եւ ասէ  
<sup>12</sup> B անհաւատ, զի գիտէիր, թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եղի և հնձեմ,  
ուր ոչ սերմանեցի:  
<sup>13</sup> B Արդ՝ անհաւատ  
<sup>14</sup> B Եւ ընդէր  
<sup>15</sup> B ետուր  
<sup>16</sup> B սեղանաւորս

թեան հաւատոց և վարդապետութեան բանի<sup>1</sup> պայծառացեալք լինին:

**ՍՏ** Արդ՝ ի<sup>2</sup> վարդապետս հմուտս և բարի, որք ունին<sup>3</sup> ճշմարիտ վարդապետութիւն, և ի նոցանէ ուսանել զմիտս գրոց, և առնել և զայլս ուսուցանել ի յառնելն: Ի դէպ է:

**ԻԳ** Իսկ աստ<sup>4</sup> իւրաքանչիւր ոք ասացեալ էր<sup>5</sup> բանս, որպէս ամենայն ոք արկանէ արծաթ ի սեղանաւորսն: Եւ ամենայն ումեք հարկ է այս: Եւ որպէս<sup>6</sup> վարդապետացն խրատել զեկեղեցիս, այնպէս<sup>7</sup> և ամենայն ումեք՝ իւրում տանն, որ ընդ իւրում իշխանութեամբ է<sup>8</sup>, վերակացու լինել բարիոք և<sup>9</sup> խրատիչ: Եթէ յառաջնորդաց<sup>10</sup> արիւն ամենայն ժողովրդեանն խնդրի, քանի<sup>11</sup> ևս որդոցն<sup>11</sup>,

220ա զոր ծնաւ և սնոյց, պահանջի: Եթէ ո՛չ՝ // երկի[ւ]ղիւն Աստուծոյ սնուցանէ:

Եւ ես եկեալ տոկոսիւք պահանջ[էի]<sup>12</sup> (ԺԹ 23):

**ՅՀ** Կամի յունկն<sup>13</sup> նոցա զգործոյն<sup>14</sup> աւրինակ: Եւ զհանդէս քեզ պարտ էր առնել և ինձ զգժուարագոյնսն թողուլ:

Ասէ<sup>15</sup> ցապասաւորսն. Առէք ի նմանէ<sup>16</sup> զմնասն և տուք<sup>17</sup> այնմ, որ ունի<sup>18</sup> զտասն մնասն (ԺԹ 24):

**ԿՐ** Հրաման տայ մերկացուցանել ի նմանէ զչնորհս Հոգոյն Սրբոյ, որով արժանաւորեցաւ այնմ<sup>19</sup> շնորհի, զոր թաքոյցն<sup>20</sup>, և

<sup>1</sup> B նախ՝ բանիւ, սրբ.՝ բանից

<sup>2</sup> B ոչ ի

<sup>3</sup> B գրփիս որք ունին բարի և

<sup>4</sup> B աստանաւր առ

<sup>5</sup> B է

<sup>6</sup> B այսպէս և փիս և որպէս

<sup>7</sup> B նոյնպէս

<sup>8</sup> B լինի

<sup>9</sup> B է և

<sup>10</sup> B յառաջնորդաց ոք իցէ

<sup>11</sup> B յորդուոցն

<sup>12</sup> B պահանջի զիմն

<sup>13</sup> A յունկն

<sup>14</sup> B զգործոցն

<sup>15</sup> B եւ ասէ

<sup>16</sup> B դմանէ

<sup>17</sup> B տարայք տուք

<sup>18</sup> B ունիցի

<sup>19</sup> B այնմ

<sup>20</sup> A թաղոյց



մատուցանել<sup>1</sup> տանջանաց, ուր «լալ աչաց է և կրճել ատամանց<sup>2</sup>» (հմմտ. ԺԳ 28):

**ԻԳ** Եւ լուծանել ի հաւատոցն, զոր յայլում վայրի ընդ մէջ կտրել հրաման ետ: Նաև այսու ուսուցանէ, զի զբան հաւատոցն, զոր խոստովանեաց<sup>3</sup> բառնան: Եւ ընդ անհաւատսն պատժեն<sup>4</sup>, զի ծոյլքն ո՛չ կամեցան ստանալ ինչ [յ]անձանց ի բարեացն Աստուծոյ: Արդարութեամբ բառնայ ինքն<sup>5</sup> յայնպիսեացն զայն, զոր ետ ինքն զաւազանին շնորհն<sup>6</sup>, որով որդիք Աստուծոյ արժանաւորեցան կոչիլ, մերկանայ յապստամբացն: Ըստ որում՝ թագաւորք երկրի դատին զիշխան ոք մեղուցեալ: Զպատիւն և զհանդերձ իշխանութեանն հրաման տայ<sup>7</sup> մերկանալ և ապա մատնել<sup>8</sup> դահճացն<sup>9</sup>: Ի նոյն իրաւանց հետեին աստուածայինքն:

**Ասեն<sup>10</sup> ցնա. Տէ՛ր, ունի գտասն մնասն** (ԺԹ 25):

Այս թուի ինձ յաչաղանք: Ո՛չ զի<sup>11</sup> դատաստանի քննութիւն<sup>12</sup> է<sup>13</sup>, և ո՛չ հրեշտակք ասեն ինչ, յորժամ նա հաւասարէ դատելովն, այլ կամի բանիւս յայտնել, թէ արդարոյն<sup>14</sup> այնչափ պարզևս բարի<sup>15</sup> է<sup>16</sup>, զի և հրեշտակաց նախանձ արկանեն:

**220բ** // Որ ունիցի՝ տացի և յաւելցի, և որ ո՛չ ունիցի՝ բարձցի ի նմա[նէ]<sup>17</sup> (ԺԹ 26):

**ՈԿ.** Որ փոյթ ունի<sup>18</sup> յանձին սպասաւորել<sup>19</sup>, ևս առաւել յինքն ամփոփել զպարգևսն Աստուծոյ: Եւ զի ո՛չ ըստ չափոյ վաստակոցն<sup>20</sup> են պարգևքն, այլ ըստ աշխատութեանցն, որում արժանի արարին

<sup>1</sup> B մատուցեալ  
<sup>2</sup> B կրճտել ատամացն  
<sup>3</sup> A նախ՝ խոստովանեն, ապա զըչի ձեռքով սրբ.  
<sup>4</sup> B պատժել  
<sup>5</sup> B **չիք** ինքն  
<sup>6</sup> B շնորհքն  
<sup>7</sup> B տան  
<sup>8</sup> B սպանանել **փիս** մատնել  
<sup>9</sup> B դահճացն հրամայեն  
<sup>10</sup> B Եւ ասեն  
<sup>11</sup> B ի  
<sup>12</sup> B քննուեան  
<sup>13</sup> B **չիք** է  
<sup>14</sup> B արդարոցն  
<sup>15</sup> B բարիս  
<sup>16</sup> B ետ **փիս** է  
<sup>17</sup> B Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ունիցի՝ տացի, և յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ:  
<sup>18</sup> B ունիցի  
<sup>19</sup> B **չիք** սպասաւորել  
<sup>20</sup> B վաստակոյն

զանձինս: Առնուն և յաւելու նոցա և այլ ևս առատութիւն պարգևաց:

Բայց զթշնամիսն իմ<sup>1</sup>, որ ո՛չ կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ (ԺԹ 27):

**ԻԳ** Ձգէ այնուհետև զբանն ի վերայ անհաւատիցն: Եւ դատի զնոցա ժպրհուլութիւն[ն], որք յառաջին գալ[ս]տեան նորա զքաղցրութիւն տեսին, յերկրորդի<sup>2</sup> անդ զսաստկութիւն ծանիցեն: Արդ՝ որ ի խաչին ի Հաւրէ զթողութիւն<sup>3</sup> խնդրէր անաւրինացն. «Զի ո՛չ գիտեն զի՞նչ գործեն» (ԻԳ 34), և «Որ ոք ասէ բան զՈրդոյ մարդոյ՝ թողցի նմա» (Մատթ. ԺԲ 32, Մարկ. Գ 28), զիա՞րդ աստ պահանջէ: Զի անցեալ<sup>4</sup> է ժամանակ երկայնմտութեան, և այժմու ժամանակիս է, իսկ այն ժամանակն՝ իրաւանց և քննութեան և արդարութեամբ հատուցանել: Վասն այնորիկ զայս եդ առաջի, զի մի՛ ոք քաղցրութեամբ անհոգասցի, այլ զգաստն<sup>5</sup> լուեալ զարհուրեսցի ի վրէժ խնդրելոյն:

**ԿՐ.** Արդ<sup>6</sup>՝ կշտամբեալ առաքին ի տանջանս յաւիտենականս, զոր առակաւոր բանն սպանումն<sup>7</sup> ասէ:

**Ստ.** Եւ զի Նաւում ասէ. «Նախանձոտ և քինախնդիր է Տէր» (Նաւոււմ Ա 2): Թէպէտև երկայնամիտ է, սակայն ո՛չ արդարացուցանէ զամբարիչտն<sup>8</sup>, այլ խնդրէ զվրէժս ի հակ(//)առակորդաց և ի թշնամեաց իւրոց (տե՛ս Նաւոււմ Ա 3, 2): Զոր Մատթէոս ասէ. «Զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին» (Մատթ. ԻԲ 13):

**ՍՏ** Ուր հոգին ամենայնիւ խաւարի դառն տրտմութեամբ, ուր ո՛չ է այցելութիւն աստուածային լուսոյն: Որպէս Փիլոն Յիկոնացի գրովն<sup>9</sup> Մովսիսի մեկնէ, եթէ՛ «Նաւարն<sup>10</sup>, որ ի վերայ անդնդոց էր, արտաքս առաքեաց»: Տեսանե՞ս, զի անարժանքն արտաքսին ի բոլոր աշխարհէս և ի դրախտէն Աստուծոյ և յերկնից արքայութեանէն:

**Իբրև**<sup>11</sup> զայս ասաց, գնաց ելանել<sup>1</sup> յԵրուսաղէմ (ԺԹ 28):

<sup>1</sup> B իմ գայնոսիկ

<sup>2</sup> B յերկրորդում

<sup>3</sup> B թողութիւն

<sup>4</sup> B մնացեալ *փի* անցեալ

<sup>5</sup> B գսաստն

<sup>6</sup> B անդ

<sup>7</sup> B սպաննել

<sup>8</sup> A զամբարիչտն B զամբարիչտս

<sup>9</sup> B Եբրայեցի ի գիրս *փի* Յիկոնացի գրովն

<sup>10</sup> B գխաւարն

<sup>11</sup> B Եւ իբրև

Աշակերտաւքն և բազում ժողովրդովք<sup>2</sup>:

**ԻՊ** Յաւրինակ այնոցիկ, զոր հանելոց էր ի դժոխոցն նա: Զի և փութայր յԵրուսաղէմ կատարել զբանս մարգարէիցն և զփրկութիւն աշխարհի, և մահուամբ<sup>3</sup> իւրով ազատել ի մեղաց զծնունդս Աղամայ:

**Իբրև մերձեցան ի Բեթ[թ]բազէ<sup>4</sup>** (ԺԹ 29):

մամբ. Որ է տուն ծնաւտի: Զի ծնաւտ[ն] բանին սպասաւորէ<sup>5</sup>, որով Աղամ լուծանէր զինքն ի բանական սպասաւորութենէ անհնազանդութեամբն, և մարմինն թափուր մնաց ի բնակողէն: Վասն որոյ Յիսուս լինի մարդկան ծնաւտ՝ զաստուածայինն բարբառելով, իսկ:

**Բեթանիայ** (ԺԹ 29):

Տուն սգոյ: Քանզի տուն ուրախութեան էր մարդն վասն աստուածային փչմանն, որ դարձաւ առ փչողն<sup>6</sup> վասն յանցանացն: Եւ անփառ և սգաւոր եղև մարդն յաստուածային աւանդիցն: Եւ ստեղծիչ նորա լինի տուն ուրախութեան Հաւր և բառնայ զտրտմութիւն և զանհնազանդութիւն մարդոյն հնազանդութեամբ մահու:

**Մաւտ ի լեառն<sup>7</sup> Զիթենեաց** (ԺԹ 29):

**221բ ՍՏ** Աստուածային բնութիւն[ն] ի մեր բն(//)ութիւնս<sup>8</sup> մերձենայր, վասնզի ձէթ գիշերոյ է լուծիչ: Եւ Բանն ի Հաւրէ առ մեզ եկեալ՝ միացաւ ի մարմնի և արեգակնապէս ծագեաց, և ելոյծ զմարդկային<sup>9</sup> գիշեր հոգոց:

**Առաքեաց երկուս յաշակերտացն<sup>10</sup>** (ԺԹ 29):

Զմարգարէութիւն<sup>11</sup>, որ ճշմարիտ գուշակէր զմարգեղութիւն Քրիստոսի, և զառաքելութիւն, որ ի Քրիստոսէ կարգեցան «Հա-

<sup>1</sup> B յառաջ ելանել  
<sup>2</sup> B ժողովրդաւք  
<sup>3</sup> A մահվամբ  
<sup>4</sup> B Եւ եղև իբրև մերձեցաւ ի Բեթփազէ և ի Բեթանիայ (կրկ. Եւ եղև... Բեթփա[զէ])  
<sup>5</sup> A սպասավորէ  
<sup>6</sup> B փչողն  
<sup>7</sup> B լեառնն, որ կոչի  
<sup>8</sup> B մերս փխ մեր բնութիւնս  
<sup>9</sup> B զմարդկան  
<sup>10</sup> B յաշակերտացն իւրոց է, ասէ  
<sup>11</sup> B մարգարէութիւն

զարապետք խորհրդոցն Աստուծոյ» (Ա Յոռմ. Դ 1), և Հին և Նոր կտակարանք և վարդապետք նոցա ուղիղք<sup>1</sup>,

մամբ. որք մեկնեն ի Քրիստոս: Ձի, թէ միովն գթեսցի, միևսովն կանգնեսցին: Ձի ի հաւատոցս<sup>2</sup> ցրտացեալքն աստուածային սիրովն ջեռնուն:

Երթայք ի գեւղդ, որ հանդէպ ձեր կայ<sup>3</sup> (ԺԹ 30):

ստ. Ձամենայն ազգս ասէ, զոր աստուածային տեսութեանն իբրև զգեւղ<sup>4</sup> մի առաջի կայր, որ առաքեաց զմարգարէսն յառաջ քան զիւր գալուստն, իսկ զառաքեալսն՝ աստուածային տնաւրէնութեամբն:

Գտանէք էջ կապեալ<sup>5</sup> (ԺԹ 30):

է սա յանմաքուր կենդանեաց վասն պատուիրանազանցութեանն: Ձի թէպէտ աւրէնս ունէին, այլ արդար և սուրբ ո՛չ էին, զի կռոց զոհէին: Ձի այնչափ<sup>6</sup> նշանս արար ի մէջ նոցա յեգիպտոս և յանապատին, և ո՛չ ծանեան զնա: Եւ դարձեալ. մինչև ցայսաւր անգիտանան զՄովսիսի և զմարգարէիցն զրոցն միտս և զզաւրութիւնս, կապանքն՝ մեղքն և անաւրէնութիւն: Որպէս և<sup>7</sup> Դաւիթ ասէ. «Ի գործս ձեռաց իւրեանց կապեցան մեղաւ[որք]» (Սաղմ. Թ 17): Եւ Սողոմոն. «Ի տոռունս մեղաց շաղեալ<sup>8</sup> պատի իւրաքանչիւր ոք» (Առակ Ե 22): Ձի բազմաստուած մոլորութեամբ, զոր կապե(//)աց սատանայ իբրև զգրաստ իւր, և ծառայեցոյց զհինգ<sup>9</sup> հազար ամ աւելի, զոր արձակէ աւետարանական վարդապետութեամբն և մարգարէական և առաքելական կոչմամբն:

Եւ յաւանակ<sup>10</sup>, յորում<sup>11</sup> ո՛չ<sup>12</sup> ոք ի մարդ[կանէ]<sup>13</sup> (ԺԹ 30):

Ժողովուրդ, յորում ո՛չ երբեք եղև բան վարդապետութեանն Քրիստոսի, հեթանոսական ամբոխ:

մամբ. Ձի դեռևս անփորձ էին աստուածապաշտութեանն:

<sup>1</sup> Ե սրբ.՝ ուղիղիչք

<sup>2</sup> Ե հաւատոցն

<sup>3</sup> Ե Երթայք դուք ի գեաւղն, որ հանդէպ մեր կայ:

<sup>4</sup> Ե գեաւղ

<sup>5</sup> Ե Յոր իբրև մտանէք, գտանէք յաւանակ կապեալ

<sup>6</sup> Ե որ անչափ *փխ* զի այնչափ

<sup>7</sup> Ե *չիք* և

<sup>8</sup> Ե շաղախեալ

<sup>9</sup> Ե հինգ

<sup>10</sup> Ե, Ե յովանակ

<sup>11</sup> Ե կապեալ յորում

<sup>12</sup> Ե *չիք* ոչ

<sup>13</sup> Ե մարդկանէ երբեք ոչ նստաւ

Լուծէք<sup>1</sup> և ածէք ինձ<sup>2</sup> (ԺԹ 30):

Եւ դարձեալ. զՆոր Կտակարանս, յորոյ վերայ Հանգեալ Քրիստոս<sup>3</sup>:

Մա. Լուծանիլն՝ ի գրոյն և կապիլն՝ ընդ Հոգոյն Սրբոյ: Ի դաստիարակութենէ աւրինացն՝ յառաքելոցն Հնազանդութիւնն, և ի հրէիցն քահանայից՝ յեկեղեցական<sup>4</sup> վարդապետութիւնս, և եռալ սիրովն Քրիստոսի:

ՍՏ Եւ կամ Հին Կտակարանքն, որ կապեալ էին անյայտութեամբ, զոր լուծանէին<sup>5</sup> Քրիստոսի<sup>6</sup> աշակերտքն:

Եթէ ոք Հարցանէ ձեզ՝ ասասջիք. Տեառն իւրում պիտոյ է<sup>7</sup> (ԺԹ 31):

ԻԳ Յառաջ քան գտիրելն Քրիստոսի և զԹագաւորելն բազում տէրս ունէր<sup>8</sup> յաւանակն<sup>9</sup>, և անդ երկրորդ տեարքն ո՛չ կարացին արգելուլ, յորժամ առաջինն խնդրեաց:

ՈԿ Զի եկն «Հովիւն քաջ» (Յովի. Ժ 11, 14) զիւր ոչխարն խնդրել, որ ձեռաւքն ստեղծ զԱդամ<sup>10</sup> և բանիւ գոյացոյց զարարածս: Եւ եթէ յանդգնի սատանայ, որպէս յանապատին լրբեալ տայր պատասխանի. «Դուք զիմ անունս<sup>11</sup> ասասջիք ի լսելիս նորա, որով կարկի և ափ ի բերան լինի, և Հնազանդի ձերում խորհրդոցդ<sup>12</sup>»:

ԻԳ Զի բռնութեամբ տիրել ո՛չ զաւրէ<sup>13</sup> և առ ոյր<sup>14</sup> ունել<sup>15</sup>, յորժամ ստոյգ Տէրն կոչէ:

222բ Ածին<sup>16</sup> զնա // առ Յիսուս և արկին զնովաւ Հանդերձս և Հեծուցին զՅիսուս (ԺԹ 35):

<sup>1</sup> B Լուծէք զնա

<sup>2</sup> B չիք ինձ

<sup>3</sup> B Եւ դարձեալ... Քրիստոս՝ զրված է ԺԹ 30՝ «Լուծէք... ինձ» տնից առաջ

<sup>4</sup> B յեկեղեցոյ

<sup>5</sup> B լուծին

<sup>6</sup> B չիք Քրիստոսի

<sup>7</sup> B Եւ եթէ ոք Հարցանիցէ զձեզ, թէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս ասացիք ցնա, թէ՛ Տեառն իւրոյ պիտոյ է:

<sup>8</sup> B ունէին

<sup>9</sup> A յովանակն

<sup>10</sup> B զմարդն փիւ զԱդամ

<sup>11</sup> B զիմս անուն

<sup>12</sup> B խորհրդոց

<sup>13</sup> B ոչ զաւրէ ունել՝ սրբ. աջ լս.

<sup>14</sup> B իւր

<sup>15</sup> B չիք ունել

<sup>16</sup> B Իբրև չոգան, որ առաքեցանն, գտին որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն: Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա ցնոսա. Զի՞ լուծանէք զյաւանակը: Եւ նորքա ասեն. Տեառնն իւրում պիտոյ է: Եւ ածին (ԺԹ 32-35)

**Ստ.** Ի վերայ անբան յաւանակին<sup>1</sup> արկանեն աշակերտքն զհանդերձս իւրեանց՝ զբան վարդապետութեան առաքելական, զի առաջին շնորհ և մեծ, թէպէտև ժամանակաւ յետոյ: Իսկ երկրորդ մարգարէութիւնն ի Սուրբ Հոգոյն կարգեցաւ, զի երկու վկայութեամբ հաւատարմասցի տնաւրէնութիւնն Որդոյն Աստուծոյ:

**ԻՊ** Նստաւ նա<sup>2</sup> ի վերայ մաքուր ձորձոց առաքելոցն, զի ո՛չ հանգչի<sup>3</sup> նա յաղտեղեալ հոգիսն,

**Ստ.** այլ ի լուացեալսն աւազանաւն: Զի որպէս աշխատեալն հանգչի<sup>4</sup> ի վերայ գրաստոյ<sup>5</sup>, այնպէս<sup>6</sup> աստուածութիւնն ի սուրբս<sup>7</sup> յ[ը]նդունելիս հանգչի<sup>8</sup> և որք հաճոյ լինին նմա գործովք բարեաց:

**ՄԱմբ** Այլև զանմաքրութիւնն հրէից և հեթանոսաց մահուամբ սրբէր՝ տաճարացուցանելով զմիտս հաւատացելոցն, միաւորեաց<sup>9</sup> ընդ երրորդութեանն: Եւ զհոգիսն լուսաւորէ առաջին փչմամբն, որ նստեալ է<sup>10</sup> յերկինս ի քրոբէական կառս, և ի վերայ առաքելոցն վարդապետութեանն նստի և հանգչի<sup>11</sup>: Եւ զբազումս հրաշագործէ և զերեսանակ վարդապետութեանն ուղղէ յերկինս<sup>12</sup> որպէս Տէր: Քանզի ի հրէից և ի հեթանոսաց կոչեցեալ Սուրբ եկեղեցի՝ յորդեգրութիւնն Հաւրն երկնաւորի:

**Մինչդեռ երթայր ի քաղաքն Երուսաղէմ<sup>13</sup>** (ԺԹ 36):

**ԵՓ** Լնու զմարգարէութիւնն Զաքարիայ, որ ասէ. «Ուրախ լեր յոյժ, դո՛ւստր Սիոնի<sup>14</sup>» (Ձաք. Թ 9), զի ահաւասիկ հասեալ է ժամանակ ուրախութեան քո, զի խոնարհեալ էր<sup>15</sup> գլուխ նորա ի մէջ կոոց: // **223ա** «Աղաղակէ դուստր Երուսաղէմի<sup>16</sup>» (Ձաք. Թ 9), զի մերձ և<sup>17</sup> ավր փրկութեան քո, զոր քարոզեցին մարգարէքն քո<sup>18</sup>: Զի բառնան ի

<sup>1</sup> A յովանակին

<sup>2</sup> B չիք նա

<sup>3</sup> A հանկչի

<sup>4</sup> A հանկչի

<sup>5</sup> B գրաստու

<sup>6</sup> B այսպէս

<sup>7</sup> B սուրբս և

<sup>8</sup> A հանկչի

<sup>9</sup> B և միաւորեաց

<sup>10</sup> B նստեալն էր

<sup>11</sup> A հանկչի

<sup>12</sup> A, B ի յերկինս

<sup>13</sup> B Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն:

<sup>14</sup> B Սիոնի

<sup>15</sup> B է

<sup>16</sup> B Սիոնի և Երուսաղէմի

<sup>17</sup> B է

<sup>18</sup> B չիք քո

քէն տրտմութիւնք և վիշտք, զի լուծանելոց են կապանք բերանոյ քո: «Ահաւասիկ թագաւոր քո գայ ի քեզ» (Ձաք. Թ 9): **Ջորմէ Յակոբ ասաց.** «Մի՛ պակասեցէ պետ և մարգարէ<sup>1</sup>, մինչև եկեսցէ, որ իւրն է թագաւորութիւն<sup>2</sup>» (հմնտ. ԾԱՆդ. ԽԹ 10): **Ջի յայտ արասցէ, եթէ վասն Տեառն մերոյ ասացաւ այս:**

**ԻԳ** Որ նշանաւոր յաւանակաւն<sup>3</sup> բաժանէր զնա ի մարմնաւոր բունն<sup>4</sup> թագաւորացն, որք շքով մտին յերուսաղէմ: Եւ յայտ արարեալ զհեզութիւն այսր<sup>5</sup> թագաւորի, որ գայ ի քեզ հեծեալ<sup>6</sup> յէշ և յաւանակի<sup>7</sup> նորոյ, և այլ<sup>8</sup> ծածուկ զաւրութիւն նորա<sup>9</sup>:

**ԵՓ** «Սատակէ զկառս յեփրեմայ և բառնայ զերիվարս յերուսաղէմ<sup>10</sup>» (Ձաք. Թ 10), **այսինքն՝ զթագաւորութիւն և զտէրութիւն սատանայի, զի<sup>11</sup> սպառեցաւ կարգ թագաւորացն Իսրայելի՝ գալստեամբն Քրիստոսի<sup>12</sup>:**

**ԵԼ<sup>13</sup> զհանդերձ իւրեանց տարածանէին զճանապարհաւն** (ԺԹ 36):

Մա. **Ջհնագանդութիւն աւետարանին ընդ ամենայն տիեզերս, որ<sup>14</sup> սիրեցին սիրով զսիրտս իւրեանց: Ըստ մարգարէին.** «Պատուեցէք առաջի Տեառն<sup>15</sup> զսիրտս և մի՛ զհանդերձն<sup>16</sup>» (Յովէլ Բ 13): **Եւ որք ճանապարհ կազմէին յինքեանս չորից աւետարանչացն, որովք գնայ ի վերայ ողջախոհացն<sup>17</sup>, և բերկրի թագաւորն Քրիստոս: Արդ՝ միացեալ ի մարմնի Աստուած Բանն, որ զգիրն<sup>18</sup> որպէս ձորձս ի ճանապարհի տարածանէին, զի Արարիչն զհողեղէն բնութիւնս միացոյց ընդ ինքեան: Վասնզի հոգով մեռեալ էր**

<sup>1</sup> B յերանաց նորա *փխ* և մարգարէ  
<sup>2</sup> B *սրբ.* թագաւորութիւնն  
<sup>3</sup> A, B յովանակաւն  
<sup>4</sup> B բուն  
<sup>5</sup> B այսմ  
<sup>6</sup> B և հեծեալ  
<sup>7</sup> A, B յովանակի  
<sup>8</sup> B այժմ  
<sup>9</sup> B նորա և իմանալի թագաւորութիւն նորա  
<sup>10</sup> B Երուսաղէմի  
<sup>11</sup> B կամ զի  
<sup>12</sup> B գալստեամբն Քրիստոսի՝ *սրբ. ձախ լս.*  
<sup>13</sup> B Եւ մինչդեռ երթայր  
<sup>14</sup> B որք  
<sup>15</sup> B *չիք* առաջի Տեառն  
<sup>16</sup> B զհանդերձս  
<sup>17</sup> B միջախոհացն  
<sup>18</sup> B զգիրս

223բ մարդն, զիւր մարմին արար անշունչ Տէրն: // Եւ զձորձս, այսինքն՝ մեռեալ բնութիւնս<sup>1</sup> մեր ճանապարհ եղև Քրիստոսի<sup>2</sup>: Եւ հրաժարեալքն ի Տեառնէ անմաքուր վարիւքն<sup>3</sup>, եղեն Յիսուսի մաքուր ճանապարհ:

Եւ զառ ի վայր լերինն Ձիթենեաց սկսաւ ամենայն ժողովուրդն ուրախութեամբ արհնել<sup>4</sup> զԱստուած<sup>5</sup> (ԺԹ 37):

ՍՏ Գուցէ արդևք ամբոխն, որ աղաղակէր<sup>6</sup>, աշակերտացն բազմութիւնքն, որ արհնէին անդ, որ<sup>7</sup> խոստովանեցան զնա Քրիստոս<sup>8</sup>:

Ասէին. Աւրհնեալ, որ եկն, և գալոցն է անուամբ Տեառն<sup>9</sup> (ԺԹ 38):

ԻԳ Վասնզի հոգի մարգարէութեանն շարժեաց զառաքեալսն յարհնել զնոր արքայն, որ եկն<sup>10</sup> ի նորոգել զաշխարհս: Եւ զերկրորդ գալուստ[ն] մարգարէանային:

ՄԱՃ Մատթէոս ասէ. «Որ առաջի» (Մատթ. ԻԱ 2) երթային՝ հայրապետութիւնք, և մարգարէութիւնք, քահանայութիւնք, թագաւորութիւնք, դատողութիւնք, ծերոցն ատեան, դպրացն և փարիսացոցն դաս, և Յովհաննու կարապետական կոչումն: Իսկ զկնի երանելի առաքեալքն, և մեծ վկայքն, և վարդապետք, և առաքելոցն քարոզութիւն, և աւետարանին կոչումն՝ նորածին մարդիք:

Աւրհնեալ, որ գաաղ<sup>11</sup> թագաւոր յանուն Տեառն (ԺԹ 38):

Խոստովանէին համագոյ Հաւր և անմեկնելի: Իջեալ յերկնից՝ զգեցաւ մարմին և մնաց ամենեկին ի ծոց Հաւր, նստեալ ի վերայ քերովբէից բաւանդակ աստուածախառն մարմնով, և ի գիրկս Կուսին աստուածացեալ կերպիւն, զոր<sup>12</sup> սրբէական<sup>1</sup> կառսն լնու մարմնացեալ աստուածութեամբն:

<sup>1</sup> Բ բնութեան

<sup>2</sup> Բ Քրիստոս

<sup>3</sup> Բ սրբ. վարուքն

<sup>4</sup> Ը արհնեալ

<sup>5</sup> Բ Եւ իբրև այն, ինչ մերձ եղև զառ ի վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ արհնել զԱստուած ի ձայն մեծ:

<sup>6</sup> Բ աղաղակէին

<sup>7</sup> Բ որք

<sup>8</sup> Բ Քրիստոս և ճշմարիտ Աստուած

<sup>9</sup> Բ Վասն ամենայն զաւրութեանցն, զոր տեսին. և ասէին. Աւրհնեալ, որ գայ թագաւոր յանուն Տեառն (ԺԹ 37-38):

<sup>10</sup> Բ եկեալ *փխ* որ եկն

<sup>11</sup> Բ Վասն ամենայն եղելոց զաւրութեանցն, զոր տեսին և ասէին. Աւրհնեալ, որ գայ (ԺԹ 37-38)

<sup>12</sup> Բ և



**Աւրհնեալ եկեալ յանուն Տեառն (հմմտ. ԺԹ 38):**

*Վասնզի Մովսէս և մարգարէքն զայսպիսի եկաւորութիւն գուշակեցին: Եւ քահանայքն միշտ ընթեռնուին և ակն ունէին աստուածային գալստեանն:*

**224ա** //«Եւ այլք ոստս ի ծառոց հատանէին և տարածանէին ի ճանապարհին» (Մատթ. ԻԱ 8, *հմմտ.* Մարկ. ԺԱ 8):

*Շարժեաց Հոգին Սուրբ զբազմութիւն քաղաքին ելանել ընդառաջ Տեառն՝ առեալ ոստս արմաւենեաց և ձիթենեաց արկանէին զճանապարհաւն: Զի որպէս ի ժամանակի ծնընդեան նորա, ի Հոգոյն Աստուծոյ յորդորեալք<sup>2</sup>, մոգքն զխորհրդական ընծայսն մատուցին նմա՝ յանդիմանելով զհրէայսն, որք ակն ունէին գալստեան նորա և յետս կացին, նոյնպէս և աստ յանդիմանին ի տգիտացն, որք<sup>3</sup> ծանեան զեկեալ թագաւորն: Եւ աւրհնաբան դասիւքն ընդառաջ ելանել մատուցանեն զոստս ի ծառոց Տեառն, որ ասաց. «Բխեսցէ երկիր ծաղիկ<sup>4</sup> և ծառ պտղաբեր» (հմմտ. ԾՆԱՊ. Բ 9): Եւ որպէս յայնժամ զոսկին և զկնդրուկն, զոր<sup>5</sup> զիւաց մատուցանէին, դարձուցին առ Տէրն, որ ասաց<sup>6</sup>. «Իմ է ոսկի և արծաթ» (ԱՆՁԷ Բ 9) և ամենայն արարածք: Նոյնպէս և աստ զպաշտաւն կռոցն, զոր թաւ ոստաւք մատուցանէին, Տեառն ընծայեցին՝ ստոյգ և ճշմարիտ Աստուծոյն:*

**Խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս Աստուծոյ<sup>7</sup> (ԺԹ 38):**

**ԻԳ** *Զոր վերինք ի ժամանակի ծնընդեանն առ ներքինս բարբառեցան, նոյնպէս<sup>8</sup> աստ ներքինքս վերնոցն տան խաղաղութիւն՝ փառաւք հանդերձ յայտ առնելով, թէ Տէր նոցա և մեր զերկուս[ս] ի մի Աստուած թագաւորութիւն, և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի:*

**Ոմանք ի փարիսացոցն մատեան առ Յիսուս և ասեն. Սաստեայ աշակերտացդ քո<sup>9</sup> (ԺԹ 39):**

*Զի լռեսցեն<sup>1</sup>:*

<sup>1</sup> Բ սերովբէական  
<sup>2</sup> Բ յորդորեալ  
<sup>3</sup> Բ որ  
<sup>4</sup> Բ զծաղիկ  
<sup>5</sup> Բ զոր երբեմն  
<sup>6</sup> Բ ասաց մարգարէիւն  
<sup>7</sup> Բ *չիք* Աստուծոյ  
<sup>8</sup> Բ նոյն  
<sup>9</sup> Բ Եւ ոմանք ի փարիսացոցն յամբոխէ անտի ասեն ցնա. Վարդապետ, սաստեա՛ աշակերտացդ քոց:

224բ մա. Իսկ քահանայքն և դպիրքն հեղձնուին // ի նախանձուէն և ո՛չ կարէին տեսանել զանմուտ արեգակն, որ մտաւք և բբաւք կուրացան կամաւ<sup>2</sup> փառամոլութեամբ ի<sup>3</sup> բարբառոյ տղայ աշակերտացն, զոր Հոգին Սուրբ արար աստուածաբան: Որք մատամբ ցուցանէին, թէ՛ «Որ գալոցն է» (Յովհ. Ա 27), դա՛ է, և որ միւս անգամ գալոցն է, որ<sup>4</sup> այժմ եկն՝ կոչելով յանճառելի յորդեգրութիւն, և դարձեալ գայ հատուցանել<sup>5</sup> ըստ գործոց մարդկան: Այն, որ ի վեր ի սրբէիցն<sup>6</sup> ընդունի զսրբասացութիւն, և աստ ի տղայոցս<sup>7</sup> սպասաւորի:

«Ի մտանելն յԵրուսաղէմ» (Մատթ. ԻԱ 10):

Աստուած մարդակերպ: Ի վեր աստուածութիւն[ն] սերորէիցն երևի իմանալի տեսութեամբ ըստ նոցա կարողութեանն: Եւ աստ զգալի բնութեամբ, Աստուած միութեամբ շաւշափելի<sup>8</sup> ընու գամենայն կարողապէս. «Զերկինս թգաւ և գերկիր քլաւ» (Ես. Խ 12):

**ԻՊ** Քանզի<sup>9</sup> նոքա ի մտաց ո՛չ կամէին տալ նմա բարեբանութիւն: Հոգին Սուրբ ետ բան մտաց տղայոցն և շարժեաց զլեզուսն ստնդիացելոցն<sup>10</sup>, և յայտնեն որդի Դաւթի ըստ մարմնոյ և Աստուած<sup>11</sup> Հաւր բնութեամբ Որդի և եղելոց գոյացուցիչ:

**ՍՏ** Լցաւ<sup>12</sup> մարգարէութիւն Դաւթայ. «Ի բերանոց մանկանց<sup>13</sup> տղայոց ստնդիացոց<sup>14</sup> կատարեցէր աւրհնաբանութիւն<sup>15</sup>» (Սաղմ. Ը 3)՝ Արարչին Դաւթի և ամենայն եղ[ել]ոց:

Եւ ասէ Յիսուս. Եթէ դոքա լուսցեն՝ քարինք [աղաղակեսցեն]<sup>16</sup> (ԺԹ 40):

<sup>1</sup> B *չիք* զի լուսցեն

<sup>2</sup> B կամաւք

<sup>3</sup> B և

<sup>4</sup> B *չիք* որ

<sup>5</sup> B հատուցանէ

<sup>6</sup> B վերին սրովբէին *փիւ* վեր ի սրովբէիցն

<sup>7</sup> B տղայոց

<sup>8</sup> B շաւշափի և

<sup>9</sup> B Արդ՝ քանզի

<sup>10</sup> A ըստընդիացելոցն

<sup>11</sup> B Աստուծոյ

<sup>12</sup> B Եւ լցաւ

<sup>13</sup> A մանկանց

<sup>14</sup> A ստանդիացոց B ստընդիացոց

<sup>15</sup> B գաւրհնութիւն Աստուծոյ

<sup>16</sup> B Պատասխանի ետ և ասէ. Ասեմ ձեզ, զի և թէ դոքա լուսցեն, քարինքդ աղաղակեսցեն:

**ԿՐ** *Զհեթանոսաց կոչումն առականոր բանիւն<sup>1</sup> եցոյց, որք հանգոյն<sup>2</sup> քարանց ունէին սիրտ և՝ ղիւամոլ կռապաշտութեամբն անտառացեալք<sup>3</sup>:*

**Մա.** *Կամ քահանայքն, որ անպտուղք էին ի հաւատոցն, և հանգերձեալ // էին յաշակերտացն յորդորիլ ի փառաբանութիւն Քրիստոսի, յորոց Նիկողեմոս<sup>4</sup> և Կայիափայ և<sup>5</sup> եւթեանքն Ստեփանոսեանք և հազարացն բազմութիւնքն<sup>6</sup>, որք զկնի յարութեանն հաւատացին ի Քրիստոս: Եւ կամ երանելի առաքեալքն, որք<sup>7</sup> կարծր և անշարժ հաւատով հաստատեցան ի հիմունս եկեղեցոյ: Ըստ որում և Պետրոս դաւանեցաւ աստուածային բերանովն՝ խոստովանելով զիս ի Հաւրէ իջեալ անորիչ: Այսպէս քարինք՝ զմարգարէութիւն[ն] և զթագաւորութիւն[ն], կոչէ Գիրն<sup>8</sup>: Քարինք սուրբ հոլովացան յեկեղեցի նորա<sup>9</sup>՝ զերանելի առաքելոցն քարոզութիւն, որ յոլորտս տիեզերաց եհաս, որ քարացեալ էին: Եւ արդ՝ աղաղակեն զՈրդոյ եկաւորութիւն, Աստուած միացեալ ի մարմնի անորիչ ի Հաւրէ, բոլորով<sup>10</sup> յերկրի, բովանդակ ընդ Հաւր, նստի ի քերթէական<sup>11</sup> կառս յերկինս: Եւ ի վերայ անմաքուր կենդանեաց նստեալ յերկրի<sup>12</sup>՝ մտանէ յերուսաղէմ:*

«Ասեմ ձեզ» (ԺԹ 40), կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբր[ահամու]:

Այսինքն՝ անհաւատ և անծնունդ ի քարացեալ հեթանոսաց<sup>13</sup> ծնցին մանկունք ըստ հաւատոցն Աբրահամու, մտերիմք, որք զիմս աղաղակեսցեն եկաւորութիւն մարմնապէս և աստուածաբար:

**ԻԳ** *Արդ՝ զայս առակ փարիսացիքն ո՛չ իմացան և յոյժ երկեան ի բանէ անտի, եթէ գուցէ «լուեսցեն» նոքա և «քարինքն աղաղակեսցեն» ի յանդիմանութիւն նոցա, վասն որոյ լուռ եղեն: Արար և զայս ի ժամ խաչին, զի ամենայն // արարածք ի միասին աղաղակ բարձին առ նոսա: Իսկ մեք զաստուածավայելուչ աւրս տաւ-*

<sup>1</sup> B բանիւս  
<sup>2</sup> B անգգայ  
<sup>3</sup> B քարացեալք էին *փիւ* անտառացեալք  
<sup>4</sup> B Նիկողիմոս  
<sup>5</sup> B և Պաւղոս և  
<sup>6</sup> B բազմութիւն  
<sup>7</sup> B որ  
<sup>8</sup> B կոչեն գիրք  
<sup>9</sup> B թաւակեցան յերկրի մերում *փիւ* հոլովեցան... նորա  
<sup>10</sup> B բոլորովին  
<sup>11</sup> B քրթովական  
<sup>12</sup> A գրիչը սրբագրել է աջ լս. B չիք յերկրի  
<sup>13</sup> B յանհաւատ և յանծնունդ հեթանոսաց քարացելոց

նելով, կնքելով<sup>1</sup> զբանս՝ ընդ տղայսն փառաբանեսցուք<sup>2</sup> զսարսափելի բարեբանութիւն<sup>3</sup>, ընդ աշակերտսն սպասաւորեսցուք գալստեանն Տեառն<sup>4</sup>, ընդ ժողովրդոցն զսիրտս<sup>5</sup> և զզգեստս սփռեսցուք<sup>6</sup> ոտից Արարչին՝ հետեւելով յերկրի, և<sup>7</sup> հաղորդեսցուք աստուածային տնաւրէնութեանն<sup>8</sup> Քրիստոսի: Եւ անորիչ և համապատիւ Երրորդութեանն փառք և զաւր[ութիւն]<sup>9</sup>:

Տեսեալ<sup>10</sup> զքաղաքն՝ ելաց ի վերայ նորա<sup>11</sup>. Եթէ գիտէիր դու<sup>12</sup>, գոնեայ<sup>13</sup> յաւուրս յայսմիկ<sup>14</sup> զխաղաղութիւն<sup>15</sup> քո, բայց այժմ ծածկեցաւ յաչաց<sup>16</sup> քոց (ԺԹ 41-42):

**ՍՏ** Արդ՝ կռ[ւ]րութիւն փոքրիչատէ եղև Իսրայելի: Եւ ծածկեցաւ յերեսաց Երուսաղեմի խաղաղութիւն նմա, վասնզի ո՛չ գիտաց զայդ յաւուր գալստեանն Քրիստոսի: Որպէս Ովսէ<sup>17</sup> մարգարէ ասէ<sup>18</sup>. «Բայց դու, Իսրայէլ<sup>19</sup>, լուսով<sup>20</sup> աւրինացն և մարգարէիցն և քահանայիցն, աչք քո խաւարեցան» (հմմտ. Յովէլ Բ 10, Գ 15):

**ԵՓ.** Եւ Զաքարիայ ասէ «զխաղաղութիւն քո<sup>21</sup>»՝ «Խաւսեսցի ընդ հեթանոսս» (հմմտ. Ձաք. Է 5)՝ ակնարկելով<sup>22</sup> վասն Աւետարանի նորա, զի ելանէր ի հրէից և տարածէր<sup>23</sup> ի մէջ հեթանոսաց: Կամ իբրև զՅակոբայն, զի ասէ. «Ի նա հեթանոսք յուսասցին» (Յռմ. ԺԵ 12): Այնոքիկ, որ ի սուր և ի սատակումն համարէին վասն անաւրէնութեան իւրեանց, ջուր աւազանին և մկրտութիւն[ն] քաւեաց զնոսա:

<sup>1</sup> B կնքեսցուք

<sup>2</sup> B բարեբանեսցուք

<sup>3</sup> B փառափանութիւն

<sup>4</sup> B **չիք** գալստեամբն Տեառն

<sup>5</sup> B գոսկի

<sup>6</sup> B տարածեսցուք

<sup>7</sup> B **չիք** և

<sup>8</sup> B տնաւրինութեանն

<sup>9</sup> B **չիք** և զաւրութիւն

<sup>10</sup> B Եւ իբրև մերձեցաւ, տեսեալ

<sup>11</sup> B նորա և ասէ

<sup>12</sup> B **չիք** դու

<sup>13</sup> B գոնէ

<sup>14</sup> A յայսմիք

<sup>15</sup> B զխաղաղութիւնն

<sup>16</sup> B յերեսաց

<sup>17</sup> B Ովսէէ

<sup>18</sup> B ասաց

<sup>19</sup> B Իսրայէլ

<sup>20</sup> B յուսով

<sup>21</sup> B **չիք** քո

<sup>22</sup> B ակնարկէ

<sup>23</sup> B տարածանէր

**Զի եկեսցեն աւուրք և պատեսցեն զքեւ թշնամիք քո, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց, և յատակեսցեն զորդիս քո ի քեզ<sup>1</sup>** (ԺԹ 43-44):

**226ա ԻԳ** *Տեսանէր ամենատես ակնն զլնուլ // ձորոյն Գեթսամէնի<sup>2</sup> զիակամք անթաղ մեռելոցն: Որպէս ասէ Եսայի. «Եղիցին դիակուունք նոցա որպէս<sup>3</sup> աղբ<sup>4</sup> զճանապարհաւն<sup>5</sup>» (Ես. Ե 25), ի սովոյ հացի և ի ծարաւոյ ջրոյ: Աշխարհ<sup>6</sup> զթշուառութիւն ապախտաւորացն:*

**ԻԳ.** *«Իբրև<sup>7</sup> [զ]հաւ մի թուեան փառք նոցա<sup>8</sup>» (հմմտ. Ովստ Թ 11). ասէ Ովսէ<sup>9</sup> մարգարէ վասն իշխանութեանն կամ հոգևոր պաշտաւն նոցա: Զի հատան ի նոցանէ քահանայք և թագաւորք և իշխանք, փրկիչք, զի թէպէտ սնուցանիցեն<sup>10</sup> որդիս, սատակեցից զնոսա ի մարդկանէ<sup>11</sup>: Ըստ այնմ, եթէ՝ «Տուր նոցա արգանդ անորդիս և ստինս ցամաքեալս» (Ովստ Թ 14):*

**Ո՛չ թողուցուն քար ի քարի վերայ ի<sup>12</sup> քեզ** (ԺԹ 44):

**ԻԳ.** *Ի զաւրացն հռոմայեցոց յատակեցաւ զեղեցիկ և մեծամեծ<sup>13</sup> ապարանք նոցա, և քաղաք<sup>14</sup> նոցա քակեցաւ, և տաճարն՝ որ ի նմա: Եւ քակտեցան քարինք շինուածոց<sup>15</sup> նորա:*

**ԵՓ** *Վասն որոյ Ովսէ<sup>16</sup> ասէ. «Ծանիցէ Իսրայէլ<sup>17</sup> անմիտ» (հմմտ. Ովստ Է 11), քանզի անմիտն ո՛չ խրատի խրատովն<sup>18</sup>, իմաստնացուցանէ զնոսա փորձանք<sup>19</sup> [և] անմիտք ասէ<sup>20</sup> չարք և ո՛չ հաւատա-*

<sup>1</sup> B Զի եկեսցեն աւուրք ի վերայ քո և պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ, և պաշարեսցեն զքեզ և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց, և յատակեսցեն զքեզ և զորդիս քո ի քեզ:  
<sup>2</sup> B Գեթսամանի  
<sup>3</sup> B Իբրև  
<sup>4</sup> A ախբ B գաղբ  
<sup>5</sup> B զճանապարհայն  
<sup>6</sup> B ապաշաւէ  
<sup>7</sup> B Արդ՝ Իբրև  
<sup>8</sup> B նորա  
<sup>9</sup> B Ովսէէ  
<sup>10</sup> B սնուցանեն  
<sup>11</sup> A մարտկանէ  
<sup>12</sup> B յամենայնի ի  
<sup>13</sup> B չիք և մեծամեծ  
<sup>14</sup> B քաղաքք  
<sup>15</sup> B շինուածոյ  
<sup>16</sup> B և Ովսէէ  
<sup>17</sup> B Իսրայէլ  
<sup>18</sup> B և խրատովն  
<sup>19</sup> B փորձին  
<sup>20</sup> B ուղղին չարք *փխ* ասէ

ցեալք, զի Իսրայէլ<sup>1</sup> զվկայութիւն մարգարէիցն յանձն ո՛չ էառ հաւատալ ի Քրիստոս: Մինչդեռ ի շինութեան էր, ո՛չ կամեցաւ գոհանալ զչնորհացն Տեառն: Կռփեցար, չարչարեցար<sup>2</sup>:

**Եւ**<sup>3</sup> ո՛չ ծանեար զժամանակ այցելութեան քո (ԺԹ 44):

226բ **Ձիք** ազգ թշուառական իբրև զնոսա, որ այնքան մեծի շնորհին և այցելութեան արժանացան<sup>4</sup>, մինչ զի զԱստուած տեսին ի մարմնի միացեալ և եկեալ ի խնդիր կորուսելոցս՝ փրկել և կեցուցանել: Եւ այսքան զգութ խնամոց առատութեան<sup>5</sup>, // զի ո՛չ այսպէս ամենայն ազգաց արար Տէր, որպէս որդոցն Իսրայելի: Իսկ նոքա ուրացան և յետս կացին, մատնիչք և սպանողք եղեն առաջնորդին կենաց: Թէպէտև կեանքն ո՛չ մեռանի, բայց նոքա ետուն զպատիժս<sup>6</sup> յաւրինակ անդի յանվրէպ<sup>7</sup> տանջանաց հատուցմանն:

**ԵՓ** **Ձի** ո՛չ ծանեան զՏէր և զողորմութիւն նորա, մինչդեռ «Ամպն Հովանի էր ի վերայ նոցա» (Թ 34), և համբոյ[ր] որթուն<sup>8</sup> ի շրթունս նոցա, և մինչդեռ մանանայն յորովայնի նոցա, հայհոյութիւն դառն ի լեզուս նոցա:

**Մտեալ**<sup>9</sup> ի տաճարն՝ սկսաւ հանել զաղաւնավաճառսն և զգնողսն<sup>10</sup>, և սեղանս<sup>11</sup> հատավաճառացն ցրուեաց (ԺԹ 45):

**ԿՐ** **Վասնզի** վաճառաշահութիւնք գնողացն<sup>12</sup> և վաճառողացն<sup>13</sup> յաճախագոյն էր ի տանն, զի աւտարացն եկելոցն առ ձեռն գտցի, յորժամ կամիցի ոք գնել և մատուցանել: Նաև, զոր ժողովէին քահանայքն ի պատարագաց անտի<sup>14</sup> զչորքոտանիս և զթռչունս՝ առ ի շահ անձանց խորամանկելով<sup>15</sup>, վասն այսորիկ և Տէրն մտանէր ի տաճարն և հանէր զպատարագաց նոցա զպատրաստութիւն՝ առ ի գուշակել նոցա զխափանումն պատարագաց իւրեանց և զկոր-

<sup>1</sup> Ե հաւատացեալ Իսրայել: Ձի

<sup>2</sup> Ե սրբ.՝ վասն որոյ կռփեցան և չարչարեցան

<sup>3</sup> Ե Փոխանակ զի *փի* և

<sup>4</sup> Ե արժանի եղեն

<sup>5</sup> Ե առատութեան ընկալան

<sup>6</sup> Ե զպատիժն

<sup>7</sup> Ե անտիանվրէպ

<sup>8</sup> Ե որթոյն

<sup>9</sup> Ե Եւ մտեալ

<sup>10</sup> Ե զգնաւդս

<sup>11</sup> Ե զսեղանս

<sup>12</sup> Ե զխաւղացն

<sup>13</sup> Ե վաճառաւղացն

<sup>14</sup> Ե անդի

<sup>15</sup> Ե խորամանկելով

ծանուամն ազգին և զղատարկութիւն տանն: Թէ<sup>1</sup> զպատարագն, որ յաղագս կռոցն զոհիցն, որոշելոյ զնոսա հրամայեաց<sup>2</sup> առ<sup>3</sup> անգամ մի մատուցանել<sup>4</sup>, և զի դադարելոց էր, զոր մատուցին ամս ինն հարիւր<sup>5</sup>:

**ԻԳ** 227ա Նաև վրէժխնդիր լինի ակրինացն, որում նոքա համբաւէին, թէ լուծիչ է, և ինքեանք առ<sup>6</sup> ոտն հարկանէին: //Վասնզի գտաճարն, որ այնքան էր ահն, զի անսուրբ ոք ո՛չ համարձակէր մերձենալ յորմս<sup>7</sup> տանն, անարգեցին:

Ասէ<sup>8</sup> ցնոսա. Գրեալ է. Տուն<sup>9</sup> իմ տուն աղաւթից կոչեցի<sup>10</sup>, և դուք արարէք զդա<sup>11</sup> այրս աւազակաց (ԺԹ 46):

Ստ. Վասն որոյ և զԵսայի ի մէջ բերէ նոցա ամբաստան (տե՛ս Ես. Կ 7), զի տեղի վաճառի արարին գտաճարն և աւազակաւորէն զրկելոյ:

Իվ. Յանդիմանէ<sup>12</sup> զնոցա վատթարութիւն[ն] ի սկզբան անդ և ի կատարածին, զի գտեղին աղաւթից և պատարագաց արարին տեղի խաբէութեան և նենգութեան<sup>13</sup>:

Իսկ Մատթէոս ասէ. «Մատեան առ նա կաղք և կոյրք և բժշկեաց զամենեսին<sup>14</sup>» (Մատթ. ԻԱ 14):

Կր. Բժշկելով զպէսպէս հիւանդութիւնս՝ զգաւրութիւն իւր և զիշխանութիւն ցուցանէր: Զայս տեսեալ քահանայիցն՝ ո՛չ համարձակէին ընդդէմ հրամանին:

Եփ. Մարգարէացաւ Զաքարիայ վասն Քրիստոսի արդար ասելով (տե՛ս Զաք. Թ 9), զի պնդեցաւ ի վերայ բանին ճշմարտութեան<sup>15</sup> և ո՛չ հատ<sup>16</sup> գոյոյ կորուսելոցն: Եթող<sup>17</sup> նա զմեղ[ս] աներևոյթս և

1 B և  
2 A հրամայեալաց  
3 B որ առ  
4 B մատուցանել հրամայեաց  
5 B լս. ավելացված՝ ՌՇԺ (1510)  
6 B չիք առ  
7 A ի յորմ  
8 B Եւ ասէ  
9 B և եղիցի տուն  
10 B չիք կոչեցի  
11 B դրփիս զդա արարէք  
12 B դարձեալ յանդիմանէ  
13 B զրկանաց նենգութեամբ  
14 B զնոսա փիս զամենեսին  
15 B ճշմարտութեանն փիս բանին ճշմարտութեան  
16 B Եհատ  
17 B Եւ Եթող

բժշկեաց զցաւս սաստ<sup>1</sup> յայտնիս: Փրկիչ, զի ազատեաց զարարածս ի ծառայութենէ Հնազանդութեան<sup>2</sup> կռոցն:

Իբրև տեսին<sup>3</sup> քահանայապետքն և դպիրքն<sup>4</sup> զսքանչելիսն, զոր արար, և մանկտին<sup>5</sup>, որ աղաղակէին աւրհնութիւն որդոյ<sup>6</sup> Դաւթի, բարկացան և ասեն (հմմտ. ժԹ 47):

Մա. Լսես զի՞նչ ասեն դոքա<sup>7</sup>: Զի մարգարէքն աղաղակէին և մանկտին ի գիրկս մարցն ի տխեղծ<sup>8</sup> հասակին քարոզք լինէին: Իսկ հր[է]յայքն ո՛չ հաւանին այնպէս, այլ՝ հանդերձ այլ սքանչե-  
227բ լաւքն<sup>9</sup>: Եւ յոր(//)ժամ ի մանկտոյն լսէին զփառաբանութիւն ի վերայ եկեալ՝ հեղձուցանէին: Զայս Քրիստոսի պարտ էր ասել ցնոսա, եթէ՝ «Ո՛չ լսէք արդևք զի՞նչ ասեն<sup>10</sup> դոքա»:

«Ովսաննա<sup>11</sup>, աւրհնեալ եկեալ թագաւորութիւն հաւր մերոյ Դաւթի: Խաղաղութիւն յերկիր և փառք ի բարձ[ունս]<sup>12</sup> (Մարկ. ԺԱ 9-10):

Քանզի իբրև Աստուծոյ աւրհնութիւնս երգէին մանկտին՝ զմարդկութիւն և զաստուածութիւն միացեալ խոստովանելով փառաւորէին:

ԻԳ Վասնզի<sup>13</sup> լռել աշակերտացն՝ բացան անխաւս բերանք մանկանցն, և, որ ո՛չ ունէին բան տղայ գոլով անխաւս՝ ընդ հրեղէն լեզուացն երգէին աւրհնութիւն Աստուծոյ:

«Ասէ ցնոսա Յիսուս. Այո<sup>14</sup>, չիցէ<sup>15</sup> ընթերցեալ ձեր, թէ ի բերանոյ մանկանց տղ[այ]ոց հաստատե[ս]ցէ զաւրհնութիւն<sup>16</sup> քո» (Մատթ. ԻԱ 16):

<sup>1</sup> B զնոսա *փխ* զցաւս սաստս

<sup>2</sup> B Հնազանդութենէ ծառայութեան

<sup>3</sup> B Եւ ուսուցանէր զնոսա հանապազ տաճարին: Իսկ (ժԹ 47) *փխ* իբրև տեսին

<sup>4</sup> B դպիրքն տեսին

<sup>5</sup> B զմանկտին

<sup>6</sup> B որդւոյ

<sup>7</sup> A դոքայ, **ԱՅ** տառերի վրայ ունի պատմանշան, որը գրիչը սխալմամբ է գրել: Բառավերջի **ԱՅ** չփոթել է Աստուծոյ բառի համառոտագրութեան հետ

<sup>8</sup> A տխեղձ

<sup>9</sup> B սրբ.՝ սքանչելեալք

<sup>10</sup> B խաւսին

<sup>11</sup> B Ովսանա

<sup>12</sup> B *դրփի* փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն

<sup>13</sup> B Արդ՝ վասնզի ահաւասիկ ի

<sup>14</sup> B *չիք* այո

<sup>15</sup> B ոչ իցէ

<sup>16</sup> B հաստատեցեր զաւրհնութիւնս



Զիա՞րդ ո՛չ իմանայք, եթէ մարգարէիցն կատարին յառաջատեսութիւնքն: Որպէս Զաքարիայ ասաց. «Հեծեալ յէջ և յաւանակ<sup>1</sup> նոր<sup>2</sup>» (Ձաք. Թ 9):

**ԵՓ** Հեծեալ<sup>3</sup>, քանզի թագաւորքն Իսրայելի երիվարիւք<sup>4</sup> պարծէին, և կառաւք զամբարտաւանութիւն<sup>5</sup> մտաց իւրեանց յայտնէին, և պատերազմաւք ի կառս իւրեանց փառաւորէին: Իսկ Յիսուս՝ «Հեծեալ յէջ և նստեալ յաւանակի<sup>6</sup> նոր<sup>7</sup>»՝ կերպարանք տկար և տեսիլն անարգ: Ըստ Եսայեայ. «Տեսաք մեք զնա, և ո՛չ գոյր նորա տեսիլ և ո՛չ շուք» (Ես. ԾԳ 2): Թէ լուիցէք նմա. «Սատակէ զկառս յԵփրեմէ<sup>8</sup> և բառնայ զերիվարս յԵրուսաղեմէ» (Ձաք. Թ 10), այսինքն, զթագաւորութիւն և զտէրութիւն սատանայի, զի ի ձեռն Տեառն մերոյ սահմանեցաւ թագաւորութիւն նոցա: Որպէս ասաց Յակոբ. «Մի՛ պակասեսցէ<sup>9</sup>, մինչև եկեսցէ, որ իւրն է<sup>10</sup>»

228ա (ԾՃնդ. ԽԹ 10): Զի սպառ //կարգք<sup>11</sup> թագաւորաց Իսրայելի ի գալստեանն Քրիստոսի: Նոյնպէս և Դաւիթ: Ահաւասիկ մարգարէին բանք լցան<sup>12</sup>, զի՝ «Տղայք ստնդիայք<sup>13</sup>, անխաւք Հաստատեցին զաւրհնութիւնս նորա» (հմմտ. Սաղմ. Ը 3):

**ՄԱ.** Բարիոք ասաց ի բերանոց: Քանզի ո՛չ եթէ ի մտաց նոցա էին բանքն, այլ Քրիստոսի զաւրութեամբն երգէին<sup>14</sup>, որ պարզէր զանհաս և զխակ լեզուսն: Բայց իրքն աւրինակ Հեթանոսաց էին, որ<sup>15</sup> երբեմն տգէտք էին և ախաղէին<sup>16</sup>, յանկարծակի հնչէին զմեծամեծս կատարեալ մտաւք: Նաև առաքելոցն նշանակէր մխիթարութիւն<sup>17</sup> իրքն, եթէ զիա՞րդ մեք տգէտքս կարեմք քարոզել, այլ<sup>18</sup> մանկտին զամենայն կասկած հանէին<sup>19</sup> ի մտաց

<sup>1</sup> A ովանակ  
<sup>2</sup> B չիք Հեծեալ... նոր  
<sup>3</sup> B Հեծեալ ի յէջ  
<sup>4</sup> B երիվարաւք  
<sup>5</sup> A զամբարտաւանութիւն  
<sup>6</sup> A յովանակի  
<sup>7</sup> B սրբ. նորոյ  
<sup>8</sup> B յԵփրեմայ  
<sup>9</sup> B պակասեսցէ իշխան Յուդայ և մի՛ պետ յերանաց նորա  
<sup>10</sup> B է թագաւորութիւնն  
<sup>11</sup> B ի սպառել *փիս* սպառ կարգք  
<sup>12</sup> B բանքն կատարեցան  
<sup>13</sup> A ստանդիայք  
<sup>14</sup> B զաւրութեանն էր պարգևքն *փիս* զաւրութեամբն երգէին  
<sup>15</sup> B որք  
<sup>16</sup> B ախմարք  
<sup>17</sup> B մխիթարութեան  
<sup>18</sup> B չիք այլ  
<sup>19</sup> B եհան

նոցա, եթէ բնութեանս է Արարիչ, որ խակ մանկտոյն<sup>1</sup> զհասունս ետ<sup>2</sup> բարբառել ընդ վերին զաւրացն՝ միաբանութիւն<sup>3</sup> սրբասացութեամբ:

**ԵՓ.** Տղայքն անմեղ<sup>4</sup> առ ծնունդն և առ մահ նորա ընդելուզէին<sup>5</sup> պսակս մարդեղութեան: Մանուկ<sup>6</sup> Յովհաննէս ցնծացաւ ընդ առաջ նորա ի մէջ որովայնին<sup>7</sup> (տե՛ս Ա 41), կոտորեցաւ<sup>8</sup> մանկտին ի ծննդեան նորա (տե՛ս Մատթ. Բ 16), և եղեն ողկոյզ հարսանեաց նորա: Եւ դարձեալ. «Մանկտին աղաղակէին աւրհնութիւն» (Մատթ. ԻԱ 15) նմա<sup>9</sup> ի ժամանակի մահու նորա:

**ՍՏ** Եւ<sup>10</sup> Երուսաղէմ խռովեցաւ ի ծննդեան նորա և դարձեալ տագնապեցաւ յաւուրն, յորում եմուտ անդ:

**ԻՓ** Արդ՝ զայս ասացեալ. «Եւ որ զկնին գայ» (Մատթ. Գ 11, Յովհ. Ա 27, 30)՝ թողու քննել և ի միտ առնուլ նոցա, որ ասէ վասն թշնամեաց քոց, զհեղձեալ<sup>11</sup> եղծցի թշնամին և հակառակորդն: Այսպէս բանայ նոցա զբանս մարգարէիցն, զի գրգեսցին կամ զարհուրեսցին:

**228բ** //«Եթող զնոսա և ել արտաքոյ քաղաքին ի Բեթանիայ և անդ ագաւ» (Մատթ. ԻԱ 17):

**Իգ.** Վասնզի աւրն յերեկս<sup>12</sup> մերձեալ էր, դառնայ անդրէն ի տուն հանգստեան իւրոյ:

**ՈԿ** Եւ, զի կատարեալքն հասակաւ անկեալ էին ի մտաց և լի էին ամենայն մոլորութեամբ: Վասն այնորիկ թողու զնոսա և գնայ, զի փոքր մի ոգի առնուցուն յախտէն: Եւ չկամի առնել վարդապետութիւն, զի մի՛ բորբոքեսցին ի նախանձն և առաւել բանիւքն զայրասցին:

**ԵՓ** Ըստ այնմ, որ ասէ Յովէլ. «Որ իմաստունն է, ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, զի աւուրքն չարութեան են» (Ամոս Ե 13): Կամ<sup>13</sup> խնայեաց Տէր յիւրսն, զի ի ժամանակի, յորում ո՛չ լինի ընդունե-

<sup>1</sup> Բ մանկտին

<sup>2</sup> Բ հաստատուն արար և շնորհեաց *փիս* զհասունս ետ

<sup>3</sup> Բ միաբան

<sup>4</sup> Բ մերձ

<sup>5</sup> Բ ընդելուզանէին

<sup>6</sup> Բ մանուկն

<sup>7</sup> *Ա* յորովայնին Բ որովայնին երկրպագելով

<sup>8</sup> Բ Դարձեալ. և կոտորեցան

<sup>9</sup> Բ *չիք* նմա

<sup>10</sup> Բ իսկ

<sup>11</sup> Բ զի հեղձեալ

<sup>12</sup> Բ ընդ երեկս

<sup>13</sup> Բ *չիք* կամ

լուծիլեն, յանդիմանութիւն<sup>1</sup>՝ լուեսցեն: Եւ մի<sup>2</sup> տանջեսցէ զնոսա հոգ լուծեան՝ կարծելով, թէ պատժելոց են:

«Եւ այգուցն իբրև դարձաւ ի քաղաքն՝ քաղցեալ» (Մատթ. ԻԱ 18):

Ձի յորժամ կամէր, թոյլ տայր մարմնոյն զգալ կարեաց<sup>3</sup>: Արդ՝ որ զբազումս յագեցոյց յանապատին և զքարինս հաց ո՛չ արար և ո՛չ ետ զցանկուծիւն մեղաւորին, այլ արար Տէր մեր ի հինգ նկանակէն, և բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի, և հրամայեաց ժողովել զկոտորսն: Ձի թէ վաղիւն<sup>4</sup> ասիցեն, թէ առ աչաւք արար, որք զնշխար կոտորոցն ունին՝ ցուցցեն<sup>5</sup> յանդիմանելով:

«Ետես զթզենի<sup>6</sup> մի ի ճանապարհին և ո՛չ եգիտ պտուղ ի նմա, անէծ զնա» (հմմտ. Մատթ. ԻԱ 19, Մարկ. ԺԱ 13-14):

**ԻՊ** Թէպէտև տարածամ, բայց սակայն ծանիցեն զտանջող<sup>7</sup> զաւրուծիւն նորա և մի՛ վհատեսցին<sup>8</sup> ի բարեգործականն:

**ԵՓ.** Իսկ բարեկամացն նշանակէ և թշնամեացն զսքանչելիքն<sup>9</sup>, զի աշակերտքն հաւատասցեն ի բան նորա:

**229ա** //Արդ՝ որ զամենայն ինչ բարիոք գործեաց, վասնէ՞ր ցամաքեցոյց զթզենին: Ձի մի՛ ասիցեն, թէ ո՛չ ունէր զաւրուծիւն, ըմբռնեցաւ ի մահ: Եցոյց ի ձեռն թզենոյն, զոր ցամաքեցոյց, թէ կարող է բանիւ զխաչողսն սատակել:

**արկ.** Այլ յերիս տեղիս յայտնեաց զպատիժսն. զխոզսն ի ծովն հեղձոյց (տե՛ս Մատթ. Ը 32), և զգերեզմանս քակեաց (տե՛ս Մատթ. ԻԵ 52), և անէծ զթզենին (տե՛ս Մատթ. ԻԱ 18-22): Գրեալ է. «Յորժամ հնձես<sup>10</sup>, թողցես զափնիսն աղքատաց» (հմմտ. Բ Օր. ԻԴ 19): Եկն Տէր մեր և եգիտ, զի ո՛չ էր թողեալ ի թզենին ճիւղ որբոց<sup>11</sup> և այրեաց՝ անէծ<sup>12</sup>, զի այլ մի՛ կերիցէ ի նմանէ<sup>13</sup> տէր նորա: Եւ որպէս գերգեսացիքն վաճառասէրք էին, եղին սահման, զի մի՛ ելցեն առ Յիսուս: Հեղ-

<sup>1</sup> Բ յանդիմանութեան  
<sup>2</sup> Բ չիք մի  
<sup>3</sup> Բ կարևորացն  
<sup>4</sup> Բ առ վաղիւն  
<sup>5</sup> Բ ցուցին  
<sup>6</sup> Բ թզենի  
<sup>7</sup> Բ զտանջողական  
<sup>8</sup> Բ վհատասցին  
<sup>9</sup> Բ սքանչելիք  
<sup>10</sup> Բ հնձեսցես  
<sup>11</sup> Բ ճիւղ որբոց  
<sup>12</sup> Բ անէծ զնա  
<sup>13</sup> Բ ի նմանէ՝ որբ. ձախ լս.

ձոյց զխոզս նոցա, զի ակամայ ելցեն առ նա: Նոյնպէս տէր<sup>1</sup> թղենոյն ի ցամաքել տնկոյն՝ ելցէ առ Յիսուս: [Եւ] կամ, յորժամ մերկացաւ<sup>2</sup> Ադամ ի փառացն վասն մեղաց, [զ]թղենովն ծածկեաց զինքն: Եկն<sup>3</sup> Տէրն, ճաշակեաց զմահ, և զգեցոյց զԱդամ փառաւք և դարձոյց ի դրախ[տ]ն: Վասն այնորիկ<sup>4</sup> անէծ զնա: Կամ<sup>5</sup> թղենին՝ հրէիցն ժողովուրդն դնէ<sup>6</sup>, յորս եկն Քրիստոս քաղցեալ և ո՛չ եզրիտ պտուղ, այլ միայն ցնորական կենդանութիւն: Ուստի ի գալ նորա գաւսացան, որ ո՛չ հաւատացին ի Քրիստոս:

Մտեալ ի տաճարն՝ ուսուցանէր զնոսա հանապազ: Իսկ քանահայապետքն խնդրէին զնա կորուսանել և երկնչէին ի ժողովրդենէն<sup>7</sup> (հմմտ. ժԹ 47-48):

**ՍՏ** Վասնզի ո՛չ կարէին լռեցուցանել զվարդապետութիւն[ն] և ո՛չ դադարեցուցանել զնշանսն, զոր առնէր, խորհէին սպանանել<sup>8</sup>:  
**229բ** Եւ ո՛չ իշխէին ի ժողովրդենէն, // զի ամենեքին իբրև զմարգարէ ընդունէին զնա (հմմտ. ժԹ 48):

**Իգ.** Իսկ փարիսեցիքն, որ յառաջին աւուրն տեսին զփառաւորութիւն նորա՝ ի ծերոց և ի տղայոցն համարձակեալ, թէպէտ հեղձան նախանձու, սակայն հակառակ<sup>9</sup> երկեան վասն ամբոխին, որ ուստիւք<sup>10</sup> աւրհնէին զեկաւորութիւն թագաւորութեան նորա:

<sup>1</sup> B և տէր

<sup>2</sup> A մերկաւաւ

<sup>3</sup> B Եւ եկն

<sup>4</sup> B այն իսկ *փխ* այնորիկ

<sup>5</sup> B *չիք* կամ

<sup>6</sup> B է

<sup>7</sup> B Իսկ քահանայապետքն և դպիրք և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել և ոչ գտանէին, թէ զինչ արասցեն, զի ամենայն ժողովուրդն կախեալ կային զնմանէ ի լսել:

<sup>8</sup> B սպանել

<sup>9</sup> B հակառակեալ

<sup>10</sup> B ուստաւք

## Գլուխ Ի

Իսկ ի միւսում աւուրն, մինչդեռ ուսուցանէր, ասեն ցնա. Ուրո՞վ իշխանութեամբ առնես զայդ, կամ ո՞վ ետ քեզ զիշխանութիւն]՝<sup>1</sup> (*հմմտ.* Ի 1-2):

**ԿՐՂ** Խորամանկեցին զայթազդեցուցանել<sup>2</sup> ի նա<sup>3</sup> զժողովուրդն ի ձեռն երկշաւեղ<sup>4</sup> հարցմանն, զոր իմացանն, թէ՛ «Ուրո՞վ իշխանութեամբ առնես<sup>5</sup>» (Ի 2), այսինքն՝ խափանել զպատարագս տաճարին և զգնողսն<sup>6</sup> արտաքս հանել<sup>7</sup> և նոր վարդապետութիւն ուսուցանել: Զի, թէ յանձնէ ասիցէ զվարդապետութիւն[ն] և զխափանումն պատարագացն, ասեն ցժողովուրդն. «Տեսէ՛ք, որպէս հակառակ է աւրինացն և խափանիչ, զոր ի ձեռն Մովսիսի Աստուած հրամայեաց մեզ»: Եթէ<sup>8</sup> ասիցէ. «Աստուած ետ զիշխանութիւնս զայս», ասիցեն, թէ՛ «Զիա՞րդ, որ ի ձեռն Մովսիսի հրամայեցաւ մատուցանել պատարագ, ո՛չ<sup>9</sup> ի ձեռն քահանայիցս գործէ<sup>10</sup> զխափանումն, այլ ի ձեռն քո, որ չեսդ Ղևտացի, այլ ամենեւին հեռագոյն Նազաւրացի<sup>11</sup> գոլով՝ ո՛չ ունելով առ քահանայսն համեմատութիւն»:

**ԻԳ** Վասնզի ի միւսում աւուրն տեսին զժողովուրդն հանդարտեալ, ապա համարձակեցան ասել զայս:

Եւ Յիսուս ասէ. Հարցից և ես ձեզ բան մի<sup>12</sup> (Ի 3):

Թէ ասիցէք, և ես ձեզ ասեմ որով իշխանութեամբ<sup>13</sup>:

**230ա ԿՐ** Գիտաց Յիսուս զխորամանկ հարցուածս նոցա և ո՛չ ու(//)ղ՝ զորդ առնէ զպատասխանին: Զի ցուցցէ, թէ կամէին, կարող էին գիտել զիշխանութիւն նորա: Այլ անդրէն ընդդէմ հարցանէ<sup>14</sup>:

<sup>1</sup> Եւ եղև ի միւսում աւուրցն յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն ի տաճարի անդ և աւետարանէր, հասին ի վերայ քահանայապետքն և դպիրք ծերովքն հանդերձ, և ասացեն ցնա. Ասա՛ մեզ որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ կամ ո՞վ է, որ ետ քեզ զայդ իշխանութիւն (*Ի 1-2*):

<sup>2</sup> Եւ զայթազդեցուցին

<sup>3</sup> Եւ նա

<sup>4</sup> Եւ երկշաւիղ

<sup>5</sup> Եւ չեք առնես

<sup>6</sup> Եւ զգնաւզս

<sup>7</sup> Եւ հանես

<sup>8</sup> Եւ եթէ

<sup>9</sup> Եւ ոչ

<sup>10</sup> Եւ առնէ

<sup>11</sup> Եւ Նազաւրացի

<sup>12</sup> Եւ Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, և ասացէք ինձ:

<sup>13</sup> Եւ չեք թէ ասիցէք... իշխանութեամբ

<sup>14</sup> Եւ հարցմանն է

**Մկրտութիւնն<sup>1</sup> Յովհաննու յերկնի՞ց էր, եթէ՞ ի մարդկանէ** (Ի 4):

Ոկ. *Եթէ հաւատացեալ էին Յովհաննու վկայութեան[ն], ապա յո՛չ<sup>2</sup> հարցանէին զայս: Քանզի նա ասաց. «Զեմ բաւական լուծանել զկաւչիկան<sup>3</sup> Յիսուսի» (Մատթ. Գ 11, Ղուկ. Գ 16), և «Ահա Գառն Աստուծոյ<sup>4</sup>» (Յովհ. Ա 29), և «Որ ի վերուստն գայ, ի վերոյ է քան զամենայնն<sup>5</sup>» (Յովհ. Գ 31): Եթէ<sup>6</sup> հաւանեալ էին Յովհաննու, ո՛չ էր արգել ճանաչել զՅիսուս:*

**Եւ<sup>7</sup> եթէ ասեմք ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առն[են զմեզ]<sup>8</sup>** (Ի 6):

Իգ. *Արդ՝ քանզի գիտէր զնոսա, եթէ յԱստուծոյ ո՛չ երկնչէին, այլ ի մարդկանէ: Վասն որոյ մատեան ո՛չ ուսանել, այլ դնել գայթազուութիւն: Իսկ զխորխորատն, զոր փորեցին, անձամբ լցին:*

Ստ. *Տեսե՞ր զկամակորութիւն նոցա: Ամենայն ուրեք զԱստուծոյան առ ոտն<sup>9</sup> հարկանէին, և առ մարդկան աչս գործէին զամենայն ինչ: Եւ ի մարդկանէ դողային և ո՛չ՝ յԱստուծոյ<sup>10</sup>:*

**Պատասխանի ետուն չգիտել<sup>11</sup>** (Ի 7):

*Տայ ժողովրդեանն ճանաչել զխորամանկ<sup>12</sup> դաւաճանս<sup>13</sup> քահանայիցն, որք ո՛չ վկայեցին Յովհաննու մկրտութեան[ն] յերկնից գորով: Զայս իմացան, թերևս ուրանալ զվկայութիւն[ն] Յովհաննու, որ ասաց վասն Քրիստոսի. «Որոյ հեծանոցն ի ձեռին իւր է, սրբեսցէ<sup>14</sup> զկալն և ժողովեսցէ զցորեան ի շտեմարանսն<sup>15</sup>, և զյարդն<sup>16</sup> այրեսցէ անշէջ հըրովն» (Մատթ. Գ 12): Որ նշանակէր զՔրիստոսի աստուածութիւն[ն], յորժամ հաւաքէ զազգս մարդ-*

<sup>1</sup> B Մկրտութիւնն

<sup>2</sup> B ոչ

<sup>3</sup> B զկաւչիկն

<sup>4</sup> B Աստուծոյ, որ բառնայ

<sup>5</sup> B զամենայն

<sup>6</sup> B Եւ եթէ

<sup>7</sup> B Եւ նոքա խորհեցան ի միտս և ասեն. Եթէ ասեմք յերկնից, ասէ. Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա և (Ի 5-6)

<sup>8</sup> B զմեզ, զի հաստատեալ է ի միտս զՅովհաննէ, թէ մարգարէ է:

<sup>9</sup> B չէք առ ոտն

<sup>10</sup> B յԱստուծոյ ոչ ևս *փիւ* ոչ յԱստուծոյ

<sup>11</sup> B Եւ պատասխանի ետուն չգիտել, թէ ուստի իցէ:

<sup>12</sup> A զխորամանգ

<sup>13</sup> B դաւաճանութիւն

<sup>14</sup> B և սրբեսցէ

<sup>15</sup> B զցորեանն յըշտէմարանս

<sup>16</sup> B զարդն

կան<sup>1</sup> ի դատաստան, զոր «կալ» անուանեաց և հատուցումն<sup>2</sup> արդարոց և մեղաւորացն, որ ո՛չ այլ ումեք պատշաճ է, բայց միայն Աստուծոյ:

230բ // Եւ Յիսուս ասէ<sup>3</sup>. Եւ ո՛չ ես ձեզ ասեմ որով իշխանութեամբ առնեմ զայս (Ի 8):

Ո՛չ ես ըստ ձեզ զանգիտութիւն պատճառեմ: Զի թէ ի վերայ Յովհաննու վկայեցի<sup>4</sup> վասն մկրտութեան նորա յերկնից լինել, ո՛րչա՞փ և[ս] առաւել գիտեմ<sup>5</sup> զիմ իշխանութիւնս: Այլ խորամանկելով ո՛չ ետոյք<sup>6</sup> պատասխանի հարցուածոյս<sup>7</sup>, վասն այսորիկ և ո՛չ ես զձեզ արժանի համարիմ անարժան հարցուածոյդ տալ պատասխանի<sup>8</sup>:

Ապա սկ[ս]աւ ասել զառակս<sup>9</sup> առ ժողովուրդն. Այր ոմն տնկեաց այգի<sup>10</sup> (Ի 9):

ՍՏ Մարդ Աստուած ասի ի բազում զիրս աստուածայինս վասն Որդոյն Աստուծոյ՝ զգենլոյ զկերպ<sup>11</sup> մարդկան:

Տնկեաց այգի (Ի 9):

ԶՀաւրէ, ասէ, յորժամ ի ձեռն Մովսիսի հանէր զիսրայելացիսն յԵգիպտոսէ: Եւ Դաւիթ ասէ. «Այգի յԵգիպտոսէ փոխեցեր, հաներ զհեթանոսս և զԻսրայէլ տնկեցեր» (Սաղմ. 38 9): Զոր և Եսայի քաջայայտ առնէ զբանն. «Այգի Տեառն զաւրութեանց տունդ Իսրայելի<sup>12</sup>» (Ես. Ե 7):

Ստ. Կամ այգի աստուածային վարդապետութիւն[ն] է՝ մարգարէական և առաքելական, յորս զայգին ետ, զի պտղաբերեսցէ հրէական ժողովուրդն:

Ետ զնա մշակաց<sup>13</sup> (Ի 9):

<sup>1</sup> B որդոց մարդկան  
<sup>2</sup> B հատուցումն առնէ  
<sup>3</sup> B ասէ ցնոսա  
<sup>4</sup> B վկայեցին  
<sup>5</sup> B գիտեն  
<sup>6</sup> B ետուն  
<sup>7</sup> A հարցվածոյս  
<sup>8</sup> B չեք հարցուածոյս: Վասն... պատասխանի  
<sup>9</sup> A ասէ Հակոբակս քիս ասել զառակս  
<sup>10</sup> B Ապա սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. Այր ոմն տնկեաց այգի և ետ զնա մշակաց:  
<sup>11</sup> B զպատկեր  
<sup>12</sup> B Իսրայելի է  
<sup>13</sup> B մշակացն

**ԿՐ** Ձոր ետ ցքահանայսն գործել զայգիին՝ վարդապետել<sup>1</sup> ժողովրդեանն: Դաստիարակել<sup>2</sup> առ հաւատս ըստ աւրինացն և մարգարէիցն, որք գուշակէին<sup>3</sup> զՔրիստոսի աւետարանութիւն աւետեացն<sup>4</sup>:

**Գնաց**<sup>5</sup> ճանապարհ ի<sup>6</sup> ժամանակս բազումս (Ի 9):

Գնալ Տեառն զո՛չ երևեալ նոցա հրեղէն ամպով<sup>7</sup>՝ զկնի խաւսելոյն ի Սինեական<sup>8</sup> լերինն և պատգամացն և ահագին երևմանցն, և ո՛չ այլ գունակ երևեցաւ ժողովրդեանն:

**Առաքեաց**<sup>9</sup> առ մշակսն ծառայ<sup>10</sup>, զի ի պտղոյ այգոյն տացեն<sup>11</sup> նմա (Ի 10):

**231ա Ստ.** ՁՄովսէս և զմարգարէսն առ քահանայսն խնդրել զ(//)հաւատս և զգործս բարիս ժողովրդեանն: Սակայն և այնմ ընդդէմ Աստուծոյ վարեցան ստույգեամբ:

**Մշակքն** գան հարին, անարգեցին և առաքեցին ունայն<sup>12</sup> (Ի 10):

**ԵՓ** Արդ՝ գանեցաւ Միքիայ, ապտակեցաւ<sup>13</sup> Սեղեկիայ: Որպէս<sup>14</sup> և Յովսիայ ասէ. «Եղեն նոքա որոգայթ<sup>15</sup> դիտանոցին, որպէս վարմ<sup>16</sup> ձգեալ ի վերայ լերանց» (հմմտ. Ովստ Ե 1): Նոյնպէս<sup>17</sup> և դուք զմարգարէսն ճշմարտութեան որսայիք ի սպանումն: Վասն այսորիկ ջնջեցից զմարգարէսն և կոտորեցից զարդարսն ի բանս բերանոյ իմոյ, զի հաւանեցուցից զմարդիկ:

**Յաւել** զերրորդն առաքել, և զնոսա վիրաւորեցին<sup>18</sup> (Ի 12):

**ՍՏ** Քարկոծեցին զԵրեմիայ և զՋաքարիայ որդի Ամովղա:

**ԻՊ** Հարուածաւք [և] արեամբ դարձուցին ունայնս:

**Առաքեցից** զորդի իմ սիրելի<sup>1</sup> (Ի 13):

<sup>1</sup> Ե որ է վարդապետել

<sup>2</sup> Ե սրբ. և դաստիարակել

<sup>3</sup> Ե որ գուշակեցին

<sup>4</sup> Ե աւետարանութիւնն *փի* աւետարանութիւն աւետեացն

<sup>5</sup> Ե Ինքն գնաց

<sup>6</sup> Ե *չիք* ի

<sup>7</sup> Ե ամպաւք

<sup>8</sup> Ե Սինեական

<sup>9</sup> Ե Եւ ի ժամու առաքեաց

<sup>10</sup> Ե ծառայս

<sup>11</sup> Ե այգւոյն տայցեն

<sup>12</sup> Ե Եւ մշակքն գան հարին գնա և արձակեցին ունայն:

<sup>13</sup> Ե ասականեալ ի

<sup>14</sup> Ե արդ՝ որպէս

<sup>15</sup> Ե յորոգայթ

<sup>16</sup> Ե վարմն

<sup>17</sup> Ե այնպէս

<sup>18</sup> Ե Եւ յաւել միւս ևս ծառայ յղել, նոքա և գնա ևս գան հարին, անարգեցին և առաքեցին ունայն: Եւ յաւել զերրորդն առաքել, նոքա և գնա վիրաւորեցին և հանին արտաքս (Ի 11-12):



**ԵՓ** Այսինքն՝ ի բնութենէ Հաւր Որդին միածին, և յետոյ՝ առաքեալն: Ո՛չ թէ վերջին էր նա, այլ զի յետոյ երևեցաւ այն, որ երբեմն էր իսկակից Հաւր: Որպէս վկայեաց Յովհաննէս, թէ՛ «Որ գալոց[ն] է գկնի իմ, յառաջ է քան» (Յովհ. Ա 30) գյաւհտեանս:

**Թերևս ի սմանէ պատկառեսցին**<sup>2</sup> (Ի 13):

**ՈԿ.** Ո՛չ անգիտանալով ասէ. «Քա՛ւ լիցի» (Ի 16), այլ ցուցանէ զառուել չարութիւնն նոցա անպատասխանի: Այլ ինքն գիտէր, զի սպանանելոց<sup>3</sup> էին, և առաքեաց, «Թերևս պատկառեսցին<sup>4</sup>»: Եւ նոցա պարտ էր ակնածել և յանդիմանիլ:

**ԿՐ** Եւ ի մեծագոյն նշանացն ցածնուլ՝ Որդի գոլով և Տէր ամենայնի, և ո՛չ Հանգոյն մարգարէիցն, որ<sup>5</sup> իշխանաբար հրամանաւ<sup>6</sup> թողոյր զմեզս և ազատէր վերստին ծննդեամբ ի ծառայական կարգաց:

**Իբրև տեսին մշակքն, ասեն. Սա է ժառանգն**<sup>7</sup>, սպանցուք, և մեր լիցի ժառանգ[ութիւնն]<sup>8</sup> (Ի 14):

**23Իբ** // Որպէս Հերո[վ]դէս լուաւ զգալուստն Քրիստոսի և կոտորեաց զմանկտին՝ կամելով կորուսանել զնա (տե՛ս Սատք. Բ 16-18):

**ԵՓ** Ձնա<sup>9</sup> սպանին, և ժառանգութիւն բարձաւ և տուաւ Հեթանոսաց, զի հանդերձեալ էին Հեթանոսք լինել նմա ժառանգ: Ըստ այնմ՝ «Նախանձեցուցից զձեզ, ոչինչ ժառանգաւորաւք» (Յոռմ. Ժ 19): Ձի որպէս որդիք աւտարաց հնազանդեցաւ<sup>10</sup> ինձ, և բարձաւ ժառանգութիւն<sup>11</sup> և տուաւ Հեթանոսաց, նոյնպէս բարձաւ անունն ժողովրդեան և տուաւ Հեթանոսաց: Եւ անուն Հեթանոսաց եղաւ<sup>12</sup> ի վերայ Իսրայելի:

**Հանին**<sup>13</sup> զնա արտաքոյ քան զայգին և սպ[անին] (Ի 15):

<sup>1</sup> Ե Ասէ տէր այգւոյն. Ձի՞նչ արարից: Առաքեցից զորդի իմ սիրելի, Թերևս ի սմանէ պատկառեսցեն:

<sup>2</sup> Ե պատկառեսցեն

<sup>3</sup> Ե սպանելոց

<sup>4</sup> Ե պատկառեսցեն

<sup>5</sup> Ե որով

<sup>6</sup> Ե **չիք** հրամանաւ

<sup>7</sup> Ե ժառանկն

<sup>8</sup> Ե Իբրև տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս և ասեն. Սա է ժառանգն, սպանցուք զսա, զի մեր լիցի ժառանգութիւնն:

<sup>9</sup> Ե **չիք** զնա

<sup>10</sup> Ե հնազանդեցան

<sup>11</sup> Ե ժառանկութիւն Ե անդրանկութիւնն

<sup>12</sup> Ե բարձաւ և եղաւ

<sup>13</sup> Ե Եւ Հանին

*Տեսանե՞ս, զի յառաջագոյն մարգարէանայ և զտեղին յայտնէ, ուր սպանելոց<sup>1</sup> էին:*

**ԿՐ** *Զոր յետ բազում նշանացն, զոր տեսին, արտաքոյ քաղաքին ի խաչ հանին, զոր առակաւոր բանիւն «այգի» կոչեաց:*

**Զի՞նչ արա[ս]ցէ տէր այգ[ւոյն]<sup>2</sup>** (Ի 15):

**ԵՓ** *Մուծանէ զնոսա ի դատաստան առաջի նոցա, թէ որում արժանի էին մշակքն կամ զինչ հատուցումն գործոց:*

**Կորուսցէ զմշակսն զայնոսիկ** (Ի 16):

**ԿՐ (ԻԳ.)** *Զի ի ձեռն առակացն եցոյց զլինելոց նոցա, թէ արհամարհելոց են ազգն, մանաւանդ թէ՛ կորնչելոց, և այգին այլոց լինելոց<sup>3</sup>:*

**(ԿՐ.)** *Եւ դուք, որ զծառայսն հալածեցիք և զորդին սպանիք, ելանելոց էք: Զոր<sup>4</sup> և Մատթէոս ասէ. «Զչարսն չարաւ կոր[ուսէ]<sup>5</sup>» (Մատթ. ԻԱ 41):*

**ԵՓ** *Իսկ ինքեանք զվճիռ դատապարտութեան հատին ի վերայ անձանց, զի թշնամեացն վկայութիւն ստուգութեամբ լի է:*

**Տայցէ<sup>6</sup> զայգին այլոց** (Ի 16):

**232ա** *Այսու զհեթանոսաց մուտն կարի քաջ յայտնեաց<sup>7</sup>: Որպէս ասաց Ամբակում. «Դարձուցից ի վերայ հեթանոսաց շրթունս ընտրութեան<sup>8</sup> փոխանակ այնր, որ հանապազ սանձք մոլորեց(//)ուցիչք եղեալ էին յերախս<sup>9</sup> նոցա»: Զ[ի] ընդ միով լծով ծառայեսցեն նմա, որ<sup>10</sup> կազմեցաւ խաչն ի Քրիստոսէ, որ<sup>11</sup> եղաւ խորհրդով ի վերայ ուսոյ Շմաւոնի նշան դարձին հեթանոսաց:*

**Իբրև լուան՝ ասեն. Քա՛ւ՝ մի՛ լիցի** (Ի 16):

**ԿՐ.** *Վասնզի խ[ս]տագոյն համարեցան, ասեն մի՛ լիցի այդպէս: Զգաւնացեալ ամփոփեն<sup>12</sup> զանձինս՝ հրաժարելով ի բանէ անտի:*

<sup>1</sup> B սպանանելոց

<sup>2</sup> B Արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նմա տէր այգւոյն, ո՞չ սպաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ:

<sup>3</sup> B *չէք* և այգին... լինելոց

<sup>4</sup> B զի

<sup>5</sup> B չարեաւ կորուսցէ

<sup>6</sup> B Եւ տայցէ

<sup>7</sup> B քաջայայտ առնէ

<sup>8</sup> A ընդորութեան

<sup>9</sup> B յերեսս

<sup>10</sup> B որպէս

<sup>11</sup> B Եւ

<sup>12</sup> A, B անփոփեն

**Յիսուս հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. Զի՞նչ իցէ, որ գրեալն է Վէմն, զոր անարգեցին<sup>1</sup> (Ի 17):**

*Զմարգարէութիւն Դաւթի ի մէջ բերէ (տե՛ս Սաղմ. 68-րդ 22) ի դէմս նոցա [և] պատկառեցուցանելով՝ սաստէ:*

**Ստ.** *Վէմ գինքն նշանակեաց<sup>2</sup> նոցա: Ըստ որում՝ ընթերցեալ էին զմարգարէութիւն Եսայեայ<sup>3</sup> իբրև յերեսաց Աստուծոյ. «Ահա աիկ դնեմ ի Սիոն<sup>4</sup> վէմ ընտիր, գլուխ անկեան» (Ես. ԻԸ 16), և զԴանիելի<sup>5</sup>՝ «Ի լեռնէ<sup>6</sup> վէմն առանց ձեռին հատեալ» (Դան. Բ 34): Եւ Պաւլոս ասէ. «Վէմն էր ինքն Քրիստոս» (Ա Կորնթ. Ժ 4): Որ արբուցանէր նոցա զջուրն, զոր կանխաւ ետ աւրինակ ժողովրդեանն, զոր արհամարհեցին ի ժամանակի հաւատոցն: Վասն որոյ<sup>7</sup> Զաքարիայ ասէ. «Ահա աիկ Տէր կայր ի վերայ անդամանդեայ պարսպաց<sup>8</sup>» (հմմտ. Ամովս Է 7), որ է մարմինն Քրիստոսի: Անարգեցին, զի ասէին. «Զէ դա յԱստուծոյ» (հմմտ. Յովհ. Թ 16, 33) և մոլորեցուցանէ զժողովուրդն:*

**Շինողքն (Ի 17):**

**Կր.** *«Շինող»՝ զհրէից վարդապետսն<sup>9</sup> կոչէ: Որպէս Եզեկիէլ ասէ, թէ՛ «Շինէին զորմն<sup>10</sup> և ծեփէին փորիւ առանց խճելոյ» (հմմտ. Եզեկ. ԺԳ 10-14):*

**Եղև<sup>11</sup> գլուխ անկեան (Ի 17):**

**232բ** *Վասնզի որպէս անկեան վէմ գերկոսեան ազգս միաւորեաց՝ զհրէայս և զհեթանոսս, որք հեռագոյնք էին ի միմեանց և հակառակք, թշնամիք միմեանց հաւատովք և գործովք<sup>12</sup>: Ի Տեառնէ եղև այս և է // սքանչելի յաչս մեր: Այն իսկ է. «Բարձցի ի ձէնջ արքայութիւն<sup>13</sup> Աստուծոյ<sup>14</sup>» (Մատթ. ԻԱ 43) և տացի ազգի, որ ա-*

<sup>1</sup> Եւ եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. Իսկ զի՞նչ իցէ այն, որ գրեալն է, եթէ՛ Վէմն, զոր անարգեցին շինաւղքն:

<sup>2</sup> Ե նշանակելով

<sup>3</sup> Ե Եսայեայ

<sup>4</sup> Ե Սիոն

<sup>5</sup> Ե Դանիելի

<sup>6</sup> Ե **չիք** ի լեռնէ

<sup>7</sup> Ե որոյ և

<sup>8</sup> Ե պարսպացն

<sup>9</sup> Ե վարդապետութիւն

<sup>10</sup> Ե զորման

<sup>11</sup> Ե նա եղև

<sup>12</sup> Ե գործաւք

<sup>13</sup> Ե արքայութիւնն

<sup>14</sup> Ե **չիք** Աստուծոյ

րասցէ պտուղ հաւատոցն Քրիստոսի: Որպէս Միքիայ<sup>1</sup> մարգարէ ասէ. «Հով[ու]եսցէ զնոսա զաւրութեամբ Տեառն ի փառս անուան նորա» (Միք. Ե 4):

**ԵՓ** Անուն Յիսուսի է, զի մեծասցի նա և բարձրասցի մինչև ի ծագս երկրի: Քրիստոս բարձրացաւ մինչև ի ծագս երկրի քարոզութեամբն իւրով, որ սփռեցաւ մինչև յուրոտս<sup>2</sup> երկրի: Ըստ Դաւթայ՝ «Ընդ ամենայն երկիր ել բարբառ աւետեաց նորա» (հմմտ. Սաղմ. ԺԸ 5):

Ամենայն, որ<sup>3</sup> հարցի ընդ վէմս, ընդ այս խորտակեսցի (Ի 18):

**ԵՓ** Ածէ ինքեամբ զպատիժսն ի վերայ իշխանաց ժողովրդեանն, որ մարտեան ընդդէմ նորա: Եւ կամեցան շիջուցանել զնա, զի ո՛չ քաղցրացաւ նոցա վարդապետութիւն նորա:

**ԿՐ** Այլ թշնամանաւք խաչէին և ընդ[դ]իմացան, խորտակեցան յահաւոր զաւրութեանց և ի<sup>4</sup> նշանացն եղելոց, և բարձաւ թագաւորութիւն նոցա, և զկնի Համբարձմանն եղծաւ կարգ պատարագացն<sup>5</sup>, և ցրուեցան ընդ ոլորտս<sup>6</sup> երկր[ի]:

Եւ յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ<sup>7</sup> (Ի 18):

**ԵՓ** Զոր ասաց Դանիէլ. «Վէմն<sup>8</sup>, որ եհար զպատկերն<sup>9</sup> և վշրեաց, և ինքն եղև լեառն մեծ, և լցաւ ի նմանէ ամենայն երկիր» (Դան. Բ 35)՝ աւետարանական քարոզութեամբն: Եւ խափանեաց նա զպաշտաւն կռոցն՝ այլովքն հանդերձ:

**Ստ.** Եւ աստ՝ զառնուլ քաղաքին և զբնաջինջ լինել ազգին, զոր կարի յայտնագոյն գուշակեաց:

**Կր.** Եւ գլետնում աւուրն գուշակէ<sup>10</sup>, զոր Յովհաննէս ասաց<sup>11</sup>. «Հեծանոցաւն սրբել զկալն» (Մատթ. Գ 12, Ղուկ. Գ 17): Զբաց որոշեալսն<sup>12</sup> յաջմէ<sup>13</sup> և յԱբրահամեան կայանիցն<sup>14</sup> // և ընդ դիւացն առաքել ի տանջանսն մեծ:

<sup>1</sup> B Միքիաս

<sup>2</sup> B ի ծագս... յուրոտս՝ սրբ. ստորին լս.

<sup>3</sup> B որ ընդ

<sup>4</sup> B չիք զաւրութեանց և ի

<sup>5</sup> B պատարագաց նոցա

<sup>6</sup> B երեսս

<sup>7</sup> B հոսեսցէ զնա

<sup>8</sup> B վանն

<sup>9</sup> B զպատկերան

<sup>10</sup> B նշանակէ

<sup>11</sup> B նշանակեաց

<sup>12</sup> B որոշելն

<sup>13</sup> A ի յաջմէ

<sup>14</sup> B կայանիցն

**Խնդրէին<sup>1</sup> դպ[իրքն]** (Ի 19):

**ՍՏ** Ի ցեղէն Շմաւոնի էին դպիրքն և խառն կային ընդ քահանայսն, թէպէտև ո՛չ ի քահանայագործութիւն:

**ԿՐ.** Զի ո՛չ ոք էր, որ առնէր զճշմարտութիւն: Ժողովուրդն իբրև զքահանայ հակառակի, զի ո՛չ հաւանէին նոքա խրատու<sup>2</sup> որպէս ո՛չ քահանայքն<sup>3</sup> աւրինացն, զի գայթակղեցան<sup>4</sup> նոքա ի տուէ:

**Եւ քահանայապետքն ի նմին ժամու արկանէին<sup>5</sup> ի նա ձեռս** (Ի 19):

**ԿՐ.** Յորժամ պարտ էր զարհուրել և երկիր պագանել, և ի պատժոցն զոր լուան՝ ակնածել և ցածնուլ: Սակայն նովին գրգռեցան, զի տարածամ ո՛չ էր աւրէն:

**Երկեան<sup>6</sup> ի ժողովրդենէն, զի գիտացին, թէ առ նոսա էր առական<sup>7</sup>** (Ի 19):

**ԿՐ** Բայց նոքա ո՛չ ի բազմացն եր[կ]ի[ւ]ղէ ցածնուին և ո՛չ ի բանիցն և ոչ ի մարգարէիցն վկայութենէ և ո՛չ ի վճռէն, զոր անձամբ ետուն: Քանզի զմաւտաւորս խնդրէին, որ գլխիվայր կործանէ և դարահոսեալ<sup>8</sup> քարավէժ առնէ, որ ընդ ժամանակիս հեշտուլթեան բեւոյ:

**Ապա<sup>9</sup> սպասեցին<sup>10</sup>** (Ի 20):

Մատթէոս ասէ. «Խորհուրդ առին» (Մատթ. ԻԲ 15): Հաւատալ պարտ էր հանդերձելոցն, սակայն ո՛չ յափրեցան<sup>11</sup> ի չարեացն, այլ երկնէին և յառաջ մատչէին: Եւ ունել ո՛չ կարէին, զի երկնչէին ի ժողովրդենէն:

**Առաքեցին՝ զաշակերտս իւրեանց հերո[ւ]ղիանոսաւքն, դաւաճան կեղծաւոր մատնել դատ[աւորին]<sup>12</sup>** (Ի 20):

**ՍՏ** Զաշակերտ[ս]ն իւրեանց և [զ]գինուորս:

<sup>1</sup> Եւ խնդրէին

<sup>2</sup> Խրատու նոցա

<sup>3</sup> Բ քահանայ

<sup>4</sup> A գայթակղեցան

<sup>5</sup> Ե արկանել

<sup>6</sup> Ե Եւ երկեան

<sup>7</sup> Ե ասաց զառական զայն *փխ* էր առակն

<sup>8</sup> Ե դարահոս և

<sup>9</sup> Ե Եւ սպա

<sup>10</sup> Ե *ներքեի լս. սրբ.*՝ նմա նենգութեամբ

<sup>11</sup> Ե յափռեցան

<sup>12</sup> Ե Եւ առաքեցին դաւաճանս, կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել, զի ըմբռնեացն զնա բանիւք՝ առ ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորին:

**Ստ.** Կրկին փորեն խորխորատ, յերկու կողմանց որոգայթ: Զի թէ ի 233բ Հռոմայեցոցն կոյսն խաւսի, կամ<sup>1</sup> զի յայնպիսի // իրս կարիցեն զրգուել ածել՝ ասել. «Ո՞չ է պարտ հարկս տալ կայսեր» (Մատթ. ԻԲ 17, հմմտ. Մարկ. ԺԲ 14): Վասն այսպիսի իրաց մեռան Թեւաւսեանքն և Յուդայ[եանքն]: Եւ «մատնել դատաւորին» որպէս այլ մի ստամբակ վասն արքունի<sup>2</sup> աւրինացն: Հարցին զնա առաջի ժողովրդեանն, զի առաւել վկայս կուտեսցեն: Եւ զայն ո՛չ զիտէին, թէ առաջի նոցա անմտութիւն նոցա յանդիմանի, այլ կարծէին թերևս շարժեսցուք<sup>3</sup> զժողովուրդն ի վերայ և յափ[շ]տակել զնա կարասցուք:

Վարդապետ, գիտեմք, զի ճշմարիտ ուսուցանես և ո՛չ առնուսակն<sup>4</sup> (Ի 21):

**Ոկ.** Զիա՞րդ յայնժամ ասէին խաբեբայ և մոլորեցուցիչ և «Ո՛չ է դա յԱստուծոյ» (հմմտ. Յովհ. Թ 16, 33): Այլ զամենայն հնարս իմացան զնենգութեան, զի կարասցեն բան ինչ հանել ի նմանէ:

Արժան է մեզ հարկս տալ կայսեր<sup>5</sup>, թէ՛ [ո՛չ] (Ի 22):

**ԵՓ** Կարծեսցուցանէին<sup>6</sup>, թէ յափշտակել կամի զթագաւորութիւն Իսրայելի՝ որդի Դաւթի գոլով: Թէ ասիցեն մի՛ տայք զհարկս, գտցեն պատճառս, թէ զանձն քարոզէ թագաւոր: Զի ո՛չ<sup>7</sup> կամք նոցա չտալն էր կամ տալն, այլ զի թակարդաւ սպասեսցեն:

**Ստ.** Եւ զի, թէ ասիցէ<sup>8</sup> աւրէնքն ո՛չ հրամայեն հեթանոսաց հնազանդել, մատնեսցեն Պիղատոսի: Իսկ եթէ ասիցէ պարտ է տալ, ասիցեն ցժողովուրդն. «Տեսե՛ք, որպէ՞ս քակէ զկրաւնս հայրենիս, և հրամայէ հարկիլ հեթանոսաց»: Թերևս այնու զժողովուրդն քակեսցեն ի նման[է] թշնամութեամբ և յիւրեանց կամսն դարձու[ս]ցեն:

**ԻԳ** Եւ զայն<sup>9</sup> ո՛չ պարզ, ուղիղ դնեն առաջի, այլ՝ թաքուցանելով զանձինսն, և գողանան զերկու[ս] կողմանսն՝ զդատաւորին և ժողովրդեանն:

<sup>1</sup> Ե և կամ

<sup>2</sup> Ե յարքունի փխ վասն արքունի

<sup>3</sup> Ե կարասցուք շարժել

<sup>4</sup> Ե Հարցին ցնա և ասեն. Վարդապետ, գիտեմք, եթէ ուղիղ խաւսիս և ուսուցանես և ոչ առնուսակն, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես:

<sup>5</sup> Ե դրփխ կայսեր հարկս տալ

<sup>6</sup> Ե կարծիս տային

<sup>7</sup> Ե ոչ եթէ

<sup>8</sup> Ե ասացեն

<sup>9</sup> Ե զայս

**Յիսուս նայեցաւ ի խորամանկութիւնս նոցա<sup>1</sup> (Ի 23):**

234ա // Իմաստութիւն Հաւր, որ ստեղծ<sup>2</sup> զմիտս, ի միտ առնու զամենայն խորհուրդս և զգործս նոցա, քանզի Աստուած ո՛չ խաբի կեղծաւոր պատրանաւք:

**Յուցէք ինձ զդաճեկան<sup>3</sup>՝ հարկին: Եւ<sup>4</sup> ցուցին (Ի 24):**

ՈԿ **Ձի որպէս միշտ ընդ նոցա<sup>5</sup> բերանն հանէ զվճիռն<sup>6</sup>, նոյնպէս և աստ: Եւ ո՛չ որպէս անգէտ հարցանէ, այլ կամի առնել զնոսա պատժապարտս:**

**Ասէ. Ձո՞յր պատկեր ունի և զգիր: Ասեն. Ջկայս[եր]<sup>7</sup> (Ի 24):**

ԿՐ **Թագաւորացն սովորութիւն էր զիւրեանց պատկերն դրոշմել և զանունն ի դաճեկանսն յիւրեանց ժամանակս: Վասնզի Աւգոստոսի<sup>8</sup> ըստ աշխարհագրին հարկս տային ըստ գլխոյ, զի ընդ հեթանոսաց ձեռաւք մտին վասն արհամարհելոյ զպատուիրանն Աստուծոյ:**

ԻԳ **Գրովն և պատկերաւն, զոր ընկալան նոքա, պարտական էին անդրէն դարձուցանել զնա:**

**Արդ՝ տուք զկայս[երն] (Ի 25):**

ԿՐ. **Որ տիրէ ձեզ ըստ մարմնոյ գանձուց, այլ ո՛չ հաւատոց հարցուածքս են<sup>9</sup> ի ձէնջ:**

**Եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ (Ի 25):**

ԵՎ. **Ձի յայտ արասցէ նոցա, թէ վարդապետութիւն նորա ճշմարիտ է և վերագոյն յայնմանէ<sup>10</sup>, որ յերկրի է և զկեանս մարդկան<sup>11</sup> կամի: Բայց զոր ինչ Աստուծոյ պարտիմք՝ հատուցէք, այսինքն՝ զհաւատս և զգործս ըստ հաւատոց:**

**Ջարմացան ընդ վարդապետութիւն նորա և լուեցին<sup>12</sup> (Ի 26):**

---

<sup>1</sup> B Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ ասէ ցնոսա:  
<sup>2</sup> B Եստեղծ  
<sup>3</sup> A զդեճեկան B զդաճեկանն  
<sup>4</sup> B Եւ նոքա  
<sup>5</sup> B նոցին  
<sup>6</sup> A զվճիռն  
<sup>7</sup> B Եւ ասէ. Ձո՞յր պատկեր և գիր ունի: Պատասխանի ետուն և ասեն. Ջկայսեր: Եւ նա ասէ ցնոսա. Արդ՝ երթայք տուք զկայսերն կայսեր (Ի 24-25):  
<sup>8</sup> A Ոգոստոսի B Աւգոստոսին  
<sup>9</sup> B չէք են  
<sup>10</sup> B յայնմանէ  
<sup>11</sup> B սրբ. է ձախ լս.  
<sup>12</sup> B Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն: Եւ զարմացեալ ընդ

**ՈԿ** Պարտ էր հաւատալ նոցա, քանզի զաստուածութեանն զհանդէսն եցոյց՝ զծածուկս սրտից նոցա յայտնելով: Մի՞թէ հաւատացին: Եւ ո՛չ երբեք: Եւ լռեցին, վասնզի ո՛չ<sup>1</sup> գտին պարտճառս, ըստ որում յուսային:

**Մատուցեալ սաղուկեցիքն հակառակէին չլինել յարութիւն<sup>2</sup>** (Ի 27):

**234բ ստ.** Սոքա զյարութիւն // չխոստովանին<sup>3</sup> մեռելոց և ո՛չ հրեշտակ<sup>4</sup> գոլ և ո՛չ զհոգիսն<sup>5</sup> անմահ: Նոյնպէս<sup>6</sup> սամարացիքն, որ ասին պահապանք: Այլ իմն հերձուած[ք] ճեղքեալ ի մէջ հրէիցն

**ԵՓ** առանձնականքն, որք ասէին ո՛չ վարձուց<sup>7</sup> պաշտեմք զԱստուած: Որքան զերևելիս ո՛չ իմանան, և ո՛չ հաստատիլ կարեն:

**Մովսէս հրամայեաց մեզ, թէ ուրուք եղբայր մեռանիցի անորդի, առցէ եղբայր նորա զկին նորա և յարուսցէ զաւակ եղբաւրն<sup>8</sup>** (Ի 28):

**Եւ<sup>9</sup> եւթանեքինն<sup>10</sup> կալան զնա, որ բնաւ ո՛չ ուրեք եղև** (*հմմտ.* Ի 29-33):

Վասն այնորիկ ասեն զայս, որպէսզի նովաւ<sup>11</sup> զմեծ խորհուրդ յարութեանն ծիծաղելի անմտացն ցուցցեն:

**Կր.** Անլուծանելի վարկանելով զհարցուածն՝ կամէին զյարութեանն վարդապետութիւն ընդունայն առնել խորամանկելով: Թէ միոյն ասիցէ լինել զկինն ի յարութեանն, ասիցեն. «Զիա՞րդ ամենեքին կալան զնա»: Իսկ եթէ հասարակաց՝ անվայելուրչ իմանի Աստուծոյ, զոր և ո՛չ յաշխարհիս աւրինադրեաց, ապա ըստ իւրաքանչիւրոց անլուծանելի<sup>12</sup> մնայ<sup>13</sup> հարցուածն: Արդ՝ դադարեացին

պատասխանի՝ լռեցին

<sup>1</sup> Եւ ոչ

<sup>2</sup> Ե Մատուցեալ ոմանք ի սաղուկեցոցն, որք հակառակէին չլինել յարութիւն, հարցին ցնա և ասեն. Վարդապետ (Ի 27-28):

<sup>3</sup> Ե չխոստովանէին

<sup>4</sup> Ե հրեշտակք

<sup>5</sup> Ե զհոգի

<sup>6</sup> Ե նոյնպէս և

<sup>7</sup> Ե վան վարձուց

<sup>8</sup> Ե Մովսէս գրեաց մեզ, եթէ՝ Ուրուք եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին և նա անորդի իցէ, զի առնու եղբայրն նորա զկինն և յարուսցէ զաւակ եղբաւր իւրում:

<sup>9</sup> Ե **չիք** եւ

<sup>10</sup> Ե եւթանեքեան

<sup>11</sup> Ե **չիք** նովաւ

<sup>12</sup> Ե անլուծալելի

<sup>13</sup> Ե նմա



ճառք յարութեանն, զոր վարդապետես: Մատթէոս ասէ. «Մոլորեալ էք, ո՛չ գիտէք զգիրս և ո՛չ զգաւրութիւնս<sup>1</sup> Աստուծոյ» (Մատթ. ԻԲ 29):

**ՍՏ<sup>2</sup>.** Սոքա զՄովսէս միայն ընդունէին ի մարգարէիցն և զգրոյն զաւրութիւնն ո՛չ գիտէին (տե՛ս Մատթ. ԻԲ 29), որ է մեկնութիւն, և միայն ի բառսն հայէին,

ԻԳ. զի յիմարք են և տկարք, և նովին զԱստուած չափեն:

**Եւ Յիսուս ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն և արանց լինին** (Ի 34):

ԿՐ. Պատշաճ յաւրինացն<sup>3</sup> զպատասխանիսն՝ ասելով. «Որովհետեւ

235ա մահկանացուք են»: Յիրաւի, «կանաս առնեն և ար(//)անց լինին», զի ո՛չ ծնանելովն մահն բառնայ զմարդկային բնութիւնս, և չարին մախանքն յառաջ գայցեն<sup>4</sup>, որով պատրեաց զնախաստեղծն: Վասն այսորիկ պէտք են որդեծնութեան, զի մի՛ ջնջեսցի ստեղծուածն Աստուծոյ:

Իսկ, որ արժանի լիցին այնմ աշխարհի, ո՛չ կանայս առնեն և ո՛չ արանց լինին<sup>5</sup> (Ի 35):

Զի ո՛չ ևս այնուհետեւ կասկած է մահու, և ո՛չ է ժամանակ որդեծնութեան, այլ՝ փառաց, զի ի նմանէ փառաւորելոց են: Ապա ընդ վայր է հարցուածդ ձեր.

**Զի հաւասար հրշտակաց են, և որդիք Աստուծոյ**<sup>6</sup> (Ի 36):

Քանզի իբրև զհրեշտակս են, յայն սակս ո՛չ ամուսնանան, այլ և ազատք են յախտից: Զի որ ինչ այժմ զմեզ վտանգեն ախտք, ընդ մարմինս<sup>7</sup> ո՛չ յառնեն, այլ հրեշտակային իմն և անլուծանելի են բնութեամբ:

<sup>1</sup> Բ զգաւրութիւնն

<sup>2</sup> Բ ունի նաև հղված՝ ԻԳ

<sup>3</sup> Բ յաւրինեաց

<sup>4</sup> Բ յառաջագայեն

<sup>5</sup> Բ Արդ՝ ևթն եղբարք էին, և առաջնոյն առեալ կին՝ մեռաւ անորդի: Առ զնա երկրորդն, մեռաւ և նա անորդի: Առ զնա և երրորդն, նոյնպէս և եօթանեքին: Եւ ոչ թողին որդիս: Մեռաւ և կինն: Արդ՝ ի յարութեանն ո՞ւմ ի նոցանէ լինիցի կին, զի եօթանեքին կալան զնա կին: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն և արանց լինին, իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել և յարութեանն, որ ի մեռելոց, ոչ կանայս առնեն և ոչ արանց լին[են]՝ քանզի և ոչ մեռանել ևս կարեն (Ի 29-36):

<sup>6</sup> Բ Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են

<sup>7</sup> Բ մարմնոյս

**Քանզի յարութեան որդիք են** (Ի 36):

**ԿԲ** *Ըստ շնորհացն Աստուծոյ<sup>1</sup> և անճառ հատուցմանցն և անապական կենացն և անմահ փառացն, զի նորոգման որդիք են և նորոյ արքայութեան:*

**Այլ յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց ի մորենոջն զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու և զԱստուծոյ Սահակայ և զԱստուծոյ Յակոբայ** (Ի 37):

**Ստ.** *Ձի թէ գիտէին, որ ասաց. «Ես եմ Աստուած Աբրահամու, Սահակայ և Յակոբայ»* (Ելք 9 6):

**Եւ Աստուած ո՛չ մեռելոց, այլ՝ կենդանեաց** (Ի 38):

**ստ.** *Ապա գիտէին անմահ զհոգիս նոցա և խոստովանէին զյարութիւն: Ձի յորժամ կշտամբեաց զնոցա չարաչար հարցուածն և զսնոտի իմացմունսն, ապա ճառէ զհրաշափառագոյնսն ի նոցուն[ց] զրոց:*

**ԻԳ** *Եւ զի ո՛չ կամեցաւ կնքել զբանս իւր՝ վկայութեամբ ծառայից իւրոց մարգարէից, այլ հաւասար են<sup>2</sup> բնութեամբ, զի // վկայեսցէ Աստուած աստուածոց, և «Աստուած չէ մեռելոց»* (Մատթ. ԻԲ 32, Մարկ. ԺԲ 27):

**ՈԿ** *Ձի ո՛չ եթէ ո՛չ էիցն է Աստուած, որ ապականեալ են, և չեն յառնելոց ի փառաւոր Յարութեանն:*

**Այլ կենդանեաց** (Ի 38):

*Ձի թէպէտև մեռեալ իցեն մարմնով, այլ<sup>3</sup> կենդանի են: Ձի որպէս Ադամ եկեաց յետ ուտելոյն ի ծառէն ինն հարիւր և երեսուն<sup>4</sup> ամ, սակայն մեռեալ էր պատուհասիւն, որ եղաւ ի վերայ նորա: Նոյնպէս և արդարքն, թէպէտ մեռեալ են<sup>5</sup>, կենդանի են<sup>6</sup> աւետ[ե]ալք յարութեանն:*

**Ասեն ոմանք ի դպրացն. Վարդապե՛տ, բարիոք ասացեր<sup>7</sup>** (Ի 39):

<sup>1</sup> Բ *չիք* Աստուծոյ

<sup>2</sup> Բ ի հաւասարէն

<sup>3</sup> Բ Աստուծոյ

<sup>4</sup> Բ ԶձԼ

<sup>5</sup> Բ էին

<sup>6</sup> Բ էին

<sup>7</sup> Բ Այլ, զի յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց ի մորենոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու և զԱստուծոյ Սահակայ և զԱստուծոյ Յակոբայ: Եւ Աստուած չէ մեռելոց, այլ կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանի են: Պատասխանի ետուն ոմանք ի դպրացն և ասեն. Վարդապե՛տ, բարևոք ասացեր: Եւ ոչ ոք իշխէր հարցանել զնա (Ի 37-39):

**ԻԳ** *Ջայս լուեալ, որոց յոյսն հաստատուն էր, վկայութիւնն ճշմարիտ ետուն, և ի բաց եղեն յառաջին կարծեացն:*

**Եւ ո՛չ ոք իշխէր հարցանել զնա<sup>1</sup> (Ի 40):**

**ՈԿ.** *Ոմանք առ երկիւղիւ գային<sup>2</sup> յայս, իսկ միամիտ ժողովուրդն և անտի ևս մեծամեծ<sup>3</sup> շահէին, քանզի այնպիսի<sup>4</sup> է Յարութիւնն: Աւն առեալ զամենայն հնարս հնարեսցուք, զի առաջին աշտիճանացն հասանիցեմք ի Քրիստոս Յիսուս<sup>5</sup>, որում փառք յաւիտեանս:*

**Հարցանէ. Զի՞արդ ասեն զՔրիստոսէ<sup>6</sup> (Ի 41):**

**ՈԿ.** *Յետ բազում սքանչելեաց[ն] գործելոյ: Հարցանէ մեղմով, և ածէ զնոսա ի գիտութիւնն՝ դաւանել զնա Աստուած, զի մերձ էր ի չարչարանքն, և զի մարդ սոսկ համարէին և ո՛չ Աստուած միացեալ ի մարմնի:*

**Եւ ասէին. Որդի Դաւթի է (Ի 41):**

**ԿՐ** *Զի զՔրիստոս ո՛չ ըստ Միքիայ մարգարէութեանն ի Բեթղեեմէ համարէին<sup>7</sup>, այլև Նազաւրացի կոչէին, որ թարգմանի ուխտաւոր արհամարհեալ<sup>8</sup>: Եւ հանումն նմա խորհէին ածել և աւտարացուցանել ի մարգարէութենէն, որ ըստ մարմնոյ ի Դաւթայ ծնանելոց էր ի Բեթղեեմ:*

**Ասէ ցնոսա Յիսուս. Զի՞արդ թուի<sup>9</sup> ի Գիրս Սաղմոսաց<sup>10</sup> ասէ.**

**236ա // Ասաց Տէր ցՏէր իմ (Ի 42):**

**ՈԿ** *Դնէ առաջի զմարգարէութիւնն, որ յայտնի իսկ զնա Տէր քարոզեաց: Քանզի նոքա ո՛չ ետուն ստոյգ վկայութիւն<sup>11</sup>, վասնզի<sup>12</sup> մարդ լոկ համարէին զնա: ԶԴաւիթ ի մէջ ածէ քարոզ աստուածութեանն և զիւր տէրութեանն աստուածութիւնն<sup>13</sup> յայտնէ, թէ՛*

<sup>1</sup> B և ոչ ինչ *փե* զնա

<sup>2</sup> B երկիւղի գան ի

<sup>3</sup> B մեծամեծս

<sup>4</sup> B այնպէս

<sup>5</sup> B Յիսուս ի Տէր մեր

<sup>6</sup> B Ասէ և առ նոսա. Զի՞արդ ասեն զՔրիստոսէ, եթէ որդի Դաւթի է, զի ինքն Դաւիթ ասաց ի Գիրս Սաղմոսաց (Ի 41-42):

<sup>7</sup> B Բեթղեեմ էին ասէ

<sup>8</sup> B ուխտադիր համարեալ

<sup>9</sup> B Դաւթի

<sup>10</sup> A տաղմոսաց

<sup>11</sup> B պատասխանի

<sup>12</sup> B զի

<sup>13</sup> B ճշմարտութիւնն

«Արդարև Որդի Աստուծոյ<sup>1</sup>» (Մատթ. ԺԳ 33, ԻԷ 54, Մարկ. ԺԵ 39) և հանդիտապատիւ Հաւրն: Եւ զի նոքա ասէին, թէ որդի Դաւթի միայն է և ո՛չ Տէր նորին (հմմտ. Մատթ. ԻԲ 41-45, Մարկ. ԺԲ 35-37, Ղուկ. Ի 41-44): Եւ յորժամ ասաց, թէ՛ «Մի է Տէր» (Մարկ. ԺԲ 29), ապա և զանձնէ ասաց, եթէ Տէր է՝ վկայութեամբ մարգարէին և գործոցն:

**ԿՐ** Արդ՝ զոր դուք Նազաւրացի կամ<sup>2</sup> որդի Դաւթի ասէք, զնա Դաւիթ Տէր իւր կոչեաց, զի տիրաբար ըստ Դաւթի (տե՛ս Մատթ. ԻԲ 42-45, Մարկ. ԺԲ 35-37, Ղուկ. Ի 41-44) զիմս տեսանէք հրաշագործ նշանս<sup>3</sup> ըստ նորա<sup>4</sup> նախատեսութեանն, զի Տէր զնա վկայէր:

**ԻՊ** Նաև դարձուցանէ զբանն յառաջինն<sup>5</sup>, որով Դաւիթ Հոգով վկայեաց՝ Տէր նորին ասացեալ: Եւ ո՛չ որպէս մարդ ուրուք<sup>6</sup> տիրել ումեք, այլ Տէր նորա և ամենեցուն և հաւասար Աստուծոյ Հաւր:

Նիստ ընդ աջմէ ի[մ]մէ, մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց (Ի 42-43):

**ԿՐ** Արհաւիրս արկանէ յաջորդաւքն<sup>7</sup>, զի գէթ այնպէս ածցէ զնոսա՝ զինքեամբ ցուցանելով, եթէ Հայր այնպիսումն<sup>8</sup> վրէժխնդիր է, և բազում պատիւ և միաբանութիւն ունի ընդ ծնաւղին<sup>9</sup>: Ջայս գլուխ եդ ի վերայ ամենայն բանից, զոր առ նոսա ասացաւ, և բաւական իսկ է կարկել զբերանս նոցա:

Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ (Ի 44):

236բ Եւ ո՛չ ոք կարէր<sup>10</sup> տալ նմա պատասխանի բան մի և ո՛չ ոք իշխէր հարցանել յայնմ<sup>11</sup> հետէ և ո՛չ ինչ: // Եւ այս<sup>12</sup> յովով աւգուտս<sup>13</sup> ժողովրդեանն գործէր:

Լո՛ւ<sup>1</sup> ի լո՛ւ ամենայն ժողովրդեանն, ասէ ցաշակերտսն. Զգոյշ լերուք ի դպրացն<sup>2</sup> (Ի 45-46):

<sup>1</sup> B Աստուծոյ է

<sup>2</sup> B և կամ

<sup>3</sup> B նշան, որ

<sup>4</sup> B Դաւթայ

<sup>5</sup> B յառաջին բնութիւնն

<sup>6</sup> B ուրեք

<sup>7</sup> B յաջորդեաւքն

<sup>8</sup> B այժմ

<sup>9</sup> A ծնողին

<sup>10</sup> B կարէին *փխ* ոք կարէր

<sup>11</sup> A, B ի յայնմ

<sup>12</sup> B այն

<sup>13</sup> B աւգուտս

**Իգ.** Պախարակէ զվերակացուս նոցա ի լուր նոցին և ի զգուշութիւն:

**ՈԿ** Այս<sup>3</sup> և ի սնապարծութիւնս բամբասէ զնոսա և յանարգորոյն միտս<sup>4</sup> և ի ծուլութեան, որ կորոյս զնոսա և մերժեաց յԱստուծոյ:

Որ կամին պատմութեանաւք շրջել (Ի 46):

Զոր Մատթէոս ասէ, թէ՛ «Լայնեն զգրապանակս» (Մատթ. ԻԳ 5): Քանզի ստէպ իմն մոռանային զերախտիսն Աստուծոյ, հրաման ետ ի գիրս փոքունս գրել զսքանչելիսն Աստուծոյ և կապել<sup>5</sup> զբազկան, զոր ասէր, եթէ<sup>6</sup>՝ «Եղիցի անշարժ առաջի աչաց քոց<sup>7</sup>» (Ելք ԺԳ 16, Բ Օր. Զ 8):

**ԻԳ** Իսկ նոքա զերեւելեալքս միայն ձևանային և զպանծանս<sup>8</sup> զգեստուն կեղծաւորէին: Եւ ո՛չ կամէին յիշել յորոց եղեն, զի՝ «Երկայնեն զքղանց[ս] հանդ[երձից]» (Մատթ. ԻԳ 5):

**ՈԿ** Իբրև մանկտոյ հրամայեաց նիւթս կապուտակս շուրջ զաւձիւքն և առ ստորոտովն<sup>9</sup> զասխանիսն կարել, զի յայն հայելով յիշեսցեն զպատուէրս նորա: Վասնզի յայն իմն փոյթք էին զտարմանակս գրոյն լայնել և զքղանցս երկայնել: Սիրեն<sup>10</sup> զողջոյնս ի հրապարակս և նախաթոռս ի ժողովուրդս<sup>11</sup> (տե՛ս Մատթ. ԻԳ 5-6): Որ թէպէտև փոքր ինչ թուի, այլ<sup>12</sup> մեծամեծ չարեաց պատճառք են, և զքաղաքս և զեկեղեցի կործանէ: Այլև ինձ արտասուք գայ, յորժամ զնախաթոռոցն լսեմ, և զողջունիցն և զմտաւածեմ որչա՛փ չարիք ծնան անտի<sup>13</sup> եկեղեցեաց Աստուծոյ, զոր չէ պարտ ձեզ ի վեր հանել, մանաւանդ թէ ծերքտ<sup>14</sup> ճարտար գիտեն:

**237ա ստ.** Արդ՝ եթէ սիրելն մեղադրութիւն է<sup>15</sup>, առնելն //<sup>16</sup> և որսալն զնա և փութալ նմին հասանել որչա՛փ ևս:

<sup>1</sup> Ե Եւ լու

<sup>2</sup> Ե դպրացն, որ կամին պատմութեանաւք շրջել:

<sup>3</sup> Ե այլ

<sup>4</sup> Ե յանդիմանէ վասն անագորոյն մտաց նոցա

<sup>5</sup> Ե հրաման ետ... կապել՝ սրբ. ստորին լս.

<sup>6</sup> Ե և եթէ

<sup>7</sup> Ե քո

<sup>8</sup> Ե, Ե զպանծանս

<sup>9</sup> Ե ստորոտեալք

<sup>10</sup> Ե Եւ սիրեն

<sup>11</sup> Ե ժողովուրդս և զբարձր երէց յընթրիս

<sup>12</sup> Ե չիք այլ

<sup>13</sup> Ե անդի

<sup>14</sup> Ե ծերքդ

<sup>15</sup> Ե է նոցա

<sup>16</sup> Ե այս էջից սկսած ձեռագիրն ունի կրկնակ էջակալում (սխալը ջնջած է և ճիշտը գրած):

**Որ ուտեն զտունս այրեաց** (Ի 47):

ոկ. **Հեզնէ<sup>1</sup> զնոսս որկորստութեամբ:** Եւ այն չար ևս էր, զի ո՛չ միայն ի մեծատանց, այլև յաղքատաց պարարէին զորովայնս իւրեանց:

Իգ. **Եւ զաղքատութիւնս նոցա ևս քան զևս նեղէին,** զի որոց պարտ էր թեթևացուցանել զայրութեան ծանրութիւն, նոքա յաւելուին ի տառապանս[ն], պատճառանաւք յերկարէին<sup>2</sup> զաղաւթս: Պայման վաճառականութեան ղժնդակագոյն էր նոցա, զի ամենայն, որ զչար գործէ, արժանի է պատժոց: Իսկ, որ պատճառս ի բարի երկի[ւ]ղածութենէ առնու և այնու կերպարաւք<sup>3</sup> ի չարիս վարի, ևս ղժնդակագոյն պատժոց պարտական է:

**Նոքա ընկալցին աւելի դատաստանս<sup>4</sup>** (Ի 47):

ԻԳ **Նոցոյց նոցա<sup>5</sup>, եթէ որք մերկ զչարն գործեն, փոքր վրէժս տան,** քան զայն, որ բարեաւն վարին ի չարն:

<sup>1</sup> B Հենգնէ

<sup>2</sup> B յերկարեն

<sup>3</sup> B կերպարանաւք

<sup>4</sup> B դատաստան

<sup>5</sup> B այսու

## Ք-լուխ ԻԱ

Ետես մեծատունս<sup>1</sup>, որ արկանէին զտուրս իւրեանց ի գանձանակն (ԻԱ 1):

ԿՐ Արդ՝ ամբարեալքն ի գանձանակն լինէր աղքատացն ի դարմանս: Վասնզի նախքան զմտանել շաբաթուն աղքատք[ն] գային խնդրել [ող]որմութիւն, զի աւրէնքն հրամայէր ի շաբաթուն դատարկանալ ամենեցուն:

Ետես այրի մի աղքատ<sup>2</sup>, որ արկ երկու[ս] լումայս<sup>3</sup>: Եւ ասէ, թէ՛ Աւելի քան զամենեսին էարկ<sup>4</sup> (ԻԱ 2-3):

Վասն այսորիկ և Տէրն ի նմին ժամուն գովէ զողորմութեանն ծախս:

Նոքա ի մթերից իւրեանց արկին<sup>5</sup> (ԻԱ 4):

Ի<sup>6</sup> բաց հանելով զսնապարծութեանն խորհուրդ<sup>7</sup> մեծատանց: 237բ Զի ո՛չ են հաճոյական, որ յաւելորդ(//)աց<sup>8</sup> ստացուածոցն է<sup>9</sup> և սնափառական տուրք:

Բայց նա ի կարաւորութենէ զամենայն զկեանս իւր<sup>10</sup> արկ (ԻԱ 4):

Զի, որ հաւատոցն և յուսոյ է տուրք, թէև սակաւ իցէ, առաւել առնուցու զհատուցումն: Ըստ այնմ, եթէ՛ «Լաւ է սակաւ<sup>11</sup> ինչք արդարոյն, քան զբազումս մեղաւորաց» (Սաղմ. ԼՁ 16):

Իգ. Կամ զյաւժարութիւն կամաց աղքատացն չափեաց հաւասարագոյիցն և մեծացոյց զփոքրն, զի զարթիցեն և մի՛ ամաչեսցեն բաշխել ի չքաւորութենէ իւրեանց:

Յասել ոմանց զտաճարէն գեղեցիկ վիմաւք<sup>12</sup> (ԻԱ 5):

<sup>1</sup> Եւ հայեցեալ ետես զմեծատունսն

<sup>2</sup> Ա ախքատ

<sup>3</sup> Ա լումայս

<sup>4</sup> Եւ ետես և զկին ոմն այրի աղքատ, որ արկ երկուս լումայս և ասէ. Արդարև ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին:

<sup>5</sup> Եւ Ամենեքին նոքա ի մթերից իւրեանց արկին յը[ն]ծայսն Աստուծոյ, բայց նա ի կարաւորութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր, զոր ունէր, արկ:

<sup>6</sup> Եւ Աստ ի

<sup>7</sup> Եւ խորհուրդս

<sup>8</sup> Ա ի յաւելորդաց

<sup>9</sup> Եւ են

<sup>10</sup> Եւ իւր զոր ունէր

<sup>11</sup> Եւ սակաւիկ

<sup>12</sup> Եւ եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմաւք և աշտարակաւք զարդարեալ է:

**ՅԿ.** *Քանզի ասաց.* «Թողեալ լիցի<sup>1</sup> տունդ ձեր աւերակ» (Մատթ. ԻԳ 38): *Եւ բազում<sup>2</sup> գուշակեաց զնոցա չարիսն յառաջագոյն: Իսկ աշակերտքն յիշեցուցանէին<sup>3</sup> նմա զգեղեցկութիւն տաճարին և զարմանալով՝ տարակուսէին, եթէ այնչափ գեղեցկութիւն<sup>4</sup> ապականի<sup>5</sup>, և պէսպէս նիւթքն և ազգի ազգի հնարք արուեստի<sup>6</sup> ցն:*

**Ասէ Յիսուս.** Այդ ամենայն ո՛չ թողցի քար ի քարի<sup>5</sup> (ԻԱ 5-6):

*Զբնաջինջ աւերածին յառաջագոյն մարգարէանայ: Եւ զիւր<sup>7</sup> ասեն մինչև ցայժմն կայ: Կամ զայն տեղոյն կողմ ասաց, յորում վայրի կային, քանզի մինչև ց՛հիմն յատակեցաւ ի հռոմայեցոցն<sup>6</sup>: Եւ յիսրայեղացոցն պարտ է հաւատալ հանդերձելոցն<sup>7</sup> հակառակորդացն:*

**ԻԳ** *Կամ<sup>8</sup> վասն մարդոյն<sup>9</sup> անհաւատութեան:*

**Հարցին. Ե՞րբ լինի<sup>10</sup>** (ԻԱ 7):

**ՍՏ** *Այսի[ն]քն՝ կործանումն տաճարին: Վասն այնորիկ առանձինն հարցին:*

**Զի՞նչ նշան է, յորժամ այդ լինելոց է<sup>11</sup>** (ԻԱ 7):

**ստ.** *Քանզի աւտար իմն պատերազմ համարէին լսել զայն, որ գալոցն էր ի վերայ Երուսաղեմի, իբրու եթէ արտաք(//)ոյ խռովութեանց լինելոց են և բարեացն միայն փափագել<sup>12</sup> ական ունէին: Վասն այնորիկ<sup>13</sup> զգժուարինս յառաջ<sup>14</sup> գուշակէ նոցա և հրամայէ արթուն լինել:*

**ԵՓ** *Արդ՝ նշան կատարածին Երուսաղեմի՝ դրաւշս կանգնեցին Հռոմք ի տաճարին: Եւ նկարեալ էր ի նմա արծուի, որպէս ասաց Դանիէլ. «Ի վերայ թևոց» (Դան. Է 4) «պղծութեան ապականու-*

<sup>1</sup> Բ լիցին

<sup>2</sup> Բ բազում անգամ

<sup>3</sup> Բ յիշեցուցանեն

<sup>4</sup> Բ գեղեցկութիւն շինուածոյս

<sup>5</sup> Բ Ասէ Յիսուս. Զայդ ամենայն, զոր տեսանէք, եկեացեն աւուրք, յորս ոչ թողցի այդքար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի:

<sup>6</sup> Բ հռովմայեցւոցն

<sup>7</sup> Բ հանդերձելոյն

<sup>8</sup> Բ զարմանամ

<sup>9</sup> Բ մարդոյս

<sup>10</sup> Բ Հարցին ցնա և ասեն. Վարդապետ, ե՞րբ լինիցի այդ:

<sup>11</sup> Բ Եւ զի՞նչ նշան իցէ, յորժամ այդ լինելոց իցէ:

<sup>12</sup> Բ փափագեալ

<sup>13</sup> Բ այսորիկ

<sup>14</sup> Բ յառաջագոյն



Թեան<sup>1</sup>» (Դան. ԺԱ 31): Այլև ասեն, թէ խոզի գլուխ ետուն բերել ի Հոռոմայ<sup>2</sup> ի ձեռն Պիղատոսի և ղնել ի տաճարին: Եւ ոմանք զմանկակեր կինն ասեն:

**ՍՏ** Դանիէլ այսպէս ասէ<sup>3</sup>. «Երրորդի և կէս<sup>4</sup> բարձցի<sup>5</sup> պատարագ<sup>6</sup> տանն Աստուծոյ և նուէրք<sup>7</sup> մինչ<sup>8</sup> ի կատարած աշխարհի, և պիղծն անապատի ի կատարածի տացէ» (հմմտ. Դան. Թ 27): Զոր Պաւղոս ասէ. «ԶՆեռն<sup>9</sup>, որ անապատ առնէ<sup>10</sup> և ապականէ զերկիր, և նստելոց է ի տաճարին<sup>11</sup> և ցուցանէ զանձն, եթէ<sup>12</sup> աստուած<sup>13</sup> իցէ» (հմմտ. Ա Թես. Բ 4):

**Զգոյշ կացէք, մի՛ խաբիք, զի բազումք գայցեն յանուն իմ<sup>14</sup>**  
(ԻԱ 8):

*Թէպէտ Յուդաս և Թևդաս զնոյն ախտացան, այլ առաւել ևս զՆեռնէն ասէ.*

**Զգոյշ կացէք** (ԻԱ 8):

*Որ պատրող նշանաւք խաբէ զմարդիք<sup>15</sup>՝ զինքն գոլ<sup>16</sup> Քրիստոս:*

**Ի մերձեանալ ժամանակին մի՛ երթայցէք զկնի նորա<sup>17</sup>** (ԻԱ 8):

*Արդ՝ յառաջագոյն գուշակեաց զաւերն Երուսաղեմի: Ապա ղնէ զնեղութիւն հաւատացելոցն յառաջ քան զգալուստն իւր յՈրդոյն<sup>18</sup> կորստենէ, որ Քրիստոս զանձն<sup>19</sup> ղաւանէ:*

<sup>1</sup> B սրբ.՝ և ապականութեան  
<sup>2</sup> B սրբ.՝ Հոռոմայ  
<sup>3</sup> B ասէ թէ  
<sup>4</sup> B յերրորդի և ի կէս  
<sup>5</sup> B սրբ.՝ բարձցին  
<sup>6</sup> B պատարագք  
<sup>7</sup> B *դրփիս* և նուէրք տանն Աստուծոյ  
<sup>8</sup> B մինչև  
<sup>9</sup> B զՆեռնէն  
<sup>10</sup> B *չիք* որ անապատ առնէ  
<sup>11</sup> B տաճարիս  
<sup>12</sup> B թէ  
<sup>13</sup> B *չիք* Աստուած  
<sup>14</sup> B Եւ նա ասէ. Զգոյշ կացէք, մի՛ խաբիցիք, զի բազումք գայցեն յանուն իմ և ասացեն, թէ ես եմ: Եւ մերձեցաւ ժամանակ, մի՛ երթայցէք զկնի նորա:  
<sup>15</sup> B զմարդիկ  
<sup>16</sup> B գոլով  
<sup>17</sup> B նոցա  
<sup>18</sup> A, B ի յորդոյն  
<sup>19</sup> B զինքն

**ԻԳ** Եւ կարգաւ զնէ զժամանակն և զեղեալսն ի նմա: Եւ զգուշացուցանէ զհաւատացեալսն իւր մի՛ գնալ զհետ նորա<sup>1</sup>, որ ա՜նուամբ նորա հնարի գողանալ զբազումս:

**Լսէք պատերազմունս և խռով[ութիւնս]<sup>2</sup>** (ԻԱ 9):

Բայց նա[խ] պատերազմն զԵրուսաղեմին ասէ և ո՛չ զամենայն տիեզերաց:

**238բ** // Մի՛ վարհուրիք<sup>3</sup> (ԻԱ 9):

Զի<sup>4</sup>, յորժամ զձիւնաբեր չարիսն լսիցեն, կարծիցեն, թէ լուելոց է քարոզութիւն: Ասէ զայն<sup>5</sup>.

**Պարտ է նախ այնմ լինել** (ԻԱ 9):

Զոր ևս<sup>6</sup> յառաջագոյն ասացի զալ փորձութեանց, սակայն ո՛չ խափանի քարոզութիւն բանից իմոց:

**Այլ ո՛չ առժամայն կատարած** (ԻԱ 9):

Զի մի՛ յետ այնր պատերազմին կարծիցեն զվախճան աշխարհի և զգալուստ իւր: Տե՛ս զիա՞րդ զգուշացուցանէ: Զայս երկու հարցուածս հարցին ցնա:

**Յարիցէ<sup>7</sup> ազգ յազգի վերայ և թագաւորութիւն ի թագ[աւորութեան]<sup>8</sup>** (ԻԱ 10):

Զսկիզբն չարեացն, որ ընդ հրէայսն անցանելոց էր<sup>9</sup> ասէ:

**ԻԳ.** Եւ ամբոխումն պատերազմացն մի՛ զձեզ զարհուրեցուսցէ:

**Շարժմունք մեծամեծք, սովք և սրածութիւնք, արհաւիրք և նշանք մեծամեծք<sup>10</sup>** (ԻԱ 11):

**ԻԳ** Այս ամենայն նախ՝ յԵրուսաղեմէ սկսանի, քանզի և գիրք նոցուն[ց] ցուցանեն եղեալ առ նոսա: Կամ այսոքիւք զայն ինչ, զոր նոքա կրելոց էին, հաւաստեալ զնէ:

<sup>1</sup> Բ այնմ

<sup>2</sup> Բ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս, մի՛ վարհուրիցիք, զի պարտ է նախ այնմ լինել, այլ ո՛չ առժամայն կատարած:

<sup>3</sup> Բ վարհուրիցիք

<sup>4</sup> Բ զի մի

<sup>5</sup> Բ զայս

<sup>6</sup> Բ և

<sup>7</sup> Բ Յայնժամ ասէ ցնոսա. Յարիցէ

<sup>8</sup> Բ թագաւորութեան վերայ

<sup>9</sup> Բ էին

<sup>10</sup> Բ Եւ շարժմունք մեծամեծք ի տեղիս տեղիս, և սովք և սրածութիւնք, եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից:

**Այլ<sup>1</sup> յառաջ քան զայս ամենայն մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ<sup>2</sup> (ԻԱ 12):**

*Նախքան զկարգեալ նեղութեանցն հասանել<sup>3</sup> ի վերայ նոցա եցոյց<sup>4</sup>, քանզի կապանք ձեզ<sup>5</sup> և բանդ<sup>6</sup>, և հալածանք հասանեն<sup>7</sup>:*

**Մատնեսցեն<sup>8</sup> ի ժողովուրդս և ի բանդս<sup>9</sup> (ԻԱ 12):**

*Այլ յորժամ արթունս և զուարթունս յարդարեաց զնոսս, հրամայեաց մտանել ի չարչարանս, զի ուսանիցիս, թէ անդի յաղթութիւն, անդի կանգնի նշան պարծանաց:*

**ԵՓ** *Եւ կամ յայնցանէ<sup>10</sup> հրամայէ զգուշանալ.*

*«Որ գան առ ձեզ<sup>11</sup> ի հանդերձս գառնենիս, և ի ներքոյ գայլք են յափշտակողք» (Մատթ. Է 15):*

**Ոկ.** *Արդ՝ ի դէպ ժամանակի խառնեաց և զնոցա կարիսն:*

**239ա** // **Տանիցեն առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անու[ան իմոյ] (ԻԱ 12):**

*Յայտ արար, եթէ ընդ ամենայն հեթանոսս առաքելոց է զնոսս քարոզս, զի ամենայն բնակիչք երկրի մարտնչին ընդ նոսս: Զիւրդ ո՛չ ածէին զմտաւ, եթէ յո՞ կարիցեմք փախչել, յորժամ ամենայն ազգք ի վերայ յառնիցեն:*

**Վասն անուան իմոյ վկայութեան<sup>12</sup> (ԻԱ 12-13):**

*Մխիթարութիւն դնէ կարեաց նոցա: Զի յորժամ վասն Քրիստոսի ոք չարչարեսցի, որ է կատարեալ մխիթարութիւն, և վստահասցին, թէ ամենայն ուրեք մերձ է Աստուած առ նոսս:*

**Դիք<sup>13</sup> ի սիրտս ձեր, մի՛ յառաջ կրթել տալ<sup>1</sup> պատասխա[նի] (ԻԱ 14):**

<sup>1</sup> B Բայց  
<sup>2</sup> B ձեզ և հալածեսցեն  
<sup>3</sup> B հասանելոյ  
<sup>4</sup> B եցոյց նոցա զմըրրիկ խոռովութեանցն և զմառախուղ նեղութեանցն  
<sup>5</sup> B **չիք** ձեզ  
<sup>6</sup> B բանտ  
<sup>7</sup> B հասանեն ձեզ  
<sup>8</sup> B մատնեսչիք  
<sup>9</sup> B բանտս  
<sup>10</sup> B յայնմանէ  
<sup>11</sup> B **չիք** առ ձեզ  
<sup>12</sup> B և լինիցի ձեզ այն ի վկայութիւն:  
<sup>13</sup> B Արդ՝ դիք

*Զի մի՛ ասիցեն, թէ՛<sup>2</sup> զիա՞րդե կարիցեմք խաւսել: Յորժամ այն-  
պիսի իրք գործիցին՝<sup>3</sup>, վստահացուցանէ զնոսա:*

**Ես<sup>4</sup> տաց ձեզ բերան և իմաստութիւն<sup>5</sup> (ԻԱ 15):**

*Եւ Մատթէոս ասէ, թէ՛ «Հոգի Հաւր ձերոյ խաւսեսցի ի ձեզ»  
(Մատթ. Ժ 20): Ի պատիւ մարգարէիցն հանէ զնոսա: Զայս յայտ-  
նեաց, զի յորժամ ասասցէ՛<sup>6</sup>, թէ՛ զաւրութիւն ի բարձանց ընդունե-  
լոց են:*

**Իգ.** *Յորմէ քակտեալ լուծանին ճարտասանիցն<sup>7</sup> հնարք՝ ղիմա-  
դրեալք, մանաւանդ, ի՛<sup>8</sup> բանից:*

**Մատնեսալիք ի՛<sup>9</sup> ծնաւդաց և յեղբարց և յազգականաց և<sup>10</sup> սպա-  
նանիցեն ի ձէնջ (ԻԱ 16):**

**ՈԿ** *Զանհնարինս առաջի արկ<sup>11</sup>, զի եղբայրասպան և հայրախեղդ<sup>12</sup>  
լինելոց էին բազումք: Զիա՞րդե ասէ՛<sup>13</sup> այլք հաւատան մեզ, յոր-  
ժամ տեսանիցեն զայս ամենայն եղեալ: Ո՛չ ապաքէն իբրև  
զեղեռնագործ և զվնասեալ ի դիւաց փախչիցին<sup>14</sup>, որք ո՛չ ընդդէմ  
դառնային հրամանին Քրիստոսի, այլ հաւանեալք յանձն  
239բ առնուին զամենայն: // Եւ այս ո՛չ նոցա<sup>15</sup> առաքինութեան<sup>16</sup>  
միայն էր, այլև վարդապետին<sup>17</sup> իմաստութեանն զաւրութիւն<sup>18</sup>:*

**Եղիլիք<sup>19</sup> ատեցալք յամ[ենեցունց] (ԻԱ 17):**

*Զանհնարինսն ի վերայ ածէ, որ զվէմ անդամադ<sup>20</sup> կարող էր  
շարժել:*

<sup>1</sup> Բ յառաջագոյն կրթել տալոյ

<sup>2</sup> Բ **չիք** թէ

<sup>3</sup> Բ գործիցեն

<sup>4</sup> Բ Զի ես

<sup>5</sup> Բ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն  
հակառակորդքն ձեր:

<sup>6</sup> Բ ասաց

<sup>7</sup> Բ ճարտարասանիցն

<sup>8</sup> Բ **չիք** ի

<sup>9</sup> Բ և ի

<sup>10</sup> Բ և ի բարեկամաց և

<sup>11</sup> Բ էարկ

<sup>12</sup> Բ եղբայրասպանս և հայրախեղդս

<sup>13</sup> Բ **չիք** ասէ

<sup>14</sup> Բ փախչիցեն

<sup>15</sup> Բ սոցա

<sup>16</sup> Բ առաքինութիւն

<sup>17</sup> Բ վարդապետ

<sup>18</sup> Բ *սրբ.* և զաւրութեան

<sup>19</sup> Բ Եւ եղիլիք

<sup>20</sup> Բ զվէմս անդամանդս

**Վասն անուան իմոյ** (ԻԱ 17):

*Եւ աստ առ դուրս կայ մխիթարութիւն, զի վասն նորա կրէք զայս<sup>1</sup> ամենայն:*

**Եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ո՛չ կորիցէ** (ԻԱ 18):

**ԻԳ** *Թէպէտև մահուամբ սպառեսցեն, այլ ո՛չ զապականութիւն կրեն: Զայս ասէ վասն հաւտին խնամ ունելոյ:*

**Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր** (ԻԱ 19):

**ՈԿ** *Եւ այս ուղղէ զմիտս ամենեցուն վարդապետաց և աշակերտաց:*

**Իգ.** *Եւ յապահովս առնէ ո՛չ զանգիտել ի հակառակորդաց:*

**ՈԿ.** *Զի թէ բնութիւն<sup>2</sup> մարդկան չկարէ գամագիլ[ւ]տ լինել բանից, այլ լուծանի և կոխի: Զի՞նչ իցէ, որ ձեզ յաղթել կարիցէ:*

**Յորժամ տեսանիցէք զաւրաւք շուրջ պատեալ զԵրուսաղէմ՝ զիտասջիք, թէ մերձ է աւեր<sup>3</sup>** (ԻԱ 20):

*Զի նովաւ շարժեալ գան, որպէս առ բաբելացիսն, զի ասէ<sup>4</sup>. «Նուիրեալ են, և ես ածից զնոսա. դիմեալ գան հրակայք յազեցուցանել զբարկուութիւն իմ» (Ես. ԺԳ 3): Ըստ նմին և առ Երուսաղէմ և<sup>5</sup> որդիսն Իսրայելի:*

**Յայնժամ, որ ի Հրէաստանի իցեն, փախիցեն ի լերինս** (ԻԱ 21):

**ՈԿ.** *Ասէ զհրէական վշտացն: Եւ յայտ արար, եթէ յորժամ տիեզերք պայծառանան լուսաւոր գիտութեամբն Աստուծոյ, յայնժամ հրէայքն անկանին ի նեղութիւն: Զի և ո՛չ մի ինչ յոյս փրկութեան կայցէ ձեզ, քանզի բազում անգամ եղև նոցա դիւրութիւն ի սաստիկ պատերազմաց, որպէս առ Սենիքարեամաւ և Անտիոքաւ<sup>6</sup>, յայնպիսի մխիթարութեանց անյոյս առնէ զնոսա:*

**240ա ՍՏ** *Կամ այն իսկ է: Ի<sup>7</sup> Հրէաստանի թագաւորէ պիղծն<sup>8</sup> // անապատի, որ գայ անապատ<sup>9</sup> առնել<sup>10</sup> զհաւատացեալսն ի Քրիստոս:*

<sup>1</sup> B գայն  
<sup>2</sup> B սրբ.՝ բնութիւն  
<sup>3</sup> B Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զաւրաւք զԵրուսաղէմ, յայնժամ զիտասջիք, թէ մերձ է աւր Տեառն:  
<sup>4</sup> B ասէր  
<sup>5</sup> B և առ  
<sup>6</sup> B Սենիքարիմաւ և Անտիոքա  
<sup>7</sup> B գի ի  
<sup>8</sup> B պիղծն  
<sup>9</sup> B սրբ.՝ և անապատ  
<sup>10</sup> B առնել ջանայ

Վասն այնորիկ և նոքա փախիցեն ի դժուարս լերա[ն]ց: Իսկ հրէայք, զի իբրև հուր ի փուշ առաքեաց զնոսա Աստուած յերկիրն աւետեաց.

Ի մէջ եւթն<sup>1</sup> ազգացն անդր բնակելոց:

Դարձեալ. Հրէաստան անուանեաց զստուեր պաշտման<sup>2</sup> երևելի գրոյն: Եւ հրամայէ փախչել ի վեհագոյն միտս աւրինաց և մարգարէիցն, որ Քրիստոսիւ վերացաւ քաւղն, որ արկեալ էր զնովաւ և նորին առաքելոցն նոր վարդապետութեամբ:

Եւ, որ ի միջի նորա<sup>3</sup> իցեն, խուսեացեն (ԻԱ 21):

**ԵՓ** Զի ո՛չ փրկին նոքա, որպէս հանապազն, զի վերանայ ի նոցանէ խնամք ողորմութեան<sup>4</sup> հոգաբարձութեանն Աստուծոյ:

**ստ.** Միջինն էր գովելի առաքինութեան<sup>5</sup> և պսակ շինուածոյ աստուածապաշտութեան:

**Ստ.** Մի՛ խուսափեալ զարհուրեցին ի սնոտի կենցաղոյս:

Որ<sup>6</sup> ի գաւառին<sup>7</sup> իցեն, մի՛ մտցեն ի նա (ԻԱ 21):

**Իգ.** Այլ<sup>8</sup> Աստուծոյ շարժեալ է ի վրէժխնդրութիւն բարկութեամբ:

**ՍՏ** Կամ, որ փախուցեալ է<sup>9</sup> ի մարմնական ցանկութեանց, մի՛ դարձցի յետս ի նոյն<sup>10</sup> վաւաշտութիւն:

Առ<sup>11</sup> ի կատարելոյ ամեն[այն] գրել[ոց]<sup>12</sup> (ԻԱ 22):

**Իգ.** Որպէս Դաւիթ ասէ. «Զթիկունս նոցա հանապազ կորացոյ: Եւ արկցես ի վերայ նոցա սրտմտութիւն<sup>13</sup>, բարկութեան քո հասցէ ի վերայ նոցա» (Սաղմ. ԿԸ 24-25): Եւ Եսայի. «Տաց զչարս փոխանակ մահու նորա և գմեծամեծս փոխանակ գերեզմանի նորա» (Ես. ԾԳ 9): Եւ Դանիէլ. «Պղծութիւն աւերածոյն կայցէ<sup>14</sup> ի տեղոջն սրբութեան» (հմմտ. Դան. ԺԲ 11): Եւ պարտ էր ի կատարումն գալ բանից

<sup>1</sup> Ե այն փխ եթն

<sup>2</sup> Ե պաշտպան աւրինացն

<sup>3</sup> Ե նոցա

<sup>4</sup> Ե սրբ.՝ նախախնամութիւն փխ խնամք ողորմութեան

<sup>5</sup> Ե առաքինութիւն

<sup>6</sup> Ե եւ որ

<sup>7</sup> Ե գաւառսն

<sup>8</sup> Ե Այսինքն՝ մի յաւթարեցին մտանել ի նա: Զի ո՛չ է մարդկան յանդգնութիւն չարեաց, այլ

<sup>9</sup> Ե չիք է

<sup>10</sup> Ե ի մարմնական փխ յետս ի նոյն

<sup>11</sup> Ե Զի աւուրք վրէժխնդրութեան են այնոցիկ առ

<sup>12</sup> Ե գրելոցն

<sup>13</sup> Ե սրբ.՝ զսրտմտութիւն

<sup>14</sup> Ե կացցի

մարգարէիցն, զի լցին նոքա զմարգարէութիւն, որ վասն<sup>1</sup> չարչարանացն Քրիստոսի:

Աւարտեաց և զգրեալսն ի վերայ նոցա.

**Վա՛յ յղեացն**<sup>2</sup> (ԻԱ 23):

240բ // Քանզի ո՛չ կարեն փախչել վասն բռնութեան<sup>3</sup> ծանրութեանն:

Ոկ.(ստ.) Կամ վասն<sup>4</sup> ժամանակին, որում յղացան չարութեամբ բանսարկուին:

**Եւ ստնդուք**<sup>5</sup> (ԻԱ 23):

ՈԳ Վասն<sup>6</sup> կապանաց գլթոյ մանկանցն, որ<sup>7</sup> ո՛չ կարեն ընդ իւրեանց ապրեցուցանել ի վշտացն, կամ որդի են զկաթն աղտեղի՝ զանառակ ցանկ[ութեան]:

Եղիցի տազնապ ի վերայ երկրի և բարկութիւն ի վերայ ժողովրդեան այնմիկ<sup>8</sup> (ԻԱ 23):

Ի սով և ի գերութիւն:

ԻԳ Վկայեն այսոցիկ եւք իրացն, զի այս ամենայն անց ընդ նոսա:

ԵՓ Վասն որոյ Յովէլ ասէ, զի՝ «Դարձուցին զիրաւունս հաւատոյն ի դառնութիւն անհաւատութեան»: Եւ ո՛չ ծանեան զայն, որ արար զԱրուսեակն և զՀայկն և ընթացան զհետ ուրացութեան:

Երուսաղէմ եղիցի ի կոխումն, մինչև կատարեսց[ի] ժամանակ հեթանոսաց (ԻԱ 24):

ԻԳ Կոխեցաւ Երուսաղէմ ի հռոմայեցոցն զաւրաց և յատակեցին զնա, և զմնացեալսն<sup>9</sup> [ի] սովոյ և [ի] սրոյ մատնեցին և ի գերութիւն<sup>10</sup> ընդ ամենայն ազգս:

Ստ. Եւ այլ ո՛չ դարձան որպէս յառաջին աւուրսն, մինչև ցայսաւր<sup>11</sup> կոխեցան [յ]ամենայն ազգաց, որ ցրուեցաւ զաւակ նոցա ընդ հեթանոսս:

<sup>1</sup> Ե չեք որ վասն

<sup>2</sup> Ե Բայց վայ իցէ յղեացն և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ:

<sup>3</sup> Ե չեք բռնութեան

<sup>4</sup> Ե վայ

<sup>5</sup> Ե չեք և ստնդուք

<sup>6</sup> Ե Եւ ստոյգ վասն

<sup>7</sup> Ե ասէ որ

<sup>8</sup> Ե Զի եղիցի տազնապ մեծ ի վերայ երկրի և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ:

<sup>9</sup> Ե մնացեալքն

<sup>10</sup> Ե մատնեցան գերութեան

<sup>11</sup> Ե յայսաւր

**Մինչև եկեացէ լրումն հեթանոսաց** (ԻԱ 24):

**Եղիցի նշան<sup>1</sup> յարեգական և ի լուսին և յաստեղս** (ԻԱ 25):

**ԻԳ** *Զի ուսանիցին, եթէ ի վեր ուսցէ<sup>2</sup> կարգեալ յԱստուծոյ և ո՛չ ի բնութենէ արարածոցս<sup>3</sup>: Արդ՝ նշան է, յորժամ արեգական մթագոյն ծագէ և լուսինն խաւարի, կամ յորժամ նորոգ աստեղքն երևին ոտնաւորք և կամ նման նիզակի: Եւ կամ, որ վասն Նեոխնն է ասացեալ, թէ յառնէ<sup>4</sup> առ ի հաւանեցուցանել<sup>5</sup> զմարդիկ, թէ Քրիս-*

**241ա** *տոս է: // Զի<sup>6</sup> յերկնից ցուցանէ նշան խաբէութիւն<sup>7</sup> աչաց երևեալ<sup>8</sup>: Որպէս առաքեալ ասէ. «Որոյ գալուստն ըստ ազգեցութեանն<sup>9</sup> սատանայի է, նշանք և արուեստիւք<sup>10</sup> ստաւք, և<sup>11</sup> զաւրանայ ի վերայ կորուսելոցն» (Բ ԹԵՍ. Բ 9-10): Զի առ ընտրեալսն<sup>12</sup> խայտառակեալ է, նշան նորա սուտ և ուղիղ<sup>13</sup> տեսանեն:*

**ԿՐ** *Արդ՝ թէպէտև նախքան զաւերն Երուսաղեմի յայսցան[է] գուշակեցան փոքր ինչ, այլ յաւէտն առընթեր իւրոյ գալստեանն լինի, յորժամ հալածանքն յաճախեն, և կարծեցուցանող նշանքն, զոր առ աչաւք ցուցանէ՝ յարեգական և յաստեղս<sup>14</sup> առ ի հաւատարմացուցանելոյ<sup>15</sup> զինքն գոլ Քրիստոս: Իսկ Մատթէոս ասէ. «Արեգական խաւարեսցի և լուսին մի՛ տացէ զլոյս իւր» (Մատթ. ԻԴ 29):*

**Ստ.** *Ո՛չ նոքա անցանեն, այլ ընթացք իւրեանց, որ ի խոնարհելն<sup>16</sup> ծնանի զձմեռն և ի բարձրանալն զամառն: Արդ՝<sup>17</sup> ո՛չ ապականի, այլ ընկղմի ի ջահաբորբոք փառացն Քրիստոսի:*

<sup>1</sup> Եւ եւ անկցին ի սուր սուսերի և գերեսցին յամենայն հեթանոսս, և Երուսաղեմ եղիցի կոխան յազգաց, մինչև կատարեսցին ժամանակք հեթանոսաց: Եւ եղիցի նշանք (ԻԱ 24-25)

<sup>2</sup> Ե վերուստ է *փիս* վեր ուսցէ

<sup>3</sup> Ե արարածոց

<sup>4</sup> Ե առնէ

<sup>5</sup> Ե հաւանեցուցանելոյ

<sup>6</sup> Եւ

<sup>7</sup> Ե խաբէութեամբ

<sup>8</sup> Ե երևել *փիս* աչաց երևեալ

<sup>9</sup> Ե ազգեցութեան

<sup>10</sup> Ե նշանաւք և արուեստեաւք

<sup>11</sup> Ե *չիք* ստաւք և

<sup>12</sup> *Ա* ընդրեալսն

<sup>13</sup> *Ա* ուղիղ

<sup>14</sup> Ե յաստեղք

<sup>15</sup> Ե հաւատարմացուցանել

<sup>16</sup> Ե խոնարհելն

<sup>17</sup> Ե այլ



**ՍՏ** Որպէս Եսայի ասէ<sup>1</sup>. «Երկիրնք իբրև զմագաղաթ գալարին<sup>2</sup>» (Ես. ԼԴ 4), «և եղիցին երկիրնք և երկիր նոր» (*հմմտ.* Ես. ԼԴ 9): *Զայս յայտնեն լուսաւորացն անպիտանութիւն: Իսկ ըստ առակիս արեգակն իմասցիս<sup>3</sup> զսատանայ, որ փոխի ի կերպարանս լուսոյ հրեշտակի, և զՆեոն, զի Աստուած զինքն անուանէ: Իսկ լուսին՝ հերձուածողքն և ժողով հրէիցն, որք կարծեն լուսաւորիլ յԱստուծոյ և խաւարամած լինին ընդ Նեոինն, որ զգեցեալ է<sup>4</sup> զՍատայէլ<sup>5</sup> իշխանն դիւաց և ասէ զինքն Աստուած: Կամ աստեղքն՝ հրէիցն և հերձուածողացն վարդապետքն, որպէս Յուդայ գրէ ի Կաթողի-*

**241բ** *կէին<sup>6</sup>. «Աստեղք մոլարք, որոց խաւար աղջ(//)ամղլին<sup>7</sup> պահեալ կայ» (Յուդ. 13):*

**Յերկրէ<sup>8</sup> տազնապ հեթանոսաց** (ԻԱ 25):

**ԻԳ** *Զբնաւ ամենայն աշխարհաց<sup>9</sup> զվիշտս<sup>10</sup>, որ ի գերաքրիստոսէն<sup>11</sup> լինի կարաւտութիւն կերակրոց և<sup>12</sup> պ[ա]տերազմաց, և բռնութեամբ տիրէ և զարհուրեցուցանէ, և ամիշեցուցանէ խաբէութեամբն յահեղ բարբառոյ: Զոր Դանիէլ՝ «Եղջիւր<sup>13</sup> փոքր բուսեալ ի գլուխ գազանին ի մէջ տասն եղջերացն<sup>14</sup> և զերիսն խլեալ: Եւ եղջիւրն<sup>15</sup> տայր պատերազմ ընդ սուրբս, և բանս առ Բարձրեալն խաւսէր» (*տե՛ս* Դան. Է 7-8, 11, 20): *Հայհոյութիւն մեծամեծ<sup>16</sup> բանիցն, զոր եղջիւրն<sup>17</sup> խաւսէր, հակառակորդն հպարտ ընդդէմ Աստուծոյ թագաւորութեանն՝ արհամարհելով զտէրութիւն նորա, և առ ոչինչ համարի զմարդիկ, և սպառնայ:**

**Իբրև ծովու խռովեալ ալեաց<sup>18</sup>** (ԻԱ 25):

---

<sup>1</sup> B ասաց Եսայի  
<sup>2</sup> B զմագաղատ գալարեսցին  
<sup>3</sup> B իմա  
<sup>4</sup> B *չիք է*  
<sup>5</sup> B զՍատիէլ  
<sup>6</sup> B Կաթողիկէն  
<sup>7</sup> B աղջամղղլ խաւարին յաւիտեան  
<sup>8</sup> B Եւ յերկրի  
<sup>9</sup> B աշխարհի  
<sup>10</sup> B զվիշտս ասէ  
<sup>11</sup> B գերաքրիստոսէն  
<sup>12</sup> B և խստութիւն  
<sup>13</sup> B եղջիւր  
<sup>14</sup> B եղջերացն ասէ  
<sup>15</sup> B եղջիւրն այն  
<sup>16</sup> B Հայհոյութիւնս մեծամեծս  
<sup>17</sup> B եղջիւրն  
<sup>18</sup> B և խռովութեանց *փխ* խռովեալ ալեաց

**Իգ.** Որպէս<sup>1</sup> ծով փրփրաղէզ ալեաւք ընդ միմեամբք<sup>2</sup> ելանէ, և նաւարկեալքն տազնապին: Այսպիսի պատահելոց է տիեզերաց ի մարդոյն անաւրինէ յՈրդոյն կորստեան, զոր Տէր Յիսուս սատակեսցէ<sup>3</sup>:

**Յելանել**<sup>4</sup> ոգոց մարդկան յերկեղէ<sup>5</sup> (ԻԱ 26):

Մերձ լինին ոգիք մարդկան արձակել ի չարչարանացն, զոր կրեն:

**Եւ ի**<sup>6</sup> կարծեացն (ԻԱ 26):

Որ նստի ի տաճարին Աստուծոյ և արհամարհէ զԱստուած Արարիչն<sup>7</sup>, և զանուն և զպաշտաւն, զոր աստուածացուցին մարդիկ, աստուած ասէ զինքն և ամենակալ: Եւ ոմանք կարծեն ճշմարիտ գոյ և առնուն զգիր նորա: Եւ կէսքն երկբային, բայց վասն երկի[ւ]ղի հաւանին և ի կարի արհաւրացն: Եւ այլք ո՛չ հաւատան և վրդովին խորհրդով. գուցէ Աստուած իցէ վասն առաջաւք և սուտ նշանացն:

**242ա** //Արդ՝ ո՛չ զաւրութեամբ տիրէ, այլ՝ թոյլ տալովն Աստուծոյ: Զի, որք ի Քրիստոս ո՛չ հաւատացին վասն մարմնոյն, ի Նեոն, որ անաւրէնութեամբ լի է, հաւատան: Եւ են առանց պատասխանոյ, որ ի Քրիստոս ո՛չ հաւատացին, որ լի է Հոգով Սրբով և ամենայն բարութեամբ բժշկութեան<sup>8</sup> և կենդանութեամբ կենդանեաց և մեռելոց: Որպէս ասէ առաքեալ. «Փոխանակ զի գսէրն ճշմարիտ», որ է Քրիստոս<sup>9</sup>, «ո՛չ ընկալան, զի ապրեսցին, վասն այնորիկ առաքէ նոցա Աստուած ազդումն սովորութեան<sup>10</sup> հաւատալ նորա<sup>11</sup> ստութեանն, զի դատապարտեսցին, որ<sup>12</sup> ո՛չ հաւատացին» (Բ ԹԵՍ. Բ 10-11) ի Քրիստոս:

**ԿՐ** Արդ՝ որդիքն կրճատելոց ի ճշմարիտ Քրիստոսէն հրաժարեցին և մոլորեալքն մոլորականին ակն ունին:

<sup>1</sup> Բ Զի որպէս

<sup>2</sup> Բ գմիմեամբք *փխ* ընդ միմեամբք

<sup>3</sup> Բ սատակեսցէ բերանովն աստուածային

<sup>4</sup> Բ Յելանելոյ

<sup>5</sup> Բ յերկիւղէ: Այնուհետև ներքևի լս. սրբ.՝ Եւ ի կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց

<sup>6</sup> Բ Մանաւանդ վասն *փխ* և ի

<sup>7</sup> Բ գԱրարիչն ամենայնի

<sup>8</sup> Բ բժշկութեամբ

<sup>9</sup> Բ *չիք* որ է Քրիստոս

<sup>10</sup> Բ մոլորութեան

<sup>11</sup> Բ նոցա

<sup>12</sup> Բ որք

**Զաւրութիւնք<sup>1</sup> երկնից շարժեսցին** (ԻԱ 26):

**ՍՏ** *Իմա՛ զհրաբուն զաւրքն, որք տեսին զնա յառաջին գալստեանն այնպիսի խոնարհութեամբ, իսկ յերկրորդումն հրաշափառ սոսկալի պայծառութեամբ, ուստի՝ հիացեալ դողութեամբ:*

**ԻՊ** *Արդ՝ բանան զերկինք<sup>2</sup> և իջանեն զաւրք<sup>3</sup> երկնից յամենայն երկիր, մինչ զի թափուր մնայ երկինք<sup>4</sup>:*

**Յայնժամ<sup>5</sup> տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք<sup>6</sup>** (ԻԱ 27):

**ՍՏ** *Ամպաւք գայ որպէս վերացաւն: Զայն տեսեալ ողբասցեն, զի անձամբ [զ]անձանց տացեն<sup>7</sup> զվճիռն և դատապարտեսցին:*

**ԻՊ** *Կամ սաստիկ լոյսն արփիահրաշ ծաւալի ծայրագոյն պայծառութեամբ, մինչ զի զարեգակնն ծածկէ ճառագայթիւքն<sup>8</sup>:*

**Զաւրութեամբ և փառաւք բազմաւք<sup>9</sup>** (ԻԱ 27):

**Ստ.** *Բերէ զնա<sup>10</sup> ընդ իւր<sup>11</sup>, զի ինքնապարտ մեղքն լիցի<sup>12</sup> նոցա<sup>13</sup>, կամ, զոր աւրինակ՝ քարիւ ոք<sup>14</sup>՝ կառափնատել բերելով զքարն 243բ<sup>15</sup> ցուցանէ և<sup>16</sup> կամ զ(//)հանդերձ ինչ՝ արեամբ թաւթաւել<sup>17</sup>, արդ՝ իմաստութիւն և ճշմարտութիւն երկնաւոր յերկրի երևեալ: Ըստ Ասողին. «Ճշմարտութիւն<sup>18</sup> յերկրի<sup>19</sup> բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ» (Սաղմ. 27 12):*

**ԻՊ** *Նաև նշան խաչին ծագէ<sup>20</sup> սարսափելի և նորասքանչ լուսով ճառագայթաբորբոք, և զծագս տիեզերաց պայծառացուցանէ: Ըստ Դանիելի տեսեանն՝ «Աթոռք դնէին և Հինաւուրցն նստէր: Աթոռ նորա հուր վառեալ, անիւք կառաց նորա բոց բորբոքեն<sup>21</sup>:*

---

<sup>1</sup> B Զի զաւրութիւնք  
<sup>2</sup> B երկինք  
<sup>3</sup> B զաւրութիւնք  
<sup>4</sup> B *չիք* մինչ զի... երկինք  
<sup>5</sup> B Եւ յայնժամ  
<sup>6</sup> B ամպովք զաւրութեամբ և փառաւք բազմաւք  
<sup>7</sup> B տայցեն  
<sup>8</sup> B ճառագայթքն  
<sup>9</sup> B *չիք* զաւրութեամբ... բազմաւք  
<sup>10</sup> B և զնոսա  
<sup>11</sup> B *ներքևի լս. սրբ.*՝ այսինքն՝ զխաչն և զգեղարդն, զփշեղեն պսակն, և զբեռն ոտիցն և զձեռացն, և զհրեշտակաց բազմութիւնքն  
<sup>12</sup> B մեղաց նոցա լիցին  
<sup>13</sup> B նոքա դատախազք  
<sup>14</sup> B քարիւք *իկ* քարիւ ոք  
<sup>15</sup> 242բ-243ա էջերում գրչի և 243ա-ում կազմողի հիշատակարաններ են  
<sup>16</sup> B *չիք* և  
<sup>17</sup> B թաթաւել  
<sup>18</sup> B *չիք* երկնաւոր... ճշմարտութիւն  
<sup>19</sup> B յարկի  
<sup>20</sup> B ծագեսցէ  
<sup>21</sup> B որպէս բոց բորբոքեալ

Գեառ Հրոյ յորդեալ ելանեն<sup>1</sup> ընդառաջ նորա: Հազարք Հազարաց պաշտեն զնա, և բերք բերուց կան առաջի նորա<sup>2</sup>» (Դան. Է 9-10):

**Յորժամ<sup>3</sup> սկսանիցի այս լինել<sup>4</sup>, բարձրացուսջիք զգլուխ<sup>5</sup> ձեր, զի մերձ է փրկութիւն ձեր** (ԻԱ 28):

Իգ. Առաքեալսն<sup>6</sup> ասաց: Եւ ձգէ զբանն առ ամենայն Հաւատացեալս, որք վասն անուան նորա տանին վշտաց: Եւ անդ կատարեաց զինն երանութիւն[ն], զոր ասաց Քրիստոս (տե՛ս Մատթ. Է 3-11):

Եփ. Եւ Ջաքարիա ասէ. «Փոխանակ միոյ առուր պանդխտութեան, կրկին, զուարթերես Հատուցանեմ<sup>7</sup> ձեզ» (Ձաք. Թ 12), այսինքն՝ յերկինս և յերկրի: Զի Հրէիցն յայս աշխարհս միայն ասաց տալ՝ ասելով, եթէ պահեսցես զպատուիրանս Տեառն, աւրհնեալ լիցիս յանդի և յագարակի, և ստացուածք արջառոց քոց և ոչխարաց, և աւրհնեսցի սեղան քո և խորպածին քո, և պտուղ որովայնի քո: Իսկ մեզ, որ թողու զտուն կամ զեղբարս և զծնաւդս<sup>8</sup>, Հալածանաւք վասն անուան իմոյ, ընկալցի Հարիւրապատիկ աստ և զարքայութիւն երկնից ժառանգեսցեն անդ:

**244ա ՍՏ** // Այն է ժամանակ ծագելոյ արդարոցն իբրև զարեգակն: Փայլեցուցանել զփառսն, որ յԱստուծոյ պատրաստեալ էր նոցա, պսակակապ գլխով, ճոխանալով զնան ի տուն<sup>9</sup> իւրեանց յաւիտենական, զի ո՛չ է հանումն պարգևացն տուելոց:

Ասաց և<sup>10</sup> առակ մի նոցա. **Տեսէք զթզենիդ<sup>11</sup>** (ԻԱ 29): **Յորժամ ոստքն կակղանայ և տերևն ցցուի<sup>12</sup>** (հմմտ. ԻԱ 30):

ԿԲ Վասնզի յանցանել<sup>13</sup> նախաստեղծին զպատուիրանան թզենոյն սաղարթովն ծածկէր<sup>14</sup> զմերկութիւն[ն], որ աւճն պատեցաւ: Արդ՝ մի՛ լիցի ի քեզ պտուղ յաւիտեան<sup>15</sup>, որ մահացաւ մարդկան

<sup>1</sup> Ելանէլ

<sup>2</sup> Գրփիս կային առաջի նորա և բերք բերուց պաշտէին զնա

<sup>3</sup> Եւ յորժամ

<sup>4</sup> Եւ լինել ամբարձջիք և

<sup>5</sup> Եւ զգլուխս

<sup>6</sup> Եւ Առ առաքեալսն

<sup>7</sup> Եւ Հատուցանէ

<sup>8</sup> Ընտղ

<sup>9</sup> Եւ տունս

<sup>10</sup> Եւ Գրփիս Եւ ասաց

<sup>11</sup> Եւ զթզենիդ և զամենայն ծառ

<sup>12</sup> Եւ ցուցանիցեն զպտուղս իւրեանց փիս ոստք... ցցուի

<sup>13</sup> Ը ի յանցանել Եւ վասն յանցանելոյ

<sup>14</sup> Եւ սաղարթովն ծածկեաց

<sup>15</sup> Եւ յաւիտեան ըստ առաջին յանցանացն

ազգ: Քանզի եկի, զի<sup>1</sup> խաչիւ և լեղոյն ճաշակմամբն ջնջումն մեղաց ար[ար]ից<sup>2</sup> առ ի դարձուցանել զազգ[ս] մարդկան ի կռապաշտութենէ դիւաց, զոր աւտարացոյց ի դրախտէն ազգի ազգի չարիւք<sup>3</sup> և գրաւեաց զմարդիկ: Արդ՝ զկնի իմոյ գալստեանս մի՛ լիցի ի<sup>4</sup> քեզ այնպիսի պտուղ: Եւ թզենոյն ցամաքութեամբն զդիւական պաշտաւնն ցամաքեցոյց:

**Յորժամ տեսանիցէք, զի ոստն կակղանայ<sup>5</sup>, ճանաչէք թէ<sup>6</sup> մերձ է ամառն** (ԻԱ 30):

Յորժամ տեսանէք<sup>7</sup> զթզենիդ սաղարթաւորեալ կրկին անգամ, այսինքն՝ զայսպիսի պտուղ՝ զկռապաշտութեան<sup>8</sup> ընձուղեալ<sup>9</sup> ի մարդիկ<sup>10</sup>:

Ստ. Եւ դարձեալ. ի նոյն կռապաշտութեան<sup>11</sup> պատրէ զմարդիկ խաբող առաջին<sup>12</sup> նշանաւք՝ ստաւք:

**ՍՏ** Քանզի<sup>13</sup> թզենի և այլ ծառք ի ճմերանի<sup>14</sup> խստացեալ ոստքն ո՛չ ունին զաւրութիւն կակղանալոյ՝ ոստաւք ցուցանել ծաղիկ: Նոյնպէս և առաքինիքն յաշխարհի<sup>15</sup>, վասնզի ո՛չ են հասեալ աւետեաց պսակին, // այլ յուսով որպէս ընդ հայելի տեսանեն<sup>16</sup> զբարիսն խոստացեալ: Իսկ ի մերձիլ<sup>17</sup> ամարանին կակղանայ և ցցուի:

**Նոյնպէս և դուք, յորժամ տեսանէք<sup>18</sup> զայս ամենայն եղեալ, զիտասջիք, թէ մերձ է արքայութիւն Աստուծոյ** (ԻԱ 31):

Արդ՝ ի գալ արդար դատաւորին հասանեն պսակին յայտնապէս, և [ի] յառնել խոովութեանց աշխարհիս՝ ի խաղաղ նաւահանգիստն յաւիտենական ճոխանան: Եւ կակղանայ քարացեալ սիրտ մարմնեղէն<sup>19</sup>, և ցուցանեն գոյնս գոյնս ծաղկաց, որ փթթին

<sup>1</sup> B չեք զի  
<sup>2</sup> B արարի  
<sup>3</sup> B չարեաւք  
<sup>4</sup> B չեք ի  
<sup>5</sup> B Տեսանիցէք և ի նոցանէ քիս Յորժամ... կակղանայ  
<sup>6</sup> B եթէ  
<sup>7</sup> B տեսանիցէք  
<sup>8</sup> B զկռապաշտութիւն  
<sup>9</sup> A ընձաւղեալ B ընձիւղեալ  
<sup>10</sup> B մարդիկ, ժամանակ է նեուինն  
<sup>11</sup> B կռապաշտութիւն  
<sup>12</sup> B խաբեբայ յառաջ  
<sup>13</sup> B Դարձեալ. քանզի  
<sup>14</sup> B ճմերան  
<sup>15</sup> B յաշխարհս  
<sup>16</sup> B տեսանէ  
<sup>17</sup> B մերձեալ  
<sup>18</sup> B տեսանիցէք  
<sup>19</sup> B մարմնեղէնս

վայելչացեալ գեղեցկապէս<sup>1</sup>, և պտուղս կատարեալս ըստ զանազան առաքինութեանց, որ վաստակեցին ի սակաւ ժամանակ կենցաղոյս:

Ո՛չ<sup>2</sup> անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի<sup>3</sup> (ԻԱ 32):

**ԿՐ** Թէպէտ զվիշտս և զնեղութիւնս<sup>4</sup> հրէիցն ի ձեռն սովոյ և սրոյ, գերութեամբ ի Տիտոսէ եցոյց (տե՛ս Բ Մակ. ԺԱ 1-38), այլ առաւել զյետին ժամանակացն ասէ, որ կրեցոցն են ի Նեռնէն, զի հաւանեալքն նմա զանհնարին տանջանսն կրեն: Զի որպէս ընդ առաքելոցն ասաց Քրիստոս. «Մինչ ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20) լինել զինքն իմանի և որք ի նոցանէ աշակերտեալք են: Այսպէս և՛ ըստ մեղաւորացն հետեմանց: Արդ՝ մեղաւորք՝ ազգացն<sup>5</sup> դիւաց և այլ մոլորութեանց միւսնոյն ազգ ասաց: Արդարև<sup>6</sup> ո՛չ անցանէ ազգ մարդկային բնութեանս մինչ ի գալուստն Քրիստոսի, յորում առհասարակ փոփոխին արարածք ամենայն:

**245աՍտ.** Կամ ազգս այս<sup>7</sup> ասի Նոր Կտակ(//)արանս. «Մի՛ անցցէ, մինչև եկեսցէ աւետիսն խոստացեալ» (հմմտ. Եբր. Զ 13): Եւ ամենայն, զոր ասաց, ի Նեռինն գալուստն է և ի կատարածի աշխարհիս<sup>8</sup>: Եւ կորուստ այսորիկ ի լաւագոյն տեսակս փոխել<sup>9</sup>, նորոյ երկնի և նորոյ երկրի:

Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի<sup>10</sup> անց[անիցեն] (ԻԱ 33):

**ԿՐ** Զերկինս և զերկիր եցոյց, ըստ արարածոց<sup>11</sup> գոլոյն փոփոխումն առնուլ, գոյացուցիչն երկնի և երկրի: Իսկ աստուածային բանիցն ո՛չ ևս անցանել, որ արար զնա, զի ո՛չ ընդ նիւթականաց գրաւի<sup>12</sup>:

**Զգոյշ լերուք անձանց** (ԻԱ 34):

**ԻԳ** Վասնզի<sup>13</sup> բազմապատիկ են, որ շրջին զմեաւք<sup>14</sup>: Եւ առաւել պահպանութեան պէտք են անձանց, որ<sup>15</sup> միտք ունին, քան ո՛չ

<sup>1</sup> Բ գեղեցկութեամբ

<sup>2</sup> Բ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ

<sup>3</sup> Բ լինիցի

<sup>4</sup> Բ զնեղութիւնս

<sup>5</sup> Բ և ազգացն

<sup>6</sup> Ը Արդի և

<sup>7</sup> Բ ազգ *փի* ազգս այս

<sup>8</sup> Բ աշխարհի

<sup>9</sup> Բ փոխեալ

<sup>10</sup> Բ ոչ

<sup>11</sup> Բ արարած

<sup>12</sup> Բ սրբ.՝ գոյակս գոյացաւ

<sup>13</sup> Բ Վնաս

<sup>14</sup> Ը զմիեաւք

<sup>15</sup> Բ որք

ընչիցն խնամարկել: Վասնզի չի՞ք սեփական մեր քան զանձինս, եթէ անզգուշութեամբ զսա<sup>1</sup> կորուսանեմք:

**ՍՏ**   Զի՞նչ տացէ ոք փրկանս<sup>2</sup> անձին իւրոյ, կամ որո՞վ ժառանգիցէ զխոստացեալն կամ զոր ստացաքն<sup>3</sup>: Արդարեւ անմտութիւն մեծ է, որք զանձանց ո՛չ փոյթ առնեն և ինքեանք զստացուածովն<sup>4</sup> բուռն հարկանեն:

Գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր (ԻԱ 34):

**ԻՊ**   Արդ՝ ծանրանան միտք թեթեւք, յորժամ ընդ ծանուռ և<sup>5</sup> վայրաբեր աշխարհիս շաղեալ կապիցին:

Շուայտութեամբ<sup>6</sup> (ԻԱ 34):

Ամենայն ինչ, որ անցանէ ընդ հարկ չափաւորացն<sup>7</sup> աւելորդութեամբ, ափշութիւն<sup>8</sup> անուանեն գիրք, յորմէ ի բաց փախչել աւգտակար է առաւել:

Եւ արբեցութեամբ (ԻԱ 34):

**ԵՓ**   Յարի և այս ի նոյն: Նաև Յոբ ըմպէր գինի, այլ<sup>9</sup> ո՛չ արբե-  
245բ նայր, ուտէր հաց, այլ ո՛չ յղփանայր: // Ունէր մեծութիւն, այլ ո՛չ փափկանայր: Զգենոյր զգեստս, այլ ո՛չ պճնէր: Ի մեծութեանն ո՛չ հպարտանայր, և յաղքատութեանն գոհութեամբ տարաւ, և անց արդարութեամբ ընդ ամենայն կիրս աշխարհիս: Նոյնպէս<sup>10</sup> և դու ի բաց կաց յաւելորդացն: Եւ մասնաւորեայ կարաւտելոցն, զի քեզ պահեսցի այն<sup>11</sup> յԱստուծոյ:

Հոգաւք աշխարհական<sup>12</sup> (ԻԱ 34):

**ԻՊ**   Պէտք են պահել զանձինս յայսպիսի ժանդացուցիչ ախտէս, որ բնաւորեցաւ ապականել զբարետոհմութիւն ոգոյն, յորմէ պատրաստ[տ] կալ և սրբել զմիտս և զխորհուրդս, և անխափան նուիրել Աստուծոյ զարդարութիւն:

Զի՞<sup>13</sup> իբրև զորոգայթ<sup>14</sup> հասանէ<sup>1</sup> ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի (ԻԱ 35):

<sup>1</sup> B գնա  
<sup>2</sup> B փոխանակ ընդ  
<sup>3</sup> B **չիք** կամ զոր ստացաքն  
<sup>4</sup> B զստացուածաւքն  
<sup>5</sup> B և ընդ  
<sup>6</sup> B շուայտութեամբ և արբեցութեամբ  
<sup>7</sup> B չափ հարկաւորացն **փխ** հարկ չափաւորացն  
<sup>8</sup> B արբշուութիւն  
<sup>9</sup> B և այլ  
<sup>10</sup> B Այսպէս  
<sup>11</sup> B **չիք** այն  
<sup>12</sup> B Եւ հոգւովք աշխարհականաւք:  
<sup>13</sup> B և յանկարծակի հասանիցէ ի վերայ ձեր աւրն այն, զի (ԻԱ 34-35)  
<sup>14</sup> A զաւրոգայթ

**ԻԳ** Որոգայթ<sup>2</sup> անուանէ, զի զարհուրեսցին հեղգացեալքն: Այլ յորժամ գործեսցեն<sup>3</sup> զգործ դառնութեան, և նա դատի զխորհուրդ[ս] և զգործս մարդկան, և յայտնէ զգաղտնիս խաւարին, քանզի հրով յայտնելոց է և զիւրաքանչիւր գործս փորձէ: Զի՝ «Աւր Տեառն իբրև զգող բիշերի հասանէ» (Ա Թեսաղ. Ե 2), իսկ արդարոցն՝ ցնծութիւն, և ապա մեղաւորացն՝ տխրութիւն:

**ՍՏ** Վասն այսորիկ ի սատակումն քնածիցն զալոց է աւրն: Զոր աւրինակ՝ թէ նա գիտէր՝ փախչէր: Նոյնպէս և դուք, թէ պատրաստիք՝ ապրիք, զի ո՛չ գիտէք զժամ մահուն ձեր և ո՛չ զաւր գալստեան Տեառն:

Արթուն կացէք<sup>4</sup> յամենայն ժամ և<sup>5</sup> աղաթս արարէք (ԻՍ 36):

**ՍՏ** Դնէ հնարս փրկութեան՝ հաշտեցուցանել զԱստուած պաղատանաւք: Զի, որ զտմարդի դատաւոր ած<sup>6</sup> // յիրաւունս, ո՞րչափ զկամեցող<sup>7</sup> ողորմութեան և զփափազողն փրկութեան Աստուած<sup>8</sup>, զի ո՛չ միայն վասն կատարածի աշխարհի<sup>9</sup> ասաց, այլ վասն կատարածի իւրաքանչիւր մարդկան արթուն լինել գործաւք բարեաց: Վասնզի ո՛չ գիտէք զաւր վախճանի ձեր, յորժամ Տէրն կոչէ զոգիսդ<sup>10</sup> ի մարմնոյդ:

**ԻԳ** «Զոր ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ արթուն կացէք» (հմմտ. Մատթ. ԻԵ 13): Արթնութիւն կրկին է, որ զաւրէ գերծուցանել յայն վտանգիցն, և քուն՝ կրկին<sup>11</sup>, որ ըմբռնէ զհոգիսն հեղգացելոցն ցանկութեամբ աշխարհիս: Եւ ի վերինսն հայել ո՛չ կարէ, զի ո՛չ այլ ինչ տեսանէ քան զմերձակայս:

Զի արժանի լինիցիք<sup>12</sup> գերծանել յամենայնէ<sup>13</sup>, որ լինելոց է (ԻՍ 36):

Ի հնարիմաց չարեաց Նեոխնն, որով որսայ ի կորուստ: Զի մի՛ լուղիցուք զկտրելն ընդ մէջ, և կապեալ ձեռաւք և կապեալ ոտիւք յուղարկիլ «ի խաւարն արտաքին» (Մատթ. Ը 12, ԻԲ 13, ԻԵ 30), և զի մի՛ հողմք առցեն և մրրիկք բարժանեսցեն<sup>14</sup>:

<sup>1</sup> B Հասանիցէ

<sup>2</sup> A աւրոգայթ

<sup>3</sup> B գործեցին

<sup>4</sup> B կացէք այսուհետև և

<sup>5</sup> B չէք և

<sup>6</sup> B ածի

<sup>7</sup> B զկամեցաւդն

<sup>8</sup> B սրբ.՝ զԱստուած

<sup>9</sup> B աշխարհիս

<sup>10</sup> B զհոգիդ

<sup>11</sup> B սրբ.՝ կրկին է

<sup>12</sup> B լինիջիք

<sup>13</sup> B յայնմ ամենայնէ

<sup>14</sup> B բարժանեսցեն



Եւ կալ առաջի Որդոյ<sup>1</sup> մ[արդոյ] (ԻԱ 36):

Ընդէ՞ր ամենայն ուրեք Որդի<sup>2</sup> նախ դնէ, զի մի՛ մարդեղու-  
թիւն կարծեաւք լիցի [յ]այժմուս, յորժամ յայնպիսի փառան տե-  
սանիցեմք, ամաչիցեմք<sup>3</sup>: Այլ այժմ հաւատալ<sup>4</sup> և յայնժամ փառա-  
ւորիլ<sup>5</sup>, թէ սա լիով յերկինս<sup>6</sup> և բովանդակ<sup>7</sup> յերկրի: Եւ ստուգա-  
պէս սա<sup>8</sup> է Յիսուս Քրիստոս, որ առաւ ի բնութենէս Ադամայ,  
Հաւր բնութեամբ Որդի և զո[ւ]գակից Հաւր և Հոգոյն Սրբոյ: Հա-  
ւասար ծնաւդին<sup>9</sup>, որ միացաւ ի մարմնի անճառապէս: Այսպէս  
կամի<sup>10</sup>, զի մի՛ ոք տկարասցի վասն մարմնոյն, այլ համարձակու-  
թեամբ դաւանել զնա Աստուած // և դատաւոր երկնի և երկրի:  
Եւ<sup>11</sup> ըստ վաստակոց՝ հատուցանող<sup>12</sup>, ոմանց՝ զփառս և ոմանց՝  
զամալթն յաւիտենից:

Ի<sup>13</sup> տուէ ի տաճարին ուսուցանէր (ԻԱ 37):

Զի այն էր տեղի ժողովելոյ նոցա: Վասն այնորիկ անդր ու-  
սուցանէր՝ որսալով զանճինս փրկելոց<sup>14</sup> ի մահուանէ ի կեանս  
անլուծանելի: Եւ թէ զի՞նչ ուսուցանէր յաւուրն յայնմիկ, ո՛չ  
գրեցաւ: Վկայէ Յովհաննէս՝ ասելով, թէ՝ «Աշխարհս ո՛չ էր բաւա-  
կան տանել զգիրն<sup>15</sup>, որ եթէ գրեալն<sup>16</sup> էին» (Յովհ. ԻԱ 25):

Զգիշերն<sup>17</sup> ելեալ ազանէր ի լերինն, որ կոչեր Զիթենեաց (ԻԱ 37):

Զի ո՛չ գոյր նորա տեղի, ուր զգլուխն դնէր: Թագաւորին եկ-  
նից<sup>18</sup> և երկրի ո՛չ արքունիք ըստ արքային, ո՛չ գահոյք ըստ բազ-  
մեցելոյն կամ ըստ մարմնաւոր մեծատանց կամ նուազից, այլ բա-  
ցաւթեայ ի լերինս ազանէր: Զի սկսաւ «առնել և ուսուցանել»  
(Գործք Ա 1) մեզ զաւրինակ բարեացն հեղութեան և խոնարհութեան

1 B որդւոյ  
2 B բառի վերևում սրբ.՝ մարդոյ  
3 B տեսանիցէք, ամաչիցէք  
4 B յայնժամ հաւատայցէք, թէ Աստուած եմ և Որդի Աստուծոյ  
5 B չիք և յայնժամ փառաւորիլ  
6 B փառաւորի յերկինս  
7 A բաւրնդակ  
8 B նա  
9 A ծնողին  
10 A կամի և կամի  
11 B չիք եւ  
12 B հատուցանաւ  
13 B եւ ի  
14 A նախ՝ փրկելոցն, ապա ն-ն քերած-ջնջած B փրկելոցն  
15 B զգիրս  
16 B թէ գրեալ  
17 B եւ զգիշերս  
18 B . . . . .  
32 - Մ. Կունդ, Մեկն. Ղուկասոս

և նշգեհուններն և սիրոյ և ուսուցանելոյ: Եւ անդադար կալ<sup>1</sup> յաղաւթս, որ և ինքն ելեալ ի լեառն՝ հանէր զգիշերն յաղաւթս<sup>2</sup> Աստուծոյ: Աստ լցաւ մարգարէութիւն Ջաքարիայ. «Յաւուր յայնմիկ կայցեն<sup>3</sup> ոտք նորա ի լեառն Ձիթենեաց յարեւելից կուսէ<sup>4</sup>, յանդիման տաճարին Երուսաղեմի» (Ձաք. ԺԴ 4): *Ձի, զոր Հոգին Մուրբ ազդէր ի մարգարէսն, և Յիսուս հաւատարմացուցանէ զբանս ծառայից իւրոց<sup>5</sup>, և զխորհուրդս հրեշտակաց իւրոց արդարացոյց: Ի լերինն Ձիթենեաց զամենայն գիշերն ազանէր<sup>6</sup>:*

247ա Ամենայն<sup>7</sup> ժողովուրդն կանխէր ընդ //առաւաւտն<sup>8</sup> ի տաճարն լսել ի նմանէ (ԻԱ 38):

Դառնայր վաղիւն և մտանէր ի տաճար[ն] անդ: Ձի որք ո՛չ էին ի չար նախանձ քահանայիցն հեղձեալք, վայելէին ի վարդապետութեան նորա, զի հարեալ էին ի սէր նորա և ո՛չ կամէին բնաւ մեկնել<sup>9</sup> ի նմանէ: Ընդ առաւաւտն<sup>10</sup> փութային ի հոգևոր շնորհն վայելեալ<sup>11</sup>, և ապա՝ ի մարմնոյ պէտս: Ջայս ակրինակ պարտ էր պահել կատարելոցս ի Քրիստոս:

**ԵՓ** Ըստ Ջաքարիայ մարգարէութեանն. «Ի վերայ հովուաց բարկութիւն և սրտմտութիւն իմ» (Ձաք. Ժ 3), զի ո՛չ գոյր, որ հովուէր<sup>12</sup> ճշմարտութեամբ խաշանց իմոց: Այցելութիւն եղիցի հատից ի չարիս և ի բարիս, և բազմասցին որպէս զուխտն Աբրահամու, զի մի՛ թուեսցի զաւակ իմ: Եւ սերմանեցից զնոսա ընդ ազգս<sup>13</sup> և ի գաւառս հեռաւորս, և ակրհնեսցեն զիս առաքինութեամբքն, զի լռելոց<sup>14</sup> են, զոր առնեմ ես: Եւ փառաւորեցայ որպէս ի Բաբելոն տամբն Դանիելի և Մորթքեի<sup>15</sup> և յեգիպտոս հինգ քաղաքաւքն, որ պահեցան:

<sup>1</sup> B կալոյ

<sup>2</sup> B *չիք* որ և ինքն... յաղաւթս

<sup>3</sup> B կացցեն

<sup>4</sup> B կողմանէ

<sup>5</sup> B իւրոց մարգարէից

<sup>6</sup> B *չիք* ի լերինն Ձիթենեաց... ազանէր

<sup>7</sup> B Եւ ամենայն

<sup>8</sup> B առաւաւտս առ նա

<sup>9</sup> B մեկնիլ

<sup>10</sup> B առաւաւտս

<sup>11</sup> B վայելել

<sup>12</sup> B հովիւ *փխ* որ հովուէր

<sup>13</sup> B ազգս ազգս

<sup>14</sup> B լսելոց

<sup>15</sup> B Մուրթքեի

## Գլուխ ԻԲ

**Մերձեցաւ տաւն բաղարջակերացն, որ կոչէր պասէք<sup>1</sup> (ԻԲ 1):**

- Կր.** *Զգառնաղէն տաւնն ասէ, որ յԵգիպտոս խաչանման<sup>2</sup> դրոշմէին: Եւ հրեշտակն, տեսանելով ի նմա զարիւն ճմարիտ Գառինն Աստուծոյ, զոր Յովհաննէս ասաց, թէ՛ «Բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա 29), որով ամրանալոց էին հաւատացեալքն ի բանսարկուէն: Արդ՝ յամսեանն, յորում ստեղծան արարածք, և Նոյ արտաքս եկն ի տապանէն, երկրորդ Ադամ եկն ի նորոգել 247ք բնութեանս մերոյ, և Յեսուս<sup>3</sup> զ(//)Յորդանան սանձեաց և կանգնեցաւ խորանն: Եւ ի նմին աւուր պատարագեցաւ Որդին Աստուծոյ, ի նմին աւուր նշանակեաց զմիւսանգամ գալուստն:*
- Եփ.(Իգ.)** *Արդ՝ ի տաւնի բաղարջակերացն արար Տէր զնշան հացին: Որպէս մարգարէն ասէ. «Յուդա՛, արա՛<sup>4</sup> զտաւն տարեկանաց քոց» (Իմմտ. Բ Մակ. ԺԵ 36): Զի եկն եհաս տաւն տարեկանի մերոյ, և կատարեայ զուխտս քո: Զի եկն եհաս Գառն ճմարտութեան, և խափանեցան ուխտք հինք և յիշատակք նոցա, վասնզի այլ ո՛չ ևս<sup>5</sup> յաւելուն գործել ի քեզ զանաւրէնութիւն, զի ո՛չ արքայութեան իշխանութիւն<sup>6</sup> կամ քահանայութեան: Վասնէ՞ր ո՛չ յաւելու, քանզի<sup>7</sup> կորնչելոց է՞<sup>8</sup>:*
- ԻԳ** *Զի լրումն աւրինականացն և աւրինացն Քրիստոս է և խորհրդոյն աւանդութեանն<sup>9</sup>, որ անվրէպ կշռել զազատութիւն պատժոց: Զի ասելն. «Բաղարջ<sup>10</sup> ընդ եղէգի դառնձաց կերիջիք գեւթն աւր» (Ելք ԺԲ 8, 15), բառնայ զհեշտ և զփքացեալ քացախուտ չարեացն մաքուր և անապական վարիւք դառն և տաժանելի կրիւք<sup>11</sup> գեւթն ժամանակս ձգել<sup>12</sup>:*

<sup>1</sup> Բ պասքայ

<sup>2</sup> Բ արեամբն ի վերայ սեմոցն նշանակելով խաչանման

<sup>3</sup> Բ Յեսուս

<sup>4</sup> Բ արար

<sup>5</sup> Բ վասնզի ոչ այլ ինչ

<sup>6</sup> Բ իշխանութիւնք

<sup>7</sup> Բ զի

<sup>8</sup> Բ են

<sup>9</sup> Բ աւանդութիւնքն

<sup>10</sup> Բ Բաղարձ

<sup>11</sup> Բ չիք դառն և տաժանելի կրիւք

<sup>12</sup> Բ ձգէր

Խնդրէին<sup>1</sup> քահանայապետքն և դպիրքն, թէ որպէ՞ս սրպանցեն<sup>2</sup> զնա, բայց երկնչէին ի ժողովրդենէ<sup>3</sup> (ԻԲ 2):

Միւս<sup>4</sup> աւետարանիչն ասէ. «Մի՛ ի տաւնի աստ» (Մատթ. ԻՁ 5):  
 Զայս իմացան պատշաճ ըստ<sup>5</sup> իւրեանց կարծեացն, զի մի՛ ի տաւնի անդ լինիցի: Զի երկեան ի բազմութենէ մարդկանն, որ յամենայն գաւառաց անդ<sup>6</sup> ժողովեալ էին: Վասնզի<sup>7</sup> ունէին պատուէր

248ա յաւրինացն. «Ուր դիցէ Տէր զանուն քաջութեան իւրոյ, // անդ միայն լիցին զոհքն<sup>8</sup> ձեր և անդ կատարեցին տաւնքն ձեր<sup>9</sup>» (Իմմտ. Ելք Ի 24): Նորին աղագաւ ժողովք<sup>10</sup> բազում էին ի քաղաքին անդ, և<sup>11</sup> նոքա մնային անցանելոյ տաւնին, և ցրուեալ ամբոխին՝ յիւրաքանչիւր տեղիս բնակութեան:

Ապա եմուտ սատանայ ի Յուդայ Իսկարիովտացին<sup>12</sup>, որ էր ի թուոյ երկոտասանիցն (ԻԲ 3):

ԿՐ Տեղոյն անուամբ յայտնի առնէ, զի որոշէ այնուիկ ի Յակոբայ Յուդայեան: Այլ տե՛ս զճշմարտաբանութիւն աւետարանչին, զի ո՛չ պատկառէ յերկոտասանիցն գոլ, որ զահագինսն գործեաց: Իսկ զմտանելն սատանայի ո՛չ իշխանութեամբ ինչ ասէ: Զի թէ կարող էր, առաւել ի Պետրոս ախորժէր մտանել, որ մեծագոյնն էր, կամ ի սիրեցելոյն<sup>13</sup> Յովհաննէս: Այլ, յորժամ պատրաստեացն Յուդայ, զինքն բնակութիւն նմա գոլ և կատարիչ խորհրդոյն<sup>14</sup> նորա և ի բաց եկաց ի շնորհացն, յայնժամ եմուտ ի նա սատանայ:

Զոգաւ եղ բանս ընդ քահանայապետսն և ընդ<sup>15</sup> իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա նոցա (ԻԲ 4):

<sup>1</sup> B Եւ Խնդրէին

<sup>2</sup> B սպանանիցեն

<sup>3</sup> B ժողովրդենէ անտի

<sup>4</sup> B Իսկ միւս

<sup>5</sup> B **չիք** ըստ

<sup>6</sup> B անդր

<sup>7</sup> B Զի

<sup>8</sup> B գոհք

<sup>9</sup> B **չիք** և անդ... ձեր

<sup>10</sup> B ժողովուրդք

<sup>11</sup> B **չիք** և

<sup>12</sup> A Իսկարեովտացին B ի կոչեցեալն Իսկարիովտացի

<sup>13</sup> B սիրեցեալն

<sup>14</sup> B խորհրդոց

<sup>15</sup> B ընդ դպիրս և

**ԵՓ** Յոռնան մարգարէ վասն մահուն Տեառն՝ ասելով. «Միաբանեցան քահանայքն, և ի ճանապարհի<sup>1</sup> սպանին զՍուքէմ» (*հմմտ.* Ովստ 29), որ է Քրիստոս:

**ԻԳ** Իսկ<sup>2</sup> Յուդայ՝ ի ցանկութեան արծաթոյն, գրգռեալ ի դիւաց: Լնու զմարգարէութիւն<sup>3</sup> Դաւթի. «Որ ուտէր զՀաց իմ, արար ինձ խաբէութիւն» (Սաղմ. Խ 10), որով միաբանեաց ընդ քահանայսն<sup>4</sup>:

**Խնդացին յոյժ<sup>5</sup>** (ԻԲ 5):

**248բ** Զի գտին կամաց իւրեանց կատարիչ և առաջնորդ զաշակերտն: Եւ լուծին զառաջին մտածութիւնն, // վասնզի կասկածէին, թէ գուցէ ի յապաղելն զայս, յետ այնորիկ զաշակերտն ո՛չ ունիցին վկայ՝ ցուցանելով զՅիսուս արժանապարտ մահու, և առաջարկութիւն<sup>6</sup> խափանեսցի:

**Խոստացան<sup>7</sup> տալ նմա արծաթ:** Եւ յանձն էառ (ԻԲ 5-6):

**ԿՐ** Այլ արծաթ վասնէ՞ր տային: Զի, յորժամ յաշակերտէն իւրմէ մատնեսցի, ասասցեն<sup>8</sup> ցժողովուրդն, թէ մահապարտ ո՞չ էր, ո՞չ մատնէր զնա իւր աշակերտն ի մահ, այլ ուրեմն նա ճշմարտագոյն գիտէ զնա քան զձեզ: Ապա<sup>9</sup> հաւատալ պարտ է ձեզ, և ո՛չ առաւել քան զաշակերտն իւր սիրել զնա: Եւ վասնզի առ ցանկութիւն սպանութեանն չխնայեն<sup>10</sup> յինչսն և ո՛չ ի տաւնն, որ ազատութիւն էր, ի ծառայութենէ եզիպտացոցն:

**ԵՎ.** Յոռնան մարգարէն ասէ. «Մեծացայ ես և գտի ինձ ցաւս, որ է մամոնայ, և ամենայն վաստակք իմ մի<sup>11</sup> գտցի վասն անաւրէնութեանցն, որ յանցայ<sup>12</sup> ես նոքաւք»:

**Խնդ[ը]էր պարապ, զի մատնեսցէ<sup>13</sup> զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն** (ԻԲ 6):

<sup>1</sup> Բ ճանապարհին

<sup>2</sup> Բ Իսկ և

<sup>3</sup> Բ մարգարէութիւնն

<sup>4</sup> Բ **չիք** որով միաբանեաց ընդ քահանայսն

<sup>5</sup> Բ Եւ խնդացին յայնժամ:

<sup>6</sup> Բ առարկութիւնն

<sup>7</sup> Բ Եւ խոստացան

<sup>8</sup> Բ ասիցէն

<sup>9</sup> Բ ապա ուրեմն

<sup>10</sup> Բ չխնայեսցեն

<sup>11</sup> Բ **չիք** մի

<sup>12</sup> Բ յանցի

<sup>13</sup> Բ Եւ խնդրէր պարապ մատնել

**ԿՐ** Յորմէ երկնչէին: Վասնզի բազում անգամ կամեցան արկանել ի նա ձեռս<sup>1</sup>, այլ երկնչէին ի ժողովրդենէն: Վասն այնորիկ<sup>2</sup> խոտացաւ մատնել զնա ի ժամուն, յորում մեկուսի գտանիցի<sup>3</sup> ի բազմութենէն:

**Եկն աւր բաղարջակերացն, յորում աւրէն էր զենուլ զզատիկն<sup>4</sup>**  
(ԻԲ 7):

**Ոկ.** *Ջայն յայտ առնէ, եթէ մերձ էր և ի դուրս հասեալ: Եւ յայտ է, եթէ զերեկորեան<sup>5</sup> զայնմանէ ասէ, քանզի [յ]երեկորին սկիզբն 249ա առնէին<sup>6</sup> եբրայեցիքն և ասորիքն: Վասն որ(//)ոյ իւրաքանչիւր ոք յաւելու, եթէ<sup>7</sup> զենոյր զչարչարանացն:*

**Առաքեաց<sup>8</sup> զՊետրոս և զՅովհաննէս և ասէ. Երթայք պատրաստեցէք<sup>9</sup>** (ԻԲ 8):

**Իգ.** *Իսկ Յիսուս, ի Բեթանիայ գողով, ամենայն ուրեք զգլխաւորսն տանի ընդ իւր վասն կատարեալ գողոյն<sup>10</sup>, քան զայլսն: Եւ զնոսա առաքէ, զի մի՛ այլքն խոտացին իբր արհամարհեալք, և զի ասացեալքն ի նմանէ<sup>11</sup>. «Որ մեծն է ի ձէնջ, եղիցի ձեր սպասաւոր» (Մատթ. ԻԳ 11)՝ կատարեսցի<sup>12</sup>:*

**ԿՐ** *է՞ր վասն երկու[ս]<sup>13</sup> և ո՛չ աւելի կամ պակաս: Ջմինն՝ ի ծերագունիցն, իսկ զմիւսն՝ յերիտասարդաց[ն]: Ջի հանդերձեալ էր կատարել զխորհուրդ փրկական մարմնոյ և արեան իւրոյ: Եւ ի նշանակ կոչման երկու ազգացն՝ հրէից և հեթա[նոսաց], զի ծերագունիւն զհնոյ ժողովրդեանն նշանակէր զկոչումն, իսկ<sup>14</sup> երիտասարդաւն՝ զնորոյ և զանհաստատ և զանվարժ հեթանոսաց:*

**Նոքա<sup>15</sup> ասեն. Ո՞ւր կամիս, զի պատրաստեսցուք** (ԻԲ 9):

<sup>1</sup> Եւ ձեռն

<sup>2</sup> Եւ այնորիկ

<sup>3</sup> Եւ գտանիցեն

<sup>4</sup> Եւ զպատեքն

<sup>5</sup> Եւ զերեկոյէն

<sup>6</sup> Եւ զսկիզբն առնէին աւուրն

<sup>7</sup> Եւ թէ յորժամ

<sup>8</sup> Եւ Եւ առաքեաց

<sup>9</sup> Եւ պատրաստեցէք մեզ զպատեքն, զի կերիցուք:

<sup>10</sup> Եւ գլխոյն

<sup>11</sup> Եւ սրբ.՝ նմանէ ճշմարտին

<sup>12</sup> Եւ չիք կատարեսցի

<sup>13</sup> Եւ երկուս առաքէ

<sup>14</sup> Եւ լս. հղված՝ Ոկ.

<sup>15</sup> Եւ նոքա

**ՈԿ** Յուզանէ, թէ մինչ ի վերջին աւրն չէ հակառակ աւրինացն, զոր ինքն եղ: Վասնէ՞ր հարցին աշակերտքն: Զի յայտ լինի, թէ ո՛չ էին ստացեալ տեղի աւթեանի<sup>1</sup>, այլ նշանացն և վարդապետութեանն պարապէին: Քանզի<sup>2</sup> քաղաքն վասն տաւնին լցեալ էր ժողովելաւքն և զի ո՛չ այլ ուրեք արտաքոյ քաղաքին զտաւն[ն] կատարէին:

**Յիսուս ասէ.** Իբրև մտանիցէք ի քաղաքն, պատահէ<sup>3</sup> ձեզ այր մի՝ բարձեալ սափոր ջրոյ: Երթիջիք զհետ նորա ի տունն<sup>4</sup> (ԻԲ 10):

**ՍՏ 249բ** Քանզի ո՛չ էին տեղեակ առնն, տայ նոցա նշան: Որպէս Սամուէլ<sup>5</sup> մարգարէն Սաւուղայ. // «Գտանիցես, ասէ, այր մի, զի ելանիցէ, և տիկ ունի ըստ անձին» (հմնտ. Ա Թագ. Թ 15-18, Ժ 3): Եւ աստ ասելով՝ «սափոր ջրոյ յուս բարձեալ»:

**ԿՐ** Իսկ այրն, աւրինակ քահանայից գոլով, որ միշտ բարձեալ բերեն զջուր սուրբ աւազանին, որով մկրտին հրէայք և հեթանոսք՝ զազատութեան՝ ընդունելով շնորհս ի ծառայական կարգաց, կամ ապաշխարողք, գնալով ի տուն Աստուծոյ, զարտասուս հեղուլ:

**ԻՊ** Զի, մինչ զայս խաւսէր Յիսուս ի Բեթանիայ, այրն փութայր ի ջուրն: Եւ Յիսուս կշռեաց, զի ի գնալ<sup>6</sup> աշակերտացն հասանիցեն<sup>7</sup> նմա:

**Ասասջիք**<sup>8</sup> ցտանուտէր տանն. Վարդապետ ասէ<sup>9</sup>. Ո՞ր են աւթեւանք<sup>10</sup> իմ<sup>11</sup> աշակերտաւքս հանդ[երձ] (ԻԲ 11):

**ԿՐ.** Այլ խնդրելի է, թէ է՞ր աղագաւ ո՛չ յայտնի ասէ<sup>12</sup> զանուն առնն, յորում ի տան անդ զգատիկն առնելոց էր: Զի մի՛ յայտնի լիցի մատնչին առանձնանալն աշակերտաւքն հանդերձ, և փութասցի ի մատնութիւն խաչին: Ըստ որում պարապ ի ժողովրդենէն խնդրէր, այսինքն՝ մեկուսի յամբոխէն լինել: Վասն այնորիկ ո՛չ տայ գիտել Յուդայի զայրն և զտեղին, մինչև կատարեսցի բաճրագոյն խորհուրդն, որ ի վերնատանն՝ ըստ մարմնոյ և ա-

<sup>1</sup> Եւ ասելովանի  
<sup>2</sup> Եւ Այլ քանզի և  
<sup>3</sup> Եւ ասէ ցնոսա. Ահա իբրև մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ  
<sup>4</sup> Եւ տունն յոր մտանիցէ  
<sup>5</sup> Ա Սամուէլ  
<sup>6</sup> Եւ գալ  
<sup>7</sup> Եւ հասանիցի  
<sup>8</sup> Եւ ասէ զսալ  
<sup>9</sup> Եւ ասէ քեզ  
<sup>10</sup> Եւ վանքն  
<sup>11</sup> Եւ իմ յորում զպատէքն ուտիցեմ  
<sup>12</sup> Եւ ասէր

րեանն ի քաւութիւն աշխարհի, զոր ցանկ վարդապետեր նոցա առ ի հաւատալ:

**Ցուցցէ<sup>1</sup> ձեզ վերնատուն մի զարդարեալ<sup>2</sup>** (ԻԲ 12):

Վասնէ՞ր ո՛չ յայլ տան, այլ ի վերնատանն: Զի զխորհուրդ եկեղեցոյ նշանակէր, որ ունէր գերկնային խորհուրդն՝ յերկրի<sup>3</sup> երկինք գոլով:

**ԵՓ 250ա** Զոր Զաքարիայ ասէ. «Բանայ մեզ<sup>4</sup> զգրուես նորա» (հմտ. Ձաք. ԺԱ 1): Զի [ի] բանալ դրանցն եկեղեցոյ, որ պաշտի<sup>5</sup> ի // նոսա սրբութիւն: Եւ կոոցն դրունք, որ բացեալ էին, փակեցան: Եւ շաւշափեցից զանաւրէնութիւնս ամենայն երկրի<sup>6</sup>: «Ես եկից<sup>7</sup> բնակեցայց ի միջի քում» (հմտ. Յովի. ԺԴ 17), այսինքն՝ յեկեղեցոջ իւրում՝ ասելով. «Ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20): Այժմն տեսի աչաւք իմաւք<sup>8</sup>, զի ետես զթագաւորն խոնարհ: Ետես մարգարէն զթագաւորն և զփրկիչն՝ «Վայելչութիւն գեղոյ քո» (Սաղմ. ԽԴ 4) յառաջ, քան զարուսեակ ծնեալ ի Հաւրէ:

**Գնացեալ<sup>9</sup> գտին որպէս [աս]աց<sup>10</sup> նոցա, և պատրաստեցին զպասեքն** (ԻԲ 13):

**ԿԲ** Ո՞ր արդեք էր վերնատունն: Յովսեփայ<sup>11</sup>, որ և գերեզմանին սպասաւորելոց էր տերունական մարմնոյն, որ և զկնի աշակերտեալ ի թիւ եւթանասնիցն կարգեցաւ առաքելոցն:

**Իբրև ժամ եղև** (ԻԲ 14):

Զերեկորեան ժամէն<sup>12</sup>, ասէ, զմուտ արեգականն: Զի յայնժամ ուտէին զգատիկն, զոր գրեաց Մովսէս. «Բաղարջով կերիջիք զնա և յոտն կալով: Յուպ ձեր ի ձեռին և գաւտիք պնդեալ, և ճրագունք լուցեալ. փութով կերիջիք, զի գատիկ Տեառն է» (Ելք ԺԲ 8, 11):

<sup>1</sup> Եւ նա ցուցցէ

<sup>2</sup> Եւ մեծ զարդարեալ և անդ պատրաստեալիք

<sup>3</sup> Ա, Ե ի յերկրի

<sup>4</sup> Եւ բանամ ես

<sup>5</sup> Եւ պաշտին

<sup>6</sup> Եւ երկրի յաւուր յայնմիկ

<sup>7</sup> Եւ եկից և

<sup>8</sup> Եւ իմովք

<sup>9</sup> Եւ եւ գնացեալ

<sup>10</sup> Եւ և ասացն

<sup>11</sup> Եւ Յովսեփով

<sup>12</sup> Եւ զերեկոյին ժամուն



ով. Յոհանն<sup>1</sup> ասէ. «Ապա արկանէ ինքն զջուրն ի կոնքն և լուանայ<sup>2</sup> զոտս աշակերտացն» (Յովի. ԺԳ 5): *Ձեռքն, որ զերկիրնս ձգեաց և զերկիր հաստատեաց, խոնարհեցուցանէր ի ներքոյ ոտից առաքելոցն՝ ուսուցանելով նոցա<sup>3</sup> խոնարհութեամբ մեծին ծառայել փոքուն, լուանալով զոտս նոցա, բժշկելով զգարչապար<sup>4</sup> նախահաւրն ի թիւնից<sup>5</sup> մահաբեր վիշապին, դնելով զաւրութիւն<sup>6</sup>: Ըստ այնմ՝ «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զաւձ<sup>7</sup>»՝ սատանայ<sup>8</sup>, «և*

250բ կարիճ<sup>9</sup>՝ ղեւք<sup>10</sup>, //«և զամենայն զաւրութիւն<sup>11</sup> թշնամոյն» (Ժ 19):

Եփ. Արար Տէր մեր զաշակերտսն աղ՝ կուրացուցիչ աւձից, փոխանակ զի արար նմա զԱդամ հող՝ կերակուր աւձից՝ զեղեցկացուցանելով զոտս աւետարանչացն ի վերայ լերանց (հմմտ. Ես. ԾԲ 7): *Ըստ Դաւթայ և Միքիայ. «Արագ են ոտք նոցա ի վերայ լերանց այնոքիկ<sup>12</sup>, որ աւետարանեն զխաղաղութիւն» (Նաւում Ա 15): Եւ ո՞ւմ է այս, բայց<sup>13</sup> հեթանոսաց: Ըստ այնմ, եթէ՝ «Խաւսեցի խաղաղութիւն<sup>14</sup> ընդ հեթանոսս, ընդ հեռաւորս և ընդ մերձաւորս» (Ես. ԾԷ 19): Ակնարկէր<sup>15</sup> վասն Աւետարանի նորա, թէ ելանէր, տարածէր ի մէջ հեթանոսաց: Որպէս ասաց Յակոբ<sup>16</sup>. «Ի նա հեթանոսք յուսասցին» (Ես. ԺԱ 10): Այնոքիկ, որ ի սուր և ի սատակումն համարեալ էին վասն մեղաց և անաւրէնութեան իւրեանց, զի<sup>17</sup> ջուր աւազանին մկրտութեան<sup>18</sup> քաւեաց զնոսա:*

Յորժամ զգեցաւ զհանդերձն, դարձեալ բազմեցաւ<sup>19</sup> (հմմտ. ԻԲ 14):

<sup>1</sup> Բ Յովհաննէս  
<sup>2</sup> Բ սկսաւ լուանալ  
<sup>3</sup> Բ *չիք* նոցա  
<sup>4</sup> Բ զգարչապարս  
<sup>5</sup> Բ թունից  
<sup>6</sup> Բ զաւրութիւն յոտս առաքելոցն  
<sup>7</sup> Բ զաւձս  
<sup>8</sup> Բ *չիք* սատանայ  
<sup>9</sup> Բ զկարիճս  
<sup>10</sup> Բ *չիք* ղեւք  
<sup>11</sup> Բ զաւրութիւնս  
<sup>12</sup> Բ այնոցիկ  
<sup>13</sup> Բ բռնի վերեւում սրբ.՝ թէ  
<sup>14</sup> Բ զխաղաղութիւն  
<sup>15</sup> Բ ակնարկէ  
<sup>16</sup> Բ Յակոբ  
<sup>17</sup> Բ բռնի տեղն ազատ է թողնված  
<sup>18</sup> Բ *չիք* մկրտութեան  
<sup>19</sup> Բ Եւ իբրև ժամ եղև, բազմեցաւ:

**ԵՓ** Այն է, որ<sup>1</sup> ասաց Ջաքարիա. «Եղիցի քահանայ ի վերայ ամբուռոյ իւրոյ» (Ձաք. 2 13), զի զթագաւորութիւնն ա՛ռ նա և զքահանայութիւնն: Որպէս Դաւիթ ասէ<sup>2</sup>, թէ<sup>3</sup>՝ «Դու ես քահանայ յաւիտեան» (Սաղմ. 68 4): Ո՛չ ըստ նմանութեանն Ահարոնի, զի ո՛չ գոյր նորա թագաւորութիւնն ընդ քահանայութեանն իւրում, այլ ըստ նմանութեանն Մելքիսեդեկի, այն, որ ընդ քահանայութեանն զթագաւորութիւնն<sup>4</sup> ստացեալ էր յանձն իւր:

**ԿՐ** Թէ՛ յետ ուտելոյ զգատիկն և լուանալոյ<sup>5</sup> զոտսն, բազմեցան այլ ինչ ուտել: Զի ուսանիցիս, թէ՛ Հնոյն և Նորոյս ինքն է աւրինադիր<sup>6</sup>:

**Եւ երկոտասանքն<sup>7</sup> ընդ նմա** (ԻԲ 14):

**251ա** Ընդէ՞ր ո՛չ գեւթանասունսն ընդ իւր տարաւ, //այլ զհետեւեալսն: Քանզի նոքա ո՛չ էին բաւական բարձրագոյն խորհրդոյն, որ ըստ մարմնոյ և արեան: Թողու զնոսա առ անգամ մի՝ վարդապետելով ի կատարելագոյնսն, և առնու ընդ իւր, որք կարողք էին կրել զգրտաւորութիւնն<sup>8</sup> խորհրդոյն:

**Ցանկացայ<sup>9</sup> զայս պասեք ուտել ընդ ձեզ<sup>10</sup>** (ԻԲ 15):

**ԿՐ** Վասնզի ո՛չ ըստ հրէիցն աւրինաց աւանդեմ ձեզ [զ]գատիկս, այլ զաւրինակս կատարելով զձեզ ի ճշմարտութիւնն փոխադրեմ: Զի ծանիջիք, թէ՛ այս է կատարելագոյն, զի կատարելոց<sup>11</sup> են աւրինակքն: Ըստ Դաւթի<sup>12</sup>. «Ո՛չ ընդունիմ ի տանէ քումմէ՛ զուարակս և ո՛չ ի հաւտից քոց<sup>13</sup> նոխազս» (Սաղմ. 109 9): Եւ Եսայի՝ «Յագեալ եմ ողջակիզաւք ձերովք» (Ես. Ա 11)<sup>14</sup>:

<sup>1</sup> B դարձեալ բազմեցաւ այն, որ

<sup>2</sup> B ասաց

<sup>3</sup> B *չիք* թէ

<sup>4</sup> B *գրիկս* թագաւորութեանն զքահանայութիւննս

<sup>5</sup> A լվանալոյ

<sup>6</sup> B աւրէնսդիր

<sup>7</sup> B երկոտասան առաքեալքն

<sup>8</sup> A զգրտաւորութիւնն

<sup>9</sup> B Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցանկացայ

<sup>10</sup> B ձեզ մինչև և չարչարեալ իցեմ

<sup>11</sup> B դադարելոց

<sup>12</sup> B *չիք* ըստ Դաւթայ

<sup>13</sup> B քո

<sup>14</sup> B *չարունակվում է ԻԲ 16՝ «Ասեմ ձեզ... արքայութիւն Աստուծոյ»-ից հետո (էջ 190ա-191բ).* «Այլ Մովսէսի ասաց լուծանել զկաւչիկս, զի զհուր աստուածութեանն ետես ի մորենոջն, և ասաց աշակերտացն զկաւչիկս լուծել, զի զանպարագիրն Աստուած տեսին ի մարմնի միացեալ:

**Առեալ զինչակ սփածաւ** (Յովի. ԺԳ 4):

Որպէսզի զմաշկեղէն հանդերձն Ազամայ պատառեսցէ և արփիազարդ պատ-

մուծանալու ծածկեաց զմերկութիւնս մեր և ծառայական կերպիւ ազատեաց զմեզ ի ծառայութենէ սատանայի:

**Արկանէ զՉուրն ի կոնքն** (Յովհ. ԺԳ 5):

Բազմեցոյց զաշակերտսն և սկսաւ լուանալ՝ բռնն հարեալ ամենասուրբ բազկաւն, որ ձգեաց զերկինս: Կոնքն եղանակ աւագանին՝ վերստին ծնանելով զհեթանոսս յորդէգրութիւն: Եւ ինքն արկանէ զՉուրն: Հրամանք աւետարանչացն և Չուրն մկրտութեանն: Ակսաւ լուանալ վասն նեղ ճանապարհին գնալոյ: Լուաց զոտս աշակերտացն զայն, որ աւճն խածանէր: Որ ասաց առ Ադամ. «Նա սպասեցէ քում դարչապարիզ և դու գլխոյ նորա» (ԾՆՆՊ. Գ 15): Զաւետարանական քարոզութիւնն եղ ի դարչապարս նոցա: Ըստ մարգարէին. «Գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան և բարութեան» (Յոռմ. Ժ 15): Եւ Քրիստոս ասաց. «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զաւճս և զկարիճս» (Ժ 19)՝ զմեքենայս չարին: Եւ այլ մարգարէ ասէ. «Ի վերայ աւճից և կարճաց գնասցես», որ է սատանայ և հաւանեալք իւր: Արդ՝ զաշակերտսն լուանալով՝ զամենայն տիեզերս նշանակէ: Հրամայեաց Աստուած Մովսէսի աւագան՝ յաւրինեալ ի մկրտութիւն և ի լուացումն մարմնոյ՝ զծովն պղնձի ի դուռն խորանին: Եւ յորժամ մտանէին քահանայքն ի խորանն, լուանային զմարմինս և ապա ելանէին ընդ աստիճանսն և մտանէին ի խորանն: Զնոյն և Սողոմոն արար զծովն պղնձի և եղ ի վերայ երկոտասան եզանցն պղնձի՝ յաւրինակ առաքելոցն, որ զաւագանն սրբութեան բարձեալ տանէին ընդ տիեզերս մաքրիլ և մտանել յերկնից սրբութիւնն:

**Եւ դենջակաւն շնջէր** (Յովհ. ԺԳ 5):

Զի ի ձեռն մարմնոյ քրտանց մաքրել զներքին մարդն և արեամբ չափ հակառակ կալ հեշտ կենաց:

**Գայ առ Պետրոս և նա ասէ. Տէր, դո՞ւ զիմ ոտս լուանա՞ս»** (Յովհ. ԺԳ 6):

Դաւանեաց զՅիսուս Որդի Աստուծոյ: Զիւրդ ձեռք, որ զերկինս և զերկիր զարդարեցին, զիմ ոտս լուացէ: Եւ զարարչական գլխաւս խոնարհեցուցանես ի դարչապարս իմ, որ սերովբէքն և բազմաչեայ քերովբէքն և Չոկք հրեշտակաց տեսել զայրանան ի վերայ իմ: Զհոգս աստուածային ձեռաւքդ լուանաս: Իսկ Տէրն ետես զՉերմ սիրոյ նորա փափագումնն: Կամեցաւ Քրիստոս կարճել զգրիմադարձութիւն նորա.

**Թէ ո՞չ լուացից, ո՞չ ունիս ընդ իս մասն** (Յովհ. ԺԳ 8):

Զարհուրեցաւ Պետրոս և ասէ. «Տէ՛ր, գոտս և զգլուխս» (Յովհ. ԺԳ 9), և զբոլոր անդամս, զի անչափ լիցի հաղորդութիւն իմ առ քեզ, զի արժանի եղէց դերամոյն փառաց քոց: Ասէ Տէրն.

**Լուացելոյն չէ ինչ պիտոյ** (Յովհ. ԺԳ 10):

Քանզի դուք բաց երեսաւք տեսէք զանճառ զփառս իմ և շաւչափեցէք զբանս կենաց, զոր բազում մարգարէք և արդարք և թագաւորք ցանկացան տեսանել, զոր տեսանէքդ, և ո՞չ տեսին, և լսել, զոր լսէքդ, և ո՞չ լուան:

**Եւ սուրբ էք** (Յովհ. ԺԳ 10):

Վասն բանին կենաց, որ ճառեցի ձեզ ի լսելիս:

**Այլ ո՞չ ամենեքեան** (Յովհ. ԺԳ 10):

Աստ յիշէ զմատնիչն:

Այլ գոտս լուացի զձեր, զի գեղեցիկ երևի ի վերայ լերանց ոտք աւետարանչացդ (տե՛ս Յոռմ. ԺԳ 15) ընթանալ ընդ տիեզերս:

**Յորժամ լուաց գոտս աշակերտացն, զգեցաւ զհանդէրճս իւր և դարձեալ բազմեցաւ** (Յովհ. ԺԳ 12):

Զբնութիւնս մեր զերկրակոխ զգեցաւ և զմեզ ազատեաց յանիծիցն Ադամայ և ի վեր նստոյց յաթոռ փառաց:

**Աւրինակ խոնարհութեան ետու ձեզ, զի թէ ես՝ Տէրս և վարդապետս զձեր ոտս լուացի** (Յովհ. ԺԳ 15, 14):

Քանզի անկարելի է գտեղի անկելոց հրեշտակաց ժառանգել առանց խոնարհութեան:

**Որ ուտէր զհաց իմ, արար ինձ խաբէութիւն** (Յովհ. ԺԳ 18): **Խոռվեցաւ յոգի իւր** (Յովհ. ԺԳ 21):

Աստ կշտամբեաց զամպարչտուլթիւնն Ապողինարի, որ ասէր, թէ՛ «Զմարդկան հոգի ո՛չ առ Քրիստոս, զի որպէս անհնար է չարչարել առանց մարմնոյ, նոյնպէս և խոռովել առանց հոգւոյ»:

Տէրն քան զամենեցուն յառաջ լուաց զոտս մատնչին, և նա ո՛չ պատկառեցաւ: Եւ Տէրն ետես զանհաւան միտս նորա, մերժէ զնա յաշակերտաց, այլ աշակերտքն ո՛չ ծանեան, թէ՛ զուճէ՞ են սոսկալի բանքն:

**Ակնարկեաց Պետրոս Յովհաննու Հարցանել, թէ ո՞վ իցէ (Յովհ. ԺԳ 24), զի կայր հուպ առ Յիսուսի սիրեցեալն ի նմանէ առաւել քան զամենեսին (հմմտ. Յովհ. ԺԳ 23):**

Քանզի ասեն, թէ՛ առաւել քան զաշակերտսն խոնարհ էր և հնազանդ Տեառն, և համապատիւ էր Պետրոսի, վասն այնորիկ առաւել համարձակութիւն ունէր առ Քրիստոս:

**Անկեալ ի վերայ լանջացն Տեառն Հարցանէ, թէ ո՞վ է նա (Յովհ. ԺԳ 25): Եւ Տէրն նշանակեաց, թէ՛ Որում ես թացեալ զպատառն տաց նմա (հմմտ. Յովհ. ԺԳ 26):**

Քանզի թացեալ զպատառն ի ջուրն՝ լուաց յաւրհանութենէն և մերկացոյց զնա ի պահպանող օգնութեանց, որպէս Կայէն և Սաւուղ և Եսաւ մերկացաւ յանտրանկութենէն, կամեցաւ յայտնել զնորա չարութեան անօրէնութեան գործն, թաց ո՛չ ի բաժակն, այլ ի ջուրն: Եւ թափուր մնաց ի շնորհացն Աստուծոյ Յուզա:

**Եւ յետ պատառոյն ապա եմուտ ի նա սատանայ (Յովհ. ԺԳ 27):**

Որպէս յայնժամ Հոգին վերացաւ ի Սաւուղայ և այս չար ի Տեառնէ խեղդէր զնա: Զոր աւրինակ երիտասարդ, պակշոտեալ ի կուսան, ո՛չ համարձակի իսկ և իսկ մերձեանայ, այլ երբեմն ակնարկէ և երբեմն ժպտի և երբեմն քարինս ձգէ: Նոյնպէս և ի Յուզա տեսանէր զարծաթսիրութեան ախտն, կրեալ առ նա նայագ, միշտ կաքաւէր զնովաւ սատանայ, այլ ի Տեառնէ ո՛չ իշխէր մերձենալ առ նա, զի բազում պոռնիկս և մաքսաւորս եհան ի նմանէ: Բայց իբրև ետես, թէ Տէրն մերկացոյց զօգնականութիւն իւր ի նմանէ, բնակեցաւ ի նմա:

**Ասէ ցնա Յիսուս. Զոր ինչ առնելոց ես, արա՛ վարվաղակի (Յովհ. ԺԳ 27):**

Քանզի ես ընդ երկոտասան առաքեալսդ դասեցի զքեզ զգառողական արթուն ընդ Պետրոսի, և ընդ Յովհաննու խոստացայ տալ քեզ, զդէս հնազանդ արարի, ի վերայ յարկեղ կացուցի, և ի յերկինս գրել զանուն քո: Եւ դու զամենայն արհամարհեցեր: Եւ գերեսուն արծաթն ընտրեցեր վաճառել զՏէրս քո, որպէս զարծաթն նէեմանայ առ Գէեգի և զբորոտութիւն նորա (տե՛ս Դ Թագ. Ե 1-19), և որպէս Եսաւ ետ զանդրանկութիւնն և առ զոսպնաթանն (Օճնդ. ԻԵ 29-34):

**Նորա առեալ զպատառն՝ ել արտաքս, և էր գիշեր (Յովհ. ԺԳ 30):**

Եւ նա ո՛չ ըստ իւր կամաց երթայր, այլ սատանայ վարէր զնա և որպէս երկվար մտրակէր, զի շահ արծաթոյն տպաւորեալ էր ի սիրտս նորա:

Գնաց առ քահանայպետսն և եցոյց նոցա, թէ՛ այս է: Եւ նա մարմին իւր ասէ, իսկ սա՝ լոկ հաց է: Եւ առ աչաւք առնէ զամենայն նշանն: Եւ յորժամ տեսին քահանայքն զնշան պատառին ի ձեռինն և լուան զչար բանսն, բորբոքեցան լի ցասամբ մեծաւ, կամեցան երթալ ըմբռնել զՅիսուս: Այլ չև էր հասեալ ժամ նորա:

Մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց, աւրհնեաց, երեկ, ետ աշակերտացն. «Առէք, կերայք, այս է մարմին իմ» (Մատթ. ԻԶ 26., հմմտ. Մարկ. ԺԴ 22):

Զաւրինական գառն, որ յԵգիպտոս կատարեաց, աստ սկիզբն առնէ նորոյս ճշմարտութեան: Եւ աշակերտաւքն կոչէ զտիեզերս ի պատրաստեալ սեղանն՝ պատարագ մշտնջենաւոր, անծախելի ճաշակեսցուք փոխանակ Աբրահամու տաղաւարին, որ բազմացաւ երկու հրեշտակաւքն: Յիսուս զորդիսն Աբրահամու ժողովեաց ի վերնատունն, մարմին փոխանակ բաղարձին և արիւն փոխանակ կաթինն, զՀոգին Սուրբ փոխանակ հոգւոյն (Ա կողմոյն), փոխանակ որթոյն՝ եզն պարարակ, «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ.

**Ասեմ ձեզ. Ո՛չ կերայց զդա, մինչև լցցի արքայութիւն Աստուծոյ**<sup>1</sup> (ԻԲ 16):

**ՍՏ** *Զիա՞րդ լնու զատիկ յարքայութեանն<sup>2</sup> Աստուծոյ, եթէ ո՛չ երբեմն յերկնաւորսն լինելով, որոյ ստուերն կատարիւր ժողովրդեանն:*

**Ընկալեալ<sup>3</sup> բաժակ՝ գոհացաւ<sup>4</sup>. Առէք զայդ և բաժանեցէք ի ձեզ** (ԻԲ 17):

**ԿՐ** *Այս է խոստումն աւետեաց Նորոյ աւրինացս<sup>5</sup>: Դարձեալ. զնոյն իմն յաճախէին ի Նորումս, որպէս ի Հնումն: Նոյնպէս և ի սմա՝ արիւն տերունական: Եւ այսու եցոյց, եթէ այն վախճանելոց էր: Վասն որոյ և զկտակէ յուշ առնէ, զի առաջինն արեամբ նորոգեցաւ:*

**Ո՛չ արբից ի բերոյ որթ[ոյ]**<sup>6</sup> (ԻԲ 18):

**ՈԿ** *Ընդէ՞ր ո՛չ ջուր արբ, յորժամ յարեաւ, այլ գինի, զի զմիւս հերձուածն արտաքս հանցէ: Զի են ոմանք, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն: Աստ ցուցանէ, // թէ յորժամ զխորհուրդն աւանդեաց, զինով աւանդեաց: Եւ յորժամ յարեաւ ա-*

Ա 29), փոխանակ խոյին, խաչն փոխանակ Սաբեկայ ծառոյն:  
«Առեալ զբաժակն՝ գոհացաւ» (Մարկ. ԺԴ 23) և ետ ընտրեալ աշակերտացն.  
«Այս բաժակ է Նորոյ ուխտի իմոյ արեանս, որ վասն բազմաց հեղու ի թողութիւն մեղաց» (Մարկ. ԺԴ 24):  
Արիւն գառանցն, խաչանման զրոշմեալ ի վերայ սեմոց զրանցն՝ աներկեղ պահելով զնոսա ի սատակմանէ անզրանկացն, և ջուրն ի գաւազանահերձ վիմէն զծարաւ նոցա արբուցանէ: Իսկ այսաւր բաշխէ զսուրբ արիւն յարբումն կենաց տիեզերաց, որ ի տիգախոց կողէն կայլակացեալ՝ բխեաց արիւն և ջուր: Բայց, որ ասաց. «Ո՛չ արբից ի բերոյ որթոյ» (ԻԲ 18), մինչև ի նոր արքայութիւն արբից ընդ ձեզ յարքայութեան: Յորժամ յառնեմ յերրորդ աւուր փառաւք ի գերեզմանէն, զմահ կոխեմ և զգժոխս աւերեմ, զսատանայ կապեմ և զգերեալսն փրկեմ: Եւ աստուածահրաշ փառաւք զամ առ ձեզ, որ է նոր արքայութիւն, որպէս ի լերինն թաքաւր:

**Վաճառեցէ զձորձս իւր և գնեցէ սուր** (ԻԲ 36):  
*Զփորձութիւնն նշանակէ, որ առաջի կայր ի գիշերի զփախուստն:*  
**Ասեն. են երկու սուր աստ** (ԻԲ 38):  
*Աշակերտացն, զի զգառն ի սեղանն սրով կոտորէին:*  
**Ասէ Յիսուս. Բաւական է** (ԻԲ 38):

*Զի, որ հոգևով և ուղիղ հաւատով և մարմնով առաքիլն է և վարուք սուրբ, բաւական է ելանել ի հանդէս հոգևոր ասպարիսին:*

<sup>1</sup> Բ Բայց ասեմ ձեզ, թէ՛ Ոչ ևս կերայց ի սմանէ, մինչև լցցի արքայութեան Աստուծոյ:  
<sup>2</sup> Բ յարքայութիւնն  
<sup>3</sup> Բ Եւ ընկալեալ  
<sup>4</sup> Բ գոհացաւ և ասէ  
<sup>5</sup> Բ ուխտիս աւրինացս  
<sup>6</sup> Բ Ասեմ ձեզ, թէ՛ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչև եկեաց արքայութիւն Աստուծոյ:

ուանց խորհրդոց, ի լոկ սեղանն զգինին արբ: Եւ որթն գինի և ո՛չ ջուր ծնանի: Եւ յորժամ յարեալ արբ, զի մի՛ թանճրամիտքն առ աչաւք զյարութիւն համարիցին: Քանզի յարութեան զայն իմն նշան տային, թէ որք կերաք և արբաք ընդ նմա յետ յարութեանն:

**Մինչև եկեսցէ արքայութիւն Աստուծոյ<sup>1</sup> (ԻԲ 18):**

Քանզի վասն չարչարանաց խաչին խաւսէր ընդ նոսա: Ապա և զյարութեանն բան[ն] մոծանէ և զարքայութիւն[ն] ի մէջ բերէ, քանզի զյարութիւն իւր այնպէս կոչեաց: Զի ո՛չ վասն պիտոյից եկեր և արբ յառաջ քան զխաչն կամ յետ յարութեանն, այլ վասն հաւարմութեան մարդանալոյն և յարութեանն:

**Առ Հաց, գոհացաւ, երեկ, ետ նոցա<sup>2</sup> (ԻԲ 19):**

**ՍՏ** Երանէ<sup>3</sup> սրբոցն, որ ունիցին բաժին յարքայութեանն առաջնում: Ի վերայ նոցա երկրորդ իշխանութիւն՝ մահ<sup>4</sup>, ո՛չ ունի, այլ են քահանայք<sup>5</sup> Աստուծոյ<sup>6</sup>՝ Յիսուսի Քրիստոսի, և թագաւորեսցեն ընդ նմա զհազար ամ: Եւ լուծցէ զսատանայ ի բանդէ<sup>7</sup>, և ելցէ և մոլորեցուցէ ընդ չորս կողմ երկրի: Եւ ապա արկցէ զնա Տէր ի հուր ծծմբոյ<sup>8</sup>, ո[ւ]ր էր գազանն և զսուտ մարգարէսն, զի չարչարեցին յաւիտեանս յաւիտենից:

**ՈԿ** Վասն<sup>9</sup> զմեզ ուսուցանելոյ գոհանայ, թէ զիա՞րդ պարտ է զխորհուրդսն<sup>10</sup> կատարել: Եւ ցուցանէ, զի ո՛չ ակամայ գայ ի չարչարանսն: Նաև խրատէ զմեզ, թէ զոր ինչ վիշտս կրեմք, գոհութեամբ պարտ է տանել:

**252ա ԵՓ** // Գոհանայ Տէր, փոխանակ<sup>11</sup> զի Ադամ ո՛չ գոհութեամբ կերաւ և ել արտաքս: Գոհանայ, զի<sup>12</sup> զմեզ ուսու[ս]ցէ գոհութեամբ մատչել ի սեղանն հոգևոր կամ ըստ մարմնոյ, զի արժանի լիցուք մտանել ի խոստացեալ բարիսն Աստուծոյ:

<sup>1</sup> B **չիք** Մինչև... Աստուծոյ

<sup>2</sup> B **չիք** Առ Հաց... նոցա

<sup>3</sup> B սրբ.՝ երանի է

<sup>4</sup> B **գրգիս** մահ իշխանութիւն

<sup>5</sup> A քահանայք այք

<sup>6</sup> B **չիք** Աստուծոյ

<sup>7</sup> B բանտէ

<sup>8</sup> B A, B ծծմբոյ

<sup>9</sup> B Եւ առեալ Հաց՝ գոհացաւ, երեկ և ետ նոցա (ԻԲ 19): Վասն

<sup>10</sup> B զխորհուրդն

<sup>11</sup> B **չիք** փոխանակ

<sup>12</sup> A զի զի

**Եբեկ<sup>1</sup> և ասէ.** Այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ (ԻԲ 19):

**ԵՓ** Ի ժամանակին, յորում եբեկ և ետ աշակերտաց իւրոց, թուեալ լինի երեք աւուրք, զի ի մեռեալս համարեցաւ: Որպէս Ադամ, յորժամ եկեր ի ծառոյ անտի<sup>2</sup>, եկեաց ամս բազումս, սակայն համարեցաւ նա ի թիւ մեռելոց: Կամ ուրբաթն և հինգշաբաթն և շաբաթն<sup>3</sup>, որպէս մարգարէն ասէ. «Յաւուրն<sup>4</sup> երրորդի յարուսցէ զմեզ» (Ովստ 2): Այն իսկ է, որ եղև յարութեան նորա, որ ի դէմս հեթանոսաց լսի, թէ նա<sup>5</sup> եհար զմեզ, նոյն և բժշկեսցէ, որ յուսացան ի նա և հաւատացին քարոզութեան առաքելոցն, և խոստովան եղեն ի Յարութիւն<sup>6</sup> Քրիստոսի:

**Կր.(եփ.)** Որպէս և ասաց. «Եթէ ո՛չ ուտէք զմարմին Որդոյ<sup>7</sup> մար[դ]ոյ և արբջիք զարիւն նորա, ո՛չ ընդունիք կեանս յանձինս ձեր» (Յովհ. 2 54): Վասն այնորիկ զհացն մարմին անուանեաց և զբաժակն արիւն:

**Ջայս արարէք<sup>8</sup> առ իմոյ յիշատակի** (ԻԲ 19):

Յամենայն տարոջ զգառնն զենուին առ ի յիշատակ անդրանկացն փրկութեան, զի որպէս զայն առնէիք ի<sup>9</sup> յիշատակ սքանչելեացն և արուեստիցն, որ յԵգիպտոս գործեցան, նոյնպէս և զայս յիմ<sup>10</sup> յիշատակ կամաւոր չարչարանացս պատարագել ի

**252բ** վերայ խաչին, որով փ(//)րկեցան արարածք<sup>11</sup>, որպէս<sup>12</sup> յԵգիպտոս, խաչադրոջմ արեամբ գառինն ի վերայ սեմոցն, որով հրեշտակն պատկառեաց (տե՛ս Ելք ԺԲ 1-42), որ նշանակէր զճշմարիտ արիւն Գառինն:

**ԻՊ** Եւ զի ունիցիմք յիշատակ<sup>13</sup> մահու նորա միշտ կատարել զնա: Եւ առաքեալ ասէ. «Քանիցս անգամ, եթէ ուտիցէք զհացս զայս<sup>14</sup>

<sup>1</sup> B **չիք** եբեկ

<sup>2</sup> B անդի

<sup>3</sup> B **չիք** և շաբաթն

<sup>4</sup> B յաւուր

<sup>5</sup> B սրբ.՝ որ **փխ** նա

<sup>6</sup> B Յարութեանն **փխ** ի Յարութիւն

<sup>7</sup> B Որդւոյ

<sup>8</sup> B արասջիք

<sup>9</sup> B **չիք** ի

<sup>10</sup> B **չիք** յիմ

<sup>11</sup> B արարածք ամենայն

<sup>12</sup> B սրբ.՝ և որպէս

<sup>13</sup> B սրբ.՝ զյիշատակ

<sup>14</sup> B **չիք** զայս

և զբաժակս [ը]մպիցէք<sup>1</sup>, գմազ<sup>2</sup> Տեառն պատմեցէք, մինչև եկեսցէ նա» (Ա Կորնթ. ԺԱ 26): *Զի որքան հաղորդիմք, յիշեմք զկամաւոր մազ նորա:*

*Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ և ասէ. Այս բաժակ նորոյ ուխտի<sup>3</sup> իմով արեամբս, որ վասն բազմաց հեղու<sup>4</sup> (ԻԲ 20):*

**ԵՓ** *Զի ուխտ յաւիտենից էր վասն գալստեանն Քրիստոսի, զոր մարգարէքն քարոզեցին և, զի ի տաւնի անդ բաշխեաց Տէր մեր զմարմին և զարիւնն իւր աշակերտացն: Իբրև եղև նա քահանայ յանձն իւր և քահանայապետ քաւիչ եկեղեցոյ իւրոյ: Եւ կատարեցաւ ուխտ պատարագացն, զի ո՛չ ևս յաւելուին<sup>5</sup> գործել զանաւրէնութիւն, այսինքն՝ բառնայ զքահանայութիւն և զթագաւորութիւն հրէից, զի ամենեքին առհասարակ սատակեսցին: Վկայէ Զաքարիայ. «Դու արեամբ ուխտի» կտակարանաց քոց, ո՛չ երնջուց և կամ նոխազացն, որ ոչն երբեք քաւեցին, այլ արեամբ «քո արձակեցեր զկապեալսն» (Ձաք. Թ 11), այսինքն՝ զհեթանոսս ի կռապաշտութենէ: Դարձեալ. արձակեաց զուխտն, զոր ետ Աստուած Դաւթի՝ թագաւորութեամբն Իսրայելի, զի նա<sup>6</sup> ասաց. «Գուրբ անջրդի» (Ձաք. Թ 11), և զի մեռ(//)անելովն ամենայն ինչ սրբէր և արեամբն ազատէր: Յիրաւի, Քրիստոսի արեամբն ազատեցան հեթանոսք: Կամ զկուռսն ասաց գուրբ, որպէս Երեմիա գուրբ ծակոտկէն անուանեաց կամ զգոթիսս (տե՛ս Երեմ. Բ 13), որք արեամբն փրկեցան հեթանոսք, և յառնելոց են ի կեանսն, զոր Մովսէս ո՛չ կարաց արգելուլ ի կռապաշտութենէ: Վկայէ Ովսէ<sup>7</sup>. «Յորժամ եղից ընդ նոսա ուխտ և տայց<sup>8</sup> նոցա կտակարան նոր<sup>9</sup> և բնակեցուցից զնոսա յուսով զայնոսիկ» (հմմտ. Ովսէ Բ 18), որ անյոյսք էին և առանց Աստուծոյ չըջէին: Եւ խաւսեցայ զձեզ ինձ յաւիտեան, քանզի հրէիցն ո՛չ էր յաւիտեան, զոր ետ Աբրահամու և որդոց նորա շաբաթուց պատարագաց ուխտ<sup>10</sup> թլփատութեան: Եւ Երեմիա հաստատէ. «Եկեսցէ ժամանակ և ուխտեցից ժողովրդեան իմոյ ուխտ նոր» (հմմտ. Երեմ. ԼԱ 31) և «Քաւիչ եղէց անաւրէնութեանց նոցա» (Երեմ. Ծ 20): Ո՛չ ըստ հնոյ ուխտին, յորժամ հանի*

<sup>1</sup> B ըմբիցէք

<sup>2</sup> B գմազն

<sup>3</sup> B է նոր ուխտ

<sup>4</sup> B արեամբ վասն ձեր հեղլոյ *փիս* արեամբս, որ... հեղու

<sup>5</sup> B յաւելուն

<sup>6</sup> B գնա *փիս* զի նա

<sup>7</sup> B Ովսէէ

<sup>8</sup> B տայց

<sup>9</sup> B սրբ.՝ կտակարանս նորս

<sup>10</sup> B և ուխտս՝ ս-ի վրա սրբ. կեա



զնոսա յԵգիպտոսէ, և նոքա ո՛չ կացին յուխտին իմում<sup>1</sup>, և ես անփոյթ արարից<sup>2</sup> զնոցանէ:

**ԿՐ** Այս ուխտ ո՛չ մի ազգի, այլ՝ ամենայն ազգաց հաւատացելոց ի Քրիստոս:

**Ձեռն մատնչին ընդիս ի սեղանս**<sup>3</sup> (ԻԲ 21):

Կամեցաւ ի ժամանակին<sup>4</sup> և ի սեղանոյն ցածուցանել զչարութիւն մատնչին:

**ԻՊ** Ձի զնդաց ի նա զղջացեալ<sup>5</sup>: Իսկ նա ի նմին յամառութեանն կացեալ՝ ո՛չ երկեաւ ի սաստեցեալ<sup>6</sup> բանիցն Տեառն:

**ՁԵՆ** Անզգայացեալ արծաթսիրութեամբն: Մանաւանդ, եթէ ո՛չ ե-  
253բ թող ի սրտէն՝ ասելով, թէ բիւր<sup>7</sup> անգամ լուան(//)աս կամ սեղանաւորես, ո՛չ մոռանամ<sup>8</sup> զարծաթն:

**Որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ** (ԻԲ 22):

**ԿՐ** Ձի մի՛ կարծիցեն, թէ մատնիչն ո՛չ պատժի և<sup>9</sup> հրէայքն, զի ի Տեառնէ սահմանեալ էր: Եւ մարգարէքն Հոգովն Սրբով գրեցին վասն չարչարանաց Միածնին: Եւ ինքն ասէր վասն այսորիկ եկի ի ժամս յայս և<sup>10</sup>. «Հա՛յր, հասեալ է ժամ, փառաւորեա՛ զՈրդի քո» (Յովհ. ժԷ 1), զի մարգարէութիւն[ն] կատարե[ս]ցի: Բայց մատնիչն և հրէայքն ո՛չ վասն փրկութեան աշխարհի կամ մարգարէիցն վկայութեանն լրման նա՛ մատնէ և դուք չարչարէք, այլ<sup>11</sup> նա՝ արծաթսիրութեամբն և թերահաւատութեամբն, և դուք՝ նենգութեամբ և անաւրէնութեամբ [և] նախանձու: Վասն որոյ թէպէտե կամաւորաբար տնաւրինականքս կատարին ի փրկութիւն աշխարհի, այլ մատնիչն և խաչահանութեան ըստ իւրեանց խորհրդոցն<sup>12</sup> ընդունելոց են [զ]հատուց[ումն]:

**Բայց վա՛յ մարդոյն**<sup>13</sup>, **յոր ձեռն մատնեսցի**<sup>14</sup> (ԻԲ 22):

**ԵՓ** Ոմանք ասեն. «Ընդէ՞ր ետ նմա յառաջ գալ և այ[լ]ոց չարեաց<sup>1</sup>»: Պարտ էր ձեզ մեղադիր չարեացն<sup>2</sup> լինել, զի իշխանու-

<sup>1</sup> Ե իմոյ  
<sup>2</sup> Ե արարի  
<sup>3</sup> Ե Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սեղանս է:  
<sup>4</sup> Ե ժամանակէն  
<sup>5</sup> Ե տայ նմա զղջանալ **փիս** զնդաց ի նա զղջացեալ  
<sup>6</sup> Ե սրբ.՝ սաստեցեալ  
<sup>7</sup> Ե բեւր  
<sup>8</sup> Ե կամիմ մոռանալ  
<sup>9</sup> Ե և ոչ  
<sup>10</sup> Ե **չիք** և  
<sup>11</sup> Ե այլ  
<sup>12</sup> Ե գործոցն  
<sup>13</sup> Ե մարտոյն  
<sup>14</sup> Ե Եւ Որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ, բայց վա՛յ մարդոյն այնմիկ յոր ձեռն մատնիցի:

թիւն ունէին չլինել այնպիսի և եղեն չարք: Զոր աւրինակ բարիքն կրկին պատուոյ արժանի լինին վասն լաւութեան, զի ի չարացն ոչինչ վնասեցան: Նոյնպէս և յոռիքն կրկին պատժոց արժանացան, զի չարք են և այլոց վնասակարք, և կարող էին լաւ լինել: Իսկ չարքն ի բարեացն ոչինչ չահեցան<sup>3</sup>:

Նոքա սկսան խորհել, թէ ո՞ր<sup>4</sup> ի նոցանէ զայն գործելոց է<sup>5</sup> (ԻԲ 23):

254ա ԻԳ // Իսկ Յիսուս տակաւին շնորհէ նմա զամաւթն, ո՛չ անուամբն խայտառակէ զնա ի մէջ աշակերտացն: Վասն այնորիկ վարագուրաւ խաւսի և ո՛չ յայտնապէս:

Եղև հակառակութիւն ի մէջ նոցա (ԻԲ 24):

Ո՛չ սաստէ և ո՛չ յանդիմանէ զթերակա[տա]ր միտս նոցա, որ զչարչարանաց և զմահ վարդապետին լուան, և ինքեանք յիշխանսիրութիւն<sup>6</sup> ըմբռնեալ՝ հակառակութիւն կրէին:

Ո՞վ ի նոցանէ համարեսցի մեծ<sup>7</sup> (ԻԲ 24):

Զի որպէս մանկունք անկարգաբար, և որպէս յառաջագոյն որդիքն Զեբեդեայ, նոյն<sup>8</sup> և աստ: Եւ որպէս անդ պատասխանիւքն<sup>9</sup> ազատեաց զնոսա յախտէն, նոյնպէս և աստ:

Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և, որ իշխեն նոցա, բարերար կոչին<sup>10</sup> (ԻԲ 25):

ստ. Հեթանոսական է ամբարտաւանութիւն<sup>11</sup> ջանիւ<sup>12</sup> տիրել այլոց իբրև անասնոյ<sup>13</sup>:

Դուք ո՛չ այնպէս, այլ որ մեծն է՝ եղիցի իբրև կրսերն<sup>14</sup> (ԻԲ 26):

<sup>1</sup> B չարաց

<sup>2</sup> B չարացն

<sup>3</sup> A նախ՝ վնասեցան, ապա գրչի ձեռքով սրբ.

<sup>4</sup> A ոյ

<sup>5</sup> B Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ով է ի նոցանէ որ զայն գալոց իցէ:

<sup>6</sup> B ինքեանց իշխանութեան

<sup>7</sup> B թէ ով ի նոցանէ համարիցի մեծ:

<sup>8</sup> B Զեբեթեայ նոյնպէս

<sup>9</sup> B պատասխանիքն

<sup>10</sup> B Եւ նա ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և, որ իշխեն նոցա, բարերարք կոչին:

<sup>11</sup> A ամպարտաւանութիւն

<sup>12</sup> B ջանալ

<sup>13</sup> B անասնոց

<sup>14</sup> B զկրտսերն

Ստ. Արդ՝ ամենեցուն, որք կամին մտանել յարքայութիւն Աստուծոյ, պարտ է լինել որպէս մանուկ, որ ո՛չ ցանկայ փառասիրութեան: Զայս վասն ամենեցուն ասաց Քրիստոս յորդորումն, զի<sup>1</sup> յորժամ ասէ Քրիստոս ցՀայր. «Ահա ահա ես եւ մանկունք իմ, զոր ետուր ինձ Աստուած» (Եբր. Բ 13), քանզի ամենիքեան, որ կատարեալ միտս ունին որպէս մանկունք, անգործ թողուն զամբարտաւանութեան<sup>2</sup> չարիսն:

Առաջնորդն իբրև սպասաւոր<sup>3</sup> (ԻԲ 26):

Իգ. Առաջինն՝ վերջին և բարձրն՝ նուաստ և մեծն՝ սպասաւորել փոքուն: Զայս ամենայն անձամբ ուղղել:

Ո՞վ է մեծ, բազմեալն, եթէ՞ սպասաւորն] (ԻԲ 27):

254բ ԿՐ // Վասնզի ի բաց կամեցաւ զամբարտաւանութիւնն<sup>4</sup> հատանել, որով խորհրդածէին<sup>5</sup>:

Ո՞չ ապաքէն բազմեալն (ԻԲ 27):

Այսու բանիւք յանդիմանէր<sup>6</sup> զնոսա, զի ինքն էր բազմեալն և նոքա սպասաւորք: Հրեշտակի անուն է<sup>7</sup> սպասաւորութիւն<sup>8</sup> և մարդկան:

Բայց ես<sup>9</sup> ի միջի ձեր եմ<sup>10</sup> իբրև սպասաւոր<sup>11</sup> (ԻԲ 27):

Սպասաւորեաց<sup>12</sup> առաքելոցն Տէրն երկնի և երկրի: Ո՛չ հրածարեաց ինքն, որ բխեաց զաղբիւրս և զլիծս, և զծով աւազով<sup>13</sup> սանձեաց<sup>14</sup>, արկանել ջուր ի կոնք արկողն<sup>15</sup> զլոյս որպէս զաւգոց<sup>16</sup>, և ջահաւորեաց զարեգակն և զլուսին և զաստեղս: Տէրն<sup>17</sup> ամենե-

<sup>1</sup> Բ զի արժանի լիցուք

<sup>2</sup> Բ զամբարտաւանութեան

<sup>3</sup> Բ եւ առաջնորդն իբրև սպասաւորն:

<sup>4</sup> Բ զամբարտաւանութիւն

<sup>5</sup> Բ խորհրդեամբ էին (էին-ի զիմաց սրբ.՝ կր, այսինքն՝ կրէին)

<sup>6</sup> Բ յանդիմանէ

<sup>7</sup> Բ չէք է

<sup>8</sup> Բ սրբ.՝ սպասաւորութիւն Աստուծոյ

<sup>9</sup> Բ ես եմ

<sup>10</sup> Բ ձերում *փխ* ձեր եմ

<sup>11</sup> Բ սպասաւոր

<sup>12</sup> Բ որ սպասաւորեաց

<sup>13</sup> Բ աւազաւ

<sup>14</sup> Բ փակեաց *փխ* սանձեաց

<sup>15</sup> Բ արկաւղն

<sup>16</sup> Բ զաւթոց

<sup>17</sup> Բ սրբ.՝ և Տէրն

ցուն լուաց զոտս ծառայիցն և ղենջակաւն<sup>1</sup>, որ սփածեալն էր, ջնջեաց ըստ ասացելոյն<sup>2</sup>, զի փափազեսցին զնորայն զգենուլ զնմանութիւն<sup>3</sup>. «Որդի մարդոյ ո՛չ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել, և տալ զանձն փոխանակ բազմաց» (Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45):

**Դուք էիք, որ ցանկայիք<sup>4</sup> ընդ իս ի փորձութիւնս իմ** (ԻԲ 28):

**ՍՏ** Աշակերտացն փորձանքն Քրիստոսի փորձանքն ասի: Որ տա-  
րաւ ամենայնի երկայնմտութեամբ և խոնարհութեամբ, զորս  
կրեաց ի հակառակորդացն, նախատինս և հայհոյութիւն, որք<sup>5</sup>  
քարկոծ և քարավէժ<sup>6</sup> կամէին առնել: Զայս ամենայն տեսեալ՝  
շրջեցան ընդ նմա, և տեղեակ էին անչափ հեզութեան նորա, զոր  
յուշ առնէ, զի նմանեսցեն խոնարհութեան նորա<sup>7</sup> և մի՛ զայր  
զայրասցին ընդ անարգանս կամ ընդ հալածանս: Եւ, որ առաջի  
255ա կայր ժամանակ ձաղան(//)աց խաչին և անարգս մահուն, կրթէր  
զնոսա տանել ամենայնի ըստ նմանութեան Տեառն՝ մեծի<sup>8</sup> համբե-  
րութեամբ:

**Ես<sup>9</sup> ուխտեմ ձեզ** (ԻԲ 29):

**ԿՐ** Այս է բարձրագոյն պատիւ, քան զոր դուքն խորհրդածիք:  
**ԻԳ** Մերձ դնէ տաժանելի կրիցն զպարգևացն առատութիւն, և  
հաւասարէ զնոսա իւր: Եւ իբրև զգլուխ խաւսի ընդ անդամս  
մարմնոյն վասն գոլոյ<sup>10</sup> նորա ի մեր բնութենէ<sup>11</sup> մարդեղութեամբ,  
զի դեռևս տկարագոյնք էին: Այժմն խոստանայ տալ աշակեր-  
տացն հաստատութեամբ ուխտ Արարիչն երկնի և երկրի փոխա-  
րէն փորձանացն, զոր կրեն վասն նորա յերկրի գերկնից արքայու-  
թեանն ճոխութիւն:

**Որպէս<sup>12</sup> Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն<sup>13</sup>** (ԻԲ 29):

<sup>1</sup> A ղենճակաւն

<sup>2</sup> B **չիք** ըստ ասելոյն

<sup>3</sup> B նմանութիւն, ըստ ասելոյն

<sup>4</sup> B Եւ դուք էիք, որ ցանկ կայիք

<sup>5</sup> B և որք

<sup>6</sup> B գահավէժ

<sup>7</sup> B **չիք** զոր յուշ առնէ... նորա

<sup>8</sup> B մեծաւ

<sup>9</sup> B Եւ ես

<sup>10</sup> B գլխոյ

<sup>11</sup> B բնութենէս

<sup>12</sup> B Որպէս և

<sup>13</sup> B զարքայութիւնն

Կր. Ըստ միոյ գոլ<sup>1</sup> բնութեանն, մի է և իշխանութիւն[ն]: Ըստ ուրում ասաց. «Ամենայն որ ինչ քո է՝ իմ է, և որ ինչ իմ է՝ քո է» (Իմմտ. Յովհ. Ժ 25-38): Զոր ինքն բնութեամբ Որդի<sup>2</sup> և ժառանգ<sup>3</sup> ամենայնի, և արքայութեանն Հաւր՝ արքայակից և փառակից, և մարդկաբար քաղաքավարեալ<sup>4</sup> ընդ մեզ<sup>5</sup> առաքինութեամբ: Որպէսզի նովին չափով ունիցին միանալ ի սէր գլխոյն և վայելել<sup>6</sup> ի փառս աստուածութեան նորա:

Ստ. Յորժամ յաղթեմք փորձանաց<sup>7</sup> Հակառակորդացն Համբերութեամբ, յայնժամ զաւանդեալն ի Հաւրէ զարքայութիւն նմա<sup>8</sup> Որդին մեզ աւանդեսցէ<sup>9</sup>:

**Զի ուտիցէք և ըմպիցէք ի սեղանն իմ յարքայութեանն<sup>10</sup>** (ԻԲ 30):

Ապա, եթէ իւր ասաց զսեղանն, յայտ է, թէ նորա իմանի գոլ արքայութիւնն, զի կերիցուք և արբցուք հոգևորապէս ի<sup>11</sup> սեղանոյ նորա:

255բ ԿՐ Զառուելագոյն պատիւն ծանաւթական // իրաւքն յայտ առնէ: Զի ոչինչ, քան զայն վերագոյն պատիւ լիցի<sup>12</sup>, յորժամ ի սեղան նորա ուտիցեն և լըմպիցեն: Այս և զկնի յարութեանն արդիւնացաւ ի նոսա: Զոր և Պետրոս ասէ. «Որք կերաք և արբաք ընդ նմա յետ յարութեան նորա» (Գործք Ժ 41), զոր և Տէրն «արքայութիւն» անուանեաց:

Իգ. Վասնզի այս է ծայրագոյն պատիւ ծառայիցն, յորժամ սեղանակից տերանցն իցեն, առնուն զայս այնոքիկ, որք երանելի կենացն հասանիցեն, զկերակուր<sup>13</sup> անճառից գիտութեան, որ այժմ անհասանելի է, և յայնժամ հասանեմք: Ըստ այնմ, թէ դպրութիւնք հրաշիցն բանայցեն<sup>14</sup>:

<sup>1</sup> B սրբ.՝ գոլոյ

<sup>2</sup> B սրբ.՝ ունի

<sup>3</sup> B սրբ.՝ ժառանգ է

<sup>4</sup> B կենցաղավարեալ

<sup>5</sup> B մէջ

<sup>6</sup> A վայելեալ

<sup>7</sup> B սրբ.՝ փորձանացն և

<sup>8</sup> B նմա ժառանգեմք. յայնժամ և

<sup>9</sup> B աւանդեսցի

<sup>10</sup> B յարքայութեանն իմում

<sup>11</sup> B ի վերայ

<sup>12</sup> B կացցէ

<sup>13</sup> B իբրև զկերակուր

<sup>14</sup> B բանին

Նստիջիք<sup>1</sup> յերկոտասան յաթոռան<sup>2</sup> դատել [զ]երկոտասան ազգն<sup>3</sup> Իսրայելի (ԻԲ 30):

ԿՐ. Եւ զոր աւրինակ՝ անդր սեղանոյն պատուակցութեամբն զառաւելութիւնն ցուցանէ, նոյնպէս և աստ աթոռովն<sup>4</sup> զառաւելութիւն ճոխութեանն յայտ առնէ: Ո՛չ եթէ դատողական իշխանութիւն ունին նոքա դատել զԻսրայել, այլ կշտամբէ առաքելաւքն և յանդիմանէ ահաւոր նշանաւքն զերկոտասան ազգն Իսրայելի: Անդ դատելն ա՛ստ ասի:

ԻՊ Արդ՝ զայս յայտնէ առաքեալ՝ ասելովն. «Թէ<sup>5</sup> չարչարանացն կցորդ լինիմք, փառացն<sup>6</sup> Հաղորդ<sup>7</sup> լինելոց եմք» (Յոռմ. Ը 17): Այլ<sup>8</sup> յորդորագոյնս առնէ չգրել ինչ զնեղութիւնսն վասն առաւելագոյն<sup>9</sup> փառացն:

Եւ ասէ Տէր. Սիմոն, Սիմոն<sup>10</sup>, ահա սատանայ խնդրեաց զձեզ խարխաբել<sup>11</sup> իբրև զցորեան (ԻԲ 31):

ԿՐ Այսինքն է՝ խոռովել, ամբոխել, փորձել:

ԵՓ Իբրև<sup>12</sup> առաւ, ճանաչ մեզ<sup>13</sup>:

ԻՊ Զդէ զբանն առ Պետրոս իբրև գլուխ<sup>14</sup> աշակերտացն, և վասն 256ա մեծի փորձանացն, որ նմա առաջի կայր: //Եւ խաւսի նովաւ ընդ ամենեսին:

Այլ ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեսցեն Հաւատք քո (ԻԲ 32):

ԿՐ Զայս ասէ առ ի յոյժ մորմոքեցուցանել զնա: Եւ<sup>15</sup> յայտ առնէ, եթէ նորա յանցանքն սաստկագոյնք էին քան զ[ը]նկերացն, և բազում աւգնականութեան կարաւտ: Այլ ընդէ՞ր ո՛չ ասաց, եթէ ո՛չ ետու թոյլ, այլ եթէ «աղաչեցի»: Զի ի չարչարանս երթալոց

<sup>1</sup> B Եւ նստիջիք

<sup>2</sup> B աթոռ

<sup>3</sup> B ազգ

<sup>4</sup> B սրբ.՝ նստեալ յաթոռ

<sup>5</sup> B Եւ թէ

<sup>6</sup> B և փառացն

<sup>7</sup> B Հաղորդս

<sup>8</sup> B Այլ

<sup>9</sup> B սրբ.՝ առաւելութեան

<sup>10</sup> B Սիմովն, Սիմովն

<sup>11</sup> B խարբալել

<sup>12</sup> B սրբ.՝ և իբրև

<sup>13</sup> A ճանաչ. (նա-ի վերևում ավելացրած է՝ մ, աչ-ի վերևում՝ ել) B աւծան մաղել *վիս* առաւ ճանաչ մեզ (աւծան-ի աւ-ն լուսանցքում սրբ. եղ՝ եղծան)

<sup>14</sup> A ի գլուխ

<sup>15</sup> B *չիք* Եւ

էր, մարդեկաւրէն խաւսէր: Ո՛չ ասաց, եթէ չուրասցիս, այլ եթէ՝ «Մի՛ պակասեսցեն<sup>1</sup> Հաւատք քո», զի<sup>2</sup> մի՛ բնաւին կորնչիցի<sup>3</sup>:

**ԻԳ.** Նաև զՀայր աւժանդակ Պետրոսի տկարութեանն դնէ Հաստատել զՀաւատս նորա յՈրդի, «զի մի՛ պակասեսցեն<sup>4</sup> Հաւատք» նորա ի մարդեղութենէն Քրիստոսի<sup>5</sup>, զոր առ երկի[ւ]ղի ուրանալոց էր: Արդ<sup>6</sup>, Աստուած ի մարմնի միացեալ, որում Հաւատս ընծայել պարտական եմք որպէս Աստուծոյ Հաւր, և Հայր գործակից լինի մեզ՝ Հաստատելով զմեզ ի Հաւատսն Քրիստոսի:

**Դու**<sup>7</sup> երբեմն դարձցիս և Հաստատեսցես զեղբարս քո (ԻԲ 32):

Զի մի՛ ոք Համարեսցի յետ ուրացութեանն նուազանալ փառաց նորա: Զայս եցոյց յետ յարութեան իւրոյ, զոր միանգամ անուանեաց վէժ և եդ ի Հիմունս<sup>8</sup> եկեղեցոյ: Զի թէպէտ և սասանեցաւ նա, սակայն ի բաց ո՛չ ընկէց, այլ առնու զսէրն զբաւական և յանձն առնէ նմա զՀաւտն:

**Եւ նա ասէ ցնա. Տէ՛ր, ընդ քեզ պատրաստ եմ և ի բանդ<sup>9</sup> և ի մահ երթալ** (ԻԲ 33):

**ՈԿ** Որչափ Քրիստոս վճիռ տայր, նոյնչափ Պետրոս ընդդէմ դառնայր: Քանզի զերծաւ ի կասկածանաց մատնութեանն, և ետես 256ք //զմատնիչն յանդիմանեալ, խիզախելով ասէր, և քան զայլսն՝ ճոխանալով:

**ԻԳ** Վատահացեալ ի սիրոյն Հաստատութիւն՝ պնդագոյն դնէր վկայութիւն մեռանել ի վերայ նորա: Իսկ Յիսուս երկրորդէր զբանն, զի պարտ էր կատարել մարգարէութեանն Զաքարիայ, որ ասաց. «Հարից զհովիւն և ցրուեսցին ոչխարք Հաւտին» (Զաք. ԺԳ 7): Եւ Պետրոս յամառեալ՝ Համարձակագոյնս խաւսի. «Զանձն իմ եղից ի վերայ քո» (Յովհ. ԺԳ 37):

**Ասեմ<sup>10</sup> քեզ Պետրէ. Զիցէ այսաւր Հաւու խաւսեալ, մինչ<sup>11</sup> երիցս ուրասցիս զիս<sup>12</sup>** (ԻԲ 34):

<sup>1</sup> B պակասեսցին

<sup>2</sup> B այսինքն՝ զի

<sup>3</sup> B կորնչիցիս

<sup>4</sup> B պակասեսցին

<sup>5</sup> B յՈրդւոյ մարդեղութենէն *փես* ի մարդեղութենէն Քրիստոսի

<sup>6</sup> B այլ *փես* արդ

<sup>7</sup> B եւ դու

<sup>8</sup> B զհիմն *փես* ի հիմունս

<sup>9</sup> B բանտ

<sup>10</sup> B եւ նա ասէ ցնա. Ասեմ

<sup>11</sup> B մինչև

<sup>12</sup> B զիս չգիտել

**ՍՏ** Եթո՛ղ, ելի՛ք զնա, զի ուսցի զչափ մարդկան<sup>1</sup> տկարութեանս<sup>2</sup> ի փորձէ՛<sup>3</sup> անտի, և նովաւ ամենեքին խրատեսցին մի՛ յանձնապաստան լինել, այլ զվերին աւգնականութիւն[ն] աղաչել:

**Ոկ.** Արդ՝ զերկոսեանս<sup>4</sup> զայս՝ Պետրոս և Յուդաս ցուցանեն<sup>5</sup>: Զի Յուդաս<sup>6</sup> վայելեաց յաւգնականութիւն և ոչինչ աւգտեցաւ, քանզի ո՛չ կամեցաւ զիւր փրկութիւն[ն] և ո՛չ անձամբ նպաստ եղև: Եւ Պետրոս յուժարեցաւ<sup>7</sup> և ո՛չ գտաւ աւգնականութիւն՝ զլորեցաւ: Այս երկու իրաւք նիւթին առաքինութիւն կապ<sup>8</sup>, և անկանի<sup>9</sup> կամ կանգնի:

**Յորժամ**<sup>10</sup> առաքեցի զձեզ առանց քսակի և կաւչկաց և մախաղի<sup>11</sup>, մի՞թէ կարաւտեցայք<sup>12</sup> իմիք: Եւ նոքա աս[են]. Ո՛չ<sup>13</sup> (ԻԲ 35-36):

**Իգ.** Եւ զիա՞րդ կարաւտանային, որ զամենեցուն լցուցիչն ընդ իւրեանց շրջեցուցանէին<sup>14</sup>: Արդ՝ զայս ասաց, զի ամենայնի<sup>15</sup> վստահ լիցին<sup>16</sup> ի զաւր(//)ութիւն նորա, և ի պատուիրելոյ նորա ո՛չ տկարանան<sup>17</sup>:

**կր.** Յառաջ քան զիսաչն առաքեաց զնոսա աւետարանել<sup>18</sup> զարքայութիւն երկնից և կատարել նշանս և արուեստս: Եւ հրամայեաց ոչինչ բառնալ ի ստացուածոց, և հրաժարեցուցանէ ի գաւազանէ և ի կաւչկաց: Եւ այսու խրատէ քարոզութեանն պարապել, այսինքն<sup>19</sup>՝ ի բաց կալ ի մարմնաւորացս:

**Այժմ**<sup>20</sup>, որ ունիցի քսակ, բարձցէ և<sup>21</sup> մախաղ (ԻԲ 36):

<sup>1</sup> A մարտկան

<sup>2</sup> B տկարութեան

<sup>3</sup> B փորձոյ

<sup>4</sup> B զերկոսեան

<sup>5</sup> B ցուցանէ

<sup>6</sup> B Յուդաս

<sup>7</sup> B թէպէտ և յաւժարեցաւ

<sup>8</sup> B **չիք** կապ

<sup>9</sup> A անգանի

<sup>10</sup> B Եւ ասէ ցնոսա. Յորժամ

<sup>11</sup> B **գրփի** մախաղի և կաւչկաց

<sup>12</sup> B կարաւտացայք

<sup>13</sup> B և ոչ իմիք

<sup>14</sup> B իւրեանս ունէին

<sup>15</sup> B ամենայնիւ

<sup>16</sup> B լինիցին

<sup>17</sup> B և տկարացին («Եւ զիա՞րդ կարաւտանային... տկարացին» Հատվածը գրված է «Եւ այսու խրատէ... ի մարմնաւորացս» նախադասութիւնից հետո)

<sup>18</sup> B քարոզել և աւետարանել

<sup>19</sup> B ը **փի** այսինքն

<sup>20</sup> B Ապա ասէ այլ այժմ

<sup>21</sup> B նոյնպէս և



**US** Մի՛ ոք այսպէս<sup>1</sup> իմասցի, թէ հրաման տայ բառնալ մախաղ, այլ մարգարէանայ յառաջագոյն, զոր կրելոց էին: Զի մեկնելոց էին ի նմանէ և ղիմելոց էին կարճատուութեամբ ի մախաղս իւրեանց: Յորժամ զկնի յարութեանն Տեառն ասէր Պետրոս «Երթամք ձուկն որսալ» (Յովհ. ԻԱ 3), հաւանեցան<sup>2</sup> այլ աշակերտքն որպէս մարմին գլխոյ: Ուստի և Յիսուս, երևեալ նոցա, մանկունք ասելով՝ ըստգտանէ զանմիտ<sup>3</sup> գործս նոցա, և<sup>4</sup> հրամայէ արթուն լինել (տե՛ս Մատթ. ԻԴ 42, ԻԵ 13, ԻԶ 41, Մարկ. ԺԳ 35, 37, ԺԴ 34, 38, Ղուկ. ԻԱ 36): Քանզի զառաջինն ինքն յանձանձէր իւր զաւրուութեամբն իբրև գտխմարս, իսկ այժմ իբրև<sup>5</sup> զձագս նորափետուրս ի բունոյ հանել հրամայէ, իւրեանց<sup>6</sup> թեալքն թռչել (հմմտ. Ես. Խ 31):

Որ ո՛չն<sup>7</sup> ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր և զնեսցէ սուսեր<sup>8</sup> (ԻԲ 36):

257բ Զկանխագիտութիւն[ն] յայտ առնէ և զհալածանսն և զնեղութիւն[սն], զի հաւատարմացուցէ նոցա, թէ մատնելոց է: Ո՛չ զի վառեսցին, այլ զի այնու զմատնութիւնն գուշակեսցէ: Ո՛չ պէտս ունելով, այլ զի աշ(//)ակերտքն մտաբերելոց էին յայս գործ ի տեսանելն զամբոխին, եկելոցն<sup>9</sup> ի վերայ նոցա: Եւ Յիսուս, զոր նոքա ախտանալոց էին, յայտ առնէ, զի գրեալն կատարեսցի, թէ՛ «Ընդ անաւրէնսն համարեցաւ», զոր ասաց Եսայի մարգարէն. «Փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նորա և ընդ անաւրէնսն համարեցաւ» (Ես. ԾԳ 12): Այսու եցոյց, եթէ այս է տնաւրէնութիւն<sup>10</sup> իմոյ կատարման գլուխ՝ պատարագիլ վասն աշխարհի փրկութեան]:

Զի, որ վասն իմ էին, վճարեալ է<sup>11</sup> (ԻԲ 37):

**US** Լցաւ<sup>12</sup> ժամանակն, զոր գրեաց Դանիէլ. «Զկնի վաթսուն և երկու[ց] եւթներորդացն մեռցի աւծեալն, և բարձցի[ն] աւծմունք քահանայագործութեանն հրէից<sup>1</sup>» (հմմտ. Դան. Թ 26):

1 B այսպիսի  
 2 B և հաւանեցան  
 3 B զանմտութեան  
 4 B չիք և  
 5 B սրբ. է աջ լս.  
 6 B և իւրեանց  
 7 B եւ որ ոչ  
 8 B իւր սուսեր  
 9 B զամբոխն եկեալ  
 10 B տնաւրէնութեան  
 11 B չիք վճարեալ է  
 12 B վճարեցաւ փխ լցաւ

**ԿՐ** Վկայէ Միքիա մարգարէ. «Աւր<sup>2</sup> դատաւորացն Իսրայելի եկեալ է<sup>3</sup> փոխանակ աւուրն ուրախութեան» (հմմտ. Միք. 2 2), զոր սուտ մարգարէացան նոքա բառնալ զՔրիստոսի վարդապետութիւն: Այսուհետեւ լինի սուգ նոցա:

**Նոքա ասեն. Տէր ահա կա երկու սուսեր<sup>4</sup>** (ԻԲ 38):

**ԿՐ** Իսկ սուրքն ուստի<sup>5</sup> էին արդեք: Այն, ինչ յ[ը]նթրեացն ելեալ էին և ի սեղանոյն, և ի դէպ է, եթէ անդ դանակք էին վասն գառինն: Եւ լուան, եթէ ոմանք գան ի վերայ, առին զսուրն յիւրեանց կամացն միայն յաւգնականութիւն:

**Իգ.** Եւ զի ո՛չ իմացան զմիտս բանին, ասացին զայս:

**Իսկ Յիսուս<sup>5</sup> ասէ ցնոսա. Բաւական են** (ԻԲ 38):

**Իգ.** Ձի Յիսուս ո՛չ ետ բառնալ, զի թէ կամք էին նորա, ապա ամենեցուն պարտ էր բառնալ: Բայց, զի ո՛չ էին նմա պէտք մարմնական զինուց յաւգնականութիւն, ասէ. «Շա՛տ են» (հմմտ. ԻԲ 38):

258ա // Ել<sup>6</sup> գնաց ըստ սովորութեանն ի լեառն<sup>7</sup> Ձիթենեաց: Գնացին աշակերտքն զհետ նորա<sup>8</sup> (ԻԲ 39):

Յայտնէ գանձն յառաջ, քան զունելն, զի մի՛ կարծիցի, թէ թաքչել փութացաւ զալ ի տեղին, զոր<sup>9</sup> Յուդայ ճարտար գիտէր: Ըստ մարգարէութեանն Չաքարիայ, թէ՛ «Կացեն<sup>10</sup> ոտք նորա ի վերայ լերինն Ձիթենեաց յաւուր յայնմիկ յանդիման Երուսաղեմի յարևելս<sup>11</sup> նորին, և պատառեցի լեառնն ընդ չորս<sup>12</sup> մասն» (հմմտ. Չաք. ԺԴ 4), զի պատառելոց էր քահանայութիւն[ն] Իսրայելի ի ձեռն առաքելոցն ընդ չորք կողմ երկրի:

**ԻՓ** Ձի ո՛չ ազանէր նա ի քաղաքի անդ, այլ անդ<sup>13</sup> իջանէր ի տեղին Գեթսամանի:

<sup>1</sup> Բ քահանայագործութեան հրէիցն

<sup>2</sup> Բ *չիք* աւր

<sup>3</sup> Բ *չիք* է

<sup>4</sup> Բ Բայց ասեմ ձեզ, զի այս ևս, որ գրեալ է, պարտ է, զի կատարեցի յիս, թէ ընդ անաւրէնսն համարեցաւ, զի, որ վասն իմ ինչ է, վճարեալ է: Եւ նոքա ասեն. Տէ՛ր, ահաւասիկ են աստ երկու սուրք (ԻԲ 37-38):

<sup>5</sup> Բ Եւ նա *փիս* Իսկ Յիսուս

<sup>6</sup> Բ Եւ ելեալ

<sup>7</sup> Բ լեառնն

<sup>8</sup> Բ *զրփիս* զհետ նորա և աշակերտքն

<sup>9</sup> Բ գորոյ

<sup>10</sup> Բ կացցեն

<sup>11</sup> Բ յարևելս

<sup>12</sup> Բ չորք

<sup>13</sup> Բ անտի

**US** Որ թարգմանի ձոր պարարտութեան կամ ջահից, զոր Դաւիթ ջահիւք ի գիշերի փախչէր յԱբեսաղոմայ<sup>1</sup> և տրտմէր վասն յանդգնութեան նորա (տե՛ս Բ Թագ. ԺԵ 14-19):

**Յաղաւթս<sup>2</sup> կացէք չմտանել ի փորձու[թիւն]** (ԻԲ 40):

Խրատէ զնոսա ո՛չ յանդգնիլ և անձամբ ձգել<sup>3</sup> ի փորձութիւն: Այլ յորժամ ի Տեառնէ կոչիմք, խոնարհութեամբ յԱստուծոյ խնդրել աւգնականութիւն և նորա համարել զգաւրութիւն ա[ն]համբերութեանն<sup>4</sup>:

**Ինքն<sup>5</sup> մեկնեցաւ ի նոցանէ քար[ընկէց մի]<sup>6</sup>** (ԻԲ 41):

**Կր.** Ձի<sup>7</sup> ուսուցէ զմեզ ուրոյն կալ յաղաւթս հանդարտութեամբ և<sup>8</sup> ի բաց կալ ի մարմնական խորհրդոց, ի լսելեաց և [ի] տեսանելեաց, զի մի՛ առաջնորդ աղաւթից միտքն պղտորեացի ցնորիւք աշխարհի<sup>9</sup>: Ձի Տէրն սովոր էր մեկուսի կալ յաղաւթս, զի խրատեացէ<sup>10</sup>, և<sup>11</sup> տեսցեն և լուիցեն, զոր ի խրատ նոցա տնաւրինէր:

**Առնու ընդ իւր զերեսինն մեկուսի, և սկսաւ<sup>12</sup> տրտմել և հոգալ մինչև ի մահ:**

**258բ** // **Ձգեցաւ զմիտս նոցա և արկաւ զիւրե<sup>13</sup> զերկի[ւ]ղ, զի եղիցի նոցա ավրինակ:** Ձի յառաջ քան զմահն մի՛ ոք խրոխտացի ի վերայ մահու, և յայտ լիցի, եթէ ծնունդ էր Ադամայ և Արարիչ նորա<sup>14</sup>:

**ԵՓ** **Երկեաւ<sup>15</sup> նա, զի համարձակեացի մահ կլանել զնա և փութասցի թքանել զնա<sup>16</sup>:** Ձի վասն մահու խափանելոյ յանձն էառ զերկի[ւ]ղ մահու<sup>17</sup>:

<sup>1</sup> B յԱբեսաղոմայ

<sup>2</sup> B Իբրև եհաս ի տեղին, ասէ ցնոսա. Յաղաւթս

<sup>3</sup> B յանդգնել և անձամբ ձգել

<sup>4</sup> B զհամբերութիւնն *փխ* զգաւրութիւնն անհամբերութեանն

<sup>5</sup> B Եւ ինքն

<sup>6</sup> B Իբրև քարընկէց մի եղ ծունր

<sup>7</sup> B Եւ զի

<sup>8</sup> B *չիք* ուրոյն կալ... և

<sup>9</sup> B աշխարհիս

<sup>10</sup> B մեզ ի խրատ *փխ* զի խրատեացէ

<sup>11</sup> B և զի

<sup>12</sup> B սկսանի

<sup>13</sup> B զիւրեաւ

<sup>14</sup> B նորին

<sup>15</sup> B դարձեալ. երկեաւ

<sup>16</sup> B *չիք* և փութասցի... զնա

<sup>17</sup> B *Երկեմից մեղքերված այս հատվածը գրված է Ոսկերերանի մեկնությունից հետո*

Ոկ. Քաջալերիչն ամենեցուն գերկի[ւ]ղ յանձն առնոյր՝ միացեալ մարմնովն: Անչարչարելին չարչարէր և անմահն մեռանէր, զի ազատեսցէ զ[ը]նդ մահու երկի[ւ]ղի անկեալքս ի ծառայութենէ<sup>1</sup>, որ անեղ և անսկիզբն Աստուած մարդ եղև: Բովանդակեցաւ անբովանդակելին<sup>2</sup>, անփոփոխ մնալով յիւրում անմահութեանն և աներկչոտութեան[ն] և առանց կարծեաց: Նոյն զամենայն կրեաց՝ զանպարսաւ կիրսն զաստուածավայելուչսն և զմարդավայելուչսն, բոլորն Աստուած, զի իւր էր մարմինն, իւր էին բարձրագոյնքն և նուաստագոյնքն, որով սքանչելագործէր աստուածախառն մարմնովն:

**Եղ ծուկնր** (ԻԲ 41):

ԳՐ. Զծուկնկս կթոտս<sup>3</sup> մարդոյն, որ ի ծառն ընթացաւ, և տկարացաւ մեղաւք՝ անհնազանդութեանն<sup>4</sup> Արարչին, որ ասաց. «Մի՛ հուպ լինիր» (Կող. Բ 21): Եւ ձեռք, որ լքանի կթել զպտուղ վշտաբեր հոգոյն և մարմնոյ<sup>5</sup>, վերստին նորոգեաց ստեղծողն<sup>6</sup> ի խնարհելն յերկիր՝ զաստուածային փառսն վերաբերեալ ի մեզ, և ի բարձրանալն ընդ ինքեան՝ վերացուցէ յերկինս:

**Կայր յաղաւթս** (ԻԲ 41):

Որք տկարք իցեն<sup>7</sup>: Քանզի ի ժամանակի փորձութեան[ն] մերոյ վարանին միտք //մեր և թաւթափին խորհուրդք մեր: «Կաց<sup>8</sup> յաղաւթս», զի զմեզ ուսուցէ, թէ փոխանակ մեքենայից աղաւթք պիտոյ են և հնարից: Ի<sup>9</sup> ստէպ ստէպ աղաւթք ժողովեն զխորհուրդս ցրուեալս ի պարտիզի, անդ կաց յաղաւթս, զի դարձուցէ զԱզամ ի դրախտ[ն] իւր:

**Եւ ասէր. Հայր եթէ հնար իցէ<sup>10</sup>, անցո՛ վբաժակս զայս յինէն** (ԻԲ 42):

Արդ՝ այն, որ զՀայր գիտէր, որ մեծ է քան զամենայն զկամս Հաւր, յանցանելոյ<sup>1</sup> բաժակին ո՞չ գիտէր: Վասն<sup>2</sup> այսորիկ եկն, զի

<sup>1</sup> B ծառայութիւն

<sup>2</sup> A բաւրնդակեցաւ անբաւրնդակելի

<sup>3</sup> B գթոտս

<sup>4</sup> B անհնազանդութեամբ

<sup>5</sup> B հոգւոց և մարմնոց

<sup>6</sup> B նորոգեացէ ստեղծաւղն

<sup>7</sup> B այսինքն՝ Հանդարտութեամբ: Զի թէ նա խնդրեաց աղաւթել, որչա՞փ տկարքն իցեն, նոքա կացցեն յաղաւթս *փխ* որք տկարք իցեն

<sup>8</sup> B եկաց

<sup>9</sup> B գի

<sup>10</sup> B կամիս *փխ* հինարից է

զի արբցէ փոխանակ մեր և հատուցէ զպարտիս ամենեցուն, զոր մարգարէքն և փրկիչքն<sup>3</sup> ո՛չ կարացին հատուցանել: Զի, որ գիտէր յետ երից ակուրց<sup>4</sup> զյարութիւն իւր և զաշակերտացն գայթաղելն և զՇմաւոնի ուրանալն<sup>5</sup> և զՅուդայի խեղդելն և զհրէիցն ցրուիլն, զիա՞րդ տգիտանայր<sup>6</sup>:

**ԿՐ** Եւ<sup>7</sup>, որ յառաջագոյն ասէր. «Մկրտութիւն ունիմ<sup>8</sup> մկրտել» (ԺԲ 50) և «բաժակ<sup>9</sup> ըմպել» (հմմտ. Մարկ. Ժ 39): Եւ, որ նախքան զելանելն յերուսաղէմ ասէր զչարչարանս խաչին և զթաղումնն՝ Յունանու կիտիւն նշանակեաց, և ելանելովն Յունանու՝ զյարութիւն իւր: Այլ, զի զճշմարիտ մարդեղութիւն[ն] յայտ արասցէ, զի որպէս կամաւորաբար կրեաց զքաղցն, զծարաւն, զվաստակելն, յորժամ և կամէր, նոյնպէս և առ չարչարանսն մերձեցեալ<sup>10</sup> կոչէր առ ինքն զերկի[ւ]ղն զտրտմութիւն, այսպէս և՝ զանգիտութիւն[ն] առ ի մեր վարդապետութիւն: Արդ՝ որ զխաչն և զերեք  
**259բ** աւ[ր]եայ յարութիւն յառաջագոյն ասացեր, // զիա՞րդ անցցէ բաժակդ և քո բանքդ ստի: Ո՛չ, ասէ, այլ որպէս զճշմարիտ մարդ տրտմիմ և հոգամ և առ Հայր աղաւթեմ: Եւ գիտեմ, զի վրէժխնդրութիւն լինի<sup>11</sup> արեան իմոյ՝ քակումն տաճարիդ, հրկիզութիւն քաղաքիդ, և բիւրքս<sup>12</sup> բիւրոց սատակումն ի սովոյ և ի սրոյ և ի գերութենէ ի Վեսպիանոսէ կայսերէ Հռոմայ:

**Բայց ո՛չ իմ կամքս<sup>13</sup>, այլ քոյդ լիցին** (ԻԲ 42):

**ԵՓ** Զի Հաւր լիցին շնորհակալ ամենայն արարածք, որք փրկեցաք<sup>14</sup> մահուամբ Որդոյ: Ըստ առաքելոյ. «Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդոյ<sup>15</sup> նորա» (Յռոմ. Ե 10): Եւ դարձեալ. զի մեծասցի ի վերայ մեր արիւնն Աստուծոյ, որ եհեղ ի փրկութիւն<sup>16</sup> աշխարհի, և զի երևեսցի, թէ մարմին զգեցաւ:

<sup>1</sup> B առաջին յ-ն քերած-ջնջած  
<sup>2</sup> B Զի և վասն  
<sup>3</sup> B սրբ.՝ փրկիչն Իսրայելի  
<sup>4</sup> B ակուր  
<sup>5</sup> B գուրանալն  
<sup>6</sup> B անգիտանայր  
<sup>7</sup> B **չիք** Եւ  
<sup>8</sup> B մի ունիմ  
<sup>9</sup> B զբաժակն իմ  
<sup>10</sup> B մերկացեալ  
<sup>11</sup> B լի է  
<sup>12</sup> B բիւրք  
<sup>13</sup> B կամք  
<sup>14</sup> B փրկեցան  
<sup>15</sup> B Որդւոյ  
<sup>16</sup> B վասն փրկութեան **փխ** ի փրկութիւն

**ԻԳ** Նաև, զի համարձակեսցի մահ կլանել մահկանացու բնութեամբ զկեանս: Եւ պատառեսցէ զորովայն[ն] մահու, զի ազատեսցին ըմբռնեալք ի նմանէ: Ձի մի՛ ասիցեն, թէ առանց չարչարանաց և վաստակոց հատուցան պարտիք մեր՝ կարծելով, թէ Աստուած էր<sup>1</sup> մարմինն միացեալ ընդ<sup>2</sup> բանին:

Դիւրին էր նմա մատնել զանձն ի չարչարանս, և ո՛չ առնուլ ազգումն ցաւոց, և ո՛չ վէրս կսկծողս ի թափանցից<sup>3</sup> բեւեռացն ի ձեռս և յոտս, զի Տէրն թոյլ ետ մարմնոյն կրել զամենայնն առանց մեղաց:

**ԵՓ** Կամ ուսուցէ զաշակերտսն իւր զկեանս և զմահ Աստուծոյ յանձն առնել: Ձի թէ նա, որ գիտուն էր, զՀայր գիտուն ազաչեաց, որչա՞փ ևս տգէտքս տայցեն զկամս գիտողին ամենայնի:  
 260ա //Եւ, զի Ադամ խափանեաց զկամս Արարչին<sup>4</sup> իւրոյ և կեցոյց զկամս սատանայի, և մատնեցաւ ի բերան սպանողին, Քրիստոս խափանեաց զկամս մարմնոյ և կեցոյց զկամս Աստուծոյ՝ ստեղծողին<sup>5</sup> ամենայն մարմնոյ:

Յարուցեալ յաղաւթիցն Մատթէոս ասէ քրտունք վիժ<sup>6</sup>:

Եղև քիրտ<sup>7</sup> երեսաց նորա իբրև զշիթք արեան: Քրտնեցաւ<sup>8</sup> նա, զի ողջացուցէ զԱդամ հիւանդոտ: Քրտնեցաւ, զի բարձցէ զքրտամբք երեսաց ուտել հաց:

**ԿՐ** Ապա ուրեմն զքիրտն սակս կարկելոյ զբերանս հերձուածողացն եցոյց, զի մի՛ կեղծաւորութեամբ<sup>9</sup> և պիտակաբար երկի[ւ]ղն երևեսցի:

**ԻԳ** Եւ, զի առանց կարծեաց լիցի չարչարանքն և մահն տերունական:

Հրեշտակք<sup>10</sup> զաւրացուցանէին զնա (ԻԲ 43):

<sup>1</sup> Ե մեր ի *փխ* էր

<sup>2</sup> Ե սրբ.՝ և մարմինն ընդ

<sup>3</sup> Ե թափանցանց

<sup>4</sup> Ե արարողին

<sup>5</sup> Ե ստեղծաւղին

<sup>6</sup> Ե Եւ երևեցաւ նմա Հրեշտակ Տեառն յերկնից և զաւրացուցանէր զնա, և էր ի տազնապի, և մտադիւրութեամբ ևս կայր յաղաւթս, և հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան՝ ոլուն ոլուն հեղեալ յերկիր (ԻԲ 43-44): Գիտելի է, զի Ղուկաս աստ ասէ, թէ քրտունքն վիժուին, զոր յոմանց թարքմանս ոչ գտանի *փխ* Յարուցեալ յաղաւթիցն... վիժ

<sup>7</sup> Ե ասէ քիրտն

<sup>8</sup> Ե այսինքն՝ քրտնեցաւ

<sup>9</sup> Ե կեղծաւորութիւն

<sup>10</sup> Ե Իսկ զի՞ ասէ Հրեշտակք

Եպի. Ո՛չ եթէ հրեշտակի<sup>1</sup> զաւրացուցանելոյ պէտք էին նմա, որ աւրար զհրեշտակս իւր ի<sup>2</sup> հոգիս և զպաշտաւն[ե]այս իւր ի բոց հրոյ, որում ամենայն ծունր<sup>3</sup> կրկնի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, Աստուած Բանն՝ Հաւր ծնունդ և մշտնջենաւորակից նորին: Կատարեաց զերգս Մովսիսի<sup>4</sup>, որ ասաց, թէ՛ «Զաւրացուցեն զնա հրեշտակք Աստուծոյ» (տե՛ս Բ Օր. ԺԲ 43): Ո՛չ եթէ զաւրութիւն ինչ շնորհելով նմա, այլ զիւրեանց սովորական փառատրութիւն[ն] մատուցանելով Տեառն, զի հրեշտակացն է սրբաբանելն՝ ասելով. «Քո են փառք, և քո է<sup>5</sup> իշխանութիւն, քո է զաւրութիւն, և քո<sup>6</sup> լուսաւորութիւն»: Արդ՝ ետուն նմա զիւր զաւրութեանն և զիշխանութեանն զպատիւ: Ըստ այնմ,

260բ թէ՛ «Զաւ(//)րացուցեն զնա»՝ ամենայն որդիք Աստուծոյ:

ԿՐ Ն[ե]ստոր<sup>7</sup> և այլ հերձուածողքն մարմնոյ տաճարին ասեն կարաւտանալ ի հրեշտակէն զաւրացուցանելոյ: Առ որս ասեմք. «Բան[ն] Աստուած միացեալ յիւրում տաճարի մարմնոյն, կարող էր զաւրացուցանել<sup>8</sup> զիւր տաճարն ո՛չ միայն վասն հզաւրագոյն գոլոյն քան զհրեշտակն<sup>9</sup>, այլ առընթեր և մերձաւոր գոլոյն, քան զհրեշտակն<sup>10</sup> Բանին Աստուծոյ գոլով տաճար<sup>11</sup> միութեան»: Իսկ հրեշտակն, զի ցուցցէ եթէ, յորժամ ի փորձութիւնսն հասանիցիմք, ո՛չ զմերն հայցել կամաց լրումն, այլ զՏեառն, զի մեք ի հրեշտակաց լիցուք զաւրացեալք և պահպանեալք: Ըստ որում ի լերինն յորժամ քաղցեալ, ո՛չ նախքան յյաղթել[ն] բանսարկուին երևցոյց [զ]հրեշտակսն, որ պաշտէին զնա: Զի մի՛ ոք ասիցէ հրեշտակաւքն յաղթահարել<sup>12</sup> զփորձիչն, այլ ի ձեռն մարմնոյն, զի մարմնոյ տացէ [զ]զաւրութիւն: Զի՞նչ զարմանք էին, եթէ աստուածաբար էր յաղթեալ, այլ մարմնոյ զինուք՝ միացեալ աստուածութեամբն, անմարմնոյն յաղթեաց: Զի և մեք, յորժամ առաքինաբար մարտիցուք ընդ բանսարկուին, ի հրեշտակաց սրբոց լինիմք պահպանեալք:

<sup>1</sup> B հրեշտակաց

<sup>2</sup> B *չեք* ի

<sup>3</sup> A ծունդր

<sup>4</sup> B մեծին Մովսիսի

<sup>5</sup> B *չեք* է

<sup>6</sup> B քո է

<sup>7</sup> B տես որ *փես* Նեստոր

<sup>8</sup> A զաւրացուցանելոյ

<sup>9</sup> B զհրեշտակս

<sup>10</sup> B զհրեշտակսն

<sup>11</sup> B ի տաճար

<sup>12</sup> B յաղթահարեալ

Եկն առ նոսա և գտանէ զաշակերտսն ի քուն ի տրտմութենէն<sup>1</sup>  
(ԻԲ 45):

**Ոկ.** Մե'րթ<sup>2</sup> առ Պետրոս ձգէ զբանն և մե'րթ<sup>3</sup> առ ամենեսին, և  
զ[յ]անդգնութիւնն նոցա կարծէ և յերկի[ւ]ղածութիւնն ածէ: Քան-  
զի այլքն զնոյն ասէին, իսկ Յիսուս ընդ ամենեսին խաւսի: Արդ`  
**261ա** որք մեռանիլ խոստանային ընդ նմա և ո'չ ար(//)թնութեամբ  
տրտմակից կարացին լինել, այլ կալաւ զնոսա բռնութիւնն քնոյ:

**Արիք կացէք յաղաւթս**<sup>4</sup> (ԻԲ 46):

«Հոգիս յուժար է, բայց մարմինս տկար<sup>5</sup>» (Մատթ. ԻԶ 41) Մատ-  
թէոս ասէ:

**Եփ.** Զի դուք յորժամ երկնչիք, ո'չ հոգին, որ ի ձեզ է, երկնչի, այլ`  
տկարութիւն մարմնոյ ձերոյ: Եւ զիա՞րդ ի մահուանէ երկնչի<sup>6</sup>,  
յորմէ դողան երկնա[յ]ինք<sup>7</sup> և ամենայն եղեալքս<sup>8</sup>:

**Ստ.(գր.)** Հոգի<sup>9</sup> զմարգարէսն կոչէ, որք հայցէին զմեռանելն<sup>10</sup> նորա, և  
մարմին` զառաքեալսն, որով տկարանային ի ժամ մահուն<sup>11</sup>:

**Ով.** Քանզի ո'չ ուրանամք յանեղանելի բնութենէ և յեղականէ  
զՔրիստոս գոլ:

**մՈՎԱ** Այլ ո'չ իմանամք և ո'չ ասել իշխեմք երկուս բնութիւնս զկնի  
միաւորութեանն ի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս, հաւատամք յեր-  
կուց գոլ զնա: Բայց վասնզի անձառապէս և անդր քան զհա-  
սումն մտաց և բանի զմիաւորութիւն գործել տեսանեմք, վասն  
այսորիկ<sup>12</sup> անջատել յետ միաւորութեանն ո'չ ընդունիմք: Զի մի  
երկուց որդոց և դիմաց և կարծիս<sup>13</sup> ընդ նմին ի ներքս բերիցեմք:  
Զնոյն ինքն խոստովանիմք Աստուած և մարդ զմի Տէր մեր Յի-  
սուս Քրիստոս` չարչարեալ և առանց չարչարանաց մնացեալ:

**Եւ ահա ամբոխ, և Յուդա<sup>14</sup>, մի յերկոտասանիցն առաջնորդէր  
նոցա** (ԻԲ 47):

<sup>1</sup> Եւ եւ յարուցեալ յաղաւթիցն` եկն առ աշակերտսն, եզիտ զնոսա ի քուն ի տրտմու-  
թենէն, և ասէ ցնոսա. Զի՞ ննջէք:

<sup>2</sup> Ե մերձ

<sup>3</sup> Ե մերձ

<sup>4</sup> Ե յաղաւթս, զի մի մտանիցէք ի փորձութիւն:

<sup>5</sup> Ե Հոգիս... տկար` սրբ. ձախ լս.

<sup>6</sup> Ե երկնչէր

<sup>7</sup> Ե նա տառերը գրիչը սրբագրել է կի տառերի վերևում

<sup>8</sup> Ե եղեալքս, եթէ ոչ գերկիւղ մահու կամի յայտնել

<sup>9</sup> Ե կամ հոգի

<sup>10</sup> Ե զմեռանիլ

<sup>11</sup> Ե «Հոգի զմարգարէսն... մահուն» գրված է ԻԲ 47` «Եւ ահա ամբոխ... նոցա» տնից  
առաջ

<sup>12</sup> Ե այդորիկ

<sup>13</sup> Ե չիք և կարծիս

<sup>14</sup> Ե Եւ մինչդեռ խաւսէր, ահաւասիկ ամբոխ, և որ կոչէրն Յուդայ



**ԻԳ** Արդ՝ իբրև տեսին աշակերտքն զամբոխն հրէից և զհագարապետն զինուորաւք դատաւորին, զոր առեալ էին ընդ իւրեանս յաւգնականութիւն,

ստ. և ջահք վասն գիշերոյն, զի մի<sup>1</sup> փախիցէ, և գէնք վասն ժողովրդոցն, զոր կարծէին գոլ առ Յիսուս, որ ո՛չ թափէին ի նմանէ, 261թ որք ո՛չ // ունէին նախանձ փառասիրութեան, այլ զաւգուտն անձանց խնդրեալ<sup>2</sup> գտանէին և զբժշկութիւն մարմնոյ:

**ԵՓ** Զի լցցի մարգարէութիւն[ն] Զաքարիա. «Զարթիցէ սուր ի վերայ հովուի իմոյ» (Ձաք. ԺԳ 7): Եւ<sup>3</sup> զի ցուցցէ, եթէ ո՛չ բռնութիւն հնազանդեցոյց զնա ի խաչ ելանել, այլ ի կամս իւր մատնեաց զանձն փոխանակ ամենեցուն: Որպէս ինքն յայտնեաց՝ ասելով. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն, զի<sup>4</sup> դարձեալ միւս անգամ առից զնա» (Յովհ. Ժ 18): Կամ զվճիռն Պիղատոսի ասաց, այն, որ ետ ի կամս հրէիցն, զի ի խաչ հանիցեն<sup>5</sup> ըստ կամաց իւրեանց (հմմտ. Յովհ. ԺԹ 16). «Զհովիւն քաջ, որ զանձն եղ ի վերայ ոչխարաց իւրոց» (Յովհ. Ժ 11): Ի վերայ առն սիրելոյ իմոյ, քանզի «սիրեաց զնա Հայր և զամենայն ինչ ետ ի ձեռս նորա» (Յովհ. Գ 35): Այնմ<sup>6</sup>, որում Աբրահամ պատկառանաւք աղաչէր<sup>7</sup>՝ ասելով. «Քա՛ւ լիցի քեզ, որ դատիս զամենայն արարածս» (հմմտ. Ծննդ. ԺԸ 25):

**Մերձեցաւ<sup>8</sup> առ Յիսուս և<sup>9</sup> համբուրեաց զնա** (ԻԲ 47):

Մարգարէն Ովսէէ ասէ. «Համբուրեցէք զորդի, զի մի՛ բարկացի» (հմմտ. Ովսէ ԺԱ 7): Եւ զի կատարեսցի ի վերայ նոցա բարկութիւն՝ ի նորոգելն իւրեանց զհամբոյրն, որ նենգութեամբ ետուն Տեառն իւրեանց:

**Զի զայս նշան տուեալ էր հրէիցն. Ընդ որում ես համբուրեմ, զնա կալարուք<sup>10</sup>** (ԻԲ 47):

Ով. Բաբէ, քան[զ] ի չարութեամբ լցան միտք մատնչին, որո՞վք աչաւք կարէր<sup>11</sup> նայել ընդ վարդապետն կամ որո՞վ բերանով համ-

<sup>1</sup> A զմի փխ զի մի

<sup>2</sup> B խնդրել

<sup>3</sup> B դարձեալ

<sup>4</sup> B և

<sup>5</sup> B հանցեն

<sup>6</sup> B այլ

<sup>7</sup> B աղաչէր զնա

<sup>8</sup> B իբրև մերձեցաւ

<sup>9</sup> B չէք և

<sup>10</sup> B Քանզի զայն նշան տուեալ էր հրէիցն, թէ. Ընդ որում ես համբուրեցից, նա է, զնա ունիցիք:

<sup>11</sup> B կարէ

բուրել: Ո՛հ պիղծ շրթանցն, զի՞նչ խորհուրդ խորհեցաւ կորուստ անձինն:

**Իգ.** Վստահութիւն անճողոպրելի տալ ի ձեռս նոցա, յորժամ գիր-  
262ա կընդխառն լիցի՝ համբուրելով, յայնժամ մխե[ս]ցեն ի //նա զձեռս  
իւրեանց: Ո՛չ զանգիտեաց ի նմանէ, որ առժամայն եհար զնոսա  
զգետնի, այլ փութային կատարել զնշանն, զոր ետ նոցա:

**Յիսուս ասէ<sup>1</sup>. Յուդայ՝ համբուրելով մատնես զՈրդի մարդոյ**  
(ԻԲ 48):

**Ստ.** Այսքան զամենայն ինչ բաւական էր պատկառեցուցանել<sup>2</sup>  
զնա և մերժել յամենայն պատասխանոյ, որ զայնպիսի հեզ[ն]  
մատնէր, քանզի բազում անգամ ըմբռնեցաւ ի նոցանէ: Եւ ել  
զնաց, և նոցա ո՛չ լինէր գիտելի: Եւ յայնժամ նոյնպէս լինէր, եթէ  
ո՛չ էր ինքն կամեցեալ: Արդ՝ այլ աղանդ հերձուածողքն կամե-  
ցան նմա պատիւ մատուցանել: Կործանեցան<sup>3</sup> ի հաւատոց՝ կար-  
ծելով յոյժ սիրել զՔրիստոս և պատուել: Համբաւեն ասել ո՛չ  
ծնաւ ի կնոջէ, և այլք, եթէ կարծեւք<sup>4</sup> երևեցաւ մարդկան:

**Իբրև տեսին, որ զնովաւն էին, որ ինչ եղևն** (ԻԲ 49):

**ՍՏ** Կալան զՅիսուս, զի ինքն կամեցաւ անկանել որպէս<sup>5</sup>  
[գ]ճնճողուկ ի ձեռս որսորդացն: Զի թէպէտև զայրագնեալ էին  
մոլեգնաբար, բայց սակայն ո՛չ էին ձեռնհաս, թէ ինքն ո՛չ էր  
թոյլ տուեալ, զի<sup>6</sup> մի՛ ազատեսցին յանհնարին տանջանացն: Զի  
զայնչափ զաւրութիւն և զհեզութիւն տեսին զՅիսուսի, և քան  
զամենայն զազանս դժնդակագոյն եղեն:

**Ասեն ցնա. Տէ՛ր, հարցուք զնոսա սրով** (ԻԲ 49):

**ԻԳ** Աշակերտքն, սթափեալք ի քնոյ անտի, զինեցան և խիզախե-  
լով յորդորէին ի վրէժխնդրութիւն զվարդապետն:

**Եհար<sup>7</sup> մի ոմն ի նոցանէ զքահանայապետին ծառայն<sup>8</sup> և ի բաց  
եհան զուսկն<sup>9</sup> նորա** (ԻԲ 50):

<sup>1</sup> B Ասէ ցնա Յիսուս

<sup>2</sup> B Այս բաւական էր քան զամենայն ինչ պատկառեցուցանել

<sup>3</sup> B և կործանեցան

<sup>4</sup> B կարծեաւք

<sup>5</sup> B Իբրև

<sup>6</sup> B և զի

<sup>7</sup> B Եւ եհար

<sup>8</sup> B ծառայ

<sup>9</sup> B զաջոյ ուսկն

**262բ ՍՏ** // Արդ՝ սուրն, որ հանաւ, զի հաստատեսցի բանն Մովսիսի, թէ՛ «Ամենայն անձն, որ ո՛չ լուիցէ<sup>1</sup> մարգարէին, այնմիկ սատակեսցի» (հմմտ. Բ Օր. ԺԸ 19):

**ԿՐ** Աստուած ահաւոր նշանաւք ստացաւ զԻսրայէլ իւր ծառայս՝ ի բաց հանելով ի ծառայութենէ դիւաց: Եւ աւրէնս կարգէ. «Եթէ ոք կամիցի<sup>2</sup> զծառայ իւր ազատել և ծառայն ո՛չ կամեսցի, առաջի ձերոց ժողովրդեանն ծակեսցեն զունկն<sup>3</sup> նորա, զի եղիցի նմա ի ծառայութիւն նշանաւն<sup>4</sup> մինչև յաւր մահուան իւրոյ» (հմմտ. Ելք ԻԱ 2-6): **Ձի կամէր Տէրն ի ձեռն խաչին ազատել զնոսա՞<sup>5</sup> [ի] ծառայական կարգացն, և նոքա ո՛չ կամեցան զազատութիւնն: Ի ձեռն հատանելոյն Պետրոսի զունկն ծառայի քահանայապետին<sup>6</sup>, որ էր անդամալոյծն, յուշ ածէ նոցա զտուեալ աւրէնան, որ զծառայիցն նշանակէր կալ ի ծառայական կարգան: Ձոր այս յայտ<sup>7</sup> արար, «Հատանելով զունկն ծառային», թէ ընդ նմին ի կարգ ծառայութեան մնալոց են, մինչև ի կարգ<sup>8</sup> ժամանակաց իւրեանց անձնիչխան կամաւք՝ արհամարհելով զազատութիւն[ն], որ եկն պարգևել նոցա:**

**ՍՏ (ԻԳ.)** **Ձի քահանայապետին ծառայն էր առաջնորդ մոլորութեան գնդին բազմութեան, որ և ի Պիղատոսէ հռոմայեցիք<sup>9</sup> էին զհետ մատնչին, և այլ ևս բազումք ի հրէիցն: Վասն այնորիկ քահանայապետին ծառայն եցոյց զկամս աւրինացն:**

**Յիսուս ասէ<sup>10</sup>. Թոյլ տուք մինչև ցայդ վայր (ԻԲ 51):**

**ԿՐ.** Որպէս թէ ասիցէ մինչև ցայդ վայր էր<sup>11</sup> աւրինակն, զոր աւան-

**263ա** դեցի ի հնումն: // Եւ հատաւ ունկնն, որք<sup>12</sup> կամեցան կալ ի ծառայութիւն մեղաց:

**ԵՓ** **Ձի յորժամ ցուցանեն զնախանձ Տեառն ի ձեռն սուսերին: Ուսոյց նոցա մի՛ զանձանց խնդրել վրէժ, այլ տալ զծնաւտն հարկանողին (տե՛ս Զ 29), զոր մոռացաւ Շմաւոն վասն սիրոյն Տեառն՝**

<sup>1</sup> B Լսէ  
<sup>2</sup> B կամեսցի  
<sup>3</sup> B զաջոյ զունկն  
<sup>4</sup> B նշանակաւ  
<sup>5</sup> B **չիք** զնոսա  
<sup>6</sup> B քահանայապետին  
<sup>7</sup> B աստ յայտնի  
<sup>8</sup> B վախճան **փի** կարգ  
<sup>9</sup> B հռովմայեցիք  
<sup>10</sup> B Պատախանի ետ Յիսուս և ասէ  
<sup>11</sup> B **չիք** էր  
<sup>12</sup> B որ

նմանեալ Մովսիսի, որ զՏեառն վրէժն խնդրեաց և յիւրն հեղացաւ:

Մատուցեալ յունկն՝ բժշկ[եաց]<sup>1</sup> (ԻԲ 51):

**ԿՐ** Դարձեալ. ի տեղոջն իւրում հաստատեալ զունկնն: Ձի որպէս հատանելովն զհետեալն յաւրինացն Մովսիսի գուշակեաց յազատութենէն, այսպէս և հաստատելովն զյետնոցն<sup>2</sup>, որք յԻսրայելէ հաւատարոց էին ի Քրիստոս, ի ձեռն Ենովքայ և Եղիայի գուշակեաց: Ձոր և Պաւղոս նշանակեաց՝ ասելով. «Մինչև լրումն հեթանոսաց մտցէ, և ապա ամենայն Իսրայել կեցցէ» (Յռոմ. ԺԱ 25-26): Դարձեալ. զհեղութիւն և զանոխակալութիւն և զիւր ներողութիւն<sup>3</sup> յայտ առնէ նոցա և առնլթեր խաչին զիւր զաւրութիւն ցուցանէ, թէ կամաւ<sup>4</sup> գայ ի խաչն<sup>5</sup> և ո՛չ ի հարկէ:

**ԵՓ** Այլ քանզի Տէր մեր սահման էր արդարութեան և սկիզբն ողորմութեան, ամփոփեաց զսուրն արդարութեամբ ի տեղի իւր, և հազորդ արար ողորմութեան՝ զունկնն ի տեղի իւր բժշկելով:

Ասէ ցեկեալսն ի վերայ ցքահանայապետսն<sup>6</sup>. Իբրև ի վերայ աւագակի<sup>7</sup> ելէք սուսերաւք և բրաւք (ԻԲ 52):

**ԻԳ** Այսպիսի պատրաստութեամբ զինու և բազմութեամբ զաւրականաց եկեալ էին:

**ԵՓ** Տե՛ս, որչա՞փ ինչ գործս<sup>7</sup> գործեաց, որ կարող էին ընդոստուցանել զնոսա: Ձի յետս տարեալ՝ զարկոյց զնոսա յորս այս<sup>8</sup>, և 263բ զ(//)ունկն ծառային բժշկեաց: Եւ սպանումն սպառնացաւ, որ սուր հանիցէ: Ի՞նչ<sup>9</sup> մաւտաւորացս և ի հանդերձելոցն զիւր զաւրութիւն<sup>10</sup> յայտ արար, թէ ո՛չ նոցա զաւրութեանն է ունել զնա, այլ Տեառն յուժարութիւն կամացն, որ ճոխաբար գայր ի խաչն:

Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին և ուսուցանէի, ընդէ՞ր ո՛չ արկէք յիս ձեռն<sup>11</sup> (հմմտ. ԻԲ 53):

<sup>1</sup> Եւ մատուցեալ յունկն՝ բժշկեաց զնա:

<sup>2</sup> Ե յետնոցն

<sup>3</sup> Ը ներաւորութիւն

<sup>4</sup> Ե կամաւորաբար

<sup>5</sup> Ե չարչարանս *փի* խաչն

<sup>6</sup> Ե ասէ ցեկեալսն ի վերայ նորա՝ ցքահանայապետսն և ցիշխանս տաճարին և ցծերս

<sup>7</sup> Ե գործ

<sup>8</sup> Ե *չիք* Ձի յետս... այս

<sup>9</sup> Ե և ի

<sup>10</sup> Ե զի զաւրութիւն իւր

<sup>11</sup> Ե Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, և ոչ ձգեցէք ձեռս յիս, այլ այս է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի:

**ԻԳ** Այսու յայտ արար՝ անպարտ ցուցանելով զանձն, և զնոցա յարձակումնն՝ տարապարտ և<sup>1</sup> լցեալս անաւրէնութեամբ: Զի ո՛չ ունէին պատճառ տալ, բայց միայն զնշանսն և զուսուցանելն, որով զաւրանայր ի մէջ նոցա: Եւ նոքա ո՛չ բերէին զփառս նորա առ նախանձուն մոլորեալք:

Եւ կալեալ զնա՝ ածին<sup>2</sup> ի տուն քահանայապետին (ԻԲ 54):

Ի նմին ժամու, արկեալ ի նա զձեռս<sup>3</sup> դահճացն, ըմբռնեցին կապանաւք: Եւ լցաւ մարգարէութիւն Եսայեայ. «Կապեսցուք զարդարն, զի դժպէս եղև մեզ» (Ես. Գ 10):

«Եւ տարան նախ առ Աննայ քահանայապետն» (Յովհ. ԺԸ 13):

Վասն աւգնականութեան: Զոր տեսեալ աշակերտացն գիտացին, թէ կամաւ մատնեաց զանձնն և ո՛չ էր հնար զերծանել:

«Յայնժամ թողին զնա և փախեան» (Մատթ. ԻԶ 56, Մարկ. ԺԴ 50):

Զի մի՛ ըմբռնեսցին: Եւ զի կամեցան զնա ունել, որպէս զերկտասարդն զՄարկոս, որ զկտաւն եթող ի նոսա և մերկ փախեաւ ի ձեռաց նոցա (Մարկ. ԺԴ 52):

**ԵՓ** Կատարեցաւ աստ մարգարէութիւն Զաքարիա. «Հարից զհովիւն և հաւտքն ցրուեսցին» (Ձաք. ԺԳ 7): Զի թէ ի ժամանակին, յորժամ<sup>4</sup> պատեալ էին զնովաւ փառք նշանացն և պատիւ յամեն(//)այն կողմանց, զի թէ վասն բանի միոյ փոքու հաւատոց<sup>5</sup>, զոր ուսոյց նոցա, բազումք յաշակերտաց նորա թողին զնա և զնացին, որչա՞փ ևս առաւել ի ժամուն, յորժամ կապեցաւ ի խաչ ելանել: Եւ զիա՞րդ ո՛չ երկմտէին բազումք, թէ մարդ է, և մեղանչէին որպէս Հերովդէս, որ լսէր զնշանս նորա և կամէր տեսանել զնա: Իբրև հասին նմա անարգանքն, այպն առնէր իւրայիւքն<sup>6</sup> և ճաղէր: Եւ մեղաւ անչափ: Իսկ ծածուկ զաւրութիւն[ն] Քրիստոսի պահէր զաշակերտսն: Ըստ այնմ՝ «Զոր ետուր ցիս, ո՛չ զոք կորուսի<sup>7</sup>, բայց Որդին կորստեան, զի գիրն լցցի» (Յովհ. ԺԷ 12), թէ՛ «Որ ուտէր ընդ իս հաց, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն» (Սաղմ. ԽԱ 10):

<sup>1</sup> Եւ չէք և

<sup>2</sup> Եւ ածին և մուծին

<sup>3</sup> Եւ ձեռս

<sup>4</sup> Եւ իբրև շուրջ

<sup>5</sup> Եւ հատոյց

<sup>6</sup> Եւ իւրայաւքն

<sup>7</sup> Եւ զրփիս կորուսից զոք

Պետրոս<sup>1</sup> երթայր զկնի նորա հեռագոյն<sup>2</sup> (ԻԲ 54):

**ԻԳ** Իսկ Պետրոս ջերմաջերմ սիրով ո՛չ ունէր ժոյժ մեկնել<sup>3</sup> ի նմանէ: Վասն այնորիկ գնայր<sup>4</sup> զհետ լի տրամութեամբ տեսանել զկատարածն:

«Գնայր և ընդ նոսա<sup>5</sup> Յովհաննէս» (հմմտ. Յովհ. ԺԸ 15):

Համարձակութեամբ, քանզի<sup>6</sup> ծանաւթ էր քահանայապետին: Եմուտ ի ներքս և ասաց դռնապանին թողուլ զնա ի ներքս (տե՛ս Յովհ. ԺԸ 15-16):

Ետես զնա աղախին մի, զի նստէր առ լոյսն, և ասէր. Սա ընդ նոսա էր: Եւ Պետրոս ասէ. Ո՛չ գիտեմ զնա<sup>7</sup> (ԻԲ 56-57):

**ստ.** Ո՛չ սպառնալիք և ո՛չ երկիւլիղ բռնաւորաց, այլ յաղջկանէ միոյ ուրացաւ: Սքանչելի գործ: Մինչ կալան զՅիսուս, եռանդնոտ սիրով Պետրոս մերկանայր զսուրն և զանձն ի մահ մատնէր՝ հատանելով զունկն ծառային: Եւ յորժամ պարտ էր զայրանալ, ի լսել զանչափ նախատինս վարդապետին՝ ուրացաւ:

**264բ** //Յետ սակաւ մի այլ ոմն ետես<sup>8</sup> (ԻԲ 58):

Եւ Պետրոս յուրաստ լինէր<sup>9</sup>: Ո՛չ դատաւորաց առաջի, զի արտաքոյ դրանն հարցանէին զնա, և ուրացաւ յաղջկանէ՝ տառապելոյ և վատթարէ:

Իբրև ժամ մի անցանէր, այլ ոմն վիճէր. Սա ընդ նմա էր, զի գալիլեացի է: Եւ Պետրոս ասէ. Ո՛չ գիտեմ զի՞նչ խաւսիսդ<sup>10</sup> (ԻԲ 59-60):

Զո՛ր ոք<sup>11</sup> ո՛չ բորբոքէին իրքն<sup>12</sup>, որ<sup>13</sup> յայնժամ գործէին, բայց աշակերտն<sup>14</sup> յահէն միայն երկեաւ:

<sup>1</sup> Եւ Պետրոս

<sup>2</sup> Եւ հեռագոյն: Իբրև լուցին կրակ ի մէջ գաւթին, և նստան շուրջ, նստաւ և Պետրոս ի մէջ նոցա (ԻԲ 55):

<sup>3</sup> Եւ մեկնել

<sup>4</sup> Եւ երթայր

<sup>5</sup> Եւ ընդ նմա և *փխ* և ընդ նոսա

<sup>6</sup> Եւ վասնզի

<sup>7</sup> Եւ ետես զնա աղախին ոմն, զի նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նա և ասէ. Եւ սա ընդ նոսա էր, որ ընդ նմայն էին: Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. Ո՛չ գիտեմ զնա, կին դու:

<sup>8</sup> Եւ Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն ետես զնա և ասէ. Եւ դո՛ւ ի նոցանէ ես: Եւ Պետրոս ասէ. Ա՛յր դու, չեմ ի նոցանէ:

<sup>9</sup> Եւ *չիք* Եւ Պետրոս... լինէր

<sup>10</sup> Եւ Եւ Իբրև ժամ մի անց ի վերայ, այլ ոմն վիճէր և ասէր. Ստոյգ, և սա ընդ նմա էր, քանզի գալիլեացի է: Ասէ Պետրոս. Ա՛յր դու, չգիտեմ զի՞նչ խաւսիսդ:

<sup>11</sup> Եւ Զի *փխ* Զո ոք

<sup>12</sup> Եւ ի մոլորութեան իրն

<sup>13</sup> Եւ որպէս

<sup>14</sup> Եւ *որք*. յորմէ փախեան աշակերտքն, այլ *փխ* բայց աշակերտն

**Առժամայն Հաւ խաւսեցաւ**<sup>1</sup> (ԻԲ 60):

**ՈԿ** *Քանզի ի միռում ժամու երիցս և չորիցս և այլ ևս սովոր է խաւսել հաւ: Իսկ Մարկոս ասէ. «Յորժամ միանգամ ուրացաւ, իսկոյն խաւսեցաւ հաւ, և յորժամ երկիցս<sup>2</sup> և հաւն կրկին խաւսեցաւ» (տե՛ս Մարկ. ԺԴ 66-72): Եւ զաշակերտին զտկարութիւն[ն] ստոյգ պատմեն աւետարանիչքն:*

**Դարձաւ Տէր և Հայեցաւ ի Պետրոս** (ԻԲ 61):

*Կարաւտացաւ վարդապետին յուշ առնելոյն: Եւ նայելն միայն եղև նմա փոխանակ բարբառոյն<sup>3</sup>:*

**Յիշեաց Պետրոս զբանն Տեառն, որ ասաց, թէ ուրացի և Հաւ խաւսեսցի**<sup>4</sup> (հմմտ. ԻԲ 61):

*Յայտ առնէ, թէ ո՛չ միայն ուրացաւ, այլև այնպէս յապուշ կրթեցան միտքն, զի<sup>5</sup> ո՛չ իւրովի յիշեաց և այն, զի հաւ խաւսեցաւ:*

**Ելեալ**<sup>6</sup> արտաքս՝ ելաց դառնապէս (ԻԲ 62):

*Ո՛չ իշխեաց լալ յայտնապէս, զի ամբաստանութիւն<sup>7</sup> լինէր վասն արտասուացն: Գլուխ աշակերտացն փորձեսցէ<sup>8</sup>, զի բժիշկ լիցի վիրաւորացն:*

**Եւ արքն, որ պահէին, այսպն առնէին զնա**<sup>9</sup> (ԻԲ 63):

**265ա** *Զի մի՛ ամաչեսցեն յանցաւորք ապաշխարել ի ձեռն Շմաւոնի յանցաւորի, որ յոր(Ո)դորեաց<sup>10</sup> զնոսա գալ առ Աստուած: Ի գիշերի ուրացաւ, ի տուէ<sup>11</sup> խոստովանեցաւ: Առ խարոյկի<sup>12</sup> ուրացաւ, առ խարոյկի<sup>13</sup> խոստովանեցաւ: Ուրացաւ՝ երկիր վկայէ, խոստովանեցաւ՝ ծով և ցամաք:*

**ԳՐ.** *Եմոյծ զանձն ի լուծ, և եհար զուս իւր ի խաչն գլխիվայր:*

<sup>1</sup> B Եւ առժամայն, մինչդեռ նա գայն ասէր, խաւսեցաւ հաւ:

<sup>2</sup> B երիցս

<sup>3</sup> B բարբառելոյ

<sup>4</sup> B Եւ յիշեաց Պետրոս զբանն Տեառն, զոր ասաց ցնա. Մինչև հաւու խաւսեալ իցէ, երիցս ուրացիս չգիտել զիս:

<sup>5</sup> B գի և

<sup>6</sup> B Եւ ելեալ

<sup>7</sup> B յամպաստանութիւն

<sup>8</sup> B փորձեցաւ

<sup>9</sup> B *չիք* Եւ արքն որ... զնա

<sup>10</sup> A յարդարեաց

<sup>11</sup> B տուէ և ի գիշերի

<sup>12</sup> B *արբ.*՝ խարուկին

<sup>13</sup> B *արբ.*՝ խարուկին

**ՈԿ** *Զի<sup>1</sup> թէ սպանանելոց էին, զի<sup>օ</sup>նչ պէտք էին նախատանաց: Տե՛ս զանառակ բարս նոցա: Իբր, որ ստգտեալ<sup>2</sup> ցուցանէին զթշնամութիւն իւրեանց, և [ի] տաւնիսն<sup>3</sup> ուրախութեան առնէին զայն, և զսպանող բարս իւրեանց ցուցանէին, որ և այս զՅիսուսի զանբաւ հեզութիւն<sup>4</sup> ցուցանէ և զհրէիցն զանեզրական չարութիւնսն<sup>5</sup>, որք այնպէս յանդգնեցան առ հեզն և հանդարտն: Զի<sup>օ</sup>նչ զոյգ այնր թշնամանաց կայցէ<sup>6</sup>, որ քան զամենայն արհամարհանս վշտագինս ածէին ի վերայ: «Ընդ<sup>7</sup> երեսս թքանէին<sup>8</sup>» (Մարկ. ժԵ 19): Զոր ծովն ետես և խոռովեցաւ և արեգականն ամփոփեաց զճառագայթս իւր ի խաչին: Որպէս ասէ Յորք. «Մինչև յե<sup>օ</sup>րք աշխատ առնէք զիս բանիւք<sup>9</sup>, բամբասէք զիս և ո՛չ ամաչէք» (Յոր ժԹ 3): Անամաւթ հրէայքն զՓրկիչն, և ծաղր լինիմ նախատանաւք՝ Յորբաւ հեզնեալ զմոլորութիւն<sup>10</sup> նոցա: «Հեռի եղեն յինէն եղբարք իմ» (Սաղմ. ԼԵ 12)՝ աշակերտքն<sup>11</sup>, ծանեան զաւտարս<sup>12</sup>, Յուդայ զհրէայսն: Երկերուք ի ծածկելոյն<sup>13</sup>՝ առ անհաւատ հրէայսն ասէ, զի բարկութիւն ի վերայ անաւրինաց եկեսցէ:*

**Հարկանէին զՅիսուս (ԻԲ 63):**

**ԵՓ 265բ** *Զոր Միքիա մարգարէն ասէ. «Հարին գաւազանաւ<sup>14</sup> զծնաւո հովուին Իսրայելի» (Միքիա Ե 1): // Զի ի հրէիցն առ<sup>15</sup> Յիսուս զապտակին], «Հովուին Իսրայելի», և ընդ խաղ ծաղր արարին զնա՝ թքեալ ի նա: Փչեաց ի նոսա զՀոգին Սուրբ: Ըստ այնմ, թէ՛ «Ել փչելով յերեսս քո» (Սաղմ Բ 1), և թէ՛ «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս<sup>16</sup>» (Ողբ Դ 20):*

<sup>1</sup> Ե Եւ արքն, որ պահէին զնա, այսպն առնէին զնովաւ (ԻԲ 63): Զի

<sup>2</sup> Ե որս գտեալ *փիս* որ ստգտգել

<sup>3</sup> Ե իբրև տաւն *փիս* և ի տաւնիսն

<sup>4</sup> Ե զհեզութիւնն

<sup>5</sup> Ե չարութիւնն

<sup>6</sup> Ե կացցէ

<sup>7</sup> Ե սրբ. և ընդ

<sup>8</sup> Ե երեսն թքանէին: «Եւ հարկանէին, ծածկէին զերեսս նորա և տանջէին» (ԻԲ 63-64):

<sup>9</sup> Ե *չիք* բանիւք

<sup>10</sup> Ե հենգնեալ զմոլորութիւնս

<sup>11</sup> Ե աշակերտք իմ

<sup>12</sup> Ե զաւտարն քան զիս

<sup>13</sup> Ե ծածկելոցն

<sup>14</sup> Ե *չիք* գաւազանաւ

<sup>15</sup> Ե էստ

<sup>16</sup> Ե *չիք* թքեալ ի նա: Փչեաց... Քրիստոս



ԻԳ. Եւ Եսայիաս ասէ. «Զթիկունս իմ ետու ի հարուածս, և զծնաւտ<sup>1</sup> իմ յապտակս. և զերեսս իմ ո՛չ դարձուցի<sup>2</sup> յամալթոյ ընդ երեսս թքանելոյ» (Ես. Ծ 6):

Մարգարեաց, ո՞վ եհար զքեզ<sup>3</sup> (ԻԲ 64):

ՈԿ. Բանս բազումս ճաղանաց խաւսէին, քանզի բազումք մարգարէ կոչէին զնա<sup>4</sup>:

ԵՓ Զաքարիաս<sup>5</sup> ասէ. «Զեմ<sup>6</sup> մարգարէ» (Զաք. ԺԳ 5), իբրև<sup>7</sup> մարգարէ է նա: Զաւրինակ Տեառն մերոյ առ յանձն<sup>8</sup> իւր, որ անարգանաւք ո՛չ համարէին զնա մարգարէ:

Յիսուս ետ զհարկ<sup>9</sup> աշխարհագրին իբրև զմի ի բազմաց և եցոյց, եթէ ազատ է նա: Այլ իբրև այր մի հողագործ վաստակեցի ի նոսա՝ զբժշկութիւն[ն] ասէ, և մարդ նախանձեցաւ<sup>10</sup> ընդ իս ի մանկութենէ իմմէ՝ հրէայքն ստուլթեամբն իւրեանց և չարութեամբն նախանձեցան ընդ Տեառն մերոյ: Եւ Շմէոն<sup>11</sup> ծանոյց զնախանձն Իսրայելի. «Ահա<sup>12</sup> սա կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց<sup>13</sup>» (Բ 34): Որք հաւատացին ի նա՝ կանգնեցան, և որք ո՛չ հաւատացին ի նա<sup>14</sup>, կորեան գլորմամբ:

ՈԿ Իբրև զարհամարհ մի և զերեք դանգեան, քահանայքն ի մէջ արկեալ՝ կատակէին<sup>15</sup> զՅիսուս: Մարկոս ասէ, թէ՛ «Հանդերձիւք ծեծէին<sup>16</sup> զերեսս նորա» (հմմտ. Մարկ. ԺԴ 65):

Եւ այլ բազում<sup>17</sup> հայհոյութիւնս<sup>18</sup> խաւսէին<sup>19</sup> (ԻԲ 65):

ԻԳ Զոր ո՛չ կամեցաւ Հոգին Սուրբ գրել:

<sup>1</sup> Բ զծնաւտս

<sup>2</sup> Բ դարձուցից

<sup>3</sup> Բ Եւ հարցանէին ցնա և ասէին. Մարգարեաց, ո՞վ է, որ եհարն զքեզ:

<sup>4</sup> Բ զնա՝ թքեալ ի նա: Որ փչեաց ի նոսա զՀոգին Սուրբ: Ըստ այնմ, եթէ՛ «Ել փչող յերեսս քո» (Նաւուժ Բ 1), և թէ՛ «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս» (Ողբ Դ 20):

<sup>5</sup> Բ Զաքարիա

<sup>6</sup> Բ էլ

<sup>7</sup> Բ իբրև

<sup>8</sup> Բ ի յանձն

<sup>9</sup> Բ զհարկս

<sup>10</sup> Բ մարդիկ նախանձեցան

<sup>11</sup> Բ Սիմէոն

<sup>12</sup> Բ Ահաւասիկ

<sup>13</sup> Բ բազմաց ի մէջ Իսրայելի

<sup>14</sup> Բ չիք ի նա

<sup>15</sup> Բ կտակէին

<sup>16</sup> Բ սրբ.՝ ծածկէին

<sup>17</sup> Բ բազում ինչ

<sup>18</sup> Բ հայհոյութեամբ

<sup>19</sup> Բ սրբ.՝ խաւսէին ի նա

Իբրև այդ եղև, ժողովեցաւ ծերակոյտն քահանայապետաւքն և դպրաւքն և ածին զնա յատեանն իւրեանց<sup>1</sup> (ԻԲ 66):

266ա ԻԳ // Ապա յուղարկեալ<sup>2</sup> լինէր Յիսուս յԱննայէ<sup>3</sup> առ<sup>4</sup> Կայրափայ, զի<sup>5</sup> նոքա ո՛չ ունէին իշխանութիւն սպանանել<sup>6</sup>:

ԵՓ. Մարգարէացաւ զայս Ովսէէ՝ ասելով. «Միաբանեցան քահանայքն և ի ճանապարհի<sup>7</sup> սպանին զՍիւքէմ<sup>8</sup>» (հմմտ. Ովտ 2 9), որ է Քրիստոս, զի ատեանն նոցա լի էր<sup>9</sup> ամենայն խռովութեամբ:

Ասէ քահանայապետն, թէ<sup>10</sup> Դո՞ւ ես Քրիստոսն, ասա<sup>11</sup>: Եւ Յիսուս ասաց. Ասացի ձեզ և ո՛չ հաւատայք<sup>12</sup> (ԻԲ 66-67):

Կայրափայ յառաջ մատուցեալ քննէ՝ բանս հանել ի նմանէ, որով ամբաստան լիցի վասն նորա<sup>13</sup>:

ՈԿ Կամէր ածել զնա ի պատասխանատ[ը]ութիւն[ս], զի [ի] նորին բանիցն ըմբռնեսցէ զնա:

ԵՓ Լուեցոյց<sup>14</sup> զբանս<sup>15</sup> նոցա, զի բազմացուցին ի վերայ զամբոխն: Խաւսեցաւ, զի հարցին<sup>16</sup>: Եւ գիտէր, զի նենգութեամբ հարցին<sup>17</sup> և ո՛չ վասն ուսանելոյ:

Բայց յայ[ս]մ հետէ նստցի Որդի մարդոյ ընդ աջմէ զաւրութեանն Աստուծոյ (ԻԲ 69):

Ուղիղ տայր զպատասխանին: Եւ յայտնէր զբնութեանն զպատիւն<sup>18</sup>, զի առանց պատասխանոյ արասցէ զնոսա:

ՈԿ.(ԿԼԲ.) Զի մինչև ցլետին<sup>1</sup> աւրն ուսուցանէր զնոսա, թէ նա է Քրիստոս, որ ընդ աջմէ Հաւր նստի: Ըստ մարգարէութեանն Դաւթայ<sup>2</sup>.

<sup>1</sup> Եւ Իբրև այդ եղև, ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն և դպիրք, և հանին ածին զնա յատեանն իւրեանց:

<sup>2</sup> Եւ զարկեալ *փի* յուղարկեալ

<sup>3</sup> *Ա*, *Ե* ի յԱննայէ

<sup>4</sup> *Ե* և ի

<sup>5</sup> *Ե* վասնզի

<sup>6</sup> *Ե* սպանանելոյ: *Իգնատիոսի* «Ապա յուղարկեալ... սպանանելոյ» *մեկնութիւնը* զրված է *Եփրեմի* «Մարգարէացաւ... խռովութեամբ» *մեկնութիւնից* հետո

<sup>7</sup> *Ե* ճանապարհին

<sup>8</sup> *Ա* զՍուքէմ

<sup>9</sup> *Ե* է

<sup>10</sup> *Ե* Եւ ասեն, եթէ

<sup>11</sup> *Ե* ասա մեզ

<sup>12</sup> *Ե* *չիք* Եւ Յիսուս... հաւատայք

<sup>13</sup> *Ե* զնմանէ *փի* վասն նորա

<sup>14</sup> *Ե* Ասէ ցնոսա, եթէ՝ Ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք: Եւ եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի կամ արձակիցէք (ԻԲ 67-68): Լուեցոյց

<sup>15</sup> *Ե* *սրբ.*՝ զբերանս

<sup>16</sup> *Ե* հարցեն

<sup>17</sup> *Ե* հարցանէր

<sup>18</sup> *Ե* պատիւն

*թայ*<sup>2</sup>. «Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ» (Սաղմ. 68 1, նաև՝ Մարկ. ԺԲ 36, Ղուկ. Ի 42, Գործք Բ 34): *Ձոր Մատթէոս ասէ*. «Քահանայապետն պատառեաց զպատմուճանն» (*հմմտ.* Մարկ. ԺԴ 63): *Իսկ Ղուկաս թէ*<sup>3</sup>,

**Մեզէն լուաք ի բերանոյ դորա** (ԻԲ 71):

**ԻԳ** *Ձի աճեցուցէ զամբաստանութիւն: Վասնզի*<sup>4</sup> *նա էր պատառտուն*<sup>5</sup> *և հին տիկն, որ ո՛չ հանդու[ր]ժեաց բռնութեան նոր գինոյն* (*տե՛ս* Մատթ. Թ 17, Մարկ. Բ 22, Ղուկ. Ե 37, 38), *հերձեալ՝ պատառեցաւ ի բանից նորա:*

**266բ ԵՓ** // *Ձի նեղեցաւ նա ի զաւրութենէ նորա: Եւ, զոր ինչ հանդերձեալ էր Աստուած առնել ի ձեռն Միածն[ին] իւրոյ, յառաջագոյն նկարեաց ի բնութենէ*<sup>6</sup> *երկրի և դրոշմեաց յարդարս*<sup>7</sup>: *ՅԱրեգ ամսեան պատառեն ծաղիկք զծոց երկրի և ելանեն, յորում քահանայապետն զքահանայութիւն իւր մերկացաւ: Եկն*<sup>8</sup> *սփռեցաւ ի վերայ Փրկչին մերոյ:*

<sup>1</sup> Ե յետին

<sup>2</sup> Ե մարգարէին Դաւթի

<sup>3</sup> Ե ասէ թէ

<sup>4</sup> Ե զի

<sup>5</sup> Ե պատառտունն

<sup>6</sup> Ե բնութեան

<sup>7</sup> Ա, Ե ի յարդարս

<sup>8</sup> Ե սրբ. և եկն

## Գլուխ ԻԳ

Եւ յարուցեալ ամենեքին<sup>1</sup> ածին զնա առ Պիղատոս (ԻԳ 1):

ԻԳ. Ինքեանք ո՛չ մտանէին, զի ո՛չ էին կերեալ զզատիկն յերեկոյեան ժամուն վասն ցանկութեան<sup>2</sup> սպանութեանն: Զի ի գալ ճշմարտութեանն քակտեսցի ստուերն, և կացին մինչ ցինն<sup>3</sup> ժամն: Քանզի Մովսէս գրեաց, թէ ո՛չ<sup>4</sup> ուտեն<sup>5</sup> յերեկորեան ժամուն, անիծեալ լիցի (հմմտ. Ա թագ. ԺԴ 24, 28) և «Սատակեսցի ի ժողովրդենէն» (Ելք L 33): Նոյնպէս և թէ յայդ ելանիցէ, նոյն դատապարտութեան անէծք<sup>6</sup> եղաւ ի վերայ նոցա վասն տերունական մահուն:

ԵՓ. Բայց դու միտ դիր զի ա՞րդ զիպեցան իրքն ի տաւնի անդ: Զի Աստուած ի սկզբանէ այնպէս կարգեաց: Ո՛վ փարիսացիք, լուայք ի Յովհաննէ, եթէ՛ «Սա է Գառն Աստուծոյ, որ բառնայ՝ զենմամբն, զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29): Զի՞նչ հարկ էր, յորում աւուր<sup>7</sup> զենեալ լինէր Գառն փրկութեան ձերոյ: Զայս Գառն փրկութեան մերոյ զենուլ՝ եղև Տէր մեր<sup>8</sup>, ջատագով ճշմարիտ փրկութեան աշխարհի:

ԳՐ. Զատիկ զենաւ մեր Քրիստոս<sup>9</sup>, որ քահանայ էր և պատարագ:

Սկսան չարախաւսել. Գտաք զսա, զի թիւրէր զազգս մեր<sup>10</sup> (ԻԳ 2):

267աԻԳ. Թիւրէր զկարգս հայրենի աւանդութեանցն և խ(//)ոտորեցուցանէր զազգս:

ԵՓ. Արդ՝ Միքիէ մարգարէն, տեսեալ յառաջագոյն զստութիւն քահանայիցն, ասէ. «Գիշեր խաւարացի և արեգակն մթասցի ի տուէ ի վերայ սուտ քահանայիցն<sup>11</sup>» (հմմտ. Միք. Գ 6): Զարիք զան ի վերայ նոցա, խցցին բերանք նոցա, զի յանդիմանին նոքա յարու-

<sup>1</sup> B ամենեքեան

<sup>2</sup> B սրբ.՝ չար խորհրդոյն փխ ցանկութեան

<sup>3</sup> B մինչև յինն

<sup>4</sup> B որ ոչ

<sup>5</sup> A ոչ մուտ են

<sup>6</sup> B անէծ

<sup>7</sup> B յաւուրն յորում

<sup>8</sup> B չիք զենուլ եղև Տէր մեր

<sup>9</sup> B փրկութեան մերոյ փխ զենաւ մեր Քրիստոս

<sup>10</sup> B Եւ ասն ամենեքեան. Ուրեմն դո՞ւ ես Որդին Աստուծոյ: Եւ նա ասէ ցնոսա. Դուք ասէք, թէ ես եմ: Եւ նոքա ասեն. Զի՞նչ ևս պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք ի բերանոյ դորա: Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, ածին զնա առ Պիղատոս: Սկսան չարախաւսել. Գտաք զսա, զի թիւրէր զկարգս մեր (ԻԲ 70-ԻԳ 2):

<sup>11</sup> B չիք Գիշեր խաւարացի... քահանայիցն

*Թեամբ Տեառն: Եւ քարոզք նորա լուսաւորեն զտիեզերս ամենայն, զի դառնան<sup>1</sup> ի ստուծիւն, զոր<sup>2</sup> ինչ ասեն նոքա: Զոր աւրինակ պիղծն մեկնէ զանձն ի սուրբ ժողովոյն, նոյնպէս և նոքա թաքչին ի յայտնել ճշմարտութեանն: Եւ պատեալ կրեցցեն<sup>3</sup> զշրթունս իւրեանց, զի ո՛չ գոյ ի նոսա Բան Աստուծոյ:*

**Արգելու սա տալ հարկս կայսեր և ասէ, թէ Քրիստոս է թագաւոր (ԻԳ 2):**

**ՈԿ** *Քանզի իմացան, եթէ Պիղատոս չառնէ փոյթ զաւրինացն, արքունի վնասիւք ամբաստանեն: Եւ զպարեգաւտս իւրեանց պատռեալ՝ քակտէին<sup>4</sup> առաջի Պիղատոսի՝ պնդելով զՅիսուս վնասակար: Եւ զամենայն ինչ յեղեղուին<sup>5</sup> և յածէին, եթէ զիա՞րզ կարասցեն առնել զնա մահապարտ:*

**ԵՓ** *Նոյն մարգարէ ողբայ զ[յ]անդգնութիւն նոցա՝ ասելով. «Լուարուք զայս, իշխանք տանդ Իսրայելի, որք շինէք զՍիոն արեամբ» (Միք. Գ 9-10): Արիւն ընդ արեան խառնելով, այսինքն՝ արդարովք<sup>6</sup>, իբր Նաբովթ<sup>7</sup> և այլ մարգարէքն, որ<sup>8</sup> ի նոցանէ խողխողեցան (տե՛ս Գ Թագ. ԻԱ 14): Որպէս Տէրն վկայեաց. «Վասն այսորիկ Սիոն արաւարդիւր լիցի և Երուսաղէմ աւերակ<sup>9</sup>» (Միք. Գ 12):*

**267բ** // **Իսկ Պիղատոս հարցանէր<sup>10</sup>. Դո՞ւ ես թագաւորն հր[էից]** (ԻԳ 3):

**Ստ.** *Առեալ ի բերանոյ նոցա զբանս<sup>11</sup>՝ հարցմամբ կամի ճշգրտել:*

**Յիսուս ասէ. Դու ասացեր<sup>12</sup>** (ԻԳ 3):

**ստ.** *Խոստովանեցաւ, թէ երկնաւոր թագաւոր է, որպէս այլուր ասաց ց Պիղատոս<sup>13</sup>. «Իմ թագաւորութիւնս<sup>14</sup> չէ յայ[ս]մ աշխարհէս» (Իմմտ. Յովհ. ԺԸ 36):*

<sup>1</sup> B դառնայ  
<sup>2</sup> B որ  
<sup>3</sup> B կարկեցցեն  
<sup>4</sup> B գանգատէին  
<sup>5</sup> B յեղեղուին  
<sup>6</sup> B արդարաւքն  
<sup>7</sup> A Նաբովթ  
<sup>8</sup> B որք  
<sup>9</sup> B աւերակեցի  
<sup>10</sup> B եհարց զնա և ասէ  
<sup>11</sup> B **չիք** զբանս  
<sup>12</sup> B Նա պատասխանի ետ նմա և ասէ. Դու ասացեր:  
<sup>13</sup> A ց Պ Պիղատոս B յայտնապէս ց Պիղատոս  
<sup>14</sup> B թագաւորութիւնն

Ցքահանայապետսն ասէ Պիղատոս և ցժողովն. Ո՛չ գտանեմ վնաս յայրս<sup>1</sup> (ԻԳ 4):

**ԻԳ** Պիղատոս քննութեամբ գիտաց, եթէ սուտ է ամբաստանութիւն<sup>2</sup> և առ նախանձու հակառակութիւն:

**ՍՏ** Քանզի կամաւ կուրացան հրէայքն և ի չարիս մտաբերէին<sup>3</sup> և ատենան իսկ եղծեալ էին: Եսայիաս<sup>4</sup> ասէ. «Ո՞վ են կոյ[ր]քն, եթէ ո՛չ ծառայքն իմ, և կամ ո՞վ են<sup>5</sup> խուլքն, եթէ ո՛չ պաշտաւնեայքն իմ» (Ես. ԽԲ 19): Նոքա ասեն.

Խուովէ<sup>6</sup> զժողովուրդս<sup>7</sup> և<sup>8</sup> ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստ[ան] (ԻԳ 5):

**ԻԳ** Բանս վրիպակս ղնէին<sup>9</sup> առաջի, թերևս կարասցեն շարժել զցասումն դատաւորին: Իսկ նա, հասեալ<sup>10</sup> ի վերայ կամակոր մտաց նոցա, ո՛չ բարկանայ:

**ԵՓ** Քանզի յառաջ քան զժամանակ խաչին ուսոյց<sup>11</sup> մարգարէն, զոր գործելոց էր<sup>12</sup>: Ո՞վ են այնոքիկ, որ բորբոքեցին զհուր ի շրթանց իւրեանց<sup>13</sup> և զանչափ անաւրէնութիւնս և զկնճիւն նենգութեանց, զոր ժողովեցին ի ժամանակաց յշտեմարան<sup>14</sup> սրտից իւրեանց: Մեծամեծք նոցա լի են անաւրէնութեամբ և բնակիչքն խաւսին զստութիւն: Եւ ես սկսայց հարկանել զնոսս վասն մեղաց իւրեանց. «Սկսեալ ի Գա(//)լիլէէ մինչև ցայս[ր]» (ԻԳ 5):

268ա

Իսկ Պիղատոս գիտաց, եթէ յիշխանութենէն Հերով[վ]դի է, ետ տանել առ նա, որ էր յԵրուսաղէմ եկեալ: Եւ Հերովդէս տեսեալ զՅիսուս՝ ուրախ եղև, զի ցանկայր տեսանել զնա<sup>15</sup> (ԻԳ 7-8):

<sup>1</sup> Ե Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և ցժողովուրդսն. Չգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ:

<sup>2</sup> Ե սպանութիւնն

<sup>3</sup> Ե մտաբերեցին

<sup>4</sup> Ե յԵսայի

<sup>5</sup> Ե չէք են

<sup>6</sup> Ե Եւ նոքա պնդէին և ասէին, եթէ խուովէ

<sup>7</sup> Ե զժողովուրդսն

<sup>8</sup> Ե չէք և

<sup>9</sup> Ե ղնեն

<sup>10</sup> Ե եհաս

<sup>11</sup> Ե ասաց

<sup>12</sup> Ե էին

<sup>13</sup> Ե հուր ինքեանց *փխ* զհուր ի շրթունս իւրեանց

<sup>14</sup> Ե յըշտեմարանս

<sup>15</sup> Ե Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալիլէէ, եհարց, եթէ գալիլէացի իցէ այրն: Եւ իբրև գիտաց, թէ յիշխանութենէ Հերովդի է, ետ տանել զնա առ Հերովդէս, քանզի և նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ: Եւ Հերովդէս իբրև ետես զՅիսուս, ուրախ եղև յոյժ, զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա, քանզի լսէր բազում անգամ

Իգ. *Զի լուեալ էր զհամբաւ սքանչելեաց նորա, զոր գործէր նա:*

Եւ հարցանէր բազում բանս: Եւ նա ո՛չ ետ պատասխանի<sup>1</sup> (Իգ 9):

ԵՓ *Զոր այլք պատասխանաւ<sup>2</sup> առնուն զյաղթուիլն, իսկ Տէր մեր<sup>3</sup> լուսեամբ առ<sup>4</sup>: Զի աստուածային լուսիւն[ն] ճշմարիտ պարտաւորութիւն էին աշխարհի: Որպէս ասացն<sup>5</sup>. «Քաջակերեցէք, զի ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺԶ 33): Առ [յ]ոսուցանելն խաւսող էր և առ դատաստանաւն՝ լուս:*

Կային քահանայապետքն և դպիրքն, և ևս<sup>6</sup> պնդագոյն<sup>7</sup> չարախաւսէին զնմանէ (Իգ 10):

ԻՊ *Քահանայքն երկեան, թէ յիշխանութենէ Հերովդէ[է]ի գլուղ Յիսուս՝ արձակէ զնա: Եւ, տեսեալ զմիտս Պիղատոսի, նորին աղագաւ զնացին զհետ<sup>8</sup> առ Հերովդէս, զի չարախաւսեացեն:*

Ցասուցեալ այսպն<sup>9</sup> (Իգ 11):

ԵՓ *Բանք չարախաւսաց նորա պսակ բոլորեալ լինէր զլիսոյ նորա: Լուեաց նա, զի առաւել աղագակեացեն: Զի թէ խաւսեալ էր ճշմարտութեան<sup>10</sup>՝ լուեցուցանէր ամենայն իրաւք զստուիլն նոցա, որք դատապարտեցին զնա: Փոխանակ զի ասաց Յիսուս զստուգութիւն[ն], ո՛չ եղև նմա փոյթ հաւանեցուցանել զնոսա: Զի կամաւորաբար մեռցի<sup>11</sup> վասն արարածոց փրկութեան:*

268բ Արհամարհեաց իւրաւքն Հերովդէս: // Այսպն արար՝ արկեալ զնովաւ հանդերձ սպիտակ, և ետ տանել առ Պիղատոս<sup>12</sup> (Իգ 11):

Իգ. *Կատարեցաւ ասացեալն. «Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք<sup>1</sup> խորհեցան ի սնոտիս: Եւ իշխանք ժողովեցան ի*

զնմանէ և ակն ունէր նշան ինչ լիեալ տեսանել ի նմանէ: Հարցանէր զնա բանիւք բազմաւք, և նա ոչինչ ետ նմա պատասխանի (ԻԳ 6-9):

<sup>1</sup> Ե *չիք* Զի լուեալ էր զհամբաւ... պատասխանի

<sup>2</sup> Ե դատաստանաւ

<sup>3</sup> Ե մեք *փի* իսկ Տէր մեր

<sup>4</sup> Ե առցուք

<sup>5</sup> *աջ լս.*, պատվանշանով ունի բոլորգիր Զ

<sup>6</sup> Ե *չիք* ևս

<sup>7</sup> Ե պնդագոյնս

<sup>8</sup> Ե զկնի

<sup>9</sup> Ե *չիք* Ցասուցեալ այսպն

<sup>10</sup> Ե ճշմարտութիւնն

<sup>11</sup> Ե մատնեցի

<sup>12</sup> Ե Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ իւրովք գաւրականաւքն: Եւ այսպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս, և ետ տանել զնա անդրէն առ Պիղատոս:

միասին՝ *հաշտութեամբ*, վասն Տեառն և<sup>2</sup> աւծելոյն» (Սաղմ. Բ 1-2), *յորմէ բաշխին ամենայն աւծմունք ի հնումն և ի նորումս:*

**ՍՏ** *Ձի լցցի մարգարէութիւն[ն] Եսայեայ. «Որպէս որոջ առաջի կտրչի անմոռնչ կայ, և առ խոնարհութեանն<sup>3</sup> ո՛չ բանայ զբերանն իւր<sup>4</sup>: Դատաստան նորա բարձաւ» (Ես. ԾԳ 7-8) դատաւորին արդարութեան: Ձի պարտաւորեցաւ վասն մեղաց մերոց և պատժեցաւ վասն մերոյ անաւրէնութեան, զի մեղս բազմաց վերացոյց<sup>5</sup>:*

**ԻԳ** *Ձի, թէ աղբիւր իմաստութեանն խաւսեալ էր, խափանել իմաստութիւնն<sup>6</sup> ո՛չ իշխէր իշխողին ամենեցուն:*

**Պիղատոս կոչեաց զքահանայապետսն և զիշխանսն. Մուծէք զայրս զայս իբրև խռովարար ժողովրդեան, և առաջի ձեր դատեցի և ոչինչ գտայ: Եւ ո՛չ Հերովդէս<sup>7</sup> (ԻԳ 13-15):**

**ԻԳ** *Ձայս ասաց Պիղատոս, զի կամեցաւ արձակել զնա, և նորին աղազաւ առաքեաց առ Հերովդէս: Եւ զայս վկայութեամբ խաւսէին առաքեալքն առ ժողովուրդն հրէից: Արդարև ժողովեցան ի վերայ Որդոյ քո՝ ի քաղաքիս յայսմիկ Հերովդէս և Պոնդոս Պիղատոս, ազգաւք և ժողովրդաւք<sup>8</sup> առնել, զոր ինչ կամք քո յառաջագոյն սահմանեցին ի գիրս մարգարէիցն: Որպէս ոմն ասէ. // «Ոչինչ առնէ Տէր Սաբաւաւթ, զոր ո՛չ սա յայտնեաց յունկն ծառայից իւրոց մարգարէից»<sup>9</sup>, զի կատարեսցին գրեալքն:*

269ա

**Ո՛չինչ արժանի մահու գործեալ էր սորա: Խրատեցից զսա և արձակե[ցից]<sup>11</sup> (ԻԳ 15-16):**

*Ձի հարկ էր մի մի ի<sup>12</sup> տաւնին արձակել նոցա:*

<sup>1</sup> A հեթանոս ժողովնք *փիս* հեթանոսք և ժողովուրդք  
<sup>2</sup> B և վասն  
<sup>3</sup> B խոնարհութեան նորա  
<sup>4</sup> B *չիք* ոչ բանայ... իւր  
<sup>5</sup> B *Ձի լցցի... վերացոյց՝ գրված է Իգանատիոսի «Ձի թէ... ամենեցուն» մեկնությունից հետո*  
<sup>6</sup> B խափանելի իմաստակութիւնս  
<sup>7</sup> B Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յաւուր յայնմիկ, քանզի յառաջ թշնամիք էին միմեանց: Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և զիշխանսն և զժողովուրդն և ասէ ցնոսա. Ածէք մատուցէք ինձ զայրս զայս իբրև զխտորեցուցիչ ժողովրդեանն: Եւ ես ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և վնաս ինչ ոչ գտի յառնըս յայսմիկ, զորոց դուք չարախաւսէքը զըմանէ (ԻԳ 12-14):  
<sup>8</sup> B սրբոյ Որդւոյ քո Յիսուսի  
<sup>9</sup> B *դարձրած՝ ժողովրդովք*  
<sup>10</sup> B *չիք* Որպէս ոմն ասէ... մարգարէից  
<sup>11</sup> B Այլև ոչ Հերովդէս, քանզի ետու տանել զզա առ նա: Եւ արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա, խրատեցից զզա և արձակեցից:  
<sup>12</sup> B ըստ



**ՈԿ** Վասնզի սովոր էր դատաւորն արձակել ի տաւնին զմի ոք ի մահապարտացն: Քանզի Յիսուս ո՛չ ետ պատասխանի, այլ իմն հնարի, զի այնու կամի ապրեցուցանել:

**Նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն. Բարձ զդա և արձակեայ մեզ զԲարաբայն<sup>1</sup> (ԻԳ 18):**

Իբրև զարդար չկամիք արձակել, գեթ իբրև զմահապարտ շնորհեցէք ի՝ տաւնիդ: Ձի խնդրել ռամկին էր սովորութիւն և տալն իշխանին: Իսկ աստ հակառակն գործեցաւ: Ձի դատաւորն կամէր, և նոքա կատողէին՝ սաստիկ զազանացեալ, մահ հնչէին՝ անզգայացեալ նախանձուն: Իշխանն խնդրէր, և նոքա ո՛չ հանդարտէին: Ձի եղծեալ էր կարգ նոցա:

**Որ էր վասն խռովութեան և սպանութեան մտեալ ի բանդ<sup>3</sup> (ԻԳ 19):**

Այսինքն՝ շուրջ յամենեցունց դաւանեալ էր<sup>4</sup>, եթէ չարիս<sup>5</sup> գործեալ էր և մահ:

**Պիղատոս դարձեալ խաւսի երիցս. Ո՛չ վնաս մահու գտի, արձակեցից<sup>6</sup> (ԻԳ 22):**

Ձի կամէր արձակել: Տե՛ս, որչա՞փ հնարի զխնամս[ն], զի զնոսա ապրեցուցէ ի պատժոցն:

**Նոքա աղաղակէին. Խաչեսցի<sup>7</sup> (ԻԳ 23):**

**269բ** Նոքա ջանային ո՛չ թողուլ նշմարանս անգամ անձանց իւրեանց պատասխանոյ<sup>8</sup>: // «Եւ ստիպէին հանել ի խաչն<sup>9</sup>, զՓրկիչն ամենեցուն, մեծաձայն զաւրանայր բարբառ ժողովըրդոցն և քահանայապետիցն<sup>10</sup>» (ԻԳ 23): Քահանայքն հաւանեցուցանէին զբա-

<sup>1</sup> Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին. Բարձ զդա և արձակեա՛ մեզ զԲարաբբա:

<sup>2</sup> Եւ չէք ի

<sup>3</sup> Եւ որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութեան մտեալ ի բանտ:

<sup>4</sup> Եւ դաւանել չէր դաւանեալ էր

<sup>5</sup> Եւ բազում չարիս

<sup>6</sup> Եւ Դարձեալ Պիղատոս սկսաւ խաւսել, քանզի կամէր արձակել զՅիսուս: Եւ նոքա անդէն աղաղակէին և ասէին. Ի խաչ հան զդա: Եւ նա երիցս ասէ ցնոսա. Ձի՞նչ չար արար սա, ոչինչ վնաս մահու գտի ի սմա, խրատեցից զսա և արձակեցից: Պիղատոս դարձեալ երիցս անգամ խաւսի. Ոչինչ վնաս մահու գտի, արձակեցից (ԻԳ 20-22):

<sup>7</sup> Եւ նոքա ստիպէին մեծաձայն և խնդրէին զնա ի խաչ հանել. և զաւրանային բարբառքն նոցա և քահանայապետիցն:

<sup>8</sup> Եւ նոքա ջանային... պատասխանոյ՝ զրված է ԻԳ 23՝ «Նոքա աղաղակէին. Խաչեսցի՛ տնից առաջ

<sup>9</sup> Եւ խաչ

<sup>10</sup> Եւ քահանայիցն

զուժմ ժողովան, հանդերձ ռամկաւն յիւրեանց չարութիւնսն, զոր  
անհնարին վրէժս տալոց են:

**ՍՏ** Վասն որոյ Երեմիաս ասէ. «Եղև ժառանգութիւն իմ ինձ իբրև  
առիւծ յանապատի, և եղ ի վերայ իմ զբարբառ իւր, վասն այնորիկ  
լքի<sup>1</sup> գտուն իմ, թողի<sup>2</sup> զժառանգութիւն իմ» (հմմտ. Երեմ. ԺԲ 8):

**Պիղատոս արձակեաց զԲարաբբայն և զՅիսուս մատնեաց կա-  
մաց նոցա**<sup>3</sup> (ԻԳ 25):

**ԵՓ** Բարիոք ասաց Ջաքարիաս. «Ջարթիցէ սուր ի վերայ հովու[ի]  
իմոյ» (Ձաք. ԺԳ 7)՝ *վճիռ իշխանութեանն Պիղատոսի, այն, որ ետ  
[ի] կամս հրէիցն, զի հանցեն ի խաչ ըստ կամաց իւրեանց: Եւ  
կատարեսցի Բանն Տեառն. «Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ  
ոչխարաց իւրոց» (Յովհ. Ժ 11): Ջի ցուցցէ, եթէ ո՛չ բռնութիւն հնա-  
զանդեցոյց<sup>4</sup> զնա ի խաչ ելանել, այլ ի կամս իւր մատնեաց  
զանձնն<sup>5</sup> փոխանակ ամենեցուն: Որպէս ինքն ասաց. «Իշխանու-  
թիւն ունիմ դնել զանձն իմ, զի դարձեալ միւս անգամ առից  
զնա<sup>6</sup>» (Յովհ. Ժ 18): Եւ յաւուր երրորդի յարեաց<sup>7</sup> (տե՛ս ԻԴ 7):*

**Առեալ զՅիսուս՝ զնացին**<sup>8</sup> (ԻԳ 26) ի գաւիթն:

Եւ ժողովեցին զգունդ զինուորացն ի վերայ նորա:

**Իգ.** Մատթէոս ասէ. «Մերկացուցին<sup>9</sup> զնա, և արկին զնովաւ քղա-  
միդ<sup>10</sup> կարմիր» (Մատթ. ԻԷ 28):

**ՍՏ** Մերկացուցին զանկար պատմուճան նորա և [զ]նափորտիկն:  
Ջայս արարին, իբր թէ զմահ ընդ նմին բառնայ, որպէսզի թէ<sup>11</sup>  
քղամիդն արեան գունով ներկեալ էր: Վասն այնորիկ զգեցուցին,  
270ա //թէպէտև ո՛չ գիտէին, թէ զարիւն մարդկան միացո[յ]ց յինքն  
վասն փրկութեան աշխարհի:

«Ջգեցուցին նմա հանդերձ ծիրանի» (Յովհ. ԺԹ 2):

<sup>1</sup> Բ այսորիկ թողի

<sup>2</sup> Բ Լքի

<sup>3</sup> Բ Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա: Արձակեաց նոցա զԲարաբբայն,  
զոր վասն խոռովութեան և սպանութեան արկեալ էր ի բանտ, զոր և խնդրէինն իսկ: Եւ  
զՅիսուս մատնեաց կամացն նոցա (ԻԳ 24-25):

<sup>4</sup> Բ հնազանդեաց

<sup>5</sup> Բ զանձն իւր

<sup>6</sup> Բ գսա

<sup>7</sup> Բ յարեաւ

<sup>8</sup> Բ Իբրև առին, զնացին:

<sup>9</sup> Բ Մերկացին

<sup>10</sup> Բ քղամիթ

<sup>11</sup> Բ չիք թէ

- ԵՓ** [Ե]բարձ նա զթագաւորութիւնն Իսրայելի: Կարմիր հանդերձիւն կամեցան սպանանել վասն նախատանաց, թէ կամեցաւ թագաւորել Իսրայելի:
- Իգ.(գր.)** «Բոլորեալ պսակ ի փշոց՝ եղին ի գլուխ նորա» (Մատթ. ԻԷ 29, հմմտ. Յովհ. ԺԹ 2), **զի կատակեցեն զնա:**
- Եփ.(Իգ.)** Շրջեցաւ<sup>1</sup> և եղև բարութիւն հաւատացելոց ի նա զլացութիւն<sup>2</sup> նոցա,
- Եփ.** որպէսզի նովաւ խոցոտեսցի թշնամին: Բարձ նա տատասկաւն իւրով զանէծսն Աղամայ: Փշովք<sup>3</sup> պսակեցաւ աստուածային գլուխն՝ բառնալով յինքն զփուշ մեղաց մերոց:
- Իգ.(ստ.)** Եբարձ զհոգս աշխարհիս գլխով իւրով, զի պսակ փառաց, նիւթեալ լուսափայլ, ի ձեռաց Աստուծոյ դիցէ ի գլուխ հաւատացելոց իւրոց<sup>4</sup>, խաչակցելոց նորա:

«Եղէզն յաջոյ ձեռին նորա» (Մատթ. ԻԷ 29):

- ԵՓ** Եղին ի ձեռին Տեառն եղէզն փոխանակ թագաւորական գաւազանի: Եղև նոցա ցուպ հաստատութեան երկրի, զի ծերացաւ և ի վերայ նորա յեցաւ: Զոր աւրինակ՝ դատաւորք եղէգամբ հաստատեն զիրաւունս, նոյնպէս և Քրիստոս եղէգամբ գրեաց և արձակեաց զնոսա ի տանէ իւրմէ:
- ՍՏ** Զոր ընկալաւ ի ձեռին իւրոյ՝ գտկարութիւն մեր<sup>5</sup> նշանակէ, որ եբարձ: Եւ պարգևեաց մեզ զգաւազան թագաւորութեան իւրոյ և քահանայութեան:

Ելեալ արտաքս<sup>6</sup> ըմբռնեցին զոմն Սիմոն<sup>7</sup> Կիւրենացի, որ գայր յանդէ: Եղին ի վերայ նորա զխաչն՝ բերել զկնի Յիսուսի (ԻԳ 26):

- 270ք ԵՓ** // Բարիոք ետուն զխաչափայտն հեթանոսաց: Ինքեանք անձամբ մերժեցին զփրկութիւնն Քրիստոս յինքեանց ապստամբքն, և ընկեցին ի վերայ հեթանոսաց: Իսկ Յովհաննէս ասէ. «Ինքն<sup>8</sup> բարձեալ էր զխաչն<sup>9</sup> և ելանէր ի տեղի կառափելոյն» (Յովհ. ԺԹ 17): Եւ երկոքեանն ճշմարիտ են:

<sup>1</sup> Ե Շրջեցան

<sup>2</sup> Ե սրբ.՝ գաւրութիւն

<sup>3</sup> Ե փշաւք

<sup>4</sup> Ե չիք իւրոց

<sup>5</sup> Ե գտկարութեան մերոյ

<sup>6</sup> Ե չիք Ելեալ արտաքս

<sup>7</sup> Ե Սիմովն

<sup>8</sup> Ե Ինքնին

<sup>9</sup> Ե զխաչափայտն

Ստ. *Զի գառաջինն Սիմոն սպասաւորէր և յետոյ ինքն<sup>1</sup> բառնայր, որպէս [զ]զէն իշխանաց մինչ ի տեղի պատերազմին սպասաւորքն կրեն<sup>2</sup>, և ապ[ա] ինք[ն] բառնայ<sup>3</sup>՝ մարտնչելով: Ո՛չ ի դիպուածոյ եղև այս, այլ Աստուած կամեցաւ, զի սպասաւորեսցեն խաչին Քրիստոսի:*

Իգ. *Որպէս Աբրահամ նախ՝ ի վերայ գրաստուն դնէր<sup>4</sup> զփայտ ողջակիզին և ապա՝ հասեալ ի տեղին դնէր ի վերայ Իսահակայ (տե՛ս Ծննդ. ԻԲ 1-6): Զի, որք բառնան զխաչն մարմնով գնալ զհետ նորա, ի կատարածի յինքն ընկալեալ թեթևացուցանէ սիրողացն զնա:*

Երթայր զհետ նորա ժողովուրդն, և կանայքն կոծէին և ա[շ]խարէին զ[նա]<sup>5</sup> (ԻԳ 27):

ԵՓ *Զաքարիա ասէ. «Կոծի երկիր՝ տունդ<sup>6</sup> Դաւթի, և կանայք նոցա առանձինն՝ տունն<sup>7</sup> Ղևեայ և տունն Շմաւովնի<sup>8</sup>» (Ձաք. ժԲ 12-13), յորմէ դպիրքն ի Դանա և դատաւորքն, որ ինչ անցք անցուցին ընդ Միածինն: Յաւուր յայնմիկ սաստկացի կոծն Երուսաղեմի իբրև<sup>9</sup> զկոծ որդոցն Ամովնայ, որ է Յովսիայ: Թագաւոր նախանձայոյզ որպէս Քրիստոս, իբրև զկոծ նունենեաց<sup>10</sup> կոտորելոց ի դաշտի, և կոծ իւր երանի<sup>11</sup> ի մէջ ժողովրդոց հաւատացելոց: Զի  
27ա *թէպէտև կոծէ, գոյ ի նմա մխիթարող, //թէ<sup>12</sup> առժամայն ցրուեցան առաքեալքն փախստեամբ, և հեռացան մերձաւորքն, և մերժեցան հաւատացեալքն:**

Իգ. *Զի բազումք էին, որ հաւատ[աց]ին ի նա, որոց սուգ էր անհնարին ի ժամանակի անդ:*

Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. Դստերք Երուսաղեմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ ի վերայ անձանց և որդոց: Զի եկեցեն աւուրք, որ երանի տայցեն ամուլ որովայնին և ստեանց, որ ո՛չ դիեցուցին<sup>13</sup> (ԻԳ 28-29):

<sup>1</sup> B յինքն

<sup>2</sup> B բառնան

<sup>3</sup> B իշխանն *փխ* ինքն բառնայ

<sup>4</sup> A եղնէր B եղ

<sup>5</sup> B *չիք* Երթայր զհետ... զնա

<sup>6</sup> B տուն

<sup>7</sup> B տուն

<sup>8</sup> B տուն Շմաւովնի

<sup>9</sup> B և-ը *քերած-ջնջնած*

<sup>10</sup> B նունեաց

<sup>11</sup> B Երեմիա *փխ* երանի

<sup>12</sup> B մխիթարութիւն թէև

<sup>13</sup> B Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, որ կոծէին և աշխարէին զնա:

Իգ. *Ըստ այնմ՝ «Վա՛յ յղեացն և ստնդուացն յաւուր յայնմիկ»* (Մատթ. ԻԴ 19, Մարկ. ԺԳ 17, Ղուկ. ԻԱ 23):

**Յայնժամ ասացեն<sup>1</sup> լերանց, թէ անկիք<sup>2</sup> ի վերայ մեր և բլրոց, թէ ծածկ[եցէք զմեզ]** (ԻԳ 30):

Իգ. *Առ խստութեան դառն ժամանակին: Լնու զմարգարէութիւն[ն]. «Զվաստակս ձեռաց իւրեանց կերիցեն»* (Սաղմ. ԾԻԷ 2), *և՝ «Հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթի»* (Սաղմ. Բ 9): *Ընդ Երուսաղեմայ<sup>3</sup> խաւսի: Եւ զնեղութիւնսն, որ պաշարելոց էր զնա, զեկուցաներ:*

**ԵՓ** *Ի դէպ ելանէ մարգարէութիւն Ովսիայ. «Սնուցի զնոսա և ո՛չ գիտացին, բժշկեցի և ո՛չ առին ի միտ: Ի կապանս սիրոյ ո՛չ ցաւեցուցի զնոսա, և ո՛չ բարկութեամբ խրատեցի զնոսա: Այլ որպէս հայր բարերար, որ բառնայ զծանրութիւն որդոց<sup>4</sup> իւրոց սիրով, կամ իբրև մայր, որ բառնայ ի նոցանէ զլուծ: Կերան և յագեցան և ո՛չ առին ի միտ: Խրատեցի զնոսա, և ո՛չ անսացին հաւատալ ինձ»* (հմմտ. Ովսէ ԺԱ):

**ՍՏ** *Վասն որոյ<sup>5</sup> եղիցին սեղանք նոցա յորոգայթ ի հատուցումն և ի գայթազողութիւն: Խաւարեսցեն<sup>6</sup> աչք նոցա, և զթիկունս նոցա կորացոյ: Զի յայտ արարին զգատակնիք անձանց իւրեանց, // զի ի ժամու խաչին «բախէին զկուրծս»* (ԻԳ 48) *իւրեանց: Եւ ասէին զմարգարէութիւն Յովելիայ<sup>7</sup>. «Վա՛յ մեզ, զի հասեալ են<sup>8</sup> դատաստանք աւերածոյն Երուսաղեմի»* (հմմտ. Յովէլ Ա 15): *Արդ՝ ձգեցաւ<sup>9</sup> կոծ նոցա մինչև ցայտաւր ժամանակի, զի ամ յամէ առնեն նոքա զկոծն վասն աւերածոյ քաղաքին և աշխարհին իւրեանց:*

**Զի թէ<sup>10</sup> ընդ փայտ դալար զայս արարին<sup>11</sup>** (ԻԳ 31):

Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. Դստերք Երուսաղեմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ որդւոց ձերոց: Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն թէ՛ Երանի ամլոց և որովայնից որ ոչ ծնան, և ստեանց, որ ոչ գիեցուցին (ԻԳ 27-29):

<sup>1</sup> B սկսանիցին ասել

<sup>2</sup> B անկերուք

<sup>3</sup> B Երուսաղեմի

<sup>4</sup> B որդւոց

<sup>5</sup> B այնորիկ

<sup>6</sup> B Խաւարեսցին

<sup>7</sup> B *չէք* Յովելիայ

<sup>8</sup> B *չէք* են

<sup>9</sup> A ցգեցաւ

<sup>10</sup> B եթէ

<sup>11</sup> B առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի *փխ* արարին

**ԵՓ** Առակաւ ասաց փայտ դալար վասն աստուածախառն մարմնոյն իւրոյ: «Դալար<sup>1</sup>», զի կերան ի մրգոյ նորա և ուրախ եղեն պտղով նորա:

Ընդ չորն զի՞նչ լինի<sup>2</sup> (ԻԳ 31):

Կամ վասն այնոցիկ, որ<sup>3</sup> ո՛չ ընկալան զպարգևս նորա: «Դալար», զի արար զսքանչելիսն, և «չոր»՝ արդարքն<sup>4</sup>, որ զաւրութիւնս ո՛չ արարին: Եւ բողբո՛ջ<sup>5</sup> պտղոյն իւրեա[ն]ց դառն, որ նշանս ո՛չ արարին: Կամ «դալար», զի զպտուղ մարմնոյ իւրոյ ետ մեզ կերակուր, որով ունէր կեանս յաւիտենականս<sup>6</sup>: Ըստ այնմ՝ «Գեաք յորովայնէ նորա բ[ղ]խեսցեն ջրոց կենդանութեան» (Յովհ. Է 38):

**ԵՓ** Ըստ վկայութեան Միքիայ՝ ասելով. «Արիք գնացէք աստի, զի ո՛չ գոյ Հանգիստ» (հմմտ. Միք. Բ 10), այսինքն՝ ո՛չ թէ այս էր Հանգիստ ինձ, զի մեղիցէք դուք և գերեսջիք, այլ զի պահիցէք զպատուիրանս իմ և կեցջիք: Զի ո՛չ կամեցայք հաւատալ ինձ և պղծեցայք, ահաւասիկ ապականեցարուք այլովքն<sup>7</sup> Հանդերձ:

Ածին երկու[ս] չարագործ[ս] սպան[անել]<sup>8</sup> (ԻԳ 32):

**ՈԿ** Ի մէջ չարագործացն<sup>9</sup> խաչեցին, զի տեսողքն<sup>10</sup> հաղորդ լիցին կարծեաց նոցա: Եւ կամեցան ցուցանել, թէ խաբեբայ է:

272ա **Զոգան ի տեղին անուանեալն գա(//)գաթն, անդ Հանին զնա ի խաչ<sup>11</sup> (ԻԳ 33):**

**ԵՓ** Ըստ վկայութեան Միքիայ. «Ի վերայ գլխոց լերանց, որ ասի կառափն, և բարձրացի ի վերայ ամենայն բլրոց բարձանց» (Միք. Դ 1): Մարգարէացաւ յառաջագոյն վասն խաչին, որ կանգնեցաւ անդ, և բարձրացաւ քան զամենայն երկրպագութիւնս կռոց բարձանց: Եւ նահապետն Յակոբ<sup>12</sup> ետես սանդուխք<sup>13</sup>, որոյ գլուխն

<sup>1</sup> Ե Դալար այն, զի ասաց բազում գործս բարիս ցուցի: Վասն որո՞յ գործոյ քարկոծ առնէք զիս, և ո՞վ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց: Դալար

<sup>2</sup> Ե լինիցի

<sup>3</sup> Ե որք

<sup>4</sup> Ե արդարարքն

<sup>5</sup> Ե բողբոջ

<sup>6</sup> Ե յաւիտենական

<sup>7</sup> Ե այլաքն

<sup>8</sup> Ե Ածին և այլ երկուս չարագործս սպանանել ընդ նմա:

<sup>9</sup> Ե եւ ի միջի նոցա

<sup>10</sup> Ե այն, զի տեսանողքն

<sup>11</sup> Ե Իբրև չոգան ի տեղին կոչեցեալ գագաթն, անդ Հանին զնա ի խաչ: Եւ զչարագործսն զոմն ընդ աջմէ և զոմն ընդ ձախմէ խաչեցին:

<sup>12</sup> Ե Յակոբ

<sup>13</sup> Ե սանդուխտք

Հասանէր մինչև յերկինս, և Տէր Հաստատեալ կայր ի նմա, զոր և տուն Աստուծոյ անուանեաց և զիւղն<sup>1</sup> արկ ի վիմին<sup>2</sup> (տե՛ս ԾՃԱԳ. ԻԸ 12):

**Ստ.** Ձէթ ունէր Յակոբ, վասն երկարութեան<sup>3</sup> ճանապարհին ո՛չ ծարաւիլ<sup>4</sup>, և արկ զայն ի վերայ վիմի անդ: Ջի իբրև դարձցի նշանն, սևացեալ<sup>5</sup> ի ձիթոյ անտի<sup>6</sup> ի քարին, յայտնի լիցի: Ջի գիր<sup>7</sup> եւղ աւսն, և եւղ և<sup>8</sup> ձէթ մի է<sup>9</sup>: Տէր մեր ասէ եւղ ո՛չ ունէին և, թէ՛ «Ձէթ ո՛չ բարձին» (Սատթ. ԻԵ 3), և ի կանթեղ անդ եւղ<sup>10</sup> ո՛չ կաթէ: Եւ զանուն ձիթոյ եւղ ասեմք:

**ԵՓ** Փութացեալ երթիցեն նմա ժողովուրդք բազումք<sup>11</sup>, և սպասաւորեսց[են] նմա հեթանոսք, որպէս և այսաւր յամենայն կողմանց ժողովին անդ: Եւ Յովէլ ասէ. «Ի լեառն Սիոն<sup>12</sup> եղիցին ասարեալքն<sup>13</sup>» (Յովէլ Բ 32), որ է Երուսաղէմ: Խաչն, որ ասարեցոյց զարարածս առհասարակ ի գերութենէ մեղաց, որպէս ասաց Տէր ցապրեալսն, այսինքն՝ ցմարգարէսն, և նոքաւք առ ամենեսին: Երուսաղէմ սուրբ կոչեսցի վասն կամաւոր խաչելութեանն Քրիստոսի: Եւ Ջաքարիաս<sup>14</sup> ասէ. «Պարիսպ Հրոյ» (Ձաք. Բ 5) կոչեսցի, և՛ «քաղաք սուրբ» (հմմտ. Նեեմի ԺԱ 1, Ա Սալ. Բ 7) և՛ «քաղաք արդարութեան» (Ես. Ա 26), զոր անուանեաց ի ձեռն մարգարէիցն:

**272բ** // «Քաղաք պոռնիկ» (հմմտ. Ես. Ա 21) կոչե[ս]ցեն<sup>15</sup>: Արդ՝ այս<sup>16</sup> քաղաք սուրբ և<sup>17</sup> լերինք Երուսաղեմի, յորոյ վերայ զոհէին դիւաց: Եւ բլուրքն, որ խունկս արկանէին, այսաւր լերինք սրբութեան ասին վասն Որդոյն Աստուծոյ բարձրանալոյն:

**Յիսուս**<sup>18</sup> ասէ. Հա՛յր, թող սոցա<sup>19</sup>, զի ո՛չ գիտեն զինչ գործեն (ԻԳ 34):

<sup>1</sup> B գեւղն  
<sup>2</sup> B վերայ վիմին  
<sup>3</sup> B յերկարութեան  
<sup>4</sup> B ծարաւէին  
<sup>5</sup> A սեւացեալ  
<sup>6</sup> B անդի  
<sup>7</sup> B գիրք  
<sup>8</sup> B եղև ~~փի~~ եւղ և  
<sup>9</sup> B են  
<sup>10</sup> B եղ  
<sup>11</sup> B բազում  
<sup>12</sup> B Սիոն  
<sup>13</sup> B ասարեալք  
<sup>14</sup> B Ջաքարիաս  
<sup>15</sup> B ~~չիք~~ կոչեսցեն  
<sup>16</sup> B կոչեսցաւ այս  
<sup>17</sup> B ~~չիք~~ և  
<sup>18</sup> B Եւ Յիսուս  
<sup>19</sup> B դոցա

Իգ. Ահա գիտէին, զի յորժամ զառակս մշակացն առաջի եդ, որք զծառայսն<sup>1</sup> անարգեցին և զորդին սպանին (տե՛ս Մարկ. ԺԲ 7-9), իմացան, թէ առ նոսա ասաց զառակն:

Արդ՝ է՛ր ինչ, որ իմացան, և է՛ր ինչ, որ սատանայ խաւարեցոյց զմիտս նոցա. իբր թմբբեալք ախտիւ<sup>2</sup> գործէին: Զայս ասաց Յիսուս՝ բանալով նոցա դուռն փրկութեան հաւատոց, և եթող նոցա, որք կամէին<sup>3</sup> ապաշխարել: Ըստ որում առաքեալքն քաջալերէին զնոսա՝ ասելով. «Գիտեմք, զի անգիտութեամբ արարէք որպէս իշխանքն ձեր» (Գործք Գ 17) և դուք՝ յորդորելով ի՛<sup>4</sup> հաւատս:

**Բարժանել զհանդերձս նորա զինուորքն<sup>5</sup> (ԻԳ 34):**

Խնայողքն զհանդերձս<sup>6</sup> նորա բաժանեցին<sup>7</sup> ի չորս մասն: Իւրաքանչիւր մասն մի, զոր կարի վատթար մահապարտաց առնէին:

ՈԿ. Որ<sup>8</sup> ո՛չ գուցէ ոք ուրեք: Այնպէս յանհոգս բարժանէին զհանդերձս<sup>9</sup> նորա, որ այնչափ սքանչելի[ս] գործեցան ի նմանէ: Քանզի<sup>10</sup> Յիսուս արգել զծածուկ զաւրութիւն իւր:

«Ի վերայ պատմուճանէի նորա արկանէին վիճակ<sup>11</sup>» (հմմտ. Սաղմ. ԻԱ 19, Մատթ. ԻԵ 35, Ղուկ. ԻԳ 34, Յովհ. ԺԹ 24):

Իգ. Զի էր առանց կարանի, զոր յղեաց Աբգար հայոց արքայ և հաւատով հայցեաց զալ յաշխարհ իւր, որ յառաջ քան զամենայն 273ա հաւատաց և գրեաց նամակ. //«Կա՛մ Աստուած ես<sup>12</sup> և կա՛մ Որդի Աստուծոյ, որ առանց արմատոյ զեղոց բանիւ բժշկես»: Ըստ հաւատոցն տեսանել զփրկչական գծագրութիւն<sup>13</sup>՝ նկարեալ ի պատկերի<sup>14</sup>, և բժշկեցաւ յախտիցն ի Թադեոսէ, որ ի Քրիստոսէ Ղեբէոս<sup>15</sup> կոչեցաւ [յ]երկոտասան առաքելոցն:

<sup>1</sup> B զծառայս նորա

<sup>2</sup> B անխտիւր

<sup>3</sup> B կամեցան

<sup>4</sup> B զնոսա ի

<sup>5</sup> B Եւ բաժանեալ զհանդերձսն նորա արկին վիճակս: Եւ կայր ժողովուրդն հայեցեալ (ԻԳ 34-35):

<sup>6</sup> B զհանդերձ

<sup>7</sup> B բաժանելով

<sup>8</sup> B որպէս թէ

<sup>9</sup> B բաժանէին զհանդերձ

<sup>10</sup> B զի

<sup>11</sup> B Ի վերայ պատմուճանին արկանէին վիճակս:

<sup>12</sup> B սրբ.՝ ես դու

<sup>13</sup> B բառի վերեւում սրբ.՝ պատկերին

<sup>14</sup> B սրբ.՝ դաստառակի փխ պատկերի

<sup>15</sup> A Ղաբէոս



ԳՐ․ Եւ լցաւ մարգարէութիւնն Դաւթի. «Բաժանեցին զհանդերձս իմ, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին<sup>1</sup>» (Սաղմ. ԻԱ 19):

Կայր ամենայն ժողովուրդն հայեցեալ (ԻԳ 35):

ԵՓ Արդ՝ թշնամանաւք իւր պատուեաց զբարեկամս իւր և թշնամանեաց զատելիս իւր: Զի ուսցին թշնամիք նորա զարդարութիւնն նորա և ատելիք<sup>2</sup> զողորմութիւնն նորա: Եւ Ամբակում ասէ. «Դարձին հայեցին<sup>3</sup>, զոր խոցեցին» (տե՛ս 30վի. ԺԹ 37), այսինքն՝ առաքեալքն կամ ամենայն հաւատացեալք, որք հայէին հաւատով<sup>4</sup> ի չարչարանսն Տեառն: Կամ հրէայքն, որք դառնալոց էին յապաշխարութիւնն, որպէս Պաւղոս և այլքն, որք համբառնան զաչս իւրեանց յերկրպագութիւնն Քրիստոսի: Եւ կամ այն. «Զի՞նչ այդ վէրք ի ձեռին քո» (Ձաք. ԺԳ 6): Մարգարէն ի դէմս Քրիստոսի ասաց. «Զոր վիրաւորեցայ ի տան սիրելոյ<sup>5</sup> իմոյ» (Ձաք. ԺԳ 6)՝ Աբրահամու: Հեզնէ<sup>6</sup> զնոսա, թէ որդիք էիք Աբրահամու, զայդ ո՛չ գործէիք: Եւ Եսայի<sup>7</sup> ասէ, թէ՛ «Նորա վիրաւքն բժշկեցաք» (Ես. ԾԳ 5): Եւ Դաւիթ, թէ՛ «Ծակեցին զձեռս իմ և զոտս» (Սաղմ. ԻԱ 18):

ՍՏ Ո՛վ սքանչելեացս<sup>9</sup>, որ «Ափով իւրով զջուրս ծովու չափէ և զերկինս թզաւ և զերկիր ամենայն քլաւ» (Ես. Խ 12), հեղուսաւք բեւեռեալ<sup>10</sup> լինէր ի խաչին: Եւ այլ սքանչումն լսողաց և զարմ(//)անալի մտաց խորհրդական մարդկան: Զի Տէր մեր զմարմինն իւր<sup>11</sup> հնձան արար և զամենայն պտուղս<sup>12</sup> մեղաց՝ հանդերձ պտղովն Ադամայ, որ եկեր հեշտ ցանկութեամբ<sup>13</sup>: Ժողովեաց Տէր մեր ի մարմին իւր, և ել ի նմա<sup>14</sup> ի վերայ խաչին և հա՛ր հնձան<sup>15</sup>, կոխեաց և ճմլեաց զմեզս: Ըստ առաքելոյ. «Խայտառակեաց զիշխանութիւնս<sup>16</sup>» (Կող. Բ 15), զի վասն մեր մեղք և անէծք

273բ

<sup>1</sup> Բ այլաւքն *փիւ* և ի վերայ... արկանէին  
<sup>2</sup> Բ հաւատացեալք  
<sup>3</sup> Բ հայեցին  
<sup>4</sup> Բ հային հաւատովք  
<sup>5</sup> Բ սիրելոյ  
<sup>6</sup> Բ հենգնէ  
<sup>7</sup> Բ Եսայիաս  
<sup>8</sup> Բ ասէ  
<sup>9</sup> Բ սքանչելեացն  
<sup>10</sup> Բ հեղուսեալ բեւեռաւք  
<sup>11</sup> Բ *չիք* իւր  
<sup>12</sup> Բ պտուղ  
<sup>13</sup> Բ զհեշտ ցանկութիւնք  
<sup>14</sup> Բ բեւեռեցաւ նովաւ *փիւ* ել ի նմա  
<sup>15</sup> Բ եհար հնձան  
<sup>16</sup> Բ նշաւակեալ զնոսա յանձին իւրում *փիւ* զիշխանութիւնս

ասացաւ: Ըստ այնմ, թէ՛ «Անիծեալ, որ կախեալ կացէ՛ վիայտէ»  
(Բ Օր. ԻԱ 23):

**Անգոսնէին զնա իշխանքն Հանդերձ նոքաւք**<sup>2</sup> (ԻԳ 35):

**ՍՐԿ** Իսկ մեք Աստուծոյ խոստովանիմք զմահն, որպէս զամենայն  
գործս<sup>3</sup> և զկիրս նորա: Վասնզի<sup>4</sup> ուսաք ի Թո[վ]մայէ, զբեռեալն  
ի խաչին և զաշտէիւ խոցեալն Տէր և Աստուած մեր խոստովանե-  
լով (տե՛ս Յովհ. Ի 28): Արդ՝ չարչարի անչարչարելին և մեռանի ան-  
մահն՝ ոչինչ յիւրայոցն այլայլեալ կամ փոփոխեալ:

**ԻԳ** Յայնժամ Հայհոյէին զնա ծերքն և դպիրքն և իշխանք, և իշ-  
խանք<sup>5</sup> ժողովրդեանն՝ քահանայ[ա]պետքն<sup>6</sup>:

**ԵՓ** Լցաւ մարգարէութիւն Միքիայ վասն յանդգնութեան տիրա-  
պան ազգին հրից, որ ասաց. «Խնդրեցի ես այր մի խրամակար-  
կատ ցանկոյ<sup>7</sup>, որ կայցէ ի խրամի առաջի իմ ի վերայ երկրի, զի  
մի՛ ապականեցից<sup>8</sup> զնա: Եւ ո՛չ գտի»: Ի Սողոմ տասն արդար  
խնդրեցաւ (տե՛ս ԾԱՆԳ. ԺԸ 32), բայց յերուսաղէմ, ի մէջ Իսրայելի  
յաւուր խաչելութեան Տեառն, մի: Եւ ո՛չ<sup>9</sup> գտաւ, զի անարգեցին  
նոքա զարդարութիւնս իւրեաց իբրև զհանդերձս, որ ուտէ<sup>10</sup> ցէց:  
Այնպէս ապականեցին նոքա զբարութիւնս, և զպարկեշտութիւնս  
274ա աղտեղացուցին, // և գարբութիւն[ս] պղծեցին, զի հնարէի[ն  
զ]ճամարտութիւնն սուտ առնել:

**Ասէին. Զայլս**<sup>11</sup> ապրեցոյց՝ ապրեցուցէ<sup>12</sup> զանձն<sup>13</sup> (ԻԳ 35):

ստ. Ի խաչելութեան նորա ո՛չ ոք էր անդ ի հրէիցն, զի գառնն ու-  
տելոյ էր գատկին, և ո՛չ էր արժան կալ անդը<sup>14</sup> և ի մահապարտն  
մերձենալ: Իբրև հանին ի խաչ, թողին հրէայքն ի զինուորսն Պի-  
ղատոսի և զնացին:

Ոկ.(գր.) Զառաջին նշանսն այսու ջանային եղծանել: Ո՞ պիղծք<sup>15</sup> յա-  
մենայնի, միթէ մարգարէքն չէին մարգարէ՞ք և ո՛չ արդարքն ար-

<sup>1</sup> Բ կայցէ

<sup>2</sup> Բ բերված է հաջորդ տան՝ «Յայնժամ Հայհոյէին...»-ից առաջ

<sup>3</sup> Բ զգործս

<sup>4</sup> Բ վասն որոյ

<sup>5</sup> Բ չիք և իշխանք

<sup>6</sup> Բ քահանայապետաւքն հանդերձ

<sup>7</sup> Բ ցանգոյ

<sup>8</sup> Բ ապականեցի

<sup>9</sup> Բ մի ոչ

<sup>10</sup> Բ զհանդերձ, որ ուտիցէ

<sup>11</sup> Բ զայլսն

<sup>12</sup> Բ ապրեցուցէ և

<sup>13</sup> Բ բարված է հաջորդ մեկնության՝ «Զառաջին նշանսն...»-ից առաջ

<sup>14</sup> Բ անդ

<sup>15</sup> Բ պիղծք

դա՞րք, զի ո՛չ ապրեցոյց զնոսա Աստուած ի վշտաց: Նա՛ աւանի՞ր կ էին, և զի՞նչ զոյգ ձեր անաւրէնութեանդ կայցէ: Զի թէ զնոցա փառսն չկարացին եղծանել ձեր չարութիւնդ և ո՛չ վիշտքն, որ ի վերայ եկին, որչա՞փ ևս առաւել առ իս ո՛չ պարտիք գայթաղել, որ<sup>1</sup> բանիւք և արդեամբք միշտ զձեր չարութիւնդ կամէի ածել յուղղութիւն:

**Թէ<sup>2</sup> դա է Քրիստոս Որդի Աստուծոյ ընտրեալն** (ԻԳ 35):

Իջցէ այժմ ի խաչէդ և հաւատասցուք: Այս բանք էին պատճառք թերահաւատութեանց<sup>3</sup>, զի մեծ քան զիջանելն ի խաչէն գործեաց՝ զդեւս հալածեաց, զբորոտս սրբեաց, ի հինգ նկանակէն զհինգ հազարսն յագեցոյց<sup>4</sup>, զմեռեալս[ն] յարոյց, զՂազար չորեքաւրէ մեռեալ և իջեալ ի դժոխս<sup>5</sup> իբրև զկենդանիս կոչեաց<sup>6</sup>, և ո՛չ հաւատացէք:

**Եփ.** Այսին առնելովն՝ բարձրացուցանէին զնա: Զի թէպէտ այնու, որ ո՛չ էջ ի խաչէն, թուեցաւ, թէ տկարանայ<sup>7</sup>: Սակայն այնու, զի ասացին, թէ՛ «Զայլս ապրեցոյց» (Մատթ. ԻԷ 42), վկայեն նորա, թէ կենդանարար է նա<sup>8</sup>:

**274բ** //«Զինուորքն ետուն նմա զինի զմուսեալ և ղեղի<sup>9</sup>» (Մատթ. ԻԷ 34, *հմմտ.* Մարկ. ԺԵ 23, Ղուկ. ԻԳ 36):

Վասնզի<sup>10</sup> մահապարտացն տային զինի և զմուռ<sup>11</sup>, զի թմբրեցուցիչ<sup>12</sup> է և չտայ իմանալ զցաւոցն զաւրութիւն կամ<sup>13</sup> յիմար առնէ, զի մի՛ անարգանս ինչ խաւսեսցին խաչողաց իւրեանց: Իսկ Քրիստոս ո՛չ առ, զի ո՛չ երկնչէր և ո՛չ անարգանս զնէր ումեք, զի կամաւ մեռան[ի] ի վերայ արարածոց փրկութեան:

**Ոկ.** Իսկ Մատթէոս ասէ. «Ճաշակեաց և ո՛չ կամեցաւ [ը]մպել» (*հմմտ.* Մատթ. ԻԷ 48): Բայց դոյզն մի ճաշակեաց, որ ցուցանի, թէ արբ, զոր յաւելուածս<sup>14</sup> նախատանաց առնէին: Եւ լնու<sup>15</sup> մարգա-

<sup>1</sup> B գայթաղել զի  
<sup>2</sup> B եթէ  
<sup>3</sup> B թերահաւատութեան նոցա  
<sup>4</sup> A յագեցոյց  
<sup>5</sup> B **չիք** և իջեալ ի դժոխս  
<sup>6</sup> B կոչեաց ի դժոխոց  
<sup>7</sup> B տկար է նա  
<sup>8</sup> B **չիք** նա  
<sup>9</sup> B Այսին առնէին զնա և զինուորքն՝ եկեալ առաջի:  
<sup>10</sup> B Զի  
<sup>11</sup> B զմուսեալ  
<sup>12</sup> B թմբրեցուցիչ  
<sup>13</sup> B և կամ  
<sup>14</sup> B յաւելուած  
<sup>15</sup> B լնոյր

րէութիւնն Դաւթի. «Ետունն ինձ կերակուր ղեղի<sup>1</sup>» (Սաղմ. ԿԸ 22):  
Յովհաննէս<sup>2</sup> ասէ. «Ճաշակեաց և ասէ. Ամենայն ինչ կատարեալ է»  
(*հմմտ.* Յովհ. ԺԹ 30), մարգարէութիւն[ն], որ գուշակեաց նմա. «Ի  
ծարաւի իմ արբուցին ինձ քացախ» (Սաղմ. ԿԸ 22):

**Եփ.** Փոխանակ անուշ<sup>3</sup> գինոյն, որ ուրախ արար զնոսա Յիսուս,  
նոքա կարկառեցին նմա քացախ: Եւ նա փոխանակ ղեղոյն<sup>4</sup>  
գթութեամբ զաւրութեան իւրոյ զգառնութիւն[ն] հեթանոսաց  
քաղցրացոյց:

**Սրկ.** Աստուած ասի չարչարեալ<sup>5</sup> և անչար[չար]ելի մնացեալ  
ճշմարտապէս ըստ աստուածութեանն, զի ո՛չ է արժան յետ միա-  
ւորութեանն յերկու[ս] բարժանել<sup>6</sup> զմիացեալ բնութիւնն: Զի մի՛  
ըստ Նեստորի երկակս<sup>7</sup> ի ներքս ածեմք Քրիստոսս<sup>8</sup>, և մի՛ բնաւ ի-  
մասցուք առանձինն ինչ մարդոյն և առանձինն Աստուծոյ՝ զկնի  
մարմնանալոյն<sup>9</sup>, մի<sup>10</sup> ձայն և մի գործս և կիրս և մի<sup>11</sup> կամս: Զի  
մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ [նախք]ան<sup>12</sup> զյա-  
ւիտեանս, նոյն<sup>13</sup> ինքն ի Հաւրէ ի լրման ժամանակաց՝ ի սրբոյ  
Կուսէն<sup>14</sup> ծնեալ:

275ա // Զամենայն ինչ, զոր կրեաց կամ գործեաց: Միևնոյն նմա ա-  
սեմք, զնոյն<sup>15</sup> ի[ն]քն բովանդակեալ<sup>16</sup> յամենայնի և անբովանդա-  
կելի<sup>17</sup>: Կրեալ ի գիրկս և կրաւղ զամենայն: Քաղցեալ և կերակ-  
րիչ<sup>18</sup>, ծարաւի<sup>19</sup> և արբուցիչ, զարգացեալ և ամենակատար, ունայ-  
նացեալ և լի, այլև՝ լցուցիչ: Մեծատուն և աղքատ, աշխատեալ և  
Հանգուցիչ: Անէծք և աւրհնութեան բաշխող<sup>20</sup>, ծառայ և Տէր,  
կերպարան Հաւր և կերպարան ծառայի: Առանց դպրութեան և

<sup>1</sup> B Ետունն ի կերակուր ինձ լեղի և ի ծարաւ:

<sup>2</sup> B Մատուցանէին նմա քացախ (*ԻԳ 36*): Յովհաննէս

<sup>3</sup> B անոյշ

<sup>4</sup> B լեղոյն

<sup>5</sup> B սրբ.՝ ի մարմնով չարչարեալ

<sup>6</sup> B բաժանել

<sup>7</sup> A Բ

<sup>8</sup> B Քրիստոս

<sup>9</sup> B մարդանալոյն

<sup>10</sup> B սրբ.՝ այլ մի

<sup>11</sup> B ներգործութիւն, մի բնութիւն և կիրս ասեմք և *փիս* գործս... մի

<sup>12</sup> A բառը վնասված է

<sup>13</sup> B Եւ նոյն

<sup>14</sup> B Կուսէ *փիս* սրբոյ Կուսէն

<sup>15</sup> B և զնոյն

<sup>16</sup> A բաւանդակեալ

<sup>17</sup> A անբաւանդակելի

<sup>18</sup> B կերակրիչ ամենայնի

<sup>19</sup> B ծարաւ

<sup>20</sup> B բաշխիչ

*վարդապետ: Տկարացեալ մարմնով և հզաւր զաւրութեամբ: Զարհուրեալ և քաջալերիչ աշխարհի: Զի իւրացոյց զամենայն յազազս մարդանալոյն:*

**Թէ<sup>1</sup>** դու ես թագաւորն հրէից, փրկեա՛ զաճն քո (ԻԳ 37):

**Ոսկ.** Ստեղ ջանային, եթէ ո՛չ է թագաւոր, վասնզի հեգնելով<sup>2</sup> ծաղր առնէին անոպայ<sup>3</sup> զինուորքն: Յիրաւի նախատէ զնոսա Մովսէս՝ ասելով. «Զա՞յդ Տեառն Հատուցանէք դուք, զինուո՞րք, յիմարք<sup>4</sup> և ո՛չ իմաստուն» (Բ Օր. ԼԲ 6):

**էր<sup>5</sup>** գրեալ ի վերայ<sup>6</sup> յուներէն և դադմատերէն [և] երրայեցերէն<sup>7</sup> գրով, թէ<sup>8</sup> Սա է թագաւոր<sup>9</sup> հրէից (ԻԳ 38):

**ԻԳ** Քանզի գրեաց Պիղատոս ի տախտակի զվնաս նորա, որով պարտաւորեցաւ նա մեռանել: Քանզի ասացին ցՊիղատոս. «Մի՛ գրել<sup>10</sup> թագաւոր հրէից» (Յովհ. ԺԹ 21): Եւ<sup>11</sup> նա վիճէր՝ ասելով. «Զոր ինչ գրեցի՝ գրեցի» (Յովհ. ԺԹ 22): Արդ՝ գրեաց յերիս գիրս, 275բ *զի ամենայն ոք ընթերցի<sup>12</sup>: // Եւ դարձեալ մարգարէանայր, թէ ընդ ամենայն ազգս ձգելոց է թագաւորութիւն նորա»* (տե՛ս Ա 32-33):

**ԵՓ** «Յեա<sup>13</sup> այսորիկ հեղից յոգոյ իմմէ<sup>14</sup> ի վերայ ամենայն մարմնոյ» (Յովէլ Բ 28): *Զի ո՛չ որպէս հրէիցն էր ի միում ժողովրդեան[ն] և ի միում երկրի և եթ, այլ ընդ բնաւ տիեզերս, «ի վերայ ամենայն մարմնոյ»* (Յովէլ Բ 28), *զի հեղի ես ի մէջ Իսրայելի ապերախտ ազգի[ն]: Եւ աւրէնք Նոր<sup>15</sup> տուաւ Իսրայելի: Զկնի<sup>16</sup> Քրիստոսի խաչելութեանն թարգմանեցին ի նմանէ ամենայն լեզուք: Եւ աւրհնեսցեն<sup>17</sup> զայն, որ ետն զնա, զի կատարեսցի գրեալն, թէ՛ «Ամենայն հոգիք աւրհնեսցէք զՏէր»* (Սաղմ. ԾԾ 6):

<sup>1</sup> B եւ ասէին եթէ

<sup>2</sup> B հեգնելով

<sup>3</sup> B հանապազ

<sup>4</sup> B յիմար

<sup>5</sup> B եւ էր գիր

<sup>6</sup> B վերայ նորա

<sup>7</sup> A երրայեցաւրէն

<sup>8</sup> B եթէ

<sup>9</sup> B արքայն

<sup>10</sup> B գրեր

<sup>11</sup> B իսկ

<sup>12</sup> A ընթերցցի

<sup>13</sup> B Յովէլ. յեա

<sup>14</sup> B յոգոյ իմոյ

<sup>15</sup> B աւրէնքն որ

<sup>16</sup> B ի

<sup>17</sup> B աւրհնեսցին

*Ըստ այնմ, թէ՛ «Ընդ<sup>1</sup> ամենայն երկիր ել բարբառ նորա» (Սաղմ. ԺԸ 5) և՛ «Ծանիցեն, թէ անուն քո Տէր է» (Սաղմ. ՉԲ 19) և՛ «Դու միայն բարձրեալ ես, թագաւոր, ի վերայ ամենայն երկրի» (Սաղմ. ԴԶ 9):*

*Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն<sup>2</sup> հայհոյէր զնա և ասէր. Ո՞չ դու ես Քրիստոսն, փրկեա՛ զանձն քո և զմեզ (ԻԳ 39):*

**Իգ.** *Աւագակն, որ ի ձախմէ՞ Յիսուսի, սկսաւ հայհոյել զնա՝ ի կողմն հրէիցն եղեալ, զի հաճեսցէ զմիտս նորա, թերևս իջուցեն զնա<sup>4</sup>:*

**ԵՓ** *Ձի ո՛չ իջոյց զնա ի խաչէն, որպէս խնդրեաց: Ձի մեծացուցէ զայն, որ ի խաչեալն հաւատայ, և զի նշանաւք<sup>5</sup> դիւրին է ումեք աշակերտել՝: Իսկ հզաւրագոյն<sup>7</sup> այն է, որ առանց նշանից<sup>8</sup> հաւատայ<sup>9</sup>: Իսկ Մարկոս ասէ, թէ երկուքն նախատէին (տե՛ս Սարկ. ԺԵ 32):*

**Ոկ.** *Յառաջագոյն երկուքն նախատէին<sup>10</sup>, զի ի վերայ խաչին կային և թշնամանէին, և, յանկարծակի, մինն դարձաւ:*

**276ա** *Սաստեաց ընկերին՝ ասելով. Դու չերկ(//)նչի՞ս յԱստուծոյ, զի ի նմին պատժի կաս: Եւ որոց գործեցաք՝ առնումք հատուցումն, իսկ սա ո՛չ արար չար<sup>11</sup> (ԻԳ 40-41):*

*Տեսանե՞ս զերկոսեանն ի չարութեան, այլ ո՛չ երկոքեանն մտանեն<sup>12</sup> ի դրախտն: Ձի մինն զարքայութիւն ժառանգեաց<sup>13</sup> և միւսն ի գեհեանն առաքէր<sup>14</sup>: Եւ, որ անհնարին չարեաւք լցեալ էր և որմափորութեամբ զժամանակսն ծախեաց, տեսանէր զամենայնն և լսէր յայնմ ժամու և խոստովանէր ի նա, թէպէտ ամ-*

<sup>1</sup> B սրբ. է ձախ լս.

<sup>2</sup> B կախելոցն չարագործաց

<sup>3</sup> A ձախմէ

<sup>4</sup> B չիք զնա

<sup>5</sup> A նշանուք

<sup>6</sup> B հաւատայ *փի* աշակերտել

<sup>7</sup> B մեծագոյն

<sup>8</sup> B նշանաց

<sup>9</sup> B աշակերտի *փի* հաւատայ

<sup>10</sup> B չիք երկուքն նախատէին

<sup>11</sup> B Պատասխանի ետ ընկերն՝ սաստելով նմա, և ասէ. Չերկնչիցի՞ս դու Աստուծոյ, զի ի նմին պատժի կաս: Եւ մեք յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն առնումք զհատուցումն, և սա ավիրատ ինչ ոչ գործեաց:

<sup>12</sup> B մտին

<sup>13</sup> B ժառանգէր

<sup>14</sup> B երթայր

բոխն նախատէր զՅիսուս: Իսկ աւագակն ճշմարիտ հաւատով զաւրանայր:

ԻԳ. Բարեմիտ գոլով արդարացաւ՝ սաստելով չարաբարոյին, այլև զանձն համարեցաւ արժանի մահու, և զՓրկիչն արդարացոյց:

Ասէ ցՅիսուս. Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յարքայութեան քո՞<sup>1</sup> (ԻԳ 42):

ՈԿ Տեսանե՛ս<sup>2</sup>, որպիսի՞ խոստովանութիւն խոստովան լինէր և զարքայութիւն խնդրէր, և բանիւ<sup>3</sup> խոստովանութեամբ զղբախտն բանայր:

Յիշեայ զիս, Տէ՛ր<sup>4</sup> (ԻԳ 42):

ԵՓ Զի ետես աչաւք հաւատոցն<sup>5</sup> զպատիւ Տեառն մերոյ փոխանակ անարգանաց նորա, և զփառս նորա փոխանակ նախատանաց Տեառն<sup>6</sup>: Վասնզի<sup>7</sup> ես ո՛չ մոռացայ այժմ, որ երևի<sup>8</sup> բեւեռաւքս և խաչիւս, զայն, որ ի կատարածի անդ զայ արդարահատոյց[ն]: Եւ դատաստան նորա որպէս լոյս ծագէ, յոր ո՛չ գոյ խաւար անգիտութեան, զի յայս դատաստանիս արդարք պատժին և անիրաւք զերծանին: Իսկ սա ո՛չ այնպէս:

276բ ԻԳ Արդ՝ բացան դրունք մտաց նորա, և տես(//)անէր զկախեալն զփայտէ՝ եկեալ փառաւք Հաւր:

Ասէ<sup>9</sup> ցնա Յիսուս. Այսաւր<sup>10</sup> ընդ իս իցես ի դրախտին (ԻԳ 43):

ԵՓ Իբրև ետես Տէր մեր, թէ մեծացան հաւատք նորա քան զբազմաց, ոչինչ փոյթ եղև նմա վասն նեղութեան իւրոյ: Ետ նմա խոստումն մաւտաւոր<sup>11</sup>, այլ վասն թողութեան մեղաց նորա, և մեծացոյց զնա առաւել քան զբազումս: Եւ, զի ո՛չ խնդրեաց աւագակն հատուցումն մաւտաւոր հաւատոց իւրոց, զի փոքր երևէր նա յաչս անձին իւրոյ, զի աւագակ էր, վասն այնորիկ<sup>12</sup> և Տէր մեր<sup>13</sup> կարճեաց և ետ<sup>14</sup> երկրպագուաց իւրոց<sup>1</sup>՝ ասելովն «այ-

<sup>1</sup> Եւ ասէ ցՅիսուս. Յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով:  
<sup>2</sup> Ե Տես  
<sup>3</sup> Ե բանիւք  
<sup>4</sup> Ե չիք Յիշեայ զիս Տէր  
<sup>5</sup> Ե հաւատոյն  
<sup>6</sup> Ե Տեառն մերոյ  
<sup>7</sup> Ե Եւ ասէ ցՅիսուս. Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ գայցես արքայութեամբ քով (ԻԳ 42): Վասնզի  
<sup>8</sup> Ե սրբ.՝ երևիս  
<sup>9</sup> Ե Եւ ասէ  
<sup>10</sup> Ե Ամէն ասեմ քեզ, այսաւր  
<sup>11</sup> Ե չիք Ետ նմա... մաւտաւոր  
<sup>12</sup> Ե այսորիկ  
<sup>13</sup> Ե չիք մեր  
<sup>14</sup> Ե չիք և ետ

սաւր», և ո՛չ յետ կատարածի աշխարհի: Եւ յայտ արար, թէ մեծատունն է ողորմութիւնն Տեառն: Զի ի ժամանակի, յորժամ ընկալաւ զփոխ հաւատոց յաւազակէն, դարձոյց և ետ նմա պարզես ձրի, և անչափ սփռեաց առաջի նորա զգանձս իւր: Եւ եբաց նոյն ժամայն զդրախտն առաջի նորա, և տարաւ եմոյծ, կացոյց զնա ի վերայ ամենայն գանձուց իւրոց:

**ՍՏ** Ի ձեռն աւազակին բացաւ դրախտն և ո՛չ ի ձեռն միոյ ուրուք արդարոյ:

**ԳՐ.** Քանզի<sup>2</sup> ի ձեռն Ադամայ արդարոյ, որ պարտաւորեցաւ<sup>3</sup>, փակեցաւ, նոյնպէս ի ձեռն պարտաւորին, որ արդարացաւ, բացաւ:

**ԻԳ.** Արդ՝ զի զգիր պարտեացն Ադամայ պատառեաց ի խաչին, որում փակեցաւ դրախտն<sup>4</sup>, այսաւր բացեալ լինի ի պատառեալ<sup>5</sup>

**277ա** դատակնքաց մահու, յի զի ամենայն ինչ յառաջին կարգն դարձաւ: Եւ զոր աւրինակ՝ սատանայ ի թուոյ երկոտասանիցն եհան զՅուդայ և ած<sup>6</sup> ընդ իւր ի տանջանս, ըստ նմին և Յիսուս ելոյծ զմահ և կորզեաց զաւազակն ի նմանէ և ընդ իւր էած ի կեանս:

**ՍՏ** Լցաւ աստ մարգաէութիւնն Ամբակումայ, որ ասաց. «Ի մէջ երկուց կենդանեաց» (Ամբ. Գ 2)՝ մահու<sup>7</sup>, որ կենդանի էր [յ]աշխարհի, և զկենդանիս մեռուցանէր: Եւ կենդանութեամբ աստուածայնաւքն<sup>8</sup> յերկինս ծանուցաւ<sup>9</sup> ար[դ]արոց և<sup>10</sup> սրբոցն, կամի<sup>11</sup>. «Ի մէջ երկուց զազանացն» (Ամբ. Գ 2): Եւ<sup>12</sup> աւրն ուրբաթ զատկին և վեցերորդ ժամ՝ ըստ Մատթէոսի (տե՛ս Մատթ. ԻԵ 45) և Ղուկայ<sup>13</sup> (տե՛ս ԻԳ 44) և Յովհաննու (տե՛ս Յովհ. ԺԹ 31): Զի ոմանք ասացին, եթէ սոքա կարգեցին ընդ տուրնջեանն զժամս գիշերոյն, յորում սկիզբն արարին ի տան քահանայ[յ]պետին ձաղանաց և այպանելոյ և հարկանելոյ: Եւ այնպէս վեց ժամ համարին զչարչարանսն մինչ<sup>14</sup> ի խաչն: Իսկ Մարկոս՝ զերրորդ ժամն, որ հանին

<sup>1</sup> Բ իւրոց և ետ նմա խոստումն մաւտաւոր

<sup>2</sup> Բ Գր. Քանզի

<sup>3</sup> Բ **չիք** որ պարտաւորեցաւ

<sup>4</sup> Բ դրախտն առաջին

<sup>5</sup> Բ **չիք** ի պատառեալ

<sup>6</sup> Բ էած

<sup>7</sup> Բ բառի վերեւում սրբազրուած՝ այսինքն

<sup>8</sup> Բ աստուածայնովքն

<sup>9</sup> Բ բառի վերեւում սրբ.՝ որ

<sup>10</sup> Բ **չիք** և

<sup>11</sup> Բ կամ

<sup>12</sup> Բ էր

<sup>13</sup> Բ Ղուկասու

<sup>14</sup> Բ մինչև



զնա ի խաչ (տե՛ս Մարկ. ԺԵ 25), յորում ետ վճիռ Պիղատոս՝ տալով զնա<sup>1</sup> ի ձեռս նոցա:

Ի վեցերորդ ժամէն խաւար եղև ի վերայ երկրի մինչ ցիննե-  
րորդ ժամն, խաւարեցաւ արեգակն<sup>2</sup> (ԻԳ 44):

**ՍՏ** Ո՛չ որպէս յարեգական պակասութենէ: Զիա՞րդ<sup>3</sup> հնարէր պա-  
կասիլ արեգականն<sup>4</sup> ի լրման լուսնին, քանզի զատիկն ի չորեք-  
տասներորդ լուսնին լինէր: Բայց այս վասն չարչարանաց Արար-  
չին հրաշագործեցաւ, և արտաքոյ քան զբնութիւն արեգականն  
277բ պակասութեանն: Յետ մարգարէութեանն // այսչափ<sup>5</sup> մեղուցեալ  
յիս<sup>6</sup> ժողովրդեանս՝ արժանապէս մեկուսացան ի լուսոյն և եղիցին  
ի խաւարի: Ըստ Եսայեայ<sup>7</sup>. «Մինչդեռ մնային լուսոյն<sup>8</sup>, եղև նո-  
ցա խաւար» (Ես. ԾԹ 9): Եւ այլ մարգարէ՝ «Բայց դու, Իսրայէ՛ղ,  
լոյսն քո աւրինաւք և մարգարէիւք և քահանայիւքն քեզ խաւա-  
րեցաւ, զի պատուական արիւն իմ հեղցի վասն հեթանոսաց»:

**ԵՓ** Եւ Ովսէ՞ս ասաց բանիւ Տեառն. «Տաց նշան<sup>10</sup> յերկինս ի վեր»  
(Յովկ Բ 30)՝ արեգակնն, որ խաւարեցաւ ի ժամ խաչելութեանն  
Տեառն, «Եւ յերկիր խոնարհ<sup>11</sup>» (Յովկ Բ 30)՝ զչարժելն երկրի և զվի-  
մացն հերձանիլն ասէ, «արիւն<sup>12</sup>» (Յովկ Բ 30)՝ այն, որ ասացին ի  
վերայ նոցա և որդոց նոցա<sup>13</sup> (տե՛ս Մատթ. ԻԵ 25), փոխանակ արեանն  
առաջնոյ, որ ցանեցաւ ի վերայ նոցա ի փրկութիւն արիւնս այս  
վերջին, որ ներկաւ յանձինս նոցա ի դատապարտութիւն: «Մըրիկ  
ծխոյ» (Յովկ Բ 30)՝ խաչահանուացն, և լոյս փառաց պարզեաց նո-  
րա հեթանոսաց:

Վա՛յ նոցա, զի հասեալ է աւրն<sup>14</sup> Երուսաղեմի: «Արեգակնն<sup>15</sup>  
դարձցի ի խաւար և լուսին<sup>16</sup> յարիւն, մինչև եկեսցէ աւր Տեառն

<sup>1</sup> Ե տալ *փի* տալով զնա  
<sup>2</sup> Ե եւ էր իբրև վեցերորդ ժամ, և խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցիննե-  
րորդ ժամ, խաւարեցաւ արեգակն:  
<sup>3</sup> Ե և զիարդ  
<sup>4</sup> Ե լուսոյ արեգականն  
<sup>5</sup> Ե այս  
<sup>6</sup> Ե *չեք* յիս  
<sup>7</sup> Ե յեսայի մարգարէի  
<sup>8</sup> Ե լուսոյ  
<sup>9</sup> Ե Յովսէ և  
<sup>10</sup> Ե նշանս  
<sup>11</sup> Ե ի խոնարհ  
<sup>12</sup> Ե արիւնն  
<sup>13</sup> Ե ինքեանց և որդւոց իւրեանց *փի* նոցա և որդոց նոցա  
<sup>14</sup> Ե աւրն  
<sup>15</sup> Ե արեգակն  
<sup>16</sup> Ե լուսինն

մեծն<sup>1</sup> և երևելին» (Յովել Բ 31, Գործ. Բ 20, *հմտ.* Յայտ. Ձ 12): Ո՛չ այն, որ ի մարմնոյն, այլ այն, որ յերկնից<sup>2</sup> գայ: Կամ թէ աւրն Յարութեան նորա, որ է աւր մեծ: Զի ի նմա լիցի<sup>3</sup> յիշատակ ընդ ամենայն տիեզերս, որ թագաւորեաց յարութեամբն իւրով: Եւ Զաքարիայ<sup>4</sup>՝ «Եղիցի յաւուր յայնմիկ՝ ո՛չ եղիցի լոյս» (Ձաք. ԺԴ 6), այսինքն՝ իշխանութեամբ արեգականն մինչև ցերեկոյն, «և ցուրտ և պարզ» (Ձաք. ԺԴ 6), յորում նեղեցաւ Շմաւոն և եմուտ առաջի աչաց քահանայիցն, և «եղիցի աւր մեծ» (Ձաք. ԺԴ 7), այսինքն՝ յորմէ հետէ խաւ(//)արեցաւ արեգակնն: Մի աւր եղ զնա մարգարէն, որպէսզի եղիցի աւրն այն երկու աւուրբք:

«Աւրն<sup>5</sup> այն յայտնի Տեառն» (Ձաք. ԺԴ 7), զի ո՛չ երբեք տեսին երկինք զանարգանս Տեառն իւրեանց և ո՛չ<sup>6</sup> ծածկեցին զանձինս խաւարաւ: Ի ծագաց մինչև ի ծագս յայտնի լիցի յիշատակ աւուրն յեկեղեցոջ իւրում կամ զատեալ եղիցի աւր[ն] այն, քան զամենայն աւուրս տարոյն: «Ո՛չ տիւ իցէ<sup>7</sup>» (Ձաք. ԺԴ 7), զի խաւար էր, «և ո՛չ գիշեր իցէ<sup>8</sup>» (Ձաք. ԺԴ 7), զի չև էր լեալ երեկոյ:

ոկ. Եւ առաւաւտ<sup>9</sup> սկիզբն<sup>10</sup> նորա բարժանէ<sup>11</sup> զաւրն ի միւսմէն: «Ընդ երեկս եղիցի լոյս» (Ձաք. ԺԴ 7): Զի յայտ արա[ս]ցէ, թէ ընդ երեկս ծագեաց արեգա[կ]նն, որպէսզի եղիցի երկու տիւք ի միում աւուր, սահմանաւ խաւարին, որ եղաւ ի միջի:

**ՍՐԿ** Աստուածաբան[ն] ասէ. «Արիւն Աստուծոյ և չարչարանք լսելով՝ մի՛ անաստուածաբար ի վայր անկցիս իբրև<sup>12</sup> Աստուծոյ ջատագով»: Անաստուածութեան<sup>13</sup>, ուրեմն է գայթաղելի ի չարչարանսն Քրիստոսի, որոց դիւրին<sup>14</sup>, զոր ինչ կամին ասել զախորժակս մտաց իւրեանց, աւրէնս սահմանել<sup>15</sup> հակառակ աւրինաց<sup>16</sup> Հոգոյն Սրբոյ և հարցն աւանդութեան: Աստուած խաչեալ ասէ արեգակն խաւարեալ, արիւն և ջուր ի կողիցն բխեալ: Մինն՝ որ-

<sup>1</sup> B մեծ

<sup>2</sup> A ի յերկնից

<sup>3</sup> B լինի

<sup>4</sup> B Զաքարիա ասէ

<sup>5</sup> B և աւրն

<sup>6</sup> B այլ *փի* և ոչ

<sup>7</sup> B եղիցի

<sup>8</sup> B *չիք* իցէ

<sup>9</sup> B առաւաւտու

<sup>10</sup> A սկիսիւրն

<sup>11</sup> B բարժանէ *փի* նորա բարժանէ

<sup>12</sup> B որպէս

<sup>13</sup> B Անաստուածութիւն

<sup>14</sup> B դիւրին է

<sup>15</sup> B դնել

<sup>16</sup> B աւրինացն Աստուծոյ

պէս մարդոյ և միւսն՝ առաւել քան զմարդոյ՝ յայտնապէս զանա-  
 մաւթութիւն նոցա խայտառակելով: Յուցանէ զչարհարեալն  
 Աստուած գոլ, զի ո՛չ զվայելչականն միայն մար[դ]ոյ զարիւնն:  
 278բ Այլև զՂուրն հոսեալ ի կողիցն տեսանեմք, որով // ցուցանի  
 ճշմարտութիւն աստուածութեանն իւրոյ: Ո՛չ ասեմք չարհարելի  
 զաստուածութիւն ըստ բնութեան<sup>1</sup> և ո՛չ մարդ սոսկ զչարհա-  
 րեալն, այլ՝ զբովանդակն<sup>2</sup> Աստուած ճշմարիտ: Քանզի անչար-  
 չարական<sup>3</sup> էութեամբ բնաւորապէս միացեալ ընդ չարհարակա-  
 նին՝ իւրացոյց զնորայսն: Վասն որոյ մի և նորին զամենայն<sup>4</sup>  
 խոստովանիմք և ըստ մասին ոչինչ բարժանեմք<sup>5</sup> զՔրիստոսի՝ ո՛չ  
 գործս և ո՛չ բանս և ո՛չ կիրս: Զի մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս:  
 Վկայեն տարերք անշունչք և մարմինք սրբոց՝ յարուցեալք ի գե-  
 րեզմանաց աստուածութեամբ խաչելոյն, զազատեալս փայտիւն  
 ընդ անազատելի ծառայութեամբն էած կործանեալն և կործանա-  
 գործն<sup>6</sup>:

Թեոփ<sup>7</sup> Փայտիւ ընկալաք զմահ, և դարձեալ փայտիւ ընկալաք զկեն-  
 դանութիւն իբրև զչարագործ՝ խաչեալ ընդ աւագակսն, և որպէս  
 զԱստուած զտարերս վշտացուցանէր ի խաչին: Եւ դրունք դժո-  
 խոց սարսէին, բեւեռ հարկանէին, և երկաթի նիգքն խորտակէին:  
 Զերկորդ Ադամ ընդ խաչին կապէին, և առաջին Ադամայ կա-  
 պանքն արձակէին<sup>8</sup>: Ստեղծողն<sup>9</sup> անէծք լինէր, և ստեղծուածն յա-  
 նիծիցն ազատէր: Ո՛վ հրաշիցս զարմանք: Մինչ ի խաչին բեւե-  
 ուէին զձեռս և զոտս ստեղծողին, յայնժամ արձակէին կապանք ի  
 ձեռաց և յոտից ստեղծուածոյն իւրոյ: Մինչ քակէր ծառայն  
 զբեւեռն<sup>10</sup> ի ձեռաց և յոտից Արարչին, յայնժամ կապէր բեւեռաւք  
 զձեռս և զոտս հակառակորդին սատանայի: Խաչ նորա զգատա-  
 պարտութիւն մեր խափանեաց, քղամիդին<sup>11</sup> զանձև մերկութիւնն<sup>12</sup>

279ա Ադամ(//)այ զգեցոյց: Պսակն ի փշոց զփշաբերութիւն ապակա-  
 նեաց, չարհարանքն զտանջանսն Ադամայ ազատեաց<sup>13</sup>: Վէրքն

<sup>1</sup> B աստուածութեան բնութեան  
<sup>2</sup> A գբաւանդակն B բովանդակն  
<sup>3</sup> B անչարհարականին  
<sup>4</sup> B զամէնն  
<sup>5</sup> B բարժանեմք  
<sup>6</sup> B չիք զազատեալս փայտիւն... կործանագործն  
<sup>7</sup> Ձախ լս., ուղղանկյուն շրջանակի մեջ գրված է. «Թիոփիլոսի Ալակսիոս Յոհան-  
 նու»:  
<sup>8</sup> B լուծանէին  
<sup>9</sup> B ստեղծաւղն  
<sup>10</sup> B չիք զբեւեռն  
<sup>11</sup> B քղամիդ  
<sup>12</sup> B զանձևութիւնն փիւ զանձև մերկութիւնն  
<sup>13</sup> B զԱդամ ի տանջանացն ազատեաց

զխածմունս գազանին բժշկեաց, զեղին<sup>1</sup> դառնութեան զճաշակն քաղցրացոյց<sup>2</sup>:

«Յինն ժամուն<sup>3</sup> աղաղակեաց Յիսուս<sup>4</sup>. Աստուած իմ<sup>5</sup>, Աստուած իմ, ընդէ՞ր թողէր զիս» (Մատթ. ԻԷ 46, Մարկ. ԺԵ 34):

Աստուածաբան ասէ. «Քանզի ո՛չ ինքն թողաւ ի Հաւրէ կամ յիւրմէ աստուածութենէն, որպէս թուի ոմանց իբրև զարհուրեալ ի չարչարանացն, այլ յինքն անբարժանաբար միաւորեալ՝ տպաւորեաց<sup>6</sup> զմեր բնութիւնս: Քանզի էաք թողեալք և անտես լեալք, և փրկեցաք ի չարչարանաց չար[չար]անաւք նորա»:

**ԻԳ** Այլ իբրև զգլուխ մարմնոյ փոխանակ մարմնակցաց իւրոց կարդայ առ Հայր, զի ի ձեռն պատարագին իւրոյ Հաշտեսցի ընդ մարդկան:

«Ոմանք ասէին. ԶԵԼԼԻ<sup>7</sup> կարդ[այ] (Մատթ. ԻԷ 47, Մարկ. ԺԵ 35):

**ՈԿ** Տես՛ս այնու զժանդացն յանդգնութիւն:

**ԻԳ.** Լցեալքն անաւրէնութեամբ այպն արարին զայսպիսի բանիւքս, սկսան ասել զԵղիայ կոչէ:

Յայնժամ<sup>8</sup> Հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջն (ԻԳ 45):

**ԵՓ** Ովսէ՞ մարգարէանայ. «Ախտացաւ Իսրայէլ և ցամաքեցան ստինք նորա» (Իմմտ. Ովսէ Թ 16): Զորացան, զի մի՛ տայցեն<sup>10</sup> պտուղ ապաշխարութեան, վասն այնորիկ մերժեցի զնոսա ի տանէ իմմէ: Ել Հոգին Սուրբ, գնաց<sup>11</sup> ի տաճարէ նոցա, և ո՛չ ևս յաւելու ողորմել ի վերայ նոցա, զի ձգեցին զձեռս իւրեանց յաւժեալն Տեառն: Բարձաւ ի նոցանէ աստուածպաշտութիւն, որպէս [ի] Յեսաւայն, և տուաւ Հեթանոսաց, որպէս Յակոբայն: // Որպէս<sup>12</sup> ո՛չ գտաւ նորա<sup>13</sup> տեղի ապաշխարութեան, և ո՛չ հրէիցն տեղի ողորմութեան, և եղիցին եղկելիք ի մէջ Հեթանոսաց: Եւ բարբառ Քրիստոսի

<sup>1</sup> Ե լեղին

<sup>2</sup> Ե դառն զճաշակացն տրամութիւն փոփոխեաց ի քաղցրութիւն

<sup>3</sup> Ե ժամու

<sup>4</sup> Ե Յիսուս ի ձայն բարձր

<sup>5</sup> Ե չիք իմ

<sup>6</sup> Ե անբաժանաբար միութեամբ տպաւորեալ

<sup>7</sup> Ե զԵղիայ

<sup>8</sup> Ե եւ փի Յայնժամ

<sup>9</sup> Ե Ովսէ

<sup>10</sup> Ե տայցեն

<sup>11</sup> Ե և գնաց

<sup>12</sup> Ե և որպէս

<sup>13</sup> Ե ի նմա

զվարագոյրն պատառեաց, զի ցուցցի<sup>1</sup>, թէ [ե]հան ի նոցանէ զարքայութիւն[ն] և ետ ժողովրդեան[ն], որ արասցէ զպտուղ նորա: Կամ<sup>2</sup> յայտնեաց, թէ տաճարն կործանելոց է, զի Հոգին Սուրբ ել գնաց:

Քահանայապետն անաւրէնութեամբ պատառեաց զպատմուճանն, և Հոգին Սուրբ պատառեաց զվարագոյրն, զի քարոզեսցէ զհրէից [զ]ժպրհուութիւն ընդ տիեզերս:

Պատառեաց զքահանայութիւն ի նոցանէ, և ել ինքն և եհան ընդ իւր զամենայն պարգևսն: Կամ ետես Հոգին զՈրդին կախեալ խայտառակ, պատառեաց զհանդերձ զարդուն իւրոյ: Կամ աւրինակաւ նորահարսին<sup>3</sup>, յորժամ լսէ զգուժ մահու առն իւրոյ, պատառէ զքող<sup>4</sup> երեսաց իւրոց և արտաքոյ<sup>5</sup> ելանէ: Այսպէս և տաճարն, յորժամ ետես զերկնաւոր փեսայն ի խաչին դատապարտեալ, պատառեաց զվարագոյրն՝ զքող<sup>6</sup> երեսաց իւրոց, և ել արտաքս: Զի յայսմ հետէ ո՛չ ի միում տաճար[ի] կապէ զչնորհս Հոգոյն Սրբոյ, այլ ընդ ամենայն տեղիս բաշխէ գտաճարսն: Ո՛չ զքարեղէն տաճարսն<sup>7</sup> ասեմ, այլ զՀոգոյն<sup>8</sup> պաշտամունսն, որ է<sup>9</sup> ի նմա հանապազորդ (տե՛ս Բ Կորնթ. Գ 3), զի էին նոքա որպէս մարմին՝ գուշակելով զխորհուրդ<sup>10</sup> գալստեանն Քրիստոսի: Յայնժամ իբրև ել Հոգին<sup>11</sup> ի տաճարէն՝ հերձանելով զվարագոյրն, ելին

280ա գնացին պաշտամունք խորհրդոցն Քրիստոսի տնաւրէն(//)ութեանն, որ ժողովեալն էր<sup>12</sup> ի տաճարին Երուսաղեմի: Վասն աւագտի փոքու ժողովրդեանն ել Հոգին Սուրբ և բաշխեաց ընդ ամենայն աշխարհս, զի եղիցին բազում տաճարք Տեառն ընդ ամենայն տիեզերս հեթանոսաց, զոր Հոգին Սուրբ ետ տանել ընդ ամենայն ծագս երկրի ի ձեռն առաքելոցն զպարգևս զայս: Զի գրեալն կատարեսցի, թէ՛ «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա» (Սաղմ. ԺԸ 5): Որպէս<sup>13</sup> ասէ Ամբակում<sup>1</sup>. «Լցաւ երկիր գիտութեամբ<sup>2</sup>,

<sup>1</sup> Բ ցուցցէ  
<sup>2</sup> Բ և կամ  
<sup>3</sup> Գ նորահարսն  
<sup>4</sup> Բ զքաւղ  
<sup>5</sup> Բ արտաքս  
<sup>6</sup> Բ զքաւղ  
<sup>7</sup> Բ գրփիս գտաճարն քարեղէն  
<sup>8</sup> Բ զՀոգւոյն  
<sup>9</sup> Բ էր  
<sup>10</sup> Բ զխորհուրդս  
<sup>11</sup> Բ Հոգին Սուրբ  
<sup>12</sup> Բ էին  
<sup>13</sup> Բ եւ որպէս

թեամբ<sup>2</sup>, որպէս ջուրս<sup>3</sup> բազումս, որ ծածկեն զծովս» (Ամբ. Բ 14, Ես. ԺԱ 9), *ո՛չ ոք վարդապետ որպէս Մովսիսեանքն, զի թագաւորեաց ի վերայ մարդկան<sup>4</sup> գիտութիւն Տեառն, և իւրաքանչիւր<sup>5</sup> անձամբ գիտեն զբարի և զչար:*

**ԻԳ** *Հոգի մարգարէութեանն, որ էր ի տաճարին, իբրև ետես զտուիչ մարգարէութեանն և զկատարումն աւրինաց և մարգարէից, պատառեաց զվարագոյրն և ել ընդառաջ նորա՝ զուշակելով զբարձումն մարգարէութեան և քահանայութեան ի նոցանէ և գաւեր նորին:*

«Երկիր շարժեցաւ, վէմք պատ[առեցան]» (Մատթ. ԻԷ 51):

**ԵՓ** *Դատապարտեաց զնա բերան մարդկան, աղաղակեաց և արդարացոյց զնա բերան արարածոց: Որպէս ասաց Տէր. «Զի թէ դոքա լուսեցեն՝ քարինքդ աղաղակեցեն» (ԺԹ 41):*

**ԻԳ** *Մարդիկ անզգամացան<sup>6</sup>, և անզգայ արարածք տազնապէին մերձ ի լուծանիլ վասն անարգանաց հաստողին: Վէմ[ք] զգալիք, զվէմն իմանալի՝ անարգեալ ի շինողացն, տեսանէին<sup>7</sup> և<sup>8</sup> պատառէին յինքեանս:*

**280բ ՍՏ** // «Յորժամ բարձրացայց, ասաց, յայնժամ տեսլիք» (*հմմտ. Յովհ. ԺԲ 32*): *Յորժամ համարիցիք յաղթել, յայնժամ ի միտ առնուցուք զզաւրութիւն իմ: Զի զկնի իմոյ՝ ի խաչ ելանելոյս, քաղաքդ կործանի, և հրէից կարգդ դադարեն, և քարոզութիւն իմ ծաղկի<sup>9</sup> մինչև յոլորտս երկրի:*

«Գերեզմանք բացան և բազում մեռեալք յար[եան]» (Մատթ. ԻԷ 52):

*Երեսուն ամի մեռեալքն յարեան յարդարոց, զի կատարե[ս]ցի ասացեալն ի Տեառնէ. «Թէև ի մեռելոց ոք յարիցէ, և ո՛չ նմա հաւատայք» (ԺՁ 31): Արդ՝ մեռեալ, որ մերձաւոր ընդանի և դրացի կամ հարազատ սիրելի ո՛չ ունէր, որ ճանաչէր զնա: Ո՛չ յարեաւ, զի մի ի մտանելն ի քաղաքն առ աչաւք կարծիցի[ն] կամ դեւս*

<sup>1</sup> Ե Եսայի *Վիս* Ամբակում

<sup>2</sup> Ե գիտութեամբ Տեառն

<sup>3</sup> Ե սրբ.՝ զջուրս

<sup>4</sup> Ե ամենայն մարդկան

<sup>5</sup> Ե իւրաքանչիւր ոք

<sup>6</sup> Ե անզգայացան

<sup>7</sup> Ե տեսանելով

<sup>8</sup> Ե *չիք* և

<sup>9</sup> Ե ծաղկէ

Համարիցին<sup>1</sup>, այլ որոց ճանաչէին քաղաքացիքն, թէ այս անուն մեռեալ էր:

«Յետ յարութեանն մտին ի քաղաքն սուրբ» (Մատթ. ԻԷ 53):

Եւ արդեք յետ յարութեան[ն] Տեառն մտին ի քաղաքն: Եւ ո՛չ առժամայն: Վասնզի<sup>2</sup> պարտ էր նախ` անդրանկանն մեռելոց բազմաց երևել և ապա` այլոցն, որ կերպարանակից են մահուան նորա և յարութեանն:

**ԵՊ** Ձոր տեսեալ իւրաքանչիւր ոք զազգակից իւր յառաջ քան զերեսուն ամ մեռեալ, և ճանաչէր եղբայր զեղբայր և հայր զորդի և որդիք զծնաւդս<sup>3</sup> իւրեանց, իսկ տեսողքն զյարուցեալսն հարցանէին, որպէս կայ ի պատմութեանն. «Դո՞ւ ես այս անուն, որ այսչափ ժամանակս յառաջ մեռար և յայսմի<sup>4</sup> գերեզմանի եղար: Եւ

**281ա** յարուցեալքն ասեն<sup>5</sup>. Այո՛, ես եմ: Դարձեալ հ(//)արցանեն<sup>6</sup> ցյարուցեալսն. Ձի՞նչ եղեն, զի՞՞րդ յարեայք: Յարուցեալքն հարցանէին. Ձի՞նչ եղեն աստ յառաջ քան զերիս աւուրս: Իսկ խաչողացն ի մոռացումն եղեալ` անգիտանային զգործ խաչին: Իսկ յարուցեալքն ասեն. Եւ զի՞նչ եղեն, յորժամ երկիր շարժեցաւ և սասանեցան հիմունք սորա, զի՞նչ գործեցիք: Խաչողքն ետուն պատասխանի. Ձոմն մոլար Յիսուս անուն խաչեցաք: Յարուցեալքն ասեն. Վա՛յ ձեզ, նա եկեալ ունայնացոյց զդժոխս և ելոյժ զմեզ քաջութեամբ իւրով և եհան ի գերեզմանաց»:

**ԻԳ** Այսպէս մահն տերունական քակեաց զիշխանութիւն մահու, և հան արձակեաց զ[ը]մբռնեալսն<sup>7</sup> ի նմանէ:

Յիսուս կարգաց ի ձայն մեծ. Հայր, ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ<sup>8</sup> (ԻԳ 46):

**ԵՓ** Լուան և պատասխանի ետուն նմա մեռեալքն, զի ցուցցէ, թէ մեռեալք, որ ո՛չ լսեն, լուան նմա: Այն իսկ է, զոր ասաց. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ և իշխանութիւն ունիմ միւս ան-

<sup>1</sup> Ե զիւրոյ Համարեցին

<sup>2</sup> Ե Վասն որոյ

<sup>3</sup> Ը ծնողս

<sup>4</sup> Ե յայսմ

<sup>5</sup> Ե ասէին

<sup>6</sup> Ե հարցանէին

<sup>7</sup> Ե զմեռեալսն

<sup>8</sup> Ե Եւ կարգաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ. Հայր, ի ձեռս քո առանդեմ զհոգի իմ: Զայս իբրև ասաց, եհան զոգին:

զամ աննուլ զնա<sup>1</sup>» (Յովհ. Ժ 18): Եւ դարձեալ. «Ես անձամբ իմով  
զնեմ զանձն իմ» (Յովհ. Ժ 18):

«Աղաղակեաց» (Մատթ. ԻԵ 50):

Զի յայտ լիցի, թէ ընդ նորա իշխանութեամբ են<sup>2</sup> իրքն:

ԹԵՆՓ

281բ

Ո՛վ զարմանալեաց<sup>3</sup>, Արարիչն մեռաւ և արարածք կենդանա-  
ցան: Ստեղծողն մահացաւ, և ստեղծուածք[ն] մահացեալք զան-  
մահուութիւն զգեցան: Իբրև զմարդ զշրթունս իւր փակեաց, և իբրև  
զԱստուած զգերեզմանս եբաց: Ուրախացիր Ադամ և ցնծայ Եւայ,  
//զի սպառեցան<sup>4</sup> անէծքն, և ծաղկեցան աւրհնութիւնք: Քանզի  
արտաւար ձեր փարատեցաւ և խնդութիւն տարածեցաւ, տրտմու-  
թիւն բարձաւ և ուրախութիւն ի վերայ տիեզերաց սփռեցան:  
Սուգ ի բաց մերժեցաւ և մխիթարութիւն յերկնից ծագեցաւ: Ար-  
դարք բերկրեցարուք և մեղաւորք խրախութեամբ լցջիք: Եւ մե-  
ռեալք կենդանասլիք<sup>5</sup>, զի մահ մահացաւ<sup>6</sup>, վասնզի Աստուած<sup>7</sup>  
մեռաւ մարմնով: Նորոգեցարուք մեռեալք, զի Աստուած ընդ մե-  
ռեալս համարեցաւ: Լուաւ նախահայրն մեր և ազատեցաւ ի դա-  
տապարտութենէ փայտին: Լուաւ<sup>8</sup> Եւայ զոտնաձայն քո<sup>9</sup> ի  
դժոխս, և ետ աւետիս Ադամայ և ասէ. «Ես նախ լուայ զձայն  
հրապուրանաց սատանայի և<sup>10</sup> կերայ ի պտղոյն և ետու քեզ ու-  
տել<sup>11</sup>, զի<sup>12</sup> փափագեցաք լինել իբրև զԱստուածս: Եւ ի բարձրա-  
գոյն փառացն կործանեցաք խաբամամբ բանսարկուին: Արդ՝ նախ  
ես լուայ, թէ Աստուածն վասն մեր մարդ եղև ի կնոջէ և լուայ  
զոտնաձայն նորա ի դժոխս, զի գայ ո՛չ վասն դատապարտու-  
թեան մահու, այլ վասն ազատութեան կենաց: Ո՛չ լուիցուք ո՛ւր  
ես Ադամ յաղագս պատուհասի, այլ՝ ասելով. Ադամ՛, ես վասն քո  
եկի աստ: Ես լուայ զձայն աւձին, որ եղև քնար սատանայի, և ես  
լուայ զձայն Գաբրիելի. Ահաւասիկ Աստուած: «Համբարձէք<sup>13</sup>  
իշխանք զգրուեսս ձեր ի վեր և մտցէ թագաւոր փառաց» (Սաղմ. ԻԳ

<sup>1</sup> B զսա

<sup>2</sup> B էին

<sup>3</sup> B սրբ.՝ զարմանալեացս

<sup>4</sup> A սպառեցաւ

<sup>5</sup> B կենդանութեամբ կեցջիք

<sup>6</sup> B մեռաւ

<sup>7</sup> B աստուածութիւն անմահ

<sup>8</sup> A լուալ

<sup>9</sup> B Քրիստոսի փխ քո

<sup>10</sup> B ես

<sup>11</sup> B չիք ուտել

<sup>12</sup> B ուստի

<sup>13</sup> B համարձէք



7, 9): *Ես նախ լուայ յԵդեմ զձայն դատապարտութեան, և ար[դ]՝ ես նախ իսկ լուայ զձայն ուրախութեան: Յորժամ լուան 282ա զայս ամենայն նահա(//)պետքն և ունկնդիր եղեն արդարքն, ուրախացան մարգարէքն և բերկրեցան ընտրեալքն»:*

**Տեսեալ Հարիւրապետին զեղեալսն՝ փառաւոր առնէր զԱստուած՝ ասելով. Արդարև Որդի Աստուծոյ էր այրս այս<sup>1</sup> (ԻԳ 47):**

**ՈԿ** *Հարիւրապետն յայն սակս հաւատաց, զի իշխանութեամբ մեռաւ Քրիստոս և ախորժելով: Եւ նա յուժարութեամբ կամաց իւրոց փառաւորեաց զԱստուած միացեալ ի մարմնի: Բայց ոմանք ասեն, թէ մարտիրոսութիւն<sup>2</sup> համարի նմա Քրիստոս, որ յետ այնր<sup>3</sup> ամենայնի պնդեցաւ ի հաւատսն:*

**ԻԳ** *Յայնցանէ բազումք սքանչացան: Իսկ Յովհաննէս ասէ. «Տեսին, զի այն ինչ մեռեալ էր» (Յովհ. ԺԹ 33):*

**Եփ.(կր.)** *Մեռաւ Քրիստոս աշխարհի, զի ոք<sup>4</sup> աշխարհի ցանկութեամբ մի՛ կեցցէ<sup>5</sup>: Շրջեցաւ ի մէջ մարմնոյ խաչապէս, զի ոք լկտութեամբ մի՛ գնասցէ: Մեռոյց զկեանս մարմնոյ, զի մեք մարմնապէս մի՛ գնասցուք: Զի մահ նորա մահու լուծիչ էր և կենաց աղբիւրացուցիչ<sup>6</sup>: Ըստ Յակոբայ մարգարէութեանն. «Ելեր բազմեցար իբրև զառիւծ<sup>7</sup> և իբրև զկորիւն առեծու<sup>8</sup>: Եւ ո՛չ ոք է, որ զարթուցանէ<sup>9</sup> զնա<sup>10</sup>» (Ծմնդ. ԽԹ 9): Աւրհնիչք քո աւրհնեալ եղիցին, և անիծիչք քո անիծեսցին, զի ո՛չ ոք Հոգով Աստուծոյ խաւսի և ասէ, թէ նգովեալ Յիսուս: Զի Քրիստոս անցոյց շրաւչակ<sup>11</sup> ընդ քիթս մահու՝ ըստ Յակոբայ (տե՛ս Յակ. Ա 10), և եդ «դանդանաւանդ<sup>12</sup> ի կզակս նորա» (Սաղմ. ԼԱ 9, նակ՝ ԴԹագ. ԺԹ 28, Յովբ. Խ 21, Ես. ԼԵ 29, Եզեկ. ԻԹ 4)՝ ըստ Դաւթի<sup>13</sup>, ըստ Յովսիայ: «Ո՛ւր է, մա՛հ, յաղթութիւն քո» (Ա Կորնթ. ԺԵ 55), որ յաղթեցեր Ադամայ և ծննդոց նորա, որով մահ թագաւորեաց:*

<sup>1</sup> B Եւ տեսեալ Հարիւրապետին որ ինչ եղևն՝ փառաւոր արար զԱստուած և ասէ. Արդարև այրս այս արդար էր:  
<sup>2</sup> B մարտիրոսութիւն  
<sup>3</sup> B այսր  
<sup>4</sup> B նոքա  
<sup>5</sup> B սրբ.՝ մեռցի *փի* կեցցէ  
<sup>6</sup> B աղբերացուցիչ  
<sup>7</sup> B զառեւծ  
<sup>8</sup> B առիւծու  
<sup>9</sup> B զարթուցանիցէ  
<sup>10</sup> B զքեզ  
<sup>11</sup> B շրուչակ  
<sup>12</sup> A դանդանավանդ  
<sup>13</sup> B Դաւթայ

282բ // «Ո՞ւր են, դժո՛խք, խայթոցք<sup>1</sup> քո» (Ա Կորնթ. ԺԵ 55), որ հարեր զգարչապարն<sup>2</sup> Ադամայ: Եւ տարածեցաւ թիւնք<sup>3</sup> քո ի ծնունդս նոցա, մինչև ի Տէր մեր կենդանարար, որ յաղթեաց մահու և կենաւք թագաւորեաց: Բայց ի վերայ հեթանոսաց կատարի այս, զի այսպն առնեն զգաւրութիւն մահու խաչիւն Քրիստոսի:

Ամենայն ժողովուրդն տեսանէին զգործսն և կոծելով՝ բախէին զկուրծս<sup>4</sup> (ԻԳ 48):

Յովէլ վկայեաց՝ ասելով. «Դարձուցին զառաւաւտն ի ստուերս մահու» (Ամովս. Ե 8), և Տէր դարձոյց զհանգիստ նոցա ի սուգ:

ԵՓ Այլև<sup>5</sup> սուգ մեծ այն<sup>6</sup>, որ պահեալ էր ի Վեսպիանոսէ և ի Տիտոսէ, զի վասն առաջին աւերածոյն Երուսաղեմի մխիթարեաց զնոսա, զի գոյր նոցա յոյս և կենդանութիւն՝ մարգարէք և քահանայք: Իբրև հատաւ յոյս նոցա և սպառեցան ճառք նոցա իբր մեռելոց, այլ ո՛չ դարձեալ մխիթարութիւն մատուցանէ, և ո՛չ աւետիս պարգևաց իբր առողջի: Քանզի այս ամենայն ի<sup>7</sup> մեռելոյ աւտար է: Ձի մինչ կենդանի է, մատուցանեն աւգնութիւն, բայց իբր<sup>8</sup> հատանի յոյս նորա, մի՛ յայնցանէ<sup>9</sup> ո՛չ ոք առնէ նմա: Չաքարիայ ասէ վասն քահանայիցն «ողբացէ՛ք» (Ձաք. ԺԱ 2), զի բարձաւ ի իշխանութիւն ձեր, որով չարչարէիք զժողովուրդ իմ որպէս սաղմիտն<sup>10</sup> զոսկին ի մոխիր փոխարկէ: Արածէ զխաչինս կոտորածոյ, որ ի ձեռն անաւրէն քահանայիցն եղև: Եւ յամենայն ժամ եղև մոռտ հեթանոսացն, զի առաւել չարչարէին զխաչինսն,

283ա որ կոտորէին յառաջնորդացն: // Եւ ո՛չ ոք էր, որ խնդրէր զվրէժս:

ՍՏ Ձի յայտ արարին զդատակնիք անձանց ի ժամու խաչին: «Բախէին զկուրծս» իւրեանց և ասէին զմարգարէութիւն Յովելիայ<sup>11</sup>. «Վա՛յ մեզ, զի հասեալ են դատաստանք աւերածոյն Երուսաղեմի» (Իմմտ. Յովէլ Ա 15): Արդ՝ ձգեցաւ կոծն մինչև ցայսաւր ժամանակի, զի ամ յամէ առնեն նոքա զկոծն վասն աւերածոյ քաղաքին և աշխարհին իւրեանց:

<sup>1</sup> Բ խայթոց

<sup>2</sup> Բ զգարչապարս

<sup>3</sup> Բ թոյնք

<sup>4</sup> Բ Եւ ամենայն ժողովուրդքն, որ եկեալ էին և տեսանէին զտեսիլն զայն և զգործ և բախէին զկուրծսն և դառնային:

<sup>5</sup> Բ Այլ

<sup>6</sup> Բ այն էր

<sup>7</sup> Բ չէք ի

<sup>8</sup> Բ իբրև

<sup>9</sup> Բ յայնցանէ

<sup>10</sup> Բ սաղմիտն

<sup>11</sup> Բ Յովէլայ

«Մի ոմն տրեգով<sup>1</sup> խոցեաց զկող նորա, և ել արիւն և ջուր»  
(Յովհ. ԺԹ 34):

**ԵՓ** Ձի աղբիւր կողիցն յայտ արար զգաւրութիւն Տեառն, զոր ընկալան ջուրք աւազանին, և գաւրութեամբ նորա փութան քաւել զմեղս իւրեա[ն]ց: Եւ «արիւն» տեսլեամբ իւրով աղաղակէ ի վերայ տիրասպան ազգին, զի գիտասցեն, թէ յետ մեռանելոյն կենդանի է: Եւ «ջուրն» խորհրդով իւրով ս[ր]բէ զբարեկամս[ն] Քրիստոսի, որչափ նոքա յաճախէին չարչարել զնա, գանձքն<sup>2</sup>, որ ծածկեալ կայր<sup>3</sup> ի նմա, յայտնէին հաւատացելոց: Եւ, յորժամ մատչէին առ նա խաչողքն, բախէին մեծացուցանել զսիրելիս<sup>4</sup> նորա, և ոսոխ լինէին խաչահանուաց նորա: Ընթացայ ես առ մարմինս<sup>5</sup> քո և յամենայն անդամոց քոց բ[ղ]խեաց ինձ կենդանութեան աղբիւր, և կողիւն խոցեալ՝ մտի ես ի դրախտն ցանգել<sup>6</sup>: ՅԱդամածին կողէն վառեցաւ հուր և ապականեաց զտիեզերս: Եւ յերկրորդ Ադամայ կողիցն ել ջուր շիջուցանել<sup>7</sup> զհուրն ապականիչ:

283բ // Յովէլ վկայէ. «Աղբիւր<sup>8</sup> ի տանէ Տեառն ելցէ» (Յովէլ Գ 19), որ է մարմինն Քրիստոսի, որ ասաց. «Քակեցէք զտաճարս զայս» (Յովհ. Բ 19): Ըստ այնմ տուն<sup>9</sup> մեր քակելոց է, բայց աղբերակն նոր<sup>10</sup> բ[ղ]խեաց ի կողից նորա, կանգնեաց զեկեղեցի փառաւոր: Ըստ այնմ՝ «Ի քէն է, Տէ՛ր, աղբիւր<sup>11</sup> կենաց» (Սաղմ. ԼԵ 10): Արբուսցէ զձորն վիճակաց, այսինքն<sup>12</sup>՝ զՍատիւմ, որ են հեթանոսք: Արդ՝ վիճակն, որ ամուլ էր յաւրհանութենէ և ի փառաց նորա, ընդ այն ուղղեաց զաղբիւր աւազանին մկրտութեան՝ լուանալ զմեղս բնակչաց նորա: Եւ Ձաքարիաս<sup>13</sup> ասաց. «Յաւուր յայնմիկ բ[ղ]խեացէ ջուր<sup>14</sup> կենդանի յերուսաղէմ» (Ձաք. ԺԴ 8): Վասնզի<sup>15</sup> ել արիւն և ջուր ի կողիցն Քրիստոսի, զի կատարեսցի մարգարէութիւն, որ են կեանք եկեղեցոյ իւրում յոռոգել զնա: «Կէս նորա ի

<sup>1</sup> B տրեգաւ  
<sup>2</sup> A գանձքն  
<sup>3</sup> B էին  
<sup>4</sup> B զնա սիրելիք  
<sup>5</sup> B մարմին  
<sup>6</sup> B ցանկալի  
<sup>7</sup> B սրբ. և շիջոյց  
<sup>8</sup> A ախբիւր  
<sup>9</sup> B տունս այս  
<sup>10</sup> B որ  
<sup>11</sup> B աղբիւր  
<sup>12</sup> B չիք այսինքն  
<sup>13</sup> B Ձաքարիա  
<sup>14</sup> B դրփիւ ջուր բղխեացէ  
<sup>15</sup> B զի

ծովն» (Ձաք. ԺԴ 8) արևելից: Արդարութեամբ խոնարհեցոյց զժողովն կենդանի առ ծովն մեռեալ մեղաց<sup>1</sup>՝ ժողովեալ ի ժամանակաց, որ հեղձուցանէր զհոգիս<sup>2</sup> մարդկան: Տէր մեր խափանեաց զնա յիշխանութենէ իւրմէ, զի սերմանեացէ ի նմա զկենդանութիւն, և զարմատ կենաց տնկեացէ ի նմա՝ քաղցր վարդապետութեամբ իւրով: Զպտուղ<sup>3</sup> դառն, որ հեղձուցանէր ալե[ա]ւք, խորհրդով մեղաց զմարդիկ, զի մի՛ այլ արմատ դառնութեան ի վերայ եկեալ<sup>4</sup> նեղեացէ զբազումս: «Կէս նորա ի ծովն» (Ձաք. ԺԴ 8) արևմտեան: Զի համեացէ<sup>5</sup> զդառնութիւն նորա քաղցր և անոյշ քարոզութիւն<sup>6</sup> Տեառն մերոյ: Զամառն և զձմեռն զնասցէ, զի մի՛ ղիցի սահման քարոզութեան նորա որպէս Մովսիսին, այլ հանա-

284ա պազորդ եղ(11)իցի Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրի: Ըստ Դաւթայ<sup>7</sup>. «Ես կացի թագաւոր ի վերայ լեռին սրբոյ իմոյ» (Սաղմ. Բ 6), զի ի մի Աստուծոյ անուն յուսասցին ամենայն երկիր և ո՛չ ի բազումս:

Կային ծանաւթք<sup>8</sup> նորա ի հեռաստանէ (ԻԳ 49):

ԻԳ Աշակերտն Յովհաննէս, զոր սիրէր, և մայրն իւր, զոր յանձն առնէր<sup>9</sup> աշակերտին, որպէս զանվե[ր]ակացու ոք: Եւ յայնմ ժամանակէ<sup>10</sup> հոգայր վասն Աստուածածնին:

Պաւղ. Զորմէ ասէ Յոբ. «Զարմանք կալան զճշմարիտս ի վերայ այսոցիկ» (Յոբ ԺԵ 8): ԶԱստուածամայրն այլաւք բարեկամաւքն աշակերտեալքն հիացան: Կալցէ<sup>11</sup> հաւատարիմն Յիսուս զիւր ճանապարհն առ Հայր, սուրբ<sup>12</sup> ձեռաւք առցէ զքաջակերութիւն Յիսուս՝ տարածեալ զբազուկսն ի վերայ խաչին:

ԹԵՈՓ Ո՛ւր ես մայր<sup>13</sup> իմ ըստ մարմնոյ, զոր ստեղծի ձեռաւք իմովք: Եւ, իսաւելով յայնժամ ընդ նախահա[ւ]րն՝ «Ահա արարողս քո, որդի քո<sup>14</sup> եկի այսր[է]ն, զի մահուամբ իմով կենդանացուցից

<sup>1</sup> B ճախ լս. սրբ.՝ մեղօք

<sup>2</sup> B զհոգի

<sup>3</sup> B և զպտուղ

<sup>4</sup> B վեր երևեալ

<sup>5</sup> B համեմեացէ

<sup>6</sup> B քարոզութեամբ

<sup>7</sup> B Դաւթայ

<sup>8</sup> B ամենայն ծանաւթքն

<sup>9</sup> B առնէ

<sup>10</sup> B ժամանակի

<sup>11</sup> B կալցի

<sup>12</sup> A սուրբն

<sup>13</sup> B հայր

<sup>14</sup> B չիք քո

զքեզ»։ Սուրբ Կոյսն, տեսանելով<sup>1</sup> զնա մեռեալ, լայր դառնապէս, և նախահայրն՝ մաւրն<sup>2</sup>, ի Քրիստոսէ<sup>3</sup> ի դժոխս կենդանացեալ լինէր<sup>4</sup>։ Եւ տեսանէր, զի ի դժոխս մեռելոցն կենդանութիւն պարգեւէր<sup>5</sup>։ Լայր մայրն զորդի իւր, զարարող<sup>6</sup> Հաւր իւրոյ, և Հայր նորա ի դժոխս ուրախանար<sup>7</sup>, տեսանելով զորդի դատեր իւրոյ<sup>8</sup>, զի<sup>9</sup> վերստին ստեղծաներ<sup>10</sup> զապականեալսն։ Լայր Մարիամ ի խաչին, և լսելի լինէր ի խորս դժոխոց։ Եւայ ձայնէր դատերն, և ուրախութեամբ պատասխանի բարբառէր լալոյ Կուսին։

284բ // Լա'ց, ասէ, դո'ւստր իմ ցանկալի, զի վտակք<sup>11</sup> արտասուաց իմոց փարատեսցին<sup>12</sup>։ Արտասուեա' դուստր իմ տիրոյի, զի տրտմութիւն մաւր քո ուրախացի<sup>13</sup>։ Ողբա' ծնունդ իմ նազելի, զքո ողբալովտ սուգ իմ մխիթարեսցի<sup>14</sup>։ Վշտացիր այսաւր դուստր իմ ըղձալի, զի հառաչանք մաւր<sup>15</sup> քո պակասեսցին։ Քանզի մահ որդոյտ<sup>16</sup> քո և Աստուծոյ<sup>17</sup> մերոյ կենդանութիւն պարգեւաց մահացեալ ծնողացս քո<sup>18</sup>։

Եւ կանայք, որք<sup>19</sup> եկեալ էին զհետ նորա ի Գալիլէէ, տեսանէին զնա<sup>20</sup> (ԻԳ 49)։

ԿՐ Բայց կարևոր է գիտել, որք<sup>21</sup> զճշմարտութիւն թուեն<sup>22</sup>, թէ նախ՝ զորս<sup>23</sup> թուեն աւետարանիչքն Մարիամս<sup>24</sup>. առաջին՝ զմայրն Տեառն և<sup>25</sup> երկրորդ՝ Մարիամ Կղոպեայն<sup>1</sup>՝ քոյր ասի<sup>2</sup> Աս-

1 B ի տեսանելն  
2 B սրբ.՝ մայր  
3 B Կուսին **փխ** ի Քրիստոսէ  
4 B առնոյր զկենդանութիւն ի Քրիստոսէ **փխ** կենդանացեալ լինէր  
5 B պարգեւեալ լինէր  
6 B արարաւղ **փխ** իւր զարարող  
7 B **չիք** ուրախանար  
8 B իւր  
9 B զուարճանայր **փխ** զի  
10 B ստեղծմամբ  
11 B վտակ  
12 B փարատեսցի  
13 B **չիք** Արտասուեայ... ուրախացի  
14 B զի քով ողբովդ յիմոց սգոյ մխիթարեցայց  
15 A մաւրս  
16 B որդւոյ  
17 B Աստուծոյ  
18 B ծնողաց քոց  
19 B որ  
20 B զայն  
21 B որ  
22 B խորհին **փխ** թուեն  
23 B զոր  
24 B զՄարիամսն  
25 B **չիք** և

Աստուածածնին: Ձորս<sup>3</sup> Յովհաննէս ասէ, թէ՛ «Կային առ խաչին Կղէպոս<sup>4</sup>» (Յովհ. ԺԹ 25)՝ եղբայր Յովսիփոս<sup>5</sup>: Եւ երրորդ<sup>6</sup>՝ Մարիամ Մակղաղենացի<sup>7</sup>, իսկ չորրորդն, զոր Մարկոս ասէ. «Մարիամ Յակովբայ և Յովսիայ մայրն» (Մարկ. ԺԵ 40):

ՄՈՒՍ

Եւ որդիք Յովսէփոս<sup>8</sup>՝ Յակոբոս<sup>9</sup>, Սիմոն, Յուդայ, Ովսէէ: Ունէր և դստերս՝ Մարթայ, Յեսթեր<sup>10</sup> և Սողոմէ, որ էր մայր Յակոբայ և Յովհաննու, և էր կին Զեբեդեայ: Եւ Յովհաննէս կոչի քեռորդի Քրիստոսի: Ձի որպէս որդիքն Յովսէփայ եղբարք ասին Քրիստոսի, այսպէս և դստերքն՝ քոյրք: Իսկ Յովսէփ քառասուն և մի ամաց էր, մինչ Կոյսն ի տաճարէն յանձն եղև նմա: Եւ ամիսս չորք կացեալ ի տան նորա, մինչև ընկալաւ զաւետիս յղութեանն: Եւ երեսուն ամաց կեցեալ<sup>11</sup>՝ Հանգեալ<sup>12</sup> ի տան իւրում ի<sup>13</sup> Նազարեթ: // Եւ սպասէր<sup>14</sup> Կոստին Յակոբոս արդարն և հոգայր ծառայապէս Հեզն ի Յովսիփայ<sup>15</sup> յանձնեալ, մինչև ի Քրիստոսէ Յովհաննու յանձնեցաւ<sup>16</sup> ի խաչին:

285ա

Այր<sup>17</sup> մի Յովսէփ արդար<sup>18</sup>, աշակերտ Յիսուսի<sup>19</sup>, որ էր նախարար<sup>20</sup> (ԻԳ 50):

Այս Յովսէփ զառաջինն ի ծածուկ էր, բայց այժմ մեծացաւ համարձակութեամբ յետ մահուն Քրիստոսի, խորհրդական մեծ և նշանաւոր կարի առաւել: Ուստի ընդ քաջութիւն նորա պարտ է զարմանալ, զի ի մահ մատնեաց զանձն և յամենեցունց թշնամութիւն, և ո՛չ զանգիտեաց ի նախատանաց վասն սիրոյն Քրիստոսի:

<sup>1</sup> Ե Կղէպոսայ

<sup>2</sup> *A* նախ՝ գրել է պատվանշանով՝ ածի, ապա՝ առանց պատվանշանը ջնջելու ծ-ն դարձրել է ա:

<sup>3</sup> Ե գոր

<sup>4</sup> Ե Յիսուսի Կղէովպոս

<sup>5</sup> Ե Յովսէփոս

<sup>6</sup> *A* երկրորդ

<sup>7</sup> *A* Մակղաղենացի Ե Մագղաղենացի

<sup>8</sup> Ե Յովսէփայ

<sup>9</sup> Ե Յակովբոս

<sup>10</sup> Ե և Յեսթեր

<sup>11</sup> Ե լեալ

<sup>12</sup> *A* Հանգև

<sup>13</sup> Ե չիք ի

<sup>14</sup> Ե սրբագրած՝ սպասաւորէր

<sup>15</sup> Ե Յովսէփայ

<sup>16</sup> Ե յանձնեալ եղև

<sup>17</sup> Ե Եւ ահա այր

<sup>18</sup> Ե անուն Յովսէփ *փխ* Յովսէփ արդար

<sup>19</sup> Ե չիք աշակերտ Յիսուսի

<sup>20</sup> Ե նախարար, այր բարեգործ և արդար

**ԹԻՈՓ** Եւ [ի] ծածուկ աշակերտքն համարձակութեամբ ո՛չ անարգելոյն<sup>1</sup> ի հրէիցն, որպէս թագաւորի երկնից<sup>2</sup> պատիւ առնէին<sup>3</sup>, սպասաւորէին որպէս մեռելոյ Յովսէփ և Նիկողեմոս<sup>4</sup>, յորմէ սերորէք<sup>5</sup> սարսէին:

Ո՛վ սքանչելեացս: Համարձակ աշակերտքն թաքչէին, և [ի] ծածուկ աշակերտքն յայտնապէս երևէին: Յայտնի աշակերտքն թողին զկենդանին և փախեան, զմեռեալն Արեմաթացին<sup>6</sup> համարձակ իջոյց ի խաչէն<sup>7</sup> և պատեաց պատուական կտաւաւք զմարմինն Տեառն<sup>8</sup>:

**Սա<sup>9</sup>, մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Տեառն<sup>10</sup>**  
(ԻԳ 52):

285բ **Յովսէփ խնդրէր ի Պիղատոսէ<sup>11</sup> իբրև այր մի անարգ զմարմինն Տեառն, և<sup>12</sup> զդատաւորն՝ արդար: Առ այս չգոյր ինչ հակառակութիւն քահանայիցն, քանզի լցաւ ցանկութիւն<sup>13</sup> նոցա տերունական մահուամբն: Եւ սպանին // զարդարն, որ դժպէհի եղև նոցա: Եւ հանգեան ի դառնութենէ իւրեանց:**

**Եւ<sup>14</sup> իջուցեալ ի խաչէն** (ԻԳ 53):

Իջուցեալ<sup>15</sup> զմարմինն զաստուածային, որ բնակեալ<sup>16</sup> յերկինս և լիով յերկրի, քակէր ի ձեռաց<sup>17</sup> նորա զբեռնսն որպէս ի մարդոյ, որով զերկին<sup>18</sup> որպէս զկամար<sup>19</sup> ձգեաց: Քակէր և զոտսն ի խաչէն, որ ի բարձունս ընդ Հաւր յաթոռ փառաց և երկիր<sup>20</sup> պատուանդան ոտից նորա: Բարձեալ ուսով որպէս զմարդ, զոր ո՛չ

<sup>1</sup> A անանարգելոյն B զանգիտէին անարգելոյն  
<sup>2</sup> B **չիք** երկնից  
<sup>3</sup> B առնել  
<sup>4</sup> B Նիկողեմոս  
<sup>5</sup> B սրովբէքն  
<sup>6</sup> B յԱրեմաթացին  
<sup>7</sup> B **չիք** ի խաչէն  
<sup>8</sup> B **չիք** զմարմինն Տեառն  
<sup>9</sup> B Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. յԱրեմաթեայ քաղաքէ հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ (ԻԳ 51): Սա  
<sup>10</sup> B Յիսուսի  
<sup>11</sup> B **չիք** ի Պիղատոսէ  
<sup>12</sup> B **չիք** զմարմինն Տեառն և  
<sup>13</sup> A ցանգութիւն  
<sup>14</sup> B **չիք** Եւ  
<sup>15</sup> B **չիք** իջուցեալ  
<sup>16</sup> B բնակեալ էր  
<sup>17</sup> A ձեռաց  
<sup>18</sup> B զերկինս  
<sup>19</sup> B կամար  
<sup>20</sup> B երկիրս

տանին երկինք և երկիր գաստուածութիւն նորա: Յորժամ իջանէր Տէրն ի խաչէն, յայնժամ կործանէր հակառակամարտն ի պատերազմի:

**Պատեաց պաստառակ[ալ]աւ<sup>1</sup>** (ԻԳ 53):

Իբրև զմարդ զմռով և հալուէիւ Յովսէփ և Նիկողեմոս<sup>2</sup> պատէին: Եւ աստուածապէս քաջալերէր զնոսա, յորմէ սարսէին յաստուածային կենդանութենէն սերովբէք և քերոբէք<sup>3</sup>: Պատէին կտաւաւք մարդիկ<sup>4</sup> հողեղէնք զարկողն<sup>5</sup> զլոյս, որպէս զաւղոց<sup>6</sup> պատէին ձեռք մարդկան, զոր ո՛չ բաւեն տանել հրաբուն հրեշտակք: Մատունք հողանիւթք<sup>7</sup> շաւշափէին ընդ<sup>8</sup> մահուամբ անկեալ մարդիկ, որ յաստուածային լուսոյն ծածկեն զերեսս իւրեանց, սրոբէք<sup>9</sup> հրաշունչ թևաւք կտաւ<sup>10</sup> պատանաց նորա<sup>11</sup>, զշղթայեալսն<sup>12</sup> կապանաւք ելոյծ: Յովսէփ և Նիկողեմոս<sup>13</sup> պատուեն հալու[է]իւ անուշահոտ, զոր քահանայապետքն<sup>14</sup> և դատաւորն իբրև զանարգ չարչարեալ՝ սպանին: Յովսէփ և Նիկողեմոս<sup>15</sup> իբրև [զ]բարեգործ և զարդար յայտնապէս պատուեն<sup>16</sup> և ո՛չ երկնչէին: Նոքա իբրև զմահ(//)ապարտ սպանին, և սոքա իբրև զանմահութեան<sup>17</sup> պարգևիչ պատուէին<sup>18</sup>: Երիցս երանեալ աշակերտք Քրիստոսի, դուք երկինք<sup>19</sup> իբրև զառաքեալսն, դուք<sup>20</sup> երկնաւորք որպէս<sup>21</sup> զհրեշտակս: Աշակերտքն իբրև զմարմինք<sup>22</sup> գոլով<sup>1</sup> փախեան, և դուք համարձակեցայք<sup>2</sup> որպէս զան-

<sup>1</sup> B Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պաստառակալաւ և եդ ի կռածոյ գերեզմանի, ուր չէր զոք բնաւ եղեալ:

<sup>2</sup> B Նիկողեմոս

<sup>3</sup> B սրովբէք և քրովբէք

<sup>4</sup> B չէք մարդիկ

<sup>5</sup> B զարկաւղն

<sup>6</sup> A զաւթոց

<sup>7</sup> B հողանիւթայք

<sup>8</sup> B սրբ.՝ և ընդ

<sup>9</sup> B սրովբէք

<sup>10</sup> B սրբ.՝ կտաւաւք

<sup>11</sup> B սրբ.՝ կապեն զոտս նորա

<sup>12</sup> A զշղթայեալսն B որ զշղթայեալսն

<sup>13</sup> B Նիկողեմոս

<sup>14</sup> B քահանայապետն

<sup>15</sup> B Նիկողեմոս

<sup>16</sup> B պատուէին

<sup>17</sup> B զԱստուած անմահութեան

<sup>18</sup> B պատուեն

<sup>19</sup> B սրբ.՝ երկրաւորք

<sup>20</sup> B և դուք

<sup>21</sup> B իբրև

<sup>22</sup> A զի մարմինք B զմարմին



մարմինս: Նոքա սիրեցին զկեանս, և դուք ընտրեցէք<sup>3</sup> զմահ մարմնով, որ ծնանէր զկենդանութիւն և զանմահութիւն հոգոց:

Համարձակիմ ասել զսոսա իբրև զբազմաչեայ քերթէսն<sup>4</sup> և զվեցթեան սերովբէսն<sup>5</sup> պատուելով զգլուխն Յովսիփոս<sup>6</sup> քան զգլուխս հրեշտակաց: Զի մերձեցաւ նա ի գլուխն յայն, որ բարձրագոյն էր քան զերկինս, յոր ո՛չ կարեն հպիլ հրեշտակք: Եւ զբերան նորա քան զբերանս ակրհնաբանող հրաբուն զաւրացն, զի համբուրեաց նա զբերանն զայն, որ խաւսեցաւ յերկինս: Եւ սասանեցան հիմունք երկրի: Եւ զթիկունս նոցա, զարդարեալ փառաւք, քան զթեւ սերոբէական դասուցն<sup>7</sup>, զի<sup>8</sup>, զոր նոքայն<sup>9</sup> բառնալ ո՛չ կարեն, սոքա բարձեալ ի վերայ մարմնական ուսոց: Զաչս նոցա երանեցից զերկրային, քան զբազմաչեայն երկնային: Զի նկատեալ տեսին, զոր նոքա տեսանել ո՛չ զաւրէլիին: Երանեցից և զձեռս նոցա առաւել քան զթեւս սրոբէական<sup>10</sup>, զի արժանացան նոքաւք շաւշափեալ<sup>11</sup> զայն, որ թեւ սքողեալ<sup>12</sup> ծածկէին զերեսս իւրեանց յահէ փառաց աստուածային լուսոյն, և ձեռաւք սոցա բարձեալ պատեցան:

286բ // Երանի՛ է ձեզ<sup>13</sup>, որ<sup>14</sup> արժանաւորեցայք մերձենալ յաստուածախառն մարմինն, որ իբրև մեռեալ ի գերեզմանի եղաւ և իբրև զԱստուած կենդանարար զգոյնս աւերեաց<sup>15</sup>: Երանի՛ է ձեզ, զի զայն, որ զարեգակնն խաւարեցոյց իշխանութեամբ մեծաւ, դուք պատուելով եղիք զնա<sup>16</sup> ի գերեզմանի, որ<sup>17</sup> զխաւարեալսն լուսաւորեաց աստուածային ճառագայթիւքն: Երանի՛ է ձեզ, զի զայն, որ երկինք որոտաց ի ձայնէ նորա և դժոխք սասանեցան ի բանէ նորա, արժանացայք իջուցանել ի խաչէն և դնել ի գերեզմանի: Երանի՛<sup>18</sup> ձեզ, որ զաստուածացեալ մարմինն զայն, որոյ ձայնն<sup>1</sup>

1 B գոլ  
2 B Համարձակեցաք  
3 A ընդրեցէք  
4 B քրովբէսն  
5 B չիք և զվեցթեան սերովբէսն  
6 B Յովսիփոս  
7 B չիք քան զթեւ... դասուցն  
8 B և փիս զի  
9 B նոքա  
10 B սրովբէական  
11 B շաւշափեալ  
12 B թեւաքաղեալ  
13 B չիք ձեզ  
14 B գոր  
15 A աւարեաց  
16 B չիք զնա  
17 B և փիս որ  
18 B երանի է

զգերեզմանս եբաց և զմեռեալս յարոյց և զվարագոյր տաճարին ցեղեաց և զվէմս պատառեաց, դուք իջուցէք<sup>2</sup> ի գերեզման:

**Իգ.**<sup>3</sup>(գր.իգ.) Հալուէ անուշահոտ նուէր անապական թաղմանն Տեառն<sup>4</sup>, և անուշահոտ Հոգոյն շնորհացն, որ անտի<sup>5</sup> բուրեղոց էր ընդ տիեզերս<sup>6</sup> և ընծայեալ աստուածային թաղմանն պատիւ, անապական վարս՝ կցորդ լինելով<sup>7</sup> մահուն Քրիստոսի, սպանանելով զանդամս երկրասէր ախտից<sup>8</sup>:

Եդ<sup>9</sup> ի կուածոյ գերեզմանի, ուր ո՛չ ոք այլ էր<sup>10</sup> եղեալ (Իգ 53):

Եդ կափարիչ<sup>11</sup> դրան գերեզմանին<sup>12</sup>:

**ԹԻՈՓ** Նոր երկինք այսաւր յերկրի հաստեցաւ<sup>13</sup> գերեզման Փրկչին այսաւր<sup>14</sup>: Նոր երկինք, նոր<sup>15</sup> և զարմանալի: Տեղին այն նեղագոյն, լայնատարած ցուցաւ, քան զհաստատութիւն երկնից: Զի անդ՝ փառք աստուածութեանն միայն, իսկ աստ՝ Աստուած բովանդակ<sup>16</sup> մարմնոյ միաւորութեամբ տարեալ եղև: Սա տարաւ

287ա զանտանելին երկնից<sup>17</sup>, սա երկրի<sup>18</sup>՝ երկինք, //գերեզման նեղագոյն և աթոռ բարձրագոյն, շիրիմ մեռելոյ և յարութիւն մեռելոց, տեղի մթագոյն և լուսատու խաւարելոց տիեզերաց<sup>19</sup>: Արևմուտք եղեալ Արեգականն արդարութեան, այն, որ լուսաւորեաց զնստեալսն ի խաւարաբնակ տեղոջ: Բնակեալն յերկինս<sup>20</sup>, որ լի են ամենայն երկիր փառաւք նորա, այսաւր իջեալ յանձուկ<sup>21</sup> գերեզման, զի զիջեալսն ի դժոխս յերկինս հանցէ: Իջեալ ի գերեզ-

<sup>1</sup> B որ ձայն նորա

<sup>2</sup> B իջուցիք

<sup>3</sup> B 216բ-ուժ նշված է՝ Գր. «Հալուէ... թաղման Տեառն», Իգ. «և անուշահոտ...»:

<sup>4</sup> B սրբ.՝ Տեառն նուիրեցէք

<sup>5</sup> B անդի

<sup>6</sup> B տիեզերս ամենայն, այնուհետև տողի վերևում սրբ. է՝ և արժանի եղէք

<sup>7</sup> B լինել

<sup>8</sup> B երկրաւորս *փխ* երկրասէր ախտից

<sup>9</sup> B Եւ եդ

<sup>10</sup> B չէր գոք բնաւ *փխ* ոչ ոք այլ էր

<sup>11</sup> A կապարիչ

<sup>12</sup> B *չիք* եդ... գերեզմանին

<sup>13</sup> A հաստատեցաւ

<sup>14</sup> B *չիք* այսաւր

<sup>15</sup> B *չիք* նոր

<sup>16</sup> A բաւանդակ

<sup>17</sup> B երկնի և երկրի

<sup>18</sup> B սրբ.՝ յերկրի

<sup>19</sup> B *չիք* տիեզերաց

<sup>20</sup> A ի յերկինս

<sup>21</sup> A, B յանձուկ

ման բնակեալն ի ծոց Հաւր, և զիջեալսն ի գուբս<sup>1</sup> անջրդիս մատոյց Հաւր: Էջ ի գերեզման, որ ստեղծ գմարդն ի հողոյ, զի զստեղծուածն ապականեալ վերստին նորոգեսցէ: Եղին ի գերեզմանի զգոյացուցիչն արեգական և լուսնի՝ աստեղաւք հանդերձ, և լուսատու կենդանեաց:

Վասն մեր իջանես ի գերեզման, որպէս զանցաւոր<sup>2</sup> աւրինացն: Զի ազատեսցես զմեզ որպէս աւրինադիր<sup>3</sup> ի դատապարտութենէ մեղաց: Վասն մեր իջանես ի գերեզման որպէս մարդ, զի արտաքս ելոցս պարգևեսցես զբնակութիւն դրախտին որպէս զԱստուած: Ո՛վ սքանչելեացս՝ լիով ի գերեզմանի և յերկինս ընդ Հաւր անբարժանելի<sup>4</sup>: Եւ ի բանդէն<sup>5</sup> զհողիսն ազատէր: Ի գերեզմանի եղաւ որպէս մեռեալ, և դժոխք զնա կենդանի տեսանէր: Ի գերեզման նոր բազմէր և ի բարձունս ի քերոբէից<sup>6</sup> աւրհնաբան իւր ընդ Հաւր ամենակալի<sup>7</sup>, ի ծոցոյ<sup>8</sup> նորա<sup>9</sup>:

**ԵՓ** Վէ՛մն այն է, զոր եդ Յակոբ ընդ սնարս իւր, զոր<sup>10</sup> աւծ ի սկիւղովն<sup>11</sup> և կանգնեաց զնա արձան (տե՛ս ԾԱՆՈՒ. ԻԸ 11-18):

287բ // Եղաւ նա ի<sup>12</sup> գերեզմանին՝ վէ՛մ ընդդէմ վիմին: Եւ զվէ՛մն կենաց պահէին զանքուն պահապանս<sup>13</sup> Իսրայելի, զգլուխն անկեան, յորոյ վերայ բաշխի եւթնարփեան<sup>14</sup> շնորհք եկեղեցոյ<sup>15</sup>, որ հատաւ առանց ձեռին ի սուրբ լեռնէն:

**ԹԻՈՓ** Վէ՛մ գերեզմանի նորա զհիմն բանդին<sup>16</sup> շարժեաց, ի վերայ գերեզմանին<sup>17</sup> վէ՛մ պնդէին և ի վայր շտեմարանք դժոխոց կործանէին:

Ի<sup>18</sup> վաղիւ անդ<sup>19</sup>» (Սատք. ԻԷ 62), որ «ի շաբաթ լուսանայր» (ԻԳ 54):

<sup>1</sup> A գուբի  
<sup>2</sup> B յանցաւոր  
<sup>3</sup> B աւրէնադիր  
<sup>4</sup> B անբարժանելի  
<sup>5</sup> B բանտէն  
<sup>6</sup> B քրովբէից  
<sup>7</sup> B ամմեկնելի  
<sup>8</sup> B ծոց  
<sup>9</sup> B նորա: Եղին կափարիչ դրան գերեզմանին  
<sup>10</sup> B զոր և  
<sup>11</sup> B սկիւղովն  
<sup>12</sup> B ի վերայ  
<sup>13</sup> B պահապանն  
<sup>14</sup> B եւթնարփի  
<sup>15</sup> B շնորհ եկեղեցոյ  
<sup>16</sup> B դժոխոց *փխ* բանդին  
<sup>17</sup> B գերեզմանի նորա  
<sup>18</sup> B Եւ ի  
<sup>19</sup> B անդր

Երեկ ի խաչին խաւարեցաւ արեգակնն, և այսաւր գերեզմանաւն<sup>1</sup> լուսաւորեցան տիեզերք: Երեկ խաչն մահու աւանդեաց, և մահն նորա մահու լուծիչ եղև և զկեանս ի մարդիկ աղբիւրացոյց: Երեկ նսեմացաւ Արեգակնն, և այսաւր Արեգակն<sup>2</sup> արդարութեան զնստեալս ի խաւարի՝ լուսաւորեաց: Երեկ խաչեալն զարարածս ձեռաց իւրոց վշտացոյց, և<sup>3</sup> այսաւր վշտացեալ<sup>4</sup> աշակերտացն անվիշտ մխիթարութիւնս պարգևեաց: Ո՛վ սքանչելեացս, մինչ արարածք խաւարելովն տրտմէին, յայնժամ զործք ձեռաց նորա ի դժոխս ուրախանային: Եւ մինչ լուսաւորքն խաւարէին, յայնժամ խաւարեալքն լուսաւորէին մեծափառ պայծառացեալ<sup>5</sup>, արեգակնն մթապատ ձայնէր ի բարձանց աւետիս լուսոյ ծագման բնակչացդ ի խաւար աղջամուղջ: Անլեզուն<sup>6</sup> յերկնից<sup>7</sup> ձայնէր աւետիս մեծածագ լուսոյ փառացն Քրիստոսի և, որ էին<sup>8</sup> ի խորս դժոխոց ստուերապատեալքն<sup>9</sup>, զմշտնջենաւոր առա-

288ա ւաւտուն երևումն՝ ասելով<sup>10</sup>. «ՁԱրարիչն իմ կապ(//)եալ տեսի<sup>11</sup>, և ես իմով լուսովս խաւարեցայ: Զկենդանարարն ամենեցուն մեռեալ տեսի մարմնով, և ես առանց լուսոյ մնացի: Որ զարդարեաց զիս գեղապանծ<sup>12</sup> լուսով՝ լուսաւորեալ զաչս բնակչաց երկրի, այսաւր փակեաց զլուսապարզև աչս մարմնոյ իւրոյ, զոր տեսանելով իմ՝ փակեցան լուսասփի[ւ]ռ դրունք տեսութեան իմոյ: Ուստի խաւար ծածկեաց զամենայն արարածս, և հոգոցն ի դժոխս լոյս մեծ ծագեաց»:

Մատթէոս ասէ<sup>13</sup>. «Ժողովեցան քահանայապետքն<sup>14</sup> և փարիսացիք<sup>15</sup> առ Պիղատոս» (Մատթ. ԻԷ 62):

**ԻՊ** Սկսան տագնապել ի խորհուրդս իւրեանց կասկածանաւք այնմ, զոր սպանին:

<sup>1</sup> B գերեզմանս

<sup>2</sup> B անմտանելի Արեգակն

<sup>3</sup> B չէք և

<sup>4</sup> B չէք վշտացեալ

<sup>5</sup> B պայծառութեամբ

<sup>6</sup> B անբանն

<sup>7</sup> A ի յերկնից

<sup>8</sup> B լսէին փես որ էին

<sup>9</sup> B ստուերաւ պատեալքն

<sup>10</sup> B սքողի՝ ասելով

<sup>11</sup> B դրփես տեսի կապանաւք

<sup>12</sup> A գեղապանծ

<sup>13</sup> B չէք Մատթէոս ասէ

<sup>14</sup> B քահանայապետքն

<sup>15</sup> B փարիսեցիքն

**ՈԿ.** Չար ի վերայ չարի յանձինս իւրեանց փութային յաւելուլ: Ամենայն ուրեք մոլորութիւն ընդ անձին կռուի, և ակամայ լինին<sup>1</sup> ջատագով ճշմարտութեան: Միտ դիր, պարտ էր հաւատարիմ լինել, թէ մեռաւ և թաղեցաւ և թէ յարեաւ: Եւ այս ամենայն ի թշնամեացն հաստատէր<sup>2</sup>, զի վկայութիւն ի<sup>3</sup> թշնամոյն զաւրաւոր է:

«Յիշեցաք, զի մոլորեցուցիչն այն, մինչ կենդանին էր, ասէր» (Մատթ. ԻԷ 63):

**ԹԵ.** Ո՛ր անաւրէն քահանայքդ, զաւրինացն տուողն<sup>4</sup>, որ ի միգապատ ամպոյն<sup>5</sup> ի Սինայ խաւսէր ընդ Մովսիսի, այն, որ սեամբ լուսոյ առաջնորդէր հարցն ձերոց՝ արձակելով զնոսա ի դառն ծառայութենէն փարաւոնի<sup>6</sup>, զայն, որ ընդ ծովն Կարմիր ցամաքաթև առաջնորդէր նախնեացն<sup>7</sup> ձերոց և անվնաս անցուցանէր որպէս ընդ // դաշտ ծաղկաւէտ և կերակրէր երկնատեղեաց մանանայիւն, մոլորեցուցի՞չ կոչէք<sup>8</sup>:

«Թէ յետ երից աւուրց յառնեմ» (Մատթ. ԻԷ 63):

Ո՞չ գիտես, ո՛ր պիղծ հրէայ: Մինչ զայդ<sup>9</sup> խաւսէրն ի Գալիլիայ<sup>10</sup>, և ինքն զմեռեալս յարուցանէր: Չգիտիցե՞ս<sup>11</sup>, զի ասէր, թէ<sup>12</sup>՝ «Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդոց մեղաւորաց, և յետ երից աւուրց յարիցէ» (Մատթ. ԺԷ 21, Մարկ. Թ 30): Ապա ուրեմն գիտէին զբարիսն<sup>13</sup> և կամաւ գործէին զչարիսն՝ նախանձու և փառասիրութեան աղագաւ:

«Հրաման տուր զգուշանալ գերեզմանին զերիս աւուրս, գուցէ գողասցին աշակերտքն<sup>14</sup>» (Մատթ. ԻԷ 64):

**ԻՊ.** Արդ՝ զայս ամենայն թէպէտև առ չարութեան գործէին, սակայն<sup>15</sup> յաստուածային խնամոցն ուղղեալ լինէին իրքն: Զի ո՛չ

<sup>1</sup> B լինի  
<sup>2</sup> B հաստատի  
<sup>3</sup> B չէք ի  
<sup>4</sup> B տուաւդն  
<sup>5</sup> A ամբոյն  
<sup>6</sup> B փարաւովնի  
<sup>7</sup> B հարցն  
<sup>8</sup> B ասէր *փխ* կոչէք  
<sup>9</sup> B զայս  
<sup>10</sup> B Գալիլեայ  
<sup>11</sup> B չգիտես  
<sup>12</sup> B չէք թէ  
<sup>13</sup> B զբարին  
<sup>14</sup> B գողասցեն աշակերտք նորս  
<sup>15</sup> B սակայն և

միայն դասք առաքելոցն լիցին վկայք յարութեանն, այլև թշնամիքն պատմեսցեն առ ամենեսին զյարութիւն Տեառն: Զի թէ լուեալ էին և ո՛չ կացուցեալ պահապանս գերեզմանին, թերևս կարէին հայթայթել պատճառս<sup>1</sup> բանից գողանալոյ աշակերտացն<sup>2</sup> կամ այլ ինչ իրս: Նոյն մեծաբարբառ հաստատեաց առանց կարծեաց առ ամենեսին զյարութիւն նորա:

**ԹԵՈՓ** Ո՛ր անաւրէն քահանայք, զիա՞րդ էր հնար գողանալ զնա<sup>3</sup>, որ նստեալն է ի վերայ քերոբէական<sup>4</sup> աթոռոյ ընդ Հաւր և ընդ Հոգոյն Սրբոյ<sup>5</sup>, զոր ո՛չ կարեն տեսանել հրեշտակք յերկինս, որ կամաւ եղաւ ի գբի ներքնում, զի զԱզամ իւրայաւքն յերկինս թռուսցէ:

«Եւ լինի յետին մոլորութիւն[ն] չար քան զառաջին[ն]»

(Մատթ. ԻԷ 64):

**289ա** // Ո՞ր բերանք եղեալ յերկինս<sup>6</sup> և լեզուք ստայաւդ ածեալ զերկրաւ, զոր յաղագս ճշմարտութեանն խաւսեցաւ Քրիստոս: Եւ դուք չար համարիք զառաջինն և զյետինդ, զգործս<sup>7</sup> տնաւրէնութեանն Տեառն: Վասնզի թէ<sup>8</sup> յետ սպանանելոյն զնա ընդ անաւրէնսն, որ անաւրին[ին] եբաց զգրախտն, և դուք<sup>9</sup> յարութեանն հաւատացեալ էիք, ո՛չ իբրև զչարչարողսն ի դժոխս դատապարտէիք, այլ զարքայութիւն ժառանգէիք: Զիա՞րդ էր չար, որ աստեղբն ի մէջաւրէի պայծառ լուսով առաջնորդէր մոգուցն, որ ի Յորդանան ականջաւք ձերովք<sup>10</sup> լուայք զհայրական զձայնն, և զիջումն Հոգոյն Սրբոյ աչաւք ձերովք<sup>11</sup> տեսէք, որով դաւանեցաւ Որդի Հաւր՝ բնութեամբ, երկուցն վկայութեամբ: Զիա՞րդ էր չար կուրացն լուսաւորիչն, անդամալուծացն<sup>12</sup> կանգնիչն, դիւացն հալածիչն ի մարդկանէ, բորոտացն<sup>13</sup> սրբիչն, յարուցիչն մեռելոց, որ զծով ոտիցն ճանապարհ կազմեաց, զմարդիկ հրեշտակս գործեաց և զփակեալ դրախտն եբաց նոցին, զերկրայինքս երկնա-

<sup>1</sup> B հայթայթանս պատճառել

<sup>2</sup> B թէ գողացան աշակերտքն և

<sup>3</sup> B **չիք** զնա

<sup>4</sup> B քրովբէական

<sup>5</sup> B Սուրբ Հոգւոյն

<sup>6</sup> A **ի** յերկինս

<sup>7</sup> B գգործ

<sup>8</sup> B **չիք** թէ

<sup>9</sup> B դուք եթէ

<sup>10</sup> B ձերաւք

<sup>11</sup> B ձերաւք

<sup>12</sup> A անդամալուծացն

<sup>13</sup> B բորոտից

զնացս արար, զմիջնորմնն քակեաց և զարտաքսեալքս քաղաքա-  
կից[ս] արար հրեշտակաց:

«Պիղատոս ասէ<sup>1</sup>. Ունիք զինուորս<sup>2</sup>, զգուշացարուք որպէս և  
զիտէք» (Մատթ. ԻԷ 65):

**ՈԿ** Քանզի ի վերայ եհաս ամենայն անիրաւութեանց նոցա, և  
վասն զերծանելոյ ի թակարդապատիր<sup>3</sup> բանից նոցա, և զայն ևս  
յանձն առնու, զի մի՛ ալոց մեղադիր լիցին:

**289բ ԹԵՈՓ** Զիա՞րդ պահէք, // որ անչափելի ձեռաւք պահէ զտիեզերս, և  
ընդ Հաւր և ընդ<sup>4</sup> Հոգոյն փառաբանի ի զուարթնոց երկնից: Ո՛ր  
Պիղատոս, զիա՞րդ պահեն քո զաւրքդ, զոր ո՛չ կարացին արգե-  
լուլ բարապանք դժոխոց պղնձի դրամբք, զոր տեսեալ սարսեցին՝  
ըստ Յոբայ (տե՛ս Յոբ ԼԸ 17), և հալեցան որպէս մոմ, որ ո՛չ կարէ  
պահել զբնութիւն իւր ի մերձենալ հրոյն (հմմտ. Սաղմ. ԿԷ 3, Ես. ԿԴ 2),  
որ մահուամբ զմահ մեռոյց և հաւատացելոց զանմահութիւն  
պարգևեաց:

«Եւ կնքեցին զվէմն քահանայքն հանդերձ զաւրականաւքն»  
(Մատթ. ԻԷ 66):

**ԹԵՈՓ** Ո՛վ զարմանք: Ի վերայ նորա զգերեզմանն կնքէին, և հի-  
մունք դժոխոց ի նմանէ քակտէր: Զվէմն կնքէին, և կապանք հո-  
գոցն ամենեցուն<sup>5</sup> լուծանէր: Ի վերոյ կնք[է]ին, և հարքն նոցա ի  
դառն տանջանաց դժոխոցն<sup>6</sup> ազատէին<sup>7</sup>:

**ԵՓ** Տէր մեր ինքնին [ե]հան զմարմինն իւր ի կնքեալ գերեզմա-  
նէն: Կնիք գերեզմանին եղև վկայ վասն կնքելոյ<sup>8</sup> որովայնին<sup>9</sup>, որ  
կրեացն զնա: Իբրու զի կնքեալ էին կուսութիւնք Կուսին, և որ-  
դին կենդանարար ի միջոյ նորա ծնանէր՝ անդրանիկն յամենայն  
տեղիս:

Կանայք, որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ պաշտել զնա, տե-  
սին զգերեզման և որպէս եղաւ: Դարձան և պատրաստեցին  
խուսկս և իւղս<sup>10</sup> (ԻԳ 55-56):

<sup>1</sup> B ասաց  
<sup>2</sup> B զզինուորսն  
<sup>3</sup> A թակարթապատիր  
<sup>4</sup> B Սուրբ փիւ ընդ  
<sup>5</sup> B որ ի բանտին փիւ ամենեցուն  
<sup>6</sup> B ի դժոխս  
<sup>7</sup> B Թեոփիլոսի մեկնությունը գրված է եփրեմի մեկնությունից հետո  
<sup>8</sup> B կնքեալ փիւ վասն կնքելոյ  
<sup>9</sup> A աւրովայնին  
<sup>10</sup> B Եւ աւրն էր ուրբաթ, և ի շաբաթ լուսանայր, և երթային զհետ նորա: Կանայք, որ

**ՍՏ** Արդ՝ ավրէն էր հրէիցն զաւուրս երեսուն լալ զմեռեալն երիտասարդ, զի յերիտասարդ հասակի ստեղծաւ Ադամ: Լալ զմեռեալն և խնկել<sup>1</sup> և գինս<sup>2</sup> տալ կոծողացն<sup>3</sup>: Որպէս և Գամաղիէլ աւսէր, թէ՛ «Զգինս կոծողացն Ստեփաննոսի<sup>4</sup> յիմոց ընչիցն ետու»

**290ա** (հմմտ. Գործք Ը 2): // Իսկ որ<sup>5</sup> մեռանէր ի փայտի<sup>6</sup>, ո՛չ էր ավրէն նմա զայս ամենայն կատարել: Վասն այնորիկ կանայքն և զս և խունկս պատրաստեցին, զի ավծցեն զնա: Զի ո՛չ ծանեան մինչև ի գալ Հոգոյն Սրբոյ ի վերնատունն, թէ ո՛չ է այն ամենայն պիտոյ նմա: Զի դեռ զսուրն երկմտութեան, զոր ասաց Սիմէոն<sup>7</sup>, ընդ անձին ունէր Կոյսն և այլ կանայքն: Նաև առաքեալքն ո՛չ էին կատարեալք<sup>8</sup>, այլ զի ունէին ակն հատուցանել նոցա իբրև թագաւորելոյ յերուսաղէմ, որպէս Դաւիթ և Եզեկիէլ և Յովսիա<sup>9</sup>: Վասն որոյ ասէին. «Տէ՛ր, եթէ ի ժամանակի<sup>10</sup> յայսմիկ հասուցանելոց իցես զարքայութիւն քո<sup>11</sup> Իսրայելի» (Գործք Ա 6): Եւ Տէրն, վասն զալստեան հանդերձեալ աւուրն<sup>12</sup>՝ «Ո՛չ է ձեզ գիտել<sup>13</sup>» (Գործք Ա 7) ասէր<sup>14</sup>: Եւ նոքա կարծէին անգիտութիւն, զոր և Պետրոս ասէր. «Քա՛ւ<sup>15</sup> քեզ» (Մատթ. ԺԶ 22) ի խաչ ելանել: Զի չև ևս գիտէին զգիրս, թէ պարտ էր նմա ի մեռելոց յառնել:

Ի<sup>16</sup> շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին (ԻԳ 56):

**ԻԳ** Արդ՝ հանգեաւ ի գերեզմանին ի շաբաթո՞ւ՝ ըստ իւրում ավրի նազրութեանն, զի անդ հանգեաւ ի գործոց: Թէպէտև ասաց և եղեն, և ընդ հրամայեալն հաստատեցան: Գրեալ է. «Աստուածն յաւիտեանից ո՛չ<sup>17</sup> աշխատեսցի և ո՛չ վաստակեսցի<sup>1</sup>, և ո՛չ գո՛

եկեալ էին ընդ նմա ի Գալիլէէ, տեսին զգերեզմանն և որպէս եղաւ մարմինն նորա: Դարձան և պատրաստեցին խունկս և եւզս:

<sup>1</sup> A խնգել B չիք և խնկել

<sup>2</sup> B գինի

<sup>3</sup> A կոծաւղացն

<sup>4</sup> B Ստեփանոսի

<sup>5</sup> B սրբ.՝ որ ոչ

<sup>6</sup> B չիք ի փայտի

<sup>7</sup> B Սիմէոն

<sup>8</sup> B կատարեալ

<sup>9</sup> A, B որպէս Դաւիթ... Յովսիա՝ գրված է աջ լս. գրչի ձեռքով

<sup>10</sup> B ժամանակի աստ

<sup>11</sup> B չիք քո

<sup>12</sup> B աւուրն ասէ

<sup>13</sup> B ժամ գիտել

<sup>14</sup> B չիք ասէր

<sup>15</sup> B քաւ լիցի

<sup>16</sup> B եւ ի

<sup>17</sup> B ոչ քաղցիցէ և ոչ



քննութիւնն ի<sup>2</sup> գործս<sup>3</sup> նորա» (*հմմտ.* Ես Խ 22): Իսկ յերկրորդ արարչութեանս և վերստին ստեղծանելոյ աշխատեցաւ մարմնոյ կրիւք ըստ տնաւրէնութեանն, և մնաց առանց աշխատութեան ըստ աստուածային միաւորութեանն, բարձողն<sup>4</sup> աշխատութեան մեղաւորաց<sup>5</sup>, որպէս // ասաց [ի] վերագոյն: Հանդարտեցին և կանայքն ի նմին աւուր ըստ աւրինացն, թէպէտև ջերմէին [ի] սպասաւորութիւն Տեառն ամենայն ուրեք:

<sup>1</sup> B *չէք* և ոչ վաստակեսցի

<sup>2</sup> B *չէք* ի

<sup>3</sup> B գործոց

<sup>4</sup> B բարձաւուն

<sup>5</sup> B մեղաց

## Գլուխ ԻԳ

Բայց ի միաշաբաթոջն<sup>1</sup> վաղ՝ քաջ ընդ առաւաւտն եկին ի գերեզմանն: Բերին զխունկան, զոր պատրաստեցին, և այլ կանայք<sup>2</sup> (ԻԴ 1):

**ԿՐ** Բայց պիտոյ է, որպէս վարկանիմ և զայլոց կանանցն, զոր<sup>3</sup> Ղուկաս առանձնապէս<sup>4</sup> յիշէ, որք էին ընդ փութագունին Մակդաղենացոյն<sup>5</sup>, արժան է գիտել, զի առ այլովք<sup>6</sup> կանամբքն, որք<sup>7</sup> էին նշանաւորք, և այլք էին աննշանաւորք<sup>8</sup>, յոլովագոյնք յաննշանից ընկալեալք զհաւատն և շուրջ գային զգերեզմանաւն՝ պատրաստեալ խունկա և ի[ւ]ղս<sup>9</sup> ի պէտս աստուածային մարմնոյն, և առ Քրիստոսի սիրոյն պատիւ արարեալ զիրսն, ո՛չ հեռանային ամենեկին, այլ միշտ երթալ և գալ ի գերեզմանն, որպէս ի վերայ մեծի<sup>10</sup> իրի ինքնակամ յուժարութեամբ, կամ հաւանեալ<sup>11</sup> ստուգիւ, կամ յերկուացեալ: Աւետարանիչքն այլևայլ ձևով գերեզմանն հրեշտակին պատմեն և, որ ինչ վասն յարութեանն Քրիստոսի: Մատթէոս «յերեկորին<sup>12</sup> շաբաթուն» (Մատթ. ԻԸ 1) ասաց,

**ՍՏ** և Մարկոս՝ «Ընդ առաւաւտս միաշաբաթուն» (Մարկ. ԺԶ 2) ասաց<sup>13</sup>, իսկ<sup>14</sup> Ղուկաս՝ «Քաջ ընդ առաւաւտս» ասաց<sup>15</sup> (ԻԴ 1), իսկ Յովհաննէս՝ «Առաւաւտուն ընդ արշալուրչն<sup>16</sup>» (Յովհ. Ի 1): Խնդրելի է, է՞ր վասն զանագանեցին արդե[ա]լք: Ըստ նախախնամութեանն Քրիստոսի պատրաստեցաւ առ ծառայս իւր: Զի թէ

**291ա** ամենեքին միապէս ասացեալ էին, հերձուածողքն ասէին, թէ // ամենեքին միաբանեցին և վասն այնորիկ համափառեցին: Սակս այնորիկ զանագանեցին վասն հաստատութեան: Մատթէոս ասէ.

<sup>1</sup> Բ միաշաբաթուն

<sup>2</sup> Բ կանայք ընդ նոսա

<sup>3</sup> Բ որպէս

<sup>4</sup> Բ առանձին

<sup>5</sup> Բ Մագդաղենացւոյ (այսուհետև չենք նշում)

<sup>6</sup> Բ այլաբ

<sup>7</sup> Բ ոմանք *փիւ* որք

<sup>8</sup> Բ յաննշանաւորք

<sup>9</sup> Բ եւղս

<sup>10</sup> Բ մեծ

<sup>11</sup> Բ հաւանել

<sup>12</sup> Բ յերեկոյին

<sup>13</sup> Բ *չիք* ասաց

<sup>14</sup> Բ եւ

<sup>15</sup> Բ *չիք* ասաց

<sup>16</sup> Բ արշալուսն

«Եկն Մարիամ՝ ի Մակղաղենայ գեղջէ, և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն: Եւ ահա շարժումն մեծ եղև» (Մատթ. ԻԸ 1-2):

**Ջաք.** Ի խաչելութեանն շարժումն եղև, բայց ո՛չ ասացաւ մեծ: Իսկ աստ՝ «մեծ», վասնզի յարութիւն մեծ է քան զխաչելութիւն և սքանչելագոյն, քանզի նովաւ փառաւորի խաչելութիւն[ն]:

**ՋԱՔ** Հրամանաւ Տեառն շարժէր երկիր՝ առ ի զարթուցանել զպահապանսն: Որպէս ի խաչին զմեռեալս յարոյց ի գերեզմանացն և գերկիր շարժեաց, նոյնպէս և յերկրորդ գալստեանն զարթուցանէ զտիեզերս ի դատաստան<sup>1</sup>: Ըստ այնմ՝ «Որ հայի յերկիր և տայ դողալ սմա» (Սաղմ. ԵԳ 32): Եւ վասն պահապանացն և հրէիցն, թէ՛ «Ի խաւարի գնացին և շարժեցան հիմունք երկրի» (Սաղմ. ՋԱ 5): Եւ ի շարժել երկրին՝ պահապանքն զարթեան և տեսին լոյս սաստիկ ճառագայթափայլ, հրաշափառափայլ<sup>2</sup>, արփիահրաշ քան զլոյս<sup>3</sup> արեգականն: Եւ հրեշտակն, եկեալ յերկնից արեգակնանման տեսլեամբ, սպիտակազգեստ, նստէր ի վերայ վիմին, զոր թաւալեցոյց ի գերեզմանէն, և ասէր առ սուրբ կանայսն. «Մի՛ երկնչիք<sup>4</sup>» (Մատթ. ԻԸ 5, Մարկ. ԺՁ 6), ո՛վ երջանիկ կանայք և<sup>5</sup> աստուածասէրք, ո՛չ է ձեզ երկիր[ւ]դ, այլ խաչահանուացն:

«ԶՅիսուս զխաչելեալն խնդրէք» (Մատթ. ԻԸ 5, *հմմտ.* Մարկ. ԺՁ 6):

**291բ** // «Գիտեմ» (Մատթ. ԻԸ 5), վասն որոյ եկիրք: Ո՛չ ասաց, թէ զթագաւորն երկնից խնդրէք, զՀաւր աթոռակիցն, այլ այս բանս ծանաւթ էր կանանցն: Կամեցաւ հրեշտակն իբրև զհաւատարիմս Տեառն և զսիրելիս հասու առնել զնոսա:

**Ջէ աստ, այլ յարեաւ** (ԻԴ 6):

Եւ ահաւասիկ տեղին, ուր եղին զնա: Քանզի գերեզմանդ առաջի ձեր կայ, և լոյսդ փայլեալ հալածեաց զխաւարն: Խոնարհեցարուք ի գերեզմանդ և տեսէք, զի՛ «Ո՛չ է աստ» (Մատթ. ԻԸ 6, Մարկ. ԺՁ 6):

**Իգ.** Տեղի ետ պահապանացն ո՛չ կործանիլ, մինչև լուսն ի հրեշտակէն զյարութիւն Տեառն, թէ ո՛չ է գողացեալ՝ ըստ հրէից կարծեացն, այլ «յարեաւ» իշխանութեամբ իւրով, ո՛չ կարաւտ աւգնականի, այլ Տէր կարող յամենայնի, և զաւետաբերութիւն առ կանայսն:

<sup>1</sup> B գարթուցանէ... դատաստան՝ սրբ. ստորին լս.

<sup>2</sup> A հրաշափառափառափայլ B հրաշափառ

<sup>3</sup> B գծագումն

<sup>4</sup> B չիք գոր թաւալեցոյց... Մի՛ երկնչիք

<sup>5</sup> B չիք և

«Եւ յահէ անդի նորա զարհուրեցան պահապանքն և եղեն որպէս մեռեալ<sup>1</sup>» (Մատթ. ԻԸ 4):

*Յետ կյսորիկ տարածեաց զարհաւիրս ի վերայ պահապանացն, զի խրատեսցին: Որպէս մարգարէն ասէ. «Խաւար<sup>2</sup> ծածկեաց զերկիր» (Ես. Կ 2) անհաւատաւքն, և՝ «Դողումն կալաւ զհեթանոսս» (հմմտ. Ես. ԼԳ 14):*

«Ասացէք ցաշակերտս նորա, թէ յարեալ» (Մատթ. ԻԸ 7):

**ՁԱՔ** *Իսկ կանայքն, լուեալ զաւետիս սուրբ յարութեանն ի հրեշտակէն, լցան խնդութեամբ: Ըստ այնմ՝ «Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւաւտուն եղիցի ուրախութիւն<sup>3</sup>» (Սաղմ. ԻԹ 6):*

«Տեսչիք զնա ի Գալիլիայ<sup>4</sup>» (հմմտ. Մատթ. ԻԸ 7, Սարկ. ԺԶ 7):

*Բարիոք ասաց «ի Գալիլիայ<sup>5</sup>», զի յապահովս արասցէ յիրացն և ի տագնապէն:*

«Եւ իբրև ելին, պատահեաց նոցա Յիսուս և ասէ. Ո՛ղջ էք» (Մատթ. ԻԸ 9):

**292ա ՈԿ** *// Ետ նոցա զկեանսաբեր ողջոյնն, զի ազատեսցէ ի պարտեացն, որ ասաց. «Հող էիր և ի հող դարձցիս» (Ծննդ. Գ 19), և ուրախ լերուք՝ փոխանակ ասելոյն. «Տրտմութեամբ ծնցիս<sup>6</sup>» (Ծննդ. Գ 16):*

«Մատուցեալ կալան զոտս նորա երկիր[ը]պագ[անել]<sup>7</sup>» (Մատթ. ԻԸ 9):

*Քանզի այն գարշապարն ոտնաձայն առնէին ի դրախտին, որ ընթացաւ ի դժոխս և արձակեաց զ[ը]մբռնեալսն ի նմանէ:*

«Երթայք ասացէք աշակերտացն և եղբարցն իմոց, զի երթիցեն ի Գալիլիայ<sup>8</sup>» (Մատթ. ԻԸ 10):

**ՍՏ** *Եղբարս անուանէ զաշակերտսն, քանզի ժառանգ է Հաւր Քրիստոս էմանուէլ<sup>9</sup>: Մանուկ ի մեզ բնակեցաւ<sup>10</sup>, Որդի մարդոյ գոլով, զի<sup>11</sup> հեթանոսք Որդիք Աստուծոյ անուանեսցին:*

<sup>1</sup> B Եւ յահէ անտի նորա խոռովեցան պահապանքն և եղեն որպէս մեռեալս:

<sup>2</sup> B խաւարաւ

<sup>3</sup> B չիք եղիցի ուրախութիւն

<sup>4</sup> B Գալիլեայ

<sup>5</sup> B Գալիլեայ

<sup>6</sup> B ծնծցիս որդիս

<sup>7</sup> B և երկիր պագին նմա

<sup>8</sup> B Գալիլեայ

<sup>9</sup> B Եմանուէլ

<sup>10</sup> B բնակեալ

<sup>11</sup> B զի և

«ՑՊետրոս» (Մարկ. ԺԶ 7):

**ԶԱՔ** *ՉՊետրոս յանուանէ յատուկ ձայնիւ, ի համար աշակերտացն կոչէ, քանզի վասն մեղացն<sup>1</sup> ո՛չ համարձակեր<sup>2</sup> գալ առ Քրիստոս: Թողութիւն առնէ մեղացն և տայ տեղի<sup>3</sup> գալ առ<sup>4</sup> Տէրն: Եւ դարձան երջանիկ կանայքն, պատմեցին աշակերտացն<sup>5</sup> զաւետիս յառութեան[ն]<sup>6</sup> Տեառն: Եւ ո՛չ հաւատացին աշակերտքն, զի համարեցան, թէ գիշերային արհաւիրսն տեսան և զարհուրեցան՝ ըստ կանացի[ի] երկի[ւ]ղի բնութեան[ն] (տե՛ս Մարկ. ԺԶ 8): Բայց առաքեալքն ի զինուորացն ո՛չ համարձակեցան գալ ի գերեզմանն:*

«Իբրև կանայքն գնացին, ոմանք ի զինուորացն եկին ի քաղաքն և պատմեցին քահանայապետիցն զեղեալսն» (Մատթ. ԻԸ 11):

**292բ** *Վաղվաղակի ձայն արկին: Ո՛վ յիմար և աստուածամարտ քահանայք, զի դուք // կորայք<sup>7</sup> և կորուսիք զաշխարհ<sup>8</sup> և<sup>9</sup> զմեզ և զդատաւորն, քանզի ճշմարիտ Աստուած էր այրն, «Յարեալ<sup>10</sup> ի մեռելոց» (Մատթ. ԻԷ 64): Ասեն քահանայապետքն<sup>11</sup> և դպիրքն. «Ընդէ՞ր ո՛չ կալարուք զնա»: Ասեն զինուորքն. «Մեք ո՛չ կարացաք հայել և տեսանել զահաւոր և զսոսկալի զլոյսն<sup>12</sup>, որ փայլատակեաց ի գերեզմանէն առաւել քան զճառագայթս արեգականն, կամ զձայն հրեշտակապետին, որ գոչէր առ կանայսն, թէ յարեալ: Թէ դուք զաւրաւոր էք, երթայք ի Գալիլիայ<sup>13</sup>, կալարուք զնա»:*

**ԻԳ** *Զոր աւրինակ՝ ի միում ժամու Պետրոս և Յովհաննէս գային ի գերեզմանն, և Յովհաննէս յառաջ եկն ի գերեզմանն, ապա Պետրոս յետոյ (տե՛ս Յովհ. Ի 4): Նոյնպէս Մակդաղենացին ջերմ և արիագոյն քան զայլսն փութացաւ ի գերեզմանն նախքան զայլ կանայսն<sup>14</sup>, և ետես զվէմն բարձեալ ի գերեզմանէն (տե՛ս Յովհ. Ի 11), զի մարմինն ո՛չ էր անդ և ո՛չ հրեշտակ երևէր: Դարձաւ առ աշա-*

<sup>1</sup> B ուրացութեանն

<sup>2</sup> B համարձակի

<sup>3</sup> B տեղի համարձակիլ

<sup>4</sup> B և գալ առ ինքն

<sup>5</sup> B առաքելոցն

<sup>6</sup> A նախ՝ զյարութիւն, ապա՝ զ տառի վերեւում և ներքեւում ունի սրբագրման՝ ստորակետանման զոյգ նշաններ, իսկ լուսանցքում գրված է՝ աւետիս

<sup>7</sup> B կորեայք

<sup>8</sup> B զաշխարհս

<sup>9</sup> B կորուսէք *փխ* և

<sup>10</sup> B որ յարեալ

<sup>11</sup> B քահանայապետքն

<sup>12</sup> B լոյսն

<sup>13</sup> B Գալիլեայ

<sup>14</sup> B ձախ լս. սրբ.՝ նախքան զայլսն փխ նախքան զայլ կանայսն

կերտան և առ հաւատացեալքն, որ ի միասին ժողովեալ էին, թե-  
րևս ի նոցանէն ստուգեսցէ զիրսն: Ապա յետոյ զան այլ կանայք,  
և հրեշտակ երևի նոցա և տայ աւետիս յարութեանն: Եւ ի գընալ  
կանանցն առ աշակերտսն՝ ի ճանապարհին երևի Յիսուս և ասէ.  
«Ո՛ղջ էք» (Մատթ. ԻԸ 9) և այլ ևս<sup>1</sup>: Իսկ Մարկոս զՄարիամ Մակ-  
ղաղենացին ածէ ի գերեզմանն և զՄարիամ Յակոբայ և Յովսէ<sup>2</sup>  
և Սողոմեայ ընդ առաւաւտս երկրորդ անգամ (տե՛ս Մարկ. ԺԶ 1): Եւ  
293ա հոգային, թէ՛ «Ո՞վ թաւ(//)ալեցուցէ<sup>3</sup> զվէմն ի դրաց գերեզմանին»  
(Մարկ. ԺԶ 3): Եւ իբրև չոգան, գտին ի բաց զգերեզմանն:

«Եւ մտեալ<sup>4</sup> ի ներքս, յաւժանել և ի խնկել<sup>5</sup> զմարմինն Տեառն,  
և տեսեալ<sup>6</sup> երիտասարդ մ[ի], զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգե-  
ցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան» (Մարկ. ԺԶ 5):

Քանզի տակաւին առաւաւտ էր, և չէր պարզ լոյս: Եւ տխրէին  
ի գերեզմանին:

«Ասէ հրեշտակն. Մի՛ երկնչիք<sup>7</sup>: Գիտեմ, զի զՅիսուս զխաչե-  
լեալն խնդրէք, չէ՛<sup>8</sup> աստ: Երթայք ասացէք աշակերտացն, զի երթի-  
ցեն ի Գալիլիայ<sup>9</sup> և տեսցեն» (Մատթ. ԻԸ 5-7, հմմտ. Մարկ. ԺԶ 6-7):

Եւ սուրբ կանայքն իբրև լուան, փախեան զարհուրեալք<sup>10</sup>: Եւ  
ո՛չ ումեք ասացին, զի երկնչէին: Քանզի յառաջին գալն ի գե-  
րեզմանն ո՛չ մտին, որպէս Մատթէոս ասէ<sup>11</sup>, այլ տեսին զհրեշ-  
տակն, որ թաւալեցոյց<sup>12</sup> զվէմն (տե՛ս Մատթ. ԻԸ 1-3): Եւ միտք նոցա ի  
դասս զինուորացն էին, վասն այնորիկ ո՛չ երկեան ի հրեշտակէն:  
Իսկ աստ փախուցեալ էին պահապանքն իբրև<sup>13</sup> զմեռեալս<sup>14</sup> ի  
տեսլենէն (տե՛ս Մատթ. ԻԸ 4): Եւ կանայքն ո՛չ տեսին զզինուորսն, և  
ի ներքս ընթացան ի խոր յայրն: Եւ տեսին զհրեշտակն և զար-  
հուրեցան, և փախեան և ո՛չ ումեք պատմեցին (տե՛ս Մարկ. ԺԶ 8):

<sup>1</sup> B այլն *փխ* այլ ևս

<sup>2</sup> B Յակովբայ և Յովսիայ

<sup>3</sup> B թաւալեցուցէ

<sup>4</sup> B մտին

<sup>5</sup> A խնկել

<sup>6</sup> B տեսին

<sup>7</sup> B *չիք* մի երկնչիք (A սրբ. է աջ լս. գրչի ձեռքով)

<sup>8</sup> B մի երկնչիք չէ

<sup>9</sup> B Գալիլիայ

<sup>10</sup> B զարհուրեալ

<sup>11</sup> B ասաց

<sup>12</sup> B թաւալեաց

<sup>13</sup> B սրբ.՝ և իբրև

<sup>14</sup> B զմեռեալս էին

Մարիամ<sup>1</sup> Մակղաղենացի և Յո[վ]հաննայ և Մարիամ Յակոբայ և այլք<sup>2</sup> (ԻԴ 10):

Երրորդ անգամ չոգան ի գերեզմանն ըստ Ղուկայ<sup>3</sup>՝ առեալ վերստին խոռնկ և ե[լ]ղ: Քանզի տազնապէին ի սիրոյն Քըրիստոսի, ո՛չ կարէին լռել և հանդուրժել:

Կր. անյագաբար<sup>4</sup> ի նոյն տեսութիւն իրացն<sup>5</sup>:

293բ // Իբրև անցին առ գերեզմանն, մտին<sup>6</sup> ի ներքս և ո՛չ գտին գմարմինն Տեառն<sup>7</sup>: Եւ զարհուրեալ՝ հիացան, թէ զի՞նչ եղև (հմտ. ԻԴ 3-4):

ԻԳ Ամենայն աւետարանիչքն յառաջ դնեն զՄակղաղենացին ո՛չ պատուոյ սակս, այլ վասն յառաջանալոյն քան զամենեսին:

Ահա<sup>8</sup> արք ոմանք<sup>9</sup> հասին առ նոսա ի հանդերձս լուսաւորս (ԻԴ 4):

ՁԱՔ Կշտամբէին զնոսա և յանդիմանէին: Քանզի միանգամ և երկիցս եկիք և ի հրեշտակաց սրբոց լուայք զյարութիւն Տեառն և ո՛չ հաւատացէք, և երրորդ անգամ ե[լ]ղաւք և խնկաւք<sup>10</sup> եկիք իբր ի մեռեալ: Թէպէտ յուժարութիւն ձեր գովելի է, այլ թերահաւատութիւն ձեր պարսաւելի է:

Եւ նոցա զարհուրեալ<sup>11</sup> խոնարհեցուցին գերեսս իւրեանց յերկիր: Ասեն ցնոսա հրեշտակքն<sup>12</sup>. Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս<sup>13</sup> (ԻԴ 5):

Թէ մեզ ո՛չ հաւատայք:

Յիշեցէք զբանն, որ<sup>14</sup> խաւսեցաւն ընդ ձեզ, մինչ էրն ի Գալւիլայ<sup>15</sup>, թէ՛ Պարտ էր Որդոյ<sup>16</sup> մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մե-

<sup>1</sup> B Եւ էին Մարիամ  
<sup>2</sup> B Յակովբայ և այլք ընդ նոսա, որ պատմեցին զայս առաքելոցն  
<sup>3</sup> B Ղուկասու  
<sup>4</sup> A անյագաբար  
<sup>5</sup> B **չիք աստ** Մարիամ Մակղաղենացի... իրացն (**տե՛ս 221բ էջում**): *զրված է ԻԴ 11՝ «Երևեցան շաղթախբութիւն... երկբան» տնից առաջ*  
<sup>6</sup> B Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի և մտեալ **փխ** իբրև անցին... մտին  
<sup>7</sup> B Տեառն Յիսուսի  
<sup>8</sup> B Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա  
<sup>9</sup> B երկու **փխ** ոմանք  
<sup>10</sup> A խնկաւք  
<sup>11</sup> B Եւ իբրև գահի հարան և  
<sup>12</sup> B **չիք** հրեշտակքն  
<sup>13</sup> B մեռեալս, չէ աստ այլ յարեաւ  
<sup>14</sup> B որպէս **փխ** զբանն որ  
<sup>15</sup> B Գալիլեայ և ասէր  
<sup>16</sup> B Որդւոյ

ղաւորաց, և ի խաչ ելանել, և յերկր յաւուր<sup>1</sup> յառնել: Եւ յիշեցին զբանս<sup>2</sup> նորա: Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն և այլոցն ամենեցուն<sup>3</sup> (ԻԴ 6-9):

Իգ. Որք ի հրէիցն հաւատացեալք էին, իբրև լուան, եթէ ըմբռնեցաւ Քրիստոս ի հրէիցն, ժողովեցան առ մետասանսն: Քանզի ինքն Յիսուս ի ժամանակի մատնութեանն կամեցաւ մեկնել զնոսս յինքենէ, զի մի՛ յունելն զնա խռովութիւն լիցի հաւատացեալ աշակերտացն: // Բայց թուի<sup>4</sup>, թէ եկին<sup>5</sup> յարեցան ծանաւթքն, որք ի բաց կացեալ էին, և տեսանէին զեղեալսն ի խաչին: Զի թէպէտ մետասանիցն երևեցաւ, այլ զրէ առաքեալ հինգ<sup>6</sup> հարիւր եղբարց երևեցաւ:

Երևեցան շաղախբութիւն բանք կանանցն յաչս առաքելոցն, և ո՛չ հաւատացին նոցա, երկբան<sup>7</sup> (ԻԴ 11):

Քանզի Մակդաղենացին յառաջ ժամանեաց, և ո՛չ հրեշտակ<sup>8</sup> ետես և ո՛չ զՅիսուս: Իսկ այլոց կանանցն եկեալ՝ պատմեցին վասն հրեշտակին և վասն Յիսուսի երևմանն, որ խաւսեցաւ ընդ նոսս: Եւ [յ]այս տարակուսեալ աշակերտացն՝ ո՛չ հաւատացին բանից նոցա:

Բայց Պետրոս յարուցեալ՝ զնաց<sup>9</sup> ի<sup>10</sup> գերեզմանն (ԻԴ 12):

Զաք. Զերմաջերմն յամենայնի և փոյթն իբրև լուաւ, թէ պահապանքն և զինուորքն ո՛չ են անդ, առ<sup>11</sup> գերեզմանին դեգերէր:

Ետես<sup>12</sup> զկտաւսն լոկ, զի կային, և զնաց ընդ միտս զարմացեալ, թէ զի՞նչ եղև (ԻԴ 12):

Իգ. Վասնզի յիշեալ էր<sup>13</sup> զամենայն ասացեալսն, զոր կանխաւ խաւսեցաւ ընդ նոսս վասն չարչարանաց և<sup>14</sup> մահուն և յարութեանն, զոր բազում անգամ յայտնեաց նոցա և ո՛չ առին ի միտ:

<sup>1</sup> B յերրորդ աւուր

<sup>2</sup> B զբանսն

<sup>3</sup> B ամենեցունց

<sup>4</sup> A թվի

<sup>5</sup> B եկեալ

<sup>6</sup> B թէ հինգ

<sup>7</sup> B Եւ երևեցաւ առաջի նոցա շաղախբութիւն բանք նոցա և չհաւատային նոցա:

<sup>8</sup> B զհրեշտակն

<sup>9</sup> B ընթացաւ

<sup>10</sup> A կրկ. ի ի

<sup>11</sup> B սրբ.՝ եկն առ

<sup>12</sup> B Եւ հայեցեալ տեսանէ

<sup>13</sup> B յիշէր

<sup>14</sup> B չիք և



«Եւ<sup>1</sup> էր, *ասէ*, բանն ծածկեալ ի նոցանէ, զի մի՛ գիտասցեն» (Թ 45):  
*Արդ՝ եկեալ ի գերեզմանն և ո՛չ անդէն գտեալ զմարմինն՝ բացան  
 յանկարծակի աչք հոգոյն: Եւ յիշեաց զյառաջ<sup>2</sup> ասացեալսն, և  
 զարթեալ որպէս ի քնոյ: Եւ ի հիացման մեծի եղեալ՝ զարմանայր  
 ընդ ելս իրացն կատարման:*

294բ «Իսկ Մարիամ // Մակղաղենացին<sup>3</sup> ընդ<sup>4</sup> արչալուրչն<sup>5</sup> եկն չոր-  
 րորդ անգամ ի գերեզմանն<sup>6</sup>, որպէս ասէ Յովհաննէս, և տեսանէր<sup>7</sup>  
 զվէմն բարձեալ ի դրանց<sup>8</sup> գերեզմանին և ո՛չ եգիտ զմարմին[ն]  
 Տեառն» (հմմտ. Յովհ. Ի 1):

**ԶԱՔ** *Մարիամ Մակղաղենացին և Աստուածածինն ի միասին գա-  
 յին<sup>9</sup>: «Ապա ընթանայ առ Պետրոս և [առ] այլ աշակերտսն և ասէ.  
 Արդ՝ ցերեկ է և արևահարք են և պահապանքն ո՛չ են ուրեք: Տե-  
 սէ՛ք, թէ ո՞վ<sup>10</sup> եբարձ զմարմինն Տեառն՝ քահանա՞յքն, եթէ<sup>11</sup> զի-  
 նուորքն» (հմմտ. Յովհ. Ի 2): Քանզի ի պահապանացն ո՛չ այլ ոք իշ-  
 խէր մերձենալ անդ:*

«Յարուցեալ Պետրոս և Յովհաննէս ընթացան ի գերեզմանն»  
 (հմմտ. Յովհ. Ի 3-4):

*Յառաջեաց Յովհաննէս, զի մանկագոյն էր, բայց ո՛չ եմուտ ի  
 գերեզմանն. պատուեաց զՊետրոս, զի գլխաւոր էր: Ապա եմուտ և  
 Յովհաննէս:*

«Տեսանէին զկտաւսն, զի կային անդ» (Յովհ. Ի 6, հմմտ. Ղուկ. ԻԴ  
 12):

*Զի թէ հրէիցն կամ զինուորացն բարձեալ էին՝ պատանաւքն  
 տանէին, իսկ եթէ գողոց յափշտակեալ՝ ո՛չ կարէր [զ]գմուսեալ և  
 գսոսնձեալ պատանսն, քանզի նարկեալ<sup>12</sup> էր ընդ ամենայն ան-  
 դամս մարմնոյն, և մաքուր և սպիտակ զերծանել ի նմանէ*

<sup>1</sup> B *չիք* և

<sup>2</sup> B *գառաջ*

<sup>3</sup> B Մակղաղենացի

<sup>4</sup> A *նախ*՝ գայ առաւաւտուն ընդ, *ապա՝ կետագծերով սրբ. են*

<sup>5</sup> B աշալուսն

<sup>6</sup> B *դրփիս* եկն ի գերեզմանն չորրորդ անգամ

<sup>7</sup> B տեսանէ

<sup>8</sup> B դրաց

<sup>9</sup> B գնացին *փիս* գային (Մարիամ... գնացին՝ սրբ. է աջ լուսանցքում. սրբագրումն  
 հղված է վերևի նախադասութեան Յովհաննէս անվան վրա)

<sup>10</sup> B ո՞վ

<sup>11</sup> B թէ՞

<sup>12</sup> B *ն-ի վրա ունի սրբ. կետ*

զկտաւան<sup>1</sup> ո՛չ էր հնար<sup>2</sup>: Բայց կտաւքն աւրինակ էր եկեղեցոյ՝  
յաշխարհիս մեկուսի ի՝<sup>3</sup> մարմինն Քրիստոսի:

Եփ. Տէր մեր եթող զպատանան, զի մտցէ Ադամ ի դրախտն առանց  
հանդերձի, որպէս էր յառաջ քան զմեղսն:

«Վարչամակն, որ էր ի գլուխն<sup>4</sup>, ո՛չ էր խառնեալ ընդ այլ  
կտաւան, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն» (Յովհ. Ի 7):

295ա Աւրինակ Քրիստոսի էր, որ է աւրինակ //և գլուխ եկեղեցոյ:  
Եւ աներևոյթ՝ ի մէնջ ծածկեալ<sup>5</sup> ընդ աջմէ Հաւր, և յերկրորդ<sup>6</sup>  
գալստեանն յայտնի և խառնի յեկեղեցիս, յորժամ համբառնայ  
զսա ի փառս իւր:

«Տեսին և հաւատացին, քանզի<sup>7</sup> չև ևս գիտէին զգիրս<sup>8</sup>, թէ  
պարտ էր նմա ի մեռելոց յառնել» (Յովհ. 8-9):

Հաւատացին աշակերտքն ճշմարիտ յարութեանն:

«Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր: Եւ մինչդեռ  
լայր, խոնարհեցաւ ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրեշտակս ի  
սպիտակս, զի նստէին մի ի սնարից և մի յանոտից, ուր կայր մար-  
մինն Յիսուսի (Յովհ. Ի 11-12):

Թիով. Անմարմին զինուորքն պահէին զգերեզմանն որպէս գահոյս  
թագաւորի, և ո՛չ որոշին սուրբ<sup>9</sup> հրեշտակքն մինչ ի կատարած  
աշխարհի, այլ միշտ պահեն զտեղին տերունական: «Յանապա-  
տին ջուր բ[ղ]խեաց ի վիմէն» (հմմտ. Նեեմի Թ 15, Ես. ԼԸ 6), և վէմն  
ինքն էր Քրիստոս: Եւ աստ՝ ի կողէն, և ջուրն ինքն էր Քրիստոս:  
Անդ ըմպողք[ն] մեռան, և աստ մեռեալք<sup>10</sup> կենդանացան: Գերեզ-  
ման, և մեռելոց<sup>11</sup> յարութիւն: Գերեզման, և դժոխոց աւերող<sup>12</sup>, և  
սգաւորաց միսիթարութիւն: Գերեզման՝ ուրախացելոց տաճար,  
պարողաց պատսպարան<sup>13</sup>, տեղի երկնային հարսանեաց, և առա-

<sup>1</sup> A զկտաւան

<sup>2</sup> B կարէին *փխ* էր հնար

<sup>3</sup> B *չեք* ի

<sup>4</sup> B գլուխ նորա

<sup>5</sup> B և ծածկեալ

<sup>6</sup> B յերրորդ

<sup>7</sup> B գի

<sup>8</sup> B զգիրսն

<sup>9</sup> B *չեք* սուրբ

<sup>10</sup> B ըմբողքն *փխ* մեռեալք

<sup>11</sup> B մեռելոյ

<sup>12</sup> A, B աւարող

<sup>13</sup> B պար (բառից հետո ազատ տեղ է թողնված)

295բ գաստ զարդարեալ: Արեմուտք արեգականն արդար<sup>1</sup> և արեւելք արեգականն արդարութեան<sup>2</sup>: Երկին լայնագոյն և հաստատութիւն անվայրափակ: Տեղի լուսոյ անմատոյց, բարձող կենդանատու Աստուծոյ<sup>3</sup> մերոյ: Եւ նորոգող աշխարհի և քաւարան յանցաւորաց, // և բուրաստան զուարթասաղարթ, և դրախտ ծաղկեալ<sup>4</sup> և քան զԵդեմ պայծառագոյն:

Սա ապաւէն ապաշխարողաց, և ապաշխարութիւն մեղաւորաց: Սա բնակարան Աստուծոյ յերկրի, և հաւասար<sup>5</sup> աթոռոյն Աստուծոյ յերկինս: Սա գլուխ եկեղեց[ւ]ոյ և սիւն հաստատութեան հաւատացելոց: Սմա սպասեն քահանայք, և երկիր պագանեն հրեշտակք: Ի սա ընթանան հրեշտակ<sup>6</sup> տիեզերք ամենայն, և ի սմա իջանեն պաշտել երկնաւորքն ամենայն: Սա զաւրութիւն թաղաւորաց, և ի սմանէ հալածին բանակք դիւաց: Ի սմանէ ծագեաց լոյսն անմատոյց ի մէջ խաւարի դժոխոց: Սա տեղի վշտաց, և ի սմանէ բ[ղ]խեաց մեզ ուրախալի ցնծութեան աւետիս: Սա դժոխք խաւարաբորբոք, և ի սմանէ ցուցաւ մեզ արդարութեան<sup>7</sup> ճանապարհ: Սա բընակարան մեռելոյ, և պաշտպան կենդանութեան: Ի սմա ապականեցաւ մարդն առաջին<sup>8</sup>, և նորոգեցաւ մարդն առաջին ի ձեռն երկրորդ Ադամայ: Ի սմա թաղեցաւ երկրորդն Ադամ՝ Տէր ամենայնի<sup>9</sup>, և յարեաւ կենդանացոյց զադամայինսն: Սա առաւաւտ լուսապայծառ<sup>10</sup>, որով պայծառացան արարածք:

**ՍՏ** Վասն այսր տեղոյս Մովսէս պատուիրեաց ազգատոհմին իւրոյ. «Տեղին, ասէ, ուր դիցէ Տէր զանուն քաջութեան իւրոյ» (հմմտ. Ելք Ի 24): Եւ Դաւիթ ասէ. «Հաճեցաւ Տէր ընդ Սիոն<sup>11</sup> և ընտրեաց բնակիլ ի նմա» (Սաղմ. ԾԼԱ 13), և՝ «Մտցուք [ի] յարկս նորա և<sup>12</sup> երկիր պագցուք տեղոյ ոտից<sup>13</sup> նորա: Արի Տէր ի հանգիստ քո»

<sup>1</sup> B արդարութեան  
<sup>2</sup> B ճշմարիտ լուսոյն որ լուսաւորէ զամենայն մարդ եկեալ յաշխարհս *փիս* արեգական արդարութեան  
<sup>3</sup> A բառն առանց պատվանշանի է  
<sup>4</sup> B ծածկեալ  
<sup>5</sup> A հավասար  
<sup>6</sup> B *չիք* հրեշտակ  
<sup>7</sup> B արքայութեան  
<sup>8</sup> B *չիք* մարդն առաջին  
<sup>9</sup> A յամենայնի  
<sup>10</sup> B լուսոյ  
<sup>11</sup> B Սիովն  
<sup>12</sup> B *չիք* և  
<sup>13</sup> B ի տեղի *փիս* տեղոյ ոտից

**296ա** (Սաղմ. 6ԼԱ 7-8), *զոր մարգարէքն //ամենեքին յայտ արարին վասն այսր տերունական տեղոյս:*

«Ասեն հրեշտակքն ցՄարիամ. Կին դո՛ւ, զի՞ լաս: Եւ նա ասէ. Բարձին զՏէր իմ ի գերեզմանէ աստի, և ո՛չ գիտեմ ուր եղին զնա (Յովհ. Ի 13):

**Զաք.** *Եւ, տեսեալ հրեշտակացն ի թիկանցն Մարիամու զՅիսուս, խուճապեցան:*

«Եւ, դարձեալ Մարիամ ի թիկունս կոյս, և տեսանէր<sup>1</sup> զՅիսուս, և ո՛չ գիտաց, եթէ<sup>2</sup> Յիսուս իցէ: Ասէ<sup>3</sup> ցնա Յիսուս. Կին դո՛ւ, զի՞ լաս, զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ, թէ պարտիզպանն իցէ» (Յովհ. Ի 14-15):

*Քանզի փոխեաց Յիսուս յանձանաւթս զտեսակն<sup>4</sup> և զաւրինակ բարբառոյն՝ առ ի չճանաչել զնա:*

«Ասէ ցնա Մարիամ. Տէ՛ր, դո՞ւ բարձեր զնա վասն պարտիզիս քո՝ ո՛չ կամելով լինել ի սմա<sup>5</sup> տեղի գերեզմանի: Յոյց ինձ ո՞ւր եղիր զնա, և ես առեալ՝ հեռագոյն տարայց (*հմմտ. Յովհ. Ի 15*):

«Ասէ ցնա Մարիամ»: *Խաւսի սովորական բարբառովն իւր զնա<sup>6</sup>: «Ասէ ցնա Մարիամ բաբունի<sup>7</sup>, որ թարգմանի վարդապետ: Ասէ ցնա Յիսուս. Մի՛ մերձենայր<sup>8</sup> յիս, զի չե ևս ելեալ եմ ես առ Հայր իմ» (Յովհ. Ի 16-17): Քանզի յայսմ գիշերիս մերձեցայք յոտս իմ, և համարձակեալ բուռն հարէք զգարչապարաց իմոց, և ո՛չ հաւատացէք, այժմ մի՛ մերձենար յիս իբրև<sup>9</sup> թերահաւատ:*

**ԵՓ** *Զի ձգեաց նա զձեռն իւր ի ծառն, և հնազանդեցոյց զմարդիկ ի ներքոյ մահու: Իսկ Տէր մեր պսակեաց զաստուածախառն մարմինն ամենայն չարչարանաւք: Ո՛չ<sup>10</sup> ետ Մարիամու մերձենալ ի նա, այլ պահեաց զնա ձեռինն Հաւր, որ սնոյց<sup>11</sup> զնա ընդ աջմէ իւր: // Եւ դարձեալ. յորժամ լուաւ Մարիամ յայլ կանանցն, թէ յարեաւ Տէր, և երկմտեալ ո՛չ հաւատաց որպէս Թո[վ]մայ, եկն ե-*

<sup>1</sup> B տեսանէ

<sup>2</sup> B թէ

<sup>3</sup> B եւ ասէ

<sup>4</sup> B գտեսիւն

<sup>5</sup> B դմա

<sup>6</sup> B ցնա

<sup>7</sup> A բաբունի

<sup>8</sup> B մերձենար

<sup>9</sup> B իբր

<sup>10</sup> B և ոչ

<sup>11</sup> B սրբ.՝ նստոյց

տես զնա և ո՛չ ծանեալ, քանզի պտուղ էր մարմնովն կանուխ ի դժոխոց: Եւ Տէր, իբր քահանայ մարմնոյն իւր, յամենայն ձեռաց պահէր զնա զգուշութեամբ, զի մատուցէ զնա Հաւր, որ կարող է ընդունել զայնպիսի պատարագն և տալ հատուցումն: Եւ այլ ևս, զի ցուցէ, թէ<sup>1</sup> մեծարեալ պատուեցաւ մարմինն, որ միացաւ ընդ Աստուծոյ: Զի մինչ ծառայն էր<sup>2</sup> նա, իշխանութիւն ունէր ամենայն մարդոյ ի վերայ նորա, զի մաքսաւորք և մեղաւորք մերձեցան ի նա: Այլ իբրև յայտնեաց զաստուածութիւն իւր<sup>3</sup>, ահիւ և երկի[ւ]ղիւ, որպէս վայել է Աստուծոյ:

«Զի չև ևս ելեալ եմ ես առ Հայր իմ» (Յովհ. Ի 17):

**ՍՏ** Քանզի երկմտեցաւ նա, եցոյց նմա Քրիստոս, եթէ ճշմարիտ յարեաւ և առ Հայր ելանէ: Ետ զաւետիս երթալոյն առ Հայր:

«Ե՛րթ դու առ եղբարս իմ» (Յովհ. Ի 17):

**ԶԱՔ** Ի հնումն, յորժամ կամէր Աստուած պատուել զմարդիկ, ծառայ կոչէր. «Միթէ թաքո՞ւստ<sup>4</sup> իցէ ի ծառայէ իմմէ Աբրահամէ» (ԾԱՆՐ. ԺԸ 17), և՝ «Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ» (Յեսու Ա 2), և՝ «Ո՛չ խաւսեցարուք զճշմարտութիւն առաջի իմ<sup>5</sup> որպէս զծառայն<sup>6</sup> իմ Յոբ» (Յոբ ԽԲ 7): Իսկ աստ «եղբարս» անուանէ:

«Ելանեմ ես առ Հայր իմ» (Յովհ. Ի 17):

Բնութեամբ:

«Եւ [առ] Հայր ձեր» (Յովհ. Ի 17):

Հայր մեր ըստ շնորհի:

«Աստուած իմ» (Յովհ. Ի 17):

Աստուած իւր դրութեամբ: Վասնզի, որ էր բնութեամբ և ճշմարտութեամբ Որդի Աստուծոյ, եղև մարդասիրութեամբ Որդի մարդոյ, զի կամեցաւ զմեզ Որդիս<sup>7</sup> Աստուծոյ առնել:

297ա // Ահա երկու ի նոցանէ<sup>8</sup> (ԻԴ 13):

<sup>1</sup> B չիք ցուցէ թէ

<sup>2</sup> B եղև

<sup>3</sup> B չիք իւր

<sup>4</sup> A թաքուստ

<sup>5</sup> B դրփիս առաջի իմ զճշմարտութիւն

<sup>6</sup> B ծառայն

<sup>7</sup> B Որդի

<sup>8</sup> B Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր:

Իգ. Յորո՞ց արդեաւք էին սոքա: Ո՛չ ի մետասան առաքելոցն, այլ ի սիրելեաց և ի բարեկամաց անտի Քրիստոսի:

Ի գեւղ<sup>1</sup> մ[ի], որ հեռի էր յԵրուսաղեմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ (ԻԴ 13):

Գնային ի գեւղն յայն: Ո՛չ վայրապար յիշէ զանուն գեղջըն և զերկայնութիւն<sup>2</sup> ճանապարհին, զի յայտ արասցէ, թէ խաւսեցաւ ընդ նոսա Քրիստոս ուղեկցութեամբ: Եւ զամենայն մարգարէիցն զբանսն էած ի վկայութիւն իւրոյ զալըստեանն: Երեք մղոն<sup>3</sup>, զի որպէս<sup>4</sup> Յովհաննէս հնգետասան ասպարիսաւք ասաց մերձ գոլ յԵրուսաղէմ (տե՛ս Յովհ. մԱ 18): Վասն այնորիկ բազումք ի քաղաքէ անտի տեսողք եղեն սքանչելեացն, որ ցուցաւ ի յարութեանն<sup>5</sup> Ղազարու: Եւ լցին զԵրուսաղէմ սքանչելեաւքն, զի մաւտ էր ի քաղաքն: Եկին և եղեն բազում ականատեսք: Այսպէս աստ զնէ զերկայնութիւն ճանապարհին, քանզի ի միաշաբաթոջն յառաջնում աւուրն յարութեանն ճանապարհակից եղև նոցա Յիսուս՝ յելանել նոցա ընդ դուռն քաղաքին<sup>6</sup> Երուսաղեմի. «Յիսուս մերձեցաւ և երթայր ընդ նոսա» (ԻԴ 15):

Որում անուն էր Եմմաւո[ւ]ս<sup>7</sup> (ԻԴ 13):

Նշանակէ զանուն գեղջն: Զի որք անգիտանան<sup>8</sup> աս[տ]ի, ուսանիցին կալ ի վերայ տեղոջն<sup>9</sup>, որ նոյն անուամբ կոչի մինչև ցայսաւր:

Եւ նոքա խաւսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոցն<sup>10</sup> (ԻԴ 14):

297բ Հակառակէին զգեղեցիկ հակառակութիւն[ն]: Ո՛չ ի մարմնականին զբանս<sup>11</sup> պարապէին, այլ յաստուածայինսն, թէպէտև ո՛չ // կատարելապէս հասու էին իրին:

<sup>1</sup> Բ գեաւղ

<sup>2</sup> Բ գերկարութիւն

<sup>3</sup> Գ մղոն՝ գրված է լւ. (ինչու է այստեղ, որովհետև որևէ սրբագրման նշան չունի, նոյնն է նաև Մեծօփեցու մոտ՝ լւ., էջ 223բ)

<sup>4</sup> Բ որում

<sup>5</sup> Բ յարութիւնն

<sup>6</sup> Բ ի քաղաքին

<sup>7</sup> Բ Եւ էր անուն նորա Եմաւուս:

<sup>8</sup> Բ կամիցին *փխ* անգիտանան

<sup>9</sup> Բ տեղոյն

<sup>10</sup> Բ անցելոց

<sup>11</sup> Բ բանս ինչ

**Եղև ընդ<sup>1</sup> խաւսելն նոցա և ընդ վիճելն** (ԻԴ 15):

Յորմէ պատշաճ է իմանալ զմինն Հաստատագոյն գոլ ի Հաւատս և զմիւսն տկարագոյն, որով զամենայն ինչ ընդունայն լեալ զառաջին զգործսն Քրիստոսի վասն գայթազողութեան խաչին Համարէին, զոր ետես զանչափ անարգանս Տեառն, զոր կրեաց ի ծառայից իւրոց: Իսկ ընկերն թերևս խաւսէր վասն սքանչելեացն և պէսպէս զաւրուութեանցն, որ եղեն<sup>2</sup> ի ժամ խաչին, նշանք ահագինք և մեծամեծք, որ նշանակէին սգակից լինել Արարչին: Զի զմեռեալս բազումս յարոյց, զիա՞րդ առ իւր մարմինն և անձնն տկարանայր՝ յարուցանելով զնա, որ և<sup>3</sup> ասէր. «Իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշխանութիւն ունիմ առնուլ զնա<sup>4</sup>» (Յով. Ժ 18): Ի դէպ է, թեև Հակառակողն ասէր. «Թէև<sup>5</sup> ունէր զաւրութիւն, զի՞նչ պէտք էին զվատթարագոյնսն կրել, քանզի և աստ բազումք զնոյն ախտանան յետ այսքան աստուածավայելուչ հրաշափառ<sup>6</sup> գործոցս յայտնութեանց և պայծառ քարոզութեան<sup>7</sup> առաքելոցն, որ ելից զտիեզերս»:

Տակաւին ևս գայթազողին վասն մարմնոյն և մահուն Տեառն: Նոյն մտաւք և նա, որ ետես աչաւք զբիւր նախատինսն, որով անարգեցաւ փառաւորեալն ի հրաբուն զաւրացն:

**Ինքն<sup>8</sup> Յիսուս մերձեցաւ և երթայր ընդ նոսա** (ԻԴ 15):

298ա Վասն որոյ և Տէրն մերձենայ առ նոսա, զի մի՛ ի սպառ ախտասցին<sup>9</sup> կարճամիտքն, զինչ<sup>10</sup> էին բանք[ն] այնքան // թերահաւատութիւն<sup>11</sup>, այլ վասն տրտմութեանն, զոր կրէին, և վասն մեծի խորհրդոյն տագնապէին, և վասն Տեառն տարակուսեալ: Նորին աղագաւ յայտնէ զանձն նոցա Յիսուս:

**Եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զ[նա]** (ԻԴ 16):

<sup>1</sup> B Եւ եղև ի  
<sup>2</sup> B գոր տեսին *փխ* որ եղեն  
<sup>3</sup> B ի դէպ է թէ և Հակառակողն *փխ* որ և  
<sup>4</sup> B *չիք* որ և ասէր... առնուլ զնա  
<sup>5</sup> B թէ  
<sup>6</sup> B և Հրաշափառ  
<sup>7</sup> B քարոզութեանց  
<sup>8</sup> B Եւ ինքն իսկ  
<sup>9</sup> B ախտասցեն  
<sup>10</sup> B զի ոչ *փխ* զինչ  
<sup>11</sup> B առ թերահաւատութիւնն

Արդ՝ թէպէտ<sup>1</sup> գնայր ընդ նոսա, սակայն առաքաստեալ էր զաչս նոցա, զի մի՛ ծանիցեն գնա: Եւ, մինչ ի հակառակ բանս դեգերէին, խաւսի ընդ նոսա:

**Զի՞նչ<sup>2</sup> են բանքդ, վասն որոյ վիճիքդ<sup>3</sup>** (ԻԴ 17):

Իբր անգէտս<sup>4</sup> հարցանէ գիտողն ամենայն խորոցն Հաւր և խորհրդոց մարդկան, զի ըստ բերանոց նոցա արասցէ զպատասխանին իրացն լուծման:

**Մինչդեռ գնայք<sup>5</sup> և տրտմեալ էք** (ԻԴ 17):

Զի՞նչ են հակառակութիւնդ, որ ո՛չ ճանապարհդ և աշխատութիւնդ<sup>6</sup> ո՛չ արգելու գձեզ ի տրտմական ախտակցութենէդ:

**Պատասխանի ետ մի ոմն ի նոցանէ Կղէովպաս<sup>7</sup>** (ԻԴ 18):

Սա, եղբայր գոլով Յովսեփայ<sup>8</sup> արդարոյ, որ անուամբ կոչեցաւ հայր Յիսուսի, և բանք սորա ցուցանեն զհաստատութիւն հաւատոցն առաւել քան զ[ը]նկերին: Նախ՝ ժամանէ պատասխանով<sup>9</sup>, զի մի՛ ընկերն իւր երկուանս<sup>10</sup> արասցէ բանիցն՝ անպատշաճ Քրիստոսի մարդեղութեանն, որպէս Պաւղոս ասէր ցԱզրիպպաս<sup>11</sup>. «Գիտեմ, զի հաւատաս մարգարէիցն, այո՞» (Գործք ԻՁ 27): Վասն որոյ<sup>12</sup>.

**Ասէ ցՅիսուս<sup>13</sup>. Դու միայն կաս<sup>14</sup> յերուսաղէմ, որ ո՛չ գիտացեր զի՞նչ գործեցաւ ի նմ[ա]<sup>15</sup>** (ԻԴ 18):

298բ **Քանզի մերձ էին յերուսաղէմ: Եւ ո՛չ յայլ տեղեաց ճանապարհաւ եկն Յիսուս և մերձեցաւ ի նոսա, այլ ի քաղաք // Երուսաղեմի<sup>16</sup> ընդ նոսա ել: Զի՞<sup>17</sup> կարծեցին ի քաղաքացեացն<sup>18</sup>**

<sup>1</sup> B թէպէտև

<sup>2</sup> B Եւ ասէ ցնոսա. Զինչ

<sup>3</sup> B վիճիք ընդ միմեանս

<sup>4</sup> A յանգէտս

<sup>5</sup> B երթայքդ

<sup>6</sup> B **չիք** որ ոչ... աշխատութիւնդ

<sup>7</sup> B որում անուն էր Կղէովպաս

<sup>8</sup> B Յովսեփու

<sup>9</sup> B սրբ.՝ պատասխանելովն

<sup>10</sup> B սրբ.՝ երեւանս

<sup>11</sup> B ցԱզրիպաս

<sup>12</sup> B **չիք** վասն որոյ

<sup>13</sup> B Եւ ասէ ցնա

<sup>14</sup> A կեսա

<sup>15</sup> B նմա յաւուրսս յայսմիկ

<sup>16</sup> B քաղաքէն Երուսաղեմէ

<sup>17</sup> B զոր

<sup>18</sup> B քաղաքէ անտի **փիս** քաղաքացեացն



գոլ զՅիսուս և տեսող<sup>1</sup> և վկայ, որ<sup>2</sup> ինչ գործեցաւ առ խաչին յաւուրսն յայնոսիկ: Այսինքն՝ մինչ ի հեռաբնակ վայրս տարածեցաւ, հաս բանն<sup>3</sup> Յիսուսի, թէ նա է Քրիստոս: Վասն տաւնին ժողովելոյ ազգին հրէից յամենայն տեղեաց, զի ո՛չ գաղտ ուրեք սպանաւ, զիա՞րդ դու ի քաղաքիդ գոլով ո՛չ գիտես զեղեալսն:

**Եւ Յիսուս ասէ ցնոսա. Զի՞նչ (ԻԴ 19):**  
Տակաւին իբր անգէտս իր հարցանէ<sup>4</sup>:

**Եւ նոքա ասեն. ԶՅիսուսէ Նազորացոյ** <sup>5</sup> (ԻԴ 19):  
Ապա սկսանի Կղէովպաս ճշմարտագոյն<sup>6</sup> գոլով զհրաշափառագոյնսն կարգել:

**Որ եղև այր մարգարէ (ԻԴ 19):**  
Երկրորդէ զբանսն ընկերին իւրոյ՝ վկայելով, յորմէ զհակառակուլթիւնսն կրէր, որ մարգարէ զնա գոլ ասէր:

**Հգաւր արդեամբք** <sup>7</sup> (ԻԴ 19):  
Սակայն Կղաւպաս<sup>8</sup> մեծացուցանէ զպատիւ մարգարէին Տեառն<sup>9</sup>, քան զամենայն մարգարէիցն նշանաւք, զոր ո՛չ<sup>10</sup> ի մարգարէից անտի գործեցաւ<sup>11</sup>:

**Եւ բանիւք (ԻԴ 19):**  
Զի ո՛չ բանիւ միայն ուսուցանէր որպէս մարգարէսն<sup>12</sup>, որք իբրև զպատգ[ամ]աւոր<sup>13</sup> Աստուծոյ<sup>14</sup>, առեալ ի Տեառնէ խաւս[է]ին, այլ Յիսուս իշխանութեամբ ուսուցանէր և զանձն<sup>15</sup> աւրինազիր ցուցանէր՝ զաւրաւոր բանիւ և իմաստութեամբ լցեալ:

**Առաջի Աստուծոյ (ԻԴ 19):**

<sup>1</sup> A տեսաւ  
<sup>2</sup> B գոր  
<sup>3</sup> B համբաւ սքանչելեացն *փխ* հաս բանն  
<sup>4</sup> B իրին հարցանել  
<sup>5</sup> B Նազովրացւոյ  
<sup>6</sup> B Կղէովպաս ճշմարտասէր  
<sup>7</sup> B արդեամբք և բանիւք  
<sup>8</sup> B Կղէովպաս  
<sup>9</sup> A զՏեառն  
<sup>10</sup> B ոչ ոք  
<sup>11</sup> B գործեաց  
<sup>12</sup> B մարգարէքն  
<sup>13</sup> B զպատգամաւորս  
<sup>14</sup> B *չիք* Աստուծոյ  
<sup>15</sup> B զանձինս

Որպէս երևելիք, նոյնպէս և ծածուկքն, զոր ամենատեսակն Աստուծոյ տեսանէ:

Եւ ամենայն ժողովրդ[եանն] (ԻԴ 19):

Զի ո՛չ էր ի նմա թաքուն կամ խաբէութեամբ:

Որպէս մատնեցին զնա քահանայապետքն և դպիրքն<sup>1</sup> և իշխանքն ի դատաստան մահու (ԻԴ 20):

299ա Ամ[բ]աստան լինի զանգամուտթիւն իշխանացն<sup>2</sup>, // որ զարժանին Հնազանդութեան փառաց և պատուոյ թշնամանաց և անարգանաց մահու մատնեցին: Զսուրբն և զարդարն մատնեցին ի դատապարտութիւն զարդար դատաւորն, և հանին<sup>3</sup> ի խաչ: Զոր Պիղատոս, ի հեթանոսացն գոլով, ի դատելն անպարտ մահու ասաց<sup>4</sup> և կամէր արձակել զնա: Իսկ քահանայապետքն առ յոյժ չարութեան նախանձուն ո՛չ ներեցին արձակել<sup>5</sup>. զփայտէ կախեցին: Ըստ Մովսիսի՝ «Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ և ո՛չ հաւատայք» (հմմտ. Բ Օր. ԻԸ 66):

Մեք ակն ունէաք, թէ նա է, որ փրկելոցն է զԻսրայէլ (ԻԴ 21):

Քանզի լուան ի մարգարէիցն: Եւ տարածեալ էր բանն ի մէջ ժողովրդեանն, թէ գայ Քրիստոս՝ Փրկիչ աշխարհի: Զոր և սամարուհի կինն ասէր. «Գիտեմք<sup>6</sup>, զի մեսիայ գայ» (Յովհ. Դ 25) և յարդարէ զամենայնն, որք առանց նախանձու էին: Եւ տեսեալ զնա՝ ասէին. «Քրիստոսն<sup>7</sup>, յորժամ գայ<sup>8</sup>, մի՞թէ<sup>9</sup> աւելի ինչ գո[ր]ծիցէ[ք]<sup>10</sup> քան զնա<sup>11</sup>»: Հաւատացին վասն զարմանալի նշանին և վկայութեանցն: Սակայն ո՛չ գիտացին, թէ մահուամբ լուծանէ զմահ և անարգանաւք ածէ ի փառս և արեամբ ուխտին: Զոր ասաց Զաքարիաս<sup>12</sup>. «Արձակէ զկապեալսն յանջրդի գբոյ» (Ձաք. Թ 11): Եւ աղքատութեամբ մեծացուցանէ, և զհոգիսն ազատէ ի չար ծառայութենէ մեղաց և մահու: Այլ կարծէին, թէ մարմնով թա-

<sup>1</sup> Ե մեր փխ և դպիրքն

<sup>2</sup> Ե դրփխ զիշխանացն անգգամութեանց

<sup>3</sup> Ե հանին զնա

<sup>4</sup> Ե ասաց զնա

<sup>5</sup> Ե արձակել զնա

<sup>6</sup> Ե գիտեմք իսկ

<sup>7</sup> Ե միթէ Քրիստոսն

<sup>8</sup> Ե գայցէ

<sup>9</sup> Ե չէք միթէ

<sup>10</sup> Ե նշանս առնէ փխ ինչ գործիցէք

<sup>11</sup> Ե գաս

<sup>12</sup> Ե Զաքարիայ

299բ գաւորէ և արդարութեամբ տիրէ և ուղ[ղ]ութեամբ և<sup>1</sup> ազատէ ի ծառայութենէ հեթանոսաց: Եւ տեսին կապանաւք մահու մատնեալ: Ըստ Սիմէոնի<sup>2</sup>. «Սա<sup>3</sup> ի գլորումն և ի կանգնումն<sup>4</sup> և ի // նշան հակառակութեան: Եւ ընդ քո անձնդ անցցէ սուր, զի յայտնեսցին<sup>5</sup> ի բազում սրտից խորհուրդք<sup>6</sup>» (Բ 34-35): Արդ՝ թէ- պէտ զոր յուսային ո՛չ եղև, սակայն ո՛չ բանիւ<sup>7</sup> ի բաց անկան: Վասն որոյ յաւելուն զհաւատոյ բանս:

Հանդերձ<sup>8</sup> այսու ամենայնիւ այս երրորդ ակր է, յորմէ<sup>9</sup> այն գործեցաւ (ԻԴ 21):

Յիշեցին զբանս Քրիստոսի, որ ասաց նոցա վասն չարչարանացն և խաչին, թէ՛ «Յերիր աւուր յարիցէ» (հմմտ. ԻԴ 7) և ակն ունէին, զի կատարեսցի:

ԵՓ Ի ժամանակին, յորում եբեկ զմարմինն և ետ աշակերտաց իւրոց, թուեալ լինէր երեք աւուրք, զի ի մեռեալս համարեցաւ: Զի որպէս Ադամ, յորժամ եկեր ի պողոյն, թէպէտ եկեաց ամս ինն հարիւր երեսուն, սակայն ի մեռելոյ համարի էր: «Եւ յաւուրն երրորդի յարուսցէ զմեզ» (Ովսէ 2 3)՝ մարգարէն Յովսիայ ասէ<sup>10</sup>: Արդ՝ զերիս տիւս և զերիս գիշերս այսպէս եկաց ի գերեզմանի: Աւր մի, զի եկաց նա ի խաչին, և գիշեր մի, զի երիս ժամս խաւար եղև, և աւր մի, զի դարձեալ լուսաւորեցաւ: Եւ ապա գիշեր ուրբաթուն<sup>11</sup>, և աւր շաբաթուն, և զգիշերն ի միասին ընթացեալ՝ յարութիւն<sup>12</sup>:

Ստ. Արդ՝ վասնզի յետ երից աւուրց արարչութեանն երևեցաւ արեգակն՝ լուսաւորաւքն հանդերձ, և յետ երից աւուրց երևեցաւ Արեգակն արդարութեան, Տէր մեր՝ ասելով. «Ես լոյս յաշխարհս<sup>13</sup> եկի» (Յովհ. ԺԲ 46):

Այլև կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւաւտն ո՛չ գտին զմարմին նորա: Եկին և ասեն, թէ

<sup>1</sup> B չիք և  
<sup>2</sup> B Սիմէոնի  
<sup>3</sup> B Սա կայ  
<sup>4</sup> B կանգնումն բազմաց ի մէջ Իսրայելի  
<sup>5</sup> B յայտնեսցի  
<sup>6</sup> B խորհուրդ  
<sup>7</sup> B բնաւ  
<sup>8</sup> B Այլև հանդերձ  
<sup>9</sup> B յորմէ հետէ  
<sup>10</sup> B վկայէ  
<sup>11</sup> B սրբ. շաբաթուն  
<sup>12</sup> B յարութեան  
<sup>13</sup> B յաշխարհ

տեսիլ ևս հրեշտակաց տեսաք: Եւ այնք տեսին զնա, որք ասէին զնմանէ, թէ կենդանի է<sup>1</sup> (ԻԴ 22-23):

300ա Իգ. // Ձի թէպէտ ազգատոհմք<sup>2</sup> էին հրէիցն, սակայն որոշեն զանձինս ի նոցանէ իբրև արդար յամպարչտէ<sup>3</sup>: Եւ կարգեն զանձինս Քրիստոսի աշակերտս՝ ասելովն. «Կանայք ի մէնջ<sup>4</sup>», քանզի յառաքելոցն<sup>5</sup> էին և սոքա ի գալ կանանցն ի գերեզմանէն և ի պատմել զ[յ]արութիւն Տեառն: Ձի թէպէտ զպատշաճ գիտութեան<sup>6</sup> վասն Քրիստոսի ո՛չ ունէին, սակայ[ն] որչափ հասու եղեն, ո՛չ ծածկեն ի ստուգութեանցն, այլ բարեմտութեամբ ասեն հաւաստի զառաջին սքանչելիսն և զարդարութիւն նորա և զ[յ]անդգնութիւն<sup>7</sup> հրէիցն և զյարութիւն<sup>8</sup> Տեառն, որչափ լուան: Թուի ինձ, թէ զնա ընդ ում խաւսէին, կամէին ձգել ի հաւատս Յիսուսի<sup>9</sup>, կարծելով, թէ ի թշնամեացն իցէ, զի մի՛ խաւսեսցի բանս հայհոյութեան:

Գնացին<sup>10</sup> ոմանք ի մէնջ ի գերեզմանն և գտին նոյնպէս, որպէս և<sup>11</sup> կանայքն ասացին, բայց զնա ո՛չ [տեսին] (ԻԴ 24):

Վասն հաւատոյ կապակցութեան զգացուցանեն զինքեանս ընդ առաքելսն, որք<sup>12</sup> ընդ նմա շրջէին<sup>13</sup> հանապազ: Վասն որոյ ասեն. «Գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն և գտին նոյնպէս, որպէս և<sup>14</sup> կանայքն ասացին, բայց զնա ո՛չ տեսին»: Որ է<sup>15</sup> Պետրոսի և Յովհաննու գնալն ի գերեզմանն, և զկտաւսն միայն գտին և զվարչամակն ծալեալ<sup>16</sup> (տե՛ս Յովհ. 7): Արդարապատումն եղեն հասու եղելոցն, յայնժամ սկսան ի<sup>17</sup> Յիսուս վկայել վասն անձինն:

<sup>1</sup> B Այլև կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւառս չոգան ի գերեզմանն և ոչ գտին զմարմինն նորա: Եկին և ասեն, թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ, թէ կենդանի է:

<sup>2</sup> B ազգատոհմ

<sup>3</sup> B արդարք ի յամբարչտէ

<sup>4</sup> B մէնջ զարմացուցին զմեզ

<sup>5</sup> B ընդ առաքելոցն

<sup>6</sup> B գիտութիւն

<sup>7</sup> B գանգիտութիւն

<sup>8</sup> B զգաւրութիւն

<sup>9</sup> B Քրիստոսի

<sup>10</sup> B Եւ գնացին

<sup>11</sup> B չիք և

<sup>12</sup> B որ

<sup>13</sup> B շրջեցան

<sup>14</sup> B չիք և

<sup>15</sup> B է իսկ

<sup>16</sup> B չիք ծալեալ

<sup>17</sup> B Սկսանի և *փիս* սկսան ի

**Ո՛վ անմիտք<sup>1</sup>** (ԻԴ 25):

*Թանճրամիտս կոչէ յուսանելն, քանզի բազում անգամ լուեալ ի նմանէ՝ ի միտ ո՛չ առին<sup>2</sup>:*

**Հեղգասիրտք<sup>3</sup>** (ԻԴ 25):

**300բ** *Զի ո՛չ ի մարգարէիցն կամեցան հայել ի բանս // և անտի ուսանել զճշմարտութիւն[ն] վասն Քրիստոսի մարդեղութեանն և փրկագործ չարչարանացն: Եւ որպէս Տէրն ասէր ցքահանայսն. «Քննեցէք զգիրս» (Յովհ. Ե 39) մարգարէիցն, որ են կեանք հաւանողացն: Զոր Երեմիայ ասէ. «Սա է<sup>4</sup> Աստուած, Աստուած մեր, զոր մեք ո՛չ գիտէաք» (հմմտ. Բարուք Գ 36), և «Յետ այսորիկ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ» (Բարուք Գ 38): Մի՛ ինչ երկրային իմանալ վասն Տեառն, այլ աստուածավայելուչ և երկնայինս իմանալ վասն տնաւրէնութեան Տեառն:*

**Հաւատալ ամենայնի<sup>5</sup>, զոր խաւսեցան մարգարէքն, զնոյն<sup>6</sup> պարտ էր չարչարել Քրիստոսի** (ԻԴ 25-26):

*Վասն այնորիկ գումարեալք ի միասին մարգարէքն հանդիսացան, և ի գիրս դրոշմեցին զամենակեցոյցաբար<sup>7</sup> չարչարան[ս] Տեառն: Վասն որոյ ասաց ի խաչին, թէ՛ «Ամենայնն<sup>8</sup> կատարեցաւ» (հմմտ. Յովհ. ԺԹ 30): Զոր Հոգին Սուրբ ազդեաց մարգարէիցն և աւրինացն, և հաւատարմացան բանք ծառայից իւրոց: Վասն որոյ ասէ.*

**Զնոյն պարտ էր չարչարել Քրիստոսի** (ԻԴ 26):

*Զի ցուցցէ, թէ՛ վասն չարչարանացն և անարգանացն եղև գալուստ նորա և ո՛չ զի յերկրի մարմնական պատուով իշխել բազմաց:*

**Եւ մտանել ի փառս իւր** (ԻԴ 26):

*Ո՛չ ստացական պատիւ, ո՛չ<sup>9</sup> չարչարանաց պարգևս ասել<sup>10</sup>, այլ զիւրն սեփական և ընտանի<sup>11</sup>: Ըստ այնմ՝ «Հայր փառաւորեայ*

<sup>1</sup> B Ո՛վ անմիտք և Հեղգասիրտք ի հաւատալ ամենայնի:  
<sup>2</sup> B **չէք** քանզի... առին  
<sup>3</sup> B Հեղգասիրտս կոչէ (սկզբում սրբ.՝ և)  
<sup>4</sup> B **չէք** սա է  
<sup>5</sup> B յամենայնի  
<sup>6</sup> B սրբ.՝ ոչ զնոյն  
<sup>7</sup> B զամենակեցոյցաբեր  
<sup>8</sup> B Ամենայն  
<sup>9</sup> B սրբ.՝ և ոչ  
<sup>10</sup> B առեալ **փի** ասել  
<sup>11</sup> B ընդանի

զՈրդի քո առ ի քէն փառաւքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն» (Յովհ. Ժ 1, 5): Արդ՝ այս բանիւքս<sup>1</sup> յերևելեացս ի բաց տանի զմիտս նոցա: Եւ ձգէ յաստուածավայելուչ փառացն տեսութիւն, զի թէ ես՝ ի փառս, դուք, // որք հաւատայք իմ չարչարանացս փրկագործութեան, ի փառաւորութիւն փոխիք, զի զփառաւորիչս իմ փառաւորեցից, և զի սթափեսցին ի տրտմականացն սիրելիք նորա<sup>2</sup>՝ փառացն խնդութեամբ:

Սկսեալ<sup>3</sup> ի Մովսիսէ և ի<sup>4</sup> մարգարէիցն<sup>5</sup> մեկնէր նոցա, որ ինչ յամենայն գիրս գրեալ էր զնմանէ (ԻԴ 27):

Թուի, թէ ո՛չ վասն չարչարանացն և յարութեանն միայն<sup>6</sup> խաւսեցաւ զվկայութիւն մարգարէիցն, այլ և յիջանելոյն յերկնից մինչ ի կատարումն վերանալոյն յերկինս առ Հայր յամենայն<sup>7</sup> տնաւրինականսն, զոր տեսին նոքա, մերձ դնէ զվկայութիւն մարգարէիցն: Եւ զարթոյց զմիտս նոցա որպէս ի քնոյ (հմմտ. 3ռոմ. ԺԳ 11), և վերացաւ քաւղն<sup>8</sup>, որ արկաւ ի վերայ Հին Կտակարանացն, որպէս ասաց առաքեալ (հմմտ. Բ Կորնթ. Գ 14), զի դիւր ընծայ արասցէ նոցա զամենայն միտս գրոց մարգարէից[ն] և աւրինացն:

Իբրև մերձեցան ի գեւղն<sup>9</sup>, յոր երթային, և նա պատճառէր հեռագոյնս<sup>10</sup> ուրեք երթալ (ԻԴ 28):

Զի յայտնեսցի սէր նորա<sup>11</sup>, որով հաստատեցան առ նա<sup>12</sup>: Զի թէպէտ ո՛չ գիտացին սա<sup>13</sup> Քրիստոս իցէ, բայց սիրովն Քրիստոսի ջերմացան եռանդեամբ, զգործս Քրիստոսի աւետարանաց[ն] հրաշագոյն<sup>14</sup> փառաւորութեամբ, զի առ սէրն Քրիստոսի քաղցրանայ ի քիմս<sup>15</sup> նոցա բանք Տեառն<sup>16</sup> քան զմեղր բերանոյ: Եւ

<sup>1</sup> Բ բանիւք

<sup>2</sup> Բ սրբ.՝ իմ փխ նորա

<sup>3</sup> Բ Եւ սկսեալ

<sup>4</sup> Բ յամենայն փխ ի

<sup>5</sup> Բ մարգարէից

<sup>6</sup> Բ չիք միայն

<sup>7</sup> Բ առ ամենայն

<sup>8</sup> Բ վերացոյց գեւղն

<sup>9</sup> Բ գեւղն

<sup>10</sup> Բ հեռագոյն ևս

<sup>11</sup> Բ նոցա

<sup>12</sup> Բ նա ի հաւատս

<sup>13</sup> Բ թէ փխ սա

<sup>14</sup> Բ հրաշափառագոյն

<sup>15</sup> Բ քաղցրանային քիմք

<sup>16</sup> Բ չիք բանք Տեառն

301բ Հեշտացաւ ի լսելիս նոցա քան զամենայն երգոց, և զի ո՛չ կամէին, թէ բնաւ լռեսցէ [ի] խաւսելոյ ընդ նոսա: Վասնզի այսպէս [է] բնութեանս կիրք արտորժաբար լսել զբանս սիրել(//)եացն և բարեկամացն, իսկ զթշնամեացն դժպատեհ խոշորի լսելն խոժոռ<sup>1</sup> դիմաւք, որպէս քահանայքն<sup>2</sup> հրէից առ Տէրն: Եւ յետ այնորիկ առ քարոզս աստուածութեան նորա, որպէս առաքեալն ամբաստանէ՝ ասելովն. «ՁՏէրն սպանին, և զմարգարէսն և զմեզ հալածեցին» (Ա Թես. Բ 15): Եւ ամենայն մարդկան փրկութեան հակառակ եղեն, որով սոքա կամէին ընդ հովանեաւ նորա բնակել, զի՝ «Քաղցր է բանք քո՝<sup>3</sup> ի կոկորդս նոցա» (հմմտ. Սաղմ. ԾԺԸ 103):

**Բռնադատեցին<sup>4</sup> զնա և ասեն. Առ մեզ ազիր, զի ընդ երեկս<sup>5</sup>, և տարածամեալ է աւրս (ԻԴ 29):**

Ձայս արարին և հրեշտակքն ի Սողոմ<sup>6</sup>, զի յայտնեսցեն զհիւրասիրութիւն արդարոյն Ղովտայ<sup>7</sup> և ասէին. «Ի քաղա[քա]միջի աստ ազցուք» (Ծննդ. ԺԹ 2): Եւ նա<sup>8</sup> բռնադատեաց զնոսա մինչև հաւանեցոյց մտանել<sup>9</sup> ի տուն նորա<sup>10</sup>: Ըստ նմին և աստ Տէրն:

**Եմուտ ազանել ընդ նոսա (ԻԴ 29):**

ՍՏ Ըստ այնմ, եթէ՝ «Ես<sup>11</sup>, որ զիսն սիրեն՝ սիրեմ» (Առակ Ը 17), և՝ «Բաշխեմ պարգևս բարեկամաց իմոց» (հմմտ. Առակ Ը 21): Վասնզի առ ցանկացողս իւր արտորժելով բնակէ Աստուած: Որպէս ցՁաքէոս<sup>12</sup> ասէր. «Այսաւր ի տան քում արժան [է] ինձ ազանել<sup>13</sup>» (ԺԹ 5): Նոյնպէս և աստ արդարոյն<sup>14</sup> եղև:

**Եղև ի բազմել նորա առ նոսա, առ հաց, աւրհնեաց, երեկ, ետ նոցա<sup>15</sup> (ԻԴ 30):**

<sup>1</sup> Բ խաւթամիտ խոժոռ

<sup>2</sup> Բ քահանայապետքն

<sup>3</sup> Բ սրբ.՝ բանն Քրիստոսի

<sup>4</sup> Բ եւ բռնադատեցին

<sup>5</sup> Բ երեկս է

<sup>6</sup> Բ Սողոմ

<sup>7</sup> Ը Ղաւտայ

<sup>8</sup> Բ անդ

<sup>9</sup> Բ զնոսա մտանել

<sup>10</sup> Բ իւր

<sup>11</sup> Բ չիք ես

<sup>12</sup> Բ ընդ Ձաքէոս

<sup>13</sup> Բ Այսաւր արժան է ինձ ի տան քո ազանել:

<sup>14</sup> Բ արանցն յԵմաուուս փիս արդարոյն

<sup>15</sup> Բ Եւ եղև ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն, աւրհնեաց, երեկ և ետ նոցա:

- ԻԳ** Պատիւ արարին նմա, որպէս մարգարէի կամ քահանայի, զի որքան հասու եղեն, պատուեն<sup>1</sup> որպէս վարդապետ կատարեալ: Եւ տան զհացն ի ձեռս նորա աւրհնել, որ<sup>2</sup> «Բանայ զձեռն և լցուցանէ զամենեսին<sup>3</sup>» (Սաղմ. ՃԽԴ 16)՝ ըստ Դաւթայ: Եւ այսպէս
- 302ա** Հաճի զմիտս<sup>4</sup> նոցա: Նոցա<sup>5</sup> բացան // աչք, և ծանեան զնա: Արդ՝ ի կատարել տնաւրինականացն, այնուհետև Աստուած ցուցաւ ամենեցուն: Եւ փոքր ինչ ծանուցանէր զինքն որպէս մարգարէիցն:
- ՈՎ.** Յուցանէ և գողանայ, քանզի գիտէ զմեր փրկութիւն[ն]:

Եւ նա եղև ի նոցանէ աներևոյթ (ԻԴ 31):

Արդ՝ այսչափ եղև առ նոցա, խաւսեցաւ<sup>6</sup> ծածկելով զինքն ի նոցանէ: Զի յորժամ ծանոյց զինքն, յայնժամ յափըչտակեաց զինքն, այսինքն՝ զանձն ի նոցա յաչացն: Վասնզի որք Աստուած գիտացին զնա, որպէս Սիմէոն<sup>7</sup> և Յովհաննէս, փոքր ինչ ըստ բաղձանաց<sup>8</sup> արժանացան տեսանել զնա, այլ ո՛չ հանապազ զաւրէին: Բայց որք իբրև զմարդ տեսանէին զնա, համարձակ մերձեցան: Վասն որոյ ասէ<sup>9</sup>. «Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն<sup>10</sup>» (ԺԷ 22), յորս ուսուցանէի զձեզ:

- ՈԿ** Որպէս ասաց ի Գործս Առաքելոցն. «Ի բազում արուեստս<sup>11</sup> յաւուրս քառասունս երևեալ<sup>12</sup> նոցա» (Գործք Ա 3), զի ո՛չ որպէս նախքան զ[յ]արութիւն միշտ ընդ նոսա էր և ո՛չ նոյնպէս զկնի յարութեանն, զի ի վերայ հասեալ լինէր: Եւ դարձեալ ի բաց թուցեալ լինէր՝ ճշմարտելով զյարութիւն[ն] և ո՛չ տակաւին թուլացուցանէր<sup>13</sup>, առ ինքն հաստատիլ<sup>14</sup> որպէս յառաջն: Հաւատարիմ լինել յարութեանն մարմնով՝ միութեամբ աստուածութեանն, և մեծ քան զմարդ աստուածավայելուչ փառահրաշ, քանզի յաղագս հաւատարիմ լինելոյ յարութեանն բազում ինչ պարտ էր լինել մարդկաւրէն, իսկ համբարձումն՝ աստուածաբար:

<sup>1</sup> B սրբ.՝ պատուէին

<sup>2</sup> B այնմ, որ

<sup>3</sup> B զամենեսեան

<sup>4</sup> B միտք

<sup>5</sup> B և նոցա

<sup>6</sup> B առ նոսա, խաւսեցաւ առ նոսա

<sup>7</sup> A Սիմէոն B Սիմէովն

<sup>8</sup> A բաղձանաց

<sup>9</sup> B ասաց

<sup>10</sup> B յաւուրց (սրբ.՝ յաւուրցն իմ) տեսանել

<sup>11</sup> A արվեստս, «ի բազում արուեստս»՝ սրբ. է լուսանցքում գրչի ձեռքով:

<sup>12</sup> B երևել

<sup>13</sup> B թողացուցանէր

<sup>14</sup> B սրբ.՝ հասանել



302բ Եւ ասէին ցմիմեանս. Ո՞չ և սիրտք // ի մեզ, մինչ խաւսէրն ընդ մեզ ճանապարհաւն, որպէս բանայր մեզ զգիրս<sup>1</sup> (ԻԴ 32):

Իգ. Այս իրք բազմաց պատահէ հեշտակեացն կամ տրտմական կրիցն յառաջիկայսն<sup>2</sup> խառնիլ զայնպիսի<sup>3</sup> իրս խաւսէր ընդ նոսա, յորոց ի բանիցն ճմլէին սիրտք նոցա: Եւ, յորժամ ընդ նոսա էր, ո՛չ յայտնէին զայս առ միմեանս, այլ միայն նորա բանիցն ուշ ունէին: Իսկ ի մեկնել[ն] ի նոցանէ խոստովան լինէին զկիրս սրտից խանդաղատական գորովոյն, որպէս մանկունք առ ծնաւղս[ն] բերանաբաց լեալ:

Եւ յարուցեալ նոյնժամայն դարձան յԵրուսաղէմ<sup>4</sup> (ԻԴ 33):

Արդ՝ վասն մեծի խնդութեանն ո՛չ ժուժեն մնալ ի նմին տեղոջ<sup>5</sup>, այլ փութան գան<sup>6</sup> տալ աւետիս առաքելոցն, զի ասէին<sup>7</sup>.

Թէ<sup>8</sup> արդարև յարեաւ Տէր և երևեցաւ Սիմոնի<sup>9</sup> (ԻԴ 34):

Եւ գտանէին զնոսա, զի զնոյն աւետեաց ձայն, և նոքա բարբառէին առ միմեանս, ուր<sup>10</sup> ժողովեալ էին ի միասին ամենեքին դրաւքն փակելովք:

Եւ նոքա պատմէին զայն, որ առ ճանապարհայն<sup>11</sup> (ԻԴ 35):

Եւ յիշէին, զոր ի ճանապարհի անդ խաւսեցաւ ընդ նոսա զբանս մարգարէիցն, զոր խաւսեցան Հոգովն Սրբով վասն Քրիստոսի կենսաբեր<sup>12</sup> տնաւրէնութեանն:

Եթէ<sup>13</sup> զիա՞րդ ետ ծանաւթ<sup>14</sup> ի բեկանել հացին (ԻԴ 35):

US Զի ի հազորդել հացին ծանեան զնա. «Զհացն<sup>15</sup> կենաց, որ էջ յերկնից<sup>16</sup>» (Յովհ. Զ 41), և տայ կեանս մարդկան:

<sup>1</sup> B Եւ ասեն ցմիմեանս. Ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին ի մեզ, մինչ խաւսէրն ընդ մեզ զճանապարհայն, և որպէս բանայր մեզ զգիրս:

<sup>2</sup> B յառաջակայսն

<sup>3</sup> B զի այնպիսի

<sup>4</sup> B յԵրուսաղէմ և գտին

<sup>5</sup> B տեղւոջ

<sup>6</sup> B գալ և

<sup>7</sup> B չիք զի ասէին

<sup>8</sup> B Եւ գտին ժողովեալ զմետասանն և, զորս ընդ նոսայն էին, և ասեն, Թէ

<sup>9</sup> B Սիմովնի

<sup>10</sup> B որք փիս ուր

<sup>11</sup> B զճանապարհայնն փիս առ ճանապարհայն

<sup>12</sup> B չիք կենսաբեր

<sup>13</sup> B Եւ Թէ

<sup>14</sup> B ծանաւթս նոցա

<sup>15</sup> A զի հացն

<sup>16</sup> A, B ի յերկնից

Մինչդեռ զայն խաւսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ<sup>1</sup> (ԻԴ 36):

*Բայց զի լցցէ զցանկութիւն ամենեցուն ի միասին:*

303ա // **Ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ նոցա** (ԻԴ 36):

*Զի, զոր լսէին ի տեսողաց<sup>2</sup> անդի, տեսցեն աչաւք<sup>3</sup>, որ հաւատարիմ է քան զլուր ականջաց: Եւ մի՛ կրեսցեն արհամարհանս որպէս Թո[վ]մաս, որ ղեգերեալ արտաքս<sup>4</sup>՝ ո՛չ ետես զՏէրն:*

**Խաղաղութիւն<sup>5</sup> ընդ ձեզ: Ես եմ, մի՛ երկնչ[իք]** (ԻԴ 36):

*Բառնայ գերկի[լ]ղ ի նոցանէ և զուարթացուցանէ ըզտր[տ]մեալ ոգիսն: Եւ կացուցէ<sup>6</sup> զնոսա զամենեսին վկայս անարատ ծննդեանն զգոլրսն փակեալ, զոր եմուտ առ նոսա: Այս այն է, զոր Յովհաննէս գրեաց. «Ի միաշարաթոջ աւուրն» (Յովհ. Ի 19) երեկոյին, ուր էին ժողովեալ աշակերտքն վասն<sup>7</sup> ահին հրէից, և այնպէս, առանց ազգումն ինչ առնելոյ, եկաց ի մէջ նոցա<sup>8</sup> և ետ ողջոյն:*

**Եւ զահի հարեալ՝ երկնչէին, և համարէին ոգի ինչ տեսանել** (ԻԴ 37):

ստ. *Երկեան վասն փակեալ դրանցն և անմարմնապէս մտանելոյն առ նոսա:*

Ոկ. *Վասնէ՞ր ո՛չ ամենեցուն մարդկան վատթարաց, այլ առաքելոցն երևեցաւ և արժանաւորացն: Զի մի՛ տեսիլ ինչ առ աչաւք թուեսցի<sup>9</sup> բազմաց, որ ո՛չ գիտէին զանճառելի խորհուրդ տնաւրէնութեանն: Քանզի, թէ աշակերտք[ն] թերահաւատեցին ի սկզբանն և խռովեալ լինէին, և շաւշափման կարաւտացան ձեռաց և սեղանոյ, զի՞նչ այլոցն պարտ էր կրել:*

303բ **Ասէ<sup>10</sup> ցնոսա. Զի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդ[ք] ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. // շաւշափեցէք զձեռս իմ և զոտս<sup>11</sup>** (ԻԴ 38-39):

<sup>1</sup> B մէջ նոցա

<sup>2</sup> A տեսաւրաց

<sup>3</sup> B տեսին աչաւք իւրեանց

<sup>4</sup> B արտաքոյ

<sup>5</sup> B Եւ ասէ ցնոսա. Խաղաղութիւն

<sup>6</sup> B կացուցանէ

<sup>7</sup> B Եւ զգոլրսն ամրագոյն փակեալ վասն

<sup>8</sup> B առ նոսա *փի* ի մէջ նոցա

<sup>9</sup> B թուիցի

<sup>10</sup> B Եւ ասէ

<sup>11</sup> B զիս և տեսէք *փի* զձեռս իմ և զոտս

**ԻԳ** Ծանալթ բանիւք խաւսի ընդ նոսա՝ բառնալով գերկի[ւ]ղն՝ շաւշափելով և ստուգելով վասն նորա:

**ՈԿ.** Արդ՝ վասն այսորիկ նշանաւք շաւշափել տայ և աներկուանալի<sup>1</sup> առնէ գյարութեանն աւրինակն: Զի ո՛չ միայն այնոքիկ, որ յայնժամ տեսանէին<sup>2</sup> զնա հաստատեցին<sup>3</sup> ի հաւատս, այլև ամենեքին, որ<sup>4</sup> յետ նոցա յայտնի լինել յարութիւն<sup>5</sup> Տեառն: Քանզի, եթէ ո՛չ յարուցեալ, զիա՞րդ առաքեալքն յանուն նորա մեռեալս յարուցանէին և նշան[ս] առնէին: Եւ եթէ ասեն<sup>6</sup> ո՛չ արար նշանս մեծամեծս, զանձինս խոցոտեն: Զի և այս նշան մեծ է, որ առ ամենայն<sup>7</sup> տիեզերս ընթացան: Տասն այր աղքատ և առանց դպրութեան մարդկան, և որսացին զարարածս: Քանզի ո՛չ փարթամութիւն ընչից, ո՛չ իմաստութիւն<sup>8</sup> բանից, ո՛չ զաւրութեամբ մարմնոյ յաղթեցին ձկ[ն]որսքն, այլ՝ աստուածային զաւրութեամբն, քանզի անհնար է մարդկան զաւրութեամբ այսչափ յաղթող լինել:

**Վասնզի<sup>9</sup> մարմին և ոսկր<sup>10</sup> ո՛չ ունի, որպէս զիս տեսանէք, զի ունիմ (ԻԴ 39):**

*Վասնզի, որ թանձրանալի և երևոյթս յայտնի, մարմնապէս ըմբռնմամբ ո՛չ ունին, դեւք են:*

**Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռս<sup>11</sup> և զոտս (ԻԴ 40):**

**304ա** *Ո՛չ մարմնով միայն տայ ծանալթութիւն, այլև վիրաւքն ձեռաց և ոտից և կողիւն<sup>12</sup>, յորմէ վտակք երկուք՝ մաքրիչ և կենդանացողցիչ հոսեաց, լուաց<sup>13</sup> և նոր ստացաւ զբնութիւնս վասն դժ[ու]արահաւ[ու]ան բնութեանս և ի լուծումն հակառակորդացն, քանզի զամենայն սխալանս տեսաւորութեանս<sup>14</sup> յանդիմանեն ձեռք մերձաւորութեամբ: Վասն այսորիկ Յովհաննէս հաստատեաց վկայութեամբ՝ ասելով. «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաք»*

<sup>1</sup> B անյերկուանալի  
<sup>2</sup> B տեսին  
<sup>3</sup> B հաստատեցին  
<sup>4</sup> B որք  
<sup>5</sup> B յարութեան  
<sup>6</sup> B ասացեն  
<sup>7</sup> A ամենայն այն  
<sup>8</sup> B իմաստութեամբ  
<sup>9</sup> B Զի ոգի ~~փի~~ վասնզի  
<sup>10</sup> B ոսկերս  
<sup>11</sup> B զձեռսն  
<sup>12</sup> B ձեռացն և ոտիցն և կողին  
<sup>13</sup> A լվաց  
<sup>14</sup> B ամենայն սխալանք տեսանելեացս

(Ա Յովհ. Ա 1) *ի մարգարէիցն: Բանն Աստուած թանձրացաւ ի մարմնի և ականատեսք և սպասաւորք եղաք: Եւ հայեցաք ընդ նա հաստատութեամբ, և ձեռք մեր շաւշափեցին զԲանն ի մարմնի միացեալ, և բոլորն Աստուած, աստուածախառն մարմնովն փրկեաց զմեզ: Եւ դարձեալ. յետ ութ աւուր զնոյն աւրինակ հաստատութեան հաւատոյ դնէ թովմայի առաջի: Յովհաննէս և Ղուկաս ցուցանեն միաբան զայս ի միաշաբաթոջ աւուրն, յերեկորեան<sup>1</sup> ժամուն՝ երևեալ նոցա յԵրուսաղէմ: Իսկ Մատթէոս՝ «Գնացին մետասանքն ի Գալիլիայ<sup>2</sup> ի լեառն, ուր ժամադիր եղև նոցա Յիսուս» (Մատթ. ԻԸ 16):*

**Ստ.** *Թուի<sup>3</sup> ինձ, եթէ ի լերինն Ձիթենեաց էր տունն, յորում ժողովէին<sup>4</sup> աշակերտքն, որ<sup>5</sup>, ամրափակ դրամ[ը]ք, վասն երկի[ւ]ղին հրէիցն և ի կասկածի կային: Ձի երկնչէին մտանել ի քաղաքն, և արտաքոյ քաղաքին թաքստի կացեալ՝ յերեկորին<sup>6</sup> ժողովեալ էին<sup>7</sup> ի տունն, որ ի լերինն Ձիթենեաց՝ դրափակաւք<sup>8</sup>: Յայն, յորում եկն Յիսուս, եկաց ի մէջ նոցա և ետ<sup>9</sup> շաւշափել զմարմինն, յաղազս որոյ ի լերինն Ձիթենեաց էր Գալիլիայ<sup>10</sup>, անունն փոքր, լեռնակ բլրաձև: Ըստ Մատթէոսի, որ աշակերտացն երև(//)եցաւ՝ ասելով. «Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մատթ. ԻԸ 19): Նոյնպէս և ասէ Յովհաննէս զաշակերտացն առաքումնն: Նախ՝ զնոսա ի Գալիլիայ<sup>11</sup> եհան, զի զարհուրեալք էին, զի յապահովս լուիցեն զասացեալսն (տե՛ս Յովհ. Ի 19-25):*

**Մինչդեռ<sup>12</sup> տակաւին չհաւատային, ի խնդութենէն զարմացեալք<sup>13</sup> էին** (ԻԴ 41):

**ԻՓ** *Այս է բնութեանս կիրք, զի յորում մեծի ունին ցանկութիւն, առաւել երկբայաբար ունին զկարծիսն, և յորմէ զարհուրի և ատելութեամբ ի բաց դառնայ, այնմ կարի հաւատայ լինել: Ուստի և այն, որ գիտէ զկիրս բնութեանն, քանզի առ մեծ բաղձանացն<sup>14</sup>*

<sup>1</sup> B յերեկոյան

<sup>2</sup> B Գալիլեայ

<sup>3</sup> A Թըվի

<sup>4</sup> B էին ժողովեալ

<sup>5</sup> B *չէք* որ

<sup>6</sup> B *սրբ.*՝ յերեկոյին

<sup>7</sup> B ժողովէին

<sup>8</sup> B փակեալ դրամք

<sup>9</sup> B հրամայեաց *փխ* ետ

<sup>10</sup> B Գալիլեայ

<sup>11</sup> B Գալիլեայ

<sup>12</sup> B Եւ մինչդեռ

<sup>13</sup> B և զարմացեալ

<sup>14</sup> A բախձանացն

էր, զոր ախտացան, յաղագս որոյ ո՛չ ի բաց դառնայ Տէրն, այլ լուծանէ զկարծիսն, զի հաստատագոյնս գիտացեն, թէ նա է: Թուի, թէ այս է Մատթէոսի ասելն, թէ՛ «Ոմանք յերկուացան» (Մատթ. ԻԸ 17), և Յովհաննու ասելն. «Խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր» (Յովհ. Ի 20): Իսկ Ղուկաս զամենայն կարգէ՛ յաւդեալ ընդ միմեանս, զոր յայնժամ պատահեաց կրել նոցա:

ՅԿ. Եւ զինչ առնէր զաւուրս քառասունս՝ երևելով՛ նոցա: Ճառէր վասն արքայութեանն Աստուծոյ, քանզի աշխատեալք էին և խոռովեալք եղելովք անդրէն: Եւ հանդերձեալ էին առ մեծամեծ վաստակս ելանել: Յաղագս հանդերձելոց իրացն զնոսս արծարծէր բանիւք, զի յերկար ժամանակաւն տեսութեանն և յերկրի՛<sup>2</sup> երևմանն մի՛ տեսիլ կարծիցեն զերևումն Քրիստոսի:

305ա // Ասէ ցնոսա. Ունի՞ք ինչ ուտելոյ՞<sup>3</sup>: Եւ նոքա ետուն<sup>4</sup> ձկան խորովելոյ մասն և խորիսխ մեղու (ԻԴ 41-42):

Իգ. Ապա և կերակուր խնդրէ ի նոցանէ: Եւ դնեն առաջի նորա սեղան, որպէս և նախքան զչարչարանսն:

Առ<sup>5</sup> եկեր առաջի նոցա (ԻԴ 43):

Եկեր յետ յարութեանն ո՛չ վասն պիտոյից, այլ զի ամենայնիւ հաւատարիմ ցուցցէ զաւրութիւն<sup>6</sup>, եթե արդարև մարմինն այն, որ կրեաց զանարգանսն և համբեր խաչի, նոյն է, որ յարոյց զանձն իւր: Յաղագս որոյ ըստ առաջին սովորութեանն եկեր առաջի նոցա: Զի ամենայն կարծիք, որ վասն մարմնոյն իցեն, ի մտաց մաքրեալ լիցին՝ հաղորդել<sup>7</sup> ընդ նոսա հացիւ:

Եւ զմնացորդսն ետ նոցա<sup>8</sup> (ԻԴ 43):

Սեղանակից լինելով նմա<sup>9</sup> աշակերտքն: Եւ զայս ինչ միշտ նշան տային առաքեալքն յարութեանն Տեառն՝ ասելով. «Որք կերաք և արբաք ընդ նմա» (Գործք Ժ 41), զոր Պետրոս առ հաւատացեալսն դնէր վկայութիւն: Այսպէս ամենայն ուստեք<sup>10</sup> յայտնապէս զայս ցուցանեն:

<sup>1</sup> B երևել

<sup>2</sup> A, B ի յերկրի

<sup>3</sup> B կերակուր աստ

<sup>4</sup> B ետուն նմա

<sup>5</sup> B եւ առ

<sup>6</sup> B զյարութիւնն *փի* զաւրութիւն

<sup>7</sup> B սրբ.՝ ի հաղորդելն

<sup>8</sup> B ցնոսա

<sup>9</sup> B ընդ նմա

<sup>10</sup> B ուրեք

**Ասէ<sup>1</sup>. Այս բանք են, զոր խաւսեցայ ի ձեզ, մինչ առ ձեզն<sup>2</sup> էի** (ԻԴ 44):

*Յուշ առնէ զառաջինսն, զի մի՛ ինչ վայրապար իրք կարծիցեն<sup>3</sup>, այլ տնաւրէնութիւն<sup>4</sup> աստուածային: Որպէս հրեշտակքն ասէին ցկանայսն. «Յիշեցէք զբանս նորա» (ԻԴ 8) մինչ էրն ի Գալիլիայ<sup>5</sup> և ասէր, թէ՛ «Պարտ է Որդոյ<sup>6</sup> մարդոյ մատնիլ ի ձեռս մեղաւորս<sup>7</sup>» (ԻԴ 7): Զի յեկեց իրացն ծանիցեն, թէ ո՛չ բռնադատեալ*

**305բ** *յուժեքէ վարեցաւ յայն, այլ ինքն սահմանեաց // յառաջագոյն, և եկեալ՝ կարգաւ կատարեաց: Զի որպէս յառաջ քան զլինել գործոյն պիտանացու էր ասելն, նոյնպէս և յեկեցն լրման կար[ի] պատշաճէր:*

**Թէ պարտ է լնուլ ամենայն գրելոցն յաւրէնսն Մովսի[սի]** (ԻԴ 44):

*Յայտ առնէ զանչափ խնամս տեսչութեանն Աստուծոյ, զի և յաւրինացն գուշակեցաւ յառաջագոյն զալուստն Տեառն<sup>8</sup>:*

**Եւ ի մարգարէս** (ԻԴ 44):

*Զի և մարգարէքն ամենայն վասն նորին<sup>9</sup> հանդիսացան կանխաւ ժամանակաւ, և վկայս կացոյց զնոսա: Զի յեկեց իրացն և դաժանագոյն<sup>10</sup> կրիցն և դժպատեհ մարդկան կարծեաց մտաց անվայելուչ գոլ Աստուծոյ մի՛ ոք արտասցի, այլ անդուստ կալեալ վկայութիւն՝ դիւրաւ զհաւատս ընծայեսցեն Տեառն:*

**Եւ ի սաղմոսս<sup>11</sup> վասն իմ** (ԻԴ 44):

*Յերգս Դաւթի ի բազում տեղիս վկայէ վասն Քրիստոսի գալստեանն, իսկ աստ ուրոյն ուրոյն բարժանեալ<sup>12</sup> զվկայութիւն «գաւրինացն և զմարգարէիցն և զսաղմոսին» Դաւթի: Եւ տայ իմանալ զմեծութիւն խորհրդոյ տնաւրէնութեանն, եթէ Հինն ամե-*

<sup>1</sup> B Եւ ասէ

<sup>2</sup> B ձեզ

<sup>3</sup> B կարծիցին

<sup>4</sup> B տնաւրէնութեանն

<sup>5</sup> B Գալիլեայ

<sup>6</sup> B Որդոյ

<sup>7</sup> B մարդոց մեղաւորաց

<sup>8</sup> B Քրիստոսի

<sup>9</sup> B մարդեղութեանն *փխ* նորին

<sup>10</sup> B *սրբ.* ի դաժանագոյն

<sup>11</sup> B սաղմոսսն

<sup>12</sup> B բարժանեալ

նայն ի պէտս այսոցիկ հաստատեցաւ, զի քարոզք լիցին<sup>1</sup>՝ առ ի կատարել զմիտս բազմաց ի հանդէս հաւատոց Տեառն առանց կարծեաց: Նորին աղագաւ ո՛չ աւրէնս միայն ասաց, այլև «մարգարէս և սաղմոսս», զի մի՛ չարք ի մարդկանէ զմինն միայն կրթեսցեն զբանն և զայլ վկայութիւնսն խոտեսցեն: Բարժանէ<sup>2</sup> զանուանան, և զի մի՛ շփոթեալ՝ ի բաց ընկեսցեն<sup>3</sup> յաւգտակարաց անտի: Նորին աղագաւ և ճանապարհն Եմ(//)աւուսայ<sup>4</sup> խաւսեցաւ՝ ի Մովսիսէ<sup>5</sup> սկսեալ և յամենայն մարգարէիցն, բանայր զգիրս վկայութիւն<sup>6</sup>:

306ա

**Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս (ԻԴ 45):**

Եւ Յովհաննէս ասէ. «Փչեաց ի նոսա և ասէ. Առէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի 22): Զարթոյց զմիտս նոցա որպէս ի քնոյ՝ իմանալ զբանս մարգարէիցն, որք կանխաւ քարոզեցին: Եւ յայտնեցին զխորհուրդս իջանելոյ և միաւորելոյ<sup>7</sup> ի մարմնի: Եւ մասնաւոր ինչ ի զաւրութենէ Հոգոյն ետ<sup>8</sup>, քանզի պատշաճ համարեցաւ Աստուած ո՛չ յանկարծակի ի մի<sup>9</sup> ժամու հեղուլ ի նոսա զՀոգոյն իմաստս՝ փոքր փոքր<sup>10</sup> ածելով ի կատարելութիւն: Զի որպէս ծագումն լուսոյ արեգականս<sup>11</sup> ո՛չ յանկարծակի արձակէ զսաստկութիւն ճառագայթիցն և ծագէ յերկիր, զի մի՛ տկարասցին տեսանելիք, ի խաւարէն յայն հասեալ վնասեցին<sup>12</sup> աչք, այլ կարգեաց ընդ երկրաւ մտանել և անդի առ սակաւ սակաւ տալ զլուսոյն առաւելութիւն ի ներքուստ ընդունողս, զի ընդունելութեամբ համարձակութիւն տացէ ընդունել զլուսոյն զաւրութիւն: Նոյնպէս և Յիսուս խնամէ զաշակերտսն, խուսն մի յաւել<sup>13</sup> ի նոսա ի շնորհաց Հոգոյն: Զի որպէս ի սկիզբն ժողովելոյն զնոսա յստակ վարդապետութեամբն և նշանաւքն յառաջ քան զխաչն, և ապա յաւելու զաւրութիւն՝ հանել զգեւս և բժշկել զհիւանդս<sup>14</sup>:

**US** Եւ քարոզել առաջի երեսաց նորա: Ըստ մարգարէին, թէ՛ «Եւ

1 B լինիցին  
 2 B բաժանէ  
 3 B ընկեսցին  
 4 B Նորին... Եմաւուսայ՝ սրբ. ձախ լս.  
 5 A Մովսիսէ  
 6 B վկայութեան  
 7 B միանալոյ  
 8 B և *փխ* ետ  
 9 B միում  
 10 B այլ առ սակաւ սակաւ *փխ* փոքր փոքր  
 11 B արեգականն  
 12 B վնասեցին  
 13 B և յաւել  
 14 B զհիւանդութիւնս

**306բ** փչող յերեսս քո» (Նաևուն Բ 1): Այն, որ փչեաց յԱ(//)զամ շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի: Ըստ Եսայայ<sup>1</sup> մարգարէութեանն. «Սա է Աստուած, որ արար զերկինս և հաստատեաց<sup>2</sup> զերկիր, և ետ շունչ ամենեցուն, որ կոխեն զնա» (Ես. ԽԲ 5):

**Ասէ<sup>3</sup> ցնոսա. Այսպէս<sup>4</sup> պարտ է չարչարել<sup>5</sup> Քրիստոսի** (ԻՂ 46):

**ԻԳ** Քանզի ո՛չ բռնութիւն մահու յաղթեաց<sup>6</sup>, որպէս Ադամայ և Իւրոցն<sup>7</sup>, և ո՛չ զաւրութիւն ինչ գոյր ապստամբացն՝ բռնաբար ձգել ի դատաստան<sup>8</sup> մահու, զայն, որ կրէ զամենայն բանիւ զաւրութեամբ իւրով և եղծանէ որպէս և կամի:

**ՍՏ** Զի<sup>9</sup> որպէս Իսահակ ո՛չ մեռաւ, բայց Աստուած ընկալաւ զենեալ<sup>10</sup> ի ձեռն խոյին (տե՛ս Ծննդ. ԻԲ 1-19), այսպէս և Բանին Աստուծոյ համարեալ է<sup>11</sup> մահ: Եւ ո՛չ ըստ բնութեան և մեռեալ, աստուածացեալ մարմնովն միացեալ և ընդ Բանին Աստուծոյ համարեալ է մահ<sup>12</sup>, և որպէս Յովսէփ մեռաւ ի կամս եղբարց իւրոց և յաչս հաւրն կենդանի էր: Մեռաւ և Տէրն մեր յաչս հրէիցն և Հաւր՝ կենդանի էր, զի կենացն<sup>13</sup> մահ ո՛չ յաղթէ:

**ՈԿ** Ուրեմն և յետ յարութեանն ուսուցանէ զաշակերտսն, այլ զժամանակս զայս ո՛չ ոք ասաց զամենայն: Այլ Յովհաննէս յերկարէ քան զայլսն և ստուգութեամբ զամենայնն պատմեաց. «Արդ՝ ուսաք<sup>14</sup> յառաքելոցն, քանզի զինչ լուանն<sup>15</sup> ասացին» (Իմմտ. Ա Յովի. Ա 1):

**Յառնել<sup>16</sup> ի մեռելոց յաւուր երրորդի** (ԻՂ 46):

**Յիսուս մեռաւ ըստ գրոց: Որպէս Պետրոս ասէր վասն Դաւթի.**  
«Ահաւասիկ մեռաւ, և գերեզմանն ի միջի ձերում կայ<sup>17</sup>» (Գործք Բ

<sup>1</sup> Ա յԵսայայ

<sup>2</sup> Բ արար *փիս* հաստատեաց

<sup>3</sup> Բ Եւ ասէ

<sup>4</sup> Բ թէ *փիս* այսպէս

<sup>5</sup> Բ էր չարչարել

<sup>6</sup> Ա յախթեաց

<sup>7</sup> Բ Իւրոցն ամենեցուն

<sup>8</sup> Ա դադաստան

<sup>9</sup> Բ Եւ զի

<sup>10</sup> Բ զգենեւն

<sup>11</sup> Բ *չիք* է

<sup>12</sup> Բ *չիք* Եւ ոչ ըստ բնութեան... մահ

<sup>13</sup> Բ կենդանեացն

<sup>14</sup> Բ ուսաք զայս

<sup>15</sup> Բ գոր ինչ լուան

<sup>16</sup> Բ Եւ յառնել

<sup>17</sup> Բ Ահաւասիկ մեռաւ և թաղեցաւ, և գերեզման նորա կայ ի միջի ձերում:



29), *և կրեաց զապականութիւն: Բայց Յիսուս, զոր Աստուած յարոյց, «Ո՛չ ետես զապականութիւն»* (Գործք Բ 31), *վասնզի անապականութիւն[ն] // ազատեաց զանձն յապականացու կրից: Որպէս նոյն աւետարանիչս ի Գործս Առաքելոցն ասէ. «Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն<sup>1</sup>»* (Գործք Ա 3): *Զի եթէ զմեծն առաւելութեամբ գործեաց, զանձն ի մեռելոց կացոյց կենդանի, զոր ո՛չ ոք ի մարգարէիցն արար: Թէպէտ<sup>2</sup> զայլս յարուցին, այլ ո՛չ զինքեանս, ապա՝ զյոյժն վաղագոյն, որ է Համբարձումն: Տեսանե՛ս, որպէ՞ս<sup>3</sup> զանխլաբար սերմանէ<sup>4</sup> զմեծամեծս զայս աւանդութիւնս: Կատարեաց մարգարէութիւն Յովսէ<sup>5</sup>. «Ո՞ւր է, մա՛հ, յաղթութիւն քո»* (Ա Կորնթ. Ժե 55), *որ յաղթէր<sup>6</sup> Հաւր մերոյ՝ առաջնոյ:*

**ԵՓ** «Ո՞ւր են, դժո՛խք, խայթոց քո» (Ա Կորնթ. Ժե 55), *որ եհար զգարչապարսն Ադամայ, և տարածեցաւ թոյնք ի ծրնունդս նոցա<sup>8</sup> մինչև ի Տէր մեր կենդանարար, որ յաղթեաց մահու: Բայց ի վերայ հեթանոսաց կատարի այս, զի այպն առնեն զմահ զաւրութեամբ խաչին Քրիստոսի, որ հերձեաց զորովայն մահու:*

**Քարոզել յանուն նորա ապաշխարութիւն ի թողութիւն մեղաց**  
(ԻԴ 47):

**ԻՊ** *Եսայի<sup>9</sup> ասէ. «Գեղեցիկ են ոտք աւետարանչաց ի վերայ լերանց համբ[աւ]ուն խաղաղութեան»* (Ես. ԾԲ 7): *Եւ գումարեալ երկնաւորն<sup>10</sup> զթագաւորսն<sup>11</sup> ի վերնատանն, լերինք աստուածային Հոգովն պարարտացեալ, և սիրով մածեալ ընդ միմեանս՝ քակելով զլեռնացեալ<sup>12</sup> թագաւորութիւն[ն] սատանայի<sup>13</sup>, ընկղմելով ի խորս ծովուն: Եւ կացուցես զնոսա ի շխանս ընդ ամէն<sup>14</sup> ազգս և յիշեցուցեն<sup>15</sup> զանուն // քո ընդ ամենայն երկիր:*

<sup>1</sup> B չարչարանաց իւրոց

<sup>2</sup> B թէպէտ

<sup>3</sup> B ո՞ւրչափ

<sup>4</sup> B պատմէ *փիս* սերմանէ

<sup>5</sup> B Կատարեցաւ մարգարէութիւնն Յովսեայ

<sup>6</sup> B սրբ.՝ յաղթեցէր

<sup>7</sup> B մերում

<sup>8</sup> B նորա

<sup>9</sup> A Դաւիթ *փիս* Եսայի

<sup>10</sup> B երկնաւորս

<sup>11</sup> B *չիք* զթագաւորսն

<sup>12</sup> B զլեռնացեալ

<sup>13</sup> B մահու *փիս* սատանայի

<sup>14</sup> B ամենայն

<sup>15</sup> B յիշեցեն

**ԵՓ** *Յովէլ ասէ*. «Եղիցի յաւուր յայնմիկ լերինք բ[ղ]խեսցեն զքաղցրութիւն<sup>1</sup>» (Յովէլ Գ 19), որ է<sup>2</sup> *հանգիստ: Լերինք*<sup>3</sup>, առաքեալքն: *Ըստ այնմ՝ «Հայեցարուք ի լեառն սուրբ<sup>4</sup>, ուստի և կոփեցարուք դուք ի նմանէ»* (հմմտ. Ես. ԾԱ 1): *Եւ «բլուրք»* (Յովէլ Գ 19)՝ *աշակերտքն, որ ի նոցանէ, ոռոգին կաթամբ* (հմմտ. Յովէլ Գ 19)՝ *աստուածեղէն վարդապետութեամբ նոցա: Որպէս ասէ առաքեալ, զի՝ «Ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ»* (Ա Կորն. Գ 2): *Ամենայն աղտերքն<sup>5</sup> Յուդայ բխեսցեն ջուրք, ամենայն նուազք ուսմամբ յաճախեսցեն զքարոզութիւն: Ելցես դու Հին ի Միքիայ, որ ասաց յառաքեալսն<sup>6</sup>. «Ելէք յամենայն<sup>7</sup> հեթանոսս»* (հմմտ. Մատթ. ԻԸ 19), որ յառաջ քան զխաչն արգել<sup>8</sup>, դուստր հինոզաց հզաւրաց Աբրահամու, Սահակայ և Յակոբայ<sup>9</sup>: *Առաքեալքն, որ եղեն առաջնորդ<sup>10</sup> եկեղեցոյն Հրէաստանի և ամենայն տիեզերաց: Նաև Զաքարիայ ասէ. «Արարից զհազարապետսն Յուդայ իբրև զՂահս վառեալ<sup>11</sup> ի մէջ փայտից և իբրև դամբարս ընդ եղէգն»* (Ձաք. ԺԲ 6): *Զի յայտ արասցէ, թէ աւգնութիւն նոցա յԱստուծոյ է:*

**Ապաշխարութիւն, թողութիւն<sup>12</sup> մեղաց** (ԻԴ 47):

**ԻԳ** *Զի որպէս ապաշխարութիւն, որ է տաժանելի<sup>13</sup> կիրք և արտաւար<sup>14</sup>, որ<sup>15</sup> ազատէ ի մեղաց, նոյնպէս ունի զաւրութիւն, հաւատք և մկրտութիւն, կամ զգուշացուցանէ յետ մկրտութեանն առաքինութեամբ նահատակել:*

**ՈԿ** *Նոյնպէս ասէ Մատթէոս<sup>16</sup>. «Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս: Մկրտեցէք զնոսա<sup>17</sup> յանուն Հաւր և Որդոյ և Հոգոյն<sup>18</sup> Սրբոյ»* (Մատթ. ԻԸ 19): *Մեծ է առաքելոցն գովութիւն, զի ի ձե(//)ռն նոցա փրկութիւն տիեզերաց ընծայեցաւ և պատգամս Հոգով*

<sup>1</sup> B զքաղցրութիւն խաղաղութեամբ

<sup>2</sup> A են

<sup>3</sup> B որ են լերինք

<sup>4</sup> B *չիք* սուրբ

<sup>5</sup> B աշակերտքն և

<sup>6</sup> B ցառաքեալսն

<sup>7</sup> B ընդ ամենայն

<sup>8</sup> B երգել

<sup>9</sup> B Յակովբայ

<sup>10</sup> B առաջնորդք

<sup>11</sup> B վառեալս

<sup>12</sup> B ի թողութիւն

<sup>13</sup> B տաժանելի

<sup>14</sup> B արտասուս

<sup>15</sup> B *չիք* որ

<sup>16</sup> B և Մատթէոս ասէ

<sup>17</sup> B *չիք* զնոսա

<sup>18</sup> B Որդւոյ և Հոգւոյն

լցեալս: Ըստ այնմ, թէ «Բանն, զոր խաւսեցայ ընդ ձեզ, Հոգի է և կեանք» (հմմտ. Յոռմ. Ը 6): Եւ զլսողսն ընտանեցուցանէ<sup>1</sup> ուսանել զպատուիրանն<sup>2</sup> Աստուծոյ, զի զգործս Հոգոյն հանդերձեալ են ասել: Եւ զպատուիրանս<sup>3</sup> Քրիստոսի՝ «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, բայց դուք մկրտեսլիք ի Հոգին Սուրբ» (Գործք Ա 5, ԺԱ 16): Քանզի յոյժ ընդ ստուերաւ էարկ զՅովհաննու, և ցուցանէ մեծագոյն զառաքեալսն<sup>4</sup> քան զՅովհաննէս<sup>5</sup>, զի հանդերձեալ էին Հոգով Սրբով մկրտել: Եւ այս ի վկայութենէն Յովհաննու յայտնի էր, զի ո՛չ եթէ<sup>6</sup> Քրիստոս էր, որ մկրտէր, այլ առաքեալքն Հոգով Սրբով:

**ԵՓ** վասն որոյ Միքիայ ասէ. «Ահա Տէր կայր ի վերայ ադամանդեայ<sup>7</sup> պարսպաց» (Ամոս Է 7)՝ մարմինն Քրիստոսի և եկեղեցի, որում նիգբ դժոխոց նմա մի՛ յաղթահարեսցեն, «Եւ ի ձեռինն իւրում ունէր վէմ ադամանդ<sup>8</sup>» (Ամոս Է 7)՝ պարզե երկնային, զոր ետ առաքելոց իւրոց, յորժամ յարեալ ի մեռելոց: Ամբակում<sup>9</sup> ասէ. «Հոգով նախանձով<sup>10</sup> իմով սատակեսցի ամենայն երկիր<sup>11</sup>» (հմմտ. Սոփոնիա Գ 8), այսինքն՝ վառեցաւ, բորբոքեցաւ Հուր Տեառն ի սիրտս նոցա և այրեաց զփուշ և զտատասկ խորհրդոց նոցա<sup>12</sup>: Հուր մկրտութիւն<sup>13</sup> աւազանին, զոր ասաց Քրիստոս. «Հուր եկի արկանել յերկիր» (ԺԲ 49): Եւ Մաղաքիայ ասէ. «Իբրև զհուր պարզե[ս]ցէ» (հմմտ. Մաղաք. Գ 2), զժամանակ մկրտութեանն ասէ, և՛ «Հաճոյ լիցին<sup>14</sup> Տեառն պատարագ նոցա» (Մաղաք. Գ 4), յորժամ իմաստացուց(//)անէ<sup>15</sup> զնոսա Յուդայ<sup>16</sup>, որ է Քրիստոս ի զաւակաց նոցա: «Սրբեսցէ և պարզեսցէ զորդիսն Ղևեայ» (Մաղաք. Գ 3), և գոն սոքա<sup>17</sup> սրբիչք ժողովրդեանն, զիա՞րդ կարաւտանան յայլոց սրբել<sup>18</sup>: Քանզի լուծանելոց էր քահանայութիւն նոցա ի Քրիստո-

308բ

<sup>1</sup> Եւ ընդանեցուցանէ  
<sup>2</sup> Եւ զպատուիրանսն  
<sup>3</sup> Եւ զպատուէրս  
<sup>4</sup> Եւ զառաքելոցն  
<sup>5</sup> Եւ չիք քան զՅովհաննէս  
<sup>6</sup> Եւ չիք եթէ  
<sup>7</sup> Եւ ադամանտեայ  
<sup>8</sup> Եւ ադամանտ  
<sup>9</sup> Եւ Եւ Ամբակում  
<sup>10</sup> Եւ Հոգով նախանձու  
<sup>11</sup> Եւ զբոլոր երկիր ամենայն  
<sup>12</sup> Եւ և այրեաց... նոցա՝ սրբ. աջ լս.  
<sup>13</sup> Եւ մկրտութեան  
<sup>14</sup> Եւ լիցի  
<sup>15</sup> Եւ իմաստացուցանէ  
<sup>16</sup> Եւ չիք Յուդայ  
<sup>17</sup> Եւ նոքա չիք գոն սոքա  
<sup>18</sup> Եւ սրբել

սի գալստեանն, վասն այսորիկ Տէր կացոյց զնա ի վերայ նոցա: «Իբրև զծծումբ<sup>1</sup> սպիտակացուցանէ<sup>2</sup>» (*հմմտ.* Մաղաք. Գ 3): Վասն զրոշմի աւագանին ասաց, զոր Յովհաննէս յառաջագոյն քարոզեաց նոցա, զի յետ<sup>3</sup> մկրտութեան ջրոյն եկեսցեն հասցեն ի մեծ պարգևս մկրտութեան Հոգոյն Սրբոյ:

**Յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ (ԻԴ 47):**

*Բառնայ զառաջին քարոզութեանն հրաման[ն], որ ասաց.* «Ի ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայք և ի քաղաքս սամարացոց<sup>4</sup> մի՛ մտանէք» (Մատթ. Ժ 5), *քանզի կանգնեցաւ<sup>5</sup> իշխան հեթանոսաց* (*հմմտ.* Ես. ԺԱ 10): *Ըստ Եսայեայ.* «Ի<sup>6</sup> նա հեթանոսք յուսասցին» (Ես. ԺԱ 10): *Եւ Զաքարիայ ասէ.* «Խաւսեսցի խաղաղութիւն ընդ հեթանոսս» (*հմմտ.* Զաք. Զ 13): *Ակնարկեաց վասն Աւետարանին Քրիստոսի, զի՝* «տարածանի<sup>7</sup> ի մէջ հեթանոսաց» (*հմմտ.* Գործք ԺԵ 7): *ըստ Յակոբայ<sup>8</sup>:* «Ի նա հեթանոսք յուսասցին» (Ես. ԺԱ 10): *Այն, որ<sup>9</sup> Միքիայ ասէ.* «Զի ի Սիոնէ<sup>10</sup> ելցեն ակրէնք» (Միք. Դ 2): *Այս է, զի առաքեաց զաշակերտսն իւր և<sup>11</sup> իրաւունս արասցէ<sup>12</sup> ի մէջ ազգաց բազմաց:* Աստուածային ակրինաւքն խրատէ, զի այր մի՛ առցէ սուր ի վերայ ընկերի իւրոյ, և «Որ հարկանէ զծնաւս քո, մատոյ և զմիւսն» (Զ 29): *Ժողովեցից զցրուեալսն և զհեռացեալսն մերձե-*

**309ա** *ցուցից, և արար(11)ից զկաղն ի ժառանգութիւն, և զտկարն՝ յազգս հզաւրս: Եւ Զաքարիայ.* «Նստեսջիք<sup>13</sup> յամուրս կապեալս» (Զաք. Թ 12), *այսինքն՝ յուսովն Քրիստոսի առաքեալքն և աշակերտք նոցա ի ժամանակի հալածանացն, որ է «նեղ դուռն»* (Մատթ. Է 13), *զոր ասաց Քրիստոս:* «Զի փոխանակ միոյ աւուր պանդխտութեան, կրկին, գուարթերես հատուցանեմ ձեզ» (Զաք. Թ 12), *այսինքն՝ յերկինս և յայս աշխարհս<sup>14</sup>:* Վասնզի հրէիցն աստ միայն ասաց տալ, որպէս և գրեալ է. «Թէ պահեսցես զաւրէն[ս]

<sup>1</sup> B սրբ.՝ զծիւն

<sup>2</sup> B սպիտակացուցանէ զնոսա

<sup>3</sup> B գրչի ձեռքով սրբ. է աջ լս.

<sup>4</sup> B սամարացուց

<sup>5</sup> A կանկնեցաւ

<sup>6</sup> B սրբ.՝ և ի

<sup>7</sup> B սրբ.՝ տարածեցաւ

<sup>8</sup> B Յակովբայ

<sup>9</sup> B գոր

<sup>10</sup> B Սիոնէ

<sup>11</sup> B սրբ.՝ զի փիւ և

<sup>12</sup> B սրբ.՝ արասցեն

<sup>13</sup> B նախ՝ նստեսջիք, ապա ես-ն սրբ. հանած

<sup>14</sup> B յայսմ աշխարհիս

Տեառն, աւրհնեալ լիցիս յանդի և յազարակի<sup>1</sup>, և ստացուածք արջառոց քոց, և ոչխարաց: Եւ աւրհնեսցի սեղան քո, և խորապաճիւնն քո և պտուղ որովայնի քո»: Իսկ մեզ. «Որ թողու գտուն կամ զծնաւղս և զեղբարս հալածանաւք վասն անուան իմոյ, հարիւրապատիկ ընկալցի<sup>2</sup> աստ և անդ ժառանգեսցէ զարքայութիւն երկնից<sup>3</sup>» (Մատթ. ԺԹ 29, հմմտ. Մարկ. Ժ 29):

**ԻԳ** Արդ՝ պատշաճ էր նախ արգելուլ ի հեթանոսաց, զի մի՛ պատճառս տայցէ<sup>4</sup> հրէիցն: Իսկ յորժամ նոքա յետս կացին անհաւատութեամբն<sup>5</sup>, ապա սկսանի կոչել զհեթանոսս՝ ըստ ասելոյն<sup>6</sup> ցհրէայսն. «Նախ ձեզ պարտ է խաւսել զԲանն Աստուծոյ, բայց դուք անարժան զանձինս արարէք<sup>7</sup>» (հմմտ. ԻԱ 9): Քաւեալ եմք յարենէ ձերմէ, դառնամք ի հեթանոսս<sup>8</sup>:

**Դուք<sup>9</sup> էք վկայք այսոցիկ** (ԻԴ 48):

**Ոկ.** Չտնաւրինականսն ամենայն ասէ, որ ականատեսք<sup>10</sup> եղեն: Որպէս ի Գործս<sup>11</sup> Առաքելոցն ցուցանէ, թէ՛ «Եղիջիք ինձ վկայք յերուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիայ և մինչև ի ծագս երկրի» (Գործք Ա 8): Աստ հրամ(//)այէ լինել տիեզերաց քարոզ: Տեսանե՞ս, զի նոքա քարոզեցին զԱւետարանն, և զի մեծամեծս շնորհեաց նոցա, զոր ինչ տեսէք յիս և լուարուք յինէն: Ո՛չ աստ միայն յերուսաղէմ ի մէջ խաչահանուացն, ուստի երկուցեալ էք (տե՛ս Մատթ. ԻԸ 17), այլ ընդ ամենայն Հրէաստան և ի մէջ սամարացոցն<sup>12</sup>, և ընդ ամենայն երկիր հեթանոսաց շրջեսջիք:

**ԵՓ** Ըստ Մաղաքիայի<sup>13</sup>. «Եղիցիք վկայ<sup>14</sup> հաւատարիմ և երազ» (Մաղաք. Գ 5): Զի յաւուրսն յայնոսիկ յայտնելոց է վրէժխնդրութիւն<sup>15</sup>, բարեացն՝ բարիս, և չարեացն և անհաւատիցն՝ պատիժ<sup>16</sup>:

<sup>1</sup> A յազարազի  
<sup>2</sup> B առցէ *փի* ընկալցի  
<sup>3</sup> B գլխանսն յաւիտենից *փի* զարքայութիւն երկնից  
<sup>4</sup> B տայցեն  
<sup>5</sup> B թերահաւատութեամբն  
<sup>6</sup> B ասելով *փի* ըստ ասելոյն  
<sup>7</sup> B արարիք  
<sup>8</sup> B մեկ թերթ չգրված է (233ա-բ)  
<sup>9</sup> B Եւ դուք  
<sup>10</sup> B ականատես  
<sup>11</sup> B Գործ  
<sup>12</sup> B սամարացւոցն  
<sup>13</sup> B Մաղաքիայ  
<sup>14</sup> B Եղիջիք վկայք  
<sup>15</sup> B վրէժխնդրութիւնն Աստուծոյ  
<sup>16</sup> B սրբ.՝ պատիժս

Ահա<sup>1</sup> ես առաքեմ գաւետիս Հաւր իմոյ ի ձեզ (ԻԴ 49):

**ՈԿ** Որպէս ասէ ի Գործս Առաքելոցն, «Թէ սպասեցէք աւետեացն Հաւր, զոր լուարուք յինէն» (Գործք Ա 4): *Եւ ե՞րբ լուան: Յորժամ ասէր. «Լաւ է<sup>2</sup> ձեզ, թէ ես երթամ: Զի թէ ես ո՛չ երթայց՝ մխիթարիչն ո՛չ եկեսցէ առ ձեզ»* (Յովհ. ԺԶ 7): *Եւ Հայր այլ մխիթարիչս<sup>3</sup> տացէ ձեզ, զի առ ձեզ մնասցէ: Արդ՝ նախ՝ պարտ էր մերոյ բնութեանս<sup>4</sup> յերկինս ելանել և հաշտութեանցն աւարտել, և ապա՝ գալ Հոգոյն<sup>5</sup> և կնքել զպարգևն<sup>6</sup>: Զի մինչ մերձ էր Քրիստոս և Հոգոյն Սրբոյ եկեալ էր, և ապա Քրիստոս գնացեալ լինէր, ո՛չ էր այնչափ մխիթարութիւն<sup>7</sup> իրքն, քանզի յոյժ զժուարաւ մեկնէին ի Քրիստոսէ: Վասն որոյ ասէր. «Լաւ է ձեզ, թէ<sup>8</sup> ես երթամ»* (Յովհ. ԺԶ 7): *Զայս ասելով՝ մխիթարէր զնոսա: Վասն այսորիկ և աւուրս ընդ մէջ անցուցանէր, զի փոքր ինչ տխրեցին՝ պէտս ունելով, և մաքրեալք՝ շահեսցին զուրախութեան հեշտութիւն:*

**310ա** Ապա թէ //նուազ էր Հոգին և ո՛չ էր բաւական առ ի մխիթարութիւն, ինքն ըն[դ]է՞ր ասէր «Լաւ է<sup>9</sup> ձեզ» (Յովհ. ԺԶ 7), քանզի մեծամեծ իրք վարդապետութեամբ Հոգոյն պատահէր աշակերտացն, զի ամենակալ է բնութեամբ որպէս Հայր: *Զի ասաց Քրիստոս. «Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ»* (Յովհ. ԺԴ 26), *և թէ՛ «Նա եկեալ իշխանութեամբ՝ յանդիմանե[ս]ցէ զաշխարհ»* (Յովհ. ԺԶ 8): *Զոր կանխաւ ասաց. «Յորժամ առաջի թագաւորաց մտանիջիք<sup>10</sup>, մի՛ հոգայք, զի Հոգի Հաւր ձերոյ խաւսեցի ի ձեզ, որում ո՛չ կարեն<sup>11</sup> կալ հակառակ կամ տալ պատասխանի հակառակորդք<sup>12</sup> ձեր»* (հմմտ. Մատթ. Ժ 19-20, Ղուկ. ԺԲ 11-12), *և «Զի Հոգին Սուրբ յորժամ գայ, ուսուց[է] ձեզ զամենայն և յիշեցուցէ, զոր խաւսեցայ ընդ ձեզ»* (հմմտ. ԺԲ 12):

*Ընդէ՞ր ո՛չ առաջի նորա կամ յետ գնալոյն վաղվազակի եկեալ լինէր: Զի ինքն ի քառասուն աւուրն վերացաւ և Հոգին յաւուրն Պենդեկոստէին եկն: Զի մինչդեռ ո՛չ էր եկեալ՝ ասէր. «Ա-*

<sup>1</sup> B Եւ ահա

<sup>2</sup> B էր

<sup>3</sup> B մխիթարիչ

<sup>4</sup> A բնութիւն

<sup>5</sup> B Հոգւոյն Սրբոյ

<sup>6</sup> B զպարգևսն

<sup>7</sup> B մխիթարութեան

<sup>8</sup> B եթէ

<sup>9</sup> B էր

<sup>10</sup> B մտանիցէք

<sup>11</sup> B կարիցեն

<sup>12</sup> B հակառակորդքն

ուէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի 22), *զի ընդելականս<sup>1</sup> զնոսա արասցէ առ ի յընդունելութիւն: Զի թէ հրեշտակն յերևելն զԴանիէլ մարգարէն հանդերձեալ էր ի<sup>2</sup> լուծանել յոյժ (տե՛ս Դանիէլ Ե 12), մանաւանդ սոքա, և մինչդեռ ո՛չ էր եկեալ ասէր, զի ցանկասցին իրին վայելչութեան, զի պարտ էր սիրով ակն ունել<sup>3</sup> և ապա ընդունել զհրաշափառ շնորհն: Վասն այսորիկ ինքն ի բաց գնաց<sup>4</sup>, և ապա*  
**310բ** *գայ Հոգին Սուրբ: Զի թէ նա մերձ էր, ո՛չ այնչափ // ակն ունէին, վասն այսորիկ և՛ յետ ինն աւուր: Վասնզի և մեք առ Աստուած յայնժամ պաղատիմք, յորժամ ի<sup>5</sup> պէտս հասանեմք<sup>6</sup>: Եւ Յովհաննէս յայնժամ առաքեաց զաշակերտսն իւր առ Քրիստոս, յորժամ առաւել պէտս ունէին Քրիստոսի, որ բանդին<sup>7</sup> գոլով Մկրտչին (տե՛ս Սատք. ԺԱ 2), զի լցցի մարգարէութիւն, թէ՛ «Շինէ յերկինս զվերանալ<sup>8</sup> իւր, և զաւետիս իւր յերկրի հաստատէ<sup>9</sup>» (Ամովս Թ 6):*

**ՊԿ** **Դուք<sup>10</sup> նստարուք ի քաղաքիդ Երուսաղեմի<sup>11</sup> (ԻԴ 49):**  
*Զի մի՛ յետ համբարձման նորա փախուցեալք լիցին, այլ որպէս իւրիք կապանաւք ակնկալութեամբ Հոգոյն պահէ զնոսա յԵրուսաղէմ: Եւ որպէս ի Գործս Առաքելոցն պատուէր ետ յԵրուսաղեմէ մի՛ մեկնել (տե՛ս Գործք Ա 4), զի որպէս զինուոր<sup>12</sup> իշխանաց, որք հանդերձեալ են ի զաւրսն մտանել սպառազինութեամբ կազմին և ապա ի գունդն խառնին, զի ո՛չ երիվարն վազէ ի կառամարտն, մինչև զկառավարն առցէ, այսպէս և ո՛չ առաքելոցն երևեալ<sup>13</sup> առ ի ճակատամարտն<sup>14</sup>, նախքան զիջանել Հոգոյն, զի մի՛ լիցի<sup>15</sup> զիւրաւ ըմբռնել ի բազմացն և այլ ևս: Քանզի բազումք էին անդ հաւատալոց ի Քրիստոս: Եւ դարձեալ. զի մի՛ ասիցեն հրէայքն, թէ զազգակիցսն թողին և առ աւտարսն եկին վասն պարծանաց: Վասն այսորիկ<sup>16</sup> սպանողացն տային զնշանս և զա-*

<sup>1</sup> B ընդելակս  
<sup>2</sup> B **չիք** ի  
<sup>3</sup> B ակնարկել  
<sup>4</sup> B գնայ  
<sup>5</sup> B **չիք** ի  
<sup>6</sup> B ունիմք **փիս** հասանեմք  
<sup>7</sup> B բանտին  
<sup>8</sup> B զհամբառնալ  
<sup>9</sup> B յերկիր հաստատեաց  
<sup>10</sup> B Եւ դուք  
<sup>11</sup> B քաղաքիս Երուսաղէմ  
<sup>12</sup> B *սրբ.*՝ զզինուորս  
<sup>13</sup> B երևել  
<sup>14</sup> B ճակամարտսն  
<sup>15</sup> B լիցին  
<sup>16</sup> B այսորիկ

**311ա** րուեստս յարութեան Տեառն, // առ ի<sup>1</sup> խաչողսն յայնմ<sup>2</sup> քաղաքի Երուսաղեմի, յորում յաւծեալ Տեառն յանդգնեցան, զի որք արտաքոյ են՝ պապանձեցին ամենեքին: Քանզի, յորժամ [խա]չահանու[ն]քն հ[աւատան, քաջա]այայտ<sup>3</sup> է, զի ապաշաւեսցեն անաւրէնութեան գործողքն և զարհուրեսցին: Եւ խաչն և յարութիւն[ն] յոյժ լինի աւրինակ բարեաց:

**ԻԳ** Քանզի պարտ էր, որ աւրինացն էր տեղի և քաղաք անուանն Աստուծոյ կոչեցեալ, զի ամենայն ինչ անդ կատարեսցի, որպէսզի բնակիչք քաղաքին<sup>4</sup> տեսողք լիցին, յորժամ Հոգին իջանէ յառաքեալսն, յորժամ գալիլեացիքն<sup>5</sup> խաւսէին զՊարթևաց լեզուն և զայլ ազգացն, յորժամ հրէայքն ծնեալք էին ի գերութեան[ն] իւրեանց, և աշակերտքն խաւսէին զմեծամեծ բանս աստուածային: Ըստ մարգարէին՝ «Արծաթապատ թևաւք, ի գոյն ոսկոյ<sup>6</sup>» (Սաղմ. Կտ 14):

**Մին[չ]և զգեհնուցուք զաւրութիւն<sup>7</sup>** (ԻԴ 49):

**ՈԿ** Աւետարանն պատմէ, զոր արար Քրիստոս, իսկ պրակք առաքելոցն՝ զոր Հոգին Սուրբ արար և ասաց<sup>8</sup>: Յայնժամ բազում ինչ առնէր սա, որպէս և այժմ Քրիստոսիւ ներգործէ: Որպէս յայնժամ մարմնովն Քրիստոսի<sup>9</sup>, իսկ այժմ՝ առաքելովքն: Եւ սա յայնժամ ի կուսական արգանդն էջ և զաստուածային մարմինն ստեղծ, իսկ այժմ՝ յանձինս առաքելոցն: Յայնժամ տեսլեամբ աղաւնոյն, իսկ այժմ՝ տեսլեամբ հրոյ: Զի անդ զհեզութիւն // յայտնեաց աստուածութեան իւրոյ, իսկ աստ՝ զպատիժն անհաւատիցն: Եւ զհանդերձեալ դատաստանն<sup>10</sup> յիշեցուցանէ: Քանզի, յորժամ զմեղս թողուլ պարտ էր, զհեզութիւն[ն] առաջի էարկ, զի հանդիպեցաք պարգևաց նորա<sup>11</sup>: Այսուհետև քննութեան և դատաստանի է ժամանակ:

**311բ** այժմ՝ տեսլեամբ հրոյ: Զի անդ զհեզութիւն // յայտնեաց աստուածութեան իւրոյ, իսկ աստ՝ զպատիժն անհաւատիցն: Եւ զհանդերձեալ դատաստանն<sup>10</sup> յիշեցուցանէ: Քանզի, յորժամ զմեղս թողուլ պարտ էր, զհեզութիւն[ն] առաջի էարկ, զի հանդիպեցաք պարգևաց նորա<sup>11</sup>: Այսուհետև քննութեան և դատաստանի է ժամանակ:

**ԵՓ** Արդ՝ յայտնեաց զաւր գալստեան Հոգոյն<sup>12</sup>, զի պիտոյ էր առ ի միսիթարութիւն և ի քաջալերութիւն նոցա: Եւ ծածկեաց ի ձեռն առաքելոցն յամենայն դարուց զաւր գալստեանն իւրոյ, զի մի՛

<sup>1</sup> B *չիք* ի

<sup>2</sup> B յայսմ

<sup>3</sup> A ուղղանկյուն փակագծերի միջի բառերը վնասված են

<sup>4</sup> B տեղոյն *փիս* քաղաքին

<sup>5</sup> B գալիլիացիքն

<sup>6</sup> B ոսկոյ

<sup>7</sup> B զաւրութիւն ի բարձանց

<sup>8</sup> B ուսոյց *փիս* ասաց

<sup>9</sup> B Յիսուսի

<sup>10</sup> A դատաստանէն

<sup>11</sup> B պարգևացն Աստուծոյ *փիս* պարգևաց նորա

<sup>12</sup> B Հոգւոյն Սրբոյ



վնասեսցէ յայտնութիւնն նորա ամենայն դարուց. «Ո՛չ է ձեզ գիտել զժամն» (Գործք Ա 7, հմնտ. Մատթ. ԻԵ 13), յորում վերանամ, կամ զժամանակ<sup>1</sup> միւսանգամ զալստեանն:

**ԻԳ** Ո՛չ մարմնոյ պնդակազմութիւնն, որպէս Սամսոնին<sup>2</sup> մարմնոյ<sup>3</sup>, որ զաւրացաւ (տե՛ս Դատ. ԺԴ 6), այլ զՀոգոյն քաջութիւնն՝ անզանելի լինել որպէս գերկաթ և զազամանդ, որով կային<sup>4</sup> հակառակ առաջի դատաւորաց և թագաւորաց: Եւ ո՛չ բնաւ զանգիտէին ի հնարից նոցա և ի տանջանաց՝ ունելով բանս պիտանիս և զաւրաւորս<sup>5</sup> հաստ[ատ]ուն մտաւք, որով դիմամարտքն լուծանէին և հաւանեալքն հաստատէին ի հաւատս: Եւ, որ կարի զարմանալին է, զի տկարութեամբ մարմնոյ զաւրացան ի Քրիստոս, և չարչարանաւք անպարտելի մնացին, և իմաստութեամբ Հոգոյն զաւրացան, և զխափանելի իմաստս և զմանուած բանից<sup>6</sup> լուծին, և յաղթեցին հեթանոսաց կրթ(//)ութեանց: Ընկալան զաւրութիւնն նշանաց, որով ըմբռնին ամենայն միտք մարդկան

312ա

**Ի բարձանց** (ԻԴ 49):

Ձի անդուստ, յառաջին աղբերէն բ[ղ]խեաց ի նոսա զաւրութիւնն, այն, որ կամի և կարէ անպարտելի զաւրութեամբ:

**Եհան զնոսա մինչև ի Բեթանիայ** (ԻԴ 50):

Քանզի յայնժամ էին նոքա յԵրուսաղէմ, և վասնզի<sup>7</sup> երևի նոցա Յիսուս, հրաման<sup>8</sup> տայ արտաքոյ ելանել քաղաքին՝ հանելով ի գլուխ ի<sup>9</sup> լերինն Ձիթենեաց, հանդէպ քաղաքին Երուսաղէմի և Բեթանիայ՝ յայն կոյս լերինն հուպ, ուստի վերացաւ<sup>10</sup>:

**ՍՏ**

Ընդէ՞ր ի Բեթանիայէ վերանայր յերկինս և ո՛չ այլ ուստեք: Բեթանիայ տունս սգոյ և չարչարանաց ասի<sup>11</sup>, որ յայտ առնէ, թէ յորժամ ելաք ի դրախտէն, յայս աշխարհս մտաք՝ ի տունս սգոյ և չարչարանաց<sup>12</sup>: Եկն առ մեզ Քրիստոս<sup>13</sup> և սգոյ տրտմութեանս<sup>14</sup>

<sup>1</sup> B և կամ զժամանակն  
<sup>2</sup> A Սամսոնին  
<sup>3</sup> B չիք մարմնոյ  
<sup>4</sup> B կացին  
<sup>5</sup> A զաւրավորս  
<sup>6</sup> B զմանուածս փխ զմանուած բանից  
<sup>7</sup> B վասն այն  
<sup>8</sup> B և հրաման  
<sup>9</sup> B չիք ի  
<sup>10</sup> B վերացաւ: Նորին աղագաւ ասաց «մինչև» ի գեաղն:  
<sup>11</sup> A ացի  
<sup>12</sup> B չարչարանաց, սգոյ և տրտմութեան փխ սգոյ և չարչարանաց  
<sup>13</sup> B Քրիստոս Աստուած  
<sup>14</sup> B տրտմութեան

մերոյ կցորդեաց՝ ի գերեզմանն Ղազարու արտասուելով<sup>1</sup> (տե՛ս Մատթ. ԺԱ 35), զի ցուցանէ<sup>2</sup>, թէ յետ յանցանացն ողբոց և արտասուաց եղաք արժանի, իսկ Տէրն ազատեաց իւր չարչարանաւքն և մխիթարեաց ի սգոյ վշտացս, առեալ զմեր բնոտե՛սւթիւնս՝ վերացաւ յերկին<sup>3</sup>: Որպէս ինքն ասաց. «Ուր եսն եմ, անդ և պաշտանեայն իմ եղիցի» (Յովհ. ԺԲ 26):

**ԻԳ** «Եհան զնոսա» ի գլուխ լերինն, որպէս զՄովսէս<sup>4</sup> առնէր աւրէնսդիր Իսրայելի, իսկ զսոսա՝ ամենայն ազգաց ուսուցիչս կացոյց:

Եւ ամբարձեալ զձեռս իւր՝ ակրհնեաց զնոսա (ԻԴ 50):

**312բ ՍՏ** Երկն[ա]ստեղծ ձեռաւքն՝ ձեռնադրելով // զառաքեալսն, և յայնմ աւուր արար զնոսա կաթողիկոսս: Վկայէ ձեռացն ամբառնալոյն<sup>5</sup>, թէ աջովն ակրհնեաց և [ի] մեր աջս ետ զաւրութիւն: Վկայէ Ղուկաս, թէ՛ «Առաքեալքն, ղնելով զձեռս ի վերայ մկրտելոցն, և<sup>6</sup> առնուին Հոգին<sup>7</sup> Սուրբ և<sup>8</sup> ի վերայ հիւանդաց՝ բժշկութիւն<sup>9</sup>» (հմմտ. Գործք Ը 17-18):

**ԻԳ.** Ո՛վ անչափ բարձրութիւն և մեծ արհնութիւն, երանելի շնորհացն, որում արժանացան դասք ձկնորսացն<sup>10</sup> և մաքսաւորացն՝ տալով նոցա զամենայն շնորհս աստուածայինս<sup>11</sup>, աշտիճանաց<sup>12</sup> բարձրութիւնս, զի այնպէս ունին և նոքա տալ այլոց՝ յետնոցս<sup>13</sup> փոխանորդութեամբ լնուլ զնոյն պաշտանն:

Եւ եղև յակրհնելն զնոսա<sup>14</sup>, մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր յերկինս (ԻԴ 51):

**ՍՏ** Հստ հոգեպատում մարգարէութեանն<sup>15</sup>՝ «Համբարձաւ Աստուած ակրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողով» (Սաղմ. ԽԶ 6), որ

<sup>1</sup> Բ արտասուեաց

<sup>2</sup> Բ ցուցանիցէ

<sup>3</sup> Բ յերկինս

<sup>4</sup> Բ Մովսէս

<sup>5</sup> Բ ամբառնալն

<sup>6</sup> Բ **չէք** և

<sup>7</sup> Բ Հոգի

<sup>8</sup> Բ **չէք** և

<sup>9</sup> Բ հիւանդացն և բժշկէին

<sup>10</sup> Բ որում... ձկնորսացն՝ սրբ. աջ լս. գրչի ձեռքով

<sup>11</sup> Բ **չէք** աստուածայինս

<sup>12</sup> Բ և աստիճանաց

<sup>13</sup> Բ յետ նոցա

<sup>14</sup> Բ նորա զնոսա

<sup>15</sup> Բ Դաւթայ **փիս** հոգեպատում մարգարէութեանն

յերկրորդ գիրսն զայս ասացեալ<sup>1</sup>՝ «Տեսանելով նոցա՝ վերացաւ<sup>2</sup>»  
(*հմմտ.* Գործք Ա 9):

**ՈԿ** Իսկ ընդէ՞ր տեսանելով ո՛չ յարեալ ի գերեզմանէն և «տեսա-  
նելով վերացաւ»: Քանզի յարութեան<sup>3</sup> աւարտն տեսին՝ նշա-  
նաւքն և խաւսակցութեամբ առաքելոցն, այլ զսկիզբնն՝ ո՛չ ևս:  
Իսկ զհամբարձմանն սկիզբնն<sup>4</sup> տեսին, այլ զկատարածն ո՛չ ևս:  
**313ա** Զի յարուցեալ տեսին զՏէրն և գերեզմանն յայտնի գոլով, և մար-  
մինն անդ ո՛չ էր: Քանզի ո՛չ զաւրեն աչք ցուցանել զբարձրու-  
թիւնս երկնից և ո՛չ հայել ի վերոյ քան գերկինս: Թէ նոյն ինքն //  
էր Յիսուս, գիտէին բանիւն, որ խաւսէր ընդ նոսա: Իսկ ի հեռաս-  
տանէ ո՛չ էր հնար տեսանելով ճանաչել զնա, այլ յերկինս<sup>5</sup> զվե-  
րանալն հրեշտակ[ք]ն ուսուցին<sup>6</sup>: Տեսանե՞ս, զի ո՛չ<sup>7</sup> ամենայն ինչ  
Հոգով տնաւորինի, այլ և տեսութեամբ<sup>8</sup> յարդարի:

**ԵՓ** Եւ զոր աւրինակ՝ ետես Եղիսեէ զվերանալ վարդապետին իւ-  
րոյ (*տե՛ս Դ Թագ. Բ 11-12*), զի մի՛ ասիցեն, թէ Եզաբէլ եսպան<sup>9</sup> զնա,  
նոյնպէս տեսին աշակերտքն<sup>10</sup> զվերանալ վարդապետին իւրեանց,  
զի մի՛ ասիցեն հրէայքն, թէ ո՛չ յարեալ Քրիստոս: Որպէս  
նշանքն, որ եղեն ի ձեռն Եղիսէի<sup>11</sup>, հաւատարիմ եղև վերանալոյ<sup>12</sup>  
վարդապետին իւրոյ, նոյնպէս նշանքն, որ եղեն ի ձեռն առաքե-  
լոցն, ճշմարտացոցին զվերանալ Տեսուն մերոյ, զոր առաքեալքն  
քարոզէին տիեզերաց:

«Եւ ամպն կալաւ զնա յաչաց նոցա» (Գործք Ա 9):

**ՈԿ.** Որ նշանակէր զվերանալն [յ]երկինս, զի ո՛չ հրեղէն կառք որ-  
պէս Եղիայի (*տե՛ս Դ Թագ. Բ 12*), զի<sup>13</sup> մարդ էր սոսկ և իւր բնու-  
թեամբն վերանալ ո՛չ կարէր<sup>14</sup>: Իսկ Յիսուս, որ կրէր<sup>15</sup> զամենայն  
բանիւ զաւրութեան իւրոյ, ինքնիշխանութեամբ վերանայր առ

<sup>1</sup> Ե և այլն որ *փխ* որ յերկրորդ... ասացեալ

<sup>2</sup> Ե վերացաւ յերկինս

<sup>3</sup> Ե սրբ.՝ զյարութեան

<sup>4</sup> Ե զսկիզբն

<sup>5</sup> Կ, Ե ի յերկինս

<sup>6</sup> Ե ասացին

<sup>7</sup> Ե քերած-ջնջած

<sup>8</sup> Ե տնտեսութեամբ

<sup>9</sup> Ե սպան

<sup>10</sup> Ե աշակերտքն Տեսուն

<sup>11</sup> Կ Եղէսի

<sup>12</sup> Ե վերանալ

<sup>13</sup> Ե վասնզի

<sup>14</sup> Ե էր կար *փխ* կարէր

<sup>15</sup> Ե կրէ

313բ Հայր, այլ ամպ[ն] զնա յափշտակեաց, զի ինքն<sup>1</sup> ել յամպն: Որ<sup>2</sup> յայտ առնէ, թէ սա է, որ «Հանէ զամպս [ի ծագ]աց<sup>3</sup> երկրի<sup>4</sup> և զփայլատակունս յանձրևս արար» (Սաղմ. 6ԼԴ 7)՝ ըստ Դաւթի<sup>5</sup>: Տէր գոլով երկնից<sup>6</sup> և երկրի, զի որպէս ձեն ցուցանէ զթագաւորն, այսպէս առաք(//)եցաւ Յիսուսի կառք թագաւորական, որ է նշանակ երկնից: Ըստ մարգարէին. «Որ եղ յամպս<sup>7</sup> զգնացս իւր» (Սաղմ. 6Գ 3): Ասացաւ և վասն Հաւր նորա, որ նշանակէ աստուածային զաւրութեանն: Քանզի ո՛չ գոյ այլ զաւրութիւն, որ ի վերայ ամպոց ընթանայ, և այլուր՝ «Աստուած նստեալ յամպս» (հմմտ. Թիւք ժԱ 25, ժԲ 5, Բ Օր. ԼԱ 15, Ես. ժԹ 1, Մատթ. ԻԴ 30, ԻՁ 64 և այլն) երազունս, և նոցա արթուն գոլով տեսանէին զեղեալսն: Նոյնպէս և ի լերինն Սինեայ, յորում եմուտ Մովսէս յամպն և ի մէզն, որ զաստուածային փառսն ցուցանէր Տէրն և յերկինս չոգաւ: Այլև աչաւք իւրեանց տեսանէին<sup>8</sup> և հիացեալք, թէ որպիսի<sup>9</sup> տեսութեան արժանացան որպէս մարգարէքն: Ո՛չ պէտս ինչ ունելով ամպոյն, այլ ի պատիւ Տեառն, և յառագաստեալ<sup>9</sup>՝ զառաքելոցն տեսանելիս, որով՝ «Պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա» (Գործք Ա 10):

«Եւ մինչդեռ հայէին ընդ<sup>10</sup> երկինս<sup>11</sup> երթալոյ նորա, ահա արք երկու երևեցան նոցա» (Գործք Ա 10):

Ոկ. Ձի՝ «Ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան» (Բ Օր. ժԹ 15):

«Ի հանդերձս սպիտակս» (Գործք Ա 10):

Ձի նոյն հանդերձք<sup>12</sup> երևեցան ի գերեզմանին: Եւ հրեշտակացն ձեն պայծառ էր, և մարդակերպ<sup>13</sup> երևեցան և յանկարծակի: Ձի որպէս աւետաւոր բանիւն զաւրացուցին զմիտս խնկաբերիցն<sup>14</sup>, նոյնպէս և [ի] համբարձմանն Տեառն քարոզք եղեն: Ձի

<sup>1</sup> B ինքնին

<sup>2</sup> B զի

<sup>3</sup> A բառը ջնջված է

<sup>4</sup> B երկրէ

<sup>5</sup> B Դաւթայ

<sup>6</sup> B երկնի

<sup>7</sup> B յամս

<sup>8</sup> B տեսին

<sup>9</sup> B առագաստեալ

<sup>10</sup> B նոքա ընդ

<sup>11</sup> B սրբ.՝ յերկինս

<sup>12</sup> B հանդերձիւք

<sup>13</sup> B մարդակերպ

<sup>14</sup> A խնկաբերացն

Թէպէտև մարգարէքն յառաջագոյն ասացին զԾնունդն և զՅարուժիւնն և

314ա զվերանալն յերկինս առ Հայր, որպէս<sup>1</sup> և // հրեշտակսն<sup>2</sup>, որպէս ասաց Գաբրիէլ առ Կոյսն. «Քանզի, որ ի նմա ծնեալն<sup>3</sup> է, ի Հոգոյն<sup>4</sup> Սրբոյ է» (հմմտ. Ա 35): «Մի՛ երկնչիւր Մարիամ» (Ա 30), և առ յարութեամբն՝ «Զէ աստ, այլ յարեալ» (ԻԴ 6): Տեսէ՛ք զտեղին, ուր երեալն էր:

Զաք.(Իգ.) Եւ աստ, սպասաւորութիւն առնելով առաջի Տեառն, մտանելոյ նորա յերկինս, որք աղաղակէին առ գերակայսն.

զաք. «Համբարձէք իշխանք զգրուեսն ձեր<sup>5</sup>, և մտցէ թագաւոր փառաց<sup>6</sup>» (Սաղմ. ԻԳ 7, 9): «Ուրք և<sup>7</sup> ասէին. Արք զալիւեացիք, զիա՞րդ<sup>8</sup> կայք պշուցեալ ընդ երկինս» (Գործք Ա 11): Զհայրենի գաւառն<sup>9</sup> յուշ առնէին<sup>10</sup> նոցա, զի հաւատարիմ լիցի ասացեալքն: Այլև ձևովն յինքեանս սրբափայլ<sup>11</sup> յ[ի]նքեանս<sup>12</sup> դարձուցանէին զդէմս առաքելոցն և<sup>13</sup> յայտ առնէին, թէ յերկնից եկն<sup>14</sup>: Այնուհետև ի տեսութենէն յայնմանէ դարձուցին զնոսա առ իւրեանս հրեշտակքն, զի մի՛ վասն ո՛չ կարել<sup>15</sup> տեսանել զնա և<sup>16</sup> կարծիցեն, թէ ո՛չ վերացաւ: Այլ, զի<sup>17</sup> զոր ճառէինն, հասու արա[ս]ցեն զնոսա:

«Այս Յիսուս, որ վերացաւ ի ձէնջ յերկինս» (Գործք Ա 11):

Ընդէ՞ր ինքն ո՛չ զայս ասաց ընդ նոսա<sup>18</sup>, այլ հրեշտակքն: Զի ասացեալ էր զայս յառաջագոյն ընդ նոսա<sup>19</sup>. «Տեսանիցէք զՈրդի մարդ[ոյ]» (Մատթ. ԻԶ 64, Մարկ. ԺԴ 62) ելեալ, ուր էր զառաջինն: Եւ

<sup>1</sup> B այսպէս  
<sup>2</sup> B հրեշտակքն  
<sup>3</sup> B նմայն ծնեալ  
<sup>4</sup> B Հոգւոյն  
<sup>5</sup> B ձեր ի վեր  
<sup>6</sup> B չիք փառաց  
<sup>7</sup> B չիք և  
<sup>8</sup> B գալիւիացիք, զի  
<sup>9</sup> B գաւառէն  
<sup>10</sup> B առնէ  
<sup>11</sup> B սրբափայլք  
<sup>12</sup> բառը գրված է լս. գրչի ձեռքով  
<sup>13</sup> B չիք և  
<sup>14</sup> B էր  
<sup>15</sup> B կարելոյ  
<sup>16</sup> B չիք և  
<sup>17</sup> B չիք զի  
<sup>18</sup> B ցնոսա փիւ ընդ նոսա  
<sup>19</sup> B ցնոսա փիւ ընդ նոսա

314բ *ո՛չ ասացին համբարձեալ, այլ վերացեալ յերկինս: Ձի ելումն է և ո՛չ համբարձումն: Ձի ըստ մարմնոյ է համբառնալն, իսկ վերանալն՝ հոգեհրաշ աստուածային: Վասն այնորիկ // ասեն. «Վերացաւ ի ձէնջ, նոյնպէս եկեացէ, որպէս տեսեք երթեալ յերկինս» (Գործք Ա 11): Շնորհեաց նոցա զԵրկրորդ զալստեանն հաստատութիւն<sup>1</sup> մեծ նշանաւք: Քանզի, ասելովն այսպէս եկեացէ, այսինքն՝ աստուածային բնութեամբն միացեալ մարմնովն, այսպէս յերկնից ակն կալլիք: Ըստ այնմ՝ «Գալոց է փառաւք Հաւր» (Սատք. ԺԶ 27), և նովին մարմնովն «դատել զկենդանիս և զմեռեալս» (հմմտ. Բ Տիմ. Դ 1), որոյ սուրբ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:*

«Նոյնպէս եկեացէ» (Գործք Ա 11):

Եփ. Ախորժական և ողորձական բանս ասացին, զի մի՛ տարակուսեսցին և տրտմականս ինչ բարբառեսցին<sup>2</sup>, որպէս Եղիսէ<sup>3</sup> կրեաց ի համբառնալ վարդապետին՝ պատառելով զպատմուճանն (տե՛ս Դ Թագ. Բ 12):

«Նոյնպէս եկեացէ» (Գործք Ա 11):

Ոկ. Փոքր ինչ ոգի փչեցին<sup>4</sup>, թէ ո՛չ իցէ անմատոյց, զի մի՛ երկբայեալ լիցին<sup>5</sup>: Արդ՝ յարութեանն ի[ն]քն եղև վկայ, զի սքանչելիք ի սքանչելիս խառնէին ծննդեամբն և այլն, որ մեծ [է] քան զծնունդն, որ զանձն յարոյց: Քանզի ասէր. «Քակեցէք զտաճարս զայս» (Յովհ. Բ 19), և ես յարուցանեմ զսա: Ընդ որ հիացեալ

Ստ. վերինքն ընդ մտանելն Յիսուսի<sup>6</sup> աղաղակէին առ գերակայ դասն<sup>7</sup>. «Համբարձէք իշխանք զդրուն<sup>8</sup> ձեր» (Սաղմ. ԻԳ 7, 9): Իսկ նոցա լուեալ՝ ասէին զՆսայեան. «Ո՞վ է սա<sup>9</sup>, որ դիմեալ գայ ի Բոսորայ գեղեցիկ պատմուճանաւ» (Ես. ԿԳ 1):

Ստ. Եւ<sup>10</sup> զիա՞րդ ասէ նոյն Նսայի. «Տեսաք մեք զնա, և ո՛չ գոյր նորա տեսիլ<sup>11</sup> և ո՛չ փառք» (Ես. ԾԳ 2)՝ կրելով կամաւ զապտակն,

<sup>1</sup> Ե տեսութիւն և հաստատութիւն

<sup>2</sup> Ե տրտմական բանս ինչ բարբառեսցեն

<sup>3</sup> Ե Եղիսէ

<sup>4</sup> Ե փչեաց ի նոսա

<sup>5</sup> Ե երկբայեացին

<sup>6</sup> Ե Յիսուսի յերկինս

<sup>7</sup> Ե արդերակայոսանս

<sup>8</sup> Ե զդրունս

<sup>9</sup> Ե զբիւս Սա ով է

<sup>10</sup> Ե չիք Եւ

<sup>11</sup> Ե տեսիլ և զեղեցկութիւն

315ա *զամաւթն, // զքաղցն, զծարաւն՝ միացելով աստուածութեամբն, զզրպարտութիւնսն<sup>1</sup>, զհալածանսն, երբեմն ի Հրէաստան և<sup>2</sup> երբեմն ի Գալիլիայ<sup>3</sup>, և ելեալ՝ եցոյց զաստուածութիւն[ն]: Արդ՝ ի չարչարանսն մնաց անչարչարելի, ի թշնամանսն՝ առանց թշնամանաց, ի քաղցն՝ ամենեցուն կերակրիչ, ի հալածանսն՝ փրկիչ բոլորից: Քանզի առեալ ի<sup>4</sup> մէնջ զփշոց<sup>5</sup> պսակն՝ և եղ ի գլուխ<sup>6</sup> հաւատացելոց պսակ լուսափայլ՝ կազմեալ<sup>7</sup> ի ձեռաց Աստուծոյ, և ամենայն ձաղանաւքն Ադամ[այ] զփառս ժառանգեաց<sup>8</sup> և բուռն զաւրութեամբ: Քանզի Յիսուս ինքնիշխանութեամբ գնայր յերկինս՝ յառաջանալով ի գերակայ բնակութիւն<sup>9</sup>: Վասնզի հրեշտակքն տեսանէին իբրև զանմարմին ի վեր երթեալ, քանզի գիտէին<sup>10</sup> նոքա, զի մարմինք վայրաբերք և ծանունք են բնութեամբ: Իսկ նա, մեծաւ զաւրութեամբ և երազութեամբ, ընդ ամենայն գերակայ դասսն<sup>11</sup> անցանելով, մտանէր ի գեղեցկայարմար արքայարանն երկնից, ի ներքին կողմն վարագուրին, ուր ո՛չ բնաւ եմուտ արարածական բնութիւն: Որպէս ասէ Աստուածաբան. «Ուր Սուրբ Երրորդութիւն միայնակ ի Սրբութիւն Սրբութեանցն<sup>12</sup> չըջի»:*

**Նոցա երկրպագեալ<sup>13</sup> նմա** (ԻԴ 52):

Ոկ. 315բ *Իբրև տեսին զնա՝ վերացեալ յիւր բնիկ սեփական փառսն, զոր ունէր յառաջ քան զլինելն // աշխարհի, ըստ իւրում ճշմարիտ բանին, որ գոյացոյց գերկինս և գերկիր<sup>14</sup>:*

**Դարձան յերուսաղէմ ուրախութեամբ մեծաւ** (ԻԴ 52):

Եփ. *Եղիսէ<sup>15</sup> ի համբառնալն Եղիայի տրտմութեամբ մեծաւ պատառեաց զպատմուճանն և դարձաւ յերիքով<sup>16</sup> (տես՝ Դ Թագ. Բ 12), իսկ առաքելոցն, տեսեալ զՅիսուս վերացեալ յերկինս,*

<sup>1</sup> B զզրպարտութիւնն  
<sup>2</sup> B **չիք** և  
<sup>3</sup> B Գալիլիայ  
<sup>4</sup> B առ ի  
<sup>5</sup> A զի փշոց  
<sup>6</sup> B ի վերայ գլխոց  
<sup>7</sup> B **չիք** կազմեալ  
<sup>8</sup> B ժառանգեցոյց  
<sup>9</sup> B բնակութիւն յանմտանելիսն  
<sup>10</sup> B գիտեն  
<sup>11</sup> B դասն  
<sup>12</sup> B սրբոցն  
<sup>13</sup> B Եւ նոցա երկիր պագեալ  
<sup>14</sup> A գերկինս  
<sup>15</sup> B Եղիսէ  
<sup>16</sup> A յերիքով

խնդրութեամբ մեծաւ լցան: Եւ այս յիրաւի: Քանզի Եղիայ, մարդ գոլով բովանդակելի<sup>1</sup>, ի մեկնելն իւրում այլ ո՛չ տեսաւ<sup>2</sup> նա յԵղիսեէ<sup>3</sup>, իսկ Տէրն մեր ո՛չ ընդ սահմանաւ փակի<sup>4</sup> և ո՛չ ընդ ծրաւ անկանի<sup>5</sup>: Ըստ մարգարէին. «Կենդանի եմ ես, ասէ Տէրն<sup>6</sup> ամենակալ, և գերկինս և գերկիր լնում ես<sup>7</sup>» (հմմտ. Երեմ. ԻԳ 23-24): Թէպէտեւ վերացաւ ի նոցանէ, սակայն զնոսա ո՛չ եթող: Ըստ իւրում բանին. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչ<sup>8</sup> ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20):

**US** Եւ, երբ եղև ընդ առաքելոցն «մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20), գրա՞րդ<sup>9</sup> վախճանեցան ամենեքին: Առ այս ասելի է. «Ո՛չ յանձինս<sup>10</sup> առաքելոցն միայն ասացեալ է<sup>11</sup>, այլև առ ամենայն քրիստոնեայս աշակերտեալս նոցա»: Վկայէ Պաւղոս, որ զփորձն տայր խաւսողին յինքեան Քրիստոսի՝ բնակելով<sup>12</sup> ի սիրտս մեր՝ արմատացեալ և հաստատեալ, որ երևեցաւ նմա ի ճանապարհին Դամասկեայ և ի տաճարին յերուսաղէմ, յորժամ կայր

316ա յաղաւ(//)թս՝ ասելով. «Գնա՛, զի ես ի հեթանոսս հեռաւորս առաքելցի գքեզ» (հմմտ. Բ Տիմ. Ա 11), և ի Կորնթոս ժողովուրդ բազում է իմ ի քաղաքիս յայսմ[իկ], և՛ «Որպէս վկայեցէր վասն իմ յերուսաղէմ, պարտ է քեզ և ի Հռոմ վկայել» (Յռոմ. ԻԳ 11): Թուի, թէ երևէր<sup>13</sup> նոցա ըստ նմանութեանն, որպէս ետես Ստեփաննոս<sup>14</sup> ընդ աջմէ Հաւր (տե՛ս Գործք Է 55), կամ իբրև Պաւղոս<sup>15</sup> յափշտակեալ: Այսպիսի ունէին յոյս վստահացեալ ի Քրիստոս, որ անարգեցաւ ի քահանայիցն և ի փարիսացոցն: Զնա աչաւք տեսին՝ վերացեալ յերկինս, վասն այսորիկ բարձաւ ի նոցանէ ամենայն տրտմական կիրք, որ ասաց յառաջ քան զխաչն. «Դուք տրտմեսջիք, և աշխարհս խնդասցէ, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի: Եւ

<sup>1</sup> A բաւնդակելի

<sup>2</sup> B ետես

<sup>3</sup> B Եղիսեէ

<sup>4</sup> B անկանի

<sup>5</sup> B փակի

<sup>6</sup> B Տէր

<sup>7</sup> B գրգիւ ես լնում

<sup>8</sup> B մինչև

<sup>9</sup> A զի արդեն

<sup>10</sup> A ի յանձինս

<sup>11</sup> B չիք է

<sup>12</sup> B բնակել

<sup>13</sup> B երևեցաւ

<sup>14</sup> B սուրբն Ստեփաննոս

<sup>15</sup> B զՊաւղոս



տեսանիցէք զիս և ուրախ լինիցիք<sup>1</sup>» (Յովհ. ԺՁ 20), «Եւ զուրախու-  
թիւն<sup>2</sup> ձեր ո՛չ ոք հանիցէ ի ձէնջ» (Յովհ. ԺՁ 22):

**ՈԿ.** *Իսկ ի մատեանս<sup>3</sup> Գործոցն ասէ. «Յայնժամ դարձան յԵրուսա-  
ղէմ» (Գործք Ա 12):*

**ՈԿ** *«Յայնժամ», ե՞րբ: Յորժամ լուան ի հրեշտակացն, թէ միւսան-  
գամ գալոց է: Թերևս ո՛չ առնուին յանձն, թէ ո՛չ էր խոստացեալ  
զկրկին գալուստն:*

*«Ի լեռնէն<sup>4</sup> Ձիթենեաց, որ է<sup>5</sup> մերձ յԵրուսաղէմ» (Գործք Ա 12):*

*Ջտեղին յայտ առնէ մաւտաւոր, որպէսզի ո՛չ<sup>6</sup> յերկար ճանա-  
պարհ զնալովն՝ զնացելոցն երկի[ւ]ղ<sup>7</sup> ինչ ունէին նոքա:*

*«Ըստ շաբաթու ճանապ[արհ]<sup>8</sup>» (Գործք Ա 12):*

**316բ** *Թուի ինձ, թէ ըստ հրէիցն շաբաթուն լին(//)էին այնչափ ճա-  
նապարհ, բացայայտնէր<sup>9</sup>՝ «Ի լեռնէն Ձիթենեաց յԵրուսաղէմ»  
(Գործք Ա 12), զի հրէիցն սահմանեալ էր ո՛չ յերկար ճանապարհ  
զնալ յաւուր շաբաթու:*

*«Յայնժամ ելին ի վերնատունն, ուր վանքն իսկ էին» (Գործք Ա  
13):*

*Ջի ո՛չ համարձակէին երևել ի քաղաքին, և բարիոք ելին անդ,  
զի մի՛ դիւրաւ յանպատրաստութենէ ըմբռնեալ լիցին<sup>10</sup>: Մտանե-  
լով ի վերնատունն՝ անդ ժողովեալք լինէին: «Պետրոս» (Գործք Ա  
13)՝ սա միայն թուեալ լինի: «Յակոբոս<sup>11</sup> և Յովհաննէս» (Գործք Ա  
13)՝ հանդերձ եղբարք<sup>12</sup> Քրիստոսի<sup>13</sup>, «Անդրէաս և Փիլիպոս<sup>14</sup> և  
Թո[վ]մաս: Յակոբոս<sup>15</sup> Ալփեայ և Շմաւոն Նախանձայոյզ, Յուդայ  
Յակոբեան<sup>16</sup>» (Գործք Ա 13): Բարիոք յիշեաց<sup>17</sup> զառաքեալսն, քան*

<sup>1</sup> B լինիջիք  
<sup>2</sup> B զուրախութիւնն  
<sup>3</sup> B մատեան  
<sup>4</sup> B լեռնէ  
<sup>5</sup> B էր  
<sup>6</sup> B որպէս *փի* որպէսզի ոչ  
<sup>7</sup> B երկեւղ  
<sup>8</sup> B շաբաթուն ճանապարհին  
<sup>9</sup> B բացատն յայտնի էր  
<sup>10</sup> B լինիցին  
<sup>11</sup> B Յակովբոս  
<sup>12</sup> B եղբարքն  
<sup>13</sup> B *չիք* Քրիստոսի  
<sup>14</sup> B Փիլիպպոս  
<sup>15</sup> B Յակովբոս  
<sup>16</sup> B Յակովբեան  
<sup>17</sup> B յիշատակեաց

զՅուզայ<sup>1</sup> Սկարիովտացի<sup>2</sup> մատնեաց և միւսն ուրացաւ և այլքն թերահաւատեցին: Եւ ցուցանէ, թէ ամենեքին ողջ էին՝ հաստատեալ<sup>3</sup> ի հաւատս Քրիստոսի, բայց ի մատնչէն: «Սոքա ամենեքին<sup>4</sup> էին հանապազորդեալք յաղաւթս<sup>5</sup>» (Գործք Ա 14): Զի մեծ գէն է այս առ ի փրկութիւն անձանց, և բարիոք խրատեալ<sup>6</sup> էին յայս, զի հասեալ փորձութիւնքն զնոսա յայս ինչ յորդորէին, զի յոյժ երկնչէին ի հրէիցն: Տեսանէին<sup>7</sup>, թէ որպէ՞ս տքնեալք էին միաբան իբրև միով հոգով լեալք<sup>8</sup> յաղաւթս և ի ժուժկալութեան<sup>9</sup>:

317ա // Եւ<sup>10</sup> էին հանապազ ի տաճարին (ԻԴ 53):

Պարտ է գիտել, զի ի ժամ աղաւթիցն ի տաճարն փութային լինել, իսկ զհանգիստն կամ կերակուր ուտել<sup>11</sup>, ի վերնատան անդ<sup>12</sup> կատարէին:

Գովէին և աւրհնէին զԱստուած (ԻԴ 53):

Արդ՝ այսպէս կային ի<sup>13</sup> խնդրուածս, և մնային աւետեացն խոստմանց: Եւ աւրհնէին զամենախնամ տեսչութեան<sup>14</sup> բարերարութեանն, զոր եցոյց մարդկային բնութեանցս, որով խոնարհեցաւ՝ բառնալով զպարտիս մեր, ի վեր հանելով զմեզ քան զիշխանութիւնս և զպետութիւնս, ընդ որ հայեցեալ՝ գովէին և աւրհնէին<sup>15</sup> գոհանալով, և զանձինս պատրաստէին ճգնութեամբ՝ ընդունելով<sup>16</sup> զչնորհս Հոգոյն յաւուրն Պենդեկոստէին, յորում հեղաւ ի նոսա սաստկութիւն<sup>17</sup> հողմոյ և ելից գտունն երևելեալն՝ յաւրինակ տիեզերաց, իսկ աներևութաւն և անճառելեալն զնոսա լցոյց՝ տալով զամենայն իմաստութիւն և հանճար<sup>18</sup> աստուածեղէն: Ըստ առաքելոյ՝ «Առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ

<sup>1</sup> Բ քանզի Յուզայ

<sup>2</sup> Ա Սկարեովտացի

<sup>3</sup> Բ հաստատեալք

<sup>4</sup> Բ ամենեքեան

<sup>5</sup> Բ միաբան յաղաւթս

<sup>6</sup> Բ սրբ.՝ խրատեալք

<sup>7</sup> Բ տեսանե՞ս

<sup>8</sup> Բ չէք լեալք

<sup>9</sup> Բ ժուժկալութիւն

<sup>10</sup> Բ չէք եւ

<sup>11</sup> Բ զմատչելն ի կերակուր կամ զհանգչելն փխ զհանգիստն... ուտել

<sup>12</sup> Բ վերնատունն

<sup>13</sup> Բ յաղաւթս և ի

<sup>14</sup> Բ տեսչութիւն

<sup>15</sup> Բ աւրհնէին զԱստուած

<sup>16</sup> Բ ընդունել

<sup>17</sup> Բ սաստկութեամբ

<sup>18</sup> Բ զհանճար

և գիտ[ուլթեամբ], եցոյց<sup>1</sup> մեզ զխորհուրդս կամաց իւրոց» (Եփես. Ա 8-9):

«[Հան]դերձ<sup>2</sup> կանամբ<sup>3</sup>» (Գործք Ա 14):

**ՈԿ** Էին, ասէ, և կանայք բազումք, որ հետևէին նմա, և ընդ նմա  
**317բ** շրջէին ի Գալիլիայ<sup>4</sup> և պաշտէին զնա յ[ը]նչից իւրեանց, // և ի  
գերեզմանն ընթացան «Մարիամ[աւ] մարբն Յիսուսի» (Գործք Ա 14):  
Եւ մայր նորա<sup>5</sup> ասէր որպէս մարդոյ՝ նազելով, եթէ՛ «Հայր քո և  
ես տառապէաք, խնդրէաք<sup>6</sup> զքեզ» (Բ 47): Եւ յետոյ մայր քո և եղ-  
բարք քո խնդրեն զքեզ: Եւ Յովսէփ թերևս վախճանեալ էր, որ  
նախքան զամենեսին հաւատաց: «Եւ եղբարքք նորա» (Գործք Ա 14):  
Զի անդ, ասէ աւետարանիչն, թէ յիւրսն առ<sup>7</sup> զնոսա յայնժամ, և  
աստ դարձեալ ժողովեաց զնոսա: Եւ այնպէս իջանէր Հոգին զեղ-  
բարսն յիշելով, զի նոքա էին թերահաւատեալք, որոց ասէր  
Քրիստոս. «Ո՛չ կարէ աշխարհս<sup>8</sup> ատել զձեզ, այլ<sup>9</sup> զիս ատեայ»  
(Յովհ. Է 7):

**ԵՓ** Միքիայ մարգարէանայ վասն Քրիստոսի՝ «Յուդա՛յ, ի քէն ել-  
ցէ ինձ իշխան» (Միքիա Ե 2), որ է Քրիստոս: Եւ ելք նորա ի սկզբա-  
նէ, զի չի՛ք սկիզբն քան զՔրիստոս ի վեր: Ըստ այնմ՝ «Ի սկզբա-  
նէ էր Բանն» (Յովհ. Ա 1), կամ արգելցէ զնոսա, մինչև կոյսն Մա-  
րիամ ծնցի զՔրիստոս, ըստ այնմ արգել զնոսա Աստուած ի թե-  
րահաւատութիւն<sup>10</sup>, զի ամենեցուն ողորմեսցի: Եւ մնացորդք եղ-  
բարց նորա դարձցին առ Տէր:

Այնոքիկ, որք երկմտեցին վասն նորա՝ յասելն իւրեանց  
ցՔրիստոս, թէ՛ «Զայդ առնես՝ յայտնես<sup>11</sup> զանձն քո աշխարհի»  
(Յովհ. Է 4), զի դարձան նոքա յեկեղեցի Աստուծոյ յետ համբառնա-  
լոյ նորա առ Հայր: Աշակերտեցան նոքա ի վարդապետութեան  
նորա, և եղեն<sup>12</sup> խորհրդակից Քրիստոսի, որում փառք յաւի-  
տեանս. ամէն<sup>13</sup>:

<sup>1</sup> Բ սրբ.՝ և եցոյց  
<sup>2</sup> Ա բառը վնասված է  
<sup>3</sup> Բ կանամբք և Մարեմաւ  
<sup>4</sup> Բ Գալիլիայ  
<sup>5</sup> Բ մայրն, որ  
<sup>6</sup> Բ և խնդրէաք  
<sup>7</sup> Բ եկն և առ  
<sup>8</sup> Բ աշխարհ  
<sup>9</sup> Բ բայց  
<sup>10</sup> Բ թերահաւատութեան  
<sup>11</sup> Բ յայտնեա՛  
<sup>12</sup> Բ եղեն նոքա  
<sup>13</sup> Բ չիք որում... ամէն

## [Վ ե ը ջ ա բ ա ն]

318ա // Հզաւրին և անճառին<sup>1</sup>, փառաց փառաւորին, անբաւ վեհին, րաբուն<sup>2</sup> ստեղծին, ապենիազ անկարաւտին, նեկղատի<sup>3</sup> եզականին, եռալրում բոլորաթուին, ինքնիշխան անիշխանին, իշխեցողին համագոյից, անտարած անամփոփին, անպարագիր բոլորէին, կենդանի կենարարին, անկիր բնութեան պարզականին, սրբոց ստացողին, զստի[ն]քս ինքեան կառուցողին<sup>4</sup>, ըոպէից գոյացուցչին, յոգնաւրինակ<sup>5</sup> զարդարողին, փառք<sup>6</sup> և զաւրութիւն ի ներկայիցս և յանցելոցն<sup>7</sup>, ի սպառականց<sup>8</sup> և յանանկից<sup>9</sup> յաւիտեանս յաւիտենից<sup>10</sup> . ամէն:

Ի վեցհարիւր երրորդի երեսներրորդի յերրորդի եղեւ կատարումն սորայ ի փառս Աստուծոյ

<sup>1</sup> B անճառին. ամէն

<sup>2</sup> B ճշմարիտ *փխ* րաբուն

<sup>3</sup> B նեղկատի

<sup>4</sup> B *չիք* զստինքս... կառուցողին

<sup>5</sup> A յոքնաւրինակ

<sup>6</sup> B բնաւից գոյից արարողին, փառք

<sup>7</sup> B ներկայից և յանցելոց

<sup>8</sup> B սպառականաց

<sup>9</sup> A յանյանգից B յանկից այժմ և

<sup>10</sup> A յավիտենից

## ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Արգար թագաւոր -	Արուսեակ -
Աբէլ -	Արփաքսադ -
Աբիա -	Արքեղայոս -
Աբիսողոմ -	Աւգոստոս կայսր -
Աբիուք -	Աքաար -
Աբրահամ նահապետ -	Աքազ -
Ազմիա -	Աքար -
Ագրիպաս -	Բաբելացոց -
Ադամ -	Բաբելոն -
Ադգի -	Բաբել -
Ազայէլ -	Բարաբբա -
Ազարիա -	Բարսեղ Կեսարացի -
Ակոր - <b>տե՛ս</b> Յակոր նահապետ	Բեթանիա -
Ահարոն -	Բեթբազէ -
Ադիմ -	Բեթէլ -
Ամբակում -	Բեթիեզդա -
Ամինաբադ -	Բեթղեհէմ -
Ամոն -	Բեթսայիդա -
Ամոնացիք -	Բեթփազէ -
Ամովդ -	Բեկտոր -
Ամովս -	Բենիամին -
Անանիա -	Բերսաբէ -
Անդրեաս առաքեալ -	Բէդզեբուդ -
Աննա մարգարէ -	Բիւզանդիա -
Անտիգոնոս Երուսաղէմի առաջնորդ -	Բոոս -
Անտիոք -	Բոսոր -
Անտիպատրոս -	Գաբրիէլ հրեշտակապետ -
Ապողինար -	Գալիլեացոց աշխարհ -
Առան -	Գալիլիա -
Առնիա -	Գամաղիէլ -
Ասեր -	Գամիր -
Ասորեստան -	Գաղատացոց -
Ասորիք -	Գաղիանոս բժիշկ -
Արաբիա -	Գեդէոն -
Արամ -	Գեթսեմանի (Գեթսամեմի) -
Արտեմոն -	Գերգեսացիք -

Գերգեսացոց աշխարհ -	Չաքարիա մարգարտ -
Գէեզի -	Չաքարիա քահանայապետ -
Գողիադ -	Չեքեդիա -
Գրիգոր Աստուածաբան -	Չիփանոս -
Գրիգոր Լուսաւորիչ -	Էղէկիմ -
Դամասկոս -	Էմմանուէլ -
Դան -	Էջմիածին -
Դանիէլ մարգարտ -	Էսդիա -
Դաւիթ արքա, մարգարտ -	Էսրովմ -
Դկխաթ -	Թաբոր -
Եբէր -	Թադէոս առաքեալ -
Եգիպտոս -	Թամար -
Եդեմ -	Թառա -
Եդոմ -	Թելդաս -
Եզաբէլ - տե՛ս Յեզաբէլ	Թելաստանք -
Եզեկիա թագաւոր -	Թէոդորոս -
Եզեկիէլ մարգարտ -	Թէոփիլոս -
Եզր -	Թովմաս -
Ելմովդադ -	Իգնատիոս -
Եղիա մարգարտ -	Իթամար -
Եղիազար -	Իսահակ (Սահակ) նահապետ -
Եղիսաբեթ -	Իսրայէլ -
Եղիստ մարգարտ -	Իսրայելացիք -
Եմաւոս -	Լիբանան -
Եմմանուէլ -	Լուսինեայ Աբբէլենացի -
Ենովս -	Խառան -
Ենովք -	Կայէն (Կայեն, Կային) -
Եսայի մարգարտ -	Կայիափ -
Եսաւ -	Կայնան -
Երա -	Կարմիր ծով -
Երեմիա մարգարտ -	Կարպոս -
Երիքով -	Կափառնաւում -
Երուսաղէմ -	Կեսարիա -
Եւա -	Կիրեղ Ալեքսանդրացի -
Եփրեմ -	Կիրեղ Երուսաղէմացի -
Եփրեմ Ասորի -	Կիրիմէ -
Չակքեոս -	Կղեոպաս -
Չամէք -	Կոստանդնուպաւլիս -
Չարաբաբէլ -	Կովսամ -

Կումիդիոն կայսր -	Մարաց -
Հագարացի -	Մարթա -
Հայաստանեայց Եկեղեցի -	Մարիամ Աստուածածին -
Հայկ -	Մարիամ Մագդաղենացի -
Հայք -	Մարկիոն -
Հեղի -	Մարկիոնացի -
Հերակլ -	Մարկոս աւետարանիչ -
Հերովդէ հազարապետ -	Մարկոս երիտասարդ -
Հերովդէս արքայ -	Մելքիսեդէկ -
Հերովդի -	Մեղթիա -
Հերովդիադա -	Մեղքի -
Հիւրկանոս քահանայապետ -	Մէննա -
Հնդկաց աշխարհ -	Միքիա մարգարտ -
Հռոմ -	Մովսէս մարգարտ -
Հռոմայեցոց -	Մուրդքէ (Մորթքէ) -
Հռութ -	Յակոբ Ձեբեթեայ -
Հրէաստան -	Յակոբ (Ակոբ) նահապետ -
Հրէից երկիր -	Յակոբ Տեառնեղբայր -
Չիթենեաց լեռ -	Յակոբայ տունն -
Ղազար արքատ -	Յակոբոս Ալփեան -
Ղեբէոս - <b>տե՛ս</b> Թադէոս առաքեալ	Յամրէս կախարդ -
Ղովտ -	Յայրոս իշխան -
Ղուկաս աւետարանիչ -	Յանէս կախարդ -
Ղևի -	Յաննա -
Ղևտացոց -	Յարեղ -
Մաթա -	Յեզաբէլ (Եզաբէլ) -
Մաթուսաղ -	Յեսթեր -
Մակեդոնացւոց -	Յեսսէ -
Մակար Երուսաղէմի հայրապետ -	Յեսու -
Մաղաղայել -	Յերոբովամ (Յորոբովամ) -
Մաղաքիայ -	Յերոնիա -
Մամբրէի լեռ -	Յիսուս Քրիստոս -
Մանազկերտ -	Յոբ -
Մանասէ -	Յոբնաղ -
Մատաթիա -	Յոհան կաթողիկոս -
Մատթէոս աւետարանիչ -	Յովակիմ -
Մատթէոս Կանանացի -	Յովան թագաւոր -
Մատթիա -	Յովէլ -
Մատտաթ -	Յովիդա -

Յովհաննա -	Շուշան -
Յովհաննես աւետարանիչ -	Ողոզմեան տաւն -
Յովհաննես Մկրտիչ -	Ովբեդ -
Յովհաննես Ոսկեբերան -	Ովստ մարգարտ -
Յովնամ -	Ովր -
Յովնան (Յունան) մարգարտ -	Ուրիա -
Յովսեպպոս -	Պաղեստին -
Յովսէփ Արիմաթացի -	Պարսկական աշխարհ -
Յովսէփ հայր Յակոբայ -	Պարսից -
Յովսէփ հիւսն -	Պաւղոս առաքեալ -
Յովսէք -	Պաւղոս Սամոսատցի -
Յովսիա -	Պենդելուստ -
Յովրամ -	Պետրոս առաքեալ -
Յորդանան -	Պիղատոս -
Յուդա (երկիր) -	Պոմպէ զարավար, Ասկաղոնացի -
Յուդա Իսկարիովտացի -	Պտղոմէոս -
Յուդա Յակոբեան -	Ռագաւ -
Յուդայեանք -	Ռահաբ -
Նաասոն -	Ռեբեկա -
Նաբատ -	Ռոբովամ (Րոբովամ) -
Նաբովթ -	Սաբաւովթ (Սաբաւաւթ) -
Նաբուգոդոնոսոր -	Սաբեկայ ծառ -
Նազարեթ -	Սադայէլ -
Նաթան -	Սադուկեցիք -
Նային -	Սահակ - տե՛ս Իսահակ
Նանգիա -	Սաղա -
Նաոււմ -	Սաղաթիէլ -
Նաքովր -	Սաղիմ -
Նեեման Ասորի -	Սաղման -
Նեռ -	Սաղմանասար -
Նեստոր -	Սամարիա -
Ներ -	Սամարցւոց -
Նեփթաղիմ (երկիր) -	Սամուէլ -
Նիկիական ժողով -	Սամսոն -
Նիկողիմոս -	Սառա -
Նինուեացիք -	Սատիմ -
Նոյ -	Սաւուղ -
Շարմատացի -	Սարգիս Կունդ -
Շմաւոն - տե՛ս Պետրոս	Սարեփթա -



Սեղեկիա -	Տերտիոս (Տերտիդոս) -
Սեմիա -	Տիբերական ծով -
Սելովան -	Տիբերիոս կայսր -
Սենեքերիմ (Սիենիքարիմ) -	Տիգրիս -
Սերուք -	Տիմոթեոս առաքեալ -
Սէթ -	Տիտոս -
Սէմ -	Տիրոսոն -
Սիդոնացւոց -	Տիրացոց աշխարհ -
Սիդովն -	Տիրոս -
Սիմեոն -	Տրաքոնացոց աշխարհ -
Սիմոն Կիրենացի -	Տրովադա -
Սիմոն - տե՛ս Պետրոս առաքեալ	Րահաբ -
Սիմոն Նախանձայոյզ -	Րեսա -
Սիմա -	Րոբովան - տե՛ս Ռոբովան
Սինեական լեռ -	Փակէտ -
Սիոն -	Փաղէկ -
Սկկի -	Փանուիէլ -
Սոդոմ -	Փասալէոս -
Սոդոմայեցիք -	Փարես -
Սոդոմէ -	Փենեհեզ -
Սոդոմոն -	Փիլիպոս առաքեալ -
Ստեփանոս նախավկայ -	Փիլիպոս, եղբ. Չերովդէի -
Ստեփանոս Սիւնեցի -	Փիլոն Յիկոնացի -
Վեսպիանոս -	Քեղկեդոն -
Տաբիթայ -	Քուզի -

## ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խոսք .....	7
Բնագիրը .....	17
ՑԱՆԿԵՐ .....	



Էջադրումը

ՔՂԿ հրատարակչական բաժնի

Edited by Armen Malkhassian  
Խմբագիր՝ Արմեն Մալխասյան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ